Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ **http://www.armin.am**

էլ. փոստ՝ **info@armin.am**

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐՈՒԽԱՆ

(ԵՐՎԱՆԴ ՍՐՄԱՔԵՇԽԱՆԼՅԱՆ)

ԵՐԿԵՐ

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ»
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ,
ԵՐԵՎԱՆ 1980

Ար 1 Խնդիս ԳՄԴ 84. 21
Ե 691

Երուխան
Ե 691 Երկեր: Վեպ, նովելներ,— Եր., Սովետ. գրող, 1980.— 608 էջ:

Երկերի ժողովածուում զետեղված են հեղինակի «Ամիրային աղջիկը» վեպը և ընտիր նովելներ։

Վեպում հեղինակը ոչ թե պատկերում է ամիրայի վերելքը խաբեության, կողոպուտի, շահագործման միջոցով, այլ նրա ընտանիքի անկումը նրա անսպասելի բանտարկությունից, կալվածների ու հարստության մեծագույն մասից զրկվելուց և մահվանից հետո։

Երուխանի երկերում գործող գլխավոր ուժը՝ սոցիալական ահռելի շարիքը՝ աղքատությունը իր մգլահոտով, մինչև ոսկորները թափանցող ցուրտ խոնավությամբ, խավար ու անշուք, անպաշտպան ու անհաստատ ճակատագրով, բարձրացնում է այն հարցը, թե մահը չէ՞ միակ մխիթարությունն ու ելքը, փրկությունն անիծյալ աշխարհից։

Ար1
Ե 4702080100 (915) / 905 (01) 80 — 80 «Տ»
ԳՄԴ 84.21

© «Սովետական գրող» հրատարակչություն, կազմողի և առաջաբանի համար, 1980

ԵՐՈՒԽԱՆ

1913-ի ամռան վերջերին Խարբերդի Եփրատ կոլեջում տոնվեց հայ տարերի գյուտի 1500 և հայ տպագրության 400-ամյակը: Այն բացվեց Երուխանի ոգեշունչ խոսքով. «...մեր հաջորդ սերունդները անտարակույս ավելի երջանիկ քան մենք, զմայլանքով պիտի խոնարհին այս գերազանցորեն շքեղ ու սրտաշարժ եղանակին առջև, որով ներկա սերունդը իր ծովածավալ տառապանքներուն և աննիարին արհավիրքներու մեջ կրցավ փառքի ամենաբարձր գահուն վրա բազմացնել զանոնք. Սահակն ու Մեսրոպը... այն ցեղը որ իր անցյալ փառքերը տոնելու և պանծացնելու եղանակը գիտե, որ գիտե մրտքին ու գրին տալ բարձրագույն դերը, որուն անոնք կոչված են, այն ցեղը դրապես կապացուցանե թե ինք հզոր ու գեղեցիկ իտեալներու կնգտի, թե... վերջապես իրեն պիտի ապահովե վերջնական ու վճռական երջանկությունը»:[1]

Բանախոսության ոսմանտիկ ոգին մի պահ կարող է ընտեղծել այն պատրանքը, թե ուղղակիորեն նման ոգով է բնորոշվում նրա ողջ ստեղծագործությունը՝ լի հերոսական զոհաբերությամբ, ցեղի փառավոր անցյալով: Սակայն թեև արդեն ողբերգական ավարտին էր մոտենում նրա կյանքը, նրա արձակում չկային ո՛չ ազատագրական պայքարի արտացոլումներ, ո՛չ պատմական մեծագործության, ո՛չ մտքի լուսավոր հաղթանակների պատկերներ, ո՛չ արտակարգ հերոսների կերպարներ:

---

1 *Վահե Հայկ, Խարբերդ և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959, էջ 1131—1132։*

1

Երուխանը (Երվանդ Պողոսի Սրմաթեշխանլյան) ծնվել է 1870 թվականի հուլիսին, Կ. Պոլսի Խասգյուղ թաղամասում: 1886-ին տեղի Ներսիսյան վարժարանն ավարտելուց հետո նա ընդունվում է Ղալաթիայի ազգային Կեդրոնական վարժարանը: Այն ավարտել չի հաջողվում, և գեղարվեստական գրականությանը նվիրվելու հաստատակամ որոշմամբ, նա պակասը լրացնում է ինքնակրթությամբ՝ երկու և կես տարի անդուլ աշխատանքով, յուրացնելով ֆրանսերենը, կարդում է համաշխարհային գրականության դասականներին: 1889—90-ին արդեն նա հանդես է գալիս մամուլում և գրական առաջին այդ քայլերին հաջորդում են մի քանի նովելներ (առաջինը՝ «Պապուկը», լույս է տեսնում «Արևելքի» 1891 թ. մայիսի 29-ի համարում): Այդ տարիներին նա ֆրանսերենից թարգմանում է մի շարք հեղինակների, որոնց թվում Ալֆոնս Դոդե և Հեկտոր Մալո: 1896-ի հայկական ջարդերի ժամանակ բազում այլ հայերի հետ Երուխանն անցնում է Բուլղարիա, հաստատվելով Վառնայում: Այստեղից նա որոշ ժամանակ թղթակցում է «Բյուզանդիոնին», հիմնադրում է «Շարժում» լրագիրը (1898), հրատարակում «Նավիդ» հանդեսը (1900), գրում առաջին վեպը՝ «Մերժված սերը», ապա «Գաղթականները» վեպը (անավարտ, տպագրվել է «Նավիդում»), հանդես գալիս հոդվածներով, նովելներով, զբաղվում ուսուցչությամբ: 1904 թվականին Երուխանը Բուլղարիայից գնում է Եգիպտոս: Այստեղ նա շարունակում է գրական, խմբագրական, մանկավարժական աշխատանքը: 1908 թ. երիտասարդ թուրքերի պետական հեղաշրջումից հետո, Երուխանը վերադառնում է Կ. Պոլիս և, դառնալով «Արևելք» թերթի խմբագիր, նոր եռանդով շարունակում է գրական-հասարակական բուռն գործունեությունը: Վերամշակելով «Անիծված սերը», հրատարակում է նույն թերթում «Ամիրային աղջիկը» խորագրով, լույս ընծայելով նաև նովելների մի ժողովածու («Կյանքին մեջ», 1911): 1910-ին հրաժարվելով «Արևելքի» խմբագրի պաշտոնից, ստանձնում է Ս. Խաչ ազգային վարժարանի տնօրինությունը, մինչև 1913-ի օգոստոս, երբ մեկնում է Խարբերդ, դարձյալ մանկավարժական աշխատանքի:

1912-ին «Ոստան» հանդեսում լույս է տեսնում նրա «Հարազատ որդին» վիպակը: Ստեղծագործող մարդու անհանգիստ ոգին չէր կարող պարփակվել միայն մի աշխատանքի սահմաններում, որտեղ էլ այն հետաքրքիր լիներ: Նա ուսումնասիրում է գավառի կյանքը, թղթակցում մամուլին՝ նովելներով, համփոդդական նոթերով, թարգմանում և հրապարակում էդուարդ Տրիոյի «Արևելյան խնդիրը և հայկական հարցը իր ծագումեն մինչև մեր օրերը» աշխատությունը (1913): Բայց գավառի կյանքից քաղած նոր նյութը, իր բառերով ասած՝ «ուսումնասիրության հանքը» ստեղծագործական նոր արդյունքներ չէր տալու: Երուխանը հոգեկան խոր տագնապ էր ապրում: Դեռևս 1914 թ. հունվարի 29-ի նամակում գրում էր. «...ամեն բան մազի վրա: Անցյալ օր տեղվույս նախնական դատարանին դատավորը... հայտարարեց հայերու, որ եթե ընտրությանց չմասնակցին՝ անհելի կերպով պիտի ջարդեն հայերը, ինչպես ըրին Ատանա: Եվ այդ իբրեւ սրիկան՝ դատավոր է. մնացածը դատե»:[1]

1915 թ. մայիսի 1-ին Երուխանը ձերբակալվեց: Նրան, Թլկատինցուն և գավառի հայ մտավորականության մյուս ներկայացուցիչներին անասելի տանջանքների ենթարկելուց հետո տարան Դեր Զորի և գլխատեցին կացնով ու մանգաղով: Սպանության այդ մեթոդները դոկումենտալ ճշտությամբ կրկնվեցին պատմության հետագա ծավալման ընթացքում, ուրիշ ժողովուրդների հետ, ուրիշ մարդասպանների ձեռքով:

2

Պատկերել կյանքը ինչպես որ է—այսպես ձևակերպվեց իրականության ճշմարտացի արտացոլման սկզբունքը հայ գրականության մեջ, ռեալիզմի հաստատումից հետո: Գրիգոր Զոհրապը այդ ձևակերպումը դարձրեց նույնիսկ իր նովելների մի շարքի խորագիր: Բայց ձևակերպումը բոլոր հայ ռեալիստները չէ, որ ընդունեցին անվերապահորեն: Շիրվանզադեն, օրինակ, մերժում էր այն, ընդգծելով, որ ստեղծագործելով կյանքի տված նյութի հիման վրա, միաժամանակ դի-

1 «Ամենուն տարեցույցը», Փարիզ, 1916—1920, էջ 53։

մել է երևակայությանը, փոփոխելով եղելությունը, ստեղծելով տիպեր, հանգամանքներ, գեղարվեստորեն ընդհանրացնելով և այլն: Իհարկե, տարբերության հիմնական պատճառն այն էր, որ այս երկու դեպքում ձևակերպումը մեկնաբանվում էր այլ կերպ և այդքան խոր հակասություն հազիվ թե լիներ նույն ռեալիստական մեթոդի տարբեր ներկայացուցիչների միջև:

Բայց տարբերություն այնուամենայնիվ կար:

«Կյանքը ինչպես որ է» ձևակերպումը այլոց հետ պաշտպանել է նաև էմիլ Զոլան տարբեր առիթներով. «իրականի զգացում ունենալ, դա նշանակում է զգալ նատուրան և վերարտադրել այն այնպես ինչպես կա»:[1] Ուշագրավ է, որ Բալզակին համարելով ժամանակակից ռեալիստական վեպի անմահ հիմնադիր, Զոլան միաժամանակ, նրա անսանձ երևակայությունը, աշխարհը վերստեղծելու ձգտումը համարում է գրեթե պաթոլոգիական երևույթ ֆրանսիական գրականության մեջ:

Չափազանց մեծ էր Զոլայի ազդեցությունը հայ ռեալիստական գրականության վրա, դրանից զերծ չի մնացել նաև Երուխանը: Բայց վերոհիշյալ երկու մոտեցումից «կյանքը ինչպես որ է» ձևակերպմանը, դժվար չէ եզրակացնել, Շիրվանզադեին ավելի հարազատ էր աշխարհը վերստեղծելու «պաթոլոգիական երևույթը», քան Զոհրապին և Երուխանին: Պատահական համընկնում և սոսկական ազդեցության հետևանք չէ սա, այլ ռեալիզմի պատմական զարգացման բնորոշ ընթացք: Նշենք, որ դիմում ենք հատկապես ֆրանսիական գրականության փաստերին ոչ միայն պատմական որոշ օրինաչափություններ պարզաբանելու և զուգահեռներ անցկացնելու համար, այլև որովհետև հայ, առանձնապես արևմտահայ գրականությունը զարգացավ առաջին հերթին ֆրանսիական մշակույթի հզոր ազդեցության տակ (իմիջիայլոց գրականության համեմատական ուսումնասիրությամբ, գրական կապերով զբաղվողները հարուստ նյութ կգտնեն այդ բնագավառում):

Ռեալիզմի առաջին շրջանի ներկայացուցիչները իրենց քա-

[1] Э. Золя, Собрание сочинений, т. 24, стр 407, М., 1966.

տեղծագործությունում ավելի շատ բան էին պահպանում երևակայությունից և վերստեղծումից, քան երկրորդ շրջանի (որը Զոլան անվանեց նատուրալիզմ, ընդգծելու համար նատուրային, բնությանը, իրականությանը առավել մոտ լինելու հանգամանքը): Այլ խոսքով, պայքարելով ռոմանտիզմի դեմ, 19-րդ դարի ռեալիզմը իր առաջին շրջանում, որակապես նոր մեթոդի սահմաններում կրում էր նրա որոշ գծեր ու երանգներ, որոնք մերժվեցին հետագայում, երբ պահանջվեց ավելի մոտենալ ռեալականությանը, այն դնել պոզիտիվ, գիտական հիմքի վրա:

Հայ գրականության այս ընթացքը ևս դեպի «կյանքը ինչպես որ է» սկզբունքի ամրապնդումը, իր հետ բերեց որոշ շփով այլ մոտեցում, այլ տիպեր, այլ իրականություն: Առաջ մղվեց հասարակ աշխատավորի, կյանքի հատակում ընկած մարդու կերպարը, նրա հոգեբանական նրբություններն ու կենսաբանական դրդումները, նրա կենցաղն ու բարոյականությունը իրենց անմիջական-կյանքային պարզության մեջ: Երևդիրը հստակորեն ձևակերպել է ինքը՝ Երուխանը. «Ամբոխը անհուն ծով մ'է, անհատնում վետվետումներով, որուն կապույտ հեղուկային բյուրեղին մեջ մթություններ, խավարներ, լույսեր ու հառագայթներ ալ կան: Իր զանգվածին անհուն ընդարձակության մեջ բոլոր մեծագույն ազնվությունները, բոլոր վսեմ առաքինությունները միանվագ թափով կբաբախեն՝ ինչպես մահուր արյունն հզոր մարմնի մը մեջ: Մոտեցիր ամբոխին, ժողովրդի մեծ ընտանիքին, տեսնելու համար իր կիրքերը, ձգտումները, առաքինությունները, այն դյուցազնական անշշուկ օրինակները, զորս ամեն վայրկյան, անդուլ, անդադրում ցույց կուտա պայքարին մեջ, նյութի ու ապրուստի բռնաբեր պայքարին մեջ... Եվ տիպարներու ի՜նչ հոգեզվարն այլազանություն մը, հոն, ամբոխին ծոցին մեջ, և որքա՜ն տիպար, այնքան պատմություն, այնքան գույն այդ նոխ երանգապնակին վրա» («Կեվրեքնին»):

Երուխանի հերոսները ձկնորսներ, ջրկիրներ, նավավարներ, հրշեջներ, լվացարարուհիներ, սեագործ բանվորներ, արհեստավորներ են, երբեմն նույնիսկ՝ անորոշ խեղանդամված մարդիկ: Խոշոր արդյունաբերողներ, բանկիրներ նրա գործերում չեն հայտնվում, կան մեկ երկու առևտրականներ, զա-

նազան մանր գիշատիչներ, որոնք ըստ էության որոշիչ դերեր չեն ստանձնում: Բնորոշ է, օրինակ, «Ամիրայիին աղջիկը» վեպը, ուր Երուխանը ոչ թե պատկերում է ամիրայի վերելքը խաբեության, կողոպուտի, շահագործման միջոցով («ամիրայի սովորական տիպար, կառավարական հասույթներու, թուրք փաշաներու նենգամիտ ու անկուշտ կողոպտիչ, շվայտ, հաճույքի ու տոփանքի գերի»), այլ նրա ընտանիքի անկումը նրա անսպասելի բանտարկությունից, կալվածների ու հարստության մեծագույն մասից զրկվելուց և մահվանից հետո («Սարսափը, լքումը հանկարծորեն տիրած էին շոնդալից ապարանքին մեջ, սուգ և լռություն ամեն կողմ»): Գլխավոր, խոշոր ավազակի փոխարեն վեպի կենտրոնական կերպարները նրա ժառանգներն են, որոնց հիմնական գործը ստացած ժառանգության մսխումն է: Իհարկե, ոչ բոլոր ժառանգներն էին ի վիճակի լինում բազմապատկել իրենց նախորդների կուտակած հարստությունը, սնանկացումը նույնպես կապիտալիստական հարաբերությունների բնորոշ կողմերից է: Սակայն ամիրայի կուտակած հարստությունը մսխվում է կերպարների անմտությամբ, «ջուրի պես»՝ «խոլ շվայտության մը անձնատուր»: Երուխանը տարվում է իր հերոսի ժառանգական մոլություններով. «ժառանգականորեն մոլի, ախտավարակ, ցոփ հետի մը արյունե արյուն, միսե միս փոխանցված մոլություններուն հանումն էր ատ, շարավոտ ամիրայության առհավությունը»: Այդպես է կործանվել նաև «կնամոլ և զեխ» Մաթոս ամիրան:

Ամիրաների անկումն այսպիսով պատճառաբանվում է ոչ թե օբյեկտիվ հասարակական օրինաչափություններով, այլ պատահական կամ երկրորդական հանգամանքներով. կերպարների բեթևամտությամբ, ծախողանքով, ժառանգական, բիոլոգիական տվյալներով, ըստ որում ողջ դասին հատուկ առհավությամբ: Վեպում քիչ չեն չափազանցված, անհամոզիչ, հոգեբանորեն չհիմնավորված դրությունները, անսպասելի վերափոխումները: Հատկապես վերջում ասես մոգական գավազանի հարվածով կերպարները մի անսպասելի վիճակից անցնում են մյուսին, տարօրինակ մետամորֆոզներ են ապրում:

Ռեալիզմի երկրորդ շրջանի[1] երկերը գերծ չեն պատահական, առօրեական դիպվածների պատկերումից: Կարծես շրջկատելով կապիտալիստական աշխարհի խոր հակասությունները, մեծ բախումները, որոնց անսքող մերկացումն առավել ուժով դրսևորվեց ռեալիզմի առաջին շրջանում, ռեալիստների նոր սերունդը անցավ կյանքի առանձին հատվածների, առանձին մանր անհատների, ավելի շատ «հետևանքների», քան «պատճառների» պատկերմանը: Ասես փոքրացավ աշխարհը, նեղացվեց կերպարների գործունեության շրջանակը: Այդ կերպարներն իրենց արարքներով սոսկ հիշեցնում են հասարակական կյանքի խոր հակասությունները և ոչ թե ներկայացնում դրանք անմիջականորեն. արձակի մեծ մասամբ փոքր չափի մեջ փոքր մարդ իր անհորիզոն շրջադրությամբ, միօրինակ շարքաշ գոյությամբ, թշվառ ու լքված: Մի պահ ստեղծվում է այն տպավորությունը, որ հասարակ ժողովրդի զավակները մի անհասկանալի հակատագրով են դատապարտված աղքատության:

Պետք է ասել, որ հատկապես «փոքր» արձակը՝ պատմվածքը կամ նովելը[2] շատ հարմար են գալիս «Կյանքը ինչպես որ է» սկզբունքին և պատահական չէ, սկզբունքի պաշտպանները հայ գրականության մեջ հայտնի են առաջին ներքին որպես նովելիստ. Զտարբերակելով նովելը և պատմվածքը,

1 *Մենք հակված ենք այս շրջանն անվանել նատուրալիզմի գրականություն, սակայն դա հնարավոր չէ իրագործել ներկա առաջաբանի սուղ էջերում, քանզի հարցի լրացուցիչ պարզաբանման ու հիմնավորման անհրաժեշտություն կառաջանա այդ դեպքում, սկսած նատուրալիզմ հասկացության վրայից մեղանում ավանդաբար ընդունված բացասական իմաստը հանելը, հանգամանք, երբ հաշվի չի առնվում, որ դա գրականության պատմության օրինաչափ զարգացման մի աստիճան է և ոչ թե վիրավորական արտահայտություն:*

2 *Նովելը և պատմվածքը հաճախ նույնացվել են, տարբերակվելով հատկապես 19-րդ դարի սկզբին. «...նովելը այլ բան չէ քան կատարված, լսված պատմություն... շատ բաներ, որ Գերմանիայում նովել անունի տակ են գրվում, բնավ էլ նովել չեն, այլ սոսկ պատմվածք կամ ինչ որ կամենաք» (Էքերման, Զրույցներ Գյոթեի հետ, 25 հունվարի, 1827): Սակայն տարբերակումը, մեր կարծիքով, չի նպաստում հարցի ճշգրտմանը և բաժանելով գրականության որոշ տեսաբանների ընդունած սկզբունքը՝ թե նովելը և պատմվածքը սինոնիմներ են, կարծում ենք, պետք է մեկ կամ մյուս անվանումն օգտագործել այնպես ինչպես տվյալ գործը անվանված է տվյալ հեղինակի մոտ:*

այնուամենայնիվ չպետք է մոռանալ, որ նեղինակները հանախ այս կամ այն կերպ են անվանել իրենց գործերը հենց տարբերակելու համար: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ Երուխանը նույնպես տարբերակել է նովելը և պատմվածքը, նկատի առնելով առաջինի և՛ զսպվածությունը, խստությունը կերպարների ու դիպվածների նկարագրության մեջ, և՛ գործողության անապասելի շրջադարձը: Բայց բանն էլ այն է, որ թերևս իր հերոսների գորշ ու աննրապույր գոյությունը հետաքրքիր դաձնելու համար նովելային պատումի այդ հատկանիշները պահպանելու ձգտումը հակառակ արդյունք է տալիս, կամա թե ակամա, որոշ գործերում Երուխանը ստեղծում է իրոք անսպասելի՝ շտրամաբանված հանգուցալուծումներ, կեղծ ու սենսացիոնալ, հոգեբանորեն չպարզաբանված, անհամոզիչ դրություններ, ընկնում է որոշ սխեմատիզմի մեջ, մնալով երբեմն արտաքին գծերի սահմաններում, առանց խորանալու կերպարի, հանգամանքի, բարձրացրած խնդրի էության մեջ: Նովելային ավարտից այդպես տուժել են, օրինակ, «Պստիկ Սեփին պատմությունը», «Ծուլափին աղջիկը», «Քարին նշանը», «Եվնիկե», «Թաշկինակը» և այլ գործեր:

Կյանքն իր մերկությամբ, բազմազանությամբ, իսկությամբ պատկերելու պահանջը հավասար արժեք և գեղարվեստորեն արտացոլվելու հավասար իրավունք է տալիս բոլոր երևույթներին ու փաստերին: Ռեալիզմի երկրորդ շրջանի ներկայացուցիչները ոչ միայն չեն խուսափում տգեղի դրսևորումների ճշգրտագրությունից, այլև խեղանդամության, պաթոլոգիայի, հոգկալիության որոշ արտահայտություններ առանձին գործերի նյութ դառնալով կարևոր նշանակություն են ստանում նրանց էսթետիկական հավատամքի հաստատման տեսակետից: Խեղանդամված տիպեր, նողկանք առաջացնող նկարագրություններ կան «Պապուկը», «Զանգակահարը», «Համրին վրեժը», «Կուզը», «Օղորմություն մը» նովելներում: Կան տգեղի այլ դրսևորումներ ևս, որոնք ինքնանպատակ չեն, թեև չի կարելի պնդել, որ ամեն դեպքում դառնում են սոցիալական շարիքի հստակ ու աներկբայելի մերկացումներ: Այլանդակ պատկերներ ծնող այլանդակ իրականությունը իր կեղտոտ ու մութ անկյուններով ու խեղանդամված մարդկանցով չէր կարող չգրավել արվեստագետների ուշադրությունը: Սակայն իրականության մերկացումը երբեմն էլ հիմնականում սպառվում է արտաքին այլանդակության պատկերումով. «...լայնցած կաշեգույն շրթունքներուն մեջ լրջուկ ակռաները տեղ-տեղ կոտրտած, ու այդ նեխոտ խոռոչին մեջ միշտ կումտուկը-լոր կեցած է մսի կտոր մը՝ տգրուկի լպիրծ մորթին վերվերումներովը, թանձրացած լորձունքի ներմակությամբ մը ծեփված, և որ մերթ, չկարծած ատենդ, դուրս կպոռթկա մինչև թուշը, զոր կլզե, կանցնի... Կապիճներեն դուրս վիժած սասաթիկ խաժ աչվրները ցալոտ արցունքով միշտ ճպռտած, ամենեն տխուր ու գարշելի տպավորությունը կթողուն տեսնողին վրա, իրենց անասնական արտահայտությամբը սևեռուն են անոնք»: Այսպիսին է համրի դիմանկարը, որին ավելացվում է նրա, դարձյալ տհաճություն պատճառող գրաղմունքը՝ ոչխարի աղիքների առևտուրը, քաղցից մլավող կատուները և վերջում կատվի ճզմված մարմինը. «...չախչախեց անոր բրդոտ գանգը, արյունը ըղեղով խառն, դուրս պոռթկաց ու գարկավ... մոլեգնելով այդ ափ մը միսին վրա, որ ա՛լ անճանաչ կույտ մը եղած էր արյունաշաղախ. խածավ, փրցուց անոր կակղիկ մանր թաթերը, ծամեց, դուրս նետեց, արյուն թքավ... ճզմեց, անրռեց, արյունոտ խմոր մը ձևացուց»: Այլանդակության նման դրսևորումներից ընթերցողը ինքը պետք է եզրակացություններ հանի հասարակական կյանքի այլանդակության մասին, իսկ հեղինակը տալիս է միայն այլանդակության արտաքին կողմի վարպետ նկարագրությունը, չխորանալով, չվերլուծելով երևույթի արմատները, սոցիալական պայմանավորվածությունը: Կյանքի առօրեականության, իրենն սովորականության, առավել հանախ պատահող վիճակների, հակատագրերի ուրվանկարներում հասարակ մարդու բնորոշ վինակը խեղճությունը, աղքատությունն էր և դրան ուղեկցող հիվանդությունները, մահը, քայքայումն ու փքտումը: Ուստի Երուխանը և նրա գրչակիցները կեղտի ու այլանդակության անկիրք արտացոլողներ չեն. այլանդակության դեմ դուրս գալու համար պետք է ճանաչել և պատկերել այն: Բայց ռեալիզմի երկրորդ շրջանի ներկայացուցիչները, ի տարբերություն իրենց նախորդների, ինչպես տեսնում ենք, կանգ են առնում կես ճանապարհին:

Էրիխ Աուերբախը Գոնկուր եղբայրների «Ժերմինի Լասերտե» (1864) վեպի վերլուծության մեջ նշում է, որ 19-րդ դարի առաջին մեծ ռեալիստների՝ Ստենդալի, Բալզակի և նույնիսկ Ֆլոբերի երկերում «...ժողովրդի ստորին խավերը կամ, կարելի է ասել ժողովուրդն ընդհանրապես, բոլորովին հանդես չեն գալիս, և եթե ժողովուրդը նրանց վեպերում երևան է գալիս, ապա գրողը վերևից է նայում նրա վրա, և ոչ թե տեսնում նրան որպես այդպիսին, կյանքային պայմաններում... ռեալիզմը պետք է ընդգրկեր ողջ ժամանակակից կուլտուրան, աշխարհի ողջ իրականությունը, ուր իշխում էր բուրժուազիան, բայց ուր արդեն զգացվում էր իրենց ուժը և հասարակության մեջ իրենց դերը ըմբռնած մասսաների ըստանալի ենչումը: Ժողովրդի ստորին խավերը պետք է մտնեին լուրջ ռեալիստական գրականություն, դառնային նրա առարկան. Գոնկուրները իրավացի էին... այդ է վկայում ռեալիստական արվեստի ողջ զարգացումը»:[1]

Արդ, վերադառնալով հայ գրականության փորձին, հիշենք, որ 19-րդ դարի առաջին մեծ ռեալիստների մոտ (Պարոնյան, Սունդուկյան, Շիրվանզադե) կան ժողովրդի ներկայացուցիչների բազմաթիվ, հանախ հմայիչ ու անմոռանալի կերպարներ, սակայն աշխատավոր մարդիկ, տխուր, մոռացված դեմքերը, հաջորդ սերնդի արձակագիրների մոտ դառնում են որոշիչ, մեծ մասամբ միակ հերոսները: Այստեղ արդեն չկան կամ գրեթե չկա «ազգային ջոջերի» պատկերասրահ, զիմզիմովներ, զամբախովներ, ալիմյաններ, էլիզբարովներ:

Դեմոկրատական լայն խավերի շարքաշ ու դաժան գոյության պատկերները արտացոլումն էին անզարդ այն ռեալականության, որը գունավորման կարիք չի զգում, մերժում է երևակայության պտուղները: Դեմ գնալ ճշմարիտ փաստին, նշանակում էր դեմ գնալ իսկական մարդկայնությանը, որը բարձր է ամեն ինչից: Երուխանի մոտ կան և՛ կյանքից վերցրած պատկերներ, և՛ կերպարներ, դեպքեր, մի խոսքով իրողություններ, որոնք տեղյակ մարդկանց հայտնի էին դառնում, թեև որոշ անուններ և մանրամասներ կարող էին և երկի մեջ փոխված լինել: Այն, ինչի դեմ բողոքում էր Շիրվանզադեն, նշելով, որ իրողությունն առանց գեղարվեստական մշակման, փոփոխման պատկերելու դեպքում վերածվում է պասկվիլի, Երուխանը իրագործում էր, առանց մտահոգվելու և խորշելու: Հայտնի է, օրինակ, որ «Հարազատ որդին» վիպակում ներկայացված էր իրողությունը այնպես, որ 1936 թվականին հրատարակելով այն առանձին գրքույկով, հրատարակիչը նշում էր. «...այս իրական պատմության տխուր դերակատարներեն ոմանք տակավին կապրին, և որոնց անունները միայն փոխելով խույս կուտանք դատական ավելորդ հետապնդումներեն»:

Անա թե ինչի էր հասցնում «Կյանքը ինչպես որ է» սկզբունքի հետևողական կիրառումը: Փաստագրական բնույթը իր հետ բերում էր թերություններ, բայց բերում էր հանախ նաև ժամանակի ճշմարիտ պատկերը, որը մեզ, այդ իրականությունից հեռու ընթերցողներիս հնարավորություն է տալիս ճանաչել այն իր կենդանի բազմազանությամբ:

Երուխանի երկերում գործող գլխավոր ուժը՝ սոցիալական անռելի չարիքը՝ աղքատությունը իր մգլանոտով, մինչև ոսկորները թափանցող ցուրտ խոնավությամբ, խավար ու անշուք, իրար վրա թափված, ծուռումուռ հյուղակներով, սովալուկ, նիհար, հիվանդ, ծեծված էակներով, կործանված երազներով, անպաշտպան ու աննիստատ ճակատագրով, բարձրացնում է այն հարցը, թե մահը չէ՞ միակ մխիթարությունն ու ելքը, փրկությունն անիծյալ աշխարհից: Իսկ աշխարհը կարծես թարս է կառուցված, իր ամեն մի պտույտով բերում է նոր հոգսեր, նոր ցավեր, նոր բախումներ ու ստորացումներ, գնալով վատթարանում է մարդկանց վիճակը, դառնում ավելի ու ավելի անապահով, անհեռանկար, մղձավանջային, ուղեկցվելով անհագնացող բարոյական անկումով: Իսկապես, ոչ մի երևակայություն այստեղ չէր կարող հասնել իրականության ետևից:

Հասարակ մարդու այս ողորմելիության պատկերները հաստատուն տեղ գտան ժամանակի հայ գրականության մեջ: Ինչքա՜ն նմանություններ կան, ասենք, Նար-Դոսի «Մեր քաղի» և Երուխանի մի շարք նովելների միջև: Բայց արձակով

[1] Эрих Ауэрбах, Мимесис, М., 1976, стр. 489—490.

շպարվեց թշվառների ու լքվածների բնակությունը գրականության մեջ. այն տեղ գտավ նաև պոեզիայում: Պաշտպանելով այդ ռեալականության նշմարտացի արտացոլման իրավունքը, Երուխանը և նրա արվեստակիցները պաշտպանում էին ժողովրդի մարդկային անկապտելի իրավունքները:

Բայց որքան էլ դժնդակ է իրականությունը, որքան էլ ողբերգական՝ պարզ ու միամիտ այդ հոգիների ճակատագիրը, արձակագիրը նրանց չի նայում պեսիմիստական հայացքով: Ապշեցուցիչ վնիտ ու պայծառ մի բան կա նրանց էության մեջ: Դա նույնիսկ մաքրության ու անմեղության խորհրդանիշ՝ ձյան շլացուցիչ սպիտակությունը կարող է լինել, որի տակ ծածկվում ու սառչում են իրենց մոր գերեզմանին պառկած անպաշտպան մանուկները («Աչի մայրիկը»): Ցնցող պատկեր, ողողված ազնիվ վշտի լույսով: Դա իրեն՝ արվեստագետի զգայուն հոգու լույսն է տարածված իր հերոսների վրա, բայց և դա իրենց՝ հերոսների, իսկական աշխատավոր ժողովրդի հոգևոր անեղծ լույսն է՝ անդրադարձված հեղինակից: Թեև բիրտ իրականությունը նրանց մղում է միայնության, ինքնամփոփ գոյության, սակայն նրանք միայնակ չեն. զրկանքների, դառն աղքատության մեջ նրանք ջերմորեն կապվում են իրար, ձգտում նեցուկ դառնալ, օգնել մեկը մյուսին: Հնարավոր չէ անտարբեր անցնել սերը նկարագրող էջերի կողքով. մարդկային անծայրածիր ողբերգության միջից, Երուխանի հերոսների համար, սերը բարձրանում է արևի նման: Ջերմացնելով ու փրկելով մարդուն միայնության սպանող զգացումից, սերը ասես հավերժությունից եկած աշխարհի անխախտ մի նախասկիզբ, իրականության դժնդակ քաոսի մեջ ճնշում է որպես կորսված հարմոնիայի մեղեդի: Պարզ ու հզոր, մաքուր ու բարձր, անմիջական ու հավատարիմ է սիրո ապրումը աշխատավոր մարդկանց մոտ, և սիրածի անբաժանելի կորուստը նրանք ընդունում են ինչպես տարերային աղետ, մահը գերադասելով մենությունից, քանզի սերը նրանց միակ, անչափելի, ոչնչով չփոխարինվող հարստությունն է, գոյության մեծագույն արժեքը և նշմարտությունը. «Վարդուհին կար... հրեշտակի պես ախնիկ մը... Ան ինծի կսիրեր... էս անիկա խենթի պես կսիրեի... իրար պիտի առնեինք... Ասված չուզեց... մեռավ Վարգուկս... մեռա՛վ ամա

սիրտս քաշեց փրցուց, հետը տարավ... էս ալ պիտի մեռնեի ամա, ասված չուզեց»: Ակատագրի ողջ դառնությունը, վրշտի ողջ ուժը խտացվում է մի սովորական տողի մեջ. «... ալ վով կար աշխարհին մեջ ինծի համար»: Այդ սովորականի մեջ է Երուխանի արձակի գլխավոր արժանիքը:

Սիրո այդ նկարագրությունները կարդալիս թվում է, թե Երուխանը մեծ սիրահար Սայաթ-Նովայի նման սիրահար էր. սիրո համապարփակ զգացում, ապրված այլ ժամանակներում, այլ իրականությունում, բայց նույն այրումով ու նույն նվիրումով: Այդ նկարագրությունների մեջ էլ ամենագեղեցիկը պստիկ տղայի և պստիկ աղջկա սերն է՝ թշվառների աշխարհի այդ Ռոմեոյի և Ջուլիետի: Հայ գրականության մեջ դժվար է հիշել այդքան ցնցող սիրո պատմություն, այդքան պարզ ու անզարդ միջոցներով դրվագված: Ինչպիսի՜ ասպետականություն, ինչպիսի՜ ինքնամոռաց նվիրվածություն ծայր աղքատության ու զրկանքի մեջ մեծացող տղայի արարքների մեջ: Իր սիրած սովալլուկ աղջկան, տառապանքով ձեռք բերած չնչին վաստակից նա բաժին է հանում ծեծի սարսափի տակ, և հստակ է, որ իր կյանքն էլ կտա նրան փրկելու համար.

«— Արո՛ւս, այսօր ի՞նչ կերար...

— Ցամաք հաց:

Ամպ մը անցավ Սեփին աչքերեն, պստիկ, գրեթե անլսելի ճեծյուն մը թռավ կոկորդեն, երկյուղալի ակնարկ մը հածեց շորսդին, կամացուկ մը գրպանը խոթեց ձեռքը և բան մը դուրս հանելով՝ դրավ զայն պստիկ աղջկան վար կախված ձեռքին մեջ, միանգամայն փսփսալով.

— Վաղը եմիշ առ կեր, հա՞ աղվորիկ Արուսս»:

Ինձ թվում է, այս անշուք տողերի առաջ կխամրեն փայլուն գրքերում տեղ գտած սիրո ամենափայլուն խոստովանությունները:

Կա, այնուամենայնիվ, մի այլ նշմարտություն նույնպես, բիրտ աշխարհի մի անխախտ օրենք, որ ինչքան ուժեղ, նույնքան էլ փխրուն այնպիսի երևույթ ինչպես սերը, կործանվում է ցինիզմի ու վայրենության հարվածների տակ. գեղեցկի զոհաբերությունն անամոթ անմարդկայնությանը դասական ռեալիզմի բարձրացրած գլխավոր խնդիրներից մեկն է: Աշ-

խարհում ինչ տեղ կար մարդկային արդարության համար թուրքական լծի տակ տառապող հայության համար՝ կրկնակի ինչ: «Հայրենիքի կործանած օջախին կսկիծը», 1896-ի հայկական կոտորածից փրկված գաղթականների կյանքը պատկերող իր մի քանի գործերում Երուխանը ժլատ ու զուսպ մի քանի գծով ընդհանրացնում է ժողովրդի անցած պատմական ճանապարհի դառն փորձը, բարձրացնում իր բողոքի ձայնը «անիրավության մեծագույն տոմարին դեմ»:

Ազգային և սոցիալական հալածանքների դժոխքից անցնելով, նշմարիտ ժողովրդի հարազատ որդիները պահպանում են իրենց հոգու անաղարտությունը ու արդարության սրբազան հույսը: Որքան պարզ ու հասարակ են Երուխանի կերպարները, այնքան մոտ են նշմարտությանը, որքան ազնիվ են, այնքան, արձակագրի համոզմամբ, ուժեղ են. «Այն տաժանելի կյանքը, զոր կվարեն այս մարդիկ ծովու վրա, արեվին տակ, փողոցներու մեջ, կարծես ավելի կզորացնե, կամրապնդե անոնց ուժն ու կորովը: Իրենց բիրտ ու կոպիտ կենսավարության մեջ անզգա երջանկություն մը կվայելեն, զոր բարձր դասակարգի մարդիկ իրենց հեշտակեցությամբն հանդերձ՝ անկարող են գտնել, բացառձակ անկարող: Քիչ մը Աստծո մատը կա, կարծեմ, այս բանին մեջ»:

Երուխանը ինտուիցիայով լավ է զգում, որ այլանդակ ու ճզմող հասարակարգի պայմաններում աշխատավոր մարդիկ պահպանում են իրենց առողջ էությունը, այն ուժը, որ միշտ էլ հատուկ է եղել ապագան կերտող դասակարգերին: Մի բան, որից զուրկ են իշխողները—սա թերևս պրոլետարիատի պատմական առաքելության և իշխողների դատապարտվածության նախազգացում էր: Գրականության զարգացման հաջորդ փուլում պրոլետարիատի հաղթական պայքարի պատկերումը դարձավ գերակշռողն ու որոշիչը: Արևմտահայ գրականության մեջ դրա ցայտուն արտահայտությունն է Վարուժանի ստեղծագործության ծավալումը «Սարսուռների» թշվառ ու անօգնական դեմքերից մինչև պրոլետարիատի մեծ պայքարի, «փողոցներու գրոհի» դրվագումը «Դողգոթայի ծաղիկներում»: Երուխանի ստեղծագործությունն իհարկե մընում է պատմական այս պրոցեսի նախազգացման սահմաններում միայն, բայց կրկնում ենք, դժվար է գերագնահատել

գրականության այս կարևոր քայլը թեմայի հաստատման ու ճշգրտման տեսակետից: Աշխատավոր մարդը ոչ միայն նվաճեց գեղարվեստի հիմնական հերոսը դառնալու իրավունքը, այլև հաստատվեց, որ մարդկության լավագույն հատկանիշները իր մեջ են և ոչ թե դրսից փայլուն, ներսից ապականված իշխողների ու կառավարողների:

4

Հայ վեպի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի Երուխանի «Ամիրային աղջիկը»: Վեպը կազմված է առանձին բաժիններից, երբեմն իրենց առանձին նշանակալի կերպարներով, որոնք կամ իրենց դերն ավարտում անհետանում են (օրինակ՝ Աբգար Կոստանյան, Բարթող աղա), կամ հանդես գալիս վեպի երկրորդ մասից (Սոֆի, Համբիկ և այլք): Ըստ որում կերպարների մտահոգությունները, արարքները ոչ միշտ են ուղղակիորեն կապվում վիպական գործողությունների բուն ընթացքին: Չի կարելի պնդել սակայն, որ վեպի որոշ կտորների անկախությունը և կերպարների որոշ արարքների անջատվածությունը իրարից ու վիպական գործողությունների առանցքից, լրջորեն խանգարում է վեպի ամբողջականությանը: Բոլոր կերպարներին հաջողությամբ միացնում են տիկին Երմոնեն և Արշակը, և, որ ավելի կարևոր է, անկախ կտորներն ինքնին՝ իրականության այլևայլ հատվածները, մարդկային էության այլևայլ դրսևորումները արտացոլում են գեղարվեստական այնպիսի համոզչականությամբ, որ ոչ մի կասկած չի առաջանում դրանց լինելու-չլինելու մասին: Առանձին կտորները չկորցնելով իրենց անկախությունը, հաջողությամբ զումարվում են, ստեղծելով գրավիչ մի խճանկար: Միաժամանակ չի կարելի պնդել նաև, թե դրանից բընավ չի տուժում իրականությունն իր հասարակական ցայտուն ամբողջականությամբ պատկերելու կարողությունը: Այն, որ Երուխանի նովելներում և պատկերներում տրվում են իրականության մասնատված հատվածներ արձակի փոքր ժանրերի առանձնահատկությամբ չէր պայմանավորված միայն. նրան հատուկ է աշխարհի այդպիսի կտրտված, հատվածային ընկալում, կյանքի պատկերում «ինչպես որ է», իր կոնկ-

ռետ-հատվածային իրական վիճակների մեջ: Կյանքային անմիջականության, իրականության կոնկրետությանը հավատարիմ մնալու համար ռեալիզմի երկրորդ շրջանի ներկայացուցիչները ավելի քիչ են դիմում կենդանի հայեցողությամբ տրվող այդ հատվածների համադրությանը, գեղարվեստական ընդհանրացմանը, ամբողջացմանը: Արվեստագետի երևակայությունն ավելի շատ ծառայում է հատվածի, մանրամասնի մշակման, քան առկա եղելություններից իրականության ընդհանրացված-գեղարվեստական պատկեր կերտելու վրա: Երուխանը մանրամասնի վարպետ է, ըստ որում, մանրամասնը տրվում է զգայական այնպիսի ակներևությամբ, ինչպես կտավի վրա, նկարչորեն՝ տեսողական նկարագրումներով, որոնք ստեղծում են ռեալականության, եղելության պատրանք: Հմուտ ձեռքով են գծագրվում իրերը, մթնոլորտը, բնությունը: Բայց առավել հմտությամբ է նա վրձնում դիմանկարները, որոնք հատկապես «Ամիրային աղջիկը» վեպում ստանում են երգիծական արտահայտություն: Երգիծանքի բանալիով բացվում է կերպարների հասարակական գործունեության, միջավայրի և հասարակական կապերի, քաքնված կոմիկականից մինչև եղկելի բնույթը: Արձակագիրը կիրառում է տարբեր հնարներ. մերթ ժպիտով, մերթ հեգնանքով, մերթ ոչնչացնող ծաղրով իրողություններին վերադարձվում է իրենց իսկական, տհաճ էությունը:

Վեպի առավել ցայտուն տիպերը՝ Աբգար Կոստանյանը, Բարթող աղան, Թադեոս Մերկերյանը, սկսած իրենց սյուտֆինից, մարմնավորվում են գրոտեսկային եղանակով: Արձակագիրը էղկելին միաձուլում է ծիծաղելիին, դիմում ծաղրանկարի, դեֆորմացիայի, բայց արտացոլումն այնքան ճշմարտանման է ստացվում, որ դրանք ընկալվում են որպես օրինաչափ, բնական կողմեր: Պետք է նշել, որ վեպի կենտրոնական կերպարները՝ տիկին Երմոնեն և Արշակը, ավելի տարտամ ու պակաս տպավորիչ են, քան Կոստանյանը, Մերկերյանը, Բարթող աղան, և դա հասկանալի է. վերջիններս ներկայացնում են տվյալ հասարակության առավել գործուն, առավել ապականված, առավել տիպական մասը, ներկայացնում են նրանց, ովքեր ոչնչի առաջ կանգ չեն առնում իրենց ստոր ձգտումներն իրագործելու համար: Բավական է նիշել

Բարթող աղայի զզվանք առաջացնող մսագործությունը. գիշերներն իր խփած շների ու կատուների միսը մսավաճառներից գնած «կենդանիներուն մարմնին էն վարնոց մասերին» հետ խառնելիս նա կնոջ առաջ արդարանում է այսպես. «—Կրնի՛կ, աղջիկները մնացին, առնող չի կա. փարա պետք է, փարա՛»: Փող շինելու անհրաժեշտությունն այսպիսով, նման մարդկանց համար արդարացնում է ամենախստմենելի արարքները: Իսկ մերթ ընդ մերթ կրկնվող «Կատարինես, Մագթաղինես երեսունը անցան» նրա արտահայտությունը ընդգծում է վիճակի ծիծաղելիությունը: Երգիծական հնարները առավել ցցուն են դրսևորում ապականված իրականությունը, դրամի, կեղծիքի, ստորության, կողոպուտի անբաժանելի կապը: Իրենց մեծ քե փոքր ցանկություններն ու պահանջները մարդիկ նման իրականության մեջ կարող են իրագործել միայն սեփական անհատականության եղծման գնով: Պահպանել արժանապատվությունը և բավարարել տարրական պահանջները անհնար է: Ագնվությունը և հարստությունը հակոտնյաներ են. կամ մնալ աղքատության մեջ և մնալ ազնիվ, կամ ապրել շքեղության մեջ ապականելով հոգին: Եվ Մերկերյանի խոսքերը բացում են ոչ թե պատահական անհատի հուսահատ ցինիզմը, այլ աշխարհի բիրտ օրենքը. «Աշխարհին գործը տոլապ է, ե՞ս եղա մեկ հատիկ շիտակ մարդ... ծո ան խոշոր-խոշոր հարուստները կտեսնանք կոր նե ի՞նչ են քի, գող ավազակ...»: Արդ, գրոտեսկի միջոցով վեպում բացահայտվում է հասարակարգին խորապես հատկանշական այլանդակությունը, դրա համար էլ գրոտեսկը նշմարտանման ու բնական է թվում:

Հայ գրականության հիանալի ներբափանցումներից է Կոստանյանի անեռևակայելի հաջողությունը Հ... գյուղում, որը մարդկանց մասսայական տխմարացման բնութագրական մի օրինակ է: Շշմեցնող, դատարկ խոսքերով ու խոստումներով, մարդկանց թուլություններն ու թերությունները հմտորեն շահագործելով այդ բախտախնդիրը, ինքնակոչ գիտնականն ու մանկավարժը բարձրանում է ալիքի վրա նիշտ այնպես, ինչպես պատմության դարը հեգնանքով հաջողության են հասել մեծ ու փոքր զանազան ֆյուրերները, իրենց պարանոյան ծախելով խոր իմաստության տեղ: Զարմանալի է,

բայց փաստ, որ ամբարտավան ու մեծամիտ այդ տիպերի վերելքը միշտ էլ հենվում է սոցիալ-հոգեբանական նույն մեխանիզմի վրա: Ուշագրավ է, որ մարդկանց հոտային ինքնամոռաց ձիացումները հաջողակ բախտախնդիրների «գործունեությամբ» այլ միջոցներով ու այլ եղանակով, այլ թեմայի ու սյուժեի մեջ արձագանքվեցին Դեմիրճյանի «Քաջ Նազարում»:

Երուխանը նահատակվեց քառասունհինգ տարին դեռ չբոլորած: Արձակագրի համար դա երիտասարդ տարիք է: Նա մեծ հնարավորությունների արվեստագետ էր, և որքան էլ ծանրակշիռ է նրա թողած գրական ժառանգությունը, այնուամենայնիվ կասկած չկա, որ նա կստեղծեր իսկական գլուխգործոցներ: Թեև նրա արձակում չկան ժողովրդի ու նրա հերոսների պատմական մեծագործության պատկերներ, բայց կա մի հերոսական կերպար, որն իր կյանքը նվիրեց «վերջնական ու վճռական երջանկությանը». դա Երուխանի կերպարն է:

ԱՄԻՐԱՅԻՆ ԱՂՋԻԿԸ

Պոլսահայ կյանքի դրվագներ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՅԼԱՍԵՐԱԾՆԵՐԸ

Ա.

— Թոհա՜ֆ բան,— կմռլտար Մերկերյան Թադեոս աղան, աղեբեկ, երկար մորուքը աճքռելով դողդոջուն մատվընեռուն մեջ, անհամբերութենեն ոտքերը գետինը զարնելով փողոցի այդ դրանը առջև, որ չէր բացվեր, հակառակ մեկ ավելի բախումներու։— է՜,— կշարունակեր մարդուկը ողորմուկ շեշտով մը,— աս տունն ասանկ ըլլալու էր մի՜... ի՜նչ օրեր անցուցինք, ի՜նչ օրեր... մե՜ղք, հազար մե՜ղք...

Եվ վարանոտ, ուռնակը վերցնելով, անգամ մըն ալ ձգեց զայնը։ Հին հաստաբետ դուռը դղրդաց։

— Օ՜հ,— հառաչեց Թադեոս աղա, վերջապես դրան ետին ոտնաձայն մը իմանալով։

Կամացուկ մը, անշշուկ բացվեցավ դուռը, և մեղրամոմի գույնով թոմթոկած դեմք մը ծրագրվեցավ այդ բացվածքին մեջ։ Պառավ մըն էր։

— Ո՞վ կուզեք,— մռլտաց ան հազիվ լսելի ձայնով։

— Հանըմը։

— Հանըմը հիվանդ է։

— Պե՜ ճանըմ,— պոռաց Թադեոս աղա անհամբերությամբ,— հանըմին հիվանդությունը ի՞նչ է, որ աստար երկայն տևեց։

— Չիյտեմ, հանըմը հիվանդ է։

— Հանրմին գնա ըսե, որ Թադեոս աղա Մերկերյանն է եկողը, իմ անունս իմանա նե կաղեկնա։

Պառավը քթթեց իր աղոտ աչքերը։

— Հանրմը հիվանդ է։

Թադեոս աղա շարժում մը ըրավ դուռը հրելու և ներս մտնելու, սակայն անիկա փոխանակ բացվելու հանկարծ դոցվեցավ, ու այցելուն աչքերը դրան սևեռած՝ մնաց անանկ, արձանի պես։

— Վա՜յ, շո՜ւնշանորդի,— հայհոյեց Թադեոս աղա, դողդոջուն մատներովը ամբռելով մորուքը, հուզմունքեն դժգույն, աչքերը գրեթե թաց։— Ինծի՜, հե՜, ինծի՜, Մերկերյանի՜ն, ինծի պես մարդո՜ւն ալ... Հասկցանք,— ըսավ, քայլերը ուղղելով փողոցն ի վար,— աս կնկանը խելքին քիչ մը դպած ըլլալու է...

Ու ա՛լ հիմակ երկար թիկնոցին երկու քղանցքները իրարու վրա ժողվտելով, Մերկերյան Թադեոս աղան վերհիշեց ամբողջ անցյալը այդ տան, որուն դուռը այդքան բիրտ կերպով գոցվեր էր իր երեսին։ Մարկոս ամիրան ի՜նչ շեն, կենցաղասեր, շվայտ մարդ էր. տանը դուռը մշտաբաց, սեղանը հավետ տրամադրելի։ Կեր, խմե, ապրե։

Մերկերյան ամենեն համառ, ամենեն աներես հաճախորդն էր եղած այդ արգավանդ սեղանին։ Ամիրան ոսկին ափով կնետեր։ Ե՛ռ ուղածիդ չափ։

— Ի՜նչ օրեր էին, պե՜,— կմոլտար մարդուկը՝ իր հուշքերուն մեջ թաղված՝ Հ... գյուղին ծամածուռ սալարկներուն վրայեն անցնելով իր մսկոտ, ինքնամփոփ երևույթովը։— Ի՜նչ օրեր էին... մարդ ամիրա ըլլալեն ետքը ատանկը ըլլալու է։ Մերկերօղլու կըսեր, մեյ մըն ալ բերնեն կհաներ... շենք շնորհք ամիրային աչքին լուսն էի... է՜յ, շատ աղեկ,— կկրակացներ մարդուկը, հանկարծ կանգ առնելով փողոցին մեջ, և ֆինը մինչև ընքվիները վար քաշելով,— ամիրայի մը աչքին լուսը եղիր, տարիներով անոր հետ ծունկ ծունկի նստե, ժամանակ անցուր, ետքեն ալ օրին մեկը, ատ ամիրային տունեն վռնդվե... ծո՜, աս ըլլալի՞ք բան է,— կպոռար։

Ներուկը լռեց ու կատաղորեն սկսավ արագ-արագ քալել, իր ռեգատլիկ բերնեն մերթ սա խոսքը միայն թոցնելով սուլյունի մը պես.

— Ինծի վռնդել, հե՜...

Ու միևնույն թափով ներս մտավ եկեղեցիին գռնեն և շունչը խորհրդարանը, լայն թիկնաթոռի մը մեջ առավ.

Հոն, սակայն, կատաղության նոր ու ավելի բուռն տագնապ մը գրեթե պահ մը կանանչցուց մարդուկին երեսի ալիքավորված մաշկը։

— Ը՜հ, ե՜ս,— պոռաց,— ե՜ս, Մերկերյան, Թաղական խորհուրդին տասնհինգ տարվան գանձապահը, վռնդվի՜մ...

Ժամկոչը, կապույտ շալվարով կոնճ, կարմրայտ գավառացի մը, որ Թաղական էֆենտիին ետևեն եկած դուրսը կսպասեր, ըրան մեջ երևցավ՝ ծունկ բարև։

— Հրամմեցեք, աղաս, ինծի՞ կանչեցիք...

Մերկերյան, ինքնաշարժորեն, ոտքի ելավ, ուժգնությամբ քալեց մինչև դուռը՝ ապահովապես ապտակելու համար այդ հանդուգնը, որ իր է՛ն անձկագին րոպեներեն մեկը վրդովել կուգար այդպես. բայց քայլ մը մնացած՝ հիասթափ, կեցավ։

— Գնա բա՜նդ, ծո, քեզ կանչող չեղավ, խմպըլ,— պոռաց։

Մարդը, ահաբեկ, ետ քաշվեցավ և դուռը գոցեց։

Առանձին, Թադեոս աղա սկսավ վեր վար ճեմել խորհրդարանին մեջ, թիկնաթոռի մը, սեղանին դարնվելով մերթ, ու երբեմն մեկեն կանգ առնելով ու ակնապիշ ձեղունը դիտելով, ուր կապույտ թևիկներով ճերմակ հրեշտակիկներ ձյունաթույր ամպի շեղջերու վրա կսավառնեին։

Մեկենիմեկ, սակայն, խուցին մեջտեղը կեցավ գանձապահը, աչքերուն մեջ շեկ լույսով մը։ Դեմքին ավրված գիծերուն վրա ժըպիտ մը կկարկամեր հիմակ։

— Տղա՞ եմ, ի՜նչ եմ, որ կբարկանամ,— մռմռաց.— ճար մը փնտրեք գտնանք։

Նորեն նստավ թիկնաթոռին մեջ. կանանչ շուխայով ծածկված երկար սեղանին առջև, մորուքը շոյելով, ա՛լ գրեթե հանդարտած։

— Ամենը մեկդի,— կշարունակեր մրթմրթալ պատվարժան գանձապահը,— ծո էս ան քառասուն տարվան գինին ո՞ւր կրնամ գտնել, ան պատվական, ան մեռնի պես գինին...

Ու լեզուն շաչեցուց ժոռատ բերնին մեջ։

Եվ նորեն հիշոց մը արձակեց։

— Խե՜նթ, ցավագար դուն ալ,— մռնչեց մոլեգնորեն, նայելով դեպի այն ուղղությամբ, ուր հավանորեն կգտնվեր տունը, ուսկից վռնդված էր։

— Բայց,— ավելցուց,— վարպետությամբ վարվինք, խենթերուն հետ անանկով գլուխ կելլվի...

Նամակի թուղթ մը քաշեց առջին, գրիչը առավ, հազաց, կոկորդը մաքրեց, երերաց, տոտոզվեցավ ու սկսավ գրել.

«Հանըմ.

Ապահով եմ թե բնավ տեղեկություն չունիք, որ այսօր ձեզ այցելեցի ու ձեր պառավ խոհարարուհին— որուն ի՛նչ ցնորած ըլլալը գիտենք— ըսավ, թե հանըմը հիվանդ է։ Երբեք չեմ ուզեր հավատալ, որ դուք ձեր տան քսանհինգ տարվան բարեկամը պատվիրած ըլլաք ճամփել, երբ ան ներկայանա ձեր ասպնջական դուռը։ Գիտեմ, որ սրտերնիդ սուգի մեջ է, բայց կա՞ աշխարհի վրա ինե զատ մեկը, որ կարող ըլլա ձեր այդ անսահման սուգը ամոքել ու մխիթարել ձեզ։ Ես, որ ձեր երջանիկ մանկության օրերը տեսած եմ, կարելի՞ բան է, որ ձեր այս դժբախտության ու կսկիծի օրերուն անտարբեր հանդիսատես մը մնամ։ Խնդրեմ, ուրեմն, տիկին, թույլ տվեք ինծի՝ ձեր տան ամենեն հավատարիմ, ամենեն անկեղծ բարեկամին, գալ երբեմն իր սրտցավ բարեկամի պարտականությունը կատարել, թեթևցնելով ձեր սրտին անհուն ցավը և սրտապընդելով ձեզ մինակության ու դառնության այդ տխուր վիճակին մեջ։

Ձեր ցավին որքան ցավակից, ձեր սուգին որքան սգակից ըլլալս գիտնալովնիդ պիտի փութաք, անշուշտ, երկտողով մը գոհացում տալ սրտիս այս հույժ բնական փափագին և թույլատրել զիս, որ բարեկամական պարտականությունս կատարեմ դժբախտությանը այս օրերուն մեջ ալ։

Մնամ ձեր անկեղծ բարեկամը՝
Թադեոս Մերկերյան»

Պատվարժան գանձապահը անգամ մը ուշի ուշով աչքե անցուց նամակը, նորեն ու նորեն կարդաց և վերջապես իր նպատակին հասչողությանը հարմար դատելով զայն, պահարանի մը մեջ դրավ, հասցեն գրեց։ Ոտքի ելավ, նամակը ձեռքը, մտածկոտ։

— Եթե աս ալ չհաջողի՞,— մռմռաց։— Է՛հ, խերն եմ անիծեր, մեռնելու չեմ յա։

Քիչ ետքը, ժամկոչ ախպարը, իր կապույտ շալվարին հետույքը երերցնելեն, նամակը ձեռքը կերթար Հ... գյուղի փողոցներեն, քիթը բերանը գժդմնած...

— Փսխեր եմ նամակիդ ալ վերան, քո ալ վերան,— կմռլտար բիբերը կատաղորեն դարձնելով իր կլոր ակնակապիճներուն մեջ,— խմպլլ հե՞, ինծի՞, վա՛յ քո... վա՛յ քո...

Ժամկոչ ախպարը ազատ ասպարեզ կուտար իր զայրույթին՝ նախշուն ածականներու տարափի մը տակ ծածկելով Մերկերյան Թադեոս աղան, արարատյան գավառաբարբառին ամենեն նկարագեղ որակականները զատելով։

Վերջապես հասավ ամիրային տան առջև և դուռը զարկավ։ Բայց ան, ինչպես քիչ մը առաջ, շուտով մը չբացվեցավ։ Ժամկոչ ախպարը, որ արդեն սրտմտած էր, մեյ մըն ալ զարկավ ուռնակը, ավելի ամուր։ Պատասխան չկար։

— Վա՛յ քո ամիրային... վա՛յ հանըմին... վա՛յ քո նամակին...

Մարդուկը երրորդ անգամ զարկավ, կաս կարմիր, գավառական հիշոցներու ընկերակցությամբ։

Վերջապես, խորհրդապահորեն, դուռը շարժեցավ, ու անոր բացվածքին մեջ նորեն երևցավ պառավ խոհարարուհին թուլմաշկ դիմագծությունը, գորշ աչքերուն թաց ու նվաղկոտ արտահայտությամբը լուսավորված։

— Ի՞նչ է ան,— հարցուց պառավը իր հուսահատ շեշտովը։

— Աղան նամակ մը տվավ հանըմին համար,— պատասխանեց գավառացին, թուղթը դրան ճեղքեն ներս երկնցնելով։

Պառավը, միշտ զգուշավոր ու վախկոտ, չէր համարձակեր մատը դպցնել ամեն բանի, որ օտար էր և դուրսեն կուգար։

— Հանըմին նամա՞կ մի, ի՞նչ նամակ,— մոլտաց թուղթին վրա նայելով գրեթե խրտչած։

— Պե՛ հանըմ,— պոռաց ժամկոչը անհամբերությենեն կարմրած,— ես ի՞նչ գիտեմ, նամա՞կ...

Եվ, ա՛լ չհանդուրժելով ձգեց զայն գետինը, ապշահար պառավին աչքին առջև, ու առավ քալեց, շարունակելով իր զայրույթը հովացնել նկարագեղ հիշոցներով։

— Ը՜հ, ես խերն եմ անիծեր քո նամակին ալ... քո հանըմին ալ... փսխե՛ր եմ քո... թքե՛ր եմ քո...

Մարմարով հատակված ընդարձակ, քառակուսի բակին մեջ, որուն ցուրտ մերկությունը ձեղունեն կախված ստեղնավոր ջահով մը միայն կխանգարվեր, պառավը կեցած, նամակին վրա կնայեր ու ինքնիրենը կհարցներ.

— Ո՞ր աղան հանըմին նամակ կղրկե... հանըմին հետ ի՞նչ գործ ունի աղան... աս մարդիկը չի հասկցա՞ն, որ հանըմը ա՛լ մեկուն հետ գործ ունենալ չուզեր...Հապա եթե բարկանա՞ նամակը առնելուս...

Խեղճ կինը, վարանած, հանումը բարկացնելու վախով համակ, կմնար հոն, կիսաստվեր բակին մեջ, որուն բարձր ու վանդակապատ պատուհանները՝ դեղին սիրոներուն տակ՝ տկար լույս մը միայն թույլ կուտային ներս թափանցել։ Սև յազմային ներքև, որ անոր հերաթափ դանգը կպարտակեր. պառավին վշտահար, հյուծված, դժգույն դեմքը՝ շիմպանզեի մը դեմքին կազմը ստացեր էր, արտակարգաւ ցռուկովը ու ճակատին մեջ թաղված մանր աչքերովը։ Վտիտ ուսերուն վրա գլուխը կարծես մաշկով մը միայն փակած էր, ծոծրակը ներս քաշված, ճզճիմ, ողբալի։ Ցավագարություն մը այդ կինը, քայքայված ամբողջությամբ, վերահաս տարբաղադրության մը վտանգին տակ։ Սև չփակին և մոխրագույն շրջազգեստին տակ մարմինը ծայրեր, անկյուններ, ծռություններ ուներ։ Իր նողկալի ու արդահատելի պառավության մեջ անիկա իր պատկանած սեռին մեկ հերքումն էր։ Էգը հիշեցնող բան մը չէր մնացած վրան։

Ու դեռ իր վարանումին մեջ կշարունակեր մնալ հոդ, մարմարին վրա, երբ աջ կողմեն դուռ մը բացվելով՝ ձայն մը, կոչ մը լսվեցավ.

— Նեկտա՛ր, ո՞վ էր ան... Ի՞նչ է նորեն...

Պառավը սասանեցավ, հանցանքի վրա մեկենիմեկ բռնվող տղու մը պես։

— Նամա՛կ մը,— կակազեց, կաղնիկաղ ուղղվելով դեպի բացվող դուռը, որուն շրջանակին մեջ սևերով փաթթված կնոջ մը սիլուեթը ծրագրված էր։

Հանումն էր, տիկին Երմոնե Մարկոսյանը։

Արհամարհական շարժումով մը առավ նամակը, վրան նայեցավ, ուժգնորեն պատռեց պահարանը, որուն մեջեն դուրս ելավ Թադեոս աղային աղերսագիրը։

— Օ՛հ, սա ցնդածն ալ ինե ի՞նչ կուզե չիյտեմ։

Վեր ելավ սանդուխին գորգապատ աստիճաններեն և ձվաձև, ընդարձակ սրահի մը վրա նայող դռներեն մեկը բանալով մտավ փոքր խուց մը, ցած թիկնաթոռներով զարդարված։

Հսկա հայելի մը, մահոկենիե պարզ շրջանակի մը մեջ, մեկ պատը գրեթե կծածկեր՝ ամբողջ խուցը իր մեջ ցոլացնելով։

Հանդիպակաց պատին վրա կախված էր մեծադիր պատկեր մը ոև շղարշով ծածկված. էրիկ մարդու կենդանագիր մըն էր ան, ոտքի կայնած, մեկ ձեռքը բազրիքի մը կոթնցուցած, մյուսը տափատին գրպանը։ Քաղին մթության մեջեն անոր տխրանուշ դիմագծությունը կենդանի արտահայտություն մը կառներ՝ քաղցր, խորունկ ակնարկին տակ, թեթև ժպիտե մը լուսավորվելով։

Գաբրիել էֆ. Մարկոսյանն էր, հանումին ամուսինը, որ տարի մը առաջ մեռած էր դեռ գրեթե երիտասարդ, սուգի մեջ թողնելով այդ ամիրայական ապարանքը։

Պատուհանին մոտ, թիկնաթոռի մը ծայրը նստած, տիկինը կկարդար պատվարժան գանձապահին նամակը, հետզհետե ծաղրանքի, արհամարհանքի և բարկության նշաններ ցույց տալով դեմքին վրա։ Երբ ավարտեց, իր բարակ, ջղուտ մատներուն մեջ ճմրթկեց զայն, պլորեց, կծիկ մը ըրավ, տեսակ մը մոլեգնությամբ խածավ խածխծեց և հետո պատուհանին մեկ փեղկը բանալով, ուժգնորեն հեռուն նետեց։

— Կեղծավո՜ր,— կմրմնջեր,— կեղծավո՜ր... ցնդած դուն ալ։

Հետո բարկությամբ.

— Չէ՛, չպիտի գա տունս, մարդու երես տեսնալ չեմ ուզեր, ամենքդ ալ գետինը անցնիք... չէ՛, ի՛նչ ալ ընեք, ներս չպիտի առնեմ ձեզի։

«Հը՜,— կշարունակեր քալելով, բռունցքը գոցած,— վրե՞ժս պիտի լուծեմ՝ արհամարհելով ձեզ ամենքդ ալ... ի՛նչ, իմ անուշ, իմ չգտնված, իմ սիրական ամուսինիս մահեն ետքը՝ էրիկ մարդու երե՛ս նայիմ... արդյոք ան չի՞ բողոքեր վերեն, արդյոք չա՞նիծեր զիս՝ երբոր իր հիշատակը այդպես անարգեմ... Չէ՛, չէ՛, չէ՛,— կըհեծեր՝ կենդանագիրին առջև կեցած, արցունքոտ աչքերն անոր վրա հառելով պաղատագին ու կսկիծոտ...— չպիտի վրդովեմ այս տան խաղաղությունը, ուր դուն կաս միշտ, ուր հիշատակդ, ստվերդ կշրջի միշտ, իմ քաղցր, անմոռանալի ամուսինս...

Հետո նորեն սկսելով քալել.

— Հը՜, զիս մխիթարել, ցավս փարատե՛լ... ո՞վ կրնա ըսել թե ունի այդ կարողությունն, այդ զորությունը, մխիթարվի՛մ, ե՜ս, չէ՛, ըլլալիք բան չէ... սուգս է իմ մխիթարությունս, մինակությունս է իմ սփոփանքս, մարդոցմե հեռու ապրիլն է իմ ցավերուս դարմանը... Թադեոս աղան իմ վիշտս պիտի թեթևցնե եղեր, աստվա՛ծ իմ, ի՛նչ ապուշներ կան... ուրեմն այս մարդիկը դեռ չհասկցան, թե զիրենք կատեմ այլևս, այդ ատելությանը մեջ կփնտրեմ իմ զոհունակությունս, իմ մխիթարանքս...

Այդ վայրկյանին սենյակի դուռը բացվեցավ և մանչ մը վազե-

լով ներս մտավ, հազիվ տասերկու տասերեք տարու, խարտյաշ, գոուզ մազերով, կապույտ աչքերով, ճերմակ, աշխույժ և մսուտ։ Կարճ տափատեն վար բումբերը կերևային՝ կլոր ու ձիգ։

— Մամա՛։

— Զավա՜կս։

Կենդանագիրին առջև, մայր ու որդի իրարու պլլվեցան, խանդաղատագին ողջագուրանքի մը մեջ։

— Մամա՛ս, աղվորիկ մամա՛ս, նորեն ի՞նչ ունիս, ինչո՞ւ աչքերդ արցունքով լեցուն են...

— Իմ մխիթարութի՛ւնս, իմ երջանկութի՛ւնս, աշխա՛րհս, հոգի՛ս...

Ու մայրը չէր կշտանար գգվելե, հոտվտալե այդ խարտյաշ աղվոր գլուխը, որ իր կուրծքին վրա կիյնար այնքան միամիտ, այնքան համբուրելի լքումով մը, ու կփաթթվեր այդ քնքուշ էակին, կըսիրեր, կպագեր զայն, պահ մը կհեռացներ՝ բռնած անոր քունքերեն, անոր աչքերուն կապույտին մեջ թաղելով իր մայրական, անպարագիծ գորովը, անոր մատղաշ էութիյանը մեջ լվալով, զովացնելով իր վիշտը, իր վերքը, ու դարձյալ իրեն քաշելով, ավելի բուրբն, ավելի խենթ, ավելի խանդակաթ։

— Զավա՜կս, կյա՜նքս, լո՜ւյսս...

Վերեն, Գաբրիել էֆ. Մարկոսյան, սև քողին ետևը կանգուն, իր ժպտուն աչքերովը կդիտեր այդ աղապատալից գիրկընդխառնումը, ու կարծես երջանկության, կարոտի սարսուռ մը կկայծկըլտար իր խաժ բիբերուն խորը։

Հուսկ ուրեմն, տղան ինքզինքը ազատեց մորը բազուկներեն, թոթվրվեցավ, վրան գլուխը շտկեց, մազերուն խոպոպները հարդարեց և շփացած տղու մը ամբողջ ողորմիչ, բայց տիրական շեշտովը ըսավ.

— Մամա՜, ինծի ալ պիտի ղրկե՞ս պ. Կոստանյանին դպրոցը... գեղին է՛ն հարուստ տղաքը հոն կերթան կոր... Շատ աղեկ վարժապետ է եղեր. ամեն մարդ կգովե կոր. հա՞, մամա, ինծի հոն ղրկե, ես հոն երթալ կուզեմ... այո՛, կուզեմ, կուզեմ, կուզեմ,— վերջացուց շաքար ուզող տղեկի մը պես թզկալով։

Մայրը, տղուն այս լալկան պահանջին վրա, մեկենիմեկ լուրջ և խոհուն եղած էր, դեմքին նիհար ու ձգտված գիծերը, որ պահ մը ընդլայներ ու կակղացեր էին, նորեն իրենց բնական ուղղությունը գտան, տխուր, խոժոռ, ցավագին։

Չպատասխանեց։

Բայց տղան մորը հոգեբանությանը անծանոթ և անտարբեր՝ շարունակեց ավելի պահանջկոտ, ավելի աղմկալի ըլլալ։

— Այո, մամա՛, ես ան դպրոցը պիտի երթամ, պ. Կոստանյանը մինակ խելացի տղաքը կառնե եղեր, որովհետև կհասկնա եղեր, թե որ տղան խելացի է, ո՛րը անխելք...

Եվ քծինքով մոտենալով մորը, ու փաղաքշական.

— Մամա, ինծի անոր տար ցուցուր անգամ մը, տեսնենք խելացի՞ եմ։

Մայրը իր երազեն արթնցած ու քաղցր.

— Զավակս, քու խելացությունդ քննության կարոտ չէ. ատ աչքերը ունեցողը, ատ ճակատը ունեցողը անխելք կըլլա՞։

— Չէ՛, մամա, չէ՛, տար ինծի ան մարդուն ցուցուր անգամ մը, շատ կաղաչեմ... մամա՛, անուշ մամաս...

Պաղատանքը այնքան անդիմադրելի էր, որ մայրը չկրցավ իր մերժման մեջ համառիլ։

— Շատ աղեկ, տանիմ, զավակս, տանիմ... Ըսե տեսնեմ, Ռոպենսոնը լմնցուցի՞ր, Արշակ,— հարցուց մաման տղուն ուշադրությունը ուրիշ նյութի վրա դարձնել ուզելով։

— Ա՛խ, մամա՛,— բացագանչեց Արշակ աչքերը մեկենիմեկ խանդավառ, դեմքը զմայլական,— Ռոպենսոնը ի՜նչ քաջ մարդ է. Ուրբաթ գերիին հետ վայրենիներուն դեմ կռվեցավ և փախցուց զանոնք՝ գերիները ազատելով. ա՜հ, ի՜նչ սքանչելի բան է, մամա... որքան կուզեի Ռոպենսոն մը ըլլալ, խոշոր շոգենավ մը նստեի, մեծ ծովերուն մեջ փոթորիկի բռնվելով ընկղմեինք, մինակ ես ազատեի, ամայի կղզի մը ելլայի, հոն լամաներ գտնեի, մորթե հագուստներ հագնեի, մամուկ մը ունենայի ինծի ընկեր, ետքը մարդակերները գային, հրացանը ձեռքս անոնց վրա հարձակեի, պո՜մ, պո՜մ, պո՜մ... ամենքն ալ փախչեին, Ուրբաթ գերին ազատեի... Ուրբաթ գերի՜ն, քա՜հ, քա՜հ, քա՜հ...

Ու տղան սկսավ բարձր քրքիջներ արձակել, պահ մը դադրեցնելով իր շարժումները, զորս ըրած էր անմահ մենակյացին կյանքին դրվագները հիշելու և զանոնք բաղձալու միջոցին։

— Ուրբաթ գերին, ա՜խ, մամա, ան ի՜նչ թոհաֆ մարդ է,— շարունակեց տղան խնդալով ու շարժտկելով, ձեռքերը խաչած ջուրին մեջ խոթեց... վա՛յ, վա՛յ, վա՛յ...

Ու տղան ձեռքերը օդին մեջ վեր-վեր կհաներ ցավի խեղկա-

տակ ծամածռումներով՝ իբր թե ինքն ալ այդ միևնույն անհաճո արկածին ենթարկված ըլլար։

Սակայն զավկին բոլոր այս միմոսական սիրուն պատմվածքին պահուն մամային դեմքը խորունկ վշտի մը արտահայտությունը կառներ, հետզհետե ավելի շեշտվելով, ավելի ակներև։

Արշակ շարունակեց.

— Հապա ետքին ոչանված մարդակերը ուտել ուզեց նե՛, վա՛յ անպիտան, ի՞նչ գեշ սովորություն. բայց Ռոպենսոն թող չտվավ... Ա՜հ, Ռոպենսո՜ն, որչափ կուզեի Ռոպենսոն մը ըլլա՜հե՞, մամա, դուն ալ չե՞ս փափագիր, որ ես ալ Ռոպենսոն մը ըլլամ ու գիրքերուն մեջ իմին ալ պատմությունս գրվի այսպես... Չե՞ս ուզեր, հե՞, մամա՜...

Տղան իր ըղձանքներուն ղգվիչ այս հորդման թափին մեջ մեկենիմեկ կանգ առավ սակայն՝ տեսնելով մայրը, որ թիկնաթոռին մեջ հետզհետե դեպի ետև իյնալով վերջապես սկսեր էր հեկեկալ, ձեռքովը աչքերը գոցած։

Արշակ մորը վրա վազեց, ափիբերան, աղաղակելով, անոր ճիտը ինկած.

— Մամաս, ի՞նչ կա, ի՞նչ եղավ, հիվա՞նդ ես... չըսե՞ս։

Ու մայրը իր հեկեկանքներուն մեջեն.

— Արշակ, մամադ պիտի ձգես երթա՞ս... մամադ առանձի՞ն պիտի թողուս... չե՞ս գիտեր որ մամադ առանց քեզի չապրիր... Ռոպենսոնին մայրը ի՞նչ եղավ, չե՞ս գիտեր...

Մորը այս խոսքերը քրքիջի նոր տագնապի մը ենթարկեցին տղան, որ մամային երեսները փայփայելով.

— Բայց, աղվոր մամաս, ես Ռոպենսոնին պես չեմ ըներ, քենե հրաման կառնեմ, եթե տաս կերթամ, եթե չի տաս չեմ երթար... կամ թե քեզի ալ հետս կտանիմ, չըլլա՞ր, մամա...

— Չէ, զավակս,— պատասխանեց մայրը,— քիչ մը հանդարտած ու նորեն տղուն փաթթվելով,— չէ՛, ո՛չ դուն գնա, ո՛չ ալ հետդ տար... Դուն կդիմանա՞ս ատ շարշարանքներուն, իմ փափուկ հրեշտակս... Չէ՛, դուն հավիտյան չի պիտի բաժնվիս մամայեդ, հա՞ մի, հոգիս...

— Չեմ երթար, մամա, քենե չեմ բաժնվիր...

Ու իր հուռթի, կարմիր շրթները մորը վտիտ, դժգույն այտին կպցուց Արշակ՝ իբրև երաշխիքի անհեղլի արտահայտություն՝ Ռոպենսոնի օրինակին չհետևելու իր խոստմանը։

— Ըսելե չի՞ պիտի երթաս,— հարցուց մայրը նորեն, դեռ կասկածոտ։

— Ո՛չ, մամա, չի պիտի երթամ, խե՞նթ եմ, ատ ծովերուն մեջ, ատ վտանգավոր տեղվանքը, ուր մարդ կուտեն... սուտ ըսի, չէ, չէ, չեմ ուզեր երթալ... Հանգիստ եղիր։

Եվ տղան վազելով դուրս ելավ սենյակեն՝ ըսելե հետո.

— Երթամ տեսնեմ, ետքը ի՞նչ եղավ Ռոպենսոն...

Հանրմը, մինակ մնալով, հուզված, գունատ, չշարժեցավ թիկնաթոռեն, իր ամուսնին կենդանագրին դեմը, որ քողին մթության մեջեն միշտ կնայեր իր կապույտ բիբերուն տխրանուշ սևեռանքովը, անթարթ ու խորունկ։

Գոց պատուհաններեն անդին, հեռուն, կտարածվեր բազմերանգ գյուղանկարը, ամառ իրիկուններու անգայտ, նուրբ մշուշի մարմաշով մը պարուրված, մարը մտնելու մոտ արևին հուսկողջունող շառայլներեն լուսերանգված։ Աջ կողմը, բլուրն ի վեր, հողին ելևէջներուն համեմատ, ցած, սև, հին տուներու տրտմական, ծամածուռ, խառնիխուռն տողանցումը, և բլուրին ստորոտը եկեղեցիին վիթխարի իրանը, մեծավայելուչ և ամրակուռ հսկա՝ խեղ ու խարխուլ գաճաճներու այդ խոնումին մեջտեղ։ Ավելի հեռուն Ոսկեղջյուրի խաղաղ փովածքը, անկանոն, զիկզակ եզերքներով, շոգենավերու և նավակներու փրփրոտ հետքերովն ակոսված։

Գյուղանկարին հետին սահմանին վրա, էյուպի բարձունքը, իր անհուն, մութ նոճիներուն հավերժական խորհուրդին քով կանանչ, թավ պարտեզներու ակնապարար զվարթությամբը։

Բնության այս անդորր, անուշ հեռապատկերին առջև, զոր ամբողջությամբը իր նայվածքին մեջ կամփոփեր իր նստած տեղեն, տիկին Երմոնե Մարկոսյան վերհուշումը ունեցավ իր կյանքին շքեղ և տրտմալի դրվագներուն, որոնք հիմա հանդարտորեն, կարգավ իր առջևեն կանցնեին՝ ճիշտ իր դեմը պարզվող տա բազմատարր գյուղանկարին երանգներուն պես, մերթ մռայլ, մերթ լուսավոր։

Կհիշեր իր մանկությունն ու երիտասարդությունը ամիրայական ապարանքին մեծադղորդ փարթամությանը մեջ անցված խոլ, զվարթ, ապերասան կյանքով մը։

Մարկոս ամիրային մեկ հատիկ աղջիկը երեք մանչ զավակներու մեջ, առողջ, գեղեցիկ, շենշող, ամբողջ Հ... գյուղին զմայլումին ու մխանքին առարկա, հացկատակներու և շողոմարաք-

ներու կուռ լեգեոնի մը կեղծ ու երկրպագու պաշտանքին թիրախը, ան կյանքը ապրած էր շլացման մը պես։ Մանկությանը՝ մարգարիտներ ու ադամանդներ եղած էին իր խաղալիքները, անոնք, հետո, իր պչրոտ և զարդամոլ աղջիկը խարտյաշ, գեղեցիկ գլուխը ու սպիտակ լանջքը զարդարած էին հոյակապորեն։ Եվ ինքզինքը կրցած էր արժանի ցույց տալ բոլոր այդ ճոխության և այդ շքեղության։ Ոչ ոք իրեն չափ վայելչորեն պիտի կարենար պոռոտ, հարուստ այդ ցուցադրանքին արժանավոր դերասանը հանդիսանալ։ Սխրալի ու պերճաշուք կերտվածք մը ուներ, նուրբ, թափանցիկ մորթի, խարտյաշ, մետաքսավետ մազի, կապույտ աչքերու այն խաժ աղվորությունը, որ նրբուղեղ ծաղկի մը կնմանի, որքան հմայքոտ, այնքան ան դյուրաբեկ է, խորշակի առաջին ալիք մը կրնա անոր անոսր թերթիկները կծկել ու խամրեցնել։

Մայրը շուտով գերեզման իջած էր. համեստ ու ազնվական կին մը, գթոտ ու աղքատասեր, տեսակ մը արհամարհոտ վերաբերումով դեպի իրեն վիճակված այդ փարթամ կյանքը։ Իր բարերար ազդեցությունը պակսած էր աղջկանը, որ փայփայանքներու, կեղծ գովասանքներու, ապուշ զմայլանքներու տարափին տակ, երկրրպագող, բուրվառող այդ մթնոլորտին մեջ գոռոզ, արհամարհոտ, բարձրահայաց եղած էր։

Հայրը, Մարկոս ամիրան, ամիրայի սովորական տիպար, կառավարական հասույթներու, թուրք փաշաներու նենգամիտ ու անկուշտ կողոպտիչ, շվայտ, հաճույքի ու տոփանքի գերի, թողած էր որ իր աղջիկը—զոր կպաշտեր—մեծնար ինչպես որ նեխոտ, սակայն կանարար այդ մթնոլորտը թույլ տար անոր մեծնալ, սանձարձակ ու անպաշտպան։ Եղբայրները, հորենական բարքերու հավատարիմ ժառանգորդներ, անհաշիվ մսխողներ եղած էին, հազիվ նշմարելով իրենց քրոջ գոյությունը, երբեք չհետաքրքրվելով անով։

Սակայն, իրերը իրենց երջանիկ, անուշ տեղողությունը չէին պահած. ճակատագրային աղետ մը ամեն բան տապալած, տակնուվրա ըրած էր։ Անակնկալ շնորհազրկում մը,— հետևանք անվերապահ ու հանդուգն կողոպտումին, որուն ենթարկված էր կառավարությունը տարիներե ի վեր,— եկած էր վերջապես անախորժ իրականությունը զգացնել Մարկոս ամիրային։

Բարձրագույն հրամանով, ձերբակալված ու բանտարկված էր ամիրան, և կալվածներուն, հարստության մեծագույն մասը արքունիք գրավված։ Սարսափը, լքումը հանկարծորեն տիրած էին ընդարձակ ապարանքին մեջ, սուգ և լռություն ամեն կողմ։ Հացկատակներու լեգեոնը մեկնեմեկ ցիրուցան եղած էր ագռավներու տարմի մը պես, որոնք մեծակառաչ խույս կուտան, երբ գայլերու ջոկիր մը հասնի իրենց գիշատած դիակին վրա։ Աղետին սաստկությանը տակ ամբողջ Հ... գյուղը սարսած էր. մեծ ապարանքին վրա իջնող կայծակեն կարծես ամեն մարդ քիչ շատ հարվածված էր. ամիրան, մեծազոր ամիրան բանտարկվա՞ծ, ի՞նչ գայթակղություն։

Իր պերճանքին խրոխտ կատարեն այս գահավեժ թավալումը նախ ահեղապես ցնցած էր ամիրային աղջիկը։ Շուրջը նայած էր՝ ապավեն մը փնտրելու համար, ու պարապություն գտած էր. եղբայրներեն երկուքը խույս տված էին Պոլսեն. երրորդը՝ խենթենալով՝ հիվանդանոց փոխադրված էր։ Եվ սպասավորներու, սպասուհիներու շվարած, սարսափած խումբի մը դեմ գտեր էր ինքզինքը. ո՞ւր էին անձնազոհ, անձնուրաց խնկարկուները. ո՞ւր էին մեծարանքի, զոհաբերության փութկոտ ասպետները։ Ամայությո՞ւն։

Մանկամարդ աղջիկը այս ընդհանուր լքումին հանդեպ պահ մը ահաբեկ, շուտով սակայն անակնկալ արիություն մը, կորովի մը կրակը նշմարեց իր մեջ։ Ծառաներուն մեծագույն մասը ճամփեց, հարաբերությունները սահմանափակեց և իր հայրը այդ դըժընդակ կացութենեն փրկելու համար անխոնջ դիմումներու սկսավ։ Փաշաներու, նախարարներու ներկայացավ, իր հոր դատը պաշտպանեց, և ի վերջո շնորհ խնդրեց։ Իր ճարտար, եռանդոտ խոսվածքը, համակրելի ու գրավիչ ժեստերը, վեհ և թովիչ նայվածքը՝ թույլ ջիղերով այդ մարդոց վրա վերջապես կրցան ոևէ ազդեցություն մը ունենալ, և ազատ արձակեցին ամիրան, առանց սակայն իրեն վերադարձնելու ահագին հարստությունը, զոր գրաված էին, տվին անոր ինչ որ պետք էր անոթի չմեռնելու համար, քանի մը կտոր կալվածք ու իր ապարանքը, առանց բան մը պակսեցնելու անոր պարունակութենեն։

Ամսական քառասուն—հիսուն ոսկի եկամուտը ի՞նչ ողորմելի գումար մըն էր հիմակ այն մարդուն համար, որ հարյուր հազարավոր ոսկիներ ափով նետած էր աջ և ահյակ։

Ամիրան, ընդաններու խորը փչանալու վտանգեն ազատած իր աղջկան անձնվիրությանը շնորհիվ, քաշվեցավ հիշատակներով լեցուն իր ապարանքին մեկ անկյունը, տխուր, թախծոտ, հոգիով ու մարմինով ջախջախված։

Քիչ-քիչ, սակայն, տանը հավատարիմները, սմսեղուկ քայլե-

բով, ներս սպրդած էին նորեն, այլևս վայելելու համար ոչ թե մեծ կերուխումները, շվայտության հեշտալի տեսարանները, այլ թե՛ անբախտիքի ուշ մնացած արտահայտություն մը մատուցանելու անկյալ ամիրայի մը և թե՛, մանավանդ, անոր երբեմնի հացալից սեղաններուն փշրանքները լկելու համար վերջապես։ Ի՜նչ ալ ըլլար, այդ փշրանքները դեռ շատ յուղոտ էին։ Ամիրան, իր այլևս ինքնամփոփ կյանքին մեջ, ամեն ներկայացող մարդու ականջ չկախեց, երկու երեք հատ ընտրեց անոնց մեջեն, ու մեկալներուն երթք բարովը դրավ։ Այս մեկ քանի հատին մեջ ալ նախամեծարութիւն կուտար Մերկերյան Թադեոս աղային, ս. Ստեփաննոս եկեղեցիին հավիտենական գանձապահը, որ հաջողած էր լայն տեղ գրավել ամիրային համակրությանը մեջ։

Իր այս տրամալից կենցաղին մեջ ամիրային միակ ուրախ վայրկյանն եղած էր իր սիրական աղջկան ամուսնությունը Գաբրիել էֆ. Մարկոսյանի հետ՝ նմանապես ամիրայական շառավիղե, ազնիվ, վեհանձն, գեղեցիկ երիտասարդ մը, որ՝ օր. Ծրմոնեի շնորհներեն հրապուրված՝ անձամբ ներկայացեր էր անոր ձեռքը խնդրելու։

Ամիրան, իր փորձառու աչքովը երիտասարդը խորաղննելե ետքը, իսկույն տված էր հավանությունը, ու ամուսնությունը տեղի ունեցած էր բոլորովին անշուք կերպով, քանի մը մտերիմներու ներկայությանը։

Այդ րոպեն՝ ամիրային աղջկան համար նորազարդ, անծանոթ երջանկությամբ կյանք մը սկսած էր։ Հայրը, ինք ու ամուսինը՝ երջանկությամբ կյանք մը սկսած էր։ Հայրը, ինք ու ամուսինը՝ սիրով ջերմացած տաք բույն մը կազմած էին, որ տևած էր բավական ատեն։ Հիմակ ա՛լ տեսակ մը ատելությամբ, նողկանքով կվերհիշեր առաջվան աղմկալի, հոգնեցուցիչ կյանքը ու նախախնամական կհամարեր այն բուռն հեղաշրջումը, որ ատանկ մեկ պատնեշ մը կանգնած էր իր առջև ու հիմակվան կյանքին մեջտեղը։

Եվ ահա նոր էակ մը եկած էր զվարթության նոր շեշտ մը դընել այդ անդորր բույնին մեջ։ Ամիրան՝ իր վերջին րոպեներուն՝ իր թոռան զվարթ ճիչերուն մխիթարանքը ունեցավ։ Ան մեռավ երջանիկ, գուցե ավելի երջանիկ, քան եթե իր մեծության բարձունքեն վար գլորած չըլլար։ Տիկին Մարկոսյան իր խեղճ հոր կյանքին հուսկ հետին րոպեները երջանկացուցած ըլլալու համոզումեն մխիթարվեցավ ու իր սերը այլևս կեդրոնացուց ամուսինին ու մեկ հատիկ զավկին վրա։

Սակայն, դառնության բաժակի վերջին կաթիլը դեռ ըմպած

չէր ան։ Ամուսնության ճիշտ տասնըմեկերորդ տարին, Գաբրիել էֆ. անակնկալ հիվանդության մը հետևանքով մեռավ։ Այս կորուստը խորունկ, անբուժելի վերք մը բացավ կնոջը սրտին մեջ, դամբանական կափարիչը եղավ, որուն տակ այլևս հավերժական սուգով ու ինքնամփոփ, լռիկ մաշումով պիտի քաշկռտեր իր անմխիթար կյանքը, ա՛լ աշխարհի վրա ոչինչ ունենալով, բացի իր մեկ հատիկ զավակեն։

Ու փոխվեցավ, այլակերպեցավ ան նկարագրով, ֆիզիքականով։ Մարդատյաց եղավ, չարությունը բույն դրավ անոր հոգիին մեջ. ա՛լ չուզեց տեսնել մարդերը, զոր նկատեց իր դժբախտություններուն պատասխանատու. իր կապույտ աչքերը, երբեմն այնքան անուշ սևեռանքով, հիմա երկյուղի, կսկիծի, ատելության շողյուններ կանթեղեին՝ ժպիտ ու աղապատանք նշուլելով միմիայն իր զավկին համար, իր Արշակին համար, զոր աշխարհի հետ չպիտի փոխարիներ։ Նիհարցավ, դեմքին գիծերը քաշվեցան, խոժոռ, խիստ, անողոք արտահայտություն մը առին։ Ջղային եղավ։ Լացի հեղակարծ տագնապներ ունեցավ։ Օր մը՝ տագնապի մը պահուն՝ հանկարծ ճամփեց երկու ծառաները, որոնք երկար տարիներե ի վեր ամիրային տան մեջ կծառայեին, վար դնելով միայն պառավ, ցավագար խոհարարուհի մը, որուն վրա կմնար տան ամբողջ ըսպասարկությունը։ Պատվիրեց, որ մեկը չընդունվի, մինչևիսկ Մերկերյան Թադեոս աղան, տանը է՛ն վստահելի, է՛ն հին բարեկամը։

Ու այլևս իր ամբողջ վտիտ ու ցավագար էությունը, իր բովանդակ քայքայուն կյանքը մեկ բանի մը, մեկ կետի մը սևեռած էր, իր զավկին, բոլոր անցյալի շքեղություններեն, մեծություններեն, մոլեկան ցնցումներեն, ամիրայական հոյակապ, փառահեղ կառույցքեն, բոլոր հարստություններեն ու բոլոր սերունդեն վերապրող այդ միակ բանին, միակ էակին վրա։ Անիկա բոլոր կործանումներուն վերակենդանացումն էր, հարությունը բոլոր անէացած, ոչնչացած բաներուն, եզական փոխարինումը բոլոր չփոխարինվելիք իրերուն, կյանքերուն։

Ու հոն, թիկնաթոռին մեջ թաղված, աչքերը գոց, իր կյանքին այս ցավագին դրվագներուն տողանցումեն ընկճված, ոչնչացած, կմնար, շարժելու անկարող, և օրհասական, ընդհատ հևքով մը, որմե անոր տափակ ու ազազուն լանջքը կտանջվեր, ինչպես հեկեկանքե մը։

Հեռուն, ընդարձակ նոճաստանին վերև, արևը կխոնարհեր բը-

նությունը չնարակելով իր հուսկողջույնի շառայլներովը, շիջելա-
ցած և հանդիսավոր։ Խորհրդապահ, կուռ սրահակներուն ներքևեն
խուսափուկ ճառագայթ մը ներս սպրդեցավ՝ լուսավորելով ստվե-
լոտ սենյակը։

Կինը աչքերը բացավ՝ երազե արթնցածի պես, հառաչեց և
իրականության դառնալու ճիգին մեջ մրմունջ մը թռավ շրթներեն.

— Զավա՜կս, զավա՜կս։

Ոտքի ելավ, երկու ձեռքերով քունքերը սեղմած, դեռ այդ մա-
հացու մղձավանջին տպավորությանը տակ դողդողալով, աչքերը
արցունքով լեցուն։

Վերեն, սգապատ շրջանակին մեջեն, կենդանագրին խած աչ-
քերը՝ իրենց անուշ ու ցավագին պշնումովը՝ միշտ կդիտեին ան-
լուր տառապանքը այդ կնոջ, որ, հիմա, թևերը բացած, անոր կդի-
մեր՝ ինչպես ստրջացող մեղավորուհի մը աստվածամոր պատկե-
ին։

Հանկարծ, դրանը բացվածքին մեջեն, խուլ, խռոշավոր ձայ-
նը պառավ խոհարարուհիին.

— Հանըմ, Բարթող աղան է, հանըմը տեսնել կուզեմ կըսե
կոր։ Ի՞նչ ըսեմ։

Հանըմը՝ իր հոգեկան վերացումին ու փղձկումին մեջ այսպես
ընդհատված, պահ մը կանգ առավ, դեմքին վրա զզվանքի արտա-
հայտությամբ մը։

— Բարթող աղան թող վեր գա,— ըսավ հետո։

Ու երբոր մինակ մնաց.

— Ո՜հ, աստվա՜ծ իմ,— մրմնջեց,— ե՞րբ պիտի ազատիմ այս
հրեշներուն ձեռքեն։

Եվ պահ մը, սևերու տակ ծածկված այդ մանրուկ, դողդոջ
մարմինը անշարժ մնաց ստվերոտ խուցին մեջ, գլխահակ, երկու
ձեռքերովը երեսները ծածկած։

Ոտնաձայն մը սթափեցուց զինքը։

Մարդ մը ներս մտավ, եթե կարելի է մարդ անունը տալ արա-
բածի մը, որ գրեթե ոչինչ ուներ մարդկային։ Կոճղի մը վրան կին-
ճի գլուխ մը զետեղված, տակը երկու ցուպեր թեթևապես կինճի
կորնթարդ, երկու դիեն զույգ մը ահագին գդալ կախեր էր, աչքին
մեկը պաղած, սպիտակուցը բիբին հետ խառն դուրս ժայթքած և
քունքին մոտ՝ մյուս աչքին ուղղութենեն ավելի վար. երեսին մոր-
թը կարծես հերյունով մը հերձված, ճղքրտված, ծակ-ծակ եղած

ողջ աչքը, առանց թարթիչի և կարմրածիր, միակ անաղարտ մնա-
ցած բանը ծաղկախտի անգութ հարստահարությենեն ետքը, շարու-
նակ կդառնար ականջիկին մեջ, տեսակ մը հիվանդոտ թարթա-
փումով ամեն վայրկյան արցունքով թրջված, մինչ մյուսը, պայ-
թածը, անշարժ կմնար հեռուն, վայրենի և սարսափարկու։ Բեղերը
ցանցառ էին, անծանոթ գույնով քանի մը թելեր տափակ քիթին տա-
կեն վար կախված, չկրնալով ծածկել բերանը, որուն շուրթերը գը-
րեթե կաշիի երկու կտորներ էին՝ հազիվհազ պարտկելով լղրճած
լինդերը և փտած, թափթփած ակռաները։ Բարթող աղա սովորու-
թյուն ուներ, մասնավորապես խոսած ատենը, բեղին մեկ երկար
թելը բռնելու և մատին փաթթելու, ողջ մնացած հարաշարժ բիբը
անոր հառելով։ Ահա այն էությունը, զոր արժանավորապես կներ-
կայացներ Բարթող աղան։

Բարթող աղա, որ քանի մը տարիե ի վեր Մարկոսյաններուն
տանը հայթայթիչն ու գործակատարն էր, եկած էր հիմա իր ամ-
սական համարատվությունն ընելու հանըմին, որ այդ վայրկյանին
մանավանդ բնավ տրամադիր չէր զբաղելու կյանքի շուկայիկ ման-
րամասնություններով։ Գետնաքարշ մեծարանքի շարժմամբ բարե-
վելե հետո տիկինը, մանրակրկիտ զգուշություններով, իր դպած
տեղը աղտոտելու երկյուղով՝ կամացուկ մը նստավ թիկնաթոռի մը
եզերքը, սպասելով լուռումունջ, որ տիկինը հաճի խոսք ուղղել իրեն։

— Ի՞նչ կա նայինք,— հարցուց վերջապես ան առանց իսկ
մարդուն երեսը նայելու։— Աղեկ ըրիր որ եկար, պետք ունեի քեզի։

— Հանը՜մ, փարա բերի։

Այդ սկզբնավորությամբ՝ գործակատարը կհուսար հանըմին
տրամադրությունը բարեփոխել։ Եվ գրպանեն ափ մը ոսկի հանե-
լով դրավ սեղանին վրա, աչքը կնոջը երեսին հառած։

— Արդեն դրամի պետք ունեի, Բարթող աղա, ո՞րքան է։

— Քսանըհինգ ոսկի, հանըմ, Մոմխանեի ֆապրիքային երեք
ամսվան վարձքը... Բայց,— շարունակեց մարդը բեղին մեկ թելը
բռնելով ու մատին պլլելով։— Բայց... նորեն վնաս կա, հանըմ, վը-
նաս, ա՜խ աս վնասները... վերջը չեկավ։ Առջի օրվան պոռային
շամչըրախը ֆապրիքային վրա իջեր, սաչախը փլցուցեր է, չորս-
հինգ ոսկիի վնաս կա, հանըմ, ի՞նչ կըսեք, շինել տա՞նք...

— Ֆապրիքային մարդիկը բան չե՞ն եղած, Բարթող աղա,—
հարցուց տիկին Մարկոսյան՝ արկածին ստուգությանը անկասկած,
մարդուն ահաբեկ երևույթենեն խաբվելով։

— Մարդոցը բան չէ եղեր, հանըմ, մինակ վախցեր փախեր են... Հիմա նորեն կբանին կոր, յա՛ ֆապրիքան փլեր տե տակը մնային նե,— ավելցուց գործակատարը ողբագին շեշտով մը...— ի՞նչ է նե, հանըմ, քիչով ազատեցանք, ի՞նչ կըսեք, շինել տա՞նք։

— Շինել տուր։

Բարթող աղա շունչ մը առավ. աչքը ուրախության կայծ մը փայլատակեց։

Հինգ ոսկի շահած էր։

— Իմ բախտես, իմ շար բախտես է աս վնասները, հանըմ,— շարունակեց մարդուկը լալկանությամբ,— ես բախտավոր մարդ ըլլայի նե աղջիկներս ասանկ կմնայի՞ն, Կատարինես, Մագթաղինես. տարիքնին լեցավ, հանըմ, ի՞նչ պիտի ընեմ, դուռս զարնող չի կա, հարցնող մը չի կա ան քիմյայի պես աղջիկներս, քիմյա...

Եվ Բարթող աղա մատին մեկը ողջ աչքին տարավ՝ արցունք մը սրբելու պես։

— Ասոնց խմենքը աստված կուտա, Բարթող աղա,— ըսավ տիկինը,— հոգ մի՛ ըներ... ուշ ըլլա, անուշ ըլլա։

— Ուշացավ, հանըմ, ուշացա՛վ. Մագթաղինես երեսունը կոխեց, ի՞նչ պիտի ընեմ, ողորմած աստված,— վերջացուց գործակատարը, երկու ձեռքերով իր ահագին գլուխը բռնելով։

Հետո, խկույն, իբր թե իր ներքին կսկիծեն սթափած և ոտքի ելլալով.

— Կներեք, հանըմ, գլուխ կցավցնեմ կոր պարապ խոսքերով, պատվեր մը, բան մը ունի՞ք ինծի ըսելու... ատենը ուշ է, ելլամ տուն երթամ, աղջիկներս...

— Կոստանյան անունով մեկը գեղին մեջ դպրոց բացեր է եղեր, գիտե՞ս, Բարթող աղա,— ընդհատեց տիկին Մարկոսյան...

— Այո՛, հանըմ, շատ կգովեն կոր, երկայն մազերով և գլխարկով մեկն է. քանի մը հեղ տեսա փողոցը. շատ մարդ զավակը անոր դպրոցը կղրկե կոր. շատ գիտնական է եղեր... հե՛մ...

Մարդուկը կեցավ՝ ըսելիքին գուցե ինքն ալ տարակուսելով. տիկինը երեսը նայեցավ։

— Հեմ ի՞նչ, Բարթող աղա...

— Հանըմ,— շարունակեց գործակատարը՝ դեմքը հեգնական ժպիտի մը մեջ ծմռկելով,— տղոցը գլխուն նայի նե անոնց ի՞նչ ըլլալիքը կհասկնա եղեր մինեճիպի պես... հեմ կըսե եղեր քի աբզան մեծնա նե ի՞նչեի պիտի ըլլա... թոհաֆ բաներ... ինծի հարցնես նե ատ մարդը... ինչևէ, հանըմ, ինչո՞ւ հարցուցիք։

— Արշակս ատոր դպրոցը երթալ կուզե կոր. տե՛ս այս իրիկուն այդ մարդը և խնդրե իմ կողմես որ վաղը անպատճառ հոս գա։

— Գլխուս վրա, հանըմ, հիմա շիտակ հոն կերթամ,— պատասխանեց Բարթող աղա, թիկնոցը փորին վրա ամփոփելով, և խոնարհաբար բարևելե հետո տիկինը՝ դուրս ելավ։

Հրեշը ճամփան սա խորհրդածությունները կբանաձևեր, հրճվանքեն կես գինով.

— Հի՛նգ ոսկի... մեկ օրվան մեջ, ասանկ երթա նե քանի մը տարիեն կհարստանամ. այո՛, կհարստանամ. է՛, ալ ան ատենը ե՛ս չպիտի տամ պե աղջիկներս... Բարթող աղային աղջիկները մատով պիտի ցուցնեն. ոտքս ձեռքս պիտի իյնան. «Բարթող աղա, աղջիկը, Մագթաղինեդ, ան հրեշտակի պես, խումբրի պես Մագթաղինեդ տուր» պիտի ըսեն. ամանի պիտի գան. «Մադամ, բան մը կընենք» պիտի ըսեմ... աղեկեն աղեկին էֆենտիմ... հե՛մ ասչափ տարի սպասեմ, հե՛մ հանեմ տե սանկ մեկո՞ւն տամ... չէ՛, չըլլա՛ր, վեսելա՛մ...

Սա կնի՞կը, ի՞նչ քիպար, ի՞նչ ազնվական կնի՛կ է, պե՛,— կըմռլտար մարդուկը,— ո՛չ հաշիվ կհարցնե, ո՛չ բան... շնորհքով քելեփիր է, ո՞ւրկե ուր ձեռքս անցավ... ֆապրիքան փլեր է ըսեմ, պիտի հավատա, նորեն շինել տուր պիտի ըսե... Ծո՛, կեցիր...

Բարթող աղա հանկարծ կանգ առավ փողոցին մեջ, ուր մթընշաղին հետին մարմրուքները առարկաներուն գիծերը կհալեցնեին։ Հրաշալի գաղափար մը ծնած էր իր ահավոր գանգին մեջ։

«Կըլլա մի չըլլար... սա Պեպեքին հին տունը փլեր է ըսեմ նե՞... հեռու տեղ, կելլա կերթա տե կնայի՞... յա երթա նե... ի՞նչ խըյախ բան կըլլա, պե՛, ամսե ամիս երկու ոսկին ես կառնեի... Մագթաղինես տեղավորվելուն պես Կատարինեիս թրախուման հազը կընեի... ծո ի՞նչ կըսես, Բարթիկ, սա բանը ընե՞մ, ամիսը երկու ոսկի՞ փարա է պե՛, փարա՛... Ա՜խ,— կշարունակեր հրեշը՝ ձեռքը օդին մեջ շարժելով,— հանըմը «սա երկու հարյուր ոսկին առ տե տունը շինել տուր» ըսեր նե, ծո՛ ան ինչ պատվական բան կըլլար... Երկու հարյուր ոսկին առնելուս պես տունով տեղով կծիկը կդնեի, թող հանըմն ալ Բարթող աղա փնտրեր... ամա երկու հարյուր ոսկի փարա ո՞ւրկե պիտի գտնա տե ինծի տա... խենթին ալ մեկն է, մեկենքմեկ ելլա տե Պեպեք երթա նե փլած տունը տեսնելու, վա՛յ

պապամ, խերս անիծվեցավ գնաց. Բարթիկին թեքմե մը տունեն դուրս, ե՞տքը, ի՞նչ կըլլա վիճակս... աղջիկնե՞րը ինչ կընենք... չէ՞, չեղավ, չըլլար, ըլլալիք բան չէ. գործերնիս կավրենք. հիմակուհիմա սանկ երթանք տե... ասօր հինգ ոսկի զարկինք, քիչ փարա չէ՞. ո՞վ գիտե, օրին մեկը տունը փլչեր է ըսելու կարգը կուգա...»

Ու Բարթող աղա, վերջնականապես որոշելով չի գործադրել հղացած հոյակապ ծրագիրը, սկսավ ավելի շուտ քալել շերեփի պես երկար ու չոր բազուկները երերցնելեն, ամեն մեկ քայլին գլխու համաչափ տատանումներով։ Հիմակ ա՛լ ուրիշ նյութի վրա կմտածեր։

— Ատ նոր եկած մարդը թոհաֆ մարդ մըն է, ան ի՞նչ մազեր ունի, յա աչվընները, ավազակի աչվընե՛ր... շատ գիտնական է եղեր, ո՞վ գիտե, կրնա ըլլալ... թոհաֆ բան, գլխուն նայելով ի՞նչ ընելիքը, ի՞նչ ըլլալիքը կհասկնա կոր, ամեն մարդ իր զավակը ցուցունելու կտանի կոր իրեն. ես ալ մեյ մը Կատարինես, Մագթաղինես տանիմ ցուցունե՞մ... Մեծերուն ալ կնայի՞ մի, մեյ մը կհարցունեմ, ամոթ չէ յա...

Բարթող աղային ներքին կյանքը հետաքրքրաշարժ մանրամասնություններ կպարունակեր։

Գյուղին մեջ հանրածանոթ դեմք մըն էր, չճանչցող չկար զինքը, տարիքը վաթսունի մոտ էր, ամուսնացած էր և երկու աղջկան տեր, Կատարինեն և Մագթաղինեն։ Կինը, մեծդի ու տգեղ,— երբոր գտնվեր անխորհուրդ և անկիրթ մեկը, որ իր երեսին զարներ այդ հրեշին հետ ամուսնացած ըլլալը,— սա պատասխանը ուներ միշտ իր բերնին մեջ.

— Մրսի վրա՛դ, կարգված ատեննիս Բարթիկս սյուլյունի պես տելիխանլը էր, ետքեն ասանկ եղավ, ա՛խ, ան չիչե՛կը, ան չիչե՛կը։

Բայց տիկին Բարթողի այս հաստատումը ջրողներ ալ կային, պնդելով որ երեսունհինգ տարի առաջ ալ ատանկ էր Բարթող աղան, ամուսնացած պահուն։ Պանդուրներու դասակարգին մեջ, հետևապես, այս հարցը անլուծելի մնացած էր և միշտ վեճերու տեղի կուտար։

Կատարինեն և Մագթաղինեն ա՛լ հասուկ աղջիկներ էին. մեծը, Մագթաղինեն, երեսունըշորսը մտած էր, հետին ծայր հուսահատության մատնելով իր հայրն ու մայրը, մանավանդ հայրը, քանի որ տակավին ամուսնության ոևէ հարմար թեկնածու չէր ներկայացած։ Բարձրահասակ, մեկ չափի վրա, ճերմկոտիկ աղջիկներ էին, կովի պես խոշոր գլուխով, լայն աչքերով, միշտ զույգ պտտելով, միևնույն ձևով, գույնով, մանրամասնությամբ հագված։ Գեղին մեջ, ռամիկ և հեգնող սրամտությամբ մը զանոնք «զույգ տատրակներ» կանվանեին։

Անոնց տարիքին հետ Բարթող աղային մտատանջությունը կավելնար, կասստկանար, ցավագին հանկերգի մը պես պատեհ և անպատեհ առիթներու մեջ կկրկներ իր կնոջ և մտերիմներու, բեղին մեկ թելը մատին պլորելով, ողջ աչքը վրան հառած.

— Աղջիկնե՛րս, կյուզելիմ աղջիկներս ուզող չի կա... տարիքնին լեցա՛վ, կնի՞կ, խելքդ գլուխդ ժողվե, ի՞նչ պիտի ընենք, Կատարինե՛ս, յա՛ Մագթաղինես, երեսունը անցա՛վ... երեսո՛ւնը...

Ու խեղճ մարդը ապահովապես պիտի լար, եթե իր հարստահարված աչքերը իրենց լալու ընդունակությունը կորսընցուցած չըլլային առհավետ։

Տիկին Բարթող, աղետավոր իրականությունը հիշեցնող էրկանը այս ողբին ուրիշ պատասխան չուներ, եթե ոչ երկու ձեռքերը գլխուն տանիլ, աչքերը հուսահատ պաղատանքով երկինք վերուցած։

Բարթող աղային արհեստը տարօրինակ էր, ճիշտ իր մարմնին պես։ Բազմաճյուղ էր ան։ Գեղին աղքատ ընտանիքներուն միս և նպարեղեն կծախեր ձեռքի վրա։ Ահագին զամբյուղ մը ուներ կրոնակն ի վար կախված, որուն մեջ կգտնվեին մսի կտորվանք, բրբինձ, ալյուր, շաքար, խահվե, լուբիա, սիսեռ, ամենքն ալ հոտած, մգլոտած, բորբոսած։ Աղքատ ընտանիքներու մեծամեծ դյուրություններ կընծայեր Բարթող աղա։ Ամեն բան թե՛ վար գինով կուտար և թե՛ ապառիկ, երկու առավելություններ, որոնք աղքատը թե՛ զինաթափ կընեն, թե՛ կկողոպտեն։ Մարդը իր արհեստին վաշխառուն էր։ Իրավ, հրապարակին գինեն վար գինով իր ապրանքները կվաճառեր, սակայն պայմանով մը, իր չքավոր հաճախորդները եթե որոշված պայմանաժամուն պարտքերնին չկարենային վճարել, տոկոս կբաներ։ Երբեմն, նույնիսկ շատ անգամ, վճարումը այնքան կերկարեր և մյուս կողմե տոկոսն այնքան կաճեր բաղադրյալ տոկոսի հաշվով, որ վերջապես օրին մեկը դրամը գանձելուն, երբ Բարթող աղա մանրամասն հաշիվ մը ըներ, զմայլումով կհաստատեր թե, օրինակի համար, օխան երեք ղրուշի քշած գարշելի միսին օխան իսկապես վեց ղրուշի եկած էր։

— Կնի՛կ,— կըսեր, հափշտակութեանը մէջ իր խոճկորի դունչը երերցնելեն,— ասանկ չընեմ նե ընտո՞ր կապրինք, հապա աղջիկները, ընտո՞ր կկարգենք... Ա՜խ, սա Մագթաղինես մեյ մը տեղա-վորեի...

Հետզհետե, սակայն, իր արհեստին գաղտնիքներուն թափանցելով, Բարթող աղա մղված էր ապօրեն և նողկալի ճամփաներու Իր գործին կարևորագոյն ճյուղը մսավաճառութիւնը ըլլալով, մարդուկը զայն ավելի շահաբեր ընծայելու համար, իր այլակերպ գանգին մէջ անարգ խորհուրդ մը ծներ էր, զոր կգործադրեր ահավոր ճարպիկութեամբ և խղճի անայլայլ հանդարտութեամբ։

Ամեն առտու, մութնուլուսուն, զամբյուղը կոնակը, ցամաքեն Ղալաթիա կերթար, ժողվելու համար լեհ մսավաճառներուն խանութի թափթփուքները շատ վար գնով, կովի լղրճած փայծաղներ, գոմեշի հոտած կոկորդներ, զազիր գլուխներ, փորոտիք, թոք, լյարդ և կենդանիներուն մարմնին է՛ն վարնոց մասերը։ Ու ետ կդառնար, զառիվերներեն գրեթե ճանկռտվելով, հլալով, ֆշալով, կքած այդ ահագին զամբյուղին տակ, կատարած ճիգեն պաղած աչքը ավելի դուրս ցցված, ծաղկավեր դեմքը քրտնաթաթավ։

Տուն հասնելուն՝ խոհանոցին մէջ կթափեր զամբյուղին գարշահոտ պարունակությունը. արյունաշաղախ կտորներ՝ իրարու փակած, խառնված, փաթթված դուրս կիյնային մեկ զանգվածով, որուն առջև ծալապատիկ կնստեր Բարթող աղա գոհունակությամբ լայն հառաչով մը, թևերը սոթտած, մեջքեն վար կախած ճենճոն գոգնոց մը։ Ու կսկսեր զատել, ըղեղը աղիքեն, երիկամունքը թոքեն, սիրտը լյարդեն ու կշարեր զանոնք իրարմե անջատ, կույս-կույտ, ամեն մեկ դեզը ամբողջացնելեն ետքը շեղ ակնարկ մը նետելով իր հաճախորդներուն եղոտ ցուցակին վրա, յուրաքանչյուրին ճաշակին, պահանջին, կարողությանը համեմատ կատարելու համար ընտրությունը։

Կինը հոն էր, ան ալ իր կարշնեղ բազուկները մերկացուցած, արթուն աչքով հսկելով էրկանը աշխատությանը վրա, երբեմն դիտողություններ հանդգնելով, որոնց Բարթող աղա կպատասխանի գորշ, ահավոր բիբը անոր վրա հառելով արհամարհոտորեն։

Վերջապես, երբոր ավարտեր իր գործը, շուրջը պրպտող ակնարկ մը կպտտցուներ, իբր թե վախնար, որ անգաղտնապահ ալ մը հանկարծ կրնար տեսնել ինչ-որ տեղի պիտի ունենար, ու կրսեր կնոջը.

— Խրստիկ, սա երեկ գիշերվան զարկածս բեր։

Խրստիկ հանըմ, ինքն ալ կասկածոտ նայվածքի մը հետո գնալի խոհանոցին պատուհանները, մթերանոցի դուռ մը բանալով, սատկած շան մը փայտացած դիակը դուրս կքաշեր, պոչեն բռնած։ Բարթող աղա՝ կապկային ճարպիկությամբ մը, սուր երկար դանակով մը զինված՝ կենդանիին վրա կիյնար, նախ գլուխը կտճդեն կզատեր, մորթը կքաշեր կհաներ մատներու վարժ շարժվածքներով, ու տասը վայրկյան ետքը շան մորթազերծ կարմիր մարմինը կփռվեր հոն, քստմնելի և զազիր։ Իսկույն մսագործը, հիմակ փոքր կացինով մը զինված, մոլեգնորեն կկոտրտեր դիակը հոշ-հոշ, ոտքերը, զիստերը, կոնակը, կուրծքը անճանաչելի մասերու վերածելով, շնչասպառ, ահռելի բիբը հառած արյունլվա, սիրախառնուք կտորներուն վրա, պաղած աչքը անշարժ և սարսափելի։

Եվ ահա շան դիակը կանհետանար, պատրաստված կույտերու մեջ ցրվելով իր գարշելի պատառները, իր գոյությունը երբեք զգալի չընելով, բայց առնվազն 6—7 օրա ստվարացնելով ամբողջին կշիռը։

Շատ քիչ անգամ, երբոր Խրստիկ հանըմ, իբրև կին, իր դժգոհությունը հայտներ պիղծ կենդանիներու այդ անարգ ու նողկալի շահագործումին համար, Բարթող աղա մեկ պատասխան մը ուներ.

— Կնի՛կ, աղջիկները մնացին, առնող չի կա. փարա պետք է, փարա՛։ Կատարինես, Մագթաղինես երեսունը անցան, խելքդ ժողվե, կնի՛կ, վերջերնիս ո՞ւր պիտի երթա...

Մութ գիշերներ, Բարթող աղա, ոտքը տրեխներով, թիկնոցին ներքև փոքր, անձայն հրացան մը պահած, ուշ ատեն դուրս կելլար շուն, կատու զարնելու։ Իր տունը, գեղին է՛ն հեռավոր անկյունը, լերան սահմանակից, ամայի և լուռ, շատ նպաստավոր դիրք մը ուներ այսօրինակ որսորդության մը համար։

Կամաց, զգուշավոր քայլերով, գլուխը ուսերուն մեջ քաշած, աչքը չորսդին, տուներու, ցանկորմերու, պատերու տակեն կանցներ գողի պես, աղմուկ, ոտնաձայն լրտեսելով ամենապզտիկ շշուկի մը կանգ առնելու համար։ Ու հանկարծ կկծկվեր անկյուն մը, թիկնոցին տակեն կհաներ հրազենը, ուսին կկոթնցուներ նշան առնելով քանի մը քայլ անդին ինքն իր վրա պլորված շան մը, որ կբքնանար, վտանգին անգիտակ։

Եվ ահա սուր, օրհասական կաղկանձ մը կթարձրանար մութին մեջեն. կենդանին կիյնար՝ գալարվելով, շանթահար. որսորդը խա-

կույն վրա կհասներ, պարկի մը մեջ կնետեր դիակը, կշալկեր։ Ա՛լ արագ քայլերով տուն կդառնար, իր հաճախորդներուն վաղվան պարենը հայթայթած։

Բարթող աղա, իր և հարակից փողոցներու մեջ շունները շատցընելու ամեն խնամք կտաներ։ Անոնց համար մեծ գուրգուրանք ցույց կուտար։ Ամեն մարդ, անոր ոճրագործ դիտավորությանը անտեղյակ, բարեսիրտ մարդ ըլլալուն մեկ նշանը կհամարեր այդ տարապայման շնասիրությունը։ Իր մերձեցումեն խեղճ կենդանիները խույս չէին իտար, վասընզի ճամփան անցած ատենը, չորցած հացի կտորվանք և ոսկոր կնետեր անոնց, զամբյուղին մեջեն հանելով։ Անոր պարտեզին դուռը մշտաբաց էր, և շունները կմտնային, կելլային, իրենց օրապահիկին հետամուտ, բայց շատ անգամ այդ հյուրասեր դռնեն ներս կյանքերնին վրա տալով։ Շունի սով տիրած ատենը, հեք կատուներն էին որ կտուժեին, որոնցմե մեծ քանակությամբ կբուծաներ Բարթող աղա իր տան շրջականներուն մեջ։

Ցերեկները, որսորդը դարանամուտ կսպասեր իր պարտեզին ծառերուն ետին՝ փիսիկներուն անցքը լրտեսելով, հանկարծակի բերելու համար զանոնք՝ իրենց մանրակրկիտ գտվտուքներուն միջոցին։ Աղեխարշ մլավյուն մը և ողորմուկ ակնարկ մը դեպի անծանոթ թշնամին, ու փիսիկը կփուվեր, թաթիկներու թեթև ջղայնացումներե ետքը։

Բարթող աղայի ամենեն մեծ հաճույքներեն մեկն էր նաև դիտել՝ տանիքներու վրա, ցանկապատերու քով, պարտեզն ու փողոցներուն մեջ տարփավառ պայքարները շուներուն և կատուներուն՝ բեղմնավորության խելահեղ ճիգերնուն անձնատուր։ Ասանկ պագշուտ տեսարանի մը առջև, մեկեն կանգ կառներ, աչքը լայնաբաց, դեմքին ծակտիքները զմայլանքի ծամածռությամբ մը ճմրթկված, ու թելադրական, հրավիրող բացագանչություններ կունենար։

— Հա՛ պապամ, հա՛ օղլում, ձեզ տեսնամ, շատցեք, բազմացեք...

Զմեռը, բաղդատմամբ ուրիշ եղանակներու, որսը առատ չէր ըլլար, ինչ-որ մեծ դժգոհություն կպատճառեր Բարթող աղային, որ գրեթե ամեն օր կգանգատեր այդ մասին իր կնոջը, շիլ աչքը կատաղության բոցով լեցուն.

— Կնի՛կ, ապրանքը ապրանքին կուտամ կոր... ասոր վե՞րջը, շուն չմնաց, կնիկ, շուն չմնաց. ձմեռը գործերնիս քեսատ է... աղջիկները ըսես՝ հարցնող փնտրող չի կա, Կատարինես, յա՛ Մագթաղինե՛ս երեսունը անցավ, կնի՛կ, երեսո՞ւնը... ա՛խ...

Սակայն, Բարթող աղա իր բազմաթիվ չքավոր հաճախորդներուն մեջ մեկ քանի հարուստներ ալ ուներ, որոնք թեև անքաժան կմնային իր շունի և կատվի համեղ բաշխումներեն, բայց ասիկա բնավ պատճառ մը չէր, որ անոնք մարդուկին անարգ շահագործության ճարակ չդառնային. ընդհակառակը, իր ավազակի բովանդակ՝ նենգավոր տաղանդը զանոնք կողոպտելու միջոցներուն անդադրում հղացմանը կհատկացներ ու կհաջողեր։

Բարթող աղա Մարկոսյաններուն տան հայթայթիչն ու գործակատարն էր տարիներե ի վեր, ու հոն շահած էր եթե ոչ համակրություն, գոնե տեսակ մը գութ բնութենեն ապաշնորհվածի իր ցավագար շարժուձևերովը և իր «Կատարինես, Մագթաղինես» հավիտենական լալկանությամբը։

Մարկոսյան էֆ-ի մահվընեն ետքը՝ հանըմը Բարթող աղային հանձնած էր նաև իր կալվածներու հասույթներուն հավաքման գործը, շահագործության նոր և անակնկալ հորիզոն, որուն պայծառությունը շլացուցած էր մարդուկին աչքը և հոգին հրճվանքե դողացուցած։

Իր շերեփի պես երկար ու բարակ թևերը երերցնելեն, գորշ բիբը տարապայման կայծով մը հրդեհված, կնոջը վրա վազած էր այս լուրը ավետելու։

— Կնի՛կ, սո՛ւս եղիր, սո՛ւս... գործերնիս աղեկ է. հանըմին իրատները պիտի ժողվեմ... է, ա՛լ հոգդ մ'ըներ, կնի՛կ, աղջիկնիս ուզող ուզողի պիտի ըլլա... զավալլը Կատարինես, յա՛ Մագթաղինես, վա՞խ, յավրում, վա՞խ...

Հետո նստած էր իր արգավանդ գանգին մեջ միտքը նենգության, աճպարարության նորանոր ոստայններ հյուսելու, անոնց ցանցերուն մեջ բռնելու, կաշկանդելու համար այս պարարտ ճանճը, որ հիմարորեն եկած ինկած էր հոն։

Հակառակ իր երկարամյա խարդախ ու կեղծարար կյանքին, այս հրեշը երջանկությունը ունեցած էր բարի, անկեղծ, անխարդախ մարդու անուն մը շինելու. ոչ ոք կկասկածեր անկե, նույնիսկ հավատացողներ կային, թե Բարթող աղան, աղքատ ընտանիքներու ապրուստին ընծայած իր դյուրություններովը, նախախնամական դեր մը կկատարեր գեղին աղքատախնամ մարմնին գործը դյուրացնելով։

Երբոր տեսնային փողոցներեն անոր տաժանքոտ անցքը՝ ահագին զամբյուղին տակ կքած, միամիտներ կգտնվեին զինքը մեղքցող.

— Սա խեղճ մարդուն քաշա՜ծը, պատառ մը հացի համար... վա՜խ, վա՜խ, վա՜խ...

Այնպես որ, ամիրային աղջիկը առանց վարանելու իր կալվածներուն հանձանձումը վստահած էր Բարթող աղային՝ իբրև գերազանցապես ուղղամիտ մեկու մը, հակառակ անոր արտաքին գարշելի երևույթին նկատմամբ զգացած իր խորին հակակրությանը։ Մարդը սգավոր կնոջ այս տրամադրությունը սկսած էր շահագործել արագորեն, վստահ թե անիկա՝ իր ցավերուն, կսկիծներուն անձնատուր՝ երբեք չպիտի վրդովեր իր ննդավոր հաշիվները։

Երբեմն, քանի մը ամիսը հեղ մը, կուգար հանրմին տեղեկություններ տալու կալվածներու վիճակին վրա, մանրամասն հաշիվ ներկայացնելով, զոր հազիվ թե մտիկ կըներ ան։ Առաջին անգամ, շենքերու ընդհանուր նորոգության անհրաժեշտությունը շեշտած և հավանություն առած էր։ Այս պատրվակին տակ, Բարթող աղա կլորիկ գումար մըն էր շորթած։ Եվ ա՛լ այնուհետև արդարանալի պատրվակներ իրարու ետևե շարած էր, ամսական եկամուտին ծայրեն, պոչեն կտրելու, գողնալու համար։ Այսօր վարձվոր մը առած քալած կըլլար՝ կես ամսականը ուտելով. մյուս օր՝ ուրիշ մը ամսական վարձքը զեղչած կըլլար խանութեն ելլալու սպառնալիքով. ուրիշ անգամ՝ բուռն փոթորիկ մը տան մը քիվը խախտած կըլլար, որուն վերականգնումը առնվազն երկու ոսկի կնայեր. վերջապես ամիս չէր անցներ, որ Բարթող աղա մեկ քանի ոսկի չի գրպաներ՝ իր ստացած հինգ առ հարյուր վարձատրութենեն զատ։

Իր համարատվության սովորական այցելություններեն մեկը տված էր տիկին Մարկոսյանին, որուն դեմ նոր դավեր կնյութեր, կողոպուտի նոր ծրագիրներ կպատրաստեր ճամփան գացած միջոցին... Քիչ-քիչ խավարը կտիրեր համապարփակ. Բարթող աղա կտրեց իր խորհրդածություններուն թելը, երկհարկ, լայնանիստ տան մը առջև հասած ըլլալով։

Կոստանյան վարժարանն էր։

Բ

Երկու ամիս առաջ, իրիկվան մը դեմ, Հ... գյուղի փողոցներեն ուշագրավ և տարօրինակ մարդ մը կանցներ, երկայնահասակ, հագած լայնածավալ բելբրին մը, թաղիքե լայնեզր գլխարկին տակեն մազերը վար կախված հորդառատ։ Փողոցը խաղացող լաճերը այս երևույթին ի տես՝ պահ մը դադրեցուցին իրենց խաղերը և տեսակ մը պակուցմամբ իրարու ցույց տվին զայն. «Շաբխալը մարդը, շաբխալը մարդը»։ Իսկապես քառորդ դար առաջ, Պոլսո հեռավոր թաղերուն մեջ, գլխարկավոր մարդ մը հազվագյուտ երևույթ էր։ Պատուհաններեն՝ կիներ ու աղջիկներ ապշությամբ դիտեցին այդ անակնկալ անցքը. «Քա նայեցեք, ֆռենկ կանցնի կոր...»։

Մարդը իր առաջ բերած այդ իրարանցումին անգիտակ կերևար, թանձր և կարմիր շրթներեն puro մը կախած, ատեն-ատեն թեթև մուխ մը դուրս կուտար։ Նայվածքը խուզարկու և անձկոտ բան մը ուներ. թե՛ կանցներ և թե՛ շեմքերը կդիտեր ուշադրությամբ, փողոցի անկյուններու վրա կենալով տատամսոտ, հառաջանալու վարանելով։

Վերջապես անցորդի մը մոտեցավ.

— Խնդրեմ, պարոն, կարո՞ղ եք ինձ ասել թե ո՞րտեղ է հայկական եկեղեցին։

Անցորդը վերեն վար չափեց օտարականը, գլխարկավոր ու երկարամազ հայ մը տեսնելուն զարմանալով։

— Դուք հա՞յ եք, բարեկամ։

— Հա՛յ եմ,—պատասխանեց մարդը ժպտելով, սիգարը առանց հեռացնելու շրթներեն,— ինչո՞ւ եք զարմանում, մի՞թե չեմ նմանում հայի... խնդրեմ, ցույց տվեք ինձ եկեղեցին։

Անցորդը, իր զարմանքը շարունակելով հանդերձ, ստիպվեցավ առաջնորդել օտարականը, մտքեն ըսելով. «Ի՜նչ թոհաֆ հայ»։

Շատ չանցած եկեղեցի հասան. օտարականը քահանա մը տեսնել ուզեց։ Ժամկոչ մը տերտերներուն խուցը առաջնորդեց զինքը, ժամարար քահանային ներկայացնելու համար, որ յոթանասունամյա կես զառամած ծերուկ մըն էր, և որուն շրթները գրեթե միշտ կերերային, աղոթք մը մրթմրթալու համար։ Նորեկը հափշտակությամբ համբուրեց քահանային դողդոջ ձեռքը և հրաման ուզեց՝ նստելու։

Առանց վերարկուին և գլխարկին, զորս դուրսը թողած էր, օտա-

բականը ոչ նվազ տարօրինակ էր իր կերպարանքով։ Բաճկոն մը հագած էր, պարզ և հինկեկ, վիզեն մինչև վար կոճկված, առանց փողկապի և առանց ճերմակ օձիքի։ Մեջքը պրկող կաշիե գոտիեն արծաթ շղթա մը կախված էր, որուն ծայրը կանհետանար բաճկոնին մեկ գրպանին մեջ։ Նեղ, մաշած տափատ մը անոր նիհար սրունքները կկաղապարեր, լայն արատներով ծածկված, միակտուր կաշիե կոշտ ու խոշոր կոշիկներ ուներ, որոնք հայտնապես շատ տառապած էին և հեռու չէր այն ժամանակը, ուր անոնք պիտի հրաժարեին պատսպարելե այդ ոտքերը։ Կլոր, թուխ դեմքը, թավ մորուքով մը շրջանակված, կոշտ գիծեր ուներ, գռեհիկ, անգութ արտահայտությամբ։ Լայնաբաց սև աչքերը խիստ ու սևեռուն էին, մութ շողյուններով, արհամարհոտ և խուզարկու։ Հափշտակիչ և ավազակային բան մը կար այդ դեմքին վրա՝ սև, առատ, գեղեցիկ վարսերուն տակ, որոնք քմահաճորեն կխովանային անոր գանգեն մինչև ծոծրակն ու քունքերը՝ ըմբոստ խոպոպներով։ Առատ բեղ մը, խնամքով հարդարված ու մարտական, կավարտեր, կլրացներ թափառիկ արկածախնդիր ասպետի այդ տիպարը, որուն մեր օրերուն մեջ՝ խաչագող անունը կուտան։

— Ո՞րտեղեն կուգաք, ո՞վ եք, օրհնած,— հարցուց քահանան, իր աղոթքներուն և կրոնական խոկմունքներուն մեջ այդպես ընդհատվելուն նեղացած։

— Տեր հայր, կովկասցի եմ,— պատասխանեց օտարականը տեղավորվելով աթոռի մը վրա մտերմական համարձակությամբ մը և սիգարեն մուխի բարակ քուլա մը արձակելով,— անվանվում եմ Աբգար Կոստանյան... .Շվեյցարիայում պեդաքոխիա ուսանելուց հետո վերադարձա հայրենիք, հայ մանուկին դաստիարակության գործովը զբաղվելու... Կովկասում ունենք գիմնազիաներ, ծխական վարժարաններ, ես կարող էի մեծ դիրք ձեռք բերել, առատ փող էին առաջարկել ինձ, որպեսզի հանձն առնեմ մի կարևոր պաշտոն հենց այդ գիմնազիաներից մեկում, բայց ես մերժել եմ, ես ուզում եմ ոչ թե փող, այլ անձնվեր ծառայությամբ օգտակար լինել մեր մանկտիներին հոն, ուր նոքա դժվար պայմանների բերմամբ չեն կարող օգտվել պեդաքոխիայի փրկարար սիստեմից։ Ես պաշտում եմ գաղափարը, տեր հայր, ինձ փող հարկավոր չէ, ինձ հարկավոր է գործը, գործը՝ հեռավոր, լքված անկյուններում, ուր հայ մանկտին թողվել է իր ճակատագրին... ափսո՞ս, ափսո՞ս...

Մարդը մեկենիմեկ բռնկած էր, բերնին անկյունը ճերմակ լորձունք մըն էր գոյացած, աչքերը տարտամ ու շողարձակ եղած էին, այդ մութ, ցածլիկ խուցին պատերեն անցնելով, և թափառելով «հեռավո՞ր, լքվա՞ծ անկյուններում»։ Իր շեշտերուն ընկերացող գլխի շարժումները ոտքի հանած էին վարսերը, որոնք հիմա մինչև աչվրները կիջնային։ Խեղճ քահանան՝ իրեն անհասկնալի բարբառով մը լփրտված, գահավիժված այդ բառերու կարկուտին տակ ափիբերան և ապշահար՝ մարդուն կնայեր, ինչպես պիտի նայեր խելագարի մը։

— Ձեր զարմանքը հասկանում եմ, տեր հայր,— շարունակեց մարդը դառն ժպիտով մը,— էս տոնով ձեզ ոչ ոք չի խոսել, էս գաղափարները տարօրինակ են թվում ձեզ, այո՛, բայց քիչ ժամանակում պետք է ամեն ինչ հասկանաք... Պիտի հասկանալ, տեր հայր, թե առանց պեդաքոխիայի հայ մանուկը մեռնում է, հայ տղամարդը փչանում է, հայությունը ջնջվո՞ւմ է, այո՛, ջնջվո՞ւմ է հայությունը, տե՛ր հայր... ափսո՞ս...

Մարդը այս վերջին բառերը դառնաշունչ շեշտով մը արտասանած էր, բեմբասացի մը պես մատը օդին մեջ երկնցուցած, մազերը ավելի ցիրուցան, աչքերը շանթարձակ, սիգարը բերնին անկյունեն կախված միշտ։ Քահանան, վտանգ մը նախազգալով, ինք իր վրա ամփոփվեցավ, ճերմակ մորուքը ձեռք առավ, ինչ ընելիքը չգիտնալով։

— Տեր հա՛յր, զգում եմ, որ վրդովվել է ձեր հանգիստը, բայց դուք իբր կրոնի պաշտոնյա, իբր ժողովրդի առաջնորդ, պարտավոր եք ուշ դնել իմ ասածներին... Ես իմացել եմ, թե Թրքահայաստանում և Պոլսում ոչինչ չի եղել դաստիարակության սուրբ գործին պրոպագանդին համար, հենց էն բոպեին որոշել եմ թողնել ամեն ինչ, փայլուն ասպարեզ, առատ փող, ապահով ապագա, ճամփա եմ ընկել դեպ էս կողմեր՝ կատարելու այն, ինչ որ չեն արել, չեն կարողացեր անել հայ կրթության մշակները... Ափսո՞ս, ափսո՞ս, մինչ աշխարհ լուսավորվում է, տե՛ր հայր, մենք՝ Հայերս խավարումն ենք ման գալիս... ո՛չ ոք չի հետաքրքրվել մեզմով, ոչ ոքի հոգսը չէ եթե մի օր տգիտության անդունդը գլորվենք... Մենք մեր ձեռով պիտի վերականգնել, լուսավորել առաջդիմել, և ասի ի՞նչ պես կարելի է, եթե ոչ մեր դաստիարակության հնացած սիստեմը դեն գցելով և ընդունելով պեդաքոխիայի փրկարար սիստեմը, որը հիմնած, որը տարածած, որը աղաղակած է Պեստալոցցին. Պեստալոցցիին ճանաչո՞ւմ եք, տեր հայր։

— Չէ՛, օրհնած, չեմ ճանչնար, ո՞վ է, ստանպոլցի՞ է,— հարցուց ծերուկը։

— Ի՞նչ եք ասում, տեր հայր,— աղաղակեց մարդը՝ խենթի պես երկու բազուկները օդին մեջ շարժելով,— ի՞նչ եք ասում։ Պեստալոցցիին չճանաչե՞լ, սա մի մեծ, ահագին թերություն է, սա այսպես ասած, մի անըմբռնելի, անհնարին ոճիր է... Ստամպոլցի՛, օ՛հ, օ՛հ, օ՛հ, մի՞թե էս հողը, էս օդը կարո՞ղ են Պեստալոցցիներ արտադրել... Ափսո՛ս, ափսո՛ս, տեր հայր, որքան վիշտ եք պատճառել ինձ ձեր տգիտությամբը, ձեր անհասկացողությամբը, և այժմ իրավամբ մտածում եմ, եթե ժողովրդական քարոզիչները էսքան անծանոթ են լուսավորության ֆակտորներին, ապա ուրեմն ի՞նչ են լինելու պարզ անհատները, օ՛հ, օ՛հ, օ՛հ... Եվ մարդը երկու բռունցքովը մազերը հափշտակեց՝ զգացած վիշտեն խելահեղ և լուռ։

— Օ՛րհնած,— ըսավ քահանան խիստ ու կտրուկ շեշտով մը,— ես ծերացած լմնցած մարդ եմ. աղոթքե ու պատարագե դուրս խելքս բանի մը չի հասնիր, այդ բաներուն համար երիտասարդներու դիմեցեք, ինձի ըսեք, թե այս վայրկյանին ինե ի՞նչ կուզեք։

Մարդը, կարծես իր ցնորքեն սթափած, մատներովը վարսերը դեպի ետև սանրեց և հանկարծ փոխելով իր կշտամբական շեշտը, ողոքիչ, գրեթե պաղատական եղավ։

— Մի պնակ կերակուր և մի ինչ-որ քնելու տեղ։

Եվ ավելցուց, տափատին գրպանները ծնծելով.

— Ափսո՛ս, ափսո՛ս, փողս սպառել է, տե՛ր հայր...

Քահանան, որ անշուշտ հեռի էր հավատալե, թե այդ այցելությունը ատանկ մեկ անախորժ եղրակացության մը կրնար հանգիլ, մորուքը ձեռք առավ նորեն, անձկոտ և խռոված։ Իր վրա ավաղակի մը տպավորությունը ձգող այդ այցելուն ի՞նչպես եկեղեցիին մեջ վար դնել, իսկ ճամփելու համար դրամ տալ հարկ էր, գաղտփար մը, որուն հետ քահանա մը երբեք չհաշտվիր։ Սակայն, երկու շարյաց փոքրագույնը ընտրելու համար, առաջին պարագային կյանք տվավ։ Ժամկոչ մը կանչեց և պատվիրեց, որ իրենց խուցին մեջ պառկելու տեղ մը և պնակ մը կերակուր տան անոթի Կոստանյանին։

— Օ՛րհնած,— ըսավ,— ես վաղը պատարագվոր եմ, ինձի ներեցեք, ստիպված եմ աղոթել։

Մարդը ժամկոչներուն խուցը փոխադրվեցավ։ Գայլի մը անհագությամբը կերավ, պատառները առանց ծամելու կուլ տալով և չնշմարելով, որ ժամկոչ ախպարները քիթ բերան կծռեին իրենց ուտելիքին վրա իջնող այդ հանկարծահաս թաթառին հանդեպ։ Ճաշին ետքը, սիգարը տեղավորեց բերնին անկյունը և խոսակցության բռնվեցավ ժամկոչներուն հետ, զատ-զատ հարցնելով անոնց ո՞վ և ո՞ւսկից եկած ըլլալը։

Քիչ-քիչ ունկնդիրները հափշտակվեցան Կոստանյանին եռանդոտ խոսվածքեն, մանավանդ, երբ իմացան, որ Եվրոպան պտտած էր ան։ Եվ շատ շփոթեցան, երբ որ մանկավարժության բարիքները թվելե հետո՝ սա հարցումը ուղղեց իրենց.

— Իսկ ոևէ գաղափար չունե՞ք մանկավարժության մասին, Պեստալոցցիին չե՞ք ճանաչում։

Եվ անոնց ժխտական լռության վրա.

— Ափսո՛ս, ափսո՛ս, ազգը փչանում, կորչում է հեռավո՛ր, լքվա՛ծ անկյուններում... ճիշտ որ ժամանակին եմ հասել, բայց ի՞նչ էիք լինելու եթե ես ծնած չլինեի։

* * *

Կոստանյան բնիկ զարաբաղցի էր։ Անառակ և արկածախնդիր, պատանեկությանը երկիցս արտաքսված էր Գևորգյան ճեմարանեն և քանի մը տարի հետապնդված շիկերեի մը պես։ Կովկասի սարերը ու ձորերը թափառելե հետո, ինքզինքը հաջողած էր Եվրոպա նետել։ Հարուստ մեկենասի մը միամտությունը մեկ քանի տարի շահագործած էր՝ Բեռլինի, Փարիզի և Ժընևի սալարկներուն վրա, խաղարաններու և հանրատուներու անկյունը ապրելով ամոթալից ու վատշվեր կյանքը բոլոր այն քայքայված, գարշահոտ տիպարներուն, որոնք, օրին մեկը, հանկարծ դիմացդ կցցվին կեղծ համալսարանականի կամ սուտ բանաստեղծի տիտղոսի մը մաքրագործումին տակ։ Օտար և անծանոթ անկյուններու անհունությանը մեջ, անոնք կիրքի շնացնող մրրիկներուն մեջ կտապըլտկին, մինչև դունչերնին մխրճված քաղաքակրթության հետին կոյուղիները, ուսկից վերջապես օր մը դուրս կշպրտվին բարերար ձեռքե մը, հոգինին, մարմինին շարավալից, ու կերթան իրենց ապականության թեփերը ցանցնելու մաքուր, կույս հողերու վրա։ Ասոնցմե էր Կոստանյան, որ Պոլիս նետեր էր ինքզինքը՝ ռուսահայ մանկավարժի

մոլթին տակ, պատրող, շլացնող ծրագիրներով բեռնավոր, շահագործության արկածախնդրության անկոխ գետիններու ի խնդիր։

Հաջորդ օրը, գեղին մեջ ամենուն բերանն էր պ. Աբգար Կոստանյանին երևումը։ Անձե անձ, տունե տուն՝ անոր անվան շուրջ հերյուրված պատմությունները հսկա համեմատություններ կառնեին, հասնելով հիացումի և ապշության այն գերագույն աստիճանին, զոր միայն ամբոխին ռամիկ և արգավանդ երևակայությունը կրնար ստեղծել։ Կոստանյանը հաղթական մուտք մը ըրավ այն սրճարանը, ուր կհավաքվեր գեղին երիտասարդությունը, տգետ ու խանդավառ։ Շուրջը խռնվեցան, բերանաբաց։ Մարգարեի մը տիրական շեշտերը գործածեց, բորբոքեցավ, գոռաց, ազգային վերածնության մասին ջատագովեց՝ դաստիարակությունը հիմ առնելով։ Ազգային մտավոր ու բարոյական անկումը նկարագրեց անանկ սրտաճմլիկ, մթին և տխուր գիծերով, որ այտերու վրա արցունքներ խսկ երևցան։

Գյուղի երիտասարդներեն ոմանք՝ որ ազգասիրական կամ կրթասիրական ձգտումներուն պոռոտ և շնչասպառ ցուցադրանքը ընելու համար դյուրին և հարմար առիթներու դարանամուտ էին, այդ հանկարծահաս, լորձունքոտ, հերարձակ քարոզիչին վրա գտնել կարծեցին իրենց փնտրած, հետապնդած առիթներեն լավագույնը։ Սեղմվեցան անոր շուրջը, անոր բուռն այպանանքներուն, սրտցավ ձայնակումներուն, վերանորոգիչի, ազատարարի բարձրասլաց, թարթարենյան հայտարարություններուն «այո՛, այո՛, իրավունք ունի, մենք ալ ասանկ մարդու մը պետք ունեինք» արձագանքեցին։

Կոստանյան, որ շուրջիններուն հոգեբանությունը կլրտեսեր, խանդավառության գերագույն բոպեին վճռական հարվածը տվավ, ոտքի կայնած, աչքերը կիսախուփ, իբենոսացած, երկար բելբրինի տակեն երկու բազուկները երկնցուցած խաղաղության լայն ժեստի մը մեջ, կարծես Մովսես մարգարե մը, որ աստծո պատվիրանքները կհաղորդեր իր ժողովուրդին։

— Սիրելի հայրենակիցնե՛ր, մի՛ հուսահատվեք, ահա մերձենում է ձեր փրկության մոմենտը. մի ինչ-որ կարճ ժամանակում աշխատությամբ և զոհողությամբ դուք լինելու եք հավասար եվրոպական մեծ ժողովուրդներին... Վստահեցնում եմ ձեզ, պատվական եղբայրներ, թե ես երբեք հույս չունեի այս հեռավոր անկյուններում հանդիպել ձեզ նման ազնիվ, եռանդոտ տղամարդների, գործքս դյուրացած պետք է լինի հենց որ դուք կամենաք ձեր թանկագին աջակցությունը նվիրել ինձ։ Ասացե՛ք, խնդրեմ, ձեր աջակցությանը կարո՞ղ եմ բոլորովին վստահ լինել։

— Այո՛, այո՛,— պոռացին չորս կողմեն երիտասարդ ձայներ։

Մանկավարժին շուրթներուն վրա երանության ժպիտ մը թրթռաց։ Ձեռքը ճակտին տարավ և պահ մը խորունկ մտածման մեջ ընկղմած երևցավ։

— Խորին շնորհակալություն, սիրելի հայրենակիցնե՛ր,— ըսավ վերջապես ակնարկը չորսդին պտտցնելով տարտամորեն.— ա՛ս էի սպասում ձեզանից... և երբ ասացի թե մի ինչ-որ կարճ ժամանակում հավասարվելու եք եվրոպական մեծ ժողովուրդներին, սա մի պոռոտանք, սա, այսպես ասած, մի դատարկ խոսք չէր... Դաստիարակչական մի նոր, մի փրկարար սիստեմ, որին ես հեղինակել եմ, և որ կարող է մեծ ապշություն, մեծ սքանչացում պատճառել Պեստալոցցիներին և Հերպարտներին իսկ, մի սիստեմ, որ դեռ գաղտնի եմ պահել, գալու է հրաշքներ գործել աստ, ձեր շրջաններում, ուր տգիտությունը դարերե ի վեր բույն է դրել, ափսո՜ս, ափսո՜ս...

Ներկաները՝ այս պատգամորոտ ավետումին վրա իրարու նայեցան երկյուղած սքանչացմամբ մը։ Կարծեցյալ մանկավարժը՝ բոլորշի նայվածքի մը մեջ՝ ըմբոշխնեց բոլոր քաղցրությունը հաղթանակին, զոր տարած էր շուրջը հավաքվող բերանաբաց և ցավագին միամտություններուն վրա։

Հետո, առանց տպավորությունը պաղեցնելու, խնդրեց ներկաներեն անոնցմե, որոնք հանձն առնեին այդ ծառայությունը ընել իրեն, տեղվույն ազգային վարժարանը առաջնորդել զինքը, «մի արագ ակնարկ գցելու համար անդ»։

Չորս կողմեն ճարտարվորեցան, այդ առաջնորդության պատիվը իրարու ձեռքե խլելու ապուշ մարմաջե մը բռնված, այն աստիճան, որ պ. Կոստանյան, բարեհաճ ժպիտով մը, ստիպվեցավ ինք ընտրել իր առաջնորդները, մեկիկ-մեկիկ մատնանշելով զանոնք, իբր թե ըստ բախտի, բայց իսկապես, է՛ն բարեկեցիկ երեվույթ ունեցողները զատելով։

— Պարոնի՛ն... պարոնի՛ն... պարոնի՛ն... պարոնի՛ն...

Զատված չորս պարոնները տեսակ մը հպարտությամբ առաջ անցան, որոնց հետևեցավ մարդը՝ բոլոր ներկաներուն ժպտաշուրթն հրաժեշտներ բաշխելե հետո։

Հիմա փողոցներեն անցած ատենը սրճարաններեն, խանութնե-

քեն ամեն մարդ դուրս կելլար այդ նշանավոր այցելուն տեսնելու համար։ Մանկավարժը իր հետևած ճամփուն այդ տենդոտ իրարանցումին անտարբեր ցույց կուտար ինքզինքը՝ իր երիտասարդ առաջնորդներուն հետ կարևոր խոսակցության մը բռնված ձևանալով։ Վերջապես թափորը հասավ վարժարան, վիթխարի խարխարված շենք մը, որուն քստմնելի երևույթին առջև մանկավարժը կանգ առավ սարսափահար և գրեթե լալահառաչ։

— Էլի ի՞նչ եք ասում,— պոռաց,— է՛ս զնդանում հնարավո՞ր է սերունդ պատրաստել, ափսո՜ս, ափսո՜ս։

Ներսը, ընդարձակ սրահին մեջ, կարգ-կարգ մակաղված մատաղ գանգերը՝ հետաքրքրության և սարսափի արտահայտությամբ անշարժ մնացին այդ անսովոր այցելուին դարձած։ Վարժապետը, որ արդեն իմացած էր կովկասցիին երևումը, կապկպվեցավ անոր առջև և տեսակ մը խստությամբ իրեն ուղղված հարցումներուն կարմրելով ու կակազելով պատասխանեց։ Ուր որ մտավ ելավ, ինչ որ տեսավ, քննեց, մանկավարժը մեկ բացագանչություն մը ունեցավ իր զգացումը, իր զայրույթը հայտնող.

— Ափսո՜ս, ափսո՜ս... սերունդը փչանում է։

Այցելությունը ավարտելե ետքը, երբոր վարժարանեն դուրս ելան, մանկավարժը երկինք նայեցավ, ուր արևը իր զենիթին հասած էր։

— Ախր ժամանակը անցնում է, և մենք չենք զգում, պարոն Ներ... Ստամոքսը բողոքում է, միթե կարող չենք մի ինչ-որ բան գտնել ներս խփելու. ես սովոր չեմ ինձ մոտ փող վերցնել... հմ՝, ի՞նչ եք ասում...

Չորս երիտասարդները իրարու երես նայեցան, զիրար հանդիմանելով լռելյայն որ ատանկ մեկ մարդ մը անոթի ձգած էին մինչև այդ վայրկյանը։ Եվ ահա վեճ մըն է ծագեցավ. յուրաքանչյուրը կուզեր իր տունը տանիլ ռուսահայը, չհանդուրժելով, որ ուրիշ մը այդ անբաղդատելի պատվին արժանանա. ի վերջո պ. Արզար Կոստանյան ստիպվեցավ միջամտել քրքջաձայն.

— Խո՜, ի՞նչ սիրուն տղամարդկանց եմ հանդիպել... է՛լի ինձ համար մի պնակ կերակուր բավ է՝ ում մոտ կուզե լինի։ Ավելորդ է վիճել մի էսքան չնչին բանի համար, պարոնին մոտ կճաշեմ... համաձա՞յն եք։

Մյուսները ստիպվեցան համակերպիլ այս գերագույն փափագին։ Մանկավարժին ընտրածը չորսին մեջ է՛ն հարուստ երևույթ ունեցողն էր։

Ք...յան ընտանիքը, գյուղին է՛ն աղդեցիկ հարուստներեն, գրքակաց ընդունելություն մը կատարեց նորեկ մանկավարժին, որ մեծարված հացալից սեղանին վրա ահագին ավերում գործեց, պոլսական համադամներեն յուրաքանչյուրին նախշուն դրվատիքներ շռայլելով՝ հետզհետե որ անոնք կերևային իր անկուշտ աչվընեբուն առջև։ Ճաշեն հետո ընտանիքին անդամներուն պարզեց իր մանկավարժական տեսությունները, հայտնելով՝ թե իր սեփական մեթոդները գործադրելու համար Հ... գյուղի մատաղ սերունդին վրա՝ մտադիր էր վարժարան մը հիմնել, թեև ատոր համար դրամ բացարձակապես կպակսեր։

Իրիկվան, ընտանիքին հայրը, բարեմիտ և աղնիվ կեսարացի մը, գործին հետաքրքրվելով՝ երկար բարակ տեսնվեցավ մանկավարժին հետ, չհասկցած կետերը իր որդուն բացատրել տալով։ Իր բախտեն, նորեկը հոդ կիյնար այնպիսի ատեն մը, ուր գեղին կարգ մը ջոջ աղաները սաստիկ հակառակության մեջ էին ազգ. վարժարաններու հոգաբարձության և թաղ. խորհրդին հետ այն ամենափցուն պատճառներեն մեկովը, որոնցմով գրեթե միշտ պառակտված են Պոլսո թաղերը։ Հակառակորդ կուսակցության պետն ալ դիպվածով այդ կեսարացին էր, որ իսկույն այդ մարդուն և անոր փայփայած ծրագրին մեջ տեսավ սքանչելի գործիք մը, առիթ մը հոգաբարձության և թաղ. խորհրդին գլուխը ճզմելու համար։ Նույն գիշերն իսկ իր նյութական և բարոյական աջակցությունը խոստացավ մանկավարժին և հորդորեց զայն, որ անմիջապես գործի սկսի։

Քանի մը օրեն, կեսարացիին կողմնակիցները, որոնք ամենքն ալ հարուստ մարդիկներ էին, առաջին հանգանակությամբ մը հարյուր ոսկիի գումար մը գոյացուցին և մանկավարժին ափը դրին։ Երբոր կարմրուկ ոսկիներուն այդքան շուտ իր դատարկ գրպաններուն մեջ հոսիլը տեսավ, աչքերը գազանային ագահությամբ մը փայլատակեցին։

— Խո՜, ի՞նչ տղամարդկանց եմ հանդիպել,— կըսեր իր պաշտպաններուն,— բայց հենց որ գիտենայի, թե էսքան մեծ փող հարկավոր էր լինելու էս գործի համար, ինձ հետ առատ փող կփոխադրբեի։

Գյուղին է՛ն հովասուն տեղը մեծ տուն մը վարձվեցավ։ Իրմով հափշտակվող չորս աղվամազոտ երիտասարդներ ջարդուփշուր

եղան կովկասցիին մանկավարժական հիմարություններուն մարմին տալու համար։

— Այն բոլորովին նոր սիստեմը,— կըսեր,— որին գործադրելու եմ՝ պահանջում է դպրոցական կարասիք, բոլորովին տարբեր սիստեմով...

Երկու շաբթվան մեջ ամեն բան պատրաստ էր՝ այդ համբավավոր սիստեմին գործադրությանը համար։ Մանկավարժը նոր «շոքեր»-ով զարդարվեցավ, մորուքը և վայրի ծամերը շտկրտեց, հանգըստավետ խուցի մը վայելքը տվավ ինքզինքին և անմիջապես գործի ձեռնարկեց։

Կոստանյան վարժարանին պաշտոնական բացման օրը՝ կիրակի մը՝ բոլոր իր համակիրները, ծնողքներ և զավակներ, ժողովեցան մեծ սրահին մեջ՝ լսելու համար մանկավարժը, որ խոստացած էր իր հեղինակած չնաշխարհիկ սիստեմին վրա «մի ինչ-որ գաղափար տալու»։

Այդ խայտաբղետ հավաքույթին մեջ կփայլեին գյուղին իմացական երիտասարդությունը, մենծ աղայությունը, շուկայի դասակարգը, գեղեցիկ սեռը իր ամեն աստիճաններով և մինչևիսկ մամիկները, որոնք չէին կրցած երկար մազերով և «թոհաֆ խոսվածքով այդ հայը տեսնելու հետաքրքրության հաղթել։ Իր համակիրները՝ սեթևեթի և ցույցի մուրացկան տղաքներ, սնամիտ գոհացումներ ըմբոշխնելով իրենց ապուշ և ապարդյուն փութկոտությանը մեջ, մանկավարժին հատկացված ամբիոնը կշրջապատեին, կոտրտվելով, վազվզելով, իրարու ականջին բաներ մը փսփսալով շարունակ։

Ընդհանուր հետաքրքրության և լռության մեջտեղ երևցավ վերջապես պ. Կոստանյան սև զգեստներով, վայելչավար կարճատես նայվածքի մը մեջ ջանալով ամփոփել այդ խառնիխուռն, խեղճ հասարակությունը, որ միամտորեն եկած էր խաչագողի մը լփրտելիք շաղփաղփանքը ծափելու, հավնելու։

Ամբիոնին վրա՝ թուղթերու ծրար մը քննելե հետո, մարդը սկսավ խոսիլ բամբ, ուռուցիկ, մարտագոռ ձայնով մը, բառերուն վերջին վանկերը ուժգնորեն շեշտելով, երբեմն հանկարծ նվաղելով, գութի, պաղատանքի, ողբի սրտաճմլիկ խառնուրդի մը մեջ, գլուխը վայրահակ, մազերը ցիրուցան, աչքերը կիսախուփ, բայց շքեղ ու ահավոր վոլթ-ֆասով մը, անակնկալորեն պայթելով՝ ճաթրատող, ճարճատող բացագանչությանց ուժգին կոհակավորմամբ մը, լանջքը հպարտ ու ձիգ, նայվածքը առյուծային։ Նախ հանդիմանությանց, այպանանքի շնչասպառ տարափ մը տեղաց այն աներևույթ էակներուն հասցեին, որոնք ազգային դաստիարակության սխալ, աղետալի ուղղություն մը տալու եռանդը գործած էին, նախատեց, թշնամանեց, քարկոծեց, իր այս բոլոր հայհոյալից ժայթքումները աստիճանավորելով՝ ոտանավորի տուներու պես, և անոնցմե յուրաքանչյուրին սա հանկերգը տալով, տխուր, լալկան շեշտով մը, ձեռքերը հորիզոնաձև օդին մեջ կարկառուն.

— Հայությունը կորչո՞ւմ է... հայ ազգը ջնջվո՞ւմ է... հեռավո՞ր, հեռավո՞ր անկյուններում։

Հետո վերսկսելով ավելի բարկաճայթ, ավելի մոլեգին, ավելի հրաբորբոք։

Սրահը, արձանացած, մագնիսացած, այդ փոթորիկին ոլորտներուն մեջ ցնորաբեկ, մտիկ կըներ, գրեթե ոչինչ հասկընալով արևելյան բարբառով հոլովված այդ ցավատանջ ու խելագար բարբաջանքներեն, բայց հափշտակված այն անպարագիծ, անսահման զմայլանքովը, որ բոլոր չհասկցված բաները կներշնչեն տգետ, նախապաշարված ամբոխներու։

Ամբիոնը շրջապատող սուպայակույտին երիտասարդ անդամները ատեն-ատեն իրարու երես կնայեին, իբրև թե իրարու հասկցնելու համար, որ այդ մեծ ճշմարտությունները կըմբռնեին, կհավնեին և կվավերացնեին։

Այդ փոթորկալից առաջաբանեն հետո բեմբասացը կարճառոտ ակնարկ մը նետեց եվրոպական արդի դաստիարակության փրկարար դրության վրա, իր անձնական քրիդիկներովը համեմելով զայն, ու վերջապես եկավ հանգեցավ հավիտենական Պեստալոցցիին։

Հոս, ճարտասանական աղդու դարձվածքի մը և ժեստի մը մեջ, խաչագողը հանկարծ ակնարկը սևեռելով սրահին մեկ անկյունը, դեպի ձեղուն, սա մեծագոչ ձայնարկությունը պոռթկաց.

— Պեստալոցցի՛, Պեստալոցցի՛, արի դուրս թռի՛ր գերեզմանիցդ և եկ քո լույսերդ սփռի՛ր մեր խեղճ ազգին հեռավոր շրջաններո՞ւմ...

Ունկնդիրներուն շարքին մեջ մամիկ մը, այս ահեղ պոռչրտուքեն սարսափահար, քովի կնոջ ձեռքերը բռնելով.

— Քա քուրուկ, վո՛ւյ դող կելլամ կոր նե, աճապա խենթեցա՞վ քի բեստիլճին կկանչե կոր։

— Քա՛ վ կիտե, քուրուկ, էս ալ աս մարդուն հիյեթին չեմ հավնիր կոր, աճապա բեստիլը շա՞տ կսիրե...

Թեմբասացը իր բացագանչութենեն հետո, ակնարկը անկյունին սեռված մնացեր էր, անշարժ, իբր թե իրոք Պեստալոցցին հանկարծ երևցած ըլլար հոն՝ իր կոչին պատասխանելով։ Եվ ներկայներուն մեջ կասկածները քիչ-քիչ մարմին պիտի առնեին եթե մարդուկը, ուշաբերած, չվերսկսեր իր ճառը, ավելի հանդարտ, ավելի խոհեմ։

— Որքան որ էլ հիացումով վերաբերվում եմ դեպի Պեստալոցցին,— շարունակեց,— այնուամենայնիվ նա չկարողացավ իր սիստեմը տեխնիկական ամուր հիմքերի վրա հաստատել։ Ես հաջողել եմ, հետ երկար հետազոտությունների, լրացնել այդ պակասը։ Ահա թե ի՛նչպես. խնդրում եմ ձեզանից լարված ուշադրությամբ հետևել իմ բացատրություններին։

Թեմբասացը, պահ մը նորեն իր թուղթերը աչքե անցնելե հետո, շարունակեց լուրջ, հանդիսավոր ձայնով, ամբարհավաճ և ինքնավստահ.

— Թերևս չեք լսել դոկտոր Գալին, որը մի հանճարեղ, մի հրաշալի բան է գտել։ Սա մի բժիշկ է, որը ծնվել է 1758-ին Պատում և նախ հաստատվել է Վիեննայում, ուր իր կրամոզկոպիկ վարդապետությունը այնքան մեծ աղմուկ, հեղաշրջում է առալ բերել գիտական աշխարհում, որ կառավարությունը սարսափահար է եղել։ Բեռլինում նա դասախոսություններ է սարքել իր հիմնած բրենոլոգիայի պրոպագանդային համար և ամենամեծ հաջողություն է ձեռք բերել... Վերջապես նա հանդգնել է Փարիզում երթալ քարոզել իր վարդապետությունը, հրատարակել է իր գործերը ըղեղային անատոմիայի մասին և ունեցել է ահագին հետևող... Ափսո՛ս, որ նախանձը, որ ամենուրեք հալածում է արժանիքին, չի խնայել և դոկտոր Գալին. թշնամիներ, հակառակորդներ ճգնել են նրա գործը վարկաբեկել, վնասակար և անօգուտ ցույց տալ, բայց գալիս է մի օր ժամանակ, որ նրա անունը պիտի դասվի մարդկային բարերարների շարքում։

Թե ի՛նչ է դոկտոր Գալին վարդապետությունը... մի՛ շատ պարզ, բայց և մի շատ բարդ բան. նա ասում է,— ցուցմունքներով հաստատում է իր ասածները,— թե մարդկային գանգի արտաքին կազմավորումը ճիշտ ու ճիշտ պատկերացնում է ըղեղային զանգվածին ձևն ու կաղապարը, վասնզի, ցույց է տալիս ստորակա ըղեղագծերով համապատասխան զարգացում։ Այն թվականին, ուր դոկտոր Գալ աշխարհին հայտարարում էր իր սիստեմը, ջղային դրության կենտրոնացումը համարվում էր մի ինչ-որ հերետիկոսություն։ Հոգին պարզ է, իր բնակությունը հարկավոր է պարզ լինի, գիտակցությունը մի է, ապա ուրեմն հոգիի մի բնակություն ևեթ գոյություն ունի. ահա այս ըմբռնումին էր հակառակում դոկտոր Գալ և ասում էր. Մարդկային ըղեղը բաղկանում է նույնքան մասնավոր սիստեմներից, որքան նա գործում է որոշ պաշտոններ։ Վերջապես նա առաջինը ինք եղավ հաստատող, թե խելագարության անմիջական պատճառը ըղեղումն է կայանում։

Մինչև այժմ ոչ ոքի մտքից չի անցկացել մի այսպիսի տեխնիկ լինեն հարց գցողներ, թե ինչո՞ւմն է կայանում դոկտոր Գալի սիստեմին և մանկավարժության՝ այսպես ասած՝ առնչությունը։ Սա էլ շա՛տ պարզ, բայց և մի շատ բարդ բան է։ Գանգային տոպոգրաֆիան, որը մարդկությունը դոկտոր Գալին է պարտական, գալիս է մի ահագին դեր խաղալ մանկավարժության այն սիստեմում, որին ես խորհել եմ, որին ես գործադրելու եմ՝ հրաշալի արդյունքների հույսով։ Ավելի պարզ խոսեմ։ Գանգը (ու երկու ձեռքերով իր գլուխը բռնեց) իր փոսերով, այսպես ասած՝ իր խորդուբորդություններով մարդկային նկարագրին, խառնվածքին, տրամադրությանց մի զարմանալի պատկեր է ներկայացնում։ Այդ պատկերը հարցուփորձ անելով, նրա մասնավորությունները ճշտելով կարող ես մարդին տալ մի այնպիսի ձև և կաղապար, որը նրան պատշաճում է, որի շնորհիվ նա կարող է իր բնածին ընդունակություններին տալ մի մեծ ծավալ և զարգացում։ Դաստիարակությունը ի՞նչ ոճիրներ է գործում, սխալ ուղղությունների առաջնորդելով մարդկային հեգ արարածները։ Պետք է սակայն վերջ տալ այդ ոճրագործություններին և գործնական ու հաստատ հողի վրա դնել դաստիարակությունը։

Մինչև այժմ ոչ ոքի մտքից չի անց կացել մի այսպիսի տեխնիկական սիստեմ հաշտեցնել մանկավարժության պայմանների հետ և ձեռք բերել հրաշալի արդյունքներ... հենց այժմ, էստեղ իսկ ուզում եմ, սիրելի հայրենակիցներ, մի փորձով ձեր մտքին մատչելի ընծայել ինչ որ տեսականորեն բացատրեցի ձեզ։

Եվ ճառախոսը դառնալով ամբիոնը շրջապատող երիտասարդներին մեկուն.

— Խնդրեմ, պարոն,— ըսավ,— մի տասնամյա մանուկ բերեք ինձ։

Երիտասարդը ոտքի ելավ և մոտերը, ընտանիքի մը քով կեցող տղեկի մը թևեն բռնելով տարավ ամբիոնը հանեց։ Սրահին հետաքրքրությունը ծայրագույն աստիճանի էր հասած։ Խոշոր-խոշոր բացված աչքերներ անքիթիթ անհագությամբ մը ամբիոնին սևեռված էին, ճիտերը ձգված, շունչերը ընդհատ։ Գերմարդկային բանի մը կսպասվեր, հրաշքի մը։ Ոչինչ քան ճառախոսին հանդարտ, ինքնավստահ և հեղինակավոր շարժվածքը, իր հրաշալի գործողը ամբողջովին գրավվածի, հափշտակվածի երևույթը, աշխարհի անծանոթ լուսավոր անկյուններեն եկողի իր հանգամանքը՝ միանալով խոսվածքին տարօրինակությանը, նայվածքին վայրի ու ցնցող արտահայտությանը և կերպարանքին անսովորությանը, կրնար ընկրճել, ջախջախել հոտ ամբարված տգետ հասարակությունը։

Հիմա, միշտ հանդարտ և միշտ խորհրդավոր, ճառախոսը գրպանեն տուփ մը կհաներ, կբանար զայն, փայլուն կարկին մը և փոքր մետրաչափ գործիք մը կառներ մեջեն ու կդներ ամբիոնին վրա։ Տղեկը, սարսափահար, այդ ահավոր մարդուն շարժումներուն կհետևեր։ Հետո պ. Կոստանյան բռնեց զայն ու գործիքներուն քովը կեցուց։

— Խնդրեմ, ուշադրություն,— ըսավ։

Երկու խոշոր ձեռքերովը պահ մը բռնեց տղուն գանգը, և աչքերը գոց, շոշափեց, պրպտեց, զննեց։ Հանկարծ, թեթև ժպիտ մը լուսավորեց անոր դեմքը։ Բացավ աչքերը և տղուն նայեցավ ըզմայլանքով մը։

— Սա հրաշալի մի մանուկ է,— ըսավ բարձրաձայն,— խընդրեմ ուշադրություն։

Առավ կարկինը և թեթև մը անոր երկու ոտքերը կոթնցուց տղին քթին երկու կողմերը, հոնքերու կամարին ներքև։ Հետո կարկինին այդ բացվածքը նշանակեց մետրաչափին վրա, փորձը կրկնեց ավելի ապահովության համար։

— Սա մի մանուկ է,— ըսավ վերջապես պահ մը դիտելե հետո անոր ճակատը, որի մեջ ամենամեծ չափով, այսպես ասած, ամենահզոր չափով գտնվում է պրոզոպոկնոզը, որի շնորհիվ նա դառնալու է մի մեծ պատմաբան, այո՛, ես ասում եմ թե սա պետք է դառնա մի սքանչելի պատմաբան, հենց որ նրան տրվի հարկավոր դաստիարակություն՝ իր այդ բնածին կարողությունը զարգացնելու։ Արդ, հեշտ է ձեզ հասկանալ, թե յուրաքանչյուր մանկան մեջ գտնելով այն բնական ձիրքը, որով նա օժտվել է, և հարկավոր ուշադրությունը տալով նրան, նա կարող է լինել մի ինչ-որ երևելի մարդ...

Այս պետք է լինի ահա իմ դաստիարակչական մեթոդը, որի շնորհիվ, վստահացնում եմ ձեզ, սիրելի հայրենակիցներ, որ մի ինչ-որ կարճ ժամանակում երևելի մարդկանց մի սերունդ պատրաստվելու է աստ, զարմանք պատճառելով Պեստալոցցիներին և իր նմաններին...։

Ամբիոնին բոլորտիքեն, երիտասարդներու սպայակույտը հանկարծ մեծաշառաչ ծափահարություն մը սկսավ, որ իսկույն ամբողջ սրահին մեջ տարածվեցավ... «Կեցցե՛ պ. Կոստանյան, կեցցե՛» կրկնոային։ Ասիկա ամբոխը բռնկցնող կայծը եղավ։ Բովանդակ սրահը հիմա ոտքի ելած, էրիկ, մարդ, կին, աղջիկ, տղա, պառավ, գլխու, թևերու ճղակտոր շարժումներու մեջ «Կեցցե՛ պ. Կոստանյան, կեցցե՛» կպոռային որոտագին գանչյուններով, որոնց կպատասխաներ խաչագողը վերեն, ամբիոնին կատարեն, գլխու շնորհալի տատանումներով, ժպտաշուրթն և մեծաշուք։

Երբոր քիչ մը հանդարտությունը տիրեց, մարդը նշանացի լռություն պատվիրելով, սկսավ ըսել.

— Սիրելի հայրենակիցնե՛ր, մի բան խնդրում եմ ձեզանից...

— Կեցցե՛ պ. Կոստանյան,— պոռաց ամբոխը նորեն, անոր ձայնը խափանելով։

— Մի բան,— շարունակեց ան,— որին վստահ եմ թե շնորհելու եք ինձ. ձեր աջակցությունը...

Եվ դղրդագին ծափերու և կեցցեներու մեջ պ. Կոստանյան վար իջավ բեմեն, խառնվելու համար ամբոխին։ Երիտասարդները շրջապատեցին զինքը խանդավառ ցույցերով, գրեթե գրկելով զայն, համբուրելով իր ձեռքերը։

Իր շուրջը եռացող միամիտ, անկեղծ, հորձանուտ խանդավառության մեջտեղ, խաբեբան իր ծանրակաց, լուրջ և տիրական կեցվածքեն բնավ չէր հեռանար, համակրության և գրեթե պաշտանքի այդ ցույցերուն լիովին արժանավոր մեկը ըլլալը ապացուցանելու համար. մինակ՝ մեծ մարդերու հատուկ ներողամիտ, վարձահատույց ժպիտով մը գոհունակությունը կհայտներ, ատեն-ատեն քաջալերող գնահատությամբ մը։

— Խո՛, ի՛նչ սիրուն տղամարդկանց եմ հանդիպել։

Ժողովուրդը, պատահարին ջախջախիչ տպավորությանը տակ,

կամաց-կամաց ցրվեցավ ռամիկ գնահատումներու, հափշտակված դրվատիքներու փունջ մը հյուսելով անծանոթին հասցեին, որ իրենց զավակներուն համար փրկության առաքյալ մը պիտի ըլլար։

Կոստանյան, շրջապատված իր սպայակույտեն, դանդաղ թափորով անցավ Հ... գյուղի փողոցներեն։

Բազմաթիվ ստամբակներ, ստվար ջուլիր մը կազմած, անոր ետևեն կերթային, ինչպես կերթային գնչու արշապաններու ետևեն, երբոր անոնք արջ և կապիկ բերեին խաղցնել գյուղին մեջ՝ իրենց դեֆին խուլ թափրտուքովը։

Ք...յաններուն տան մեջ շքեղ սեղան մը տրվեցավ ի պատիվ մանկավարժին։ Բաժակաճառեր արտասանվեցան, Կոստանյան վարժարանին ապագան կապույտ, ծիրանի, վարդագույն երանգնեռու տակ նկարվեցավ։ Երիտասարդին մեկը, գլուխը գինիեն տաքցած, հանպատրաստից ճառ մը ըսավ, անկապ խոսքերու օձապտույտ դարձվածներով բացատրելով հետաղիմական տխուր վիճակը, որուն մատնված էր հայ ազգը, և որուն իբր միակ դարմանը ցույց տալով նախախնամական երևումը պ. Կոստանյանին և իր հազվագյուտ նմաններուն։ Ճառը երբոր վերջացավ՝ երկսեռ կոչնականները մոլեգնորեն պատառաքաղները պնակներուն սկսան զարնել «Կեցցե՛ պ. Կոստանյան» պոռչտալով։

— Խո՛, ի՞նչ սիրուն տղամարդկանց եմ հանդիպել,— կըսեր խաչագողը տանտիրուհիին, որ իր քովը նստած էր։

Հետևյալ օրը, գյուղին է՛ն բարեկեցիկ ընտանիքները իրենց զավակները բերին հանձնել մանկավարժին, որ իր աշխատության խուցին մեջ փակված, ծանրաշուք և ինքնամփոփ, մեկիկ-մեկիկ ներս կառներ զանոնք, մայրը կամ հայրը նստեցնելով աթոռի մը վրա, և տղան ենթարկելով Գալ-Կոստանյան սիստեմին փորձերուն։ Կարկինը և մետրաչափը կպտտեին գանգերուն վրա, որոնց այտուցները, ելևէջներն ու խորդուբորդությունները մանրազնին կքննվեին և կարձանագրվեին։ Միևնույն ժամանակ, մանկավարժը հարցաքննության մը կենթարկեր մայրը կամ հայրը, տղուն ունակություններուն և վարվելակերպին վրա տեղեկություններ առնելով, զորս նույնպես կարձանագրեր։ Այս բոլոր գործողությունները տեղի կունենային լուռ և խորհրդավոր լրջությամբ մը ընկերացած, ինչպես պիտի ըլլար վտանգավոր հիվանդի մը սնարին մոտ, բժշկական քննության մը պահուն։ Ծնողքներուն դեմքին վրա կնշմարվեր խորին անձկություն մը, անհամբերությունը ժամ առաջ գիտնալ ուզելու, թե իրենց զավակը ինչ պիտի ըլլար ապագային։ Հանցավոր մը ավելի սրտատրոփ կերպով չպիտի սպասեր իրեն դեմ արձակվելիք վճռին։

Վերջապես, մանկավարժը արձանագրված տեղեկություններուն վրա ուշադիր ակնարկ մը ետքը կբռներ տղուն ձեռքեն և ժպտաշուրթն կմոտենար հորը կամ մորը և վճիռը կարձակեր։

— Տիկին, ձեր զավակը լինելու է պատկերհան։ Ես տալու եմ մի դաստիարակություն, որը նրան առաջնորդելու է դեպի նկարչության բարձր արվեստը։

Ինչպե՞ս նկարագրել ուրախությունը մոր մը կամ հոր մը, որոնց կծանուցվի թե իրենց զավակը պատկերհան մը, ճարտարապետ մը, փաստաբան մը, բժիշկ մը և այլն պիտի ըլլա։

Առաջին օրվան իրիկունը, տուներու մեջ արտասովոր իրարանցում մը կտիրեր։ Իրարու կայցելեին, իրարու ավետելու համար թե իրենց զավակն ինչ պիտի ըլլար ապագային։ Տղաքները ուրախություններեն կցատկոտեին, կպռչտային, կխրոխտային, պահանջկոտ, գրեթե անտանելի կդառնային։

— Ես փաստաբան պիտի ըլլամ,— կպարծենար մանչուկ մը պերևեդիկ քալվածքով։

— Ես ալ տոքթոր պիտի ըլլամ,— կպոռար ուրիշ մը իր ընկերոջը վրա գերազանցություն մը ունենալու հավակնությամբ։

— Փաստաբանը, տոքթորը քանի՛ փարա կընե,— կաղաղակեր երրորդ մը անդիեն,— ես փիլիսոփա պիտի ըլլամ։

Մայրեր կային, որ այս տղայական ծիծաղելի հոխորտանքներուն հանդեպ իրենց զգացած ուրախությենեն աչվընին կլեցվեր։ Հիմակվընե իրենց մտքին մեջ ծրագիրներ կպատրաստեին՝ ապագա տոքթորին կամ փաստաբանին փարթամ, արժանավայել շրջանակ մը, կյանք մը ստեղծելու համար։

Ուրիշ տղաքներ, որոնց ճակատագիրը չէր վճռված դեռ, տեսակ մը պատկառանքով և նախանձով կնայեին այդ տասերկու-տասերեք տարեկան տոքթորներուն և նկարիչներուն, և վերջապես, լալով պոռալով ծնողքներուն վրա կվազեին՝ պահանջելով, որ իրենք ալ ատ դպրոցը ղրկվին։

Եվ հաջորդ առտուն նոր թափորներ ճամփա ելան դեպի լուսավորության նորահաստատ տաճարը։

Մանկավարժին դրանը առջև մայրեր, իրենց սրտատրոփ, անհամբեր սպասումներուն մեջ, աղեկեզ հառաչներ կուներային՝ ակ-

նապիշ զննելով զավկընեռնուն գանգերը, շոշափելով զանոնք իրենց դողդոջ մատվընեռնուն տակ, գտնելու համար այն հրաշալի այտուցը, որ անոնց ապագայի խորհրդանշանը պիտի հանդիսանար, և որուն գաղտնիքը այնքան դյուրավ կլուծեր հիմա մանկավարժը։

— Ա՜խ, իմ զավակս ի՞նչ պիտի ըլլա աճապա...

Եվ կուզեին իրարմե առաջ մտնել խորհուրդով ու հմայքով լեցուն այդ սենյակը, որուն դրան անձկալի բացվածքին մեջեն՝ ամեն անգամ որ գործողություն մը ավարտեր, ճակատագիր մը վճռվեր, մայր մը զավկին հետ դուրս ելլեր ճառագայթաշող դեմքով, խորհրդապահ լրջությամբ մը կընդնշմարվեր խաչագողին հերարձակ, դժգույն գլուխը, ըսելու համար իր միշտ ուռուցիկ շեշտովը.

— Ո՞ւմն է հերթը։

Եվ ահա ամենքը մեկեն առաջ կանցնեին տենդոտ աճապարանքով մը, ինչպես սովյալներ՝ բարեգործական գրասենյակի մը դրան առջև։ Երբեմն, մարդը կստիպեր սանձ մը դնել այդ ողբալի անհամբերություններուն։

— Խնդրեմ, մի՛ շտապեք, խանգարում եք ինձ։ Համմեցե՛ք, տիկին։

Կանչվողը իսկույն ներս կանցներ հաղթական հրճվանքով մը։

Շաբաթ մը չտևած, ազգային վարժարանին մեծ սրահը, որ երկու հարյուր աշակերտ կխտանար, կեսվակես պարպվեցավ։ Իրարու նայելով, իրարու նախանձելով տղաքը մեկիկ-մեկիկ կծիկը կընեին դեպի Կոստանյան կրթարանը, որ հետզհետե կհեծեր, կճռընչեր խանդավառ ուսանողության մը աճեցուն ծանրությանը տակ։ Վարժապետը, լռիկ կսկիծով մը, իր գրասեղաններուն վրա բացված լայն խրամատները կդիտեր, չգիտնալով ի՛նչ միջոց ընտրել այդ խելահեղ դասալքություններուն առաջքը առնելու համար։ Հոգաբարձուները և թաղականները ափիբերան մնացին։ Մինչև այն ատեն հակառակ կուսակցությունը տկար պայքար մը միայն կրցած էր մղել իրենց դեմ՝ մաքառելու համար կռվան մը չունենալով։ Բայց ամեն բան հանկարծ թավալգլոր եղած էր՝ երբոր աղմկալից խոսքերու, մեծատարած շարժումներու այդ կորիզը ասպարեզեն ներս վազած էր մեկենիմեկ։ Մեկ հարվածով՝ հակառակորդ կուսակցությունը հաղթության դրոշը կպարզեր, անխիղճ ու ջախջախիչ կերպով։ Ժամուն ու ազգ. դպրոցին շուրջ սառուցիկ հով մը կփչեր։ Ամեն մարդ խեթիվ կնայեր անոնց։ Գյուղը երկարամյա թմբիրե մը սթափած էր։ Վերածնության մը լույսին արդավանդ բաբախումներուն տակ կխլրտար, կխայտար։ Հրաշալի հորիզոններ կընդնշմարեր քալեիտոսքոփի մը մեջե, զոր ճարտար ձեռք մը իր աչքերուն առջև կխաղցուներ՝ անոր բյուրերանգ նկարներուն հանկուցանող պայծառությամբը։ Քանի մը սովորական բառեր, ազգային դաստիարակություն, վերածնություն, Պեստալոցցի, տոքթոր Դալ, բոս, սիստեմ, հայություն, ափսո՜ս, լիրբ ու խիզախ ուժգնությամբ մը արձակվելով, բավական եղած էին աննենգ, միամիտ, ազնիվ հոգիներու ամբողջ լեգեոն մը պատրանքի ծուղակը նետելու։ Ամիս մը չանցած, բովանդակ թաղը սոփեստության տագնապի մը մեջ կհևար։

Արդեն իսկ, նորահաստատ վարժարանին համբավը Հ... գյուղի սահմաններեն դուրս ելած էր։ Արևմուտք լրագրին մեկ խմբագիրը, թաղին երիտասարդության հրավերովը, վարժարանը այցելեց ու երկար բարակ տեսնվեցավ մանկավարժին հետ, որ իր «տեխնիկական սիստեմ»-ին մանրամասնությունները հաղորդեց անոր։ Հետևյալ օրը ընդարձակ հոդված մը երևցավ թերթին մեջ, որ կենսագրական համառոտ ծանոթություններե հետո մանկավարժի մասին, կծանրանար դաստիարակչական այդ նորահնար դրության և անկե առաջ գալիք արդյունալից բարիքներուն վրա։ Թաղին մեջ, Արևմուտքի այդ թիվը ձեռքե ձեռք խլվեցավ, սրճարաններու, գինետուններու մեջ բարձրաձայն կարդացվեցավ սքանչացման բացականչություններով ընդհատված։ Կիրակի օրերը, Պոլսո հեռավոր թաղերեն ուսուցիչներ եկան հայ դաստիարակության այս առաքյալը և անոր գործը տեսնելու։ Անոնց ամենուն ալ Կոստանյան ճամփեց իր սիստեմին գիտական, կենդանաբանական կնճիռները, շրփոթեցնելով, զարմացնելով զանոնք։

— Պե՜ ախպար, խրյախ մարդ է պե,— կըսեին իրարու...— Անանկ է յա, մարդ մը բան մը ըլլալու համար կծնի. գործը այդ բանը հասկնալուն և տղան անոր համեմատ մեծցնելուն, կրթելուն վրա է...

Միամիտ ծեր վարժապետ մըն ալ իր ճաղատ գանգը շոշափելով.

— Թոհա՜ֆ,— կըսեր,— ծո, ըսելե քի աս գունտերը ժամանակին նայվեին նե, ես հիմա ով գիտե ի՞նչ մեծ մեկը եղած կըլլայի... պռավո՛, կեցցե՛ս մարդ, ա՜շդ օլսուն։

Սիստեմը այնքան ժողովրդականացավ, որ գյուղին բոկոտն գավրոշները սկսան փողոցներուն մեջ իրարու գանգի վրա զննու-

թյուններ կատարել՝ գոհհիկ ու պատկերալից կատակաբանություն-ներով, իրենցմե այսինչը փիլիսոփա, այնինչը ավուքաթ, երրորդ ներով, իրենց մեջ մը կաթողիկոս անվանելով։ Իրենց շարաճիր-մը տոքթոր, չորրորդ մը կաթողիկոս անվանելով։ Իրենց շարաճիր-ճիութիւնները մասնավոր թափ մը կստանային, երբ փողոցը հան-գիպեին մանկավարժին։ Իսկույն հեռուե հեռու ղիրար ելկանչեին, հեգնալից շեշտերով.

— Ով՛, Պե՛տիկ, փիլիսոփա՞ պիտի ըլլաս...— Ա՛ռ քեզի փի-լիսոփայություն, ըսելով, քար մը կթռցներ գավրոշին մեկը «փի-լիսոփա»-յին, որ իր կարգին.

— Ով՛, նա՛ քեզի պես տոքթորին, սա նավզըս նայե,—կպո-ռար։

Շատ անգամ, մանկավարժին հավատարիմները, որ միասին անոր հետ կպտտեին փողոցը, ստամբակներուն ծաղրանքը կուահե-լով, կհանդիմանեին զանոնք. «Ամոթ է ծո՛, չե՞ք խպնիր» պոռա-լով։ Այս պատճառով, կռիվներ, բախումներ անգամ տեղի կունե-նային Կոստանյան սաներուն և փողոցի սահակներուն միջև։

Սակայն, խաչագողը, իր անձին և իր անվան շուրջը բարձրա-ցած հիացումի և փառաբանության այս ճղակտոր աղաղակներուն մեջտեղ, համեստ ու անզգաց հանդարտություն մը կպահեր, իբր թե բոլորովին համակված իր գործին բարձր դաստիարակությամբը։ Իր համբավավոր ու ջախջախիչ ճառեն հետո, այլևս հրապարակա-յին ոևէ ցուցադրանքի չենթարկեց ինքզինքը։ Իր դպրոցին խորհրդ-ավորությանը մեջ պատնեշված, ինքնամփոփ ու արգավանդ գոր-ծունեության մը անձնատուր եղավ։ Մեկ քանի մտերիմներ, գեղին ջոջ տղաներեն, որոնք կազմած էին «Կոստանյան վարժարանի խնամակալությունը»,— խաբուսիկ և սնամեջ տիտղոս, զոր անոնք ունայնամտորեն ինքզինքնուն տալու փոքրուգի փորձության չէին կրցած դիմադրել,— հազիվ կհաջողեին աղաս մուտք ունենալ իր մոտ, վայելել իր բարեկամությունը, և իբրև վարձ իրենց մուրա-ցիկ, գետնամած խնկարկություններուն, լսել գոհունակության սո-վորական բանաձևը.

— Խո՛, ի՞նչ սիրուն տղամարդկանց եմ հանդիպել։

Հարյուր հիսունեն ավելի տղաք կխռնվեին հիմա դպրոցին մեջ։ Յուրաքանչյուրը՝ տնօրենին ստորագրությունը կբռնող թուղթ մը ունի ձեռքը, որուն մեջ նշանակված էին տղուն անունը, տարիքը և գի-տության կամ արվեստի այն ճյուղը, որուն նախասահմանված էր հետևելու։ Թուղթի այդ բեկորը, որ զառանցանքներու կամաներ հեք ծնողքները, մեկ ոսկի արժած էր ամեն մեկուն, բացի ամսա-կան կես ոսկիեն, զոր յուրաքանչյուր աշակերտ պարտավոր էր վը-ճարել։ Այսպես ուրեմն, խաչագողը, առաջին հարվածով, երեք հա-րյուր ոսկի կլորիկ գումար մը շորթած էր այդ թաղեն, որ Պոլսո ամենեն աղքատ թաղերեն մեկն էր։ Բայց ընդհանուր խառնակու-թյան և հափշտակության մեջտեղ, ոչ մեկը կարող էր ասանկ ճըղ-ճիմ հաշիվներու իջնալ։

Մանավանդ որ, մանկավարժը, առթիվ մը, իր մտերիմներուն հայտարարած էր բացորոշ կերպով.

— Ախր, ես փողի մարդ չեմ. ես ատում եմ փողը, իմ նպա-տակս է վաստակած փողերս հատկացնել մի ինչ-որ բարեգործա-կան հաստատության։

«Արևմուտք» լրագրին մեջ երևցավ մանկավարժին մեկ ծանու-ցումը, որով մասնագետ ուսուցիչներու կոչում կըներ գալ իր շուր-ջը ամփոփվիլ, վարելու համար այդ չնաշխարհիկ գործը։ Մասնա-գիտական ճյուղերու երկար թվում մը կար՝ մաթեմաթիք, քիմիա-բանություն, բնագիտություն, նկարչություն, լեզվագիտություն, իրավաբանություն, բժշկություն, պատմագիտություն, այլովքն հանդերձ։ Այս հրավերին վրա իրեն ներկայացող մեկ քանի շնորհ-քով մասնագետներ իսկույն ճամփվեցան, վասնզի խաչագողը այդ մարդոց թափանցող նայվածքին և դեմքի ուղղամիտ արտահայ-տությանը մեջ իր խաբեության քողամերկումին վտանգը նշմարեց։ Ու աստանդիկ, խեղճուկ քանի մը թափթփուքներ, որոնք ներկայա-նալու հանդգնությունը ունեցած էին, սիրահոժար ընդունվեցան՝ իբրև նպատակահարմար մասնագետներ, ամսական 2—3 ոսկի վարձքով։ Երբոր ուսուցչական մարմինը կազմվեցավ այսպես, Կոստանյան իր աշակերտները յոթը դասարաններու մեջ տեղավո-րեց ընդունակության և կոչումի համեմատ, ու դասերը սկսան։

***

Որքան ալ Բարթող աղա, իր նենգամիտ բնազդներուն ուժովը, հեռվանց այս մարդուն մեջ խաչագողի մը հոտը առած ըլլար, չէր կրնար ինքզինքը պաշտպանել հարգանքի և երկյուղի տեսակ մը զգացման դեմ, որ հիմա իր վրա կտիրեր հոն դասարանին մեջ, ուր տնտես մը մտցուցած էր զինքը, իր այցելությունը տնօրենին երթալ իմաց տալու համար։ Վայրկենապես, ներկայացող ուրթին հմայքին տակ, ինքն ալ կենթարկվեր ընդհանուրին մոլությանը, իր զավակին

ինչ ըլլալը հասկնալ ուզելու մոլութեան։ Իր մեջ, որդեսեր ծնողքը կարթնար ոժգնորեն, անհետացնելով՝ ուրիշի մը խարդավանքները գուշակելու կարող նենգավորը։

— Ամա,— կառարկեր ինքնիրենը, մտատանջ,— կեցիր նայինք աղջկան նաթուռայե կհասկնա՞... պե անգամ մը կհարցնեմ, մեռնել չէ՛ յա...

Այս վարանումներուն մեջ կտատաներ մեր մարդուկը, երբոր տնտեսը եկավ զինքը առաջնորդելու տնօրենին խուցը։ Բարթող աղա, աղայի սիրտը կբաբախեր։ Փեշերը իրարու վրա բերելով ներս մտավ։ Խուցը լուսավորված էր ձեղունեն կախված լամպարով մը, որուն ճերմակ ճենապակյա լուսամփոփը բուռն լույս մը վար կթափեր։ Դրան ճիշտ դեմը, ընկուզենիե լայն գրասեղանի մը առջև, թավշապատ բազկաթոռի մը վրա կգահակալեր մանկավարժը, գրելու զբաղած։

— Ի՞նչ եք ուզում, ո՞վ եք,— հարցուց մարդուկին դառնալով, առանց գրիչը վար ձգելու։

— Պատվելի,— կակազեց Բարթող աղա,— հանըմը ըսավ որ իրեն երթաք, տղան դպրոց պիտի ղրկե...

— Հանը՞մը, ո՞վ է դա...

— Մարկոս ամիրային աղջիկը... չե՞ք իմացած։

Խաչագողը ամիրա բառը լսելուն պես գրիչը վար դրավ ու ոտքի ելավ։ Իր շիկերեի ոնգունքը պարարտ որսի մը հոտը առած էր։

— Չեմ ճանաչում. բայց խնդրեմ ասացեք տիկնոջ, որ կարող չեմ թողուլ վարժարանը զբաղմանցս պատճառով... ամեն րոպե կսպասեմ վաղը իր այցելությանը. հարգանքներս հաղորդեցեք իրան...

— Գլխուս վրա, պատվելի։

Իր պաշտոնը ավարտած մարդուկը պարտավոր էր հեռանալ. բայց կեցավ, իր ահավոր աչքը անձկությամբ մը բացխփելով։

— Էլի մի բան ունե՞ք ասելու,— հարցուց Կոստանյան։

— Պատվելի, կներեք,— ըսավ Բարթող աղա,— ձեզի մեկ պզտիկ անկարյա մը պիտի տամ... երկու աղջիկ ունիմ, Կատարինես, Մագթաղինես...

— Մեր վարժարանում աղջիկ չի ընդունվում,— պատասխանեց մարդը, կարճ կապել ուզելով։

— Դպրոց գան չեմ ըսեր, պատվելի, մինակ սանկ մեյ մը նայեիք, սա ընտոր մանչերուն կնայիք կոր նե... պետք եղածը կուտամ, պատվելի, ատ կողմեն հոգ մ՚ընեք...

Գետնամած պաղատանքի իր դիրքին մեջ, Բարթող աղա անդիմադրելի ծիծաղելիություն մը ուներ։ Հրեշին վրա՝ այդ կեցվածքը փոխանակ գութի, ծիծաղ միայն կրնար շարժել։ Խաչագողը, իր աճպարարական ձեռնարկին սկսելեն ի վեր, այդ սենյակին մեջ դեռ այդքան զավեշտախառն տեսարանի հանդիպած չէր։ Բայց և այնպես կրցավ զսպել իր զվարթության տագնապը, որ պայթիլ կսպառնար՝ ապուշ աղաչանքի, աննկարագրելի տգեղության այդ խեղկատակ համադրության առջև։ Մտերմորեն մոտեցավ հրեշին և կամաց մը անոր կռնակին զարնելով.

— Էլի մի բան կանենք մի հարմար պարագայի. ասացեք տիկնոջ որ պատրաստ եմ զինքը ընդունել...

Բարթող աղա, իր ակնկալությանը մեջ սաստիկ հուսախաբ, աղջիկներուն նկատմամբ եղած այդ զրկանքեն վշտացած, վհատության շարժումով մը բացավ դուռը և դուրս ելավ։ Այդ միջոցին, մանկավարժը, ինքնաբերաբար, թերևս չուզելով որ մարդը բոլորովին հուսահատ մեկնի.

— Բարեկամ,— կանչեց։

Հրեշը ետին դարձավ։

— Աղջիկներդ շա՞տ փոքր են,— հարցուց, գրեթե բան մը հարցուցած ըլլալու համար։

Մարդուկը, զոր հույսի վերարծարծում մը հանկարծ տակնուվրա ըրավ, վախնալով որ տարիքի պզտիկությունը խոչընդոտ մը կըլլար իր փափագած քննությանը, վստահ և գոռոզ շեշտով մը ըսավ.

— Չէ՛, պատվելի, չէ՛, պզտիկ չե՛ն, հեմ շատ մենծ են։ Կատարինես երեսունըհինգը անցավ, Մագթաղինես ալ երսու...

Չկրցավ ավարտել։ Կոստանյան, ջղային արտասովոր, խելահեղ տագնապի մը մատնված, մեծաղղորդ քրքիջի մը մեջ ա՛լ պայթեցավ... իր ահագին կուրծքեն քահքահներու որոտումներ բրդան, ցնցելով իր ամբողջ մարմինը, միացած թևերու ջղաձիգ պրկումներու, գլխի հերարձակ թոթվրտուքներու։ Ատիկա ապերասան, անվերապահ, մոլեգին պոռթկումը եղավ վայելմանը կատակերգության բոլոր այն հոյակապ տեսարաններուն, որոնք երկու ամիսե ի վեր կհոլովվեին իր շուրջը, անկարող տկարացնելու իր անդրդվելի տոկունությունը, առանց վայրկյան մը իսկ վտանգի ենթար-

ելու իր տիրական լրջությունը, իր հաղորդիչ խոհականությունը։ Բայց ա՛լ գավաթը լեցված էր. ա՛լ անկարելի էր առկալ։ Կամքը իր ուժը կորսնցուց։ Սիծաղի հագեցման այդ տագնապը անխուսափելի եղավ՝ անհունապես լարված, ձգված իր ջիղերուն անդորրություն մը, բարերար թուլացում մը տալու համար վերջապես։

Ու խնդաց, խնդաց, խնդաց, շենքը թնդացնելով, մարելու, մեռնելու աստիճան խնդաց, մինչ Բարթող աղա՝ նախ ափիբերան, հենելու աստիճան խնդաց, մինչ սանտո անծանոթ երկյուղով մը պաշարված՝ ընկերկեցավ մինչև սանտո անծանոթ երկյուղով մը պաշարված՝ ընկերկեցավ մինչև սանտոն, ուսկից արագորեն սկսավ իջնալ՝ մանկավարժին որոտալուխը։

Բարթող աղայի բերնով, հաջորդ առտուն։ Մարդուկը մը ռայլամած դեմքով մըն էր, որ ներկայացավ հանրմին՝ հաղորդելու համար տնօրենին պատասխանը։

— Հանր՛մ,— ըսավ ի վերջո, ահռելի բիբը խաղցնելով,— ես քեզի խրատ տվող չեմ ամա, կուզես նե ատ մարդուն հետ կտոր մը թերթիպլի վարվե։

Հանրմը, որուն գոռոզ, ամբարտավան նկարագիրը երբեք ուրիշներուն խորհուրդը, պատվերը չէր հանդուրժեր, արհամարհանքով մը մարդուկին ծոմկած մարմինը չափչփեց։

— Բարթող աղա,— ըսավ կծու շեշտով մը,— ատանկ բաներու մի խառնվիր... դուն նայե, որ ժամ առաջ աղջիկներդ կարգես հասկցա՞ր։

— Կներեք, հանրմ,— կակազեց մարդը իր սրտին հատորիներուն նկատմամբ եղած այդ ակնարկութենեն խոր խոցված,— կներեք, բան մըն էր ըսի... ընտոր կուզեք անանկ վարվեցեք... բան մըն էր ըսի, աֆ կընեք... սխալեցա, ի՞նչ գիտնամ...

Եվ փողոցին դռնեն կորաքամակ դուրս ելած պահուն, փողոցին մեջ իսկ, իր այլայլումին սաստկությանը տակ, մանրավաճառը, կշարունակեր՝ ներում խնդրելու, իր ըրած սխալը շտկելու մարմաջին մեջ՝ համանման բառեր մռլտալ. «Աֆ կընեք. բան մըն էր ըսի... ինչո՛ւս պետք... խալթ կերանք...»

Ճետո, հեղակարծ ըմբոստացումով մը, կանգ առնելով.

— Աղեկ ամա, աղջիկներս, կյուզելիմ յավրունե՞րս ինչու աս գործին խառնեց... կարդեր եմ չեր կարգեր, իրեն ինչ, պե՛,— պոռաց բարկությամբ...— բեք աղեկ. անա՞նկ է մի.... աս ամիս քեզի հինգ ոսկիի խաղրիս մը խոթեմ տե կտեսնաս...

Վրեժխնդրության այս ծրագիրեն ներշնչած այս սփոփանքին տակ, Բարթող աղա գտավ ինքզինքը, ու վերադառնալով նորեն առջի գիշերվան տարօրինակ միջադեպին, որուն հաճախանքը բոպե մը չէր հեռացած իր երևակայութենեն.

— Ո՛ւ, աղեկ աղատեցա ատ փախուկին ծառքեն... յա՜ ճիտս պլլվեր նե... յա՜ խըղտեր նե ինծի... Կատարինես, Մագթաղինես, ի՞նչ պիտի ըլլային...

. . . . . .

Ճար չի կար. տիկին Մարկոսյան կամա ակամա իր զավակը պիտի անձամբ առաջնորդեր Կոստանյան վարժարանը, քանի որ տղան գիշեր ցերեկ լացուկոծի մեջ էր, հակառակ Ռոպենսոնի և ուրիշ պատմություններու, որոնցմով մայրը կուզեր զբաղեցնել տըղուն միտքը և մոռցնել տալ այդ անիծյալ վարժարանին խնդիրը։ Ասիկա անկարելի եղավ։ Կեսօրեն ետք՝ մտավ իր սև քողին տակ և տղուն հետ, որ ուրախութենեն մորը ճիտերը կպլլվեր, ելավ Կոստանյան վարժարանը գնաց։ Երկհարկ խոշոր շենք մըն էր, հարակից ընդարձակ պարտեզով, ուր աշակերտները ցորեկվան զբոսանքը կկատարեին։ Բոլորն ալ դպրոցական համազգեստ հագած էին, օձիքին մեկ կողմը սա ոսկետառ տրեզով. **Կոստանյան կրթարան**, և մյուս կողմը՝ անունը ուսման կամ գիտության այն ճյուղին, որուն պիտի հետևեր աշակերտը, օրինակի համար՝ լեզվագիտություն, մաթեմաթիք, նկարչություն, գրականություն, մանկավարժություն ևն.։ Այդ պաշտոնական տարազներուն մեջ կանխահաս գիտուններն ու գրագետները խրոխտանքով կպրկվեին, հիմակվընե իսկ ցույց տալով արհամարհոտ ու պերճաշուք ժեստեր, որոնք կվայլեին ազգին ապագա այդ պարծանքներուն։ Եվ մանավանդ աննկարագրելի էին անգոսնող նայվածքները, զորս կարձակեին, փոխադարձաբար, իրենց օձիքներուն ոսկեշող տրիզումներուն, յուրաքանչյուրը ա՛յն-

քան իրենին շքեղությանը, գերազանցությանը մասին խորունկ ու անհեղլի հավատք մը, պաշտում մը ուներ։

Երբոր տիկին Մարկոսյան իր զավկին հետ երևցավ պարտեզին վանդակորմին առջև, իրարանցում մը առաջ եկավ տղոց մեջ։

— Ամիրային աղջիկն է, տղաք, Արշակը դպրոց կբերե կոր։

Դեպք էր ասիկա, արդարև։ Մինչև այն տարիքը, մայրը իր եսասեր արհամարհանքի հեստությանը մեջ, չէր զիջած իր զավկին դաստիարակությունը օտար ձեռքերու վստահել։ Իր գորովանքի տենչերուն, ջղայնոտ կնոջ իր հիվանդագին տագնապներուն մեջ կորսված, ձևած, կաղապարած էր տղուն հոգին ու մարմինը իր իսկ նկարագրին վրա։ Ու երբոր, հիմա. ամբողջ գյուղը վարող քշող այդ հոսանքին ինքն ալ կհետևեր՝ իր հպարտության բարձունքեն վար ինկած, գլխիկոր համակերպությամբ անձամբ բերելով իր զավակը, աչքի զարնող դեպք մըն էր ասիկա նույնիսկ տղաքներուն համար։

Տնտեսը, մեծաբերձ գավառացի մը, մարտաշունչ երկար բեղերով, կապտավուն, երիզավոր տարազ մը հագած, իր օձիքին վրա ունենալով անխուսափելի ոսկետառ տրեզը, Կոստանյան կերբարան, մեծարանոք դիմավորեց տիկին Մարկոսյանը և զանիկա խսկույն առաջնորդեց տնօրենին սենյակը։

Խաչագողը արդեն նույն օրը լիուլի տեղեկություններ առած էր ամիրային աղջկանը մասին։ Իրեն հասկցուցած էին թե կատարյալ հաղթանակ մըն էր իրեն համար այդ զոհոզ, ամբարտավան կնոջ իր ոտքը գալը, զավակը իրեն հանձնելու համար։ Գյուղին մեջ, արգելքի, անհաջողության վերջին պատնեշները կփլչեին կիյնային ուրեմն իր առջև։ Ու զանիկա ընդունելու համար անանկ արարողություն մը ուներ։ Ու զանիկա ընդունելու համար անանկ արարողություն մը ուներ։ Կան ու մեծարալից ձևեր առավ, որ մինչև այն ատեն իրեն ներկայացած մայրերը նախանձով պիտի լեցվեին երբոր տեսնային այդ ընդունելությունը։ Սենյակին դուռը շտապեց՝ ժպտուն ու սիրալիր.

— Համմեցե՛ք, համմեցե՛ք, տիկին, անհամբեր ձեզ էի սպասում։

Տիկին Մարկոսյան, առանց իր քողածածկ լրջութենեն մատ մը շեղելու, թեթև խոնարհությամբ մը պատասխանեց այդ հարգալից շարժումներուն և գնաց նստավ թիկնաթոռի մը վրա, ուր հրամցուցած էր զինքը Կոստանյան։ Տղան, իր ապագա դաստիարակին հայեցողությամբը հափշտակված, մորը քով կկենար, լռիկ մնչիկ։

— Պարո՛ն,— ըսավ հանըմը վերջապես իր ճոզած ու նվաղուն ձայնովը, առանց քողը մեկդի առնելու,— զավակս կուզե՞ք ընդունիլ ձեր դպրոցը։

— Դա պատիվ եմ համարում ինձ,— պատասխանեց մարդը թեթև խոնարհությամբ մը։

— Խնդրեմ, պարոն, ձեր պայմանները ըսեիք։

Փոխանակ ուղղակի պատասխանելու, Կոստանյան մոտեցավ տղուն և նայվածքին մեջ զմայլանքի արտահայտությամբ մը, որ տիկինին աչքեն չվրիպեցավ, թեթև քննութենե մը անցուց զայն։

— Տիկին,— ըսավ ավարտելով,— մի սքանչելի զավակ ունեք... դեմքը ցույց է տալիս հույժ խելոք պատանի։ Հավաստում եմ ձեզ, տիկին, որ՝ իրան տրվելով նպատակահարմար դաստիարակություն, սա լինելու է մի շատ, մի վերին աստիճանի երևելի անձ...

Իր մոլեռանդ ու ջղայնոտ մայրության ամենեն զգայուն թելերուն վրա այսքան քաղցր, այսքան զգլխիչ կերպով փայփայված, տիկին Մարկոսյան մեկենիմեկ թողուց իր անհաղորդ կեցվածքը։ Աշխույժ շարժումով մը մեկդի առնելով սև քողը, որուն տակեն Կոստանյանին աչքին պարզվեցավ կանանչ, դաժան նայվածք մը կանխահաս պառվության ավերներով տգեղցած երկար դեմքի մը վրա, դողդոջուն ձայնով մը ըսավ.

— Օ՜հ, շնորհակալ եմ, պարոն, ո՜րքան կուրախացնեք զիս։ Շնորհակալ եմ...

— Ոչի՜նչ, տիկին, ճշմարտությունն հայտնում եմ։ Իմ ասածը փաստով կարող եմ հաստատել։

Ու Կոստանյան բռնեց տղան ու տարավ իր զրասեղանին մոտ։ Ու երկյուղած լռության մեջտեղ է որ խաչագողին մատները, կարկինն ու մետրաչափ գործիքն իրենց պայմանադրական դերը խաղացին տղուն գանգին վրա, Գալ—Կոստանյան սիստեմին բոլոր մանրամասն արարողություններովը։ Մասնավոր տետրակի մը մեջ հարկավոր ծանոթագրությունները նշանակելե հետո, մանկավարժը, գուշակի մը լուրջ և հանդիսավոր ձայնովը, պատգամեց.

— Տիկին, ձեր զավակը կոչված է լինել մի մեծ գիտնական, որը պետք է պարծանքը լինի մեր ազգին։

Մայրը, այս բերկրարութ ավետումեն իր զգացած ուրախությունը խոսքով արտահայտելու անկարող, աչքերը արտասվալից, թեվերը բացավ իր զավկին.

— Արշա՜կս, հոգի՜ս։

Տղան մորը գիրկը սլացավ։ Ու պահ մը անոնք գիրկընդխառն մնացին, մինչ Կոստանյան, հեռվեն, կվայելեր մարդկային շոշորթության այդ անբացատրելիորեն խեղկատակ տեսարանը, աչքերը մոլեգին գոհունակության և ծաղրանքի նշույլներով ցոլարձակ։ Երբոր զավակը մորը գիրկեն բաժնվեցավ, Կոստանյան նորեն իր դիրքը փոխած, երկյուղած ու հարգալից եղած էր։

Տիկին Մարկոսյան, հրճվանքեն, առաջին վեցամսյան կանխիկ վճարեց, հակառակ մանկավարժին մերժումներուն։ Ու բերնին մեջ շնորհակալության բառերով էր, որ զավակը հանձնելով այդ մարդուն՝ դուրս ելավ, սև քողքին տակ պարտկելով իր այլայլած դեմքը։

— Զավակս մեծ գիտնական մը պիտի ըլլա... ազգին պարծանքը... մեծ հարստության տեր։ Աստվա՜ծ իմ, իրա՞վ է արդյոք,— կմրմնջեր խեղճ կինը ճամփան։

Տուն հասնելուն, շիտակ իր սուգի սենյակը ելավ և քողը երեսին, ծնրադրելով էրկանը կենդանագրին առջև, աղոթեց երկարորեն, լուռումունջ, ինչպես երբեք չէր աղոթած։

Իր սուգի, թախծության, հյուծումի ուխտված կյանքին վրա հանկարծ նոր վարագույր մը կբացվեր, տեսարանին խորեն արշալույսի մը կանխազեկույց ճառագայթները շողացնելով։ Փառքի, մեծության, ցույցի իր բնածին տրամադրությունները, որոնք դժբախտությանց հաջորդական հարվածին տակ սքլած նվազած էին, մեկենիմեկ կհառնեին, կհորձանային, իր գունատ թույլ այտերը շառագունելով, աչքերուն կանանչ բիբերը կենդանացնելով։ Երազ մըն էր որ կարթնար։ Հոգեկան վայելումներու անիրավ զրկանքին, ճզմված կոտրած հպարտության մը փոխվրեժին բոցերը ահավոր հրդեհ մը կբռնկցունեին հիմա այդ վտիտ, հալումաշ, կմախքաձև մարմնին մեջ։

— Տղաս մեծ գիտնակա՜ն մը... ազգին պարծա՜նքը... մեծ հարստության տե՜ր,— կմրմնջեր իր թիկնաթոռին մեջ ընկղմած։

Ու այս քանի մը հսկա բառերուն ետին թաքնված փառասիրության, արհամարհանքի, ամբարհավաճ կենցաղի մը արբեցուցիչ հեռապատկերը կդառնար իր աչքերուն առջև, վանելով իր տրամալի մտածումներու հաճախանքը, դժոխային ուրվականը իր հին սուգերուն, իր հին կսկիծներուն։ Տղան պիտի մեծնար, տարանդ մը, հանճար մը պիտի ըլլար, համաստիւռ զմայլանքի, նախանձի, մեծարանքի առարկա, ամիրայական քանդված օջախը իր մոխիրներուն մեջեն հանկարծ պիտի վերականգներ մեծաղորդ

հառնումով, ակնախտիղ փայլով։ Ու ինք, այդ հանճարին ստեղծիչը, պիտի գահակալեր վերածնված փառքի այդ շքեղություններուն երկրպագու, գետնամած սքանչացումի այդ ժեստերուն մեջտեղ։ Ցնո՞րք էր, երա՞զ, թե իրականություն։ Իր հափշտակությանը, իր վերացումին մեջ, դեմը պարզվող բազմերանգ գյուղանկարին վրա իր պղտոր նայվածքը գերբնական, անճառելի բանի մը հանդիսատես կըլլար. ան կկարծեր տեսնել անտառներեն, դաշտերեն, բլուրներեն, գետակեն, շենքերեն մարդկային կերպարանքներու, ֆանտաստիկ, ուրվային ձևերու ժայթքումը խուռնամբոխ երամներով, իրարու զարնվելով, ձուլվելով, անջատվելով շարունակ, մըրրկահույզ օվկիանի մը վիշապաձև ոստումներովը։

Ահավոր, վախճանական խոնհապ մըն էր. մերկ, ողորկ գանգեր՝ արևին տակ շողշողուն, տարապայման գլուխներ՝ անտառուտ ցիր վարսերու ներքև անհետացած, օրհասական ոռնումներով բացված փրփրոտ երախներ, հոլանի բազուկներ, լուսնոտ շարժվածքներու մեջ պրկված, մահվան արհավիրքներով գազանացած աչվրներ, վազող, փախչող, հևացող մարմիններ իրարու կպլլվեին, իրարմե խույս կուտային, գիրար կհալածեին՝ կարծես դառնալով, հոլովվելով, պտտվելով ահեղ ուրվականի մը աշխարհավեր մտրակումին տակ։ Եվ ահա հանկարծ վերեն մարդկեղեն էակ մը կսկսեր համբաբար իջնալ, իջնալ, իջնալ մինչև տանջվող, մահամերձ ամբոխին մոտ։ Ու, հրաշքով մը ուրականին ալիքները խաղաղեցան, խուճապը դադրեցավ, լայնաբաց կլափները գոցվեցան, գալարվող բազուկները վար իջան, բարերար, ընդհանուր սթափում մը այդ օրհասական ամբոխին հաճախանքը վանեց. ու հիմա, ակնարկները անդորր և անուշ, պաղատանքի, փառաբանության սևեռանքով, ուղղվեցան դեպի վեր, դեպի այդ անակնկալ երևույթը, որ ժպտուն, լույս դեմքով կիջնար շարունակ, հետզհետե մեծնալով, հետզհետե դյութելով, մագնիսելով երկնապող գլուխներու այդ անտառը։

Ու տիկին Մարկոսյան, երազացնոր, այս տեսիլքին աստիճանական հոլովմանը միջոցին ինքն ալ անզգայաբար, իր դեմքին վրա արտահայտած էր բոլոր սոսկումները, պրկումները, արհավիրքը այդ ամբոխին, ինքզինքը գրեթե կորսնցուցած, իբնոսացած, տարվելով իր երևակայության հրայրքին ստեղծած այդ ահռելի ցնորքեն. ու ինքն ալ, գալարատանջ բազմության հետ, կրած էր բարբար ազդեցությունը փողփողենեջ էակին, հափշտակված, արձանացած, խելակորույս։

Եվ հանկարծ, տեղեն ցատկելով, բազուկները կարկառուն, սեվեռաբիբ, դժգույն, շնչասպառ, ճիչ մը արձակեց.

— Զավա՜կս, զավա՜կս։

Սակայն, տեսիլքը անհետ եղած էր մութի մը պես. բնությունը վերստացած էր իր անդորրությունը. հեռուն՝ ամպածրար նոճները դիրքեր էին իրենց սգավոր խաղաղության մեջ կկանգնեին միշտ՝ պահ մը կարծես իրենց աղիքներեն դուրս ժայթքելով անհատնում սեր։ Բլուրները, որոնք հավերժական քուներնին կքնանան հոն։ Բլուրները, կանանչ հանդերձանքներուն տակ, կալիքանային զվարթ ու ծիծաղկոտ, գետակը՝ արծաթավառ բեհեզ՝ իր անվախճան վետվետումի մեջ կպսպղար, ու շենքերը, ամեն կողմն, իրենց մութ իրանները կցցեին, լուռ և անկենդան։ Եվ մայրը, պատուհանին առջև, իզուր փնտրելով, սրտատրոփ, ակնապիշ, մեծահրաշք տեսիլքը, որ իր զավկին փառավորումը, աստվածացումը պատկերացուցած էր։

Ուշաբերումը չուշացավ. հանդարտած, ուժաթափ, ինկավ իր թիկնաթոռին մեջ, այդ գերբնական ահավոր երևույթին տալով խորհրդանշանական իմաստ մը՝ զավկին ապագա փառքերուն նախագուշակ։

Իրիկվան, դպրոցեն արձակվելուն, Արշակ իր մայրը գտավ թիկնաթոռին մեջ իր խոհանքներուն անձնատուր, ցավի ու խնդումի հուզումներուն մատնված, փոխնիփոխ։ Ջղաձիգ, գորովոտ բազուկները նորեն բացվեցան, տղան նորեն անոնց մեջ նետվեցավ, կատվի մը մսկոտ քծինքներովը, այդ օրվան դպրոցական կյանքին մանրամասն համարատվությունն ընելով իր մորը, որ հափշտակված, ջերմեռանդ ուշադրությամբ մտիկ ըրավ։

— Մամա, օ՜ֆ, տեսնա՜ս ի՜նչ մյուսյու մըն է, տեսնա՜ս, տեսնա՜ս...

Քանի մը օրեն, Արշակ ունեցավ իր դպրոցական համազգեստը։ Մաման օձիքներուն տրիզումը ոսկի թելով բանել տվավ։ Հրճվանքի, երջանկության մեծության մեջ, իր սովորություններուն փոքր զարտուղում մը տվավ։ Արշակին միջոցավ ճաշի հրավեր մը ղրկեց պ. Կոստանյանին, որ փութաց ընդունիլ։ Շքեղ, առատ սեղան մը պատրաստվեցավ, ոոոգված այն երեսնամյա մշկաբույր գինիովը, որուն կարոտովը կհալեր կմաշեր հեք Թադեոս աղա Մերկերյանը։ Մանկավարժը Կախեթի գինին բարձր գտավ այդ ամիրայական գինին, որմե գավաթներ կուլ տվավ, տղուն ու մամային

կենացը ըմպելով փոխնիփոխ, չի մոռնալով անոնց ուշադրությունը դարձնել այն շլմորեցուցիչ սիստեմին վրա, որուն շնորհիվ «մի ինչ-որ երևելի գիտնական» պիտի ըլլար Արշակ։

Ճաշեն հետո, հանդիսական սրահին մեջ, որ ստեղնավոր ջահով մը կլուսավորվեր, խաչագողը իր Եվրոպայի կյանքեն դրվագներ պատմեց, անբաժանելի բուռոն բերնին անկյունը տեղավորած։ Մանրամասնեց իր քրտնաթոր, դժնդակ ճիգերը, որոնք դաստիարակչական այդ մեթոդի գյուտին եկած հանգած էին։ Տիկինը, ձեռնամած, կունկնդրեր, ուսին վրա ունենալով զավկին գլուխը և ատենատեն, զմայլանքի ողոքիչ հառաչով մը կմրմնջեր.

— Ա՜հ, պ. Կոստանյան, ինչե՜ր քաշեր եք, ինչե՜ր...

— Էդ ոչի՜նչ, տիկին, հարցը նրանումն է, որ իմ աշխատանքները հաջողությամբ պսակվեն...

Եվ մարդը կշարունակեր իր անհեթեթ հերյուրանքները, ինքնօգնության, անձնազոհության, անշահախնդրության անստգյուտ տիպար մը ներկայացնելով իր անձը։

Կես գիշերը անցած էր, երբոր մանկավարժը մեկնեցավ. մաման, իր կրած հմայքը, շլացումը խոսքի մը մեջ խտացուց։

— Ա՜խ, արդյոք Արշակս ալ ասանկ մեկը պիտի ըլլա՞։

Կիրակի օրերը, պ. Կոստանյան իր աշակերտները, յոթը ջոկատի բաժնած, եկեղեցի կտաներ։ Խեղճ պզտիկները, սնափառ ու սեգ քալվածքով, փողոցներեն կանցնեին, ընկերակցությամբ իրենց ուսուցչին՝ իր լայն բելբրինին մեջ պատկառազդու։ Տնեցիք պատուհանները կփութային՝

— Կանցնին կոր, վազեցե՛ք,— աղաղակելով։

Հաղթութենե դարձող զորագունդ մը ավելի իրարանցում, ավելի խանդավառություն առաջ չպիտի բերեր։ Եկեղեցիին մեջ, դասին ետևը, ժողովուրդը, հարգալից, խսկույն տեղ կբանար իր փառավոր զավակներուն։ Մյուս դասեն ազգային վարժարանի տղաքները, խեղճուկ և ամչկոտ, կարոտի նայվածքներ կուղղեին երեկի իրենց այդ ընկերներուն, որոնք հիմա իրենց փայլուն համազգեստներուն մեջ զինվորներու խրոխտությամբը կկենային հոն, ընդհանուր զմայլանքի առարկա։ Մտքերնուն անոնք կդժգոհային իրենց ծնողներեն, որ անկարող էին անհրաժեշտ դրամը հայթայթելու զիրենք ալ այդ հոյակապ վարժարանը ղրկելու համար։ Հիմա, ա՛լ եկեղեցին խուռն բազմությամբ կլեցվեր. է՛ն սկեպտիկները. է՛ն

անհավատները ժամ կփութային՝ այդ հազվագյուտ տեսարանը վայելելու։

Տիկին Մարկոսյան այնուհետև ա՛լ կանոնավորապես եկեղեցին էր, անկյուն մը կեցած, վերնատունը, սև, անսահման քողքին տակեն աչքերը սեռեռած զավկին վրա, որ իրոք տղոց մեջ ամենեն շնորհալին, ամենեն սիրունն էր։

Կոստանյանի վրա լուրջ, մտածկոտ, հափշտակված բան մը կար. ատեն-ատեն, իր ուղղաբերձ հասակը կկորեր՝ երկրպագուքար. ատեն-ատեն, իր ուղղաբերձ հասակը կկորեր՝ երկրպագություն մը ուրվագծելու պես, խաչ կհաներ, աղոթք կմրմնջեր։ Կիները իրարու մեջ կփսփսային.

— Վո՜ւյ, արևին մեռնիմ սա մարդուն, ընտոր ալ աստվածավախ չերմեռանդ է։ Տղաքներուն վրա շնորհք բերավ նե՜...

Առաջին երեք ամիսը հազիվ բոլորած էր, իրիկուն մը, Կոստանյան աճապարանոք լուր ղրկեց խնամակալության պատվարժան անդամներուն՝ դպրոց ժողվելիվ «մի ինչ-որ կենսական հարցի մասին խորհրդակցելու»։

Մարդիկը հեհեռ վազեցին եկան։ Սրտերնին դողի մեջ էր, որ մանկավարժը՝ անակնկալ դժվարություններու հետևանոք՝ կգոցեր դպրոցը և կառներ կքալեր։ Հետո՞. տղաքը ի՞նչ կըլլային, Հ... գյուղին վիճակը ո՞ւր կհասներ և մանավանդ հանրային կարծիքին առջև ի՞նչ խայտառակություն էր, որ ատանկ հազվագյուտ հաստատություն մը—զոր բախտը իրենց դեմ հանած էր—չէին կրցած պահել, անոր անսահման արժեքը չէին կրցած գնահատել։

Կոստանյան՝ անձկալից ու մտախոհ կերպարանքով մը ընդունեց խնամակալները, որոնք իրարու երես կնայեին հարցուփորձող ծամածռություններով։ Երբոր ամենքն ալ հասան, կիսաբոլորակ մը կազմելով Կոստանյանին գրասեղանին շուրջը, մարդը սկսավ խոսիլ, տխուր, վհատած շեշտով մը, դանդաղ, դանդաղ, խաղալով իր արծաթ շղթային հետ, նայվածքը տարտամ։ Մանկավարժության և մասնավորապես Կոստանյան սիստեմին պահանջած մեծամեծ ծախսերը թվեց նորեն, դժվարությունները մասնագիտորեն մանրամասնեց։ Օրինակ բերավ Եվրոպայի համանման հաստատությունները, որոնք հազարավոր ոսկիներով միայն մեջտեղ կելլային և կրնային շարունակվիլ։

— Հենց որ գիտենայի թե,— ըսավ,— էսքան մեծ փող հարկավոր էր լինելու էս գործի համար, հետս առատ փող կփոխադրեի։

Հետո, հուսահատ շարժումներով, խոստովանեցավ թե դրամը սպառած էր, և թե, կամա ակամա, ստիպված էր կանգ առնել հոդ, գործին դեռ կեսին չհասած։ Ծրագիրը ջուրը պիտի իյնար, Հ... գյուղը վտանգի տակ էր, մատաղ սերունդը փչացման դատապարտված...

— Ափսո՜ս, ափսո՜ս,— վերջացուց ողբագին հառաչանքով մը, երկու ձեռքերը վարսերուն մեջ մխրճելով հուսահատությամբ։

Խնամակալները իրարու երես կնայեին շվարած, ափիբերան։ Այդ ծանուցված աղետին առջև՝ արյուններին կսառեր, մտքերնին կընդարմանար։ Այդ անձնվեր մարդուն սրտաճմլիկ կերպարանքը իրենց մեջ լալու տրամադրություններ կծնցներ։ Յուրաքանչյուրը ինքզինքը կայպաներ, կնախատեր, կձաղկեր։ Լռելյայն, ղիրար կըկշտամբեին, չհամարձակելով բարձրաձայն բանաձևել իրենց զգացած ցավը և անոր կսկիծին նվիրականությունը եղծել։

Վերջապես, խնամակալության ատենապետը՝ Ք... յան էֆենտի, վերջ մը տալու համար այդ կսկծալի կացության, համարձակվեցավ ձայն բարձրացնել։

— Պատվելի՛,— ըսավ,— կաղաչեմ, այդքան հուզվելու բան չի կա. հոգ մ՚ընեք, մենք մեր թքածը լղող մարդիկներ չենք. հիմա մեզի կրնա՞ք ըսել, թե որքա՜ն դրամի պետք կա դեռ դպրոցին շարունակվելուն համար. աստված ողորմած է։ Բան մը կընենք, անանկ չէ՞ մի, էֆենտիներ,— հարցուց ժողովականներուն դառնալով...

— Ճանըմ, ի՞նչ ըսել է, հելպեթ տե անանկ է, ծառվնուս էկածը պիտի ընենք...

— Ես դպրոցը մեր պատիվն է. ի՜նչ ըլլա ըլլա տակեն ելլալու ենք, ամա ճեպերնուս փարա պիտի տանք եղեր, կուտանք, կլմննա...

— Յա, զավակներնիս, դպրոցը գոցվի նե, ի՞նչ կըլլան։ Մեզքը չէ՞ մախսմներուն...

Յուրաքանչյուրը, այսպես, իր զգացումը պոռթկաց, զովանալով, հանդարտելով։ Ու ա՛լ պատկառանքի քողը խզվելով, ամենքը մեկ ոտքի ելան, խաչագողին շուրջը առին, մխիթարություններ, քաջալերանքներ շռայլեցին անոր, «հոգդ մ՚ըներ, մենք հոս ենք», ըսին։ Կոստանյանի տխրությունը քիչ-քիչ փարատեցավ։ Նույնիսկ, ոտքի ելլալով հայտնեց, թե մարմնամարզական նոր սիստեմ մը հաստատելու մտադիր էր, որուն շնորհիվ իր աշակերտները այնքան առողջ կազմ մը պիտի ստանային, որ է՛ն քիչը ութսուն տարու պիտի ապրեին։

— Պատվելի,— պոռացին խնամակալները միաբերան.— դուն ի՞նչ պիտի ընես նե ըրե, փարային մի՛ խառնվիր... ա՛ն մեզի ձգե...

— Խո, ի՞նչ սիրուն տղամարդկանց եմ հանդիպել,— կմռմռար մանկավարժը հրճվանքեն։

Եվ ելան գացին, ճամփան յուրաքանչյուր խնամակալին դրանը առջև կենալով, խորհրդակցելով, դրամի նորանոր աղբյուրներ ճարելու համար, և միշտ զիրար սրտապնդելով։

— Խըյախ մարդ է պե՛, քելեփիր է... մենք ասոր խյմեթը չը-գիտնանք նե, ո՞վ պիտի գիտնա։

Հետևյալ օրը Կոստանյան, իր նպատակին ավելի ապահով հասնելու համար, ավելի աղդու միջոց մը ձեռք առավ։ Իր տղաքներեն է՛ն խելահասները, զորս մասնավորապես կշոյեր, կփայփայեր և որոնք խենթ կելլային իրենց անղուգական դաստիարակին վրա, իր սենյակը տարավ և գրեթե արցունքոտ աչվըներով է որ բացատրեց անոնց իր նյութական նեղ կացությունը և դպրոցը փակվելու վերահաս հարկավորությունը։ Այս բոթը այլայլմե ըրավ տըղաքները, որ սկսան իրենք ալ արտասվել, խաչագողին ձեռքերն ու փեշերը բռնած, աղաչելով, պաղատելով, որ չդոցե դպրոցը, չերթա իրենց քովեն, ընե զիրենք ինչ որ խոստացած էր ընել։

— Փո՛ղ է հարկավոր, փո՛ղ,— կըսեր Կոստանյան երկու թևերը հուսահատ շարժմամբ մը օդին մեջ տարածած։

— Ա՛խ, մյուսյու, եթե մենք ունենայինք, ամենքն ալ կուտայինք... ա՛խ, ա՛խ...

— Բայց ասացեք ձեր ծնողներին որ տան...

— Այո՛, այո՛, պիտի ըսենք, պիտի ըսենք,— ճվրտացին ամենքը միաբերան։

Ու կուլային, կպաղատեին։

Խաչագողը, սակայն, երկարորեն բացատրեց տղոցը, թե մանկավարժական օրենքներու բոլորովին հակառակ բան էր՝ դպրոցի մեջ անցած դարձածները երթալ ծնողաց պատմելը. ու համոզեց զանոնք, որ զգուշանան իրենց տունը հայտնելե ինչ-որ տեղի ունեցած էր այդ օրը, բայց միևնույն ժամանակ խոսք առավ, որ իրենց բովանդակ ճնշումը, հեղինակությունը ի գործ դնեն ծնողքներուն վրա՝ մյուսյուին փող հայթայթելու համար, ուէ կերպով կուահած, հասկցած ըլլալով անոր դրամական նեղությունը և դպրոցը փակելու անհրաժեշտությունը։

Տղաքները, արցունքնին սրբելով, հանգստացած, իրենց դասարանները դարձան, փոքրիկ ըղեղներնուն մեջ ճնշողական ազդու միջոցներ որոճալով, և, զիրար քաջալերելու համար, իրարու ըսելով.

— Ծո՛, նայե՛ որ փարա փրցունես, ես աս գիշեր նայե ի՞նչ պիտի ընեմ տունը։

Ըսածնուն պես ալ ըրին, առանց երբեք հայտնելու այդ օրվան եղերերգությունը, մանկավարժության դեմ մեղանչելու վախով։ Ծնողքները ափիբերան եղան։ Մայրերն ալ, նույնքան դյուրազգաց, զավակներնուն միացան, անոնց լացերուն ընկերացան։ Դպրոցը գոցվե՞ր մի. հապա ի՞նչ կըլլային հուրսերը, երազները, ցնորքները, զորս օրերով, գիշերներով սնուցած, փայփայած էին։ Հայրերը, ճարահատ, խոստացան տալ որքան դրամ որ պետք ըլլար։

Միևնույն տեսարանը տեղի ունեցավ ամիրային տանը մեջ, սա տարբերությամբ, որ հոն խնդիրը առանց վեճի կարգադրվեցավ։ Ապագա գիտնականին անուշ հեռապատկերը ամեն արդելք կվերցներ, բոլոր դռները, բոլոր քսակները կբանար։

Աներևակայելի բան էր. ան թաղեցիք, որ ազգային վարժարանին բարելավությանը համար, հառաջդիմությանը համար քառասուն փարան դժգոհանքով կնետեին, հիմա, երեք ամսվան մեջ, հարյուրներով ոսկի թափած էին խաչագողի մը գրպանին մեջ՝ սիրահոժար փութկոտությամբ մը։ Իր վերջին ձեռնարկով, Կոստանյան հաջողած էր հարյուր ոսկի ևս կորզել հեգ ծնողքներեն. և այս գումարին յուրացումը արդարացնելու համար, պարտեզին մեջ, ընդհանուր սքանչացման ու զարմացման մեջտեղ, կանգնել տված էր քանի մը մարմնամարզական գործիքներ, որոնք, ըստ մանկավարժին հաստատությանը, էն քիչը ութսուն տարու պիտի ապրեցնեին այդ երջանիկ արարածները։

Դ.

Մերկերյան Թադեոս աղան գեշ վիճակի մեջ էր։ Առջի օրերեն իսկ, երբոր իմացած էր Կոստանյանին երևումը և անոր խորհուրդները, ծերուկ աղվեսի իր սուր հոտառությամբը բախտախնդիր մը, դատարկապորտ մը գուշակած էր անոր մեջ։ Եկեղեցին, սրճարանը, գինետունը, օրվան այդ լուրին վրա ջերմությամբ խոսած ատեն,

պատվարժան գանձապետը, ուրիշներու հիացումին և գովեստնե-
բուն դեմ, խիզախ և արհամարհոտ կարծիք մը արձակեր էր.

— Ով գիտե ո՛ր քոքով անոթիին մեկն է քի աստեղվանքը ին-
կեր է... անկաճ մի կախեք, անկաճ մի կախեք...

Բայց, հակառակ իր այս արհամարհոտ գնահատումին և մար-
գը վարկաբեկելու իր ճիգին, նախ զարմացմամբ, հետո ապշու-
թյամբ և վերջապես փրփրալից կատաղությամբ մը հանդիսատես
եղեր էր դատարկապորտին անսահման, դղրդալից հաջողությանը։
Ներքնական այդ նորօրինակ գործին հառաջդիմության չափովը, Թա-
դեոս աղային ձայնը բարձրացեր, երաժշտության ստորին խազերեն
մինչև վերին խազերը ելեր էր հետզհետե.

— Ծո՛, մի խաբվիք,— կպոռար սրճարանին մեջ, ուր ընդհան-
բարոյես կհավաքվեին գեղին պատվավոր անձերը,— առավ փախա-
վին մեկն է։ Ատ սիստեմ-միստեմ ըսածը սուտ բան է... հիյեթին
նայեցեք, պե՛, հոռմի տերտեր կըլմանի, աչքերուն չնայի՞ք, խբբ-
սրզ Մանոլ քենտիսի...

— Թադեոս աղա, դուն ցնդեր ես, խելքդ ասանկ բաներու չի՛
հասնիր, հե՛մ մեղք է, հե՛մ ամոթ է, ինչո՞ւդ պետք,— կպատաս-
խաներ իր խոսակիցները։

— Պե՛ ախպար, ի՞նչ ըսել է, ես ալ հայ չե՞մ մի, ես ինչո՞ւ չը-
խառնվիմ,— կպոռթկար մարդուկը, երկու թևերը ծունկերուն վրա
լարած, ֆեսը գանգին ետևը հրած։

Հետո, շուրջիններուն անտարբերությանը և համառությանը չը-
հանդուրժելով, մոլեգնորեն դուրս կելլար, բարկությենեն դողդողա-
լով, շունչը եկեղեցիին խորհրդարանը առնելով, ուր կպոռար, կդո-
ռար, կհայհոյեր.

— Ազգին մեղքը չէ՞, դպրոցը մեղքը չէ՞, պե՛, ծառքե կելլա
կոր, տղա չէ մնացեր, ի՞նչ է աս, վա՛խ, վա՛խ,— կվայեր ձեռքը
ուժգնորեն լերկ ճակատին զարնելով։— Ծո՛, ատ չափիրենը ո՞վ կըլ-
լա կոր քի կուգա կոր տե դպրոցնիս կպպրպե կոր, ծո մարդ չի կա՞
հոս, պե՛...

Հետո խաչվե մը բերել կուտար, ֆշալով, հնալով կխմեր, ալ-
քերը մեկ կետի մը վրա սևեռած, ձախ ձեռքին մատները օդին մեջ
խաղցնելեն։ Ժամկոչին մեկուն թուլբերանությանը շնորհիվ իմա-
ցած էր, թե Կոստանյան է՛ն առջի գիշերը ժամը պառկած, հոն կե-
բած խմած էր։ Ահագին իրարանցում, տակնուվրայություն։ Թա-
զականները կանչված էին անմիջապես, գործը քննելու համար։

Շնորհքով հանդիմանություն մը ուղղված էր նախ ծերուկ տերտե-
րին, որ մարդը հյուրընկալած էր, և հետո ժամկոչներուն, որ կե-
բակուր և անկողին տված էին անոր։

— Աստեղ մարդ չի կա՞, պե՛, աստեղ թաղական չի կա՞, պե՛,—
կմռնչեր Թադեոս աղա հանցավորներուն երեսին,— ինչո՞ւ մեզի
չեք հարցուներ կոր։

Իր կատաղությանը մեջ, մարդուկը, ուրիշ օրեր, խորհրդարա-
նը նստած այս խնդրին վրա մտածած ատենը, հանկարծ ոտքի
կելլար, կկանչեր այն ժամկոչը, որ Կոստանյանին այցելության
գազտնիքը հայտնած էր իրեն, և կըսեր.

— Ծո Մարգար, սա գործը մեյ մըն ալ տեղն ի տեղոքը պատ-
մե նայիմ ինծի... աղեկ մը չհասկցա։

Եվ կծկված թիկնաթոռին մեջ, ձեռքերը գրպանները, աչվրնե-
բը գոց, մտիկ կըներ գավառացին, որ ո՛վ գիտե քանիերորդ ան-
գամը ըլլալով, այդ անվերջանալի պատմության կսկսեր.

— Աղաս, մենք պանե՛ մըն ալ խապար չունեինք երբոբ...

Ատեն-ատեն, Թադեոս աղա կընդհատեր զայն, հանկարծ
աչվրները խոշոր-խոշոր բանալով, սա տեսակ հարցումներ ուղղե-
լու համար.

— Մարգա՛ր, քանի՞ լոխմա կերավ, մի՞տրդ է։

— Չգիտե՛մ աղա։

— Ծո՛ շատ քնացա՞վ։

— Էֆեյի, աղա։

Ու հանկարծ ոտքի կելլար, ինքզինքը չկրնալով զսպել, ու շի-
տակ մարդուն վրա կքալեր.

— Ծո՛, չե՞ք խպնիր, չե՞ք ամչնար, ծո՛, ձեզի ո՞վ ըսավ քի
ատ մարդուն կերակուր տաք. ծո՛, պետեհավա՞ գտեր եք ուտելի-
քը. տե՛ֆ էղիր սրկեց։

Եվ ժամկոչ աղբարը, սարսափահար, դուրս կելլար։

— Ազգին հացը կերեր է պե՛,— կկանչեր ջանձապահը, որ,
ավելորդ է ըսել, տարիներե ի վեր ազգին սնդուկը կքամեր անկուշտ
տղրուկի մը պես։

Ինք որ հազիվ տարին մեկ երկու անգամ դպրոցեն ներս ոտք
կդներ, հիմա ամեն առտու շունչը հոն կառներ, տեսնելու համար
թե գործերը ի՞նչ վիճակի մեջ էին հոն։ Ու ամեն առտու, զսպված
կատաղությամբ, մտիկ կըներ վարժապետին համարատվությունը։

— Այսօր հինգ տղա պակաս է, չորրորդ կարգը պարպվեցավ... հինգերորդեն մարդ չմնաց...

Թադեոս աղա, մորուքը ձեռքը, պարապ դրասեղաններուն մեջտեղեն կանցներ վարժապետին ընկերակցությամբը, որուն միևնույն հարցումը հազար անգամ կուղղեր.

— Ասոնք լեցո՞ւն էին, պատվելի։

— Լեցուն էին, Թադեոս աղա։

— Էյ սբվո՞նք,— ավելի հեռվինները ցուցունելով։

— Անոնք ալ լեցուն էին, Թադեոս աղա։

Իր հուսահատ բարկությանը մեջ, անգործադրելի հրահանգներ կուտար վարժապետին։

— Պատվելի՛, վաղը առտու տա չափիսընին բացած դպրոցը կերթաս իշտար տղա կա ականջներուն կբռնես հոս կբերես. ի՞նչ խալթ կուտեն պե՛...

— Ատ օրենքի դեմ բան է, Թադեոս աղա,— կառարկեր վարժապետը ողբալի շեշտով մը։

Ուրիշ առտու մը, մոռնալով որ դպրոցը հետզհետե պարպվելու վրա էր ծանոթ պատճառով, ուժգնությամբ մը ներս մտնելով սրահեն, վարժապետին երեսն ի վեր պոռաց.

— Պատվելի՛, տղաքը ո՞ւր են աս ատեն։

Մարդը ապշությամբ դանձապահին նայեցավ, կարծելով որ խենթեցած է։

— Կոստանյան վարժարանն են, Թադեոս աղա, չե՞ք գիտեր,— պատասխանեց տխուր հեգնությամբ մը։

— Սա սյուրդյուկի՞ն։

— Այո՛։

— Հոգաբարձությունը ո՞ւր է պե՛,— կպոռար սրահին մեջտեղը կեցած,— ազգը կտանին կոր՝ մեկուն ալ բապուքը չէ։ Հիմա պիտի խենթենամ։

Սուրճ մը կապսպրեր տնտեսին, հևալով ֆշալով կխմեր, նստած տեղեն աչքե անցունելով սրահը, պատերուն վրա կախված եբրայական պատկերները, զննելով զանոնք նոր տեսածի պես, մինչ վարժապետը ձեռքը ծնոտին կկենար դատապարտյալի մը նման, մինչ դրասեղաններու հատակին վրա, հոս հոն, կցցվեին աշակերտի դժգույն գլուխներ։

Օրին մեկն ալ, դպրոցը աշակերտով նորեն լեցնելու իր բոլոր գերբնական ճիգերուն ամլութենեն գրեթե խելագարած, սրահին ներս խուժեց և բազուկները լուսնոտորեն շարժտկելով պոռաց տղոցը.

— Դուք ալ գացեք, ծո՛, չուզեր, մի՛ գաք, դուք ալ ատ սյուրդյուկին դպրոցը գացեք. ազգը թող դպրոց չունենա քի խելքը գլուխը գա. դուրս ելեք կըսեմ կոր, ծո՛։

Վարժապետը, ոտքը ձեռքը դող ելած, Թադեոս աղային վրա վազեց.

— Ամա՛ն, աղա, մ՚ըներ մ՚ըլլար, հացես կընես ինծի... Աս տղոցն ալ մեղք է, փողոցը պիտի մնան...

— Ձգե՛, ձգե՛,— կկանչեր կատաղի դանձապահը՝ տղոցը վրա հարձակելու շարժումներ ընելով. և «դո՛ւրս ելեք, դո՛ւրս» պոռալեն ինք էր որ դուրս ելավ, մեկնեցավ դպրոցեն։

— Ձե՛մ ուզեր պե՛, դո՛ւրս ելեք, դո՛ւրս,— կպոռչտար փողոցներուն մեջ։

Բայց ինչ որ պատահեցավ Թադեոս աղայի, երբոր դիպվածով լսեց, թե ամիրային աղջիկն ալ իր զավակը ատ «սյուրդյուկ»-ին դպրոցը ղրկեր էր, և ոչ միայն ղրկեր էր, այլև զայն իր տունը հրավիրելով կերցուցեր խմցուցեր էր անոր, այո՛, ինչ որ պատահեցավ Թադեոս աղայի, այս աներևակայելի բաները լսելուն, գրեթե անկարելի է գրչով նկարագրել։

Այդ գիշերը վրան մարելիք եկավ տունը. պառավ քույրը բժիշկին վազեց. բժիշկը քննելե ետքը զայն, հայտնեց թե սաստիկ հուզման մը հետևանք էր։ Երկու օր դուրս չելավ. շարունակ դառնալով իր սենյակին շուրջը։ Երրորդ օրը շիտակ ժամ գնաց, նստավ դրասեղանին առջև և նամակ մը գրեց տիկին Մարկոսյանի, հույժ կենսական գործի մը համար տեսակցություն մը խնդրելով։ Հանը-մը, իր զվարթ տրամադրությանը մեջ, փոքր վարանքե մը ետք, լուր ղրկեց դանձապահին որ կընդունի զինքը։

Տեսակցությունը շատ պաշտոնական հանգամանքով մը սկսավ։ Թադեոս աղա փափկանկատությունը ունեցավ երբեք .ակնարկություն չընելու իր այդ տունեն վռնդված ըլլալու կսկծալի պարագային։ Հանդարտ, հանդիսավոր շեշտերով, ամիրայական տան հետ իր վաղեմի բարեկամության վրա պատմական տեսություն մը ըրավ, սա եզրակացության հանգելով, որ աշխարհի վրա Մարկոս ամիրային երևելի գերդաստանը իրմե ավելի անկեղծ, անձնվեր, հավատարիմ բարեկամ չուներ։

Այս հառաջաբանեն հետո, որուն տիկինը ունկնդրեց վհատեց-

նոզ պազարյունությամբ մը, Թադեոս աղա պնդեց, թե բարոյական հովանավորություն մը կպարտեր միշտ իր մեծ բարերարին աղջկանը և թոռանը, անոնց վարմունքը ի՛նչ ալ ըլլար իրեն հանդեպ։ Վերջապես իր ճառը բերավ կապց Կոստանյանին և անոր հիմնած գպրոցին։ Առանց քաշվելու, բացեիբաց հայտնեց այդ մարդուն և նրան ալ այդ խաբեբայության զոհ գացած էր՝ զավակը այդ դպրոցը դրկելով։ Հոս՝ տիկինը ընդհատեց գանձապահը.

— Բայց, Թադեոս աղա, դուք դպրոցական գործերե չե՞ք հասկընար. պ. Կոստանյան տարիներով Եվրոպա ուսում առեր է։

— Սո՛ւտ է, հանըմ։

— Վկայականներ ունի։

— Կե՛ղծ են, հանըմ։

— Մեծ գիտնականներ կճանչնա կոր։

— Վա՛զ անցիր, հանըմ։

Տիկինը, բարկացած, ոտքի ելավ։

— Թադեոս աղա, անիրավ եք։ Ինչո՞ւ ձեր չճանչցած մարդը վար կ՚բարնեք։

— Շա՛տ լավ կճանչնամ, հանըմ,— պատասխանեց մարդուկը խորհրդավոր ժպիտով մը,— աս մորուքը պաշըպոշ չճերմկցուցինք, հանըմ, ադ մարդը հիլլեպազին մեկն է, ե՛ս եմ ըսողը, լմընցա՛վ։

Այս կոշտ նախատինքին վրա, որ հանդգնորեն կուղղվեր այն մարդուն, որ իր զավակը մեծ գիտնական մը, ազգին պարծանքը պիտի ըներ, տիկին Մարկոսյան, խոժոռադեմ, ոտքի ելավ։

— Թադեոս աղա,— ըսավ,— եթե գիտնայի թե այս տեսակ բանի մը համար ինծի պիտի տեսնվեիք, չէի ընդուներ ձեր այցելությունը։

Ու կեցավ ճիշտ այն դիրքով, որով մարդ մեկը ճամփել կուզի, առանց «դուրս ելեք» ըսելու բացեիբաց։ Գանձապահը, թեև զգաց որ բարկութենեն արյունը գլուխը կխուժեր, պատրաստամտությունը ունեցավ չպայթելու և իր տակտիկան իսկույն փոխելու։

— Հանըմ, կաղաչեմ, հանդարտեցեք,— ըսավ պաղատական շեշտով մը,— ես ադ մարդուն հետ առնելիք տալիք մը չունիմ, ձեր օգտին, ձեր շահուն համար է որ աս բանները կըսեմ, ձեր աչքերը բանալ կուզեմ կոր... Կաղաչեմ, տիկին, աստծու սիրուն. ամիրային հիշատակին սիրուն, զավկնուդ սիրուն, կաղաչեմ երես մի՛

տաք ատ մարդուն, զավկնիդ մի՛ ղրկեք անոր դպրոցը, գեշ կընեք. կխաբե կոր ձեզի, կկողոպտե կոր ձեզի, ազգին մեղք է, ձեզի մեղք է, մեզի մեղք է, ամենուս ալ մեղք է...

Այս վերջին բառերը արտասանած ատեն, Մերկերյանին արցունքը պակաս էր. թևերը դեպի հանըմը երկնցուցած, կարծես մեծ շնորհ մը կպաղատեր։ Սպիտակամորուս ծերուկի մը այդ աղաչական, սրտաշարժ կեցվածքը իր ազդեցությունը ունեցավ. հանըմը, հանգարտած, նորեն նստավ, հառաչ մը զսպելով։ Պահ մը լռություն տիրեց։

— Հանըմ, ըսել է որ իմ տված խորհուրդիս չպիտի՞ ականջ կախեք,— վրա բերավ Մերկերյան վերջապես։

— Թադեոս աղա,— ըսավ հանըմը կտրուկ ձայնով մը,— ինծի մտիք ըրեք. գիտեք թե որչափ կսիրեմ զավակս, չկա բան մը որ մերժեմ իրեն։ Ուզեց ատ դպրոցը երթալ. կրնայի՞ չղրկել, ո՛չ։ Ղրկեցի ու պիտի ղրկեմ, որովհետև ատ ձեր խաբեբա ըսած մարդը շատ շնորհքով, շատ խելացի, շատ գիտնական մարդ մըն է. խոստացավ զավակս մեծ մարդ մը ընել։ Ապահով ալ եմ որ պիտի ընե։ Ուրեմն այս մասին խոսիլը ավելորդ է, Թադեոս աղա, ուրիշ ի՞նչ կա չի կա նայինք։

— Հո՞ս ալ բերել տվեր եք հանըմ,— հարցուց գանձապահը խեղդուկ և կամաց ձայնով մը, զսպված մոլեգնությամբ։

— Ինչո՞ւ չէ, զավկիս վարժապետն է, դուռս միշտ բաց է անոր առջև...

— Յա՛, անա՞նկ է մի. խե՛րը տեսնաք ուրեմն ձեր վարժապետին, հանըմ։

Եվ դեպի դուռ ուղղվելով և աջ ձեռքը պատին վրա պտտցունելով.

— Ահա հոս կգրեմ կոր, հանըմ, ատ մարդը հիլլեպազին մեկն է, ձեր քթին կխնդա կոր, փարանիդ սոյմիշ պիտի ընե, առնե փախի և եթե աս ըսածս շիտակ չելլա, թո՛ղ ինծի ալ Թադեոս Մերկերյան չըսեն։ Մնաք բարով։

Եվ աճապարանոք մեկնեցավ։

Մերկերյան, իր թշնամին, գյուղին թշնամին, ժամուն, դպրոցին թշնամին ընկճելու իր անպարտելի համառությանը մեջ, գերագույն միջոցի մը դիմել ուզեց. գիտեր որ ամիրայական տիրապետության ատեն ազգային կամ կրոնական իշխանություններու անպատողներուն դեմ շատ անգամ բանադրանք կկարդացվեր եկե-

գեցիներու բեմեն։ Ինչո՞ւ ուրեմն ինքն ալ, իբրև ամենազոր թաղա-
կան, գյուղին քարոզիչին միջոցով, բանադրանք մը որոտացնել չի
տար այդ «ազգին տունը կործանողին» դեմ։

— Կըլլա մի կըլլա, ես քուկին խերդ կանիծեմ, շո՜ւն,— մորմ-
ոաց. բայց ասանկ ամենածանր որոշման մը պատասխանատ-
վությունը միս մինակ ինք չստանձնելու հետին ողջմտություն մը
ունեցավ։

— Մեկալ աղաներուն ալ մեյ մը հարցունենք,— մտածեց։

Կիրակի օրը բոլոր թաղականները հավաքվեցան։ Ատենապե-
տը, որ քսան տարիե ի վեր բոլոր թաղական խորհուրդներուն ան-
շարժ ատենապետն էր, դեր, կոպիտ, հարուստ, տգեղ մարդ մը
հատկապես վար իջավ գյուղեն, ուր օդափոխության գացած էր։
Մերկերյան, բորբոքված պերճախոսությամբ մը, թաղին կացու-
թյան մեկ մանրամասն պատկերը գծեց՝ շատ ողբալի գույներու տակ
ներկայացնելով զայն, և վերջացուց՝ սա մեծ ու ահեղ բացական-
ությունը թնդացնելով.

— Էֆենտինե՜ր, մեկ մարդ մը այսօր ազգը կործանելու եկեր
է, ձգելո՞ւ ենք մի։

Տիրող լռության մեջ, ատենապետին ճաթած, ճարպոտ ձայնը
խոկաց.

— Ը՜ռ, ատ չափիրնը ո՞վ է, ինծի ինչո՞ւ խապար մը չտվիք,
ծո՜, վայ շան զավակ... ծո՜, վա՜յ...

Եվ հայհոյանքներու անձրև մըն էր տեղաց Կոստանյանի գլ-
խին ի վար։

— Ի՞նչ ընելու է, ան նայինք,— վրա բերավ ուրիշ մը, երբոր
անձրևը դադրեցավ։

— Բանադրելու է, էֆենտիմ, բանադրելու է,— պոռաց Մեր-
կերյան ձեռքը սեղանին զարնելով,— կբանադրես, կլմննա կեր-
թա... կարճ ճամփան աս է։

Բոլոր թաղականները իրարու երես նայեցան, միջոցին այլան-
դակությենեն սահմռկած։

— Շատ աղեկ, ամա,— առարկեց անդիեն ողջամիտ ծերուկ
մը,— նայինք պատրիարքը թող կուտա՞։ Կրոնական ժողովը ի՞նչ
կրսե... մենք ո՞վ ենք, որ մարդ բանադրել պիտի տանք...

— Մենք ո՞վ ենք մի՜,— խանչեց Մերկերյան հնդկահավի
պես կաս կարմիր կտրած։— Ը՜ս պիտի բանադրել տամ,— պոռաց
ոտքի ելլալով...— Հե՞, ի՞նչ ըսիք, էֆենտի,— ավելցուց ատենա-

պետին դառնալով, որ Մերկերյանի այդքան հեղինակավոր շեշտին
վրա երեսը թթվեցուցած էր։

— Ճանըմ, ատոր կարճ ճամփան կա,— պատասխանեց ատե-
նապետը,— մեր տղոցը ծառքով գիշեր մը թեմիզ տայախ մը քա-
շել կուտանք, ան բուրդուբապուճ կփախի... բանադրանքը ի՞նչ է...

— Ա՜խ, ա՜խ, բանադրելու է,— կոռնար Մերկերյան, մորուքը
քաշկոտելով կատաղությենեն։

— Մեյ մը քարոզիչին հարցնենք նայինք ի՞նչ կրսե։— առա-
ջարկեց անդամ մը՝ այդ անվերջանալի խորհրդակցությունը ելքի
մը հանգեցնելու համար։

Մերկերյան, փրկության գերանին պլլվելու պես դուռը նետ-
վեցավ։

— Մարկոս աղբա՜ր,— պոռաց շնչասպառ,— սա հայր սուրբը
հոս կանչե։

— Աղա, քարոզ կուտա կոր։

Թադեոս աղա մոնչեց՝ գառագեղի վաղրին պես, որ ո՜ւր որ
դառնա երկաթե պատը կգտնե իր դեմը։

— Ը՜ռ, ան կևեզեն ե՞րբ պիտի լմնցունե քարոզը տե...

Խորհուրդը առկախ մնաց. սիգարներ ծխվեցան լուռումունջ։
Քառորդ մը անցավ։ Թադեոս աղա դռնեն.

— Մարկոս, քարոզը լմնցա՞վ։

— Չէ՛, աղա։

— Ը՜ռ, ըսե տա մարդուն կարճ թող կապե, պետքի բան կա
հոս...

— Չըլլար, աղա, ամոթ է, մեղք է...

— Սերսեմ...

Քառորդ մըն ալ անցավ։ Հեռուեն՝ վարդապետին ձայնին ճայ-
թյունները կհասնեին, մուրճի պես իջնալով Թադեոս աղայի գլ-
խուն, որ լռելյայն կքրթեր։

Հանկարծ, ատենապետը, որ իր գիրությանը և արյունոտու-
թյանը պատճառավ անհամբեր մարդ մըն էր, ոտքի ելավ։

— Ես մարդ պիտի տեսնամ, գործ ունիմ, ինծի ներողություն,
էֆենտիներ,— ըսավ դուռը ուղղվելով։— Ինծի հարցնեք նե, բա-
նադրանքի տեղ ծեծելու է ատ մարդը,— ավելցուց ետին դառնա-
լով.— ծե՜ծ, ծե՜ծ, ատանկներուն պապաճա ծե՜ծ...

Ու մեկնեցավ։

Ատենապետին մեկնելուն վրա, մյուս թաղականները, որոնք

արդեն այնքան համամիտ չէին Կոստանյանը բանադրել տալու գաղափարին, մեկիկ-մեկիկ, զանազան առարկություններով առին քալեցին, ավելի ատենապետին գործնական միջոցին կուսակից։

— Բանադրանքը պոշ բան է,— կըսեին մեկնած ատեններին,— ծեծին ըսելիք չի կա, շնորհքով ծեծ մը քաշելու է տա մարդուն...

Եվ ամենուն ալ, Մերկերյան, կոնակը դրամարկղին տված, միևնույն պատասխանը կուտար, մռնչելով.

— Ծեծ չըլլա՛ր, յախան ծառք կուտանք, բանադրելու է...

Հիմա, պարապ խորհրդարանին մեջ խեղճ գանձապահը կդառնար, խենթի պես, մատներու ջղապիրկ շարժումներով, աչքերը խոլոր-մոլոր, խղդուկ կոկորդեն ատեն-ատեն բառ մը արձակելով.

— Բանադրա՛նք, բանադրա՛նք, բանադրա՛նք...

Դուռը կամաց մը բացվեցավ։

— Աղա, քարոզը լմնցեր է։

Թադեոս աղա պայթեցավ։

— Քարոզին ալ խերը անիծեմ, վարդապետին ալ, քուկդ ա՛լ...

Բարեբախտաբար այդ միջոցին պնակ պտտցնողներու թափոր մը խորհրդարանեն ներս խուժեց, լուսարարը, դպրոցի աշակերտ մը, հոգաբարձու մը, ոսկերիչ մը և է՛ն ետևեն ժամկոչ մը. ամենքն ալ մեկիկ-մեկիկ իրենց պնակներուն պարունակությունը գանձապահին առջև համրեցին և գումարը թուղթի վրա նշանակելով ելան գացին։ Տիար գանձապահը, դրամներուն տեսքին առջև, պահ մը մոռցած դպրոց, Կոստանյան, բանադրանք, պնակներուն պարունակությունը իրար խառնեց, արծաթները պղինձներեն զատեց անհավատալի արագությամբ մը, պատռեց թուղթի այն կտորը, որուն վրա պնակ պտտցնողները նշանակած էին գումարները զատ-զատ, բուռ մը արծաթ մանրուք նետեց տափատին գրպանը և մնացածը գրամարկղը փոխադրեց։

— Ա՛խ, բանադրելու էր տա շունը քի ապգը կխաբե կոր, ապգին տունը կկործանե կոր,— կմռմռար դրամարկղը կղպած միջոցին։

Եկեղեցիեն դուրս ելլալով՝ իր սովորական սրճարանը երթալու ատենը նորեն բուռն կերպով կհամակվեր այդ մղձավանջովը։ Իր թշնամիին հետ, ազգին թշնամիին հետ գլուխ ելլելու, զանիկա շախշախելու եղեռնական զարհուրելի միջոցներ՝ կայծակի հարվածներու պես՝ կզիկզակեին իր գանգին մեջ։ Օրինակի համար, պահ մը ասկալի գաղափար մը հղացավ։

— Աս ավելի կարճ ճամփա է,— կմռմռար գլխիկոր քալելով,— տրվոր դպրոցը խունտախ մը նետել տալու է, բանադրանքեն աղեկ է...

«Խունտախ»-ի այս անարգ գաղափարը վերջին ծայր ժպտեցավ Թադեոս աղային, մեծցավ, ծովացավ, անհունացավ ան իր պղտոր, մշուշապատ երևակայությանը մեջ. բանադրանքի գյուռը իր հարգը վարկը մեկենիմեկ կորսնցուց «խունտախ»-ի այս սքանչելի գյուտին առջև։ Կոստանյանին կերտած գործը մեկ ժամու մեջ քանդել փչացնել, և ամենադյուրին կերպով, ասկեց ավելի դյութական, հմայիչ բան չէր կրնար ըլլալ ծեր ավազակին համար, որ վերջին վարանում մըն ալ ունեցավ.

— Բանադրա՞նք մի, խունտախ... Չէ՛, Շահմալյան էֆենտին իրավունք ունի. բանադրանքեն ի՞նչ կելլա. ամա ծեծեն ալ բան մը չելլար... նայե՛, խունտախին ըսելիք չկա, պելքի մարդն ալ մեջը կերի. ծո ան ի՞նչ պատվական բան կըլլա։

Կոստանյանին այրվելուն հավանականությունը բոլորովին փարատեց գանձապահին մռայլը և արտասովոր զվարթությամբ մը էր, որ սրճարանեն ներս մտնելով պոռաց.

— Սո՛ւրճ մը և նարգիլե՛ մը։

Հիմա անկյուն մը տոտոզված, ֆեսը ետև կործանած, կլկլակին սաթե ծայրը բերանը, կմտմտար։ Հանկարծ՝ մտածում մը ճեզքեց իր ըղեղը։

— Աղեկ ամա, խունտախը ո՞վ պիտի նետե... Ցա՛ նետողը բռնվի նե, հարյուր մեկ տարի կերթա. ես ալ...

Սարսուռ մը անցավ ուկորներեն։ Սարսափահար շուրջը նայեցավ, իբր թե վախնար որ իր ծրագրած ոճիրը դեմքեն հասկցող մը կըլլար...

— Ցա ե՞ս ինչ կըլլամ... է՛ն քիչը քսան տարի...

Զգեց կլկլակը և կամաց մը դուրս ելավ սրճարանեն։

— Աս ալ ջուրը ինկավ,— կմռմռար ճամփան,— բանադրանք, ծեծ, խունտախ, ամենն ալ ջուրը ինկան, ծո վայ շունշանորդի, աս մարդը բախտ ունի պե՛, սատանա՞ է, ի՞նչ է...

Եվ նորեն համակված կատաղության տագնապովը, զոր անկարողության գիտակցությունը կսաստկացներ, Մերկերյան խեղդուկ ձայնով կխորդար.

— Էֆենտիմ, անոր է՛ն կարճ ճամփան կա. վաղը առտու հետը երկու զապթիեով կերթամ ատ դպրոցը, մարդուն թեեն կը-

բռնեմ դուրս կնետեմ, տղաքն ալ կվռնդեմ, դպրոցին դուռները կը-գոցեմ, մեհյուրլեմիշ ընել կուտամ, լմնցավ գնաց. բանադրանքը, ծեծը, խունտախը ի՞նչ բապուճս են։

Այս բռնական միջոցին հղացմանը պարգևած սփոփանքին տակ՝ ծերուկ գանձապահը վերջապես տուն հասավ, հանգստանալու և հաջորդ օրվան հոմերական արշավանքին պատրաստվելու համար վճռապես։

Սակայն, երբոր Մերկերյան այսպես ճղակտոր ջանքերու մեջ կսպառեր, անդին Կոստանյան հանդարտորեն, պաղարյունությամբ իր գործը առաջ կտաներ իր շահագործության միջոցներուն առժամյա դադար մը տալով և գրպանած գումարը բավական սեպելով դպրոցական առաջին տարեշրջանին համար։ Գյուղին երևելիներուն մեջ՝ պարբերական այցելության հավատարիմ կմնար, մանավանդ ամիրային ապարանքը, ուր գտած ջերմ, գրկաբաց ընդունելությունը, մանավանդ հյութեղ, ամեն ավերմանց դիմացող սեղանը կշտապինդ գոհացում մը կպարգևեր իրեն։ Տիկին Մարկոսյան մեծ հաճույք կզգար մանկավարժին խոսվածքեն, մանավանդ երբոր ան ապագա գիտնականի կյանքին փայլուն, ակնախտիկ դրվագներուն վրա ծանրանար, որոնք ինքզինքեն կհանեին մայրը, շլացումի և խելահեղության անպատում վայրկյաններ կապրեցնելին զինքը։ Տղան, որ հիմակվընե կվարժվեր իր գլխուն շուրջը նըստարել ապագա երևելի մարդուն փառքի լուսապսակը, կարևոր, գիտակից, վես ձևեր կառներ, արհամարհելով իր ընկերները, ինքզինքը կաղապարել ճգնելով իր ուսուցչին շարժվածքին, խոսվածքին, նկարագրին վրա, որոնք կզմայլեցնեին զինքը, կույր ու սրտազեղ փարումի մը կմղեին։ Անոր ընկերակցությամբ փողոցներեն անցնելը ինապատության բուռն գոհացում մըն էր իր փոքր, իր ճղճիմ հոգիին համար, որուն առջև՝ հիմակվընե իսկ՝ մարդերն ու իրերը աննշան, անգոսնելի համեմատություններ կառնեին։ Մաման մեծ լուրեն ի վեր, տեսակ մը պատկառանքով, գողունի, անկեղծ զմայլանքով կվերաբերվեր իր զավկին հանդեպ։ Անոր վրա բնության մեկ հրաշքը կփորձվեր տեսնել, էակ մը, որ միայն մոր մը ստացվածքը չէ, ամենունն ալ է, հանրության, մարդկության։ Մայրական այս կույր հափշտակության սաստկացումին թև թռիչք կուտար ուսուցիչը, երբոր, պարբերական ճաշերեն հետո, գիշերը, օթոցպատ անդորր սրահին մեկ անկյունը, հանգստավետորեն թաղված լայն թիկնաթոռի մը մեջ, բուրոն կախած մսոտ թուխ շրթներեն,

խաբեբան սկսեր իր հավիտենական գուշակություններուն, դորս երկյուղած, ջերմեռանդ հավատքով կունկնդրեր խեղճ կինը իր ցամքած կուրծքին վրա սեղմած ունենալով տղուն խարտյաշ, աղվոր գլուխը։

— Ա՛խ, աստված լսե ձայնդ։

— Ա՛խ, այդ օրվան պիտի հասնի՞մ արդյոք։

— Զավկիս փառքը պիտի կարենա՞մ տեսնել։

Այս տեսակ հառաչանքներով կընդհատեր ան մարդուն անընպատ և ունայն լեզվագարությունը, անոր աչվընեռուն մեջ կայծկլտող անգութ, ահավոր հեգնությունը չնշմարելու չափ կույր։ Մերթ, պառավ խոհարարուհին իր ոսկրաթեք մարմնին ուրվականը կբերեր հոն, պահ մը խանգարելով տեղին ու կացության խորհրդապահ ներդաշնակությունը, զովարար ըմպելիք մը կամ համեղ պրոտուզ մը հրամցնելու համար այդ բացառիկ հյուրին։ Պառավին ցավոտ, նիհար դեմքը դժգոհանքի արտահայտություն մը կառներ պարբերական այս այցելությանց առթիվ, և ամեն անգամ սենյակեն դուրս ելլալուն զգվանքով մը կմռմռար.

— Վո՜ւյ, բերիս հաղ չըրավ նե սա մարդեն։

Եվ մինչ մանկավարժը կգբաղեր մեծարված ըմպելին կուլ տալու պուտիկ-պուտիկ, գնահատող ըմբոշխնումով մը, տիկին Մարկոսյան հիացական զննումի մը կենթարկեր իր խոսակիցը, անոր բարձր, մաքուր ու հզոր ճակատը, սև, աղվոր վարսերը՝ անստգյուտ խոպոպներով քունքերեն վար կախված, թուխ, հուրքոտ աչվընները, զգայնոտ, հանգրիճված շուրթերը ու ճիտը, զորավոր և լայնշի, և ուսերը, բարեձև ու թիկնեղ, ամեն բան այդ մարդուն վրա սքանչացման սատարներ էին իր շլացած աչվընեռուն համար։ Եվ մանավանդ, այդ հրապուրիչ պատյանին ետևը բաբախող հոգին, մեծ, գեղեցիկ, բարիք ու երանություն սփռող հոգին...

— Զավակս ալ ասանկ պիտի ըլլա՞,— կհառաչեր սրտին ալքերեն...

Վերջապես դպրոցական առաջին տարեշրջանը բոլորվեցավ։ Կոստանյան ծնողքները իր վարժարանին սրահը հավաքելով, ծանուց, թե իր ակնկալածեն շատ ավելի նպաստավոր գետիններ գըտած էր իր սիստեմին անխուսափելի բարիքներուն բողբոջմանը համար։ Է՛ն աչքի զարնող պղտիկ տաղանդներուն վրա կանգ առավ, գիտական ճապաղ, անհասկնալի բացատրություններու մանվածի մը մեջ անոնց գովեստը հյուսելով։ Իր համեստ աշխատավորի դե-

ռին վրա ծանրացավ, որով ան իր փառքը կփնտրե որքան կատարած գործեն, նույնքան և ավելի անոր փայլուն արդյունքեն։ Իր զոհողությունները, իր քրտնաթոր աշխատությունները թվեց, շեշտելով իր նկարագրին ամենեն կարկառուն կողմին, անշահախնդրության ոգիին վրա, որով միայն կրնար այդ տեսակ դժվարին, եղական, փառավոր ձեռնարկ մը հառաջանալ, զարգանալ, տևել։ Արագ ու շլացուցիչ պատկեր մըն ալ գծեց այն տեսարաններն, զոր պիտի ներկայացներ Հ... գյուղը քանի մը տարի ետքը, երբոր այդ մեծ թխմացականությունները գիսավոր աստղերու պես հետզհետե արձակվեին Կոստանյան սիստեմին վառարանեն։ Համբերություն պատվիրեց և մասնավորապես խնդրեց, որ ամեն մեկ ծնողք իր օրինակին հետևելով՝ նյութական ու բարոյական զոհողության իր բաժինը ի սպաս դնե այդ մեծ գործին հաջողությանը։ Քանի մը սրտաճմլիկ բառեր ալ իր սիրելի սաներուն ուղղեց, որոնցմե շատերը կուլային երկու ամիս իրենց դաստիարակեն հեռու մնալ ստիպվելնուն։ Ճառախոսությունը վերջացավ խանդավառ ցույցերու մեջ, ու վարձատրվեցավ փառավոր հացկերույթով մը, մենծ աղաղի մը տան մեջ։

Քանի մը օր ետքը, մանկավարժը մտերմորեն դիմեց ամենեն հարուստ ծնողքներուն, հարցնելով անոնց, թե կհոժարեի՞ն իրեն հանձնել զավկին՝ ամիսը մը երթալ կաղդուրվելու համար Վոսփորի մեկ խաղաղ անկյունը։

— Հանգիստը և կլիմայի կարճ փոփոխությունը մի անհրաժեշտություն է նրանց համար,— պնդեց։

Ծնողքները, փոքր վարանումե մը ետքը, հավանեցան, խաբեբային վրա իրենց վստահությունը բացարձակ ըլլալով։ Եվ ահա մանկավարժը, բոլորված չորս հինգ տղաքներե, գնաց Պեյուքտերեի ամենեն անուշ մեկ անկյունը, փառավոր ու հանգստավետ տան մը մեջ, առատորեն մսխելու կլորիկ գումարը, զոր օդափոխության պատրվակին տակ շորթած էր ծնողքներեն։ Շաբաթ մը հաղիվ անցած, տղաք ձանձրացան այդ գյուղագնացութենեն, որ իրենց համար ոևէ հրապույր չուներ, և իրենց գյուղը դարձան։ Կոստանյան՝ անոնց ծախսին համար իրեն հանձնված գումարը վերհանձնաբար ետ դարձուց. բայց ծնողքները, ավելի վեհանձն, իրեն վերադարձուցին այդ գումարը, իբրև իր «արդար իրավունքը»։

Հոն, միս մինակը, Կոստանյան իր փայփայած ծրագիրներուն վրա կորոճար երկարորեն. տարի մըն ալ փակվիլ, տնքալ Հ... գյուղին անշուք, անտանելի անկյունը, տարի մըն ալ համբերել, շահագործել ժողովրդին միամտությունը և հետո կծիկը դնել, անհայտ ըլլալ, ոչ արհամարհելի գումար մը գրպանած, զոր պիտի երթար— իր երազն էր այս—Մոնթե-Քառլոյի մեծ խաղարաններուն մեջ հարյուրապատկել, հազարապատկել, և եթե կարելի է, միլիոնապատկել։

Վերամուտին, վարժարանը ավելի մեծ փայլ առած էր։ Լրագրական միամիտ բեկլամներ՝ ուրիշ թաղերե ալ աշակերտներ կբաշխեին կբերեին հոն։ Դրամը կհոսեր։ Քանի մը նոր ուսուցիչներ վարձվեցան։ Մերկերյանի բոլոր գոռումգոչումները, բողոքները, վարկաբեկող քարոզները ապարդյուն, անզոր մնացին։ Զինքը մը-տիկ ընող չի կար. քթին կխնդային։

— Դուն նայե որ թաղականությունդ ընես, ուրիշներուն գործին մի՛ խառնվիր,— կըսեին։

— Ծո՛, կիւաբե կոր, ծո՛, սոյմիշ կընե կոր ձեղի,— կպոռար Մերկերյան կոկորդը պատռելու աստիճան։— Ծո՛, ավազա՛կ է...

Վերամուտեն ամիս մը հետո, Կոստանյան խնդրեց խնամակալներեն, որ վարժարանին համար ոևէ նպաստ մը սարքեն։ Առաջարկը սիրահոժար ընդունվեցավ, գյուղին երիտասարդները ափափո թատերական խումբ մը կազմեցին ու ազգային կյանքե թատերախաղ մը ներկայացուցին անձնվիրաբար։ Հարյուր հիսուն ոսկի գոյացավ։ Ազգ. վարժարանը բոլորովին լքված էր, մնացած միակ վարժապետը և քանի մը աղքատի տղաքները գրեթե մինչև իրիկուն կմրափեին, տխուր և խղճալի։ Ա՛լ Մերկերյան ոտքը հոն չէր դեր, զայն լեցնելու իր բոլոր միջոցները սպառած ըլլալով։ Ու ճարահատ, թողուց որ դեպքերն ու իրերը իրենց բնական ընթացքը կատարեն, և երկաչտամտությամբ սպասեց անոնց վախճանին, վանզի սմսեղուկ ծերունին, զարմանալի հայտնատեսությամբ մը, կզգար, թե վախճան մը կար և ան ալ այդքան հեռու չէր։

Երկրորդ տարվան կիսուն, Կոստանյան՝ խնամակալները արտասովոր և անակնկալ նիստի մը հրավիրեց. և առանց այլևայլի անոնց ըսավ թե՝ որովհետև վարժարանին նյութական մատակարարության դժվարությունները շատ կնեղեին զինքը և իրմե կըհափշտակեին թանկագին վայրկյաններ, զորս պարտավոր էր հատկացնել իր աշակերտներուն զարգացմանը միայն, այդ գործը խնամակալները իրենք ստանձնելու էին, ի սեր նույնիսկ իրենց զավկներուն դաստիարակությանը։ Մարդիկը շվարեցան, իրարու

երես նայեցան, աչք ինքվի ըրին իրարու, վարանեցան, տատամսեցան, կմկմացին, բառեր ծամծմեցին և վերջապես ըսին թե՝ այդ քան ծանր պարտականություն մը ստանձնելե առաջ խորհելու պետք կար։ Մանկավարժը սա կետն ալ չմոռցավ շեշտելու, թե ատանկով խնամակալները մոտանց պիտի տեսնեին և հասկնային, թե ի՛նչ ահագին ծախսի կարոտ էր վարժարանին մատակարարությունը։ Մարդիկը մեկնեցան մտատանջ։ Իրենց տուներուն մեջ խորհրդակցեցան, վեր դարձուցին, վար դարձուցին, հարցը ամեն կողմե զննեցին և վերջապես սա եզրակացության հանգեցան, թե իրենցմե ոչ մեկը կարող է դպրոցի մը մատակարարը դառնալ. բայց մտածեցին ալ որ, երբ կմերժեին մատուցված առաջարկը,— որուն իրավացիությունը ամենքն ալ կընդունեին,— անոր փոխարեն իրենց վրա լռելյայն պարտք մը կծանրանար տնօրենին գործը նյութականապես թեթևցնելու՝ պզտիկ նվերով մը. հետևապես, փափկանկատ խնամակալները մեջերնին հանգանակություն մը կատարելով՝ հարյուր ոսկիի շնորհալի գումարը տարին ավազակին ափը գրին, միանգամայն ներողություններ խնդրելով իր առաջարկը մերժել ստիպվելնուն։ Տնօրենը, այդ վեհանձն շարժումին դեմ բռնաբելով հանդերձ, փարան իր անհատակ գրպանը նետեց։

Երկրորդ տարեշրջանին վերջը հասավ, առանց ուրիշ ոևէ արկածի։

Միտրի գործը առաջ տարվեցավ՝ արգավանդ լռության մը մեջտեղ։ Կանխահաս տաղանդներու այդ չքնաղ մարզարանին շուրջ՝ հույսերը վառ մնացին, երազները հաճախեցին, իղձերը հետզհետե ավելի կուռ, ավելի սրտաբուխ եղան։ Հայ դաստիարակության ուսպետը՝ ազնիվ, վեհհոգի միամտություններ մշտարծարծորեն խանդավառ և շլացած պահելու դիվային ճարպիկությունը ունեցավ։

Պայմանագրական հանդեսեն հետո, մանկավարժը ահագին հոգնություն մը կեղծեց, նույնիսկ իր շուրջիններուն հայտարարեց, թե հաջորդ տարին գուցե չի կարենա շարունակել այդ ծանր գործը, եթե երկամսյա արձակուրդը չերթար չանցներ եվրոպական ջերմուկ մը, իր հոգացավը դարմանելու համար, որուն՝ Հ... գյուղի կլիմայեն առած ըլլալու պատասխանատվությունն ալ չքաշվեցավ բեռցընել խեղճ թաղեցիներուն ուսին։ Մեծ հուզում գյուղին մեջ, թե եթե Կոստանյան չի բժշկվեր, մյուս տարի դպրոց չի կա՛ր։ Երիտասարդությունը ոտքի ելավ, բողոքելով հարուստ դասակարգին անտարբերությանը դեմ, որով կձգեին որ անզուգական դաստիարակը անխնամ մնար, հիվընդնար, անկարող շարունակելու իր բեղմնավոր գործը, որմե կախում ունեին Հ... գյուղին փառքն ու ապագան... քաշված իր սենյակը տխուր, սրտաբեկ։ Կոստանյան ժպտուն և տրտմալի համակերպություն մը ցույց կուտար իր վրա գուրգուրացողներուն, այն կացության համար, որուն ակամա մատնված էր։

— Ահա թե ի՛նչ է լինում վարձը հայ դաստիարակին,— կըսեր.— նրանից պահանջում են ամեն ինչ՝ արյունը, կյանքը, մարմինը, բայց ոչինչ են տալիս հենց որ նա կամենում է մի քիչ վերանորոգել իր արյունը, կյանքը, մարմինը՝ դարձյալ և դարձյալ տալու, տալու, տալու համար...

Եվ այս վերջին բառերուն հետ ձեռքը հետզհետե կերկննա՛ր օդին մեջ՝ անսահմանությունը ընդգրկելով։

Կոստանյան իր մտերիմներուն կամացուկ մը հասկցուց, որ եթե կարող ծնողքները՝ իրենց զավկներուն հաջորդ տարվան թոշակին վրա կանխավճար մը ընեին, իր Եվրոպա ուղևորությունը կդյուրանար և հաջորդ շրջանը ավելի եռանդագին կերպով կսկսեր։

Առաջարկը շատ բանավոր և ընդունելի դատվեցավ։ Ըլլալիքը կանխավճար մըն էր լոկ, զոր սիրահոժար ըրին ծնողքները։ Հարյուր քսան ոսկիի մոտ գումար մը հանձնեցին Կոստանյանին, որ աճապարեց հեռանալ գյուղեն և Պոլսեն, իր հոգացավը երթալ դարմանելու համար ի... Մոնթե-Քարլո։

Գյուղին երիտասարդության կողմե պատվիրակություն մը մինչև շոգենավ ընկերացավ Կոստանյանի։ Շոգենավին մեջ կոնյակ խմեցին, գինովցան, ճառեր ըսին և արտասվաթոր աչքերով հեռացան մանկավարժեն, որ իր սովորական բանաձևովը վարձատրրեց այդ միամիտ համակրությունները։

— Խո, ի՛նչ սիրուն տղամարդկանց եմ հանդիպել...

Մինչև որ շոգենավը Սերայ-Պուռնին դարձավ, երիտասարդները կամուրջին բարաբեին կոթնած, դիտեցին զայն, երբեք միտվընուն չանցընելով, որ այդ մարդը ընդմիշտ կհեռանար, երկու տարի շարունակ զիրենք խաբելե և իրենցմե առնվազն երկու հազար ոսկի կորզելե հետո՝ փոխարեն առանց բան մը տված ըլլալու։

Արձակուրդի երկու ամիսները անցան և Կոստանյան մեջտեղ չելավ։ Անձկություն մը սկսավ տիրել գյուղին մեջ. իրարու երես կնայեին՝ չհամարձակելով կարծիք մը, երկյուղ մը հայտնել։

— Ճանըմ ո՞ւր մնաց աս մարդը,— կըսեին խնամակալները։ Զարագուշակ կարեկցողներ կային.

— Ո՞վ գիտե, խեղճ մարդը կարելի է կա՛մ մեռավ, կա՛մ հիվանդանոցի մը անկյունն է։

Տրտմություն և սրտաբեկություն տուներու մեջ. տղաք կուլային, «մյուսյունիս կուզե՞նք» կպոռային, մինչև իրիկուն սլքտալով դպրոցին շուրջը, որուն գոց դրան վրա ահագին յտառերով, զորս կարելի էր կես մղոն հեռուեն կարդալ, կշողար «Կոստանյան կրթարան»-ը։

Մեկնած ատենը, խաբեբան ամենուն ալ խոստացած էր գրել՝ իր ուղևորության և իր առողջության հանգրվաններուն գրեթե ամեն վայրկյան վերահասու ընելու համար Հ... գյուղին հասարակությունը։ Հակառակ այս խոստման, տող մը իսկ գրած չէր ոչ մեկուն։

— Ատ մարդուն գլխուն փորձանք մը եկած է,— կըսեին իր բարեկամները հազիվ զսպելով արցունքնին։

— Բայց,— կտրամաբաներ ուրիշ մը,— լրագիրները կգրեին, ատանկ երևելի մարդը մը...

— Ատ ալ շիտակ է։

Քանի մը խելացիներ, օր մը, մտածեցին ետևեն մարդ ղրկել, բայց ո՞ւր. հասցեն չէին գիտեր։ Մարդը հեռացած պահուն չէր հայտնած Եվրոպայի որ ջերմուկը երթալը և ահագին Եվրոպայի մեջ մեկ մարդ մը փնտրել գտնալը դժվարին գործ էր։ Ուստի ետ կեցան այդ դիտավորությենեն։ Արձակուրդին երկու ամիսը անցավ, տասնըհինգ օր ալ, ու մարդ չի կար մեջտեղը։ Տնտեսը, համազգեստը հագած, մարտաշունչ բեղերուն ծայրերը վար ինկած, կըսլքտար դպրոցին առջև, որուն բանալին խնամակալության քով էր, պատուհաններուն նայելով, դրան ծակերեն ներս նայելով Կոստանյանը տեսնելու ակնկալությամբ։ Իր մտատանջությանը մեկ խեղճ տնտեսը շատ կնեղվեր տղաքներեն, որ օրվան մեջ քանի մը ժամ կխմբվեին դպրոցին առջև սարսափելի աղմուկ հանելով։ «Սո՛ւս, տղա՛ք,— կպոռար,— հիմա հանկարծ մյուսյուն վրա կըհասնի»։ Այս դյուրական խոսքը մեկ վայրկյան միայն կազդեր, տղաք կվերսկսեին պոռչտալ, գզվտիլ։

Դպրոցին ուսուցիչները, բա՛ն մը չհասկնալով այս հապաղումեն, շաբթվան մեջ քանի մը հեղ գյուղ կուգային, դպրոցին գոց դրանք առջև զիրար կգտնային, սիգար սիգարի վրա կծխեին, հանական ենթադրություններ փոխանակելով և իրենց անձնական կսկիծը ողբալով։

— Պե՛ ախպար, վրաս փարա չմնաց։

— Քանի՞ ամսական կուզես։

— Երեքուկես։ Դո՞ւն։

— Չո՛ր։ Քու պահանջդ ի՞նչ է։

— Չորսուկես... Եվրոպային կղրկեմ,— ըսավ,— սանդիմ չըղրկեց։

— Ղրկելիք ալ չունի։

Վարժարանին խնամակալությունը օր մը ներկայացավ Արևմուտք լրագրին խմբագրատունը Կոստանյանի մասին տեղեկություն մը առնելու հույսով։ Խմբագիրները ոչէ բան չէին գիտեր երևելի մանկավարժի մասին։ Նույնիսկ անոնցմե մեկը բավական կծու հեգնություն մը ըրավ.

— Ո՞ւր երթանք, որո՞ւ դիմենք,— կըսեին խնամակալները, անճրկած, համենալով խմբագրատան մեջ։

— Մարքո փաշային,— պատասխանեց անդիեն գիրուկ, բարակ բեղերով խմբագիր մը փորձ մը սրբագրելով հանդերձ։

Մարդիկը, իրենց ցավովը գրավված, առին քալեցին, առանց կարևորություն տալու։ Մերկերյան թևխաղ էր։ Ընդհանուր տրտմության քով անոր աղմկալի զվարթությունը չափազանց աչքի կզարներ։ Այդ տարօրինակ անհայտացումեն իրեն փառքի բաժին մը հանել ուզելով կըսեր.

— Սոնը սոնը փախուցի յա՛ տա մարդը։

Հետո հեգնող, քաշքշող հարցումներ ուներ մանկավարժին համակիրներուն.

— Շիտակը ըսեք, քանի՞ մալ եղավ ձեզի։

Քիչ-քիչ ազգ. վարժարանը կյանք առավ. ամիս մըն ալ ընդունայն սպասելե հետո, ծնողքները ստիպվեցան նորեն հոն ղրրկել իրենց տղաքները։ Վարժապետին երեսը գույն եկավ, ճարտարվարեցավ, աշխուժցավ։

Հիմա Մերկերյան առտուները նորեն սկսավ դպրոց երթալ՝ դրասեղաններուն լեցվիլը հաստատելու, տարված հաղթանակը տեղվույն վրա վայելելու համար։

— Հա՛ շոյլե,— կըսեր ամեն առտու ներս մտնելուն, հաղթական ակնարկով մը դեպի լեցուն դրասեղանները։

Հարուստները կհամառեին իրենց տղաքները տունը պահել

մանկավարժին սպասմանը մեջ հավերժանալով։ Տիկին Մարկոսյան բուռն մտահոգության մատնված էր։ «Ի՞նչ պիտի ըլլա զավակը, եթե չգա», կմտածեր աչքերը արցունքով լեցուն։ Այդ դժբախտ պատահականության մեջ, դարձյալ իր սև ճակատագրին աղետավոր դեր մը կվերագրեր։ Ժամանակ մը ի վեր խեղճ կինը՝ իր կսկիծներեն քիչ մը ամոքված, գրեթե մոռնալով զանոնք, մանկավարժին գուշակությանց հմայքին և շլացմանը մեջ կապրեր, ապագա ոսկեգույն ծրագիրներու պատրաստությամբը օրորվելով հարժամ։

Եվ ահա իր երազներուն ծիրանածիր մարմաշը հանկարծ կը-պատռեր, բզիկ-բզիկ կըլլար. ու ան նորեն կմնար հոն, սգասենյակին մեջ, խոշոր թիկնաթոռին վրա կծկված, ամուսնին կենդանագրին դեմը, որուն կուղղեր մերթ իր կսկծոտ նայվածքները։

— Ի՞նչ պիտի ըլլա, զավակս, եթե չգա։

Ու իր երևակայությունը թռիչք կառներ, անջրպետները կկտրեր կանցներ երթալ գտնելու համար մարդը, որ պահ մը կրցած է իր հառաչանքի ու արցունքի ուխտված կյանքին մեջ հույսի, խինդի, արգավանդ հույզերու արևոտ շրջան մը բանալ, իր նվաղած էությունը խանդավառել, նորեն մղել զինքը ժպտելու ապագային, նոր փառքերով, նոր սքանչելիքներով հղի տեսնելու զայն։ Սովեր ու ցամաքներ կանցներ, ամբոխներու մրջնային իրարանցումներուն և խժլտուքներուն մեջ կհոգներ, կվազեր, կհևար ու կուլար, չգտնելով այդ գերբնական, դյութող էակը, կհառաչեր, կհեկեկար ու իր հեկեկանքներուն մեջեն նոր հանկերգը կբարձրանար՝ սրտառուչ և աղեխարշ.

— Ի՞նչ պիտի ըլլա զավակս, եթե չգա։

Տղան ամեն օր կերթար լուր բերելու մյուսյուեն. մայրը տենդոտ անհամբերությամբ կսպասեր հուսալիր, բայց ամեն օր տղան կվերադառնար տխրորեն ըսելու.

— Չէ եկեր, մամա։

Օրերը իրարու կհաջորդեին ցավագին միօրինակությամբ, հատցնող, մաշեցնող սպառումներու մեջ։ Ու մարդը, հրաշագործը չէր իգար ու չպիտի գար։ Ան մոռցած էր խեղճ Հ... գյուղը, անոր փոքր տաղանդները, խանդոտ երիտասարդները, միամիտ մեծ աղաները։

Կիրակի օր մը, խնամակալները պարապ վարժարանը այցելեցին տնտեսին հետ, որուն գրասեղանին փոշիները առնել տվին։

Հետաքրքրությամբ դիտեցին պատերը, պատուհանները այդ շենքին, ուրկե իրենց զավակները այնքան փառապանծ ելք մը պիտի ընեին։ Ապակեպատ դարանի մը մեջ տեսան դեղնափայլ, հրաշագործ կարկինը, տաղանդներու ստուգիչը, և մետրաչափ գործին։ Պարտեզին մեջ սքանչացմամբ զննեցին երկաթե ձողը, որուն շնորհիվ իրենց զավակները մինչև ութսուն տարու պիտի ապրեին։ Հետո մեկնեցան, դուռը կղպեցին, բանալիքը առին։ Ու տնտեսը նորեն, իր խոշոր բեղերովը և պաշտոնական համազգեստովը դուրսը մնաց, տղաքներուն հետ, որոնք կշարունակեին մեծ աղմուկ հանել փողոցին մեջ։

— Մյուսյունիս կուզե՞նք, մյուսյունիս կուզե՞նք,— կխմբերգեին եղանակ մը հարմարցուցած։

Այս ցույցերուն՝ փողոցի տղաքներն ալ կմասնակցեին։ Կիրակի օրերը ազգ. վարժարանի աշակերտներեն շատեր կուգային, բոլորն ալ նախկին սաներ «Կոստանյան կրթարան»-ին։ Շաքարավաճառներ և պտղավաճառներ հոն վար կդնեին իրենց թապլան և աղեկ առուտուր կընեին։ Կոստանյան վարժարանին փողոցը պզտիկ տոնավաճառի մը երևույթը կառներ։

Սակայն, անակնկալ լուր մը, ամենեն անլուրը և ամենեն աներևակայելին, որ Հ... գյուղը երբեք վրդոված, ցնցած, սարսած ըլլար, եկավ հանկարծ կասեցնել բոլոր վարանումները, բոլոր անձկությունները, համատարած ապշության մը տակ չախչախելով ամեն բան։

Արևմուտք լրագիրը իր նոյեմբերի 24-ի թիվին մեջ Փարիզեն հետևյալ թղթակցությունը կհրատարակեր.

ԿՈՍՏԱՆՅԱՆ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ՓԱՐԻԶԻ ՄԵՋ

Փարիզ, 17 նոյեմբեր X...— Տեղվույս հայ գաղութը հուզող օրվան ամենամեծ դեպքն է Արգար Կոստանյան անուն հայու մը ձերբակալությունը հետևյալ պարագաներու մեջ։

Հիշյալ անձը երկու ամիս առաջ տեղս կժամանե և Փարիզի ամենեն առաջնակարգ օթելներեն մեկը կիջևանի։ Ունեցած հանձնարարականներուն շնորհիվ,— որոնց կեղծ ըլլալը հիմա երևան ելած է,— կհաջողի բարձրաստիճան և հարուստ անձնավորությանց հետ հարաբերության մտնել, թե՛ հայ, թե՛ օտարազգի, ինքզինքը գավառացի հարուստ հայ կալվածատերի մը միակ ժառանգորդը

ցույց տալով։ Վարած ճոխ կյանքը ասոր ապացույց մըն էր արդեն։ Վերջապես կհաջողի մուտ գտնել տեղվույն առաջնակարգ հայ վաճառականներեն Ք...յաններու տունը, ուր շատ սիրալիր և ջերմ ընդունելություն մը կգտնե Կոստանյան։ Իր արտաքին բավական հմայիչ երևույթովը և մանավանդ կախարդվող լեզվովը օր. Ք...յանի սիրտը կգրավե վերջապես։ Մնողքը իմանալով այս բանը, չեն ընդդիմանար իրենց միակ աղջկան նախամեծարությանը և կհավանին իրենց փեսա ընդունիլ այդքան փայլուն, հարուստ և պատվավոր երիտասարդ մը։ Մտերմությունը այնքան կասստկանա, որ փեսացուն կհրավիրվի իր բնակությունը հաստատել իր հարսընցուին տանը մեջ, ըստ որում արդեն չպիտի ուշանար ամուսնությունը։

Սակայն ասկեց իբր երկու շաբաթ առաջ, երիտասարդը հանկարծ կանհետանա զինք հյուրընկալող տունեն, անհայտացում, որ կզուգադիպի օր. Ք... յանի քանի մը հազար ոսկիի գոհարեղեններուն և իբր հինգ հարյուր ոսկիի արժեթուղթերուն անակնկալ անհետացումին հետ։ Պ. Ք...յան իսկույն ոստիկանության կդիմե, իմաց տալով գողության պարագան և միևնույն ժամանակ պատմելով իր փեսացուին հանկարծական աներևութացումը։

Ֆրանսական ոստիկանությունը անմիջապես ամեն կողմ խուզարկություններ կատարել կուտա։ Ամբողջ շաբաթ մը, Կոստանյանին լուսանկարներովը զինված, գաղտնի ոստիկաններ սահմանագլխի քաղաքները և նավահանգիստները կշրջին և վերջապես քանի մը օր առաջ Հավրի մեջ կձերբակալվի Կոստանյան ու Փարիզ կբերվի։ Կերևա թե Ամերիկա փախչելու մտադիր էր։ Գողցված գոհարեղենները գրեթե ամբողջովին և արժեթուղթերուն մեկ մասը գտնված են փախստականին գույքերուն մեջեն։ Առաջին հարցաքննության մեջ, Կոստանյան շնականորեն խոստովանած է իր ոճիրը։ Ֆրանսական թերթերը, որ այս խնդիրով կզբաղին, կըսեն թե Կոստանյան բախտախնդիր մըն է, կովկասցի, որ քանի մը ամիս առաջ Պոլսեն—ուր Աբգար Կոստանյան անվան տակ վարժարան մը հիմնած է եղեր և այդ պատրվակով ահագին գումարներ շորթած—Եվրոպա անցած և Մոնթե-Քարլոյի մեջ մեկ քանի հազար ոսկի վաստկելե հետո Փարիզ եկած էր։

Ավելորդ է պատմել թե խեղճ Ք...յան ընտանիքը ի՛նչ բուռն արտահուզության մը մատնված է, և թե այս անսովոր և ցավալի

դեպքը ի՛նչ գեշ տպավորություն մը առաջ բերած է տեղվույս հայ գաղութին վրա։

Մանրամասնությունները կհաղորդեմ հաջորդիվ»։

Թերթին խմբագրությունը այս թղթակցության կցած էր հետևյալ տողերը.

«Մեր ընթերցողներն անշուշտ հասկցան, թե ով է այս գողության հեղինակը։ Այն անձը, որ ռուսահայ մանկավարժի մորթին տակ և Աբգար Կոստանյան անունով Հ... գյուղին մեջ վարժարան մը հիմնեց կարծեցյալ նոր մեթոդի մը հիմարությունները գործադրելու համար, որոնց, անկեղծությունը պիտի ունենանք խոստովանելու, մենք ալ պահ մը հավատ ընծայեցինք։ Կցավինք որ Հ... գյուղը, որ նյութական այնքան նախանձելի դրություն մը չունի, երկու տարի շարունակ խաչագողի մը շահագործությանց առարկան եղած ըլլա»։

Այն իրիկունը, որ շաբաթ իրիկուն մըն էր, շոգենավեն ելլող թաղեցիներուն շատին ձեռքեն Արևմուտքի թիվ մը կկախվեր, բացված այն էջին վրա, ուր կփայլեր փարիզյան թղթակցությունը։ Սրճարաններու մեջ մանկավարժին համակիրները, առաջին հանդիպումով, իրարու երես կնայեին, իրարու նայվածք զննելով, ուր սա այրող հարցումը կկայծկլտար.

— Մյուսյու Կոստանյանը գո՞ղ, կարելի՞ բան է։

Բայց լուրին և իրողության պայծանձեցուցիչ ակներևությանը առջև բոլոր բարյացակամ վարանումները կփլչեին, կջախջախվեին։ Իր է՛ն կատաղի համակիրները հետին, հուսահատ կասկածներ կփորձեին դեռ.

— Նայինք ա՞ն է, աշխարհքին վրա ուրիշ Կոստանյան չի կա՞։

— Ա՛ն է, ա՛ն,— կհառաչեին ասդիեն անդիեն, տխրահունչ արձագանքի մը պես։

Կոստանյան վարժարանի խնամակալության անդամները հետզհետե հավաքվեցան մենծ աղաներու սրճարանը սգավոր երեսվույթներով, իբր թե հասարակաց մեծ աղետ մը պատահած ըլլար։ «Կարդացի՞ք, կարդացի՞ք» կհարցնեին իրարու, չհամարձակելով անմիջապես կարդացվելիք նյութին իսկությունը ճշտելու։ Մնաց որ, ի՞նչ հարկ գործին մանրամասնությանը վրա ծանրանալու, քանի որ ամենուն ձեռքը Արևմուտքի թիվը կար։ Խնամակալության անդամ մը վայրկյան մը իր մեկ հարցումովը հույսի խուլ նշույլ-

ներ արկայծեցուց իր պաշտոնակիցներուն աչքերուն մեջ, որոնք հուսահատ թարթափումներ կունենային։

— Ճանըմ, նայինք իրա՞վ է, ո՞վ է այդ գրողը. թշնամություն մը չըլլա։

— Կրնա ըլլալ, կրնա ըլլալ,— խմբերգեցին մյուսները, ճիտերնին մեկենիմեկ երկնցնելով։

Բայց իսկույն տխրությունը տիրեց նորեն. լուրին ջախջախիչ մանրամասնությունները հոն ներկա էին, անհերքելի, անուրանալի փաստերով, հաստատումներով բեռնավորված։ Ք...յան էֆենտի, որ հասած էր՝ դժգույն, ձեռքը թերթ մը, ամենեն ավելի հարվածված կերևեր աղետաբեր լուրեն, ըստ որում բոլոր թաղը իր ետևեն այդ արկածին քաշած տարած ըլլալու բարոյական պատասխանատվության մը ծանրանալը կզգար իր վրա։ Ամենքը իր երեսը կնայեին, այս անկարելի առեղծվածին մեկ բացատրությունը սպասելով սրտաթունդ։ Լռութենե մը ետքը, Ք...յան էֆենտի կտրուկ շեշտով մը ըսավ.

— Էֆենտիմ, ես աս գործեն բան մը չեմ կրնար կոր հասկընալ... Արամ,— ըսավ քիչ մը հեռուն նստող ակնոցավոր երիտասարդի մը, որ իր գրագիրն էր և որ ստիպված էր իր չորպաճին ցավերուն ցավակից ըլլալ,— սա լրագիրը մեյ մըն ալ կարդա տե մեզի աղեկ մը հասկցուր։

Երիտասարդը առավ լրագիրը, բացավ և իր քիչ մը իգական ձայնովը սկսավ կարդալ, յուրաքանչյուր հատվածին կանգ առնելով և անոր բերանացի ամփոփումը ընելով ունկնդիր հասարակության, որ բերանաբաց, ակնապիշ մտիկ կըներ, իբր թե բոլորովին նոր բան մը ըլլար իրեն հաղորդվածը։ Երբոր ընթերցումը և բացատրությունները վերջացան, իրողությունը, ահեղ ու ամոթալի, կմնար միևնույն վիճակին մեջ՝ առանց ամենապզտիկ փոփոխություն մը կրած ըլլալու գրագրին բերնին մեջ, անոր աղջկա ձայնեն։ Եվ գլուխները, հուսաբեկ, անճրկած, նորեն կուրծքերուն վրա ծռեցան, անմռունչ։

Իրենց կսկիծին և նենգության մը դյուրին որսերը եղած ըլլալու իրենց խուլ զայրույթին մեջ, միամիտ հառաչանքներով կկամենային սփոփվիլ.

— Թեք աղեկ ամա, ատ մարդը մեզի ինչո՞ւ խաբեր...

— Անանկ է յա՛, ծառքը ի՞նչ անցավ... մերին ի՞նչը առավ։

— Դպրոցին խթը՞խը կա... ան չեղավ՝ մեկալը կզրկենք...

— Ճանըմ, ան մարդը անանկ մարդ չէր երևար կոր... գազեթաճիներուն գրածին բեք անկաճ կախելու չէ...

— Սա գործը աղեկ մը հասկնալու համար աճապա Փարիզ մարդ մը ղրկե՞նք։

Կերևա, որ այս վերջին կարծիքը գերակշռեց, որովհետև բոլոր մյուս գլուխները զայն հայտնողին կողմը դարձան։ Ք...յանի գրագիրը, որ բերնին անկյունը ծաղրանքի փոթ մը ուներ միշտ, հանկարծ լրջացավ և հետաքրքրությամբ այդ կարծիքին տիրոջը նայեցավ, զուցե հուսալով որ քննիչ-պատվիրակի այդ պաշտոնը իրեն կհանձնվեր, գաղիերեն գիտնալուն։ Խնամակալության համեմատապես ողջամիտ մեկ անդամը իր մեկ կարուկ պատասխանովը չեզոքացուց սակայն հայտնված այդ կարծիքը.

— Փարիզ փարայով մարդ կղրկվի, փարայով, ո՞վ պիտի տա։

Գրագիրը կատաղի ակնարկ մը նետեց այդ մարդուն։ Ու խընդիրը փակվեցավ։

Այդ միջոցին, սրճարանին դրանը մեջ վերջապես երևցավ Մերկերյան Թադեոս աղան, Արևմուտքի ահավոր թիվը մատներեն կախած։ Անոր օձի մանր աչվըներուն մեջ սարսափելի հեգնություն մը կխնդար։ Զանիկա տեսնելնուն՝ Կոստանյանի կուսակիցներուն աչքին վրայեն ամպ մը անցավ։ Գանձապահը, ըստ սովորության, գնաց իր տեղը նստավ և տիրական շեշտով մը հրամայեց.

— Նարկիլե մը և քեյֆլի՛ խոհվե մը։

Այս «քեյֆլի» բառը լախտի մը պես իջավ խնամակալության անդամներուն գլուխին։

Կլկլակը և սուրճը երբոր հրամցվեցան Մերկերյանի, սրճարանը ձայն ձուն չի կար. ու գանձապահը սկսավ տիրող լռության մեջ որոտացնել կլկլակը, սուրճի ուժգին «ֆրոթ-ֆրոթ»-ներու ընկերակցությամբ։ Երկու տարի շարունակ՝ հակառակ կուսակցության կողմե իր վրա տարված հաղթանակին վրեժը ցհագ, պուտիկ-պուտիկ, անագորույն նրբանքով մը կխմեր հիմա սուրճի այդ շոնդալից ումպերուն հետ, որոնց յուրաքանչյուրին երկար «օ՞խ մը կըքաշեր բոլորշի սմսեղուկ նայվածքով մը դեպի դժբախտ խնամակալները, որոնք կմնային նստած տեղերնին պապանձած, ախիբեբան, ճիկ մը հանելու անկարող։

Բայց հետո, երբ որ Մերկերյան ակնոցը քթին անցընելով Արևմուտքը բացավ և սկսավ լսելի ձայնով մը Կոստանյանին ձեր-

բակալվիլը կարդալ, Ք...յան էֆենտի մեկենիմեկ ոտքի ելլելով՝ դուռը ուղղվեցավ.

— Քալեցե՛ք պե,— ըսավ իր պաշտոնակիցներուն։

Եվ Կոստանյան հանգուցյալ վարժարանին խնամակալությունը ատենապետին ետևեն դուրս ելավ, կորաքամակ, շարաշար պարտված։

— Առի՞ք մը սիստեմը,— կպոռար Մերկերյան քահ-քահ խընդալով անոնց ետևեն։

***

Հետևյալ օրը, կիրակի, տրտմության հով մը կփչեր Հ... գյուղին վրայեն։ Տուներու մեջ, ապագա տոքթորներուն, փաստաբանների, արվեստագետներուն ծնողքները, անակընկալ լուրեն շանթահարված պես իրարու երես կնայեին, իրենց կսկծալի հուսախաբության վիշտը լալու իսկ անկարող։ Կոստանյան հանգուցյալ վարժարանին աշակերտները խնդիրը հասկնալով, միամիտ համառությամբ մը կըսեին. «Մեր մյուսյուն անանկ բան չըներ, սուտ է»։ Առտուն կանուխ, դպրոցին դասատուները, որոնց շորս-հինգ ամսական տալիք ուներ Կոստանյան, վազեցին գեղ եկան, գունատ և շնչասպառ։

— Ամա՛ն, սա փարանիս ընտո՞ր ազատենք,— կըսեին խեղճերը իրարու։

Իրենց շվարմանը մեջ նախ շունչերնին դպրոցը առին, որ կըշարունակեր գոց մնալ և որուն դրանը առջև գտան տնտես աղբարը, վեր վար փողոցին երկայնքը չափելով մտածկոտ, ձեռքերը ետին կապած, Կոստանյան կրթարանին կապույտ համազգեստը դեռ վրան, մարտաշունչ բեղերը ա՛լ վար ինկած։ Մարդուկը, որ երկու տարի անդադար այս շենքին պահպանությունը կատարած էր, դեռ կհամառեր չհեռանալ անկե, իր կարևորությունը անոր մեջ և հիմակ ալ դուրսը անոր շուրջը զգալով։ «Մյուսյու»-ին վրա իր տարապայման հավատքին կոթնած՝ հակառակ բոլոր գրվածներուն և ըսվածներուն, կշարունակեր սպասել անոր։

Վարժապետները վրան վազեցին.

— Տնտե՛ս աղբար, լո՞ւր մը, բա՞ն մը, ամա՛ն...

— Ճանըմ, ադոնք սուտ հավատիներ են,— ըսավ մարդը

կանգ առնելով,— կարևորություն մի տաք, համբերեցեք, մյուսյուն պիտի գա... անանկ չըլլար նե ես խե՞նթ եմ քի հոս պտտիմ...

Մարդուն վստահելի, հաստատական խոսվածքեն՝ դասատուները պահ մը այնքան ազդվեցան, որ Արևմուտքի տված լուրին վրա կասկած մը մտավ ներսերնին։ Պարապ տեղը մարդ այդքան հեղինակորեն չէր խոսեր։ Տնտեսը, կոնակը դարձնելով, շարունակեց իր վեր վար պտույտը։ Անոր անհեղի հավատքը՝ խորհուրդով մը սքողված՝ պատկառանք կուտար խեղճ դասատուներուն, որոնք վայրկյան մը նորեն կեցուցին զայն։

— Տնտես աղբար, պ. Կոստանյանը քեզի նամա՞կ մը, բա՞ն մը գրած է,— հարցուց մեջերնեն մեկը, ակնածանքով։

— Նամա՞կը ինչ է, ես ո՞վ եմ քի ինձի նամակ պիտի գրե...

— Անանկ է նե ուրկե՞ գիտես, որ պիտի գա...

— Ճանըմ հիչ չգա կըլլա՞,— պոռաց գավառացին և վերըսկըսավ իր վեր վար ճեմքը։

Դասատուները, հեռանալով փողոցին անկյունը, խորհուրդ մը գումարեցին։

— Խոսքին կարճը,— ըսավ մեկը,— ատ մարդը գա, չգա, մենք մեր փարան կճանչնանք, հիմա կելլանք խնամակալության ատենապետին տունը կերթանք, փարաներնիս կուղենք...

— Երթանք,— ըսին մյուսները, և ամենքը մեկ Ք...յան էֆենտիի տունը գացին։

Հոն, սակայն, ամենագեշ ընդունելություն մը կսպասեր իրենց։ Ք...յան էֆենտի, գիշերը, անկողնին մեջ, պաղարյուն և անկողմնակալ ակնարկ մը նետելով Կոստանյանի պատմության վրա, սա եզրակացության հանգեր էր վերջապես, թե ատ մարդը իրավ խաբեբա մը, առավ-փախավ մըն էր, և թե ինք և իր բարեկամները անոր ճամարտակություններուն զոհ գացած էին ծիծաղելի ապուշությամբ մը։ Եվ իրավունք տվավ Թադեոս աղա Մերկերյանին, անոր վրա հիացա՛վ իսկ։ Իր հետադարձ ակնարկին առջևեն անցան բոլոր գումարները, զորս ատ մարդը իրենցմե գողցած էր։ Բարկացած, կատղած արթնցավ Ք...յան էֆենտին և բուռն կշտամբանք մը ուղղեց նախ իր զավկին, որ ատ ավազակը իրենց տունը բերած էր է՛ն առջի օրը, բոլոր աղետին սկզբնապատճառը դառնալով։ Այս տրամադրության մեջ էր Ք...յան էֆ., երբ որ դասատուները ներկայացան իրենց պահանջները ուզելու։ Նախկին ատե-

նապետը, ներսիդին ամբարված բոլոր ժանգը հեք մարդոցը վրա թափեց։ Մեկիկ-մեկիկ թևերնեն բռնելով դուրս ըրավ։

— Ջե՞ք խպնիր, պե՛, չե՞ք ամչնար,— կպոռար,— տվածներս չօգտե՞ց. գացեք իրմե ուզեցեք...

Դասատուները, ափիբերան, առին քալեցին։ Առաջին խոովքնին երբոր անցավ, մեջերնեն մեկը փիլիսոփայական առաջարկ մը ըրավ, որ պզտիկ վարանումե մը ետքը ընդունվեցավ միաձայնությամբ։

— Տղա՛ք,— ըսավ,— սա մեր առնելիքներուն վրայեն եկեք սա աղբյուրեն ջուր մը խմենք։

Եվ ջուրը խմելով՝ ելան գացին, գրեթե սփոփված...

Շաբաթ մը ետքը խնամակալության քանի մը անդամներ բացին վարժարանին դռները, գրասեղանները, դպրոցական գույքերը դուրս հանեցին. պարպեցին դպրոցը, հակառակ ընդդիմության տնտես աղբոր, որ կպնդեր թե մյուսյուն պիտի գար և եղածը տեսնելով շատ պիտի բարկանար։

— Գնա՛ գործիդ, պե՛ մարդ,— պոռացին երեսն ի վեր։—Գնա՛ գլխուդ ճարը նայե։

Սակայն, գավառացին մինչև վերջը ներկա գտնվեցավ հոյակապ գործի մը այդ անխնա ջնջումին արարողությանը, բոունցքները սեղմած, երեսը մոխիրի գույն։ Հրեաներ եկան վար գիներով ձեռք անցուցին բոլոր առարկաները։ Գրասեղանները մեծ աղմուկներով դուրս գլորվեցան դպրոցեն, որ պարպվեցավ, ամայացավ քանի մը ժամվան մեջ, և Հ... գյուղի ապագա փառքը հավերժացնելու կոչվող այդ հիշատակարանեն այլևս ուրիշ բան չմնաց, եթե ոչ պարտեզին մեջ մարմնամարզական այն քանի մը աննշան ձողերը, որոնք, Կոստանյանի հայտարարությանը համեմատ, է՛ն քիչը ութսուն տարի պիտի ապրեցնեին իրենց վրա մագլցող, գալարվող մատաղ սերունդը։ Իսկ համբավավոր կարկինը, տակնուվրայության միջոցին կորսվեցավ գնաց։

Եվ խնամակալները դուրս հանեցին տնտես աղբարը, դռները դոցեցին և բանալիքները անոր տվին, որ երթա տանտիրոջը հանձնե։

— Մեղքը չե՞, պե, մեղքը չէ՞, պե... մյուսյուն գա նե ի՞նչ պիտի ըսե,— կմրմռար մարդուկը կորաքամակ հեծկլտալով։

Տիկին Մարկոսյան տակավին բանե մը տեղեկություն չուներ։ Ջերմեռանդ երկյնամտությամբ մը Կոստանյանին վերադարձին կսպասեր, երբ երկուշաբթի օրն իսկ երկտող մը ստացավ Մերկերյանեն, որ «Մարկոսյան ընտանիքը վերին աստիճան շահագրգռող խնդրի մը առթիվ» կարճ տեսակցություն մը կխնդրեր։ Հանրմը, որ տարիուկեսե ի վեր չէր տեսած գանձապահին երեսը, հոժարեցավ ընդունիլ զայն, անոր վերջին այցելութենեն շատ հոռի տպավորություն մը պահած ըլլալով հանդերձ։ Թադեոս աղա ներկայացավ գլուխը բարձր, հաղթանակե դարձող զորավարի մը գոռոզանքովը։

— Հանրմ,— ըսավ թիկնաթոռին վրա բազմելուն պես,— դուք ժամանակին կարևորություն չտվիք ինձի, երբոր ըսի ձեզ թե ես մարգարեական ոգի ունիմ և թե ինձի խաբելը դժվարին է. բարկացաք ինձի, երբոր եկած էի ճշմարտությունը ըսել ձեզ ձեր աղեկությանը համար, բանի տեղ չդրիք իմ բարեկամությունս, խաբեբայի մը զոհեցիք ձեր ամենեն անկեղծ բարեկամը... Այսօր եկած եմ ձեզ ըսելու, հանրմ, թե գուշակությունս ճիշտ էր, թե դուք շատերու պես խաբեբայության մը զոհ եղած եք։

— Բան մը չեմ հասկնար կոր ձեր խոսքերեն, Թադեոս աղա, ի՞նչ ըսել կուզեք,— հարցուց տիկին Մարկոսյան։

— Կարդացե՛ք,— ըսավ Մերկերյան, Արևմուտքի ծանոթ թիվը գրպանեն հանելով և կնոջը երկնցնելով։

Ու կռնակը թիկնաթոռին տված՝ գանձապահը կուշտ մը ըմբոշխնեց իր փայլուն հաղթանակին բոլոր անուշությունը և անգութ հաճույքով մըն էր որ դիտեց հանրմին դեմքին աստիճանական այլայլումը, անոր գունատիլն ու կարմրիլը, ձեռքերուն դողդողալը, աչքերուն զարհուրանքի արտահայտությունը։

Երբոր լմնցուց, լրագիրը գետին ինկավ, ու երկու թևերը երկու կողմեն վար կախվեցան սրտաճմլիկ հուսահատությամբ մը։

Մեկենիմեկ, իր միտքը, էությունը հորդահոսան կերպով լեցունող հեշտալի երազները, գինովցնող պատրանքները՝ ուժգին քամիե մը հալածվող մշուշի ալիքներու պես կցնդեին, կլմննային։ Երևակայված երջանկություններու հոյակապ դղյակները վար կիյնային շառաչմամբ։ Ամեն բան կփլչեր, կկործաներ իր մեջ։

— Արշա՜կս,— մրմնջեց իր ցնորքին մեջ, իր անէացումին մեջ։

Հետո, երբոր հարվածին առաջին ազդեցությունը քիչ մը մեղմացավ.

— Իրա՞վ է կըսես, Թադեոս աղա,— կհարցներ խեղճ կինը, տեսակ մը պաղատանքի շեշտով։

— Իրավը սուտը կա՞, հանըմ, գազիերեն գազեթաները գրեր են նե հարկավ իրավ է,— պատասխանեց գանձապահը՝ կնկան այդ տարակուսանն գրգռվելով։

— Կարելի՞ բան է, կարելի՞ բան է,— կմրմնջեր տիկին Մարկոսյան՝ երկու ափերովը այտերը սեղմելով։

Պահ մը դադարե հետո, հանըմը, քիչ մը զգաստացած.

— Բայց, Թադեոս աղա,— կհարցուներ,— դուք ի՞նչպես հասկըցաք որ այս մարդը խաբեբա մըն է։

— Ի՞նչպես հասկցա մի. հանըմ, ասիկա պարապ տեղը չհերմըկցուցինք,— ըսավ Մերկերյան մորուքը բռնելով,— աս գլխեն տաք պաղ անցած է. մենք մարդոց սարաֆն ենք, հանըմ, սարաֆը։

— Մինակ ե՞ս խաբվեցա, հազարներով մարդիկ խաբվեցան,— առարկեց տիկին Մարկոսյան իր պարտությանը մեջ ինքզինքը արդարացնելու ջանքով։

— Եթե ինծի ականջ կախող ըլլար, հի՛չ մեկը չէր խաբվեր, հանըմ, հի՛չ մեկը։

Հիմակ որ իր այլայլումեն բոլորովին սթափած էր, տիկինը տեսակ մը հարգանքով, գրեթե զմայլմամբ կդիտեր ճերմակ մորուքով, աղվեսի աչվքներով այդ մարդը, որ աշխարհքին չհասկըցածը կրցեր էր հասկնալ. ու ատանկ մարդը վռնդած էր տունեն ու չէր հավատացած անոր հեռատես հավաստումներուն, արհամարհած, նախատած էր զանի։ Եվ հեղակարծ հակազդեցությամբ մը, որ ջղայնոտ կազմվածքներու հատուկ է, համակրանք մը կզգար անոր համար, խորունկ զիղջ մը կհամակեր զինքը՝ ապուշ ու ապերախտ ընթացքին համար, զոր բռնած էր Մարկոսյան ընտանիքին այդ վաղեմի բարեկամին հանդեպ։ Եթե չըլլար հպարտության ահագին տոգը, որով թխմված էր իր նկարագիրը, հոն վայրկենապես ներում պիտի խնդրեր բոլոր անիրավություններուն համար, որոնցմով փոխարինած էր Մերկերյանի բոլոր ծառայությունները և բարյացակամ դիտավորությունները։ Կրցավ զսպել սակայն տկարության իր այս թափը և պարզ խոստովանանքի մը մեջ փնտրել ուզեց իր ընթացքին ամբողջ դարմանումը։

— Շիտակ է, Թադեոս աղա, ձեր խոսքը մտիկ ընելու էի, բայց մարդս տկարության վայրկյաններ կունենա...

Այդ միջոցին պառավ խոհարարուհին դրանը մեջ երևցավ։

— Հանըմ,— ըսավ,— Բարթող աղան եկեր է, անպատճառ ձեզ տեսնել կուզե, կըսե որ շատ պետքի բան մը կա։

— Թող գա՛,— պատասխանեց տիկին Մարկոսյան երրորդի մը ներկայությունը՝ իր շփոթ ու նեղ դրության փրկությունը նկատելով։

Եվ ահա երևցավ Բարթող աղային կինի գլուխը, շերեփի պես երկար բազուկները երերցնելեն, ողջ աչքը թարթափուն, ծակոտկեն դեմքին վրա գազանային անորոշ արտահայտություն մը հրբռվանքի։

Դռնեն ներս երկու քայլ առնելով կեցավ՝ տեսնելով հոն Մերկերյան Թադեոս աղան տիկնոջ հետ մտերմական տեսակցության մեջ։ Ավելորդ է ըսել, որ մեր պատվական գանձապահը բնավ չէր ախորժեր հրեշեն, անոր ծուռ, խեղ, ցավագար էության մեջ շիլ մրցակից մը գուշակելով կապուտի և կողոպուտի հատկացված իր շիլ ասպարեզին. և վստահ էր թե անիկա նույնքան ուղղամտությամբ կհանձանձեր Մարկոսյան ընտանիքին կալվածական գործերը, որքան ինք Հ... գյուղին թաղային սնդուկը։ Ասպարեզներու հիմնական ուղղության այդ նմանությունը գանձապահին ջիղերը թունդ կհաներ։

Սակայն, հանըմը, քաջալերեց մարդուկը.

— Սանկ եկուր նստե, Բարթող աղա, ի՞նչ կա նայլաք։

Մարդուկը հառաջանալով հարգական բարև մը տվավ, գետնեն մինչև վեր, ու կամաց մը տոտոզվեցավ բազկաթոռի մը եզրը։ Եղով օսլայված իր բաճկոնին գրպանեն ծալլված լրագրի մը ծայրը դուրս կցցվեր։

— Լրագի՞ր կարդալու սկսար, Բարթող աղա,— հարցուց տիկինը հեգնելով։

— Չէ՛, ճանըմ,— պատասխանեց հրեշը քմծիծաղով մը,— ասիկա անանկ բան մըն է եղավ. ես ո՞վ եմ քի գազեթա պիտի կարդամ. ատանկ պաշտպոշ բաներու փարա տանք նե ետքը Կատարինե՞ս, Մագթաղինե՞ս... շիտակը կուզե՞ք, հանըմ,— ավելցուց լրագիրը, որ Անմուտի հավիտենական թիվն էր, գրպանեն դուրս հանելով և տիկինին երկնցունելով,— ասիկա ձեզի համար առ։ Աֆ կընեք, հանըմ, ասիկա ըսելուս, ամա միտվընի՞դ է, ժամանակով ըսի ձեզի որ ատ մարդուն հետ թերթիպլի վարվիք, զերե էս անոր պիչիմին չեմ հավնիր կոր ըսի... մտիկ չըրիք, սիրաս ալ ծակեցիք... հիմա կարդացեք։

Բարթող աղային թեր երկնցած մնաց այնպես։ Հանրմը, Կոստանյան խաղքության առթիվ իր ընդունած այս երկրորդ հարվածին տակ, որ շատ վարեն կուգար, ջախջախվեր էր։ Ու իր այդ անպատվաբեր պարտության մեջ Մերկերյանին երեսը կնայեր՝ անոր պաշտպանությունը մեջ մերկելու պես, առանց զայն գտնել հուսալու։

— Ատ լրագրին պետք չի կա, Բարթող աղա,— միջամտեց անդիեն հանկարծ զանձապահը,— դուն պահե ատ գաղեթան, ատանկ գործերու քու խելքդ չի հասնիր, հեմ ինչո՞ւդ պետք, ճա՛, ատանկ գործերու քու խելքդ չի հասնիր, հեմ ինչո՞ւդ պետք, ճա՛նրմ, քի ատանկ քեզի չվերաբերած բաներու կխառնվիս կոր, թոհա՞ֆ բան...

Մսավաճառին ձեռքը վար ինկավ լրագրին հետ մեկտեղ։ Իր դեմքը, որուն հրեշային բաղադրությունը այնքան անհարմար էր մարդկային զգացումները, հոգիին փոթորիկները ցոլացնելու, ցավագին կծկումի մը մեջ ճմրթկեցավ, պտղած աչքը երերաց, բոլորովին դուրս պոռթկալու ճիգով մը։ Գարշելի ու զարհուրելի բան։ Թադեոս աղա դողաց, ինքզինքը պահ մը կարծելով վագրի մը դեմ, որ կամփոփվի վրադ հարձակելու համար։ Իր հպարտությանը մեջ ինքզինքը սաստիկ վիրավորված զգացեր էր ան, երբ հանկարծ տեսեր էր որ այդ վարնոց ու անարժեք մարդն ալ կարողացեր էր Կոստանյանին մեջ խաբեբան տեսնել և նույնիսկ—իրեն համար ի՞նչ անկում—հանրմը զգուշացնել անոր դեմ, ճիշտ ինչպես ըրած էր ինքը։ Այս Կոստանյան զավեշտին մեջ իր դիրքը, վարմունքը եղական պահելու, անոր եզրակացությունը նախատեսած ըլլալու արժանիքը իրեն միայն վերապահելու թանկագին և դյուրագրգիռ հոգածություն մը ուներ։ Ու հիմակ, որ մսավաճառի ատ կտորն ալ կելլար ատ դափնին կիսելու իրեն հետ, մեկենիմեկ իր ամենեն քամահրելի թշնամին կդառնար, նվաստացնելով զի՛նքն ալ, իր գո՛րծն ալ։ Ա՛յս էր պատճառը որ մեկենիմեկ հանրմին պաշտպան կանգներ էր։

Բայց տիկին Մարկոսյան, իր մատակարարին այլայլումը նըշմարելով, ավելի մարդասեր գտնվեցավ.

— Շնորհակալ եմ, Բարթող աղա,— ըսավ,— որ ինծի համար հոգներ ես։ Աշխարհքի վրա ատ տեսակ բաներ կպատահին... Լրագրին դրամը հաշիվիս անցուր։ Աղջիկներդ ի՞նչպես են...

— Աղեկ են, հանրմ, ողջ ըլլաս,— պատասխանեց Բարթող աղա, հանկարծ հանդարտելով՝ իր չքնաղ աղջիկներուն նկատմամբ այդ հոգածու վերաբերումեն փայփայված։

Ու իր սովորական լալկանությամբը.

— Հանրմ, ինչո՞ւս պետք աղեկությունեի՞ն, խամեթնին կեշ, Կատարինես էրսունըվիրեք եղավ, Մագթաղինես էրսունըհինգ... ի՞նչ պիտի ընեմ, հանրմ...

Ու հանրմը իր սովորական պատասխանը.

— Աստված ողորմած է։ Բարթող աղա, ուշ կանուխ խամեթնին կխրկե, հոգ մ'ըներ...

Մսավաճառը ոտքի ելավ և տիկինին խոնարհություն մը ընելով.

— Հրաման մը ունի՞ք, հանրմ,— հարցուց։

— Չէ՛, Բարթող աղա, հանգիստ ըրեք։

Հրեշը Մերկերյանին մեկ նայվածք մը նետելե հետո դուրս ելավ, կուզը տատանելեն։

Մսավաճառին մեկնելեն հետո Թադեոս աղա լայն շունչ մը առավ, անոր ներկայությունը իր գերազանցության և հեղինակության դեմ ուեէ վտանգ մը ըլլալով։ Ու նորեն կացության միակ տերը կդառնար հիմա ինք։ Կոստանյան փախած, նշավակված, կորսված, տիկինը հաղթված, պղտիկցած, իր առջև ամոթահար, ու ինք, մյուս կողմե, մեծցած, բարձրացած, հերոսացած։

Զախողության տասը տարիներուն, հաջողության հեշտալի թվական մը կհաջորդեր։ Ա՛լ չպիտի վտարվեր այդ տաք, սննդարար բույնեն, որ միակ նպատակակետն էր եղած վաթսունամյա ծերուկի իր ա՛լ սահմանափակ և ժուժկալ բաղձանքներուն. իր լուիկի նման խոշոր, ուռեցվորած քիթը թաղային սնդուկեն դուրս հանելեն ետքը՝ տանել թաղելու էր ամիրայական պարարտ պընակներուն և անուշաբույր գինիի գավաթներուն մեջ. ու լափել, կլլել, հագենալ։

— Աս ամենը աղեկ, հանրմ,— կըսեր հոգածության սուտ և կեղծավոր շարժումով մը հետին պատնեշները գրավելու համար,— հիմա սա չոճո՞ւխը ինչ պիտի ըլլա, ա՛ն նայինք։

Ճիշտ տեղին զարկած էր։ Կինը որ միևնույն մտահոգությամբ գրավված էր, մարդուն աչքերուն մեջ նայեցավ, այդքան խորունկ հոգածություն անհնարին թվելով իրեն՝ բոլոր այն բաներեն ետքը, զորս ըրած էր այդ մարդուն։ Չքնաղ անձնվիրության և անհիշաչարության ասանկ օրինակի մը առջև չկրցավ անդգա մնալ, հրպարտության վերջին կայծը մարեցավ իր մեջ ու աչքերը լեցված, ձայնը պաղատական, մրմնջեց.

— Թադեոս աղա, ներեցե՛ք, ձեզի համար շատ անիրավ գրտ-
նվեցա... ներեցե՛ք.

— Ճանըմ, հիմա ինչո՞ւ ատանկ պարապ խոսքեր կընեք, հա-
նըմ, ներելու մերելու բան չի կա, անցածը անցած է,— կպատաս-
խաներ գանձապահը աղեկ մը տեղավորվելով թիկնաթոռին մեջ,—
չոճուխը ի՞նչ պիտի ըլլա ա՛ն նայինք։

— Ա՜խ, այո, ի՞նչ պիտի ըլլա Արշակս,— հառաչեց մայրը։—
Գ. Կոստանյանեն ա՛լ հույս չի կա։

— Տա մարդուն անունը բերաննիդ մ՛առնեք ալ,— պոռաց
Մերկերյան աքաղաղի պես տեղեն վեր ցատկելով, արյունը գլու-
խը ելած։— Ատ մարդեն ի՞նչ խեր տեսաք որ, շնորհքով կողոպ-
տեց ձեզի։

Տիկինը ա՛լ չպաշտպանեց մանկավարժը, որ իր կուռքի պատ-
վանդանեն վար ինկած էր։ Բայց ի՞նչ պիտի ըլլար Արշակը, քանի
որ այլևս չի կար Կոստանյան՝ զայն ընելու համար ինչ որ խոս-
տացած էր ընել—մեծ գիտնական մը։ Գանձապահը առաջարկեց
առժամապես ազգային վարժարանը դնել. մայրը ընդդիմացավ,
առարկելով որ հոն վարնոց տղաքներու հետ շփում պիտի ունենա-
նար։ Մերկերյան խոստացավ մասնավոր հոգածության առարկա
դարձնել տղան, մեկուսի պահել տալով զայն մյուս աշակերտնե-
րեն, որոնք կրնային ապականել ամիրային թոռան հոգին։

— Տարի մը կենա կօգտե,— ավելցուց գանձապահը,— թող
գաղիերենը, տաճկերենը ուժովցնե։

— Անկե՞ ետքը։

— Անկե ետքը աստված ողորմած է, հանըմ։ Հարկավ մեկ ճար
մը պիտի փնտրենք գտնանք քի սանկ շնորհքով մարդ մը ըլլա Ար-
շակնիս։

— Ա՜խ, ալ դո՜ւն գիտես, Թադեոս աղա, քու ձեռքդ է,—կըսեր
հեզհեզուկ հոգիով այդ մայրը, որ մեկենիմեկ կույր լքմամբ մը
անձնատուր կըլլար այդ մարդուն՝ ամենեն հեստ ու աննվաճ հա-
կառակությունը ցույց տալե հետո անոր դեմ։

— Հոգդ մ՛ըներ, հանըմ, հոգդ մ՛ըներ,— վստահացուց ծերու-
նին ոտքի ելլալով,— Արշակը անանկ մեկը պիտի ըլլա, որ ամեն
մարդ մա՜տ պիտի խածնե։

— Աստված լսե ձայնդ,— հառաչեց մայրը, աչքերը երկինք
վերցնելով։

Գանձապահը, որ «չուշանաս գաս»-ի թախանձագին հրավեր-

ներով դուրս ելած էր, կուշտ գոհունակությամբ մը ճամփան կըսեր
ինքնիրենը.

— Հա՜ շոյլե, հիմա գործը կարգին մտավ... Ամա սա Կոս-
տանյանն ալ չըլլար նե մենք ալ ատ դունեն ներս մտնալիք չունե-
ինք, մեկ կողմեն խերով բան եղավ տա մարդուն գալը։ Ի՜նչ է նե,
հիմա գործերնիս սա տղան պիտի ըլլա. մենծ մեկը պիտի ընենք,
քա՜հ, քա՜հ, քա՜հ, ինծի հարցնես նե բան մըն ալ ըլլալիք չունի
այդ տղան, ես անոր աչվընեներուն չեմ հավնիր կոր. ձգե քի, բապու-
ճըս ի վար, ի՜նչ ըլլա ըլլա... մենք մեր գործին նայինք. օ՜խ, տա
մեռոնի պես գինին ե՞րբ սանկ տոյա տոյա պիտի խմեմ... էրկու
իրեք տարի է զայիֆցա պե, սանկ հիյեթս նայե, մեղքը չէ՞ ինծի,
տահա շա՜տ ազգին ծառայելիք մարդ եմ ես,— ու աչքերուն մեջ
անարգ հեգնություն մը կցոլանար,— հա՜ յա, կավելցներ գողի
պես շուրջը նայելով, ազգը պիպիշ տալու է քի ես ալ ուտեմ, վը-
բային ալ Մարկոս ամիրային պատվական գինին նետեմ։ Բե՜հ, աշ-
խարհքիս ո՞ր կողմը ասանկ չէ, ո՜վ ասանկ գործերու կխառնվի տե
մատներուն բան մը պուլաշմիշ չըլլար։ Ամա մե՜ղք է եղեր, աստ-
ված կսրդողի՜ եղեր. ադա՜մ, Զատկե-Զատիկ շնորհքով, սրտիով
հազորդություն մը կառնես լմնցավ գնաց, օրին մեկն ալ աստված
չընե մեռնիս նե շիպ շիտա՜կ... արքայություն...

Ե.

— Ի՞նչ պիտի ըլլա Արշակս։

Տիկին Մարկոսյանի այս աղաղակը, ապարանքին խաղաղ և
խուլ անկյուններուն մեջ կրկնվելով, մահազանգի մը պես կհնչեր։
Կոստանյանի եղերակատան վախճանով, հաստույր, ամեհի հար-
ված մը իջուցված էր մայրական երևակայությանը գծած, պատ-
րաստած ծրագիրներու շեղջակույտին։ Մանկավարժը մեջտեղեն
վերցած ատանկ անակնկալ ձևով մը, հանկարծ անհետացած կըլ-
լար նաև առաջնորդը, որ գիտության փշոտ, տաժանագին ճամ-
փաներեն պիտի քշեր տաներ իր ընդերքներուն այդ սիրասուն բե-
կորը, իր կյանքը վերապրող այդ ջահը։

Ժամերով, իր սուգի սենյակը առանձնացած, էրկանը պատ-
կերին դեմը ծնրադիր, կսկիծի և պաղատանքի տագնապներով կը-
գալարվեր ան, անէության գոգեն օգնության կանչելով զանիկա
իրեն։ Այդ պատկերեն ներշնչումներ կխնդրեր հուսահատի մը պես,

որ մարդիկներեն մերժված՝ կրոնական պատկերներու կպլլվի, անոնց փրկարար միջամտությունը աղերսելով, կյանքի ամենեն աննշան ձախորդության մեջ իսկ։

Տիկին Մարկոսյանի տագնապը, իրարանցումը մանավանդ անոր համար սաստիկ էր, վասնզի տղան զգալապես կմեծնար, հարաճուն ծառի մը պես կմեծնար ու կուռճանար։ Անոր հասակին այս աղվոր սլացքը որքան, մեկ կողմե, զգվեր իր սնամիտ մոր զգացումները, մյուս կողմե, սակայն, նույնքան բուռն երկյուղով մը կպաշարեր զինքը, թե միգուցե զավակը մեծնար առանց ըլլալու ան, ինչ որ պետք էր ըլլար ու պիտի ըլլար Կոստանյանի լորձունքոտ հավաստումներուն համեմատ։

Աղջկան նուրբ աղվորություն մը ուներ հիմա Արշակ։ Աչվընեռուն լուրթ պայծառությանը մեջ մեղկ ու հրավիրող թովչություն մը կար, շեշտված արտանունքներու այն անուշ ուռեցվորումեն, զոր քունե կշտացած աչվընները միայն կունենան արթնցած ատենին։ Այտերը լեցուն և կաթնաթույր, անթերի գծագրությամբ մը կձվաձևնային թուշին վրա, մսեղ փոսացումով մը։ Քիթը, բարակ, զգայնոտ ռնգունքներովը, արծվային թեթև աշտարակումով մը կկորանար՝ ամբրայի ազնվականության արու դրոշմ մը տալով այդ ֆիզիկական դեմքին, որու ներդաշնակությունը կամբողջանար գմբեթարդ հզոր ճակատով մը, մետաքս ու դեղին վարսերու գանգրացումին տակ, և կարմիր նուրբ շրթներով, ճեղքված այն նրբարվեստ հորինվածքովը, զոր սոյանյոլ նկարիչները միայն գիտեն այնքան շեշտորեն գծել։ Բայց այդ շուրթերը կծկումներ, բացխփումներ ունեին, որ ծծելու, հագենալու ախտավոր տենչանք մը կասպացուցանեին, կանացի այդ շնորհին տակ անթեղված սանձաբեկ առնականության մը փոթորկիլը, ամեհի կիրքերու արագ, անզուսպ փթթում մը, որուն վետվետումը կզգայիր այդ թափանցիկ մորթը երանգավորող բարակ երակներու ցանցին ներքև։ Հասակը, նրբաձև սլացքով, կմատներ այն ուռճացումը, այն խմորումը, որ կարգ մը պատանիներու վրա ապշեցուցիչ արագությամբ մը տեղի կունենա, տասնչորսեն տասնյոթը տարիներու շրջանին մեջ, և որ այդ պատճառով իսկ երբեմն հանկարծ կքայքայե մարմինը, կհյուծե և կսպաննե զայն։ Արշակինը, այդ վտանգավոր շրջանին մեջ, կանոնավորապես տեղի կունենար, կենսահյութին առատությանը շնորհիվ, ինչպես վարդը, որ օրվան մը մեջ իր բաժակեն կզեղուն

իր չքնաղ թերթիկները, առույգ և կենսալի, իր թաքուն հյութերեն սնուցվելով։

Մայրը, որ օրը օրին կհետևեր իր զավկին այդ աճեցմանը, մատներովը կշոշափեր ատիկա, կհաստատեր, կգգվեր, կհոտվըտար զայն, անդամներեն յուրաքանչյուրին վրա զատ-զատ, սրտատրոփ գուրգուրանքով մը, որ մանչուն իսկ զարմանք կպատճառեր։ Իր աղջիկնության առաջին տարիներուն աղվորությունը՝ հիմակ իր զավկին վրա վերկենդանացած կտեսներ, ապուշ մանրամասնությանց իջնալով այս պարագան ապացուցանելու համար, տղուն մերկ իրանին վրա զննումներ և իրենին հետ նմանության գյուտեր ընելով։

Առտուները, շատ հեղ կանուխ արթննալով, կծռեր մանչուն վրա, որ իր քովը կպառկեր մեկ անկողնի մեջ։ Էրկանը մահվընեն հետո անկողնին ամայությենեն սարսափահար, տղան քովը առեր էր, առագաստի գգվանքները մայրական անմեղ փայփայանքներու փոխելով, առանց հոգ ընելու ուռճացումը այդ մարմնին, որ մանկականեն քիչ-քիչ առնականի կդանար։ Կծռեր անոր վրա, երբ ան մուշ-մուշ կքնանար՝ մարմնակործան, անդամներու բացարձակ լքումով։ Ու մանրակրկիտ քննության մը անձնատուր՝ զավկին վրա գտնել կմոլեգներ ինչ որ ուներ ինք իր մարմնին վրա հիմակ կամ ատենոք. անոր սրունքներուն ձուլվածքը իրենիններուն համապատասխան կգտներ, մոտեն բաղդատելով զանոնք իրարու հետ։ Ոտքի մատներուն շարվածքը նույնն էր, ինչ որ էր իրենինը, միևնույն կանոնավորությամբ և միևնույն սպիտակ փափկությամբ։ Իր խանդակաթ հափշտակությանը մեջ կհամբուրեր զանոնք, իբր թե այդ նմանությունները նոր գային ապացուցանել իրեն, թե այդ մատաղ մարմինը իրոք իր միսին ու իր արյունին արդյունքն էր, թե ան իրավ իր զավակն էր։ Հետո կբարձրանար ուսերուն, որոնց կերտվածքը ուրացումը չէր անշուշտ իրենիններուն, բայց ավելի մսուտ էր, արձանային, պիրկ, առողջ, մատաղաշ հորինվածությամբ։ Երբեմն, այդ սիրական մարմնին գեղեցիկ հարդարման հափշտակությենեն հանկարծ սթափելով, իր մարմնին ողորմելի, ծյուրած ինկածությենեն կշանթահարվեր. բումբերը կբռներ, թույլ և նիհար, և ոտքին պճեղը՝ մսազուրկ, իր նախկին կլորությենեն մերկացած, ոսկորներու տխուր ցցվածքով մը։ Հետո ուսերը, հալած ու տձև, ճիտին ու գլխուն հետ իրենց շնորհալի կապվածքին նախկին դաշն ու հոյակերտ կանոնավորությունը բոլորովին կորուսած։ Հետո

լանջքը, թույլ ու կ ֆխ ստինքներով, որոնց առույգ, հպարտ կառույցը իր հոլանի ճերմակությանը վրա շողարձակ, մեծագին մանյակներ բարձած՝ ամիրային կանանոցին փառքը կձևացներ ատենոր։

Իր շքեղությանց բոլոր այս փլատակները մատներովը կշոշափեր հիմակ, պահ մը մոռնալով զավկին ներկայությունը, շտեսնելով անոր կենսահորդ, աղվոր, չքնաղ մարմինը, որ իրն էր նոր բեն և որ իր շարունակությունն էր կերպով մը։ Մաղերը, նախկին կուռ գիսակներուն տխուր մնացորդները, թափթփած երկու քովեն, գլխիկոր, անկողնին վրա ծնկաչոք, կիսամերկ, ողբալի ու ծիծաղելի էր այդ մոր կացությունը իր զավկին քովն ի վեր, որ, անգիտակից, կքնանար մուշ-մուշ։

Եվ հանկարծ կսթափեր սրտաթունդ հառաչանքով մը. ու այդ բոլոր արյունոտ տխրությամբ իրականությունները մեկ հարվածով մոռնալու և կարծես զանոնք փոխարինելու ալ համար, խենթի պես զավկին կպլլվեր, պագնելով զայն, ուր որ հանդիպեր, մինչ տղան, ընդոստ արթննալով, աչքերու անձկալի թարթափմամբ մը.

— Մամա՛, ի՞նչ կա, ի՞նչ կա։

Կպատահեր ալ, որ մորը այդ անդամազննական զբաղման միջոցին, տղան, արթննալով, չընդհատեր զանիկա ու հետևեր անոր շարժումներուն, դեմքին տխուր և ուրախ ծամածռությանցը, աչքերը կիսախուփ, քնանալ կեղծելով և հետո՝ հանկարծ, բարձրաձայն քրքիջով մը բանալով աչքերը՝ սարսափահար ընելով մայրը իր խենթ զբաղմանը մեջ։

Ա՛լ սկսավ այնուհետև մայրական փառասիրությանց փոքրոտի գոհացումներու հետամուտ ըլլալ։ Իր տղան ցուցադրել իր քովն ի վեր, արժեցնելու համար անոր աղվորությունը, անոր տարածած ճառագայթումին մեջ՝ խեղճ քայքայված մոլորակ՝ ինքն ալ լուսավորվելու, փայլելու համար։

Իր սև թախիծի բոպեներեն հանկարծ սթափելով, խենթենալու վախեն խթանված, տենդոտ շարժումներով իր սուգի հանդերձանքներովը կծածկվեր, թեր կառներ տղան ու դուրս կնետվեր տունեն, ուր տարիներով պատնիշվեր էր իր կսկիծներուն և արցունքներուն հետ, զանոնք սաստկացնելու, դառնացնելու մոլեգնությամբ մը համակված։ Բարոյական հակազդեցությամբ մը, զավկին շեշտված և աչքառու գոյութենեն հեղաշրջվելով, ա՛լ կսկսեր քիչ-քիչ սանձ մը դնել իր ցավի ինքնամոռաց տագնապներուն, ատոնց համար մասնավոր վայրկյաններ հատկացնելով, անհնարին ըլլալով անոնց մեջ բոլորովին բաժնվիլ, հոգիին անմիջական և անհրաժեշտ սնունդը նկատելով զանոնք։

Հ... գյուղի փողոցներեն անոր արագաքայլ անցքը տղուն թեվեն կախված, շարժում մը առաջ կբերեր տուներու պատուհանները, այնքան տարօրինակ կթվեր ատիկա գեղացիներուն համար, որոնք վերջ ի վերջո մենամոլ և մենակյաց խենթ մը սկսած էին նկատել ամիրային աղջիկը։ Եվ զանիկա կորակեին ժողովրդային արտահայտիչ բառով մը, որ շատ մը բացատրություններե շատ ավելի պերճախոս կերպով կպատկերացներ այդ կինը—սընըրլը։

— Քա աս հրաշք է, սընըրլըն նորեն կանցնի կոր, նայեցե՛ք։

Եվ պատուհանները հետաքրքիր գլուխներով կծածկվեին, որոնց ամեն մեկը իր տպավորությունը կհայտներ։

— Աս խենթեն ալ ասանկ զավակ կելլա՞ եղեր... վա՛յ մեղքիս...

— Մեղք մախսմին քի ասանկ սընըրլըի մը ծառքը ինկեր է. քա ան ի՞նչ ֆիտանի պես պոյ է, սանկ նայեցեք։

— Աճապա ի՞նչ կքաշե կոր ծառքեն, վա՛խ յավրում, վա՛խ...

Այսպես, մայրը որքան աննպաստ գնահատման մը կարժանանար, տղան այնքան գթալի համակրության մը առարկա կըլլար։

Իր վերջին հաղթական այցելութենեն ի վեր, Մերկերյան բնավ չէր երևցած ամիրային ապարանքը, ինքզինքը ծանրեն քաշելով, իր անձը ավելի բաղձալի ընծայելու համար։ Տիկին Մարկոսյան որ սկսած էր ճանչնալ ծեր գանձապահին հանդեպ իր բռնած ընթացքին ամբողջ անիրավությունը, կուզեր համակրության, վստահության ցույցերով սիրտը առնել այդ ազնիվ ու երկայնամիտ բարեկամին, որ, Կոստանյան աղետավոր շրջանին, հանդուրժած էր ամեն ստորնությանց, անխուսափելի վախճանին հասնելուն սպասելով, օրինակելի փիլիսոփայությամբ մը։

Եվ հիմակ, որ զավկին ապագային մտատանջությամբը կըսպառեր գիշեր ցերեկ, կուզեր իր մոտ ունենալ այդ բարյացակամ ու հեռատես մարդը, որուն հարգը չէր գիտցած գնահատել այնքան ատեն։

Մնաց որ, Մերկերյան անհամբեր կսպասեր հրավիրվելու ամիրային ապարանքը, այլևս ոչ իբրև բարեկամ մը, այցելու մը, այլ իբրև խորհրդատու մը, պաշտպան մը, բարձրագլուխ և տիրական։

— Վրե՞ժ, վրե՞ժ լուծելու է ատ կնիկեն,— կմտածեր խորհրդարանի լայն թիկնաթոռին մեջ թաղված.— ինծի պես մարդուն

ատանկ բաներ ընել, փողոցին դուռնեն ճամփել, կըլլա՞, պե՛, ըլլալի՞ք բան է.. ամա ես նորեն աղեկ մարդ եմ. աղեկ մարդիկները աս աշխարհքիս վրա հարգ պատիվ չունին. տասնըհինգ քսան տարի է քի շան պես ազգին համար կդատիմ՝ խըյմեթս չիյտեն, պե՛. ծո՛, աս ի՞նչ ապերախտ մարդիկ են աս հայերը... Մեռնիմ նե ինծի պես ո՞ւրտեղեն պիտի գտնան... ո՞ր խենթը կուգա տե հոս ամեն օր ազգին գործերուն կնայի, փարաները կհամրե, կպահե, կխարճե... ամա իրավունքս կառնեմ եղեր մեջեն, հելպեթ տե պիտի առնեմ... բիսբիթուն ավանա՞կ ըլլամ, պե՛,— կըսեր խուլ ձայնով, պատերուն դարձած, անոնց առջև իր տասնհինգամյա ավազակությունը արդարացնելու համար, կարծես անոնք ըլլալով միակ լուռ վկաները իր այդ ապօրինի ընթացքին...— Աշխարհքին գործը տալապ է, ե՞ս եղա մեկ հատիկ շիտակ մարդ... ծո՛, ան խոշոր-խոշոր հարուստները կտեսնանք կոր նե ի՞նչ են քի, գող ավազակ մարդիկներ. մեկը սա Կոստանյանը չէ՞ր, վարպետությունով աշխարհքին մարիկը կլացուներ կոր. քանի՞ փարա ըրավ անտար պոռալ կանչելս. յըղընեներով փարա ափը լեցուցին. չափխընը սոնը սոնը յախան ծառը տվավ. հելպեթ պիտի տար, ի՞նչ ըսել է անոր ասոր փարան պետեհավա՞ վաստկված է... (և իր վրա անդրադառնալով) ինծի մի՛ նայիր, ես ուրիշ, ե՛ս կառնեմ կոր նե իմ իրավունքս է, իրավո՛ւնքս, հասկցա՞ր,— կավելցներ՝ միշտ պատին ուղղելով խոսքը, իբր թե անիկա չուզեր համոզվիլ գանձապահին պարկեշտությանը, գործած ավազակության օրինավորությանը և համառեր մնար։

Հետո կարևորագույն նյութին դառնալով.

— Նա՛, մեկն ալ սա կնիկը չէ՞, ապերա՞խտ։ Ինչե՞ր ըրած եմ անոր համար, ինչե՞ր։ Դուռը ջարկավ գոցեց երեսիս։ Եկու տե ասանկին ա՛լ աղեկություն ըրե։ Թո՛ւհ, ծո՛ Թադեոս, դուն շատ խախա, ավանակ մարդ ես, դուն ծնած ես քի ամենուն օտկին բապուճը ըլլաս, քեզի հագնին, խուլլանմիշ ըլլան, հինցունեն, տուն ծան չհանես, թո՛ւհ, էշշեկ Թադեոս... ծո վաղը մեկալն օր սատկիս նե մեռելդ ընտո՞ր պիտի վերցունեն, նայինք վրադ ճառ մը, բան մը պիտի խոսի՞ն, ազգին էմեքտարը ըլլալդ գազեթաներուն մեջ պիտի գրե՞ն, վրադ քար մը պիտի նետե՞ն, նեմինասիպե՞թ...

Ժամկոչ աղբարը եկավ ընդհատել գանձապահին մենախոսությունը.

— Աղա՛, Մարկոս ամիրային տունեն հանըմը խապար ղրկեր է ձեզի կուզե կոր։

— Շա՛տ աղեկ, կուգա ըսե։

Եվ դուռը գոցվելեն հետո.

— Հա՛ շոյլե, ետևես պտտելու է։ Ծանրեն, ծանրեն, էֆենտի՛մ, ծանրեն քաշելու է ասանկներուն հետ։

Եվ պատկառելի որովայնը փայփայելով կորոտար.

— Սանքի ատ կնկանը գինին ալ տեղ մը չի կա. կնիկեն տասըն անգամ, հարյուր անգամ էվել կարժե. անոր խաթրը կա, ելլալ երթալու է, չըլլար։

Պաղատանքով խառն հանդիմանություն մը դիմավորեց զինքը ամիրային տան մեջ։

— Մոռցա՞ր զիս, Թադեոս աղա, հիմակ որ ամենեն ավելի պետք ունիմ քու օգնությանդ,— կըսեր տիկին Մարկոսյան հուսահատի մը տխուր շեշտովը,— խոստացար մոռնալ եղածը, բայց ահա շաբաթ մըն է մեջտեղ չի կաս. ո՞ւր ես։

— Հանը՛մ, գլուխս քերելու ժամանակ չունիմ. աս եկեղեցիին գործերը միս մինակ իմ վրաս մնացած են, տակեն ելլալիք բան չէ, մեր թաղական աղաները հազըրլոպճի մարդիկ են, սյոզտե թաղական են, կնային որ Մերկերյանը շինե, շտկե, կարգադրե, իրենք ալ ճախա ընեն... հանըմ, հավատա խոսքիս, աս զավալլըն չըլլա նե՝ ժամ դպրոց գլուխնին կառնեն կերթան... տե,— ավելցուց մարդուկը դառնորեն,— խըյմեթս ալ չիյտեն, հասնողը Մերկերյանին միսը կուտե...

Տիկին Մարկոսյան միամիտ ըմբոստացում մը ունեցավ աղգային այս ուրացված, չգնահատված մեծ անձնվիրության հանդեպ, վայրկյան մը իսկ չտարակուսելով անոր անկեղծությանը, անշահախնդրությանը.

— Խենթություն է ըրածդ, Թադեոս աղա, ինչո՞ւ ասանկ ապերախտ ազգի մը համար հոգիդ կհանես, մեղքը չե՞ս, քիչ մըն ալ թող ուրիշները ընեն, ինչո՞ւդ պետք...

— Չըլլար, հանըմ, չըլլար,— կպատասխաներ գանձապահը ժպիտով մը, որուն մեջ կամավոր մարտիրոսացման ճառագայթ կար,— հոգ չէ, մենք մեր պարտքը կատարենք տե թող խըյմեթնիս չգիտնան, հարկավ օր մը չէ օր մը կհասկնան... մեր ճակատը ասանկ գրվեր է. ազգին համար դատիլ, ազգին համար մեռնիլ...

Ճանրմ, հիմա ձգե ատոնք, մենք մեզի նայինք, ընտո՞ր եք, Արշակը ո՞ւր է...

— Մեր վիճակը մի՛ հարցուներ, Թադեոս աղա,— հառաչեց հանրմը մեկենիմեկ իր անձնական ցավերուն դառնալով։— Ի՞նչ պիտի ընեմ չեմ գիտեր, շվարած մնացած եմ... Ի՞նչ պիտի ըլլա Արշակս, դուն գիտես, Թադեոս աղա, քենե զատ մեկը չունիմ որ ինծի խորհուրդ տա, ճամփա մը ցուցունե...

— Այնքան մի՛ մտածեր, հանրմ, հարկավ բան մը պիտի ընենք Արշակնիս, կօգտե որ խելացի է, աշխատասեր է, դեռ քանի՞ տարու կա... տասնըշորսը մտա՞վ...

— Մտա՛վ, մտա՛վ, անցա՛վ ալ,— հառաչեց վշտաբեկ մայրը, միտքը բերելով այն աճեցումը, որուն ենթարկված էր իր որդին։

— Ինչ ընելու միտք ունիս զավակդ, հանրմ,— հարցուց գանձապահը։

— Չեմ գիտեր, Թադեոս աղա, շվարած եմ. դուն փորձառու մարդ ես, դո՛ւն ըսե, ի՞նչ ընենք։

— Հը՛,— ըրավ մարդուկը աջ ձեռքովը մորուքը բռնելով, աչքերը գետնին հառած, իր արգավանդ երևակայության սահմաններուն մեջ ուղևորություն մը ընելու ձևով։

Հանրմը սպասեց, կախված անոր շրթունքներեն, որոնք պիտի պատգամեին Մարկոսյան գերդաստանին վերջին շառավիղին ապագան։

Թադեոս աղա, կնճռոտ հաշիվներու մեջ թաղված մարդու մը մեքենական շարժումները սկսավ ընել, աչքին մեկը բացավ գոցեց, ձախ ձեռքին ցուցամատը օդին մեջ ճոճեց, զանիկա բերելով քունքին դպցնելով, թաշկինակը հանելով քիթը խնչեց, ելավ տեղեն և ուռքին մեկը տակը առավ, թիկնոցին օձիքին վրա գոյություն չունեցող փոշիներ վանեց՝ ցուցամատը բթամատին վրայեն ուժգնորեն սահեցնելով, ֆեսը ետև առաջ տարավ բերավ և վերջապես, թիկնոցին երկու փեշերը խնամքով իրարու վրա ամփոփելեն և չոր հազով մը կոկորդը աղեկ մը մաքրելեն ետքը.

— Հանրմ,— ըսավ անոր դառնալով, ես թոհաֆ բան մը կմտմտամ կոր, դուն ի՞նչ կըսես նայինք...

— Խերո՞վ բան է, Թադեոս աղա,— հարցուց խեղճ մայրը անհնարին անձկությամբ։

— Հե՛մ շատ խերով, սա տղադ եկու շնորհքով... տոքթո՞ր մը ընենք։

— Տոքթոր մի, ի՞նչ տոքթոր,— հարցուց կինը տեսակ մը շլմորումով մարդուն երեսը նայելով։

— Տոքթոր, ճանրմ, հեքիմ, հիվանդներուն կնայի նե, չիյտե՞ս...

— Գիտեմ, բայց...

— Բայց մայց պետք չէ,— ավելցուց գանձապահը հեղինակորեն,— Արշակը հեքիմ մը կընենք, կմննա կերթա։ Հեմ հեքիմցու ալ տղա է, աղվոր, յախըշըխլը, ծանրըկլոխ...

— Հեքի՞մ, տոքթո՞ր,— կմրմնջեր տիկին Մարկոսյան զահանգական ակնարկներ նետելով շուրջը գտնված առարկաներուն, այդ բառեն սոսկում մը զգալու պես։

Գանձապահը անհամբերության շարժում մը ըրավ.

— Օ՞ֆ, հեքիմը ինչ է չհասկցա՞ր դեռ, հանրմ։

— Հասկցա, Թադեոս աղա, հասկցա, բայց Արշակս հեքի՞մ, տոքթո՞ր, կարելի՞ բան է, տե՞ր աստված,— կըսեր ձեռքերը իրարու սեղմած, ուրախության և անձկության փոխնիփոխ արտահայտությամբ։

Ճիշտ այդ միջոցին սենյակին դուռը բացվելով Արշակ երևցավ։ Եվ իսկույն Թադեոս աղային մոտ փութալով թոթվեց անոր ձեռքը, մինչ գանձապահը անոր թևեն բռնելով՝ կամաց մը անոր կոնակը կծծեր ու կըսեր.

— Թա՛մ, տոքթորցու տղա է, սանկ նայե... աչք ինքվի, պոյ պոս։ Հե՞, տղաս,— կհարցուներ Արշակին,— քեզի շնորհքով տոքթոր մը ընենք քի պարե աշխարհք ալ հեքիմ մը տեսնա։

Տղան մորը նայեցավ, մայրը տղուն նայեցավ։ Այդ տոքթոր բառը կմագնիսեր զիրենք, ըղեղնին հմայքով մը կգինովցուներ, սքանչելի կապույտ հորիզոններ բանալով աչվընուն առջև։ Ջէին ուզեր հավատալ անոր կարելիությանը, որ իրենց փառասեր, ամբարհավաճ ձգտումներուն պսակումն էր. անոր մեջ, տիկին Մարկոսյան հանկարծ կտեսներ հին փառքերուն, փառաբանություններուն, խնկարկություններուն վերկենդանացումը, փյունիկը, որ ամիրայական աճյուններեն պիտի հառներ և ամեն բան իր առջի վիճակին պիտի բերեր հասցուներ։ Տղան՝ անհուսալի, հսկա մեծության մը հայտնատեսությունը կունենար այդ բառին հնչումեն, ամբոխներուն տիրելու, զանոնք հիացնելու, շլմորեցնելու անխուսա-

փելի միջոց մը։ Իրարու նայվածքի մեջ անոնք հասկցան զիրար և մեքենաբար իրարու մղվեցան, իրարու գիրկ նետվեցան.

— Անո՛ւշ մամաս։

— Ջավա՛կս, հոգի՛ս։

Այս սրտաշարժ պատկերին առջև ծերուկ աղվեսը զգացված լռություն մը կպահեր, իբր թե կացության վսեմությունը ըմբռնելով։ Բայց իսկապես անոր աչքներուն մեջ հեգնություն մը կը-ցոլցլար, բեղերուն տակ ծաղրական խնդուքի մը աննշմարելի կծ-կումը կար, զոր անկարող էին տեսնելու մայր ու որդի իրենց ինք-նամոռաց հափշտակությանը մեջ։

Երբոր անոնք իրարմե բաժնվեցան, փոխադարձ գգվանքի մել իրենց գորովին սաստկությունը մեղմացուցած, մաման՝ իբր հաս-տատություն այն բարձր ասպարեզին ընտրությանը որ վիճակված էր իր զավկին՝ ըսավ.

— Արդեն պ. Կոստանյանը ըսած էր Արշակիս համար, որ մեծ գիտնական մը պիտի ըլլա, բժշկությունն ալ գիտության կարևոր մեկ ճյուղը չէ՞ մի։

Այս դժպատեհ վերհուշումեն՝ Մերկերյանին դեմքը հանկարծ կարմրեցավ, աչքերը կատաղորեն փայլեցան։

— Ատ չեղավ, հանըմ,— ըսավ սրտնեղած ձայնով մը,— ատ առավ փոխավ չափխընին անունը տալու չէիք հիմա... անիկա ձեր փարաները հափշտակելու համար բերնին եկածը թող տավ... թոհ՛ֆ բան... տահա չմոռցա՞ք ատ մարդը։

Գանձապահին կատաղության պատճառը ան էր մանավանդ որ իր անհետացումեն ամիսներ ետքն ալ մանկավարժը կհաջողեր իրեն դեմ կանգնիլ, իր հեղինակությունը վտանգել, իր ձեռքեն խլել օրինակի համար, ամիրային թոռը տոքթորության ասպարեզը մը-զած ըլլալու փառքը։

— Մի՛ նեղանար, Թադեոս աղա,— պատասխանեց տիկինը՝ մանկավարժը պաշտպանելե հետո, գանձապահին սիրտը առնելու փութկոտությամբ,— երբեմն կմոռնամ այդ մարդուն խաբեբա մը ըլլալը, բայց Արշակիս վրա հոգի կուտար...

— Փարայի՛ն խաթերը համար,— մռմռաց Մերկերյան։

Յորենկվան սեղանին վրա, որուն ներկա գտնվեցավ գանձապա-հը, խոսվեցավ այն նախապատրաստությանց մասին, որոնք հար-կավոր էին բժշկական վարժարան ընդունվելու համար։ Մշկաբույր գինիով ցամքած կոկորդը աղեկ մը ցողվելեն հետո, Թադեոս աղա խոստացավ ամեն բան կարգադրել առանց որ մայր ու որդի ոևէ դժվարության հանդիպեին։ Որոշվեցավ որ Արշակ տարի մը տաճ-կերենի մասնավոր դասեր առներ վարժարանին օսմաներենի ուսուց-չեն՝ մտից քննության մեջ հաջողելու համար։

Երբոր սեղանեն ելավ գանձապահը՝ երակներուն մեջ երանու-թյան հեշտալի ճառագայթում մը կզգար, երիտասարդական կո-բովի մը վերարծարծումը, զոր կպարգևեր ամիրայական երանելի գինին։ Գոհունակության փոքրիկ հառաչներ կարձակեր, փորը փայփայելով, անոր պարոնկությունը տեղավորելու պես։ Պա-ռավ խոհարարուհին, սեղանը մաքրելու պահուն դեմքի կապկային ծամածռումով մը կմռլտար.

— Աս ցնդածը, աս քյոհնեն նորեն տատանմիշ էղավ. աշկս լուս. մեկը գնաց, մեկալը էկավ։ Աստված օղորմի ինծի. ծունը թե-բեիս, հոգիս պիտի էլլա նորեն։ Աս ի՞նչ շաներես էխտիյար է եղեր, խնտացի քի տունեն վռնդվեցավ։ Ա՛լ բան չունիս նե մախ-սենեն կինի հանել։ Ա՜խ, օղորմած աստված, օր մը անտար խմեր քի ճաթեր տե էս ալ ազատեի...

Մերկերյան մեկ բառով ընտանիքին հոգեբանությունը հեղա-շրջած էր։ Վերջնականապես տիրած էր այդ տանը և անոր բնա-կիչներուն, տոքթորության շքեղ ասպարեզը գտած ըլլալու «հեղի-նակի իրավունքով», զոր այլևս անկարելի պիտի ըլլար խլել իր ձեռքեն, եթե աշխարհիս բոլոր Կոստանյաններն ալ միանային։

Թիկնաթոռին վրա հաճոյամոլ փռվածքով մը՝ գանձապահը սուրճին հոտավետ ումպերը կըմբոշխներ, ճաղատ ու փայլուն գանգը գինիեն կարմրած, մանր աչքերը՝ աղեբեկ ինքվիներուն մացառուտքին տակեն շեկ լույսերով կայծկլտուն։

— Հանըմ,— կըսեր,— սա գեղացին քի ամենեին չի քաշեր ամիրային ֆամիլիան, մաթ պիտի ըլլա, երբոր տեսնա քի Արշակը աղվոր տոքթոր մը եղեր ... ամենքը պիտի ճաթին նախանձե... Եվ եթե իմանան քի ես եղած եմ ատոր պատճառը՝ պիտի քարկո-ծեն ինծի։

Ու քահ-քահ կխնդար, միտքը բերելով ժողովրդային վիթխարի միամտությունը, քանի որ իր կատարած բժշկական այդ ձեռնադը-րությենեն ավելի թաղային սնդուկին հետ իր ապօրեն և եղեռնա-կան կապակցությունն էր մանավանդ որ զինքը արժանի կկացու-ցաներ հրապարակային քարկոծումի մը՝ տարիներե ի վեր։

Տիկինը, իր ամիրայի աղջկան արհամարհոտ ներշնչումներուն մատնված նորին, զզվանքի ջղայնոտ ծամածռումով մը կըսեր.

— Գեղացի՜ն, է՜հ, քանի փարանոց մարդիկներ են. անոնք բանի տեղ դնողը ո՞վ է, ինչ կուզեն թող ըսեն. կրնան նե թող իրենք ալ տոքթոր զավակներ ունենան։

Արդեն իսկ տիկին Երմոնե անանկ հեղինակավոր ու վստահ շեշտով մը կխոսեր, որ իբր թե Արշակ բժշկությունը կլլած լմնցուցած ըլլար, աշխարհքին նախանձն ու սքանչացումը իր վրա հրավիրելու ատիճան։

— Ճանըմ, իմանան ալ նե որի՞ն բապուճն է յա՛,— եզրակացուց Մերկերյան ոտքի ելլալով ու մեկնելով՝ հաջորդ իրիկունը նորեն գալու խոստմամբ, կենսական հարցին վրա խորհրդակցություններ կատարելու համար։

— Զավակս, արդյոք ի՞նչ պիտի վայլե քեզի տոքթորությունը,— կըսեր մաման զավկին գեղակերտ հասակը դիտելով հիացմամբ։

Եվ Արշակ, առանձին մնալով, մեծագիր հայլիին առջև իր տոքթորավայել հասակը կվներ, տարիներ ետքը զայն ավելի բարձր, ավելի կանգնագեղ երևակայելով. կզակը խարտյաշ մորուքով մը զարդարված, հանգրիֆված, գրգռիչ. արհամարհող բեղերով. հիմակվընե, իր կանխահաս պատանիի երևակայությանը թելադրական պատկերներ կներկայանային, պագշոտ մանրամասնություններով իգական մերկություններ՝ գիտության մարդուն անձատուր, անոր հանձնարարգև, կենդանատու զննություններուն կամավորապես տրվի, հու գործիք անոր ամեն քմշոտ պատվիրանքներուն, անոր մատներուն խաղտող հպանքին տակ շնչասպառ, հոսնոտ ու կլանոտ նայվածքին մագնիսված։

Դիշերը, անկողնին մեջ, մայրը տարբեր խանդով մը փաթթվեցավ իր զավկին։ Երկուքն ալ ապագա մեծ բժիշկը երազեցին։ Տեսան անոր պերևեղիկ ձեմքը գլխիկոր և ապշահար ամբոխներու մեջեն, սքանչացման աղաղակներե, օգնության պաղատանքներե և աղերսարկու հրավերներե հետապնդված։ Տեսան Մարկոսյան սրտաբոր ապարանքին վերակենդանանալը, խաղաղ ու արգավանդ պայծառությամբը տաճարի մը, ուր բեկանված կյանքեր կոզջնան, խորտակված հույսեր կվերջնայուղին, ըզձանքներ կիրականանան։ Տեսան ամեն ինչ, որ բորբոքված երևակայությունները կրնան ըստեղծել ամենեն ավելի մեծ, հոյակապ, վսեմ, անկարելի։

Իրենց սովորական խոսակցությունները այլևս այդ խնդրին շուրջը դարձան։ Մերկերյան լիուլի տեղեկություններ բերավ թե ի՞նչպես կկատարվեր բժշկական վարժարան մուտքը, թե քանի տարի կտևեր դպրոցական շրջանը և թե հարկավոր դիմումները պիտի ըներ ուր որ անկ է՝ որպեսզի առանց դժվարության Արշակ դպրոց ընդունվեր։ Որոշվեցավ նաև, որ կործը գաղտնի պահվեր մինչև մեկ տարի, ա՛լ անկեց ետքը աշխարհի շորս հովերուն տարածելու համար բժշկական աշխարհը մասնավորապես, և տառապող մարդկությունը ընդհանրապես շահագրգռող այս խնդիրը։

Թաղային վարժարանի օսմաներենի ուսուցիչը ամսական երկու ոսկի վարձքով բռնվեցավ՝ թրքերեն լեզուն սորվեցնելու համար բժշկության թեկնածուին, որ արդեն Կոստանյան կրթարանին մեջ բավական գաղափար մը կազմած էր այդ լեզվին վրա։

Այս առթիվ մասնավոր սենյակ մը հարդարվեցավ Արշակի համար։ Գոց սենյակներ բացվեցան, կարասիներու ընտրության համար, ի ներկայության Թադեոս աղայի, որ նրբացած ճաշակ մը ցույց տվավ այս պարագային մեջ։ Կարծես պաշտոնական դիվանատուն մըն էր կազմվելիքը։ Գոնվածներուն մեջեն՝ խորշ-դարանավոր լայնանիստ գրասեղան մը փնտրվեցավ, որուն վրա ամիրան ժամանակին նամակներ ստորագրած էր։ Կանանչագեղ պարտեզներու և շքեղ գյուղանկարի մը վրա նայող սենյակ մը փոխադրվեցավ ան, գետինը հին գորգեր փռվեցան, տամասկոյե թանկագին վարագույրներ կախվեցան պատուհաններեն։ Երկու մեծագիր յուղաներկ պատկերներ,— մեկը՝ Կալիպսոն ներկայացնող՝ իր հավերժահարսներեն շրջապատված, մյուսը՝ նավաբեկյալ Օդիսևսի Վոդուդիա կղզին ելլալը՝ Կալիպսոյեն ընդունվելով,— դեմ դիմաց գետեղվեցան պատերուն վրա։ Այս բոլոր առարկաներուն գետեղման վրա գանձապահը բամբարակ բծախնդրություն մը պտտցուց, վերջին ծայրը քննադատելով հանըմին ճաշակը և ամեն մեկ առարկային ձևը, դիրքը, կեցվածքը փոխելուն՝ զորավոր և պապանձեցնող մեջբերում մը ընելով.

— Ժամանակին, ողորմածհոգի ամիրան նոր սենյակ մը շրտկեր նե ինծի կկանչեր. «Թադեոս, կըսեր, քու խելքդ կհասնի առանկ բաներու, սա օտան ի՞նչ պիշիմ շտկենք»։ Լմննալեն ետքը. «է՛յ աշդ օլսուն Մերկերօղլու» կըսեր քա՛հ-քա՛հ խնդալով։

Եվ հետո իր սովորական անդիմադրելի բանաձևը առաջ կբրշեր.

— Ասիկա պաշտպող չճերմկցուցինք, պապամ,— կըսեր ալեխառն մորուքը ափելով։

Երբոր ամեն բան վերջացավ, բժշկության կոչեցյալը գնաց բազմեցավ գրասեղանին առջև, արմունկները անոր կոթնցնելով, նայելով մորը և գանձապահին, որ դիմացը կանգնած էին հիացական կեցվածքներով։

Մերկերյան հորդորականով մը փակեց սենյակին բացման արարողությունը.

— Արշա՛կ, օղլո՛ւմ, քեզ տեսնամ, նայե՛ քի մարդ ըլլաս, մամայիդ սիրտը չկոտրես, անանկ մեկ տոքթոր մը ըլլաս քի աշխարհքին մատ խածնել տաս։

— Աստված լսե ձայնդ,— հառաչեց տիկին Մարկոսյան աչքերը ձեղունին հառած։

***

Մինչև մեկ տարի, մաման դյուցազնական ճիգերու պետք ունեցավ աշխարհքին չհայտարարելու համար, թե իր զավակը թեկնածու մըն էր բժշկական գիտության, թե, ինչպես նախատեսված էր, ան իրոք պիտի ըլլար մեծ, չնաշխարհիկ մարդը, որուն ամբոխները պիտի հառեին իրենց զմայլոտ, հափշտակված, աղերսող նայվածքները, իրենց ցավերուն պալասան մուրալով։

Բայց չկրցավ գոնե Բարթող աղային իմաց տալու փորձության դիմադրել, երբ ան իր պարբերական հաշիվներեն մեկը տալու եկած էր իրեն։ Խորհրդավոր, երկչոտ ձևերով, նույնիսկ կարծես սենյակին պատերեն իմացվելու երկյուղով մը պաշարված, ինչ որ տենդոտ թարթափումներ պատճառեց Բարթող աղային մեկ հատիկ աչքին, տիկին Մարկոսյան հաղորդեց մարդուկին.

— Բարթող աղա, դուն դուրսեն մարդ չես, բայց քովդ պիտի մնա ըսելիքս, մեկը չգիտեր, գիտնալու ալ չէ, հասկցա՞ր, խոսք կուտա՞ս... Անանկ մեկ բան մըն է որ քեզի ալ շատ օգտակար պիտի ըլլա...

Հորմե հետե իր երկու շնորհալի աղջիկները իրենց ամուսնանալու բնական և օրինավոր տարիքին սահմանները գլեր անցեր էին, Բարթող աղայի կոշտուպլոշտ մարմինին մեջ նոր զգացում մը բույն դրեր էր, որ երթալով կսաստկանար, այդ սահմաններուն անհանդուրժանալուն համեմատությամբը. այդ զգացումն էր դյուրազգայությունը։ Կյանքի առօրյա ամենասովորական դեպքերը հիմակ ա՛լ հսկա խոշորացույցի մը ետևեն կներկայանային իր աչքին, համանման իմաստի մը մեջ ձուլվելով, ենթարկվելով միևնույն մեկնության։ Սովորականեն քիչ մը տարբեր փութկոտությամբ տրված բարև մը, որպիսության սանկ ժպտաշուրթն հարցում մը, շոգենավին մեջ, սրճարանը կամ տան մը մեջ շատ բնական «հրամմեցեք, Բարթող աղա» մը և ասոնց պես աննշան խոսքեր ու շարժումներ՝ հարցման խռովահույզ պարույկ մը կցցեին իսկույն անոր ցավատանջ էությանը մեջ.— Աճապա Կատարինեիս ծա՞ռքը պիտի ուզեն։

Եվ իրիկվան, երբոր տուն դառնար, խորհրդապահորեն կըսեր կնոջը.

— Խրստիկ, ես այսօր խույումճի Նշանին տված բարևին չըհավնեցա. ինծի կուգա քի միտք մը ունի. Կատարինեիս աշկ նետած է, ամա տահա ճեսարեթ չըներ կոր ուզելու. ի՞նչ կըսես, կնիկ, ուզե՞ն տա՞նք։

— Տա՞նք, Բարթիկ, տա՞նք,— կհառաչեր խեղճ կինը, որ ա՛լ կարծես ձանձրացած էր իր աղջիկներուն ամուսնության այդ անլուծելի և անվերջանալի հարցեն։

Եվ քանի մը օր շարունակ, ցորեկը խոհանոցը, գիշերը իրենց անկողնին մեջ, կխոսեին «խույումճի Նշան»-ին և անոր նշանակալից բարևին վրա, հառաչներնին իրարու խառնելով, զարմանալով թեկնածուին ուշանալուն և հաջորդ օրվան վրա հույսերնին դրնելով, մինչև որ ուրիշ մեկը, օրինակի համար, պասմաճի Գառնիկ մը գար իր մեկ սիրալիր շարժումովը վաներ խույումճի Նշանը և հույսի նորանոր տագնապներու մատներ Բարթող աղան և իր կողակիցը։

Անանկ որ, երբ հիմա տիկին Մարկոսյան խորհրդավոր ձևերով գաղտնիք մը հաղորդելու կելլար Բարթող աղային, մարդուկը, իր սովորական դյուրազգացությամբը, իսկույն իր սևեռված մտածումին կփարեր և հուզումեն խեղդված ձայնով մըն էր որ հարցուց.

— Հանը՛մ, աճապա Կատարինեիս խսմե՞թ մը ելավ...

Տիկինը, ափիբերան, բորբոքեցավ Կատարինեի այդ հավիտենական ուրվականին առջև, որ պատեհ և անպատեհ առիթներու մեջտեղ կցցվեր։

— Օ՞ֆ, ճանըմ, Բարթող աղա, ի՞նչ թոհաֆ մարդ ես. քու Կա-

տարինեդ իմ ինչո՞ւս պետք. իմ ըսելիքս ո՛ւրիշ բան էր, շատ մեծ, շատ կարևոր բան մը... օ՜ֆ, սիրաս նեղացուցիր, մա՛րդ...

Ու քեն ըրածի պես, մաման թիկնաթոռի մը վրա ինկավ, սրբամամած մանավանդ սա մտածումեն, թե իր գաղտնիքին վստահությունն ու կուսությունը ոևէ Կատարինեի մը ամուսնության ապուշ գործին հետ շփոթվելու նախատինքը կկրեին։

Բայց մեկենիմեկ, փոխված, անուշցած, ոտքի ելլալով մոտեցավ մսավաճառին, որ նախատինքին սաստկությանը տակ սահմրակած մնացեր էր. և ձեռքովը անոր ուսին զարնելով մտերմորեն.

— Բարթող աղա, Արշակս տոքթոր պիտի ըլլա... տոքթոր, կը հասկնա՞ս, հեքիմ, բժիշկ...

Եվ մարդուկը, շոշորդի պես, մեքենաբար, կարծես զառանցելով, կրկնեց.

— Տոքթոր, բժիշկ, հեքիմ...

Բայց հանդարտ մնաց, առանց մատնվելու ուրախության և սքանչացման այն տագնապին, զոր կնախատեսեր հանրմը։ Փորձը անհաջող ելած էր, այդ առաջին փորձը, որուն վրա այնքան հույս դրած էր խեղճ կինը։ Անհագորեն դիտեց մարդուկը, հուզում և հրճվանք փնտրելով դեմքին վրա. բայց անոր պղնձագույն մորթը, խանձած ու խաշվրտված, ժայռի պես անշարժ մնաց, անդգաց և պա՜ղ։

Եվ, անճրկած, ինկավ նորեն թիկնաթոռին վրա հառաչ մը կելլելով։ Սակայն, գործակատարը սթափեցավ իր շլմորումեն.

— Յա՜, ըսել է քի, հանրմ, Արշակը տոքթոր պիտի ընես. էհ, շնորհքով զենաթ է. աֆերիմ, Արշակ, աֆերիմ, օղլում, հա՜, մարդ եղիր նայինք... Ուրիշ ըսելիք մը ունի՞ք, հանրմ, այսօր գործերս շատ են, տահա մյուշտերիներուս չգացի... մնաք բարով, հանրմ...

Եվ կուզը խաղցնելեն առավ քալեց։

Այսպես ուրեմն, իր զավկին տոքթորությանը ավետումը, առաջին փորձով մը կատարյալ ձախողվածի կմատնվեր։ Իր մայրական ռանայնամիտ, կույր եսասիրությունը՝ խանդավառ բացագանչություններու, բուռն զարմացումներու և ուրախության ճիչերու կրպասեր այն առաջին անձեն, որուն պիտի տրվեր այդ ավետման թենթարկվելու բարեբախտությունը։ Բարթող աղա «շնորհքով զենաթ է»-ի տափակ և շուկայիկ բացատրությամբ մը՝ հանրմի փքուռուց ակնկալություններուն անգութ կից մը տվեր էր։

— Ան շոշորդ ցավագարին մեկն է, ան առանկ բաներե լը-

հասկնար,— կմտածեր տիկին Մարկոսյան.— ան ի՞նչ կերպարանք է, մարդու կնմանի՞... հանցանքը իմս է որ առանկ վարնոց մեկը գործակատարս ըրեր եմ...

Սակայն, որքան որ ալ իր գործակատարին ֆիզիքական խեղությունը հիշելով և զանիկա նախատելով կշանար մխիթարել ինքզինքը, այդ ձախողվածին հանդեպ, իրողությունը հետզհետե կըմեծնար, կանհեթեթնար իր մտքին մեջ, հաճախանքի մը համեմատությունը առնելով, բուռն մտատանջության մը հանգամանքը. «շնորհքով զենաթ»-ը ըղեղին խորշերուն մեջ կպտտկեր՝ կսկծալի ասղնտկումներով, մարմինը պրկելով ցավոտ սարսուռներու մեջ։ Եթե բժշկությունը միայն շնորհքով «զենաթ» մըն էր և չուներ այն վստահությունը, փայլը, փարթամությունը, զորս տալու էր իր զավկին, այնքան արժանի անոնց, ինչո՞ւ ուրեմն Մերկերյան ատոր մղեր էր իր որդին։ Այդ մեկ որակումով որուն նշանակությունը հետզհետե կշեշտվեր, կճշտվեր իր մտքին մեջ, բժշկությունը, իրեն համար, կդառնար, կելլար ոսկերչության, կոշկակարության պես բան մը, որոնք անշուշտ «շնորհքով զենաթներ» էին։ Բայց ինք իր զավկին համար շնորհքովը չէր որ կուզեր, հապա մեծը, փառավորը, շքեղը։

Կպտտեր սենյակին մեջ, ձեռնամած, աչքերները գետինը թափառուն, ահեղ կսկիծ մը զգետնվածի պես։

— Բժշկություն, ոսկերչություն, կոշկակարություն, ասոնք. ամենքը մեկ բանե՞ր են,— կմրմնջեր, այնքան շփոթած, այլայլած, որ չէր կրնար այս հարցը լուծել։

Հանկարծ, աճապարանքով, դուրս ելավ սենյակեն, իջավ սանդուխներեն գետնահարկը, խոհանոցեն ներս մտավ, ուր պառավ խոհարարուհին, թևերը սոթտած, կերակուրի պատրաստությամբ կզբաղեր։

— Նեկտա՜ր,— ըսավ տիկին Մարկոսյան, շնչասպառ,— քեզի բան մը հարցնեմ, շիտակը պիտի ըսես, հա՞, շիտակը պիտի ըսես...

Պառավը, որ ծռած էր, շտկեց իր կմախքը, մեկ ձեռքը դանակ մը, մյուսը՝ թացանավոր շաղախե մը լիպիկցած։

— Շիտակը պիտի ըսե՞ս,— պնդեց նորեն հանրմը, տեսնելով պառավին շփոթած լռությունը։

— Կըսեմ, հանրմ։

— Հեքիմությունը ընտո՞ր բան է։

Խոհարարուհին, որ այսքան միամիտ հարցումի մը անշուշտ

չէր սպասեր, կնոջ երեսը նայեցավ, ինչպես պիտի նայեր խենթի մը։

— Հեքիմությունը, հանըմ,— պատասխանեց վարանմամբ,— հիվանդներուն կնայի կաղեկցունե...

— Բայց ընտո՞ր բան է, աղե՞կ արհեստ է։

— Է՛հ, ի՛նչ ըսեմ, հանըմ, մարդ կա քի ֆայտան կտեսնա, մարդ կա քիչ չի տեսնար... (Եվ հանկարծ իր մեկ հեռավոր կսկիծը հիշելով) Ֆուլյանեիս կլոխը հեքիմները կերան, հանըմ, կյուզելիմ Ֆուլյանեիս... ա՜խ...

Եվ համեմատ թաց ձեռքին կոնակը աչքին մոտեցուց, որուն կոպին վրա անմիջապես արցունք մը թառեր էր։ Ու ծռեցավ նորեն իր սանին վրա, Ֆուլյանեին կսկիծովը համակված, մոռնալով հանըմը և անոր հարցումը, որ ավելի քան երբեք կկնճռոտեր, մթին ու մեռելական գույն մը կառներ։

Պառավ կուրծքե մը արձակված կսկծալի այդ կոծը ու կաթիլ մը արցունքը, որ սողացեր էր նվաղկոտ բիբի մը վերև, այլայլմեր էին տիկին Մարկոսյանը, որ կփախչեր ատկե, կարծես հալածվելով ողբերգական աղաղակեն.

— Ֆուլյանեիս կլոխը հեքիմնե՞ր կերան...

Իր սենյակը ելավ դժգունած, ճակատը օրհասական քրտինքներով ողողուն։ Հիմա ուրիշ մտածում մը, քստմնելի, մահացու, կրհաճախեր իր միտքը։ Այդ «հեքիմները», եթե չէին ալ սպաննած, բայց չէին կրցած իր հոգեհատոր ամուսնին կյանքը փրկել։ Ինչո՞ւ, ինչո՞ւ չէին բժշկած իր սիրականը։ Եվ ո՞վ կվստահեցուներ, թե այդ մարդիկը չէին նպաստած անոր մահանալուն։

— Զավակս տոքթո՞ր,— կմրմնջեր, պատուհանին վարագույրներուն տակ կծկված, իր ահաբեկ աչվերները հորիզոնին հառած,— զավակս տոքթո՞ր, այսինքն մարդասպա՞ն, ոճրագո՞րծ... չէ՛, լալիր... չե՛մ ուզեր... ըլլալիք բան չէ՛։

Վախով ու ցավով համակ, վազեց իր զավկին մոտ, որ առանձին կաշխատեր իր սենյակին մեջ։

— Շո՛ւտ, Արշակ, վազե Թադեոս աղային հոս կանչե, կարևոր բան կա, շո՛ւտ, շո՛ւտ, շո՛ւտ...

Տղան մորը այլայլած դեմքը տեսնելով, իսկույն ձգեց աշխատությունը և վազեց Թադեոս աղային ետևեն...

Մերկերյանին հանրածանոթ կեդրոնատեղին ժամն էր։ Արշակ հոն վազեց. ժամկոչները ըսին թե գանձապահը քիչ մը առաջ դուրս

ելած էր սրճարան երթալու համար։ Տղան խնդրեց անոնցմե մեկեն, որ իսկույն ետևեն երթա և ըսե որ ամիրային տունեն ստիպողաբար զինքը կուզեն։ Ժամկոչը, շալվարին հետույքը ժողվելով, վազեց։ Արշակ սպասեց հոն, անցած ատենը գանձապահին ընկերանալու համար։ Քառորդ մը չանցած փողոցին ծայրեն երևցավ Մերկերյանին կարմիր, խոշոր քիթը, որ ահագին վնաս կհասցներ դեմքին և գլխին կլորությանը։ Ժամկոչը քայլ մը հեռուեն կհետևեր։ Երկուքն ալ կհևային։ Տղուն անհամբերության նշանները տեսնելով՝ գանձապահին դեմքը հեռվանց լուռ հարցման մը անձկագին ծամածռումներուն մեջ կխորտակվեր։

— Ինչ կա, Արշակ,— հարցուց հևհիև, երբոր մոտեցան։

— Չե՛մ գիտեր, մամաս շուտով ձեզի կուզե կոր։

Վազեցին։ Շատ չանցած տուն հասան և սենյակ ելան, ուր մաման կճեմեր անձկալից երևույթով։

— Խեր ըլլա, հանըմ,— ըսավ Թադեոս աղա ներս մտնելով։

— Տղա՛ս, դուն քու սենյակդ գնա, մենք խոսք ունինք հոս,— ըսավ տիկին Մարկոսյան իր զավկին, որ հեռացավ, բան մը չըհասկնալով այդ իրարանցումեն, որուն նյութը ինք կկազմեր առանց գիտնալու։

— Է՛, ըսե նայինք, խե՞ր է, հանըմ,—կրկնեց Մերկերյան թիկնաթոռի մը վրա իյնալով պարտասած։

— Թադեոս աղա,— պատասխանեց հանըմը տիրական շեշտով մը,— միտքս փոխեցի, Արշակս տոքթոր չեմ ուզեր ընել։

— Ինչո՞ւ, ի՞նչ կա, ի՞նչ եղավ։

— Տոքթորությունը շատ կարևոր բան մը չէ, տղաս ավելի մեծ, փայլուն ասպարեզներու արժանի է, մանավանդ որ տոքթորությունը աղեկ անուն մ'ալ չունի, ամեն մարդ կըսե, որ տոքթորները մարդ կմեռցնեն... տղաս մարդասպա՞ն ընեմ։

— Ճանըմ, ո՞վ խալթ կերավ ատիկա,— պոռաց Մերկերյանը իրական զայրույթով մը բորբոքած, տեր ողորմյա ինձ աստված, ճանըմ երեկվընե այսօր ի՞նչ դարձավ, ի՞նչ եղավ, մե՞կը եկավ, բան մը ըսավ նորեն... ո՞վ է ըսեր, որ տոքթորությունը կարևոր արհեստ չէ, անկե ավելի մեծ, բարձր, պատվավոր արհեստ մըն ալ կա՞... կաղաչեմ, տիկի՛ն, խելքդ գլուխդ ժողվե, աղեկ մը մտմտա, տղուդ արունը պիտի մտնաս, մտիկ ըրե իմ խոսքիս... տոքթորները մարդ կմեռցունեն էղեր, ո՞վ խալթ կերավ. մարդ կողջնցունեն, մա՛րդ, հանըմ, իմ քրոջս աղջիկը մեռնելու բան էր, ազատեցին,

յա՞ ե՞ս, երկու անգամ կմեռնեի կոր տե՛ս ատ չհավնած տոքթորներդ հոգի տվին...

Եվ հանկարծ ընդհատելով իր խոսքը և հանքմին դառնալով ուժգնակի.

— Ճանը՛մ, սա ըսե՛ ինծի, ուրկե՞ ուր մինոքդ փոխվեցավ հանքմ։

Տիկին Մարկոսյան՝ գանձապահին կրքոտ ու աքսմտած այս հանդիմանականեն ազդվեր էր իսկույն և տրամադրություններդ փոխվեր էին։ Ուստի թուլցավ, խոստովանեցավ.

— Ես առտու Բարթող աղան եկավ, ան ըսավ որ...

— Բարթող աղա՞ն, սա՞...

Այս անունը լսելուն, գանձապահը քիթը բերանը թթվեցուց...

— Ըսավ որ, գեշ զենաթթ չէ... չուրախացավ, իրար չանցավ, ի՞նչ գիտնամ...

— Անանկ վարնոց մարդիկը ատանկ բաներե՛ կհասկնա՞ն, հանքմ...

— Ետքը մեր Նեկտարին հարցուցի, ան ալ ըսավ. Ֆուլյանեթս կլոխը հեքիմները կերան...

— Պարապ խոսք,— ըսավ Մերկերյան,— անոր Ֆուլյանեն պիտի մեռնի եղեր, մեռեր է... հեմ ատանկ ցնդի փնդի մարդոց խոսքերուն ի՞նչ կարևորություն կուտաս կոր։ Ինծի չհարցունե՞ս, անոնք տոքթորը ի՞նչ գիտեն, հեքիմը ի՞նչ գիտեն... բժիշկը ի՞նչ գիտեն... Նայե՛, այսօրվան օրս տոքթոր Քյաթիպյան կըսեն մատով կցուցունեն կոր. թագավորին, փաշաներուն դիմացը կելլա, նավզերնին կբռնե կոր. ո՞ր զենաթթ ատ մարիֆեթը ունի, հե՞... Զավակդ վաղը մեկալնօր մեծնա, ատանկ մեկ նշանավոր բժիշկ մը ըլլա ու ծառքի վրա պտտցունե՛ նե՝ քեֆդ չի՞ գար... համմե՞... Սանկ լեռան պես տոքթոր Մարկոսյան տեյի անունը աշխարքին պերանը անցնի նե՛ յաղ չե՞ս կապեր, հանքմ, սա՛ ըսե...

Բժշկական արհեստին համար Մերկերյանին հյուսած այս պերճախոս ջատագովականը վանեց տիկին Մարկոսյանին հետին վարանումները, երկյուղի մնացորդները։ Դեմքը պայծառացած, աչքները փառասիրության հեղակարծ զարթնումին շողյուններովը ասի, կժպտեր, ինչպես մանուկ մը, որուն ափերով շաքար և ծրարներով խաղալիք կխոստանան։

— Ըսել է թագավորին դիմացն ալ կրնա ելլալ,— 22նջաց, հրճվանքեն խղդվելով։

— Հա՛րկավ, ինչո՞ւ չէ, ատանկ երևելի տոքթոր մը ըլլալեն ետքը... նայիս քի Սուլթան մըն է կհիվընդնա, թագավորը յավեր մը ղրկե տոքթոր Մարկոսյանին, տոքթոր Մարկոսյանն ալ կելլա տարայ կերթա, լմնցավ գնաց, էղավ թագավորին հեքիմը, օրին մեկն ալ, ատուված խամեթ ընե նե, թագավորին հեքիմ պաշին...

— Հեքիմ պաշի՞ն,— կրկնեց տիկին Երմոնե երազուն։

— Ի՞նչ գիտցաք յա՛,— պնդեց Մերկերյան՝ անսահման, կապույտ թաշկինակ մը հանելով գրպանեն և քիթը անոր մեջ մաքրելով մեծաժխոր շառաչմամբ, կարծես պաշտոնական հանգամանք մը տալու համար իր աներևակայելի հայտարարությանը։

Երբոր քիթին մաքրագործումը ավարտեցավ, Մերկերյան, իր ըրած ճիգեն դեռ կասկարմիր՝

— Բան մըն ալ կա, հանքմ,— վրա բերավ,— չեն ուզեր քի քու զավակդ մենծ մեկը ըլլա, զուրցվի, անուն ունենա. կհասկնա՞ս, թեախանձին, չեն քաշեր. դուն ալ միամիտ կնիկ, կխաբվիս անոր տարբ շաղաթանություններուն։ Դուն ինծի մտիկ ըրե մինակ, բաբմամդ ե՛ս եմ, ինչ մարդ ըլլալս սա Կոստանյանին գործին մեջ արդեն հասկցար, չէ՞ մի...

Մնաց որ, գանձապահին այդ հորդորները հեռի էին տիկին Մարկոսյանին ուշը գրավելե, անիկա քանի մը վայրկյանե ի վեր ամբողջովին գրավված, հափշտակված ըլլալով «հեքիմ պաշի»-ի մոգական, շողշողուն հեռապատկերովը։ Ու այս կետին վրա ավելի բարբանվիլ ուզելով՝

— Թադեոս աղա,— կհարցներ,— հեքիմ պաշին մեկ հա՞տ մը կրլլա։

— Հարկավ, ի՞նչ ըսել է։

— Մինակ թագավո՞րը կնայի։

— Մեյ մըն ալ պալատականները։

— Ամսականը շա՞տ կրլլա։

— Է՛հ, վեր վար երկու երեք հարյուր ոսկի մը ըլլալու է։

Ցորեկվան սեղանը պատրաստ էր. վարեն, խոհարարուհին զանգակ մը կհնչեցուներ, ընդհատելով այդ անուշ, գինովցնող խոսակցությունը։

Սեղանին վրա, ա՛լ բնավ խոսքը չեղավ «հեքիմ պաշի»-ին, վասնզի ապագա «հեքիմ պաշի»-ն հոն ներկա էր։ Մինակ տիկին Երմոնե, խորունկ մտածությանց մեջ թաղված, հազիվ թե կերավ,

գերազանցությունը երեսնուն պոռալու ձևով։ Նավամատույցին վրա, շոգենավին մեջ, գեղին ջոջերը, ամիրայական տան հին հաճախորդներ, կշրջապատեին աղվամազոտ ուսանողը, անոր ինքնասիրությունը փայփայող քնքույշ խոսքեր, հարցումներ ուղղելով անոր։

— Հա քե՛զ տեսնանք, տղաս,— կըսեին,— գեղերնուս մեջ շընորհքով տոքթոր մը չի կա, պարե դուն եղիր։

Ուսանողը կփքանար, կժպտեր վեսՀ ժպիտով մը, իր վրա դըրված այդ հույսերը պսակելուն ավելի քան վստահ։

Մաման, սրտին հրճվանքը և հուզումները պայթելու պետքեն մղված, քանի մը հին բարեկամություններ վերահաստատեց՝ խընամոտ ընտրությամբ մը։ Իր այդ վաղեմի բարեկամուհիներուն հետ, ընդունելության մեծ սրահին մեջ, քանի մը անկարևոր ասուլիսներե հետո, տիկին Երմոնե կհաջողեր խոսքը բժշկության բերել հանգեցնել ու ծանրանալ անոր վրա, անոր բարիքները թվելով, բայց միևնույն ժամանակ չհավնելով հրապարակի բժիշկներուն և ասանկով՝ տոքթորցուին անվան շուրջը հիմակվընե բեքլամի անարդ դրություն մը հաստատելով։

Առաջին տարվան լրանալուն, Արշակի մարմինը անանկ խիզախ ուռճացում մը ունեցավ, իր անդամները անանկ համեմատություններ առին, որ մաման ակամա ստիպվեցավ զատ անկողին մը պատրաստել անոր համար։ Աշխատության սենյակին կից ուրիշ երկու սենյակներ տղուն տրամադրությանը տակ դրվեցան, մեկը ննջասենյակ, որ ապարանքին ընդարձակ պարտեզին վրա կնայեր, և մյուսը՝ ընդունելության սրահ, պատշաճ հարդարումով։ Իր գրկեն զատելով զավակը, տիկին Մարկոսյան բարոյական ուրիշ գոհացում մըն ալ կունենար. խելահասության, լրջամտության գաղափարը, զոր կներշնչե տղա մը, երբոր մորը թևերուն գուրգուրացող պաշտպանությենեն կբաժնվի, վտանգներու դիմագրավելու ինքնավստահությամբ մը լցված։

Մանավանդ որ Մերկերյան ալ, այս մասին իրեն խորհուրդ հարցվելով, կշտամբալից եղավ։

— Ճանըմ, տիկին, ատ խոճաման տղան ինչո՞ւ քովդ կառնես կպառկիս, կվախնաս քի կգողնա՞ն. մեղա՜ տեր, մեղա Հիսուս... հեմ չը վայլեր, հանըմ, չվայլեր,— ավելցուց գլուխը օրորելով խորհրդավորորեն։

Տոքթորցուին ծառայությանը համար սպասավորի մը պետքը անհրաժեշտ դատվելով Թադեոս աղա՝ եկեղեցիին մեկ ժամկոչին

մինչ գանձապահը միսի շերտեր, հավի զիստեր կլափեն վար կիջնեցներ լոիկ մնջիկ, ֆշալով, մշկաբույր գինիի ոռոգումներով։

Ճաշեն հետո, գանձապահը ստիպողական գործեր պատրվակելով առնել քալել ուզեց։ Փողոցին դրան առջև, ուր իջավ հակառակ իր սովորությանը, տիկին Մարկոսյան վերջին տեղեկություն մը հարցուց.

— Նշան կառնե՞ն հեքիմ պաշիները։

— Նա՛, աստա՛ր աստա՛ր,— ըսավ գանձապահը ափին կեսը ցուցունելով։ Մեճիտիե՞ մի կուզես, օսմանիե՞ մի...

Ճամփան, սմսեղուկ ծերունին մորուքին տակեն կխնդար. «Ես կնիկը երթալով կփախցունե կոր... ամա ինչուս պետք, մենք մեր գործին նայինք...»։

Ատ գիշերը և ուրիշ գիշերներ ֆանտաստիկ երազներու ցնորական խառնակության մը մեջ տապլկտեցավ խեղճ կինը. ջահադարդ, լուսաշող, աղմկալից պալատներու մեջ ոսկեղեն կառքեր կերթևեկեին փրփրերախ ամեհի ձիերե լծված, շքեղազգայց պալատականներու ճոխ թափորներ, դիցանուշներու պես իշխանուհիներ, կելևէջեին, կվազեին, կսուրային և կպոռային. «Հեքիմ պաշին, հեքիմ պաշին»։ Բազուկներ կերկննային, պաղատանքներ կարձակվին. և հանկարծ, փառավոր լանտոյի մը մեջ, զոր կքաշեին ոսկենճամուկ ասպազեններով նժույգներ, կերևար մեծ բժշկապետը... և հեք մայրը, խելացնոր, ընդոստ կարթննար «զավա՜կս, զավա՜կս» աղաղակելով. և տեսնելով զավակը հոն իր քով, քունի վայելքին անձնատուր, պալատներեն ու այլ բոլոր ճոխություններեն շատ հեռու, կիյնար անճրկած, հիասթափ, հուսահատ, մարմնասարսուռ։

Հաջորդ տարվան դպրոցական վերամուտին, Արշակին բժշկական վարժարանը մտնելու գործողության մեջ Մերկերյան շիլ և խարեպատիր դեր մը կատարեց։ Տասը ոսկիի ծախք մը ցույց տվավ մուտքի համար։ Տիկին Մարկոսյան անտրտունջ վճարեց։ Ատ գումարը գրպանեց Թադեոս աղա, իր խղճին առջև՝ եկեղեցիի հաստույթներուն սակավությունը արդարացում դնելով։

Բայց Արշակ վերջապես մտավ բժշկական վարժարանը, ու այս դեպքը Հ... գյուղին համար դադրեցավ այլևս գաղտնիք մը ըլլալե։

Առտու իրիկուն, պատանի Արշակը, թևին տակ փոքր պարուքա մը, կանցներ Հ... գյուղին փողոցներեն, վերեն նայելով իր Կոստանյանի նախկին դասընկերներուն, անոնց վրա իր վաստակած

գավառեն նոր եկած եղբորորդին, տասնըվեց տասնըյոթը տարեկան Խաչոն, կարմիր, առույգ այտերով, շվարած նայվածքով տղամը, առավ բերավ հանրմին, որուն դեմը բարև կեցած՝ գավառացին մարմիկ ըրավ անոր պատվերները, այսմավուրքի չափ երկար ու մանվածապատ, մեծագույն մասեն բան մը չհասկնալով, բայց ամենուն ալ հավանության նշաններ ցույց տալով։ Առ այժմ Խաչոն ալ հավանության նշաններ ցույց տալով։ Ամ այժմ Խաչոն ալ հավանության նշաններ ցույց տալով։ Ամ ուտելու և պառկելու փոխարեն պիտի ծառայեր. ապագային երբոր պոր ըլլային իրմե, մանավանդ երբոր տոքթորցուն տոքթոր ըլլար... պիտի վարձատրեին դինքը։ Խոհանոցին կից ընդարձակ մառան մը, ուր քանի մը հինումին կարասիներ նետված էին և որ ձեղունին մատ բացված լուսանցույցե մը միայն կլուսավորվեր, սպասյակին ննջասենյակ որոշվեցավ։ Պառավ խոհարարուհին՝ քինալից ու խոժոռ նայվածքներ ուղղեց գավառացի պատանիին.

— Վո՜ւյ ծուները թեբեիս,— մռլտաց,— գլխուս քիչ փորձանք կար, փորձանք մըն ալ աս էվելցավ...

Խաչո՝ սեղանին վրա, տոքթորին ետևը պիտի կենար հնազանդելու համար անոր շարժումներուն և հրամաններուն, և ճաշին ավարտումեն հետո խոհանոցին մեջ փորը պիտի կշտացներ սանրուն էվելցուկներովը։

Հեք պատանիին, իր ժամկոչ հորեղբայրը կանխավ ապառնալիս հրահանգներ տված էր այն ասպարեզին համար, ուր կենտեր զանիկա, և մասնավորապես սա ահավոր հեռապատկերը գծած էր տեսր գահանդական նայվածքին առջև. «Խաչո՜, ատ ատենի վանդվիս նե՝ անոթի կմեռնիս, ըսեմ քեզի, ժամուն մախտանք կնստեմ հոն կսատկիս...»։

Հեք պատանին, չորս կողմեն ընդունած պատվերներու տարատարափին տակ սարսափով մը համակված, ինքնաշարժ, լուռ, միտուր ժեստեր կուտենար, արձակված ամեն մեկ հրամանին ցնցվելով, մարմինը առաջ նետելով վերահաս վտանգե մը ազատվելու պես, բիրտ, կոշտ, անասնական։

Արշակ, որուն մեջ մանկական չարաճճիության տեղ անողորմ ու խստասիր, տեղեղության մը բնազդները կարթնային տարիքին հետ, գավառացի տղուն այդ անտաշ, կրավորական, երկչոտ շարժուձևերուն մեջ զվարճության մեղավոր, անգութ սատարներ կը գտնար։ Ճաշի միջոցին հանկարծ կպոռար սպասավորին, երբ ան՝ երկու ձեռքերը պորտին վրա՝ կկենար հոն, այդ կոչին ըստորին անպատասխան.

— Խաչո՜, շուտ պնակ մը, վազե՜...

Եվ երբ գավառացին կճարտարվորեր դեպի խոհանոց. թեքերը կախերեր, ուսերը վայրահակ, շալվարին հետույքը տատանելով, ամբրային թոռը կճաթեր խնդալեն.

— Նայե՜, մամա՜, պիչի՜մը նայե...

Հետո անպատշաճ կատակներ կըներ, որոնց կհանդուրժեր Խաչո լրիկ համակերպությամբ։ Պարզապես տրված պատվերներուն հնազանդելու համար, գավաթ մը ջուր բերել կուտար, օրինակի համար, և կհրամայեր որ գավաթը կրող ձեռքը ճիշտ գլխուն վերևը բանե. հետո մեկենիմեկ «դարձո՜ւր» կպոռար։ Եվ ահա գավաթ մը ջուրը կիջնար Խաչոյին գլխեն վար, ականջներեն, ուսերեն վազելով, հագուստը թրջելով, մինչ Արշակ կուշտուկուռ քահքահներու մեջ կգալարվեր, այդ անարգ տեսարանին վրա միշտ մամային ուշադրությունը հրավիրելով։

— Մամա, նայե՜, Խաչոյին հիյեթը նայե՜,

Եվ երբ հեք պատանին, որ շվարած, ափիբերան կմտածեր թե որքե՞ն, չորցնելո՞ւ էր վրան գլուխը, առանց թույլտվություն առնելու, տոքթորցուն դարձյալ հրաման մըն էր կարձակեր, որուն գործադրությանը կշտապեր Խաչո՝ մոռնալով իր կրած տուշին անպատեհությունը։

Մաման, զավկին այդ ընդվզիչ կատակներուն ոևէ առարկություն, ընդդիմություն չէր ըներ, նույնիսկ թեթև ժպիտներով կըքաջալերեր զանոնք,- նկատելով որ անոնցմե հաճույք, ուրախություն կզգար իր զավակը, հոգ չէ թե միամիտ ու արգահատելի արարած մը հարատև նշավակը դառնար այդ խոշտանգումներուն։

Շաբաթը երկու երեք անգամ Մերկերյան կուգար ապարանքին ներքին կյանքը ուսումնասիրելու, անոր նորություններուն ծանոթանալու, սեղանը, գինին վայելելու, զվարճանալու, խնդալու։ Եվ իրոք, կարելի չէր երևակայել ավելի զվարճալի ու հատկանշական բազադրություն մը տարբերու, որոնցմով կազմված էր այդ տան բնակչությունը։ Հանրմը, զավակը, խոհարարուհին և Խաչոն, բոլորովին անհամեմատելի, հակոտնյա տիպարներ, նկարագիրներու անհուն հակասություններ զիրար գտած հոդ, բախտին մեկ ցավալի կատակովը գիշեր ցորեկ հարատև շփման մեջ, յուրաքանչյուրը իր ցավովը տոչորված, համակված, ամեն մեկը տարբեր իդեալներու հետամուտ, զիրար հասկնալու, զիրար մխիթարելու անկարող, իրարու վշտերե, իրարու խենթությունները անտեղյակ, իրենք

իրենց մեջ ամփոփված, խեղճ, ցավագար, լուսնոտ։ Ու ասոնց վրա ավելցուր Բարթող աղան, իր հրեշային կազմվածքովը, իր գողնալու, կողոպտելու, գիշատելու անդադրում մտասևեռումը՝ այլանդակցած, տգեղցած իր երկու անհեթեթ էգերուն հավերժական աղջիկության դատապարտումին վիշտեն, որ երթալով ավելի և ավելի կխածներ, կկծկեր, կհրեշացներ անոր մարմինը, և Թադեոս աղան, չկշտացող ուտիճ մը, անհագ հարալեզ, մարդկային ընկերության կուշտին փակած տզրուկ մը, որ սուտ, խաբեպատիր աղգասիրության մը համբավին կոթնած՝ աղքատ թաղի մը անարյուն երակները կծծեր և մեծափարթամ ապարանքի մը փլատակներուն վրա կսլքտկար դեռ՝ ճարակ փնտրելով իր ցանկություններուն, դիակնախույզ բորենիի մը պես։

Երրորդ տարվան կիսուն, տիկին Մարկոսյան, Մերկերյանի հետ խորհրդակցությամբ, հակառակ այս վերջինին քանի մը բանավոր առարկություններուն, վճռականապես որոշեց տոքթոր անվանել Արշակը։ Այս հիմարությունը գործելու իր անհեղլի կամքին առջև, վերջապես տեղի տվավ Մերկերյան և տոքթոր տիտղոսը այդպես պաշտոնապես տրվեցավ Արշակի, որուն բավական լուրջ և հանդիսավոր ձևերով հաղորդվեցավ այս իրողությունը և որ, առանց զարմանքի արտահայտության, շատ բնական բանի մը պես հավանեցավ ատոր։ Այդ վայրկյանեն, ուրեմն տան մեջ ամեն մարդ պարտավոր էր տոքթոր անվանել ամիրային թոռը, չնայելով որ դեռ տոքթորութենե փարսախներով հեռու էր ան։

Նախ Խաչոն կանչվեցավ ատյան, զոր, ինչպես ըսինք, կկազմեին տիկին Մարկոսյան, Թադեոս աղա և տոքթոր Մարկոսյան, և որուն ներկայացավ գավառացին սրտատրոփ և դողդոջուն։ Տարիներեսե ի վեր այդ տան մեջ էր ու տակավին ատանկ հանդիսավոր, պաշտոնական կացության մը չէր ենթարկված։ Կեցավ հեռուն, պատին առջև, ծունկ բարև, ոտքը ոտքին քով, աչքերը գետնին հառած, հանցավոր աշակերտի մը կեցվածքովը։

Թադեոս աղա, նախագահի հանգամանքովը, խոսք ուղղեց ըպասավորին և ըսավ.

— Խաչո, օղլո՛ւմ, հելպեթ տե աստուծո փառք կուտաս կոր քի մեկ ասանկ աղեկ, շնորհքով տեղ մը ինկար տե մարդու պես կապրիս կոր... հոս ամիրայի տուն է, օղլում, հին էմեքտարները կըսիրվին, կօգտե որ հավատարիմ ըլլան, ճանը կյոնյուլտեն ծառայեն. կհասկնա՞ս կոր...

Խաչոն գլխովը այո՛ ըսավ։

— Էֆենտիդ,— շարունակեց Մերկերյան՝ Արշակը ցուցնելով,— բավական գոհ է քենե, քիչ մը աչքդ բանալու ես, բան սորվելու ես, ինքզինքդ սիրցնելու ես, հա՞ մի։

Խաչո գլխովը այո՛ ըսավ։

— Մինակ,— վրա բերավ գանձապահը,— ասանկ ետքը էֆենտիդ «աղաս» էֆենտիս» չպիտի ըսես...

Հոս, Խաչո վեր նայեցավ, մարդուկին երեսը՝ տեսակ մը զարմացմամբ։

— Տոքթոր պիտի ըսես,— շարունակեց Մերկերյան,— տոքթոր բառը գրեթե պոռալով։

Գավառացին, որ կերևար թե չէր լսած դեռ այս բառը, հետըզհետե ներկաներուն երեսը նայեցավ, կարծելով որ այն անհաճո խաղերեն մեկը տեղի կունենար, որոնց երբեմն կենթարկվեր ինք։ Բայց դեմքերուն հանդիսավոր լրջությունը ցրվեց իսկույն իր այս կասկածը։

— Տոքթո՞ր,— կրկնեց Մերկերյան,— հասկցա՞ր, Խաչո՛։

Խաչո գլխովը այո՛ ըսավ։

Թադեոս աղա ոտքի ելլալով՝ մոտեցավ գավառացիին և, դասը աշակերտին կրկնել տվող վարժապետի մը պես, խիստ ու տիրական շեշտով մը.

— Տոքթո՛ր ըսե տեսնեմ,— հրամայեց։

Խաչո կմկմաց, շուրթերը դողացին և թոթովեց՝ իր զուտ գավառական անտաշ առոգանությամբը.

— Տիոքթիո՛ր։

Եվ ահա ատյանը իր լրջությունը կորսնցուց. Արշակ սկսավ քա՛հ-քա՛հ խնդալ, Թադեոս աղա կոկորդեն սուր ճիչեր հանեց— խնդալու ձևն էր այս—և մինչև իսկ հանրմը ձեռքը բերնին տարավ՝ ծիծաղի պայթում մը զսպելու համար։ Իսկ Խաչո կաս-կարմիր, ճիտը ծռած կմնար, տագնապալից, ամոթահար։

Մերկերյան, լրջացած, վերսկսավ.

— Խաչո՛, տոքթոր ըսե։

— Տիոքթիոր, աղա։

Գանձապահը գավառացիին ականջը բռնեց և շուրթերը անոր մեջ երկնցնելով՝ պոռաց.

— Տոք-թո՛ր...

— Տիոքթիոր...

Հեք գավառացիին լեզվին այս անուղղա ըմբռստությանը առջև այլևս զվարթությունը չէր որ տիրեց սրահին մեջ։ Տիկինը բարկացավ, կանանչ աչքերովը շափշրփելով ծառան. Արշակ, սրտնեղած ելավ տեղեն ու մոլտալով պատուհանի մը մոտեցավ, իսկ Թադեոս աղա, հուսահատ, ինկավ թիկնաթոռին մեջ։

— Ծո, դուն մարդ ըլլալիք չունիս,— հայտարարեց,— ամուճայիդ ըսեմ տե քեզի նորեն տեղդ թող ղրկե։

Այս սպառնալիքին առջև, խեղճ տղան պոռթկաց լալագին.

— Աման աղա, ոտքդ պագնիեմ, մի ըներ էդ բանը...

Ու երկու արցունքներ գլորեցան անոր արևակեզ այտերեն վար։

— Ջընեմ ամա, տոքթոր պիտի ըսե՞ս շենք շնորհք...

— Կըսիմ, աղա, կըսիմ։

— Հայտե գնա տե աղեկ մը էզպեր ըրե։ Չէ նե՛...

Խաչո շունչ առավ։ Պաղատագին խոնարհություն մը ըրավ՝ թուղը մինչև կուրծքին դպցնելով, ու ճապարանոթ դուրս ելավ սենյակեն, ակռաներուն մեջեն արդեն իսկ սկսելով դժնդակ փորձին.

— Տիոքթիո՜ր, տիոքթիո՜ր...

Քիչ հետո, երբ տակավին այս դժպատեհ միջադեպին անհաճո տպավորությունը չէր անհետացած երեք արարածներուն վրայեն, խոհարարուհին ներս կմտնար իր ցավագար քալվածքովը, տքալով, հեալով։

— Հանըմ, բա՞ն մը կուզես։

— Չէ,— պատասխանեց Թադեոս աղա ի դիմաց հանըմին,— ըսելիք մը ունինք տե անոր համար կանչեցինք։ Գիտես յա, մեր Արշակը քանի մը տարիեն տոքթոր պիտի ըլլա, ամա ատեթ է քի զպրոցեն չելած տոքթոր կըսեն, հա՛ քանի մը տարի ետքը եղեր է, հա՛ քանի մը տարի առաջ, անոր համար տոքթոր կըսենք կրմնա կերթա, չըլլա՞ր, Նեկտար։

Պառավը, այս անսպասելի հայտնության առջև զարմացած, նայվածք մը նետեց հանըմին և հետո տոքթորին, որ հեռուն կեցած էր, զավեշտին այս երկրորդ արարվածին եղելությանը հետաքրքիր։ Եվ որովհետև պառավին հավանողական պատասխանը կուշանար, Թադեոս աղա կրկնեց, ոտքը ոտքին վրա նետելով.

— Հե՞, Նեկտա՜ր, կըլլա՞...

Նեկտար քսանըհինգ տարիե ի վեր այդ ապարանքին մեջ կծառայեր, հանըմին աղջիկությունը գիտեր, Արշակին ծնիլը, մեծնալը. բայց ահա, երբ անոր մեկենիմեկ տոքթոր ըլլալը իմացավ, ինքզինքին ներել կարծեց պզտիկ դիտողություն մը։

— Աղեկ ամա, տահա բեք պզտիկ չէ՞... ինծի անանկ կուգա քի...

— Ճանըմ պզտիկը մենծը քեզի՞ ի՛նչ,— պոռաց Մերկերյան մեկենիմեկ բռնկելով,— տոքթոր ըսես նե մեկ զարար մը ունի՞։

— Չէ, աղաս, չէ, բան մըն էր ըսի,— վրա բերավ պառավը ցնցված,— տոքթոր, բեք աղեկ, անանկ թող ըլլա, շիտակ է, քանի մը տարիեն տոքթոր պիտի ըլլա նե հիմակվընե տոքթոր կըսենք...

— Տեսա՞ր մի, խոսք հասկնալը ի՞նչ աղեկ բան է...

Պառավը, դուրսը սրահին մեջ, բազկատարած, աչքը ձեղունին, կմրմռար.

— Էյնավոր թագավոր, տուն ողորմե աս խենթերուն...

Այսպես, դժվարության առաջին քայլը առնված էր. հասարակության հառաջապահ մասը, սպասորյարը, վերահասու դրված էր մեծ իրողության. շուրթեր կային հիմակ, որ արդեն կարտաբերեին այդ աղվոր, պանծալի, հմայող բառը, հոգ չէ թե ատոր համար քիչ մը ճնշողական միջոցներու դիմելու հարկ եղած ըլլար։ Ա՛լ կատարված իրողություն մը կար. Արշակ Մարկոսյան տոքթոր մկըրտված էր, կնքամայրությամբ իր մամային և կնքահայրությամբ Թադեոս Մերկերյանի. ետ դառնալ այլևս կարելի չէր. Խաչոն և Նեկտարը արդեք կըլլային ատոր. բաներ կան, զորս կարելի չէ հերքել, ետ առնել այնպես, ինչպես լրագրի մը մեկ անհիմն կամ սուտ լուրը։ Օրինակի համար, կարելի չէր նորեն կանչել խոհարարուհին և ըսել անոր, թե հակառակ տրված հրահանգին՝ առժամապես հետաձգված էր առ՝թար բառին հորչորջումը. ծիծաղելի ըլլալե ավելի բան մըն էր, խայտառակվիլ էր. իսկ Խաչոյին վրա այս կարգի փորձ մը բոլորովին անհնար էր, նկատելով ողբերգական պարագաները, որոնցմով ան բերվեցավ այդ անծանոթ բառին արտասանությանը, որ նույնիսկ արցունքներ թափել տվավ իր աչքերեն։

Տղան, իր շլացմանը մեջ, բոցերու տաքություն մը զգաց ներսիդին. մաման, չհուսացված փառքի մը մերձեցման անուշ անէացումը, նվաղումը ապրեցավ։ Գանձապահը, իր շիլ ու կիսափակ աչքերուն մեջեն հեռապատկեր մը նշմարեց, որ վերջին ծայր կը գովեր, կհամբուրեր իր անկշտում կիրքերը։

Եբբոր առաջին ցնցումը, շլմորումը անցավ, իրարու երես նայեցան անոնք, իբր թե քունե մը արթննային։

— Իշտե աս ալ եղավ լմնցա՜վ,— հայտարարեց գանձապահը,— հիմակ սա մեր տոքթորին կենացը քանի մը հատ կոնծենք։

Ճաշը ուրախ անցավ, մանավանդ որ սեղանին վրա գոհունակությամբ դիտվեցավ որ Խաչո մեկ երկու ժամվան մեջ կրցած էր զգալի հարված մը տալ իր լեզվին անտաշությանը, վասնզի քանի մը անգամ, առիթը ներկայանալուն, երբ տոքթոր բառը արտասանեց, առաջին վանկին մեջ ի ձայնը բոլորովին ջնջված էր գրեթե, ու միայն երկրորդ վանկը դեռ կկաղար—«թիոր». սեղանակիցները, փոքրիկ ժպիտներով, այս ուրախառիթ պարագան դիտել տվին իրարու՝ աչք ինքվի խաղցնելով։

— Հա՜, քեզ տեսնամ, Խաչո,— քաջալերեց գանձապահը, որուն ըղեղը սկսած էր թուլնալ գինիին ազդեցության տակ,— քեզ տեսնամ, օղլում, աշկդ պաց, մարդ էղիր, տոքթորին սիրցուր ինքզինքդդ... հիմակվան ատենս սերսեմներուն հաց չի կա, հասկցա՞ր...

Տիկին Մարկոսյան՝ գյուղին ընտրելագույն դասակարգ քանի մը ընտանիքներու հետ վերահաստատած էր իր վաղեմի հարաբերությունները. շաբթվան մեջ օր մը ընդունելության հատկացված էր, որուն կփութային շորս կամ հինգ վաղեմի բարեկամուհիներ, ականատես վկաները ամիրային աղջկան երբեմնի իշխանական կյանքի շքեղանքին։ Մասնավորապես հիմակ, հանրմը պետք ուներ այդ այցելություններուն, անոնց հաղորդելու համար իր ներքին կյանքին նորանոր դրվագները, որոնք հետզհետե երևան պիտի գային, աստիճանաբար ավելի փայլուն, ավելի փառավոր, ավելի փարթամ, հին, անցած կյանքի ավերակներուն վրա, քիչ-քիչ անհետացնելով զանոնք և իր՝ ամիրային աղջկան պառավությունը երփներանգելով փառքի, երջանկության այն միևնույն լուսապսակովը, որով երանավետված էր իր երիտասարդությունը։

Իր հառաջիկա ընդունելությանը, կուզեր անգամ մը իր այցելուհիներուն վրա «տոքթոր»-ին փորձը կատարել, որ շատ ավելի դժվար պիտի ըլլար, քան ինչ որ եղած էր Խաչոյին և Նեկտարին վրա, որոնք պարզապես բռնադատված էին այդ ծիծաղելի քմահաճույքին առջև գլուխ ծռել։ Ուրիշները կարելի չէր այդ հնազանդության հարկադրել։ Ազատ էին չհպատակելու և նույնիսկ հեգնելու, ծաղրելու այդ կամեությունը։ Հանրմը հույժ մտատանջ էր ուրեմն, մեկ կողմեն իր սրտին փափագը իրականացած տեսնելու անհուն տենչը, մյուս կողմեն ծիծաղելի դառնալու վախը անգութ վարանումներու մեջ կտարուբերեին իր խախուտ, ճղճիմ հոգին։

Իր խոովքը չմատնելու ճիգով մըն էր, որ ընդունեց իր հյուրերը մեծ սրահին մեջ, իր սովորական պաղ վարմունքին մեջ տեսակ մը տենդոտ փութկոտություն խառնելով հիմա, նայվածքին մեջ թեթև պաղատանքով մը, որ այցելուհիներուն աչքեն չվրիպեցավ։ Անոնցմե յուրաքանչյուրին որպիսությանը և ընտանեկան կացությանը չափեն ավելի հետաքրքիր ցույց տվավ ինքզինքը, անոնց ցավերուն ցավակից, ուրախություններուն ուրախակից գտնվեցավ, գողտրիկ վերադիրներով, որոնք այնքան տարօրինակ կհնչեին իր բերնին մեջ. «անուշս, հոգիս, խուշս...»։ Հյուրերը կղարմանային այս փոփոխությանը վրա և կփաղաքշվեին ալ ամիրային աղջկան կողմե այդպես պատվվելուն։ Պահ մը, հանրմը ինք իր վրա բնական շեղում մը ընելով, ըսավ թե առողջական լավ վիճակ մը չուներ, և թե տոքթորը ըսած էր որ քանի մը ամսվան օդափոխություն մը անհրաժեշտ էր։ Հյուրերեն մեկը հետաքրքրությունն ունեցավ հարցընելու, թե ո՞ր տոքթորն էր այդ դարմանը պատվիրողը։

— Զավակս, Արշակը,— ըսավ տիկին Մարկոսյան, շատ բնական շեշտով մը։

Կիները իրարու երես նայեցան, կարծես իրար գաղափար շոշափելու, զիրար լուսաբանելու համար այդ խեղկատակության առջև։ Ամենքն ալ սակայն անվրդով մնացին, տիկինին գերազանցապես լուրջ, անխռով կեցվածքեն ազդված։

Առաջին ռումբը արձակված էր։ Հանրմը շունչ առավ և ներկաներուն դեմքերը զննեց, որոնք ոևէ վհատեցնող արտահայտություն չունեցան։ Ասկեց քաջալերված ան սկսավ ա՛լ աջ ու ձախ տոքթոր արձակել, առանց քաշվելու, մեկ կողմ դրած ամեն նկատում, ամեն երկյուղ.

— Տոքթորը կուզե որ... տոքթորը ըսավ որ... տոքթորը կխորհի որ...

Հյուրերը, բերանաբաց, մտիկ ըրին, սահմռկած։ Եվ նույնիսկ քանի մը անգամ այցելուհիներեն մեկը ինքզինքը ստիպված տեսավ տոքթոր բառով խառնված հարցում մը ուղղելու տիկնոջ, որ փութաց պատասխանել սաստիկ հափշտակված։

Յուրաքանչյուրը, մեկնած ատեն, թախանձագին հրավերներու առարկա դարձավ տիկնոջ կողմե։

Քանի մը օր չտևած, գյուղին մեջ տարածվեցավ հանրմին նոր խենթության այս արարքը։ Ա՛լ ծաղրանքները, հեգնությունները ծայր ճոթ չունեցան։ Մինչև իսկ սրճարաններուն մեջ խոսվեցավ

այդ մասին Մերկերյանին ներկայությանը, որ տիկինին դատը պաշտպանեց ջերմորեն։

Բայց, բոլոր այս աղմուկներուն մեջեն ու անոնց հանդարտու-մեն հետո, իբրև անոնց մրուրը, տոքթոր բառը քիչ շատ ամեն կողմ մնաց, նախ հեգնական առմամբ մը գործածվելով, հետո, մոռցվելով անոր բուն նպատակը, անտարբեր շեշտով մը արտա-սանվելով, սովորությամբ մը նվիրագործված։

Եվ անոնք, որ հիմակվընե ապագա տոքթորին շուրջը կհածեին՝ ազատավներու ախորժակներով, փաղաքշանքի հարմար զենք մը նը-կատեցին տոքթոր բառը, ուղղելով զայն երիտասարդ ուսանողին, ուր որ հանդիպեր, ընդհանրապես բարձրաձայն, և Արշակ՝ իր գող-ցու այդ տիտղոսին այդքան շուտ հանրանալուն զարմացած՝ իր ձևերուն, նայվածքին, քալվածքին, խոսվածքին կշանար ճշմարտո-րեն տոքթորավայել հով մը տալ։

9.

Հիմակ ա՛լ չափահաս երիտասարդ մըն է Արշակ Մարկոսյան, երկար, նուրբ հասակով, ճկուն ու հեշտ շարժումներով, նայվածքը թափանցիկ, հեգնող, հմայող։ Իր ամբողջ էության վրայեն նրբա-գայիկ ազնվականության մը շնորհը կցոլացնեն։ Խոսվածքին մեջ սրտահույզ ու դողդոջուն շեշտ մը կա, մերթ անուշ, մեղրոտ, մերթ առնական և խրոխտ։ Իր հանդարտ ու տիրական ձևերուն մեջ և իր խոսելակերպին մեջ մեծ քանակությամբ Կոստանյան կա։ Իր սի-րական սանին մեջ իր ցանած հունտերը ժամանակ անցնելով կուռ-ճանային, կբողբոջեին, կհասուننային այսպես անզգալաբար և ան-գամ մը ևս կապացուցանեին բեռագոխիային բարիքները, զորս այնքան բարձրաղաղակ քարոզած էր Կոստանյան Հ... գյուղի հա-յերուն։

Երիտասարդ Մարկոսյան զարմանալի հստակությամբ մը և ճշտությամբ մը կհիշեր իր շքեղ դաստիարակին հզոր շեշտերն ու ազդու շարժումները, որոնց առջև հիացմամբ կանգ առած էր ինք իր տղայությանը։ Զանոնք կաղապարելու, իր մեջ տպագրելու հա-մար սքանչելի հարմարություն մը կգտներ իր ֆիզիքական ու բա-րոյական հորինվածքին մեջ։ Զորավոր հայտնատեսությամբ մը կմբռներ, թե մանկավարժը իր բոլոր հաջողությունները կպարտա-ռաուոնց, այդ շարժումներուն, այդ շեշտերուն, այդ նայվածքներուն

ինչո՞ւ չորդեգրեր, չյուրացներ զանոնք, քանի որ այնքան աղվոր էին ու այնքան գրավիչ։

Բայց անոր անդորր, անուշ, ազնվական պատյանին տակը, տարիքին աճեցմանը հետ, կիրքի լավաներ սկսան շրջան առնել անոր երակներուն մեջ, որոնք կիզանուտ փափագներու, վարար ըղ-ձանքներու եռուզեռի մը տակ կընդլայնեին ու կկծկվեին։ Ժա-ռանգականորեն մոլի, ախտավարակ, ցոփ ճետի մը արյունե ար-յուն, միսե միս փոխանցված մոլություններուն հառնումն էր ատ, շարավոտ ամիրայության առհավությունը, որ մեկենիմեկ գլուխ կամբառնար, կդառնար, կմոլեգներ այդ աղվոր, գեղակերտ իրա-նին մեջ, մեղավոր տոփանքներու շնությունը ոռնալով, բիրտ, անասնական տոիփներու գոհացումին մղելով, վազցնելով զայն։

Իր աշխատությանցը մեջ, ան կամաց-կամաց կանգ առավ, նորանոր պահանջներ զգալով ներսիդին, որոնք գոհացումներու կա-րոտ էին։ Իր բժշկական գրքերուն տեղը լկտի, անառակ վեպեր գիրվեցան աշխատության սեղանին վրա, զորս կլափեր, կմբռշխ-ներ, վավաշոտ նկարագրությանց, ախտավոր վայրենությանց տե-սարաններու վրա համենալով, աչքերը կիրքեն սառած, դեմքը գըր-գռումեն դժգույն ու կծկված։ Մեկենիմեկ իրեն հիմարություն մը թվեցավ աշխատության գաղափարը, անմիտ, ողորմելի սկզբունք մը, որուն համար չէր արժեր ժամանակ վատնել, հատնիլ, սպա-ռիլ, մինչ անդին կյանքը վայելելու, անոր պատրաստ, դյուրին բա-րիքները ապրելու հնարավորությունը կար։

Հինգերորդ տարին, բժշկական ուսանողը արհամարհանքով նայեցավ իր գիրքերուն վրա, տեսակ մը սրտնեղությամբ, որ իր հո-գեբանական վիճակը կթարգմաներ։ Տոքթորության տիտղոսին լու-սապսակովը փառավորվիլը, որ այնքան դյուրին երևցած էր իրեն, հիմա անկարելի պարագա մը կթվեր. երթալով, կարծր ու ցից ժայ-ռի մը դեմ զգաց ինքզինքը, անկեց մագլցելու դնդերային ուժը չտեսավ իր դաստակներուն մեջ։ Բայց քալված ճամփեն ետ դառ-նալը նույնքան անհնարին էր. հանրային կարծիքը և մանավանդ մաման կընդդիմանային ասոր, մաման, որ իր տոքթորության շուրջը սկսած կատաղի, ապուշ բրոբականդային շափ ու սահման չէր դներ, ա՛լ կատարված իրողության մը պես արարատ աշխարհի հայտարարելով զայն։ Այս դժնդակ կացության առջև, տղան բու-ռը զայրույթով մը կլեցվեր իր մամային և մանավանդ անոր ջը-զայնությանը դեմ։

Ամիրայական ապարանքին վանական մենությունը, տեսակ մը ճգնումի այդ կյանքը սկսավ անտանելի թվիլ ուսանողին, որ աղմուկի, վայելքի, ցնծումի անզուսպ ձգտումներ կզգար իր մեջ։ Վարժարանեն ստացված ապականարար բարեկամություններու առաջնորդությամբ, խենթի պես մտավ մոլության ճամփաները։

Շատ օր, առտուն տունեն մեկնելեն ետքը, փոխանակ վարժարանին ճամփան բռնելու, Բերա կելլար՝ ման գալու ամբոխալից փողոցներուն մեջ, որոնց փարթամ երևույթը կհրահրեր զինքն ու կհմայեր, հետևելու հասակագեղ, շնորհաշուք կիներու, որոնց հարուստ իրաններուն ծեքծեքումը, անոնցմե արտաբուրող զգլխիչ հոտանուտները անծանոթ ու հեշտալի սարսուռներ կուտային իր ջիղերուն։ Ժամերով անձնատուր կելլար ցոփակյացի այս դեռ երկչոտ սրտատրոփ նորընծայության, չհամարձակելով գլխիվայր նետվիլ ապականության խորխորատը, որ իրեն կքաշեր զինքը անդիմադրելիորեն։

Իրիկվան, Բերայի մեծ ճամփուն մայթերուն վրա, խառնված պերճ ու խայտաբղետ բազմության մը հոսանքին, անծանոթ աշխարհ մը փոխադրված կկարծեր ինքզինքը, վայելքով ու երանությամբ լեփ լեցուն։ Այտերը, զորս թավշանման աղվամազ մը հաղիվհազ կմրոտեր խարտյաշ սնդույրով մը, ներքին հուզումներեն վարդերանգված, գլուխը խրոխտ ու ազնվական բռնվածքով մը, բարակ, եռանդուն ոնգունքները հեշտին բուրումներու ի խնդիր, նայվածքը ախտավոր տենդերու բոցերեն վառված, Արշակ՝ ինքնամոռաց՝ կերթար, կքալեր գինովի մը ինքնաշարժ քալվածքովը։

Գեղ վերադարձած ատենը մութը արդեն կոխած կելլար։ Ժամանակ մը ի վեր, տոքթորին այս անպատեհ հապաղումները մը-ահոգության կմատնեին տիկին Մարկոսյանը։ Բայց ուսանողին քով իր ուշ մնալը արդարացնող պատրվակները չէր որ կպակսեին, որոնք ընդհանրապես վարժարանին, ուսման, բժշկության շուրջը կդառնային։ Մեծ մասամբ՝ ընկերոջ մը տունը գացած կելլար գիտական ուսումնասիրությանց և փորձերու համար, ու մաման, համոզված, կհանդարտեր։

Իր հարաճուն կիրքերուն հագեցմանը համար, Արշակ առատ դրամի պետքը զգաց։ Մինչև այն ատեն մաման դպրոցական ծախսերուն բավելու չափ միայն դրամ կուտար իրեն, ամսական հարյուր հիսուն, երկու հարյուր ղրուշ։ Գնաց գանգատեցավ այս մասին Մերկերյան Թադեոս աղային և խնդրեց, որ մեկ ճարը գտնելու համոզելու, որ իր կալվածներեն մեկուն ամսական հասույթը ուղղակի իրեն կապվի, առնվազն հինգ ոսկի։ Գանձապահը խոշոր քիթը երերցուց, ձիու պես վրնջեց, մորուքը խառնեց, տղուն նայեցավ, անոր հոդիին թափանցելու պես, և ըսավ.

— Աղեկ ամա, Արշակ, օղլո՛ւմ, հինգ ոսկին ի՞նչ պիտի ընես, վրաղ գլուխդ մամադ կշինե կոր, պետք եղած խաշլըխն ալ կուտա կոր, էվելը ի՞նչ պիտի ընես։

— Բայց, Թադեոս աղա,— առարկեց ուսանողը այս ընդդիմութենեն զայրացած,— ես մարդ չե՞մ, տեղ չե՞մ երթար, չե՞մ պտըտիր, սիրտս ուզած մեկ բանը չե՞մ գներ... իմ տարիքս ունեցող երիտասարդները ինչե՞ր կընեն կոր...

— Հը՛մ,— ըրավ գանձապահը, ծուռիկ-մուռիկ ակնոց մը անցունելով քիթը և ակնարկ մը նետելով խոշոր տետրակի մը վրա, որ գրասեղանին վրա փռած էր։ Վասնզի, անձնվեր գանձապահը միևնույն ժամանակ խորհրդարանին քարտուղարության պաշտոնն ալ կվարեր, թաղին աղքատ սնդուկը հարստացնելու համար։

— Մանավանդ որ,— շարունակեց Արշակ,— կվայլե՞ որ տոքթոր մը գրպանը առատ դրամ չունենա, ամոթ բան չէ՞։

— Ա՛տ ալ կա,— ըսավ Մերկերյան, քիթը տետրակին վրայեն վեր առնելով։— Էյ, շատ աղեկ,— շարունակեց,— մեյ մը խոսք կբանամ մամայիդ. չէ՞ չըսեր, գիտեմ։

— Շնորհակալ եմ, Թադեոս աղա,— ըսավ ուսանողը գանձապահին ձեռքը թոթվելով, ու մեկնեցավ։

— Դուն տոքթոր չէ՞ փորձանք պիտի ըլլաս մորդ գլխուն,— կմռմռար Թադեոս աղա թվանշաններ գրելով տետրակին սյունակներուն մեջ...— իմ քիթս հոտ կառնե, յավրում, հոտ. դուն ողորմած հոգի տետեիդ վարիաթին տակեն պիտի մտնաս, վրայեն ելլաս... ետքն ալ պերաննիդ բորյաղին պիտի պանաք... Չէ, էս քու աչվերներուդ չեմ հավնիր կոր, դուն տոքթորը չէ՞ պերպեր պիլե չես կըրնար ըլլալ... Ամա ինչո՞ւս պետք, սա սըտեղը պազի գիշեր կերթանք կուտենք, կխմենք կոր, նայինք տակը ե՞րբ պիտի էրևա, բաբուճսիվար, տոքթոր էղեր է չէ էղեր, պապայիս տղան չէր յա... կերթամ կըսեմ, ինչո՞ւս պետք, ամիսը թող հինգ ոսկի, տասը ոսկի տա մամադ քի էրթաս բիս-բիս անդին ասդին ուտես... հե՞, հը՛, հը՛, հը՛,...

Եվ ավազակը ժոռատ լինդերուն մեջեն չոր խնդուքով մը կըխնդար։

Իրիկվան, գանձապահը, բազմած թիկնաթոռին մեջ, տիկին Մարկոսյանին դեմ, տղուն առաջարկը կմատուցաներ.

— Տղան իրավունք ունի, ճանըմ, ասօրվան օրս տոքթոր կըլլա նես կոր, ճեպը փարա չի կա, կըլլա՞ մի, վայլո՞ւմ բան է... ես քա տեղդ ըլլամ, հանըմ, Ղալաթիայի ֆապրիքային ամսականը շիտակ իրեն կկապեմ, կլմննա կերթա. գլխու ցավե մըն ալ կապատիս... հե՞, ի՞նչ ըսիր, հանըմ...

Տիկին Մարկոսյան, որ աշխարհի վրա բան մը մերժած չէր իր զավկին, կվարաներ այդ նյութական զոհողության առջև. հինգ ոսկիի հանկարծական ծախս մը խրամատ մը կբանար իր ամսական պյուտճէին մեջ։ Խեղճության, թշվառության գաղափարը սարսափ կուտար խեղճ կնոջ։ Եթե բոլորովին փչանար, ո՞վ իրեն պատուտար խեղճ կնոջ։ Եթե բոլորովին փչանար, ո՞վ իրեն պատուտար. հակառակ որ իր զավկին մեծահամբավ տոքթորի հեռապատկերը ուներ աչքին առջև, բնազդական հավատքը ուներ, թե այդ տոքթորությունը մոտավոր, և նույնիսկ հեռավոր ապագայի մը մեջ՝ դյուրակեցության սատար մը չպիտի ըլլար ամիրայական տան համար։ Կարելի չէր այդ կասկածելի, խախուտ հավանականության վրա հույս դնելով, անխորհուրդ վատնումի մը ենթարկել մեծափարթամ հարստության մը այդ հետին, ողորմելի բեկորները, որոնք փոթորկեն վերապրած էին։ Իր բանականության տխուր քայքայումին մեջտեղ, այդ խելահեղ, շլացած, անխորհուրդ մայրը ողջմտության հետին լույս մը կունենար, որ կզսպեր իր թափերը վերջնական փչացումի մը դեմ։

Գանձապահը՝ հանըմին մտածկոտ երևույթին առջև՝ շարունակեց իր փաստաբանությունը.

— Ամիրայի թոռը եղիր, տոքթոր եղիր, աղվոր երիտասարդ եղիր և ճեպդ փարա մի՛ ունենար... շիտակը զոռ բան է. նոքին դո՛ւն գիտես, հանըմ, քու գիտնալիք բանդ է, ինծի մնա նե...

— Քանի որ դուն մեր նյութական վիճակը գիտնալով հարմարկտեսնաս կոր, Թադեոս աղա, ատանկ ըսածիդ պես կընենք,— պատասխանեց վերջապես տիկին Մարկոսյան իր հետին վարանումներուն հաղթելով,— շիտակ է, տոքթոր ըսածդ գրպանը փարա ունենալու է։ Ա՜խ, ո՞ւր է ան ահագին հարստուիննիս,— ողբալ հեք կինը ձեռնամած,— ինչո՞ւ ասանկ եղանք. զավակս հիմա ոսկիին մեջ պիտի լողար... ինչո՞ւ ասանկ եղանք. աստվա՜ծ իմ... Ա՜խ...

— Ա՜խ,— արձագանքեց Թադեոս աղա ողբերգական դեմքով մը։

Հետո, իր մխիթարող հրեշտակի դերին դառնալով.

— Քանի մը տարի ալ ակռատ սիմե, հանըմ. «ամենայնի վախճանն է գովելի», կըսե ավետարանը, սա Արշակնիս մեյ մը հասնի, տոքթոր ելլա, ամեն բան կմոռցվի, ամեն բան տեղը կըզտնա, հոգ մ՚ըներ, իմ ո՞ր ըսածս չէ էլեր, գիտե՞ս ա...

— Աստվա՜ծ լսե ձայնդ,— հառաչեց խեղճ մայրը լալագին շեշտով։

Հառաջիկա առթիվ ապարանք գալուն, Բարթող աղային հայտնըվեցավ, թե Ղալաթիայի համբավավոր ֆապրիքային ամսական ենկամուտը ուղղակի Արշակին պարտավոր էր հանձնել, ամեն համարատվություն անոր ներկայացնել և այլն...

Այս լուրը աղեկ տպավորություն մը չըրավ մսավաճառին վրա, որ ողջ աչքը քթթեց, կինճի դունչը անհանգիստ կերպով շարժեց, բերանը բացավ բան մը ըսելու, դիտողություն մը ընելու համար, բայց միմիայն «բեք աղեկ, գլխուս վրա» մը կրցավ արտասանել։

Բայց տունեն դուրս ելլալուն, ճամփան պոռաց.

— Ծո՜, ծո՜, ծո՜, գործ ունինք, ա՜յս էր պակաս... ա՜ռ քեզի փորձանք մը, ծո, որի՞ն միտքեն կանցներ քի ատ բապուճս պիտի մեծնար տե մեր գործին էնկել պիտի ըլլար. ծո վա՜յ շունշանորդի. ծո՜ աս ո՞ւրկեց էր էլավ... ծո ան շան զավակը մանթար կկլլե՞... Ատ ֆապրիքային էրեսեն քանի մը ամիսը հեղ մը քանի մը օսկի ճեպելեմե կրնեինք կոր, սաչախը կոտրեցավ, տուրը սախտեցավ, չաքրն ծակեցավ ֆիլան կըսեինք կկլլեցնեինք կոր ատ կնկանը... Չէ՛, յավրում, աս չկըլլեր, տախտակի կտոր մը բրդավ ըսես, կերթա կնայի... Լմնցա՜ր, Բարթող, լմնցա՜ր,— կուլար մսավաճառը երկու ձեռքերը գլխուն զարնելով.— վա՜խ, յավրուներս, վա՜խ, խապար չունիք քի պատառնիդ բերաներնուդ դուրս կքաշեն կոր...

Խեղճ մարդը պահ մը կանգ առավ իր կացությունը աչքին առջև բերելու համար ասանկ անակնկալ աղետի մը ծագմանը միջոցին։

— Հը՛,— մրմռաց,— Կատարիններիս ճեհեզին կեսը եղած է... ճեհեզին կեսը եղավ ամա, յավրուս ալ քառասունին մատ մը մընաց... քառասո՜ւն, ամա ասիկա մենք գիտենք մինակ, հալիսը թող էրսունըհինգեն անդին չգիտնա... չէ՛, էրսունըհինգեն անդին չեմ անցներ, չըլլա՜ր, չըլլա՜ր պե՛, էրսունըհինգը անցած աղջիկը ո՞վ

կառնե... տիրի, տիրի մեռցունե՞մ, ծո՞վը նետեմ կեիկի պես աղ-
ջիկներս, էս անոնց համար փարա խարճեր, սիրտ հատցուցեր եմ...
հա երկու ճուվալ օսկի ծովը նետեր եմ, հա՛ Կատարինես, Մագ-
թաղինես... էս խայիլ չեմ ըլլար, ասվա՛ծ ալ խայիլ չըլլար քի ատ
կատանայի պես...

Հանկարծ կեցավ՝ կսկծալի, ահավոր հեռապատկերե մը ըղեղը
ցնցված։

— Աճապա կըլլա՞ մի, կընե՞ն մի կըսես, Բարթիկ... ծո՛, լը-
մընցա՛ր, մեռա՛ր, ատ բանը էղավ նե հա՛պը կլլեցիր... մեկալ
իրատներն ալ ատ գետնին տակը ասնելուին կապվի նե Բարթիկը
լմնցավ, ա՛լ խըվրզըվր չի կա, չըլլար, ամիսն ալ էրկու իրեք հա-
ղուր ղրուշ հավան էլավ, էս ալ մեկտեղ, յավրուներս ալ մեկտեղ...

Հրեշը, այս երկյուղներուն, ապագա այս քայքայումներուն մը-
տածման ազդեցությանը տակ դողդղահար կերթար. կքալեր քայ-
լամոլոր, եղոտ ճենճոտ ֆեսը մեկ քովին վրա ճմրթկված, գինովի
պես երերտկալով։

— Լմնցա՛նք, լմնցա՛նք,— կմռլտար,— մախսմներս անոթի
պիտի մեռնին, ճեհեզնին չպիտի շինվի, աշխարքի էրես չպիտի տես-
նան ատ մեկ չափխընին համար, տա մեկ սյուրդյուկին համար.
ծո, վո՞ւրկեց էր մեծցավ տե գլխնուս ասանկ փորձանք եղավ,
աճապա մեկ ճարը կա՞... ճա՛րը, ճա՛րը, ճա՛րը...

Եվ այս վերջին բառերը արտասանած միջոցին ճակատը կշը-
փեր՝ կարծես այդ շփումով իր հրեշային գանգեն դուրս ժայթքեց-
նելու համար այդ ճարը... Ոճրական լույսեր կփայլատակեին իր
բորենիի աչքին մեջ, շուրթերը կդողդղային արտասովոր հուզման
մը տակ, և կուզեր գաղափար մը, զգացում մը բանաձևել, բայց
չէր համարձակեր՝ ճիշտ այն գողին պես, որ ձեռքերը առարկանե-
րուն երկնցնելե առաջ շուրջը կդիտե սարսափով։

— Հե՞, հե՞, կըլլա՞, ծո, ըլլալի՞ք բան է, յա պոնվիմ նե, յա
յախան ծառք տամ նե... մախսմնե՞րս, յավրունե՞րս, յա էֆտի՞կը...
Չէ նե հի՛չ բան մը չէ, տա չափխընին քիթին բան մը տուր, օտքե-
րը տնկե լմնա էրթա, էս ալ ծառքեն ազատիմ... բեք աղեկ ամա
յա պոնվիմ նե, ան ասկե կեշ, յա տիրի-տիրի կախեն նե ինձի
պես կյուղելիմ մարդը... մեղքը չե՞մ պե՛, էս տահա շատ օր պիտի
տեսնամ, աշխարհքին տահա շատ պետքցու մարդ եմ. ծո ի՞նչ,
թոռան էրես չտեսած մեռնի՞մ, Կատարինեիս, Մագթաղինեիս բիլ-
կոները կիրկիս մեջ տանտանա չըրած հիչ կմեռնի՞մ, խե՞նթ եմ

ինչ եմ, ա՞խ ատ օրերուն պիտի հասնի՞մ աճապա,— հառաչեց
Բարթող աղա բազկատարած,— սանկ թոռներս թևերուս մեջ առած
տանտանա՛ քուզում, տանտանա՛, պիտի ընե՞մ...

Ու երկու բազուկները, աղեղնաձև, օդին մեջ երկարած, կտա-
տաներ, իբր թե թոռները արդեն իրավ բազմած ըլլային այդ գար-
շելի թևերուն մեջ։

Այս մերթ կսկծալի, մերթ ուրախ մտածումներուն մեջ տարու-
բերվելով է, որ մսավաճառը տուն հասավ և, իր սովորությանը
համեմատ առանց իր մտատանջության պատճառը կնոջը հաղոր-
դելու, առավ հրացանը և պարտեզը թուփերու և ծառերու ետին
գարանի մտավ՝ կատուներու պատվական ընկերությենեն անհատ-
ներ պակսեցնելու համար։

— Ծո, պարե սրվոնցմե էոճս տոնեմ,— կըսեր ինքնիրենը,—
ետքի զարարներուն տեղը հիմակվընե լեցնելու եմ...

. . . . . .

Եղած կարգադրությունը անսահման հրճվանքով մըն էր, որ
խնացավ Արշակ, նույնիսկ իր մամային բերնեն... Գրպանին մեջ
առատ դրամ ունենալ իր նորածին և հարաճուն քմայքներուն հա-
գուրդ տալու համար. ահա ինչ որ իր օրերուն ու գիշերներուն տեն-
դալի մտածումն էր, տեսակ մը մղձավանջ, որ իր գանգը կտոշո-
բեր, դժնդակ նոպաներու կենթարկեր իր մարմինը։

Քանի մը օր հազիվ անցած, բժշկության ուսանողը Բարթող
աղային օձիքին փակավ, փողոցին մեջ.

— Բարթող աղա, սա ֆապրիքային ամսական հինգ ոսկին
կուտա՞ս։

Մսավաճառը, ափիբերան, կակազեց.

— Տամ, տոքթոր, տամ ամա, ինքը, ի՞նչ է ան, բանը, տա՛մ։
Ինչո՞ւ չէ, տամ ամա, տոքթոր, քանի մը օր համբերե, մարդեն փա-
րա չառի, տահա ամսագլուխ չէ...

Արշակ, գժդմնած, սրտնեղ, քիթ բերան ծռելով առավ քալեց՝
հրեշին հացեին քանի մը լուտանքներ մռլտալեն։

— Գո՛րծ ունինք, գո՛րծ,— կըսեր Բարթող աղա, իր ահագին
գամբյուղին տակ ընկճված։

Մարդուկը սաստիկ կնեղվեր այս հետապնդումեն. ինք մինչև
այն ատեն ուզած ատենը միայն կտաներ դրամ կուտար հանըմին,
որ անսահման վստահություն ուներ իր գործակատարին վրա։ Կըր-
նար պատահիլ, որ կալվածներուն գանձված հասույթները իր անձ-

նական պետքերուն գործածեր քանի մը ամիս, մասնակի վճարումներ ընելով հանրմին՝ անոր պետքերուն չափովը։ Հիմակ, գործը կսկսեր տարբեր հանգամանք մը առնել. ուղղակի ժամանակին իրամե դրամ և հաշիվ պահանջվելու վտանգ մը կար, շատ հավանական էր, որ այդ տոքթորը այսօր ֆապրիքային հաշիվը պրպտեր, վաղը մյուս օր մնացած կալվածներունը։

Ամսուն մեկին իսկ, Արշակ մարդուն գլխուն վերևը ցցվեցավ.

— Բարթող աղա, փարա՜։

Կարելի չէր խուսափել։ Մսավաճառը աղտեղութենե սևցած, կոշկոռ կապած քսակ մը դուրս հանեց մեջքին խորերեն և հինգ հատ ոսկի համրեց տոքթորին, ամեն մեկին մեյ մեկ հիշոց միացնելով... միտքեն։

— Աս փարան ամսե ամիս տալու է, Բարթող աղա,— ըսավ երիտասարդը սպառնական շեշտով մը։

— Գո՜րծ ունինք, գո՜րծ,— կխորդար հրեշը ճամփան։

Երբոր ոսկիներուն մոգական պաղությունը և հնչեղությունը զգաց մատներուն տակ, գրպանին մեջ, երիտասարդը անհուն ըստփանք մը ունեցավ։ Իր զվարթության ընկերները, իրեն պես բժշկության կոչեցյալներ, շուրջը առին իսկույն, մետաղին հոտեն գինովցած։ Եվ Արշակ, իբրև ցոփակյաց ամիրայի մը արժանավոր թոռը, մեկ քանի օր, մոլության հնոցներու մեջ, իր գրպաններուն պարունակությունը հալեցուց։

Սակայն, դրամի բացարձակ չգոյությունը և մյուս կողմե իր սբնանկությունը մամային ծանուցանելու դժկամությունը՝ անկարելի դրության մը մեջ դրին զվարճամոլ ուսանողը։ Եվ իսկույն անդրադարձավ, թե կյանքը իր ըմբռնած եղանակովը ապրելու համար, ֆապրիքայի մը ամսական եկամուտը հույժ ճղճիմ գումար մը կներկայացներ, և թե ֆապրիքաներ հարկավոր էին իր երազած փարթամ կենցաղը վարելու համար լիառատորեն։

Հինգերորդ տարեշրջանի քննությանց մեջ կատարյալ ձախողված մը կրեց Արշակ։ Ասոր վրա, ուսանողը խորհեցավ ուրիշ միջոց մը գտնել, դրամ քաշելու համար մորմեն։ Ուստի համոզեց իր մայրը, որ տան մեջ բժշկություն ընե՝ վկայական չառած։ Մայրը նախ ընդդիմացավ այդ առաջարկին, բայց ի վերջո հավանություն հայտնեց ու տեղի տվավ իր սիրելի զավկին։

Մերկերյանին, անխուսափելի խորհրդակցին, հայտնվեցավ խնդիրը և կարծիքը հարցվեցավ։ Գանձապահը պահ մը խնդալեցավ առաջարկին այլանդակությենեն, աչքերը խոշոր-խոշոր բացավ և գոչեց, մատներովը սանտրեց աղեբեկ մորուքը, մորմեն զավկին նայեցավ, զավկեն մորը և, ավա՜ղ, հասկցավ թե իր կողմե ունի ընդդիմություն ավելորդ և ապարդյուն պիտի մնար։ Հետևապես

— Էհ, հա՜,— ըսավ,— կեշ չըլլար, բրաթիկ ալ է, խեր ալ է, անուն հանել ալ է... բեք աղեկ կըլլա, ըրեք...

Եվ դադարե մը հետո.

— Ամա, տղաս,— ավելցուց շեղակի ակնարկով մը,— չեկլաս ֆալցո խալթ մը խառնես...

— Ի՞նչ ֆալցո,— բողոքեց Արշակ կարմրելով՝ գանձապահին թափանցող նայվածքին տակ իր թաքուն մտադրությունները մերկացած, հասկցված զգալով։

— Է՛յ, ճահիլ ես, ի՞նչ գիտնամ,— ավելցուց Մերկերյան գլուխը օրորելով խորհրդավորորեն։

— Քսաներեքը անցավ, Թադեոս աղա,— մեջ մտավ անդիեն մաման, զավկին բարոյականին մասին հայտնված կասկածը ջրելու մտահոգությամբ,— թող ամեն երիտասարդ Արշակիս չափ խելքը գլուխը ըլլա...

— Ես պապա մարդ եմ, անանկ խրատներ կուտամ ճահիլներուն, հանըմ, հոգ չէ, մարդ չե՞նք մի, սխալական ենք,— ավելցուց գանձապահը հայրական շեշտով մը։

Պահ մը լռություն տիրեց։

Թադեոս աղա խզեց զայն.

— Ան չէ ամա, բան մըն ալ հարցնեմ, տիպլոմա չառած կարելի՞ է հեքիմություն ընել... իմ գիտցածս...

— Մասնավոր արգելք մը չի կա,— ըսավ Արշակ,— մանավանդ որ մեկ մեկուկես տարիեն տիպլոմս կառնեմ. փարայով չըպիտի նայիմ, ո՞վ կրնա բան մը ըսել... Եթե շատ ծանր ու կնճռոտ հիվանդության մը հանդիպեմ, ուրիշ բժիշկներու խորհուրդին կըդիմեմ...

— Անանկ է, շիտակ է,— պատասխանեց Մերկերյան համակերպությամբ։

Այս բարեգործական ձեռնարկին գործադրության համար հարկ եղավ սակայն մասնավոր սենյակ մը հարդարել հիվանդներու քննության հատուկ։ Մաման առանց ամենափոքր առարկության իր ունեցած պահեստի գումարը զավկին տրամադրության տակ դրավ։ Եվ ահա մախում մըն է սկսավ։ Բոլոր բժշկական գործիքները և

սարվածները, զորս գնեց Արշակ, կրկին գինով ներկայացվեցավ մամային, կարելի էր նույնիսկ քառապատիկ գնով ներկայացնել և տեղի չտալ ոևէ բողոքի, այնքան անիկա շլացած էր այս նոր գաղափարին հեռավոր ճառագայթներեն։

Ապակեոր խորշ-դարանի մը մեջ կշողային հիմա բժշկական և վիրաբուժական պողպատյա գործիքները, վերանորոգիչ և ահավոր. երկար բազմոց մը կգրավեր սենյակին աջ պատին երկայնքը՝ հիվանդներու քննության համար։ Անոր դեմը նույնպես ապակեպատ դարանի մը մեջ բժշկական ստվար հատորներ, կաշեպատ կազմով և ոսկետառ, իրենց փայլուն կոնակները քով քովի կցուցադրելեն երեք կարգի վրա։ Մատենադարանին առջևի մասը, որ շարժուն էր, կծառայեր իբրև գրասեղան։ Մետաղյա արծիվ մը, թևերը մեծատարած բացած, մագիլներուն մեջ կբռներ խոշոր կլոր մը՝ գլուխն ու ոտվընները սարսափի ճիգին տակ դուրս ձգտած, և որուն կոնակին վրա շարժուն կափարիչ մը թույլ կուտար մելանով լեցնել սողունին մարմինը։ Գրասեղանին մեկ կողմը կանգներ, վսեմ ու խոհուն, Հիբոկրատի գաճե արձանիկը ձյունի ճերմակությամբ։ Անդին, երկու պատուհաններու մեջտեղ կկենար թերթակալ մը, երկու աստիճան, հայերեն ու ֆրանսերեն պատկերազարդ հրատարակություններով ծանրաբեռնված. պատերը գրեթե խիստ գիտական պարզություն մը ունեին, միմիայն զարդարված երկու համեստ, բայց խորիմաստ նկարներով, որոնց մեկը կներկայացներ Ճենները՝ իր ծաղկախտի պատվաստին առաջին փորձովը զբաղված, մյուսը՝ Բասթյոռը, իր բնալուծարանին մեջ՝ մանրադետի մը վրա հառած իր թավ նայվածքը։ Հոս հոն քանի մը աթոռներ և թիկնաթոռներ։ Այսչափ։ Ճշմարիտ առանձնոց մը՝ գիտության խորհուրդներովը հափշտակված գիտունի մը համար, որ իր գերագույն հաճույքը հոտ կմբոշխնե, զննումներու, ուսումնասիրությանց և խոկումներու մեջտեղ։

Ժանեկավոր սպիտակ վարագույրներու ներքևեն նարնջագույն սթորներ լույսին ուժգնությունը կմեղմեին՝ մատուռի խորհրդալից կես մթություն մը սփռելով հոն։ Ներքին դուռ մը խուցի հաղորդակցության կդներ տոքթորին հարկաբաժնին հետ։ Խաչո, արտաքին նրբանցքին մեջ պիտի սպասեր հիվանդներու, որոնց այցելությունը պիտի երթար ծանուցանել բժշկին, ու այս վերջինը իր ննջասենյակեն պիտի մտներ ախտաձննական խուցը ու հոն պիտի զբաղեր իր հիվանդին հետ։ Եվ որպեսզի այս կարգադրությանց

մեջ ոևէ վրեպ մը տեղի չունենար առաջին առթիվ, Արշակ, մաման և Խաչո փորձեր կատարեցին։ Այցելող հիվանդին դերը մաման բռանձնեց։ Խաչո կեցավ նրբանցքին մեջ՝ իր փափուկ պաշտոնին գլուխը, իսկ տոքթորը փակվեցավ իր հարկաբաժինը։ Որոշված պահուն, տիկին Մարկոսյան ներս մտավ դռնեն և ճշմարիտ հիվանդի մը անձկոտ դեմքովը տոքթորը հարցուց Խաչոյին։ Խաչո, որուն խառնվածքը այնքան ձեռնտու չէր ասանկ ապսպրված դերակատարություններու, շփոթեցավ սխալ մը գործելու վախով, մանավանդ որ դեմինը ոչ թե ճշմարիտ հիվանդ մը, այլ հանրմն էր, անառնելի, սարսափելի հանրմը։

— Տոքթորը չգիտեմ, հանրմ, նիերսն է՞... նիերսը չէ...

— Ապո՛ւշ, ապո՛ւշ,— պոռաց տիկին Մարկոսյան ոտքը գետինը զարնելով,— անճարա՛կ, դուն մարդ ըլլալիք չունիս։

Բարձրացած պոռչտուքեն՝ տոքթորը իր սենյակին դուռը բացավ։

— Ի՞նչ կա, մամա... ի՞նչ եղավ։

— Աս սերսեմին գործը չէ աս,— շարունակեց պոռալ մաման,— տոքթորը հո՞ս է հարցումիս, չեմ գիտեր թե հոս է մի, հոս չէ, կրսե...

— Մոռցա, հանրմ, աֆ կընեք,— կմրմնջեր գավառացին ափիբերան։

— Նորե՛ն, նորե՛ն,— հրամայեց տոքթորը սենյակեն ներս քաշվելով։

Փորձը կրկնվեցավ։ Այս անգամ սպասավորը չի սխալեցավ։

— Հո՛ս է տոքթորը,— ըսավ ուժգնությամբ մը, երբ տիկին Մարկոսյան նորեն ներս մտավ։

Եվ Խաչո գնաց երեք անգամ մատովը զարկավ իր տիրոջ դրանը, ինչ-որ կնշանակեր թե հիվանդ եկած է։ Երկու վայրկյան հետո, ախտաձննական խուցին դուռը կբացվեր և տոքթորը կերևնար հոն, գլուխը թավիշե գդակով, երկար պլուզա մը հագած։

Խաչո, հակառակ իր գեղացիական անտաշությանը, կհասկընար թե եղածը արտասովոր հիմարություն մըն էր, մղձավանջոտ ղեղներու, անհավասարակշիռ ջիղերու արարք մը, ու մտքեն կբխնդար, կայպաներ։

— Թամամ խիենթ են էս մարդիկ,— կմռմռար։

Վերջին փորձը հաջողած էր. մինակ գավառացին էր, որ վքա-

տահություն չէր ներշնչեր, ուստի կրկին և կրկին պատվերներ եղան անոր։

Ուրեմն ամեն բան պատրաստված, կազմակերպված էր, կմընար իրավցընե հիվանդներ գտնել՝ վերջապես իրականության գույն տալու համար բոլոր այս կատարված խեղկատակություններուն մը։

Բացի անկեց, որ տիկին Մարկոսյան ընդունելության օրը իր աղջկուհիներուն ծանուց թե տոքթորը ուրբաթ և կիրակի օրերը հիվանդ կընդուներ, պայմանով որ աղքատ ըլլար ան, Բարձրի հիվանդ կընդուներ, պայմանով որ աղքատ ըլլար ան, թաղեցաս աղան մեկ կողմեն գյուղին մեկ թաղ աղան մեկ կողմեն, թաղեցաս աղան մյուս կողմեն գյուղին մեկ տարածեցին այս կարևոր նորությունը։

Գեղին միակ հայ բժիշկը, տոքթոր Քենտիրյան, որ արդեն իր ապագա մրցակցին շուրջը պղպջացող համակրության և հարգանքի փրփուրներուն ժպտուն աչքով չէր որ կնայեր, իր սեպհական Հոգին վրա այսքան կանխահաս և լիրբ ոտնձգության մը առջև չուզեց այլևս անտարբեր մնալ։

Դիմեց աղքատախնամ ընկերության, որուն տիտղոսավոր բժիշկն էր, և պահանջեց որ միջոցներ ձեռք առնվին թույլ չտալու համար, որ բժշկության ուսանողը հանդգնի դարմանել գյուղին աղքատ հիվանդները։

— Քանի որ,— ըսավ,— ես խնամակալության պաշտոնական բժիշկն եմ, զիս պատասխանատու կբռնեն, երբոր ատ տղան ֆալցո մը ընե, փորձանք մը հանե։

Բայց Մերկերյան հոն էր, անխուսափելի թաղականը։ Միջամտեց խնդրին և զայն հաշտարար կերպով լմնցնելու համար կամացուկ մը հասկցուց վիրավորված բժշկին, թե իր իսկ շահուն համար պարտավոր էր զիջում ընել—քանի որ գյուղին մեջ այնքան համակրություն չէր վայելեր իբրև բժիշկ—և թույլ տար, որ կարդ մը աղքատ հիվանդներ ալ երբեմն-երբեմն բժշկության ուսանողին դիմեին, եթե շատ վտանգավոր չէր իրենց հիվանդությունը։

Տոքթոր Քենտիրյան, երբոր Մերկերյանը գտավ դիմացը, որուն հակառակության և ոխակալության ոգին ծանոթ էր իրեն, կակուղցավ և վերջապես տեղի տվավ և մինչև իսկ, իմանալով, որ տիկին Մարկոսյան Փարիզ պիտի երթար կատարելագործվելու և վերադարձին Պոլսո մեկ ավելի հարուստ թաղը պիտի հաստատվեր, իր աջակցությունը և իր խորհուրդները խոստացավ ուսանողին՝ իբրև քսանամյա փորձառու բժիշկ։

Աղքատաց խնամակալությունը, միշտ Մերկերյանի ազդեցությամբ, շնորհակալության փքուռուց գիր մը ուղղեց աղնիվ տոքթորին, որ այսքան կանուխեն կսկսեր հանդիսավոր ապացույցները տալ իր մարդասիրական զգացումներուն ընկերության հանդեպ։

Տիկին Մարկոսյան զավկին համար այցաքարտ պատրաստել տվավ հայերեն և ֆրանսերեն. տոքթոր Արշակ Մարկոսյան։ Եվ իր հառաջիկա ընդունելության օրը, այդ քարտերեն մեյ մեկ հատ բաշխեց այցելուհիներուն, որոնցմե շատերը, հինգլուխ կնիկներ, խորին ու կանխակալ հարգանքով լեցուն դեպի գիտությունն ու անկյալ ամիրայությունը, երկյուղածորեն թաշկինակներուն մեջ պրբեցին այդ թանկագին քարտը ու գրպաններնին տեղավորեցին մասունքի մը պես։

Տանեցեց քահանան ժամուն մեջ ծանուցում ըրավ, թե տոքթոր Արշակ էֆ. Մարկոսյան պատրաստ է ուրբաթ և կիրակի օրերը կես օրեն ետքը աղքատ հիվանդներ ընդունիլ իր բնակարանին մեջ։ Այս առթիվ աղոթքներ և մաղթանքներ ըրավ ամիրայական մեծ դերդաստանին համար։ Վերնատունը անկյուն մը, իր սևերուն մեջ պարուրված կինը մը խորունկ ու սրտառուչ հառաչանքներով պատասխանեց տերտերին այս մաղթանքներուն։

Այս բոլոր արարողություններուն և ձևակերպություններուն հաջորդող առաջին ուրբաթ օրը խաչո աթոռ մը նետած էր տոքթորին հարկաբաժինը ելլող սանդուխին դրանը առջև և նստած էր սրատրոփ սպասումով։

Հանըմը, իր սուգի սենյակը ապաստանած, կաղոթեր իր հանգուցյալ ամուսնին կենդանագրին առջև, մինչ տոքթորը, իր սենյակներուն մեջ փակված, կպատրաստվեր ընդունիլ առաջին հիվանդը, որ անձնատուր պիտի ըլլար իրեն։ Իր վատթարացած, հաշմոտ հոգին խորը, այդ հանդիսավոր բոպեին, գիտության մարդը ելեր որ կհառներ, այլ մարդկային ցավերը ծաղրող, մարդկային տկարությունները հեգնող, անոնցմե շնականորեն օգտվելու հեռամտաս արարածը։ Կպատեր մեկ խուցեն մեկալը, միտքը բղջախոհ պատկերներու հաճախանքեն տանջված, երկարորեն, մոլեգնորեն սպասված հեշտություններու համեցումեն հոգեսպառ։ Կեցած, մերթ, սենյակին մեջտեղը, աչքերը դրան սևեռած կերևակայեր, որ ան հանկարծ կբացվեր երևան հանելով երազված էակը, կին մը, գեղեցիկ, բայց ցավեն ընկճված, որ գիտության մարդուն անձնամատույց, անոր պատյանին տակ կիրքի հրեշը հասկնալու անկարող պիտի դար աղերսել, պաղատիլ, տկարանալ, լքվիլ, լկտիլ...

Ավա՜ղ սակայն. բացման այդ առաջին օրը, ոչ մեկ հիվանդ եկավ ափ առնել այդ տխուր դարմանատան դուռը։ Խաչո իզուր սպասեց հարկաբաժնին դրանը առջև, սրտատրոփ։ Մեկ, երկու, երեք ժամ նստավ հոն, աթոռին վրա, մտքին մեջ միշտ պտտցնելով գործողությունը, զոր պիտի կատարեր ինքը, երբոր վերջապես հիվանդ մը ներկայանար։

Քանի մը հեղ դող ելավ, դրան ետին աղմուկ մը լսելով. բայց հանըմն էր, որ անձկալից, անհամբերութենեն կրծված, կուգար տեղեկանալ կացության մասին։ Անոր նշանացի հարցումին Խաչո գլխովը չէ կըսեր հեռվեն, ու հանըմին կանանչ նայվածքը, խոժոռ, թունավոր, անդիմադրելի, պահ մը սեեռված կմնար հեք սպասավորին վրա, այնքան սպառնական, հանդիմանալից, որ իբր թե անիկա ըլլար պատճառը, եթե հիվանդներ չէին ներկայանար տոքթորեն առողջություն, կյանք խնդրելու։

Արշակ պտտեցավ, պտտեցավ իր սենյակներուն մեջ, անհամբերության շարժումներ գծելով օդին մեջ, oֆեr և ախեr արձակելով, թավիշե գդակը և կտավե երկար պլուզան տասն անգամ դնելով, հանելով, պատուհաններուն առջև՝ երկինքը, գյուղանկարը, գննելով տարտամորեն, գյուղին հեռավոր ու մոտավոր տունները, որոնց անկենդան երևույթը կկատղեցներ զինքը։ Ո՞ւր էին, ո՞ւր էին ատոնց բնակիչները, ինչո՞ւ անտարբեր կեցած էին ու չէին անապարեր դեպի բեղմնավոր բարիքները, շոշափումները, գգվանքները գերագույն և աղվոր բուժումին, զգայնոտ մատներու սփոփարար հպանքներուն։ Ջեռվընները գրպաններուն մեջ պիրկ մը խոթած, ուսերը ցից, դեմքին անուշ գիծերը չհագեցված կիրքերու մտրակումին տաք քստմնելի ու դաժան, կնայեր ան առանց տեղ մը նայելու, իր փոթորկող ներքնաշխարհին մեջ ընկլուզված, պահ մը նույնիսկ իր խելահեղ, անստույգ, քայքայված կացության մեկ վաղանցիկ գիտակցութենեն զգեստնված։

Եվ օրը անցավ ատանկ, ամուլ, խաղաղ, առանց որ հաստատեստ դրան ժանգոտ ուռնակը գար իր բարերար դղրդոցովը եռանդ, հույս, երջանկություն պարգևել ներսի ջղապիրկ բնակիչներուն։

— Լրագիրներուն մեջ ծանուցում ընել տա՞նք,— ըսավ մաման գիշերը, սեղանին վրա, ուր հարկավորապես իրարու հանդիպեցան մայր ու զավակ։

— Ծանուցո՞ւմ մի,— կրկնեց Արշակ վհատած շեշտով մը, ասանկ նեղ պարագաներու մեջ մամային անհեթեթություններ, անհարություններ երկնելու մոլությանը տեղյակ։— Մեյ մը Մերկերյանին հարցնենք,— ավելցուց, գերագույն իմաստության կոչում ընելով։

Արդարև, հետևյալ օրը մայր ու զավակ ծեր գանձապահը շրջապատեցին և անանկ տիրական, կշտամբող շեշտով մը անոր հայտնեցին առջի օրվան ձախողվածքը, որ կարծես ա՜ն էր բուն պատճառը կամ պատասխանատուն։ Աղվեսը հանդարտորեն մտիկ ըրավ այդ հիվանդ բարբաջանքները և շեշտով մը, որուն մեջ գերազանց վստահություն կար և ամեն կասկած, երկյուղ, անձկություն վանելու ուժ մը, ըսավ.

— Ամեն գործ սկսած ատենը ատանկ կըլլա... մեյ մը հիվանդ մը թող ոտքը ներս խոթե ասկե, լմնցավ։ Կիրակի օրը հինգ հատ հիվանդ պիտի ունենաս է՛ն քիչը։ Ես եմ ըսողը։ Հայտե, օղլո՛ւմ, գործդ նայե, ատանկ պզտիկ բաներե տակնուվրա մ՚ըլլար,— ավելցուց գանձապահը բժշկին կոնակը ծեծելով հայրականորեն։

Հետո, պզտիկ դադարե մը ետքը.

— Հա՛,— ըսավ,— ո՞ւր է շամաշրճի էֆթիկը, աղջիկը ցուցնելու պիտի բերեր. ինք առջի օր քրոջս ըսեր էր տունը լաթ վլացած ատենը. թոհաֆ բան, ինչո՞ւ չէ բերեր, սրվիկա հասկնամ։

Եվ ահա մամային ու տոքթորին ջիղերուն լարվածությունը թուլցավ, կակուղցավ, անդորրացավ։ Այդ հրաշալի մարդը իր անձովը և խոսքովը միակ ազդու և անմիջական դարմանն էր հոգեկան, մտավորական տագնապներուն, որոնք հարաժամ կպրկեին այդ խեղճ էակներուն մարմինը։ Մեկենիմեկ փարատեցավ անոնց մռայլը, մաման խոսուն, զվարթ եղավ, տղան ժպտերես, կատակող։

— Հելպեթ տե,— կմտածեր Մերկերյան,— մազիս թելը ատ շշորդ թեթևսոլիկին ծառքը չեմ իտար. ո՞վ խենթեցեր է, ամեն մարդ հոգին պետեհավա՞ գտեր է, համմե՞...

Իր սենյակը առանձնանալուն, հանկարծ «շամաշրճի էֆթիկին աղջկան» մտածումովը կհամակվեր, կլեցվեր երիտասարդը։ Ինչո՞ւ այդ կինը իրեն չէր բերած իր աղջիկը։ Վախցա՞ծ էր, կասկածա՞ծ էր։ Իր ատրաշեկ երևակայությանը մեջ, գրգռիչ հրապույրներով կհագվեցներ այդ աղջիկը, նվաղկոտ, անուշ նայվածքներ կուտար անոր, ամոթխած շարժումներ, երբ ինք անոր կմոտենար, անոր կուսությունը մերկացնելու, իր մատները անոր մարմարե մխերուն քսելու համար։ Բայց «շամաշրճի» բառը իր ամբողջ գր-

ռեհկությամբը կուգար, մյուս կողմե, իր մտքին ու կիրքին թափքները զսպելու, իր հմայքը սառեցնելու։

Բայց այդ բառը, իր գռեհիկ նշանակությամբը, հանկարծ կը-զսպեր իր զգայական թափերը։ Իր երևակայությունը բարձրասլաց թռիչներ ուներ, զորս չէին գոհացներ լվացարար էֆթիկ մը և իր աղջիկը։ Ո՞վ գիտե, ի՞նչ կոշտ, տձև, ապուշ արարած մըն էր այս վերջինը, թանձր մեջքով, ուսերը դեպի դուրս, կովի անորոշ նայվածքով, խոշոր աչվքներով։ Իր երևակայած ու հոգիին բովանդակ խանդովը կանչած իգական սիլուեթները տարբեր էին բոլորովին։ Անոնցմե էին, որոնք փետրազարդ, գեղեցիկ, թեթևասլաց հուրիներու պես մաս կուգային Բերայի մայթերուն վրա, աշնան զով ու կապույտ վերջալույսերու հմայքին մեջ, նայվածքնին թովիչ, քալվածքնին վսեմորեն հրավիրող, կենդանի բուրաքաղակներ, որոնք մթնոլորտը ու կյանքը կանուշավետեն։ Մագնիսված, ժամերով կը-հետապնդեր այդ խորհուրդը, սիգաճեմ, անմատչելի կիները, որոնց տիրացումը անհնարություն մը կթվեր իրեն։ Հիմա, ատոնցմե մեկը էր, որ կուզեր տեսնել իր բժշկի խուցին դրանը շրջանակին մեջ։ Ո՜հ, ալ ի՞նչ համարձակ շարժվածքով մը ներս պիտի քաշեր զայն, այդ խորհուրդը, այդ գաղտնիքը պիտի բանար, մանրամասներ, բրդուճ բրդուճ ըներ տենդոտ մատվընիներովը, շնչասպառ, սեվեռաբիբ, ահարկու, արդուզարդերու շինծու ու նենգամիտ քողարկումին տակեն վերջապես դուրս հանելու համար ինչ որ ամենեն ավելի բաղձալի էր, ինչ որ շարչարած էր իր ըղեղը, ինչ որ ջիգերը աքցանած, էությունը կաշկանդած, խոշտանգած էր։

— Ջամաշրճի էֆթիկի աղջի՛կը,— կմմոռար զզվանքի ծամածռմամբ, ձեռքերը ետին, վեր վար ճեմելով սենյակին մեջ։

Հետո, ընկճված, դառնացած, հուսահատ, երիտասարդը ինկավ թիկնաթոռին մեջ, աչվքները գոց, ջղային գրգռման մը ենթակա, թևերն ու սրունքները գալարելով, ձեռքին մատները օդին մեջ ոչնչելով՝ մոլեգնությամբ բան մը քաշելու, բրցնելու պես, պրկունքները խածխծելով, գլուխը դեպի ետև, թիկնաթոռին հենակին վրա կործանած։

Ապիկա՝ չհագեցված կիրքին ջախջախումն էր, հետին ջղային շարժումները, զոր քաղցը կուտա մարմինին, գերագույն սպասման բոպեներուն։

Ժամեր հետո, երբ մաման, տոքթորին անսովոր հապաղումն անհանգիստ, անձամբ եկավ անոր սենյակին դուռը բանալ, տեսավ

իր զավակը հեռուն անկյունը, թիկնաթոռին մեջ փլված, անմեղնելու հանկարծական և խաղաղ քունը քնանալով։

— Հա՛, ճանըմ, հա՛, քուզում,— հավաստեց Մերկերյան մամային ու տոքթորին իր վերջին այցելությանը,— մեյ մը ճոթը բրդելուն վրա է. ա՛լ լմնցավ, կրնաք նե առաջը առեք... հասնողը դուռներնիդ ափ պիտի առնե... ինչո՞ւ աստար ֆեսֆեսե կընեք կոր։ էֆթիկը տեսա. զավալլը կնիկը լաթ վլալու գացեր է տեղ մը՝ չէ կրցեր գալ, վաղը պիտի բերե աղջիկը...

— Գործերնիս ատ չամաշրճիի կտորի՞ն մնաց,— կմմոռար տիկին Մարկոսյան, մոլեգին հպարտության նայվածք մը նետելով դեպի զանձապահը։

— Հո՛գ չէ, հանըմ,— կպատասխաներ ծերունին,— չամաշրճին կտորեն կսկսի տե, օր մըն ալ գիտե՛ս ա... աստված ուզե նե կըլլա։

Հանըմը կերևա որ հասկցավ այդ խորիմաստ դարձվածքին նշանակությունը. վասնզի աչքին դաժանությունը մեկեն մեղմացավ, երազուն, գգվական անսահման նայվածքի մը փոխվեցավ դեպի տոքթորը, որ սովորությանը համեմատ վեր վար կճեմեր սրահին մեջ, մտախոհ։ «Հեքիմ պաշի»-ի առասպելին ակնարկած էր Մերկերյան։

Կիրակի օրը, հետմիջօրեին, ամեն մարդ իր դիրքը բռնած էր ամբրային տան մեջ։ Տիկինը ընդհանուր հրամանատարի մը հանգամանքը ուներ, կարծես դեպքերուն վրա հսկելու կոչված։ Խաչոն, որուն կապույտ շուխայե նոր շալվար մը և ճամկավոր շեպկեն մը շինած էին, երբանցքին դրանը առջև կնստեր՝ հյուպատոսական գավազի մը պես, իր նոր հագուստին մեջ քիչ մը անհանգիստ և անճարակ։ Տոքթորը աշխատանոցը փակված էր, թավիշե բանված գլուխը գլուխը, գիտության գործավորի պլուզան հագած։

Վերջապես, փողոցին դրան ձայնը լսվեցավ. Խաչո, որ միջավայրեն և կացութենեն ազդվելով, ի՛նքն ալ սկսեր էր անգիտակցաբար, մեքենաբար վայրկյանին տպավորությունը կրել, հուզվիլ, շահագրգռվիլ, ցնցվեցավ իր աթոռին վրա. դրան ետին ոտնաձայն մը լսվեցավ։ Գավառացին ելավ, բացավ։

Գեր կին մը և նիհար, սլացիկ հասակով աղջիկ մը ներս մտան, Խաչոյին շլմարած աչվքներուն առջև։ Եվ ան, իր շվարմանը մեջ վերցավ պարտականությունը անթերի կատարել և փոխանակ խիստ դեպի տոքթորին դուռը նետվելու և պայմանադրված մա-

տի հարվածները տարու, կեցեր գեր կնոջ երեսը կնայեր։ Այցելողները, տատամսոտ, իրարու կնայեին, փնտրելով ան, որուն եկած էին։

— Տոքթորը ո՞ւր է,— հարցուց վերջապես գեր կինը երկչոտ ձայնով մը։

Բայց այդ վայրկյանին դիմացի դուռը շարժեցավ, կիսովին բացվելով և տոքթորին անհամբեր գլուխը ցուցնելով։

— Հրամմեցեք, տիկի՛ն։

Այս հրավերին վրա, կինը և աղջիկը սենյակեն ներս մտան։ Տոքթորը երկու աթոռ ցուցուց անոնց և լուսավորելու համար սենյակը, որ կես մութ էր, երկու պատուհաններուն սթորները վեր քաշեց։ Ասդին դարձած ատենը զննող ակնարկ մը նետեց այդ երկու արարածներուն վրա, որոնք առաջին նվիրագործումը կբերեին իր անկատար տոքթորության հանգամանքին։ Եվ շլացած մնաց։

Երկու կիները, որոնք անշուշտ մայր ու աղջիկ էին, և ապահովապես Մերկերյանին ծանուցած շամաշրճի էֆթիկն ու իր աղջիկը, տարօրինակ հակապատկեր մը կձևացնեին։ Մայրը տարապայման գեր, աղջիկը շափազանց նիհար։ Քառասունը անցուցած էր ան, վաստնդի երեսին մաշկերը, որքան որ ալ առատ ճարպով թխմված, թույլ կախվածք մը առեր էին այտերն ի վար, երթալ խառնվելու համար ծնոտին փռվող երկու շերտ մսակույտերուն։ Հնգա ծիծեր կբեռնավորեին անոր լայն կուրծքը։ Լայնալիճ փորը կխարսխանար մեծակերտ դիստերուն և հաստաբեստ հետույքին վրա։ Դարբնոցի վիթխարի փքոց, պոռթկացող գիրութենեն տանջված, խեղճ կինը կհևար միշտ, համր, համաչափ շարժում մը տալով ճարպի իր թանձր զրահին։ Դեմքին գծերը, միսի լերկ հորդության մեջ գրեթե հալած կորսված, բան մը չէին արտահայտեր. մինակ աչվրները, կսկիծոտ, շատ լացող, բարի հայ կնկան աչք, ցավի, գորովի, պաղատանքի խոնավ սևեռանք մը ունեին, որմե անկարելի էր շաղդվիլ։ Գլուխը սև վարշամակի մը մեջ փաթթած էր, մինչև ճակտին կեսը, ականջներուն վրա ծոծրակեն վար։ Լայն սև շփակ մը և շրջագդեստ մը հագիվ կպարտկեին այդ մեծդի մարմինը։

Անոր քով բոլորովին տարբեր էր աղջիկը, ինչպես նրբուղեղ ուռի մը մեծաբուն կաղնիի մը քով։ Հիվանդոտ, դյութիչ և սրտաճմլիկ աղվորություն մը ուներ ան։ Դժգույն դեմքը այնքան նիհար, որքան մելամաղձորեն հրապուրիչ, անթերի էր գծերուն մաքրությամբը և անեղծությամբը։ Բայց հակառակ այդ տրամալի նիհարությանը, սև ինքվիները անանկ գեղասլացիկ վրձնումով մը կկամարանային հոնքային կարկառին վրա, իր նշաձև ականողիքները՝ զարդարված երկար թարթիչներով՝ այնպես անհունորեն խորհրդալից, նվաղկոտ, ճաճանչավոր, շքեղ աչվրներ կպատսպարեին ու քիթը, անստգյուտ հարմարումով մը, այնպես փափուկք և բարախուն ոնգունքներով վերջավորված, ու շրթները, որքան բարակ, այնքան զգայնամոլ և համբուրավետ, այնպես շքնաղ ճեղքվածք մը կհորինեին այդ եզական դեմքին վրա, զոր սև սաթի պես շողափայլ, հորդելակ վարսերու ջրվեժ մը կշրջանակեր, որ՝ առաջին նայվածքով իսկ՝ անկարելի էր չհափշտակվիլ անով, դեպի անոր չմղվիլ բոլոր էությունովդ, կամքիդ, կորովիդ, լրջությանդ փլլիլը չզգալ անոր նայվածքին առջև, անոր հոգիին դյութական ցոլմունքներուն մեջ չշլանալ...

Անոր հանդեպ գթությունները ամենեն փափուկը և զմայլանքներուն ամենեն անխառնը կապրեր։ Իր արտահայտությանը մեջ գեղեցիկին ճառագայթը կար, բայց ցավին վսեմ ու խորունկ կնճիռը նաև։ Իր շրթները՝ դգվանքի անուշ փոթով դեպի դուրս երկնցած ատենին, չէիր կրնար հասկնալ թե անոնք հեշտությա՞ն լարերուդ կդիպչեին, թե կարեկցության։ Ինչ ալ ըլլար զգացումը, զոր ներշնչեր, առինքնող, հափշտակող, խենթեցնող էր ան, և երբ երիտասարդը առաջին ակնարկի մը մեջ ամփոփեց այդ սքանչելի դեմքը, անմիջապես զգաց հարվածին ծանրությունը ու դողաց։

Հագիվ տասնչյոթը տարու էր, թեև նայվածքին տառապած խոհունությունը ավելի ցույց կուտար։ Պարզ, անսեթևեթ կերպով էր հագված։ Սև ու ճերմակ քառյակներով նկարված տպածոյն պլուզա մը կպարտկեր անոր նրբաձույլ իրանը, լանջքին վրա ցույց տալով խոովիչ հարույցքը, որ անհամեմատ աճում մը ուներ բաղդատմամբ մարմնին նիհարությանը։ Մեջքեն վար՝ նրբառեջ թելերով սպիտակ գոգնոց մը՝ մուսլինե վետվետ ջուրքով, կերկննար մինչև շրջազգեստին ծայրը, հագիվ ցուցնելով ոտքին բարակ պըճեղները և գմբեթարդ մանր ոտվրները։ Արտասովոր աղքատության մեջ ճիգով պատրաստված պարզ, ժան արդուզարդի մը հովը կար մանկամարդ աղջկան հանդերձանքին վրա։ Սակայն այդ արդուզարդը հիանալի դյուրությամբ մը, շատ բնական ճկնությամբ մը կրելու իր ձևը կապացուցաներ թե ավելի ճոխ, ավելի բարդ զարդարանքներ միշտ վայելցնող մարմին մըն է որ պիտի ծածկեին։ Մաղերը, գանգին վրա հույժ առատ, թեթև գանգրացու-

մով մը ծոծրակին վրա կժողվտվեին՝ թույլ խառածոպ մը ձևացնելով, ինչ որ իր մատղաշ աղջիկի երևույթին կնոջական շեշտ մը կուտար։ Ձեռքերը ճերմակ էին, նրբավարտ մատվընիներով, մաշկին տակեն երակներուն կապույտ ցանցը գծագրելով։

Խուցին մեջ, պահ մը մինակ գեր կնկան հեքը լսվեցավ։ Երիտասարդը իր շվարումեն կհամենար բժիշկի վայել հարցումներն սկսելու։

Եվ նորեն, կինն էր որ կացության թելը ձեռք առավ.

— Քուզում տոքթոր,— ըսավ աղաչանքով,— քեզի ճանձրություն պիտի ըլլա, ա՛ֆ կընես, աղջիկս ըռահաթսըզություն մը ունի, ամա ի՞նչ է, չեմ հասկնար կոր, ճար մը ընեիք, քուզում տոքթոր։

Տոքթորը՝ ճշմարիտ բժիշկի մը լրջությամբը աղջկան երեսը նայեցավ, հետզհետե մոտենալով, աչքին կոպերը զննեց, բազկերակը ձեռք առավ։

— Ի՞նչ է անհանգստություններդ, օրիորդ,— հարցուց հոգածու շեշտով մը։

— Չեմ գիտեր, տոքթոր,— ըսավ աղջկան ձայնը, անուշ երաժշտություն, որ տոքթորին թուքը կոկորդին մեջ ցամքեցուց։— Երբեմն գլխու պտույտ կունենամ, քալած ատենս ծունկերս կկոբրտվին, ճաշերե հետո մեկ երկու ժամ տեսակ մը նեղություն կզգամ... վերջապես ասոր նման բաներ։

Արշակ չէր ձգած աղջկան ձեռքը և կեցած էր իր այցելուհինեքուն դեմը, որոնք իր երեսը կնայեին, ինչպես մեկու մը, ուրկե կյանքիդ փրկությունը կսպասես։

— Քուզում տոքթոր, ճար մը,— կաղերսեր մայրը իր խժացող ձայնովը։— Քանի մը հեքիմներու տարի, ֆայտա մը չտեսանք... ամապա չպիտի՞ աղեկնա աղջիկս,— կավելցներ աղջկանը դառնալով կսկիծոտ ու անձկալի նայվածքով մը։

— Հոգ մ՚ընեք, հանըմ, բան մը չէ, կաղեկնա,— ապահովեց երիտասարդը։

Եվ հանկարծ, առանց գիտնալու թե ինչպես, իր մեջ փոփոխություն մը զգաց ուսանողը. ճշմարիտ տոքթորի մը փորձությունը ունեցավ. ուզեց վերջապես ապրիլ գիտնականի պայմանադրական շարժումները, գործողությունները, կյանքը։ Վայրկյանի մը համար մոռցավ իր բոլոր ամբարիշտ, վարոց մտադրությունները, անկեղծ գիտնականի բոցովը բռնկեցավ, ախտաբաններական լուրջ գործողության տագնապ մը վանեց իր մեղապարտ տրամադրությունները։ Լրջությամբ մը, զոր միայն արվեստին հմայքովը հափշտակված գործավորը կունենա, ականջելու գործիքովը մոտեցավ աղջկանը և խոկույն քակել տալե հետո պլուզան, որուն տակեն մաքուր շապիկին մահկանաձև ճեղքը երևան հանեց լանջքին վերնամասը, սկսավ մտիկ ընել, երկարորեն, տեղի մը վրա քանի մը վայրկյան համենալով, գրեթե ինքնամոռաց, այդ դյութիչ մարմնին տեսքեն ու բույրեն գինով, և հանկարծ նորեն բոլորովին մոռնալով իր լուրջ դիտումները, տիրական շարժմամբ մը բանալ տվավ աղջկան ուսերը, կռնակը և ա՛լ տենդոտ շարժումներով էր որ, մերթ իր գործիքովը, մերթ գլուխը փակցուցած այդ մատղաշ իրանին ամեն կողմը, կռնակին, ուսերուն, ծոծրակին, ուսին, ստինքներուն, հետզհետե անանկ արագությամբ մը և կույր թափով մը, որ կսարսըռացներ աղջիկը, շարունակեց իր քննությունը մինչև որ, վերջապես, այդ գրգռիչ շոշափումեն խելակորույս, ետ քաշվեցավ, կարծես ինքզինքը մղձավանջե մը ազատելու պես։

Մանկամարդ աղջիկը, որ երիտասարդ բժշկին այդքան խանդաղատալի և շնչասպառ քննությենեն քիչ մը շվարեր էր, լայն շունչ մը առավ, երբ ազատեցավ անոր բազուկներեն. կոճկվելով, շոկվելով. մինչ մայրը դիմացեն կնայեր սքանչացմամբ մը, աչքերը միամիտ հրճվանքով մը լեցված բժշկական անստգյուտ քննությենեն, որուն առարկա եղած էր իր աղջիկը։

— Ծանր բան մը չի կա,— հայտարարեց երիտասարդը կատարյալ լրջությամբ,— բայց երկար ատեն դարմանի կարոտ է օրիորդը։

— Աման, ճանըմ տոքթոր, տուն գիտես,— աղերսեց նորեն մայրը,— մեկ հատիկս է, աղեկցունես նե ժամ շինած կըլլաս։

— Հոգ մ՚ընեք, հանըմ, վախու բան չի կա, օրիորդը պիտի աղեկցունեմ, կխոստանամ։

— Աստված սիրտիդ կյորե տա,— մաղթեց հեք մայրը, աչքերը ջերմեռանդորեն ձեղունին հառած։

Հիմա, տոքթորը գրասեղանին առջև անցավ, գանգը երկու ափերուն մեջ, կմտածեր... Տակնուվրա եղած էր։

Ու ինք որ կսկսեր տեսնել չամաշրճի էֆթիկի աղջիկը, անհեթեթ, տձև, ապուշ, տգեղ... Պահ մը կասկածեցավ այդ մայրության և այդ աղջիկնության կապին վրա. վերջապես անբնական կթվեր իրեն այդքան գեղեցիկ էակի մը այնքան թանձր մարմինե մը

գոյացած ըլլար։ Սվ որովհետև, հիմակվընն, ճակատագրական բան կնախազգար այդ հանդիպումին մեջ, դատելով այն բուռն ու խորքանդակ տպավորութենեն, զոր այդ հիվանդագինորեն չքնաղ ու մելամաղձոտ աղջիկը թողած էր իր հոգիի ու մտքին վրա, հարկ սեպեց ստուգել այցելուհիներուն ինքնությունը։

— Օրիորդը ձեր աղջիկն է, այնպես չէ՞,— հարցուց կնոջ դառնալով։

— Հա ճանս, մեկ հատիկս է, որբ է,— պատասխանեց մայրը իր միշտ լալկան ձայնովը,— էս աս վուճուդովս դատեր մեծցուցեր եմ... խնդամ նե անոր երեսեն պիտի խնդամ... Աման, օտկդ պագնեմ, տոքթոր, թեզ աղեկցունեիր, զերե դպրոցեն նոր էլավ, տիվալ կպանի կոր, էհ, ի՞նչ ընենք, յավրում, մյուհտաճ ենք..

— Հոգ մ՚ընեք, հանըմ, շուտ պիտի աղեկնա։

Արշակ, մտախոհ, ցնցված այն գաղափարեն, թե այդ փափուկ ու չնաշխարհիկ արարածը թշվառության մեջ կտվայտեր, մինչդեռ ապարանքներու փարթամությանց արժանի էր, թուղթի մը վրա սկսավ բաներ մը գրել, դեղագիր, որ հիվանդին կյանքը պիտի փրկեր, վերակենդանացներ զայն։ Մնաց որ, իր շփոթությանը, իր խռովքին մեջ, ոևէ կերպով չէր օգտված այն քննութենեն, զոր կատարած էր աղջկանը մարմինին վրա։ Հասկցած էր սակայն, թե անիկա կազմական ընդհանուր տկարություն մը ուներ, հետևանք անբավական սնունդի և կյանքի ուրիշ ողբալի պայմաններու։ Այս իմաստով քանի մը զորացուցիչ դեղեր գրեց։ Լմնցունելե հետո՝ պայմանագրական բացատրություններեն մեկը տվավ դեղագրին գործածման և սննդառության եղանակին վրա։

— Օրիորդ, անուննիդ։

— Սոֆի։

Երիտասարդը, իր շլացման մեջ, ամբողջ դյութություն մը գտավ այս անունին մեջ։

Հետո ոտքի ելան անոնք, աղջիկը շնորհակալության բառեր մրմնջելով, մայրը ռամիկ, սրտաբուխ մաղթանքներ կարդալով երիտասարդ տոքթորին հաջողությանը համար։

— Դեղը լմննալուն պես օրիորդը նորեն բերեք,— շտապեց ըսել Արշակ, երբոր անոնք սենյակեն դուրս կելլային։

— Օխմ ըլլաս, զավակս, աստված սիրտիդ կյորե տա,— պատասխանեց մայրը։

Դուրսը, փողոցին մեջ, մայր ու աղջիկ քալած ատեննին։

— Սոֆի,— կըսեր մայրը,— մեկալ տոքթորները ասանկ նայեցա՞ն... վո՜ւյ ան ինչ նայել էր, հոգով մարմնով, տակով վրայով, սանկ տիխադը մը. թեքելի չէ քի կըսեն կոր քի պիրինճի հեքիմ պիտի ըլլա... աստված պահե, ան ընտոր ալ սյուլյունի պես տելիխանը է...

Մանկամարդ աղջիկը, որ ամիրայական ապարանքին խորհրդավոր հանդարտությենեն, ճոխությենեն և մանավանդ գեղեցիկ տոքթորին անձնվեր ու հոգածու վերաբերումեն բուռն կերպով ազդված էր, և մանկամարդ աղջիկի իր դեռ կույս երևակայությունը վառված էր, մասնակից գտնվեցավ մորը զգացումներուն։

— Մայրի՛կ, ա՛լ ինծի ուրիշ տոքթորի մի՛ տանիր,— ըսավ,— ասկեց աղեկը կարելի չէ գտնել... կզդամ կոր որ աս պիտի աղեկցունե ինծի։

— Անա՛նկ է, աղջիկս, էս անանկ ուրմիշ կընեմ կոր։

* * *

Այցելուհիներուն մեկնումեն հետո, Արշակ, գրեթե խելակորույս, ինկավ այն աթոռի վրա, ուր նստած էր հիվանդ աղջիկը։

— Ան ի՞նչ աչվըներ էին,— կմռմռար։

Մինչև այդ տարիքը ապրած կիրքերուն և տպավորություններուն մեջ հիմակվանը բոլորովին տարբեր էր։ Կնոջ մը ներկայությանը չէր հիշեր կրած ըլլալ ատանկ ահեղ ցնցում։ Այն ցավին տակ, զոր կզգար այդ չքնաղ երևույթը հեռացած տեսնելուն, դեպի սենյակին դուռը կմղվեր, ետ կանչելու, ետ բերելու համար զայն նորեն։ Կպտտեր ճակատը բռնած, ակնարկը թափառահած, խենթի պես։

— Ա՛խ, ան ի՞նչ աչվըներ էին։

Կկենար աթոռին դեմը, տեսիլքը հոն բերելու համար երևակայության ուժովը, կվերաշիներ անոր գլուխը, սև, հրաշալի վարսերը, քիթը, բերանը, դեմքն ու աչվընները, մանավանդ աչվընները, որոնք դեռ կվառեին, կնայեին կարծես հոն իրենց բիբերուն ածխային կայծկլտուքովը, իրենց սևեռանքին ամբողջ դյութանքովը, ու մատաղ, դյուրաբեկ, սլացիկ մեջքը, ժանեկազարդ գոգնոցը, փոքր ոտվընները, որոնք գետինը կկոխեին սանկ քիչ մը դուրս դարձած ամբողջությունը վերջապես, մաքուր, ծփծփուն, անստգյուտ, համբուրելի։

Կրած հոգեկան այդ հեղակարծ և անսովոր տանջանքը կզարմացներ զինքը։ Ջամաշրճիին աղջիկը, զոր տեսնելէ առաջ այնքան արհամարհեր էր, ի՞նչպես կրնար իր նայվածքին մոգականությանը տակ միայն ատանկ գալարել, տախտապարել զինքը։ Հպարտության, ընդվզումի բուռն տագնապ մը ունեցավ, ինք իր տկարությանը դեմ ելավ և, գոտեպնդվելու համար բարոյական և ֆիզիքական ջախջախումի մը դեմ, որ կրնար տեղի ունենալ հափշտակութենե մը, օգնության կանչեց, արթնցուց բոլոր իր շարվատոգի, մեղավոր, անարգ բնազդները, կրակ տվավ իր ախտավարակ սլացքներուն, իր երևակայությունը լեցնող, բռնկցնող անստգյուտ կույսին հետ՝ հաճույքի, տոփանքի, գարշանքի վայրագ ու անասնական տեսարաններ երազեց։ Ատեն-ատեն կսթափեր սակայն իր ափրոդիտյան գալարմունքեն, աչքերը սևեռած ճիշտ այն ուղղությամբ, ուր շողացեր էին մանկամարդ աղջկան բիբերը, ու վերացած, շլացած, ջերմեռանդ.

— Ո՜հ, աչվընե՞ր, աչվե՞ներ,— կմռմռար։

Մաման եկավ վերջապես ազատել զինքը իր ջղագալար տագնապներեն։ Կճառագայթեր ան, վասնզի այլևս արդարացած էին իրեն համար բոլոր այն գիտական տեսությունները որոնցմե շրջապատված կապրեր հիմա իր զավակը և որոնք այնքան սուղի նստած էին իրեն։

— Հիվանդը նայեցա՞ր, տոքթոր,— հարցուց հպարտ ու պատկառոտ շեշտով մը։

— Նայեցա, մամա. շատ հեքիմներու տարեր է մայրը, օգուտ մը չէ տեսեր։ Ինչ ալ աղվոր, շնորհքով աղջիկ, բնավ չամաշրճիի մը աղջիկն է չես ըսեր, հիվանդությանը պատճառն ալ աղքատությունն է, մե՞ղք, մե՞ղք...

— Ամա՛ն, զավակս, աղեկցուր որ աղեկ անուն մը հանես,— պաղատեցավ մաման, միշտ իր սևեռված մտածումին գերի։

— Ապահով եղիր, մամա։

Ու մաման, զմայլանքով, սենյակին մեջտեղը կեցած. ձեռնամած ջերմեռանդությամբ մը շուրջը կդիտեր, բժշկական գործիքները, որոնք ապակե դարանին մեջ իրենց պողպատներուն մութ շողյունը կփայլեցնեին, մատենադարանը՝ գիտական մեծահատոր գիրքերով բեռնավոր, ամբողջ բժշկական սարվածը, վերջապես, տոքթորովը միասին, որ իր թավիշե բանված գդակովը և կոտվի պլուզայովը տեսորը կամբողջացներ։ Ասոնք հիմա կարծես նոր

հմայք մը կառնեին իր իբնոսացած աչվընեռուն առջև. անոնց վրա կտեսնար ա՛լ մերձեցած փառքերուն ցոլմունքները, անհետացումը իր հոգեկան և նյութական տվայտանքներուն, ամիրայական կյանքի այլապես անուշ, հպարտ, պանծագին վերընձյուղումը։

Իր հափշտակությանը մեջ, տարված երևակայության բարձրաթռիչ թևերուն վրա, որոնք մինչև «հեքիմ պաշի»-ի առասպելին կմերձենային, մեկենիմեկ աչվընները թրջած, խելահեղ, արբշիռ, իր ազազուն բազկացը մեջ սեղմեց զավկին գլուխը, իր խոնավ, կույր, ապուշ զգվանքներուն տակ ծածկելով զայն, ճիշտ ինչպես կրներ, երբ ան տակավին իր անկողնին մեջ, իր մայրական ծոցին վրա կբնանար։ Երիտասարդը տոկաց այդ անհանդուրժելի ողջագուրանքին, անկարելի ըլլալով զայն մերժել, կրեց ջղային այդ տագնապին թաց ու պլշկան շոշափումը բոլոր։

— Զավա՜կս, հոգի՜ս, կյա՜նքս...

Ու ան կմտածեր մյուսին վրա, հիվանդ աղջկանը, անոր նրվաղկոտ, անհուն նայվածքին, որ իր սրտին մեջը իջեր էր ճաճանչաձև, լույսով ու ջերմությամբ պատեր ողողեր էր զայն։ Ակամա զգվանքը, որով կցնցվեր հիմա մորը գռեհիկ գգվանքներուն տակ, այս անուշ վերհիշումովը կվաներ ու կհամակվեր երանությամբ մը մանավանդ անոր համար հզոր և քաղցր, վասնզի աներկմիտ ապահովությունը կզգար իր մագիլներուն մեջ բռնած ըլլալու այդ փափուկ աղավնին, հակառակ անոր ապարդյուն և ոգեսպառ ոգորումներուն՝ անոր բովանդակ հեշտությունը, դյութությունը, աղվորությունը մեկ համբույրի մը մեջ ծծելու, խմելու կարող։

Անխուսափելի Թադեոս աղան երևցավ իրիկվան, գլխի հաղթական օրորումով, իր կատարած գործին գիտակցությամբը հրապարտ։

— Եկա՞ն ա,— ըսավ վստահորեն։

— Եկան, եկան,— պատասխանեց տիկին Մարկոսյան գոհունակ շեշտով մը։

— Աչվընիդ լո՛ւս, աս չէ՞ր ուզածդ, հանըմ։

— Շնորհակալ եմ, Թադեոս աղա։

— Զոր շնորհակալ եմ-ով չլմննար աս գործը, հանըմ,— վրա բերավ դանձապահը ծիծաղելով,— տղադ բաթենդլի հեքիմ ըրի, զիֆեթ մը իրավունքս չէ՞։

— Մեկ զիֆեթ չէ հարյուր զիֆեթ,— հաստատեց տիկին Մարկոսյան՝ իր ուրախությանը մեջ ամեն բան տալու պատրաստ։

Իրիկվան սեղանին վրա, որ այնքան զվարթ պիտի անցներ՝ պարագային մեծությանը պատճառով, դիտվեցավ որ տոքթորը երազուն նայվածք մը ուներ. պատառները մեքենաբար կմտնեին բերանը, չէր խոսեր բնավ և ատեն-ատեն ձեռքը ճակտին վրայն կանցներ՝ մթին ու համառ հաճախանք մը վանելու պես։

Գանձապահը աչքով ինքվիով հանրմին հարցուց թե ի՞նչ կար. հանրմը չեմ գիտեր պատասխանեց միևնույն ձևով։ Թադեոս աղային բոլոր ջանքերը տոքթորը զվարթացնելու ապարդյուն մնացին, և ճաշը լմննալուն, առանց իսկ սրահ անցնելու, գլխու ցավ մը պատրվակելով, քաշվեցավ իր սենյակը, առանձնակի, ուղածին պես խոկալու համար այդ օրվան այցելությանը վրա, այդ տարօրինակ, անմոռանալի դեմքին վրա, և կրակ տալու համար իր երևակայությանը, երազելու համար սանձարձակ ու անվրդով, հեռու մամային անձկոտ, հետազոտիչ ակնարկեն, և մանավանդ ծերուկ գանձապահին վերլուծող, գուշակող, հասկցող չար նայվածքեն։

Միտքը վրդովող պատկերին թելադրությանը տակ, ուսանողը, տեսակ մը գրգռման մատնված, կնստեր գրասեղանին առջև, որուն վրա արույրե շքեղ, բարձր լամպար մը իր հորդ լույսը կթափեր, կթաղվեր լայն բազկաթոռին վրա, գիրք մը կբանար, ան վրանքաց վեպերեն մեկը, որոնք իր ըղեղին ու սրտին սնունդը կըկազմեին, քանի մը էջ կկարդար առանց հասկնալու, երբեմն երկարորեն կանգ առնելով տողի մը վրա՝ առանց զայն տեսնելու, գանգը այրող կրակեն տանջված. ու կգոցեր գիրքը բարկության շարժումով մը, ոտքի կելլեր, կպտտեր, ձեռքերը ետին կապած, մերթ մինչև մատենադարանին անկյունը երկննալով, ուր արծաթյա շրջանակով հայելի մը կախված կգտնվեր պատեն. անոր մեջ կզնեներ իր դեմքը աչքերու սևեռանքով մը, խարտյաշ բեղերը ոլորելով։

Երբեմն, սենյակին մեջտեղը կանգ կառներ հանկարծ, երկու ձեռքերովը ճակատը սեղմելով՝ անկեց հաճախանք մը վանելու համար կարծես, կամ չձգելու համար որ պայթի, աչքերը պարապին հառած՝ տենդավառ խենթ անշարժությամբ մը։

— Աչքե՜ր, աչքե՜ր,— կհծծեր ակռաներուն մեջեն։

Դարձյալ կնստեր, գրքին էջերը կդարձներ շուտ շուտ, կարծես անոր մեջ փնտրելու համար ինչ որ չէր գտնար, ինչ որ աչքերը կըփնտրեին պարապության մեջ ունայնորեն։

Վերջապես, անհանգիստ, սրտնեղ, նորեն ելավ, պատուհան վազեց, բացավ զայն ու մինչև կես մեջքը դուրսը մութին մեջ ծռեցավ, բիբերը խավարին կպցուցած, անոր թանձրության մեջեն երթալ հասնելու համար ըղձացված նպատակին, սովալլուկ շիկերեի մը պես ռնգունքները շարժելով՝ գինովցնող բույրի մը հետամուտ, զոր չէր հաջողեր ծծել։

Վարը կտարածվեր ծառախիտ պարտեզը հորդ ու արգավանդ կանանչությամբ։ Գարնան խորհրդապահ շշուկները կդողդղային մթության մեջ։ Ծղրիդ մը իր ողբը կսուլեր, հեռվանց, անծանոթ թավուտներու գաղտնիքին մեջեն։ Դեմը, գետակին ջուրերը կփռվեին մութ շողյուններով, ակոսված փոսփորի շողանցիկ արծաթավորումներեն, զորս անձայն սահող նավակներու թևակները կհորինեն։ Խորը, հորիզոնին ծոցեն, էյուպի բլուրներուն սև պատը կբարձրանար, անսահման, վիթխարի վարագույր՝ ցանցառ լույսերով գնդասեղված։ Եվ այդ մթին խաղաղության վրա կհևար բնության դանդաղ, հզոր, ահեղ շնչառությունը, հեռավոր հեզ սլվլյուն մը մերթ, թոքապատառ, ցավատանջ հառաչանք մը երբեմն։

Ու երիտասարդը, որ քիչ անգամ գարնան մրափող գիշերներու խավարշուտ ու խորունկ բանաստեղծությունը վայելելու մարմաջը ունեցած էր, այդ գիշերը երկարորեն մնաց հոդ, մինչև կես մեջքը պատուհանեն դուրս, անսովոր ու անծանոթ հեշտություն մը արբենալով բնության այդ հևացող մրափեն, որուն անբացատրելի խորհուրդը, հմայքը այնքան սերտորեն, այնքան ուժգնորեն կհաղորդվեին հիմա իր ալեկոծված հոգիին։

Բայց ահա հանկարծ իր թափառահաճ ակնարկը կանգ առավ մթության համապարփակ հատակին վրա, լայնաբիբ, անշարժ։ Երկու լույսեր կշողային հոն, հափշտակող ճառագայթումով մը, կարծես բնության աչվրները, որ մեկենիմեկ բացվեին ու իրեն նայեին։

Ան թոթվրվեցավ, հևաց, դողաց։

Ու հառաչանք մը ժայթքեց կուրծքեն.

— Աչվրնե՜ր...

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՄԵՐԺՎԱԾ ՍԵՐ

Ա.

Քանի հեռանար այդ խորհրդավոր տունեն, անոր մութ պերճանքը, խաղաղ ու աղնվական մթնոլորտը կճնշեին իր մատղաշ և դյուրավառ երևակայությանը վրա։ Միտքը կուգար, հստակ գիծերով, մարմարապատ բակը ճերմակ և մաքուր. ձեղունեն կախված մեծ ստեղնավոր ջահը, զոր եկեղեցիներու մեջ միայն տեսած էր. լայն սանդուխը՝ նկարուն կապերտով մը ծածկված, ուսկից վեր ելած էին այնքան զգուշությամբ, դրան առջևի գավառացին իր լայն, կարմիր, ապուշ դեմքովը, նոր տարազին մեջ անճարակ կեցվածքով մը. բժշկին սենյակը՝ այնքան պատկառելի ու խորհրդավոր, որքան աղոթատեղի մը. հետո վերջապես տոքթորը, ա՛ն մանավանդ, այնքան հրապուրիչ, գթոտ, հոգածու, իր պլուզովը ու գդակովը։ Ի՜նչ սրտառուչ խանդով փարեր էր իր քանդված մարմնին՝ անոր ավերումները զննելու, անոր քայքայումին պատճառները որոնելու համար։ Ո՜հ, այո՛, հի՛մա մանավանդ կզգար այդ փարումին ամբողջ խանդաղատալի հոգեբանությունը, անոր գեղեցիկ, խարտյաշ գլուխին տենդոտ պտույտը իր կուրծքին ու կոնակին վրա, շնչասպառորեն։ Միտքը կուգային անոր տարփոտ, գթալի նայվածքները, զորս գողունի կերպով նետած էր իրեն։

Ու ի՜նչ անուշ, ու ի՜նչ աղվոր, ու ի՜նչ տպավորիչ՝ դեմքը այդ երիտասարդ տոքթորին։ Գլխու ի՜նչ վեհ, հպարտ բռնվածք։ Շարժումներու ի՜նչ անբռնազբոս բնականություն։ Այս բոլորը, հիմակ որ հեռի էր ինք անոնցմե, կխուժեր մտքին մեջ, այն թովանքը ստանալով, զոր միայն անսահմանությունները կընթողուն ճախրասլաց երևակայություններու վրա։ Իր անփորձ, միամիտ պարմանուհիի կույս հոգիին մեջ, դերբուկ սալարկներուն վրայեն քալած ատենը մորը հետ, որ դժնդակ կերպով կհեռար, Սոֆի անդիմադրելի բաղձանք մը կուններար դառնալու նորեն այդ տունը, իրեն համար այդ անծանոթ բաներուն հմայքը վայելելու դարձյալ երկարորեն...

— Մայրի՛կ, տոքթորին ե՞րբ պիտի երթանք նորեն,— կհարցներ մորը։

— Աղջիկս, նայինք ընտո՞ր պիտի ըլլաս սա իլաճին վրա, անոր կյորե կերթանք. կըլլա քի ալ հի՛չ պետքը չես ունենար տե մենք ալ չենք երթար գլխու ցավ տար...

— Մայրիկ, ես մեկ անգամով չեմ աղեկնար, կարելի բան չէ,— կպատասխաներ Սոֆի գրեթե դողալով այն տխուր պատահականության մտածումեն, թե ինք կրնար մեկ անգամով աղեկնալ ու տոքթորին տունը երթալու պետքը նորեն չէր ներկայանար։

— Պե՛ յավրում, ինչո՞ւ ատանկ կըսես, պելքի կաղեկնաս,— կպնդեր լվացարարուհին, իր աղջկան զգացմունքներուն բոլորովին անտեղյակ։

Ու կքալեին անոնք Հ... գյուղին դերբուկ, խորդուբորդ փողոցներեն, մեկը հոգնության տաժանքեն չարչարված, մյուսը հոգիի խռովքներեն, ալ բառ մը չուղղելով իրարու, կարծես զիրար չըխանգարելու համար։

Անելի մը խորը, տախտակե խոշոր, հին, չորցած դուռ մը հըրելով ներս մտան Սոֆի և իր մայրը։ Պարտեզ մը կտարածվեր հոն, բարձր խոտերով ծածկված. ռազիանի անհատնում թուփեր իրենց կանանչ, աղվոր ցողունները կխովացնեին բարակ ծիլերնուն անհատնում դրասանգներովը։ Աջ կողմը, դրան ուղղությամբը, մեկ մեթր բարձրությամբ գճգճված պատ մը կկանգներ, որ կերթար կանհետանար հեռուն, թուփերու արշավանքի մը տակ։ Ձախ կողմը, փայտորմ մը, որուն տախտակները ցուրտեն ու արևեն գալարվեր, ծռմռկեր էին, կհանգեր տեսակ մը շենքի, որ վրայեն ահագին սայլատան մը, հարդանոցի մը կնմաներ ավելի, քան բընակարանի։ Անոր ընդարձակ տանիքին վրայեն կարծես առասպելական հսկա մը անցած էր՝ կոխած տեղը վար իջեցնելով, այնքան ելևէջներ կային հոն, ա՛լ սեցած կղմինդրներ, տեղ-տեղ լոռուտ, տխուր կանանչով մը թավիշված։ Ու այդ շենքեն անդին միևնույն պատը կշարունակվեր, փլած փլփլած, անշուշտ մողեսներու սեռունդներ ապրեցնելով իր մեջ։

Մեկ քանի մեծաբերձ թանթրավենիներ, թթենիներ և ուրիշ պտղատու ծառեր վայրի խոտերու, ուղտափուշերու, ռազիաններու այդ վայրի ու անխնամ հատակեն վեր կբարձրացնեին իրենց վարակոտ բուները, կարշնեղ ճյուղեր երկնցնելով օդին մեջ կանանչ և հուռթի, մենավոր, լքված պարտեզին ակնահաճո գեղեցկություն մը ընծայելով։ Տնակին հանդիպակաց կողմը, հեռուն, ծառերեն անդին, աչքը իսկույն երևան կհաներ անհետացած շենքի մը ցացառ մնացորդները, անհարթ գետնի մը վրա բոլորովին մերկ պատի փլածքներ, հողեն դուրս ցցված գերաններ ժանգոտ գամերով ծածկված, սև խոռոչ մը, որ անշուշտ երբեմնի գետնափոր մառանի մը մուտքն էր, չորցած ջրշեղջի մը լայնաբաց, մութ երախը, որմածեփերու ա՛լ քարացած, շաղախված թուրծեր, վերջապես, բոլոր այն տխուր ու աննշան մանրամասնությունները, զորս կը թողու բնակարան մը, երբ ա՛լ մարդիկ դուրս կելլան անոր մեջեն, և ան գոյություն ունենալե կդադրի, և անոր քայքայուն, փտած անդամները մեկիկ-մեկիկ կբրցվին, կքակվին, կտարվին։ Հետո անձրևը, ձյունը, բուքը, արևը հաջորդաբար կուգան մնացածին վրա իրենց մթին ու քստմնելի դրոշմը զարնելու։

Պարտեզին կանանչ և վայրի ամբողջության հետ՝ գետնին այդ մասը իր լերկ, ավերածո, տրտմալի մերկությամբը որքան որ ալ ակներև հակապատկեր մըն էր, բայց իսկույն կզգայիր թե անոնք երկուքն ալ, թե՛ պարտեզը և թե՛ ավերակը, լքումի դատապարտված էին գրեթե միևնույն ժամանակ, շատոնցվընե ի վեր։ Եվ իրոք, այդ գետնին վրա ատեն մը կբարձրանար Հ... գյուղին ամենեն ջոջ ամիրաներեն մեկուն, Մաթոս ամիրային ապարանքը, ուր արքայավայել ճոխությամբ կապրեր Մարկոս ամիրային մրցակիցը, բայց որ անկեց շատ առաջ կործանման և մոռացման անդունդը գլորած էր։ Ակնցի այդ կնամոլ և զեխ ամիրային մահվընեն հետո, իր բույնը, զոր խարդախությունը, կողոպուտը և հափշտակությունը միայն կրցած էին շինել ու կանգուն պահել, քայքայվեցավ իր կարգին, բնակիչները քիչ-քիչ տարտղնեցան՝ խեղճությենե, անթությենե և հուսահատությենե հալածվելով։ Ավուր հացի կարոտ քանի մը աղքատ ընտանիքներ բավական ատեն իրենց գրկլիկներովը պատսպարվեցան անոր մեջ, վանելով երբեմնի ճոխության, պերճանքի և շքեղության հետին հմայքները, վառելու համար՝ տանը գերանները քակելով, շատ անգամ ծախելով զանոնք հրեա գողերու, որոնք գիշերանց կուգային այդ ամիրայական սյուները փոխադրելու իրենց որջերը։ Աղքատության կրծող մագիլներուն տակ, ապարանքը քիչ-քիչ հյուծեցավ. օր մը մեկ կողմը, օր մը մյուս կողմը ծռեցավ ինկավ, բնակիչները մեկ հարկեն մյուսը փախան, քանի քայքայումը փտախտի մը պես շենքին մարմնին մեջ տարածվեցավ հետզհետե, մինչև որ օրին մեկը, անդուլ անձրևներու հորդումին տակ խխում լխպիկ եղած, առաստաղը ահագին շառաչմամբ ինկավ երկրորդ հարկին վրա, որ այդ ճնշումին չտոկալով, ահարկու փոր մը դուրս տվավ։ Ստորին հարկի հետին բնակիչները, շենքին այս քստմնելի հեղաշրջումին առջև ահաբեկ, ժողվեցին քուրջերնին ու փախան, ու ապարանքը ա՛լ այնուհետև քանի մը տարի մնաց բոլորովին իր ճակատագրին, լուռումունջ դիմանալով փտտումի ու կործանումի ախտին, որ անոր ընդերքներն ու թոքերը կրծած, կմախքը միայն ձգեր էր։ Բուերը, չղջիկները իրենց կարևորագույն կայանը դարձուցին զայն, անոր մութ, պարապ, դիվային կլափներուն մեջ ամիրային անցյալ փառքը վայելով սրգալի վայոցներով. մինչև որ վերջապես օրին մեկը թաղապետությունը, հասարակաց վտանգ մը նկատելով այդ խարխուլ և կիսափուլ շենքին գոյությունը, դատապարտեց զայն գետնի հավասար ըլլալու. գործավորներու անգութ ջոլիր մը քանի մը օրվան մեջ կատաղաբար փրցուց, քակեց ապարանքին վերջին կապերը. սենյակները բացվեցան, հարկերը վար ինկան, բեկորները սայլերով տարվեցան, շրջակա աղքատները, որոնք ատեն մը ամիրային սեղանին էվելցուկները կլկեին, հիմակ ալ անոր ապարանքին թափթրփուքները առին տարին մրջնային ոգևորությամբ մը։ Հետո քանի մը տարի, պարապ գետնին վրա մնացած ցիցերը, գերանները, աղյուսի, կղմինդրի կտորվանքներ, մարմարի բեկորներ, վերցվեցան անցորդ գնչուներու ձեռքով, որոնք Հ... գյուղին մեջեն իրենց ճամփան ատիկա ըրին. մինչև այն օրը, որ ուրիշ բան չմնաց, եթե ոչ գետնափոր մառանին սև խոռոչը և չորցած չրշեղջին մութ երախը։ Հափշտակողներու ձեռքերը և քայլերը այս վերջնական հատնումին և պարապության առջև՝ պակսեցան, ցանցառցան և օր մըն ալ բոլորովին անհայտ եղան՝ հավերժական անդորրության հանձնելով ամիրային ապարանքին օրրանը։

Բայց, այդ բոլոր քայքայումներեն վերապրեցավ հեռուն, պարտեզին պատին տակ շինված փոքր, միայնակ տունը, ուր ատենոք ամիրային ձիադարմանները և կառապանները կապրեին։ Ցորչափ ապարանքը կանգուն էր, աղքատները արհամարհանքով

նայած էին այդ անշուք բնակարանին, ապարանքին լուսավոր, օգ-
վեստ սենյակները նախամեծար համարելով։ Բայց երբոր ապարան-
քը օրհասի մատնված էր, երկու աղքատիկ ընտանիք այդ տունը
ապաստանած էին. մեկը՝ ձկնորս Թումիկը իր կնկանը և երկու
մանչ զավակներուն հետ, մյուսը՝ Կյուլյուկ հանըմը և իր աղջիկը
Սոֆին, որ դեռ շատ պզտիկ էր այդ փոխադրության թվականին։
Երկու համեստ ու խելոք ընտանիքները խաղաղորեն ու վերջնա-
կանապես հաստատվեր էին այդ տան մեջ, որ երկու բաժանում
ուներ իրարմե բոլորովին անջատ, մեկը մեկ սենյակով, մյուսը՝
երկու։ Առաջինին մեջ լվացարար Կյուլյուկը տեղավորվեր էր, երկ-
րորդին մեջ ձկնորս Թումիկը։ Ժամանակ անցնելով, թաղեցին ա՛լ
այդ տանը տերեր սկսած էր նկատել Թումիկը և Կյուլյուկը, որոնք
նույնիսկ օրին մեկը, պզտիկ նորոգություն մըն ալ դրած էին
խարխուլ շենքին, փլչելու վտանգին առաջքը առնելու համար։

Երբոր թաղապետությունը փլցունել տված էր ամիրային ապա-
րանքը, երկու տնվորները շատ վախցեր էին, որ փորձանք մըն ալ
իրենց նստած շենքին գլխուն կուգա. ուստի աճապարած էին անոր
վերքերը գոցել ժամանակվա մը համար։

Ինչպես ըսինք, Թումիկ կին մը և երկու զավակ ուներ, մեծը
քսանըհինգ տարեկան, Գարեգին, զոր աղավաղելով Գարագի վե-
րածած էին, և պզտիկը՝ քսան տարու, Համբարձում, որ կրճատվե-
լով Համբիկ եղած էր։ Թումիկ աղեկ, արևոտ օրեր տեսած մարդ էր։
Ամիրաներու մեծագործ շրջանին, անիկա ահագին դրամ վաստա-
կած էր՝ հաղվագյուտ ու համեղ ձուկի պաշար հայթայթելով ամի-
րայական խոհանոցներուն։ Երբեմն մեծագումար պարգևներ ըն-
դունած էր՝ իր հայթայթած պատվական մեկ ձուկի համար։ Բայց
Թումիկ, ամուրի և հովարտա, աղմկալի կերուխումներու մեջ վատ-
նած էր շահած դրամները և երբ, ամուսնանալեն ետքը, ամիրա-
ներուն ջահերը իրարու ետևե շիջեր էին և վաստակի աղբյուրները
հետզհետե ցամքեր, Թումիկ զգացեր էր սխալին մեծությունը և
ա՛լ սկսեր էր դժվարություններու մեջ տապալտկիլ՝ ընտանիքին
ապրուստը հոգալու համար։ Կինը, Հռոսփ, ամուսնության առջի
մեկ երկու տարին քիչ մը խնդացեր էր, շուտով իյնալու համար
խեղճության ճանկերուն մեջ։ Երկու մանչեր եկած էին ապրուստի
բեռը ծանրացնել։ Թումիկ գիշերներ կլուսցներ ծովերուն վրա,
ձյունին, բուքին, անքուն և ցրտահար, բայց նորեն զրկանքով կապ-
բեին իրենները։ Մեծ տղան, Գարագը, որ հորմեն ձկնորսության

կոչումը ժառանգեր էր, հորը հետևեցավ ծովերուն վրա՝ բնավ
դպրոցի երես չտեսնելով։ Տգետ, բարի և հուժկու, Գարագ տասնը-
հինգ տարեկանեն անվեհեր ձկնորս մը եղավ, թեթևցնելով տա-
ժանքը իր հորը, որուն քամակը ա՛լ սկսած էր կորանալ։ Իսկ Համ-
բիկ թաղին ազգ. վարժարանը դրվեցավ, Թումիկին փափագին հա-
մաձայն, որ կուզեր գոնե իր զավկին մեկը ուսումնական ընել։

Կյուլյուկ հանըմ, որուն ամուսինը, նիհար ու բարի երիտա-
սարդ մը, թոքախտեն մեռեր էր իրենց ամուսնությենեն տասը տա-
րի ետքը, աղջկանը հետ լքված ու անօգնական, առանց հուսահա-
տելու, կյանքի պայքարին մեջ նետվեր էր իր գեր, հաստակազմ
մարմնին բոլոր կորովի տոկունությամբը, միտքը դնելով իր սի-
րական մեկ հատիկ զավակը անմատն ապրեցնել կյանքի զրկանք-
ներեն, մեծցնել զանիկա ինչպես եթե հայրը մեռած չըլլար տարա-
ժամորեն. լվացարարությունը ընտրեց իրեն ապրուստի միջոց,
ուրիշ ոևէ գործով զբաղելու անկարող զգալով ինքզինքը։ Կյուլյուկ
հանըմը ճանչցողները զմայլեցան իր անվհատ արիությանը և
անառիկ առաքինությանը վրա։ Գյուղին գրեթե բոլոր բարեկեցիկ
ու հարուստ տունները իրենց լվացքի գործը անոր հանձնեցին։ Սո-
ֆի, զոր բարոյական և կրթական ձիրքերով զարդարելու մարմա-
ջովը կտոչորեր մայրը, դրվեցավ ազգ. վարժարանը. և երբ շրջա-
նը ավարտեց հոն, Կյուլյուկ հանըմ, գերագույն զոհողությունը հան-
ձին առնելով, գեղին մեջ ֆրասուհիի մը բացած դպրոցը փոխա-
դրեց իր աղջիկը, որպեսզի ֆրանսերեն և ձեռագործ սորվեր։ Մե-
կուկես տարվան մեջ Սոֆի բավական դյուրությամբ սկսավ ֆրան-
սերեն խոսիլ հիացումի տագնապներու մատնելով իր մայրը, որ
երջանկության գագաթնակետը կկարծեր ինքզինքը՝ երբ օտար
բառերու այդ ներդաշնակ թավալումը կլսեր իր աղջկան անուշ և
պաշտելի շրթներուն վրա։

— Խնդամ նե աղջիկանս էրեսեն պիտի խնդամ,— կըսեր ան
իր դրացուհիներուն իրիկունը, օրվան տատանքեն հետո, պարտե-
զին դուռը կայնած։

— Վո՜ւյ խերը տեսնաս, ան ի՞նչ կյուզելիմ, շնորհքով զա-
վակ է, իշալահ աղվոր խամեթ մը կելլա տե տուն ալ կազատիս,—
կպատասխանեին սրտցավ բարեկամուհիներ։

Սակայն, մտավոր աշխատությունը և սնունդի տկարությունը
միանալով կազմվածքին տխեղծությանը, ավրեցին Սոֆիին առող-
ջությունը։ Կյուլյուկ հանըմ, ահարեկ, բժիշկե բժիշկ վազեց աղջի-

կը առողջացնելու համար։ Մեծ օգուտ մը չտեսնելով, Թադեոս աղա Մերկերյանին թելադրանքով, որուն տան լվացքը կըներ, վերջապես տոքթոր Մարկոսյանին դիմեց, որուն ախտազննության կերպը և հոգածու շարժումները հույսերով լեցուցին հեք մայրը։

Երկու դրկից ընտանիքները շատ սիրով կապրեին իրարու հետ։ Թումիկ, հայ ձկնորսի պարկեշտ տիպար, ուրիշ բան չէր ճանչնար, եթե ոչ ծովը, անոր վտանգները, ձուկերը. գիշերե գիշեր ստվերոտ գինետան մը անկյունը պուտիկ-պուտիկ խմված շիշ մը օղին, տունը՝ անշուք սեղանին վրա լափված երկու պատառ կերակուրը և հետո բարերար խշտիկը, որուն վրա իր կործանված մարմինը մուչ-մուչ կհենդար։ Գարագ, դեռ այդ երիտասարդ տարիքին մեջ հինավուրց ձկնորսի նախապաշարումներով թխմված, անոնց բարքերը, սովորությունները յուրացուցած, մոլեռանդ, պարկեշտ, աստվածավախ և հանդուգն, իր տունը կմտնար միայն պնակ մը ուտելիք լափելու և կշտապինդ քուն մը քաշելու համար։ Իսկ Համբիկ, որ դպրոցեն ելլալե հետո, բավական հայերեն և թվաբանություն սորված ըլլալուն համար՝ հոգաբարձուի մը միջնորդությամբը Զախմախճլար մանիֆաթուրաճիի մը վաճառատունը դրված էր շաբաթը 20 դրուշ վարձքով, մինչև իրիկուն հաճախորդներուն ետևեն վազելեն և տպածոյի ծրարներ փոխադրելեն հոգնած դադրած՝ տուն կդառնար ուշ ատեն և վտիտ սեղանեն քանի մը պատառ ուտելուն պես կնետվեր անկողինը՝ մութնուլուտն արթննալու և Զախմախճլար վազելու համար նորեն։

Շաբաթվան մեջ, միայն շաբաթ գիշերներն էր, որ երկու ընտանիքները կրնային իրարու այցելել և մինչև կես գիշերվան մոտ նստիլ, ընդհանրապես Կյուլլուկ հանդիսին սենյակը, որ բաղդատաբար քիչ մը ավելի աղվոր շտկված էր՝ շնորհիվ Սոֆիի հոգածությանը։ Ձկնորս Թումիկ իր կյանքին հին դրվագներեն անպատմառ բան մը կսկսեր պատմել։ Երևակայությունը ալքոլեն մտրակված, անցուցած հին երջանիկ օրերու վերհիշումեն արբշիռ։

— Ի՞նչ վախիթներ էին պե՞,— կմոլտար՝ մերթ ընդհատելով իր պատմվածքը, բազմոցին անկյունը ծալապատիկ, երկար սև ծխախոտ մը ուժգնորեն քաշելով ու հետո շարունակելով իր խոսքը։ Հ... գյուղին երանելի ամիրաներուն շահատակությունները խորապես քանդակված էին ծեր ձկնորսին երևակայությանը մեջ, ու զանոնք հիմա կվերակենդանացներ, կշպաբեր, կաստվածացներ իր ոամիկ ու ա՛լ ինկած, պառված մարդու սովալլուկ եռանդովը, որուն մեջ կգտնար այլևս իր հագեցումը, իր սփոփանքը, իր խեղճության տեսակ մը փոխարինումը։

Թադեոս ամիրային և Մարկոս ամիրային պերճանքի, փայլելու մրցումը մանավանդ՝ երանգավոր և ցայտուն բացատրություններով կարտահայտվեր այդ տգետ ձկնորսին բերնեն, որ հրաշազան դրվագի մը հիշատակությանը առջև հանկարծ կկենար, նայվածքը թափառուն և երազկոտ, մոլտալու համար.

— Ի՞նչ վախիթներ էին, պե՞...

Կյուլլուկ հանդիսի մտիկ կըներ բերանաբաց՝ տախտակամածին վրա իր պարարտ մարմինը լքած, երբեմն ցավի փոքր հառաչանքներով ծունկերը և հոդվածները շփելեն, քովը ունենալով ձկնորսին կինը՝ Հոռոփ հանդիսը, որ էրկանը պատմությունները անհամար անգամ մտիկ ըրած ըլլալուն, նստած տեղը կմրափեր. մինչ Սոֆի՝ կա՛մ կարկահի մը վրա ծռած, կա՛մ ձեռագործի մը, մտիկ կըներ Թումիկին շաղփաղփանքը, շատ հետաքրքրաշարժ անցքի մը պահուն միայն դառնալով և ձկնորսին այրած դեմքը դիտելով։ Իսկ Համբիկ՝ եթե երբեք պառկած չըլլար՝ Արևմուտքի թիվ մը կունենար անպատճառ, զոր ծայրեծայր կկարդար՝ բնավ մտիկ չընելով հայրը, երբեմն նույնիսկ ընդհատելով զանիկա՝ ներքին լուրերեն ոճիր մը կամ շահեկան արկած մը կարդալու համար ներկաներուն։ Գալով Գարագի, անիկա բնավ ներկա չէր գտնվեր գիշերային այս խաղաղ նիստերուն, գինետան մը մեջ իր ձկնորս և ջրհանկիր ընկերներուն հետ մինչև առտու զվարճանալու կամ ուշ ատեն տուն դառնալով քնանալու համար։

Սակայն, երկու ընտանիքներուն այս անդորր և անշահախնդիր դրացնությունը անվրդով տևելու սահմանված չէր։ Բնականորեն, անհնարին էր ապրիլ Սոֆիի հետզհետե աճող, զարգացող հրապույրներուն քովն ի վեր և չհափշտակվիլ անոնցմով։ Համբիկ, խպնոտ, համեստ, հանդարտ տղա, փոքր տարիքեն Սոֆիի ճանչվորությանը մեջ ապրած էր, կարծես ընտելացած անոր հրապույրներուն։

Արդեն, դեռ դպրոցը եղած ատենը, Սոֆի, անգիտակցաբար, թաղին հատուկ մանչերուն մեջ բաղձանքի այրող սարսուռներ կպըտնցուներ։ Իր սև, հրացայտ աչվրներուն էլեկտրականությունը շանթահար կըներ խեղճ, դյուրաբեկ հոգիներ, տկար ու մատաղ կազմվածքներ, որոնք անկարելի հաճույքներու տեսլականության մեջ ջիղերնին կքանդեին։ Քիչեր չէին որ, գիշերը, երազնուն մեջ, այդ դյութիչ էակին տիրացման տագնապները կհևային։ Զինքը

հետապնդող հայրատ նայվածքներու անառակ հրավիրին տեսակ մը դիտումնավոր անզգացություն ցույց կուտար, կարծես զգալով բոլոր պարապությունը անտիական տարփանքներուն, ամբողջ մանկական ծաղրելիությունը տա գողունի սիրվըտուքներուն։ Բնազդորեն, անիկա ձգտում մը ուներ բարձր, շքեղ, անձնուրաց, ասպետական սերերու համար, որոնք էությունները կհեզաշրջեն, կյանքերը կազնվացնեն, նախապաշարումներե, գռեհկություններե շատ վեր կմնան։ Մայրը, աղջկանը այս ձգտումներուն ծանոթ և անոր ֆիզիքական շնորհներովը հպարտ, իր ռամիկ, տգետ կնոջ բոլոր պերճախոսությունը ի սպաս կդներ անոր մեջ արծարծելու մեծասիրության հակումները։ Իր զավկին մարմնական շնորհները անկարելի երջանկություններ երազել կուտային Կյուլյուկ հանրմին, որ կարծես իր երկարատև տառապանքին, նվաստացուցիչ սպասարկության վարձը իր ընդերքներուն այդ արդյունքեն քաշել հանել կուզեր հիմա։

— Չէ՞,— կըսեր շատ հեղ իր դրացուհիներուն,— չէ՞, աղջիկս օլուր օլմազ մարդու չեմ իտար. տալես ետքը անանկին տամ քի էս ալ կռնակս կտոր մը բարձին տամ տե ըռահաթնամ։

Ամառը, կիրակի օրերը, մայր ու աղջիկ պտույտի կելլային Հ... գյուղին լեռը կամ վարը ծովեզրը, ուր ահագին ու խայտաբղետ ամբոխ մը կզվարճանար. Սոֆիին երևումը շարժում մը առաջ կբերեր դպրոցեն նոր ելած, աղվամազոտ այտերով տղաքներուն մեջ։

— Ան՝ տղաք, Սոֆին է,— կմրմնջեին կարծես դող ելած։

— Սքանչելի աղջիկ է, պե՛,— կխմբերգեին հետո, անոր նայելով հիացմամբ։

Սոֆի կանցներ իր արդուզարդին պարզությանը մեջ գրգռիչ հրապույրով մը, հարդե լայնեզր գլխարկովը՝ նոնածաղիկներու և հասմիկներու խրոխտ փունջով մը զարդարուն։

Շատ հեղ, այդ նորաբողբոջ անառակներուն մեջ կգտնվեր Համբիկ, որուն վիճակը հառաչանքներ կխլեր անոնց կուրծքերեն, քանի որ անփոխարինելի բախտավորությունը ուներ այդ աղջկան հետ մեկ տան մեջ բնակելու։

Առաջները, Համբիկ զարմացավ որ ատանկ նախանձի զգացում մը կներշնչեր իր ընկերներուն, նկատելով որ ինք բնավ չէր զգար, ինչ որ իր ընկերները կզգային Սոֆիին նկատմամբ։ Պզտիկ տարիքնուն անոնք գրեթե իրարու քով մեծցած էին, նախ ամիրայի

պարտեզին մեջ, հետո հիմակվան տունը։ Իրիկունները, դպրոցեն վերադառնալուն, միասին խաղացած էին պարտեզին մեջ, տղայական միամիտ չարաճճիություններով, որոնք միշտ անհետևանք կմնան։ Տղան աղջիկեն քանի մը տարու մեծ էր և համեմատապես լուրջ և խելոք՝ անոր խնդամոլիկ և վառվռուն նկարագրին քով։ Շատ անգամ Սոֆի էր որ կխոշտանգեր Համբիկը, որ անտրտունջ կհանդուրժեր՝ էրիկ մարդու վաղահաս վեհանձնությամբ մը. քիչքիչ, սակայն, տարիներուն լեցվելու չափովը, պարտեզի այդ կենակցությունը դադրած էր, անվերապահ չարաճճիությունները վերցած էին, Սոֆի, լրջացած, սենյակի աշխատություններու անձնատուր եղած էր տակավ, իսկ Համբիկ դուրսը ընկերներու հետ ավելի համ սկսած էր առնել։ Ետքեն, երբոր Համբիկ Զախմախճլար ելավ՝ վաստակի պայքարն սկսելու, և Սոֆի ֆրանսուհիին դպրոցը գնաց՝ հոնկեց քիչ մը ֆրանսերեն և վեսության հրապուրիչ հով մը ստանալու համար, աղջկան ու մանչուն մտերմական ամենօրյա շփումը բոլորովին դադրեցավ, և միայն գիշերային այցելությանց միջոցին էր որ անոնք զիրար կտեսնեին, քանի մը բառ հաղիվ փոխանակելու համար, այդ գիշերային նիստերը ամբողջովին ծեր ձկնորսին հինավուրց պատմություններովը գրավված ըլլալով։

Օր մը սակայն, Համբիկի ընկերները, անոր անտարբերությունեն զրգռված, իր երեսին պոռացին, թե Սոֆիին հետ սիրահարություն կըներ գաղտնապես և իրենց չէր իմացներ, վախնալով որ իրենք արգելք կըլլան ատոր. Համբիկ, ամաչկոտ տղա, այս բացարձակ ու բարկացկոտ ամբաստանության առջև, կակազեց, կարմրցավ, շփոթեցավ՝ իբր թե մեծ ոճիր մը գործած պահուն բռնըված ըլլար։

— Աստված վկա,— ըսավ վերջապես ինքզինքը ժողվելով,— ատանկ բան չի կա տղաք, անիկա իմ քրոջս տեղն է, պզտիկուց մեկտեղ մեծցած ենք... Աստված վկա, չի կա ատանկ բան...

— Որի՞ կհասկցունես...

— Նա՛, կա՛ս կարմիր եղար...

— Լեզուդ բռնվեցավ...

— Մանթար կլլող չի կա,— պատասխանեցին տղաքը իրարու ետեւ ավելի անգութ և գրեթե սպառնալից դառնալով։

Համբիկ, իր ընկերներուն իրեն չհավատալու այս կատաղի համառության առջև ըմբոստացավ։

— Էյ չի կա՛ ըսինք ատանկ բան, հեմ ձեզի բան մը ըսե՞մ,—

պոռաց իր ամբաստանիչներուն դառնալով,— ուրիշ տեղ ալ ատ այլանդակ խոսքերը մի ընեք՝ Սոֆիին ականջը կիյնա, ամո՛թ է, ամոթ...

Ընկերները քահ-քահ խնդուքով մը ողջունեցին խեղճ տղուն այս փափկանկատ զգուշավորության պատվերը։

Ու ցրվեցան՝ գլխու սպառնալից օրորումներով։

Կամաց-կամաց տեսակ մը տրամադրություն ծնավ Համբիկին մեջ, այդ բոպեեն սկսած։ Մեկ քանի օր այդ կարծեցյալ սիրույն վրա խորապես մտածեց։ Ուրեմն այդքա՞ն բաղձալի էակ մըն էր իր մանկության ընկերուհին, որ նախանձության կատաղի տագնապ մը կբռնկցուներ իր բարեկամներուն սրտին մեջ։ Քանի որ ատանկ ուղղակի և համառ ամբաստանություն մը կճոճար իր գլխուն վրա, շատ բնական, և նույնիսկ անհրաժեշտ ըլլալու էր ուրեմն իր՝ Սոֆիին սիրահարվիլը։ Պահ մը, զարմացավ նույնիսկ իր անտարբերությանը վրա, երբոր անդին իր տարեկից ընկերները այդ աղջկան նայվածքին, հրապույրներուն համար հոգի կուտային։ Այս այլազան մտածումներուն ազդեցությանը տակ, Համբիկ մեկենիմեկ սքանչելի, անօրինակ, հեշտագին բան մը գտավ Սոֆիին սիրահարվելուն մեջ։ Առաջին առթիվ որ տանը մեջ անոր հանդիպեցավ, թափանցող նայվածքով մը զննեց անոր բովանդակ հրապուրող իգականությունը։ Եվ զմայլեցավ։ Հակառակ որ այդ աչքերը իր առջևը կշարժեին, հիմակ, մոտեն ավելի ուշադրությամբ դիտելով, խենթեցնող, երկնային գտավ զանոնք։ Հետո, դեմքին մանրամասնություններուն անցավ. օ՜հ, անթերի արձանագործություն այդ դիմագծությունը՝ հելլեն կերտվածքով մը, որքան վսեմ, նույնքան խրոխտ, նայվածքին աղապատալից ու ցավագին անուշությանը մեջ չես գիտեր ինչ հուզող, մոգող, խելահեղիչ բանով մը։ Ու ամբողջությունը, որքա՞ն հարմարություն փափկակազմ, գեղաձույլ իրանին մասերուն մեջ, ձեռքերու, ոտքերու նրբություն, կուրծքի հարուստ, ներդաշնակ հորդություն, որ կարծես մարմնին քիչ մը արգահատելի նիհարությունը կհակակշռեր։ Ասոնք տեսավ Համբիկ, մեկիկ-մեկիկ վերլուծեց, մանրամասնեց, գնահատեց և զարմացավ եթե ոչ իր ապուշության, անտարբերության վրա, որով քուն քնացեր էր այդ հրապույրներուն քով, որոնք գյուղին նորահաս երիտասարդները կխենթեցնեին և իրեն հանդեպ նախանձի տագնապներու կմղեին զանոնք։

Առաջին բոպեներուն տղուն մեջ ծնող փոթորիկը դեռ պայմանադրական, ապսպրված բան մը ուներ. բուն սերը չէր, որ ինքնիրեն կծլի, կուռճանա և վերջապես իր հուժկու արմատներուն մեջ էությունը կկաշկանդե։ Որքան միամիտ, բարի և անխորհուրդ տղա, նույնքան խակ ու անպատրաստ կյանքի հզոր ճիգերուն, որոնք էություններու տոկունությունը կդարբնեն, Համբիկ, իսկույն, սակայն, զգացած ցնցումին ուժգնությանը տակ գրեթե շնչասպառ եղավ, աչվրները խոշոր-խոշոր բացած։ Բայց շուտ մը վարժվեցավ այդ ցնցումին, անոր ամբողջ քաղցրությունը խմելով և անոր փաթթվելով հոգևին, ինչպես մեկը, որ ծխախոտին առաջին մուխը քաշելուն, գլխի ցնորք մը կունենա, բայց ատոր համար իսկ այլևս չի կրնար այդ մուխը կուլ տալու դառն հաճույքեն հրաժարիլ։

Քիչ-քիչ, կպչուն, մակաբույծ մտմտուքի մը ձևը առավ այդ հանգամանքը։ Գիշերները, հակառակ իր սովորությանը, սկսավ արթննալ, խռովատանջ և սրտատրոփ։ Սոֆիին պատկերը աչքերուն առջև կդառնար լուսածիր, փողփողուն, տիրող մթության մեջ։ Ըսկիզբները, ջանքեր ըրավ ինքզինքը ազատելու համար այդ տարօրինակ վիճակեն, որուն հանկարծ մատնված էր. մաքառումը կարճ և դժնդակ եղավ։ Ու ինք եղավ հաղթվողը, ու ա՛լ ինքզինքը անձնատուր ըրավ այդ դառնորեն քաղցր վիճակին, ու ա՛լ հոսանքն ի վար քշվեցավ, աչքերը գոց, վտանգներուն անգիտակ, հոգեկան տեսակ մը անդառնալի պարտասումով։

Մանավանդ որ, առանց գիտնալու, ստահակի չարաճճիությամբ, իր այդ ընկլուզումին քիչ չնպաստեցին իր նախանձոտ ու սիրաբորբոք ընկերները, որոնք ամեն անգամ զինքը տեսնելնուն, առաջին խոսքերնին սա կըլլար, խածնող հեգնությամբ մը շեշտված.

— Է՜հ, Համբիկ, Սոֆիին հետ գործը ընտոր ըրիր նայինք։ Կեփե՞ս կոր...

Անտարբերությունը, զոր ի սկզբան ցույց կուտար իր դեմքին վրա, քիչ-քիչ շփոթության և վերջապես շիկնումի փոխվեցավ։

— Ծո նա՛,— կպոռային չարաճճիները անոր կարմրիլը տեսնելով,— ծո նա՛, կաս կարմիր եղավ, ծո, վա՛յ կիտի, պրռնվեցավ... հիմա ճեպը նայինք նե Սոֆիին նամակները դուրս կելլան...

Եվ լրությունը՝ անոր շփոթության, կափկափումի միջոցին՝ գրպանները խառնելու չափ առաջ կտանեին։ Բայց հեք տղան հանկարծ կսթափեր, կըմբոստանար, բարկացած, սպառնագին.

— Չափը կանցնեք կոր հա՞,— կպոռար ակոռաները սեղմելով։

Եվ կառներ կքալեր։

Ցորեկները, մանիֆաթուրայի վաճառատան մեջ սկսավ մտազբաղ ըլլալ։ Առաջ որ խանութին շորս ծայրեն արձակված հրամանները անշփոթ արագությամբ մը կկատարեր, հիմա, Սոֆիին դեմքեն հափշտակված, թախծոտ, տխուր, հանկարծակիի կուգար, երբ գրագրին տիրական ձայնը հրահանգ մը կսուրացներ իրեն։

Աղջկանը հանդեպ իր վերաբերումին այս փոփոխությունը անոր բնավ չզգացնելու տխուր ու կսկծալի խնամքն ալ ունեցավ։ Իր տարօրինակ վեհերոտությանը մեջ, քրեական հանցանքի մը չափ ահավոր բան մը նկատեց աղջիկ մը սիրելը, մանավանդ Սոֆին, որ պզտիկուց արդեն, երբ դեռ իրիկունները, դպրոցեն վերադարձին, պարտեզը փախվտուք կամ բռնվուք կխաղային մեկտեղ, բարոյական գերազանցություն մը ուներ մանչուն վրա, իր կանխահաս արհամարհանքին առարկա ընելով զայն։ Այդ գերազանցության գաղափարը մնացեր էր միշտ անոնց մեծնալուն շարժումը, անանկ որ հիմակ, երբ Համբիկ խորունկ և վշտալի տարփանք մը կզգար այդ աղջկան հանդեպ, տարապայման երկյուղով մըն ալ կլցվեր, քանի կմտածեր, որ ան կրնար իր զգացումներուն թափանցել և արհամարհանքի բարձրությենեն ծաղրել զինքը, չարչարել իր սիրուն նվիրականությունը։

Այլևս կքաշվեր շիպ շիտակ նայիլ անոր աչվրներուն մեջ, մտատնվելու վտանգեն ահաբեկ։ Որչափ կարելի է, անոր հետ խոսելու առիթները զանց կառներ, վախնալով որ հանկարծ ձայնը կդողդղար, լեզուն կբռնվեր, ու ամեն բան երևան կելլար...

Շաբաթ գիշերները, պարբերական այցելությանց կերթար Ուեսմոտմը բռնած—զոր միայն շաբաթ օրերը կգներ—անոր ընթերցումին մեջ կթաղվեր, առանց տող մը բան հասկնալու իր կարդացածեն, խելքը միտքը մյուսովը հափշտակված։ Ատեն-ատեն գողի պես, արագ ակնարկ մը կհանդգներ դեպի աղջիկը, թեև այս վերջինը, անտարբեր շեշտով մը, իրեն դառնար երբեմն և ըսեր.

— Համբիկ, լրագրին մեջ եթե հետաքրքրաշարժ բան մը կա, մեզի ըսե։

Ուշաբերած, տղան աչքերը մեծաբաց կպտտցուներ սյունակներուն վրա, վերջապես բան մը ըմբռնելու և սենյակին հասարակությանը հաղորդելու համար. բայց իզուր, երկրորդ կամ երրորդ տողին՝ դաժյալ կուշաթափվեր, կցրվեր, կմոռնար, մինչև որ Սոֆի, ձեռագործին վրայեն գլուխը նորեն ասդին դարձնելով համառեր.

— Է՛, Համբիկ, բան մը չի կա՞։

— Չիկայի պես, Սոֆի։

Եվ հոն, իրեն համար, այլևս բարիք մըն էր ձկնորս Թումիկը իր անվերջանալի պատմություններովը, որոնք ներկաներուն ուշադրությունը կկապտեին՝ իր շփոթության լայն ասպարեզ տալու համար։

Շատ հեղ, վաճառատան մեջ, գործերու դադարե մը օգտվելով, անկյուն մը տպածոյի հակերու ետին քաշված, իր տխուր և ապերախտ սիրույն վրա մտածած պահուն, Համբիկ հետադարձ ակնարկի մը մեջ կպարուրեր իր ամբողջ կյանքը, զոր ապրած էր։ Անոր ցամաքությունը, պարզությունը, խեղճությունը, անբանությունը հիմա էր որ կսոսկացնեին զինքը, և ինք, որ տարիներով այդ հմայքոտ էակին քովը ապրեր էր, առանց զգալու բոլոր արվամանդ, հզոր, երկնային բաները, զորս հիմա այնքան ուժգնորեն կզգար։ Ո՞ւր և ի՞նչպես ապրեր էր կյանքը մինչև այն ատեն. գետնահարկ խղճկի մը մեջ, երկու ցավագար էակներե շրջապատված, գինով, ցնդած հայր մը և տրտնջացող մայր մը։ Առաջները, առտվընե մինչև իրիկուն դպրոցը, հին, խավարապատ շենք մը, կիսավեր, խոշոր ծակերով, որոնցմե մուկեր կմտնային կելլային, խեղճ, չհանդուրժող, խստաբարո վարժապետի մը կաշկանդումին տակ, աչքերը շարունակ հեգարանին խոշոր տառերուն սևեռած։ Իրիկունները, խրճիթին մեջ կամ պարտեզը, ուր Սոֆիի հետ արձակ համարձակ կխաղար, կվազեր, կգվտեր։ Ո՞հ, կորսված, անհետացած մանկության այդ միակ հեշտալի բոպեներուն անդառնալի քաղցրությունը։ Ո՞ւր էին անոնք, այդ ովասիսները իր տխուր և դառնակսկիծ մանկության։ Անոնց վերհիշումը հիմա արցունքներ կբերեր կոպերուն տակ։ Հետո վաստկվոր կյանքին շրջանը սկսեր էր, նույնքան ապուշ, նույնքան ողբալի, նույնքան ամուլ։ Հապին վաճառատան մեջ իր քրտնաթոր և ստրկային տատանքը, պաշտոնյաներուն ամենեն հետինը ըլլալով, ամենուն հրամանները թիրախը ըլլալու դատապարտված։ Սկիզբները մանավանդ, ինչ շնչասպառ ճարտարվորումներ էին, կրավորական հնազանդության ինչ նվաստ շարժումներ իր կողմե, գոհացում տալու համար բոլորին ալ այդ առևտրական բարկ մթնոլորտին մեջ՝ լեցված

խայտերցի չորպաճիին անհամբեր, բարկացոտ պոռչտուքներովը և անոր բացակայությանը՝ անկիրթ ու չտես գրագրի մը հոխորտ բացագանչություններովը.

— Համբի՛կ, վազե ծո՛, խահվե մը։

— Ծո՛, ինչ սերսեմ-սերսեմ կեցեր ես, սա մյուշտերիին քիպրիթ մը չվառե՞ս։

Իր ազնիվ, տխուր, դյուրազգաց հոգին դառնությամբ լեցվեցավ այս անարգական վերաբերումին առջև. պահ մը դպրոցի պարոն Սերգիսին ախը քաշեց, անոր գավազանաբարձ բազկին ընդդեմ պառնալիքը նախադաս համարելով։ Բայց քիչ-քիչ վարժվեցավ, ընտելացավ՝ հոգին, միտքը, սիրտը կաշկանդող, մեռցնող միջավայրին այս պայմաններուն։ Իր մեջ՝ առատաբույր այդ մթնոլորտը նորանոր ձգտումներ ստեղծեց, դրամ շահելու՝ տենդը, շուկայի տարամադրություն մը, որ կրնար ուրիշ ամեն անախորժ տպավորություն հակակշռել։ Այս նոր ու հաճելի բնազդներուն զարթնումին առջև, Համբիկ ներքին բուռն գոհունակություն մը զգաց. շուկային մեջ ինք ալ շուկայի մարդ պիտի ըլլար, տարիներու ընթացքին մեջ, անշուշտ կարծր դժվարություններե և հոգեսպառ տատանքներե հետո, ինքն ալ առատուրի ատ մեծափոր, պոռոտախոս, երջանիկ իշխաններեն մեկը դառնալու համար։ Այս հեռավոր, բայց հանկուցանող նպատակակետը ջահի մը պես մեծաշող ու վառ մը նաց տղուն երևակայության խորը մինչև այն բոպեն, ուր սիրտ հրդեհին բոցավառ շողարձակությունը եկավ նսեմացուց զայն։

Այս թաղծոտ մտածումներով հափշտակված, Համբիկ հանկարծ կսթափեր՝ հրամանի մը գործադրությանը վազելու համար խենթի պես։

Անիկա դեռ հազիվ տասնինը տարու կար, խելացի, աղվոր, սև աչքերով, որոնց նայվածքին մեջ ազնիվ, հեզ, բարի հոգի մը սարսռալը կտեսնեիր։ Իր քիչ մը անկանոն դիմագծությունը՝ ապրված տխուր կյանքի մը քայքայումը կցոլացներ, ազապատանքդ շարժելով։

Ու հիմակ, սիրտ տառապանքը նայվածքի անուշ տարտամություն մը և դեմքի դժգույն գեղեցկությունը կբերեր իր հետը, այնքան ակներև, այնքան շեշտված, որ իր շարամիտ ընկերներն իսկ նշմարեցին ատիկա ու բարձրաձայն հայտարարեցին իրարու մեջ։

— Տղա՛ք, Համբիկը հապը կկլլե կոր, ֆառղի՞ն եք, Սոֆիին կրակեն կերի կոր...

Ա՛լ սկսավ քայլ առ քայլ անցնիլ սիրահարական կյանքի սովորական փուլերեն։ Հայելիին մեջ ուշադրությամբ դիտեց իր անձը՝ քննադատի, գնահատողի աչքով։ Վայելուչ, հրապուրիչ երևնալու բուռն մտահոգություն մը իր հագնվածքին, շարժուձևերուն մեջ ակներև բարեփոխություն մը մտցուց։ Ճերմակ օձիք և փողկապ դրավ։ Այնուհետև, առտունները, մեկնելե առաջ, երկարորեն մազերը հարդարեց հայելիին դեմը, ճակտին վրա գոռուզ փունջ մը հորինելով, որուն ճոթը ելնելով երևնալ նույնիսկ ֆեսին տակեն։ Կիրակի օրերը, բաճկոնին դուրսի գրպանեն սկսավ ցույց տալ թաշկինակի մը եզերքը։ Բարակ գավազան մը գնեց՝ որուն գործածությանը համար տունը հայելիին առջև փորձեր ըրավ։ Բեղեր ունենալու մարմաջե մը բռնված, մատներովը վերին շուրթը կխառներ՝ պարապ ատենները։ Համբիկի վրա երևցող այս փոփոխությունները նախ և առաջ մորը աչքին զարկին։

— Օրդի,— ըսավ առտու մը, երբ Համբիկ հայելիին առջև կըհարդարվեր երկարորեն,— ի՛նչ է չիյտեմ, սյուսի մըն ես ինկեր, ի՞նչ կա, ի՞նչ եղավ, մեղա՜ տեր աստված, տուն ասանկ պան չուներիր առաջ...

Համբիկ պատրաստամիտ պատասխան մը ունեցավ.

— Մարիկ, չորպաճիս կուզե կոր քի մաղազային մեջ թափթրփած չպտտիմ, զերե քիպար, ղենկին մյուշտերիներ շատ կուգան, ամոթ է, չըլլար, ետքը գործես կհանեն...

— Աման, օրդի, սյուս տուր, սյուս անանկ է նե,— վրա տվավ մայրը սիրտը դող ելած։

Տղան, ամեն սիրահարներու պես, որոնք իրենց կուռքին սիրտը գրավելու համար միջոցներ հնարելու բեղմնավորությամբ մը կօժտվին հանկարծ, իր հովվերգությունը կարծես բոլորովին բանաստեղծական ընծայելու համար բնության դիմեց։ Ձեռնարկեց մշակել, զարդարել պարտեզին այն մասը, որ կտարածվեր թեթև կորության մը վրա, ընդարձակ ու օդավետ, Ոսկեղջյուրի շքեղ համայնապատկերին ամբողջությամբ տիրելով։ Կզգար ան, թե պարտեզը, մարմանդը, պուրակը, բնությունը համարձակություններ թույլատրող բան մը ունին, սրտին կխոսին, զգացումները կվերդովեն, երևակայությունը կխանդավառեն։ Բնության քերթվածը հոգիի քերթվածին հետ կգիրկընդխառնվի, կձուլվի։ Ձևփյուռին հեզիկ մնջյունը, անծեղին զվարթ շաղփաղփը, ծղրիդին-ողբական կոինչը սատարներ են այդ փարումին։

Գարնանամուտ էր. բնությունը կարթննար. ծառերը կպտկեին հուշիկ հուշիկ։ Ծղատները հոգեն դուրս կելանային։ Ամիրային պարտեզը կանանչ ծիրանիին տակ կողջնար։ Աքատիաներ ուն նուրբ, մանր տերևները կթրթռային ճյուղերնուն վրա։ Սալորենիները, սպիտակ ծաղիկներով բեռնավոր, պարտեզին կանանչ հատակին վրա ձյունեղեն ժանյակներով կանջատվեին։ Հսկա սարփինա մը թզենի մը կփաթթվեր՝ մինչև անոր գագաթը բարձրանալով, և գետինը, ուր որ նայեիր, խոտեր, ուղտափուշեր, բազմանի թփիկեր խառնիխուռն կբուսնեին հուռթի և պարարտ, վայրի և լքված։

Բահ, բրիչ, ցնցուղ, փոցխ մեջտեղ ելան և Համբիկի ձեռքին մեջ տենդոտ ու արագ աշխատանքի մը շնորհիվ քիչ ատենվան մեջ կերպարանափոխ ըրին պարտեզին այդ մասը։ Կլոր, ձվաձև ածուներ հարդարվեցան՝ կարճուկ, անթառամ թփիկներով եզերված, վարդի, մեխակի, մանիշակի, հասմիկի նրբացողուն ծառատունկերով զարդարուն։ Առտուները, մութնուլուսուն, իրիկունները, ուշ ատեն, շուկայեն վերադարձին, սիրաբորբոք երիտասարդը, անուշ երազներով օրորուն, պարտիզպանության մը խոլ տատանքին անձնատուր կըլլար, որոշ անխուսափելի նպատակի մը հասնելու տենդով բռնկած։

Իսկույն, Սոֆի, բոլոր փափուկ հոգիներուն պես, որ բնության աղվորություններուն հոգի կուտան, սկսավ ածուներուն շուրջը պտտցնել իր նազելաշուք հասակը, թփիկները շոյելով, ծաղիկները գգվելով, հոտվըտալով և այդ շատ գեղեցիկ գաղափարին համար գովեստներ ուղղելով տղուն։

— Համբի՛կ, աս ի՞նչ աղվոր խելք էր ըրիր, պռավո՛...

Տղան, սրտաբաբախ, կծծեր այս քաջալերանքներուն անուշությունը և գտած ըլլալ կկարծեր այն ճամփան, որ շիտակ այդ աղջկան սրտին պիտի առաջնորդեր զինքը։

Երբեմն, Սոֆի աթոռակի մը վրա կնստեր, կիրակի օրերը, ածուի մը կամ հովանոց ծառի մի շուքին տակ, վայելելու համար բնությունը, որ հոգ՝ իր առջև, կտարածվեր, բազմերանգ ու լքված։ Մայիսի սկիզբներն էր, բնությունը իր հզոր ու ցնծուն հմայքին մեջ։ Ամիրային պարտեզը դրախտային երևույթ մը առած էր, Հ... գյուղի արևելյան բարձունքին վրա։ Համբիկ կդատեր իր շաբաթականին մեկ մասը նորանոր ծաղիկներու գնման կհատկացներ։ Կարմիր ու դեղին կակաչներ սեգ կեցվածքով կճոճային

իրենց նուրբ ծղոտներուն վրա։ Բանջեներ, ցիրուցան, իրենց կարճուկ, նուրբ ցողուններեն կնայեին քթթող աչքերովնին։ Ճերմակ ու մոր լիլաներուն պարարտ ծոպերը՝ վարսի հոծ գիսակներու պես վար կկախվեին կանանչ բարունակներեն։ Երբեմն իր կերտած այդ աղվոր պատկերին առջև կանգ կառներ Համբիկ ու Սոֆիին գնահատմանը կդիմեր.

— Աղվոր չըլլա՞ր կոր, Սոֆի։

— Սքանչելի՜ է, Համբի՛կ, սքանչելի՜։

Ու տղան, քաջալերված, իր գործին կվերսկսեր։

Սերը, մյուս կողմե, իր արշավանքը կկատարեր պարտիզպանին էությանը մեջ լուռ ու մունջ, բայց ահեղ ուժգնությամբ մը։ Իր հոգեկան տանջանքը անոր համար մանավանդ կսաստկանար, որովհետև հետզհետե, սիրո հրդեհին արծարծումին չափովը, իր զգացումը արտահայտելու համարձակությունը կպակսեր իր մեջ, անսահման երկչոտության մը տեղի տալով։ Բոլոր ծրագիրները, զորս հետզհետե շինեց, դիշերները անկողնին մեջ, ցորեկները վաճառատան մեկ անկյունը, փչացան ամեն անգամ որ ինքզինքը, այդ աղջկանը դեմը գտավ։ Իր բովանդակ բարի կամեցողությունը, իր կամքը կջնջվեին Սոֆիին նայվածքին առջև։ Քանի՜ քանի՜ անգամներ, հոն, պարտեզին այդ մենավոր անկյունը, անոր հետ առանձին մնացած պահուն, գերբնական ճիգեր ըրավ մեկենիմեկ նետվելու աղջկան ոտքերուն, իր սերը լալու, պաղատելու։ Այն քայլը, որ այդ գյուղացնական ժեստին պիտի մղեր զինքը չէր առնչվեր տակայն. գամված կմնար կեցած տեղը, դողահար, ապուշ, խելացնոր։

Քանի մը ամիս այս տանջանքներուն մեջ տապկվեցավ հնձ ուրահարը։ Այտերը դեղնեցան։ Աչքին հուրքը նվազեցավ։ Իր շարժումներուն մեջ դանդաղություն մը, մեքենական, անգիտակից բան մը առաջ եկավ։ Վաճառատան մեջ՝ ուր իր աշխուժությունը, աչքաբացությունը այնքան գովեստներու արժանացած էին, գանգատներ բարձրացան իր դեմ։ Զորպաճին կծու հանդիմանություններ արձակեց անոր երեսին։ Նույնիսկ առաջին գրագիրը օր մը ըսավ.

— Ա՜ Համբիկ, խելքդ քիրայի՞ն տվեր ես ինչ, ասանկ երթա՝ն մեր գործին չես իգար...

Տանը մեջ, մայրը վերջապես նշմարեց զավկին վրա հասած փոփոխությունը։ Սեղանին վրա, իրիկունները, տարտամ

շարժումներով քանի մը պատառ բան ուտել, անձայն, անխոսուկ, նայվածքը սեեռուն, ապակիի փայլով մը, հետո երկննալ ցած բազմոցին վրա ու քնանալ կամ այնպես ձևացնել, առտուները կանուխ փախչիլ կամ պարտեզը պտույտ մը ընել՝ գլխիկոր, ծաղիկներու վրա երկար վայրկյաններ համենալով ակնապիշ, այս բոլոր տարօրինակությունները խեղճ մորը քով երկյուղներ արթընցուցին։ Քանի մը անգամ ան ըսավ իր զավկին.

— Համբի՛կ, օրդի, դուն տերտ մը ունիս... չըսե՞ս զավակս։

— Բան չունիմ, մայրիկ,— կճարտարվորեր տղան՝ պահ մը սթափած, իր գաղտնիքը թափանցված տեսնելու վախեն մտրակված։— Չէ՛, մարիկ, բան չունիմ...

Օր մը, պարտեզին մեջ, Համբիկ հանկարծ Սոֆիին դարձավ և ըսավ.

— Սոֆի, աս պարտեզը աղվո՞ր է, հե՞...

— Շատ աղվոր է։

— Գիտե՞ս, քեզի համար շտկեցի։

Աղջիկը տղուն ձայնին այլայլած շեշտեն և հայտնված զաղափարին տարօրինակութենեն մղված, դարձավ տղուն երեսը նայեցավ։

Ու այն պատասխանը ունեցավ, զոր խորունկ արհամարհանք մը կրնա երբեք ներշնչել ոևէ աղջկան, բառ մը միայն.

— Խե՛նթ։

Եվ Համբիկ, կարծես խուլցած, ոչնչացած, մեկեն վար ծռեցավ, վարդի մը կոկոնին վրա, զայն հոտվրտալու պես։ Սոֆի հեռացավ գնաց։ Իրիկվան ստվերները կիջնային կամաց-կամաց։ Գաղջ վերջալույսի մը կարմրավառ հրախաղությունները կմարմրեին էյուպի բարձունքին վրա, անհուն նոճաստանին երկինքին վրա։ Սովային բաղերը կճախրեին օդին մեջ՝ զիկզակ սլացքներով։ Հեզաշնչիկ հովը կսըլվըլար ծառերուն մեջ։ Եղրևանիներուն հղփուն ողկույզները կերերային ու հեռուն, ծղրիդ մը, խոտերուն մեջ պահվըտած, երկար կռինչ մը կողբերգեր։

Համբիկ դեռ կմնար կոկոնին վրա ծռած, քարացած գրեթե։ Ու հիմա, արցունքներ կկաթեին աչվընտներեն, վարդին տերևներուն վրա կիյնային։ Կուլար տղան անձայն, առանց հեծեծանքի, առանց ջիղ մը շարժելու դեմքին վրա։ Երբոր գլուխը վեր առավ, Սոֆի անհայտ եղած էր արդեն։

— Խե՛նթ,— հեծեց տղան։

Եվ տուն գնաց։

Ասոր վրա իր սիրային տվայտանքը կրկնապատկվեցավ։ Հետզհետե մենասեր եղավ, խույս տվավ իր ընկերներեն, անոնց ծաղրանքներուն չհանդուրժելով։ Մայրը միայն իր զավկին ցավերուն հոտառությունը ունեցավ։ Հայրը, օղիի շոգիներուն, ծխափայտի ամպերուն և իր հին, անհատնում պատմությանց հմայքներուն մեջ կորսված՝ չէր կրնար տեսնել անդունդը,, ուր գլորելու վրա էր իր զավակը։ Իսկ եղբայրը արդեն երբեք չէր հետաքրքրված Համբիկով, զոր քիչ մըն ալ կարհամարհեր իր քաղքենիի ձգտումներուն համար։ Հեք մայրը, անկարող, կհառաչեր տղուն նվաղկոտ նայվածքներուն և դեմքին ցավոտ արտահայտությանը առջև. ատեն-ատեն միայն, ա՛լ չհանդուրժելով, անոր գլուխը տրրտմությամբ մը շոյելեն.

— Օրդի, ի՞նչ է տերտդ, չըսե՞ս։

Համբիկ մեկենիմեկ կցվեր, տկարանալու և հայտնվելու վախեն դրդված, խոժոռ ու անտարբեր երևույթ մը տալ ջանալով իր նայվածքին։

— Խե՞նթ ես ինչ ես, մայրիկ, բա՛ն չունիմ... .

— Ա՜խ, ունիս, օրդիս... ունի՞ս...

Սոֆի և ոչ իսկ հիշեց աննշան միջադեպը, որ տա արհամարհոտ «խենթ» բառը թոցուցեր էր իր բերնեն տղուն հասցեին։ Իր գեղեցիկ միամտությանը մեջ ան չէր կրնար ոևէ դիտում վերագրել տղուն նշանակալից հայտարարությանը, «գիտե՞ս, քեզի համար շտկեցի»։ Բայց այդ միամտության խորը, ամենեն վսեմ բաղձանքները կսարսռային, ամենեն անմեղ, բայց խրոխտ ձգտումները, զոր աղջիկի անապակ հոգիները միայն կրնան ապրիլ։ Աղքատության մութ անդունդեն, ուր ծնած էր, ան վեր կնայեր, դեպի լուսավոր բարձունքները պերճության և վայելքի։ Տոքթորին տանը մեջ իր այցելությանը պահուն, Սոֆի, ինկած ամիրայության խլյակներուն վրա, աղմկոտ, ակնախտիղ փարթամության հեշտանքը շոշափեր, զգացեր, ապրեր էր գրեթե, ու այդ հեշտանքը կապրեր ա՛լ միշտ իր մեջը, կհավերժանար հոն։ Սակայն, իր անարատ հոգիին մեջ ատելությունը, նախանձը, անհագ տիրացումի տենչը չէր, որ բույն կդնեին. ան հավետ զերծ էր ոևէ հետին, գռեհիկ, ստոր միտումե. նոր տեղացած ձյունի ճերմակ ու անապակ մաքրությունը ուներ, որ արևին տակ կցոլցլա։ Իրը անվերապահ,

բնական, չմտածված խոյացումն էր դեպի գեղեցիկն ու շքեղը, հավիտենական այս կարթերը կնոջ միամիտ ու տկար հոգիին։

Տղուն հետ իր վերաբերմունքը նույնը մնաց, բնական, սիրալիր և համարձակ, ու չկրցավ կռահել բովանդակ ահավոր տառապանքը, որուն մեջ կտապլկտեր հեք Համբիկ լուռ ու մունջ։ Մայիսը անցավ ծաղիկներուն զվարթ ու աղվոր երազովը։ Ամառվան տաք օրերը պարտեզին կանանչը դալկացուցին քիչ մը. բայց ցավոտ պարտիզպանը հոն էր, կույր և անխնա աշխատանքի մը մեջ անհայտ ընել ջանալով իր տվայտանքը։ Տիուր և կարմիր մթընշաղներուն, ան իր հողասանտրին կոթնած, տարտամ նայվածքները ժուռ կածեր հորիզոնին երկայնությամբը։ Անսահմանության, գաղտնապահ ու անկարեկիր անջրպետին կհաղորդեր իր անբացատրելի սիրո կսկիծը։ Մարդոցմե ավելի, որոնց վրա ահարկուանգրթություն մը կմղվեր տեսնել իր վիճակին ողբալիության հանդեպ, բնության անքթիթ ու անորոշ վկայությունը իր վիշտերուն արծարծումին՝ մխիթարություն մը կըլլար այլևս խեղճ տղուն արյունոտ հոգիին համար։

Օր մը, սակայն, իր քայքայված կամքին հետին մեկ հառնումին պահուն, Համբիկ խաղաղ մտքով իր փրկության միջոցներուն վրա խորհեցավ։ Կացությունը հանդարտորեն, տրամաբանորեն աչքին առջև բերավ, քննեց, ուսումնասիրեց։ Հասկցավ, որ սիրո այդ հրդեհը չպիտի կրնար մարել իր մեջ, ուստի պետք էր անոր գոհացումին հետամտիլ։ Ասոր համար միջոցներու վրա սկսավ խորհիլ, գործնական ու վճռական բան մը ընելու համար։ Եվ, երկար վարանքներե հետո, որոշեց սիրտը բանալ Սոֆիին, իր սերը լալ անոր ու դարմանը պաղատիլ։

— Նամակ մը գրեմ,— մտածեց։

Քանի մը իրիկուն, Համբիկ, փայտե պարզ սեղանին առջև կծկված, ջղապիրկ մատվրներուն մեջ գրիչ մը սեղմած, թուղթի կտորի մը վրա հակած, դժգույն, շնչասպառ, կգրեր, կավրեր, նորեն կգրեր ու նորեն կավրեր, իր շարադրած խեղ, ուռուցիկ, սնոտի նախադասություններուն այս բոպեին հավնելով, մյուս բոպեին տգեղ, անհաջող, ծիծաղելի գտնելով զանոնք։ Մինակ սկզբնավորությանը համար քանի մը իրիկուններ դատեցավ, քրտնեցավ. դպրոցին մեջ սորված, լրագրին մեջ հանդիպած բոլոր ածականները միտքը կջանար բերել. «Սիրելի, պաշտելի, հոգվույս հատորը, երազներուս հուրին, պաշտեցյալ կուռքս...», բայց ասոնց ոչ մե-

կին կհավներ վերջնականապես։ Գրելեն ետքը, երբ անգամ մը, նորեն կարդար, կխպներ ինքնիրմե ու կտանջվեր այն մտածումեն, թե Սոֆի կրնար ծիծաղիլ իր վրա։ Ազդու և լուրջ ըլլալ կուզեր, անոր գութը և սերը միանգամայն հրավիրելով իր վրա։

Ու, մռայլ հետևանքներու վախեն հալածված, մեկեն կանգ կառներ, նայվածքը սևեռուն, դժգույն, հևքոտ։ Ճակատը կծածկվեր քրտինքի մանր կաթիլներով. թուղթը կճմրթկվեր մատներուն մեջ, մատիտը վրա կսահեր։

— Համբի՛կ, օրդի, ատ ի՞նչ գիր է քի ըմնցավ,— կըսեր մայրը, տղուն գիր գրելու այդ նոր մոլեգնությենեն խռոված։

Խրիտասարդը ոչ էր պատասխաներ, հանկարծական զայրույթով մը լեցված մորը դեմ, որուն վրա տեսակ մը լրտեսություն կտեսներ իր անհուն ցավին համար։

Կվերսկսեր սակայն, կմոլեգներ այդ աշխատանքին։ Գաղափարները, պերճ ու հորդելակ, կծառանային մտքին մեջ, բայց ահա զանոնք թուղթին վրա գեղեցկորեն արտահայտելու անկարողությունը կկասեցներ իր ձեռքը, կմնար անճրկած, հուսահատ, ոչնչացած։ Կմթներ. դուրսը, պարտեզին մեջ, գիշերվան խորհրդապահ շշուկները կբարձրանային։ Թումիկ վրա կհասներ, գինով, ծխափայտը քաշելեն։ Մայրը փայտե ցած սեղանը կպատրաստեր՝ համեստ ու ժուժկալ ճաշին համար։

— Է՛յ, ա՛լ կօգտե, Համբիկ, էկուր հաց կեր...

— Համբի՛կ, ծո՛, հայտե,— կպոռար հայրը, տղուն համենալեն սրտնեղած։ Երբեմն եղբայրն ալ վրա կհասներ, նույնպես գինով, ու Համբիկի գիր գրելու համառությենեն կատղած, կոշտ հանդիմանություններու տարափ մը կտեղար։

— Պալխաճությունը կե՞շ զենաթ էր քի սըվիկա շարշի հանեցեր,— կպոռար հորը երեսին։

Համբիկ մարտիրոսի համակերպությամբ կհանդուրժեր այս դժնդակ կյանքին ու՝ իր հոգին լեցնող բոցերուն շողարձակումեն պաշած՝ կքալեր շոշորդ, դանդաչուն քայլերով, դեպի անստույգ նպատակը, որուն պիտի հասներ ամեն գնով, ամեն զոհողությամբ։

Հիմա, ա՛լ գիշեր-ցերեկ նամակը կխորհեր, զայն իր փրկության միակ միջոցը դավանելով։ Առաջին քանի մը փորձերը անհաջող եղան՝ իր գնահատումովը։ Կուզեր, որ առաջին և վերջին փորձը, զոր պիտի ըներ աղջկան մոտ իր սրտին գաղտնիքը բանալու համար՝ հաջողությամբ միայն պսակվեր։ Օր մը վերջապես գը-

տած ըլլալ կարծեց այն ազդու և սրտաճմլիկ բանաձևը, որ սիրո դերբուկ ճամփան պիտի հարթեր իր առջև։ Իր հոգիին այս մահացու տագնապի օրերուն, պարտեզը զրկվեցավ անոր մանրահոգ խնամքեն։ Ծաղիկները ըմբոստ ծիլեր արձակեցին. օտար, վայրի խոտեր բուսան մաքուր և անթերի ածուներուն մեջ, ու քանի մը հազվագյուտ բույսեր չորցան, ոռոգումե զրկված։ Սոֆի, որ սքանչացումով դիտած էր իր բարեկամին անխոնջ եռանդը այդ խոպան, անխնամ պարտեզը փոքր դրախտի մը վերածելու, հիմա, իրիկունները, փայտե ցածուկ նստարանին վրա իր fրոշեն բանած ատենը, կզարմանար Համբիկին անտարբերությանը վրա։

— Համբի՛կ,— ըսավ իրիկուն մը անոր սենյակեն ներս մտնելով,— մեղք չե՞ն ծաղիկները, կչորնան կոր...

Տղան շվարեցավ, կապկպվեցավ։

— Մեղքը չե՞ն ծաղիկները,— կրկնեց Սոֆի մեղմեղագին ձայնով։

— Կարևոր գործ մը ունիմ աս օրերս,— թոթովեց Համբիկ,— վաղը առտու կջրեմ, անհոգ եղիր...

Նամակը ավարտած էր սիրահարը, բաճկոնին գրպանը դրած, օրվան մեջ տասն անգամ կկարդար զայն. շոգենավին մեջ, վաճառատունը, հակերու ետևը կծկտած, իրիկվան, տունը, նույնիսկ գիշերը քունեն արթննալով, մոմի մը դողդոջ պլպլումովը։ Վերջապես գոց ըրավ զայն, միտքովը կարդաց, գինովցավ անով, երջանկացավ։

Երբ այսպես աղեկ մը ըմբոշխնեց իր սիրուն այդ պերճախոս, ազդու, պաղատագին, լալկան արտահայտությունը, զանիկա Սոֆիին ձեռքը հասցնելու միջոցներուն վրա խորհեցավ։ Այս մասին երկար չեղավ իր վարանքը։ Իրիկուն մը աղջկան մեկ հեռացումն օգտվելով նամակը տարավ ձգեց փայտե ցածուկ աթոռակին վրա, ուր միշտ կնստեր Սոֆի։ Ու ինք հեռացավ գնաց, խենթի մը պես, քայլամոլոր և դողդողահար...

Ու հանկարծ կյանքը փոխվեցավ տանը և պարտեզին մեջ։ Հարդարված, խնամված, գուրգուրացված ածուները լքվեցան, ծաղիկները իրենց բախտին ձգվեցան, ցածուկ նստարանը ա՛լ որբ մնաց, ածուի մը քով շրջած կիյնար ցնցուղը, ժանգոտած և պարապ։ Հողասանտրը ծառի մը կոթնած կկենար անշարժ։ Ծաղիկները, ծղոտնուն վրա, ցորեկվան արևեն տաքցած և ծարավ, կարծես ջուր կմուրային։ Այս լուռ աղերսին ունկնդրող չի կար։ Անակնկալ լքումը, որ հոն կտիրեր, սրտաճմլիկ բան մը ուներ իր մեջ։ Գեղջուկ, պարզ և գրավիչ պատկերը իր կենդանությենեն և գույներեն զրկվեր, սգալի երևույթ մըն էր առեր։ Մա՞հը պտտած էր հոն, կյանքերը խլելով։

Ո՜չ։ Թուղթի աղետավոր, լալկան, պաղատալից կտոր մը, սրտի մը արյունին ու արցունքին մեջը թաթխված, ձեռքի մը ուրիշ ձեռք անցեր էր։ Ու պարտեզը, ու ածուները, ու ծաղիկները, ու ցնցուղը, հողասանտրը, փայտե ցածուկ աթոռակը կմնային անտերունչ, սրտաճմլիկ լքումի մը մեջ։

Սոֆի դուրս չէր ելլար իր սենյակեն, վասնզի կարդացեր էր իրեն ուղղված սիրո այդ անակնկալ և ջղայնոտ հայտարարությունը։ Պատուհանին առջև նստած գունատ և դողահար, իր մեղրամոմի մատները fրոշեի մը մեքենական շարժումներուն մեջ շարշարելով, աչքը սևեռուն և խոժոռ, կմտածեր։ Ատիկա՞ էր իր փնտրածը, թուղթի այդ ողորմելի, ցավագին կտո՞րը։ Հապա ո՞ւր կմնային իր ոսկեղեն երազները, որոնք իր անրջոտ կյանքին սնունդը կկազմեին, ի՛նչ հարված՝ սնամիտ, վերացական աղջիկության մը փայփայած, գգված, խրոխտ ծրագիրներուն։ Սե՜ր, ու ատա՜նկ սեր։ Մուրացկան, աղքատ, վատուժ սեր։ Եվ ինք որ իր երազներուն բարձունքեն, իր հրապույրներուն գիտակից հպարտության վերեն տեսակ մը արհամարհանք նետեր էր՝ իրենց պզտիկ, խենթուկ, ստամբակ սերերովը զինք հետապնդող պատանիներուն երեսին, անգոսնելով անոնց հրավիրող ստահակությունները ու կրքոտ աղաչանքները։ Ու հիմակ, նորեն, այդ սերերուն ամենեն անշանին, ամենեն ողորմելիին, ամենեն արգահատելիին ենթարկվեր։

Իր երևակայության բորբոքումին մեջ, մեկենիմեկ, ծագող արշալույսի մը փողփողումովը, կբացվեր ամիրային խաղաղ ու մաքուր ապարանքը։ Տոքթորին բարձր, հմայքոտ, առինքնող, ազնվական սիլուեթը կերևևար, աչվրներուն գորովալից ու հրայրքոտ վառքովը, անոր փարումը իրեն, անոր հևքը, անոր ջերմ գուրգուրանքը։ Ի՜նչ գինովություն։ Ատ չէ՞ր պերճ, շքեղ, սնուցանող, երջանկացնող սերը։ Համբիկ ի՞նչ հմայքով կրնար պարուրած ըլլալ իր հոգին ու իր միտքը մանկութենեն մինչև այդ օրը։ Դեռ մինչև հիմակ կհիշեր անոր բոպիկ դպրոց երթալը, պատռտած հագուստներով, գլուխը բաց, խեղճ, ազազուն։ Շատ տափակ, անորոշ, սահմանափակ զգացում մը տածեր էր միշտ անոր համար։ Ընկեր-

բոլ տարտամ համակրություն մը, որ ժամանակին հետ կկազմվի և անոր հետ ալ կկորսվի։

Հիմա մանիֆեսթուրաճիի այդ աշկերտը խենթության տագնապի մը մեջ՝ դեպի իր սիրտը կուզեր մագլցիլ, սիրո բարձրություններուն վրա կանգնիլ։ Այդ անհնարին տիրապետումին համար, սիրո խենթ ողբ մը կկարդար ան իրեն ծիծաղելի բացատրություններով, խակ ու անճարակ լեզվանիությամբ մը, որ իր ըզգայուն աղջիկի սրտին բան մը չէր ըսեր։ Զինքը երջանկացնելու խոստումներ, ապուշ ու ենթադամիտ հեռապատկերներու ցուցադրումով մը։

Հետզհետե, կացության ավելի հանդարտ ուսումնասիրությամբ մը, հասուկոտոր, ինքնին աննշան դեպքերու զոդավորումով մը Սոֆի կհաջողեր ամբողջ վիճակ մը պարզել։ Տղուն նայվածքները, շարժումները, վերջին մեկ քանի ամիսները՝ իրեն հանդեպ անոր վերաբերումին տարօրինակությունը, անոր անսովոր փութկոտությունը իրեն հաճոյանալու և մանավանդ անոր այն խոսքը, թե «պարտեզը իրեն համար զարդաբեր էր», հիմա կլայննար, կլուսավորվեր, հոգիի մը ամբողջ տրամադրությունը ցոլացնելով։ Ուրեմն այդ ապարդյուն, տխմար սերն էր, որ մղած էր զանիկա այդ բոլոր գեղեցիկ, բայց ունայն աշխատանքին, պարտեզին ածուները, ծաղիկները, ամբողջ ակնապարար հարդարանքը այդ զսպված, ծամծմված, երկչոտ, ապիկար սիրուն արգասիքն էին. ու ինք, Սոֆի, առանց ուզելու, անգիտակցորեն ատոնք առաջ բերեր էր, արծարծելով, հուրք, հևք տալով այդ մեղավոր ու չփոխարինված զգացումին։

Անակնկալի և սրտնեղության առաջին տենդոտ, վայրագ ժեստի մը մեջ, Սոֆի պատուեր էր սիրատոմսը, զայն երկու հեղ խորունկ ուշադրությամբ մը կարդալե և անոր անհավատալի իմաստը վերլուծել, հասկանալ ջանալե հետո։ Թուղթին բեկորները ցիրուցան անհայտ եղած էին պարտեզին մեջ։ Բայց անոր հատվածները աղջկան մտքին մեջ համառորեն գամված կմնային։ Արցունքոտ պաղատանքի տողեր էին անոնք, աղերսարկու հառաչանքը վախկոտ ու թանկագին սիրո, միամիտ գերագույն գոծը չհուսացված երջանկության։

«Սոֆիս, մի՛ մերժեր զիս և սերս, վասնզի պիտի մեռնեի ատկե. և դուն պիտի կրկվեիր այդ սերեն, ու պիտի դժբախտ, թշվառ ըլլայիր, վասնզի այդ սերը միայն պիտի կարող ալա քու երջանկությունդ ապահովել. քու կյանքիդ սիրույն իմ սերս մի՛ մերժեր...»։

Նամակին մեկ ուրիշ մասը սլաքի մը պես մխված կմնար իր ըզեղին մեջ, հակառակ որ ինք վանել նետել ուզեր զայն.

«Մի՛ խաբվիր, մի՛ շլանար սուտ սերերեն, որ այնքան շատ են և որ կյանքերը կոպտանեն միայն. սուտ սերերը ավելի վտանգավոր են, քան ամենեն բացահայտ ու խորունկ ատելությունները... հավատա այս ճշմարտության, Սոֆի...»

Եվ սակայն, իր հոգիին ըմբոստացումին, խոստովանված այդ սիրույն հանդգնությանը դեմ իր զգացած զայրույթին հակառակ, մանկամարդ աղջիկը երբեմն, իր ընդոծին բարութենեն վարված, գթության ակամա և հեղակարծ շարժումի մը հնազանդելով, կմեղքնար իր մատաղ բաբեկամը, անոր հոգեկան տառապանքներուն գաղափարովը ինքն ալ կշարշարվեր, կուզեր հավատալ այդ սիրո մեծությանը, անկեղծությանը, իր մերժումեն այդ վշտալի ու մատաղաշ էության խորտակումին հավանականությունը կսարսռաներ զինքը։ Բայց, իսկույն կսթափեր, կգոտեպնդվեր իր այդ տկարությանը դեմ, կհանդիմաներ ինքզինքը այդ վաղանցիկ թուլությանը համար և իրական կյանքի հաճոյավետ, եսամոլ անդրադարձումներով կջախջախեր իր աղապատանքի փորձություններ, որոնք իր չքնաղ հոգիին մեջ կայծերու պես կպլպլային ու նվաղեին, ճգճիմ փառքերու իր ունայն հետապնդումներուն, անիրանալի հույսերու իր տխուր որոճացումներուն տեղի տալով։

Ու երիտասարդ տոքթորին պատկերը կուգար կկանգներ իր աչքերուն առջև. անոր տունը իր մորը հետ երկրորդ անգամ այցելելուն որքա՜ն բուռն, ցնցող, խորունկ եղած էր իր կրած տպավորությունը։ Երիտասարդին նայվածքին մեջ այս անգամ տարբեր ցոլքեր, տարբեր կայծեր տեսեր էր։ Նույնիսկ, զինքը քննած միջոցին, ան աճապարանքով քանի մը բառ փսրտացեր էր ականջին, բայց այնքան հուզումով և կամաց, որ չէր կրցած լսել զանոնք, բայց իր այլայլումը նորեն ուժգին էր եղած. ու այդ փրսփրսված բառերուն անհավատալի բացատրություններ, նշանակություններ կուտար մանկամարդ աղջիկը, ներշնչվելով այն տարփոտ ու հրացայտ նայվածքներեն, զորս երիտասարդը ուղղած էր իրեն գաղտագողի։ Մեկնած ատենին իր ձեռքը սեղմած էր ան՝ տենդալի սեղմումով մը։ Մինչև սանդուխին գլուխը հետերնին եկած էր, հակառակ իր սովորությանը, ինչ որ շատ զարմացուցած

էր խաչոն։ Դուրսը, փողոցին մեջ, Սոֆի ավելի լավ ու ճիշտ մեկ-ներ էր երիտասարդ տոքթորին պերճաբարբառ նայվածքները, հոգածության քիչ մը շվարուն, քիչ մը ջղայնոտ շարժումները, ու այն միամիտ ու անվերապահ ըմբռնումովը, որ աղջիկներու անապակ հոգիներուն միայն հատուկ է, հավատաց, ջանաց ինքզինքը համոզել թե այդ երիտասարդը կսիրեր զինքը։

Եվ անխուսափելի զուգակշիռը, որ հիմա իր բորբոքած մտքին մեջ կկատարվեր՝ իր սերը մուրացող սա երկու էակներուն միջև, անհնարին տագնապներու կմատներ զինքը։ Շաբաթը երեսուն ղրուշ վաստկող Համբիկին, ձկնորս Թումիկին տա խեղճուկ տրղուն վարմունքին մեջ որքան լպիրշ հանդգնություն մը, անգոսնելի համարձակություն մը կտեսնար, երիտասարդ տոքթորին զսպված, գողունի կերպով սնուցված համակրության մեջ այնքան վսեմություն, հրապույր, պաշտանք կգտներ։

Իր երևակայության բորբոքմանը մեջ, իր բուռն տենդին մեջ, մանավանդ, երբ կանդրադառնար, որ ատ պարտեզին բոլոր աղվոր ծաղիկները, ծառատունկերը, ածուները արհամարհված սիրո պանծացումը և մատուցումը նպատակակետ ունեցած էին, երբոր կմտածեր, որ ամիսներով, գուցե տարիներով այդ խեղճ տրղուն մտածմունքին ամբարշտությանը ենթարկված էր անախորժ, մերժված պաշտամունքի մը անգիտակից առարկան դառնալով, կատեր ա՛լ ծաղիկներն ալ—զորս այնքան սիրած գգված էր,—ածուներն ալ, պարտեզն ալ, ցածուկ աթոռակն ալ, բոլորը այդ ծաղկազարդ, անդորր, երջանիկ անկյունը իր հետին մանրամասնություններուն մեջ։ Բայց, իր զայրույթին է՛ն բուռն րոպեին, աղեկեզ ողբը՝ բզկտված նամակին հովին հանձնված, անջրպետին մեջ կորսված բեկորներեն կարծես կուլար իր ականջին.

— Սոֆիս, մի՛ մերժեր սերս, վասնզի պիտի մեռնեի ատկ...

Եվ հակառակ իր բովանդակ արիացումին, բոլոր մեծ, փառավոր, շլացուցիչ բաներուն, որոնց մտածումովը կուզեր ողողել իր էությունը, աղջիկը, ակամա կդողար անկեղծ, ահեղ սիրո այդ հեծյունեն և ընկճված, ջախջախված հառաչ մը կարձակեր.

— Օ՜հ, խեղճ Համբիկ...

Ու պարտեզը կմնար ամայի, ցածուկ աթոռակը հոտ, ու ծաղիկները ծղոտնոն վրա, գունագեղ ու հոտավետ, իրենց աղվոր տիրուհին մատվընեուն հպումին կարոտով կտառապեին...

Համբիկ ինչպե՞ս ապրեցավ գիշերը այն օրվան, ուր նամակը իր նպատակին հասցուցած էր։ Ջղային, հոգեկան, մտավորական տեսակ մը անէացում ապրեցավ, զոր ոչ մեկ բառով կարելի է սահմանել. աչքերը գոց, արտաքին առարկաներեն շլացածի պես, խոկաց ներքնաշխարհի մութին մեջ, ուր վիթխարի, հրեշային սովերներ, հրաշափառ լուսավորություններու քով քառսի խավարներ, միքրոպային պզտիկություններու քով հսկայական մեծություններ շարունակ կդառնային, կթավալեին, կհորձանային իրենց ցնորական այդ պտուտքին մեջ զինքն ալ դարձնելով, նետելով, քաշելով, խենթեցնելով։

Ու երազեց։ Պարտեզը կլայնար, ծով կըլլար, տիտանական անտառ մը, խավարշուտ, անծանոթ և ահավոր խորություններով, ճիվաղներե բնակված ծառեր, ահագնատեսիլ սև կոճղեր երկինք կսլանային իրարու փաթթված, ագռավներե, անգղերե, բուերե, գիշերային քստմնելի թևավորներեն հաճախված. օձեր, մեծագալար օղակներով, կսողային գետինը. մութ թավուտներու ծակերեն վայրի գազաններու լայնալիճ աչքեր, կաս կարմիր, հրատներու պես կշողային։ Հեռուն, երկինքին ու անտառին հպած տեղը, հրդեհ մը կվառեր դժոխանման, ուր երկար մագիլներով, անսահման պոչերով, սրածայր անհեթեթ կոտոշներով զինված կարմիր հրեշներ կելևէջեին խուռներամ, կայծերու հրեղեն փունջերու մեջեն։ Բացատանի մը վրա, վագրեր, փիղեր, բորենիներ, ռնգեղջյուրներ, կոկորդիլոսներ, բոլոր ճիվաղային անհեթեթությունները, զորս զառանցանքը կրնա կերպավորել վիթխարի մեծությամբ, զիրար կհալածեին, կխածատեին, կհոշոտեին։ Անթիվ անհամար ճճիներ, բարակ երկար ոտքերով, սրածայր պատիճներով զինված միջատներ, մանր, խոշոր, սև, կանանչ, կվժժային օդին մեջ, գետինը, ճյուղերուն վրա։

Հեռավոր ծառերու տակեն, խավարը հանկարծ փարատելով, լույսի ակնախտիղ հեղեղ մը կխուժեր՝ միլիոնավոր շողարձակ ջահերու հանդես մը պարզելով, որուն մեջեն, սպիտակ, լուսեղեն հանդերձանքներով փաթթված, կին մը կհառաջանար հերարձակ, ծանրաքայլ և վեհաշուք։ Լուսավոր ասպարեզին հազիվ կեսը հասած, ան կանգ կառներ, խարտյաշ վարսերու ջրվեժին ներքև իր ճեպ ճերմակ դեմքը շորսդին պտտցնելով. և ահա, հյուսիսաբնակ եղնիկի մը արագությամբը, երիտասարդ մը, սուսերամարտ ասպետի մը պես հագված, դուրս կցատկեր մացառուտքին խորերեն, ու կվազեր ժպտուն, թևատարած, վարսերը ծածանուտ։ Ու կհասներ

այդ լուսածին հուրիին, կնեռվեր անոր-ոտքերուն, կերկրպագեր, համբուրելով գետինը, անոր ճերմակ ոտքերը, երեսները քսելով անոր լույսե քղանցքներուն։ Ու կինը, այդ գետնամած պաշտամունքին պահուն հանկարծ իր լանջքին սպիտակություններեն թուղթ մը կքաշեր կհաներ, արհամարհոտ ժպիտով մը կնետեր դայն իր երկրպագուին, որ խենթի պես կհափշտակեր, կառներ այդ թուղթը, սարսափի նայվածքներ պտտցնելով անոր վրա և ահեղ ոռնումներ թնդացնելով.

— Նամա՜կը, նամա՜կը, նամա՜կը...

Ու հորիզոնը այրող հրդեհը մեծաշառաչ ճարճատեց, ելեկտրոն հրեշները ոռնացին, ու գազանները մոլեգնորեն մռնչեցին. անպարագիծ, սև անտառին խորերեն ահավոր որոտներ լսվեցան, զիրար կերան... Ու մարդը, ասպարեզին մեջտեղ դժնդակ պրկումներու մեջ, պոռաց, աղեխարշ գանչյուններով.

— Նամա՜կը, նամա՜կը, նամա՜կը...

Համբիկ, այս ահավոր տեսիլքին մտրակումին տակ, վեր ցատկեց, քրտնաթաթավ, սարսափահար, աչքերը տարապայման բաց, դողդղալով, մղձավանջին ահավորութենեն անէացած, հալածական։

Մինչև առտու մնաց ատանկ, սառած անդամներով, ընդարմացած ըղեղով, բան մը մտածելու անկարող։

Լույսը շատոնց ճեղքված էր, ու տղան կմնար ատանկ, անկողինին գամված, գլուխը ափերուն մեջ, մտամոլոր, կորսված...

— Համբիկ, չելլա՞ս,— ձայնեց մայրը,— է՛լ զավակս ուզ կմնաս։

Համբիկ սթափեցավ, ելավ, հագվեցավ ու գնաց... Ճամփան, ատեն-ատեն ետին կդառնար կարծելով լսել բացաստանին մարդուն ցավագին աղաղակը. «Նամա՜կը, նամա՜կը»։ Շուկան, առաջուն ցավագին աղաղակը. «Նամա՜կը, նամա՜կը»։ Շուկան, առաջուն նորազարդ շարժման մեջ տղան անսովոր տպավորություն մը կկրեր. սալարկներուն վրա հնչող ոտնաձայները, բացվող փեղկերուն աղմուկը, շրջուն ծախողներուն թոքապատառ կանչերը ականջին մեջ կթնդային քստմնելի շառաչներով. կարմիր մղձավանջին մեկ իրական շարունակությունը կարծես. ու կխրտչեր անցորդներեն, վախնալով որ անոնք հանկարծ իրեն կդառնային ու կպոռային. «Նամա՜կը, նամա՜կը, նամա՜կը...»։

Վաճառատան մեջ, միտքը գելանող զարհուրելի տեսիլքները վանելու համար Համբիկ սկսավ խենթի պես աշխատիլ, տենդոտ ամապարանքի մը անձնատուր։ Բայց իր այդ անսովոր փութկոտությանը մեջ մեկենիմեկ կկենար, միտքի տանջանքեն հաղթված, միլավայրը և կացությունը մոռնալով, սառած, ոչնչացած... Հետո, դերագույն ճիգով մը, նորեն կսկսեր իր գործին... Իր շոշորդ, մոլորուն ձևերը, նայվածքին խենթությունը վերջապես գրավեցին գրագրին ուշադրությունը։

— Ը՜հ, աս տղան կփախցունե՞ կոր ի՞նչ կընե կոր,— ըսավ ուրիշ պաշտոնյայի մը,— հիյեթը նայե... Համբի՜կ, հո՜ս եկուր,— պոռաց տղուն, որ պահ մը կանգ առած գետինը կգիտեր շլմորուն։

Համբիկ, սթափած, մոտեցավ։

— Ինծի՜ նայե նայիմ,— ըսավ գրագիրը խիստ շեշտով մը։

Տղան վեր նայեցավ, իր նայվածքին բոլոր տարտամությամբը։

— Հասկցա, հասկցա,— շարունակեց գրագիրը...— Ը՜հ, շորպաճին փարան կառնես կոր նե ի՞նչ կընես կոր... գիշերները ո՞ւր ես... չե՞ս քնանար կոր...

Համբիկ բառ մը չգտավ պատասխանելու այս վարնոց և անարգ զրպարտության։ Լռեց, իր հոգեկան խորունկ, ահավոր ցավին մեջ ապաստանած։

— Հայտե՜, ը՜հ, հայտե՜, խելքդ գլուխդ ժողվե, աշկդ գործիդ մեջ պաց, գերե շորպաճին իմանա քի ատանկ պաներու ետևե ես, անկաճետ պոնածին պես, գիտե՞ս ա...— վերջացուց գրագիրը գբաստեղանին առջև տեղավորվելով, իր խրատականեն տարապայման գոհ։

Համբիկ, սարսափած որ իր վիշտը դեմքին վրա և աչքերուն մեջ կարդացվեր էր, ինքզինքը ամփոփելու — իր սովորական երևույթը առնելու հուսահատ ճիգեր փորձեց, որքան կարելի էր իր շլմոր նայվածքը ուրիշներեն սքողելով։

Իրիկվան, վաճառատունեն մեկնելուն, խառնվեցավ ամբոխին, անոր հարուցած ժխորին մեջ իր աղաղակող ցավը անհայտ ընելուն երջանիկ։ Շոգենավին մեջ բարաբեեն վար ծռած, ջրերուն խռլական թավալումը զննեց, անիվին գլորման թավ աղմուկեն գինովցած։ Նավամատույցին վրա վարանում մը ունեցավ։ Տո՞ւն երթար։ Հապա եթե Սոֆին հանկարծ դեմը ելլար դաժան և անգութ, երեսին նետեր նամակը, հանգիմաներ, նախատեր, ապտակեր իր ժարհությունը... Շիպ շիտակ դյուգին լեռը ելավ։ Վերջալույսի շի-

ջելափառ խորհրդավորությունը, իրիկնամուտի տարտամ, անոր մշուշներեն ստվերոտած բլուրներուն անծայրածիր կոհակավորումը՝ իր մտածումներուն տրտմությունը կշեշտեին։ Կեցավ կանգ կարկառի մը վրա, ակնարկը մշշապատ հեռավորությանց մեջ մը-խրված։

Հիմակ, իր խոհանքներուն ցավագին ալեկոծմանը մեջ, հարցում մը շարունակ կուգար մտքին առջև, կցցվեր, հակառակ որ ինք համառորեն զայն վանել ուզեր, անոր պատասխանելու անհնարությենեն հարկադրված։

— Ի՞նչ եղած էր նամակը։

Ցավատանջ սրտե մը բրդած արուն արցունքի այդ կաթիլը ո՞ւր գացած ինկած էր. սրտի մը գգվոտ աղապատանքին վրա՞, թե ապառաժի մը կարծրությանը։

Այս վերջին պարագային հավանականությունը կսառեցներ իր երակները, կորսված, ոչնչացած կզգար ինքզինքը, ու կթվեր իրեն, թե կարկառը, որուն վրա կանգնած էր, կխլրտար, կշարժեր, կթավալեր՝ նետելով զինքը վարը, անդունդին մեջ։ Ու երկու ձեռքերը հենարան մը բռնելու պես դեպի առաջ կարկառած, սարսափի պիշ նայվածքով, «ամա՜ն, ամա՜ն» կպոռար, նստելով, գրեթե իյնալով կռնակին վրա։ Մութը կոխեց, մշուշները ցրվեցան, հալեցան խավարին մեջ, դիմացի բլուրներուն սև ուրվականը հազիվ թե կանջատվեր երկինքին գորշ հատակին վրա, և Համբիկ, կարկառին վրա երկնցած, դեռ կխոկար։ Գիշերվան զովությունը հանկարծ իրականության բերավ տղան, որ թոթվվեցավ ելավ ու գնաց գլխիկոր տուն մտավ։

— Համբիկ, օրդի, աս ատեն ո՞ւր ես,— հարցուց մայրը անձկությամբ։

— Զորպաճիս տեղ ղրկեց, մայրիկ, ուշ մնացի... խայրխով էկա։

— Շատ ֆեսֆեսե ըրի, օրդիս։

Գիշերը անկողնին մեջ, նորեն վրա հասան զարհուրելի մղձավանջները, որոնց մեջ ճերմակազգայց կինը, ասպետի երևույթով երիտասարդը, նամակը հետզհետե երևան կուգային, պաղ քրտինքներու մեջ ողողելով զինքը, ընդոստ զարթնումներու ենթարկելով։

Ու օրերը, հոգեկան մահացու տագնապներով, իրարու նմանեցան, պարտեզին մեջ, ածուի մը քով, գետինը շրջած կմնար ցընցուղը, պարապ և ժանգոտ, հողասանտրը ծառի մը կկոթներ, ու ծաղիկները, ծղոտնուն վրա, թարշամած բաժակներնին գլխահակ, արևին տակ տխուր և գունատ, կարծես իրենց կենդանություն տրվող բաղուկներուն օգնությունը կպաղատեին...

. . . . . .

— Շարունակ նայվելու պետք ունի օրիորդը,— ըսած էր տոքթոր Մարկոսյան, երբոր Կյուլլուկ հանըմ երկրորդ անգամ իր աղջիկը տարեր էր երիտասարդ բժշկին։

— Աստված օրերդ շատցնե, զավակս,— պատասխանած էր Կյուլլուկ հանըմ, այս անձնվեր հոգածության ցույցեն հուզված։

Այս երկրորդ անգամուն, մեկ շաբաթվան համար միայն դեղված և դեղագիրն ալ իր անձնական քսակեն պատրաստած էր։

Իր թելադրությամբը, տիկին Մարկոսյան ճամփեց իր բազմամյա լվացարարուհին և անոր տեղ Կյուլլուկ հանըմը բռնեց։ Այս պատճառով հարաբերությանց հաճախություն մը հաստատվեցավ ամիրային տան մեջ։ Սոֆի, որ տոքթորին աչքերուն մեջ փայլատակող կայծերեն հետզհետե կմագնիսանար, իբրև լվացարարուհի մորը այդ տունեն ներս մտած ըլլալը արդարանալի պատրվակ մը նկատեց՝ ինքն ալ հոն հաճախելու, օգնելու համար ամիրային աղջկան տնական զբաղումներուն, ինչ որ արդեն չափեն ավելի գոհունակություն պատճառեց այս վերջինին։ Քիչ-քիչ մտերմություն մըն է հաստատվեցավ։ Տիկին Մարկոսյան համակրեցավ այդ հմայքոտ ու հեզ աղջկան և նույնիսկ օրին մեկը հայտարարեց իր զավկին, թե իր պաշտպանությանը տակ կառնե զանիկա։ Տոքթոր գովեց մորը զգացումը։

Սոֆի, ամիրային ապարանքին մթին պերճությանը մեջ, անսովոր հաճույք մը, անբացատրելի երանություն մը կապրեր, բընազդորեն կզգար, թե ատիկա է միակ միջավայրը, ուր ինք պետք էր ու արժանի էր ապրելու։ Կահավորված անդորր սենյակներուն մեջ պտտիլը հեշտանք մըն էր իրեն համար, բազմիլ թավիշե լայն թիկնաթոռներուն մեջ, դիտել զանազան մեծագին առարկաները, որոնք ամիրայական փարթամ ժամանակամիջոցի մը աղմկալից դրվագները կպատմեին, իբրև անոնց լուռ վկաները։

Քանի մը հեղ, տոքթորը, շնչին պատրվակներով, իր բժշկական խուցը տարավ մանկամարդ աղջիկը, և նստեցնելով զայն, բրժշկության բարիքները և հրաշքները պատմեց անոր, Կոստան-

յանեն սորված ճոռոմ շեշտերով ու լայնածիր շարժումներով։ Աղջիկը, շլացած, հմայված, մտիկ ըրավ։ Ի մեջ այլոց դաստիարակության և քաղաքակրթության բարիքներուն վրա խոսեցավ։ Իր բազմակողմանի հմտության մասին գաղափար մը տալու համար իր գեղանի ունկնդիրին, պատմութենեն էջեր մեջ բերավ, մեծ մարդոց անուններ հիշեց, բանաստեղծներու գործեր անվանեց, մեծ մասամբ հերյուրելով, խեղաթյուրելով, սուելով։ Հաստատեց թե ինք գիտուն մը ըլլալով, միայն գիտության չոր ու ցամաք գետնին վրա չէր շրջագայեր, այլ կսլանար նաև բարձր գրականության, բանաստեղծության և նույնիսկ դեպի գեղարվեստներու կապտագեղ հորիզոնները, երկնային անհունություններ։

— Միտքը և սիրտը միևնույն ժամանակ սնանելու են, օրիորդ,— կկրկներ, մերթ ընդհատելով իր խոսքը, երաղուն և խորին ընելով իր նայվածքը։

Սոֆի, որուն համար նորություն մըն էին այս նյութերն ու խոսելու այս եռանդուն եղանակը, սահմռկած կմնար, ազդված երիտասարդին շքեղ հասակեն, աղվոր, ազնվական դեմքեն, աչքերուն կրակեն։ Եվ հանկարծ միտքը կուգար մյուսը, Համբիկը, իր պատմաճիի աշկերտության բովանդակ խեղճության, իր մուրացածո սիրույն թոթով, երկչոտ անկարողությանը մեջ։ Աղջկան մտքին մեջ կփչանար հեք սիրահարը, ճղճիմ, ցավալի համեմատություններու կվերածվեր։

Հետո, տոքթորը, ճարպիկ փոխանցումով մը խոսքը կբերեր, կհանգեցներ հայ աղջիկներու դաստիարակության կնճռոտ ու կենսական հարցին։ Հոս, մեկենիմեկ միտքը կիյնային Կոստանյանին բառերը ու շարժուձևերը։ Սենյակին մեջտեղը կեցած, գոռոզ, աղվոր մազերը ճերմակ լայն ճակտին վրա գեղեցիկ խովացումով մը, աչքերը կիսախուփ ու երազական, վշտալի և աղապատուից շեշտերով կխոսեր խառնիխուռն, անկապ, ափեղցփեղ, Սփենսեր, Բեսաալոցցի, Ռուսո իրարու զարնելով, հառաչանքներով ընդհատված և անփոփոխորեն հանկերգված.

— Օրիո՛րդ Սոֆի, մեր հայ աղջիկները կփչանան կոր, վասնզի թերի է անոնց տրված դաստիարակությունը... ափսո՛ս, ափսո՛ս...

Թ.

Օր մը, երբ Թադեոս աղա այցելության եկած էր ամիրային տունը, երիտասարդ բժիշկը իր մոր առաջարկեց.

— Մամա, ես գաղափար մը հղացա։ Սոֆի և իր մայրը թող գան մեր տունը բնակին։ Չըլլա՞ր, մամա։

— Շնորհքով աղջիկ է, բայց ի՞նչպես կըլլա ատիկա, զավակըս, հոս կուգա՞ն, կընդունի՞ն մի ատանկ առաջարկ մը։

— Ինչո՞ւ չպիտի ընդունին, ամիրայի տուն է աս, ապրուստի հոգ չեն ունենար, դեռ ի՞նչ կուզեն։ Հե՞, ի՞նչ կրսես, Թադեոս աղա։

— Ի՞նչ պիտի ըսեմ, տոքթոր,— պատասխանեց գանձապահը ակռապլիկ լինդերուն տակ գիստը փշրել ջանալով,— ատիկա անանկ պան մըն է քի մամայիդ և քուկին գիտնալիք պանդ է։ Ամա, ինձի հարցնես նե կեշ չըլլար։

Եվ իր խորաթափանց աչվքներովը երիտասարդին հոգիին խորերը կպրպտեր։

Երիտասարդին բիբերուն մեջ շեկ լույսեր կդողային։ Թաքուն և անծանոթ սարսուռներ կանցնեին դիմագծերուն վրայեն, և խարույշ բեղը կոլրտկեր մատվքներովը։

— Է՛յ, սանքի մեկ թարաֆեն ալ կեշ չըլլար,— վրա բերավ Մերկերյան ձեռքը գլխին գավաթին երկնցնելով, տոքթորին ամբողջ հոգեբանության թափանցած։

— Քանի որ հարմար կտեսնաք, ե՞ս ինչու չուզեմ,— հայտարարեց տիկին Մարկոսյան, երբ գանձապահին հեղինակավոր հավանությունը տեսավ իր դեմը։

Եվ անմիջապես որոշվեցավ, որ Թադեոս աղա հետևյալ օրն իսկ երթար լվացարարուհիին տունը և զայն համոզեր, որ աղջկանը հետ ելլար ատ խեղճ տնակեն և փոխադրվեր ամիրային տանը, հոն բնակելու համար վերջնականապես, տիկին Մարկոսյանի և տոքթորին բարձր և պատվաբեր հովանավորությանը ներքև, երջանկավետ ապագայի մը հույսով։

— Ատ գործը ինձ գիտցեք, Մերկերյանին ծառքեն պան չի փախիր,— վճռեց գանձապահը, բեղերն ու թուշը սրբելով անձեռոցով։

Իր մեղապարտ գիտավորության այդքան դյուրին և արագ հաղորդությենեն գինովցած, հիմա, տոքթորը, ոտքի վրա մամային ասելը շարունակեն, գգվական ու զվարթ ձայնով մը կրսեր.

— Մամաս ա՛լ չի կրնար աշխատիլ, մամայիս սիրուն ատ մայրն ու աղջիկը մեր տունը ընդունելու զոհողությունը հանձն կառնեմ...

— Աղվոր զավակս, հոգիս,— կմրմնջեր միամիտ կինը՝ զավկին ձեռքերը փայփայելով իր ուսերուն վրայեն։

— Հելպեթ տե յա, մեղք է մամադ, օղլում,— վրա կուտար մակաբույծը անդիեն՝ չար ու նենգ ժպիտով մը իր առջևի երկու ակռաները ցուցնելեն։

Բայց երբոր Մերկերյան մինակ մնաց իր տանը մեջ, այս նորության վրա իր բարձրաձայն խորհրդածությունները ըրավ։

— Ցա՜, վա՜յ զավալը աղջիկ, գլուխդ փորձանք մը կդառնա կոր, ամա նայինք ի՞նչ է... հասկցվեցա՜վ, ատ տոքթոր օլահախը աշկ է նետեր աղջկանը. հիմա ճանկերուն մեջ առնել կուզե կոր... վա՜յ պապանըն... աղվոր ալ կտոր է, պե՛... Ծո՜, ան չէ ամա,— անդրադարձավ գանձապահը, ձեռքը ճակտին զարնելով,— էս ի՞նչ եմ աս գործին մեջ, թաղակա՞ն եմ մի... սոն տարիքիդ մեջ ասանկ գործե՞ր ալ պիտի տեսնաս էղեր, Թադիկ... Թո՜ւ քեզի... Պե՛ ճանըմ, ո՞վդ ատանկ գործեր չըներ կոր, աշխարքին ըրածը ի՞նչ է քի... Միջնորդ հաշտության, հե՞, տեր Դանիելին ըսածին պես։ Հեմ ան ձգե, ընելի՞ք ինչ է քի, չամաշրճիին պիտի էրթամ ըսեմ, որ հանըմը քեզի իր տունը կուզե կոր, աղջիկդ ալ հետը, կերթա՞ս մի չես երթար. հելպեթ կերթաս, ի՛նչ ալ ըլլա ամիրայի տուն է... չորս ոտքով պիտի վազե... էլչիյե զևալ յոք, զաթը հիմակվան զենկինեներուն ո՞րը ասանկ էլչիություններով չէ զենկինցած... չէ՛, Թադիկ, օղլում, ատանկ պաները ումուրդ պիւե մ'ըներ. ամա տոքթորին միտքը գնչ է էղեր, խե՛րը անիծեմ անոր ալ, մեկալին ալ, մենք մեր գործը նայինք...

Եվ գանձապահը այսպես իր խղճին և արժանապատվության զգացումին ըմբոստացման փորձությունները հանդարտեցնելով՝ մտավ անկողին։

Հետևյալ օրը, Թադեոս աղա եկեղեցիի իր սովորական այցելութենեն ետքը, լվացարարուհիին տունը գնաց։ Մայր ու աղջիկ տունն էին և չափազանց զարմացան իրենց սեմին վրա տեսնելով մեծանուն գանձապահը, որ ատանկ անակնկալ կերպով կհաներ իր թաղականության բարձունքեն իջնալ մինչև այդ խոնարհ ու աղքատ հարկը։

— Հրամմեցե՛ք, Մերկերյան էֆենտի,— ըսին մայր ու աղջիկ՝ ներս հրամցնելով պատվարժան գանձապահը, որ իր սովորական ծանրաշուք և արժանավայել շարժվածքովը, լռիկ մնջիկ, գընաց տոտոզվեցավ նեղ ու ցած բազմոցին վրա, որ պատուհանին ամբողջ երկայնքը կգրավեր։

— Խե՞ր է, Թադեոս աղա,— հարցուց մայրը՝ որպիսության սովորական հարցումներեն հետո։

— Խե՛ր է, Կյուլյուկ, խե՛ր է, ես պաշըպոշ տեղը մարդու տուն չեմ երթար... ա՛լ սա խեղճութենեն պիտի ազատիք. կօգտե իշտար ասոր անոր տունը դատեցար նե...

Այս հառաջաբանին առջև, մայր ու աղջիկ շվարած՝ իրարու երես կնայեին։ Արդյոք մեկենիմեկ հարստացա՞ծ էին, անակնկալ ժառանգությո՞ւն մը եկած գտած էր զիրենք. բայց Կյուլյուկ հանըմ շատ լավ գիտեր, որ թե՛ իր և թե՛ հանգուցյալ էրկանը շառավիղները, մինչև յոթներորդ պորտեն ալ շատ անդին, ամենապզտիկ ժառանգության մը հավանականություն իսկ ընծայելե անհունապես հեռու էակներ էին։ Եվ ուրախությամբ խառն անձկություն մը կնշմարվեր հիմա անոնց դեմքերուն վրա։ Եվ լվացարարուհին՝ երկու ձեռվընները ահագին փորին վրա իրարու կապած, աչվընները դեպի ձեղուն, կմմռար.

— Աստվա՜ծ լսե ծանդ, էֆենտի, իմ քաշածս ո՞վ կքաշե քի...

— Ատոր համար,— շարունակեց Մերկերյան,— թե՛ քու և թե՛ աղջիկանդ ըռահաթությանը համար շատ աղվոր բան մը մտածեցի...

— Ի՞նչ, Թադեոս աղա։

— Ի՞նչ պիտի ըլլա, տիկին Մարկոսյանը ձեղի իր տունը կուզե կոր գիշերով ցորեկով, մարվաղջիկ կելլաք Ամիրային տունը ախտարմա կըլլաք, հե՛մ տուն կռահաթնաս, հե՛մ աղջիկդ։ Հանըմը շատ կսիրե կոր Սոֆին, տոքթորն ալ... Աղջիկդ հանըմին յարտըմ կընե, կարերը կկարե, տուն ալ սանկ նանկ խզմեթներ կընես, էղավ գնաց, վեսելա՜մ... Ի՞նչ ըսիր, Կյուլյուկ։

Անճառ փողփողում մը հանկարծ լուսավորեց մանկամարդ աղջկան խաղար ու սև աչվընները։ Դեմքին դժգունությունը մեկենիմեկ աղվոր շիկնումով մը սնգուրվեցավ։ Մատվները, ներքին տենդեն մղված, փոթեր կհորինեին շրջազգեստին վրա, ու ան անհագորեն, խելահեղորեն մորը կնայեր՝ լսելու համար պատասխանը զոր անիկա պիտի տար այս փրկարար առաջարկին։

Կյուլլուկ հանում այնքան շվարեցավ և ասանկ անակնկալ հրավերի մը այնքան քիչ կսպասեր, որ ինքն ալ աղջկանը երեսը կնայեր, անոր կարծիքը առնելու պես. և իսկույն նշմարելով անոր աչվընեռուն մեջ, դեմքին գիծերուն վրա երանության ակներև փողփողումը, մոր բնազդական հայտնատեսությամբ ըմբռնեց ամբողջ բանակցությունը այդ հրավերին, որ իր ու իր աղջկան կյանքին վրա նոր, լուսավոր հորիզոններ կբանար և զոր, սա իրենց հիմակվան կենցաղին բոլոր անշքությունն ու տառապանքը նկատի առնելով, անհնարին երևցավ իրեն մերժել։ Մնրադիր նստած գետինը, տախտակին վրա, իր այդ դիրքովը իր ճարպերուն ամբողջ կշիռը և առատությունը երևան հանելով, աչքերը ապուշ ու ողորքելից պաղատանքով թրջած, գանձապահին կնայեր ու կկմկմար.

— Չիյտեմ ինչ ըսեմ, Թադեոս աղա... անանկ պան մըն է ըսածդ քի նե հա կրնամ ըսել նե չէ... Ամա վո՞ւրկե վուր հանըմը իր քովը կուզե կոր մեզի. տունո՞վ տեղով մի, սանկ վախիթի մը համար...

— Պե ճանըմ,— ըսավ Մերկերյան սրտնեղած շեշտով մը,— տունով տեղով, հելպեթ տե... Աս խսմեթը ծառվընուդ փախցունեք նե մեյ մըն ալ չեք գտնար. հիչ նազ տուզ չուզեր, ամիրայի տուն է էրթալիքնիդ... հե՞, Սոֆի, դուն ի՞նչ կըսես,— ավելցուց աղջկան դառնալով։

Սոֆի, որուն շփոթությունը այնքան սաստիկ էր, որքան ուրախությունը անսահման, համեստությունը ունեցավ չեզոք մնալու այս վճռական րոպեին.

— Ես ի՞նչ ըսեմ, մայրիկս գիտե,— պատասխանեց դողդոջ ձայնով։

— Աղեկ կըլլաք, աղջիկս, աղեկ կըլլաք,— կպնդեր գանձապահը, մեկնելու պատրաստվելով.— կմկմալ չուզեր. վաղը ես մարդ կղրկեմ հոս, կյոչերնիդ կկապեք կելլաք դուրս աս աղտոտ տեղեն... լմնցավ գնաց։

Եվ երկու շվարած, կապկպված արարածները թողլով որ այդ անակնկալին հուզումները ապրին լուռ ու մունջ, ֆեսը ճակտին վրա կոխելով և «մնաք բարով» մը մռլտալով մեկնեցավ։

Թադեոս աղային մեկնելեն ետքը, Սոֆի և իր մայրը, սահմրկած, իրարու երես կնայեին, անկարող իրենց այլազան զգացումներն իրարու հաղորդելու, ասոր համար կարծես համարձակություն պակսելով իրենց քով։ Վերջապես սովորական և նախատենչի բան մը չէր չքավորության այդ անշուք բույնեն մեկենիմեկ փոխադրվիլ ամիրայի մը ապարանքին ճոխությանը և պերճությանը մեջ, այն հանգամանքով նույնիսկ, որով Սոֆի և իր մայրը այդ փոխադրության սիրտի ենթարկվեին։

Մանկամարդ աղջիկը իր անցուցած, փայփայած, ըղձացած երազներուն իրականացումին աչքն կտեսնար ինքզինքը՝ դյութական զորությամբ մը կարծես։ Ի՞նչ, հոդ ըլլալ, այդ խաղաղ, ազնվական, փարթամ մթնոլորտին մեջ, աղվոր ու սքանչելի երիտասարդի մը կողքերուն և համայքոտ ընկերակցությանը մեջ, մեծանուն ամիրայի մը աղջկանը հարատամ ու հոդածու հովանավորությանը տակ, կարենալով վերեն, շա՜տ վերեն նայիլ այնպիսի մարդոց վրա, որոնց մինչև այն ատեն վարեն, շա՜տ վարեն նայել տրված էր իրեն. կուշտուկուտ գոհացումը ունենալ անանկ տրամադրություններու, որոնք մինչև այն ատեն իր քունը խռովեր. սիրտը մաշեցուցեր, միտքը տառապեցուցեր էին. ասիկա չհուսացված երջանկության մը հայտնությունն էր. մութ գիշերվան մը մեջեն մեկենիմեկ բարձրացող արևի մը ճառագայթումը։ Այս անակնկալ և անկարելի հրավերին հոգեբանությունը ընելով, Սոֆի, իր միամիտ ու խանդավառ աղջկան հասկացողությամբը, կարծեց գտնալ ատոր բուն շարժառիթը. թե տոքթորը կսիրեր զինքը և կուզեր միշտ իր քովը ունենալ իր սիրուն առարկան։ Ուրիշ ամեն ենթադրություններ՝ այս ուղված, փնտրված հավանականության աղբը ջուրը ինկան, ու աղջիկը ատոր համոզումին մեջ անճառելի հեշտություն մը խմեց, գինովցավ, փղձկեցավ, կոպերուն մեջ արցունքի շիթեր խռնվեցան, զորս խնամքը ունեցավ ծածկելու իր մորմեն. ու կերևակայեր, թե որքան մեծ ըլլալու էր իր ներշնչածները, որ ամիրայի մը թոռը գիջաներ աղքատներ ընդունիլ իր փառավոր ապարանքեն ներս, ամեն նկատում, ամեն հպարտություն ոտնակոխ ընելով։

— Է՜յ, Սոֆի, ի՞նչ կըսես, զավակս, երթա՞նք,— կհարցուներ մայրը, ա՛լ այդ գործին մեջ ամեն հեղինակություն կորսնցուցած, աղջկանը կամքին ապավինելով։

— Երթանք, մայրիկ, ինչո՞ւ չերթանք,— պատասխանեց աղջիկը տիրականորեն, ատանկ բանի մը համար վարանում մը իսկ անընդունելի գտնելով։

— Երթա՛նք աղջիկս, երթա՛նք, աս խեղճութենեն ա՛լ օսանմիշ եղար...

Այդ օրն իսկ տեղափոխության պատրաստություններովը զբաղեցան մայր ու աղջիկ, անձայն, անշշուկ, գողերու պես, որոնք հանկարծակիի գալու երկյուղովը համակված են։ Իրենց գինովությանը մեջ, անոնք կվախնային խաթարել իրենց երջանկությունը, եթե ատիկա ուրիշի մը ականջը իյնար։

— Մարդու չըսեք աս եղածը, մայրիկ,— կպատվիրեր Սոֆի իր մորը,— թող եռքը իմանան։

— Քովիններո՞ւն ալ չըսենք, Սոֆի։

— Չէ՛, չէ՛, մանավանդ անոնց ըսելու չէ։

Իր անուշ խռովքին մեջ, մանկամարդ աղջիկը և ոչ իսկ կզիջաներ հիշել Համբիկը, անոր սերը, անոր տառապանքը։ Վայրկյան մը միայն,— ընդհակառակը, երբ մայրը «քովիններուն» խոսքը ըրավ—իրենց գահավեժ հեռացումին մեջ անգթությունը ունեցավ բիրտ ու արժանավոր ցույց մը փնտրելու ատ աննշան տղուն դեմ, անոր հանդգնությունը պատժելու համար։ Ու մինչև իրիկուն, ու մինչև կես գիշեր, մայր ու աղջիկ իրենց մեկնելու պատրաստություններովը զբաղեցան, դուռ ու պատուհան գոցած, ցած ձայնով իրարու հաղորդելով, ատեն-ատեն, իրենց զգացումները։

Առտուն շատ կանուխ էր, երբոր եկեղեցիին մեկ ժամկոչը երկու բեռնակիրի հետ երևցավ տնակին առջև։

— Թադեոս աղան խրկեց մեզի,— ըսավ ժամկոչը,— կյուղերը պիտի տանինք։

Ամեն բան արդեն կապված պատրաստված էր։ Սենյակին երկու դռները բացվեցան ,և ահա սկսավ այն աղմուկը, զոր տեղափոխություն մը կպատճառե սովորաբար։ Երկու սնդուկ, քանի մը խոշոր ծրարներ դուրս՝ պարտեզ հանվեցան, բեռնակիրներուն անվերապահ աղաղակներուն մեջտեղ, հակառակ որ Սոֆի, սրտատրոփ, ատեն-ատեն պատվիրեր անոնց անշշուկ կատարել իրենց գործը։ Գաղտնիքը երևան ելած էր վերջապես։ Դրկից ընտանիքը անկարելի էր որ չնշմարեր այդ հանկարծական տեղափոխությունը։ Զկնորսին կինը, այդ անսովոր աղմուկը իմանալով, իր սենյակին դրանը առջև ելավ, զարմացմամբ նայելով այդ իրարանցումին, բեռնակիրներուն, ժամկոչին։

— Խե՛ր է, Կյուլյուկ հանըմ,— հարցուց վերջապես, լվացարարուհիին մոտենալով, որ կհար։

— Տունեն կելլանք կոր։

— Թոհա՜ֆ պան, պիրտեն պիրե ի՛նչ եղաք, ծանսրզ-ծունսրզ։

— Ասանկ եղավ իշտե, ի՛նչ ընենք, բուզում, խսմեթ...

— Վայ մեխկիս, մարդ օր առաջ կիմացունե. զեհեր թեերնո՞ւդ պիտի պոնեինք, մ'ե՞րթաք պիտի ըսեինք, վա՛յ մեխկիս...

— Է՛հ, իշտե ասանկ եղավ, ի՛նչ ընենք , Հոռոփ հանըմ, խսմեթ...

— Է պարե վո՞ւր կերթաք կոր։

— Վուր երթալնիս մի հարցուներ, Հոռոփ հանըմ, ետկեն կիմանաք...

— Քա աս բեք թոհաֆ պան է...

Այդ միջոցին արդեն բեռնակիրին մեկը քամակին վրա բարձրացուցած էր երկու ահագին ծրար, զորս տքալով, ֆշալով առավ տարավ։ Իսկույն երկրորդ բեռնակիրը՝ սնդուկ մը և ուրիշ մանր մունր բաներ շալկած՝ հետևեցավ մյուսին, մինչ ժամկոչը մնացած մեկ երկու կարասիներ ձեռքը բռնած.

— Հանըմներ,— ըսավ Սոֆիին ու մորը դառնալով,— կուզեք նե երթանք։

Աշնան վճիտ ու թաց առտու մըն էր։ Ամիրային պարտեզը իր հուռթի կանանչութենեն մերկացեր էր. տրտմալի դժգունություն մը կտիրեր ամեն կողմ. բարձր խոտերը չորցեր էին. մինակ թավախիտ ռաղիանները դեռ տեղ-տեղ իրենց մութ կանանչը կպահեին, եղանակին հարվածները հեգնելով։ Ածուներուն գծագրությունը դեռ կմնար հեռուն, բայց ծաղիկները, ծառատունկերը գոսացեր էին։ Բրիչին, բահին, հողասանտրին կոթերը տակավին հեռվանց կերևային՝ զանազան ուղղությամբ ցցված։ Լքումը կպատկերանար հոն իր ամբողջ տրտմությամբը։ Մշուշի շղարշային, կապտորակ գոտի մը էյուպի բլուրներուն կողերը կբոլորեր անշարժ ու թափանցիկ, և հրդեհվող արևելքը իր վսեմափառ շողարձակումովը՝ մինարեներու սրածայրությունները կբռնկցուներ և մզկիթներու գմբեթները կփայլեցներ։ Հ... գյուղին այդ մենավոր բարձունքին վրա առտվան անուշ ու մորմոքող ալ խաղաղություն մը կտիրեր, խանգարված միմիայն ճնճղուկներու հույլերեն, որոնք տերևազուրկ ծառերուն մեջ իրենց անդադրում ճռվողյունը կշաղակրատեին։

Սոֆի, կեցած դրանը առջև այն սենյակին, ուր կյանքին է՛ն անմեղ, է՛ն քաղցր, է՛ն դժնդակ շրջանը ապրեր էր, շուրջը դիտեց,

արտի անծանոթ և բուռն սեղմումով մը։ Ընդմիշտ կլքեր այդ վայրը, ուր իր մանկության և հասուկ կյանքի վկաները կմնային դեռ կանգուն. այդ պարտեզը իր ծառերովը, այդ ածուները, այդ թուփերը, այդ շավիղները, որոնց վրա վազվռտեր, պտտեր էր, այդ սենյակը, ուր իր ամենեն հեշտալի երազները սնուցեր, անոնցմով օրորվեր էր։ Այդ դրացի ընտանիքը վերջապես, ձկնորս Թումիկը, որուն անհատնում պատմությունները դեռ այնքան թարմ էին իր որուն անհատնում պատմությունները դեռ այնքան թարմ էին իր հարևակայությանը մեջ, Հոռոփ հանըմը, իր տրտունջներովը և վարևակայությանը մեջ, Հոռոփ հանըմը, իր տրտունջներովը և դահաս ու համառ չքավորության դեմ իր անսպառ դանգատներովը։ Համբիկը, ո՜հ, այս տղան, իր մանկության միակ ու աղնիվ, հեզ, բոլոր այս գգվելի ու նվիրական բաները, որոնց իսկական հանգամանքը չէր կրնար ճանչնալ հիմա, որ ավելի հմայքոտ հեռապատկերներ իր միամիտ ու կուսական հոգին թոված, օձի գալարմունքներու մեջ կաշկանդած էին։ Բայց պահ մը արցունքի կաթիլներ դողացին կոպերուն տակ, արագ սթափումի մը իսկույն կուլ տրվելու համար։

— Երթա՞նք, մայրիկ, ուրիշ ընելիք մը չունինք հոս,— ըսավ ան շեշտով մը, ուր իր հուզմունքը չհայտնելու ճիգ մը կար։

— Երթա՞նք, աղջիկս,— ըսավ լվացարարուհին։

— Քա կեցե՛ք, Համբիկիս ալ ըսեմ քի կերթաք կոր,— ամաչարեց Հոռոփ հանըմ՝ շարժում մը ընելով իր սենյակը մտնելու համար։

Բայց ճիշտ այդ վայրկյանին, սենյակին դրանը մեջ երևցավ երիտասարդը, այլայլված, դժգույն, խոռոչացած, փայլուն աչքներով, հազիվ թե հագված։

— Համբիկ, Կյուլլուկ հանըմը տունեն կելլա կոր,— ըսավ Հոռոփ զավկին դառնալով։

Տղան, սեռաբիբ, չպատասխանեց, դեմքին վրա ահավոր ապշությամբ մը։

— Մնաք բարով, քուրուկս,— փութաց ըսել Կյուլլուկ հանըմ ձկնորսին կնոջը մոտենալով, որուն հետ պագնվեցավ։

— Մնաք բարով,— ըսավ անոր ետևեն Սոֆի, Հոռոփ հանըմին ձեռքը պագնելով։

— Մնաս բարով, զավակս,— ավելցուց լվացարարուհին Համբիկին մոտենալով, որ դեռ շարժում մը չէր ըրած։

— Մնաս բարով, Համբիկ,— կրկնեց Սոֆի՝ տղուն երկնցնելով իր ձեռքը, զոր բռնելու բարոյությունը չունեցավ Համբիկ։

Եվ Սոֆի, առանց նշմարել ձևացնելու երիտասարդին այլայլումը, սև այծեմազն շալը տեղավորեց գլխուն շուրջը. վարսի գիսակները հարդարելով անոր տակ, և մորը հետ երկնցավ դեպի պարտեզին դուռը, ուսկից երկուքն ալ շուտով անհայտ եղան։

— Ո՞ւր կերթան կոր, մայրիկ,— հարցուց Համբիկ, երբոր պարտեզին դուռը գոցվեցավ։

— Էլան տունեն, օրդի, ի՞նչ պիչիմ պան ըլլալը չհասկըցա... թոհաֆ պան, թոհա՜ֆ...

— Ելա՜ն,— կմրմռար Համբիկ, պարապ սենյակին բաց պատուհանները դիտելով, դեմքին վրա անբացատրելի հուսահատությամբ մը։

Հետո մոտեցավ դրանը ու ներս նայեցավ. գետնին վրա ցանցրնված էին անպետ, կոտրտած առարկաներ. պատռած խշտիկի մը փորեն հարդեր դուրս կպոռթկային, անկյուն մը, հին շրջած կլոր կարանի մը մոխիրը գետինը կծածկեր՝ մարած ածուխներով խառն։ Անկողնարանին դուռը ծխնիներեն ելած՝ ցույց կուտար քուրջերու կույտեր, զորս մեկնողները լքած էին՝ իբրև ցավագին մրնացորդներ իրենց երկարամյա չքավորության։ Պատերը տեղ-տեղ կփլչեին խոշոր ու պզտիկ գամերե ծակծկված։ Այդ ամայության վրա տառապած կյանքի հով մը կար։

— Ելա՜ն,— կմրմռար Համբիկ իր տարտամ նայվածքը պտտցնելով սիրված էակեն մնացած այդ առարկաներուն վրա, չուզելով հավատալ անկարելի իրականության, որ իր էությունը կըսառեցներ հիմա, մոլորանք կուտար մտքին։

— Ի՞նչ կնայիս, Համբիկ,— ըսավ անդիեն մայրը, էլան նե էլան, ինչերնուս պետք. տահա աղեկ, ատ օտան ալ մենք կերսոթինք... .

Հանկարծ տղան, հուսահատական սփոփանքի մը փարեցավ։

— Ես կնստիմ աս սենյակը, մայրիկ. անկողինս հոս դնենք... ըլլա՞ր։

— Թեք աղվոր կըլլա, զավակս։

Համբիկ իր սենյակը դարձավ, հագվեցավ ու շուկա գնաց։ Մարգերն ու շենքերը ուրվականի պես երևցան իրեն՝ մտքին զաանցանքին մշուշներուն մեջեն։ Իր մեքենական քալվածքին մեջ հինցած ալքոլամոլի ինքնաշարժություն մը կար, քնաշրջիկի դանդաչումով։ Նայվածքը սևեռական, թևերը դեպի առաջ կարկառուն։

— Օ՜հ, ելա՜ն, ելա՜ն,— կմրմնջեր ակռաները սեղմած, ներքին ահեղ փոթորիկին իբրև միակ արտահայտությունը։

Իր հուսահատությանը մեջ ան կմտածեր, թե իր սիրած էակը հիմա անդարձորեն կորսված էր իրեն համար։ Ցորչափ անիկա իր յուվը մնար, իրմե քայլ մը անդին, զանիկա ողոքելու, անոր անտարբերությունը ջախջախելու, վերջապես անոր համակրությունը շահելու գերագույն և հեռավոր հույսը սնուցանելու իրավունք կունենար։ Գեթ, այս նպատակին հասնելու համար ամեն օր նորանոր ծրագիրներ կարող էր շինել, հոգ չէ թե զանոնք իրարու ետևե ջնջելու ցավագին հարկավորության դատապարտված ըլլար։ Բայց հիմա, մեկնած գացած էր ան, թերևս մղոններ դնելով իր և մերժված սիրահարին մեջտեղը։ Ասով, ամեն հույս կփշանար, երևակայության ամեն հիմարությունները մուխի պես կցնդեին, տեղի տալով բիրտ ու վայրագ իրականության։

Իրիկվան, տուն վերադարձին, անկողինը հապճեպով փոխաբերեց պարպված սենյակը։ Մինչև առտու հսկեց հոն, նստած անկողնին վրա, շնչելով այդ մթնոլորտը, զոր տարիներով շնչած էր Սոֆի, ատկեց գոհացում մը, սփոփանք մը վայելելով կարծես։ Գահ մը, անդրադառնալով այն վիճակին ահավորությանը, որուն մատնված էր, ջանաց սթափիլ, թոթվել իր վրայեն այդ զարհուրելի մղձավանջը, որ իր կյանքը կտրորեր, բայց իսկույն զգաց իր ամբողջ տկարությունը՝ ազատվելու այդ ճնշումեն, ու ա՛լ վերջնականապես համոզվեցավ, թե սիրո ճիրաններուն մեջ այնքան անզոքորեն բռնված էր, որքան ճնճղուկը բազեի մագիլներուն մեջ։ Այս համոզումը, որ իր քով այլևս հավատք մը կդառնար, ստիպեց զինքը, որ ստեղծված նոր կացության առջև ավելի պաղարյունությամբ ու ավելի ճարտարությամբ շարժի։ Նույնիսկ իրեն այնպես թվեցավ՝ իր ենթադրական ճարտարվորումեն՝ թե կարող էր այն բոլոր հնարամտություններուն, բոլոր ճարպիկություններուն, որոնք համառ ու անկեղծ սիրահար մը իր իդեալին կհաջողին հասցընել։ Ու գիշերը, մտքին մեջ մեքենայություններ, հնարքներ, վարպետություններ, դյուցազնության, անձնվիրության հրապուրող և

զմայլելի շարժումներ ծրագրեց, որոնք քարերն անգամ ի գուր պիտի շարժեին, ուր մնաց Սոֆիի պես աղապատալից հոգի մը։ Բայց առտուն երբոր լուսը տեսավ, երբոր իրական աշխարհը իր աչքին պարզվեցավ, բոլոր ծրագիրները շոգիացած էին, սիրտը դառնությամբ պաշարված էր նորեն, և այն կորովը, որուն ինքզինքը կարող զգացեր էր գիշերը, գոյություն չուներ այլևս։

Ու վհատած, մտամոլոր, կեցած այդ դրանը առջև, որուն ետևը դեռ օր մը առաջ իր երազներուն թագուհին կշնչեր, Համբիկ կվերադառնար իր առջի կսկծալի հառաչին.

— Օ՜հ, ելա՜ն, ելա՜ն...

Լվացարարուհիին մեկնումին երկրորդ իրիկունը, երբոր մերժված սիրահարը տուն դարձավ տրտմաթախիծ, մայրը ըսավ իրեն.

— Համբիկ, Կյուլյուկ հանըմը վո՞ւր գացած ըլլա նե աղեկ։

Տղան գլուխը ցցեց, աչքերը հույսի շեկ կայծերով առլի։ Մայրը շարունակեց.

— Մարկոս ամիրային տունը. հանըմը իր քովը առեր է մարվաղչիկ։ Քա ատ ինչ յաղլը տեղ ինկեր են... ամա ատ կնկանը համար ալ խենթ է, սընըրլը է կըսեն, նայինք տերտը քաշվելի՞ք բան է։ Հիչ ալ պան չըսին մեզի. ծառվընուն խաֆմի՞շ պիտի ընեինք...

Բան մը չըսավ Համբիկ, մինակ մորը երեսը նայեցավ ապուշ, մոլորագին նայվածքով. հետո պարտեղին խորերը երկնցավ։

— Մարկոս ամիրային տո՜ւնը,— կմրմռար,— ամիրա, տոքթոր, հարուստ մարդիկներ, Սոֆիին ուղած բաները...

Հեռուն, հորիզոնին վրա քանի մը աստղեր կսկսեին քթթել ադամանդե աչվրներնին. մթնշաղին հուսկ երանգավորումները կընվազեին համապարփակ մութին մեջ, որ անջրպետին անծանոթ անկյուններեն կմաղվեր միահնծան։

Այդ բարձունքին վրա հովը մեղմագին կհեծկլտար աշնահար ծառերուն մեջ, որոնք կմախքներու պես կուրվագծվեին խավարի հատակին վրա։ Երիտասարդը կքալեր, գլուխը կախ, թևերու երկու քովեն երերուն։

— Ամիրա՜, տոքթո՜ր... հը՜, տոքթո՜ր, ամիրա՜,— կմրմնջեր։ Հետո անդրադարձումով մը դեպի իր վիճակին.

— Պասմաճիի չըրա՜խ. բե՜հ... քանի՞ փարա կընե...

Իր հարդարած ածուներուն շուրջը կդառնար, որոնք երկարատև լքումի մը ավերները ցույց կուտային։ Կափսոսար իր այդ

ունայն, ապարդյուն աշխատանքին վրա։ Ի՞նչ հույսերով դատած էր հոգ, որքա՜ն քրտինք թափած էր։ Միլերուն հետ, որոնք բողբոջած էին այդ խղպանեն, սիրո ծիլեր հուսացած էր տեսնել այդ աղջկան սրտին մեջ, որ սակայն համառած էր ամուլ մնալ, մերժելով ամեն արգասավորում։ Կքած, կծկուած այն ծառին տակ, ուր սովորաբար իր գեղանի դրացուհին կնստեր ձեռագործով մը, Համբիկ ատ պարտեզի կյանքին բոլոր դրվագները կհիշեր։ Ի՞նչ անհամբերությամբ մը իրիկունները, մութը չկոխած, գործեն կդառնար՝ իր սիրային արշավանքին ձեռնարկելու համար պարտիզպանի երևույթին տակ։ Դեռ ականջներուն մեջ կթրթռար «խենթ»-ը, զոր արձակած էր Սոֆի, երբ ինք վերջապես հանդգնած էր սա դողդոջ ու հանդուգն բառը նետել անոր.

— Գիտե՞ս, քեզի համար շտկեցի այս պարտեզը։

Օ՜հ, նայվածքը, որով վարձատրված էր իր այս միակ հանդգնությունը։ Ու ատկե ետքը ա՛լ բան մը չէր համարձակած, ոչ իսկ շարժում մը ըրած էր իր սերը հայտնելու համար, մինչև նամակին տխուր պատմությունը։ Այդ նամակը ամեն բան տակնուվրա ըրած էր։ Գուցե ան եղած էր պատճառը, որ Սոֆի, խրտչած, սրամտած, ձգեր հեռացեր էր։ Հիմա, խեղճ տղան կափսոսար զայն գրած ըլլալուն։ Հաջողությունը ավելի հավանական կթվեր իրեն, եթե ինք անձամբ ներկայանար, սիրտը բանար, լար, պաղատեր, համոզեր...

Մութը կթանձրանար, երկինքի լուրթ բեհեզին վրա աստղերը հեռավոր ջահերու պես կփայլեին։ Հովը կսուլեր կողկողաձայն. «Հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ...»։ Եվ Համբիկ, կքած, գրեթե ինկած ծառին տակ, ինքն ալ կհեծեր, իր կորսված սերը կողբար.

— Սոֆի՜, Սոֆի՜, Սոֆի՜...

Ու հովը, ողբալուր, կպատասխաներ իր լալագին կանչերուն.

— Հո՜ւ, հո՜ւ, հո՜ւ...

Երկար ատեն մնաց այդպես։ Հանկարծ հեռուեն ձայն մը.

— Համբիկ, վո՞ւր ես. հարդ էկավ, հաց պիտի ուտենք։

Տղան սթափեցավ իր դժնդակ զառանցանքեն, ցնցեց իր անդամները, որոնք գիշերվա զովությենեն թմրած էին, և տուն գնաց։

Ինքնաշարժորեն, հետևյալ առտուն Համբիկ շեղեցավ իր սովորական ճամփեն և Մարկոս ամիրային տանը առջևեն անցավ։ Փեղկերը ամրապես փակված էին, ու մեռելություն մը կտիրեր այդ շենքին մեջ։ Հոն էր սակայն իր սիրո առարկան, զոր թերևս առանց գիտնալու հափշտակած էին իր ձեռքեն։ Համբիկ, սակայն, այն հրաշալի բնազդովը, զոր գերազանցապես ունեն սիրահարները, կմղվեր անարգ ու ոխերիմ հակառակորդ մը գուշակելու այդ տոքթորին մեջ, որուն գիրկը գացած ինկած էր Սոֆի։ Եվ հանկարծ սիրտը ատելությամբ և վրեժխնդրությամբ կուռեր այդ հափշտակիչին դեմ, որ իր փայլուն դիրքեն օգտվելով, իր գիշատիչ մագիլները երկնցուցեր էր մինչև այդ անշուք հարկը, անկեց դուրս քաշելու համար դյուրին ու հարմար որս մը իր կիրքերուն հագեցմանը։ Խեղճ տղան, հոգին մահացու դառնությամբ լեցված, ելավ գնաց իր գործին։

Գյուղին մեջ շուտով տարածվեցավ լուրը։ Ամեն մարդ իր ուզածին պես մեկնեց մանկամարդ աղջկան փոխադրությունը ամիրային տունը։ Սոֆիին տարեկից աղջիկները, նախանձե խածնված, լիբ եղրակացություններ հանելին անկե։ Իսկ երիտասարդները, որոնք աչք ունեին Սոֆիին, անգութ ու հեգնող հպարտություններու ամբողջ առասպել մը հորինեցին և նույնիսկ այնքան առաջ գացին, որ գայթակղական դեպքեր հերյուրեցին, աչքով տեսածի պես, հետաքրքրաշարժ ու լպիրշ մանրամասնություններով, որոնց մեջ տոքթորը մեծ դեր մը ստանձնած էր։ Եվ որովհետև աշխարհիս ամենեն անգութ բանը ամբոխն է—հակառակ որ ամենեն գթած բանն ալ ան ըլլար,— հերյուրանքները բերնե բերան մեծցան, լայնցան, անողոք համեմատություններ առին, ծըվիկ ծըվիկ ընելով աղջկան բարոյականը, քարկոծելով կարծեցյալ տոքթորին ընկերային հանգամանքը, վար դարնելով ամիրային աղջկան անպատվաբեր թույլտվությունը և նույնիսկ պոռալով այն ամոթալի դերը, զոր եկեղեցիին ծերունի և շիլ գանձապահը ստանձնած էր այդ գայթակղալի փոխադրության գործին մեջ։

Եվ Համբիկ, իր հետ պատցնելով այն տոքթորիկը, որ ներսիդին կմրրկեր, մտիկ կըներ այս հայհոյալից ասուլիսները, ջանալով անտարբեր մնալ, դեմքին վրա իր կսկծալի խռովքը չհայտնել և մանավանդ անզգացորեն հանդուրժել այն կծու հեգնություններուն, զոր իր ընկերները կուղղեին իրեն, ուր որ հանդիպեին, շոգենավը, արձարանը, փողոցը։

— Համբիկ, խեր ըլլա, խուշը խաֆեսեն թոեր է։

— Ծո, դուն ինչի՛ս ավճին ես քի խուշը կփախցունես կոր...

— Վա՛յ սերսեմ, վա՛յ... մենք ալ մարդ գիտցանք քեզի... ամա սա տոքթորն ալ աղեկ ավճի է եղեր... հե՞, ի՞նչ ըսիք, տղաք։

— Ըսելիք չի կա... Մերկերյանն ալ միջնորդ հաշտության եղեր է։

— Ծո Համբի՛կ, տա էխտիյարին սախալին փակիր օր մը, ատ գործը ընողը ան է։

Մանիֆաթուրաճիի աշկերտը, ապշահար և շփոթած, մեկեն մյուսին երեսը կնայեր, չգիտնալով ինչ պատասխանել, և վերջ ի վերջո, ընկճված, կռնակը դարձնելով անոնց «ինչո՛ւս պետք»-ով մը, որ սակայն իր ամբողջ արյունոտ հոգեբանությունը կմատներ։ Սակայն իր ազնիվ հոգին վիշտով ու կատաղությամբ կծառանար բոլոր անհեթեթ ու վայրագ զրպարտություններուն դեմ, որոնք իր պաշտանքի առարկային պատիվը կարատավորեին։ Իր ընդոծին բարությունը թույլ չէր տար իրեն ամբարիշտ գոհունակության սատար մը փնտրել հանրային կարծիքին այդ մոլեգին պոռթկումին մեջ, ընդդեմ անոր, որ անգթությունն ունեցած էր արհամարհել իր խորունկ, անկեղծ, անփոխարինելի սիրո լալագին արտահայտությունը։

Այդ գոռոզ արհամարհանքը, մանավանդ այդ հեղակարծ ու գահավեժ հեռացումը, որ միակ լուռ պատասխանները եղած էին իր պաղատանքին, հիմակ հետզհետե, ուժգին ու անդիմադրելի հակազդեցությամբ մը, կհրահրեին իր սերը. հնոց մը կդառնար անիկա, որուն մեջ իր ցնցված, տանջված, հարստահարված էությունը կխորովվեր, կճենճերեր։

Սենյակը, որ այնուհետև մատուռի մը նվիրականությունը ունեցավ իրեն համար, իր ցավի հուսահատ պայթումներուն անկարեկիր ու խորհրդապահ թատերավայրն եղավ։ Ժամերով կը-փակվեր հոն, գիրք կամ լրագիր կարդալու պատրվակին տակ, և աչքերը հուսահատորեն սևեռուն, տեսակ մը հաճոյամոլության անձնատուր, իր կացության կսկիծին մեջ կթաղվեր, կտապլտվեր, կշարշարվեր, այնքան ավելի սփոփանք որոնելով այդ շարքանքին մեջ, որքան անիկա բուռն, անտանելի, ահարկու ըլլար։ Իր այս հոգեկան տկարություններուն դեմ ըմբոստացումի շարժումները շատ հազվադեպ եղան։ Ասոնց միջոցին, մեկենիմեկ ոտքի կելլար, դեմքը խոժոռ, նայվածքը անգութ և այն մարդոց պես, որոնք իրենց մեկ մակաբույծ մտածումը վանելու համար պետք կզգան բառանպատճառ բարձր խոսելու, իբր թե ձայնական գործարանը լոռանպատճառ բարձր խոսելու, իբր թե ձայնական գործարանը լոռ-ղականին վրա ազդելով՝ հաջողեր հոգեկան տրամադրությունը

փոխել, Համբիկ, խրոխտ ու սեգ, տիրական և կտրուկ, կկենար ու բարձրաձայն.

— Ապո՛ւշ, ապո՛ւշ եմ ես,— կմոնչեր,— ինչո՞ւ գերի եղեր եմ ատ անարժան աղջկանը... Չէ՛, չըլլա՛ր, անկարելի՛ է, ուշիքս պիտի ազատեմ... Ան նախատեց զիս, սերս ուրացավ, վա՛տ, վա՛տ...

Բայց, հազիվ ձայնը դադրած, հեկեկանք մը կոկորդը կխեղդեր, թևերը անճրկած վար կիյնային, արցունքները կոպերուն տակ կխուժեին ու ան, հուսահատ, չորս կողմը դիտելով, փնտրելով այն անկյունը, որ Սոֆիին սիրելական անկյունն էր, հոն կվազեր, վար կիյնար, դեմքը գետնին կքսքռտեր՝ զսպված հեծյուններով, ձեռքերով տախտակները ճանկռտելեն, և երբ այս տագնապը անցներ, հանդարտորեն, երկյուղածորեն, ծնրադրելով, երկրպագելով իր պաշտեցյալին բացակա պատկերին առջև, պագնելով տախտակամածը, զոր ան իր մերկ ոտքերովը շոշափած էր, երկննալով մինչև պատերը, որոնց անշուշտ կռթնած էր ան, համբուրելու, հոտվրտալու համար զանոնք հիմարորեն, շնչասպառ, մարմնաջղոջ։

Սերը սուր ցավ մը եղավ այլևս, անոր առարկային անհետացումն սաստկանալով։ Առաջները, զանիկա իր մոտը, իրմե քայլ մը անդին ունենալու գաղափարը վերջին, բայց նշուլագեղ հույսով մը կօրորեր իր երևակայությունը։ Սերը ներշնչումներ պիտի տար իրեն, ասպետական վսեմ շարժումներու պիտի մղեր, որոնք աղջկան խեռությունը պիտի ջախջախեին, անոր սիրտն ու հոգին կապտելով, թովելով։ Բայց հիմա, վերջնականապես վերջացած էր ամեն հույս։ Այդ բարձրության վրայեն, ուր հիմա ելած էր ան, պիտի զիջանե՞ր այլևս վար նայիլ, այդ աննշան տղուն, որուն միակ մեծությունը իր սիրո մեծությունն էր, այն անսահման պաշտանքը, զոր ուներ անոր համար։

Քանի մը անգամ, փողոցը, հանդիպեցավ տոքթոր Մարկոսյանին։ Անոր բարձր ու շքեղ հասակը, խիստ ու մոգիչ նայվածքը, անոր հանդերձանքին պերճությունը, հարուստ ու բարձրաստիճան մարդու հովը իր քալվածքին ու շարժվածքին մեջ, բոլոր այս բաները, զորս ինք՝ հեք Համբիկը չուներ, ափիբերան ըրին զինքը։ Այդ ամեն հրապույրներուն քով ինք կանհետանար, կջնջվեր։ Եվ ատիկա, հավանորեն, գոնե ինչպես որ իր հոտառու սիրահարի բը-

նազդը կլսեր իրեն, իր հակառակորդն էր, իր սիրո մրցակիցը։ Եվ պխիկոր, շլմորած, ձկնորս Թումիկին տղան կքալեր, մրմռալով

— Տոքթո՜ր, ամիրա՜... հը, ամիրա՜, տոքթո՜ր...

Իր հուսահատությունը, զոր այլևս չկրցավ պարտկել, սկսավ քիչ-քիչ ակներև ըլլալ։ Նախ մայրը, որուն արդեն շատոնցվընե մահոգություն կուտային զավկին տարօրինակությունները, հակառակ անոր բողոքներուն և ուրացումներուն, համոզվեցավ, թե ցավ մը կհերյուներ իր զավկին կյանքը։ Քանի մը անգամ փորձեց լալով, հառաչելով, պրպտել անոր հոգին, հասկնալով այդ սպանող վիշտին, հուսահատության շարժառիթը։

— Զավակս, տերտ մը ունիս, չլսե՞ս ի՞նչ է քի տերման մը գանամ... ճանս, ճիյերս։

— Բան չունիմ, մայրիկ, օ՜ֆ, բա՜ն չունիմ ըսինք... գո՞ն ինչ էտեսս ինկեր ես, բան գործ չունի՞ս,— կհեստեր տղան, ներսը մորմեն դարձնելով։

— Ռենի՜ս, ունի՜ս, զավակս, օրեօր սյուզուլմիշ կըլլաս կոր, տա նայե, ըռենկ չէ մնացեր էրեսդ... աճապա հեքիմի՞ մը էրթաս։

— Էրկան կընես կոր...

— Աման, զավակս, ատ տոքթոր Մարկոսյանը շատ մեթ կընեն կոր, աճապա մեյ մը էլլաս իրե՞ն էրթաս, բեք տիխաթը կնաքի եղեր... չէ մ'ըսեր, զավակս, առնեմ տանիմ քեզի...

Այս անունը լսելուն՝ Համբիկի աչքեն կայծեր թռան, և հեղակարծ շառագունում մը պատեց այտերը։ Ու երկնցավ պարտեզին հեռուները, խոլ անսահմանության նետելու իր վիշտն ու զայրույթը, զոր մարդկային բան մը կարող չէր հանգարտեցնել։

Երթալով, այլևս իրեն համար, իր սիրային մոլեգին, խելացընոր թափերուն հագեցմանը համար սովորական բան մը դարձավ այդ սենյակին մեջ փակվիլ, հեռացած աղջկան ստվերին հետ խոսիլ, հեծել, մռնչել։ Ահավոր և տիրական պետք մը ծագեցավ իր մեջ, անպատճառ տեսնել Սոֆին, տեսնել անոր աչքերուն մեղուն ու ժպտուն թովանքը, դեմքին մոգիչ գծագրությունը, հասակին նուրբ ու նազելի վետվետումը ու այն չքնաղ, պաշտելի ամբողջությունը վերջապես, որուն թովչությունը այնքան ավելի կաճեր, կասասկանար, որքան անիկա շարունակեր անհայտ մնալ դիցաբանական խորհրդավոր լուսապսակով մը փշփշանքված։

Մութ գիշերներ, սկսավ հածիլ ամիրային տան շուրջը, անոր մեծակերտ մութ զանգվածին թափանցելու, բաց մնացած փեղկի մը խորհուրդին մեջեն անոր ստվերը տեսնելու հետին սփոփանքին համար։

Բայց այդ պատուհանները, երկաթե ձողերով ամրացած, անդուք գաղտնապահություն մը ունեին, խորունկ և անմատչելի։ Պատի մը անկյունը կծկված, լայնաբաց ու պիշ նայվածքով այդ շենքին վիթխարի փովածքը կզններ, ստվեր մը, սիլուեթ մը տեսնելու խենթությենեն շնչասպառ։ Հակառակ գիշերային իր այս պշտություններուն ունայնությանը, ատիկա սփոփարար բան մը եղավ սակայն իրեն համար։ Քանի մը քայլ անդին, հոն, ներսն էր ան։ Ու կերևակայեր անոր շարժումները, բոլոր այն բաները, որոնցմով կրնար զբաղիլ ան, հիմակ, որ այլևս աղքատ խրճիթի մը մեջ չէր։ Թավիշե թիկնաթոռի մը վրա ընկողմանած, գիրք մը կամ լրագիր մը ձեռքը, ձեղնաջահի մը լուսահորդությանը տակ։ Այս տեսակ պատկերներու տողանցումի միջոցին իր մղձավանջոտ աչքերուն առջևեն, Համբիկ երբեմն հանկարծ կցնցվեր, դողդոջական ցնորքի բռնվածի պես, կոթնած պատին, որմաքարերը կճանկռտեր եղունգներովը, կուրծքը դուրս ցցած, հևալով, նայվածքը խենթ ու անշարժ։ Ստվեր մը կմոտենար թիկնաթոռին, կամաց-կամաց, դողդղալով, հափշտակիչ, գիշատող ծամածռությամբ։ Տոքթորն էր։ Ու կմոտենար, անհագ ու վայրենի, շրթունքներու վավաշոտ կարկառումով, աչքերը ախտաժետ շեկ կայծերով բռնկած։ Ոստումով մը ան իր որսին վրա էր։ Համբիկ, խեղդված, էլեկտրացած, ա՛լ կձգեր կըփախչեր, պատկերեն հալածական, այսահարի մը պես, իր սենյակին դրանը առջև երթալով, ներս քաշկռտվելով դժնդակ ճիգերով, ու հոն, մութին մեջ, իր արցունքները պոռթկալով, ա՛լ գտնելու համար վերջապես սփոփանքը, որ հարկավոր էր՝ ետքի ավելի՛ աղետավոր գալարումներուն դիմադրելու համար։

Գիշերային այս բացակայությունները նոր ցավ մը եկան ավելցնել խեղճ մոր վշտակոծ սրտին վրա։ Քանի մը անգամ փորձեց անոնց պատճառը հասկնալ։ Բայց Համբիկ, որուն հեզ և հանդարտ նկարագիրը անհամբույր խևություն մը ստացած էր աղջկան հեռանալեն ի վեր մանավանդ, խոժոռ նայվածքով մը միայն պատասխանեց մորը և հեռացավ գնաց։ Անիկա իր անձնական դժբախտությանը գաղտնի մնալուն մասին այնքան խնամոտ գուրգուրանք մը ուներ, որքան ագահ մը իր ոսկելից գանձին վրա։ Սերը նվիրական էր իրեն, որքան անոր պատճառած անհուն ցավը։

Գիշեր մը ապարանքին շուրջը սքլտացած միջոցին, անհավա-

տալի տեսարանի մը ներկա գտնվեցավ։ Գարնանասկիզբի գիշեր մըն էր։ Լուսին չի կար, բայց աստղերը արտասովոր պայծառությամբ մը կշողային երկնքի լայնալիճ կոնքին վրա։ Գյուղը կքնար։ Հեռուն, գիշերապահի մահակները կթնդային երբեմն։ Համբիկ, ապարանքին պարտեզի կողմը, հանդիպակաց պարապ գետնին վրա երկնցած, շենքը կդիտեր, պատուհանները պրպտելով, անոնցմե երևցող լույսերուն մեջ իր փնտրած սիլուեթը գտնելու համար։

Հանկարծ, անոր մութ ու խոժոռ ճակատը դիտած ատեն, վերին հարկը, անկյունեն, պատուհան մը բացվեցավ և կերպարանք մը նկարվեցավ անոր լուսավոր շրջանակին մեջ։ Համբիկ, սրտատրոփ, պառկած տեղեն ելավ և սրունքներուն վրա կծկվեցավ՝ իր որսին վրա հարձակելու պատրաստվող կատվի մը պես։ Սիրահարը, որուն ամբողջ էությունը հիմա աչքերուն մեջ խտացած էր, կը դիտեր այդ երևույթը։ Տոքթորն էր, իր անգիտակից հակառակորդը։ Քիչ-քիչ, տղան որոշել սկսավ այդ կերպարանքը։ Անիկա դուրսը կծռեր երբեմն դիտելու, և մերթ գլուխը ներս կառներ՝ կարծես սենյակին մեջ գտնվող մեկուն հետ խոսելու համար։ Այս վիճակը բավական տևեց, այնքան, որ Համբիկ, ձանձրացած, նորեն երկննալու վրա էր հոդ, երբ, մեկենիմեկ, ուրիշ սիլուեթ մը ուրվագծվեցավ պատուհանին շրջանակին մեջ։ Տղան ցցվեցավ, աչքերը այդ նոր երևույթին սևեռած։ Ատիկա կնոջ մը շրջագիծն էր, բարակ ու երկար, մազերու հույժ ծանոթ հարդարումով մը և ընդհանուր շարժվածքին մեջ հայտնի ու մտերիմ բանով մը, որ շանթահար թողուց Համբիկը։ Սոֆին էր ան, իր երբեմնի ընկերուհին, լվացարար Կյուլյուկին աղջիկը, դեռ երեկ իր հարակից խրճիթին բնակչուհին, հոն, ելած մեծանուն ամիրայի մը ապարանքին բարձրության վրա, երիտասարդ, գեղեցիկ, շքեղ տոքթորի մը քովը, անոր բարեկամությունը, մտերմությունը, թերևս սերը վայելելով։

Քով քովի, պատուհանին կոթնած էին անոնք, երեսնին իրարու դարձուցած, գրեթե շունչ շունչի։ Կխոսեին շատ մեղմ ձայնով, կարծես լրտեսվելու երկյուղը ունենալով։ Համբիկ, ծունկերուն վրա դեռ կզկտիկ, այս անհավատալի երևույթը կդիտեր, առանց թարթափելու աչքերը, հազիվ շունչ առնելով, արձանացած։ Երբեմն, գլուխը իր խոսակցին դարձուցած պահուն, Սոֆի իր աջ դեմքին կստանար ներսը վառվող լամպարին լույսը, որ հստակորեն երևան կհաներ անոր գիծերը Համբիկի անհագ աչքերուն։ Տղան չէր շարժեր, անոնց ուշադրությունը գրավելու վախով։ Աչքերովը կապրեր։ Իր այդ հայեցողությանը մեջ թաղված էր, երբ վերը տոքթորին բազուկը շարժեցավ կամաց մը և աղջկան վիզին վրա ինկավ։ Ու իրեն քաշեց այդ գլուխը, ու համբուրեց զայն։

Կուրծքին դաշույնի հարված մը ընդունածի պես ցցվեցավ Համբիկ, սիրտը բռնելով երկու ձեռքներովը. ու փախավ, խենթի պես վազելով։

Քանի մը շուներ, քուներնեն արթննալով, հաչեցին անոր ետևեն։ Գիշերապահ մը, գող կարծելով զայն, պահ մը հետևեցավ անոր, բայց անիկա խթանված ձիու մը պես կփախչեր, փողոցներուն ոլորքին մեջ անհայտ ըլլալով։ Իր սենյակին դրանը առջև հասնելուն, տղան կեցավ, ցավագին հևքով, կոկորդը խեղդված.

— Պագա՜վ, պագա՜վ,— կհեծկլտար։

Ներս մտնելով, ինկավ անկողնին վրա, ոչնչացած։ Քունը՝ ահռելի մղձավանջ մը եղավ այն գիշերը։ Հանկարծ վեր կցցվեր անկողնեն, ձեռքերը բան մը արգիլելու պես օդին մեջ շարժելով, աչքերու լայնափեռեկ բացվածքով։

— Պագա՜վ, պագա՜վ,— կհեծկլտար։

Հետո, սթափած, քայքայված, կիյնար անկողնին վրա, բարձին մեջ թաղելով գլուխը, խածխծելով զայն, լուսնոտի մը պես սրունքներն ու բազուկները գալարելով, շրթունքը փրփրալից, մինչև որ թմրությունը տիրեր այդ ցավատանջ մարմինին, ու մինչև որ նորեն աղետալի պատահարը, գիշերվան մութին մեջեն, կանգներ իր աչքերուն առջև, ու ստվերները, հոն՝ վերը, նորեն փարեին իրարու և ամբարիշտ համբույրը քստմնելի շռինդով մը թնդար, ու Համբիկ, այսահարված, նորեն վեր ցատկեր։

— Պագա՜վ, պագա՜վ։

Հետևյալ առտուն Համբիկ չկրցավ ելլալ անկողնեն։ Բուռն ջերմություն մը կայրեր անոր մարմինը։ Զառանցանքը կշարունակեր։ Մայրը, իր սովորականին պես, եկավ արթնցնել զավակը, ու այդ գեշ վիճակին մեջ գտավ զայն։ Փորձեց ոտքի հանել, բայց տրդան գամվեցավ մնաց անկողնին, աչքերը գոց, մեռելական դրժդրնությամբ, մարմինը դողահար։

— Զավակս ծառքե կելլա՜ կոր։

Ու նստավ անկողնին քով։

— Համբիկ, օրդի, ի՞նչ ունիս։

Երիտասարդը կբանար աչքերը այս աղէխարշ կոչին և բիբերու տարտամ ու խոյ թավալումով անոր երեսը կնայեր, կարծես չճանչնալով զանիկա, շուրթերը շարժելով բաներ մը ըսելու համար, զոր չէր հաջողեր բանաձեւել, ու շշուկ մը, մռլտուք մը միայն կլսվեր։

— Ի՞նչ ունիս, օրդի։

Հետո, արցունքի առատ կաթիլներ կվազեին աչքերներն, առանց հեծկլտանքի, լուռ ու մունջ, որուն կհաջորդեր թմրութիւն մը, անկանոն շնչառութիւամբ, կուրծքի դժնդակ ու ուժգին ելևէջով։

Ատեն-ատեն զառանցանքը կվերսկսեր, Համբիկ կթոթվրվեր, բազուկները գալարելով, ակռաները կճրտացնելով և աչքերը՝ կոպերեն դուրս ցայտեցնելու աստիճան բացած՝ կարծես հեռավոր սոսկալի տեսարանի մը սեւեռած, կմրմռար.

— Պագա՜վ, պագա՜վ, պագա՜վ...

Ու մայրը, այս անհասկնալի, բայց նշանակալից բացագանչութենեն զարհուրած, մինչև դեմքին կմոտեցներ իր դեմքը և, պաղատագին, կհարցներ.

— Ո՞վ պագավ, զավակս։

Ու անոր թևերը, ճակատը, կուրծքը կշփեր, աղոթքներ մրմնջելով, ջուր սրսկելով դեմքին, զանիկա սթափեցնելու համար իր գորովալից մոր բոլոր ռամիկ, գգվոտ պերճախոսութիւնը հոլովելով, առանց սակայն կարենալ աղդելու զառանցանքե տրորված այդ ըղեղին վրա։

Հետո, հուսահատած, վազնիվազ գնաց իր քանի մը դրացուհիներուն, աչքը արցունքով լեցուն։

— Քուրիկներս,— աղաչեց թոթովելով,— զավակս պան մը կըլլա կոր, աման, եկեք նայեցեք մեյ մը։

Երկու դրացուհիներ իսկույն փութացին տղուն անկողնին քովը։ Հակառակ սակայն բոլոր խնամքներուն, զորս ռամիկ ավանդութիւնը սորվեցուցած էր իրենց, չկրցան տղուն տենդին ոչ դարման տանիլ։ Ան կշարունակեր հուզվիլ, հառաչել, տքալ, իր մղձավանջոտ հանկերգը մրմռալ. «Պագա՜վ, պագա՜վ...»

Դրացուհիներեն մեկը, որ փորձառու և քիչ մը հոգեբան կին մըն էր, գլխի խորհրդավոր շարժումներով կամաց մը իր մտածումը մյուս դրացուհիին ականջին սպրդեցուց.

— Քուրիկ, ես ասոր մեջը պաշխա թյուրի պանի մը հոտը կառնեմ կոր, աս զավալը տղան նե պաղ առած է, նե պան...

Ասոր մեջ աղջիկան գործ կա. չնայի՞ս, իբիտեպիր. պագա՜վ, պագա՜վ, կըսե կոր...

— Վո՜ւյ, աստուծմե գտնան աս աղջիկները քի կյուզելիմ տեղիխանլըները ասանկ գուլիսե կհանեն կոր. վո՜ւյ աս հիմակվան աղջիկները... քա քուրուկ, մենք ալ վախտին աղջիկ եղանք... հե՞, ասանկ ապուրներ կուտեի՞նք,— պոռթկաց մյուս դրացուհին, այս տաքիվ իր ամբողջ թույնը թափելով նորատաս հայ աղջիկներուն դեմ։

Հետո, տեսնելով որ իրենց բերած օգնութիւնը ոչէ ազդեցութիւն չունեցավ տղուն վիճակին վրա, խորհուրդ տվին մորը բժիշկ կանչել։

Ձկնորսին կինը, դրացուհիներեն մեկը զավկին քովը ձդելով, աճապարանոք դուրս ելավ։ Շիտակ ամիրային տունը վազեց խնդրելու համար Կյուլյուկ հանըմեն և Սոֆիեն, որ միջնորդեն տոքթորին մոտ և համոզեն զինքը, որ երթա դարմանե Համբիկը ձրիապես։ Խեղճ կինը առաջին անգամն էր, որ ամիրային տունեն ներս կըմտներ։ Ամբողջ մարմնովը կդողար։ Գողի մը պես զարկավ դուռը, զոր Խաչո եկավ բանալ։ Լվացարարուհին հարցուց, որ հեալով ֆշալով եկավ բավական զարմացմամբ բանալով իր մանր աչքերը՝ հոդ տեսնելով իր երբեմնի դրացուհին։

— Կյուլյուկ հանըմ, աման, ճար մը,— աղերսեց ձկնորսին կինը, երկու ձեռքերը միացուցած, պաղատական։

— Ի՞նչ կա քի, քուրս։

— Զավակս ծառքե կելլա կոր, կյուզելիմ զավակս... ճար մը։

— Համբի՞կը։

— Հա՜, ճա՜նս, Համբիկը... բյություն կրակներուն մեջ սալլելամիշ կընե կոր, աճապա տոքթորին օտքը ծառքը իյնամ նե մեյ մը կուգա կնայի՞... ժամ շնած կըլլա։

— Ի՞նչ գիտնամ, քուրս, էկու, ներս էկու նայինք, պան մը կընենք։

Տքալով հեծելով, ներս մտավ Հոռոփ հանըմ։ Եվ հոն՝ բակը, պատին տակ դրված բազմոցի մը վրա ինկավ ուժասպառ, մինչ գեր կինը «Սոֆիիս էրթամ իմացունեմ» ըսելով՝ բակին վրա բացվող սենյակի մը դռնեն անհետացավ։ Շատ չանցած, մանկամարդ աղջիկը երևցավ։ Դեռ առտու ըլլալով, մազերը գլխուն վրա ամփոփված էին անխնամ կերպով, և սովորական միաձև պարեգոտ մըն էր հագած։ Անսովոր ու հանկարծական այլայլութիւն մը կը-

նշմարվեր դեմքին վրա։ Ջարմանք ու ցավ իրարու խառնված էին հոն։

— Ի՞նչ կա, խե՞ր է, Հոռոփ հանըմ,— հարցուց ձայնով մը, որուն դողդոջումը կուզեր ծածկել։

— Ջավակս պիրտեն պիրե հիվընդցավ, աղջիկս, շատ կեղ է, սայրխալամիշ կընե կոր... ճա՜ր մը։

— Տոքթորին երթամ խոսիմ,— ըսավ Սոֆի և վերի հարկը տանող սանդուխեն անհայտ եղավ։

***

Տոքթորը հիվանդը քննելե հետո, սկսավ հարցուփորձել.

— Ձեր ընտանիքին մեջ սառալը մարդ կա՞։

— Վո՜ւյ պերանդ խեր պաց, էֆենտի,— ըսավ ձկնորսին կինը՝ չափազանց վիրավորված,— մեր մեջ անանկ պան չի կա։

— Ջարմանալի բան,— մրմռաց կեղծ բժիշկը և հիվանդին վրա ծռեցավ։

Այդ միջոցին, տղան բազուկները ուժգնորեն ձգտելով օդին մեջ, աչվըներու ահավոր սևեռմամբ՝ «պագա՜վ, պագա՜վ» հոնդաց խուլ ու տանջված ձայնով մը։ Մարկոսյան, սարսափահար, ետ քաշվեցավ։

— Վա՜խ, զավակս,— կհեկեկար անդիեն մայրը, այտերը բռնած,— վա՜խ, օրդիս, խելքի՞ն եկեր է...

— Ի՞նչ է անունը,— հարցուց տոքթորը։

— Համբիկ։

Մարկոսյան նորեն հիվանդին վրա ծռեցավ, բռնելով անոր թևը։ Բազկերակը քննեց, մարմնին քանի մը կողմերը շոշափեց, մինչ տղան, հանդարտած, քրտնաթաթավ, դժգույն, նորեն կսկսեր հևալ, աչվըները կիսափակ, անզգա։

Աթոռին վրա տեղավորվելով, ամիրային թոռը հիմա սկսավ կարգ մը հարցումներ ուղղել մորը՝ զավկին բնավորությանը, սովորություններուն, վարքուբարքին մասին, որոնց կպատասխաներ Հոռոփ հանըմ, հառաչանքներով ու հեկեկանքներով ընդհատելով իր խոսքերը, և մասնավորապես ծանրանալով սա կետին վրա, թե վերջին ատեններս տղան, բոլորովին հակառակ իր սովորությանը, գիշերները սկսած էր տունեն դուրս անցունել և ավելի լուռ և մտածկոտ երևույթ մը ունենալ։ Մորը ամեն մեկ պատասխանին, տոքթորը խորհրդավոր ու մեծիմաստ «հըմ» մը ուներ, ընկերացած դեպի հիվանդը նայվածքի մը։

Ա՛լ բան մը չմնալով հարցնելու, տոքթորը նորեն անկողնին վրա ծռեցավ և մեղմ, բայց ազդու շեշտով մը.

— Համբի՛կ,— կանչեց։

Այս ձայնեն՝ տղան ցնցվեցավ, մեկենիմեկ աչվըները բացավ և նայեցավ իր վրա ծռած այդ դեմքին։ Սարսափի ահեղ բոպե մը եղավ ատ։ Բարձին վրայեն գլուխը վեր ցցած՝ կնայեր, խոժոռ, արյունարբու, մոլեգնոտ նայվածքով մը, որուն մեջ ա՛լ զառանցանքի տարտամ հիմարությունը չէր, որ կվառեր, այլ ոխերիմ, գիտակից վրիժառության հրդեհը։ Երիտասարդը, այս տեսարանեն ահաբեկված, ետ ընկրկեցավ տարապայման երկյուղով մը հանկարծ պաշարված, շուրջը նայելով, վերահաս վտանգե մը խույս տալու բնազդական շարժումով։

Ու հետզհետե, լուռ ու մունջ, վեր ելավ հիվանդը, կեցավ անկողնին վրա, վրեժխնդրության ուրվական, աչքերը սևեռած անոր, որ իր երջանկությունը, իր կյանքը քանդելեն ետքը, գործված չարիքը կարծես մոտեն շոշափելու դիվային հաճույքին համար մինչև հոդ եկեր էր։ Ու ա՛լ տենդը, զառանցանքը չէր որ թոթվեց խեղճ տղուն մարմինը. այս դժոխային անարգության առջև, անոր գազափարեն խարազանված, կատաղության, վրեժի գալարատանջ պրկումի մը մեջ դողաց ան. բազուկները երկարելով մատներու ճանկաձև պրկումով մը, և կոկորդեն, զոր կարծես անծանոթ մագիլներ կխեղդեին, բառ մը, բառ մը միայն ինկավ, գռեհիկ նախատինք մը, շատ սովորական, բայց որ ահեղորեն կորակեր, կըթարգմաներ, կհատկանշեր ամիրայական այդ շարավը.

— Սրիկա։

— Զավա՜կս,— աղաղակեց Հոռոփ հանըմ, թևերը բացած տղուն վազելով, կարծես արգիլելու զայն, որ չհարձակի այդ ազնիվ մարդուն վրա, որ ողորմասիրաբար մինչև ձկնորսի այդ խրճիթը եկած էր։

Բայց արդեն տոքթորը մինչև սենյակին դուռը ընկրկած էր, այլայլած, գունատ, ճիկ մը հանելու անկարող, ու հոն կեցեր էր, երեսն ի վեր, մեծաշառաչ ապտակի մը պես, ընդունելով նախատինքը, դողալով անոր հարվածին տակ։ Ու պիտի փախչեր, երբ տեսավ հիվանդը, որ, կատարած ճիգեն ուժասպառ, նորեն կիյնար

անկողնին վրա, դիակի մը պես, աչքերը գոց հեկեկալով, դողդ-
ղահար, ոչնչացած։

— Տոքթոր, օտկդ պագնեմ, զավա՜կս,— պոռաց մայրը աղ-
խարշ պաղատանքով։

Բայց տոքթորը ա՛լ չկեցավ։

— Խենթեցած է,— ես չեմ կրնար նայիլ մը նետեց հեգ
մորը երեսին ու աճապարանքով հեռացավ գնաց։

— Զավա՜կս,— ազաղակեց Հոռոփ հանըմ և նվաղած ինկավ
սենյակին դրանը առջև, մինչ դրացուհին, որ անկյուն մը, քարա-
ցած, այս եղերերգությունը կդիտեր, հիասթափված, օգնության
վազեց ձկնորսին կնոջը։

Գ.

Ամիրային ապարանքին մեջ լվացարար Կյուլյուկի և իր աղ-
ջկան տեղավորումը որքան ալ ըստ երևույթին անաղմուկ կերպով
կատարվեր էր, առաջին օրեն իսկ տան ներքին կարգուսարքին
մեջ զգալի փոփոխություններ առաջ եկած էին սակայն։ Հանըմը,
զվարթ և դյուրահաղորդ, սիրալիր երևցած էր մոր ու աղջկան նը-
կատմամբ։ Գետնահարկը, պարտեզին վրա նայող երկու խուցեր
անոնց տրամադրության տակ դրված էին։ Տեղավորման գործո-
ղություններու միջոցին տոքթորը բնավ չէր երևցած։ Մինակ մա-
ման քանի մը անգամ եկած էր աչքե անցընելու նորեկներուն կյան-
քը ու, շատ ողորմելի գտնելով զայն, պատվիրած էր խաչոյին և
խոհարարուհիին, որ անկողնոցեն երկու անկողին հանեն՝ Կյուլ-
լուկ հանըմին ու Սոֆիին համար։ Հոգածության այս ցույցին առ-
ջև, լվացարարուհիին աչվընները լեցված էին։ Աղջիկը շնորհակա-
լության բառեր մրմնջեց։ Պառավ խոհարարուհին, զոր այս անա-
կընկալ ասպնջականությունը սրտմտեցուցած էր, ցած ձայնով
դժգոհանքի բառեր կմռլտար.

— Ասո՞նք որ սատանային ծակեն ելան,— կրսեր խոժոռ նայ-
վածք մը նետելով նորեկներուն։

Իսկ խաչոյի դեմքին վրա ներքին գոհունակության մը ճառա-
գայթը կար, որուն հոգեբանական բացատրությունը գուցե ինքն
ալ չկարենար տալ. մինակ, Սոֆիին աչվընքերուն անուշ ու թովիչ
սեռումները բարերար ազդեցություն մը կընեին իր երիտասարդ
թաբմ ու կույս զգայնոտության վրա...

Ցորեկվան մոտ, տոքթորը վերջապես բարեհաճեցավ սենյակեն
իջնալ։ Հաղթանակի ցոլացումը կար դեմքին վրա։

— Բարի եկա՛ք, բարի եկա՛ք,— ըսավ մայր ու աղջկանը ձեռ-
քը բռնելով,— շատ գոհ եմ որ մամայիս առաջարկը չմերժեցիք...

Երիտասարդին տիրապետող ներկայությանը, Սոֆի բոլոր
մարմնովը կդողար և բառ մը չէր գտնար իրենց եղած այդ ընդու-
նելությանը համար սրտերնուն զգացումը արտահայտելու։

— Օրիորդին համար ամեն տեսակետով օգտակար պիտի ըլ-
լա այս փոխադրությունը,— շարունակեց երիտասարդը, պիշ-պիշ
աղջկանը նայելով,— վասնզի ոչ միայն մամայիս պես աղնվական
կնոջ մը հետ պիտի ապրի, այլև հանձն կառնեմ իր դաստիարա-
կությամբը զբաղելու...

— Շատ ազնիվ եք,— մրմնջեց Սոֆի, ու իր դժգույն դեմքը
պահ մը կշիկներ։

— Աստված սիրտիդ կյորե տա, տոքթոր,— հառաչեց Կյուլ-
լուկ հանըմ, որ սակայն մեծ բան մը չէր հասկցած երիտասարդին
խոսքերեն։

Երկու սենյակները աչքե անցընելով, տոքթոր Մարկոսյան
առաջարկեց մորը, որ Սոֆիին սենյակը համեստորեն կահավոր-
վի։ Մաման հավանեցավ։ Տարրերը պատրաստ էին։ Ամիրային
տունը կարասիներով կիսորդեր։ Ամբողջ սենյակներ կային ճոխո-
րեն կահավորված, որոնց դուռը կբացվեր փոշիները վանելու հա-
մար միայն, ամիսը մեկ երկու հեղ։ Մեկ քանի թիկնաթոռ, երկու
գորգ, հայելի մը, քոնսոլ մը իսկույն փոխադրվեցան գետնահար-
կի այդ սենյակը։ Տիկին Մարկոսյան, բարյացակամության տագ-
նապ մը բռնված, ամեն մեկ կարասիին տեղավորվելուն՝ մաղ-
թանք մը կունենար աղջկան հացեին.

— Բարով վայելես, աղջիկս...

— Շնորհակալ եմ, տիկին։

Տոքթորը փափագ հայտնեց մորը, որ Սոֆի միշտ մասնակցեր
իրենց ճաշերուն։ Այս առաջարկը սիրահոժար ընդունվեցավ։ Լը-
վացարարուհին խոհանոցը պիտի ճաշեր, խոհարարուհին և խա-
չոյին հետ։ Ցորեկվան ճաշին վրա հասավ Թադեոս աղան։

— Տեսա՞ք մի, ի՛նչ աղեկ, խերով բան եղավ,— հայտարա-
րեց ան բոլորշի ու հաղթական նայվածքով մը դեպի նորեկնե-
ը...— Ամիրայի տուն ըսածդ կտոր մը խալապալխալը կըլլա... հե՞ռ

Սեղանին վրա, Մերկերյան, քանի մը գավաթ կլլելեն ետքը, սկսավ տան ներքին նոր կարգադրությունները տնօրինել։

— Դո՛ւն, աղջիկս,— կըսեր Սոֆիին դարձած,— դուն հանդիմին փեշեն չես զատվիր, նայե քի ինքզինքդ հազ ընել տաս... հեմ տոքթորեն ալ դաս առ. շատ բան կսորվիս անկե, հե՞, տոքթոր, ի՞նչ ըսիր։

— Ինչո՞ւ չէ՛,— փութաց պատասխանել Մարկոսյան,— պարապ ժամանակներս կրնամ օրիորդին օգտակար ըլլալ։

— Ո՛րքան աղնիվ եք,— կմրմնջեր խեղճ աղջիկը, շվարած, շփոթած՝ ինքզինքը հանկարծ փոխադրված տեսնելով աշխարհ մը, որ իրեն բոլորովին անծանոթ էր մինչև այն ատեն և որուն հանդարտ փարթամությունը, հնամենի պերճությունը և աղնվաթուրմ մթնոլորտը իր կուսական հոգին զմայլանքով և տխակ մը գոռոզությամբ ալ կլեցնեին։ Այդ սեղանը, իր սպիտակ, ժանեկազարդ ծածկոցովը, իր հոյակերտ պտղանոթովը, ճենապակիե փալփլուն պնակներովը և արծաթեղեն սպասներովը հիացում և պատկառանք կաղդեր աղջկանը, որուն աչքերուն առջևն էր տակավին իրենց ողբալի խցիկին մեջ ամեն անգամ ափափ պատրաստված փայտե խարխուլ, ցածլիկ սեղանը, որուն շուրջը գետնատարած կնստեին ինք ու մայրը, և որուն սպասները այնքան հին էին, որքան վար տեսակ։ Այդ պերճափառ ու հացալից սեղանին առջև Սոֆի իր շարժումներուն կանոնավորությունը կկորսնցուներ, անոնց ամեն մեկուն մեջ տգեղություն մը և անպատշաճություն մը վախնալով և ճիգեր ընելով որպեսզի տեբլասե մը չնկատվի հոգ։ Հացին շերտը պատառելու կամ պատառաքաղը պնակեն բերնին տանելու ձևին մեջ կուզեր այնպիսի նրբություն մը դնել, որ հյուրամեծար ու ազնվական սեղանակիցներուն զգացնել շտար իր խոնարհ ծագումը, իբր թե անծանոթ բան մը եղած ըլլար իր լվացարարուհիի մը աղջիկ ըլլալը։ Իր երկչոտ, բռնազբոսիկ և դանդաղ կեցվածքը չվրիպեցավ երիտասարդին ուշադրությունեն, որ մերթ անոր կդառնար և շեշտով մը, որուն մեջ ջերմ հոգածություն մը կթրթռար.

— Ջուտե՞ք, օրիո՛րդ, ինչո՞ւ չեք ուտեր։

— Ո՛հ, շնորհակալ եմ, կուտեմ կոր,— կպատասխաներ Սոֆի՝ հուզումեն պատառին խոշորնալը զգալով բերնին մեջ։

— Կե՛ր, աղջիկս, կե՛ր,— կկրկներ անդիեն տիկին Մարկոսյան՝ ուժ տալով տղուն հրավերին։

— Աղջիկս, աստեղը ա՛լ քու տունիդ պես է,— վրա կբերեր անխուսափելի գանձապահը, ժոռատ լինդերը ծծելեն շառաչալայն։

Այս հորդորները և քաջալերները ավելի կսաստկացնեին աղջկան տագնապը, որ չէր գիտեր ի՛նչպես իր երախտագիտությունը հայտներ այդքան ջերմ հոգածության, որ ամեն կողմե իր վրա կեղեար՝ չէր գիտեր ինչո՞ւ սակայն։

Ճաշը լմննալեն ետքը, հանդիմը, կարծես անմիջապես հասկցնելու համար դերը, զոր Սոֆի այդ տան մեջ պիտի ունենար, մայրական շեշտով մը ըսավ.

— Աղջի՛կս, ինծի եկու քիչ մը լրագիր կարդա։

Վերը, սրահին մեջ, ուր ընտանիքը կմողվըվեր ընդհանրապես, լայնանիստ թավշապատ բազմոցներու վրա ընկողմանեցան տիկին Մարկոսյան, տոքթորը, Մերկերյան, իսկ Սոֆի աթոռով մը տեղավորվեցավ ձվաձև սեղանի մը առջև՝ ծածկված մետաքսաթել հազվագյուտ գորգով մը, որուն վրա խառնիխուռն դրված էին լրագիրներ, հանդեսներ, բրոշյուրներ։ Մանկամարդ աղջիկը ատոնք կպրպտեր ընտրելու համար տիկինին ճաշակին հարմար բան մը, բայց կվարաներ։

— Ի՞նչ կուզեք որ կարդամ, տիկին։

— Ճաշին վրայեն սանկ թոհաֆ բան մը ըլլա, անանկ չէ՞, Թադեոս աղա։

— Սիրտ նեղացնող բան չըլլա տե ի՞նչ կուզե ըլլա,— պատասխանեց Մերկերյան, որ բնավ չէր սիրեր մարսողության միջոցին ոևէ կերպով խանգարվիլ։

— Վերջին Մասիսը կարդացե՛ք, օրիորդ,— ըսավ տոքթորը։— Զոհրապ գեղեցիկ նորավեպ մը ունի, «Մամայիդ բարև ըրե»։

— Տղա՛ս,— առարկեց մայրը,— Զոհրապը շատ վրան բաց կգրե կոր, ընտանիքներու մեջ չի՛ կարդացվիր...

— Մամա՛, վրան բաց գրականությունը ա լա մոտ է հիմակ... ըստ նոր գրագետներու՝ անբարոյականության մեջեն պետք է հանել բարոյականը. Զոլայի սկզբունքն է ասիկա, թեև տակավին մեր բարքերուն չի հարմարիր, քանի որ դեռ մեր ազգը ատիկա ըմբռնելու չափ զարգացած չէ...

Ինչպես ընտանեական ամեն խնդիրներու, գրական այս փոքր միջադեպին մեջ ալ տոքթորին կարծիքը գերազոր պիտի հանդի-

սանար։ Սոֆի, որ կսպասեր վիճաբանության ելքին, երիտասարդին կնայեր հրամանը անկից սպասելու պես։

— Մասիսը կարդացե՛ք ուրեմն, օրիորդ,— ըսավ երիտասարդը, մատը երկնցնելով սեղանին այն կողմը, ուր այդ շաբաթաթերթին վերջին թիվը կգտնվեր։

Սոֆի առավ թերթը ու իր նրբաձույլ, մոմեղեն մատվընտրով սկսավ թղթատել զայն՝ ծանուցված նորավեպը գտնելու համար։ Երիտասարդը, թիկնաթոռին մեջ թաղված, հեռուն կիսափակ աչվընտրով կվներ աղջկան պաշտելի սիլուեթը, որ հոն սրահին մեջտեղը կանգնատվեր՝ դիմացի պատուհաններեն մտղվող լույսին մեջ, հելլեն կիսադեմքին քանդակային կերտվածքովը, հորդ, մետաքսաշող վարսերուն հարուստ կապոցին տակ, իր չքնաղ անձնիքեն անսահման դյութություն մը սփռելով, անուշավետելով կարծես մթնոլորտը, զոր Մերկերյանին թոռնած, ապուշ դեմքը և մամային խոժոռ ու դիվային նայվածքը կթունավորեին։ Այս հակադրությունը հիմա երիտասարդին աչքին կզարներ և հաճույքի, երջանկության զովություն մը կսփռվեր իր երակներուն մեջ, ու ակ գինովություն մը եղավ իրեն համար, երբոր Սոֆի, վերջապես զտնելով նորավեպը, սկսավ կարդալ զայն իր ձայնին նվաղուն, մեղուշ հնչեղությամբը, որուն ծածանուտ ու քիչ մը հիվանդագին թրթռացումը նորօրինակ ու հազվագյուտ երաժշտություն մըն էր։ Ամբողջ քսան վայրկյան, տիրող լռության մեջ—զոր երբեմն Մերկերյանին ծնոտին երևցնելու աղմուկը միայն կխանգարեր—կարդաց, մանավանդ երգեց այդ ձայնը, գրվածքին գեղեցկությունը արժեցնելով և նյութին բղջախոհ անառակությունը՝ մագիստրաթ

րամադրության տակ կդնեմ։ Եկէ՛ք, խնդրեմ, եկեք ցույց տամ ձեզի։

Ու բռնելով ձեռքեն մանկամարդ աղջկան, որ բոլորովին շվարած էր, քաշեց տարավ իր հարկաբաժինը, դռները փակելով իրենց ետևեն։

Իր երազած ու խենթի պես ըղձացած էակին հետ այդպես առանձնափակ, գիտության, գրականության և մոլության մարդուն մեջ պզտիկ ու վաղանցիկ պայքար մը մղվեցավ։ Իր նպատակին այդքան հեշտորեն հասած ըլլալու մտածությունը արդեն բարոյական ու ֆիզիքական ալ գոհացումով մը կթուլցներ, կմեղմացներ իր վայրագ տրամադրությունները. որոնք օրերով այրեր, տոչորեր էին իր էությունը։ Հիմակ, մեկ թափով, կրնար տիրանալ անոր բոլոր իգական հրապույրներուն, մարմնական բոլոր այդ շնորհներուն։

Հիմակ որ զանիկա իր մոտ բերած էր, և վստահ, որ ա՛լ ան չպիտի փախչեր, կամավորապես կուզեր հեռացնել գերագույն ու այնքան մոլեգնորեն սպասված, փափագված բոպեն, որպեսզի ետքեն ան շատ ավելի ուժգին, աներևակայելի և խորին ըլլար։ Եվ հետո. պետք էր վերջապես իրականորեն ապրիլ վիպական դյուցազնի մը կյանքը։ Իր այս հիմար կամեությունը իր տոփիներուն եռուզեռին մեջ մղձավանջ մը եղած էր։ Կիրքի հագեցման գործին մեջ անհամբեր աճապարանք մը, որքա՜ն տափակ ու ռամիկ ժեստ մը պիտի ըլլար իր կողմե։ Ամեն բան սրտաշարժ բանաստեղծությամբ մը և դրամաթիկ վիպականությամբ մը շրջապատելը ընդհակառակը որքան զգվական էր ու հաճոյալի իրեն համար։

Իր տարփանքի, տիրացումի ահեղ պետքին մեջ, հպարտության մը ծառացումը կզգար, մեծանուն ամիրայի մը թոռան՝ ոչ հասարակ աղջկան մը ֆիզիքական շնորհներուն առջև խոնարհելու, քաշկռտվելու, հառաչելու նվաստության ըմբռնումը։ Չէ՛, ամեն գնով, այս ստորնության չպիտի ենթարկեր Մարկոս ամիրային հիշատակը։ Իր երազներուն, իր բաղձանքներուն առարկան պետք էր որ մղվեր, վազեր մինչև իրեն աղերսական խոյանքով, լալահառաչ, իր սերը, իր գգվանքը մուրար, իր ոտվներուն պլլվեր, մարմնին վրայեն սողոսկեր մինչև իր շրթները, տոփանքի մոլեգին տապլտուքներով, հեշտախտության լպիրշ ու ա՛լ անվերապահ շարժումներովը, ու ինք, վերջապես, կարեկցաբար, զիջաներ գոհացում տալ այդ անդիմադրելի պահանջին, ու նկատումներու

խենթ մոռացումով մը, ա՛լ ինքն ալ իր կիրքերուն, իր տոփիներուն հոսանքին անձնատուր, ապրեր գերագույն ու անմահական վայրկյանը։ Ու երևակայված այս զառանցոտ պատկերին թելադրությանը տակ, երիտասարդը, ջղագրգիռ և ինքնակորույս, հանկարծ կլարվեր բազուկներուն վրա, աչվրները լայնաբաց, ճակատը քրտնաթաթավ։

— Օ՜հ, Սոֆի՛, Սոֆի՛։

Ու կիյնար նորեն շնչասպառ և ոչնչացած։

. . . . . .

Շատ չանցած, ամիրային աղջիկը բոլորովին անձնատուր եղավ մանկամարդ աղջկանը. տան մեջ ամեն իշխանություն անոր հանձնեց։ Սկսավ ա՛լ գրեթե դուրս չելլալ իր սենյակեն։ Շաբաթը մեկ կամ երկու հեղ միայն, իր հավերժական սևերովը փաթթված, Սոֆիի թևին կոթնելով, եկեղեցի կերթար։ Եվ ամեն անգամ, որ այդ տարօրինակ զույգը երևար հոն, իրարանցում մը առաջ կուգար. փսփսուք մը կսկսեր ականջե ականջ, հեռուե հեռու նայվածքներ փոխանակվելով։

— Քա նա՛, ամիրային աղջիկն է...

— Կյուլյուկին աղջկանը թևը մտած, վուրկե՞ վուր իրար գըտան ասոնք։

— Վո՜ւյ, ասված համբերություն տա, աղջի՛կ, ատ սընըրլըին տերտը չի քաշվիր...

— Չի քաշվիր ամա, յաղլը տեղը ինկան մարուաղջիկ... ի՛նչ ալ ըլլա, ամիրայի աղջիկ է, վաղը մեկալնօր շնորհքով ճեհեզ, թըբախումա ալ կուտա՝ բապութալը մարդու մը հետ կկարգե։ Մենք մեզի մտմտանք, քուրս։

— Բեք ալ շնորհքով, աղվոր աղջիկ է, հիչ համաշրճիի աղջիկ է չես ըսեր...

Սոֆի, որ ամիրայի տունը ընդունվելեն ի վեր, նայվածքին քալվածքին և շարժվածքին մեջ վսեմություն մը առեր էր և իր երբեմնի դպրոցական ընկերուհիներուն ա՛լ առաջվան մտերմությունը ցույց չէր տար, կզգար թե ամեն դուրս ելլալուն տիկինին հետ՝ հանրային անհագ հետաքրքրության և ասուլիսին առարկա կըդառնար, ինչ որ չափեն ավելի կգգվեր իր սնամիտ և փառասեր աղջկան զգացումները։ Նոր ու շքեղ պարեգոտներուն մեջ, զորս հանրմը, տոքթորին թելադրությամբը, շինած էր իրեն և որոնք ա՛յապես դուրս կցայտեցնեին և կարժեցնեին մանկամարդ աղ-

ջրկան հազվագյուտ գեղեցկությունը, Սոֆի վարժ ու բնական կեց-
վածք մը ուներ, իրը թե պզտիկութենե այդ պերճանքը տանելու սո-
վորած ըլլար, այնքան անբռնազբոս, ազատ ու համարձակ էին իր
շարժումները։

Կյուլյուկ հանըմ, որուն վիճակը, այդ փոխադրությամբ, ոչ
բարոյական փոփոխություն չէր կրած, ու նորեն, առաջվան պես,
ծառայելու, դատելու հանգամանքին մեջ կգտնվեր, սա պզտիկ
տարբերությամբ, որ ա՛լ ապրուստի դժնդակ հոգովը չէր տառա-
պեր, Կյուլյուկ հանըմ, որուն էությունը համորեն հափշտակում
մըն էր իր աղջկանը էությամբը և որուն մտածումը անոր երջան-
կությունն էր միայն, վերացումի, շլացումի կյանք մը կապրեր
հորմեհետե ինք ամիրային խոհանոցը մտած էր, իսկ աղջիկը
անոր ճոխաշարդ սենյակները, որոնց մեջ կշրջեր ոչ թե իբրև ծա-
ռա մը, այլ գրեթե իբրև տիրուհի, որուն առջև կխոնարհեր ապա-
ռանքին սպասուրարը և որուն, այդ հանգամանքներուն մեջ, հնա-
զանդելը՝ նույնիսկ իրեն համար, իր մայրությանը համար նվաս-
տացում մը նկատելե շատ հեռու, հպարտություն մը, փառք մը կը-
նկատեր հեք կինը։

— Հապա՜, աղջիկս ասո՛ր լայըխ էր,— կպարծենար միամ-
տորեն քանի մը ցանցառ բարեկամուհիներու, որոնք երբեմն
պարտեզին կողմի դռնեն ամիրային խոհանոցը կմտնեին կամա-
ցուկ մը և երկյուղածորեն, Կյուլյուկ հանըմին հետ տեսակցելու
համար։

— Քա վերը ընտո՞ր տեղ է,— կհարցնեին այցելուհիները ցած
ձայնով, ամիրային հեռավոր խորհուրդեն ազդված։

— Մի հարցուներ, քուրուկ,— կպատասխաներ լվացարարու-
հին խորհրդապահորեն,— էս պիլե սայղրով կելլամ. խըյախ պան
է, սարա՛յ, սարա՛յ...

— Վո՜ւյ, օտկդ պագնեմ, մ'ըսեր...

— Աղջիկս կվայելցունե կոր,— կավելցներ Կյուլյուկ հանրմ,
անպարագիծ փորը երկու ձեռքերովը գրկած, լիկած ու ծամա-
ծուռ դեմքին վրա գոհունակության ճառագայթումով մը,— ամա,
քուրուկս, տուն ըսե, լայըխ չէ՞ր, հե՞։

— Լայը՛խ էր, քուրուկ, լայը՛խ էր։

— Արևուն կոտրտիմ։

— Խե՛րը տեսնաս...

Ասանկ բաթեթիկ տեսարաններ այնուհետև հաճախագեղ

եղան ամիրայական խոհանոցին մեջ։ Կյուլյուկ հանրմ, խոնարհ-
սիրտ ու բարի կին, ամենևին չփորձվեցավ հպարտության հով մը
առնել աստիճանի այն բարձրացումեն, զոր ունեցած էր՝ Հ... գյու-
ղին հասարակության լվացարաններեն այդ խոհանոցը փոխա-
գրվելով հանկարծ։

Այս մասին ավելի առաքինի երևցավ քան իր աղջիկը, որ իր
շուրջը պտտող ամիրայածին էակներուն հավասարելու փորձու-
թյունը ունեցավ։ Մինակ պառավ խոհարարուհին էր, որ պահ մը
մթին ամպ մը տարածեց իր համեստ երջանկությանը վրա. իր
գեանին վրա այդ մեծազանգված նորամուտին ներկայությունը
ոտնձգություն մը նկատելով, պառավը գրեթե ամեն օր կմռլտար-
ու կոտտար, ամենաչնչին թաներե բարկանալով և պոռալով լվա-
ցարարուհիին երեսն ի վեր։ Կյուլյուկ հանրմ ի սկզբան որքան որ
ուզեց համբերել, ի վերջո սակայն, այդ խստաբարո և խոժոռ պա-
ռավը այնքան անհանդուրժելի վարմունք մը սկսավ ունենալ իրեն
հանդեպ, որ դառնացած, սրտմտած, գնաց լալով, հառաչելով իրո-
ղությունը պատմեց իր աղջկանը։ Սոֆի ալ, իր կարգին, տոքթո-
րին հաղորդեց այդ գործը, ու այս վերջինն ալ օր մը իր ներկա-
յությանը կանչեց ցնդած խոհարարուհին և խիստ շեշտերով սպառ-
նաց, որ եթե իր այդ ընթացքը շարունակեր Կյուլյուկ հանրմին
հանդեպ, իսկույն պիտի ճամփվեր։ Պառավը, սարսափահար,
կապկպվեցավ, դողդողաց, լացավ, երդում պատառ ընելով որ սրբ-
խալ և սուտ էր իր մասին ըսվածը. և տքալով ու հառաչելով ելավ
գնաց իր սենյակը։ Այդ օրվընե սակայն խաղաղություն տիրապե-
տեց խոհանոցին մեջ և պառավը ա՛լ սկսավ քաղցրությամբ վար-
վիլ Կյուլյուկ հանրմին հետ։

Գալով խաչոյի, ինչպես ըսինք, ան երջանիկ էր, ոչ միայն
որովհետև օրիորդին երևումեն ի վեր հանրմին խստություններեն
ազատած էր՝ անոր հետ ուղղակի հարաբերությենե գրեթե մեծ մա-
սամբ դադրելով, այլ որովհետև նոր ստեղծված այդ նազելահասակ
և քնքույշ տիրուհին՝ իր ձայնին նվաղկոտ և թրթռուն շեշտերովը,
իր գավառացի անխաթար, անապակ հոգին կխոռվեր, անուշ ըզ-
գայնոտության մը մատնելով զինքը և հարգանքով խառն հիացում-
մի մը մղելով իր երկչոտ ու կույս սիրտը։ Ա՛լ այնուհետև իր մե-
նության թախծոտ րոպեներուն գավառացի պարմանին չհիշեց իր
հայրենի գյուղին կարմրայտ, խպնոտ և կոնճ աղջիկները, որոնց
շատ հեռ կհանդիպեր, վնքշալույսին, աղբյուրին շուրջը. ատոնց

հեռավոր սիլուեթները քիչ-քիչ հալեցան, լմնցան լուսավոր դյութությանը առջև իր մանկամարդ տիրուհիին, որ իր սրտին, մտքին ու հոգիին մեջ պարապ տեղ մը չէր ձգեր։

Բարթող աղան իսկ, Կատարինեին և Մագթաղինեին հայրը, որոնց կշարունակեր իր հայրությունը ընել, անոր համար որ տակավին հարմար թեկնածուներ չէին ներկայացած այդ երկու շնորհալի կույսերուն ձեռքը խնդրող, այն շատ զորավոր և ցավալի պատճառով, որ այդ հոյակապ զույգը աղջիկնության թարմությունները կոխել անցնելե հետո, չափահասության սահմաններն ալ անցնելով՝ հանդիսավորապես ոտք դրած էր պառավության նախադուռին վրա՝ իր պատվական ծնողքին հառաչանքներուն և ողբերուն մեջտեղ,—Բարթող աղան իսկ, տեսակ մը գոհունակություն զգաց Սոֆիին անակնկալ երևումեն ամիրայական տան մեջ, վասընզի տիկին Մարկոսյան հարմար դատեց որ իր նողկատեսիլ գործակատարը այնուհետև կալվածներու հաշիվը ուղղակի մանկամարդ աղջկան տար և դրամն ալ անոր հանձներ։ Սոֆի թեև հաճելի չզտավ հրեշին հետ իր շփումը, բայց ստիպվեցավ համակերպիլ տիկինին կամքին։

Վերջապես, հանգուցյալ Մարկոս ամիրային տան մեջ ամեն բան նոր ուղղություն մը, նոր զարկ մը, նոր երևույթ մը ստացավ Սոֆիի ներկայությամբը։ Մանավանդ, երբ իր առաջին շվարումներեն և տատանումներեն հետո,—կյանքի անակնկալ փոխանցումի շլացումը,— աղջիկը իր հավասարակշռությունը և պաղարյունությունը գտնելով՝ սկսավ տիրականորեն քալել, խոսիլ, կարգադրել, վարվիլ։ Ամիս մը չտևած, ապարանքին ներքին կացությունը իր այս վերջնական ու կանոնավոր հանգամանքը ստացած էր։

Անոր խաղաղ շրջանակեն դուրս, թաղին մեջ, ժամանակ մը շարունակվեցան մեկնությունները, չարախոսությունները, անհեթեթ բացատրությունները՝ ամիրային տան բնակչության այս նոր բաղադրությանը մասին, բայց ինչպես որ ժամանակը ամեն բանի կհաղթե, Հ... գյուղին ամենեն կատաղի բամբասողներուն ալ հաղթեց, որոնք ինքնաբերաբար դադրեցան խոսելե ամիրային աղջկանը և պարագաներուն վրա։

Հանրային շշուկները քիչ-քիչ մարած էին, և ամիրային տանը բնակչության բազմանալը այլևս դադրած էր ոևէ գայթակղական հանգամանք ունենալե։ Ընդհակառակը, վերջ ի վերջո Մերկերյանին ազդեցիկ բրոբականդային շնորհիվ, ընդհանուր գաղափար մը կազմվեցավ, թե չափեն ավելի բնական բան մըն էր, որ լվացարար Կյուլյուկ և իր աղջիկը ամիրային տունը փոխադրված էին, ծառայության հանգամանքին տակ։ Նույնիսկ ըսվեցավ թե հանրմը ամսական մը կվճարեր Սոֆիին և իր մորը։ Հետևապես Հ... գյուղի հասարակությունը պահ մը թող տավ որ ամիրային ապարանքը ինք իր մեջ ամփոփված ապրի։

Բժշկության թեկնածուն, հակառակ իրական տոքթորի հովեր առած ըլլալուն, դեռ կմնար բժշկության ուսանող, վիճակ մը, որ կշարունակվեր իբր ութը տարիե ի վեր և որ, այսպես ժամանակ անցնելով, սովորական և բնական վիճակ մը դարձած էր և որ ոչ ոքի զարմանք կպատճառեր այլևս, քանի որ ատով ամենեն ավելի հետաքրքրվող անձը, մաման, վերջին ատեններս դադրած էր նույնիսկ հասկնալ ուզելե, թե իր զավակը դեռ բժշկության ուսանո՞ղ էր, թե վկայված բժիշկ։ Երևութապես, անիկա իրեն համար տոքթոր մըն էր, քանի որ ինք ատ անունը կուտար անոր, քանի որ տեղիները և բոլոր գիրենք ճանչցողները ատ անունը կուտային անոր, քանի որ նույնիսկ քարդ մը կար, որուն վրա տպված էր վսեմ պարզությամբ մը. «Տոքթոր Ա. Մարկոսյան»։ Եվ անոր այս հանգամանքին վավերացմանը քիչ չէին նպաստեր նաև այն խեղճ հիվանդները, որոնք սուտ համբավե մը կարթված կուգային ափառնել կեղծ բժիշկին դուռը՝ իրենց ցավերուն դարման փնտրելու համար։

Երիտասարդը, որուն միտքը խոլ, շարժումնալից, ցնցող կյանքի մը երազներովը կշարշարվեր միշտ, իրապաշտ վեպին պատկերներեն հալածված, զանոնք ապրելու ցնորական տենդե մը շարշարված շարունակ, ա՛լ քիչ-քիչ բոլորովին թողած էր գիտական զբաղումները, իր սիրական ծրագիրներուն հորինվածությանը նվիրվելու համար ամբողջովին։ Ութը տարվան մեջ, գերբնական ճիգերով և խաբեական միջոցներով կրցած էր քաշկըռտվիլ մինչև վեցերորդ կարգ, ու հոն կանգ առած էր։ Շաբաթներով ոտք չէր կոխեր դպրոց, հեռու կապրեր իր դասընկերներեն. կենցաղասեր, շվայտ մտերիմներ գտած ըլլալով Բերայի զբոսավայրերու մեջ, որոնց մշտամնաց հաճախորդն էր։ Ապականության այդ միջավայրին մեջ, ուր կուզեր իր շահատակություններովը գերակըշիռ և աչքառու դիրք մը ունենալ, պարծենցած էր թե սիրային սքանչելի հաղթանակ մը տանելու վրա էր և թե ի մոտո իր բարե-

կամները զինքը պիտի տեսնային չնաշխարհիկ աղջկա մը հետ, որ ընդհանուր զմայլանքի առարկա պիտի դառնար։ Հետևապես իր շրջանակին մեջ բուռն հետաքրքրություն մը կար զինքը վերջապես տեսնելու այդ երևակայական հուրիին հետ, որուն շնորհքներուն դրվատիքը կըներ անհուն շաղփաղփանքով, ալքոլի շոգիներուն մեջ մտամոլոր, կիրքեն բռնկած։

— Պիտի տեսնե՞ք,— կբացագանչեր, բազուկները օդին մեջ շարժելեն դեպի այն ուղղությամբ, ուր հավանորեն կապրեր այդ փառավորված գեղեցկությունը։

— Սակայն ե՞րբ պիտի տեսնենք։

— Պիտի տեսնեք, պիտի տեսնեք,— կպոռար ան նորեն։

Եվ իբր թե ուզելով մաքրագործվիլ այն ապականութենեն, որուն մեջ կապրեր ինք ու իր ընկերներն ալ, գաղափարական սիրո ծառացումով՝ այպանանքներ կարձակեր անոնց երեսին, ըսպառնական շեշտով մը։

— Լրբճուկ բոզ մը չկարծեք, ծո՛,— կաղաղակեր.— մաքուր հրեշտակ մըն է ան, անբիծ տատրակ մը, որուն դպչելու արժանի իսկ չեք, որուն անունը բերաննիդ չեք կրնար առնել... ե՛ս արժանի եմ անոր, ե՛ս... Թո՛ւհ, սա բոզե՞ր...

Եվ կթքներ, թքներ, զզվանքի, նողկանքի ծամածռումներով, զայրացնելով իր բարեկամները, որոնք փոխարինվիլ կուզեին՝ այդ փառաբանված հուրիին գոյությունը կասկածի ենթարկելով։

— Նայինք կա՞ատ տատրակը։

— Հը՛, հը՛,— կմռայտար կեղծ տոքթորը, գլխի խորհրդավոր ճոճումներով,— պիտի տեսնե՞ք, պիտի տեսնե՞ք։

Երկարաշունչ կերպով, այդ ախտավոր շրջանակին մեջ իր հովվերգած էակին հետ հաղթական մուտք մը ընելու գործը կըպատրաստեր հիմա, ջախջախելու համար իր ընկերները, որոնք ա՛լ սկսած էին հավատ չընծայել իր պոռոտախոսություններուն, շատ լսած ըլլալով ատանկ պատմություններ, առասպելական ու անկարելի։ Իր կարդացած վեպերուն տպավորության տակ ամբրային թոռը իր գոհացումը կգտնար նմանօրինակ սիրային արկածներու հերոսը նկատելով զան մը ինքզինքը՝ համոզված ու անկեղծ շեշտերով բորբոքվելով, հուզվելով, պատմելով զանոնք իր բարեկամներուն, որոնք հաջողած ըլլալով դիպվածով կամ մասնավորապես ստուգել ատոնց ունայնությունը, կհամառեին չհավատալ հիմա այս նոր սիրերգության։ Բայց երիտասարդը անոնց

այս համառութենեն ավելի գոհ կմնար, այդ անպատվիչ թերահավատությունը հաղթականորեն և վերջնականապես ջախջախելու անայլայլ ապահովությամբ լեցված։

Եվ մոտավոր ապագայի մը՝ իր սկսելիք նոր և հուզումնալից կյանքին բերմամբը բացառիկ ծախսերու հարկավորությունը նախատեսելով, տոքթորը միտքը դրավ չզոհանալ ամսական հինգ ոսկի թոշակով, զոր մայրը սահմանած էր իրեն։ Ներկա կամ ապագա գրության մեջ իրեն առնվազն ամիսը տասնըհինգ ոսկի պետք էր՝ իր պատրաստած ծրագիրը գործադրելու համար համեստորեն։ Համեստորեն, այո՛, որովհետև իր երազած սիրային հերոսները այդ կյանքը ապրելու համար ափով նետած էին ոսկին, մինչդեռ ինք հաշվելով այնքան ծախսեր, ինք, Մարկոս ամիրային թոռը, որ, ափսո՛ս, պիտի կրնար այդ մեծ կենցաղասերներուն կյանքը ապրիլ հիմա, եթե ազետ մը ամեն բան հեղաշրջած չըլլար ժամանակին։

Շատ դժվար չեղավ իրեն համոզելու մայրը, որ այնուհետև կալվածներուն գործերը բոլորովին իրեն հանձնվեին, և ինք ուզածին պես տնօրիներ ամեն բան, ճամփա տալով Բարթող աղային, որուն վրա արդեն մեծ կասկածներ կծանրանային։ Ամիրային աղջիկը, որուն միտքը հետզհետև կաղմախոսական ընդարմացման մը կենթարկվեր և հլու խաղալիք մը կդառնար զինքը շրջապատողներուն ձեռքը, ան որ համառ ու աննվաճ տիրապետող մը եղած էր ատենոք, ոևէ ընդդիմություն ցույց չտվավ։

— Ամեն բան ուզածիդ պես ըրե, զավակս,— ըսավ ան՝ Մարկոսյան գերդաստանին ճակատագիրը այդ հիմարին ձեռքը գնելով։

Եղերական և հետաքրքրաշարժ եղավ այն տեսարանը, ուր մեր շիլ մսագործը—Կատարինեին և Մագթաղինեին հայրիկը—առաջիկա առթիվ ապարանք գալուն՝ տոքթորին խուցը առաջնորդվեցավ լսելու համար այն նոր կարգադրությունը, որուն համեմատ իր գործակատարի երկարամյա պաշտոնեն վար կիյնար Բարթող աղա։

Տոքթորը, առանց երկար բարակ հառաջաբաններու, խնդիրը բրտորեն մարդուկին ներկայացուց.

— Բարթող աղա,— ըսավ, նույնիսկ քիչ մը սպառնական շեշտով մը, անոր պառված ունգեղջյուրի կիսագեմքը դիտելեն,— սա մեր ախարեթներուն խոնթրաթները, թուղթերը, բանկիքները, ինչ որ վերջապես կա, շուտ մը գնա բեր ինծի, պետք է, շո՛ւտ...

Մասավաճառին պաղած աչքը երերաց, դարձավ, արյունոտեցավ։ Դեմքին խորտակված գիծերը կծկվեցան, ծաղկավեր մորթին վրայեն կարծես սարսուռներ անցան։ Եվ որպեսզի այլանդակորեն հաշմված այդ դեմքը, ուր հոգիին փոթորիկները չէին կրնար իրենց հույզերը արտացոլել, այդ աստիճան տակնուվրա ըլլար, պետք էր որ ներքին մրրիկը տարապայման սաստկություն մը ունենար։

Ողջ աչքը հառեց երիտասարդին վրա, որ դեմը կեցած էր, մինչ ինք դրանը քով աթոռի մը ծայրը նստած էր, և ձայն ծրպտուն չհանեց։

— Չլսեցի՞ր, Բարթող աղա, սա մեր ախարեթներուն թուղթերը, բաները բերևիր, պետք է,— կրկնեց տոքթորը ավելի ուժեղ ձայնով մը։

— Բե՛ք աղեկ, ճանս, բերեմ, ամա ի՞նչ կա, խե՞ր է, մինչուկ հիմա մեկ ասանկ բան մը չէր եղած, խե՞ր է,— հարցուց մասավաճառը խղդված, խոռոչային ձայնով մը։

— Խերը մերը քեզի պետքը չէ, Բարթող աղա,— պատասխանեց ամիրային թոռը,— ա՛լ մեր ախարեթներուն հետ գործ չունիս դուն, կօգտե, որքան... կօգտե, հասկցա՞ր. գնա թուղթերը, հաշիվները բե՛ր, լմննա։ Գործ ունիմ, մ՚սպասցուներ ինծի։

Պետք է գիտնալ, թե տարիներ անցնելով մեր պատվական մասավաճառը շատ ծերացեր և ինկեր էր։ Իր հոյակապ զույգ մը տատրակներուն, Կատարիններին և Մագթաղիններին աղջիկնության հավերժացումը մեկ կողմեն, անդադրում և սպառող տատանք մը մյուս կողմեն՝ ուժաթափ ըրած, ծերացուցած էին զայն։ Քիչ-քիչ մասավաճառության գործը թողած էր, վասնզի շուն կատու որսալու տաժանքին ա՛լ չէր կրնար տոկալ, մանավանդ որ միակ աչքը զոր ուներ՝ քանի մը տարիե ի վեր նշանառության ամեն հարմարություն կորուսած էր։ Հետևապես, կրնա ըսվիլ որ խեղճ մարդը այդ միջոցներուն միայն Մարկոսյան կալվածներուն մատակարարության գործը ուներ իբրև ապրուստի միջոց և հետին ծայր խեղճության մեջ էր։

Արդ, երևակայել իր խռովքը, երբ ապրուստի այս հետին միջոցն ալ կոպտորեն, վայրագորեն կհափշտակվեր իր ձեռքեն։

— Ճանըմ ի՞նչ կա, ի՞նչ եղավ,— կթոթովեր ձեռքերու հուսահատ և աղերսական կարկառումով մը, մեկ ֆալցո պա՞ն մը քրի, էֆենտի...

— Էրկան ըրիր, Բարթող աղա,— պոռաց երիտասարդը ոտքը գետին զարնելով,— պե ախպար, առ մեր ախարեթներուն թուղթերը, հաշիվները, բանլիքները բեր ըսի, խոսք չե՞ս հասկնար։

Շանթահարված, ոչնչացած, ծերը ոտքի ելավ։ Կուզին տակը ամփոփված, դողդղալով, դանդաչուն, առավ քալեց ա՛լ առանց բառ մը արտասանելու։ Երեսը մոխիրի գույն առած էր, ողջ աչքը ապակիի փայլով մը կփայլեր։

— Կատարինես, Մագթաղինես,— կկոծեր ճամփան ձեռքը գլխուն զարնելով,— լմնցա՞ն, լմնցա՞ն, լմնցա՞ն...

Տուն հասնելով, Բարթող աղա անմիջապես անկողին ինկավ։ Կոքար, կհևար, կզառանցեր։ Երկու անհեթեթ տատրակները քովը ժողվվեցան։ Կինը՝ Խրստիկ հանըմ, փութաց խնամքներ հասցնել։ Երկրորդ օրը մարդուկին վիճակը ծանրացավ, կինը աղքատախնամին վազեց բժիշկի համար. մինչև որ պաշտոնական ձևակերպությունները կատարվեցան, իրիկուն եղավ և Բարթող աղա ավելի գեշցավ։ Այլանդակորեն հիվանդ էր։ Բժիշկը ուշ ատեն հասնելով, հուսահատաբար գլուխը երերցուց։ Տատրակները հորդ արցունք կթափեին։ Խրստիկ հանըմ «վա՜խ մարդս, վա՜խ» կհեծեր։

— Սրտի կաթված է,— ըսավ բժիշկը Խրստիկ հանըմին,— կա՛մ բարկացեր է, կա՛մ վախցեր է։

— Կաղեկնա՞,— հարցուց խեղճ կինը անձկագին։

— Աստված գիտե,— պատասխանեց գիտության մարդը։

Բարթող աղա, կոնակի վրա ինկած, ողջ աչքը քստմնելի սեվեռությամբ մը ձեղունին հառած, տաժանագինորեն կհևար։ Պաղատական և լալագին հարցումներուն, զոր իր տատրակները կուղղեին իրեն՝ դիակի լռություն կպահեր։ Կարծես չէր իմանար։ Առաջին անգամ ըլլալով իր էութենեն բխած այդ զույգ մը սիրասուն էակներուն գորովի զեղումներուն առջև անզգա կմնար։ Այս պարագան սարսափ կուտար աղջիկներուն և կնոջը։ Բարթող աղան, այս գորովագութ հայրը, առանկ անդիմադրելի սրտազեղմանց անտարբե՞ր ըլլար։ Երբեմն ափեղցիեղ բաներ մը կմռլտար, խոճկորի ցավագին կաղկանձյուններու պես, առանց աչքը իր տեղեն խախտելու։ Հինգ օր գիշեր-ցերեկ հսկեցին անոր անկողնին շուրջը, բայց իրենց բոլոր խնամքները ապարդյուն մնացին։ Բարթող աղա մեռավ աչքը ձեղունին սևեռած, առանց բառ մը արտասանելու։ Իր կյանքին պես մահն ալ քստմնելի եղավ։ Կրնա ըսվիլ որ աչքը բաց գնաց, իր զույգ մը տատրակներուն արգասավորումը

տեսնելու երջանկութենեն զրկված։ Իր բոլոր երազները, հույսերը, դիտավորությունները, որոնց որոճացումովը կսնաներ գիշեր-ցերեկ, սառած էին հիմակ իր աչքին այդ ահռելի սեռումին մեջ։ Այս հեղակարծ.ու կոշտ մահով անգործադրելի կմնային ահեղ, քրստրմնելի, եղեռնական ծրագիրներ, զորս ան ամեն օր կհորիներ, իր հետապնդած նպատակին հասնելու համար։ Մարկոսյան գերդաստանին կալվածները մեծ վտանգե մը կազատեին Բարթող աղային անհետացումովը։ Հանձին այս մարդուն, կատուներու և շուներու աշխարհը կկորսնցներ իր Ատիլան։ Ու թեև Կատարինե և Մագթաղինե օրիորդները գորովոտ ու պաշտելի հայր մը կկորսնցունեին Բարթող աղային մահվամբը, մյուս կողմե, սակայն, ընկերությունը ազատե մը կազատեր։

Աղջիկները իրենց հոր դիակին վրա ինկան լալով պոռչտալով։ Խրտիկ հանըմ իր ցավին արտահայտությանը մեջ ավելի համեստ ու գաղտնապահ եղավ։ Դրացիները հասան։ Անոնց ետևվեն տերտերը և ժամկոչներ, որոնք հագիվ կրցան մսավաճառին անհեթեթ ու զարշելի դիակը սգավորներուն ձեռքեն խլելով ճաղը նետել ու ժամ վազցնել։

Ամբողջ գյուղը զարմացավ Բարթող աղայի անակնկալ մահը իմանալով, բայց ոչ ոք ցավեցավ։ Տիկին Մարկոսյան «խեղճ մարդ» մը ըսավ։ Տոքթորը անգութ և իմաստալից քմծիծաղ մը ունեցավ ու լռեց. իրմե զատ ոչ ոք գիտեր որ Բարթող աղային մահվան պատճառը ինքն էր եղած։ Ասիկա գաղտնիք մը մնաց միշտ։ Շաբաթ մը ետքը ինք՝ տոքթորը անձամբ հանգուցյալին տունը գնաց և կալվածական թուղթերը և հաշիվները առավ։

Մեկ շաբաթ պտտեցավ Բերա, Ղալաթիա, Պոլիս, Վոսփորի քանի մը թաղերը, իրենց տուներն ու խանութները այցելելով, վարձվորներուն հետ տեսնվելու և Բարթող աղայի հաշիվները անոնց բերանացի հայտարարությանը հետ բաղդատելու համար։ Երբոր ամեն բան աղեկ մը քննեց, հասկցավ. հաստատեց որ ամեն ամիս հանգուցյալ մսավաճառը երեք չորս ոսկի կգրպաներ՝ բացի հարյուրի վրա իր առած իրավունքեն, և անոր անակնկալ մահվամբեն ալ տասը ոսկիի կորուստ մը կար վերջին ամսվան վարձքերուն վրայեն, գումար մը, զոր կարելի չէր պահանջել անոր այրիեն։ Երիտասարդը սրտի բավական կուշտ գոհունակությամբ մը տեսավ, որ Մարկոսյան գերդաստանը տակավին 360 ոսկիի մոտ տարեկան եկամուտ մը կվայելեր, և այս կլորիկ գումարը կրնար

ամբողջովին ինք տրամադրել ուզածին պես, նկատելով, որ Մարկոսյան գերդաստան ըսելով այլևս միայն ինք կհասկցվեր գրեթե։

Երբոր այսպես իր ձեռքին մեջ տեսավ մեծ ամիրային հաջորդության իրավունքը և իշխանական հարստության մը բեկորները, Արշակ իր հորինած ծրագիրներուն գործադրությանը վրա մտածեց երկարորեն, անոնց մանրամասնություններուն վրա կամավորապես համենալով, առաջուց ըմբոշխնելով անոնց ամբողջ քաղցրությունը։ Ու ա՛լ ժամանակը եկած նկատեց իր դյուրին որսին վրա ձեռք դնելու։ Նախ և առաջ ամբողջովին իր հարաբերությունը դադրեցավ բժշկական վարժարանին հետ, որմե ա՛լ օգուտ չի կար իրեն և այս մասին ալ համոզեց իր մայրը։ Ըսավ անոր թե Թուրքիո էն մեծ համալսարաններն իսկ այլևս անկարող էին իրեն ոեէ բան սորվեցնելու, թե ինք չէր զիջաներ այդ համալսարանները հաճախել և թե իր ուսումը ավարտելու համար օր մը—ու իր ծրագրին հեռավոր մեկ մասն էր անիկա—Ֆրանսա պիտի երթար։ Մաման շատ բնական և բանավոր գտավ իր զավկին այս ընթացքը, մանավանդ որ իր մայրական արժանապատվությունը վերջին ծայրը կըգրվվեր սա պարագային, թե իր որդին այնքան հմտություն ամբարած ըլլար, որ այլևս համալսարանները նեղ դային իրեն։ Անդեն վրա հասավ անխուսափելի Մերկերյանին համարատվությունն ալ։

— Ինա՛նկ է, ճանըմ, անա՛նկ է, դպրոց, դպրոց, վե՞րջը, բժշկություն է նե սորվեցավ էղավ գնաց. հիվանդ կնայի՞ս կոր, ընչեդա կգրե՞ս կոր, լմնցա՛վ,— եզրակացուց մարդը վճռաբար։

Եվ որպեսզի դպրոցեն բոլորովին հեռանալը հասարակության վրա հոռի տպավորություն մը չթողուր, Արշակ՝ իր սովորական ձայնատարին՝ ծեր դանձապահին միջոցով զրույց մը հանել տրվավ թե ինք Փարիզ պիտի երթար ուսումը կատարելագործելու համար։ Ամեն բան այսպես հոգալեն, կարգադրելեն ետքը, երիտասարդը ինքզինքը ամբողջովին իր ծրագիրներուն գործադրությանը նվիրեց։

Արդեն, իր խորունկ ու հոսնական նայվածքներովը, իր նշանակալից և բարբառուն հառաչանքներովը, գրեթե աղջկան երեսն ի վեր կպոռար իր ներսը գոռացող փոթորիկը, երբոր մինակ մնալին իր խուցին մեջ կամ սրահը, նույնիսկ մամային ներկայությանը։ Շատ անգամ, գիշերային հավաքման պահուն, տոքթորը իր վարպետին հիշատակեն սադրված, մեկենիմեկ թուղթի կտոր մը

կքաշեր կհաներ գրպանեն, և ոտքի կանգնած, բեմբասացի մը պես, ոտանավոր մը կկարդար, ընդհանրապես սիրային, լուսին, աստղ, ծաղիկ, գարուն, սեր, հուսահատություն բառերուն անհեթեթ ու անհարիր մեկ շաղապատումը, զոր կերտելու համար իրարու քով բերած էր զանազան հեղինակներու քերթվածներե գողցված տողեր, երբեմն ամբողջ տուներ։ Մաման և մանկամարդ աղջիկը, հիացկոտ նստվածքներով, զմայլական հափշտակությամբ մտիկ կընեին այդ հանկարծաբանությունը, բանաստեղծին մեղուշ, թրթրուն, դաշնավոր ձայնին հուզող շեշտերեն մագնիսված, իրենց դեմքին սքանչացման արտահայտությունը այնքան ավելի մեծ ըլլալով, որքան արտասանված բանաստեղծությունը անհեթեթ ու անիմաստ ըլլար։ Երիտասարդին այս բեմական շարժվածքները տարօրինակ տպավորություն մը առաջ կբերեին աղջկան վրա։ Եվ երբոր քերթվածին ամենեն խանդակաթ և ցայտուն կետին հասներ, աչքը, տարփալից ու նվաղուն, աղջկան նայվածքին խառներ, այս վերջինը անուշ ու գինովցնող սարսուռներով կդողար, ա՛լ շուրջի իրերը չտեսնելով, ա՛լ մոռնալով իր կացությունը։ Մինչ բոլորովին տարբեր էր մամային տպավորությունը, տոքթորին բանաստեղծական այս պոռթկումներուն առջև։ Քերթվածին գեղարվեստական աղվորությունը կամ արտասանողին ձայնին քաղցր ելևէջները, հուզիչ շեշտերը չէին որ կգինովցնեին զինքը, այլ սա շոր ու մերկ գաղափարը, թե իր զավակը՝ ատանկով՝ ոչ միայն գիտության մարդ մը կներկայնար, այլև գրականության։ Օր մը, իր մեջ պետք մը ծագեցավ հանրության ալ իմացնելու իր զավկին այս պահծու և կրրկընակի առաքինությունը։ Վերջապես շատ սեղմ շրջանակի մը մեջ էր որ բանաստեղծը կլսվեր, կգնահատվեր, կհավնվեր։ Անիրավություն, զրկանք էր ասիկա։ Մարկոսյան գերդաստանին համբավին ու փայլին դեմ հարստահարություն մը։ Ուստի թախանձանոք պահանջեց տոքթորեն որ այդ քերթվածները հրատարակել տա լրագիրներուն մեջ։ Ձեռնածուն, որ կհասկնար իր այդ կարծեցյալ բանաստեղծությանց բովանդակ ծաղրելիությունն ու խաղքությունը, դժկամակություն ցուցուց, մասնավորապես ծանրանալով սա կետին վրա, թե իր այդ վսեմ ու գեղեցիկ գրվածքները հրատարակելու արժանի հայ թերթ չի կար։ Խեղճ կինը, այս առարկության մեջ իսկ իր եսասիրությունը գգվող պարագա մը նշմարեց. իր զավկին գրվածները հրատարակելու արժանի թերթ չի գտնվե՞ր։ Իր մտքին ունայնությանը մեջ ասիկա շատ բնական գտավ։ Թե իր զավակը ամեն գրական հրատարակությենե բարձր ըլլար, անառարկելի բան էր աս, մանավանդ երբ այս հաստատումը ընողը բուն իսկ իր որդին էր, հաստատումներուն ամենեն վավերականը և անհերքելին։ Ասով սակայն չհուսահատեցավ մաման. չէ, անպատճառ աշխարհք իմանալու էր Մարկոսյան բանաստեղծի մը գոյությունը։

— Քանի որ ատանկ է, Արշակ,— ըսավ,— դուն ալ առանձին գիրքով մը մեջտեղ կհանես գրածներդ. չըլլա՞ր զավակս։

— Կըլլա, մամա՛, բայց դեռ շատ քիչ է։

— Շատցուր, զավակս, շո՛ւտ շատցուր։

Բարձր, եզական մարդու մը գաղափարը կուզեր ներշնչել աղջկանը, որպեսզի ետքեն ավելի դյուրավ ու տիրապետորեն կարենար անոր ներարկել ապականության ժահրը, որմե այնքան առատորեն կսնուցաներ իր հոգին մեջ, անծանոթ ու մեղավոր բաղձանքներու սարսուռներ ապրեցնելու համար անոր։ Եվ որպեսզի այդ նուրբ ու պաշտելի էակին մոտենալով ինքը բարոյական կամ ընկերային անկումի մը ենթարկված չըլլար, նախ զանի մինչև իրեն բարձրացնելու պետք զգաց։ Ասոր համար ամենեն անհրաժեշտ ու դյուրին սատարը մաման պիտի ըլլար։ Ողոքիչ խոսքերով, սրտաշարժ հորդորներով հաջողեցավ համոզել զայն, որ սպասուհի մը պես չվարվեր մանկամարդ աղջկանը հետ, մանավանդ օտարներու առջև այնպես մը ըներ, որ ամեն մարդ մղվեր հավատալու թե Սոֆի ոչ միայն բնակարանի փոփոխություն մը ունեցած էր ամիրային տունեն ներս մտնելով, այլև միևնույն ատեն իր ընկերային աստիճանն ալ բարձրացում մը կրած էր՝ շնորհիվ այնպիսի անձի մը, որ իր ընկերային բարձր դիրքին բերմամբը կրնար հասարակ մահկանացուի մը բացառիկ ու նախանձելի էակի մը հանգամանքը տալ, ինչպես թագավոր մը, որ աստիճաններ կշնորհե իր հպատակներուն։ Քիչ քիչ, իր ընդունելության օրերուն, հանըմը, իր հյուրերուն առջև սկսավ այնպես վարմունք մը ունենալ Սոֆիի հետ, որ հյուրերը զարմանալով հանդերձ, մտածեցին թե լվացարարուհին աղջիկը սպասուհի մը ըլլալե շատ հեռու՝ ամիրային գերդաստանին մեկ անդամին հանգամանքը ստացած է։ Թերևս, ըսին, տիկին Մարկոսյան աղջիկ չունենալով՝ իրրև այն նկատել ուզած էր Սոֆին։ Դուրսը, մակույկով պտույտներուն ատեն, Ոսկեղջյուրի վրա, հանըմը և Սոֆին պատվո տեղը կբազմեին քով քովի, մինչ տոքթորը մեկ կողմ կնստեր իրրև կնա-

մեծար քավալիե, երկու կիներուն նկատմամբ հարգանքի միևնույն վերաբերումով։ Այս ցույցերը շուտով ծառայեցին այն նպատակին, որուն կհետամտեր Արշակ։ Ա՛լ հանրությունը ստիպվեցավ ընդունիլ որ լվացարար Կյուլյուկին աղջիկը սպասուհի մը չէր ամիրային տանը մեջ։ Ընդհակառակը իր դիրքը այնքան պատվավոր էր հոն, որ ենթադրողներ իսկ եղան թե տոքթորը Սոֆիին պիտի առներ. բայց այս ենթադրությունը շուտով ջրվեցավ, երբ ի նկատի առնվեցավ ամիրային թոռան բարձրաթռիչ ու ամբարհավաճ նկարագիրը, որ երբեք թույլ չպիտի տար իրեն հասարակ և աղքատ աղջկան մը հետ կապ հաստատել։

— Բայց եթե, ըսին, տոքթորն ալ չառնե, զենկին մարդու մը կրնան տա՛լ յա։

— Բախտավոր աղջիկ է եղեր, լմնցա՛վ,— հայտարարեցին ուրիշներ մեկ խոսքով։

Բերայեն մասնավոր մոտիսդ եկավ օրիորդին նոր պարեգոտներու պատրաստությանը համար։ Աղքատներու տվին անոր հին հանդերձները։ Մեկ քանին պառավ խոհարարուհին առավ։ Այս իրարանցումին առջև, աղջկանը այս հառաջխաղացությանը հանդեպ, Կյուլյուկ հանըմ—որուն ընկերային մակարդակը ոևէ փոփոխություն չէր կրած—և ոչ իսկ իր ռամկական բարբառովը կարող կըլլար իր զգացածը բանաձևել, մինակ կդիտեր, լուռ հանդիսատես կըլլար, իրողությունը հաստատելով և երբեմն սա պարզ բայց հոգեցունց բացագանչությունը երկինք նետելով.

— Օղորմությանդ մեռնիմ, էյնավոր տեր։

Իր նոր ու պերճ արդուզարդերուն մեջ՝ Սոֆի կրցավ իր նրբուղեշ գեղեցկությունը արժեցնել։ Քանի մը ամսվան հանգստությունը թավշոտ լեցունություն մը առած էին, ուսերուն ցցվածությունը թույլը մեղմացած էր և քալվածքին մեջ ավելի ժիր, աշխույժ ու կենդանի բան մը կար։ Դեմքին տխրության հիմը, աչքերուն տրտմական սևեռումը, իր դյուրաբեկ անձնիքին թողած որքի, ըլլալ մի տպավորությունը մեծապես փոխված, բարեփոխված էին։ Իր փայփայած իդեալներուն այդքան մոտ զգալով ինքզինքը, հոգեկան անդորրում մը ունեցավ, որ կշեշտվեր այդ իդեալներուն ամբողջովին կարենալ տիրանալու հեշտավետ ինքնավստահությամբ։ Սոֆի, աղքատության մեջ, իր համեստ աղջկան անշուք ու անհրապույր հարդարումին մեջ, ավելի բարի էր, ավելի շնորհալի, ավելի առաքինի։ Հիմա քիչ մը հպարտ եղավ, բավական եսասեր, լափեն ավելի պերճամոլ։ Մայրը, զոր առաջ այնքան կսիրեր, ա՛լ առաջվան խանդաղատանքը չէր ներշնչեր իրեն։ Ամիրային հանգստավետ և հոյակապ սրահներուն մեջ բազմած պահուն չէր մոռանար ամենևին, որ իր մայրը, իր ահագին մարմնովը, կշարունակեր գատիլ խոհանոցի մը կամ լվացարանի մը սպառող մթնոլորտին մեջ։ Ընդհակառակը, այս պարագան սկսավ շատ բնական բան մը թվիլ իրեն, նույնիսկ սեղանին վրա մորը կողմեն սպասարկվիլը իրեն համար ոևէ տգեղություն չնկատվեցավ։ Երիտասարդը շիտակ և ճիշտ հաշված էր՝ նիստուկացի այդ անակնկալ և ցնցող փոփոխության հետ մեկտեղ աղջկան նկարագրին կրելիք բարոյական փոփոխությունները։ Դասախոսության պատրվակին տակ՝ աշխատանոցին մեջ գլուխ գլխի իրենց տեսակցություններուն մեջ, տոքթորը՝ պերճ, խոլ, հաճույքի կյանքին դրրվատիքը կհյուսեր անանկ փայլուն և հրապուրիչ գծերու տակ, որ մանկամարդ աղջիկը, երևակայությունը գրգռված ու վառված, հեշտախտորեն այդ նկարագրություններուն մեջ կթաղվեր, կմբխրմվեր ու կապրեր զանոնք։ Ա՛լ հիմակ կյանքը նոր արշալույսով մը կներկայանար իր շլացած աչքերուն։ Կապույտ ու ծիրանի կտեսնար։ Իր նայվածքին առջև թանձր քող մը կար, որ թող չէր տար որոշելու իրեն այն ապականության և կորուստի վիհը, ուր կքշվեր, կտարվեր խեղճ աղջիկը կամավորապես, ինքնամատույց ծառացումով մը։

— Կյանքը ապրիլ պետք է, օրիորդ,— կաղաղակեր Արշակ խուցին մեջ պտտելով։— Վայելքը ամենեն գեղեցիկ բանն է որուն մարդ կարենա տալ ինքզինքը։ Ամբոխեն վեր մնալու է։ Անոր քրտվելեն ավելի տգեղ ու վնասակար բան չի կա։ Քու ետևեդ անոր փառաբանական աղաղակները լսելու ես միայն, առանց իսկ զայն տեսնելու։ Վայելքը՝ այդ աղմուկեն, այդ իրարանցումեն դուրս է. խաղաղ, հեռավոր, ազնվական վայրեր, որպեսզի կարենաս ամենեն ազնիվ տպավորությունները կրել, ամենեն առողջ մտածումները մտածել։ Դուք մինչև հիմա ի՞նչպես ապրած էիք, օրիո՛րդ, երբեք խորհա՞ծ էիք թե ձերինեն տարբեր եղանակով մը պետք է ապրիլ, ապա թե որ չարժեր ապրիլ։ Ո՛չ անշուշտ. բայց հիմա կըմտածեք, կզգաք զանիկա։ Եվ դուք արժանի էիք կյանքի այս փոփոխության և անոր հետևանքներուն, որոնցմե շատը դեռ ձեզի

համար անծանոթ բաներ են, բայց որոնց վերջապես պիտի ծանոթանաք... և իմ միջոցովս...

Հետո ընդհատելով, խոհուն, մտածկոտ երևույթով մը կանգ կառներ՝ ակնարկը տարտամ և անորոշ, հեռավորություններու վրա իբր թե թափառկոտ... ու վերսկսելով, ավելի մոտենալով աղջիկանը և անոր մեկ ձեռքը բռնելով, մտերմական ու մեղմ թոնով մը.

— Սոֆի, առաջին վայրկյանեն որ քեզ տեսա, անդիմադրելի համակրություն մը զգացի... վիճակդ գութս շարժեց, ուզեցի որ փոխվի ան... ու փոխվեցավ, և դեռ շատ պիտի փոխվի... միայն թե, միայն թե...

Աղջիկը, որուն հոգին կսարսռար այս սրտապատառ տեսարաններուն առջև, չէր գիտեր ինչ պատասխաններ ամիրայի մը թոռան այդ գթալից ու համակրալից արտահայտություններուն, ու իր անուշ, մելամաղձոտ նայվածքովը ավելի կխոսեր, քան վարդ շրթներովը։

Անշուշտ սիրո բացարձակ հայտարարությունը չէր ասիկա, բայց այսքանն իսկ բավական էր, որպեսզի Սոֆի, հրճվանքեն խելահեղ, սրտատրոփ, քանի մը օր ատոր գինովությանը տակ ապրեր՝ ենթադրություններու տատանումեն ալեկոծ, երիտասարդին մերթ շատ պայմանադրական, գրեթե պաշտոնական կեցվածքին առջև բոլորովին վարանոտ։ Իր մատղաշ ու անփորձ մտքին մեջ կուզեր իրարու հետ հաշտեցնել տոքթորին վարմունքներուն հակասականությունը։ Հիմակվընե իսկ՝ սիրո անվերապահ ու անկեղծ հայտնության անուշությունը չխմած, անոր տառապանքի և դառնության բաժինը կսկսեր ապրիլ։ Երիտասարդին սողոսկող, պատիպատ, մերթ քծնող, դյուրահաղորդ, մերթ պաղ, գրեթե խոժոռ վարմունքը, իր մտքի, երևակայության խոյանքներուն մեջ հեղակարծ կասումներ կպատճառեր, որոնք ուժգնորեն կցնցեին զինքը, տխրության, հուսահատության տագնապներու կմատնեին։ Հակազդեցությամբ մը, այդ տագնապներուն հանդարտությենեն հետո, իր մեջ կզգար սիրո հրդեհին արծարծվիլը, անոր կապանքներուն մեջ ավելի և ավելի կաշկանդվիլը։ Կսիրեր այդ տարօրինակ մարդը, անոր խենթ, բայց վսեմ շարժումները, անոր հայտնած անսովոր, ծայրահեղ, գայթակղեցուցիչ գաղափարները, որոնք այնքան խորունկ տպավորություն մը կձգեին իր վրա, անոր հանկարծական պայթումները՝ շանթարձակ նայվածքներով, գլխի հեռարձակ տատանումներով, անոր խոսվածքը, անոր ժպիտը, անոր վրա ամեն բան։

Անոր ընկերակցությամբը անցուցած վայրկյանները երջանկության և հուզմունքի վայրկյաններ էին։ Ամեն օր, գրեթե ամեն ժամ վերջապես, կուզեր տեսնել անոր սիրո մերկապարանոց ու աղմկալի հայտնությունը, որ չէր գար սակայն, հեռուեն միայն երևնալով, պտտելով, համենալով։ Ասիկա կշարշարեր զինքը, այս անհասկնալի ու երկարատև հետաձգումը կսեղմեր իր հոգին ու լացի տագնապներու կմղեր, իր սենյակին մեջ, առանձին, պատուհանին առջև կանգնած։ Երբեմն, երիտասարդը, խանդավառ, խելացնոր, գինով, աղջկան ձեռքը բռնած՝ կկենար մեկենիմեկ, դեմքի արտահայտության հեղակարծ փոփոխմամբ, նայվածքի խոժոռումով, լուռ, ահավոր։ Ու կձգեր կհեռանար անխոսուկ և մըտածկոտ, կարծես զղջալով իր տկարությանը վրա։ Այս տեսարանները, կրկնվելով հաճախակի, տեսակ մը ջղային դրություն ստեղծեցին աղջկան վրա։ Հասավ վայրկյան մը, ուր ան տիրականորեն, անդիմադրելիորեն բաղձաց վախճան մը դնել անորոշ ու հատցնող, սպառող կացության մը, որ ա՛լ չէր կրնար երկարիլ։ իրենց սերը չէր կրնար այդ տարտամ գիծերուն տակ տևել։ Գերբնական ճիգերով միայն կհաջողեր զսպել իր զեղումները, շմատնելիլ բոլորովին, չտկարանալ, չհնծել իր էությունը մրրկող ըզգացումը։ Ու երիտասարդին անգթորեն, անողոք երկայնամտությամբ սպասած, կանչած բոպեն եկավ։ Սոֆի, ջղայնոտ, տկարացավ, ինկավ իր առջևը, իր սերը հնծեց, լացավ, ողբաց։

Արշակ, այդ սրտաշարժ և աղվոր տեսարանը իր հոգիին ապականությամբը աղեկ մը ըմբոշխնելեն հետո, խմելե, ծծելե հետո այն անբացատրելի հաճույքը, զոր երկար ատեն հևիհև նպատակի մը ետևե վազող մը միայն կունենա, երբ վերջապես կհասնի անոր, վիպականորեն ասպետական և շքեղ եղավ։ Կիսանվաղ և լալահառաչ աղջիկը գրկելով՝ թավիշե թիկնաթոռի մը վրա դրավ, համբույրներովը խմելով անոր արցունքները, ազնիվ և սրտապնդիչ բառեր մրմնջելով անոր ականջին ու ծնրադրելով անոր առջև։

Այդ օրեն, հարաբերություններու եղանակը բոլորովին փոխվեցավ։ Սոֆի անվերապահորեն, մերկացած կուսական ամոթխածությենեն, որ իր չքնաղ դեմքին հրապույրն էր, երիտասարդին հետ իր վերաբերմունքին մեջ ա՛լ չափ ու ակնածանք չդրավ։ Մաման, որուն ցնդածությունը երթալով երկյուղալի ծավալներ կրս-

տանար, իր զավկին ու այդ աղջկան միջև հաստատված քիչ մը արտասովոր ու գայթակղեցուցիչ մտերմության մեջ բնավ անպատեհություն մը չտեսավ։ Ընդհակառակը, կարծեց թե Սոֆին, որու ընկերային աստիճանը այլևս գրեթե մոռցած էր ինք, շատ բնական բան մըն էր որ այդքան մտերմորեն, սերտորեն կապվեր իր զավկին հետ, մանավանդ քանի որ այդ վիճակը սիրահոժար կերպով ընդունված էր իր զավկին կողմե, որ, այդ պայմաններուն մեջ, ճարպիկությունը կունենար իր մամային շուրջը հոգածության, գուրգուրանքի, խանդաղատանքի անանցանելի պատնեշը լայնցնելու, անոր մեջ առանձնացնելու զայն բոլորովին։

Օրվան մեծագույն մասը, մանկամարդ աղջիկը բժիշկին հարկաբաժինն էր, ուսկից անոնք միասին դուրս կելլային՝ մամային երթալու կամ ճաշի իջնալու համար։ Այլևս, ամեն մարդ, տոքթորին դիմելու, անոր հետ հաբաբերության մտնելու համար, պարտավոր եղավ նախ և առաջ Սոֆին տեսնելու և անկեց արտոնվելու։ Ցանցառ հիվանդները, որ անխելքությունը կունենային գեռ անոր դիմելու, երբեմն կատիպշին ժամերով սպասել նրբանցքին մեջ, երկար բազկաթոռի մը վրա, մինչև որ Սոֆի դուրս ելլալով տոքթորին սենյակեն՝ արտոներ խեղճ հիվանդը ներս մտնելու։

Կյուլյուկ հանըմ, թեև ամիրային ապարանքին ստորին հարկերուն մեջ կանցներ իր ժամանակին մեծ մասը, վերջ ի վերջո նշմարեց կացությունը։ Նշմարեց իր սիրական աղջկան վրա առաջ եկած փոփոխությունը, ֆիզիքապես և բարոյապես. տեսավ, ու սրտի ի՞նչ դառնությամբ, անտարբերությունը, որ հաջորդած էր այն գորովալից գուրգուրանքին, զոր աղջիկը ուներ իր մորը համար, առաջ, վերի խոնարհ խրճիթին մեջ։ Այդ պերճ ու հոյակապ ապարանքը աղետավոր ազդեցություն ունեցած էր աղջկանը վրա։ Որքան որ ալ ներքին հպարտություն մը զգար իր զավկին այդ բարձրացմանը համար, ու իր մայրական սնափառությունը գգվբարձրացմանը համար և խորհրդապահ բնազդ մը—հակառակ որ ինքը զայն վանել, հեռացնել ուզեր—այդ բարձրացումին ամբողջ ունայնությունը ու աղետավորությունը կփսփսար իր ականջին։ Քիչ-քիչ այնպես մը եղավ, որ այդ խեղճ մոր իր աղջկան հետ գլուխս գլխի մտերմորեն տեսնվելու առիթները բոլորովին չնչվեցան։ Սոֆի, որ մորը ննջասենյակին կից ուներ իր խուցը, փոխադրվեցավ վերի հարկը, տիկինին հարկաբաժինը, ուր երկու սենյակներ, մեկը քնանալու, մյուսը արդուզարդի, իրեն հատկացվեցան։ Առտուները տիկինին արթննալուն կսպասեր, անոր հետ ճաշելու համար, ցորեկին և իրիկվան՝ նույնպես. մնացած ատենները տոքթորին և մամային մեջ կբաժներ ինքզինքը։ Շատ հեղ կյուլյուկ հանըմ սեղանին վրա միայն կտեսներ աղջկանը երեսը, անոր ծառայելու համար պարզ սպասուհիի մը պես։ Գաղտնի հառաչանքներ կխեղդեին հեք կնոջ լայնախարիսխ կուրծքը, նայվածքներուն մեջ ցավով խառն պաղատանքներ կցոլային, երբ աղջիկը դիպվածով իրեն նայեր։ Զանիկա սիրելու, գգվելու, գիրկին մեջ սեղմելու հաճույքեն, միակ հաճույքը ղոր ունեցած էր, ա՛լ բոլորովին զրկվեցավ։ Բայց իր այն կսկիծը ոչ մեկուն հաղորդեց, անով էրվեցավ, տոչորվեցավ։

Աղջիկը մոլորեցնելու միջոցներուն մեջ երիտասարդը չափ չդրավ։ Իր խուցին մեջ, անոր հետ իր ապրած հեշտալի րոպեներուն, փոքր արաբական աստիճանադարակի մը վրայեն կելլար շիշ մը ըմպելիք կառներ և իրարու ետևեն քանի մը գավաթ կխըմեր. հետո Սոֆիին կերկնցուներ գավաթ մը, զոր անիկա հոժարափույթ իր շրթներուն կտաներ՝ ըմպելով հեշտավետ խմիչքը և անոր պարգևած զվարթութենեն ոգևորվելով, աչքները ցանկության ճառագայթներով լեցուն, այտերը վառ, շրթները ըղձատրոփի կծկումներով բացխփիկ։ Անզգալիորեն, մանկամարդ աղջիկը կգինովնար, կտարվեր, կվերանար, և այս տեսակ գինովության օր մըն էր որ ան հափշտակված, խելակորույս, երիտասարդին պաղարյուն զգուշավորութենեն գրգռված, ինկավ անոր գիրկը. հեծեծալով, լալով, անձնատուր ըլլալով այդ ապականության, որ խմեց, ծծեց մաքուր ու անաղարտ այդ էությունը, անոր երակներուն կույս արյունին մեջ դունջը մխրճելով, իր ժահրը, թույնը ներարկելով անոր։

Ա՛լ անկեց ետքը, Սոֆի այդ տղուն կիրքերուն և ահարկու քմահաճույքներուն գերին եղավ։ Իրենց հարաբերություններուն մեջ սանձ չդրին, այդ ապօրեն և մեղավոր կենակցության համար քողարկում և զգուշություն ավելորդ շարժումներ թվեցան իրենց։ Աղջիկը, յուրացված, տիրապետված, թովված, ամիրային թոռան խենթության ոլորտին մեջ դարձավ՝ խելակորույս թիթեռնիկի մը հուսահատ թևածումներով։ Թև թևի անոնք պտույտներու ելան, Գոլսո է՛ն ազնվապետական զբոսավայրերուն մեջ երևցան։ Աղջկան զմայլելի ու չքնաղ շարժուձևերը, անստգյուտ դիմագծությունը, գեղադիտակ ու արքենի հասակը ամենուն ուշադրությու-

նը, սքանչացումը գրավեցին։ Արշակի բարեկամները, որոնք սովորական պոռոտախոսություններ նկատած էին անոր բոլոր նկարագրությունները ծանուցված հուրիի մասին, ափիբերան եղան, երբ առաջին անգամ տեսան այդ հոյակապ աղջիկը անոր թևը, գլուխ գլխի։

— Վրանիս իլիմոն քամեց,— կըսեր անոնցմե մեկը անկեղծորեն խոստովանելով իրենց ջախջախումը։

— Ծո, ուրկե՞ գտեր է, ուրկե՞,— կհարցնեին միաբերան այդ կենցաղասեր երիտասարդները, որոնց համար ատանկ էակի մը նվաճումը Վաթեռլո մը շահելու չափ կարևորություն ուներ։

— Պռավո՛, կեցցե՛ս, Արշակ,— կբացագանչեին ասդիեն անդիեն, երիտասարդին հաղթանակը պանծացնելով։

Արշակ, որ կզգար շուրջը հարուցված իրարանցումը, անտարբեր կմնար, դիտմամբ հեռու կենալով իր մտերիմներեն, զանոնք բոլորովին կատղեցնելու համար։

Կյանքը, որուն վարագույրը մեկենիմեկ այդպես բացվեր էր իր առջև, նորօրինակ էր ու ցնորեցուցիչ՝ Կյուլյուկ Հանըմին աղջկանը համար։

Ամոթխածության, համեստության, բարության շնորհը, որով իր կույս աղջիկի ճակատը լուսապսակված էր, քիչ-քիչ անհետացավ, երբ ամիրային թոռան ապականարար մատվները դպան անոր։ Իր առջև իր հեք մորը նշանակալից ու աղեկեղ հառաչները, անոր հանդիմանանքով ու աղաչանքով լեցված նայվածքները ո՛չ ազդեցին իր վրա, ո՛չ իր գութը շարժեցին։ Ու երբ օր մը, հազվադեպ առիթե մը օգտվելով, Կյուլյուկ Հանըմ, աղջկանը հետ առանձին մնացած, սա հարցումը ուղղեց անոր՝ անբացատրելի շեշտով մը.

— Սոֆի, ի՞նչ է աս էղածը, հալխը ի՞նչ կըսե,— աղջիկը ամբարտավան ու զայրացկոտ ծառացումով մորը նայեցավ քովնտի ու արհամարհական, ու հազիվ թե բառ մը նետեց.

— Ցնդա՞ծ։

Մաման ալ, իր թմրության և հափշտակության խորունկին, կրցավ պահ մը գլուխը վեր առնել՝ իր զավկին ըսելու համար.

— Արշակ, զավա՛կս, ի՞նչ է աս Սոֆիին հետ...

Երիտասարդը կամաց մը մորը ականջին մոտեցավ ու քըստըմնելի ժպիտով մը փսփսաց.

— Մի՛ վախնար, մաման, կզվարճանամ կոր...

— Թադեոս աղան «սա տղուդ յուլարը քաշե կտոր մը» ըսավ ինծի անցած օր։

— Հայց Թադեոս աղան չի՞ մտածեր կոր որ ավելի աղեկ է Սոֆիի մը հետ ժամանակ անցունել, քան թե... բոզերու հետ... հե՞, մամա...

Մաման դարձավ զավկին աչվքներուն մեջ նայեցավ, ու հասկըցավ.

— Աղեկ, զավակս, աղեկ, մինակ քիչ մը խոհեմությամբ վարվե։

Հ... գյուղին մեջ, Արշակի ու Սոֆիի այս սանձարձակ, անվերապահ ու մերկապարանոց կենակցությունը բողոքներու և հարձակումներու փոթորիկ մը պայթեցուց նորեն։ Երկար ատեն, անոնք խոսակցության գլխավոր նյութը եղան ընտանեկան հավաքումներու։ Այս առթիվ, բարոյականի պերճախոս քարոզիչները երևան ելան։ Մասնավորապես անոնցմե, որոնց բարոյականը արդեն շատ կասկածելի ու շատ խախուտ հիմ մը ուներ։ Մեծ մասամբ, մանավանդ աղջիկները ու կիները, նախանձե շարժելով է որ գետնե գետին կգարնեին Սոֆին։ Անոր վարած փառավոր կյանքը, անոր ակնախտիղ արդուզարդը, անոր գեղեցկությունը նախանձի նոպաներու կմատնեին զանոնք։

— Քա, հետը էյլենմիշ կըլլա կոր. վաղը մեկալնօր կտեսնաք, էրեսի վրա պիտի ձգե...

— Չէ՛, չէ՛, կառնե, կառնե, ան ի՞նչ վարպետ աղջիկ է քի՞... տղան ճանկը անցուցեր է կխաղցունե կոր...

— Ըլլալիք բան չէ. ամիրային աղջիկը չի ձգեր, որ զավակը ատ չամաշրճիին աղջիկը առնե... դուն գիտե՞ս ի՞նչ ճատը է ան...

— Հա՛, հա՛, էյլենմիշ կըլլա կոր հետը...

Երբեմն, Արշակ և Սոֆի քանի մը օր բացակա կըլլային տունեն։ Բերա, օթելի մը մեջ կանցընեին ժամանակնին, կառքի պըտույտներ ընելով մինչև Շիշլի, մեծ գարեջրատուներու մեջ կանգ առնելով, գիշերները թատրոնները պտտելով, Քրիսթալ, Քոնքորտիա և այլն։ Առաջները քանի մը անգամ, տիկին Մարկոսյան այս բացակայությանց համար բուռն կերպով հանդիմանեց տղան, որ իր սովորությանը համեմատ, գորովանոք մամային ճիտը պլլվելով, ներում խնդրեց, հետո նորեն նույն ընթացքը կրկնելու համար։ Նմանօրինակ քանի մը տեսարաններու կրկնութենեն ետքը, մամային համար սովորական թվեցան այլևս այդ բացակայություն-

ներն ալ։ Ու ա՛լ չդողոքեց։ Մնաց որ, տարիքին հետ, մասավորական ու ջղային թմրություն մը ամեն կամք, ամեն կորով, ամեն խոյանք կփչացներ այդ կնոջ մեջ, որ այլևս ինք իր վրա ամփոփված կապրեր, մոռնալով բոլոր իր երբեմնի ձգտումները, փառասիրության, ամբարհավաճության տագնապները, որոնք իր ամենօրյա մղձավանջներն էին, ու ա՛լ անգիտակցորեն, անասնականորեն, բնազդորեն ապրելով կյանքը, իր գեղեցկորեն կահավորված անձնականներուն խորհրդասքող թերաստվերին մեջ պատցնելով իր ուրվային ու կմախաձև սիլուեթը, տրտում, լուռ, մտախոհ։ Իր միակ բարեկամը, հավատարիմ Մերկերյանը, երբեմն կուգար իր ոչանքին միօրինակությունը խզելու, իրական կյանքին քաշելով զինքը, հին հիշատակներու պրպտումով իր հոգին ցնցելու, սիրտը, փղձկեցնելու համար։

Սակայն, մեծ ծախսերը, որոնց ենթարկված էր հիմա ամիրայական պյուտճեն, շուտով վտանգեցին զայն, այն աստիճան որ տոքթորը երկար վարանումներե հետո վերջապես կալված մը ձեռքե հանվելու անհրաժեշտությունը հայտնեց մամային։ Մաման նախ ըմբոստ շարժում մը ըրավ, զավկին կրկնակի պնդումներուն վրա՝ անմիջապես տեղի տալու և վաճառման ձևակերպությունները լուռ ու մունջ համակերպելու համար։ Մարկոս ամիրային մեծ հարստության հետին բեկորները փչանալու վտանգին մեջն էին։ Երեք հարյուր ոսկիի գումար մը անցավ Արշակի ձեռքը։ Եղանակը ամառ ըլլալով, տոքթորը օդափոխություն մը անհրաժեշտ դատեց մասնավորապես մամային համար։ Մաման մերժեց հեռանալ իր հանդարտ անկյունեն, բայց արգելք չեղավ տոքթորին և Սոֆիին, որոնք ամիս մը գացին վերին Վոսփոր անցուցին, անխընա դրամ մսխելով, բոլորովին վիպական պերճությամբ մը շրջապատելով իրենց կենակցությունը, օդափոխության գացող հարուստ դասակարգին ուշադրության և խոսակցության առարկա դառնալու աստիճան։

Աշնան սկիզբը, տոքթորը և մանկամարդ աղջիկը գյուղ դարձան։ Մաման պագավ երկուքն ալ։ Սոֆիին մայրը լալով աղջկանը ճիտը ինկավ, երբ առանձին զիրար տեսան անոնք։ Սոֆի, հեղակարծ խղճահարութենե մը ցնցված, թողուց որ խեղճ կինը գգվե, համբուրե զինքը։ Հեկեկանքները անոր կուրծքը կպատռտեին և ատեն-ատեն դժնդակորեն կրսեր. «Ա՜խ, զավա՜կս, զավա՜կս, ասոր վերջը ի՞նչ պիտի ըլլա... հալիսը ի՞նչ կրսե...»։

Սոֆի, սթափելով, ինքզինքը ազատեց մորը դեռ կենդ բազուկներեն, որոնք իր նիհար իրանը կսեղմեին. «Օ՜ֆ, նորեն ի՞նչ խենթ բաներ կրսես, մայրիկ...» Ու հեռացավ գնաց։

Տոքթորը մակույկ մը գտնց, իրիկունները պտույտներ կատարելու համար Ոսկեղջյուրի վրա։ Երբեմն մաման հետ կառնեին։ Շատ հեղ, անոնք մինչև Քեհատհանեի խորերը կերթային և լուսեները վառվելեն շատ հաքը տուն կդառնային, թև թևի։

Աշնան վերջալույսի հանդարտ ու աղվոր իրիկուն մը, տոքթորը և Սոֆի մակույկեն ելան՝ Գարա Աղաճի ափունքին վրա պըտտելու։ Մարդ չի կար։ Դիմացի եղերքին վրա մենավոր ապարանքներ, գոց վանդակափեղկերով, կոնակնին լերան տված կկենային, մթնշաղի երկար ու գորշ ստվերներուն մեջ թիրոլյան յուզանկար-պատկերի մը մտերիմ երևույթովը։

Սովային բաղերը կարմիր խոլ ոլորտներով կսավառնեին մաները ալիքներուն վրա, կառաչներ արձակելով։ Հեռուն, աղյուսի գործարաններու հնոցները մուխի հոծ և մութ գարգմանակներ կձգտեին երկարել օդին մեջ։ Զույգը կպտտեր, աղդված բնության խորհուրդեն, դիտելով բոլորի համայնապատկերը, այնքան այլազանակ, որքան խորհրդավոր։ Եղերքին շատ մոտեն կքայլեին։ Երիտասարդը երբեմն կծռեր, քար մը կառներ և հորիզոնական նետվածքով մը շորս-հինգ ալիքի կատար մեկ անգամեն կծակեր։ Սոֆի, «պռավո՜» մը կշշնջար, ինքն ալ փորձելով ու չհաջողելով։ Գահ մը հասած էին դարատափին վրա, տեղ մը, ուր եզերքին հողը կամաց-կամաց փլչելով գրեթե խոռոչ մը ձևացուցած էր։ Մբռնելով միայն կարելի էր այդ խոռոչին ներքին մասը տեսնել, ալիքներուն բախումը հետզհետե խորունկցուցած ըլլալով զայն։ Հանկարծ ստվեր մը ելավ այդ փոսեն ու եզերքին վրա ցցվեցավ։ Այդ անակնկալ երևույթին ի տես, երիտասարդը և աղջիկը խրտչեցան։ Ցնցոտիներով ծածկված երիտասարդ մըն էր, գլուխը բաց, խովացած մազերով, որոնք մինչև աչվընները կիջնային։ Ոտքը բորիկ էր։ Նողկալի և արգահատելի բան էր։ Շրջագայողները դեռ երկու քայլ հեռու էին իրմե ու իր առջևեն պիտի անցնեին. սպասեց ու նայեցավ, պիշ ու ահարկու նայվածքով. Սոֆի մեռելի գույն առավ. տոքթորը դողաց, առանց գիտնալու թե ինչու։ Սոֆի մեքենական շարժմամբ մը բռնեց երիտասարդին թևը «օ՜հ, օ՜հ» մը ընելով։ Անցան։ Մարդը չշարժեցավ տեղեն, բայց զույգին հետևվեցավ պիշ ու ահարկու նայվածքովը։

— Մակույկ նստինք, մակույկ,— մրմնջեց աղջիկը պաղատանքան ու սարսափահար ձայնով մը։

— Բայց ո՞վ էր այս մարդը,— հարցուց տոքթորը ետին դառնալով և մարդուն նայելով, որուն հիմար ու կատաղի սևեռումը նորեն դողացուց զինքը,— ի՞նչ գեշ նայվածք է. ո՞վ էր, ճանչցա՞ր, Սոֆի։

— Չէ՛, չէ՛, չճանչցա... բայց երթանք, մակույկ երթանք, կաղաչեմ։— Արդեն մակույկին հասած էին, մեջը նետվեցան ու ճամփա ելան։ Սոֆի, դեռ դժգույն և դողդղահար, ետին դարձավ եղերքին ուրվականը նայելու։ Ան դեռ հոն էր, խավահեր գլուխովը, խենթ ու սարսափելի նայվածքովը, անշարժ և սպառնալից։

— Համբի՛կ,— մրմնջեց աղջիկը, ակռաներուն մեջեն։— Ո՛հ, ինչ եղեր է, աստվա՜ծ իմ։

Եվ մակույկը՝ մթնշաղի ա՛լ բոլորովին գորշացած ստվերներուն մեջեն սահեցավ գնաց, մինչ դարատափին վրա տեսիլքը կը մնար անշարժ, իր ահավոր աչքերուն շանթովը կարծես մինչև ետքը հալածելով երկու սիրահարները...

Դ.

Տարի մը անցած էր հորմեհետե Սոֆի և մայրը ձգած հեռացած էին իրենց խոնարհ տնակը՝ Մարկոս ամիրային մեծափարթամ ապարանքը փոխադրվելու համար։ Այս մեկ տարվան միջոցին աղետալի փոփոխություններ առաջ եկած էին ձկնորս Թումիկի տան մեջ։ Հոռոփ հանըմ գիշեր ցորեկ անդադար հսկեր էր զավկին սնարին մոտ, անոր զառանցանքները, ջղաձիգ պրկումները ու ոստումները ջանալով ամոքել իր մայրական տաք արցունքներուն և գգվանքներուն տակ, վասնզի տոքթոր Մարկոսյանին՝ տրամաթիկ պարագաներու տակ ձգել փախչելեն ետքը, խեղճ կինը չէր համարձակած ուրիշ բժիշկներու օգնությանը դիմել՝ զավակը դարմանելու համար։ Իբրև միակ դարման՝ թաղին մեջ համբավավոր աղոթող Թեպեր տուտուն—որուն հրաշագործությունները մեկե ավելի էին—կուգար ամեն իրիկուն, մթնշաղին, հիվանդին անկողնին քով ծունկի վրա կտոտոզվեր և իր թուլցած կզակովը անվերջանալի աղոթքներ կմրթմրթար Համբիկի գլխուն, մինչ քիչ մը հեռուն Հոռոփ հանըմ, ոտքի վրա, ձեռքերը իրարու կցած, աչքերը դեպի երկինք, «ա՜խ, սուրբ աստվածամայր, դուն օղորմիս»-ի նման մաղթանքներ կմռլտար շարունակ։

Գիշերները, Թումիկ տուն կդառնար գինով, և գլուխը պահ մը հիվանդին սենյակեն ներս խոթելե և «թոհաֆ, աս շոճուխը ի՞նչ էղավ» մը մրմռալեն հետո կերթար կիյնար իր խշտիկին վրա։ Համբիկին եղբայրը, Գարագ, արդեն չհետաքրքրվեցավ իր եղբոր հիվանդությամբը։ Մինակ իր հավիտենական դիտողությունը ըրավ, հորը երեսն ի վեր.

— Պալխճությունը կե՞շ զենաաթ էր քի դպրոց դրիր, շարշի հանեցիր աս զավալլրն, նա՜հ, նայե ի՞նչ էղավ. դուն, էս, նայե՛ պան մը կըլլա՞նք կոր...

Քիչ-քիչ, գուցե Թեպեր տուտուին հառաչալից ու սրտաբուխ աղոթքներուն ուժովը, Համբիկ հանդարտեցավ. զառանցանքները դադրեցան, աչքերը բացավ ու նայեցավ՝ տարտամ ու հիվանդ նայվածքով մը, սկսավ ուտել մորը տված կերակուրները. միայն խոսելու կարողությունը կպակսեր. կցկտուր, միավանկ բառեր կարտասաներ տխուր և շնչասպառ շեշտով մը։ Երկար ատեն տեղ մը սևեռված կնայեր. հետո կսթափեր աչքերը թարթափելով. շատ քիչ կպատահեր, որ գիշերները քունեն ընդոստ արթննալով՝ «պագա՜վ, պագա՜վ» բացագանչեր։ Այս բացագանչության ոչ ոք կըրցած էր ոևէ մեկնություն տալ, ո՛չ Հոռոփ հանըմ, ո՛չ ալ իր դրացուհիները։ Մինակ, աղոթող Թեպեր տուտուն կրցած էր միսթիկ բացատրություն մը տալ հեղինակորեն.

— Քա յավրո՜ւմ, սատանան փորն է մտեր, ա՜ն է...

— Ա՛շկը քյոռնա,— անիծած էր անդիեն դրացուհի մը։

Վերջապես, օրին մեկն ալ ոտքի ելավ Համբիկ, կամաց-կամաց պտտեցավ պարտեզը, սևեռաբիբ երկար կասումներով իր երբեմնի բազմաշխատ ածուներուն առջև, որոնց գծագրությունը գրեթե բոլորովին անհայտ եղեր էր՝ անձրևի և քամիի հարվածներուն տակ։ Հոն էին դեռ հողասանտրը, ցնցուղը, բրիչը, ժանգոտած ու ծռմռկած, տխուր փլատակներ սնուցված վարդագույն հույսերու, ապրված խաբուսիկ հրճվանքներու։ Հետո, սենյակին մեջ, բազմոցին անկյունը կնստեր, լուռ ու մունջ, մտածկոտ, ապուշի պես։ Անկարեկիր կմնար մորը գգվանքներուն, զորս խեղճ կինը կշռայլեր զավկին՝ զանիկա մխիթարելու, անոր սևամաղձոտ մտածումները ցրվելու համար։

— Գործի երթամ,— ըսավ օր մը Համբիկ։

Ու ելավ գնաց։

Վաճառատան մեջ իր ընթացքը, շարժվածքը, խոսվածքը բնավ վստահություն չներշնչեցին։

— Ես տղան ավրվեր է,—ըսին մյուս պաշտոնյաները իրարու։

Քանի մը օր այսպես շարունակվեցավ։ Ո՞ւր էր առաջվան աշխույժ, դյուրաշարժ, գործունյա տղան։ Վաճառատան հեռավոր անկյունները կքաշվեր լուռ և մտախոհ և գրեթե բան մը չէր ըներ։ Զորպաճին, որ անողոք ու աններող մարդ մըն էր, քանի մը հեղկծու և տմարդի հանգիմանություններ ուղղեց Երիտասարդին, որ անոնց խայթումին տակ պահ մը սթափեցավ՝ իսկույն նորեն իր առջի անշարժության մատնվելու համար։ Վաճառատան մեջ հասկըցվեցավ որ Համբիկ անծանոթ և բարոյական հիվանդությամբ մը կտառապեր։

— Ճամփա տուր, մեր գործին չի գար,— ըսավ Զորպաճին իր առաջին գրագրին, որ շաբաթ գիշեր մը կանչեց Համբիկը և իր այլևս հոգ ավելորդ ըլլալը հայտնելով՝ ամսական մը դրավ ափը ու ճամփեց։

Համբիկի դեմքը ոևէ վրդովում մը շարտահայտեց, երբ վերջնականապես դուրս ելավ այդ վաճառատունեն, ուր մտած էր ապագայի ոսկեղեն հույսերով, ուր շինած էր մեծ-մեծ ծրագիրներ։ Մտածկոտ և ինքնաշարժ ելավ գնաց, առանց ետին դառնալու, առանց շուրջը եռացող ամբոխը տեսնելու։ Կյանքի գործունեության դոնեն դուրս վռնդված էր՝ ա՛լ անկեց ներս ոտք չկոխելու համար, աղջկան մը արհամարհանքին տակ ջախջախված հեք տղան։ Իր սև ու աղվոր աչվքներուն մեջ աշխատության հուրը չէր որ կվառեր։ անդրաշխարհի անորոշ փայլեր ունեին անոնք։

Համբիկ մորը տվավ իր աշխատության վերջին վարձքը, զոր խեղճ կինը առավ աչքերը արցունքներով լեցուն։ Տղան անտարբեր և անշահախնդիր ձևով մը իմացուցած էր իր ճամփվիլը։

— Ա՜խ, օրդի, ի՜նչ պիտի ընենք հիմա,— կհեծեր Հոռոփ հանրմ, ծնկվընները ծեծելեն։

Այս աղեկտուր տեսարանեն չզգացվեցավ ընավ Համբիկ. պարտեզ ելավ՝ կորսված սիրո հիշատակովը կենդանի վայրերը թափառելու, իր հաճախանքներովը տառապելու համար։

Զկնորս Թումիկ, որուն շահածը բան մը չէր և չէր բավեր ընտանիքին ապրուստին, մինչև առտու հառաչեց՝ իրենց գլխուն եկած նյութական այս նոր աղետին մտածումեն։ Մարդը ծերացած

էր ալ ու կորաքամակ։ Ալքոլին ու ծխախոտին չափազանց գործածութենեն դժվարաշնչություն գոյացած էր, կուրծքը կխժար տաժանելի հևքով մը։ Գիշերները անկողնին մեջ կպառար, կզառանցեր։

Եվ քանի իր տկարությունը ավելնար, ու թշվառությունը սաստկանար, նախկին ամիրաներու պատմություններն ալ այնքան նոր զարկ, նոր թռիչ կստանային։ Իր ասպարեզին փայլուն թվականները այդ ամիրաներուն շրջանին հետ սերտորեն զոդված էին։ Անոնցմե ամենեն զորավորներուն հետ խոսած էր։

— Հոռո՜փ,— կըսեր բազմոցին անկյունը փլված, աչքերը կես գոց, կես բաց,— քա՛ էս օղորմած հոգի Ճեզայիրլի ամիրային հետ ճակատ ճակատի կեցած մարդ եմ, Մարկոս ամիրան գեղարնե «Թումիկ» կհարցներ... Կելկելներուն խոնախը տունիս պես կմտնայի, կելլայի... հե՜յ կիտի կյունլեր, հե՜յ... ատանկ մարդը ասանկ կըլլա՜ էղեր, վա՜խ, վա՜խ քեզի, Թումիկ...

Հարկ եղավ որ Հոռոփ հանրմ, որ հակառակ կրած տառապանքին, դեռ ուժը կուժը տեղը կին մըն էր, տախտակ սրբելու, լաթ լվալու երթար ասոր տունը, ընտանիքը անոթութենեն փրկելու համար։ Համբիկ սկսած էր Հ... գյուղին ամայի փողոցները պտտիլ, պատերու տակե կամաց-կամաց քալելով, սաստիկ մտախոհ, աչքը վայրահակ։ Խենթի պես խույս կուտար երբոր դիպվածով իր ընկերներեն մեկը դեմը ելլար։ Մոտակա լեռներն ու հովիտները իր սիրական ճեմավայրերը եղան։ Շատ անգամ, առտուն կանուխ դուրս ելլալով՝ գիշերը ուշ ատեն տուն կդառնար։ Մայրը ամեն ճիգ թափեց համոզելու իր որդին որ ուրիշ գործի մը հետամուտ ըլլա։ Անոր թախանձագին հորդորներուն կա՛մ համառ լռությամբ մը կպատասխաներ, կա՛մ ուսերու ցնցումով մը։ Տըրտությամբ մը կպատասխաներ, կա՛մ ուսերու ցնցումով մը։ Տըրտունջի մեջ կյանքի պայքարին սրբազան հուրը մարած էր, գիտակցության ոգին մեռած։ Այլևս անիկա անդամալուծված էությունն մըն էր, սեռուն մտածման մը հետամուտ, աշխարհի իրերու բարցաձակ մոռացումովը։ Իրականապես ոչ ոք կրցավ հասկնալ Երիտասարդին այս ցավալի վիճակին շարժառիթը։ Իր ընկերներեն ոմանք միայն պահ մը կասկածեցան, թե արդյոք Սոֆիին հեռացո՞ւմը առաջ բերած էր այդ բարոյական ու մտավորական քայքայումը։ Մնաց որ, մտքերը շատ քիչ զբաղեցան Համբիկի վիճակով և թողուցին որ ան իր կյանքը անցունե իր հասկցած եղանակով։ Մինակ մայրը չէր մոռնար ատիկա, ցորեկները օտարներու տունը աշխատած ատեն անձայն, անշշուկ արցունք կթափեր

«վա՜խ, օրդիս» մրմռալով։ Թումիկ, երբեմն, իր կնոջը անմխիթար կերպարանքին առջև միայն իր անտարբերությունեն սթափած, «թոհ՜ֆ, աս չոճուխը ի՞նչ էղավ» մը կմռլտար։

Շատ չանցած սակայն ձկնորսին տան մեջ ուրիշ փոփոխություններ առաջ եկան։ Գիշեր մը, երբ Հոռոփ հանըմ, օրվան չարչար դատանքեն հետո, նստած իր զավկին ցավովը կորոճար, հանկարծ իր էրկանը բարեկամներեն քանի մը հոգի ներս մտնալով՝ առանց ոևէ հառաջաբանի մեկենիմեկ ըսին.

— Քա Հոռոփ, հայտե էլ ժամ էկուր, Թումիկը պիրտեն-պիրտ պան մը եղավ հոն տարինք։

Խեղճ կինը վեր ցատկեց լեղուն կապկապված, չկրնալով իր երկյուղները բանաձևել. «Պե՞ ճանըմ քալե՜» ըսին ձկնորսները և Հոռոփ հանըմը առջևնին ձգելով տարին ժամ վազնիվազ։ Արդեն մութցած էր գրեթե։ Ժամկոչը բացավ ժամուն դուռը. ձկնորսները շիտակ եկեղեցիին նկուղը մտան, ժամկոչեն մոմ մը առնելով։ Անդընդախոր տեղ մըն էր, խոնավ և ցուրտ։ Վար իջան քանի մը լպրծուն սանդուխներե։ Քանի մը քայլ անդին կեցան, ճաղի մը առջև, ծածկված վարնոց և հին թավիշե ծածկոցով մը։ Հոռոփ հառնըմ, պապանձած, մեքենաբար կնայեր։ Ձկնորսներեն մեկը անկեղծ հայտարարություն մը ըրավ հոդ, տխուր եղանակով մը։

— Հոռոփ,— ըսավ,— Թումիկին հետ նստած էինք Քյոռ Նիքոլիին մեխանան, մեյ մըն ալ ճիկարա խմած ատենը կըռտ-կըռտ պան մը էղավ պողազը։ Ի՞նչ կըլլաս կոր, ի՞նչ կըլլաս կոր ըսելնուս չմնաց, Թումիկ պաշաշաղի ինկավ։ Հեմեն վրան հասանք, վերցուցինք. նեֆես չի կար, կոնակնիս առինք էզախանեն վազցուցինք. հոն հեքիմ մը նայեցավ. ըսավ քի մեռեր է. մենք ալ առինք ժամ պերինք... ի՜նչ ընենք, քուրուկ, ամենուս ալ գլխուն պիտի դա աս փորձանքը, հոգդ մ՚ըներ։ Հե՜յ զավալլը Թումիկ, Ճեզայիրլի ամիրային խոսքը պերանը մնաց։

Մոմին լույսը՝ այդ թանձր ու անդորր խավարին մեջ օձի լեզվի պես կերկննար, սուր ծուխ մը արձակելով. անոր տակար ու թաղմանական լույսին մեջ ձկնորսի բիրտ, արևահար, պղնձագույն դեմքերը քստմնելի ծամածռումներ կառնեին։ Ծածկոցին տակեն, մեռելին ոտքերը և գլուխը վեր կցցվեին։ Հոռոփ հանըմ խուլ հեծյուններ կհաներ կոկորդեն՝ քունքին մազերը քաշելեն. «վա՜խ, մարդս, վա՜խ»։ Ձկնորսին մեկը մարդասիրաբար վեր առավ ծածկոցին մեկ ծայրը՝ ձկնորսին դեմքը ցուցնելով կնոջը։

նույնությամբ մեռեր էր Թումիկ, առանց մկաններու և դիմագծերու այլայլության։ Կիսաբաց աչքերեն բիբերուն լույսը կերևար դեռ։ Տխուր չէր։ Երջանիկ ու սփոփարար մտածման մը պահուն շանթահարվեր էր։ Ամիրաներուն հիշատակին տեսակետովը՝ եղածը անդարմանելի կորուստ էր։ Հ.. գյուղին մեջ Թումիկը վերջին մարդն էր, որ փողոցե փողոց, գինետունե գինետուն կպտրտցուներ լուսահոգի ամիրաներուն մեծագործությանց պատմությունները, պանծացնելով, փառավորելով զանոնք իր ականատեսի անձնական վկայություններովը, զորս ոչ ոք կհամարձակեր ժխտել։ Իրեն հետ՝ վերջնական հանգստության և մոռացումի կուխտվին Մարկոս, Ճեզայիրլի, Կելկելօղլուն և մյուս ամիրաները։

— Վա՜խ, մարդս, վա՜խ,— կողբար Հոռոփ հանըմ, էրկանը դեմքին վրա ծռած։

— Է՜յ, կօգտե,— պոռաց դուրսեն ժամկոչը։

— Հայտե՜, հայտե՜, կօգտե, Հոռոփ,— ըսին հանգուցյալին արհեստակիցները քաշելով այրիին թևեն, որ չէր ուզեր այդ դիակեն բաժնվիլ։ Բռնի դուրս հանեցին։ Ու խեղճ կինը ձկնորսի մը ընկերակցությամբ, հեկեկալով, հեծեծալով տուն գնաց։ Մինչև կես գիշեր լացավ։ Համբիկ, հորը մահը իմանալով, հանկարծակիի չեկավ, մինակ, ավելի խորունկ մտածեց ու պարտեզը պտտեցավ մինչև լույս։ Գարագ այն գիշերը տուն չեկավ. գինետան մը մեջ, գինք մխիթարող ընկերակիցներե շրջապատված, օղիի գավաթներով հորը սուգը տոնեց։

Հետևյալ օրը Թումիկը անշուք թաղումով մը թաղեցին։ Մեռելին ծախքը Աղքատախնամը ըրավ, վասնզի հանգուցյալին գրպանեն 5 ղրշ. միայն ելած էր։

Համբիկ և Գարագ հորերնուն դագաղին հետևեցան քանի մը ձկնորսներու և նավավարներու հետ։ Թաղումեն ետքը բոլոր հուղարկավորները, բացի Համբիկեն, գինետուն մը մտան՝ առջի գիշերվան մեռելատան խրախճանքը շարունակելու։

Ձկնորսին ընտանիքին գլխուն եկած այս երկրորդ դժբախտությունը վերջինը չեղավ։ Այդ ձմեռ սաստիկ ցուրտ տիրեց և առատ ձյուն տեղաց։ Տանիքին վրա օրերով մնալով, ձյունի դեղեր՝ արդեն խարխուլ այդ շենքին ուղեծուծը թափանցեցին, հիմերը վրատանգեցին։ Գիշեր մը տանիքեն մեկ մասը փլավ մեծ շառաչմամբ։ Բնակիչները զարհուրանքով արթնցան։ Ձյունի սառած կույտեր սենյակին մեկ կողմը խափանած էին։ Առտուն տեսնվե-

ցավ, որ այլևս անկարելի էր բնակիլ այդ տան մեջ։ Հոռոփ հանդամ, ա՛լ ճարահատած, Աղքատախնամին դիմեց, խնդրելու համար որ պատսպարվելու տեղ մը տան իրեն։ Գեղին մեջ մեկ քանի ուրիշ մեծ շենքեր, որոնք շատոնց լքված էին, հիմա կծառայեին իբրև աղքատներու պատսպարան։ Շատ գյուղին էր անմիջապես անոնցմե մեկը փոխադրել տալ խեղճերը։ Հոռոփ հանդամ բավական արցունք թափեց մինչև որ Աղքատախնամի մեկ քանի անդամներուն աղիքները շարժեցան։ Նորեն, փոխադրությունը անմիջապես չեղավ սակայն։ Կարգ մը ձևակերպություններ, քանի մը ստորագրություններ, հետին վարանումներ ստիպեցին Հոռոփ հանդամը, որ երեք չորս օր ձյուներուն վրա պառկի, բացօթյա սենյակին մեջ, մրրկալի, սառնաշունչ եղանակին։ Հետո վերջապես փոխադրվեցան գյուղին Ս... թաղը, ամայի փողոց մը, հին շենքի մը մեկ սենյակին մեջ։ Ատանկով բոլորովին պարպվեցավ Մաթոս ամիրային գետինը. խրճիթը փլավ բոլորովին, շրջակա ցանկապատը խարխլած ինկավ։ Եվ այնտեղ, ուր քառորդ դար առաջ ճոխ ու աղմկալի ապարանք մը կկանգներ, շքեղորեն հարդարված պարտեզով մը շրջապատված, մահացու և տրտմական ամայությունը տիրեց այնուհետև։

Սակայն, նոր տուն փոխադրվելով, ձկնորսին կնոջը թշվառությունը ոևէ մեղմացում չունեցավ. ընդհակառակը, նորանոր ցավեր ավելցան։ Գարագ, որ հորը մահվամբ ինքզինքը բոլորովին ազատ զգաց, արհեստակցի մը աղջկանը սիրահարվելով, ուրիշ հակառակորդներու վրա իր գերադանցությունը և հաղթությունը ապահովելու համար, առևանգեց զայն և գնաց Պեյքոզ բերնակ

զատ ոչ ոք կրնար գիտնալ թե այդ մեկ բառին տակ ջախջախված կյանք մը, դիակ մը կար, որ իրն էր։

Ինչ որ ալ ըլլար, գյուղին մեջ խենթ նկատվեցավ Համբիկ.— նա՛, խենթ Համբիկը կանցնի կորը՝ սովորական խոսք մը եղավ, երբ տղան պատերուն տակեն, գլուխը կախած կամացուկ մը անցներ։ Ընկերները ա՛լ քովը չմոտեցան, երբ զինքը տեսան փողոցը կամ լեռը, վասնզի անոր թշվառությունը ա՛լ չհետաքրքրեց զիրենք։ Շատ-շատ, մեջերուն է՛ն չարաճճիները, հեռվե հեռու, սա անգութ բառը նետեցին իրեն ատեն-ատեն.

— Ծո Համբիկ, Սոֆիեն ի՞նչ լուր։

Այս անունին հնչումը կցնցեր զինքը. երազե արթննալու պես վեր կառներ գլուխը և շուրջը կնայեր, իսկույն նորեն իր ինքնամփոփումին մեջ թաղվելու համար։

Վրան գլուխը երթալով թափեցան թափթփեցան։ Օրն ի բուն իր պտույտներուն երեսէն կոշիկ չդիմանալով, մայրը վերջապես ստիպվեցավ համակերպիլ զավկին բոկոտն շրջելուն։ Համբիկ դժգոհության կամ բողոքի շարժում մը իսկ չըրավ։ Ցեսս ալ չդիմացավ իրեն, վասնզի մեկ քանի անգամ, անվերջ ու քրտնաթոր պրտույտներե հետո փոսի մը մեջ կամ բլուրի մը կողը քնացած միջոցին, գնչուի լակոտները կամացուկ մը գլխեն գողցան երկու երեք ֆեսերը, զորս մայրը իր լաթ լվացած տուներեն աղալանքով գտած էր։ Ասոր վրա, մայրը, հուսահատած, թող տվավ որ տղան գլխաբաց շրջի։ Բարեբախտաբար մազերը, առատ և խիտ, մեկ կողմեն մինչև ճակատը, մյուս կողմեն մինչև ծոծրակը արշավելով, գլխանոցի պակասը զգալի ընել չտվին։

Համբիկ մասնավորապես ծովեզերքները սիրեց։ Դարատափերու վրա ամայի խուռուշներ ընտրեց՝ ժամերով նստելու և ալիքին հավերժական խաղը դիտելու համար։ Խիճերուն վրա կամ մամռապատ խութերուն շուրջ ջուրին ոստումներն ու մրմունջը իր մտքին համար քաղցր, սփոփարար, գինովցնող երաժշտություն մը, հեշտալի պատկեր մը եղան։ Ջուրին այդ համանվագ ու մշտանման երգին մեջ իր ցավին սգումը լսեց։ Հետո, այս ծովեզերյա կյանքին բերմամբը, տղան քիչ-քիչ ուշադրությունը գրավեց ծերուկ ձկնորսներուն, ալիքի վեթերանները, որոնք իր հորը հետ ապրած էին և զանիկա ճանչցած իբրև իրենց վարպետը։ Բարի ու ողորմասեր, անոնք շատ հեղ ցորեկները կամ իրիկունները իրենց

նավակին մեջ կամ ծովեզերյա ցած և մութ կապելան կանչեցին— իրենց սովորական հավաքատեղին—զինքը մասնակից ընելու համար իրենց համեստ ճաշին։ Համբիկ նախ կասկածով վերաբերվեցավ, այդ հրավերին մեջ նոր վտանգ մը վախնալով, բայց հետո մարդոցը գթոտ ու բարի նայվածքներեն քաջալերված, մոտեցավ, նստավ և կերավ։

— Դուն մեր ողորմած հոգի Թումիկին տղան չե՞ս մի, կե՛ր, հելալ ըլլա,— ըսին մարդուկները։

Ծովի այդ միամիտ ու աննենգ հոգիներուն հետ գրեթե իր ամենօրյա շփումին բերմամբը, տղան հետզհետե տարվեցավ անոնց ընկերությանը, իր ինքնագիտակցության և սթափումի ցանցառ բոպեներուն օգնելու համար անոնց գործին, կարթերու պատրաստությանը, որդերու հավաքումին, փոքր ուռկաններու արձակման կամ քաշումին։ Եվ եթե Թումիկ հողին տակեն պահ մը գլուխը դուրս հաներ ու տեսներ իր զավակը ծովուն վրա, ձուկերուն հետ, անշուշտ պիտի զարմանար ժառանգականության ուժին վրա, որ, հակառակ իր այդ տղան ուսումնական ընել ուզելուն, զանիկա դարձյալ հորը ճամփուն կդարձուներ, ձկնորս կրներ։

Օր մը, ինչպես եղավ, մեծ եղբայրը՝ Գարագ, Հ... գյուղ իր հին բարեկամները տեսնելու գալով, երբ իմացավ որ եղբայրը ձկնորսության սկսած էր.

— Հա շոյլե՛,— պոռաց,— էս չէի՞ ըսեր քի դպրոցեն, չարշրեն խեր չի կա, պալխճություն, պապա՛մ, պալխճություն... թող էրթա տե հիմա մարդ ըլլա...

Ու իրիկուն մը, ծովեզերքին վրա, հանկարծ հանդիպեցավ անոր, որ իր երիտասարդությունը, իր ապագան, իր կյանքը ջախջախած էր։ Սոֆին էր՝ իր սիրահարին հետ։

Մակույկը, իրիկվան մառախուղներուն մեջ, շատոնց անհայտ եղավ, բայց Համբիկ կկենար հոն, եզերքին վրա, դեռ մտքովը դեռևելով անոր զոր, ափսո՛ս, կսիրեր տակավին, կսիրեր իր առջի սիրույն բովանդակ խանդովը ու հիմակ առաջվընե ավելի, ինչպես խելագարները կսիրեն իրենց մտածումին միակ ու վերջնական առարկան։

Հետո տղան նստավ ափին վրա, երբոր ա՛լ իրիկվան ըստվերները կխտանային՝ կապարի երանգներ տալով ալիքներուն։ Ու մութին մեջ, ու տրտում ամայության մեջ, խենթը լացավ իր

սիրուհիին ստվերին ետևեն, զոր տակավին կկարծեր տեսնել խաղարին անթափանց հեռավորություններուն մեջ։

— Պագա՜վ, պագա՜վ,— կմրմնջեր։

. . . . . .

Օգոստոսի հրատապ օր մըն էր։ Համբիկ, Գարա Աղաճի ձրկնորսներուն հետ փորը կշտացնելեն հետո, մակույկով մը դիմացի եզերքը անցավ։ Ջով ու ամայի ստվերներու սիրահար, շաբաթը մեկ քանի անգամ այդ ճամփով կերթար մինչև Սիլահտար Աղայի հովանուտ ու խաղաղ ծմակները՝ մրափելու կամ քնանալու բնության աննենգ ու գրգռանուն ծոցին մեջ, մարդերեն ու աղմուկներեն հեռու։ Հովտին արևմտյան բլուրներուն կողերը ծառախիտ պուրակներ են տեղ-տեղ։ Մեծաբերձ բարդիներու և հաստատուն կաղնիներու զովասուն շուքին տակ կաճին կարճուկ թուփերու անտառակներ՝ որոնց անդորրությունը կխանգարվի ճագարներու գաղտնապահ ու վախկոտ ոստումներեն և խլուրդներու սմսեղուկ պտույտներեն։ Համբիկ մասնավորապես կսիրեր բլուրը, որուն կողին վրա պալատ մը կբարձրանա և որուն սեպ դարուվարը թուփերու, ծառատունկերու մթին խառնամառնություն մըն է։ Այն ճարպիկությամբն ու դյուրաշարժությամբը, զոր բնությունը կուտա իր ծոցին մեջ ապրողներուն, տղան կսողոսկեր, կմագլցեր, կցատկեր մինչև որ հասներ բլուրին բարձունքը, հոն փռվելու համար խոնավ մարմանդին վրա, ծառերուն բացատներեն դիտելով գետակը, որուն արծաթե ժապավենը կցոլցլար վարը արևին ճառագայթներուն տակ, օձապտույտ գալարումներով։ Մինակ այծերը կհամարձակեին մինչև մոտերը գալ՝ թարմ խոտ ճարակելու, իրենց մորուսավոր դունչը երերցնելեն։ Համբիկ հազիվ կտեսնար երկինքին կապույտը, տերևներուն խիտ դրասանգումներեն։ Եզնակինքին կապույտը, տերևներուն խիտ դրասանգումներեն։ Եզնաքարշ սայլերու սուր և նվագավոր կռինչները մերթ կուգային օրորել մենասերին խոկմունքը, կա՛մ բլուրին կատարեն, ուր լայն արահետ մը կբացվեր, կա՛մ վարեն, հովտին ճամփաներեն։ Օգոստոսի ջերմությունը չէր կարող թափանցել այդ պատնեշեն ներս, վանքի հավիտենական խաղաղ թերաստվերի մը մեջ կոթված։ Հոն, եկեղեցիի մը ձեղունեն կախված մենավոր ջահերու կնմանեին արևի անգաղտնապահ ճառագայթները, որոնք տերևներու ժանեկավորումներեն ու ոստերու խաչաձևումներեն սողոսկելով վար կմաղվեին ֆանթաստիկ բեկբեկումներով։ Մեծավայելուչ ու

սարսռալի բան մը կար հոդ։ Ատիկա էր որ իրեն կքաշեր, կհմայեր մարդերեն ու տերևն հալածված երիտասարդը։ Աչքերը գոց, գլուխը գետնին, մտիկ կըներ ան բնության մեծ ու ահեղ շնչառությունը, շտեսնված, անծանոթ, անսահման կյանքերու հեռավոր հնչը։ Իր օրորն էր այդ հնչը, իր գինովությունը, իր մխիթարանքը, միակ անուշ ձայնը, որուն մեջ նենգության խաղեր չըկային, որ շիտակ իր հոգիին կխոսեր, իր ցավերը կբալասաներ, իր մտամոլորանքները կանդորրեր։

Այդ օրը, Համբիկ պուրակին բարձրերը ելավ, կառանցիկ արահետին այնքան մոտ, որ իր պառկած տեղեն կրնար լսել հայհոյները, պոռվտուքները սայլավոր գեղացիներուն՝ խառնված բոժոժներու միօրինակ երաժշտության մը։ Բլուրին հեռավոր անկյուններեն հեղակարծ շշուկներ կբարձրանային մերթ, ճագարներու խղդուկ ճիչեր, հնքոտ սիրվտուքներու տենդալի գալարումներին արձակված։ Կենդանային աշխարհը կարգասավորեր հոդ, լռիկ մնջիկ, գաղտնի աշխատանքով մը։

Համբիկ կնիրհեր։ Ատեն-ատեն, աչվրները կբանար, ծառերուն բացվածքներեն գետակին ալյակներուն պսպղումը դիտելու։ Արևը կխոնարհեր, հանդիսավոր ճաճանչումով։ Հանդիպակաց բլուրներուն ստորոտը հովիվները իրենց հոտերը կհավաքեին քիչ-քիչ։

Մեկենիմեկ, Համբիկ թոթվրվեցավ, պառկած տեղեն աչվրները բացավ խոշոր-խոշոր, ելավ նստավ, չորսդին նայելով՝ անծանոթ վանքի մը երկյուղեն կարծես։ Ձայն մը զարկած էր ականջին, բոլորովին տարբեր սայլավարներու կոպիտ պոռչտուքեն։ Ճամփուն եզերքեն կուգար, հոն վերը, շատ մոտ։ Խենթը դժգունեցավ։ Մազերը տակնուվրա, կուրծքը բաց, գլուխը կարկառած, մտիկ կըներ աչքերու անշարժ սևեռմամբ։ Հազիվ տասնըհինգ քայլ հեռուն, ճամփուն վրա երկու հոգի կխոսեին։

— Սոֆի՛,— մրմնջեց Համբիկ։

Ջվարթ ճիչեր, բացագանչություններ, ծիծաղներ։

Համբիկ, հուզումեն սիրտը բռնած մտիկ կըներ միշտ, կամաց-կամաց մագլցելով դեպի ձայներուն կողմը. թուփերու և մացառներու պատվար մը կար, որ զինքը կծածկեր։ Տղան կհևար։ Նստ չանցած, այնքան մոտեցավ ճամփուն, որ ա՛լ սկսավ որոշապես իմանալ փոխանակված խոսքերը։

— Սոֆի, մի՛ ըներ, կիյնաս։— կպոռար տոքթորին ձայնը։

— Չէ՛,— կըսեր աղջիկը,— չէ, չեմ իյնար, պետք է որ գոնե հովանոցովս քանի մը հատ թափեմ... շատ կսիրեմ այս պտուղը... ո՜հ, շատ համով է, տոքթոր, եթե ուտես... դուն ինքդ ծառին վրա պիտի ելլաս...

— Բայց, Սոֆի,— կպնդեր երիտասարդը,— շատ վտանգավոր է ատ ծառերուն մոտենալը, տես, անդունդին եզերքն են... ոտքդ սահելուն պես...

Տոքթորին ձայնը քիչ մը ավելի հեռվեն կուգար, աղջիկը ճամփուն եզրն էր։

— Չէ՛, չըլլար, գոնե քանի մը հատիկ կուզեմ... տոքթոր,— կպոռար ան ծիծաղելով,— եթե վար իյնամ՝ զիս կազատես... այնպես չէ՞... Շատ-շատ սա թուփերուն մեջ պիտի իյնամ...

Համբիկ այնքան մոտեցած էր, որ մացառներուն մեջեն կտեսներ աղջկան շրջազգեստին ծածանումը։ Երեք-չորս քայլ միայն հեռու էր անկե։ Ճամփուն եզրին վրա բարձրացող լուտասենիներեն (չեֆլենպիճ) մեկուն կուզեր հասնիլ աղջիկը և հովանոցի հարվածներով հատիկներեն թափել։ Հիմա, երիտասարդը կհաջողի տեսնել Սոֆիին դեմքը՝ հարդե կարմիր, լայնեզր գլխարկի մը տակ, որուն վրա կապույտ քող մը կծածաներ։

— Մի ըներ, խնդրեմ, մի՛ ըներ, Սոֆի,— կաղերսեր անդիեն տոքթորը, որ իբրև քաջասիրտ ֆավալիե թող կուտար որ աղջիկը այդ վտանգավոր փորձը ըներ, մինչդեռ ինք ճամփուն եզերքին մոտենալ իսկ չէր համարձակեր։

— Ես քեզի պես վախկոտ չեմ,— մռմռաց աղջիկը և իր հանդուգն փորձին ձեռնարկեց։

Մեկ ձեռքովը ծառին բունին կառչած, մյուս ձեռքովը հովանոցին նուրբ կոթովը սկսավ հարվածներ տալ վայրահակ ճյուղի մը, որ սև, կլոր հատիկներով ծանրաբեռնված էր։ Քանի մը հատիկներ ճամփուն փոշիին վրա ինկան։ Ուրիշներ վարի մացառներուն մեջ անհայտ եղան։

— Կօգտե, Սոֆի կօգտե,— պոռաց Արշակ, որ կշարունակեր հեռուեն դիտել մանկամարդ աղջկան այս խիզախ փորձը, հավնելով անոր նրբաձիգ հասակին այդ ծառացող աղվորությանը։

— Քի՛չ մըն ալ,— ըսավ Սոֆի։

Եվ ոտքերուն ծայրին վրա լարված՝ ավելի ուժով հարվածներ սկսավ տեղալ ճյուղին։

Մեկենիմեկ սրտաճմլիկ ճիչ մը լսվեցավ, ու Սոֆի անդունդին վար գլորեցավ։ Ոտքին տակ փխրուն հողը տեղի տված էր և աղջիկը՝ հավասարակշռությունը կորսնցնելով՝ ինկած էր։

Տոքթորը՝ սարսափահար և ձեռքերը գլխուն զարնելով՝ ճամփուն եզրը վազեց իր զոհին ջախջախված դիակը տեսնելու համար, բայց բոլորովին տարբեր տեսարանի մը ներկա եղավ։ Մացառներուն մեջեն խուվահեր գլխով, ցնցոտիներով ծածկված մարդ մը դուրս ելած՝ թևերուն վրա բռներ էր Սոֆին՝ անկենդան վիճակի մեջ։ Գլխարկը մացառներեն խլված էր ու վարսերը քակվելով՝ մարդուն թևերեն վար կթափեին։

Այդ անակնկալ երևույթին առջև, տոքթորը ափիբերան եղավ. անտառներու ո՜ր խորհրդավոր պահապանն էր այդ տարօրինակ էակը, որ անդունդներու վրա կհսկեր, կյանքեր կփրկեր այդպես։ Իր զարհուրանքին մեջ, ամիրային թոռը չէր հիշեր ծովեզրին մարդը, որ ակնարկովը այնքան սարսափ տվեր էր իրեն ու Սոֆիին։ Մացառներու մթին խորհուրդեն դուս ցցված, թևերուն վրա ունենալով նվաղած աղջիկը, անոր անշարժ, դժգույն ու չքնաղ դեմքը կդիտեր, հափշտակված ու խորոնկ նայվածքով։ Անձկության դըժընդակ րոպե մը ապրեցավ Արշակ։ Այդ այլանդակ ազատարարին կեցվածքը պատկառանք ու սարսափ կուտար միանգամայն իրեն։ Ան կշարունակեր մնալ աղջկան հայեցողությանը մեջ, անով հմայված, անով մոռցած ամեն բան, վիշտի ու զմայլանքի արտահայտությամբ մը։

Այդ կացությունը որքան ալ տևեց, տոքթորը չհամարձակեցավ ընդհատել զայն։ Հետո, տեսավ որ մարդուն աչքերեն քանի մը արցունքներ ինկան Սոֆիի դեմքին վրա։ Աղջիկը արտանունքը շարժեց, հառաչանք մը հանեց կոկորդեն ու աչքերը կամաց մը բացավ։ Բայց հազիվ բացած ու իր վրա հակող դեմքը տեսած, սարսափի աղաղակով մը նորեն գոցեց զանոնք, նորեն նվաղելով։ Այս անգամ Համբիկ սթափած, դուրս ելավ մացառեն, զգուշությամբ վեր ելավ զառիվերեն, ճամփուն վրա ցատկեց և շիտակ տոքթորին քալելով և աղջիկը անոր կարկառելով.

— Ա՜ռ,— ըսավ,— զոհդ, բայց նայե որ ուրիշ անգամ ավելի լավ պաշտպանես զինքը։

Տոքթորը, որուն այս ամենը զառանցանք կթվեր, մեքենաբար թևերուն վրա առավ Սոֆիին նուրբ ու անշարժ մարմինը,

բառ մը չհանելով բերնեն, դողդղալով այն սպառնական շեշտեն, զոր մարդուն վերջին բառերը առեր էին։

Համբիկ, այծի մը դյուրաշարժությամբը, անդունդը նորեն ցատկեց, ձեռքի շարժումով մը վերը ճամփուն վրա նետեց աղջկան գլխարկն ու հովանոցը և մացառուտներուն մեջ անհայտ եղավ։

Տոքթորը՝ հասկնալով, որ Սոֆի անմիջական դարմանի պետք ուներ, արագորեն իջավ կառանցիկ ճամփեն և մոտակա սրճարան մը փութաց, ուր աղջկան երեսին ջուր սրսկելով, բազկերակները շփելով, վերջապես հաջողեցավ սթափեցնել զայն։

Կես ժամ հետո Սոֆի կրցավ քալել մինչև գետափը, ուր մակույկ նստան։ Արևը մայր կմաներ՝ իր վերջին ծիրանի ճառագայթներովը ջնարակելով Սիլահտարի բլուրները։

Մակույկին մեջ, քով քովի նստած, շատ քիչ բառ կփոխանակեին անոնք իրարու հետ։

— Բայց ո՞վ էր ատ մարդը,— կկրկներ ատեն-ատեն տոքթորը.— տեղ մը տեսած եմ, բայց չեմ հիշեր թե ուր...

Սոֆի չէր պատասխաներ, բայց մեզմ կերպով մը.

— Ա՛ն էր, ա՛ն,— կհառաչեր։

— Ով ալ ըլլա, սակայն,— կշարունակեր տոքթորը,— կյանքդ անոր կպարտիս, Սոֆի...

— Անո՞ր, անո՞ր,— կհնձեր աղջիկը խեղդուկ կերպով։

— Բայց զարմանալի, զարմանալի բան էր,— կկրկներ երիտասարդը, դեռ այդ անակնկալ դեպքին տպավորությանը տակ գտնվելով եաին ու նայելով այն խորհրդավոր բլուրին, ուսկից այդ գրեթե գերբնական էակը երևցած էր։

Ու մտքեն կկրկներ այն մութ ու սպառնալից բառերը, զորս ան իրեն ուղղած էր.

— Ա՛ռ զոհդ, բայց նայե որ ուրիշ անգամ ավելի լավ պաշտպանես զինքը։

Հապա արցունքնե՞րը, որոնք կաթած էին անոր աչվերներեն աղջկան երեսին վրա։

— Առեղծված, հանելուկ,— կմտմտար ամիրային թոռը՝ դիտելով էյուպի բլուրները, որոնք մթնշաղի մշուշներուն եաին կըքողվին տակավ։

Հառաջիկա ձմեռը շատ լավ անցուցին երկու սիրահարները։ Շաբաթ օրերը գյուղեն կմեկնեին ու կերթային Բերա՝ ապերասանորեն ապրելու լկտի, շվայտ, շենշող կյանքը, որուն մասնավորապես սկսած էր հոգի տալ լվացարարուհին աղջիկը. բոլորովին թաթափած իր առջի ամոթլյած համեստությունը, իր շնորհալի ու հրապուրող համեստությունը, համարձակ, ծիծաղկոտ, շատըբույց էր հիմա։ Մայրահեղ պչրանք կդներ իր հագնվածքին, իր շարժվածքին մեջ։ Կարծես պզտիկուց ատանկ սորվեր, ատանկ մեծցեր էր ամիրայի ապականության մեջ։ Հավասարելու համար այն պերճ ու աղմկոտ միջավայրերու կարգ ու սարքին, ուր կառաջնորդեր զինքը ամիրային թոռը, Սոֆի անկարելի ճիգեր կթափեր, ծիծաղաշարժ ըլլալու աստիճան։ Քոնքորտիայի վրանքաց ներկայացումներուն համար հոգի կուտար։ Իր հաճույքներեն մեկը եղավ մեծ ու հռչակավոր բոզերու կյանքին ընթերցումը՝ Նանա, Սաֆո, Մարկրիթ Կոթիե։

Հեք աղջկան հոգիին փտախտավորման փուլերուն անկաբեկիր վկան եղավ ամիրային թոռը։ Քաջալերեց զանոնք, թե թռիչ անոնց, ու այդ արագ ու դյուրին վատասերումին տեսավավ

նար վերադառնալ։ Զեռքովը եղած էր ամեն բան։ Վեպը, զոր ապրիլ ուզած էր, վերջացած էր։

Այս եզրակացության երբոր հանգեցավ ամիրային թոռը, թափ տվավ իր շարք և անողոք բնազդներուն։ Իրեն համար, իր կյանքին մեջ, Սոֆիին դերը վերջացած էր։ Ուրիշ մը կամ ուրիշներ անոր հաջորդելու էին, նորին ու անծանոթին հրապույրովը։

Իր այդ մեղավոր զգացումներուն վայրագությունը շուտով արտացոլաց իր վարմունքեն, իր շարժումներեն, իր ձայնին շեշտերեն։ Սոֆի, որքան որ ալ վարժված ամիրայի այդ վիժածին բուռն ու բիրտ նկարագրին ու անոր անակնկալ ժայթքումներուն, իր սիրականին աչվրներուն մեջ արհամարհանքի անանկ տենդ մը զգաց, անոր շարժումներեն, խոսքերեն այնպես զզվանք մը, ձանձրույթ մը կռահեց, որ սարսափահար մնաց։ Անհանդուրժելի կերպով վեհ ու հեստ եղավ բժիշկը աղջկան հետ։ Իր խուցին մեջ անոր հետ առանձնացումները մեկենիմեկ դադրեցան։ Մբտերմական շեշտով արտասանված «Սոֆի»-ն, պաշտոնական շատ ցուրտ «օրիորդ»-ի փոխվեցավ, սրահին մեջ, տիկինին ներկայությանը, պոռոտ ու սնամեջ, բայց սիրալիր, վիճաբանությունները վերջացան։ Մարդատյաց ու խոժոռ եղավ Արշակ։ Օր մըն ալ ռեղանատուն իջնալը դադրեցնելով՝ հրամայեց Խաչոյին, որ ճաշը իր սենյակը բերե։ Մաման, հակառակ իր ցնորքին ու մտքին ընդարմացմանը, նշմարեց զավկին այս հանկարծական փոփոխությունը և պատճառը ուզեց հասկնալ։ Տոքթորը, որուն միտքը նորանոր ծրագիրներու հղացումովը կտնքար, շատ յուրջ և շատ խորհուն երևույթով մը հայտնեց մամային, թե բժշկական խորունկ ուսումնասիրությունով զբաղած էր և նույնիսկ շատ կարևոր գյուտի մը սկզբնավորությանը վրա կգտնվեր։

Այստեղ մայրը իր բովանդակ անբանությամբը զավկին երեսը նայեցավ հասկնալի բացատրություն մը ուզելու պես։

— Բժշկական նոր գյուտ մը, մա՛մա,— ավելցուց տոքթորը,— այսինքն ծանր հիվանդության մը դարմանը, որ մինչև հիմա չէ գտնված։ Ասիկա խոսքով չըլլար, մամա, շատ դժվար բան է. նայե, ճեննըրը ծաղկախտին դարմանը գտնելու համար երեսունըհինգ տարի և յոթը ամիս աշխատեցավ գիշեր ցորեկ, բայց կատաղության դարմանին համար քսանըյոթը տարի և լորս ու կես ամիս քրտինք թափեց...

Այս անուններուն ու մանրամասնություններուն առջև, մաման իր զմայլանքի տագնապեն բռնված նոթեն, իր փառքի հին փորձություններեն տանջված, խոշոր-խոշոր կբանար աչվրները։

— Քո՞վդ ալ ատոնց պես բան մըն է, զավակս...

— Հարկավ. բայց աշխատիլ կուզե, մամա, ծանր ուսումնասիրություններու կարոտ է և շատ ալ ծախքի...

— Աստվա՜ծ հաջողե, զավակս,— մաղթեց տիկին Մարկոսյան շոյելով ճեննըրի և Բասթյոռի այդ մրցակցին երեսները։

Շնորհիվ մամային անհամբեր և թուլբերան պարծենկոտությանը, բժշկական գյուտին այս առաջելը անմիջապես շրջանը գյուղին մեջ, ապուշներու բերանաբաց զմայլանքը շարժելով, թարթարենյան շարժումներու սիրահարներուն լեզվագարությանը թափ տալով։ Ամիրայի կուսակիցներու հետին թափթփուքները, այս մեծադղորդ լուրը մատերնին փաթթելով, հասած տեղերնին ամիրային թոռան փառապսակը հյուսեցին, անոր վարած ապերասան ու շվայտ կյանքը արդարացնել ջանալով կատարված կամ կատարվելիք մեծ գյուտին համար թափված աշխատությամբը, առարկելով մանավանդ, որ բոլոր մեծ մարդիկ տրկար կողմեր կամ երկրորդական թերություններ կունենային, որոնց պետք էր աչք գոցել։

— Ամոթ է մեզի ասանկ մարդ մը վար զարնել,— կպոռային,— ազգերնուս պարծանք է, ասանկներն են որ օտարին առջև երեսնիս ճերմակ պիտի հանեն...

— Արդեն հայը ե՞րբ իր մեջ երևցող արժանիքները գիտցած է գնահատել և վարձատրել,— կողբար ուրիշ մը,— հայուվայ ըսեր են նե սխա՞լ է...

Գյուտին լուրը երթալով մեծ համեմատություններ առավ. Հ... գյուղին սահմաններեն դուրս ելավ ան, պտտեցավ, զարդարվեցավ, ստանալով անանկ մանրամասնություններ, զորս գյուտին հեղինակն իսկ մտքեն չէր կարող անցնել։ Վերջապես, հանրային ու ազգային այնպիսի հանգամանք մը ստացավ, որ Արևմուտք լրագիրը, իբրև ազգային շահերու հետամուտ մեծադիր օրկան, հարկադրվեցավ տոքթոր Մարկոսյանի բժշկական ուսումնասիրությանցը մասին հակիրճ, բայց կուռ հոդված մը հրատարակել, նախ և առաջ խնամքը ունենալով իր խմբագիրներեն մեկը ղրկելու երիտասարդ բժշկին քով, ճիշտ ու որոշ տեղեկություններ քաղելու համար նույն ինքն հնարիչին բերնեն։ Արշակ, որուն հոգին

Ցնծար ասանկ երևույթներու և կացութիւններու առջև, քանի մը ժամ առաւ նստաւ խմբագիրը, իր կարծեցեալ գյուտին համար գիպվածաւ ընտրելով հիվանդություն մը—առանցքը իր աշխատության և հետազոտության—և գիտական բառերու և բացատրություններու տարափի մը տակ ջախջախելով իր ունկնդիրը և անոր շլացած տգիտությունը։

Մարգը նոթեր առաւ, շնորհակալություններ կմկմաց, գովեստներ թոթովեց և խոնարհությունները մեկնեցաւ, մինչ ամիրային թոռը ասդին խնդալեն կգալարվեր իր խուցին մեջ։

Ու հոդվածը երևցաւ, Գիտական Աշխարհեն վերնագրով։ Նախ բուն հարձակում մը եղած էր հայ բժիշկներուն դեմ, որոնց մեծագույն մասը կմեղանչեր իր ասպարեզին վսեմ կոչումին դեմ՝ զայն լոկ շահագործական տեսակետեն առնելով։ Սակայն մեր թարական ցանցառ երևույթներ կային, որոնց մեկն էր տոքթոր Արշակ Մարկոսյան։ «Ամիրաներու այս շառավիղը, կըսեր հոդվածագիրը, իր Ոսկեղջյուրի ապարանքին անդորրությանը մեջ ապաստանած, լոկ մնջիկ, գիշեր ցորեկ կաշխատի գիտության ամենավերջին բարձրություններեն մինչև ամենամթին խորությունները իջնելով, և ահա սկսած է արդեն իր տքնության արդյունքը ձեռք բերել առաջին հույժ կարևոր գյուտով մը, որ է խոշափոդի վտանգավոր հիվանդության մը դարմանը»։ Հոդվածը կվերջանար փքուռուց դրվատականով մը երևելի տոքթորին հասցեին, ազգային պարծանք, փառք, պատիվ, շքեղ և արդյունալից ապագա, մարդկության բարերար և այլն բառերով շաղվված։

Այս հրատարակությունը, որ թրքահայ առաջին թերթին մեջ էրնցաւ, մեծ տպավորություն գործեց։ Ամենուն բերանը տոքթոր Մարկոսյանին անունն էր և անոնք որ խոշափոդի հիվանդությունեն կտառապեին՝ սկսան ազատ շունչ առնել, և նույն իսկ ասոնցմե ոմանք մինչև Հ... գյուղ վազեցին՝ այդ նոր Բասթյոռեն իրենց ախտին բուժումը հայցելու։ Տոքթորը, որ երբեք չէր կարծեր որ մամային սպրդված միամիտ սուտ մը ատանկ ծանր համեմատություններ պիտի ստանար, համոզեց այդ խեղճերը թե գյուղը տակավին չէր կատարելագործած, բայց թե կատարելագործելուն պես իրենց կյանքը պիտի փրկեր նախ։ Մարդիկը լալով, պաղատելով, աղոթելով մեկնեցան։

Ա՛լ Հ... գյուղին մեջ դյուրին է երևակայել այս հոդվածին առաջ բերած շլմորեցուցիչ տպավորությունը. ամենեն թերահավատները, խոշոր-խոշոր բացված աչքերով, լրագրին այս տողերը կարդացին և պապանձեցան. իրենց համար, լրագրի մը խոսքը ստուգության վերջակետն էր, անառարկելի և անվերաքննելի։

— Տեսա՞ք հիմա,— կպոռային տոքթորին ձրի և շնչասպառ պաշտպանները,— ծո, հիշ իրավ չըլլա նե Արևմուտքը կրգրե՞... նայե՛ ինչ կըսե կոր, ազգին պարծանքը, փառքը, պատիվը... կեցցե՞ս, կեցցե՞ս ուրեմն տոքթոր Մարկոսյան....

— Բեք աղեկ ամա,— կառարկեր ողջամիտ մեկը անդիեն,— մեր գիտցածը աս է, որ առ տոքթորը աղջիկը թեր զարկած ամեն օր պտտելու կելլա, յազլըխ կերթա, չեմ գիտեր ի՞նչ կընե, ե՞րբ ժամանակ կգտնա կոր գյուտեր ընելու, թոհա՞ֆ բան, թոհա՞ֆ...

— Մարդ ըսածդ հե՛մ աշխատելու, հե՛մ զվարճանալու է,— կորամաբաներ ուրիշ մը։

Մինակ զինքը շատ մոտեն ճանչցող, իր մտքին ու հոգիին ունայնությանը խորապես ծանոթ բարեկամներն էին, որ չմարսեցին այս հսկայական սուտը։

— Ան՛, խենթին, օյինպազին մեկն է անիկա,— ըսին դյուրահավաններուն,— անոր բանը-գործը զվարճություն, անոր ասոր քիթին խնդալ է։

Բայց երբ Արևմուտքի մեջ այդ սուտին նվիրագործումը տեսան, այդ թերահավատներն ալ վայրկյան մը իրենց կարծիքներուն մեջ ցնցվեցան։

— Սա մեր գիտցած Արշակը,— ըսին իրարու,— գիտական գյուտ ըրած ըլլա՞, զարմանալի՞, տարօրինա՞կ բան։

— Է՛յ, ո՞վ գիտե,— ավելցուց ուրիշ մը,— աշխարհքի մեջ երբեմն ասանկ անակնկալներ կըլլան։

Բայց եաքեն, առաջին շլմորումը անցնելե հետո, երբոր լրջորեն մարդը սեղանին վրա դրին, անդամատեցին անոր նկարագիրը, հոգին ճղեցին ու մեջը նայեցան, հասկցան որ հայ լրագրությունն ալ այուրբ եղած էր այդ հավիտենական հեգնողեն։

— Վա՛յ, խեղճ հայ լրագրություն, վա՛յ, ավազեցին, օյինպազներուն ձեռքը խաղալիք է եղեր։

Բայց Պոլսո պես տեղի մը մեջ հանրային կարծիքի ջախջախիչ հասանքին դեմ ի՞նչ ուժ կրնա ունենալ քանի մը ընդդիմախոս-

ներու ճշմարտության ձայնը։ Հակառակ ատոնց, մեր ամիրային շնորհալի թոռը բավական ժամանակ թիրախը եղավ պատվաբեր ուշադրություններու, հիացկոտ մատնանշումներու և նախանձաբեկ նայվածքներու. ձմրան ամբողջ եղանակ մը, Բերայի, Պոլսո, Գատրգյուղի և ուրիշ թաղերու բարձրաստիճան սալոններուն խոսակցությանց կարևոր նյութերեն մեկը կազմեցին այս երևակայական գյուտն ու անոր հեղինակը։ Գրական և գիտական շրջանակները ուզեցին անոր ընկերակցության պատիվը վայելել։ Բայց ոտքթոր Մարկոսյան, իր ամբողջ ունայնությանը համոզված, այդ դեղեցիկ եղերաղավնիշտը խաղքությամբ մը չվերջացնելու համար, անմատչելի մեկուսացումի մը մեջ կպատնիշվեր, ասով հետաքրքրության և հիացումի չափը սաստկացնելով իր շուրջը, ճշմարիտ և անփառունակ գիտնականի տեսակ մը համեստությունը ցուցադրելով հանրության միամիտ աչքերուն։

Երբ դուրսը այս իրարանցումը կհայտնվեր Մարկոսյան անուն շուրջը, ամիրային ս ան մեջ նոր տոամի մը դրվագները կըպատրաստվեին։ Արշակ նորանոր փառքերու, նորանոր հաճույքներու, վայելումներու հաճախանքեն տանջված, անհաղթելի ձանձրույթով մը լեցված էր հաճույքներու այն սատարին հանդեպ, զոր իր մագիլներուն մեջ սեղմեր, սեղմեր, սեղմեր էր ու անկից ծծեր էր ինչ որ կար անոր մեջ անծանոթ, ցնցող, բուրումնավետ, քաղցր, գինովցուցիչ ու ա՛լ նետեր էր հեռու, քուրջի մը պես, անպետ բանի մը պես, ա՛լ բնավ չհետաքրքրվելով անով, ա՛լ կարծես այդ բանը բոլորովին դադրելով գոյություն ունենալե իրեն համար։

Իր անհեթեթ գանգին տակ նորանոր ծրագիրներ մարմին կառնեին հիմա, հմայող, դյութող համեմատություններով, հետզհետե ընդլայնված, հետզհետե բարեփոխված, որոնց անդադրում որոճացումը իր ցորեկներուն և գիշերներուն ալ զբաղումն էր։

Նորեն, իր բժշկական խուցին մեջ փակված, իր խորհուրդներովը հափշտակված, ման կուգար ժամերով, խենթի պես, անխոնջ, իր մտածումներուն համեմատ ժպտելով, խոժոռելով, շարժրտկելով, սպառնալով։

Այդ միջոցներուն՝ մաման գրեթե ամբողջովին գրավված ըլլալով համբավավոր գյուտին մանրամասնություններովը, զոր լրագիրները և շահագրգռող անձեր կհասցնեին իրեն հետզհետե, տարապայման համեմատություններ տալով գործին, մաման, որ իր պառվության այդ տխուր շրջանին մեջ իր վրա իրր մարդկային բան՝ զավկին փառավորման հաճախանքեն զատ ոչինչ ուներ այլևս, ու ա՛լ զառամած, ցնորած, խենթեցած, չտեսավ ինչ որ իր շուրջը տեղի կունենար։ Որքան անտարբեր և անշահախնդիր հանդիսատես մը եղավ այն անպատկառ հարաբերության, զոր իր զավակը հաստատեց լվացարարուհիին աղջկանը հետ, նույնքան և ավելի անգիտակից, անուշադիր վերաբերում մը ունեցավ վայրագ խղումին համար, զոր թերևս իրմե առաջ, իր դրացիները, իր բարեկամները, թաղեցիները նշմարեցին։

— Տոքթորը երեսե ձգեր է Սոֆին։

Վատոդի ծուխի արագությամբ այս բանաձևը տարածվեցավ բիլիարդարան, ամբողջ գյուղին մեջ։ Ա՛լ մեկնություններ, իրարմե ավելի անհեթեթ, արտառոց, ահավոր, ծայր տվին ամեն մարդու հետ փոխվելով, տգեղնալով, ծամածռվելով։ Եվ հանրային կարծիքը, ափսո՜ս, նպաստավոր չեղավ հեք լքված աղջկան համար։ Անիկա, որ աշխարհիս ամենեն աններող և ամենեն անուղղամիտ բանն է, դատեց, դատափետեց, բզիկ-բզիկ ըրավ լվացարարուհիին աղջիկը։

— Հելպեթ տե յա,— կպոռային կիներ տուներու մեջ, փրփրած շրթունքներով,— կյուզելիմ տղան գուլխե հանեց, փարանելուն տակեն մտավ, վրայեն ելավ... Ասա՜նկ կըլլա իշտե, շամաշրջիի մը կտորը...

— Քա դուն ան նայե քի,— ըսող կիներ ալ կային,— ատանկ խելքը գուլխեն առեր են տե նորեն հեքիմության իճաթներ կընե կոր, քա ատ ի՜նչ խելք է, վո՜ւյ, խուրպան ըլլամ....

Խեղճ ու անտեր աղջկան վրա խուժող այս ամբողջ բիրտ ու անմիտ ամբոխին մեջեն մեկը միայն լուռ ու մունջ ճշմարտությունը կմրմռար, լուտանքներ տեղալով ամիրային թոռանը հասցեին։

Ասիկա Թադեոս աղա Մերկերյանն էր, որ բավական ատենե ի վեր թաղային գործերե ձեռք քաշած, ծերության հարվածներուն տակ ճնշված, գրեթե մեկուսի կապրեր, իր երկարամյա կողոպուտներուն արդյունքովը։ Ամիրային ապարանքը շատ քիչ ոտք կկոխեր ալ, գրեթե հազիվ ամիսը մեկ անգամ, հակառակ հանրմին թախանձագին հրավերներուն։ Այո, Թադեոս աղա, որ կերպով մը պատճառ եղած էր անմեղ աղջկան մը կորուստին, հիմա խղճի խայթերե կտանջվեր, կզղջար, ուժ տված, օգնած ըլլալուն լվացարարուհիին այդ ապականած տունը փոխադրվելուն։

— Ի՞նչ խալթ կերանք տե՛ս կյուզելիմ աղջիկը ես չափ-խրենին ճանկը նետեցինք, թո՜ւհ, նա՜հ, էշեկ Թադեոս,— կըսեր զլ-խուն զարնելով։

Բայց, հակառակ իր այս անկեղծ զիղջերուն, ամենապզտիկ փորձ մը չէր ըներ հանրության անողոք և անիրավ դատաստանին առջև Սոֆին չքմեղացնելու, ամիրային թոռան խաղքությունն ու անարգությունը մերկացնելու։

— Ամա, ասված անմեղներուն հետ է,— կավելցներ իբրև արդարացում,— ան չափ-խրենը օր մը իր պատիժը պիտի գտնա։

Այս խորհրդածության միջոցին Մերկերյան չէր մտաբերեր սակայն, թե տարիներե ի վեր իր գործած չարիքներուն և անիրավություններուն պատիժը կրելեն շատ հեռու, հիմա անոնց շնորհիվը հանգստորեն և երջանկորեն իր կյանքին մնացած օրերը անցընելու պատրաստված էր այլևս։

Եթե երբեմնի իր անցյալ կյանքին այդ ամոթալի դրվագները հիշեր ալ, ծերուկը արդարացուցիչ փաստ մը ուներ, որուն շնորհիվը կհավատար որ անպարտ պիտի արձակվեր աշխարհի բոլոր դատարաններեն, եթե երբեք օձիքը ձեռք տալու անկարելի պատահականությունը տեղի ունենար օրին մեկը։

— Իմ տեղս ո՞վ ալ ըլլար, ինծի պես պիտի ըներ... և ինե՛ շատ ավելի։

Եվ այս անարգ փաստաբանության ետին ապաստանած, նախկին գանձապահը՝ իր աղոթքին, իր ծոմին, իր ժամին, իր մոմին համար վերջին ծայր ուշադիր՝ վստահորեն պատրաստված էր հանգիստ, կակուղ և տաքուկ տեղ մը գրավելու արդարներու արքայության մեջ։

— Հեմ ճանը՛մ,— կմռմռար երբեմն՝ իբր թե մեկը գտնվեր դեմը՝ իր երեսը վար առնող,— որի՞ն հինգ փարան, որի՞ն կերեր եմ, ազգին անդուկը ազգինն է, հիչ մեկունը չէ, այնչափ տարի դատեցա անոր համար, հելպեթ տե՛ս իրավունքս պիտի առնեի... պե՛ս ճանը՛մ, քեֆդ նայե, Թադիկ, սըտեղ լոխմա մը կյանքդ մնաց, ան ալ պարե՛ հանգիստ անցուր։

Ամիրային տան մեջ կացությունը հիմնովին փոխված էր։ Ամենուն վրա թախծություն և լռություն։ Սոֆի, տոքթորին իրեն հանդեպ բռնած վարմունքին,— այնքան ակներև, որքան վրդրագ,— չկրնալով ոևէ բացատրություն տալ, փոքրիկ վարանումն մը հետո, իրենց միջև տիրող մտերմությունեն քաջալերված, համարձակեր էր անոր խուցը մտնել, հարցնելու համար թե իր կողմե ի՞նչ բան առիթ տված էր այդ հանկարծական փոփոխության։ Մանկամարդ աղջիկը, սաստիկ հուզված, դժգույն, կդողար, մատվերներուն մեջ մետաքսե թաշկինակ մը ճմրթկելով։ Դալկահար գեմքը, վիշտին ուժգնությանը տակ, սրտաճմլիկ էր և հրապուրիչ։ Երիտասարդը գրքի մը ընթերցումին մեջ թաղված երևցավ, մինչ աղջիկը բազկաթոռի մը եզրը նստած՝ կվարաներ ընդհատել զայն։ Ուրիշ անգամ շիտակ քովը կերթար, ճիտը նետվելու և իր հրապույրներովը զանիկա գինովցնելու համար։ Սիրտը, էությունը, մարմինը այդ երիտասարդին տվեր էր, կույր և հիմար մատուցումով մը։ Իր անփորձությանը, իր կույր միամտությանը մեջ, կարծեր էր հավետ իրեն կապած ըլլալ զայն, անոր ուղածը տալու իր ապերասան և մշտապատրաստ փութկոտությամբը։ Ու ան որքա՜ն կսիրեր զինքը։ Ի՞նչ շողշողուն և պերճախոս ապացույցներ տվեր էր ան իր անսպառ ու հավերժական սիրույն։ Ամեն մեկ գիրկընդխառնում նոր օղակ մըն էր կարծես այն շղթային, որ իրարու կհոդեր զիրենք. իր շուշանաթույր աղջիկությունը, իր փքքինագեղ իգականությունը՝ ամիրայածին շարավոտ տոփփնելու և կիրքերու հագեցումին ծառայեցուցեր էր ժպտաշուրթն և հանոյակատար։

Մեկենիմեկ, երիտասարդը ընթերցումը ընդհատելով ետին դարձավ և կտրուկ, խիստ ու կոպիտ շեշտով մը հարցուց.

— Ի՞նչ կուզեք, օրիորդ։

— Բայց...

Հեկեկանք մը եկավ գոցեց Սոֆիին կոկորդը, թաշկինակը շրթներուն տարավ, որոնք կդողդղային, ու աչքերը միայն, այն երկնային սևեռումովը զոր ունեին, հառեց Արշակի վրա, աղեխարշ ու պաղատական։

— Օրիո՜րդ, ձեր ընթացքը ինծի համար անհասկնալի է,— վրա բերավ երիտասարդը քիչ մը մեղմ շեշտով,— սենյակս կուգաք անշուշտ բան մը ըսելու համար, և այդ բանը ըսելու կքաշվիք. ըսե՛ք, ըսե՛ք, վասնզի շուտով պետք է մեկնիմ։

Ու ոտքի ելլալով, ձեռքերը տափատին գրպաններուն մեջ, պատուհանին մոտեցավ և դուրսը սկսավ դիտել։

Սոֆի գերմարդկային ճիգով մը.

— Պարոն,— ըսավ,— եկա խնդրելու ձենե՛ որ ձեր ընթաց-

քին փոփոխության պատճառը հայտնեք և իմ թերությունս ինչ-որ ալ է, բացատրեցեք, որովհետև....

— Ներողություն, օրիորդ,— ընդհատեց Արշակ մեկեն ադին դառնալով և պիշ-պիշ աղջկան նայելով,— նախ պետք է գիտնաք թե ես իմ ընթացքներուս համար ոչ մեկուն բացատրություն չեմ տար, իսկ որպեսզի սրտերնիդ հանգստանա, կրնամ հայտնել ձեզի թե ոևէ թերություն չեք ունեցած։ Արդեն ի՞նչ թերություն կրնայիք ունենալ. ատանկ բանի մը համար լավագույն կըլլար մամայիս դիմել, որ գիտե անշուշտ ձեր թերությունները կամ առավելությունները...

— Բայց...

Եվ հեկեկանք մը եկավ նորեն գոցեց հեք աղջկան կոկորդը, թող չտալով որ իր զգացումը հայտնե։

— Բարեկամաբար խորհուրդ կուտամ ձեզի,— շարունակեց ամիրային թոռը,— որ այլևս միմիայն ձեր գործերով զբաղիք տանը մեջ. մամաս օրեօր տկարանալու վրա է, ձեր հոգածությանը և խնամքներուն պետք ունի ամեն վայրկյան... Մանավանդ որ ես ի մոտո պիտի մեկնիմ Պոլսեն՝ Փարիզ երթալու և տեղվույն համալսարանները աչքե անցընելու՝ ուսումնասիրություններուս համար։ Իմ բացակայությանս, պետք է որ մամաս աղեկ նայվի և խնամվի, ինչ որ դուք այնքան լավ կրնաք կատարել։ Ասանկով դուք շահավոր կելլաք, մորս համակրությունը կվաստկիք, որ կրնա օր մը օգտակար ըլլալ ձեզի... Ձեզ և ձեր մորը աղեկությանը համար այսպես վարվելնիդ հարկավոր է. իրավ, ասկեց առաջ քիչ մը ավելի ազատ և ուրախ ժամանակներ անցուցինք, բայց աշխարհիս վրա ի՞նչ բան տևական է. մարդս պետք է ժամանակին ու պայմաններուն համակերպի... Դարձեք ուրեմն, օրիորդ, ձեր գործին, և ինչպես ըսի, ամեն հոգ տարեք որ մամաս աղեկ խնամվի... Ահավասիկ առաջին և վերջին բացատրությունը, որ կուտամ ձեզի, ինչ որ արդեն իմ կողմես զոհողություն մըն է։

Եվ հարակից խուցին դուռը բանալով Արշակ մտավ իր ընջասենյակը՝ հագվելու և մեկնելու համար։

Մանկամարդ աղջիկը, այս հույժ պաշտոնական, կարճ և անգութ բացատրությունը լսելե հետո խոսք մը, բառ մը՝ պատասխանելու, իր անսահման կսկիծը այդ հրեշին երեսն ի վեր պոռալու անկարող, լուռ ու մունջ սկսավ լալ, մետաքսե թաշկինակը ողողելով իր արցունքներով, կուլ տալով հեծկլտանքները, որոնք

իր կուրծքը կպատռեին։ Բան մը կփլչեր, կկործաներ իր մեջ։ Կըլարծեր լսել իր էությանը, իր կյանքին այդ քայքայումին հառաչը, խուլ և ահավոր։

Իր երազները, որոնց իրականացումին այնքան մոտեցեր էր, գրեթե հպանցեր էր զանոնք, հույսերը որոնք իր հոգին ու երևակայությունը ոգևորեր, շոյեր, վառեր էին, այս բոլորը մեկ հարվածով կտարտղներ, կանհետանար, ինչպես ամպի թեթև ծվեններ, զոր քամին կցրվե, կհալեցնե։

Սիրած էր այդ տղան նախ իր ամբարհավաճ ու մեծամոլիկ ձգտումներեն մղված, հետո հրապուրվելով անոր շարժումներեն, անոր խոսվածքեն, անոր ասպետավայել նիստուկացեն, անոր հանդուգն, նույն իսկ լպիրշ վարմունքներեն, որոնց մեջ աղվոր, հաճելի տարօրինակություններ կտեսներ, վերջապես, անոր խենթություններեն, այլանդակություններեն, ափեղցփեղություններեն։ Սիրած էր այդ տղան, վասնզի կարծած, հավատացած էր որ անիկա կսիրեր զինքը, կյանքը իրենին կապած էր վերջնականապես ու ա՛լ չպիտի բաժնվեր իրմե։ Ու այս կույր ու անհեղլի հավատքեն մղվելով իր բոլոր ունեցածը անոր տվեր էր, իր կուսությունը, իր աղվորությունը, իր հրապույրները, շռայլորեն, անվերապահորեն, մոլեգնորեն։

Հիմա՞։ Ամեն բան վերջացած էր։ Խաբած էին զինքը։ Աղքատ աղջիկ, բնության իրեն շնորհած ծաղիկները քաղեր բրցուցեր, վայելեր էին։ Ու ինք հաճույքով, կամավորորեն թույլ տվեր էր, որ այդ կողոպտումը տեղի ունենա, ու սարսռալով ականատես եղեր էր այն վայրագ ու շնական նրբանքին. որով այդ ավազակությունը կատարվեր էր։

Հիմա՞։ Մերկացած, գոսացած ճյուղ մըն էր ինք, ավերակ մը, դիակ մը։

Ու կուլար հոդ, այդ խուցին մեջ, լուռ վկան այնքան վայելված հաճույքներուն, այդ թիկնաթոռին վրա, գիրկընդխառն սիրվրուքներու, շնչասպառ ու մոլեգին գալարումներու հանգստավետ պատվանդանը, շրջապատված այդ առարկաներեն, որոնց ամեն մեկը գինով ու սիրակցորդ զույգին հպումը կրած էր։

— Օրի՜որդ, գուցե մամաս ձեզի պետք ունենա։

Դրանը մեջ կկենար ան, կողոպտիչը, անթերի հագնվածքով, երկար սև բրտենկոդի մը մեջ իր ձևավոր մարմինը պրկած, դեղին

բեզերը խրոխտ գալարվածքով մը շուրթներուն վրա համբարձիկ, նայվածքը անողոք և ձանձրացած։

Սոֆի ցնցումով մը ոտքի ելավ, իր լալագին դեմքը անգամ մը դարձուց այդ մարդուն, որ կվռնդեր ալ զինքը, ու անոր նայեցավ իր արցունքներուն մեջեն, իր ցավին ամբողջ ու խորունկ սրտաշարժությամբը, գերագույն ու անդիմադրելի պաղատանքով։ Երիտասարդը, անդրդվելի, տոկաց այդ նայվածքին, տեսավ ցավը, արցունքը, պաղատանքը, և ուրիշ բան չգտավ իր զգացումը հայտնելու եթե ոչ.

— Օրիորդ, մաման գուցե ձեզի պետք ունենա,— կրկնեց։

Մանկամարդ աղջիկը, սթափած, դողդոջ մատվրներով շուտ մը հարդարեց մազերը, որոնք թափթփեր էին և դուրս ելան անձայն և անշշուկ։

Բայց, հակառակ որ մաման կրնար պետք ունենալ իրեն այդ օրը, Սոֆի իր սենյակին մեջ փակված մնաց մինչև իրիկուն, իր ցավին և իր հուսահատությանը անձնատուր։ Երկարորեն մտածեց իր վիճակին վրա, և ավերը, որուն ինքզինքը ենթարկված տեսավ, անսահման և անդարմանելի գտավ։ Հանկարծ իր առջև բացվող արշալույսի փառավորութենեն շլացած, չէր տեսներ այն թակարդը, որ իր շուրջը լարվեր էր և որուն մեջ նետվեր էր գլխիվայր, խելահեղ ոստումով։ Այդ անդունդը հի՛մակ կտեսնար, ուր գահավիժած էին իր պատիվը, իր հույսերը, իր կուսությունը։ Ի՞նչ կմընար իրեն, ոչի՛նչ, ոչի՛նչ, ոչի՛նչ։

Եվ հանկարծ, մտային այդ մոլորումին մեջ, բարոյական ու ֆիզիքական քայքայումին մեջ, հեռավոր կսկծալի հիշատակ մը, իր կյանքին մեկ մոռցված տոամին պարագաները եկան իր աչքին առջև պարզվեցան, ահեղ ու սրտակեղեք։

— Համբի՛կ,— մրմնջեց ան, պատուհանին եզրին կառչելով, լալեն ուռած աչվրները հուսահատորեն պտտցնելով գյուղանկարին վրա։

Ու մեկիկ-մեկիկ, մուրճի հարվածներու որոշ հնչեղությամբը, հիշողությանը մեջ թնդացին հուսահատ և մերժված սիրահարին բառերը, պատգամի մը պես ծանր, դժգույն, և ողբի մը պես սրտակտուր։

«Մի՛ խաբվիր, մի՛ շլանար սուտ սերերեն, որոնք այնքան շատ են, որ կյանքերը կսպանեն միայն, սուտ սերերը ավելի վանգավոր են, քան բացահայտ և խորունկ ատելությունները... հավատա այս ճշմարտության, Սոֆի...»։

— Սուտ սերերը,— կմրմնջեր աղջիկը,— օ՜հ, ի՜նչպես կարելի է հասկնալ ատոնք։

Ու ինք ժայռի պես անդրդվելի կեցեր էր անոր պաղատանքին առջև, արհամարհեր էր, անգոսներ էր զայն, ատկեց նախատված սեպելով ինքզինքը։ Ու գացեր ինկեր էր ամիրայական բազուկներու մեջ։

— Համբի՛կ, խե՜ղճ, խե՜ղճ Համբիկ,— կողբար մանկամարդ աղջիկը,— ե՛ս ըրի զինքը ատանկ, ե՛ս եմ իր խենթենալուն պատճառը, ե՛ս մեռցուցի իր ապագան, իր կյանքը...

Իր զառանցում հուսահատության մեջ, կարծեց լսել խորհրդավոր ձայն մը, որ կմռմռար.

— Բայց պատժվեցա՜ր....

— Ո՛հ, այո՛, այո՛,— պոռաց աղջիկը բարձրաձայն գալարելն,— պատժվեցա՜... աստվա՜ծ իմ, գթա՜ ինծի... ես հանցավոր եմ, մեղավոր եմ... գթա՜...

Եվ աստվածը, զոր բավական ատենե ի վեր մոռցած էր, սկըսավ օգնության կանչել իրեն, անոր գթությունը, ներողությունը հայցել, ծնրադրած, մազերը ցիրուցան, աչքերը արցունքով, շուրթերը գոզդոջուն։

Ու բոլոր խեղճ, տկար, դյուրաբեկ հոգիներուն պես, որոնք բարոյական գահավիժումներու ատեն դերագույն զորություններու կկոչին շնչասպառորեն, Սոֆի՝ երկնային հայեցողության տագնապի մը մատնված մնաց, աղոթելով մարմնադողդոջ ու հեծեծալին։

Այս տագնապեն հետո, լքված աղջիկը տեսակ մը կորովի եռքը զգաց իր մեջ, արյունալի ու անարդ խաբեության դեմ, որուն զոհ եղած էր, ըմբոստության ծառացում մը ունեցավ։ Ցցվեցավ սենյակին մեջտեղը, արցունքները աճապարանոք սրբեց, կարուկ շարժումներով ձեռք մը դրավ իր արդուզարդին վրա և անգրդվելի, հաստատակամ քայլերով ուղղվեցավ իր սենյակին դուռը։ Ձեռքը երկնցուց սողնակին... և հոն մնաց անշարժ և վարանոտ։

Պիտի երթար այդ սրիկային ու խաբեբային երեսն ի վեր պոռալու անոր ամբողջ անարգությունն ու ոճիրը, բացատրություն պիտի պահանջեր, և կա՛մ ետ պիտի ուզեր ինչ որ անիկա առած էր իրմե վատաբար, կա՛մ հատուցում պիտի պահանջեր։ Սակայն,

այս արու և ուժգին մտադրությունը մինչև դուռը առնված այդ քանի մը քայլերուն հետ միայն ապրեցավ։ Հոն, մեկենիմեկ աղջկան աչվրներուն ներկայացավ տոքթորին հեգնոտ, անկարեկիր, սինիկ դեմքը, ու իր բոլոր կորովը, զայրույթը, թափը ծակված օդապարիկի մը պես սմքեցան ու կծկվեցան։

Ուժասպառ և հուսահատ՝ ինկավ նորեն աթոռի մը վրա և ըսկըսավ լալ։

Ե.

Մեկ քանի օրե ի վեր, տոքթոր Մարկոսյան տենդոտ վիճակի մը մեջ կերևար, գրեթե ոչ մեկուն հետ կխոսեր. շարժումներով և նշաններով կհասկցուներ Խաչոյին իր ուզածները կամ չափազանց կտրուկ, կարճ, միավանկ բառերով։ Գավառացին զգացած տագնապեն կկարմրեր, կճերմկնար, կդեղներ, աչքերու շվարած բացխփումներով, ոտքին մեկը օդին մեջ միշտ պատրաստ՝ հրամանի մը գործադրության վազելու համար իսկույն։ Հակառակ սակայն իր այս շնչասպառ և դողդոջուն փութկոտությանը, Խաչո շատ, խիստ շատ անգամ գեղեցիկ ու պատկերոտ վերադիրներու տարափի մը տակ կխխմվեր, բազմաթիվ կենդանիներ, էշեն սկսյալ մինչև արջը, մեր խեղճ գավառացիին հետ բաղդատելու պատիվը կունենային։

— Օ՜, է՛շ, խըմպը՛լ, ո՞ւր ես, չիմացա՞ր։

— Հոս եմ տոքթիոր, բերի։

Խաչո, հակառակ գերմարդկային ճիգերու և մահվան սպառնալիքներու, չէր հաջողած «տոքթոր»-ին երկրորդ վանկի «ի»-ն ջնջել, անանկ որ վերջ ի վերջո ամեն մարդ ստիպված էր այս աղեսին առջև գլուխ ծռել։

— Ապո՛ւշ, կո՛վ, ես քեզի ատա՞նկ ըսի։

— Ա՛ֆ կընես, տոքթիոր, չիմացա...

— Գոմե՛շ, ավանա՛կ։

Եվ Խաչո, գլխիկոր, սրտատրոփ, կվազեր գործված սխալ մը դարմանելու։

Ընդունելության սրահին մեջ մամային հետ դռնփակ երկար նիստեր տեղի ունեցան, որոնց կարևորությունը հասկնալու համար կբավե ըսել թե տոքթորը նիստը չսկսած, Խաչոյին կպատվիրեր ամենախիստ ձայնով.

— Խաչո, ինծի ուզող գա նե, ըսե որ տոքթորը հոս չէ։

Բոլոր տնեցիները, պառավ խոհարարուհեն սկսյալ մինչև Խաչո կհասկնային թե կարևոր բան մը պատրաստվելու վրա էր, մինչև այդ ատեն տեղի ունեցած տարօրինակություններեն շատ ավելի տարօրինակ, որուն հետևանոք իրենց վիճակը կրնար աղեկ կամ գեշ ըլլալ։

Քանի մը անգամներ խորհրդակցությունները ընդհատելով տոքթորը աճապարանոք մեկնեցավ և իրիկունը ուշ ատեն գալով նույնքան աճապարանոք՝ հյուրասրահին մեջ շարունակվեցավ առտուն ընդհատված նիստը։

Ցանցառ հիվանդները—որոնք մասնավորապես կոկորդե կըտառապեին—Խաչոյին կողմե կճամփվեին, որ այս առթիվ ինքն ալ խորհրդավոր ձևեր կառներ.

— Տոքթիորը հոս չէ, հայտնի չէ երբ կուգա...

Հետո, օրին մեկը, դուրս ելլելու համար պատրաստված միջոցին, Խաչոյին հրամայեց որ նոր հագուստները հագնի իրեն ընկերանալու համար։ Աղային ընկերանալ. այս պատիվին դեռ չէր արժանացած մշեցին. ուստի տեսակ մը հպարտությամբ նոր-նոր հագվեցավ և իր տիրոջ հետևեցավ՝ հյուպատոսական գավազի մը պերևեղումովը։

Բերա ելան, վաճառատուններ մտան, մեծաքանակ գնումներու համար, ճամփորդության երեք չորս արկղերու մեջ տեղավորվեցան հագուստի կապուստի, արդուզարդի վերաբերյալ իրեղենները։ Խաչո շվարած կժողվեր գնված առարկաները և արկղերուն մեջ կտեղավորեր, մեքենայի պես դառնալով իր տիրոջ միավանկ հրամայականներուն շուրջը.

— Ա՛ռ, բե՛ր, դի՛ր, շո՛ւտ։

Իրիկվան, երբ վերջապես ամեն բան լմնցավ, տոքթորը հրամայեց Խաչոյին որ ատ սնդուկները շիտակ գյուղ տանի։

— Բան մը չկոտրի, ետքը ես ալ գլուխդ կկոտրեմ,— պատվիրեց։

Խաչո, շնչասպառ, սնդուկներուն հետ ճամփա ելավ դեպի գյուղ, իսկ տոքթորը՝ օրվան խոնջենքը փոխարինելու համար՝ գընաց նետվելու ցնծության և շվայտության վայրերը, որոնք նոր և հզոր մագնիսացումով մը իրենց կքաշեին զինքը, այն օրեն ի վեր, որ ձանձրացած էր լվացարարուհիին աղջկան հրապույրներեն։

Իր բարեկամները ուրախությամբ ողջունած էին իր այս վերադարձը, անպատկառ հեգնություններ սպրդեցնելով։

— Է՛, Արշակ, վերջապես հինցուցի՞ր...

— Գեղ ապրանք չէր ամա՝ քիչ մը շատ նիհար էր։

— Քեզի տար նե՛ չառնեիր։

— Է՛հ, ամսվան մը համար... գոնե դուն ձանձրացար նե՛ մեզի ձգեիր, ապերա՛խտ։

— Ո՛ւ, ան քուրջ դարձուցած է, քեզի տար նե՛ ի՞նչ պիտի ընեիր...

Տոքթորը իր սիրած աղջկան հասցեին նետված այս վիրավորիչ ու նախատական ակնարկություններեն փոխանակ նեղվելու, անարգ քմծիծաղներով իր բեղերը կոլորտկեր, կարծես իր գոհունակությունը հայտնելու, իր բարեկամներուն լրբությունները քաջալերելու համար։

Այդ գիշերը, Արշակ, գլուխը ալքոլեն տաքցած, հանրատան մը մեջ հայտնեց իր բարեկամներուն և բարեկամուհիներուն, թե ի մոտո շատ տարօրինակ և անակնկալ բան մը պիտի իմանային իր մասին։

— Նոր գյո՞ւտ մըն ալ,— պոռացին իր բարեկամները։

— Ո՛չ,— պատասխանեց Արշակ խնդալով,— գյուտեր միշտ չեն ըլլար, հազիվ տասը տարին մեկ անգամ։ Աս ուրիշ բա՛ն է, ուրի՛շ...

Եվ հակառակ բարեկամներուն թախանձանքին, Մարկոսյան չհայտնեց իր գաղտնիքը և թողուց որ ամեն մարդ այդ գաղտնիքին շուրջը գալարվի մնա։

Այդ գաղտնիքը տակավին մեկը միայն գիտեր, մաման։

Տոքթորը որոշած էր ա՛լ իրականացնել երազը, զոր տարիներ ի վեր կսնուցաներ, այն է Փարիզ երթալ «համալսարանները աչքե անցընելու՝ իր ուսումնասիրություններուն համար», ինչպես հայտարարած էր Սոֆիի։ Բայց, Փարիզ երթալու համար դրամ պետք էր և առատ դրամ։ Մեկ տարվան մեջ լմնցած էր երեք հարյուր ոսկին, կալվածի մը գինը։ Ուրեմն նոր կալված մըն ալ ձեռքե հանելու էր։ Արշակ այս անգամ Ղալաթիո ֆապրիքային նետեց աչքը, կալվածներուն ամենեն կարևորին, որ անշուշտ առնվազն հինգ վեց հարյուր ոսկի կարժեր։ Մամային հետ դարձյալ երկար նիստերը այս խնդրին սահմանված էին։ Առաջին անգամ, մաման հակառակեցավ ֆապրիքային վաճառմանը, նկատելով որ անիկա ձեռքե հանվելով, անդին աննշան բան մը կըմնար։ Մոտալուտ թշվառության մը ուրվականը դեռ կտանջեր այդ կնոջ խախտած երևակայությունը։ Արշակ իր խաբեբա պերճախոսությունը դուրս թափեց մամային այդ երկյուղները վանելու համար։ Իր Փարիզ երթալովը ամեն բան կփրկվեր, վասնզի շատ չանցած հոն պիտի հասկցվեր իր կարևորությունը և շնորհիվ իր գյուտին և ընելիք գյուտերուն, ահագին գումարներ պիտի վաստկեր։ Ա՛լ կալվածը ի՞նչ կարևորություն կունենար։ Շքեղ ապագա, իշխանական հարստություն, փառք, պատիվ և անոնց նման շլացուցիչ բառեր վճռական հարվածը տվին ամիրային աղջկան վարանումներուն։

Եվ միաձայն հավանությամբ որոշվեցավ ծախել Ղալաթիո ֆապրիքան։

Գնորդը շուտ գտնվեցավ այդ հասութաբեր կալվածին։ Տոքթորը մեծ աճապարանքով բոլոր գործողությունները ըրավ լմընցուց և հրճվանքեն գրեթե դողալով գրպանը դրավ հինգ հարյուր հիսուն ոսկիի գումարը։

Այդ բոպեին իր հավիտենական քունին մեջ անշուշտ տարտղնաց հեք Բարթող աղային հոգին։ Ֆապրիքան, որ այսպես կըծախվեր առանց իրեն, որքա՞ն տանջած էր իր ուղեղը, երբ դեռ երկրի վրա էր ինք։ Անոր շնորհիվ որքա՞ն գումարներ գրպանած էր անիրավորեն։ Իր բարձր հսկողության տակ գտնված միջոցին, այդ երանելի շենքը գոնե մեկ անգամ հիմնահատակ քանդված ու վերաշինված էր՝ շնորհիվ Բարթող աղային բեղմնավոր երևակայությանը և տիկին Մարկոսյանին անդրդվելի միամտությանը։ իրականապես, կղմինդր մը իսկ չէր ինկած անոր վրայեն։ Այդ շենքին առջև, որ իր ձեռքն էր առանց իրը ըլլալու, շիլ մսավաճառը ի՞նչ անուշ երազներով օրորվեր էր։ Ամբողջովին անոր տիրանա՞լ, իր և իր տատարակներուն փրկությունը ապահովել էր։ Անոր սև, մրոտ, կարծր պատերեն վեր ի՞նչ հաճայանքներ թռչած էին։ Եվ ի՞նչ անկարելի և արյունոտ ոճիրներ բույն դրած էին իր դանդին տակ, այս սև որմերուն հրապուրող տեսքին սաղրանքենե։ Տեսակցության մը միջոցին հանքմը զարնել, սպաննել և ֆապրիքային տեր դառնալ, լայն տեղ կգրավեր ոճիրներուն շարքին մեջ։ Եվ ասոնց գործադրության անկարելիությանը առջև, Բարթող աղա կհար, կմռնչեր, կհայհոյեր։ Եվ վերջապես ճիշտ այդ երանելի ֆապրիքային կպարտեր մահը, որ այնքան անժամանակ կերպով

ողջունած էր զինքը իր տատրակներուն մեջտեղ։ Հիմա, ահա բոլորովին կանհետանա Ֆապրիքաղ, խե՜ղճ Բարթող աղա, հանգի՜ստ ոսկորներուդ։

Տոքթոր Մարկոսյան հնարքը ունեցավ իսկական գինը չհայտնելու իր մորը։ Չորս հարյուր ոսկի ցուցուց միայն, որուն երեք հարյուր ոսկին ինքը վար դրավ իր ճամփորդության և Փարիզ բնակության համար, և հարյուր ոսկի մորը հանձնեց։ Ֆապրիքան չորս հարյուր ոսկի կբերեր ամիրային թոռանը։

Այս կլորիկ գումարը ձեռք անցընելուն պես, ճամփորդության պատրաստություններուն սկսավ։ Խաչո քանի մը անգամ Բերա ելավ տիրոջը հետ և բեռնավորված գյուղ դարձավ։ Տան մեջ, այս իրարանցումներուն ոչ ոք կհետաքրքրվեր, բացի մամայեն, որ թեև չպիտի միիթարվեր զավկին բաժնվելուն, սակայն անոր լուռ ու մունջ մեկնումին ետևը ամբողջ փառավոր ու հրաշալի ապագա մը ցույց տրվելով իրեն, գիշեր ցորեկ նորեն ոսկեզօծ երազներով կօրորեր իր հիվանդ երևակայությունը և մանկական հրճվանքով մը կցնծար։ Սոֆի, այն օրեն ի վեր, մեքենայի մը պես կշարժեր տան մեջ, ջանալով չթերանալ իր պարտականություններուն մեջ տիկինին հանդեպ, պարապ ատենները իր խուցը քաշվելով՝ արձակ համարձակ անձնատուր ըլլալու համար իր անդարմանելի ցավին։ Իր ընթացքը այնքան անհաղորդ և պաշտոնական եղավ, որ հանրմը, վերջապես, օրին մեկը այդ բանը դիտել տվավ տոքթորին։

— Մամա,— ըսավ ան,— ասանկներուն շատ երես տաս նե գլուխդ կելլան, հանցանքը ի՜մս է, որ քիչ մը շատ կարևորություն տվի։ Ինչևէ, եղածը եղած է, կտեսնաս որ գործիդ չի գար նե կճամփես, կլմննա կերթա։

— Մե՛ղք է, զավակս,— պատասխանեց մաման ավելի մարդկային։

Եվ գեղեցիկ առտու մը բեռնակիրներ եկան Մարկոս ամիրային ապարանքը, արկղեր առին կոնակնին և տարին։ Հետո մայր ու որդի, անոնց ետևեն, առանց մեկուն բան մը ըսելու, թև թևի ելան գացին։ Դրացիները տեսան այս եղելությունը, բերանաբաց, և չկրցան ոևէ որոշ մեկնություն տալ։ Մինչև իրիկուն գյուղին մեջ լուր տարածվեցավ թե տիկին Մարկոսյան և տոքթորը գյուղեն գացած էին։ Քանի մը կիներ, որոնք իրենց կատաղի հետաքրքրությունը չկրցան զսպել, պարտեզին կողմեն կամաց մը ապարանքին խոհանոցը մտան՝ պառավ խոհարարուհիին և Կյուլյուկ հանրմին վրա իյնալու համար, որոնք դժբախտաբար դեպքի մասին նույնքան տգետ էին, որքան իրենց դիմողները։

— Քա քուրուկ, մենք ալ պանե խապար չունեինք,— ըսին անոնք,— գացին ամա, ո՞ւր գացին չիյտենք, վերջերնիս բարի ըլա։

Մեսաժըրիի շոգենավով այն օրը մեկնեցավ տոքթոր Մարկոսյան, լացերուն ու հեկեկանքներուն մեջ թողլով իր մորը, որ վերջին վայրկյանին տկարացեր էր։ Մութը կոխելուն մոտ էր, երբ հանրմը, տրտմաթախիծ և խոժոռ, տուն դարձավ։ Հաջորդ օրը, որ իր ընդունելության օրն էր, տիկին Մարկոսյան գրեթե զվարթ շեշտով մը կպատմեր իր հյուրերուն տոքթորին մեկնումին պատճառներն ու պարագաները, մասնավորապես պնդելով սա կետին վրա, որ իր վերջին գյուտը և ուրիշ գյուտեր Փարիզի բժշկական աշխարհին ծանոթացնելու և միևնույն ժամանակ տեղվույն համալսարանները աչքե անցընելու համար էր որ տոքթորը այդ ճամփորդության համակերպեր էր։

Եվ երկու օր չանցած, ոչ միայն Հ... գյուղին հասարակությունը, այլև ամբողջ Պոլսո և Թուրքիո հայությունը կիմանար հայ գիտական աշխարհին վարկը օտարին առջև բարձրացնելու ծառայող այս դեպքը, շնորհիվ փութկոտությանը Արևմուտք լրագրին, որ իր խմբագիրներեն մեկը շտապեցուց ամիրային աղջկանը մոտ, կատարյալ տեղեկություններ քաղելու համար տոքթորին այդ տեղափոխության շարժառիթներուն և պարագաներուն վրա։ Խմբագիրը, որ ամեն խմբագիրներու պես աշխարհի սովորական իրերը խոշորացույցով կդիտեր, թափ տվավ իր գրիչին, իր երևակայությանը, ճոռոմ և ուռուցիկ ոճով մը ծանուցանելու համար Կոստանյանի արժանավոր տանին մեկնումը։ Այս առթիվ ծանոթ գյուտը նորեն հիշվեցավ, և ապագա դեռ անծանոթ գյուտեր հայտարարվեցան։ Խմբագիրը սա վսեմ բառով կվերջացներ իր բանեժիրիքը. «Թող աշխարհ հասկնա, թե հայը ասանկ հանճարներ ալ կծնի»։

Տոքթոր Մարկոսյանին մեկնումը ամիրային տան մեջ ոմանց ուրախություն պատճառեց, ոմանց տխրություն։ Խաչո, չգիտնալով ինչպես հայտնել իր անսահման գոհունակությունը, իր սենյակը քաշվելով թևերը վեր առած կպարեր։ Կյուլյուկ հանրմ, այդ մեկնումին մեջ իր աղջկանը փրկությունը տեսնելով, սփոփանքի լայն

հառաչանքներ կարձակեր. եթե գիտնար որ այդ մեկնումը փրկություն մը ըլլալե շատ հեռու, իրենց դժբախտության բուն շարժառիթը պիտի ըլլար...

Այսպես ուրեմն ամեն հույս կորսված էր Սոֆիի համար։ Հեռացած էր, գուցե վերջնականապես, ան, զոր սիրած էր և զոր, ավա՜ղ, կսիրեր տակավին, հակառակ ինք իրեն դեմ մղած պայքարին։ Դեռ երկու շաբաթ առաջ աշխարհիս ամենեն եռանդուն, անկեղծ, հավատարիմ սիրահարն էր ան։ Ու հիմա կմեկներ առանց մնաս բարով մը իսկ ըսելու իրեն։

Ու գիշեր ցորեկ, իր ազատ ժամերուն, որոնք օրվան մեծագույն մասը կկազմեին, լքված աղջիկը իր սենյակին մխիթարիչ առանձնությանը մեջ կապաստաներ, հևք ու հուր տալու համար իր անկարելի ցավին, ուզածին պես դուրս պոռթկալու իր հոգին տանջանքները, բարկության, հուսահատության, ընդվզումի, ոչնչացումի, խռովված, ալեկոծված էության մը բոլոր հակառակամարտ զգացումներուն և հուզումներուն մատնվելու համար փոխնիփոխ։ Մինչև իսկ, ծայրահեղ վհատության վայրկյաններուն, անձնասպանություն մտածեց։ Ի՞նչ բան կկապեր զինքը այլև աշխարհի, ոչինչ։ Ամենակարճ ժամանակի մը մեջ, կյանքի հեշտագույն բոպեն ապրած էր, դառնագույնին անցնելու համար իսկույն։ Այս փոխանցումին մեջ, ուժգին և անակնկալ, իրենին պես նուրբ, տկար, ազազուն հոգի մը ուժասպառ պիտի իյնար։

Սակայն, օր մը, այդ առանձնությենեն սոսկաց։ Անսանձ ու տիրական պետք մը զգաց իր տառապանքը ուրիշի մը հազորդելու, ուրիշի մը, որուն սերը իրեն հետ ապրեր, զգար, լար իր տառապանքը, որ սփոփանքի զովարար բառով մը բալասաներ իր վիրավորված, արյունահոսած սիրտը։ Այդ թանկագին էակը փնտրելու համար շուրջը պտտցուց աչքերները ու.... մայրը տեսավ։ Հոն էր ան, կհսկեր, կտեսնար, կտառապեր միշտ։ Ան բացավ իր բազուկները, որոնց մեջ յալահառաչ ինկավ հևք աղջիկը։ Ո՜հ, մայրական տաք գիրկը, երկնային սնար, երբ գանգին կրակները կշիջանին, սրտին հևքերը կանդորրին, ու եղեմական անուշակ զովություն մը ամբողջ էությունը կպարուրե։ Ո՜հ, անուշությունը արցունքներուն, զոր խեղճ աղջիկը թափեց հոգ։ Մայրական մատվրները եկան հետզհետե սրբել զանոնք, ըղձակաթ համբույրներով խմել ուրդիական վիշտի այդ կաթիլները։

Մայրական այս կենսատու հպումին տակ, որուն սփոփարար քաղցրությունը մոռցեր էր՝ կեղծ ու անարգ սիրո մը թունավոր զգվանքներեն մոլորված, մանկամարդ աղջիկը պատմեց իր ցավը բոլոր տրտմալի մանրամասնություններովը, ստրջանքի հառաչանքներով։ Ու մայրը մխիթարության, ներողամտության բառեր շռայլեց, իրենց ոսմկությանը մեջ հզոր և ազդու։

— Վա՜խ,— կհառաչեր խեղճ մայրը, ձեռքը գլխուն զարնելով,— ընտո՞ր աս տուներն ներս մտանք... առաջվան աղքատությունենիս ասկե աղեկ էր, աղջիկս։ Ի՜նչ ըսեմ այն Թագեոս աղամին քի սեպեպ էղավ։

Պահ մը, անոնք մտածեցին ձգել փախչիլ այդ շարաշուք տուներն, սակայն վերահաս խեղճության մտածումը կասեցուց իրենց այդ արհամարհական ժեստը։ Ատ շենքեն դուրս ի՞նչպես պետք է ապրիին։

— Մնա՜նք, աղջիկս, մնա՜նք,— պնդեց լվացարարուհին։— Դուրս ելլանք նե անոթի կմեռնինք... ա՛լ հիմա հոս չէ ատ չարչարանքը. ուրկե՞ կվախնանք. մայրը ըսես՝ ցնդեր ցնորեր է... մնա՜նք, մնա՜նք, աղջիկս... նայինք վերջերնիս ի՜նչ կըլլա, աստված օղորմած է... սիրտ առ յավրում, մի մտմտար, բան չի կա...

Ու մնացին հոդ, ուր ամեն բան, արարածներեն սկսյալ մինչև առարկաները, ամեն վայրկյան դժբախտ աղջկան կհիշեցնեին իր արատավորման հետին մանրամասնությունները, երազի մը պես ապրված կյանքին դառն և անգութ դրվագները, չկասկածված անարգության մը պարագաները։ Եվ հպարտության զգացումով մը, որուն արդեն կպարտեր իր դժբախտություններուն մեծագույն մասը, Սոֆի իր սուր ցավերեն կրծվելով հանդերձ, ներքնապես հզոր ճիգեր կըներ իր երևույթեն բան մը կասկածել չտալու օտարներուն։ Ըստ սովորության, հանրմին կընկերանար նորեն սեղանին, ընդունելության, եկեղեցին և այցելություններու։ Բայց, հակառակ իր ճիգերուն, իր դեմքը պատող տխրության հովը, աչքերուն տարտամ, հեռավոր, ցավագին պշնումը, շարժումներուն զանդաղությունը կմատնեին իր փոթորկալից ներքնաշխարհը՝ անգութ և գռեհիկ հետաքրքրության մը խուզարկումին։

Եվ տոքթորին մեկնումեն հետո, ոսմիկ և ապուշ վայրահալությունները անհատակ ծրարը բացվեցավ նորեն։ Լվացարարուհին աղջկան վիճակին նախանձողները, այդ անտարբեր և լռիկ մեկնումին մեջ ուզեցին տեսնալ բոլորովին տարբեր պատճառներ։

— Սոֆիին ձեռքեն փախչեր է,— ըսին։— Ա՛լ չէ դիմացեր այդ աղջկանը աներեսութիւններուն։

Տուներու մէջ, գիշերային հավաքումներու մէջ, նորեն խոսակցության միակ առանցքը կազմեց լքված աղջիկը, որուն ընկերային ու բարոյական անկումը առակ նշավակի եղավ այն անվրճար ու ինքնամատույց դատավորներեն, որոնք հանրային կարծիք հավաքական ասացվածքով կհատկանշվին։ Անողորմ ենթադրություններ իբրև ստուգություններ ընդունվեցան, ամենեն անհեթեթ ստուգությունները իրողություններ հռչակվեցան և դատ դատաստան լսնալեն ետքը, զոհը հանցավոր նկատվեցավ և դատապարտվեցավ։ Հանրատանց աղիճները անոր քով առաքինի կիներ եղան, իսկ իր դատավորները սուրբեր ու կույսեր։ Գալով ամիրային թոռանը, անիկա անարատ եղի պես ջուրին երեսը ելավ, մոլորած ոչխարի մը անմեղության մորթը հագած, անբարոյական աղջկան մը անարգ մեքենայություններուն միամիտ ու դյուրին զոհը իբրև

Աղջիկները, բիրտ ու վայրագ ժեստերով, իրենց թունավոր նախանձության խորունկեն կոռնային.

— Օ՛խ, առա՞վ մի տոքթորը, նա՛հ, ջղի՛կ։

Մնաց որ Սոֆի, ամիրային տունը ոտք կոխած օրեն, զգացեր, տեսեր էր այն ատելությունն ու թշնամությունը, զոր իր վիճակին փոփոխությունը ստեղծեր էր գյուղին հասարակության մեջ, իր դեմ։ Իր երևմանը տոքթորին հետ կամ հանրմին, նայվածքները կխոժոռնային, ականջե ականջ փսփսուքներու ընկերակցությամբ։ Իրեն հանդեպ հանրության այս վերաբերմունքը, զոր իր երեկվան ընկերուհիներուն վրա ալ կտեսնար, վերջ ի վերջո սկսեր էր անտարբեր թողուլ զինքը, նկատելով որ իր առանձնաշնորհյալի այս բարձր դիրքին մեջ արհամարհել միայն կմընար հասարակաց կարծիքը։ Իր այս ընթացքեն, թշնամությունները սրված, ատելությունները հրահրված էին, և հակառակ հանդարտ երևույթի մը, առիթի մը կսպասեին ուժգնորեն դուրս պոռթկալու համար։

Եվ հիմակ, որ ամեն բան վերջացած էր, ու Սոֆի արթնցած էր անուշ երազեն, զոր միամտորեն հավերժական դարձած նկատած էր, հիմակ որ աշխարհի իրերն ու առարկաները իրենց նախկին երևույթը կառնեին իր աչքերուն, որոնք աղեկցած էին իրենց շլացումեն, ամեն բան իր իսկական գույնովը տեսնելու կարող, հիմակ որ տոքթորը մեկնած էր... արհամարհված

հանրային կարծիքը, իր կարգին, իր վրեժը կլուծեր խեղճ լքված աղջիկ մը։

Բայց Սոֆի ա՛լ չկրցավ արհամարհոտ անտարբերությամբ մը պատասխանել փսփսուքներուն, որոնք մերկապարանոց ցույց կուտային իր դժբախտության պատճառած կուշտ զոհունակությունը, իր հիմակվան կացության առաջ բերած զզվանքն ու քամահրանքը։

Ոչ մեկուն աչքերուն մեջ արդահատանքի կայծ մը տեսավ իր վիճակին հանդեպ։ Ամեն կողմ համառ և դիտումնավոր անգթություն մը իր անպատվության ամբողջ պատասխանատուն զինքը նկատելու, իր ցավագին պատմության մանրամասնությունը բոլորովին անտեղյակ, անշուշտ անմեղ աղջիկ մը դատափետելու, անվանարկելու, նշավակելու անպատիժ և հաճելի դյուրությունեն միայն հրապուրված։ Ամբոխը իր ծանրության ամբողջ բիրտ ուժգնությամբը այդ ազազուն և դյուրաբեկ զոհին վրա կնետվեր աչքները գոց, ոռնալով։

Քանի անգամներ, տուներու տակեն անցած ատենը, որոշակի լսեց պատուհաններե իր հասցեին ուղղված սա նախատական որակումները.

— Նա՛, լկրտածը կանցնի կոր։

— Ցխպնա՛ծը։

— Անամո՛թը, ջղի՛կը։

Նույնիսկ փողոցը, մայրեր իրենց աղջիկները մեկ կողմ կքաշեին՝ լքված աղջկան թունավոր հպումեն զգուշացնելու զանոնք։

— Քա աղջի՛կ, ասդին էկուր, չելլաս քսվիս։

Այնքան խորունկ և ուժգին եղավ զգացած ցավը, որ Սոֆիի առողջությունը խկույն այլայլեցավ։ Այտերը իրենց առաջվան գեղեցկությունը վերստացան, աչքերուն առինքնող և ժպտուն աշխուժությունը արցունքները առին տարին, սևեռուն ու մթին տրրտմություն մը ձգելով։ Անքուն մնալով և սնունդ չառնելով՝ նիհարությունը շեշտվեցավ, և շնչառությունը, որ արդեն տկար էր, գժվարացավ։ Սրտի բուռն և գահավեժ բաբախումները այնքան հաճախեցան, որ գիշերները քանի մը վայրկյանի համար աչքերնեքը հազիվ գոցած, մանկամարդ աղջիկը ընդոստ կարթնար, շընչահեղձ, պատուհան վազելով՝ ազատ ու զով օդով թոքերը հովահրելու։ Քիչ ատենվան մեջ, տկարությունն այնքան սաստկացավ, որ Կյուլյուկ՝հանըմ բոպե առ բոպե, քայլ առ քայլ իր աղջկան

վիճակին փոփոխություններուն կհետևեր լալագին և տեսավ վրտանդը, որ աղջկանը կյանքին կսպառնար։ Իր մայրական խնամքը, գուրգուրանքը, մխիթարանքը անկարող էին ջնջելու ցավին ուտիճները, որ բույն դրեր էին խարխուլ կազմին մեջ։

— Հեքիմի մը տանիմ քեզի, զավակս,— աղաչեց մայրը։

— Բան չունիմ, մայրիկ, կանցնի, հոգ մ'ըներ,— ըսավ աղջիկը։

Բայց տոքթորին մեկնումեն ամիսը մը հետո, Սոֆիի վիճակը ծանրացավ։ Հակառակ իր ճիգերուն, շաբթվա քանի մը օրը կըտիպվեր անկողինը անցընելու, ոտքի վրա կենալու անկարող, գլուխը բարձեն չկրնալով վեր առնել։ Հանըմը, որ մղոններով հեռի էր հասկնալե իր զավկին զոհին վիճակը, սկսավ տոտռալ այս դժպատեհ բացակայություններուն համար։ Երկար ատենե ի վեր Սոֆիին խնամքներուն ու ծառայություններուն վարժված, անոնք պակսելուն պես անհանգիստ կզգար ինքզինքը։ Քանի մը անգամ աղջկան սենյակը գնաց թթված դեմքով, կանանչ աչվընեերուն խոժոռ նայվածքովը։

— Ո՞ւր ես, Սոֆի,— հարցուց, դրանը մեջեն, խիստ ու հանդիմանող ձայնով։

— Ներողություն, տիկի՛ն,— պատասխանեց աղջիկը, նրվազկոտ ու դողդոջուն,— անկարող եմ ոտքի ելլալու... բայց պիտի ջանամ...

— Գործերը երեսի վրա են...

Ու հանըմը կառներ կքալեր մռլտալեն, ատեն-ատեն կրկնելով զավկին խոսքը.

— Ատանկներուն երես տաս նե, գլուխդ կելլան։

Սոֆի, հզոր ճիգերով, կելլար անկողնեն ու դժնդակ շարժումներով ու շնչասպառ կփութար իր սպասուհիի դերը կատարել այդ շարաշուք տան մեջ, կատարած լմնցուցած ըլլալով այն հույժ կարևոր դերը, որուն համար արդեն այդ հարկին տակ քշված բերված էր։

Ուրիշ անգամներ, հանըմը, սրտմտած, խաչոյին կպատվիրեր խստիվ՝ երթալ օրիորդը հանել անկողնեն ու բերել։ Ամչկոտ ու խղճահար գավառացին, որ առանց դեպքերուն ուղղակի ծանոթ ըլլալու ու իր շուրջը տեղի ունեցած անարգությունները հասկնալու, բնազդաբար կզգար թե օրիորդը, որուն սրտանց կհամակրեր, անօրենության մը զոհը եղած էր, զավառացին մեծ զգուշությամբ

ու փափկությամբ,— եթե կարելի է այսպես ըսել,— կմոտենար Սոֆիին սենյակին դրանը, կամացուկ մը կզարներ ու նվազկոտ «մտեք»-ի մը վրա, դուռը կիսովին բանալով.

— Օրիորդ, ներեցեք, հանըմը ձիեզ կուզե,— կթոթովեր։

Անգամ մը, Կյուլլուկ հանըմ, աղջկանը հուսահատական վիճակեն թելադրված, հանըմին դիմեց խնդրելու համար որ Սոֆին բժիշկի մը ցույց տան։ Հանըմը բարկացավ որ չնչին բանի մը համար տոքթորի դիմել կուզվի։ Ըսավ որ քանի որ տոքթոր Մարկոսյանը մեկնած էր, գյուղին մեջ ուրիշ հարմար բժիշկ չի կար ու ինքը զավկին համար անպատվաբեր կսեպեր ոչինչ բժիշկներ մտցնել իր տունեն ներս։ Հետո, շնորհ մը ընելու պես խոստացավ իր զավկին գրելիք հառաջիկա նամակին մեջ հիշել նաև Սոֆիին հիվանդությունը և դարման ուզել։

— Հեռվեն կըլլա՞, հանըմ,— առարկեց խեղճ կինը երկչոտությամբ։

— Ի՞նչ ըսել է, հարկավ կըլլա, տոքթորին պես բժիշկ մը ամեն բան կրնա հասկնալ, հեռվեն ըլլա, մոտեն ըլլա։

Լվացարարուհին, հուսաբեկ և ընկճված, հառաչելով ելավ գնաց, անիծելով այն օրը, ուր այդ դժոխային տունեն ներս մըտած էին։

— Աշկը քյոռնա ան Թադեոս աղային քի սեպեպ էղավ,— կմռլտար շարունակ։

Տիկին Մարկոսյան գրեց Փարիզ, Սոֆիի վիճակի մասին։ Պատասխանը չուշացավ. տոքթորը կըսեր մամային, որ կարևորություն չտար այդ աղջկան արարքներուն, որոնք շփացածություններ էին, ու եթե շատ ձանձրացներ վինքը դուռը բանար դուրս ըներ։ «Ատանկներուն շատ երես տալ չըլլար, գլուխդ կելլան», կվերջացներ։

Հանըմը այս նամակին հիման վրա պատասխանեց լվացարարուհիին, փրկարար լուրի մը համար իրեն դիմած ատենը...

— Աղջիկդ բան մը չունի եղեր, Կյուլլուկ, տոքթորը անանկ կըսե կոր։ Դուք տոքթորեն աղե՞կ գիտեք։

Որպեսզի ուրիշ բժշկի դիմեր, դրամ հարկավոր էր, ու Կյուլլուկ հանըմ դրամ չուներ։ Ծայրահեղության մղված, խեղճ կինը մտածեց Աղքատախնամին դիմել բժիշկի, դեղի համար։ Բայց ի՞նչպես ըներ, ո՞վ պիտի հավատար թե ինք դրամ չուներ, ամիրայի մը տունը սպասարկելով հանդերձ, մանավանդ որ իր աղ-

ջիկը ամիսներով ամիրայի մը թոռան նախանձելի գուրգուրանքին առարկա եղեր էր, իշխանուհիի մը հպարտ ու ճոխ կյանքը ապրելով։

Բայց և այնպես, Կյուլյուկ հանըմ առտու մը սև վարշամակը գլխուն ծածկելով, կամաց մը եկեղեցի գնաց Աղքատախնամին գրասենյակը՝ ստանալու համար քննիչին ստորագրությունը կըրող այն թուղթը, որով աղքատ հիվանդները կներկանային ընկերության մասնավոր բժիշկին։ Մարդը դեռ հոն չըլլալով, լվացարարուհին բակը սպասեց, ցուրտեն ու ցավեն դողդողալով։ Տաճարն ի վեր նայելով աղոթքներ քրթմնջեց, պաղատեցավ հայր աստվածեն սկսյալ մինչև հետին սուրբին։ Հետո մարդը եկավ, խոժոռ, կախերես մեկը, հազալով, թքնելով, և աճապարանոք մըտավ սենյակ. քննիչին կերպարանքեն Կյուլյուկ հանըմ սարսափեցավ։ Վայրկյան մը վարանեցավ դրանը առջև, բայց աղջկանը վիճակը մտաբերելով դուռը հրեց ներս մտավ։

— Բարի լույս, Գառնիկ աղա,— ըսավ։

Գառնիկ աղա, բարևը առնելե առաջ կնոջը երեսը նայեցավ։

— Աստծու բարին,— մռմռաց, քիթ բերան ծռմռկելով,— առտուն կանուխ ի՞նչ է ան։

Այս Գառնիկ աղան կարևոր մարդ մըն էր Հ... գյուղին մեջ, տարիներե ի վեր Աղքատախնամին քննիչը, քիչ մը գրեթե ամեն բանը ըլլալով։ Առաջ շուկան ձեռքի վրա բան ծախող էր։ Եղբը, ձեռքի բաները շուկան նետելով, թաղականի մը հովանավոր մարմինին տակեն սպրդա՞ծ և Աղքատախնամին վրա ինկած էր գիշակերի հեքով։ Նախ հավաքիչ ըրած էր զինքը։ Բայց որովհետև Գառնիկ աղա ախորժակի և սուր հոտառության տեր մարդ էր, որքան որ ալ գոհ մնացած էր հավաքչութենեն, իր անձնվիրության անսահմանությունը հասկնալու համար քննիչության պաշտոնն ալ շալկեր էր անձնվիրաբար։ Այս վերջին զբաղումը հետին ծայր համեղ գտած էր։ Իբրև քննիչ իր ձեռքն էր ուղած մարդը աղքատ ընել, ուզած մարդը չընել։ Ով որ իրեն դրամ տար, անիկա աղքատ կըլլար և Աղքատախնամեն նպաստ կընդուներ։ Հակառակ իր այս անարգ զեղծագործության, Գառնիկ աղա հեղինակավոր անշահախնդրության համբավ մը կվայելեր։ Տարիներուն ընթացքին մեջ, Աղքատախնամի վարչություններ փոխված, ինկած ելած էին, Գառնիկ աղա հոն ցցված մնացեր էր, կարծես ընկերության սյունը՝ որուն վրա կառուցված ըլլար ամեն բան։

Ասանկով, Գառնիկ աղա նույնիսկ եկող դացող խնամակալներեն ավելի ազդու հեղինակություն մը ձեռք բերած էր, և բոլոր որոշումները չէին կրնար առանց անոր հավանությանը գործադրության դրվիլ։

Աղքատախնամի անդամները իրենց հազվադեպ ժողովներուն մեջ նոր կարգադրության մը մասին խորհելե վերջ, Գառնիկ աղան կկանչեին.

— Գառնիկ աղա, աս ասանկ ընենք կմտածենք կոր, դուն ի՞նչ կըսես, դուն աս գործերուն խուռան ես։

Եվ «խուռան» նշանակալից կերպով կխորհրդածեր, սիգար մը կքաշեր, մուխերուն կնայեր և հետո հանկարծ սեղանին քշելով աթոռը.

— Էֆենտի՛մ, աղեկ ամա...— կսկսեր։

Անդամները երկյուղածությամբ մտիկ կընեին անոր բացատրությունները, առարկությունները և կարծիքները, և շատ անգամ կպատահեր որ «խուռան» ժամերով կատարված խորհրդակցությունները մեկ ջուրով լվար և իրմե բխած նոր առաջարկը, լավագույնը, միաձայնությամբ ընդունվեր, դրվատիքներու առատ բաշխումով։

— Աֆերի՛մ, Գառնիկ աղա, ապրի՛ս, աղքատները թող խըյմեթդ գիտնան քի ատանկ պապա մարդու մը ինկեր են։

Իրավ է որ ամեն մեկ ասանկ ժողովե դուրս ելլելուն, դիվային քմծիծաղ մը կշարժեր Գառնիկ աղային աղեբեկ բեղերուն տակ։

— Ավանակներ,— կմռմռար մարդուկը։

Սոսկալի կերպով կատեր այն աղքատները, որոնք անկեղծորեն և անվերապահորեն աղքատ էին, հետևապես իր զոշաքաղությունը գոհացնելու անկարող։ Ընդհակառակը, մասնավոր համակրություն մը ուներ այն աղքատներուն համար, որ հնամակալության միամտությունը կշահագործեին և որ սակայն առաքինությունը ունեին պատեհ առիթներու բան մը դնել հավաքիչին ափը։

— Հելալ ըրե, Գառնիկ աղա։

— Ճանը՛մ, ի՞նչ կընեք, ամոթ բան է ըրածնիդ,— ըսելով մարդուկը ի քթթել ական կգրպաներ կաշառքը։

Վերջապես, Գառնիկ աղա Մերկերյանին դպրոցին կպատկաներ և նույն իսկ դասերուն մեջ քիչ մըն ալ անկեց աղեկ էր։

Պաշտոնին բերմամբը, քննիչը բոլոր թաղեցին կճանչնար։

Ցուրաքանչյուր ընտանիքի նյութական վիճակը գիտեր և նույնիսկ իր հետաքրքիր բնավորությանը շնորհիվ ընտանեկան ներքին գաղտնիքներու թափանցած էր, անանկ որ, իր այս հատկությունը ճանչցված ըլլալով, զանազան առիթներու մեջ իրեն դիմում կըլլար այսինչ ընտանիքին բարոյական և նյութական վիճակին վրա տեղեկություն առնելու համար։ Պզտիկ խլավուզության պես բան մըն ալ կըներ, և երբ աղջիկ հարցնելու գային իրեն, հայրախնամ շեշտով մը կըսեր—մանավանդ եթե պատառը եղող ըլլար.

— Ծառքս մեծցած է, խաթունիկ աղջիկ է, հիշ մի հարցնեք՝ առե՛ք։

Այս տեսակ մարդու մըն էր, որ կդիմեր Կյուլլուկ հանըմ՝ իր աղջկան վիճակին ճար մը գտնելու համար։ Խեղճ կինը կվարաներ խնդիրքը մատուցանելու, մարդուն խեռ կերպարանքն խրտչելով։

— Քուզում Գառնիկ աղա,— սկսավ վերջապես,— քեզի իրիճա մը ունիմ...

Գառնիկ աղա վեր նայեցավ հարցական ձևով։

— Աղջիկս ծանր հիվանդ է, թուղթ մը տայիր տե տոքթորին տանեի։

Գառնիկ աղա նստած տեղեն ելավ, ձեռը փոխեց, նորեն նըստավ։

— Ես քեզի անանկ թուղթ մը չեմ կրնար տալ,— ըսավ քննիչը՝ ծանր լռութենե մը ետքը։

— Քուզում Գառնիկ աղա,— աղաչեց նորեն լվացարարուհին,— օտկդ պագնեմ։

— Պե՛ ճանը՛մ,— պոռաց քննիչը,— դուք ամիրային տունը չե՞ք։

— Հա, ճանըս, հո՛ն ենք։

— Է, ամոթ չէ՞ ձեզի որ ամիրայի մը տունը նստիք և Աղքատախնամին դիմեք բժիշկի, դեղի համար, թոհաֆ բան, պե՛։

— Ամիրային անունը կա, ախպարս, ծառքս ունենամ նե հոս կուգա՞մ գլուխ ցավցնելու։

— Աղջի՞կդ ալ չունի,— հարցուց Գառնիկ աղա շեշտով մը, որմե շատ բան կհասկցվեր։

— Աղջկանս փարան ուրկի՞ց է։

— Ցա ի՞նչ էր ան, մեկ ատեն մը լորդի կնկան պես կհագ-

վեր, կոքվեր կոր. ան ֆիստանները փարայով կշինվին, փարայո՛վ...

— Ֆիստանն՛ը, ֆիստանն՛ը,— հեծեց խեղճ կինը՝ ձեռքովը երեսը ծեծելով։

— Ատոնցմե մեկը ծախեցեք,— շարունակեց քննիչը անողոքորեն,— հեքիմի, իլաճի ավելք, լմնցավ գնաց։

— Ան ֆիստանները աղջկանս չէին, Գառնիկ աղա...

Քննիչը քահ-քահ խնդաց և հետո իսկույն ամենալուրջ դեմք մը առավ։

— Ցա որսո՞ւն էին,— հարցուց խորունկ ձայնով մը և պիշ-պիշ կնկանը նայելով։

Այս հարցումին պատասխանը լռությունը եղավ, գլխու օրորի մը հետ մեկտեղ, ցավագին, խորհրդավոր օրոր։

— Կյուլլուկ հանըմ,— վրա բերավ քննիչը մտերիմ, բայց կտրուկ շեշտով մը,— քեզի բան մը ըսեմ... ես չեմ կրնար քեզի թուղթ տալ, ետքը ինծի բան կըսեն. ես քեզի համար հացես չեմ ըլլար։ Հեմ աս Աղքատախնամ ըսվածը աղքատներուն համար է, դուք աղքատներ չեք սեպվիր... այսօրվան օրը ամիրայի մը աղջկանը թևին տակն եք, քեզի ամոթ է հոս գալը։ Ամիրային պատիվին ալ դպած կըլլաք։ Առտուն կանուխ գործ ունիմ, ձգե գործս նայիմ։

Եվ տրցակ մը թուղթ հանելով բաճկոնին գրպանեն, սկսավ զանոնք քննել մի առ մի։ Սակայն լվացարարուհին այդ մարդուն անողոքությանը առջև չէր ուզեր զինաթափ ըլլալ. հակառակ ցուրտին, ճակտեն ու քունքերեն քրտինքի կաթիլներ կվազեին։ Վերջին փորձ մըն ալ ուզեց փորձել։

— Գառնիկ աղա,— ըսավ վիշտեն պղտորած ձայնով,— ծրպիմ օտկդ պագնեմ, զավակներուդ խաթերը համար ըլլա սա թուղթը տուր, աղջիկս ծանր հիվանդ է...

Քննիչը թուղթերը ձգեց, ոտքի ելավ պատուհանը բացավ։

— Կիրակոս աղբար, խահվե մը,— պոռաց։

Հետո նորեն նստավ, թուղթերը ձեռքը առավ և քննությունը շարունակեց։ Քիչ հետո դուռը բացվելով մարդ մը ներս մտավ, որուն հետ Գառնիկ աղա քիթ քիթի խոսեցավ. դեմքի ծամածռումներով ու ձեռքի շարժումներով։

Կյուլլուկ հանըմ կապասեր։

Ծամկոչը խահվեն բերավ, զոր քննիչը երկար ֆլոթերով խը-

մեջ մարդուն հետ ցած ձայնով տեսնվելով հանդերձ և հաստ սիգար մը ծխելով։ Հազիվ այցելուն ոտքի ելած էր դուրս ելլելու համար, երբ դուռը բացվելով երկու հոգի ներս մտան։ Քննիչը սիրալիր ընդունելություն մը ըրավ անոնց, աթոռ հրամցնելով և որպիսությունին հարցնելով։ Կես ժամ անցավ, եկեղեցիին արարողությունը վերջացավ, և ցանցառ ժամվորները Դեկտեմբերի ցուրտին տակ քամակնին ծռած մեկնեցան։

Այդ միջոցին Թաղական խորհրդարանին դռնեն մարդ մը ելլելով, Աղքատախնամին սենյակին դրանը մոտեցավ։

Ներսեն, Գառնիկ աղա, նշմարելով այդ մարդը, աճապարանոք ոտքի ելավ։

— Հրամմեցե՛ք, Տիգրան էֆենտի,— ձայնեց։

Տիգրան էֆենտի Սափրիչյան, Թաղական խորհուրդի անդամ և Աղքատախնամի ատենապետ, նշանավոր էր իր ազգային գործունեության եռանդովը և կարմիր վիթխարի քիթովը։

Երբոր ներս մտավ, ամենքն ալ ոտքի ելան, ինչպես նաև լվացարարուհին։

— Ի՞նչ կա նայինք, բան մը կա՞,— հարցուց Տիգրան էֆենտի ռնգային անդնդախոր ձայնովը։

— Ի՞նչ ըլլա, էֆենտիս,— պատասխանեց քննիչը, գարշապար լզող իր խոնարհ ծառայի համեստուկ շեշտովը,— կաշխատինք կոր...

Տիգրան էֆենտի, բոլորշի նայվածքով մը, սենյակին մեջ գտնվողները աչքե անցուց, կիսաշրջանակ մը գծելով, որուն առանցքը իր փառավոր քիթը եղավ։

— Ասոնք ի՞նչ կուզեն,— հարցուց երկու մարդերը ցուցնելով։

— Ասոնք,— պատասխանեց քննիչը,— խեղճ կնկան մը համար եկած են քի, ոտքին, ծառքին էմմե ինչեր է... օգնության արժանի է։

— Արժանավորներուն տալու է,— վճռեց ատենապետը, և դառնալով լվացարարուհիին.

— Ա՞ս ինչ կուզե,— հարցուց։

Կյուլյուկ հանըմ հույսի և երկյուղի բոպե մը ապրեցավ։

— Ա՜ս, էֆենտիմ,— պատասխանեց քննիչը քիթը բերանը թթվեցնելով,— Մարկոս ամիրային տունեն է, սա ուր է, աղջիկը...

— Է՛յ, հա, հասկցա՛, ինչո՞ւ հոս եկեր է։

— Աղջիկը հիվանդ է եղեր, բժիշկի, դեղի համար թուղթ, ուզե կոր...

— Համմե՞։

— ։ ։ ։

Տիգրան էֆենտի Սափրիչյանի քիթը երկյուղալի կարմրություն մը ստացավ. շանթարձակ նայվածք նը նետեց Կյուլյուկ հանըմին, որուն միսերը կդողդողային, և իր ռնգային փողին ամբողջ ձայթյունովը գոռաց.

— Մարիկ, դուք աստեղը պապուլխանա՞ գիտցաք, հե՞, չե՞ք ամչնար... չե՞ք խպնիր, ամիրային աղջիկը, հեքիմի մը, իլաճի մը փարա չի՞ կրնար կոր տալ ձեզի... ձեզիպեսները նայինք աստեղ նե, աղքատները ո՞վ նայի, թոհաֆ բան պե՛...

Եվ ուժգնորեն սպառնալով քննիչին.

— Գառնիկ աղա,— որոտաց,— հանցանքը քուկդ է քի ասանկները հոս կխոթես, հետերնին էրկան բարակ հա չէ կըսես, ճամփե՛, ախպար, վռնդե՛...

Կյուլյուկ հանըմ, որ այս անտպասելի փոթորիկեն սասանած էր, խկույն սև վարշամակը գլխուն քաշելով, աճապարանոք դուրս ելավ Աղքատախնամին սենյակեն և առանց ետին դառնալու հեռացավ գնաց։

— Հիսուս փրկիչ, դուն օգորմիս մեզի,— կմրմնջեր ճամփան հևհև քալելով, ականջներուն մեջ զգալով դեռ ահռելի թաղականին գոռում գոչումը։

Ամիրային տունեն ներս մտած ատենը լվացարարուհին կանիծեր այդ սեմը, ուրկե անդին երշանկություն հուսացած էին գտնել, բայց ուր իրենց ունեցած վերջին հարստությունը—պատիվը—վրա տված էին։

Անցած դարձածի մասին բան մը չըսավ իր աղջկանը և, իբրև երկայնամիտ ու գորովագութ մայր, սկսավ խորհիլ ուրիշ միջոց մը, որով հաջողվեր վերջապես բժշկի մը խնամքներուն հանձնել իր զավակը։ Մտածեց հանըմին ոտքը ձեռքը իյնալ, բայց անոր ղղայնությանը գիտակ՝ ետ կեցավ այս դիտավորութենեն։ Այն ատեն Կյուլյուկ տուտու ուրիշ բան մը ըրավ։ Իր հարսնության ժամանակեն մնացած զույգ մը ոսկի գինդ, հին օրենքի գոհարեղեն մը, զոր պահած էր ոչ այնքան իր արժեքին համար—որ մեծ

բան մը չէր—որքան իր հանգուցյալ էրկանը մեկ հիշատակը ըլլալուն, որոշեց ձեռքն հանել։

Իրիկուն մը, մութը կոխելուն, գինդերը կծիկ մը ըրավ և կամացուկ մը պարտեզին դռնեն դուրս ելլելով իրեն ծանոթ ծեր ոսկերիչի մը տունը գնաց։ Ռուբեն աղա, ակնոցը քիթը անցընելով, լամպարին լույսով աղեկ մը քննեց գինդերը, վեր վար դարձուց, մեղմիվ քերթեց, մինչ լվացարարուհին սրտատրոփ կսպասեր, վախնալով որ մի գուցե «բան չարժեր», ըսե մարդը։

— Տասնեն վար է սա ոսկիին այարը,— ըսավ Ռուբեն աղա գոհարեղենը Կյուլլուկ հանըմին երկնցնելով և ակնոցը վար առնելով։

— Ծախեմ նե քանի՞ ղրուշ կբերե,— հարցուց կինը։

— Հարյուր ղրուշ կրնե պելքի, ան ալ առնող ըլլա նե, ասանկ պաները խոլայ չեն ծախվիր, Կյուլլուկ հանըմ,— ըսավ սմսեղուկ ծերը...— Ի՞նչ, ծախելու մի՞տք ունիս,— հարցուց։

— Հա, հոգիս, փարայի պետք ունիմ, ինչ ընեմ, քուզում Ռուբեն աղա, սրվիկա դուն առնեիր, շուտ մը լմննար։

Նենգամիտ արհեստավորը, պարապային ստիպողականությունը տեսնելով, դժվարահաճ եղավ։

— Հարյուր ղրուշ ըսի, ամա նայինք կրնե՞ ատտար,— ըսավ նորեն առնելով գինդերը և աչքին մոտեցնելով։ Ոսկին ածանցած է հիմա, իլլե քի ասիկա բեք վար այար է... մեհենկի մը զարնելու է։

— Զա՛րկ, Ռուբեն աղա։

— Վաղը հետս չարշի տանիմ, իրիկունը եկուր պատասխանը առ։

— Քուզում Ռուբեն աղա, ծախե, ինչ բռնե նե փարան բեր,— աղաչեց խեղճ կինը...

— Կըլլա, Կյուլլուկ հանըմ, կըլլա,— ըսավ ծերուկը, որ այդ վաճառումին երեսեն առնվազն ոսկի մը կվաստկեր։

Լվացարարուհին հաջորդ իրիկվան գնաց ոսկերչին, որ ինքնուն ղրուշի գումար մը հանձնեց իրեն։ Դողդղալով գրպանը դրավ այդ դրամը, որմե իր աղջկանը կյանքին փրկությունը կըպասեր Կյուլլուկ հանըմ։

Հետևյալ օրը բժիշկին գացին։ Տոքթոր Քենտիրյան քիթը բերանը ծռմռկեց զանոնք տեսնելուն։ Ուրիշներու պես ինքն ալ շատ ծանր բաներ իմացած էր անոնց մասին։ Իրավ է որ տոքթոր Մարկոյանին Փարիզ մեկնելեն ի վեր անիկա մեծապես հանգստացած էր՝ այդ վտանգավոր մրցակցեն ընդմիշտ օձիքը ազատած ըլլալուն։ Իր առողջական վիճակի մասին տոքթորին հարցումներուն՝ Սոֆի կցկտուր պատասխաններ տվավ, անշահախնդիր և հուսահատ շեշտով մը։ Ավելի մայրը խոսեցավ, քան թե ինք։ Մեկենիմեկ, աղջկան այդ տրտմալի երևույթին առջև, բժիշկը անհուն արգահատանք մը զգաց։ Քննեց զայն երկարորեն, մանրահոգ կերպով։

— Օրիորդը շատ նիհարցած է,— ըսավ ի վերջո,— աղեկ դարմանվիլ կուզե։

Եվ անոր սննդառության ու ապրելակերպի մասին մանրամասն պատվերներ տվավ, զորս հառաչանքներով մտիկ ըրավ մայրը, անոնց անդրդվելիությանը կանխավ համոզված, մինչ Սոֆի, մտացիր ու երազական, գլուխը պատուհանին դարձուցած, դուրսը կդիտեր։

— Օրիորդ,— ավելցուց բժիշկը,— ջանացեք շատ մտահոգություններ չունենալ, զվարթ ըլլալ և հաճախակի պտույտներ ընել։

Սոֆի տոքթորին նայեցավ իր հիանալի աչվընեռուն բոլոր նվաղկոտ և անդրշիրիմյան տրամությամբը։ Մարդը այդ խորունկ նայվածքին մեջ մահվան սարսուռը տեսավ։ Որքան լավ կճանչնար ինք այդ սարսուռը, օրհասական մահիճներու քով իր բազմամյա դեգերումներուն շնորհիվ։

— Հոգ մ՚ընեք, օրիորդ, շուտով կաղեկնաք,— վրա բերավ բժիշկը, գիտնալով հանդերձ, որ այդ հոգիին վրա—որ հեռավորությանց վրա կթևածեր ալ—որքան աննշան տպավորություն մը պիտի թողուր մխիթարության ատ հինցած բանաձևը։

Թաշկինակին ծայրեն Կյուլլուկ հանըմ հանեց տասը ղրուշնոց մը և տոքթորին ափը դրավ։ Դուրս ելան, Սոֆի իր մորը թևին կոթնած։ Լքված աղջիկը փողոցներեն անցած ատենը կլսեր ղուկներ, որ պատուհանե պատուհան կհաղորդվեին.

— Քա՛, նա՛, կանցնի կոր, ա՛ն է... մորը հետ։

— Հիվա՞նդ է ինչ է...

— Հապա, տոքթորը գնաց ան է։

— Օ՜, չամչցա՜ծ։

Տուն դառնալուն, ավելի հիվանդ զգաց ինքզինքը Սոֆի։ Մայրը խկույն չինել տվավ դեղերը։ Հանըմը չմացավ այդ եղելու-

թյունը։ Ապահովապես պիտի բարկանար, եթե իմանար, որ իր տունեն ոչ մեկը դուրսեն բժիշկի դիմած էր, իր տոքթոր զավակը կեցած ատենը, թեև անիկա հարյուրավոր մղոններ հեռու կը-գտնվեր այդ միջոցին։

Սակայն աշխարհի բոլոր դեղերն ու դարմանները անբավական էին ամոքելու ցավը, որ մանկամարդ աղջկան էությունը կհերյուներ։ Գիտեր ասիկա, և տխրությամբ գլուխը կերերցներ ամեն անգամ որ մայրը դեղերը տար իրեն։ Իր սենյակը, օրվան մեծ մասը առանձին նստած թիկնաթոռի մը վրա, պատուհանին մոտ, կիսորհեր։ Վերջին մեկուկես տարին, զոր ապրած էր իր ակնախտիղ շողարձակությամբը և շանթահարիչ վերջավորությամբը, երազ մը կթվեր իրեն երբեմն։ Բայց իրականությունը հոն էր, իր մոտը, իր քովը, իր վրան, իր մեջը, հեղձուցիչ և խենթեցնող, իրականությունը, զոր հոգիովը կրնար պրպտել, միտքովը քրքրել, մատներովը շոշափել տեսնել, զննել դայն, անոր թույնովը թունավորվիլ, անոր հարվածներուն տակ կիսամեռ իյնալ։ Բորբոքումի բոպեներ կունենար։ Աչվրները խենթության ցոլքեր կարձակեին։ Խեղդվուք մը կոկորդը կպատռտեր։ Նիհար, բարակ մատվրներովը, որոնք արտասովոր ուժով մը կօժտվեին հանկարծ, կքաշեր, կբզքտեր հագուստները, կուրծքը, ուսերը բանալով, շնչասպառ ու մոլեգնորեն կքակեր կուտ վարսերուն հյուսված, հարդարված կապոցները, կքաշեր, կփեթռտեր, չորս կողմեն վար թափելով զանոնք։ Ոտվրներով գետինը կդոփեր։ Ու վերջապես հոգնած, պարտասած, երեսի վրա կիյնար հեարձակ, հեքոտ ու անշարժ, միջին դարու մոլեռանդ ապաշխարուհի մը պես։ Այս տագնապներուն կհաջորդեր անուշ ու սփոփիչ անդորրություն մը։ Արցունքներ կբխեին աչվրներեն, ազատ ու լայն շնչառության մը տակ կոկորդն ու կուրծքը կզովանային։ Ու իր առաջվան կյանքին վերհուշումներովը կմխիթարվեր։ Իրենց հետին դրվագներովը իր մանկության պարագաները կնորոգեային մտքին։ Որքա՜ն անշուք էր ատ կյանքը, բայց որքա՜ն ալ անուշ։ Ու ամեն անգամ, այս քաղցր ու ըղձալի հիշատակները կհանգեին դեմքի մը,— նույնքան քաղցր ու նույնքան ըղձալի,— իր մանկության ու երիտասարդության միակ ընկերոջ, Համբիկին։ Իր ցավերուն անհուն հնոցին մեջ, Սոֆի ա՛լ ասոր կփաթթվեր, այս հիշատակին, այս դեմքին։ Կվերաշիներ հին, առաջվան կյանքը, անոր յուրաքանչյուր դրվագին վրա կանգ առնելով

ուսումնասիրելով, գնահատելով զայն, անոր կարոտովը տառապելով։ Իր ստրջացումի խոյանքին մեջ կուզեր, որ իր կյանքին վերջին մեկուկես տարվան շրջանը մեկենիմեկ, հրաշքով մը ջնջվեր ու այդ առաջվան կյանքը շարունակվեր նորեն, խաղաղ, պայծառ, անմեղ, բուրումնավետ։ Իր հիմարությամբը, իր միամտությամբը, անկարելի փառքերու իր կույր փարումովը տակնուվրա ըրեր էր ամեն բան, երկու կյանք մեկեն ջախջախելով, իրը ու անորը։ Խեղճ տղան, որքա՜ն սիրեր էր զինքը, որքա՜ն տառապեր էր իրեն համար։

— Ո՜հ, Համբի՜կ, Համբի՜կ, իմ խե՜ղճ Համբի՜կս,— կհեծեր Սոֆի ձեռվրներովը դեմքը ծածկելով, արտասվալից։

«Սոֆիս, ըսած էր ան, մի մերժեր զիս և սերս, վասնզի պիտի մեռնեի ատկե, ու դուն պիտի ըրկվեիր ատ սերեն ու պիտի ջրքախտ, թշվառ ըլլայիր, վասնզի այդ սերը միայն կարող պիտի ըլլա քու երջանկությունդ ապահովել. քու կյանքիդ սիրույն՝ իմ սերս մի՛ մերժեր»։

Իր սիրույն սատկությանը մեջ ան գուշակի ոգի ունեցած էր։ Աղերված սիրույն մերժումեն հետո քիչ-քիչ ամեն բան ջախջախվեր էր։

Ու աղջիկը, իր ապաշխարող զղջումին մեջ, վատին, սրիկային դեմ իր մեջ հետզհետե, կամաց-կամաց վառվող ատելության և վրեժխնդրության հրդեհին մեջ, այլևս սերը չէր որուն իր ներսը արծարծվիլը կզգար մերժված սիրահարին համար։ Գութի զգացումն էր, հետզհետե աճող, ծավալող, իր բովանդակ էությունը պարուրող գութը, որ ցավ մը, տանջանք մը կըլլար, աղապատանքը, որ խղճի ահավոր խայթի մը համեմատությունը կստանար։ Երթալով ավելի հստակ, ավելի որոշ կերպով կտեսնար թանկագին ու անստգյուտ ճշմարտությունը այն զգացումին, զոր իր այդ ազնիվ ու անուշ բարեկամը տածած էր իրեն համար։ Ու, հակառակ որ ինք գիտակցաբար, անգթորեն անոր կյանքը խորտակած ըլլար, անիկա, ներողամտություններուն ամենեն վսեմովը, անհիշաչարություններուն ամենեն զմայլելիովը, իր՝ Սոֆիին կյանքը փրկեր էր, հոն վերը, գահավեժի մը մահացու եզրին վրա, ավանդավեպերու անտառաբնակ պարիկի մը պես հանկարծ դուրս ցցվելով թավուտներու խավարին մեջեն։ Աչքերը բանալով՝ անոր հուժկու թևերուն վրա գտեր էր ինքզինքը։ Ո՜հ, անակնկալներուն ամենեն անակնկալը։

Ու իր ստրջանքին զառանցոտ սաստկությանը տակ, մանկամարդ աղջիկը նորեն ինքզինքը հանկարծ այդ բազուկներուն վրա կտեսներ։ Կտեսներ իր վրա սևեռված այդ աչվընները, իրենց վայրենի պշնումին մեջ տակավին անուշ, ներողամիտ ցոլմունքով մը, կրված այնքան ահռելի տվայտանքներե, հոգեկան այնքան ահեղ ցնցումներե ետքն ալ։

Այդ գրկին վրա, իր սթափումի մեկ բոպեին, զգացեր էր այդ կության փոթորիկը, հաղորդվող, սարսափեցնող ջերմություն մը, որ մագնիսացուցեր էր զինքը, բաբախում մը, որմե անոր ամբողջ մարմինը կդղրդար, կարծես համաչափ ազդարարը ներքին բոցավառ հնոցի մը։ Վերակոչված այս հիշատակին տպավորությանը տակ, հիվանդ աղջիկը կսկսեր դողդղալ, ակռաները կկափկափեին, ճակտին վրա պաղ քրտինքներ կթորեին, շնչառությունը դժնդակ կըլլար, մատվընոերովը, ջղապիրկ ու դողդոջուն, առարկաներու կկառչեր, սևածիր աչվընոերուն տարտամ ու սարսափահար նայվածքովը դեպի անորոշ կետեր, ուր կկարծեր ընդնշմարել ֆանթաստիկ ուրվագծումները այդ տեսարանին։

Մերժված սիրահարին մարտիրոսացած սիլուեթը, տանջանքի գալարումներուն տակ այլակերպված, հածելով միջոցին մեջ, մերթ պատառուն քուրջերով ծածկված, ողբալի մուրացկանի մը կերպարանքով, մազերը մինչև ուսերը վար թափած, հուսահատ, անմարդկային, մերթ գերագույն հանդիմանանքի վսեմ ու ասպետական ժեստի մը մեջ սիրտը ցույց տալով իրեն՝ լայնախոց վերքով մը պատառված, ուսկից արյունը կծորեր անհատնում կաթիլներով, ու մերթ առաջվան հեզ, անուշ, խպնոտ տղան, գետնամած պաղատանքի մը կեցվածքով, իր—անգութ աղջկանսերը մուրալով։

Գիշերները, քունը վրդովվեցավ։ Ցորեկվան տեսարանները գրկնվեցան, ավելի տխուր, ավելի ահարկու, ավելի հոգեցունց։ Առաջվան կյանքը հետզհետե կպատկերանար, եղերախաղի մը հրատակ ու բնական հոլովումը, վերը, Մաթոս ամիրային կիսավեր ապարանքին և հետո, անոր կործանումեն ետքը, փոքր տանը մեջ ապրված քաղցր ու անվրդով կյանքը ձկնորս Թումիկին ընտանիքին հետ։ Որքա՜ն երջանիկ էին հոն, այդ ծառազարդ, վայրի գեղեցկությամբ բարձունքին վրա, մեկուսի ու խաղաղ, մարդկային դավերեն ու նենգություններեն հեռու։ Ո՜հ, եթե հոն մնացած ըլլայի՜ն։ Շքեղ գյուղանկարի մը վրա նայող իր անշուք սենյակին կողքը կբաշեր։ Հապա ընդարձակ պարտե՞զը իր հորդազեղուն կանանչությամբ, պտղալից, հովանուտ ու զով ծառերովը։

Ու այդ ափսոսված հեշտալի կյանքեն՝ Սոֆի հիմակ այնպիսի մանրամասնություններ, անշան, ոչինչ դեպքեր կհիշեր։ Բաղմաթիվ տղայական պարագաներ այնպես կարևոր համեմատություններ կստանային իրեն համար, որ անոնցմե ամեն մեկուն վրա երկար ատեն կանգ կառներ, անկեց սփոփանք մը փնտրելով իր տխուր հոգիին համար, որ սակայն կարծես ավելի ու ավելի կդառնար, իր կարոտին ու զղջումին կիզանուտ սաստկությանը տակ։

Հանկարծ, օրին մեկը, անդիմադրելի փափագ մը զգաց իր մանկության վայրերը տեսնելու, անոնց մեջտեղը գտնվելու։ Երկու տարվան միջոցը, որ անցած էր զանոնք լքելեն ի վեր, հեռավոր ժամանակի մը տպավորությունը կթողուր իր վրա։ Ի՞նչ եղած էին իրենց տնակը, պարտեզը, ծառերը, դրացիները, Հոռոփ հանը-մը ու Համբիկը, մանավանդ ան։ Մանկան մը պես հրճվեցավ, երբ մտածեց որ կարելի էր վայրկյաններ ու ժամեր ապրիլ նորեն այդ սիրելական վայրերուն մեջ, տեսնել, շոշափել ու համբուրել այն առարկաները, որոնց մեջտեղ ամենեն անուշ ու անամպ բոպեներն ապրեր էր իր կյանքին։ Ու կոգևորեր խեղճ աղջիկը, արիություն մը կզգար, աչքերուն տրտմությունը ուրախության վաղանցիկ շողյուններու տեղի տալով։

Ու օր մը մորը հետ դուրս ելավ, պտույտի մը պատրվակին տակ, գարնանասկիզբի պայծառ ու խաղաղ հետմիջօրե մը։ Ճամփան, Սոֆի մայրը կտաներ դեպի այն փողոցները, որոնք իրենց նախկին թաղը կառաջնորդեին։ Խեղճ կինը, իր աղջկան ներքին ցավերուն ու դիտավորություններուն անտեղյակ, կհամակերպեր՝ ինչպես մայրերը կհամակերպին իրենց հիվանդ զավակներուն քմահաճույքներուն։

— Մայրիկ, սա փողոցեն երթանք։

— Երթա՜նք, աղջիկս։

Ու կհևար Կյուլլուկ հանըմ այդ զառիվերներեն վեր, որոնցմե շատոնց ի վեր իր մեծակառույց մարմինը չէր մագլցած, և որոնք հիմա հետզհետե, անզգայաբար, հին հիշատակներ կարթնցնեին իր մեջ։

— Աղջիկս,— կըսեր երբեմն կանգ առնելով շնչասպառ,— ատենեն ո՞ւր կերթանք կոր։

— Ասկե՛ց երթանք, մայրիկ, կաղաչեմ,— կկրկներ Սոֆի անհամբեր ու շտապելով։

Հետո վերջապես հասան այն վերջին ամայի փողոցը, ուսկից քանի մը քայլ անդին իրենց հին բնակարանն էր։ Հոն լվացարարուհին վերջապես անդրադարձավ։

— Քա աղջիկս,— ըսավ,— մեր առջի տո՞ւնը կերթանք, ուր կերթանք։

— Չերթա՞նք, մայրիկ,— կհարցներ Սոֆի,— առաջվան տուներնիս տեսնալ չե՞ս ուզեր, մայրիկ։

— Հիմա հոն մարդ չի կա, աղջիկս, Հոռոփենք շատոնց ելեր են անկե, մարդ չեղած տեղը ի՞նչ երթանք։

Այս հանկարծական տեղեկությունը պահ մը սառեցուց աղջիկը, որ խռոված, մորը նայեցավ շվարուն։

— Հոգ չէ, երթա՛նք, մայրիկ,— ըսավ տրտում ու խորունկ ձայնով։

Վերջապես հասան այն անելը, որուն խորը փայտե խոշոր դուռը կար, սև ու կոնծած։ Դուռը բանալու հարկ չեղավ, վասն զի անիկա, վերին ծխնիեն անջատված, կոնակի վրա շրջեր էր, կարծես իր անկումին մեջ հետը վար առնելով նաև պատին մեկ մասը, ուր լայնափեռեկ պատուածք մը գոյացեր էր։ Քարերը լրղնված էին՝ հողերու և փայտերու խառնուրդի մը հետ։ Այս ավերին ի տես, վիշտի շարժումով մը, Սոֆի, դժգունած, դողդոջուն, ճիչ մը ունեցավ։

— Մայրիկ, սա՛ նայե, ի՞նչ է եղեր։

— Հելպեթ, զավակս, նայող ընող չի կա։

Մանկամարդ աղջիկը, երկու կողմեն փեշերը ժողվելով, բարակ ոտվրներովը զգուշությամբ անցավ քարերուն վրայեն, պարզեղ մտնելու համար։ Մայրը իրեն կհետևեր. աղջկան շարժվածքին մեջ տենդ ու անհամբերություն կար։ Դռնեն անդին, գրեթե վազելով գնաց իսկույն գտնելու իրենց նախկին բնակարանը։ Ամոր առջև հասնելով կեցավ, շնչասպառ, տակնուվրա։ Աղեկեղ ճիչ մը ալ հոն՝ երկու ձեռքերը այտերուն զարնելով.

— Ա՜խ, ի՞նչ է աս, աստվա՜ծ իմ, ի՞նչ է աս։

Ու կդիտեր, աչքերը արցունքներով ուռած, բուռն ցավին տակ սրձանացած։

Տնակը ավերակի ամենեն սրտաճմլիկ տեսարանը կընծայեր, որ երբեք պիտված ըլլա։ Բնությունը, ամայությունը, ժամանակը մոլեգներ էին անոր վրա, հաշմեր, հոշոտեր էին զայն։ Կարծես տապարներու մոլեգին հարձակում մը կրած էր։ Երդիկը, իր բոլորտիքի կապարեն քակվելով՝ փլեր էր, իր այդ ծանր անկումին մեջ երկու սենյակներու միջնորմին մեկ մասը իր հետ փլցնելով։ Պատերուն ծեփերը, ձյունեն, անձրևեն քրքրվելով՝ թափեր էին, երևան հանելով սենյակներուն վանդակակերտ կմախքը։ Տախտակամածները, փրցված ու տարված, մեյմեկ խոռոչներ էին՝ լցված տանիքին փլվածքներովը՝ փայտ, հող, կիր, քար խառնիխուռն։ Ամբողջ շենքը, խարխսեն սարսած, մեկ կողմի վրա ծռեր էր գինովի մը պես։ Երևույթեն այնպես կարելի էր ենթադրել, որ հովի առաջին ուժգին հարվածե մը բոլորովին պիտի կքեին, իյնային, կործանեին մեծանուն ամիրայի մը փարթամության այդ հետին նշխարները, որոնց առջև հիմա կանգնած, լքված աղջիկը աննկարագրելի հուզումով կդիտեր իր մանկության այդ օրրանը, նվիրական իրեն համար, սիրելի հիշատակներու խնկաբույր սրբարան, ուր իր կյանքին երջանկագույն շրջանը ապրեր էր։ Ամեն բան կկործաներ հիմակ ուրեմն. իր երազները, հույսերը, սերը, իր մարմինը, սիրտը, հոգին, իր սենյակը, տունը, հիշատակները, ամեն բան, ամեն բան կկործաներ, կիյնար միաժամանակ, անողոք և ահռելի զուգադիպությամբ մը։

— Մայրիկ, տե՛ս, տե՛ս, ի՞նչ է եղեր տուներնիս,— կմրմնջեր Սոֆի, ավերակներու այդ տխուր կույտը ցուցունելով իր մորը, որ, ինքն իսկ, վայրկյան մը ցնցվելով տեսարանին տրտմութենեն, կեցած տեղը կմնար ափիբերան, կարոտի ինքնաբուխ հառաչանքով մը.

— Էրնեկ հոս անցուցած օրերուս...

Ու աղջիկը կմոտենար փլատակներուն, ձեռքերովը շոշափելու համար զանոնք, շենքեն ծանոթ բեկորներ գտնելու և անոնցմով ոգեփվելու համար։ Իրենց նախկին սենյակեն՝ տեղեր, մասեր կուզեր ճշտել, որոնք բաներ մը ըսեին իր սրտին, որոնց մխիթարությանը մեջ սուզվեր, մխրճվեր, բայց չէր հաջողեր՝ այդ խառնակության մեջ ամեն բան անճանաչ դարձած ըլլալով։

Բայց Կյուլյուկ հանըմ շուտով սթափած էր իր ցնցումեն։

— Սրտեղեն երթա՛նք, աղջիկս,— կըսեր, տեսնելով անոր հուզումը,— նայելով ի՞նչ կըլլա...

— Բայց Հոռոփ հանըմենք ո՞ւր են գացեր,— կհարցուներ Սոֆ-

ֆի, ավերակներու այդ լռության մեջեն ապրված տոհմի մը սրտաճմլիկ աղմուկը լսել կարծելով։

— Չիյտեմ, աղջիկս, ո՞վ գիտե, ո՞ւր գացեր են. ասկե ելլալնուս պերի հիշ իրարու երես տեսա՞նք... ո՞վ գիտե ո՞ւր են։ Երթանք սրկե, Սոֆի,— կպնդեր մայրը, ուզելով աղջկանը հեռացնել այդ տխուր վայրեն, ուրկե անոր կրած հուզումը ակներև էր։

Բայց աղջիկը չէր ուզեր հեռանալ, իրեն համար դժվար ըլլալով բաժնվիլ այդ վայրերեն, որոնք անմեղ, խաղաղ, երջանիկ օրերու դրվագները կպատմեին իրեն, հիմակ, այնքան բարբառում տխրությամբ մը։

— Մայրիկ, դուն հոս նստե,— աղաչեց իր մորը, ստիպելով զայն, որ նստի ինկած գերանի մը վրա,— ես քիչ մը պիտի պտտիմ պարտեզը։

— Կհոգնիս, զավակս, կեշ կըլլաս, հազդ կշատնա։

— Չէ, մայրիկ, հոգ մ'ըներ, հոս ավելի աղեկ կըլլամ, տես ինչ աղվոր օդ է...

Եվ իրավ զմայլելի էր վայրը։ Գարունը ուժգին հորդությամբ կզեղուր հոդ, երանգաճոխ կանանչի մը փառքին մեջ։ Խոտերը կբարձրանային զմրուխտափայլ, վայրի ծաղիկներու կիտվածներով գրակոնտիկոնված, շուքին տակը հարսնևորված ծառերու, որոնց սպիտակ ծաղիկներուն ձյունեղեն ժանյակը դեռ կմնար, կանանչ ծիրանիի վրա բանված ճերմակ մետաքսի պսպղումներով։ Ռազիաններուն հոծ թուփերը քմահաճ դրասանգումներով կարշավեին ամեն կողմե, մակաբույծ տունկերու հետ խառնիխուռն։ Հեռուն՝ անհետացած ապարանքին գետինը կտարածվեր նորեն լերկ ու ավերածո։ Պատի փլվածքները կերևային դեռ, հողեն դուրս ցցված գերանի ծայրերը, հետո գետնավոր մառանին խոռոչը և ջրշեղջին խավարչուտ կլափը։ Եվ ասոնցմե անդին, անստգյուտ, մաքուր, անսահման կիսաբոլորակի մը վրա, մեծավայելուչ գյուղանկարը իր անհամար պեսպիսություններովը, արծաթափայլ գետը, կանանչազարդ բլուրները, աղվոր հորիզոնը՝ լուսավորված մեծանշույլ արևեն։

Սոֆի կնայեր այս բոլորին իր տարտամ ու խոնավ աչքերովը, լիաթոք շնչառությամբ, տեսակ մը տարօրինակ հմայքի ներքև, որմե չէր գիտեր թե իր հոգին կցնծա՞ր, թե կտվայտեր։ Մինակ այդ քաղցր ու արտասովոր հուզումին տակ կզգար որ երակներուն մեջ արյունը ուժգնորեն կերթևեկեր, սրունքները նոր կորով մը կատանային, կենդանություն մը, ոգևորություն մը կսփռվեր իր ամբողջ էության վրա։ Գինովության պես բան մըն էր ատիկա, որ վայրկենական խաբուսիկ և անուշ կորով մը կպարգևեր։

Հիմա կփնտրեր պարտեզին այն մասը, ուր մերժված սիրահարքին բազուկները ունայն աշխատանքի մի տակ դատած էին օրերով, ամիսներով։ Ափսո՛ս, գրեթե բան մը հայտնի չէր անկեցխոտերու վայրի և ամենակուլ արշավին տակ բոլոր ածունները, բոլոր ծաղկեթուփերն ու ծառատունկերը անհետացեր էին։ Մինակ, հսկա, հաստաբուն թանթրավենին հոն էր միշտ, որուն շուքին ներքև իր ցածուկ աթոռակը կդներ՝ դիտելու համար շուրջը, վայելելու համար ծաղիկներուն բուրումը։ Անոր կոթնած, Սոֆի շուրջը կդիտեր։ Նորեն հուզման սաստկության տակ սիրտը կհևար, աչքերը կլեցվեին։ Համբիկին պատկերը աչքին կներկայանար, անոր ազնիվ, երկչոտ, բարեքիկ կերպարանքը հոդ, անհետացած ածուներուն շուրջը, աշխատելով անդադրում, սիրո կրակեն տանջված։

— Խե՜ղճ, սիրելի՜ բարեկամս,— կմրմնջեր աղջիկը, գրեթե հեկեկալով։— Ա՜խ, ո՞ւր, ո՞ւր գացին այն ժամանակները։

Ու խոտերուն մեջ կմտներ, մանր ոտքներովը անդին կհրեր, կկոխկռտեր զանոնք տենդորեն զայրույթով մը, ուզելով երևան հանել ածուներուն ձվաձև գծագրությունը, կանաչ, կարճուկ թփիկները ու ծաղիկները, թաղարները, բոլոր նախկին կացությունը։ Այո՛, կմոլեգներ վերստեղծել ատիկա, ապրիլ նորեն զայն, հավերժացնել ու վերջապես երջանկանալ անով։ Իզո՞ւր, ոչինչ կրցավ գտնել, իր ունայն ու ցավագին ճիգեն հոգնած՝ մանկամարդ աղջիկը ինկավ խոտերուն վրա, կարծես շուզելով բաժնվիլ անկե, ինքն ալ ջնջվելու, անհետանալու համար բոլոր անհետացած բաներուն հետ։

— Համբի՜կ, Համբի՜կ,— կկանչեր խղդուկ ու լալագին ձայնով, բարակ ու դեղին մատներովը խոտերուն կառչելով։

Հեռուեն, մորը ձայնը հնչեց խեղդուկ ու շնչասպառ.

— Սո՜ֆի, Սո՜ֆի, ո՞ւր ես... Սո՜ֆի...

Սթափած, աղջիկը ելավ կեցավ խոտերուն մեջ, գլխարկը տեղավորեց գլխուն վրա և մորը միացավ, որ աղջկանը երկարատև անհետացումեն սկսած էր հոգ ընել։ Անոր դեմքին արտասովոր գժգնությունը տեսնելով դող ելավ։

— Ցավրում, ի՞նչ եղար, ի՞նչ ունիս,— կհարցուներ։

— Քիչ մը անհանգիստ եմ, մայրիկ, երթանք,— ըսավ Սոֆի,

որ սաստիկ բաբախումն մը կնեղվեր և ամբողջ մարմնին վրա ուժասպառություն մը կզգար։

Ու եկան դուրս ատկե, մինչ արևը դեպի հորիզոնը ծռելով, տրտմատեսիլ ավերակին խեղ ու հաշմոտ ցցվածներուն կուտար երկար ստվերներ, ամբողջությունը շեկ լույսի մը տակ պարուրելով, որ մտացածին երևույթ մը կընծայեր վայրին։

— Մայրիկ, ուրիշ անգամ նորեն գանք,— կըսեր Սոֆի իր մորը, դանդաղ դուրս ելլելուն շարունակ ետին դառնալով, շուրջերով բաժնվիլ այդ ավերակներեն ու այդ վայրի, լքված ու ամայի բնութենեն, ուր հեշտալի ու դառն գինովության բոպեներ ապրեր էր։

— Աղջիկս,— կըսեր Կյուլյուկ հանիմ, չհասկնալով Սոֆիի հոգեբանությունը և այդ վայրերը վերադառնալու անոր համառության պատճառը պարզ քմահաճույքի մը վերագրելով,— աղջիկս, աս յապանի տեղը ի՞նչ ընենք գանք... տեսնել էր նե տեսար...

— Չէ՛, մայրիկ, ես հոս շատ կսիրեմ,— կպնդեր աղջիկը,— հոս գամ նե աղեկ կըլլամ կոր, ուրիշ անգամ նորեն գանք, մայրիկ։

— Թոհ՜ֆ. ատ յոխուշներեն վեր հոգիս ելավ, Սոֆի. հեմ քու ալ ըռենկդ ավելի նետեց...

Երբոր տուն վերադարձան, հանիմը դեռ հետմիջօրեի իր սովորական քունը քնանալու վրա էր։ Սոֆի իր սենյակը քաշվեցավ, թիկնաթոռի մը վրա իյնալու համար ուժասպառ, կրած հուզումներեն քայքայված։ Այդ ուխտագնացությունը որքան քաղցր և սփոփարար, ա՛յնքան ալ ցնցող եղած էր։ Բայց անոր գինովությունը դեռ կտիրեր իր վրա. աչքերը գոց, անով կհափշտակվեր, անով կանէանար։ Միևնույն պատկերները, ցավագին և քստմնելի, կհոլովվեին ցնորականորեն իր փակ աչքերուն առջև, տանը ավերակները՝ օրհասական շառաչումներով, պարտեզին վայրի ու ապերասան կանանչությունը՝ դիվային խոյացումներով։ Անոնց մեջ, ատեն-ատեն, հանկարծ կցցվեր ուրվական մը ահավոր երևույթով, վիթխարի հերարձակ գլխով, արյունոտ նայվածքով։ Գարա Աղաճի ծովափին և Սիլիհտար Աղայի բլուրին մարդն էր, մեծցած, ահագնացած, ահավորցած։ Սոֆի կսկսեր դողալ, կլարվեր, կդալարվեր թիկնաթոռին վրա, ինքզինքը այդ մղձավանջեն ազատելու ունայն ջանքերով։

Մյուս օրերը, իր հոգիին տանջանքը չդադրեցավ։ Վրիժառության կրակը, զզջումի և ապաշխարության մոլեռանդ թափը, ամեն բան վերսկսելու, վերականգնելու իր անօգուտ կամեությունը, փոխնիփոխ, խառնիխուռն, երբեմն միահաղույն կմրրկեին իր գանը, կսպառեին իր վտիտ մարմինը։ Ժամերով, դեմքը ծածկած, կմնար անշարժ, թմրած, ոչնչացած։ Բժիշկին դեղերը ոևէ նպաստավոր արդյունք չունեցան։ Ընդհակառակը, Սոֆի ավելի դեղնեցավ, ավելի վատուժցավ։ Զոր հազը, զոր միշտ ուներ արդեն, հիմա ավելի հաճախ կցնցեր անոր տխեղծ կուրծքը, շնչառությունը դժվարացնելով։ Իր•խոշոր, սև աչվքները տենդավառ ցոլքեր կարձակեին, տարտամ սևեռումներով, որոնք կարծես ա՛լ հոս չէին նայեր, հեռավոր անծանոթ հորիզոններու հետամուտ։ Դեմքին վրա իր կուսականության պաշտելի սնգույրը կերևնար նորեն։ Մոլորումի և ապականության տիղմը, որուն մեջ ընկղմեր էր պահ մը, չէր կըրցած ցայտեր նետել անոր մաքուր, անապական հոգիին վրա։ Հուսախաբությունը, ցավը, ապաշավը լվացեր էին զայն, մարմինին տալով իր կույսի անբծությունը, նայվածքին՝ իր տրտմալի քաղցրությունը։ Սոֆի առաջվանը եղավ նորեն, անուշ, բարի, գթոտ։ Իր նախկին վիճակին կարոտը քաշեց, ափսոսաց զայն։ Մանկութենեն ի վեր իր ապրած խաղաղ կյանքին վրա հանկարծ փոթորիկ մը անցած էր. դիմադրելու անկարող, այդ ամպրոպին մոլուցքներուն հանձներ էր ինքզինքը։ Բայց հիմա անցած գացած էր ան, տեղի տալով անդորրության, բայց անդարմանելի ավերմունքներ թողնելով իր ետևը, անցած տեղին վրա։

Հանդարտ վայրկյաններուն, ողջամիտ և անաչառ, Սոֆի իր սխալները կթվեր, ինքզինքին կբացատրեր զանոնք, կերպով մը անոնց վերլուծությունը կըներ։ Որքա՜ն հստակ և ճիշտ կտեսնար ու կգտներ հիմա։ Առանց դժվարության, այժմ ինք կընդուներ որ իրեն համար միակ երջանկությունը այն համեստ ու անշուք կացության մեջ պիտի ըլլար, ուր ծնած և ուր ապրած ալ էր տարիներով։

Որքա՜ն խաղաղ պիտի ըլլար իր կյանքը ու իրական, եթե, օրինակի համար, հոն վերը, իր աղքատի անշուք խրճիթին մեջ ապրեր Նորեն, ու երբոր Համբիկ գար իր սերը հայտնելու իրեն, ինք ընդուներ ու փոխարիներ ատիկա, այդ ազնիվ, աշխատասեր ու խելացի երիտասարդին հետ կապեր իր կյանքը, ու բույն մը կազմեին տաք ու արգավանդ, ուր՝ սիրո հարաճուն փթթումի մը մեջ՝ համեստ, բայց արևոտ կենցաղի մը հեշտանքը վայելեին խաղաղորեն։

Երազված այս երջանկության հեռապատկերին առջև, հիվանդ աղջիկը կենդանություն մը, ոգևորություն մը կստանար, զանիկա վերապրելու հնարավորության մը խաբկանքեն տարվելով։ Բայց իսկույն, վայրագ ու աններող իրականությունը, հոն, գլխուն, ուսերուն, մարմինին, հոգիին վրա ծանրացած, կսթափեցներ զինքը։

— Ա՜խ, ա՜խ,— կհեծեր աղջիկը՝ անդրադառնալով իր դժնդակ ու անհնարին կացության, իր վերջնական փճացումեն սարսափահար։

Իր հուսահատ ու լալահառաչ առանձնացումներուն միջոցին, արցունքներե պղտորած աչվրներովը երկարորեն կդիտեր բոլոր այն առարկաները, որոնք սուտ, խաբեբա, պիղծ սիրո մը անարգ առհավտչյաներն էին եղած։ Հիմա, այդ առարկաներուն մեջ տեղը, քովն ի վեր, անոնց հարատև ու անխուսափելի շոշափումին տակ, վարնոց, անխոստովանելի, եղեռնական առուտուրի մը, ամոթալի փոխանակության մը գաղափարը կտեսնար։ Ամեն մեկը մեյ մեկ համբույրի գին էր, մեյ մեկ գգվանքի վարձք, ամբարիշտ ու բղջախոհ սարսուռներու բոլորանվեր ու արժանապես շահված պարգևը։ Անոնք, քիչ-քիչ, մեկիկ-մեկիկ եկած էին բան մը գողնալու իրմե. իր սերը, իր պատիվը, իր կուսականությունը, իր երջանկությունը, իր կյանքը։ Ահռելի ու արյունոտ ապացույցներ, կկենդանային հիմա անոնք հոդ, անարգված, լքված աղջկան սենյակին մեջ, ամեն բոպե դառն և անդարմանելի հուսախաբության մը խորհրդանշանը։

Ու տենդով մը հրահրված, ջղաձգորեն երբեմն կխոյանար այդ առարկաներուն վրա, զանոնք փշրելու, ջարդելու բզքտելու մոլեգնությունով մը։ Փարթամ ու հմայքոտ աղիճի մը զարդախուցին պերճությունը կներկայացներ այդ առանձնոցը։ Նրբարվեստ կահերու, գեղորներու, մանր մունր առարկաներու խառնիխուռն, բայց սիրուն հարդարումով մը, ժանյակներու ձյունեղեն սպիտակությամբ մը երանգավորված, մեղկ, հաճոյալի, տաքուկ բույնի մը խորհրդապահ հեշտություններուն սարսուռովը լեցուն։ Օթոցապատումներեն կախված դիցաբանական պատկերներ, ճերմակ հավերժահարսերու լուսավոր ու հայրատ մերկություններով, ոսկեզօծ շրջանակներու մեջ. թավշավոր լայն բազմոցներ՝ սենյակին անկյունները, ձեղունեն կախված վարդագույն կանթեղը, գեղարվեստորեն բանված սադափաղարդ գահերը, ծածկված բազմատեսակ պիպլոներով, հայելավոր զարդասեղան մը մահոկենիե՝ ուր պրճնասեր կնոջ մը բոլոր պիտույքները խենթուխելառ, բայց ազվոր խառնաշփոթությամբ մը կհեծային առատ, փալփլուն և անուշաբույր, ու հետո բոլոր այն շնորհալի և սիրուն ոչնչությունները, զորս սիրող ու ցնծացող աղջկան մը քմշոտ երևակայությունը կծնի, ցանցնված հոս հոն, պատերուն վրա, գետինը, անկյունները, կահերուն վրա։ Սոֆի ա՛լ չէր դպչեր ատոնց, որոնք երբեմն իր գուրգուրացող խնամքին հարատև առարկան եղած էին. անոնց շոշափումը, տեսքն իսկ սոսկում կուտար կարծես իրեն։ Անոնց ամեն մեկը իր մեկուկես տարվան հուզումնալից կյանքին դրվագներուն հուշարարն էր։ Ու երբեմն, իր ոչնչացումի, ինքնամոռացումի բոպեներուն՝ այնպես կթվեր իրեն թե իր ապրած այդ անհավատալի շրջանը երազ մը եղած էր լոկ, անուշ ու ֆանթաստիկ մղձավանջ մը միայն, որուն փաստերը հոն էին, շուրջը, ամեն դին, անհերքելի, շոշափելի ու ջախջախիչ։

Ա՛լ վերջացած էին հայելիին առջև երկարաշունչ, մանրակրկիտ արդուզարդերը, որոնք օրվան իր ամենեն հաճոյալի ժամանցներն էին, իր վարսերուն հոյակապ շենքը, իր նրբարվեստ մատվներուն տակ, շքեղ, հանկուցիչ հարդարումներ կստանար, արժեցնելով իր կուսական նշուլագեղ դեմքին աղվորությունը։ Հիմա անոնք անհամբեր ու տենդալի անփութությամբ մը կամփոփվեին գանգին վրա, կթափթփեին քունքերեն ու ծոծրակեն, շեշտելով իր ապաշխարուհիի արտասվաթույր երևույթը։ Հանդերձարանին մեջ, ուր ան երբեմն մեքենաբար կմտներ, կմնար շվարած ու դալկահար, իր բազմաթիվ հարուստ պարեգոտներուն դեղին առջև։ Տոքթորը, դեպի ցոփության ու շվայտության վայրերը իր հետ քաշած տարած ատենը, զանիկա հագվեցնելու խնամքը ունեցած էր փարիզյան կիսաշխարհիկի մը պերճությամբը և խենթությամբը, իր իդեալին իրականացումին բան մը պակաս չձգելու համար։ Մետաքսը, թավիշը, սնգույրը, ժապավենը, մուսլինը իրենց այն բոլոր ձևերուն տակ, զորս կնոջական քմայքն ու տառոլինակությունը միայն կարող են տալ անոր, հոն, այդ հանդերձարանին մեջ սեղմված էին, անուշահոտ, զգլխիչ բուրմունքներով թրծված, իրենց գույներուն և փայլին պերճ ներդաշնակությամբը։ Անքթիթ և շնչասպառ, Սոֆի իր անառակության և իր անխորհրդության այդ աղվոր ու վշտալի ապացույցներուն կնայեր, երբեմն, կսկիծեն՝ տարված, հորդ արցունք թափելով, հեկեկալից, երբեմն, կատաղի վրիժառության տագնապեն խելահեղ,

մատներովը ու ակռաներովը վար քաշելով, պատռտելով, բզքտելով իր ամոթին այդ զարդարուն ու հոտավետ վկայությունները։

Եվ իր մաքրագործիչ ապաշխարության բոլորովին անձնատուր, ա՛լ սկսավ անդադար մերժված սիրահարը մտածել, անով սփոփվիլ, անով տանջվիլ, անով ապրիլ։ Իր մեջ ասիկա սպառիչ ու անողորմ մխիթարություն մը եղավ սակայն։

Հակառակ իր ստրջանքին խորունկ անկեղծությանը, գործված սխալը, կատարված ավերն ու անարգությունը դարմանելու իր բացարձակ անկարողության դյուրին ընբռնումը, նոր ու զարհուրելի շարշարանք մը եղավ իրեն համար։ Իր ջախջախված, լլկված ոգին, իր անարգված կամքին, իր երիտասարդական եղծված կորովին ու ա՛լ անդարմանելի կերպով քայքայված մարմնին մեջ զգաց, տեսավ, հաստատեց ամեն բան վերսկսելու իր այդ անկարողությունը։ Ի՞նչպես շինել նորեն ամիրային հյուղակը՝ Հ... գյուղի բարձունքին վրա։ Ի՞նչպես փոխադրվել հոն նորեն։ Ամբողջ կործանված կացություն մը ի՞նչպես վերականգնել, մարդեղեն սկսյալ մինչև իրերը։ Անփորձ աղջիկի իր մեկ դյուրին շարժումը, անխորհուրդ և ամբարհավաճ, ետևեն բերեր էր, շղթայաբար, կործանումի այդ շարքը։ Ու հիմա, հսկաներու ուժը չպիտի բավեր առաջվան վիճակին մեջ դնելու ամեն բան, շղթայաբար։ Բայց, կմտածեր Սոֆի, եթե ամեն բան կարելի ըլլար վերաշինել, հնարը կա՞ր արդյոք մերժված սիրահարը վերաշինելու։ Գարա-Աղաճի ծովեզերքին վրա ցցված ուրվականը, իր խավահեր գլխովը և ահռելի նայվածքովը, ա՛լ անվանելի, փակչտուն, մակաբույծ պատկերը եղավ իր վեհերոտ երևակայությանը։ Այդ ուրվականն ի՞նչպես կարելի էր իր մանկության հեզ, համեստուկ, երկչոտ սիրուն ընկերը դուրս հանել նորեն։

— Ո՜հ, լմնցած է ամեն բան,—կհեծկլտար մանկամարդ աղջիկը, սրտաճմլիկ հուսահատության տաղնապներու մեջ գալարվելով ունայնորեն։

Սակայն, հակառակ իր այս հուսահատությանը, հակառակ ամեն բան վերջնականապես վերջացած ըլլալու իր համոզումին, և ճիշտ ասոր համար, իր մեջ փափագ մը, պետք մը ծնավ տեսնելու նորեն Համբիկը, խոսելու անոր հետ, մխիթարելու զայն՝ եթե կարելի էր, և մխիթարվելու ալ անկից՝ եթե անկարելի չէր։ Հիմա հոգին բոլոր խանդովը կուզեր որ դարձյալ դիպված մը իր գեմը հաներ զայն հանկարծ։ Օ՜, գիտեր թե ինչ պիտի ըներ ինք ա՛լ այս անգամ, եթե Սիլիհտար Աղայի բլուրին արկածին պես արկած մը անոր թևերուն մեջ նետեր զինքը վերստին։ Սարսափած չպիտի նվաղեր դարձյալ, ընդհակառակը, իր վրա ծռող այդ աչարկու և վայրենի գլուխեն փոխանակ սարսափելու, անոր պիտի ֆարեր, պիտի համբուրեր զայն, ապաշավի արցունքներովը պիտի ողողեր, «մեղա՜, մեղա՜, ներե՛ ինծի, ներե՛, Համբիկ» պիտի պաղատեր զոհին ականջին։ Անկարելի էր որ անիկա շարունակեր իր անզգացությանը մեջ մնալ, պիտի խանդաղատեր, պիտի հուզվեր ու արցունքները իր արցունքներուն խառներ գուցե,— օ՜, անհուսալի ու երջանիկ պատահականություն— բարոյական հեղաշրջմամբ մը, ան նորեն դառնար առջի Համբիկը, ըլլար հեզ, անուշ, պաղատալից։ Ու կտրված, ընդհատված կյանք մը վերսկսեր իր բնական ընթացքը ապրիլ նորեն, կյանքը զիրար սիրող երկու էակներու, զորս մրրիկ մը բաժնած էր վայրկյան մը։

Ասանկ երազներ շատ երազեց Սոֆի։ Անկարելի, մտացածին դիպվածներ երևակայեց, հոգեցունց եղկերերգություններ որոճաց, ֆանթաստիկ պատկերներ կրկնեց, որոնց ամենուն մեջ ալ երկու զոհերը իրենց հոգիին տանջանքներովը կգալարվեին, ոչնչացած երջանկության ետևեն վազելով հևիհև, առանց երբեք անոր հասնելու։

Իր հոգեկան այս ալեկոծումներուն մեջ հանդարտության ցանցառ բոպեներ ալ կունենար։ Թոթափած ամեն խղճահարություն, ամեն ստրջանք, միտքը պատող հուսահատության մշուշը վանելով, հանկարծ այնպես կուզեր հավատալ թե վիճակը, որուն այդքան խելահեղորեն անձնատուր եղեր էր, մտացածին բան մըն էր լոկ, արդյունքը իր ֆիզիքական տաղնապներուն ու հրահրված երևակայությանը։ Չէ՛, ինքը լքված, լլկված աղջիկ մը չէր։ Տոքթորը անգիտակցության սովորական մեկ բոպեն այդ սխալը գոլծեր էր։ Ան ապահովապես զղջացած էր հիմակ ու կպատրաստվեր իր սխալը դարմանելու։

Ու նորեն մերժված սիրահարը մոռացության ու լքումի մշուշներուն մեջ անհայտ կըլլար, ամիրային թոռան հաղթական երևումին առջև ոչնչանալով։ Սոֆի, ոգևորված, առողջացած, ոտքի կելլեր, կշրջեր իր սենյակին մեջ, զգվական ակնարկներով դեպի բոլոր առարկաները, զորս ջախջախելու տենդովը կայրեր քիչ մը առաջ։

— Չէ՛, չէ՛,— կմրմնջեր,— տոքթորը չի խաբեր զիս, օ՜, անկարելի է, անկարելի։

Ու սովորականին պես, հայելիին առջև անցնելով, ձեռք կառներ իր վարսերուն գիսակները, կհարդարեր զանոնք երկարորեն, պատրաստելով այն հրաշալի գլուխներեն մեկը, որոնք իր դեմքին ամբողջ չքնաղությունը կարժեցնեին, իր է՛ն գեղեցիկ պարեգոտներեն մեկուն մեջ կկաղապարեր իր նիհար մարմինը. կարծես այն երջանիկ օրերեն մեկը ըլլար, ուր ամիրային թոռը հասարակության հիացումին կենթարկեր զինքը այնքան սիգացող երևույթով մը։

Հետո հանըմին կներկայանար ճիշտ ինչպես, երբ տակավին շնորհազրկության հարվածին չէր ենթարկված։ Գուրգուրալի խնամքով մը կշրջապատեր ամիրային աղջիկը, մինչև իսկ հոյժ բնականորեն տոքթորին խոսքը կբանար։

— Հանը՛մ, տոքթորեն ի՞նչ լուր, նամակ կառնե՞ք կոր... առո՞ղջ է, Փարիզի մասին ի՞նչ կգրե։

Ու հանըմը, իր ցնդածության խորունկեն մոռցած ամեն բան, իր զավկին մտածումովը միայն հափշտակված, անոր մասին շաղակրատելու այդ բարեդեպ առիթը չուզելով փախցնել, անկեց ստացած նամակներուն պարունակությունը լվացարարուհիին աղջկանը կհաղորդեր, տոքթորին գլորած սուտերուն մեկին վրա հազար ալ ինք դնելով, Սոֆիին ուրախության բացագանչություններեն ընդհատելով ատեն-ատեն։

— Պռավո՛, տոքթոր... ա՜հ, ի՞նչ կըսեք, հանըմ... որչա՞փ ուրախ եմ...

Ու հետո, անձկալից.

— Ե՞րբ պիտի գա, հանըմ։

— Աղջիկս, անիկա հիմա մեծ պրոֆեսորներու հետ ժամանակ կանցունե կոր։ Իր գյուտին շատ հավներ են. ուրիշ գյուտեր ալ պիտի ընե... հիշ շուտով կձգե՞ն... Ա՛խ, ո՞վ գիտե երբ պիտի գա,— կավելցներ տիկին Մարկոսյան աղեխարշ հառաչանքով մը։

Եվ իբր թե բան մը չեղածի պես, Սոֆի կհանդգներ խնդրելու տիկինեն, որ իր հարգանքները հաղորդեր տոքթորին. առաջիկա նամակով։

Իր այս անգիտակից ու կսկծալի ինքնախաբեության մեջ կատաներ մեկ քանի օր, հետո նորեն մատնվելու համար ծանրաթախիծ հուսահատության, ավելի բուռն և ավելի լալահառաչ։

Եղավ օր մը, ուր այլևս անբավական երևցավ իրեն խոսիլ Համբիկի սովերին հետ, ներում պաղատիլ անկե՝ իր ըրած չարիքին համար։ Տիրական ու անհաղթելի պետք մը ծագեցավ իր մեջ այդ կորսված տղուն ետևեն վազելու, իր ցավը, դժբախտությունը անոր երեսին տալու, խոստովանելով իր ոճիրին ծանրությունը, և գարման մը խնդրելու իր վիճակին։ Ու վերջ ի վերջո, իր մարը կուրծքին վրա ինկած ամեն բան հայանեց անոր։ Նամակին պատությունը ըրավ։ Կյուլյուկ հանըմ մտիկ ըրավ, ափիբերան, աչքերը խոշոր-խոշոր բացած։ Անսահման կսկիծ մը անոր դեմքին թույլ մաշկերուն վրա կծրագրվեր՝ այս հեկեկալից խոստովանության առջև. իր աղջիկեն ետքը, Համբիկը սիրած էր ան, այդ խելոք, անոգ տղան, որուն նման մանչու մը կարոտովը տապկված էր լվացարարուհին շարունակ։ Ու երբոր Սոֆի իր կսկիծոտ հայտնությունը վերջացուց, մայրը չկրցավ սա բառը չնետել անոր, հանդիմանության մը պես.

— Աղջիկս, ըսել է քի ատ տղուն ատանկ ըլլալուն սեպեպը դո՛ն եղար...

— Է՛ս եղա, է՛ս,— հառաչեց Սոֆի։

— Վա՜խ յավրում,— ողբաց Կյուլյուկ հանըմ, արցունքները սրբելով։

Հետո տրտմալի լռություն մը տիրեց մայր ու աղջկան միջև։ Լվացարարուհին իսկույն կմտածեր այն խաղաղ ու երջանիկ կացությանը վրա, զոր պիտի ունենային, եթե իր աղջիկը այդ պատվական տղուն սերը մերժած չըլլար, կյանքը անոր կապած ըլլար, փոխանակ գալու ամիրայական այդ դժոխքին մեջ իյնալու, ուր ամեն բան վրա տված էին, պատիվ ու երջանկություն։

— Ա՜խ, յավրում, ինծի ինչո՞ւ չըսիր ան ատենը,— կվավաղեր խեղճ մայրը,— հե՛մ քեզի մեղք եղավ, հե՛մ ինծի, հե՛մ ալ զավալը տղուն։

— Ի՞նչ գիտնայի, մայրիկ, սխալեցա, ան սրիկան խաբեց ինծի։

Ու ա՛լ խոստովանելու տկարությենեն տարված, Սոֆի ամիրային տան մեջ իր ապրած կյանքին գաղտնիքն ալ պատմեց մորը։ Թե ինչպես տոքթորը քիչ-քիչ իր սիրտը շահած էր փայլուն խոստումներով, ապագայի շլացուցիչ հուսադրություններով։ Թե ինչպես ինք սկսած էր սիրել զանիկա, վայրկյան մը չկասկածելով անոր չար դիտավորությանցը վրա։ Թե ինչպես, մոռնալով ինքզինքը, եղեր էր անորը, ու ան վայրենորեն լկեր էր զինքը։ Այս ամենը

ըսավ Հուզումեն, ամոթեն, վրիժառության տենդեն պղտորած ձայնով, առանց մորը երեսը նայելու, ինքնիրենը խոսելու պես։ Ու մայրը մտիկ ըրավ այս անկարելի պատմությունն ալ, իր ռամկական համառոտ բառարանին մեջեն չկարենալով հարմար բառեր գտնել իր զգացումը հայտնելու, այդ կացությունը որակելու համար։ Մինակ, իր թաց, ողորմուկ նայվածքին մեջ, կատաղության կայծեր կածկլտացին, լայն կուրծքը ավելի դժնդակ ժխորով մը ելավ իջավ, ու երբեմն ձեռքովը սրբեց շուրթերուն անկյունը, որ ինքնաբերաբար թանձր ու փրփրող լորձունք մը կգոյանար։

— Սյուրդյո՜ւք շունը,— մռլտաց ան, երբ Սոֆի իր խոստովանությունը վերջացուց, հանկարծ հեկեկալից լացի մը մեջ պայթելով։

Ա՛լ անկեց ետքը, ամեն օր, մայր ու աղջիկ իրարու քով էին, մեկը իր հառաչալից մխիթարությունները ջամբելով, մյուսը իր խոստովանություններուն մեջ պակաս մնացած, մոռցված մանրամասնությունները լրացնելով, հեծեծագին լացելու ընկերակցությամբ։

— Մայրի՛կ, Համբիկը գտնանք, տեսնանք, ա՛նպատճառ,— կպահանջեր հիմա Սոֆի։

Լվացարարուհին անոր այս ուշ մնացած փափագին գլուխը կօրորեր սկեպտիկ տխրությամբ մը։

— Ան զավալլբեն խեր չի կա ա՛լ, զավակս,— կըսեր,— անոր տարին տավան լմնցեր է։

— Կաղաչեմ, մայրիկ, մեյ մը տեսնանք, ի՞նչ կըլլա...

— Քա զավակս,— կպնդեր մայրը,— խելքին եկեր է, խենթին հետ ի՞նչը պիտի տեսնվիս... էլլա ճիտդ պլլվի, վախնաս, հալիր իմանա... ե՞տքը։

Բայց Սոֆի չէր հուսահատեր մորը այս ընդդիմությենեն. կաղաչեր, կպաղատեր, կուլար, նույնիսկ հայտնելով, որ եթե տեսներ զայն, ապահովապես պիտի աղեկնար։ Կյուլյուկ հանըմ, վերջապես, ստիպվեցավ տեղի տալ աղջկանը այս անհեթեթ քմահաճույքին։

Մայր ու աղջիկ դեպի ծովեզերք ուղղվեցան համբաքայլ և սկսան Համբիկի մասին ձկնորսներուն հարցումներ ընել. ձկնորս մը.

— Խե՞նթը,— հարցուց սուրճին գավաթը ձեռքը մոտենալով։

— Հա՛, ճանըմ, Թումիկին տղան։

— Հյո՜ւ, ան ո՛վ գիտե վուր է հիմա,— ըսավ նորեկը ձեռքը փոքի հեռավորությունները կարկառելով.— ան տեղ մը չկենար քի, գլուխը կառնե կերթա...

— Ա՛ֆ կընեք ամա,— ավելցուց ծեր ձկնորսը,— ատ խենթը ի՞նչ պիտի ընեք, քուրուկ, անիկա մարդու հետ չիֆթ մը խորաթա ըներ. ան սա աշխարքեն էլած պան մըն է... անոր ի՞նչ պիտի ըսեք քի. ան խոսք չի հասկնար։

— Տեսա՞ր,— ըսավ մայրը Սոֆիին դառնալով։

Սոֆիի դժգույն այտերուն վրա կարմրություն մը երևցավ։ Մայրը մեկ բառով կմատներ զինքը այդ մարդոց։ Երկու ձկնորսները դարձան հիմա աղջկան նայելու զարմացմամբ։

Մայրը շուտով հասկցավ իր ըրած կաֆը։

— Անիկա մեր ծառքը մեծցած է, ախպարս,— ըսավ ձկնորսին,— զավկիս պես կսիրեի, քանի քի հոս եկեր ենք նե մեյ մը տեսնանք ըսի...

— Է՛յ, սանքի կեշ ալ չըլլար,— պատասխանեց մարդը,— զավալլը տղուն վրան գլուխը ասված հեռու ընե, կթափի, կթափթրփի կոր... մայր մը ուներ քիչ շատ կնայեր, ան ալ քանի մը ամիս առաջ մեռավ, հիշ նայող ընող չունի...

— Հոռոփը մեռա՞վ,— հարցուցին մայր ու աղջիկ մեկ ձայն, այլայլած։

— Մեռավ յա,— հաստատեց Ղազար անդիենն։

Սոֆի աչվընները թարթափեց՝ արցունքի կաթիլ մը զսպելու համար։

— Վա՛խ, խեղճ Հոռոփս,— ողբաց Կյուլյուկ հանըմ, աչքերը սրբելով։

— Ըսել է որ,— հարցուց Սոֆի, ա՛լ չպարտկելով իր հուզումը,— Համբիկ ա՛լ մարդ չունի, երեսի վրա մնացած է։

— Հապա՛, աղջիկս, գիշերները աս խահվեն, բեքեին վրա կպառկի։ Էյեր մենք ալ չնայինք նե երեսի վրա պիտի մնա անոթի մեռնի։

Սոֆի խումբեն բաժնվելով քանի մը քայլ առավ դեպի ծովեզր։ Հուզումեն կխեղդվեր։ Հեկեկանքներ կուգային, կխռնվեին կոկորդին մեջ։ Կուրծքը կտանջվեր։

— Նստեցե՛ք, քուրուկ,— ըսավ ծեր ձկնորսը, երկու ցած աթոռակներ առջև քշելով,— հիմակ ալ չէ նե՝ իրիկվան անպատճառ

կուգա, ո՞վ գիտե ուր գացած է պտտելու, պաշխա տեղ չերթար, կուզեք նե պեքլեյեցեք։

— Այո՛, այո՛, կսպասենք,— ըսավ Սոֆի, ետ դառնալով խուսուն և աթոռակին մեկուն վրա նստելով։

Ձկնորսները վերսկսան իրենց ընդհատված գործը, և լռությունը տիրեց։

— Վա՛խ Հոռոմ,— կմրմնջեր լվացարարուհին, երբեմն անմխիթար իր վաղեմի բարեկամուհիին մահվան լուրեն։

— Ինչե՞ն մեռեր է,— հարցուց ծերունիին։

— Խեղճութենե,— ըսավ մարգը կտրուկ։

Եվ ավելցուց.

— Մեյ մըն ալ աս տղուն կսկիծեն։

Նուլ հեծկլտանք մը լսվեցավ մեկենիմեկ։ Ձկնորսները նայեցան ու տեսան Սոֆին, որ մեռելի պես դժգույն՝ ձախ ձեռքովը հենարան մը կփնտրեր կոթնելու։ Կյուլյուկ հանըմ մինչև որ շարժեցավ, ձկնորսները աղջկան քովը հասան։ Բայց շուտով սթափեցավ Սոֆի։

— Բան մը չունիմ,— ըսավ ոտքի ելլելով, ինքզինքին դեմ արիանալու համար։

Օրը շաբաթ ըլլալուն՝ հրեա կիներ ու աղջիկներ գետեզրը կշրջեին կամ կնստեին խնդալով, պոռչտալով. նավակներ դիմացի կղզյակեն անընդհատ կբերեին ծով մտնողները, որոնք տեղվույն աղմկալից զվարթությունը կշեշտեին։ Գետակին զանազան կետերուն վրա, տղմաբարձ տափանավեր՝ ջուրին հետ հարթ հավասար կեցած անշարժ, ճնշված՝ տիղմին ծանրությանը տակ, զոր գործավորները իրենց երկարաձիգ բրիչներովը վեր կհանեին, պեղելով ջուրին հատակը, պեղելով, անվախճանորեն պեղելով, անդունդին վրա ծռած լուռ ու մունջ։ Հետո ձվաձև նավակներ կասհեին անդորր ջուրը կարծես հազիվ հպանցելով իրենց նրբալացիկ իրանովը։ Տաք է։ Քրտինքները կվազեն մսեղ այտերեն կյուլյուկ հանըմին, որ սիգար մը կծխե նորեն, իրերուն ու կացություններուն մշշային մեկ ըմբռնումովը։ Սոֆի կպտտի, սպասողի մը անհամբերությամբը, շուրջի առարկաներեն վեր ելած, հեռավոր մտածումներու անձնատուր։

Ժամեր կանցնին։ Ուռկանները կկարկատվին ծերուկ ձկնորսին անխոնջ ու կոշկոռտ մատվներուն տակ, բայց Համբիկ չերևնար։

— Քուզում ախպարս, աճապարչի՞ գար կըսես։

— Կուգա, մայրիկս, հիմա վուր է նե կուգա։

Արևը կսկսի խոնարհիլ դեպի Պահարիեի բլուրը։ Գետափը կամայանա քիչ-քիչ։ Աղմուկները կլռեն։

— Նա՛, իշտե Համբիկը,— ըսավ հանկարծ Ղազար, խարխուլ նավամատույցը ցույց տալով։ Մայր ու աղջիկ հոն նայեցան։

Ձկնորսի նավակե մը արդարև դուրս կելլար տարաբախտ ոգան։ Նույն վիճակին մեջ էր. ավելի գեշ։ Գլուխը բաց, մազերը խառնիխուռն, պատառատուն բաճկոնի մը տակեն ամբողջ կուրծքը ցուցնելով՝ սևցած ու աղտոտ։ Տափատը՝ նեղ, ճմրթկված ու թելատ, հազիվ կծածկեր անոր մերկությունը։

Կյուլյուկ հանըմ, հակառակ ընծայած ուշադրությանը, չէր հաղորդեր տեսնել Համբիկը ցույց տրված ուղղությանը մեջ։

— Ո՞րն է, վո՞ւր է,— կհարցներ՝ չկրնալով հավատալ որ այդ ալանդակ կերպարանքը կրնար իր ճանչցած Համբիկը ըլլալ։

— Իշտե՛, հանըմ,— կրկնեց ձկնորսը ցուցնելով տղան, որ կմոտենար։

— Ա՛ն է, ա՛ն,— հեծեց Սոֆի թաշկինակովը բերանը ծածկելով։

Համբիկ, առանց նայելու, թե որո՞նք կային հոն, սրճարանեն ներս մտավ, գործատեղանին վրայեն գավաթ մը ջուր խմեց ու գնաց երկնցավ «բեքե»-ին վրա, որ իր անկողինն էր։

— Քա ճանըմ, յաղլըշ չըլլա,— կըսեր լվացարարուհին, աղջկանը դառնալով։

— Ա՛ն է, մայրիկ, ա՛ն է, աչվրներուն չնայի՞ս,— կըսեր Սոֆի սոսկիկ հուզված։

— Ծո Համբի՛կ,— պոռաց դուրսեն Ղազար՝ առանց ուռկանը նկելու,— էկո՛ւր ծո, քեզի ուզող կա։

Տղան վեր առավ գլուխը, դուրս նայեցավ անորոշ նայվածքով մը ու, կարծես չիմացած այդ կոչը, նորեն գլուխը վար դրավ։

— Ծո՛, դուրս չի գա՞ս,— պոռաց նորեն Ղազար,— քեզի մարդ մը կուզե կոր ըսինք։

Այս անգամ Համբիկ ելավ. մինչև դուռը երկնցավ ու դուրս նայեցավ։ Կյուլյուկ հանըմ և Սոֆի դեմն էին, երկու քայլ անդին։

Ձկնորսներն ալ գլուխնին վեր առին նայելու, վասնզի անոնք ալ մայր ու աղջկան, մանավանդ աղջկան տագնապեն կկռահեին, թե բան մը կար։ Երկու տարի է որ Համբիկ իրենց քովը կապրեր ու

ոչ ոք հետաքրքրված էր անով։ Ու տեսան որ խենթին տարտամ ու խոժոռ նայվածքը մեկենիմեկ փայլատակեց, բուռն այլայլումի մը նշանները երևցան անոր արևակեզ ու անզգաց դեմքին վրա։

— Ղազա՛ր,— կմրմռար ծերունին իր ընկերոջը,— աստեղ բան մը կա ամա մենք չենք հասկնար կոր, ծո նայե, Համբիկին երեսը նայե ի՛նչ կըլլա կոր։

— Թոհա՛ֆ պան, ծո գիտես քի լույս տեսավ, աստվածամարը տեսավ...

— Էյ սանքի աստվածամարեն ալ վար չի մնար սա աղջիկը,— գիտել տվավ սմսեղուկ ծերունին կամաց մը։

Սակայն Սոֆի, օտար նայվածքներու առջև չուզեց երկարել այդ վիճակը, ջղայնորեն աշխույժ շարժումով մը տղուն մոտենալով բռնեց անոր թևեն և քաշեց։

— Եկո՛ւր, Համբիկ,— ըսավ արի ու անխռով, ժամանակ չձգելով որ տղան հակառակելու շարժում մը ընե։— Մայրիկ, քալե երթանք,— ավելցուց մորը դառնալով։

Ու երեքը մեկեն, ինք Համբիկին թևեն բռնած, մայրը ափիբերան, հնազանդ իրեն հետևելով, սկսան քալել լերան կողմը։

Ու ձկնորսները դեռ անոնց կնայեին՝ բան մը չհասկնալով եղածեն, զարմացկոտ աչվրներնին բանալով։

— Ամ, վո՞ւր կտանին կոր մեր խենթը,— կհարցներ Ղազար։

— Շիմենտիֆե՞ր զարկած է աճապ,— կըսեր ծերունին։

Երբոր բոլորովին հեռացան մարդոց աչվրներեն ու ամայությամբ շրջապատեցին, Սոֆի, միշտ բռնած տղուն թևեն, անոր առջև անցավ նեղ ու օձապտույտ կածանի մը վրա, որ լերան կողնիվար կգալարվեր։ Լվացարարուհին դիտմամբ ետև մնաց, կամաց-կամաց քալելով, բայց աչքեն չկորցնելով այդ զույգը։ Պահ մը տեսնելով որ անոնք նստան զառիվայրին մեկ տափարակ կանանչությանը վրա, կանգ առավ, չուզելով անոնց մոտենալ, ու ինքն ալ նստավ, անոնց շարժումները դիտելով, զգալով, որ ինք ներկա գտնվելու չէր այդ մտերմական տխուր տեսակցությանը։ Իր միտքը տակար ու անհորիզոն, անկարող էր սակայն ըմբռնելու անոնց փոխադարձ վերաբերումին ամբողջ դառն եղերականությունը։ Կըսկիծը ցամքեցուցած էր իր հոգիին սլացքները։ Բան մը սակայն հստակորեն կըմբռներ— վասնզի ասիկա իրեն հստակորեն բացատրած էր իր աղջիկը— թե այդ տղուն խեղճության և անկումին պատճառը իր աղջիկն էր, որ ատով ի՛ր ալ խեղճության պատճառ

եղեր էր։ Ու տանջվող հետաքրքրությամբ մը հիմա կհետևեր հեռվանց այդ տեսակցության։ Սոֆի, ծնրադրած Համբիկի դեմը, շարունակ կխոսեր, բռնած անոր աջ ձեռքը, իր հմայքովը շրջապատելով զայն։ Մերթ տղան, հուզման բուռն նշաններով ու մեկենիմեկ կշտամբական, քանի մը բառ կնետեր, աղջկան մագնիսող նայվածքին տակ իսկույն ջախջախվելու, հանդարտելու համար նորեն։ Հետո հանկարծ Կյուլյուկ հանըմ տեսավ որ տղան լալ սկսավ. մինչ Սոֆի, ինքն ալ հուզված, ձեռքերովը երեսը կծածկեր, երկուքն ալ կհեկեկային իրենց ցավովը հափշտակված, զիրար մխիթարելու անկարող։ Լվացարարուհին, առանց գիտնալու թե ինչու, ինքն ալ կուլար։ Ու իր արցունքներուն մեջեն տեսավ, որ Սոֆի դարձյալ կխոսեր տղուն, որ ա՛լ հանդարտորեն, դեմքին վրա տեսակ մը երանական ճառագայթումով մտիկ կըներ անոր կախարդված։

Կածանին վրա վերջալույսի ստվերները կթանձրանային քիչ-քիչ ու ձորակը մութով կլեցվեր, երբոր Սոֆի և Համբիկ ոտքի ելան։ Կյուլյուկ հանըմ տեսավ որ իջնող խավարին մեջ անոնց իրանները իրարու փարեցան ու հետո թափառաշրջիկին քստմնելի ստվերը բաժնվեցավ ու գահավիժորեն անհայտ եղավ լեռնեն վար, չորակին ստվերներուն մեջ։ Աղջկան վտիտ ու սլացիկ հասակը կմնար հոն անշարժ, կարծես արձանացած։ Մայրը, անձկագին, ձայնեց.

— Սո՛ֆի, Սո՛ֆի։

Աղջիկը սթափեցավ ու մորը քով վազեց, ու երկուքը միասին վեր ելան խորդուբորդ կածանեն, գյուղ մտան, ուր լույսերը վառված էին արդեն։ Մայրը չէր համարձակեր բան մը հարցնել իր աղջկանը՝ խորհրդավոր տեսակցության մասին, անոր տրտմաթախիծ ու խոկուն երևույթեն արգիլված։

— Հանըմը պիտի բարկանա ուշանալնուս, Սոֆի,— դիտել տվավ մայրը։

— Հանը՛մը,— մռմռաց աղջիկը իր երազին մեջեն,— հանը՛մը...— ու չպատասխանեց։

Զ.

Այդ միջոցներուն զարմանալի բան մը դիտվեցավ Հ... գյուղին մեջ։ Համբիկ, ձկնորս Թումիկին տղան, որ երկու տարիե ի վեր խենթի մը պես ծովեզերքները ու լեռները կթափառեր կիսա-

մերկ ու բոկոտն, Համբիկ, զոր ամեն մարդ գրեթե բոլորովին մոռցեր էր, օրին մեկը Հ... գյուղին փողոցներուն մեջ տեսնվեցավ, վրան գլուխը շենք շնորհք, նոր, աղվոր հագուստներ հագած, գլուխը ֆես, մազերը կտրված, հարդարված, ոտքերը նոր-նոր կոշիկներ, ու ինքն ալ առաջվան խոլոր-մոլոր կերպարանքեն շատ հեռու, լուրջ ու գիտակից քալվածքով մը, կորովի երևույթ մը առած իր երկամյա լեռնային թափառիկ կյանքեն։ Շատեր վարանեցան զինքը ճանչնալու, իր ինքնությանը հավատալու, բայց վերջապես ասանկ փոքր շրջանակի մը մեջ անհատներու ինքնությունը ստուգել դժվար բան մը չէր։

Արդեն կարծես իր առաջ բերած այդ զարմանքին գիտակցությունը ունենալուն պես, Համբիկ շուտ-շուտ կքալեր ճամփան, առանց շորսդին նայելու, առանց մարդոց աչքերու հանդիպելու, գուցե վախնալով որ կհարցապնդվի անհամբեր և կոշտ հետաքրքրիչներեն։ Հետո, մանավանդ որ, Գարա-Աղաճի ձկնորսները իրենց խեղթը սկսան փնտրել, անոր ասոր հարցնել, վասնզի անիկա, այն օրեն ի վեր, որ մայր մը ու աղջիկ մը եկած զինքը փնտրած էին, ա՛լ երևան չէր ելած։ Ձկնորսները կարծած էին որ արկածի մը զոհ դարձած կամ անձնասպան եղած էր։ Վերջեն, երբոր իմացան, որ խեղթությունեն հրաժարած էր ան ու պատվավոր ու շնորհքով քաղաքացիի մը կերպարանքին մեջ մտած նորեն, սկեպտորեն գլուխնին օրորեցին։

— Ի՜նչ ըրավ նե ան աստվածամարը ըրավ,— ըսավ ծերունի ձկնորսը Ղազարին։

— Մեզի ինկած չունի ատանկ աստվածամար մը, խեղթերուն բախտը բաց է,— խորհրդածեց Ղազար տխրությամբ։

Հետո, ավելի զարմանալի բան մը իմացվեցավ Հ... գյուղին մեջ, թե Համբիկ, զգաստանալեն և շնորհքովնալեն ի վեր, գրեթե ամեն օր Մարկոս ամիրային ապարանքը կերթար կուգար և նույնիսկ ըսողներ կային, թե անիկա գիշերներն ալ հոն կանցներ։

Ճակատագրականորեն և անհիշատակ ատեններե ի վեր, այդ ապարանքը՝ տարի չպիտի անցներ որ հանրային հետաքրքրությունը և խծբծանքը իր վրա հրավիրելու և արծարծելու առիթ մը չընծայեր։ Վերջին անգամ, տոքթորին մեկնումեն հետո, անոր շուրջը ըսի-ըսավները հազիվ գադրած էին, ահա հիմա անոնք ավելի քան երբեք ուժգնությամբ կվերսկսեին՝ անհեթեթ համեմատություններ պտանալով շարաղետ երևակայություններու ճիգին

տակ։ Եվ սակայն, ինչպես ուրիշ առթիվ, այս անգամ ալ ամիրայական ապարանքին պատերը խուլ մնացին արտաքին այդ մեծաշքեր վայրահաչություններուն, ու անոր բնակիչները, անոր անմատչելիությանը մեջ ապաստանած, շարունակեցին ապրիլ կյանքը իր խաղաղ եղերականությամբը, թողլով որ իրենց շուրջը մոլեգնող այդ ալիքները քիչ-քիչ վերստանան իրենց անդորրությունը։

Ինչ որ սակայն քանի մը օրվան մեջ տեղի ունեցեր էր հոդառանց աղմուկի և իրարանցումի, սովորական բան մը չէր իսկապես։ Սովեզերքի տեսակցության հետևյալ օրն իսկ Սոֆիի նիսպ

տպակար պիտի ըլլար իրենց։ Ասոր ալ հավանեցավ տիկին Մարկոս-յան, առանց ամենապզտիկ առարկություն մը իսկ ընելու։

Ու Համբիկ, Սոֆիին ազգականը, ամիրային տունեն ներս մտավ։ Հանըմը առաջին անգամ զանիկա տեսնելուն՝ նպաստավոր տպավորություն մը կրեց երիտասարդին տխուր ու հեզ նայվածքեն։ Մնաց որ՝ Համբիկին կերպարանքը հիմնովին փոխված էր։ Իր ձկնորս բարեկամները հիմակ չպիտի ճանչնային զինքը։ Մազերը կտրված, սանտրված, նոր հագուստներ, տոքթորին հանդերձարանեն դուրս հանված, կծածկեին անոր մարմինը։ Մինչև իսկ կեղծօձիք և փողկապ ուներ։ Եթե ոչ առաջվան Համբիկը բոլորովին, բայց անոր մոտ բան մը եղած էր վերջապես։ Ինքը այս արագ և հանկարծական փոփոխության ենթարկված էր գրեթե մեքենաբար, խոսքմոռուկ տղու մը պես հնազանդելով իրեն ուղղված հրամաններուն՝ Սոֆիին կողմե։ Այս վերջինին անակնկալ և շանթահարիչ երևումը ցնցում մը առաջ բերած էր երիտասարդին մեջ, անոր հոգիին ու մտքին վրա թանձրացող ամպը մեկեն փարատելով, ու իր հմայքին, դյութանքին գինովցնող ներարկումովը իրենոսացնելով անոր բովանդակ էությունը։ Մթին հուսահատության անդունդեն, ուր գլորած էր, հանկարծ լույս աշխարհ ելած էր մերժված սիրահարը։

Բժշկված էր, ինչպես մեծ հուզումները կրնան բուժել հոգեկան հիվանդությունները, որոնք կանցնին կերթան այն սաստկավար հեղեղներուն պես, որ կանանչ, աղվոր դալարավայրերու մեջեն անցնելով լերկ ու խորունկ ակոս մը կփորեն ավազի ու խիճերու թանձր սիկ մը թողլով։

Ետքեն գալիք հեղեղները ա՛լ ատկեց կվազեն կերթան՝ իրենց հարմար անկողին մը գտած ըլլալով։ Բժշկված էր Համբիկ, բայց պարապ բան էր այլևս անոր մեջ փնտրել առաջվան սիրահարը, հզոր և վսեմ ձգտումներու ընդունակ, ռոմեական հափշտակություններու ծարավի։ Հիմակ հանդարտ ու մտածված բան մը ուներ իր մեջ, անծանոթ ու երկարորեն բաղձացված բանի մը մասին հետաքրքրվիլ մը, բարոյական ապաքինումի առաջին ուժին փուլը ապրելեն ետքը։ Իր պաշտած աղջկան զղջանքի սրտաշարժ ու աղերսարկու պոռթկումները ներողամտության անուշ ու բարերար սարսուռներ պարգևած էին իրեն։ Առջի սիրույն խնկալի ու քաղցր վերհիշումը՝ ապրված հուզումներուն մանրամասնությունները՝ գիտակից, կամավոր ու փնտրված վայելումի մը տարտամ ու պղտոնակաս կամեությանց կմղեր զինքը։ Առջի սիրույն մեծությունեն հիմա կշլանար ինքը, անոր կարոտովը կշարշարվեր, բայց զանիկա այլևս այնքան անարատորեն չկարենար ապրելուն կափսոսար ալ։

Չէ՞, ա՛լ անիկա առաջվան Համբիկը չէր, կյանքին կապված ազնիվ ու գորովալի փարումով մը, ապագայի աղվոր ծրագիրներ որոճալով։ Հաղթանակին, զոր հիմա իր տիրապետումին տանիլ կուզեր իր կրած անագորույն պարտություններուն, հուսախաբության ու անպատվումին արդար փոխվրեժին համար՝ նախ, և հետո՝ համեցած խղճահարության մը խայթերը դադրեցնելու համար։ Այս վիճակը գաղտնիք մը մնաց անշուշտ տղուն համար, որ աղջկան շվարեցնող, զգետնող կախարդանքի ոլորտին մեջ բռնված՝ նորեն կարող չէր մատը դնել բուն իրականության վրա։ Հիմա նոր կյանք մը սկսած էր իրեն համար հանկարծ, ան, զոր ատենոք այնքան փնտրած էր ունայնորեն և որ հիմա այնքան դյուրությամբ կներկայացվեր իրեն։

Սոֆի, բարոյական գոհացումին հետ իր առողջությունն ալ վերագտավ։ Գույն եկավ երեսը։ Բաբախումները դադրեցան, անսովոր կորովի մը հեշտությունը զգաց մարմնին մեջ։ Հաճույք մը եղավ իրեն իր սիրահարը շրջապատել երկարոգի հոգածությամբ մը, հետաքրքրվելով անոր ամենահետին պետքերուն, տղու մը պես զգվելով զայն։ Անոր համար սենյակ մը հարդարեց, հանգստության ամեն պայմաններով։ Անոր տրամադրությանը տակ դրավ խել մը առարկաներ, որոնք տոքթորին ծառայած էին ժամանակին։ Տանը մեջ անոր վարկը բարձրացնելու համար, թույլտվություն խնդրեց հանըմեն, որ անիկա շատ անգամ ներկա գտնվեր սրահը, իրենց հետ մեկտեղ։ Նույնիսկ, հանըմին ներողամտությունը այնքան առաջ գնաց, որ սեղանին ալ անոր մասնակցությունը անհեթեթ բան մը չնկատվեցավ։ Քիչ-քիչ, ամիրային ապարանքին մեջ Համբիկ ճամփված խաչային հաջորդն էր պարզապես։ Գոտյաններու համար դուրս ելլալնուն՝ Համբիկ ընկերացավ իրենց, ոչ թե ծառանուն պես ետևնուն քալելու համար, այլ տիկինին քովն ի վեր, անոր հետ խոսակցելով։

Սոֆի կամաց-կամաց վերսկսավ այն կյանքը, զոր տոքթորին հետ կապրեր, խզումեն առաջ։ Անկեղծորեն ամեն բան խոստովանեցավ Համբիկին։ Ամբողջ արհավիրքովը երևան հանեց, մանրամասնեց ոճիրը, զոր ամիրային թոռը գործած էր իր վրա, իր մեղ-

սակցությամբ։ Տղան մտիկ ըրավ այս արյունալի բաները, բռունցքները սեղմած, լռիկ ու հանդարտ սոսկումով մը։ Սոֆի, իր տկարության և անգիտակցության այդ ամոթալի դրվագը ամեն անգամ հիշելուն, տղուն ոտքերուն կիյնար պաղատալից.

— Ներե՛, Համբի՛կ, ներե՛, սխալեցա՛...

Ու Համբիկ ինքն ալ, ստրջանքի այս սրտաշարժ ու լալագին արտահայտություններեն տարվելով, իր խեղճ, հարստահարված ու պատժված բարեկամուհիին կփարեր, կսրբեր, կխմեր անոր արցունքները, և անոր մեծ ցավը ամոքելու համար իր ապրած անբացատրելի տառապանքը իբրև զուգակշիռ կդներ անորին ու ամեն բան փոխարինված, ամեն բան մաքրագործված, վերջացած կհայտարարեր։

Ապարանքին մեջ երիտասարդին ներկայությունը բոլորովին արդարացնելու համար, մասնավորապես հանրմին աչքին, Սոֆի՝ Մարկոսյան կալվածներուն տեսչության պաշտոնը Համբիկին հանձնել տվավ, որով այս վերջինը արժանավոր հաջորդը եղավ հանգուցյալ երջանկահիշատակ Բարթող աղայի։ Այս պարագային շնորհիվ նյութական ամենամեծ դյուրություններ վայելելով՝ երկու տիրահարները ուղածնուն պես սկսան սպասել, փայփայելով հանդերձ սրտմտությունն ու զառամականությունը ամիրային աղջկան, որուն տիրական զբաղումն էին հիմա զավկեն եկած նամակները, զորս գիշեր ցերեկ կփայփայեր, կկարդար, կհամբուրեր, կծրարեր, անոնց պարունակությունը գոց սորվելով ու գիմացը ելլողին զրուցելով մտացածին գյուտերու և առասպելական պրոֆեսորներու խառնափնթոր այդ պատմությունները։

Ա՛լ հիմա ջղային ու հոգեկան անդորրություն մը կվայելեր լվացարարուհիին աղջիկը։ Վրեժխնդրության կրակեն զորացած ճիգով մը վիճակ մըն էր ստեղծած, որ անիրականալի կթվեր իրեն առաջ։ Ատանկ ուրեմն, այն տեղին մեջ իսկ, ուր իր միամտությունը, անկեղծությունը, իր է՛ն նվիրական զգացումները գիտակցորեն, եղեռնականորեն սրբապղծված ու շահագործված էին, հոն, ամիրայական շվայտություններու և ապականություններու այդ լուռ ու տխուր պատկանդարանին մեջ՝ իր էգ վագրի խոցոտված սրտին վերքերը դարմանելու լայն և անքույթ ազատությունը կտրվեր իրեն։ Եվ ոճրագործին հեռավորություններեն ու տան մեջ իր հեղինակավոր, անվտանգ ազդեցության գիտակցություններեն քաջալերված, հորդորեց հանրմը, որ գրե իր զավկին ինչ որ տեղի կունենար ապարանքի մեջ, հոն տեղավորված նորեկի մասին անանկ ոճով մը ու շեշտով մը, որմե ինք վստահ էր որ տոքթորը պիտի կրնար կռահել ամբողջ կացությունը։

Համբիկի գրկի մեջ, աղջիկը հեռվեն կըմբոշխներ բովանդակ անուշությունը այն կսկծալի կատաղության, զոր տոքթորը ապահովապես պիտի զգար նամակին հոգիին թափանցելուն։ Եվ ինչպես որ կսպասեր, փոթորկալից պատասխան մըն է հասավ Փաքիզեն։ Տիկին Մարկոսյան, դողդղղահար, Սոֆին կանչեց, կարդացնելու համար նամակը։ Աղջիկը կարդաց զայն, կամաց-կամաց, յուրաքանչյուր բառին մեջեն հրճվանք մը, հեշտություն մը ծծելով, իր նպատակին անվրեպ զարկած ըլլալու երջանկությենեն արբշիռ։ Տոքթորը ուժգնորեն կհանդիմաներ մայրը՝ առանց իրեն գիտակցությանը տունեն ներս մարդ մը առած ըլլալուն, այն ալ հանձնարարությամբը Սոֆիին, «որուն բարոյականին մասին ինք պատճառներ ուներ կասկածներ սնուցանելու»։ Եվ կստիպեր մայրը, որ իսկույն հեռացնե այդ նորեկը ամիրային ապարանքեն, «անոր պատիվը չաղարտելու համար իր բացակայությանը»։ Սոֆի, լմնցնելեն հետո, առանց հայտնելու իր զգացած անսահման գոհունակությունը, հանրմին խոստովանցնել տվավ տոքթորին կասկածներուն որքան անտեղի և անիրավ ըլլալը, և խոսք առավ անկից որ պիտի գրե զավկին՝ անոր սխալ դատումները ջրելու և երկյուղներուն անհեթեթությունը անոր զգացնելու համար հստակորեն։

— Դուն հոգդ մ՛ըներ, աղջիկս,— ըսավ հանրմը,— ես խոսք կհասկցունեմ տոքթորին, կըսեմ որ շատ շնորհքով տղա մըն է Համբիկ։

Այս մասին, այնուհետև ա՛լ բնավ խնդիր չեղավ։ Այդ տան մեջ Համբիկի ներկայությանը դեմ մեծագույն արգելքը վերջացած էր։ Հետևապես, աշխարհային իրերու մեկ անհասանելի դարձվածքովը, հանգուցյալ ձկնորս Թումիկին զավակը ամիրայական ապարանքի մը բնակիչը կըլլար, բան մը, որուն իրականացումին երջանկահիշատակ ձկնորսը իր կենդանությանը երբեք չպիտի ուզեր հավատալ, տրված ըլլալով իր ամիրայամոլության ատանկ մեկ փառապանծ վախճանի մը հանգելուն անկարելիությունը։ Բայց հոգ չէ, խեղճ ձկնորսին գոնե հոգին պիտի ցնծար հիմա անդենին մեջ ու պիտի հպարտությամբ մը ողջուներ Մարկոս ամիրային դժգույն հոգին, եթե դիպվածով անոր հանդիպեր հոն։

***

Եվ օր մըն ալ, տիկին Մարկոսյան, թևերը խենթի պես երերցընելեն, ձեռքը բաց նամակ մը, Սոֆիին սենյակը վազեց աճապարանքով։

— Տոքթորը կուգա կոր,— կկաղկանձեր դողե ու հրճվանքե թրթռացող իր պառված, ճռռած ձայնովը։

Սոֆի և Համբիկ, որ դեմ դիմաց նստեր էին՝ երջանիկ ու գոհ մտերմության կեցվածքի մը մեջ, ափիբերան իրարու երես նայեցան։ Կայծակը— ինչպես կրսե դարավոր հասարակ տեղիք մը— ավելի զահանդեցուցիչ չպիտի ըլլար այդ խեղճերուն համար, եթե հոն առջևնին պայթեր հանկարծ։ Եվ հանըմը, որ իր խելագար հափշտակությանը և անպարագիծ ցնծությանը մեջ ուրախության գորովալից պոռթկումի մը կսպասեր, իր ավետաբերի լուսնոտ ու հիմար ժեստին մեջ սառեցավ մնաց՝ զարնվելով այն սարսափահար անտարբերության, որ իրեն ցույց կտրվեր այդպես ամիրայական այդ երկու բարերարյալներուն կողմե։

Բայց Սոֆի շուտ սթափեցավ իր զահանդումեն, իսկույն նըշմարեց ծիծաղելի ու նախատիչ կացությունը, զոր իրենց սառն վերաբերմունքը ստեղծած էր հանըմին համար, անոր խոլ ու ցնծալից ավետումին առթիվ։

— Աչվընիդ լո՛ւյս, հանըմ,— ըսավ ոտքի ելլելով, շրթներուն թոթովանքը հազիվ պարտկելով, իր ներքին փոթորիկը չհայտնելու գերմարդկային ճիգերե տանջված։

— Աչվընիդ լույս, հանըմ,— կրկնեց փութկոտորեն անոր մոտենալով,— ե՞րբ կհասնի, արդեն ճամփա ելա՞ծ է։

— Այո,— պատասխանեց ամիրային աղջիկը՝ իսկույն նորեն հափշտակված իր ներքին հրճվանքին խենթությամբը,— ա՛ռ կարդա նամակը... տոքթորը քանի մը օրեն հոս է...

Աղջիկը առավ նամակը— մինչ Համբիկ կշարունակեր ապշահար հանդիսատեսը ըլլալ այդ եղելության— և աչք մը նետեց նամակի այդ մանր ու հոտավետ թուղթին վրա, որ քանի մը կարճ տողեր միայն կպարունակեր։

«Սիրելի մամա,

«Քու կարոտդ կստիպե զիս պահ մը ընդհատել հոս ունեցած գործերս ու գալ գիրկդ նետվիլ։ Այս նամակը թղթատարին հանձնելես երկու օր ետքը ճամփա կելլամ։ Ինծի կընկերանա Փարիզի նշանավոր բժիշկներեն տոքթոր Ֆրուասարի աղջիկը, օրիորդ Ամելի Ֆրուասար, որ կփափագի Պոլիսը տեսնել։ Շատ կաղաչեմ, սիրելի մամա, օրիորդին համար աղվոր սենյակ մը պատրաստելու, վասնզի՝ որչափ ատեն որ Պոլիս մնա, ստիպված եմ հյուրասիրել զինքը։

Սիրով ու կարոտով կհամբուրեմ քեզ

ԱՐՇԱԿ»

Ու Սոֆի՝ աչքերը այդ մանր ու տարտղնած գիրերուն հառած՝ կամենար կարծես անոր իմաստը ըմբռնելու, չուզելով բաժնվիլ այդ ընթերցումին անորոշ, բայց ահեղ տպավորութենեն, զոր կըկրեր, անոր հետևելիք դեպքերուն վախովը համակված։

— Ջե՞ս կրնար կոր կարդալ,— կհարցներ հանըմը, անոր դեմը կեցած, անոր դեմքին վրա ջանալով կարդալ այն տպավորությունը, զոր կսպասեր որ արտահայտեր ոևէ մարդ որ ատիկա կարդալու բախտը ունենար։

— Կարդացի, հանըմ,— ըսավ Սոֆի, թուղթը անոր կարկառելով...

— Օրիորդ Ամելիին սենյակը շուտով պատրաստենք, Սոֆի,— վրա բերավ տիկին Մարկոսյան,— երկու օրեն հոս են...

— Պատրաստե՛նք, հանըմ...

Ու հանըմը, որուն աչվընները նորեն ու նորեն այդ ավետաբեր թուղթին վրա կդառնային, ուրախ զվարթ դուրս ելավ սենյակեն, իր մանուկի հափշտակված խենթությանը մեջ չտեսնելով հարվածը, զոր տվեր էր իր զավկին այդ երկու զոհերուն։

Անոնք, անխոսուկ, հիմակ իրարու կնայեին, զգացումնին բառնձևելու անկարող, ստեղծված այդ հանկարծական ու անորակելի կացության առջև ինչ ընելիքնին չգիտնալով։

Համբիկ, որուն տխրանուշ աչվընները ցավագին հուսահատությամբ մը կհառեին Սոֆիին աչվընները, վերջապես աղջկան մոտեցավ։

— Սո՛ֆի,— ըսավ նվաղած ձայնով մը,— ես կմեկնիմ։

Սոֆիին աչվընները արցունքով լեցվեցան։ Հուզումեն չէր կըրնար բան մը ըսել։ Որքա՜ն քիչ տևած էր իրենց երջանկությունը։ Տարիներե ի վեր իրենց ճակատագիրը վրդովող այն սև ոգին ահա նորեն կհասներ կուգար։ Արդեն իրենց շուրջը կզգային անոր սար-

սուրը, մրրիկին առաջին ալիքները, որ մեծ պայթումին նախագուշակ դողով մը կսարսեն բնությունը։

— Ո՛չ,— ըսավ Սոֆի, երիտասարդին ձեռքը բռնելով ջղաձգորեն,— մ'երթար. Համբիկ, թող գա՛ ան...

— Բայց... կարելի բան չէ, Սո՛ֆի... մտածե անգամ մը, այդ մարդը, թշնամին, այս տան տերը... մտածե՛...

— Եթե դուն մեկնիս, հապա ես ի՞նչ կըլլամ հոս միս մինակս...

Երիտասարդին աչքերուն մեջ հրճվանքի կայծ մը շողաց։

— Միասին կերթանք, Սոֆի,— ըսավ անոր նայելով, անոր հոգին մեջը իջնալու ջանքով։

— Միասի՞ն,— կրկնեց մանկամարդ աղջիկը, այս բառին վրա կանգ առնելով, կարծես մեկ վայրկյանի մեջ անոր բոլոր հետևվանքները մտաբերելով։

— Այո՛,— ըսավ նորեն Համբիկ՝ տիրական և կտրուկ,— միասին երթանք... ու ա՛լ վերջնականապես ազատինք ասկից, այս անիծյալ տեղեն...

Աղջիկը, ընկճված և վարանուտ, ինկավ թիկնաթոռի մը վրա ու չպատասխանեց։ Հանկարծ, տոքթորին երկտողը միտքը ինկավ նորեն, աչքերուն առջևը տեսավ անոր պարունակությունը։ Ան կուգար, ու օրիորդ Ամելի մըն ալ հետը։ Այս պարագան իր մեջ մեգնիմեկ փոթորիկ մը ուռեցուց։ Ո՞վ էր այդ ֆրանսացի օրիորդը, որ ամբարին թոռանը կընկերանար։ Սոֆի խառնաշփոթ բան մը զգաց իր մեջ, դեռ անորոշ, տարտամ, բայց արդեն իսկ բուռն և ցնցող, կիզանուտ բան մը, որ սրտեն ժայթքելով կարծես ըղեղը կայրեր հիմա։

Համբիկ, անպատասխանի մնացած, աղջկանը վրա ծռեցավ։

— Հե՞, Սոֆի, Միասին կերթանք ասկե, չե՞ս ուզեր...

— Բայց ո՞ւր երթանք,— հարցուց աղջիկը, հովվերգականեն մեկենիմեկ իրապաշտականի դառնալով։

— Ուր որ ըլլա, ոևէ տեղ մը,— ըսավ Համբիկ ուսերը թոթվելով,— տեղ մը, որ այս տունեն դուրս ըլլա, հոն, ուր որ ես երթամ... մեր երջանկությունը ասկեց դուրս պետք է փնտրենք, Սոֆիս. արդեն ուշ կամ կանուխ պիտի մեկնեինք այս տունեն. ահա հիմա առիթը ներկայացած է. մեկնինք, ո՞վ կարգիլե մեզ...

Լվացարարուհին աղջիկը, կարծես հուզումը, խռովքը պարակելու համար, ձեռքին մեջ կծածկեր դեմքը, խուսափիլ ուզելով նայվածքեն, զոր աղան իր հոգիին մեջը կիջեցներ, կսկծալի խուզարկումով մը... Մեկեն, ջղուտ ու կորովի ժեստով մը, որուն մեջ վճռական ու խորհրդավոր բան մը կզգացվեր, Սոֆի ոտքի ելավ, Համբիկին ձեռքը բռնեց։

— Դեռ չմեկնինք, Համբիկ,— ըսավ,— մնա՛նք... թող տոքթորը գա... մի՛ վախնար, բան մը չպիտի պատահի...

— Բայց ինչո՞ւ։

— Չեմ գիտեր,— ըսավ Սոֆի գլխի խորհրդավոր օրորումով մը, չհամարձակվելով աղուն երեսը նայիլ, անոր աչքերեն վախուն՝ որոնք կշարունակեին իր վրա սևեռիլ...— Դեռ մեկնելու չենք այս տունեն... մեր երջանկությանը համար։

— Մեր դժբախտությանը համար,— ավելցուց Համբիկ։

— Չէ՛, չէ՛, մեր երջանկությանը համար,— կրկնեց Սոֆի՝ Համբիկի գառնալով ուժգնորեն և անոր վզին փարելով,— զիս չե՞ս սիրեր, Համբիկ,— հարցուց ողոքիչ շեշտով մը, աչքերը կիսափակ։

— Ինչո՞ւ կհարցնես, կկասկածի՞ս,— ըսավ Համբիկ գառնությամբ մը, որ հանդիմանություն կբուրեր...— Եթե քեզ չսիրեի կյանքս այսպե՞ս կըլլար։

Ու Սոֆի՝ իր զոհին ճիտն ի վար կախված՝ սկսավ հեկեկանոք լալ, իր նուրբ բազուկներուն մեջ ջղաձգորեն սեղմելով մարմինը այդ աղուն, զոր կորուստի վիհեն ինքը քաշած, դուրս հանած էր կամավորապես և զոր կարծես կվախնար հիմա որ նորեն հոն կգահավիժե առանց ուզելու, նորազարթ կիրքերու բիրտ ու ապերասան մղումի մը տակ։ Կուլար առանց մտիկ ընելու սփոփարար խոսքերը խեղճ երիտասարդին, որ իր շուրջը ստեղծված այդ դժբնդակ, երկայրի դրության մեջ ցնցումներ կգար իր գանգին տակ, ջանալով գտնել այն պատճառները, որոնք թույլ չէին տար, առ այժմ, որ մանկամարդ աղջիկը իրեն հետևեր, իրեն ընկերանար հեռուները, այդ խեղդուկ ու չարաշուք հարկեն շատ հեռու։

— Երթա՞նք, Սոֆի, երթա՞նք,— կմրմնջեր նորեն անոր ականջին...

Ու աղջիկը, իր հեկեկանքներու մեջեն, կհամառեր...

— Չէ՛, չէ՛, Համբիկ, չերթա՞նք, չերթա՞նք...

Ցաղան բառ մը ունեցավ շրթներուն վրա, երկչոտ, նվաղկոտ.

— Հապա եթե վռնգվի՞նք...

Սոֆի իսկույն ետ քաշվեցավ, ու տիրական, ու ամբարհավաճ, ու ոպառնալից.

— Վը՞ռնդվի՞նք,— ըսավ գլուխը օրորելով, ակռաները սեղմած, աչքերը մոլեգնոտ,— վռնդվի՞նք,— կրկնեց երկրորդ անգամ հեգնականորեն...— ոչ, ապահով եղիր, Համբիկ, չենք վռնդվիր։

Երիտասարդը, պատուհանին մոտենալով, իր պղտոր նայվածքները կհածեր հիմա ընդարձակ համայնապատկերին վրա, որ կտարածվեր բազմատարր ու բազմազանակ, լեռներն ու հովիտները, գետը, կանանչը, մթնոլորտը՝ մեծանշույլ արևի մը տակ շողշողուն, բոլորը մշշային, անոսր մարմաշով մը պարուրված, երջանկության և խաղաղության կապտորակ երանգներով սնգուրված։ Օ՜, չքնաղ ու անապական բնություն, որուն որդեգրված էր երբեմն ինքը՝ սիրո ու թշվառության զոհ, որուն անենդ գոգին մեջ ուրբումնավոր շունչին տակ, իր հոգիին ցավերը կանանյութանային. լքած էր ինք զայն նորեն, սիրո քաղցր ու դյութիչ նենգութենեն կարթված, հին երանավետ անրջանքներու հզոր վերազարթնումեն մը մագնիսված։ Զիրջին մորմոքիչ խայթը սլաքի մը պես հիմա կմխրճվեր իր մեջ, ու անսանձ խոյանք մը կծառանար, կհոլաթեր իր մեջ՝ նորեն անոր դառնալու, անոր փարելու, անով հեշտանալու, անով նույնանալու։ Ու կամավորորեն կորսված երջանկության այդ վերհիշումեն Համբիկ զգաց որ կոպերը կթրջեին, զիրջի արցունքները դուրս կցայտեին լռիկ մնջիկ, խաղաղորեն...

Ու հանկարծական մտամոլորումի մը մեջ, ներքնահայեցողության զառանցոտ տագնապի մը մեջ, տղան տեսավ ան մյուսը, հափշտակիչը, որ կուգար հեռուներեն, վիթխարի արշավանքով մը, հետզհետե մեծնալով, խոշորնալով, ահագնանալով, շուրջը ամեն բան կդղրդար, մթություն մը կսևնար, կթանձրանար այդ քստմնելի մերձեցումեն, չարության ու ավերումի ոգին էր, որ կհասներ թևատարած՝ ամիրային թռռը։ Համբիկ, այս տեսիլքեն խրտչած, բոլոր մարմնովը սկսավ դողալ, աչքերու սարսափի ու կատաղության ակնապիշ սևեռումով մը մեկ կետի մը վրա, ուսկից վտանգը սավառնթև կհասներ։

— Համբի՜կ, ի՞նչ ունիս,— հարցուց Սոֆի դեպի պատուհան խոյանալով և տղուն փարելով նորեն։

— Ոչի՜նչ,— ըսավ Համբիկ, իսկույն հանդարտելով և ճակատն վազած քրտինքի կաթիլները սրբելով։

Հետո նստան նորեն անանկ իրարու քով, յուրաքանչյուրը իր տխուր խոհերովը առլցուն, զգուշանալով զանոնք իրարու հաղորդելե։

— Տոքթորը դիս կճանչնա՞ և եղելությունը գիտե՞,— հարցուց Համբիկ, բավական լուռ մնալեն ետքը։

— Տոքթորը բան մը չի գիտեր, որովհետև իրեն բան մը չեմ ըսած մեր մեջ անցած դարձածի մասին,— պատասխանեց Սոֆի,— իսկ թե քեզի կճանչնա կամ ոչ, ատիկա չեմ գիտեր. միայն առաջինի հետ բաղդատմամբ մեծապես փոխված ես, ուրեմն հավանական չէ որ միտքը բերե քու դեմքդ. մի՛ վախնար, Համբիկ,— ապահովցուց նորեն Սոֆի,— մեր հոս մնալովը ոևէ վտանգ չի կա մեզի համար... ետքն ալ, եթե ուզենք, չե՞նք կարող իսկույն հեռանալ ասկե, ո՞վ կրնա արգիլել մեզ...

Այդ վայրկյանեն, տիկին Մարկոսյան, որ տեսակ մը թմրության մեջ կմրափեր օրվան մեծագույն մասը իր թավիշե լայն թիկնաթոռին մեջ թաղված, կենդանի ու աղմկոտ գործունեության մը անձնատուր եղավ հանկարծ։

— Պետք է որ լավ ընդունելություն մը ընենք տոքթորին հյուրին,— ըսավ աղջկանը և տղուն...

Ուստի ձեռնարկեցին, Փարիզեն եկած պատվերին համաձայն, սենյակ մը զարդարել, գորգերով, թիկնաթոռներով, ծանրագին կահերով։ Տիկին Մարկոսյան սենյակե սենյակ կպտտեր, ֆրանսուհիին հյուրանոցին համար նոր զարդ մը, ճաշակավոր ու գեղեցիկ բան մը ընտրելու համար. իր այդ արշավանքը առաջ տարավ մինչև իսկ Սոֆիին սենյակը, ուրկե մի քանի գեղորներ վերցուց աղջկանը աչքին առջևը։

— Ա՛ս ալ տանինք, Սո՛ֆի, սա՛ ալ, սա՛ ալ,— կըսեր ձեռքը առարկաներուն վրա դնելով...

Աղջիկը, ակամա, կհամակերպվեր այդ հափշտակության, հիմակվընե սրտին խորեն ատելով անհասկնալի օրիորդ Ամելին, որ դեռ չերևցած՝ բաներ կխլեր իրմե, իր պատվին, իր կուսակցության, իր անձնատվության գնով գնված բաներ։

Հետո, հանըմը լուր ղրկեց Մերկերյանին, որ շատոնց է երևցած չուներ, մանավանդ տոքթորին մեկնումեն ի վեր։ Նախկին զանձապահը— որքա՜ն փոխված էին ժամանակներն ու բարքերը— դժդմելով և մուլտալով եկավ։ Մարմնին զանազան կողմերը ցավեր, խոստուկներ երևան ելած էին, որոնք պզտիկ հառաչանքներ կխլեին կոկորդեն՝ խոսած կամ մտիկ ըրած ատենը։ Ավետավոր լուրին առջև, զոր տիկինը հանդիսավորապես հաղորդեց իրեն՝ Տիկին, բարի ժամանակներուն մարդը կարծելով դիմացինը։ Մեր-

կերյան գրեթե անտարբեր ու պաղարյուն մնաց, «յա՜, տոքթորը կուգա կոր», մը ըսելով չոփ չոր։

— Էյ պարե տիպլոման առե՞ր է,— հարցուց, բան մը հարցուցած ըլլալու համար վերջապես։

— Տիպլոմա՞ մի,— ըսավ հանըմը, չհասկնալով թե ինչո՞ւ տիպլոմա կհարցուներ իր զավկեն, որ «համալսարաններ աչքի կանցուներ» և պրոֆեսորներու հետ կճամփորդեր, խոսքը անգամ չընելով իր «գյուտերուն»։— Տիպլոման ի՞նչ պիտի ընե տոքթորը,— ավելցուց,— ատոնք պարապ բաներ են։

— Անանկ է,— վրա բերավ Մերկերյան անշահախնդիր ձեով մը, պտղունց մը քթախոտ լեցնելով քիթին մեջ, վասնզի ազգային դրամարկղը ձգելեն ի վեր ընչատուփը ձեռք առեր էր, տեղ մը վերջապես բան մը հանելու և յուրացնելու իր ունակությանը գոհացում տալու համար թերևս։

Երբ նամակը կարդաց իրեն.

— Հետը աղջի՞կ կբերե կոր,— հարցուց Մերկերյան քիթը վեր-վեր քաշելով՝ այդ կասկածելի եղելությունը հոտվտալու ձևով մը։

— Տոքթոր Ֆրուասարի աղջիկն է, Թադեոս աղա, Պոլիսը տեսնել կուզե եղեր,— ըսավ հանըմը՝ նախկին գանձապահին կասկածոտ շեշտեն առնվելով քիչ մը։

— Հը՛,— ըրավ ծերուկը, նշանակալից քմծիծաղով մը։

Հետո ծանր լռություն մը տիրեց։

— Տոքթորը ա՛լ հո՞ս պիտի հաստատվի,— հարցուց Մերկերյան ի վերջո։

— Տեսնանք,— ըսավ հանըմը վերջին ծայր լրջությամբ...— եթե մենծ տեղերե կանչվի...

Գանձապահը վեր առավ գլուխը.

— Մենծ տեղերե՞ մի։

— Չի՞ կրնար ըլլալ, Թադեոս աղա, ժամանակով դուն չըսի՞ր, որ օր մը կրնա Արշակ հեքիմպաշի ըլլալ։ Գալը իմացվի նե, լրագիրները գրեն նե, ո՞վ գիտե, չըլլալիք բան չէ...

Քթատուփը հանեց նորեն Մերկերյան, կողքին թափեց մատովը, կամաց մը բացավ ու լայն պտղունց մը քաշեց քիթին ի վեր։

— Աստվա՜ծ տա,— ըսավ ծայրահեղ լրջությամբ մը։

Մինչ քիթին տակեն, «ցավագարշ» կմալտար։

— Տոքթորը գա նե հրամմեցեք, Թադեոս աղա,— ըսավ հանըմը, երբոր գանձապահը մեկնելու պատրաստվեցավ։

— Հետը միսաֆիր կա, չըլլար, հանըմ,— պատասխանեց Մերկերյան,— ես ալաֆրանկա բաներեն չեմ հասկնար, կելլամ ֆալցոնը կրնեմ ֆրանսըզին աղջիկին առջևը, աղեկ չի փախիր, հանըմ... Ինչ ին

սալարկին վրայեն շքեղ լանտոյի մը մեծադղորդ թավալումը լսվեցավ։ Հ... գյուղին մեջ լանտոյի մը ներկայությունը այնքան նոր բանշան բան մըն էր, որքան գիսավոր աստղ մը երկինքին վրա։ Փրփրերախ ձիերուն սիգաճեմ դղրդյունը, վառիվառ ասպազեղին ճոխությունը և կառքին շքեղությունը խելքի պտույտ տվին թաղին հնօրյա մամիկներուն և կիներուն, որոնք փողոց ու պատուհան վազեցին այս անսովոր երևույթը դիտելու համար։ Կառապանը դեղին երիզավոր համազգեստ մըն էր հագած, գլուխը սիլինդր գլխարկով։ Կառքին մեջ բազմած էր տոքթոր Արշակ Մարկոսյան, նույնպես սիլինդր գլխարկով, իր աջ կողմը ունենալով փետուրներու, ժանյակներու, մարմաշներու փրփրեղեն սպիտակության մը մեջ թրթռացող կին մը, որ աջքերը դիտելով զարմանահար հետաքրքրությամբ մը։

Ճղակտոր իրարանցում մըն էր բրթավ. մուտքը իշխանավայել էր ու աննախընթաց այդ գյուղի համար, որ ամիրաներու փառքը տեսած էր։ Տուներու դռները բացվելով՝ կին, աղջիկ, տղա դուրս կնետվեին խելացնոր, զիրար հրմշտկելով, շղրկվելու համար այդ պատմական անցքին ականատեսության փառքին։

— Տոքթո՛րն է, վազեցե՛ք , հասե՛ք,—կպոռային շորս կողմեն։

Փողոցի լաճեր կառքին քովերեն ու ետևեն կվազեին ուրախության ճիչեր արձակելով, մեկ քանին անոր ետևի զսպանակին փաթթված, բանի տեղ չդնելով կառապանին սպառնալիքները, և մինչև իսկ մեկ քանի գնչուի լակոտներ իրենց վտիտ ձեռվքներովը կառքին մեջ կերկարեին, ողորմություն մուրալով։ Կառապանը երբեմն աջ ու ձախ խարազանի հարվածներ կթաշխեր թոչնոց տարմի մը պես տարտղնելով տղաքներու այդ անառակ երամը, որ շուտով կհասներ, կշրջապատեր նորեն կառքը։ Տոքթորը և օրիորդ Ամելին—վասնզի ծանուցված օրիորդ Ամելին էր իր քովի կինը—իշխանականորեն կժպտեին, ամբոխին վրա տիրելու գիտակից հպարտությամբ մը ակաղձուն, գոհ այդ իրարանցումեն, որուն իրավունք չունեին սովորական մահկանացուները։

Վերջապես կառքը մտավ ամիրային փողոցը. առաջուց քանի մը լաճեր շնչասպառ գացած ափ առած էին ապարանքին դուռը՝ այդ մեծաշուքնդ ժամանումը ծանուցանելու համար հանրմին. փողոցեն «տոքթորը կուգա կոր» կպոռչտային։ Տիկին Մարկոսյան, որ անհամբեր և սրտաթունդ կսպասեր արդեն, աճապարեց ընդառաջ ելլալ։ Մոր ու զավկին հանդիպումը սրտաշարժ եղավ։ Փողոցին

դրանը առջև անոնք իրարու փաթթվեցան, պագտվեցան։ Հետո, տոքթորը թևը առավ օրիորդ Ամելին ու մտան ապարանքը։ Սոֆի, իր ներքին փոթորիկը հայտնի չընելու ճիգերով, դիմավորեց զույգը։ Երիտասարդը գողունի, բայց թափանցիկ նայվածք մը նետեց իր զոհին։

Համբիկ մեջտեղ չի կար։ Օրիորդ Ամելին իսկույն առաջնորդվեցավ իրեն համար պատրաստված սենյակը, ուր տոքթորին հետ քառորդ ժամու մը չափ փակված մնաց։ Հետո դուրս ելան և ընդունելության սրահը հավաքվեցան։ Տիկին Մարկոսյան չէր կրնար զավկին երեսը նայելե, արցունքոտ աչքերներով։

Փարիզը, արդարև, ավելի շքեղցուցած էր ամիրային թոռը։ Քառակուսի կտրված, խարտյաշ, ձևավոր մորուք մը անոր թուշը կգոցեր, ու աջ աչքը կլոր միակնոց մը եվրոպացիի մը հովը կուտար իրեն։ Քիչ մը դժգունած էր, բայց ասով ավելի հրապուրիչ դարձած էր։ Շարժումները նրբագայլիկ ազնվականություն մը կարտահայտեին։ Ձայնին շեշտը անգամ փոխված էր, կտրուկ, արագ և հնչեղ։ Լեցուն առոգանությամբ մը ֆրանսերեն կխոսեր փարիզուհիին հետ, զոր մամային ներկայացուց իբրև տոքթոր Ֆրուսարին աղջիկը։ Ավելորդ է ըսել թե այս ֆրանսուհին փարիզյան տրմի-մոնտի ներկայացուցիչներեն էր, և տոքթոր Ֆրուսարի պատմությունը առասպել մըն էր լոկ։ Ամիրային թոռը հեշտության տան մը մեջ անոր հանդիպելով՝ կապվեր էր անոր, քանի մը ամսվան մեջ անոր հետ հալեցնելով տասը հազար ֆրանքի գումարը, զոր հետը Փարիզ տարած էր։ Խեղճ Բարթող աղային սիրական ֆապրիքան էր, որ այնպես փչացած էր Փարիզի սալարկներուն վրա, մինչ իր տատրակները անդին կմգլոտեին։

Դրամը հատած էր։ Կուգար ուրեմն Արշակ նոր կալվածներ ծախելու, Մարկոսյան մեծ հարստության հետին բեկորները խորելու։ Աղջիկը իր փեշեն չէր զատված, հոտը առած ըլլալով ուրիշ ֆապրիքաներու, զորս խոլ ու շռայլ փարիզուհիի իր քմայքներուն հագեցմանը պիտի հատկացներ։ Իրավ է որ տոքթորը սուտեր գլորած էր այդ աղջկանը, իր ետին արևելքցիի խորհրդավոր ու հսկա ժառանգության մը դյութանքը խաղցնելով։ Այս մոգիչ հեռապատկերեն մագնիսված՝ փարիզյան աղիճը դեպի արևելքի մայրաքաղաքը ճամփորդության մը արկածները այլապես հրապուրիչ գտեր էր, շահագործության դյուրին և առատաբուխ աղբյուր մը գուշակելով արևելքի այդ ունայնամիտ, սեթևեթիկ ու հեշտամոլ զավկին

վրա, որու նմաններ տեսած էր ինք Փարիզի շվայտության վայրերուն մեջ, ուր ափերով նետած էին ոսկին։ Արշակ ինքզինքը ներկայացուցած էր իբրև հայ ազնվականության շառավիղներեն սնրած, սովորական հնարամտություն մը, որուն կդիմեն շատ հեղ արևելքեն Եվրոպա ինկած արկածախնդիրներ, իրենց մեղավոր նպատակները դյուրացնելու համար։ Իբրև Կոստանյանի հարազատ ձեռնասուն՝ մեր ամիրայածին հերոսը չէր կրնար տարբեր վարմունք մը ունենալ Փարիզի պես համաշխարհիկ կեդրոնի մը մեջ, ուր իրեն նման խրված անթիվ տիպարներ զիրար կարմկեն մըտրնջենորեն։

Օր. Ամելի սիրուն ու թեթևուկ աղջիկ մըն էր, սև, պճլտացող աչքներով, որոնք շարաճճի դյուրությամբ մը կվառեին, զգայնուտ մանր բերնով ու ճոխառատ վարսերով, փարիզյան ցոփուհիի բոլոր անառակ շնորհները կմիացներ իր վրա, մշտաժպիտ արտահայտություն, հնչուն ու թրթռուն ձայն, դողդոջ շարժուձևեր և մանավանդ նրբություն մը բուրումնավոր ու թափանցիկ, որ հավիտենական հրապույրը պիտի մնա ֆրանսուհիին։ Փարիզի աղմկալից ու հատցնող կյանքեն դեպի այս անդորր, մթաստվեր ու խորհրդալից միջավայրը իր փոխանցումը տարօրինակ ու տեսակ մը անուշ հաճույքե ոչ զուրկ զգայնություններ կուտար հիմա իրեն։ Հազարումեկ գիշերներու իրական դրվագի մը վայելքը Ոսկեղջյուրի խորը, մեծակերտ, ստվերալից այդ շենքի խաղաղությանը մեջ, ուր իրոք անցած փարթամության մը ցոլքերը կնշմարեր։ Զմայլանքով խառն հետաքրքրությամբ մըն է որ դիտեց անուշ ու չքնաղ Սոֆին ալ, անթերի ու լրացած տիպար արևելքցիի իգական գեղեցկության, որուն նայվածքին տրտմաշունչ սևեռանքին մեջ տարտամ, մշշային, տռամաթիկ վիպականության մը սարսուռը տեսավ։ Իր առաջին գործը եղավ հարցնել իր հոմանիին, թե ո՞վ էր այդ աղջիկը, ոչ թե որովհետև հակառակորդ մը կնշմարեր անոր մեջ, բայց պարզ հետաքրքրութենե ու թերևս համակրութենե մը մղված։ Տոքթորը՝ առանց շվարելու՝ հանգամանք մը վերագրեց լվացարարուհիին աղջկանը. մամային կուվեռնանդը ըրավ։ Եվ այսպես ալ ներկայացուց անոր, անտարբեր ու շատ բնական շեշտով մը, իբր թե իսպառ քանդած չըլլար այդ էությունը իր եղեռնագործ մատներովը։ Մնաց որ, ինքը՝ տոքթորն ալ առաջին ակնարկով լվացարարուհիին աղջկանը դեմքին վրա, հասակին վրա, ամբողջությանը վրա ընդնշմարել կարծեց սանկ իրեն դեռ անծանոթ հրապույրի մը հետքը, որ կրնար իր բացակայած ութը ամիսներուն միջոցին փթթած ըլլալ և որ հիմա քիչ մը իրեն մոռցնել կուտար այն տեսակ մը բուռն հափրանքը, զոր ունեցեր էր անոր մ՛ել հասկցված, վայելված, ծծված ու ցհագ ըմբշխնված շնորհներուն հանդեպ։ Իր այս տպավորությանը վրա չհամեցավ երիտասարդը մտածեց ու անցավ, անկարելի թվելով իրեն նորեն անդրադառնալ այս աղջկանը, որ իր բազուկներուն մեջեն սահեր ինկեր էր անպետ քուրջի մը պես։

Այս առթիվ Սոֆիին գիտցած ֆրանսերենը ի սպաս դրվեցավ մամային և օրիորդ Ամելիին, որոնք անոր միջոցովը պիտի կրնային հասկնալ զիրար։ Ասով, աղջիկը իր վտանգված դիրքը կերպով մը կշտկեր ամիրային ապարանքին մեջ, ուէ կարևորություն մը կստանար նորեն հոն, տոքթորին գալեն ետքն ալ։ Առաջվան կյանքին վրայեն հաստ վարագույր մը քաշված էր, փակված էջ մը կըլլար ան, որուն ա՛լ ոչ ոք կվերադառնար։

Նույնիսկ երբ առաջին պատեհությամբ տան մեջ Համբիկ տոքթորին դեմը ելավ, Սոֆի, առանց շվարելու, Թումիկին տղան անոր ներկայացուց իբրև իր մեկ մոտավոր ազգականը, որուն հայրը, մայրը մեռած էին, և որ հանրմին հավանությամբը տունեն ներս ընդունված էր, էրիկ մարդու մը ներկայությունը անհրաժեշտ ըլլալով հոն, մասնավորապես կալվածական գործերուն համար։

Համբիկ հանդարտ ու անխռով մնաց իր այդ ատած մարդուն նայվածքին տակ. խորին արհամարհանքը, զոր կզգար անոր համար, ամեն հուզումի դեմ կպաշտպաներ զինքը, և հետո վերջապես իր պաշտած էակին այդ թշվառականեն հավետ անջատված ըլլալուն խորունկ համոզումը ներքին բարերար անդորրություն մը կպարգևեր իրեն։

Տոքթորը կալվածներու վիճակին վրա քանի մը տեղեկություններ հարցուց Համբիկին, միանգամայն ուշադրությամբ դիտելով այդ տխուր դեմքը, որուն վրա իրեն ծանոթ հեռավոր գիծեր ճանչնալու մղվելուն հակառակ՝ երբեք չկրցավ հանդիպ մեկ քանի հանկարծական առիթներու մեջ իրեն դեմ ցցված վրեժխնդիր այն ահարկու դեմքին, որ անծանոթ երկյուղի մը սարսուռը պատճառեր էր իր մարմնին մեջ։ Բայց և այնպես չախորժեցավ այդ նայվածքեն, որուն ապրված, գիտակից տրամադրությունը նեղություն պատճառեց իրեն, ու իսկույն ձգեց հեռացավ։

Քանի մը օրվան մեջ, գյուղը ամբողջովին գրավված էր տոքթորով և իր շնորհալի ասպնջականությամբ։ Բոլոր խոսակցությունները անոնց շուրջը կդառնային։ Ենթադրությունները ա՛լ չափ ու սահման չէին ճանչնար։ Ամիրային փողոցը շարժումնալից երևույթ մը առավ։ Շուկացիները առտու իրիկուն անոր առջևն անցան դարձան, երկարորեն տունն ի վեր նայելով, Ֆլորենտինին քթին ծայրը տեսնելու ջանադրությամբ մը։ Աղմկալից կառքին անցքեն ի վեր, փողոցի լաճերն ալ օրը քանի մը անգամ տանը մոտերը կուգային կհավաքվեին, դարձյալ տարօրինակ բան մը տեսնելու հույսով։

Իզուր տիկին Մարկոսյանին հինավուրց մեկ քանի բարեկամուհիները իրեն այցելության եկան սովորականին պես. «Ֆռենկի աղջիկը», ինչպես սկսած էին անվանել օրիորդ Ամելին, չերևցավ ընդունելության սրահին մեջ, ոչ ալ տոքթորը։ Իրենց հետաքրքրությունը առկախ և անոթի մնաց։ Հանըմը զանազան պատրվակներով կարդարացներ անոնց բացակայությունը, բայց այնքան խորհրդավոր ձևեր մը առնելով, որ հյուրերը ոչ միայն գոհ չէին մնար այդ բացատրութենեն, այլև գրեթե բարկացած կմեկնեին՝ իրենց դիմողներուն պատասխանելով.

— Ֆռենկի աղջիկը հարեմլիխեն դուրս չելլար կոր։

Ասոր համար, երբոր շաբաթը մեկ կամ երկու անգամ տոքթոր Մարկոսյան՝ փարիզուհին թևը առած նավամատույց կիջնար, ճըշմարիտ իրարանցում մը առաջ կուգար փողոցներուն մեջ։ Օրիորդ Ամելիի արտակարգ, ծածանուտ և պերճաշուք արդուզարդը խելքի պտույտ կուտար բերանաբաց գեղացիներուն, որոնք կմղվին արտասովոր էակ մը տեսնել այդ նրբասլաց և փետրանման աղջկան մեջ։ Արշակ, հին բարի օրերը վերանորոգելու փափագով, Փարիզեն բերած այդ աղջիկին հետ միասին, օր մը հանկարծ երևցավ այն վայրը, ուր ատենոք այնքան գացեր էր Սոֆիին հետ՝ իր ծանոթներուն և բարեկամներուն, որոնք ափիբերան եղան անոր այդ կանխազեկույց և շլացուցիչ մուտքին առջև։ Անոթի գայլերու պես, անոր քովերը եկան սլքտալ, այդ նոր ու հմայքոտ շրջազգեստը շոշափելու, անոր նուրբ ոտքերուն տակը դնելու համար իրենց սովալլուկ մեծարանքը։ Արշակ այդ եղկելի փութկոտութենեն հաճույք զգաց և թող տվավ որ փարիզուհին իր հրապույրները շռայլորեն ցուցադրե այդ երիտասարդներուն առջև, անոնց զմայլանքը հրահրելով, անոնց մախանքը հրավիրելով իր՝ տոքթորին վրա։

Շաբաթ մը չէր անցած իր գալեն ի վեր, Արշակ նոր կալված մը ծախելու անհրաժեշտությունը մամային առջև դրավ։ Խեղճ կիները հոգեկան ու մտավորական անանկ շլացումի մը և դատողության ու ողջամտության անանկ ջլատումի մըն էր մատնված, որ առանց առարկության հավանեցավ։ Այս անգամ Բերայի տունն էր որ ձեռքե հանվեցավ երեք հարյուր ոսկիի։ Ամիրային թոռը, այս գումարը ձեռք անցընելուն պես, անխորհուրդ շռայլության մը սկսավ։ Վերջապես, Փարիզեն բերված այդ աղջկան ճաշակ մը տալու էր այն հարստութենեն, որուն պատմություններովը շլացուցեր ու մինչև հոտտեղվանքը քշեր էր զայն իր հետը։ Փարիզուհին քմայքներու պոռթկում մը ունեցավ, զորս գոհացնելու համար հարյուր ոսկիի գումար մը մուխի պես ցնդեցավ գնաց, մեկ հարվածով։ Բերային ֆրանսիացի սենեկապետուհի մը բերվեցավ օրիորդ Ամելիին պուտուարին համար։ Շքեղ մակույկ մը վարձվեցավ Ոսկեղջյուրի և Վոսփորի պտույտներուն համար։ Պերճաշուք լանտոներով գյուղ դառնալը սովորություն եղավ. թաղեցիներուն շլացած աչքներուն առջև։ Մաման ապուշ ժպիտներով նայեցավ այս խոլ մրսխումին։ Հին բարի օրերուն վերազարթնումի մը արբեցուցիչ տպավորությանը տակ կզոփար։ Այդ տան բոլոր բնակիչները գինովցեր էին, բացի Համբիկեն, որ այս աղմուկին, այս իրարանցումին, այս հիմար զեխության կնայեր հանդարտ ու անքթիթ աչքներով, առանց անկե հրապուրվելու, ատոնց բոլորին տակ իրեն ու իր սիրականին համար անծանոթ վտանգներե վախնալով հեռուե հեռու։ Տոքթորը ա՛ լ գրեթե այդ տխուր դեմքով չէր զբաղած, տան մեջ անոր կատարած դերին բոլորովին անտարբեր, ու միշտ խուսափած էր մասնավորապես անոր նայվածքեն, որուն սևեռումը անհաճո սարսուռ մը կուտար իրեն։

Գալով Սոֆիին, ա՛ն ալ հոգեկան ալեկոծումի մը մատնված էր։ Մամային և փարիզուհիին մոտ իր թարգմանի նոր պաշտոնին բերմամբը ստիպված էր գրեթե իր ժամանակը անոնց հետ անցընել մեծ մասամբ, նույնիսկ անոնց ընկերանալ պտույտներու ատեն, որով Համբիկի հետ գլուխ գլխի տեսակցությունները մեծապես նվազած էին։ Գիշերները ուշ ատեն միայն անոնք երբեմն զիրար կգտնային, կա՛մ պարտեզը, մութ ծառերուն տակ, կա՛մ իրենցմե մեկուն սենյակը։ Տղան տխրության մը քողը կնշմարեր հիմա աղջկանը դեմքին վրա, և հետո անոր նայվածքին մեջ տեսակ մը խորվք, իր նայվածքեն խուսափելու ճիգ, շիպ շիտակ, անկեղծորեն

իրեն նայելու վարանում մը։ Քանի մը հեղ, իր առաջվան առաջապէսը կրկնեց անոր.

— Սոֆի,— ըսավ,— երթա՞նք սա տեղեն... հոս դժբախտութիւն կսպասե մեզի։

— Չէ՛,— համառեցավ աղջիկը,— դեռ ժամանակը չէ, մընա՛նք...

Համբիկ չպատասխանեց. լայն շունչ մը առավ միայն։ Փարիզեն այդ զույգին գալեն ի վեր, իրենց փոխադարձ վերաբերումին մեջ չերմութեան պակաս մը գոյացավ։ Ա՛լ առջի սրտաբուխ վարմունքովը չէին փարեր իրարու։ Իրարու ձեռք բռնած ատենին ի՛նչ սարսուռ որ կզգային՝ ա՛լ առաջվան քաղցրութիւնը չուներ։ Երկար ատեն լուռ ու մունջ կմնային ծանրաթախիծ մտածումներով գրավված։ Ապագայի աղվոր ծրագիրներու վրա չէր խոսվեր ալ։ Ամիրային թոռան հանկարծահաս երևումը կասեցուցեր էր զիրենք իրենց միաշունչ խոյանքին մեջ։ Ցուրտ հով մը կփչեր։

Իր աչքին առջև պարզված տեսարանին անտարբեր մնալու իր ճիգերուն հակառակ, աղջիկը կտանջվեր, ներքին խուլ և ահեղ մրրիկ մը տարուբերվելով։ Կյանքը, զոր ապերասանորեն կապրեր հիմար փարիզուհին ամիրային թոռանը հետ, իր երբեմնի կյանքն էր, երազի մը պես ապրված։ Իր պատվի, իր անձնատուութեան գնովը վաստկած աթոռին վրա ուրիշ մը եկեր բազմեր էր։ Այս լպիրշ հափշտակութեան դեմ իր հոգիին մեջեն ահավոր բողոք մը կծառանար։ Ցոփուհիի մը շուրջը սփռված մանրակրկիտ գուրգուրանքի ու մեծարանքի այդ փութկոտութիւնը ցույց մը կթվեր՝ իրեն դեմ սարքված։ Երբեմն հրաբուխի մը պես իր մեջ կեռային՝ նորեն առաջվան անուշ հուզմունքով, հրաշալի սարսուռներով ակաղձուկ կյանքին վերադառնալու խոլ տենչերը։ Հետո— և զուցե ամենեն ավելի— որքա՜ն տպավորիչ եղեր էր ամիրային թոռան նոր երևումը՝ իր փարիզյան հովին տակ։ Երիտասարդը պարզապես հոյակապ էր։ Փարիզը նոր հրապույրներ տվեր էր անոր։ Հասակը կարծես ավելի նրբացեր, ճկունցեր, շքեղցեր էր։ Ազնվականի նրբություն մը կթրթռար անոր անստգյուտ շարժուձևին, խոսվածքին, խնդվածքին մեջ։ Բիրտ ու կոպիտ բանը, զոր Սոֆի առաջ երբեմն տեսեր էր անոր վրա, բոլորովին ջնջված էր, տեղի տալով անուշ, հեզ, աղապատալից բանի մը։

Արշակի այս զգեցած տեսքին առջև, Սոֆի երբեմն իր բոլոր վրդովմանքներուն փչիլը կզգար, մոռացումը ոճիրին, որով ան մեղապարտ եղած էր, և տիրապետվիլը նոր զգացումի մը, որուն սակայն ինքը չէր ուզեր հավատալ, անոր ամբողջ եղեռնականութենեն սարսափահար։ Նորե՞ն սիրեր այդ տղան, այն ամեն բանեն հետո, զոր անիկա ըրած էր իրեն։

Հիմակ, ա՛լ քով քովի էին անոնք. երկու դեմքերը, որոնք իր մանկամարդ աղջիկի թեթև ու հեզհեզուկ հոգին աննկարագրելիորեն հակընդդեմ հուզմունքներու խառնարան մը ըրած էին. ամիրային թոռը և ձկնորսին տղան։ Անխուսափելի բաղդատության մը տանջանքին մեջ սկսավ գալարվիլ նորեն իր տկար հոգին։ Շատ, շատ հեռու գտավ հիմա ինքզինքը մեկենիմեկ այն զարմանալի որամադրութենեն, որուն ընկճումին հնազանդեր էր կուրորեն, մեքենականորեն, քնաշրջիկի մը պես, և որ զինքը մղեր էր երթալ գտնելու ձկնորսին այդ տխուր տղան՝ իր անկումին մեջ, իր անշնանութեանը, իր ոչնչացումին մեջ։ Ամիրային մեծաշուք թոռանը քով, օ՜ ինչ եղկելի պատկեր մը կըլլար խեղճ Համբիկ իր դեռ շողորդի ձևովը, կյանքեն անդին միշտ նայելու իր խղճուկ կերպովը։ Կարծես ան շինված էր միայն անգիտակից, խելակորույս կյանքին համար, որուն մղեր էր զինքը սիրո մերժում մը։ Իր տագնապներուն մեջ, Սոֆի հիմա կմտածեր այն զգացումին վրա, որուն հնազանդեր էր Համբիկը մինչև հոգ բերելու համար։ Իր անկումին ցավը ատոր մղեր էր զինքը,— ուրիշի մը ցավը ամոքելու մխիթարության։ Մանրակրկիտ վերլուծմամբ մը հասկցավ թե սերը գործ չէր ունեցած ատոր մեջ։

Բայց նորեն սրտի ու մտքի անդորրության բոպեներուն, աղջիկը խորունկ զղջումներ կունենար իր այս մեղավոր մտածումներուն համար։ Իր ապաշխարությունը կփնտրեր համակրանքի հավաստումի մը մեջ դեպի խեղճ տղան, որ իր շուրջը ստեղծված քաոսին մեջ կխարխափեր՝ իր քայլերուն ճամփան որոնելով վարանոտ ու շվարած, հեռավոր ելքին լույսը փնտրելով ընդունայն։

Քանի մը անգամ, կասկածելի լույսեր տեսավ աղջկանը նայվածքին մեջ, երբ ֆրանսուհին, իր արդուզարդին անուշաբույր և թրթռուն շքեղությանը մեջ իրենց առջևեն կանցներ տոքթորին հետ, անոր թևեն կախված։ Ինչո՞ւ Սոֆի ատանկ կնայեր այդ զույգին, աչքին մեջ նախանձի փայլատակումներով։

— Կհավնի՞ս սրվոնց,— հարցուց օր մը Համբիկ, Սոֆիին թեր բռնելով, երբ տոքթորն ու փարիզուհին անցան գացին այդպես։

— Կատեմ,— ըսաւ Սոֆի խորունկ ձայնով մը, սեղմ ակռաներուն մեջեն։

— Աղջի՞կը թե մյուսը,— հարցուց նորեն Համբիկ։

Սոֆի տղուն նայեցաւ, շվարած։

— Երկուքն ալ,— ըսաւ պզտիկ վարանումով մը։

— Ո՞վ գիտե,— մտածեց անտառներու նախկին պարիկը՝ լայն շունչ մը քաշելով։

Սակայն, փոթորիկը միայն ձկնորսին տղուն և լվացարարուհիին աղջկանը մեջ չէր որ կհորձանար խուլ ու ահեղ պտուտքներով։ Ամիրային թոռան երեսը նոր մրրիկ մը կբարձրանար, որուն ուժգնութենեն կդողդողար իր ախտավոր հոգին։ Սոֆիին համար հրայրքոտ կիրքի մը վերազարթնումն էր ատ։ Ի սկզբան, չուզեց հավատալ ասանկ անհնարին բանի մը։ Եվ ամեն անգամ որ՝ հակառակ իրեն՝ անոր վրա խուզարկու աչք մը պտտցնելուն՝ տեսնել կարծեց պահծու հրապույրներ, որոնք առաջ խուսափած էին իրմե, իսկույն գնաց անձնատուր ըլլալու փարիզուհիին ինքնակարկառ շնորհներուն, խելահեղիչ ցնցումներու մեջ մյուսը մոռնալու համար։ Բայց ասանկ պայքարի մը մեջ որքա՜ն պիտի կրնար դիմանալ այնքան թեթև, որքան մոլի հոգի մը, ինչպիսին էր ամիրային թոռանը հոգին։ Ընդդիմության քանի մը պզտիկ փորձերեն ետքը, անիկա իր զգայարանքներուն ծարավակեզ պահանջներուն հանձնեց ինքզինքը, գլխիվայր տարվեցավ։

Մեկենիմեկ, ա՛լ Սոֆին հիմակ իրեն երևցավ ոչ թե ծաղիկ մը, որուն բոլոր թերթերը մեկիկ-մեկիկ փրցուցեր, հոտվտացեր, կերեր ու կշտացեր էր, այլ զմայլելի կոկոն մը, որ իր դեռ սերտորեն ծալլված թերթիկներուն տակ ամոթխած գուրգուրանքով մը կպահեր իր բոլոր գանձերը, իր բոլոր հրապույրներն ու բույրերը։ Այս մասին՝ տարհամոզումի ճիգեր ունեցավ։ Երկարորեն, մանրամասնորեն վերհիշեց այդ աղջկանը հետ իր ապրած բոլոր հեշտախտավոր շարժումները, սարսուռներն ու գինովությունները։ Զմոռցվելիք տեսարաններ աչքին առջև բերավ՝ շատ հստակ ու թելադրական գծերով։ Ճիչեր, հեքեր, գալարումներ համրեց։ Մտաբերեց այն խորունկ հափրացումը, որով իր զգայարանական դրությունը հանկարծ պաշարվեր էր, նողկանք զգալու աստիճան կըշտացած ըլլալով։

Այս բաներուն վկայելու համար իրենց ապրած շրջանակին առարկաներն անգամ լեզու պիտի ելլային։ Եվ սակայն, ընդունայն

աշխատանք մը եղավ ասիկա իր կողմե։ Արշակ, փարիզուհիին վարձու և սնգուրված շնորհներուն, ապսպրված քծնումներուն ու մեղուշությունները քով խնկաբույր և գերազանցորեն հեշտալի գտավ Սոֆիին գեղափթիթ իգականության աղվորությունները, անոնց անեղծությունն ու կուսականությունը, անոնց քանդակային հորինվածությունը։ Անշուշտ, այս բաները հաստատելը, այս մանրակրկիտ հավաստումներուն զբաղումը տառապանք մը, իր անընկճելի ու ամբարտավան եսին համար արյունալի խոշտանք մը եղավ։

Ինք, անկեղծորեն, ա՛լ չէր ուզեր վերադառնալ այդ աղջիկը, զոր իր արհամարհանքովը լլկեր ու լքեր էր։ Ասիկա պիտի նմաներ կռնակը քաշել նորեն հինցած, պատռտած հագուստ մը, զոր մեկդի նետած ես, մինչ ճոխ ու փառավոր հանդերձարան մը ունիս տրամադրելի։ Բայց իր բացակայության միջոցին, տառապանքը կարծես հրապույրի նոր լուսապսակ մը հորիներ էր աղջկանը ճակտին շուրջը։

Անոր նայվածքին մտախոհ ու տխուր նվաղկոտությունը, խոսելու ձևին հիվանդաբույր ու ծնգոտ դանդաղությունը ու քայլվածքին մեջ հասակագեղ ու վետվետուն բան մը, որ Ռաֆայելի ժյուլին կհիշեցներ, բոլորը մեկեն ա՛լ այս անգամ բարձրահայաց, ինքնամփոփ ու անմատչելի, Փարիզի շվայտություններեն վերադարձող երիտասարդին համար խենթեցնող հրապույրներ թվեցան։ Եվ մանավանդ, իր նորարծարծ կիրքին հագեցմանը համար այդ մշտապատրաստ որսին վրա անմիջապես նետվելու անհնարությունը, զոր այս անգամ այլևս իր դեմը տեսավ, կատարյալ ըրավ իր բարոյական ջախջախումը։

Ֆրանսուհիին, շենշող, շաղփաղփուն և խնդամոլ լեզվանիությանը, ծեքծեքումներուն մեջ, անոր տարփավոր փարումներուն և հորդահոս գգվանքներուն մեջ իզուր փորձեց իր մարմինը ու հոգին մրրկող լավաներուն հեղեղը մարել։ Ատոր հաղթելու, անկեց ճողոպրելու իր բովանդակ տկարության գիտակցությանը մեջ կըրցավ գտնե՝ եսի խրոխտ ծառացումի մը կռթնած՝ ինքզինքը պաշտպանել այս լքված, անարգված աղջկանը առջև իսկույն երթալ ջղաձիգ ու լալագին իյնալու անարգությանը դեմ։

Չէ՛, այս բանը չպիտի ըներ, ամեն զոհողության, ամեն չարչարանքի գնով։ Եվ, ընդհակառակը, նորեն մինչև իր ոտքերուն առջև զանիկա քաշկռտելու, իր սերը դարձյալ անոր մուրալ տալու

անդրդվելի կամեությամբ մը զինված, տոքթորը բոլորովին նոր և անվրեպ միջոցի մը դիմեց։

Սոֆիին աչքին առջև, սկսավ ծայրահեղ դուրգուրանքի, հոգածության և սիրո առարկա դարձնել օր. Ամելին։ Շռայլության տագնապ մըն է սկսավ նորեն։ Փարիզուհիին ճերմակ լանջը գոհարներու նշույլին տակ կպսպղար։ Շքեղ լանտոներով պտույտները հաճախեցին։ Սլաձև նավակ մը միշտ պատրաստ գտնվեցավ ազիզին այցը ընդունելու։ Անոր ներքնախուցին մեջ տոքթորին հետ առանձնացումները աչքի զարնող անպատկառությամբ տեղողություններու հասան։ Նույնիսկ կես բաց դռներե երևցող գիրկընդխառնումներ՝ դիտմամբ սարքված՝ Սոֆիին ցույց տվին անոնց հարաբերություններուն ամբողջ խաղքությունը։ Սրահին մեջ անգամ, Սոֆիին ու մամային ներկայությանը, չքաշվեցան անոնք վրան շատ բաց հոգածության լպիրշ ցույցերե, զիրար շողոմող գգվական վերաբերումներու վրդովեցուցիչ գործածությամբ մը, որուն համար այնքան ձեռնտու է մանավանդ ֆրանսերեն լեզուն։

Մաման անշուշտ չէր հասկնար այդ ափեղցփեղությունները, իր ապուշ նայվածքին զմայլանքովը շրջապատելով միայն իր զավակը, բայց Սոֆի կլսեր ու կհասկնար։ Խուլ կատաղությամբ մը կուտեր իր լանջը ի տես այդ համարձակ աղջկան, որ փարիզյան բոզի հայրատ ու աղմկոտ շարժումներովը կլեցներ ամիրային խաղաղ ապարանքը, խանգարելով անոր խորհրդավորությունը։

Սակայն, կանացի հոտառությամբ մը, մանկամարդ աղջիկը կրցավ թափանցել երիտասարդին բուն հոգեբանությանը։ Մեկ քանի անգամ հանկարծ բռնեց զանիկա, երբ կիրքով ու ըղձանքով հզի նայվածքով մը իր վրա սևեռված՝ կարձանանար ան։ Արշակ իզուր աճապարեց սթափիլ և իր զգացումը պարտկել, մատնված էր։ Այդ րոպեեն Սոֆի հասկցավ թաքուն միտքը՝ փարիզուհիին մատ անոր ճղակտոր փութկոտություններուն։ Ու ա՛լ այս անգամ շուզեց դյուրին որսը դառնալ անոր անարգ հնարամտություններուն, թավալգլոր իյնալ անոր ծուղակին մեջ։ Ճակատագրական կապ մը տեսավ իր և այդ մարդուն միջև. անկից խուսափելու իր բոլոր ճիգերը ապարդյուն աշխատանք մըն էին։ Բայց, հակառակ իր այս համոզումին, իր կողմե խիզախ, ցուրտ, ամբարհավաք կեցվածքի մը, այդ անողոք հոգիին անձնասիրական կամեությունը չախչախելու անհրաժեշտությունը թեթևագույն վրիժառությունը

նկատեց անկից կրած իր անարգանքին համար։ Ուստի՝ անոր զենքերուն համարժեք զենքերով դիմադրելու պատրաստվեցավ։

Այս անգամ, փորձառությամբ ու տառապանքով դարբնված, իր մեջ ուժը զգաց՝ այդ մարդը մինչև իր ոտքերուն աղերսարկու ու լալահառաչ բերելու հաղթանակին։ Եվ ալ առանց վարանելու, առանց խղճահարելու, առավ զենքը որ իր քովն էր, իր մոտը, ցույցին և նպատակահարմար՝ Համբիկը։

Այդ րոպեեն, ձկնորսին տղին շուրջը ստեղծված կացությունը առեղծվածային եղավ իրեն համար։ Իրենց— Սոֆիին ու Համբիկին— հարաբերություններուն մեջ փարիզյան զույգի հեղակարծ երևումովը առաջ եկած պաղությունը մեկենիմեկ դադրեցավ՝ խանդաստագին ու անվերապահ հորդումովը Սոֆիին սիրային ցույցերուն, որոնցմով աղջիկը սկսավ շրջապատել իր մանկության բարեկամը։ Իր ընթացքին մեջ վարանում ու երկդիմություն անհետացան։ Համբիկ՝ բիբերը լայն-լայն բացած՝ չանաց տեսնել և հասկնալ պատճառը, որ չսպասված վայրկյանի մը՝ կմղեր իր բարեկամուհին ատանկ գորովազեղ ու սիրակարկառ շարժումի մը, բայց չհաջողեցավ։

Սոֆի ժամանակ չթողուց, որ տղան խորհրդածե, տրամաբանի և հասկնա։ Անոր վիրը նետվեցավ իր սիրույն անդրդվելիությունը կրկնելով և իրենց մոտավոր վերջնական երջանկությունը փոփոխելով անոր ականջին։

Սակայն, երբ Համբիկ այդ շարժումեն սիրտ առած, իր ամբողջ մտածումը և բաղձանքը բանաձևեց կտրուկ և հստակ.

— Սոֆի, ուրեմն ալ ի՞նչ կենանք հոս. իսկույն ելլանք երթանք։

Աղջիկը, նախ ամպամած ու խոժոռ, բայց իսկույն նորեն գորովալիր.

— Չէ՛, Համբիկ, չէ՛, դեռ ժամանակը չէ,— ըսավ։

Սրահին մեջ ա՛լ սկսավ երևնալ շատ ցանցառ կերպով։ Սատան, զգուշավոր և շրջահայաց եղավ։ Իր շիշը շատ պաշտոնական հնչյուն մը առավ և ընդհանրապես խուսափեցավ խոսելե տոքթորին հետ։ Մեծ մասամբ հանրմին հրավերովը միայն մասնակցեցավ սալոնին հավաքումներուն, անոր և ֆրանսուհիին միջև թարգմանի չեզոք դեր մը կատարելու համար միայն, ու միշտ հանրմին հետ ինքն ալ կհեռանար, ձգելով տոքթորը օրիորդ Ամելիին հետ։

Շատ իրիկուն, Համբիկին հետ պտույտներ կատարեց ամիրային պարտեզին մեջ, մտերմորեն խոսակցելով անոր հետ, մինչ վերեն պատուհանե մը տոքթորը գաղտագողի նայվածքներ կնետեր վարի զույգին վրա, անոնց շարժումները լրտեսելով և մյուս կողմե խոսելով փարիզուհիին հետ, որ իր ուսին կկոթներ։

Ուրիշ անգամ, ամիրային թոռը Սոֆիին դուրս ելլալը տեսավ Համբիկին սենյակեն։ Տեսավ անոնց փոխադարձ ժպիտներն ու իմաստալից ակնարկները։ Քանի մը հեղ, դրան մը ճեղքեն, կամ դիպվածով, տեսավ պինդ ու գորովոտ ձեռնասեղմումները անոնց։ Տեսավ դեռ ուրիշ մանր մունր ոչնչություններ՝ իր երևակայության խոշորացույցին տակ ընդլայնված, տեսավ այդ ամենը և զառանցական տենդերու մեջ գալարվեցավ։

— Սոֆին ատ ապուշը կսիրե կոր ուրեմն,— ըսավ ինքնիրենը, կրկնեց ու հանկերգեց։

Իր կատաղությանը մեջ, տոքթորին առաջին շարժումը եղավ, բնականաբար, հեռացնել ուղել Սոֆիին ադ ազգականը, որուն ներկայությունը արդեն բանով մը չէր կրնար բացատրվիլ։

— Աս մարդը ինչճի՞ է հոս, մամա,— ըսավ օր մը իր մորը։

— Կալվածներուն վարձքերը կգանձե կոր,— պատասխանեց մաման՝ զարմացմամբ նայելով տղուն, անոր կատաղի շեշտն արթնցած։

— Կալվածները պետք չունին ատանկ մարդու մը,— վրա բերավ երիտասարդը։— Ճամփե երթա...

— Զավակս, ինչպե՞ս ճամփեմ, ի՞նչ ըսեմ։

— Ըսե որ պետք չունինք իրեն։

Քանի մը օր անցավ ու Համբիկ դեռ հոն էր, Սոֆիին տաք և կենսատու մտերմությանը մեջ երջանիկ։

Տոքթորը մորը բախեցավ։

— Աս մարդը դեռ հո՞ս է, մամա։

— Զավակս, որո՞ւ ըսեմ, ի՞նչպես ճամփեմ։

— Որու միջոցով որ բերել տվիր, անոր միջոցով ճամփե։

— Սոֆիի՞ն։

— Այո՛։

Մաման, տագնապած, իսկույն Սոֆին կանչեց և խնդիրը բացավ անոր։ Աղջիկը խոժոռությամբ մտիկ ըրավ տիկինը։ Ներքնաբերես, ուրախությամբ տեսավ իր հասցուցած հարվածին հակազդեցությունը։ Տոքթորը կտառապեր։ Ա՛լ ամեն համարձակություն իրեն համար ներելի գտավ։ Զվախցավ ծայրահեղություններեն։

— Տիկի՛ն,— ըսավ,— Համբիկը իմ մոտ ազգականս է, չեմ կրնար երեսի վրա թողուլ զինքը. քանի որ կուզեր որ ասկե հեռանա; շատ աղեկ. բայց այն ատեն ե՛ս ալ պիտի ստիպվիմ մորս հետ հեռանալ, զանիկա առանձին չձգելուն համար։

Տիկին Մարկոսյան տեսավ խնդրին կնճռոտությունը։ Տանը մեջ Սոֆիին ներկայությունը անհրաժեշտ էր, ինքը մանավանդ առանց անոր չէր կրնար ըլլալ։ Ի՞նչ ըներ։

— Շատ աղեկ, քանի որ ատանկ է, կմտածեմ,— ըսավ։

Եվ իսկույն տոքթորին քովը գնաց։

— Զավակս,— ըսավ,— Սոֆի չուզեր առանձին ձգել Համբիկը, անոր հետ ինքն ու մայրն ալ պիտի ելլան երթան, ի՞նչպես ընենք։

Երիտասարդը մթագին ու խենթ նայվածքով մը մորը նայեցավ։ Կիրքը և հպարտությունը բոպեական պայքար մը մղեցին իր մեջ։ Այո՛, ա՛ լ այս անգամ կզգար, որ այդ աղջիկը, զոր ատեն մը իրեն գերի ըրած էր, հիմակ իր բարձրասլաց արհամարհանքին տակ կճզմեր զինքը հոգեսպառ։ Հանկարծ, հպարտության անմտած ժեստի մը մեջ.

— Թող անո՛նք ալ երթան, ամենն ալ երթան, զարմանալի բան, ուրիշ սպասուհի չե՞նք կրնար գտնալ, մամա,— հարցուց մորը դառնալով։

— Ինչո՞ւ չէ, զավակս։

Հետո լռություն տիրեց։ Տոքթորը մեծաքայլ կճեմեր տենդահույզ քայլերով, բեղերը ոլորտկելով աճապարանոք։ Տիկին Մարկոսյան զավկին այդ տագնապին սխալ մեկնություն տվավ։

— Տոքթո՛ր,— ըսավ,— ատոնց համար ինչո՞ւ այսքան կհուզվիս. հիմա կերթամ ամենքն ալ կճամփեմ, լմնցավ գնաց։

Ու պատրաստվեցավ դուրս ելլալու. բայց դրանը առջև Կոստանյանին սանը մորը դեմ ցցվեցավ։

— Մամա,— ըսավ խուլ ու խռոռոշավոր ձայնով մը, զոր անբացատրելի հուզում մը կսարսռացներ,— խնդիրը ատոնք ճամփելուն վրա չէ. դուն Սոֆիին վարժված ես, առանց անոր չես կրնար ըլլալ. մայրն ալ աշխատող կին է. լավագույն չէ՞ որ չճամփենք։ Հեղհեղը աղքատ ալ են... ի՞նչ պիտի ըլլան դուրսը։

Հանրմը զավկին նայեցավ՝ անոր այս հանկարծական վոլթֆասեն շվարած։

— Ձճամփե՞մ ուրեմն,— հարցուց։

— Չէ, ի՛նչ հարկ կա։ Ատոնցմե աղե՞կը պիտի գտնանք։

— Հապա տղա՞ն։

— Տղա՞ն մի,—ըսավ Արշակ մորը նայելով՝ չհասկնալու պես։

— Համբիկը։

— Համբի՞կը, հա՛, ա՛ն, ավելորդ է, բայց ի՛նչ ընենք, մյուսներուն խաթերը համար...

Բայց ամիրային թոռան տառապանքը ասով նոր զարկ մը ստացավ։ Սոֆիեն իր երեսին նետված արհամարհանքի այդ ապտակը կրակ տվավ իր տոհիներուն։ Այդ աղջկան առջև ուրեմն ա՛լ բան մը կշիռ չուներ. ո՛չ իր ամիրայականությունը, ո՛չ իր կենցաղագետ ազնվականի շպարը և ո՛չ իսկ իրենց առջի սերը։ Լվացարարուհիի մը աղջիկը ժպրհությունը կունենար այդպես ոևէ կոշտուպոլոշտ ապուշ մը գերադասելու մեծանուն ամիրայի մը թոռանը։ Արշակ խուլ տառապանքներուն մեջ գալարվեցավ։ Իր առջի դյուրին հաղթանակին պարագաներուն վերհիշումովը ուզեց օրորվիլ ու սփոփվիլ. անոնք ավելի հրահրեցին իր կիրքը։ Այդ կացության ամրապինդ գելանեն ինքզինքը ազատելու համար խենթուխելառ միջոցներ մտածեց, բայց զանոնք գործադրելու բոպեին տկարացավ։ Իր տանջանքի սաստկությանը տակ քանի մը անգամ որոշեց բոլորը մեկեն դուրս քշել ապարանքեն, մեկ հարվածով ամեն բան վերջացնելու համար։ Բայց Սոֆիին հպարտորեն մոգական մեկ նայվածքը ճամփան սառեցուց ու կարկամեց իր այդ շարժումը։ Ուրիշ անգամ, մտածեց, ամեն նկատում ոտքի տակ առնելով, երթալ այդ անողոք աղջկան փեշերուն իյնալ, լալ, պաղատիլ, ապաշավել, խոստովանիլ իր վատությունը, անարգությունը և ամեն բան ամեն գնով դարմանելու իր տրամադրությունը։ Ինքնիրենը սանկ սրտաճմլիկ տեսարաններ երազեց։ Մերթ Սոֆի՝ զղջահար հոմանիին պաղատանքեն տարվելով՝ ինքն ալ անոր ոտքերուն կիյնար, մերթ ալ՝ անողոք ու անկարեկիր՝ թիկունքը կդարձներ անոր. ամիրային թոռը այս արհամարհանքին հարվածեն դիտապաստ կիյնար անգամ մը, ուրիշ անգամ մըն ալ սակայն վերցատկելով իր բազուկներուն մեջ մոլեգնությամբ կխեղդեր աղջիկը։

Փարիզուհիին ներկայությունը ծանրացուց իր վիճակը. սկսավ անտանելի գտնել զազեկ ֆրանսուհին, անոր ծրվիկ ու ծեքծեք շարժումները, վարձկան ու ստոր քծնումները, անոր հետզհետե բազմապահանջ քմահաճույքները և մանավանդ Փարիզեն հատկապես բերված այդ աղջկան դեմքին միշտ խնդալու, անոր շփոթությունները գգվելու և իր հոգեկան վիճակեն խնամոտորեն անոր բան մը հայտնի չընելու հարկավորությունը։

Հիմակ, հստակորեն գիտակցությունը կունենար իր գործած սխալին մեծությանը, իր հոգիին կոշկոռոտ ապականությանը։ Եվ դեռ մինչև այն ատեն իրեն անծանոթ խոյանք մը կհառներ իր մեջ՝ ազնիվ, մաքուր, կույս սերերու համար, զորս վայելած էր, առանց անոնց խորունկ քաղցրությունը ըմբռնելու, և որոնց հրահրած կարոտը իր էությունը կխանձեր հիմակ։

Սոֆի՝ իր առաջին հաղթանակին և մղված լուռ պայքարին մեջ իր գերազանցության գիտակցությամբը զորացած, անհողդողդ շարունակեց իր ընթացքը։

Ակիզբները, երբ Արշակ և իր հոմանուհին նոր եկած էին Փարիզեն, Սոֆի չէր մասնակցած սեղանին։ Հետո հանդիսը հրավիրած էր զինքը որ սեղանակից ըլլա իրենց. Սոֆի համակերպած էր։ Արդեն օր մը աղջիկը նորեն դադրեցավ երևնալե ամիրայական սեղանը։

Տոքթորը ասոր պատճառը հարցուց մամային, մաման ալ՝ Սոֆիին։ Այս վերջինը առարկեց, թե իր առողջությանը պատճառով սոխպված ըլլալով թեթև սնունդ մը առնելու, առանձին ճաշելը ավելի հարմար էր իրեն։

Սակայն, հետո տոքթորը նշմարեց, որ Սոֆի Համբիկի հետ կճաշեր միշտ, անոր սենյակը, գլուխ գլխի։

Երիտասարդը, սրտմտած, մամային պայթեցավ այս մասին։

— Այս աղջկան ըրածը կվայլե՞, մամա,— պոռաց։

— Զավակս, հիվանդ եմ կըսե կոր, ձեր կերած կերակուրները չեմ ուտեր— կըսե կոր,— պատասխանեց մաման, այդքան բծախնդրության մը վրա զարմանալով։— Ինչո՞ւդ պիտը, զավակս, ո՛ւր կուզե ճաշե, ավելի աղեկ, սեղանին վրա մենք մեզի կըլլանք։

— Բայց այդ մարդուն հետ կճաշե կոր,— շարունակեց Արշակ,— ի՞նչ ըսել է, կվայլե՞ տան մեջ առանկ բան։

— Ազգականս է, կըսե կոր, ի՛նչ ընենք։

— Չէ՛, չըլլար, չե՛մ ուզեր,— կխանչեր ամիրային թոռը մոլեգնորեն ոտքը գետինը զարնելով,— մեր պատիվը կա, ամիրային պատիվը կա, ի՞նչ կըսե հասարակությունը. բայց դո՞ւն ինչպես թույլ կուտաս ասանկ բան մը, մամա,— պոռաց մորը երեսին, որ ոտքերուն եղած տղուն կնայեր։

— Ի՞նչ ընեմ զավակս, ի՞նչ կուզես որ ընեմ։

— Ի՞նչ պիտի ընես, ամենը մեկ վոնդե, լմննա երթա, ատոնք մեր պատիվին հետ կխաղան կոր։ Վոնդե, ճանըմ, վոնդե. ատոնք ինչերնի՞ս են, ի՞նչ կսպասենք ատոնցմե. Մերկերյանին բերած հետիեները, թող գա առնե տանի...

Եվ ուժգնորեն դուրս ելլալով գնաց իր սենյակը փակվեցավ։

Մաման այս պոռթկումեն սասանած, սկսավ մտածել թե ի՞նչ կերպով տունեն հեռացուներ Սոֆին, մայրը ու տղան. այս մասին որոճալու վրա էր, երբ Արշակ նորեն ներս մտավ սենյակեն. անձայն վեր վար կճեմեր։

— Մամա,— ըսավ մորը առջև տնկվելով մեկենիմեկ,— կմտածեմ որ ատոնք խեղճ մարդիկ են, ասկե դուրս հանվին նե անոթի կմնան, եկուր մի ճամփեր, չըլլար, մեղք են։

— Ապրի՛ս, բարեսիրտ զավակս,— ըսավ տիկինը իր ազնիվ տղան համբուրելով։

Տարփանքեն ու կատաղութենեն խարազանված, ամիրային թոռը քանի մի օրը անգամ մը ասանկ տեսարաններ ստեղծեց։ Հակառակ իր ճիգերուն, իր տենդը, հուզումը, վրդովումը աննշմարելի չի մնացին փարիզուհիեն, որ սկսավ հետաքրքրվիլ։ Տանջանք մըն ալ աս եղավ։

Հիմա, կղզյար Փարիզեն հետը բերած ըլլալուն այդ աղջիկը, որ հարյուրավոր ոսկիներու նստած էր իրեն։

Բայց մանավանդ, ձկնորսին տղուն ներկայությունը հարաժամ լլկանք մը եղավ իր մրրկալի հոգիին համար։ Քանի մը անգամ մղվեցավ բրտորեն ապարանքեն դուրս նետել զանի, բայց ատոր համար հարկ եղած բարոյական արու ուժը վերջին րոպեին միշտ պակսեցավ իր քով, այդ երիտասարդին նայվածքին թաքուն սպառնալիքին առջև պաշարվելով երկյուղով մը, որուն պատճառը չէր կրնար հասկնալ, հակառակ որ ինքը երկարորեն և անձկանոք իր հիշողության մեջ փնտրած ըլլար այդ նայվածքը։

Անոր հանդիպելուն, կաճապարեր իսկույն խուսափիլ, վրդովված անոր վրեժխնդիր սևեռումեն, որ նշդրակի մը պես իր մեջը կմխվեր։

Շվարած և մոլեգին, փարիզուհիին հետ խոլ շվայտության մը անձնատուր եղավ, ջուրի պես մսխելով դրամը, ա՛լ իրարու ետև ծախելով կալվածները, որոնց անհետացումը ա՛լ եղկյուղ չէր պատճառեր տիկին Մարկոսյանին, ըստ որում որոշված էր որ, երբ բոլոր կալվածները լմննային, Մարկոս ամիրային այդ պատմական

ապարանքն ալ մեջով դուրսով ծախվեր և իրենք, մայր ու որդի, ելլային Փարիզ երթային՝ հոն հաստատվելու համար բոլորովին, համալսարաններու և ամեն տեսակ պրոֆեսորներու այդ ոստանին մեջ, որոնց հետ միշտ գործ պիտի ունենար «Հայ գիտական աշխարհին այս պարծանք»-ը, ինչպես գրած էր Արևմուտք՝ տոքթոր Մարկոսյանին Պոլիս դարձին, ֆրանսացի երևելի բժիշկ տոքթոր Ֆրուասարին աղջկանը հետ։

Այս հեռավոր և շլացուցիչ նպատակին գործադրությանը համար նույնիսկ մասնավոր տենդ մը կար կարծես ամեն բան շուտ լմնցնելու, Մարկոս ամիրային հիշատակարանները մոխիրի վերածելու։ Շատ հեղ մաման իր զավկին խուցը կերթար, անոր հետ գաղտնապես տեսնվելու համար պատրաստված այս նոր ծրագրին մանրամասնություններուն վրա, բացարձակապես անտեղյակ այն եռացումին, որուն մատնված էր տոքթորին ըղեղը։

«Այո՛, մամա. կըլլա՛, մամա. շա՛տ աղեկ, մամա. ինչո՞ւ չէ, մամա. հարկա՛վ, մամա»-յի պես անորոշ և դյուրին պատասխաններով գլխեն կհեռացներ այդ անտանելի մաման, որ մանկան մը պես հրճվելով կերթար միս մինակը ժպտելու «հեռավոր համալսարաններու և պրոֆեսորներու» ստվերագիծերուն, որոնք կարծես հիմակվընե կշարժեին, կպարեին, կցատկոտեին իր մշշապատ աչվընեուն առջև։

Անդին, Համբիկ—Սոֆի տաք սիրերգությունը հանդարտորեն կհոլովվեր։ Աղջկան հավատարմության և անկեղծության ամենօրյա հավաստումներուն, ցույցերուն առջև՝ երիտասարդը կսրտապընդվեր, և իր հետին կասկածները կջնջվեին, ու ներքնապես կսկսեր ժպտիլ կյանքին, մոտավոր ապագայի աղվոր ծրագիրներ մշակել ամիրայի այդ մգլոտ ու խղդուկ հարկեն դուրս կազմվելիք տաք բույնին տևականությունն ու երանությունը ապահովող, երկու սիրտերու ներդաշնակ կապին հավերժությունը նվիրագործող։

Իր միամիտ, անկեղծ, բոլորանվեր հորդորումներով, իր ա՛լ անվերապահ գաղտնասացություններովը, որոնցմով իր սրտին ամենածածուկ իղձերը կարտահայտեր, խղճահարության բուռն փորձություններու և իր մեղավոր ձգտումներուն մեջ հանկարծական կասումներու կմատներ Սոֆին։

Այդ սրտաբաց մտերմության մեջ, Համբիկ պերճախոս և համոզիչ շեշտերով կուզեր աղջկանը մտքին վրայեն փարատել աղետալի տպավորությունը, զոր հոն թողած էին ամիրայական կյան-

բին փարթամությունը և բոլոր մեծաշուք կյանքը զոր ապրած էր, և վերադարձնել զայն համեստ, անշուք, խաղաղ կյանքի երջանկության մտածումին։

Ու գրեթե ամեն օր, իր վշտաբեկ և հուզիչ շեշտովը, Համբիկ իր հավիտենական հրավերը կկարդար աղջկան.

— Երթա՞նք, հեռանա՞նք ասկեց, Սոֆի, ալ ինչո՞ւ կեցեր ենք։

— Քիչ մըն ալ, քիչ մըն ալ համբերե,— կպատասխաներ աղջիկը։

Եվ սակայն, հակառակ իր թաքուն և մեղապարտ դիտումներուն, կազդվեր երիտասարդեն, անոր անկեղծ ու սրտառուչ շեշտեն, անոր գաղափարներուն բարբառուն ողջմտութենեն. այո՛, բուն երջանկությունը անոր հայտնած խորհուրդներուն իրականացումին մեջ կտեսնար, խրատված իր առջի մերժումին տխուր հետևանքներեն։ Հիմա, նմանօրինակ վարմունք մը ո՛վ գիտե որքան ավելի սուղի պիտի նստեր իրեն։ Ամիրային թոռանը հետ ապրած առջի ապերասան ու շվայտ կյանքին վերհիշումը մերթ նողկանքի սարսուռներ կպատճառեր իրեն։ Հոն, նենգավոր ու ախտավարակ նկարագրի մը ամբողջ հրեշային մերկությունը կցցվեր իր դեմը։

Խաբեության բոլոր նրբությունները, ոճրին բոլոր մանրամասն դրվագները մտքին առջևեն կտողանցեին՝ շարժանկարի մը սարսռալի արագությամբը։ Կհիշեր մանավանդ վերջին տեսարանը, ուր այդ հրեշը, իբրև պսակումը իր եղեռնին՝ խաբված, լկված աղջկան պաղատանքի արցունքներուն շնական անտարբերությամբ պատասխանած էր. վռնդած էր զինքը. ու ինք հիմա, այդ ամենեն ետքը, կմղվեր նորեն երթալ իյնալու այդ բազուկներուն մեջ, հեշտանալու անոր շունչին թունարկու գինովությանը տակ... Եվ ա՜հ ան հոն էր, իր դեմը, իր կիրքերուն սանձարձակ ցուցադրությամբը, մոլության խորունկներեն դուրս քաշկռտված բոզի մը հետ գիրկ գիրկի, շունչ շունչի, անարգ և անպատկառ։

Իր մոլորած, շլմորած հոգիին զգաստացումի այս տագնապներուն մեջ՝ հեք աղջիկը լուռ ստրջանքի արցունքներով նորեն կընծայեր Համբիկի գիրկը։

— Ներե՛, ներե՛ ինծի, Համբիկ,— կհառաչեր...— ես արժանի չեմ քեզի... ո՜հ, ո՛չ, ո՛չ, արժանի չեմ...

Ցաղան կրողոքեր, չհասկնալով անոր հոգեկան տանջանքը, ջանալով մխիթարել զանի, սրտապնդիչ բառեր շշնջալով ականջին։

— Ո՛չ, ո՛չ, արժանի չեմ քեզի,— կհեծկլտար նորեն Սոֆի։

Սակայն, երիտասարդին հանգեպ իր վարմունքին անկեղծությունը հետզհետե անոր մտքեն վանեց կասկածանքի հետին նշույլները։ Համբիկ, շոշափելի իրողություններով և դրական տեսակ Սոֆիին սառն ընթացքը տնեցիներուն հանդեպ, նույնիսկ վերջին անգամ անոնց սեղանը արհամարհելը և իրեն հետ առանձնակի ճաշելու որոշումը գերազանցորեն արհամարհոտ ու խրոխտ շարժում մը երևցավ իրեն, իրենց մոտալուտ ու վերջնական կենակցության նախագուշակ պարագա մը, որ ուրախության նոր պայով մը կցնցեր իր հոգին։ Իրիկվան մթնշաղներու, ամիրային պարտեզին տերևախիտ ծառերուն ստվերներուն տակ իրենց պտույտները այնքան անզգույշ ու բացարձակ եղան, որ Կյուլլուկ հանիմ հարկ դատեց այդ մասին թեթև դիտողություն մը ընել աղջկան. Սոֆի խուսափողական բան մը ըսավ ու անցավ։ Ու մտերմական կյանքը շարունակվեցավ նորեն։

Ակնե քաջալերված, Համբիկ այդ տունեն հեռանալու հարցին թախանձագին շեշտ մը տվավ։ Ա՛լ գրեթե իրենց խոսակցությունը այս նյութին վրա դարձավ։

Համբիկ ծրագիրներ պարզեց աղջկանը՝ ապահովող անոր ապագա երջանկությունը։ Կամքով և կորովով լեցուն՝ Համբիկ սասպարեզ պիտի նետվեր նորեն, դրամ շահելու, իրեն դիրք մը ստեղծելու համար։ Հետո, պիտի ամուսնանային, տաք ու սիրաշունչ բույն մը կազմելով, ուր՝ վրա հասնող պզտիկներու հետ՝ բարօրությունը միահեծան պիտի տիրեր, ուր ամեն բան վարդագույն պիտի ըլլար... ի՜նչ անուշ հեռապատկեր։

Սոֆի, անկայուն հոգի, քիչ-քիչ տարվեցավ այս քաղցր օրորեն։

Մյուս աղմկալից կյանքին համար իր պժգանքը հետզհետե խորին եղավ, և ա՛լ սկսավ նույնիսկ ենթադրել որ տոքթորին հանդեպ իր բռնած դիտումնավոր ընթացքին բուն շարժառիթը ոչ թե զանիկա գրգռել, անոր սերը բռնկեցնել էր, այլ պարզապես զանիկա վերջնականապես... տանել։ Այս բառը ինքնիրենը քանի մը հեղ բարձրաձայն արտասանեց ալ, կարծես համոզվելու համար, թե անիկա խորթ չէր հնչեր իր ականջին և իր ամենաթաքուն զգացումները կարձագանքեր։

— Այո՛, կատե՛մ, կատե՛մ, կատե՛մ,— կրկնեց՝ այս բառը և անոր արտահայտած զգացումը իրեն պարտադրելու կորովի ձիգով մը։

Հետո, օրին մեկն ալ տեղի տվավ Համբիկի թախանձանքներուն, մեկենիմեկ, առանց դժվարության։

— Երթա՛նք, հեռանա՛նք, սրկե,— ըսավ,— ա՛լ կբավե, կձանձրանամ կոր։

Երիտասարդը ուրախութենեն աղջկան ճիտը փաթթվեցավ։ Իր երազած արշալույսը վերջապես կծագեր։

Եվ հանդարտորեն անոնք մտածեցին այդ աղետալի շենքեն դուրս ելլալու միջոցներուն վրա։ Համբիկ այն օրվնե իսկ պիտի ճարտարվորեր գործ մը գտնելու։

Իր նախկին չորպաճին պիտի դիմեր, կամ իրեն ծանոթ ուրիշ վաճառականներու՝ նորեն առևտրական ասպարեզը մտնելու համար։ Այս բանը բոլորովին գաղտնի պահվեցավ, նույնիսկ Կյուլյուկ հանըմեն։ Որոշեցին, ամեն բան պատրաստելե հետո, հանկարծակի մեկնիլ, ափիբերան ձգելու համար ամիրային աղջիկը և թոռը։

Համբիկ ամեն օր շուկա կերթար՝ իր մտադրած դիմումներուն աշխատելու. և իրիկուն, վերադարձին, միշտ հուսադրիչ լուր մը կբերեր Սոֆի, որ մանկական ուրախությամբ մը կհրճվեր։

Այդ միջոցներուն հանկարծ կարևոր բան մը տեղի ունեցավ տան մեջ։ Առտու մը, տիկին Մարկոսյան, տոքթորը և օր. Ամելի Ֆրուասար շուտով կառք մը նստելով մեկնեցան։

Եվ իրիկվան, մայր ու զավակ վերադարձան՝ առանց օր. Ամելիի։

Ոչ ոք կրցավ հասկնալ, թե ի՛նչ եղած էր Ֆրանսուհին, մինչև որ քանի մը օր ետքը հանըմը հայտնեց Սոֆիին, թե տոքթոր Ֆրուասար շուտով իր քովը ուզած էր իր աղջիկը, որով ստիպված էին ճամփու դնել զանի։ Եվ աղմկալի փարիզուհիին հեռացմամբը ապարանքը վերստացավ իր առաջվան անդորրությունը։

Բացի Սոֆիեն, ոչ ոք նշմարեց սակայն այն տարօրինակ փայլը, որ հանկարծ շողաց տոքթորին աչքերուն մեջ։ Զայրացած, զսպված կիրքի մը բոցն էր ատիկա, լուռ, ինք իր մեջ ճարճատող, բռնկող, այրող։ Սոֆի տեսավ ատիկա, հասկցավ։

Համբիկ՝ անձնատուր այն երջանկության, որուն վերջապես հասած ըլլալ կկարծեր, պատրաստված ծրագրին գործադրությանը կհետամտեր հևհև։ Օր. Ամելիին հեռացումը իր ուշքը անգամ չի գրավեց։ «Երթա բարով» ըսավ մուր մը տալով անոր ետևեն։

Եվ իրիկուն մը, վերջապես, զեղուն խնդությամբ մը հաղորդեց

Սոֆիի, թե բավական գոհացուցիչ գործ մը գտած էր կարևոր վաճառատան մը մեջ, որուն պիտի սկսեր քանի մը օրեն, թե գումար մըն ալ ձեռք բերած էր՝ նոր տան մը մեջ իրենց տեղավորման ծախսերուն համար, և թե հետևյալ օրն իսկ կրնային ընդմիշտ թողուլ այդ չարաշուք հարկը և հեռանալ։

Սոֆի անխառն հրճվանքով մը ընդունեց այս լուրը, որուն այնքան անհամբերությամբ կսպասվեր այնքան ատենե ի վեր։

Կյուլյուկ հանըմի իմաց տվին գործը. խեղճ կինը ուրախության արցունքներ թափեց ու փոխնիփոխ համբուրեց աղջիկն ու տղան, իրարու վրա քանի մը ծունկ աղոթք ըրավ բազկատարած, փառք տալով աստծո ու երկնքի բոլոր սուրբերուն։ Իրենց փրկության կոչնակին ձայնը լսել կարծեց։

Վերջին արգելքները ինկած, անհետացած էին այն ճամփուն վրա, որուն հարթ հավասար գիծը կերևար հիմա իրեն՝ սպիտակ ու փողփողուն։

Որոշվեցավ որ հաջորդ օրը Սոֆի հանըմին հայտներ իրենց անմիջական մեկնումին հարկավորությունը, հրաժեշտ առներ անկե, ինչպես նաև տոքթորեն։ Բնավ տեղի չպիտի տար և անդրդվելի պիտի մնար հանըմին ստիպումներուն։

Նույնպես ոևէ վարձատրություն պիտի մերժեր, եթե հանըմը առանկ բան մը ընել ուզեր իրեն։ Նմանապես հոդ պիտի թողվեին բոլոր այն առարկաները, որոնք Սոֆիին գործածությանը հատկացված էին, բոլոր իրերը, որոնք այնքան տխուր հիշատակներ կարթնցնեին։

Հետևյալ օրը, ամեն բան կարգադրելե հետո, Համբիկ իրիկվան ապարանք պիտի դառնար, առնելու համար Սոֆին ու Կյուլյուկ հանըմը։

Թումիկին տղան կյանքին առաջին երջանիկ օրը կապրեր։

Առտուն՝ համբուրելե հետո Սոֆին, որ չերմորեն փոխարինեց այդ ողջագուրանքը, գնաց վերջին պատրաստությանց ետևեն։

Գարնանավերջի ճառագայթարձակ վճիտ օր մըն էր։ Իր երջանկության՝ բնությունն ալ ուրեմն կմասնակցեր։

Իր հրճվանքին սաստկությանը տակ երբեմն կմղվեր չհավատալու որ ինք երկարամյա տառապանք մըն էր ապրած սկիզբեն, կարծես բոլոր իրերը բնական ու հանդարտ ընթացքով մը քալած էին։

Եվ ի՛նչ հաղթանակ՝ ամիրային այդ շքեղ ու հպարտ թոռանը

վրա տարված, ի՜նչ վրիժառություն՝ իրեն հասցուցած անոր բոլոր չարիքներուն դեմ։

Ճամփան կամ հոս-հոն կեցած ատենը, առանց ուզելու կանդրադառնար անցյալ դեպքերու, մինչև իր պատանեկության մանր մունր և շատոնց մոռացված աննշան պարագաներուն, մանուվանդ իր սիրային ոդիսականին դրվագներուն։

Ոսկորներուն մեջ սարսուռներ կշրջեին՝ օձի պաղ սոսկումներով՝ քանի մակաբույծ համառությամբ մը միտքը գար նամակին հիվանդոտ պատմությունը. շնչասպառ և դողդղահար՝ իսկույն հիմակվան երանության գաղափարին կկառչեր չնվաղելու համար. հազա այդ անիծյալ ապարանքին տակ իր գիշերային երկարոգի սպասումները, ու համբույրը որ վճռական հարվածն էր եղած և որ կարծես դեռ հոն, պատուհանին վերևը կախված կմնար, չարաղե՞տ խորհրդանշան։

Հետո, իրարու նեռև, հորը, մորը պատկերները կուգային աչքերուն առջևեն կանցնեին. ո՞ւր էին անոնք, ո՜հ, խեղճե՜ր. թշվառությունը մեյ մեկ հարվածով քշած տարած էր զանոնք։ Մայրը մանավանդ, հեք սիրելի մայրը, ինք սպանած էր զանի։

Համբիկ կուզեր տեսնել հիմա անոնց վշտաչարչար դեմքերը՝ իր այդ համեցած երջանկութիւնեն ճառագայթի, հրճվանքի բաժինին առնելու համար վերջապես։

Տուամին վերջին արարվածը իրմով կմմնար. լեռ, ձոր, ծովեզր իր աստանդական կյանքը, բոկոտն, քրջազգյաց, վայրենի, ձկնորսներուն պնակեն ուտելով, սրճարաններու նստարաններուն տակը քնանալով՝ շուներու քովն ի վեր, անոնց հետ շունչ շունչի։ Այս կյանքեն հաճույք զգացած էր, թաղված էր անոր մեջ։

Հանկարծ ձեռք մը երկնցած էր իրեն, մոգական ու փրկարար, այն միևնույն ձեռքը, որ թեթև շարժումով մը դժբախտության գեհենը նետած էր զինքը։ Բայց հիմա, Համբիկ ուժգնորեն կդատապարտեր ինքզինքը՝ վայրկյան մը տարակուսած ըլլալուն Սոֆիին սիրույն անկեղծությանը վրա։

— Սպասե՜նք,— ըսած էր աղջիկը,— դեռ ժամանակը չէ։

Եվ ահա վերջապես եկած հասած էր երանելի ժամանակը։

Միս մինակ, ա՜լ իրը պիտի ըլլար այդ աղջիկը։ Ա՜լ պիտի սիրեր զանի, ինչպես դեռ չէր սիրած, մոլեռանդի մը պես։

Ատենոք անոր ուղղած իր նամակին մեջ բոլոր գրածները կատաղ կետ պիտի գործադրեր, և իր սիրույն այս երկարաշունչ տարահայությանը և անոր անվկանդ ապացուցումին տակ պիտի զմայլեցներ, պիտի ապշեցներ զանի։

— Տոքթո՜ր, տոքթո՜ր... խեղճ մարդ, ա՜ռ հիմա նայիմ ձեռքես Սոֆին...

Բերա ելավ, անկից Պոլիս անցավ՝ ծրարներով բեռնավորված, եանդան և քրտնոտ, շուտ տուն դառնալու տենդով մը բաբախուն։

Սոֆիին համար քանի մը արդուզարդի նյութեր գնեց՝ տուային անակնկալը ընելու համար անոր։ Եվ հակառակ իր ջանքերուն, իրիկուն էր, արևը մարը մտնելու մոտ, երբոր Համբիկ, իր ծրարները ապահով տեղ մը դնելե հետո, ապարանք դարձավ՝ փոխադրությունը կատարելու համար նույն իրիկունն իսկ, եթե կարելի էր։

Իսկույն Սոֆիին սենյակը ելավ հարցնելու թե պատրաստ է մեկնելու։ Սոֆին հոն չէր։

Երիտասարդը սրահ գնաց, տիկինին քովը գտնելու հույսով։ Սրահը պարապ էր։

Համբիկ վար իջավ, քանի մը սենյակ աչքե անցուց։

Սենյակի մը մեջ Կյուլյուկ հանըմը տեսավ, որ իր գույքերը կարգի դնելու վրա էր։

— Ո՞ւր է Սոֆին,— հարցուց Համբիկ։

— Չիյտեմ, զավակս, հանըմին քովը չըլա՞։

— Չի կա։

Եվ ինքնիրենը.

— Զարմանալի՜ բան,— կմրմնջեր տղան։

Մեքենաբար մինչև խոհանոց իջավ։

Պառավ խոհարարուհին կաշխատեր հոն կորաքամակ։

— Օրիորդ Սոֆին տեսա՞ր,— հարցուց։

Խոհարարուհին շտկվեցավ։

— Հա՛ զավակս,— ըսավ պառավը,— պախճան ըլլալու է։

Շունչ մը առավ Համբիկ։ Հրեց խոհանոցին դուռը, որ պարտեզին վրա կբացվեր, և քարե մեկ քանի սանդուխներեն իջավ։

Շատ իրիկուն, ինք ու Սոֆի պարտեզը կպտտեին։ Հոն էր ուրեմն, որ իրեն կսպասեր։

Արագ ակնարկ մը պտցուց չորսդին, ծառերուն տակ։ Քանի մը անխնամ ածուներ կոխկրտելով՝ ասդին, անդին պրպտեց Համբիկ։

Սիրտը կսեղմվեր։

— Ո՞ւր կրնա ըլլալ,— կմրմնջեր։

Պարտեզին մեկ անկյունը, պատին կից, հինեն մնացած պարտիզպանի խրճիթը կկանգներ, խարխուլ, մենավոր։

Անծանոթ ուժե մը մղված՝ Համբիկ հոն սլացավ, հրեց կիսափակ դուռը և հազիվ երկու քայլ առած՝ կեցավ քարացածի պես։

Անկյունը, լայնանիստ ու ցածուկ թիկնաթոռի մը վրա, տոքթոր Մարկոսյանին ճիտեն կախված, Սոֆի մարմնամատույց կփըռվեր՝ պարեգոտին ճեղքը բաց, ուրկե ներս ամիրային թոռը իր թուշը երկարած, խելահեղ կիրքի մը հագեցումին կպարապեր ինքնակորույս։

Համբիկ վայրկյան մը դիտեց այդ տեսարանը, վայրկյան մը միայն։ Հետո, հանդարտորեն դուրս ելավ։ Բացավ պարտեզին դուռը, որ փողոցին վրա կնայեր, ու գնաց։

Գլխիկոր գնաց Հ... գյուղին փողոցներեն, խաղաղ անցորդի մը պես, մինչև լեռ ելավ։

Գարնանավերջը շքեղ վերջալույսի մը տակ, բնության բյուրերանգ հրապույրը դիտեց։ Կապտորակ, խաղաղ, երջանիկ բան մը կթրթռար օդին մեջ։ Բլուրներու շղթան նրբացնցուղ մշուշի մը ներքև կալիքանար անսահմանորեն։

Ծովային բադերը՝ կոր սավառնումներով՝ վերջին լոգանքին կընեին գետակին մեջ։ Բույր մը, անուշ և գինովցուցիչ, եկավ խտղտեց Համբիկի ռնգունքը։

— Օ՜խ,— հառաչեց տղան,— ի՜նչ աղվոր է։

Հետո, վայրենորեն և թավալգլոր, ցատկեց վար վազեց դեպի գոգը բնության, միակ բանին, որ չի գիտեր խաբել, որ կույս է մինչև իր հետին ընդերքները...

. . . . . .

Զմեռվան սկզբները, առտու մը, ծերուկ ձկնորսը և Ղազար, նավամատույցին մոտ, նավակին մեջ ուռկաններին քաշելու զբաղած էին։ Որսը առատ էր. ձկնորսները ուրախ էին։

Հանկարծ մեկը ցատկեց նավակին մեջ, ոտքը բոբիկ, գլուխը բաց, պատառոտուն հագուստներով ծածկված։

Ձկնորսները վեր նայեցան և զարմացման աղաղակ մը արձակեցին.

— Ծո Համբի՜կ...

— Քաշենք,— ըսավ տղան, երկու բազուկներովը ուռկանին կաչելով։

— Ծո, աստվածամարը ի՞նչ էղավ,— հարցուց Ղազար հեգնորեն։

Համբիկ ձկնորսին նայեցավ, չհասկնալով։

— Սա վուր է օր մը քեզի էկավ ասկեց առավ տարավ նե, ան աստվածամարը,— բացատրեց Ղազար։

— Մեռա՜վ,— ըսավ Համբիկ հանդարտորեն։

— Ասված օղորմի հոգուն,— մոլտաց ծերուկը թաղմանական ձայնով։

Ու երեքը մեկանց սկսան ուռկանը քաշել։

ՆՈՎԵԼՆԵՐ

ՊԱՊՈՒԿԸ

...Մութն ի լուսուն կուգար, սև պատռտած շրջազգեստին տակեն կախած մուրացկանի տոպրակը, որ աջ կուշտին վրա ահագին ուռ մը կձևացներ։ Գլուխը կպլլեր հնութենեն գունատած շալ մը, որուն երկու ծայրերը վզեն անցնելով խաչաձև՝ կոկորդին վրա խոշոր կապ մը կհորինեին։ Ոտվընեն առանց գուլպայի, կանցնեին ծանր, լայն ու երկար ոտնամաններու մեջ, որք ծվիկ-ծվիկ եղած շրջազգեստին տակեն ամեն մեկ քայլափոխի հաջորդաբար կերևային, և որոնց վրա սևեռված էին հարաժամ իր կլոր, հյուծված և անփայլ աչվընները՝ քալած ատեն։ Աջ բազուկին տակ կսեղմեր լաթի թանձր կոր մը՝ չորսի ծալված, որ հավանորեն իր մինտերն էր՝ հազարավոր կարկտաններով ծածկված։ Գավազան մըն ալ ուներ՝ ծայրը թեթևակի կոր և ձեռաց շփումեն աղտոտած։ Ի մի բան, քուրջերու մեջ պլլված փաթթված ողորմ զանգված մըն էր, գթութիւն և արգահատութիւն հրավիրող, որուն տեսքը այնքան կազդե վրադ, որ գիշերն երազիդ մեջ երբ տեսնես զայն՝ արհավրալից ընդոստում մը կունենաս։

Ու կերթար կմտներ եկեղեցուն դռնեն ներս, ձախ կողմը զբաղեցրած անկյունը կուղղվեր, և հոն, տխուր կիսաստվերին մեջ, կփռեր իր մինտերն, ոտնամանները կհաներ, ինքն իր վրա կծկվեր՝ գլուխն ուսերուն մեջ քաշած ու բազուկները կուրծքին վրա ծալած։ Շուրթերն, որք ակռաներու բացակայութենեն ներս քաշված էին՝ ներքին և թուշին կիսաշրջանակի ձև մը տալով, աղոթք մը կմրմնջեին, դողդոջ ձեռքով խաչի պես բան մը կհաներ, և ապա ոտոտ լաթ մը փռելով առջևը կսկսեր մուրալ... Խորհրդավոր, վանգամայն արգահատելի էր այդ վաղեմի կնկա վիճակը՝ ո՞սկից կուգար, ի՞նչ էր անունը, ոչ ոք գիտեր. «պապուկ» կհորջորջեին զայն. ամեն առտու իր այդ հավիտենապես միօրինակ կերպարանքովը, շարժումովը, քալվածքովն ու ոտնամաններովը կդառնար փողոցին անկյունեն և կքաշվեր եկեղեցվո դռան այն մութ անկյունը, որ կմուրար։ Եկեղեցի հաճախող ջերմեռանդներեն շատ քիչեր՝ այդ տխուր ու մռայլոտ մուրացկանին վրա ի գուր շարժելով՝ տառնոց մը կնետեին լաթի վրա, ուր կերկննար անմիջապես պապուկին լոր, կոնծած ու երակներով ծածկված ձեռքը, ու ցնցոտիներուն մեջ աներևույթ կըներ դրամը. ողորմություն տվողին երեսը չէր նայեր, միայն, երբ տասնոց մի գար արատ մը հորինել թուխ լաթին վրա, շուրթերը կերերային, իբր միակ նշան շնորհակալության։

Բայց ո՞վ զարմանալյաց, ահա գլուխը վեր կառնե, աչվընները, մարած ու մթին աչվընները հանկարծուստ փայլակ մը կարձակեն, կծկյալ դեմքը կմեղմանա, կթուլնա, կանուշնա, և... ժպիտ մը, անակնկալ ժպիտ մը շուրթերը կկծկե, ձեռքը կերկնցնե աշխուժով դեպ այն անձը, որ տասնոց մը կդներ հոն։ Հետո մարդը կհեռանայ կհեռանան ժպիտն ու զվարթ արտահայտությունը, մռայլը կպատե վերստին և գլուխը կիջնա կուրծքին վրա անշարժ ու տրխրահակ՝ ինչպես էր առաջ։

Ո՞վ էր այդ մարդը։

Ամեն առավոտ, ժամը ճիշտ երկուքին, այլանդակ սիլուետ մը եկեղեցիին փողոցեն, կոնակին վրա խոշորկեկ սապանցներ եկեղեցիին փողոցեն, կոնակին վրա խոշորկեկ սապանցներ, անութին տակ անբաժանելի հինցած հովանոցով, խոտորոտով, անութին տակ անբաժանելի հինցած հովանոցով, խոտորոտով, նայվածքով, յուղոտ ֆեսով, պատռտած ու գունաթափ զգեստնակ նայվածքով, յուղոտ ֆեսով, պատռտած ու գունաթափ զգեստնակ նայվածքով և ահագին կիսակոշիկներով։ Շատ բաներով, խորշոմյալ դեմքով և ահագին կիսակոշիկներով։ Շատ բաներ կպատմվեին վրան, իբր թե երիտասարդությանը շունդալից ու ներ կպատմվեին վրան, իբր թե երիտասարդությանը շունդալից ու ցոփ կյանք վարած էր, թե մեծ հարստություն մսխած էր, թե գեցոփ կյանք վարած էր, թե մեծ հարստություն մսխած էր, թե գեղեցիկ էր, թե սիրային արկածներ ունեցած էր, թե... և երբ մտածվի, որ այս ամենը անցյալը կկազմեին այն անձին, որ այժմ իր անհեթեթ ու տխեղծ կերպարանքովն ևեթ կներկայանար մեզ, այդ ամենն ուրիշ բան չէին թվեր, եթե ոչ առասպելներ կամ առեղծվածներ, վարպետորդիներե կամ ընդվայրացածներե հերյուրված։

Բարեսիրտները «մարդուկ» կանվանեին զայն, իսկ չարաճճիները «խամպուռ»։ Կերևեր նա փողոցին ծայրեն, կուզը տնկած, խոտոր-նակ նայվածքը մեկ կետի վրա հառած և ծանր ոտնամաններովը սալարկին վրա անախորժ ժխոր մը հանելով. ու կմոտենար եկեղեցվույն դռանը, հանկարծ բիրտ ու արագ շարժմամբ մը ձեռքը ծոցը կխոթեր, և աշխուժով ներս մտնելով՝ կմոտենար մուրացիկին ու տասնոց մը կդներ անոր դողդողացող ձեռքին մեջ։ Սրտաշարժ բան էր տեսնել այդ երկու խղճուկ ու թառամած էակներու միմյանց հանդիպումեն առաջ եկած վայրկենական ոգևորությունն ու վաղանցուկ տագնապը. ի՞նչ ունեին, միթե կզգայի՞ն, միթե հրապուրվա՞ծ էին իրարմե, միթե կսիրեի՞ն զիրար, սեր այդ տարիքին մեջ, ուր արյունը սառած, զգացումները չքացած, խանդ ու ավյուն հավետ կորած են, և սակայն ուրիշ ի՞նչ մեկնություն տալ վատացած կյանքի այդ անակնկալ հուրքին, այդ երիտասարդական բորբոքման։

Եկեղեցվույն դուռը փակվելու պահուն, պապուկը կմեկներ կորաքամակ, մութը կիջներ, անսահման սև վարագույրի պես ծածկելով տաճարին վեհաշուք և հսկայակերտ իրանը, վերջին անցորդներու ոտքին ձայնը լռության մեջ կանհետեր, ու մուեզինն իր յաթսրին հետ երկյուղած հառաչը կուղղեր դեպի երկինք, ու ամեն մեքենական ու հարանման արարողություններեն ետք, երբ մեկը գտնվեր եկեղեցվույն մոտ, պիտի լսեր ոտից դանդաղ բրդուք մը, որ համատարած լռության հետ կարծես կխաղար՝ հրճվանք զգալով զայն վրդովելուն։ Մութին մեջեն կառաջանար ստվեր մը... մարդուկը, կմոտենա հաստակառույց երկաթապատ դրան, վեր կառնե իր գետնահած ակնարկն ու կնայի. երկու վայրկյան կմնա այդպես, արձանացյալ, հոգոց մը կհանե, կդառնա հանկարծ, հովանոցը կտեղավորե անութին տակ, կուզը կերերցնե անգամ մը ու կանթեղին դեղնաշուրթ լուսին մեջ կերթա, կանհետի։

Ամեն օր այս մթին ու խորհրդավոր գործողությունները կկատարվեին մեքենական ճշտությամբ և անվհատ միօրինակությամբ. մոլեգին բան մը կար այդ անծանոթ ծերունուն անսովոր ընթացքին մեջ, մոլեգնություն՝ որ ևս առավել ահավոր կդառնար իր արտաքին հանդարտիկ երևույթովը ու անզգած դեմքովը, խուլ, կատաղի բան մը կելևէջեր, կպտուտքեր անոր մեջ, չեմ գիտեր ինչ, այլանդակ սեր մը, ծերության վայրագ քմահաճույք մը, հեշտախտային այն մոլեգին գրգռումներե մին, զոր ո՞չ մեկ կերպով կարելի է բացահայտել։

Ձմրան սառնաշունչ օր մըն էր. բնությունն զգեստավորված էր ձյունեղեն սպիտակ հանդերձով ու մթնոլորտին մեջ, ուր սաստիկ հով կար, ձյունի առկախ օվկիան մը կտարուբերեր։ Շատ հաճելի բան չէր այդ օրին դուրս ելլել. իրավ, բնության այս բանաստեղծական հանգամանքը տեսնել կարժե, բայց սենյակիդ պատուհանեն, երեսդ ու ձեռներդ կրակարանին տված։

Ես այդ օրին տեսա պապուկն, որ գավազանին վրա հենելով և մինչև ծունկերը ձյունին մեջ թաղվելով՝ կառաջանար կամացկամաց և տքալով, գունդ ու կլոր իրանը ձյունի վրա, բավական ուղղաբավ ու քիչ մըն ալ ծիծաղաշարժ ձև մը կառներ, կդողար, կսարսռար, բայց կուզեր երթալ, հոն, անկյունը՝ միշտ, եթե կրակ իսկ թափեր երկնքեն։ Կես ժամ ետք, միևնույն քայլերուն շավիղին վրայեն ուրիշ մեկը կառաջեր դեպի եկեղեցվույն դուռը. «խամպուռն» էր, որ ստակը դնելով պապուկին ցրտասարսուռ ձեռքին մեջ, կհեռանար կորագլուխ և խուն ինչ տխուր։

Երբ իրիկունը ժամկոչն եկավ եկեղեցվույն դուռը գոցելու, տեսավ, որ պապուկն ինքն իր վրա կքած մնացեր էր հոն։ Անմիջապես իմաց տվավ մյուս ժամկոչներուն ու քահանային, որք եկան, վերջին հեք պառավը, որ, արդարև մեռած էր այդ պաղ քարին վրա լուռ ու մունջ։ Աջ ձեռքին սեղմ մատներուն մեջեն տասնոց մը գտնվեցավ։ Դրացիներեն նվազ քարասիրտները, արգահատելով, եկեղեցի գնացին. արարողությունը սովորականեն կարճ տևեց. տերտերն աղոթք մը լփրտեց ու ժամկոչներն ալ ուսերնուն վրա նետելով ճաղն, ուր նետած էին մարմինը, գերեզմանատուն վազցուցին։

Մարդուկը, գիշերվան որոշյալ ժամուն, անցավ դրան առջևեն, ու աղետին անգիտակ, դարձավ, հոգվոցն հանեց և շտապով մեկնեցավ։ Առտուն, տոտիկ-տոտիկ և հանդարտ կերպարանքով մերձեցավ եկեղեցվու դրան, և տասնոցն հանելով՝ ներս մտավ. քիչ մը սարսափած... պարապութենեն, զոր աչաց պատրանքի մը վերագրելով, մինչև անկյունը գնաց. ի զուր, չի կար, հոն չէր, ոտվընները քաքրտեց, ձեռներովը պատը շոշափեց, խուլ հեծյուններ ելան կոկորդեն, դարձավ, նորեն դարձավ, և սրտակեղեք վերջին կաղկանձ մը արձակելով՝ ինկավ...

Եվ հիմակ, ամեն առավոտ, նույն ժամուն, ոգեվոր ծերունին, որ ահռելի կերպով կնիհարնա և կուզը կխոշորնա, կմտնե եկեղեցվո դռնեն ներս ու անկյունը, մութին մեջ, բան մը կընե իսկույն ու կմեկնի։

Հետաքրքիր եղա դիտել թշվառ մարդու այդ շարժումները։ Ծածկվեցա անկյուն մը, ուսկից անկարելի էր երևիլ, և տեսա ծերունին, որ գաղտագողի ակնարկ մը նետելով շորս բոլորը, ծնրադրեց, գլուխն երկնցուց և սկսավ ոտնչանոք պատը լզվռտել։

ՀՅՈՒԾԱԽՏԱՎՈՐԸ

Ա.

Երբ խոպոտ ձայնով գիշեր բարի ընելեն ետք գինետունեն դուրս կելլեր նավավար Պետիկը, ժամը գիշերվան երեքն էր, և անձրևը կտեղար հուսահատեցուցիչ սաստկությամբ։

— Բե՜հ, ի՜նչ ըսեմ ասանկ խաֆային,— մոլտաց կթոռ քալլեր առնել սկսելով և գլուխը ծռած անձրևին ուժգնաբուխ կայլաներուն տակ,— շեմշիեն խայբիսը մոռցա... հը, մեր գործը ասանկ եկեր է, ասանկ կերթա։

Քայլ մը հեռուն չտեսնելու աստիճան մութ կտիրեր, մութ որուն ահարկությունն ավելի կսաստկանար տեղատարափին համատարած տարսռալի շառաչեն և փողոցներուն քարահատակներեն վազող հեղեղներուն խուլ աղմուկեն։

Այդ խոսքեն ետք ա՛լ բառ մը չարտասանեց հեք նավավարը, որ ջուրի վրա մեծցած և անով սնած ըլլալով՝ տեսակ մը հարգանք կտածեր անոր նկատմամբ, թեև այս անգամ անձրևի ոչ շատ ախորժելի երևույթին տակ ներկայանար իրեն ջուրը։

Քառորդեն ավելի շարունակ քալեց՝ օխա մը հաց բազուկին տակ, աչվրները քսկոտելով թաց, ցեխոտ սալարկին վրա, աքալով, խժալով։ Վերջապես կեցավ, սփոփանքի հետ լայն հառաչանք մը դուրս թռավ անոր տանջվող կուրծքեն, և ձեռքը երկնցնելով բռնեց դրան մը ուռնակը, պահ մը կթռնեցավ անոր վրա խոնջանքի անհնարին թափով մը և հետո զարկավ։

Տունը, որուն դուռը կզարներ նավավար Պետիկ, ցած, շատ ցած տուն մըն էր, այնքան ցած, որ պիտի կարծվեր, որ այդ սատկած անձրևին տակ պիտի կքեր, գետնին փակեր, կաթվածահար մարդու մը պես, որ կտապալի հանկարծ անշշուկ, անշշունչ։ Օհ, ինչ հանգիստ էր Պետիկ այնտեղ, բարերար ուռնակին կթռնած, անոր վրա թափելով այն օրվան, թերևս իր կյանքի բոլոր օրերուն բովանդակ խոնջենքը, հավաքված հոգնությունը բոլոր։ Իր ամեն թաշածներեն ետքը անհունապես սփոփարար էր այդ ուռնակը, որուն սառուցիկ հպումը մխիթարության պես բան մը կներշնչեր Պետիկին. միտքեն կանցներ, որ մինչև առտու չբանային դուռը, ու ինքը մնար հոն, օխա մը հացն անութին տակ, ճակատը դրան ոսխտակին կթռնցուցած, երկու ձեռքով ուռնակը բռնած, անձրևն ուտելով կռնակին, անոր պաղ պարուրանքին մեջ անզգա, չքացյալ, ցնորական անուրջի մը հեշտանքովը երջանիկ, միսի և զգացումի բրտացումով մը անշնչացած։

Իր այս մոլորագին մտածումները մեկեն ի մեկ ցնդեցան, անհայտացան ներսեն եկող տկար, թույլ, հիվանդոտ ձայնե մը, որ կպոռար.

— Աղապա՜, դո՞ւն ես։

Հեշտաբույր երազե մը ետքն ինչ ազդեցություն որ կընե ուժգին ապտակ մը մարդուս այտին վրա, նույն ազդեցությունն ըրավ այս ձայնն հեք Պետիկին վրա։ Հեղ մը հազաց, վասնզի կոկորդն հանկարծ ուռած էր, խոշոր շունչ մը առավ։

Եվ հետո ըսավ.

— Էս եմ, Աննիկ, էս եմ, պա՜ց։

Ոտքի ձայն մը լսվեցավ ներսեն, որուն կխառնվեր տաքացում մը։ Քիչ հետո դուռը բացվեցավ, ներս մտավ Պետիկ քիչ մը ծռելով գլուխն, ու դուռը գոցեց։

Մխացող կանթեղ մը տարտամ դողդոջ լույս մը կտարածեր ներսի ծածկված էին, փլփլկած պատին վրա, ուր անձրևին ջուրը ներով ծածկված էին, փլփլկած պատին վրա, ուր անձրևին ջուրը սավակներ կազմած էր։ Բան մը որոշ չէր տեսնվեր հոն, տրտմություն մը, տխրություն մը կտիրեր, որ ավելի կշեշտվեր վտիտ, լոցած, ծուռիկ-մուռիկ մարմնի մը երերուն սրսփացող ստվերեն։

— Աղապա՜, ուշ մնացիր այս գիշեր։

— Գործ ունեի, աղջիկս. ա՜ռ սա հացը. խըյախ թրջած եմ, մարդ վո՞ւր է։

Աննիկ պիտի պատասխաներ, բայց չոր, խուլ հազ մը կոկորդին մեջ բռնեց խոսքը. օհ, տխուր, մահաշշուկ հազ մըն էր

այդ, որ կշարշրկեր խեղճի նիհար հատած կուրծքը, հազաց ու հազաց, հետո հեծյուն մը արձակեց։

— Մարբս քյոշեի պախալին գնաց քսան փարայի պանիր առնելու։

Նավավար Պետիկ, որուն դեմքը հիմակ կերևեր լույսին մեջ կծկված, թնթռկած, հիսուն տարեկանին մոտ մարդ մըն էր, կունտ կոնակով, վտիտ ուսերով, անփայլ, կլոր աչքներով, որուն մեջ կարծես միշտ արցունքի մը թացություն կար։ Ծռեցավ, ոտնամաններն հանեց, որք լխպիկ եղած էին, ու երևան ելան առանց գուլպայի անոր կարմրած ոտքերը։ Նույն պահուն դուռը զարնվելով Պետիկը բացավ։ Գլուխը սև փեսրված շալ մը, ծվիկ-ծվիկ չփակ մը, բաց գույն շրջազգեստ մը, մեկ ոտքը լաստիկ, մյուս ոտքը հին կոշիկ. այս կերպարանքով ներս մտավ Հոռոփ հանրմը, Աննիկին մայրը ու Պետիկին ամուսինը։

— Աննի՛կ, խանտիլը առ տե ներս էրթանք,— ըսավ, լալու մոտ ձայնով մը։

Երեքն ի միասին մութ անկյուն մը դարձան, դուռ մը հրեցին. բայց սաստիկ, ավելի աղիողորմ բոլոր մարմնովը դողդողաց, կանթեղն ընկավ ձեռքեն տախտակամածի վրա ու մարեցավ։

— Վա՛յ, աչքդ չելլա հեմեն, աղջիկ, ի՞նչ ըրիր։

Աննիկը կհազար։

— Պաշխա յաղ ունի՞նք, Հոռոփ,— հարցուց Պետիկ։

— Չէ, հատավ։

— Անանկ է նե, հեմեն պառկինք։

— Հաց չկերա՞ծ։

— Ես անոթի չեմ, դուք կերեք։

Մութին մեջ նստեցան, անձրևը կշարունակեր իր մոլեգին էջքը, կծածկեր պատուհանի ապակիները իր վայրենի ժխորին մեջ անհետացնելով Հոռոփ հանրմին մեկ անեծքը, Պետիկին մեկ հիշոցն ու Աննիկին մեկ հեծյունը։

— Պանիրը առի՞ր, տուտու։

— Էրկու լուսը քյոռնա, վերեսիե չտվավ։

— Անանկ է նե, սա ցամաք հացեն կուտենք քիչ մը։

Խավարին մեջ շարժում մը տեղի ունեցավ. Հոռոփ հանրմին չոր մատները թրջված հացին մեջ մխվեցան զայրույթի ջղաձգությամբ մը, բզկտեցին զայն ու հետո քանի մը կտորներ կարկառեցին Աննիկին, որ սկսավ սովալլուկի պես ծամել այդ անմարսելի խմորը, ի ներքուստ ուրախանալով տիրող մութին վրա, որ կծածկեր իրենց սրտակտոր թշվառությունը և այն մոլեգնությունը, որով հացին բեկորները կծամեր ու կկլլեր։

Ճաշեն ետքը, մայր ու աղջիկ երկնցան տափակ անկողնի մը վրա, որ միշտ փռված կմնար՝ իբր բազմոց ծառայելով ցերեկները։

Պետիկ արդեն կքնանար՝ կուրծքին տակ անհուն խժոցով մը։

Աննիկ մինչև առտու հազաց անձրևին հետ, որ մինչև առտու տեղաց անդուլ, անդադրում։

Բ.

Ամեն առտու, լույսը ճեղքվելեն առաջ կելներ Պետիկ, բայց որովհետև այն առտու կանթեղ չիկար լուսավորելու համար մութն, որ կտիրեր սենյակին մեջ, ստիպվեցավ երկնքին լուսապայծառ վիթխարի կանթեղին սպասել, որ շուշացավ իր աներևույթ ճառագայթները հեղուլ թանձրակուռ ամպերու կոնակին վրա, մութ-գորշագույնեն սպիտակ-գորշագույնի փոխելով անոնց լայնատարած զանգվածը, ուսկից կքաշվեին ջուրի անվերջ անսպառ թելեր։

Պետիկ շորս կողմը նայեցավ. կինը անկողնեն դուրս նետած էր իր ոտքերը, կարմիր և վտիտ, մինչև ծունկը ցուցնելով իր ողորմելի սրունքները, գլուխը բարձեն վար ինկած էր՝ սպիտակախառն մազերու խռվացյալ փունջի մը տակ կիսովին կորսված, կիսախուփ շուրթերուն մեջեն երևցնելով սև կոտրած ակռաներ՝ թանձր լորձունքով տոգորուն։ Ատկից ավելի այլայլած և ավերյալ դեմք կարելի չէր երևակայել. եթե շնչառությունը չըլլար, մեռել մը պիտի կարծվեր. շարշրկված, խոշտանգված մարմին մըն էր թշվառության և անոթության սուր մագիլներուն մեջ, որոնք երթալով կպրկվեին ավելի անողորմ, ավելի արյունարբու։ Եվ խեղճ կինն հազիվ երեսունհինգ տարու կար։ Ծերացած էր։

Աղջիկը՝ տասնվեց տարու մանկամարդուհի մը, ուսերը բարձին վրա հենած էր, կուրծքն, ուր բնավ ուռեցք մը չէր երևար, դեպի ներս քաշված՝ կարծես բռունցքի սոսկալի հարվածով մը. գլուխը դեպի ետ ինկած էր։ Աչքերուն շուրջը սև ծիր մը, ճակտին մեջտեղեն հույժ թեթև խորշոմ մը, ռնգունքներուն ծայրահեղ բարակությունն ու քունքերուն նրբին մորթն, որուն տակեն երակները կերևեին կապույտ գիծերով, կհայտնեին, որ այդ հեք արարածն ա՛լ ինկած էր մութ ու կենսավեր անծանոթին գիրկը։ Ազնիվ, սիրուն

դեմք մըն էր, որ սակայն հրապույրե ավելի արգահատանք կներշնչեր։ Շնչառությունը շուտ-շուտ էր. հատնումի պես բան մը։ Պետիկին ակնարկը կանգ առած էր իր աղջկանը դեմքին վրա. սիրտին խորունկեն երկար հառաչանք մը ելավ, որ անհուն կսկիծի մը արտահայտությունն էր։

— Ջավալը Աննիկս,— մրմնջեց, աչքը սրբելով ձեռքին ետնակողմովը,— ի՞նչ ունի, հիվանդ է, կեշ-կեշ կհազա... աճա՞պ...

Հանկարծ վեր ցատկեց, շուզելով հրաշեկ սլաքի պես ուղեղեն անցնող մտածումը բարձրաձայն ըսել. առ ահիվ, թե կիմացվի։

Գետնեն վերցուց հացին կտորները, ու փշրանքները ժողվեց, փայտե աթոռակի մը վրա դրավ։ Այս միջոցին Հոռոփ հանըմ աչվընները բացավ, ահաբեկյալ մանկիկի մը երկչոտ արտահայտությամբը նայեցավ էրկանն երեսը։

— Տահա հո՞ս ես, Պետիկ։

— Հիմակ էլա, խանտիլը կոտրեր է ապ գիշեր, ի՞նչ պիտի ընենք։

— Աստված ողորմած է,— մուլտաց Հոռոփ հանըմ...— Ալիքսանին կըսենք, անիկա ճար մը կընե։

Խոսքն հազիվ ավարտած էր, դուռը զարնվեցավ։ Պետիկ դուրս վազեց և պահ մը ետքը ներս մտավ երիտասարդի մը հետ։

Կորովի կազմով տղա մըն էր, դեռաբույս պեխերով, խոիվ-խոիվ մազերով, որք ծոծրակեն վեր կբարձրանային համաչափորեն թուխ ֆես մը բռնելով դեպի ձախ ականջը ծռած։ Զուխայե լայն տաբատ մը հագած էր, որուն ճերմակ գոտին կերևար ծալ-ծալ քիչ մը մեջքն ի վար ձգված, բան մը, որ ավելի մարտական ձև մը կուտար անոր։ Բաճկոնը կարճ էր՝ թևին ու կոնակին վրա գեղեցկագույն բանվածքներով։

Այս երիտասարդը Ալիքսանն էր. որ երկու-երեք ամսե ի վեր կհաճախեր Պետիկին տունը՝ իր դարպասն ընելու համար Աննիկին, զոր առնելու խոսք տված էր անոր ծնողքին։ Աղջիկը հաճույքամբ կտեսներ երիտասարդին այցերն ու անկեղծ սեր մը կապած էր անոր վրա։ Ալիքսանին արհեստը ձկնորսություն էր, որին մեջ կանխահաս ճարպիկություն մը ցույց տված էր։ Ծովին վրա չեղած ատեն ամեն առտու կամ իրիկուն կայցելեր «իրեն»-ին տունը, ամեն անգամուն բան մը տանելով հետը, վասնզի գիտեր անոնց խեղճությունը։ Ծովին բիրտ կյանքովը սնած, մեծցած այդ կոշտ ու անհարթ երիտասարդը զարմանալի հեզությամբ կվարվեր Աննիկին հետ, և անոր պստիկ քմահաճույքները կատարելու մեծ փութկոտություն ցույց կուտար։

Ներս մտնելուն պես, ձկնորսը ակնարկ մը նետեց Աննիկին վրա և սոսկալի կերպով գունատվեցավ։

— Բարի լուս ձեզ,— ըսավ ցած ձայնով։

Հետո հարցուց.

— Աննիկը հիվա՞նդ է։

— Չէ, պան մը չունի,— փութաց ըսել Հոռոփ հանըմ,— գիշերը քիչ մը կհազար կոր։

— Նորե՞ն կհազար կոր։

— Հա՛, իր ամեն հեղվան հազը։

Մանկամարդ աղջիկն հանկարծ ցնցվեցավ անկողնին մեջ, գլուխը վեր առավ աշխուժով ու աչվընները բանալով, երբ Ալիքսանը տեսավ հոն, ամոթխածության շարժումով մը վերմակը վրան քաշեց։

— Բարի լուս, Աննիկ,— ըսավ երիտասարդը։

— Աստծու բարին,— մրմնջեց աղջիկը, անմիջապես սկսելով բարակ ու չոր հազը, որ կարմրություն մը բերավ անոր տժգույն այտերուն վրա։

Ալիքսանը պիշ-պիշ անոր երեսը կնայեր՝ քիչ մը գունաթափ, հասկնալ ուզելով, թե ուսկից առաջ կուգար այդ գեշ հազը։

— Մրսեցուցած ըլլալու է,— մրմռաց։

— Է՛լ, Աննիկ,— ըսավ մայրը։

— Չէ՛, այսօր չպիտի էլլամ, տուտու, ըռահաթսըզ եմ։

Ալիքսան անկողնին մոտեցած էր և գորովագեղ աչվընեներով կդներ իր նշանածին դեմքը, որուն վրա մահվան տխուր դալուկ մըն էր պատած։

— Աննիկ, քեֆսի՞զ ես։

— Սանկ, քիչ մը։

Երիտասարդն ոտքի ելավ և աչք մը ընելով Պետիկին, երկուքը մեկտեղ դուրս ելան։

— Սա չերչեկով քիչ մը միս առ Աննիկին,— ըսավ քառորդ մը գնելով Պետիկին ձեռքը։

— Թող ըլլաս, զավակս, մեկ օրդ հազար ըլլա։

Ալիքսան ուսերը թոթվեց, եմենիներն հագավ ու դուրս ելավ դանեն մրմռալով.

— Ա՜խ, աս հազը...

Պետիկ ճամփան կմտածեր.

— Աննիկին հազը կեշ է, կիտեմ... ան հազը մեր կիտցած հազերեն չէ. մինչև առտու քյութուր քյութուր հազաց... վերե՞մ է աճապ. ան ի՞նչ երեսի ըռենկ է, խուվեթ տերման չունի, զավալը չոճուխս, քանի ամիս է, քի միսի երես տեսած չէ. անճախ հացի մը, թյությունի մը, գիշերե գիշեր երկու թեք ըռախիի փարա կհանեմ կոր։ Իմ վրաս ալ խուվեթ չէ մնացեր, քի առջի պես աշխատիմ... ի՞նչ կըլլար, էյեր հիշ աշխարք եկած չըլլայի նե... որո՞ւն բապուճն է իմ ապրիլս... հայտե, էս ինչ է նե, ըսենք, հապա զավա՞կս, կնի՞կս, քի առջի օրեն մեկ աղեկ օրս չի տեսեր... իրավ որ ինծի անանկ կուգա կոր, քի մեռնելեն աղեկ պան չիկա...

Եվ գլուխը կախած, ճորճորալեն երերտկալեն կբալեր Պետիկ, արցունք մը սրբելով, որ այտն ի վար երկար ակոս մը գծեց։

Գ.

Իրիկվան ժամը մեկին կամ երկուքին ատենները երբեք հետաքրքրություն ունեցա՞ծ եք նայիլ ձկնորսներու, նավավարներու կամ ջրկիրներու գինետունե մը ներս։ Ուսումնասիրության ամենամեծ նյութ մը կրնա ըլլալ ժողովրդային ստորին դասուն այդ երեկոյան հավաքատեղին, կյանքի բանաստեղծության ամենեն վսեմ պատկերներն ու ամենեն սոսկալի երևույթները ի հանդես կուգան հոն։

Ջմրան սկիզբն է։

Հյուսիսային պաղ, անհամ հով մը կփչե՝ քանի մը օր առաջ անձրևեն թրջած գետինները չորցնելով իր ուռուցիկ շունչովը։

Գինետունին ներսը— ցած ձեղունով և հողե գետինով քառակուսի տեղ մը,—երկու աղոտափայլ լամպարներու արձակած տարտամ լույսի մեջ, փայտե սեղաններու առջև նստած կերևին հինգ վեց ձկնորսներ կամ նավավարներ, ամենուն ալ երեսը մռայլոտ, ամենուն ալ աչվրները աղետալի փայլով մը շողշողուն. երբեմն ամենքն ի միասին կլեն՝ խորունկ մտածումով համակված, երբեմն ամենքն ի միասին կխոսակցին, հոգնատանջ կուրծքերե ելնող խրոպոտ ձայներու խառնիխուռն աղմուկ մը և ժողովրդային գողտրիկ առածներով զարդարուն կամ սոսկալի հայհոյանքներով համեմված խոսակցություն մը, որ դուրսեն լսողին համար բան մը չի նշանակեր, այլ, որ գերազանց կարևորություն ունի հաշս այդ մարդոց։

Մեկը միայն չի մասնակցիր ընդհանուր խոսակցության։ Ամենեն մութ անկյունը քաշված է, քիչ մը օղի ունենալով իր առջևի սեղանին վրա, ֆեսը մինչև հոնքերն իջեցուցած, տխուր և կսկծոտ դեմքով։

Ալիքսանն է։

Հինգ վայրկյանն անգամ մը ձեռքի հուսահատական շարժումով մը օղիին գավաթը բերնին կտանի և պարունակությունն անհագորեն կկլլե՝ առանց դեմքը փոքր-ինչ ծռմռտկելու։

Երբեմն կբանա բերանը, կարծես մեծագոչ աղաղակ մը արձակելու համար, սակայն երեք խուլ խորդյուններ միայն կելնեն անկից.

— Ա՛խ, ա՛խ, ա՛խ։

Հետո նորեն կթաղի մտածումներու օվկիանին մեջ, աչքը գոց, ձեռքը ծնոտին դրած։

Խե՜ղճ տղա։

Նիհարցած է, այտերը տժգունած են, աչվրները փոսցած, մազերը երկայն են և, փոքր ֆեսին տակեն դուրս կթափթփին խոշոր ոլորքներով։ Ձգեստները նույն խնամքով հարդարված չեն ալ հիմակ, օձիքը յուղոտած է, շապիկն աղտոտ է, գոտին անկանոն կերպով փաթթված մեջքին։

Ու կխմե, ու կխմե, երբեմն միայն սա երեք հառաչներն արձակելով, որք հոգիին մեջ գոռացող փոթորիկին հեռավոր արձագանքն են։

— Ա՛խ, ա՛խ, ա՛խ։

Օղին հատած էր. սեղանին զարկավ իր խոշոր կարչնեղ ձեռքը և լցնել տվավ շիշը։

— Ալիքսանը աս գիշեր ի՞նչ ունի, կիսսիսային քանի մը ձրկնորսներ, որք գիտեին, թե անիկա ուրախ զվարթ կատակախոս տղա մըն էր։

Եթե գիտնային, թե ինչ ուներ...

— Ի՞նչ ունիմ մի՛,— կմտածեր հեք երիտասարդը,— ի՞նչ ունիմ մի՛. հը՛, էյեր քի կիտնայի՛ք իմին ինչ ունենալս, կուլա՛յիք պե, քարը պիլե տեղեն կերերար. ախ, Աննիկս, աղվոր Աննիկս, զավալը Աննիկս, ես քեզե նա՞սլ պիտի զատվիմ... ճիյերս պիտի քաշեն հանեն, տանին թաղեն... ճիյերես ալ էվել, հոգիս բե... իրավ

որ օսմանմիշ էղա աս աշխարքեն... ասված այս աշխարքը շիներ է, քի մեղիպեսները չարշարվին... որի՞ն հոգն է հատեր, քի ես Աննիկին հետ նշանված եմ, խըյախ կսիրեմ անիկա, անիկա ինծի կսիրե, ամա ծանր հիվանդ է. որի՞ն հոգն է հատեր, քի փարա չիկա, հեքիմ չիկա, իլաճ չիկա, որի՞ն բապուճն է... հիմա ճար մը... պելքի հեքիմ մը բերենք նե, իլաճ մը կուտա տե, պաշխա թյուրլու պան մը կըլլա, է՞հ, ի՞նչ գիտենք, պելքի մեր ըսածը չէ... ամա անտար փարա վո՞ւրկե կտնալու է...

Հեք երիտասարդը՝ ճակատը ձեռքին մեջ առած կանճռեր, կշփեր, արյունացայտ աչվընները կատաղորեն հառած օղիի շիշին վրա։ Մոլեգին կռիվ մը տեղի կունենար անոր բորբոքած ուղեղին մեջ, հոգեվարքի մը ճգնաժամին պես մահահամբույր բան մը, որ եթե գոհացուցիչ ելքի մը չհանգեր, հիմարությունն անխուսափելի պիտի ըլլար։

Հանկարծ ձեռքն ասդին առավ ճակտեն, ուրախության փայլակ մը շողաց աչվընները մեջ, ժպիտ մը սահեցավ հաստ շուրթերուն վրայեն. և, օղիին շիշը, որ տակավին լեցուն էր, բերնին դնելուն պես, վայրագ շունչով մը կծու հեղուկն ի մի ումպ կուլ տվավ։ Արյան ալիք մը խուժեց անոր դեմքին վրա, քունքերուն երակներն ընդլայնեցան պայթելու աստիճան, ելավ կայնեցավ հախուռն թափով մը, և գինետունին մեջ գտնվողները զարմացումով տեսան անոր խոշոր իրանին կայծակի արագությամբ անցնիլն ու դուրսի մութին մեջ անհետանիլն ի քթթել ական։

Ո՞ւր կերթար Ալիքսան. անողորմաբար խթված ձիու մը մոլեշունչ արշավով, իր երկար սրունքներովը լափելով փողոցներն, ուր հովը կսուլեր, կթնդար մահաշշուկ։

Հինգ վայրկյան ետքը երիտասարդ ձկնորսը ծովեզրը կգտնըվեր, խարխուլ տնակի մը առջև, ուր առաջին անգամ պահ մը կանգ առավ շնչասպառ, խոնջ, ձեռքը ճակտին տարավ, ինքզինքը ծովը նետելու պատրաստվող մարդու մը պես, որ վերջին վայրկյանին գերագույն վարանում մը կունենա։

— Չէ, չըլլար,— մրմռաց,— Աննիկը ազատելու է։

Եվ ուսի հարվածով մը տեղեն հանեց դուռը, ներս մտավ։ լուցկիով մը վառեց հոն գտնված լապտեր մը, որուն լույսով երևան ելավ այդ հյուղակին ներքին կողմը։ Տախտակորմերուն վրա շուրջանակի կախված էին ուռկաններ, ցանցեր և խոշոր կարթեր։ Ալիքսան տենդոտ ձեռքով վար առավ ուռկանները, որք ահագին կույտ

մը կազմեցին, չվանով մը կապեց զանոնք, դուրս հանեց, դուռը գոցեց և հետո կոնակը զարնելով ուռկաններու խոշոր կապոցը, ճամփա ելավ՝ գոդի մը պես պատերուն ու տուներուն տակեն երթալով։

Դ.

Կանթեղն աթոռակին վրա կպլպլար խցին անկյունը, հազիվ երևան հանելով ապակիներուն փակված ձյունն, որ սկսած էր առատորեն տեղալ։ Գետնատարած անկողնին վրա պառկած էր Աննիկ, հիմակ ալ կմախք մը դարձած բոլորովին, վերմակին ծալերուն տակեն հազիվհազ զգացնելով մարմնին գոյությունը.. աչվընները գոց էին, բերանը կիսաբաց, ուսկից թեթև շունչ մը դուրս կելներ՝ հոգեվարի մը հևքին պես շուտ-շուտ և անկանոն։ Անկողնին ոտքը կծկված բան մը կերևար. Հոռոփ հանըմն է, որ գլուխն երկու ուսերուն մեջ խրած, դեմքը ձեռներուն մեջ, շարժում մը չէր երկու ուսերուն մեջ խրած, դեմքը ձեռներուն մեջ, շարժում մը չէր երևներ, կարծես անշնչացած։ Անդին, անկյունը նստած էր Ալիքսանը, որուն դեմքին վրա հանդարտություն մը, խղճի անդորրություն մը կնշմարվեր, սակայն ծալապատիկ նստած էր և շարունակ պեխը կխածոտեր, մերթ գլուխը վեր առնելով կնայեր հիվանդին, և անլսելի հառաչ մը արձակելով նորեն պեխը ձեռք կառներ։

Հոռոփ հանըմ գլուխը ցցեց մեկեն ի մեկ, Ալիքսանին նայելով.

— Իլաճին վախտը եկա՞վ աճապ,— հարցուց նվաղկոտ ձայնով։

— Եկած ըլլալու է,— պատասխանեց երիտասարդը հուսահատ շարժումով մը։

Հոռոփ հանըմ տքալով ոտքի ելավ աթոռակին վրայեն, շիշ մը և դգալ մը առավ և հիվանդին քով մոտեցավ զգույշ քայլերով։

— Աննի՛կ, Աննի՛կ,— կանչեց։

Հիվանդը ձայն ձուն չհանեց. թարթիչներն երերցուց, աչքը քթթելով, և բերանը քիչ մըն ալ բացավ։ Վշտակոծ մայրը՝ շիշին միջի հեղուկեն դգալ մը լեցուց անոր բերնեն վար։ Աննիկ սարսռաց, պահ մը բացավ աչվընները, խոշոր ու տարտամ, և երկար շունչ մը առնելով, նորեն գոցեց զանոնք։

Այդ օրը Ալիքսան բժիշկ մը բերած էր հետը. անոր այցելագինը վճարած էր և դեղերն ալ գնած։

Ա՛լ խիղճին վրա բան չուներ խեղճ տղան։

— Պետի՞կը վուր մնաց,— մրմնջեց Հոռոփ հանըմ, ակնարկ մը նետելով պատուհանեն դուրս։

Լռություն տիրեց։ Ապակիին վրան ձյունին հատիկներուն թափառուրը կլսվեր միայն։ Պատուհանին փեղկերեն մին, որ ամուր չէր գոցված, կամաց մը բացվեցավ կիսովին և ձյունին ճերմակ հատիկներն սկսեցին ներս ցատկել և անկողնին վրա իյնալ։

Աննիկ, որ նվաղած կերևեր, մեկեն ի մեկ բացավ աչվքները խոշոր-խոշոր, թևերն ու սրունքները երերցուց անկողնին մեջ ջղաձգորեն, բերանը մեկ քանի անգամ բացավ գոցեց, մարմինը ցընցվեցավ, ուժգնորեն ու թեթև հեծյուն մը արձակելե ետք, աչվքները փակեց։

Աննիկ մեռած էր։

Հոռոփ հանըմ վեր ցատկեց նստած տեղեն, վասնզի տեսած էր աղջկանը սաստիկ տագնապը և հեղակարծ անշարժությունը, բազուկները բացավ և անկողնին վրա վազեց՝

— Օրտոիս[1],— գոչելով աղիողորմ ձայնով։

Ու անկողնին վրա ինկավ։

Ալիքսան ոտքի ելած էր, դալկադեմ, բերանը կծկված, աչվքները սոսկումե և անբացատրելի կսկիծե դուրս ցցված, քայլ մը պիտի առներ դեպի առաջ, երբ փողոցին դուռը զարնվեցավ ուժգնությամբ, կրկին և կրկին անգամ զարնվեցավ. երիտասարդն, իր անհուն վշտին մեջ խելահեղ երկու ձեռքով գլուխը բռնեց, դուրս ելավ խցիկեն ու փողոցին դուռը բացավ։ Մարդ մը դիմացն ելավ, հարցուց իրեն.

— Ալիքսանը տո՛ւն ես։

— Էս եմ,— հազիվ կրցավ ըսել խեղճ տղան։

— Անանկ է նե առջևս ինկիր, կո՛ղ շուն, աղերը կողծողը տուն էս էղեր, տուրս նայե։

Ալիքսան, ափիբերան, դուրս նայելով՝ քանի մը համազգեստավոր մարդեր տեսավ, որք դրան քովը կսպասեին։

— Պիտի պռնե՞ք ինծի,— հարցուց։

— Հիմակ, հատե քալե։

Ալիքսան ներս վազեց՝ մոլորուն քայլերով, խցիկը մտավ, ասդին քշեց խեղճ մայրը, որ կհեծեծեր, մեկդի նետեց անկողնին վերեն

[1] Օրտոիս—որդիս բառի ռամկական ձևն է՝ աղջիկս։

մակը, բռնեց Աննիկին փայտացած մարմինը ուսերեն, երկու անգամ համբուրեց անոր սառեցած նիհար այտերն, հետո վար դրավ։

— Հիմա՛կ,— ըսավ խուլ և հանդիսավոր ձայնով մը և մեջքին գոտիեն երկար դաշույն մը դուրս հանեց, բացավ շապիկն, որուն տակեն երևան ելավ անոր մազոտ լայն կուրծքը, զենքը բռնեց երկու ձեռքովն ու բոլոր ուժովը ներս հրեց. դաշույնը մինչև կոթն անհետ եղավ կուրծքին մեջ։

Ալիքսան անկողնին մեջ փռվեցավ, ինկավ մեռելին քով՝ երկար հեծյուն մը բառնալով կոկորդեն, մինչև Հոռոփ հանըմ սոսկալի աղաղակ մը կարձակեր և ձյունին հատիկներն ալ, հովեն մղվելով, կծածկեին Աննիկին ու Ալիքսանին ալ մեռելատիպ դեմքերը՝ կանթեղին աղոտ ու տարտամ լույսին մեջ։

ՔԱՐԻՏԵՁԻՆ

Իրիկունները, ժամը տասեն անդին երևան կելլար հանկարծ, իր խոպոտ, ահռելի ձայնին ժխորն զգացնելով, Ղալաթիայի փողոցներեն կատաղի հոսանքի պես վազող, փրփրացող իրարանցումին մեջեն, բոբիկ, կոշկոռոտ ոտքերն անցուցած իր լայն ծայրակոր եմենիները, որոնք հազիվ թե կիսովին ծածկելով զանոնք, ներբաններուն մորթն ալ կաշիացեր, բրտացեր է ցեխին ու փոշիին մեջ հարատև քսքտումեն։

Իր խոշոր սրունքները կերերային ապայե փոթուրին մեջ, և բուրդե դեղնագույն գոտիի մը թույլ ծալքերը գրեթե անոր ամբողջ փորը կծածկեին։ Ամառ-ձմեռ նույն բաճկոնակը կհագներ, նույն կարճուկ սալթան ու թեև կրնար իրարու վրա գալ և գոցել անոր կուրծքը, բայց իր կորովի, հուժկու մարմինին ամեհի ճոխությունը ամենուն ցուցնելու խրոխտ դիտումով մը կարծես, քարիտեզճին միշտ բաց կթողուր իր կուրծքը, մազերու հոծ շաղապատումով մը սեցած, մթին։ Թխագույն պեխեր վայելուչ ոլորումով կվերջանային մինչև այտերուն կեսը, որոնց մույնքը միապաղաղ կարմիր էր, արևակեզ և խորշակահար կարմրություն մը։ Աչվքներն հրացայտ էին, տարօրինապես ազդեցիկ։ Ճամփան իր քալվածքին մեջ արհամարհոտ պերևեթում մը կդներ, զոր առաջին ակնարկով կռիվի հրավեր մը կկարծեիր։ Փողոցե մը դուրս կելլեր մեկեն, ու կրս-

կրսեր իր ձեռքը բռնած շավելային պարունակությունը ծանուցանել մեծ պոռչտուքով.

— Քարիտե՜զ, թազե՜, թազե՜։

Ա՜հ, ձեռքի ինչ հիացական ու գրգռալի շարժումով կշոյեր շավելային մեջ վայելչորեն շարված կարմիր միջատները, քարիտեզները, որոնց ամեն մեկը իր հոգիին պես կսիրեր, կրսեր ինք։

Եվ ի՞նչպես չհավատալ գորովանքի այդ անհնարին արտահայտության, որ անկեղծության շեշտով մը դուրս կթռեր անոր բերանեն։

Իր քարիտեզներու ամբողջ ցեղագրությունը, պատմությունը, բարք ու վարքը գոց գիտեր ու բերանուց կրսեր, այնպիսի ճշմարիտ համոզումով, որ պահ մը դիմացինն ալ հավատալու փորձություն մը կզգար։ Ղալաթիո գարեջրատուններն էին իր սովորական վաճառատեղիները և որոնց մեջ ալ հանրածանոթ էր «խոշոր ձայնով» քարիտեզին։ Այնքան բուռն էր կարմրուկ միջատներուն վրա ունեցած սերը որ, եթե երբեք մեկը իր գովասանքները ծաղրելու անխոհեմությունը ունենար, շատ գեշ վայրկյան մը կանցներ քարիտեզին հետ, որ բնավ չէր ներեր այդ հանցանքին։

Եվ իրավցնե ալ անկարելի էր ախորժագրգիռ սքանչացումով չդիտել փոքրիկ խեցգետիններուն համաչափ, գեղեցիկ այդ դեզը՝ տափակ լայն շավելային մեջ փռված, իրարու քով, հատիկ-հատիկ, ոսկիե զանգակներու պես, ակնհաճո։ Քարիտեզի Միրիկը ա՛լ հանրածանոթ եղած էր Ղալաթիայի բոլոր գինետուններն ու գարեջրատունները. անոր քարիտեզին նմանը չի կար՝ թե՛ համեղ և թե՛ մսոտ ըլլալուն։ Միրիկ շատ անգամ կպատվիրեր իր հաճախորդներուն, որ անխնա կերպով զատեն քարիտեզները, հարգանքով ստկեն զանոնք, բարակ աղիքները ամենևին չնետեն, որովհետև ուժ կուտան մարմնին, և իբր փաստ իր ըսածներուն՝ իր հուժկու իրանը կցուցներ, երդում պատառ ընելով, որ ինք առաջ շատ, շատ նիհար էր, ետքեն քարիտեզ ուտելով այդպես գիրցած, հաստրցած էր։ Ամեն մարդ հաճույքով մտիկ կըներ Միրիկին այս ճոռոմ շատզրուցություններուն և հավատալու ալ հովեր կառներ։ Բայց այս ռամկական հռետորությունը վսեմ երանգներ կստանար հանկարծ, խոպոտ ձայնին քաղցր ելևէջ մը խառնելու ճիգ մը կցուցներ, ամփոփվելու, կոկիկ երևնալու ջանքեր կըներ, բերանը այնչափ մեծ չէր բանար, ուսվընները քիչ մը ավելի կհրեր եմենիներուն մեջ, մաղոտ կուրծքը կուզեր պարտկել բաճկոնակին տակ,

ինչ ավելի խնամքով կզետեղեր գանգին վրա, երբ ներս մտներ Գիեռ-Հոլ գարեջրատունեն, ուր իրիկունները, ժամը տասնըմեկեն անդին, սեղաններուն շուրջը կուգային կշարվեին սովորական հաճախորդները, առջևնին գարեջուրի մեյ-մեկ գավաթ։

Օր մը, հաճախորդին մեկը, որ միշտ հաճույք կզգար Միրիկին հետ խոսակցելեն, զարմացումով նշմարեց, որ իր ամեն ժամանակ տեսած հին եմենիներուն տեղ հիմա նորեր հագած էր անիկա, հեգնական շեշտով մը անմիջապես հարցուց անոր այս տարօրինակ նորության շարժառիթը։ Միրիկ, որուն բացարձակ անծանոթ էր ամոթխածության զգացումը, հանցանք մը ըրած պահուն բռնվող տղու մը խպնոտ և երկչոտ շարժումն ըրավ, շուրջը նայեցավ՝ այդ հարցումին պատասխանը մեկեն գողնալու ակնկալությունով, բայց իր աչքը հանդիպեցավ երկու սեղան անդին երիտասարդի մը քով նստող մանկամարդ աղջկան մը, որ հարցումը լսած ըլլալով՝ ինքն ալ պատասխանին կսպասեր։

— Մեկալները հինցեր էին,— ըսավ մեղմ ու խորունկ հառաչով մը և անմիջապես շավելան առնելով դուրս ելավ գարեջրատունեն։

Ա՛լ անկեց ետքը երկու շաբաթի չափ չմտավ այն գարեջրատունը. միայն, երբ առջևեն անցներ, գաղտագողի ակնարկ մը կնետեր դրան ճեղքեն ներս ու կփախչեր։ Բայց իրիկուն մը, երբ դարձյալ ներս պիտի նայեր, կեցավ, ձեռքը ճակտին տարավ, մտածեց, վարանոտ, հետո հանկարծ դուռը բացավ, ներս մտավ և իր սովորության համեմատ պտտիլ սկսավ սեղաններուն առջև, մեղմ ձայնով մրմռալով.

— Գբրմբզը քարիտե՜զ։

Նորեն հոն, նույն սեղանին առջև նստած էին երիտասարդն ու մանկամարդ աղջիկը, սև մազերով թխագույն, շնորհալի սևաղջայց դրիորդ մը, որուն աչքերուն սևեռումի տակ անպատճառ սարսուռ մը կզգար մարդ։ Շաբաթը գրեթե երեք անգամ հոդ կուգային անոնք, երիտասարդն ու աղջիկը. առաջինը միշտ կուգար ու կսպասեր երկրորդին. ձեռքի սեղմումի մը ետք իրարու քով կնստեին և փսփսուք մը կսկսեր իրենց մեջ։

Երբ Միրիկ իր պտույտը շարունակելով անոնց առջև հասավ, աղջիկը հանկարծ քովինին դառնալով՝ ըսավ.

— Քարիտեզ առ։

Միրիկին աչքերը վառեցան, ժպիտ մը եկավ հաստ շրթունքներուն վրա ու մարեցավ, վեր առավ շավելան ու մատներովը խառնելով քարիտեզները, ըսավ՝ ձայնին մեջ աննշմարելի հուզումով մը.

— Քուրի՛կս, ասանկ քարիտեզ էոմրիդ մեջ կերած չես, համեն հոտէն չես կշտանար, է՛ն աղվորներեն տամ։

Եվ սկսավ զատել ամենեն խոշորներն ու ամենեն կարմիրները, պնակի մը մեջ լեցուց ու լեցուց, տալու սրտաբուխ ավյունով մը համակված, մինչև որ պնակին մեջ ա՛լ տեղ չմնաց։

— Քանի՞ փարա է,— հարցուց երիտասարդը։

— Փարա՞,— ըսավ Միրիկ տեսակ մը զարմացումով,— չէ՛, աս հեղու փարա չեմ ուզեր, համը նայեցեք, էյեր աղեկ ըլլա նե, պաշիա վախիդ փարա տվեք։

Եվ շավելան առնելով, դուրս եկավ շտապով, թոուցիկ ակնարկ մը նետելե ետք աղջկան երեսին, որ թեթևապես դեղնած էր հիմակ։ Մանկամարդուհին քիչ մը ակներև անհագությամբ մը կերավ Միրիկին կարմրուկ միջատները, ծծեց անոնց ամեն մեկ հատը, կերավ, իր ճերմակ մանտրտիկ ակռաներուն տակ ճզմելով քարիտեզներուն նուրբ փեճեկները, այն աստիճան, որ քովը նստող երիտասարդը զարմացումով հարցուց.

— Գոհարի՛կ, ես չէի գիտեր, որ այդչափ կսիրես քարիտեզը։

— Օ՜, շատ կսիրեմ, պզտիկությանս հայրս միշտ կբերեր մեզի։

Երբ երկու գիշեր վերջը Միրիկ ներս մտավ Պիեռ-Հոլեն, մուգ ֆես մը կծածկեր անոր գլուխը, առջի յուղոտ հին ֆեսին տեղ։ Գոտին կորսնցուցած էր իր անհոգ թույլ կապվածքը, ու տեսակ մը վայելչությունով ամփոփված էր անոր կորովի մեջքին վրա և շավելան ալ, զոր առաջ անփութորեն աջ կողմեն ի վար կկախեր, հիմակ ելած էր անոր խոշոր կաշմբուռն ձեռքին վրա համբարձիկ։ Հաճախորդները խորին զարմանքով կտեսնեին Միրիկին կրած փոփոխությունը քանի մը շաբթվան մեջ, կարծես գերբնական զորության մը ազդեցությամբը. ա՛լ անանկ կոպիտ շարժումներ, բիրտ շեշտեր, կոշտ խոսքեր չուներ. իր սիրելի քարիտեզներուն վրա իսկ ա՛լ նույն գորովագին ակնարկը չէր նետեր, ուզողին կուտար, ափին մեջ լեցնելով միջատները, տրված ստակը առնելով անտարբեր և դուրս ելլելով գարեջրատունեն՝ տրտմությամբ մը համակված կարծես։

Երբ այն գիշեր ներս մտավ, ուղղակի մանկամարդ աղջկան սեղանին գնաց, ուր խնդալով հարցուց, թե ի՞նչպես գտած էին իր քարիտեզները։

— Շատ համով էին,— ըսավ մանկամարդուհին,— նորեն բուր։

Միրիկ դարձյալ տվավ միշտ շռայլորեն և այս անգամ երթալու պահուն սեղանուն ակնարկ մը նետեց աղջկան վրա, որ սարսուռ մը ունեցավ։

Անկե վերջ խելացի գաղափար մը հղացավ քարիտեզճին։ Այս ստորին դասակարգի մարդը իր անշնորհ մեջքի գոտիով, իր ապատ

դառն կսկիծը կերևեր դեմքին վրա։ Եվ մինչև քարիտեզճին հշ-
ռունակեր լեցունել պնակը, մանկամարդ աղջիկը հարցուց.

— Ատ լաթերդ ինչո՞ւ փոխեր ես։

Եվ պահ մը վարանելե հետո.

— Ա՛լ քարիտեզ չեմ ուտեր,— ըսավ։

ԿՈՒԶԸ

Երկարաձիգ նեղկեկ փողոցի մը մեջտեղ, փայտե հին տունի մը տակոքը, փոքրիկ փցուն խանութի մը մեջ առտվընե մինչև իրիկուն կերերցուցներ իր սրտաճմլիկ կուզը՝ նպարավաճառ Կումիկը, զոր խամպուռ պախալը կանվանեին հոն, այդ թաղին մեջ։

Տասներկու տարեկանեն ետքը իր ազազուն ու ծուռիկ-մուռիկ իրանը դադրած էր բարձրանալե, լայնանալե. զարգացումի բնական օրենքը մեռած էր այդ արարածին մեջ, տարիներու բոլորման հետ հարաճուն դառնություն մը լեցնելով անոր նեղլիկ սիրտին մեջ. և ի՜նչ ցավագին ծամածռումով դիտած էր իր անիծյալ կուզին անզգալի տվայտումը։ Այնքան մտահոգ քննության մը առարկա ըրած էր զայն, որ քսան տարու եկած ատենը արբշիռ ուրախությամբ դիտած էր, թե կոնակին այտուցը ա՛լ դադրած էր ուռճանալե։ Այն ատեն անսահման սփոփանք մը զգաց, իր կրոնակին անհեթեթ բեռն ա՛լ այնքան անշնորհք չերևցավ աչքին. այս համոզումը կազմելեն ետքը կարծեց, թե ինքն ալ ամեն մարդերու պես եթե ոչ վայելուչ, գեթ ոչ շատ տգեղ մարդ մըն էր. իր այդ անբացատրելի գիտակցությունն այնքան շլացուց իր միտքը, այնքան սխրանք տվավ իր թույլ զգայությանը, որ հեք Կումիկի աչքները ամեն կոնակի վրա իրենին պես բան մը կկարծեին նշմարել, դուրս ցցված կլորություն մը, որ ավելի վայելչություն կուտար հասակին, քան տձևություն։ Մինչև այդ երանագեղ օրն հուսահատ ապրած էր. կյանքի ինքնավար հոսանքին տված էր իր կարճուկ, կլորիկ մարմինը, որ խութերու խոչերու վրայե անցնելե ետք, հիմակ անդորրիկ ծովուն վրայեն կվազեր կարծես դյուրությամբ։ Անգամ մը իր անձին անխախտ գիտակցությունն ունեցավ շատ նպաստավոր կերպով, մտածեց թե, քանի որ ինքն ալ մարդ էր՝ ամեն մարդերու պես ապրելու էր աշխատությամբ, որուն պտուղը վայելելու էր իր շնորհքով մարմնին բոլոր խանդովն ու

բոլոր ըղձանքովը։ Ասդին անդին ինկավ, ճար-ճարակ ըրավ, իր կերպարանքին տխրազդեցիկ սիլուետն ամեն տեղ, ամենուն առջև պտըտցուց, աղաչանք, պաղատանք թափեց, թափթփեց, և վերջապես հաջողեցավ մեկ քանի գթոտ սիրտերե փրցնել քիչ մը դրամ, զոր անմիջապես փորձեց շահագործել։ Այն թաղը եկավ, տունին տակի այն ծակը մտցուց իր սապատող իրանը, հետն ունենալով նպարեղեններու շատ վտիտ մթերք մը, զոր փոեց ցուցադրեց հոն։ Փողոցին մեջ ախորժելի անակնկալ մը եղավ Կումիկին երևումը։ Ամեն մարդ արգահատալեց կարեկցություն մը զգաց այդ խեղճ սապատողին նկատմամբ, զոր բախտին մեկ անգութ ապտակն այդ վիճակին հասցուցեր էր։ Ժողովրդային շատ հին ավանդական սովորության մը հնազանդելով, մկրտեցին զայն խամպուռ պախալը մակդիրով, զոր միայն իրենց մեջ կգործածեին։ Ա՛լ սկսավ ինք հոգալ մոտակա տուներու նպարեղենի մանր-մունր պետքերը, իր հոպիտական ձևերովն ու միմոսի շարժումներովը խնդուք պատճառելով իր դրացուհիներուն մանավանդ, որոնք բավարար բարեսիրտ էին անոր երեսին չտալու մարմնին այդ անճոռնի թերությունը։ Անանկ որ ա՛լ բոլորովին մոռցած էր Կումիկ իր կուզը։

Տունը, որուն տակ կապրեր խամպուռ պախալը, կբնակեին հայր մը, մայր մը և մեկ հատիկ աղջիկ մը՝ տասնվեց տարու էլիզա վառվռուն քումայթ աղջիկ մըն էր, զվարթության և աշխուժի խառնուրդ մը փթթինազարդ, որուն մեջ ծնողքը վայելում մը կգտնեին, ամուսիններու առաջին սիրույն անհետացումեն ետք վրա հասնող այն կակուղ, քնքուշ վայելումը, որուն հեշտանքը, սակայն, փոխանակ մարելու, հետզհետե կշատանա, կասատկանա։

Կուզին ներկայությունը զվարճության շարժառիթ մը եղած էր էլիզային համար. իրիկունները, դպրոցեն արձակվելե ետք, պատանուհին անոր խանութը կերթար և խնդալեն կմարեր Կումիկին ծիծաղաշարժ պատմություններեն, զորս սապատողը կհամեմեր չես գիտեր ի՜նչ թաքուն ավյունով մը, անսանձ ոգևորությամբ մը։ Կումիկ բանը գործը երեսի վրա կթողուր, երբ զվարթ աղջիկն իր քովը կուգար, աչքերեն անսովոր բոցով մը կվառվռեին, երանության ժպիտ մը կերերար միշտ բարակ, անգույն շուրթերուն վրա և... երջանիկ էր Կումիկ։ Օրե-օր սիրտին մեջ կաճեր այն տեսակ մը բանը, զոր նախ տարտամ, անորոշ կկարծեր, բայց որ հետզհետե գույն մը, երանգ մը, նեղացուցիչ հանգամանք մը կստանար։ Էլիզային ներկայությունը, մանավանդ անոր փողփողուն աչքերը

տարօրինակ տպավորություն մը ի գործ կդնեին իր վրա, խուսափիլ կուզեր անոնցմե, բայց չանք մը, ճիգ մը չէր ըներ, իր կամքեն վեր զգալով այդ բանը։

Էլիզային հաճույքն ալ նույն համեմատությամբ կշատնար, երբ կտեսներ կուզիկին խայտացումն, մանուկի կամ լավ ևս՝ ստուկի այն ձևերը, որոնցմով կուզեր հրապույր մը ազդել իրեն։ Օր մը, ա՛լ չդիմանալով իր չարաճճի աղջկան դրդումին, էլիզան ձեռքն հանկարծ տարավ կուզին կոնակին.

— Ա՞ս ինչ է,— ըսելով և մեծաժխոր քրքիջ մը արձակելով։

Կումիկ վեր ցատկեց՝ կարծես էլեկտրական թանձր հոսանուտ մը ցնցված. արյան կոհակ մը ելավ խուժեց անոր կապտագույն այտերը, աչվընեերուն մեջ դիվային փայլակ մը բոցավառվեցավ, դեպի ետև ընկրկեցավ, և իր ըրած ընդոստ շարժումին մեջ, գնաց, զարնվեցավ պատին։ Այդ բախումը սուր ճիչ մը կորզեց խեղճ սապատողի կոկորդեն. կուզը ցցված էր և քիչ մըն ալ մորթը սկըրթված։ Էլիզա, այս անհեթեթ այլակերպումեն սարսափահար, դուրս վազեց և անհետ եղավ։

Հինգ վայրկյանի չափ այդ դիրքին մեջ մնաց խամպուտ պախալը, հետո ամեն բան մարեցավ, սքլեցավ անոր վրա. երեսին մորթը իր բնական գույնը վերստացավ, աչվընեեն հիմակ ավելի նվազկոտ փայլ մը առին, գլուխը ծռեց կուրծքին վրա ու թաղվեցավ անզգա թմրության մեջ։ Ի՞նչ կդառնար խեղճ արարածին ներսիդին. օվկիանոս մը, որ մեկեն ի մեկ փրփրած, ալեկոծ եղած էր. խուլ մռնչյուններ, ողբագին ոռնումներ կթնդային հոն, քայքայում մը եղած էր մեկեն ի մեկ, առանց կանխանշանի, և խորտակած էր այդ ափ մը սիրտը, որ քիչ մը առաջ երջանկութենեն կսարսռար։ Կումիկ կնմաներ այն մարդուն, որ կանաչագեղ մարգի մը վրա հանդարտորեն քալած պահուն հանկարծ կգահավիժի անտեսանելի անդունդ մը վար ու կջախջախվի։ Կվախնար երերալու, կարծելով, թե ամեն մեկ անդամները սուր, անտանելի խիթեր պիտի ունենային և հանկարծ պիտի խորտակվեին իր ոսկորները, կվախնար ետին նայելու, կարծելով, թե ճիվաղ մը պիտի տեսներ իր կրունակին վրա ահռելիորեն ցցված։ Աննկարագրելի ծանրություն մը կդգար հիմակ իր վրա, բեռի մը տակ կճզմվեր, շունչը չէր ելներ, կուրծքը կսեղմվեր, և տակավին իր ականջին մեջ կհնչեր էլիզային քստմնելի քրքիջն ու սա խոսքը.

— Ա՞ս ինչ է։

Վերջապես երկար վարանումներե ետք ոտքի ելավ Կումիկ։ կոնակն երերցուց և հառաչ մը արձակեց։

Դարակ մը քաշեց, ուր լուբիա լեցված էր, և քառակուսի ապակի մը դուրս հանեց,— հայելիի կտոր մը, զոր տեղի մը կոթնցնելով, հեռու գնաց և ինքզինքը անոր մեջ դիտեց կողմնակի։ Հայելիին մեջ կուզն երևցավ իր բովանդակ այլանդակությամբը։

Պախալը, առանց ճիչ մը հանելու բերնեն, առավ ապակիին կտորը գետին նետեց, վրան կոխկռտեց և կտոր-կտոր ըրավ։ Հետոյ, նստավ անհենարան աթոռակի մը վրա։ Խոշոր արցունքներ կկաթեին անոր աչքերեն. լոիկ մնջիկ կուլար հեք սապատողը, առանց կծկում մը ցուցնելու դեմքին վրա. արցունքի հատիկները շարունակ կիյնային, թրջելով անոր երեսին մագաղաթագույն մորթը։

Նույն պահուն հաճախորդ մը ներս մտավ խանութեն և տեսնելով Կումիկին այդ ողորմելի կերպարանքը, հարցուց.

— Ինչ ըլլա, Կումիկ ախպար։

Կուզը ելավ նստած տեղեն, բան մը չըսավ, ձայն չհանեց, կեցավ խանութին մեջտեղը ու ապուշ-ապուշ եկողին երեսն սկսավ նայիլ։

— Ի՞նչ կա, Կումիկ, չըսե՞ս. նշանածդ մեռա՞վ։

Այս խոսքը ցնցեց սապատողը, որ կարծես խելաբերելով, երկու ձեռքերովը հախուռն կերպով սրբեց երկու այտերն ու՝

— Բան մը չի կա,— մրմռաց։

Մարդն ուղածը առնելով, դուրս ելավ, քիթին տակեն մրթմրթալով.

— Աս գավալլըն բան մը ունի։

Ա՛լ անկից ետքը ի՞նչպես ապրեցավ խամպուտ պախալը։ Էլիզան մեկ խոսքով, ձեռքի մեկ շարժումով արթնցուցած էր, հրաբուխի հեղակարծ պոռթկումի պես դուրս ժայթքեցուցած էր այդ զգայնոտ հոգիին բովանդակ եսն, գեղեցկութենե, մարմնական վայելչութենե զուրկ գտնվելուն ահռելի ու անդարմանելի վիշտն, որ վիշտերուն սաստկագույնն ու է՛ն ավերիչն է։ Իր այդ անակնկալ փոփոխումի մասին դրացիներուն ուղղած հարցումներուն սա խոսքով միայն պատասխանեց Կումիկ.

— Պան մը չէ, կասնի։

Բայց չէր անցներ. օրե-օր կնիհարնար անիկա, այտերը կհալեին ու ոսկորներուն ձևերը կցուցնեին. աչվընեերուն պճլատացող բոցը կմարեր զգալի կերպով. կոնակն ավելի կշեշտեր իր այտուցը։

Գիշերներն, երբ խանութը գոցեր և առանձին մնար, կհանվեր, շապիկն ալ կհաներ և ձեռներովը շարունակ կուզը կշոշափեր, կքերթեր, կսեղմեր՝ զայն անհետ ընելու հույսի գերագույն ճիգով մը, բայց իր աշխատանքն ավելի կասստկացներ իր հոգեկան շարչարանքը, սիրտին հատումը կավելցուներ։ Կոնակին վրա կպառկեր գետինը, ջանալով իր ծանրության տակ ճզմել, ճզմել դժոխային այդ ուռուցքը, որ իր կյանքը կխորտակեր աղետալի կերպով։ Չէր հաջողեր։

Այն ատեն հուսահատությունն իր ծայրագույն աստիճանին հասավ. առաջ գոնե կամք մը ուներ այդ աղետքին առաջքն առնելու. հիմակ այդ ալ կպակսեր։ Խանութին մեջ սրտամորմոք լքում մը կտիրեր. տակնուվրա էր ամեն բան. ալյուրը լուբիային խառնված, սոխը ձեթապտուղին մեջ ձգված, քացախը յուղին մեջ լեցված, և այս ամենը թանձր փոշիով շաղապատուն։ Հաճախորդները միշտ անկյունը նստած կգտնեին Կումիկը, գլուխը կուրծքին կոթընցուցած, աչքերը գետին հառած, հուսահատության արձանը ներկայացնելով՝ իր ներս քաշված կուրծքով ու դուրս ելած կոնակով։ Քիչ-քիչ հեռացած էին անկից, արգահատախառն զզվանք մը զգալով այդ աղտոտութենեն ու խեղճութենեն։

Օր մը տեսան, որ խանութն ա՛լ չէր բացված. զարկին, ձայն չի կա. ստիպվեցան կոտրել։ Ներս մտան։ Խամպուռ պախալը պառկած էր գետինը, հին, բզկտված անկողնի մը վրա, անշունչ, անշարժ։ Աղեխարշ բան էր։

Վեր առին վերմակը և հետս ընկրկեցան պարզված տեսարանեն։

Խամպուռ պախալը երեսի վրա պառկած էր մերկ, և դուրս ցցված կուզին վրա ահռելի վերքեր բացված էին։

Բժիշկ մը վազցուցին։ Սա՝ հետ քննության՝ հաստատեց, թե Կումիկ մեռած էր իր վերքերեն։

Ու բժիշկը կսխալեր։

Կումիկ սիրտին ցավեն մեռած էր։

ԶՈՒԿԻՆ ՓՈԽԱՐԵՆ

Խենթուկ, շուտիկ տղա մը էր Համբիկ, տասնյոթը տասնինը տարու, աչքը փողոցներուն մեջ բացած, մանրանկարը ապագա այն մեծ սրիկային, որ կա՛մ ջրհանին եռևեն պիտի վազե խարազանը ձեռքը, կամ հրապարակներու վրա իր խոպոտ ահագին ձայնով ձուկ պիտի ծախե։ Մայրը, որ լվացարարուհին էր նավամատույցին բեռնակիրներուն, մինչև երկու տարի մեծցուցած էր զայն լվացարանին մեջ, չոր հաց մը ձեռքը տված, զոր մանուկը կկրծեր առավոտնե մինչև իրիկուն՝ ճղճղալով, ճնճնալով։ Հետո, որովհետև մայրը օրին մեկը շնչահեղձ եղած էր խամ ածուխի մուխե, և հայրն ալ, որ ձկնորս էր, ծովը ինկած էր ու խեղդված, Համբիկ գրեթե անտեր մնաց ու վեց տարեկանեն անդին փողոցներուն մեջ սկսավ թափառիլ, գիշերները հազիվ պառկելու տեղ մը գտնելով ու ցերեկին ալ հազիվ կտոր մը հաց։ Այս տաժանելի կենցաղը չէր մեռցուցած զայն, ընդհակառակն հուժկու մարմին մը և աննկուն հոգի մը պատրաստած էր։

Որովհետև երջանկության և հեշտակեցության վրա գաղափար չուներ, իր հիմիկվան վարած կյանքը աշխարհի երջանկագույն կյանքը կկարծեր։ Առավընե մինչև իրիկուն փողոցները կշրջեր, պատահական ծառայություններ ընելով, ջուր կրելով տունները, բեռներ տանելով ասդին-անդին, և այլ մանր-մունր գործեր ընելով, որոնցմե ձեռք ձգած ստակին մեկ մասը իր ապրուստին կգործածեր ու մյուս մասն ալ ապահով տեղ մը կպահեր՝ ապագային ավելի շահաբեր գործով մը զբաղելու դիտումով։ Իր աշխուժությամբն ու հանդգնությամբը ամենուն համակրանքը կգրավեր։ Շատ անգամ, երբ ուրիշ զբաղում չունենար, նավամատույց կվազեր ու շոգենավեն ելլողներեն ումանց բեռները շալկելով տուն կտաներ։

Քիչ շատ հարուստ թաղի մը մեջ հաստատած էր իր գործերուն գլխավոր կեդրոնը, պարապու ժամերուն, իբր կատարյալ ստամբակի մը, կատակաբանություններով, թռչունի և կենդանիներու ձայնի նմանություններով կզվարճացներ թաղեցիները, մանավանդ դպրոց գացող փոքր աղջիկները, որոնք գրեթե ամեն իրիկուն անոր շուրջը կխռնվեին ու կրսեին.

— Հայտե, Համբի՛կ, կատուի թախլիթ մը բրե մեզի։

Այն ատեն ստամբակը կսկսեր կատուներու ճշմարիտ պայքար

մը, որ միշտ կվերջանար արուին՝ այսինքն իրեն փախուստովը։ Մանկուհիներուն ճվիլտուքը հաճույք կպատճառեր չարաճճի տղուն։ Ինք, որ բնավ գիտակցություն չուներ ոչ ծնողքի, ոչ քրոջ, ոչ որևէ սրտակցի գորովի վրա, այն գաղտնի զորություններն մղված, որ ամեն մարդու սրտին խորը կապրի ու պատեհ առիթով դուրս կպոռթկա, Համբիկ, անգիտակցաբար, համակրանք մը, սեր մը գրեթե կզգար այդ փոքրիկ, անմեղուկ արարածներուն համար, ու ա՛լ անդիմադրելի պետք մը եղած էր իրեն անոնց պշրական շատախոսությունները լսել, ու գոհացնել անոնց ամեն տղայական պահանջումները։

Օր մը, իրիկվան դեմ, նավամատույց իջած էր, իր սովորության համեմատ բեռ փոխադրելու։ Շոգենավը մոտենալուն պես, խումբ մը բոկոտն տղաքներ, որոնք հոն կսպասեին, ակնդետ, սովալլուկ գայլերու պես կթափին շոգենավին դուրս ելլողներուն վրա, իրարմե հափշտակելով անոնց ձեռքը գտնված բեռները։ Համբիկ այս մասին բացառիկ ճարպկություն մը կցուցներ, ամենեն «յուղի մուշթերիին» ձեռքի բեռն առնելով, մինչև անոր տունը կտաներ։ Արդ, այն իրիկունը, շոգենավը մոտենալուն, բեռնակիրները արդեն կսպասեին. դուրս ելլողներուն մեջ շքեղորեն հագնված օրիորդ մը երևցավ, որ ձեռքը բռնած երկու խոշոր ծրարները երկնցուց Համբիկին, որ առավ զանոնք, անգամ մը աղջկանը երեսը նայելով, և հետո հարցուց, թե ո՞ւր պիտի տաներ ծրարները. մանկամարդ աղջիկը թրթռուն ու ներդաշնակ ձայնով մը, որուն մեջ տիրական շեշտ մը կար, ըսավ.

— Ետևես եկուր։

Համբիկ բազուկներուն տակ զետեղեց ծրարներն ու հետևեցավ մանկամարդ աղջկան, քիչ մը խոռված անոր մեծաշուք կերպարանքեն ու անուշ բուրումներեն, որ կխուսափեին անոր ամբողջ անձիքեն։ Մինչև այն ատեն ասանկ բաներ չէր զգացած. շրջազգեստին շրշյունը, մանրիկ ոտքերուն խրոխտ կոխվածքը քարահատակին վրա, դեղնագույն ժանյակով եզերված հովանոցին նազելական ճոճումը և մանավանդ ծոծրակին սպիտակ միսը, որ կերևար օձիքին եռանկյունի ճեղքեն, բոլորովին կգինովցնեին փողոցի այդ ստամբակը. զգացած հաճույքը այնքան բուռն եղավ, որ կփափագեր, որ ճամփան անհունապես երկար ըլլար. հավիտենապես վայելելու համար այդ քաղցր երանությունը. մինչև այն ատեն իրեն անծանոթ երազանքներ, խառնիխուռն կխուժեին միտքին

մեջ, կգգվեին իր թաքուն զգայնությունները. ու կհետևեր այդ մը-տացուծին էակին, զգլխիչ բույրերով առլի մթնոլորտի մը մեջ ինքնաբերաբար քալելով կարծես, լիաթոք ծծելով իր ոնդունքները շոյող խելահեղիչ հոսանուտը։

Մանկամարդ աղջիկը մեկեն կանգ առավ դրան մը առջև ու դառնալով Համբիկին,

— Տղա՛,— ըսավ առանց անոր երեսը նայելու,— հոս ձգե՛ և գնա։

Եվ քառասունոց մը դրավ ստամբակին ձեռքը։

Համբիկ վրան անգամ չնայեցավ ստակին. անախորժ հուսախաբություն մը կրածի պես պահ մը քարացավ մնաց, բայց շուտով խելքը գլուխը գալով՝ դանդաղորեն հեռացավ, ակռաներուն տակեն մրմռալով.

— Վա՛յ անիծից, ծո էս ասանկ աղվոր ախճիկ չէի տեսեր, ան ի՞նչ ճիտ էր։

Առաջին անգամ ըլլալով այն իրիկունը չգնաց իր սովորական փողոցը ու գլուխը չժողվեց փոքր աղջիկները, որոնք զարմացած այդ բացակայությանը վրա՝ ըսին իրարու.

— Համբիկ ո՞ւր է, չեկավ աս իրիկուն, խոսք տված էր, քի շունի պես հաչեր։

Եվ շատ տխուր եղան փոքրիկ աղջիկները այն իրիկունը։

Համբիկ հաց չկերած պառկեցավ այն գիշերը՝ իր երազներուն մեջ ընկղմելու համար։ Շատ հեղ այդպես կպատահի, զգացում մը, որ կա մարդուս ներսիդին և իր գոյությունը շատ հայտնի չըներ; անակնկալ առթիվ մը մեկեն ի մեկ երևան կուգա՝ սաստիկ ցնցումներով, որոնք ամբողջ էությունը կդղրդեն։ Համբիկ մինչև այն օրը շվայտ զգացում մը գրեթե չէր ապրած այդքան բուռն կերպով։ Ու այն իրիկվան փորձությունը շատ գեշ ազդած էր վրան։

Ու կմոլտար իր խշտիկին վրա երկնցած.

— Ծո, ան ի՞նչ ճիտ էր։

Սակայն, երբ առտուն արթնցավ Համբիկ, երեսը կփոզփոզեր. ժպիտ մը կերևեր շուրթերուն վրա։

Ըսավ ինքնիրեն.

— Ա՛լ աս մահալլեեն կելլամ, հոն կերթամ, հե՛մ քևարը շատ դելլա պելքի. հե՛մ...

Խոսքը ընդմիջեց, աչքերուն մեջ շողյուն մը փայլեցավ և ձեռքը ճակտին զարնելով,

— Օ՜, ան ի՞նչ ճերմակ ճիտ էր,— մոլտաց։

Ըսածին պես ալ ըրավ. նույն օրն իսկ այն փողոցին մեջ, ուր կգտնվեր առջի իրիկվան օրիորդին տունը, փնտռեց ու գտավ պարտեզի մի անկյունը, ախորի պես փոքր խցիկ մը, ուր փոխադրեց իր հարդե անկողինը, քանի մը մանր-մունր գույքերը։

Ա՛լ այնուհետև այդ փողոցին մեջ թափառեցավ, ամենուն ցուցնելով իր ժպտուն դեմքը, ամենուն համակրանքը վաստկելու ձեռներ ընելով. հոն ալ սկսավ իր ծառայությունները ի գործ դնել, հիմակ ավելի եռանդով, ավելի աշխուժով. գրե՛թե ամեն վայրկյան կանցներ կդառնար այն տունին առջևեն, որուն հրապուրիչ պարունակությունը պատճառ եղած էր իր փոխադրության. երբեմն պատուհանը նստած կտեսներ զայն ու գաղտագողի ակնարկով մը կդիտեր անոր դեմքը. մանավանդ սպիտակ ծոծրակը, որուն վրա կատարսուային սևաթույր մազերու քանի մը ցանցառ փնջիկներ։ Մեծ վայելք մըն էին իրեն համար այդ վայրկենական վաղանցիկ նայվածքները։

Բայց պառկած ատենը բուռն տխրությամբ մը կհամակվեր հեք Համբիկ և ամեն անգամ, որ իր հոգնած դադրած ոտքերը կերկնցներ հանգստավետ խշտիկին վրա, կմրմնջեր.

— Ան ի՞նչ ճիտ է, պե՛։

Իր հանդուգն բնավորության օգնությամբը, հաջողեցավ իր տաքը դնել իր երազած տունեն ալ ներս։

Հարուստ ընտանիք մը կբնակեր այդ տան մեջ, հայր մը, մայր մը, երկու զավակ՝ աղջիկ մը, օրիորդ Սիրանույշ և մանչ մը։ Կնոջական ամեն դյութություններով հղփացած սիրուն օրիորդ մըն էր Սիրանույշ, որուն շատ երիտասարդներ աչք ունեին, թե՛ գեղեցկության, և թե՛ հարստության համար. բայց ինք դժվարահաճ էր և բնավ ականջ չէր կախեր իրեն եղած առաջարկներուն. գաղափարային աղջիկ մըն էր, որ այն ատեն ամուսնական կյանքին մեջ պիտի մտներ, երբ գտներ իր մտատիպարը, որ տակավին շատ հեռու ըլլալ կերևակայեր ինք։ Բայց իր կարծիքը սխալ ելավ. Երեկույթի մը մեջ— օ՜հ, ի՞նչ պիտի ըլլար շատ մը աղջիկներու և երիտասարդներու վիճակը, եթե չըլլային այս երեկույթները,— հանդիպեցավ գեղեցիկ, իր երազած ձիրքերով օժտված երիտասարդի մը, որուն անմիջապես համակրեցավ։ Ավելորդ է ըսել, թե

երիտասարդը առանց վարանելու փոխարինեց այդ համակրանքը՝ հաճոյալի խոսքերով։

Նորարծարծ սիրո քաղցր վայելումները շատ կարճ կերևան սույն երեկույթին քանի մը ժամերու միջոցին. գիշերը կանցնի ամպի բրդուճի մը պես, զոր հովը կվարե կտանի՝ երբ հազիվ կարմրերփնված է նորածագ արևին շառայլեն։ Տեսակցությունը նորոգել անկարելի ըլլալով, երիտասարդը կհանդգնի իր սրտին բոլոր զգացումները ծաղկանկար ու անուշաբույր թղթին հաղորդել և զայն ղրկել իր սիրեցյալին։ Օրիորդ Սիրանույշ դողդոջ ձեռքով և ճակատին վրա վաղանցիկ շիկնումով մը կարդաց սիրո այդ բոցեղեն արտահայտությունը, որ կվերջանար պատասխան ընդունելու պաղատանքով։ Մանկամարդ աղջիկը, որուն կպակսեր տակավին սիրային հանդգնություն, քանի մը օր մտածեց՝ միշտ ձեռքը բռնած երիտասարդին սիրերգը, որուն աղաչանքը կմորմոքեր իր փափկասուն սիրտը. վերջապես որոշեց պատասխան գրել, բայց ի՞նչ կերպով անոր ձեռքը հասցնել զայն. ամենափոքր գայթակղություն իր անվան շուրջը՝ կսոսկացներ զինքը. երկար մտածեց այս փափուկ կետին վրա և հանկարծ լույս մը ծագեցավ մտքին մեջ։

Օր մը, երբ տունը իրմե զատ ոչ ոք կար, պատուհանը նըստավ և սպասեց։

Համբիկ կանցներ՝ գաղտնի ակնարկներ նետելով դեպի պատուհանը. հանկարծ կանգ առավ. հավատա՞ր աչքերուն։ Բայց այո՛, զինքը կկանչեր անիկա, նորեն նայեցավ աչքերուն բովանդակ սևեռումովը և ա՛լ կասկած չունեցավ, օրիորդը զինքը կկանչեր. երա՞զ էր արդյոք։

— Թահ՜ֆ պան,— մրմռաց ստամբակը ու ներս մտավ դրոնեն, որ բացված էր։

Հիմակ Համբիկ իր դիմացը ուներ Սիրանույշը, որ իր թովիչ աչքերը անոր վրա հառած՝ ըսավ.

— Համբի՛կ, քեզի բան մը ըսեմ նե, կընե՞ս։

— Հազար պան ըսե՝ ամենն ալ ընեմ,— պատասխանեց Համբիկ, անանկ սրտագեղ անձնվիրության շեշտով, որ մանկամարդ օրիորդը ուրախությենեն սարսռաց։

— Երդում ըրե՝, որ մեկուն չպիտի ըսես ինծի համար բնեմիդ,— հարցեց Սիրանույշ։

— Ջեմ ըսեր, մա՛ս վկա։

Օրիորդը դրասանգներով զարդարուն քորսաժին տակեն նամակ մը դուրս հանեց, պահ մը վրան նայեցավ վարանումով, հետո ծռելով դեպի Համբիկին ականջը, անանկ որ իր շունչովը անոր երեսը շոյեց, բան մը փսփսաց։ Ստամբակը աղջկան այդ դիրքեն օգտվելով, անոր ծոծրակը դիտեց ու հառաչ մը արձակեց։

Քիչ հետո դուրս ելավ Համբիկ՝ գրպանին մեջ ունենալով իրեն հանձնված նամակը, զոր հասցեին պիտի տաներ և մրմռալով.

— Աճայի՜պ, աս նամակը մյուսյու Արամնին պիտի տանիմ, փեք աղեկ, ամա ինչո՞ւ անոր նամակ կղրկե կոր. մեջը ի՞նչ գրած է աճապ... վա՛յ, հասկցա՜, հը՜... ըսել է գործը եփեր են... տանիմ մի չտանիմ, ամա տանիմ նե, աղեկ կըլլա, չունքի հելպեթ նորեն պիտի խրկե... հինգ ղրուշն ալ կեշ փարա չէ... ամա փարային տեղը էյեր ան ճերմակ ճիտեն...

Լռեց, չհամարձակելով բարձրաձայն արտահայտել գաղափարը, որ փայլակի արագությամբ անցած էր մտքեն։

Ա՛լ հիմակ պատուհանին առջևեն անցած ատենը, Համբիկ բացե ի բաց, առանց խպնելու, կժպտեր Սիրանույշի երեսին, որ հինգ ղուրուշին առաջ բերած երախտագիտության նշանը կկարծեր այդ խորհրդավոր ժպիտը։

Ստամբակին մտածումը պարապ չեղավ, քանի մը օր ետքը, երբ իրիկուն մը, մթնելուն մոտ, Համբիկ դրանը առջևեն կանցներ, Սիրանույշ, որ կեցած էր հոն, նորեն թուղթ մը սպրդեցուց անոր ձեռքը՝ մրմնջալով.

— Նորեն անոր տար, Համբի՛կ։

Տղան՝ քառորդը գրպանը նետեց ու նամակը հասցեին տարավ։

Չորս օր ետքը նորեն նամակ մը՝ Սիրանույշին ձեռքեն Համբիկին գրպանը սահելով՝ հավիտենական հասցեին հանձնվեցավ։

Եվ ամեն անգամ ստամբակը հարստացավ հինգ ղրուշնոցով մը։

Հինգերորդ անգամուն, երբ մանկամարդ աղջիկը նամակը հանձնեց Համբիկին ու դրամն ալ պիտի տար, տղան ետ հրեց անոր ձեռքը, ըսելով.

— Ա՛լ փարա չեմ ուզեր։

— Հապա ի՞նչ կուզես։

Համբիկ Սիրանույշին մոտեցավ, քծնող շան մը պաղատանքը իր աչքերուն մեջ, մեղմիվ բռնեց անոր թևեն ու գրեթե ականջն ի վար ըսավ դողահար ձայնով.

— Ճիտեդ պաչիկ մը։

Մանկամարդ աղջիկը բուռն շարժումով ետ քաշվեցավ, աչվերները զայրույթով շողացին, կարմիր, բարակ շուրթերը փոթվեցան և զսպված մոլեգին շեշտով մը ըսավ.

— Կորսվե՛ սրկեց, չափխրն շո՛ւն... կորսվե՛ կըսեմ...

Համբիկ՝ աղջկան այս զայրացկոտ կերպարանքեն քիչ մը սարսափահար՝ գրպանը դրավ նամակը, ու գլուխը սպառնագին երերցնելե ետք խույս տվավ ըսելով.

— Միտքեդ չելլա այս ըսածդ, չըլդի՛կ։

Ա՛լ անկեց ետքը Համբիկ բնավ չերևցավ այն կողմերը, ամեն մարդ զարմացավ այս անակնկալ անհետացումին վրա. հարցուցին, փնտռեցին իրեն համակրողները. մանավանդ փողոցին մանրիկ աղջիկներուն շատ դիպավ անոր աներևութացումը։

— Զավալլը Համբիկ, արդյոք՝ անոթություն մեռա՞վ։

* * *

Տարիներ անցան։

Օրիորդ Սիրանույշ երջանիկ եղավ, ամուսնանալով այն երիտասարդին հետ, զոր կպաշտեր և զոր ամեն կատարելություններով օժտված կկարծեր։

Մեղրալուսինն անցած էր մեղրի պես անուշ, բայց անոր պես ալ վաղանցիկ։ Հեք աղջիկը, որ անկեղծ սեր կտածեր իր ամուսնին համար, ահագին, հոգեմաշ հուսախաբություն մը կրելու դատապարտված էր։ Քաղցր ու անդորր կենցաղ մը երազած էր վայելել ամուսնական կյանքին մեջ. իր այս երազը իրականության չփոխվեցավ սակայն. վասնզի ամուսինը, հեղհեղուկ երիտասարդ մը, շուտով հափրացավ, զզվեցավ այս կաշկանդված կյանքին հեշտություններեն, այդ հարկեն դուրս փնտռեց հաճույքի այն աշխարհը, որ բաց է ամենուն և որ իր գգվանքները շռայլորեն կբաշխե։

Սիրանույշ նախ ուզեց ինքզինքը խաբել էրկանը բռնած ապօրեն ընթացքին մասին. բայց շատ չանցած, ամեն պատրանք վանելու ստիպվեցավ, վասնզի ամուսինը այնքան անտարբեր եղավ իրեն նկատմամբ՝ որ խեղճ մանկամարդ կինը չհամարձակվելով իր ծնողաց օգնությանը դիմել, վասնզի անոնք քիչ մը հանդառակած էին այս միությանը, ուրիշ միջոցներու ձեռնարկեց. նախ ինք հետամուտ եղավ գտնել պատճառը, որով ամուսինը այդքան պա-

զած էր իրմե և կնոջական սուր հոտառությամբը կռահեց, որ ուրիշ կին մը իր իրավունքները հափշտակած էր ձեռքեն, ամուսնին սերն ու համակրությունը ինք վայելելով։

Օրերով մտածեց ընելիքին վրա և վերջապես վճռական որոշում մը տվավ։ Լսած էր, թե նշանավոր կին հավահմա մը՝ սքանչելի գուշակություններեն զատ՝ իրեն պես վշտակիրներուն ցավերը կդարմաներ անանկ դեղերով, զորս բժշկությունը կանգիտանար։

Ճարահատած, Սիրանույշ, արցունքները հրելով աչքերուն խորը, հառաչանքները կուլ տալով, ելավ այդ հավահմային գնաց։ Խոշոր կին մըն էր, վաթսուն տարու, բազմոցի մը անկյունը հանգըստավետորեն նստած, ձեռքը համրիչ մը, զոր շարունակ կդարձներ։ Մայրական գորովալի շնչառով մը ընդունեց մանկամարդ հաճախորդուհուն, որուն կերպարանքը զննած էր փայլակե ավելի արագ նայվածքով մը, ներս մտած պահուն։

— Եկու նայիմ, ախճի՛կս, տե՞րտդ ինչ է։

Հեծյուն մը ելավ խեղճ Սիրանույշին կոկորդը, այտերը շառագունեցան, աչվընները լեցվեցան։

— Ըսե, ախճի՛կս, ըսե քի տերտիդ տերման մը ընեմ։

Անկեղծ ու սիրալիր այդ ձայնը հուզեց Սիրանույշի սիրտը, որ գուրս տվավ իր բոլոր դառնությունն ու բոլոր վիշտը, լալով պատմեց իր առաջին սերն ու ետքի դժբախտությունը, և աղաչեց պատտեցավ հավահմա կնոջ, որ դեղ մը, դարման մը ընե, որով ամուսինը նորեն իր ընտանի հարկին մեջ փնտռե ամեն հաճույք ու ամեն վայելք։ Կինը զգացված ձայնով ըսավ Սիրանույշին.

— Ջավա՛կս, հեչ հոգդ մ՚ըներ, քեշկե ամենուն ալ տերտը ատ ըլլար. ամիս մը չքաշած՝ էրիկդ վրադ խենթ պիտի ըլլա։

Հետո, անմիջապես դեմքին արտահայտությունը փոխվեցավ, աչվընները կիսովին գոցվեցան, շուրթերը սկսան երերտկալ՝ փսըրտուք մը հանելով, ու ձեռքին մատներն սկսան տենդորեն դարձնել համրիչին սև հատիկները։

Քառորդ մը տևեց ասիկա։

— Ախճի՛կս,— ըսավ վերջապես, երբ այդ մունջ արարողությունը վերջացավ,— հիմակ քեզի բան մը պիտի ըսեմ, տեղն ի տեղոքը պիտի ընես, աղեկ մտիկ ըրե, քիչ մը զոռ է ամա, ի՞նչ ընենք, զավա՛կս, ան քի աս տերեճներուն հասեր ես նե, ամեն պանի խաղլամիշ պիտի ըլլաս. մինակ յա Պեյոօղլուի յա Ղալաթիայի պալըխբազարները կգտնվի լեվրեկ պալխի, վախտը անցած

է, կոնըվելուն ալ շատ շուպհե ունիմ, ամա մեյ մը նայե. փեք սուղ ծախելու համար պազը պալըխճի կպահե։ Ինչ ընես չընես՝ պիտի կանաս ատ ծուկը. կտա՞ր մի, կառնես ինծի կուգաս. փուշը կհանենք մեջեն ու պան մը կկարդամ վրան, ետքեն տուն խավուտմիշ կընես, կծեծես, թոզ կընես, իրիկունը էրիկդ կա նե՝ կերած կերակրին, խմած խախվեին մեջ մեյ-մեկ քիչ կցանես. կուղես նե, թաթախին մեջն ալ կրնաս ցանել։ Էյեր ամիս մը չքաշած՝ էրիկդ բիրիբաք չըլլա նե՝ թո՛ղ ինծի ֆալճի Մարիամ չըսեն։ Հատե կընա տե բաածս ըրե, ախճի՛կս, ամա մուլթախ ընելու է, հեմ տո՛ւն պիտի ընես. պաշխասին չպիտի իմանա։

Դուրս ելավ Սիրանույշ գլխիկոր, բայց մեծապես սփոփված։ Միտքը դրավ այն իրիկունը իսկ, մութ ատեն, ամեն վտանգ աչը առնելով, հիշյալ ձուկը փնտռելու ելլել և ինչ գին ալ ուզվի՝ տալ։

Բերայի փողոցներուն մեջ լապտերները արդեն վառված էին, բարակ անձրև մը կթփթփար. կառքերուն ու անցորդներուն երթևեկը ցանցառած էր։ Կին մը՝ գլուխը սև շալի մը մեջ փաթթած՝ մտավ այն փողոցը, ուր հայ ձկնավաճառներ սփռած են իրենց տեսակ-տեսակ ձուկերը, որոնց հատկությունները կծանուցանեն մեծաղղորդ գոչյուններով։ Կինը երկչոտ քայլերով մոտեցավ առաջին ձկնավաճառին ու կամաց մը հարցուց, թե լեվրեկ ունե՞ր։ Մարդ կնկանը երեսը նայեցավ զարմացումով, գլուխը քերեց ու ըսավ.

— Ի՞նչ կընես, քուրի՛կս, աս վախիդ լեվրեկ նե կեզեր, իմ քովս չկա, պաշխասին հարցուր։

Սիրանույշ,— ինքն էր,— թեթև հառաչ մը արձակեց և հեռացավ. քիչ մը վար ուրիշ ձկնորսի մը դիմեց ու նույն հարցումը ըրավ.

— Իմ քովս չի կա, քուրի՛կս, ամա, ինծի կուգա քի Համբիկը ունենալու է. ան շուն շանտրդիին քովը ամեն պան կա, ինծի նայե, սա վարը սոլ թարաֆի խանութը կտեսնա՞ս կոր. ներս մտիր, Համբիկ հարցուր, պելքի ան ունի։

Մանկամարդ կինը ցուցված խանութը ուղղվեցավ և ներս մտավ դուռնեն։ Բարձրահասակ մարդ մը կեցած էր և չավելանեռուն մեջ ձուկերը շարելու զբաղած. ոտքի շշուկ մը լսելով ետին դարձավ։ Կինը ներս մտած ու քովը կեցած էր։

— Համբիկը դո՞ւն ես,— հարցուց։

Այս ձայնը լսելուն պես ձկնորսը ամբողջ մարմնովը դողդողալով,

— Էս եմ,— ըսավ։

— Լեվրեկ պալբխի կգտնվի՞ քովդ, ինչ որ ուզես՝ կուտամ։

Ձկնորսը քայլ մը ետև գացած էր և պլպլացող կանթեղին լույսովը դեմքը կդիտեր այդ հաճախորդուհիին։ Դառն ու աղետալի ժպիտ մը սահեցավ ձկնորսին շուրթերեն։

— Կկտնվի,— պատասխանեց համր ձայնով։

Եվ ծռելով, թակույկի մը մեջէ ձուկ մը դուրս հանեց, չավելայի մը վրա դրավ և մատովը ցուցնելով,

— Իշտե՛,— ըսավ։

— Ի՞նչ տալու եմ։

— Հիմա կըսեմ։

Ձկնորսը բացավ շապիկին կուրծքը, ձեռքը ներս խոթեց ու կարճ խուզարկութենե մը ետքը, թուղթի մը կտոր դուրս հանեց, ձուկին կռնակին վրա բացավ զայն և Սիրանույշին դառնալով՝

— Սըվիկա կիտե՞ս ինչ է,— հարցուց։

Մանկամարդ կինը ծռեցավ ծաղկանկար թուղթի մը վրա, որ սակայն ժամանակ անցնելով դեղնած էր. ու կարդաց.

Պաշտելի Արամս։

Ետ քաշվեցավ ափ ի բերան եղած, ձկնորսին երեսը նայեցավ սոսկումով և ակռաներուն մեջեն մրմնջաց.

— Համբի՜կ...

— Ճիտեդ պաչիկ մը,— պատասխանեց ձկնորսը ձեռքը ձուկին վրա դնելով և Սիրանույշին նայելով հոսնությամբ։

Անոնց աչվընները պահ մը իրարու մեջ մխրճեցան. իրարու շատ բաներ ըսին անոնք անձայն, մունջ։

Հետո, շալը հանեց Սիրանույշ, գլուխը առաջ խոնարհեց՝ մորթվող ոչխարի մը համակամությամբը, վե՛ր առավ ծոծրակին մազերը և ձկնորսին մոտենալով ըսավ.

— Պա՛գ։

Համբիկ պահ մը դիտեց իր առջև խոնարհող այդ դժբախտ արարածը, աչվընեռուն մեջ թացություն մը երևցավ, փոխանակ ծռելու քայլ մը ետ գնաց և ձայնով մը, ուր խորին տխրության երանգ մը կար, ըսավ.

— Զո՛ւզեր, առ ձուկը կընա՛։

ԼՎԱՑԱՐԱՐՈՒՀԻՆ

Նավակայքին դիմացը, տանիքը՝ փողոցին պատին ուղղությամբը վերջացող խցիկի մը մեջ կլվար Սուրբիկ աղտոտ, սևցած լաթերը, զորս շաբաթը երկու անգամ կժողվեր՝ ընտանեզուրկ նավավարներե, ձկնորսներե, մոտակա փուռին գործավորներե, գիշերները անկյունի խահվեն պառկող գավառացի պտղավաճառներեն ու նավակայքին վրայի նեղ խուցերուն մեջ բնակվող նավավարներեն։ Զարաշար կաշխատեր խեղճ աղջիկը մինչև իրիկուն թակույկին վրա կորաքամակ, թևերը մինչև արմունկները սոտթած, թնճուկ մազերը, որք թերևս սանտր բնավ տեսած չէին, ճակատեն մինչև ուսերուն վրա խռիվ-խռիվ, ցիրուցան, շապիկին ճեղքեն ցուցնելով նիհար՝ կրակին տաքութենեն պղնձագույն դարձած լանջը, որ տխուր հևքով մը շարունակ կելներ կիջներ։ Ձեռքի տենդոտ շարժումներով կծեծեր, կաճըռեր լաթերը, անոնց աղտը հանելու մոլեգնությամբ մը համակված։ Միս-մինակ կապրեր Սուրբիկ, հայրը մեռած ըլլալուն և մայրն ալ, հակառակ աղջկանը կամքին, նորեն ամուսնացած ըլլալուն՝ նավամատույցին վրա փիլավ ծախողի մը հետ։

Սուրբիկ առեր քալեր էր մորը տունեն ու երկու երեք օր ասդին անդին անոթի պտտելեն ետքը այդ խցիկին մեջ մտած էր և քիչ ատենեն բավական հաճախորդ ձեռք էր ձգած։

Աղտոտության հաղթելու այդ գործողության մեջ սփոփանքի և զբոսանքի պես բան մը կգտներ մանկամարդ լվացարարուհին, թակույկին մեջ լեցվող աճառին սպիտակ փրփուրները հաճոյական տեսք մը կընծայեին իր սևուկ, աղվոր աչվընեռուն, զորս հոսնական ակնարկով կդիտեին իր կոշտ հաճախորդները։ Սուրբիկ մինչև մութը կլվար, և հետո, պարտեզին մեջ լարած հին փտտուկ չվաններուն վրա կփռեր շապիկներն ու թաշկինակները։ Գործը բոլորովին ավարտելե ետքը շտապով կուտեր կլմնցներ ունեցած ուտեստը, անկողինը կփռեր մահճակալի ձևով շինված տեղի մը վրա ու կպառկեր՝ շատ անգամ իր լաթերը երազելով, որք ճեփ-ճերմակ կըլլային և հաճախորդները կգովեին իր լվացարարական ճարտարությունը։

Հաջորդ օրը ավելի եռանդով կաշխատեր, լաթերը ավելի սաստկությամբ կճզմեր, կճմռթկեր իր փրփրցուցած կարմիր մատներուն մեջ, և զմայլումի ու գոհունակության եզական հառաչանք մը կար-

ձակեր, երբ զանոնք քով քովի փռելեն ետքը՝ անճառ ակնարկ մը նետեր անոնց վրա։

Առանձնությունն ու թշվառությունը բնավ տաղտուկ և հուսահատություն չէին պատճառեր Սուրբիկին, ընդհակառակն չափազանց գոհ էր իր վիճակեն, իր թակույկեն, հնոցեն ու եփոցեն զատ ամեն բանի կասկածելի աչքով կնայեր և բնավ մեկուն հետ բարեկամությամբ չէր տեսնվեր։

Բայց օր մը, երբ նավակայքին վրայի խուցը բնակող ծեր նավավարի մը ճերմակեղենները տարավ, երիտասարդ մը նշմարեց, որ կարճ փոթուռ մը հագած, ոտվընները բոբիկ, հուժկու կուրծքը գետինը փռած կքնանար։ Սուրբիկ անտարբեր աչքով մը դիտեց այդ կայտառ մարմինը ու հարցուց նավավարին, թե ո՞վ է անիկա։

— Թորոսին խայբխովը պալբխճություն կընե կոր,—պատասխանեց ծերունին,— տահա նոր է, ամա... ասված հեռու ընե։

— Անունը ի՞նչ է։

— Հուսեփ։

— Լաթերը որի՞ կուտա կոր։

— Նայինք, ըսեմ տե քեզի տա։

Սուրբիկ տնակը դարձավ, թակույկին առջևն անցավ, սկսավ բիրտ շարժումներով շարչրկել լաթերը և օճառն այնքան ուժգին քսել, որ փրփուրի ահագին կույտով լեցավ ամանը։

Գիշերը, պառկած ատենը, ակռաներուն մեջեն Սուրբիկ կամացուկ մը փսրտաց.

— Հուսեփին լաթերն ալ ես պիտի վլամ։

Այն գիշերը երազեց, թե Հուսեփին լաթերը կլվար և անանկ կճերմկցներ, որուն նման մինչև այն ատեն ոչ մեկուն լաթը ճերմկցուցած չէր։

Առտուն կանուխ արթնցավ և լվացքի կարգադրությունները ընելե ետք նավակայքը վազեց։ Հուսեփ նոր ելած էր և ծովին ջուրովը երեսն ու կուրծքը կլվար։ Լվացարարուհին երկչոտ քայլերով ներս մտավ և աչք ըրավ ծերունի նավարարին, որ լվացքի մասին խոսի երիտասարդ ձկնորսի հետ։

Ծերունին ըսավ.

— Ծո՛, Հուսեփ, աղտոտներդ ասկե ետքը ասոր տուր, հեմ աղեկ, հեմ աժան կվլա։

Երիտասարդը իր շապկին ծայրովը սրբվելով հանդերձ, Սուրբիկը դիտեց, անոր թուխ աչքերուն մեջ մխրճեց իր կրակոտ նայվածքը, ու թեթև ժպիտով մը ցուցնելով իր ճերմակ ակռաները ըսավ.

— Փեք աղեկ, վաղը առտու եկու տե առ։

Սուրբիկ լվացարանը դարձավ ուրախ զվարթ. այն օրը մինչև իրիկուն երգ մը մրմռալով լվաց լաթերը, սովորականեն ավելի աշխուժով ու հոգածությամբ մաքրեց զանոնք, փրփուրը ավելի շատ ու ավելի թանձր հանելով։

Հաջորդ առտուն մութնուլուսուն նավակայքին խուցը վազեց Սուրբիկ, ճակտին վրայի խառն ի խուռն մազերը կրցածին չափ շտկած, շապկին կուրծքը ամոթխածությամբ դոցած.

Հուսեփ հին ուռկաններ կարկտելու զբաղած էր, երբ աղջկան ներս մտնելը տեսավ, ուրախության շողյուն մը փայլեցավ աչքերուն մեջ։

— Հա՛, էկա՞ր,— ըսավ ուռկանները մեկդի ընելով և ծրար մը առնելով, զոր կարկառեց Սուրբիկին։

— Երկու շապիկ, չորս չորապ կա մեջը,— ավելցուց,— աման աղեկ վլա, աղվոր քուրիկս։

— Հոգդ մ'ըներ, ախպարիկս, ամեն նա կիտեն, քի էս մեկ հատիկ վլացող եմ. հեմ քուկիններդ տահա աղվոր...

— Իրա՞վ,— հարցուց երիտասարդ ձկնորսը՝ անուշ նայվածք մը սևեռելով լվացարարուհիին դեմքին վրա։

Եվ, իրավ, Սուրբիկ, Հուսեփին լաթերը մասնավոր խնամքով լվաց. նախ եփոցին մեջ աղեկ մը եփեց, հետո երեք անգամ լվաց, այն աստիճան հոգածությամբ, որ ձյունի ճերմկություն ստացան շապիկները։ Ցերեկվան արևին փռեց զանոնք, չորանալեն ետքը ծալեց ու գուրգուրանքով առավ ձկնորսին տարավ։

Բերնին ջուրերը վազելով, դիտեց Հուսեփ՝ երկար ատենե ի վեր լվացք չտեսած իր շապիկները, և սա գովասանականն արձակեց.

— Է՛յ աֆերիմ Սուրբիկ, խրյախ վլացեր ես, քանի՞ փարա պիտի տամ։

Մանկամարդ լվացարարուհին ձկնորսին մոտեցեր էր և լլվելու համար ծեր նավավարեն, որ քիչ մը անդին անկողնին մեջ մրափելով կքնանար, ըսավ ցած ձայնով.

— Ամենուն քառսուն փարայեն վար չըլլար, ամա քենե քսան փարա կառնեմ։

Ձկնորսը թեթև մը կարմրեցավ, ձեռքը գրպանը խոթեց և երկու տասնոց դնելեն ետքը Սուրբիկին ձեռքը, երրորդ մըն ալ տվավ ըսելով.

— Աս ալ եմիշ առ տե կե՛ր։

Սուրբիկ գրեթե ցատկոտելով մտավ իր խցիկեն ներս. կրակը կճարճատեր, ջուրը կեռար թիթեղե ամանին մեջ, աղտոտ լաթերը դիզված կկենային թակույկին մեկ կողմը։

Սակայն, այդ օրը, Սուրբիկ փոխանակ ուրախ ըլլալու, լուրջ և տխուր կերպարանք մը ունեցավ. ծանր-ծանր, խորին մտածությամբ համակ՝ լվաց լաթերը, բայց ցերեկին, միտքն իմնալով Հուսեփին տված տասնոցը, դուրս ելավ, խաղող գնեց այն ստակով և անանկ ախորժակով կերավ, որ հավարտ ճաշին իր նախկին գվարթությունն ստացած էր։

Չորս օր ետքը նորեն նավակայք գնաց մանկամարդ լվացարարուհին, ուզեց ձկնորսին աղտոտներն ու այս անգամ անկից զատվեցավ ավելի մտերմացած ունոր հետ։

Երբ երրորդ անգամուն, առտուն կանուխ, իր սովորական այցը տվավ Սուրբիկ, ձկնորսը ստիպեց զայն,որ քիչ մը ավելի նստի և խոսակցին։ Խոսակցեցան. մեկը իր լվացարարությունը գովեց, մյուսն իր ծովային կյանքին վայելքները պարզեց։ Երկուքն ալ իրարու արհեստին հավնեցան և այս անգամ իրարմե բաժնվեցան ձեռքի ուժեղ սեղմումով մը և անուշ նայվածքներու գորովալի գիրկընդխառնումով։

Սուրբիկին վտիտ այտերը լեցունություն մը կստանային, կենդանություն մը կփթթեր անոր ամբողջ մարմնին մեջ, որմե հետե կտեսնվեր Հուսեփին հետ։

Առտու մը, Սուրբիկ, լաթերը առնելե ետք, կամաց մը ըսավ Հուսեփին.

— Ախպարի՛կ, քու լաթերուդ համար ա՛լ ստակ մի տար, ամա իրիճա մը ունիմ, դուն ալ ինծի զատկին ֆիստան մը կշինե՞ս։

Զատկին շրջազգեստը շինվեցավ, և Սուրբիկ անօրինակ պերեվեթումով հագավ զայն ու պտտեցավ։ Կյանքին մեջ հեք թշվառ աղջիկն այնքան ուրախ, այնքան երջանիկ չէր եղած։

Իրենց առավոտյան տեսակցություններն հետզհետե այնքան երկարեցան և իրենց ձայնն այնքան մեղմացավ, որ հոն պարկող ծերունի նավավարը քիթը բերանը սկսավ ծռմռկել ու մոլտալ։

Վերջապես օր մը Հուսեփ փսրտաց Սուրբիկին ականջին.

— Ինծի կառնե՞ս, Սուրբիկ։

— Կառնեմ,— ըսավ լվացարարուհին կարմրելով։

Առտու մը, Սուրբիկ նավակայք գնաց Հուսեփին աղտոտ լաթերը առնելու համար. ծեր նավավարը անդին կխոկար. խեղճ աղջիկը զարմանքով տեսավ, թե ձկնորսը իր ծիծաղկոտ դեմքով չէր երևար իրեն. միայն ուշադրություն ընելով դիտեց, որ անկողինը ուռեցած էր. կամաց մը մոտեցավ, վեր առավ վերմակը և ահագին կոծ մը արձակեց. ծեր նավավարը վեր ցատկեց։ Սուրբիկ անկողնին սնարին վերևը, Հուսեփին անշարժ մարմնին մոտ կեցած կուլար։

Նավավարը ըսավ երերկտալով.

— Ջավալը Հուսեփը, հը՛մ, երեկ գիշեր աղը նետած ատեն ծովը ինկեր է, մինչև քի ազատեր են նե, խեղդվեր է. յա՜, աս զենաթին սոնը աս է, հատե՛ մի՛ լար, դուն ալ մեխկ ես։

Ու վերմակը գլխուն քաշելով, սկսավ քնանալ։

Հեք Սուրբիկ, կես ժամ անընդհատ լացավ ծովամույնին սնարին վերևը, ցած հեծկլտուքներով։

Հետո ծռեցավ, կամաց մը համբուրեց Հուսեփին սառ շուրթերը, որոնք տժգունած էին, առավ սենյակին անկյունեն ծրար մը, ուր կգտնվեին խեղճ ձկնորսին առջի օրը պատռտած աղտոտները, դուրս ելավ, խցիկը գնաց, ջրալից թակույկին առջև անցավ, և սկսավ լվալ, կատաղի շարժումներով, մատներովը մոլեգնորեն պատռտելով շապիկը, ծվիկ-ծվիկ ընելով, կտորներ քաշելով հանելով երբեմն, օճառի փրփուրներուն, ջրի ցայտերուն մեջ, որք դուրս կթափեին թակույկեն։

Հետո ժողվեց այդ բզկտած լաթերը, պարտեզ տարավ, չվանները վրա փռեց, արևին մեջ, և ինքն ալ անոնց դիմացը նստավ։

Հեք լվացարարուհին, մերթ խնդաց, մերթ լացավ, մերթ հեծեծեց, մերթ քրքջաց։

ԳՈՂԸ

Ծովին եզերքեն քիչ մը ատդին կգտնվեր տնակներու դեսուդեն կքած, ծռմռկած շարքը, որուն մեջ կբնակեին ձկնորսի ընտանիքներ։ Այդ շարքեն անջատ, տասը կանգունի չափ հեռուն, ծովեն

դուրս ցցված ժայռի մը կկոթներ Հաճի Թումայի անշուք տնակն ալ, որուն կհասնեին երբեմն ալիքներն, երբ ուժգին հով մը տակնուվրա ըներ ծովը։ Բայց հոգ չէր, Թումա՝ վաթսուն տարեկան ուղղաբերձ և կորովի ծերուկ մը, մեծ հրճվանքով ու անբացատրելի հաճույքով մտիկ կըներ կատաղի երաժշտությունը ալեկոծ ծովին, հովին ահարկու պայթումները, ու մոլեգին կոհակներուն կործանումներն ու մեծաժխոր փշրումները իր տնակին ետևի ժայռին դեմ։

Կույր էր հեք Հաճի Թուման. հիսուն տարեկան եղած ատենը ալքերն սկսած էին աղոտանալ, բիբին տեսողական ուժը մեկեն ի մեկ տկարացեր էր և օրին մեկն ալ, այդ աստիճանական շիջումին հաջորդեր էր ամբողջական կուրությունը։ Բայց այդ ալ հոգ չէր։ Հաճի Թումա, այնքան գերազանցապես գիտակ էր ծովին ու ծովեզերքին ամեն ծակ ու ծուկերուն, որքան մրջյունն իր ստորերկրյա բնակարանին հազար ու մեկ մասերուն. բնավ չէր զիջած հրաժարվել իր սիրած ու պաշտած սրհեստեն, հայրն իրեն ուրիշ բան չէր կտակած, եթե ոչ ձկնորսություն, Հաճի Թումա պիտի շարունակեր զայն, կույր ալ, հիվանդ ալ ըլլար, մինչև որ մեռներ։ Բայց իր ընտանեկան կյանքը տառաններով լեցված էր։ Երեք մանչ զավակներ ունեցած էր, որոնց ամենքն ալ ուզած էր իր արհեստին հեշտին տաժանքներուն ու վտանգներուն մեջ մեծցնել, ամենն ալ ձկնորս էր ըրած, այլ, ավաղ, ամենքն ալ թեև իրեն պես խիզախած էին հեղուկ տարրին դեմ, բայց այս վերջինը տարած էր հաղթանակը, իր վեհանման կլափին մեջ ընկլուզելով զանոնք։ Իսկուհի տուտուն մազերը փետտեր ու անեծքներ թափեր էր էրկանը գլխուն, որ այդպես ճղակոտոր կհաներ իր «կյուզելիմ» զավակները, և գիշեր-ցերեկ կհանդիմաներ Թուման։

— Զավակներուս էճելը մտար, խըյանեթ մա՛րդ,— կպոռար անոր երեսին,— քա պաշխա զենաաթ չիկա՞, քի աս զուլում զենաաթին կուտաս կոր անոնք։

— Կնի՛կ, քուկին խելքդ չի հասնիր,— կպատասխաներ Հաճի Թումա՝ անտարբեր կերպով կարգադրելով իր ձկնորսի սարուածները,— անոնց ալ ճակատը անանկ կրվեր է... հեմ, կնի՛կ, ինծի անանկ տուլ կըլլա կոր, քի մեր զավակները բիդին ծովը պիտի խըղդվին։

Եվ ծովն, ուր կորած էին իր զավակները, իր ամենօրյա զբոսավայրն էր գրեթե։ Ահարկու լուղորդ մըն էր Հաճի Թումա, իր ջլապինդ բազուկներով՝ շատ անգամ փոթորկի ատեն խակ ալիքներուն հետ կմաքառեր, ծովին խորքերը կմխրճեր և ձուկերն իրենց բույներուն մեջ հանկարծակիի կբերեր։

Իսկուհի տուտուն մխիթարվեցավ սակայն՝ չորրորդ զավակի մըն ալ տեր ըլլալով, բայց, հակառակ իր անդուլ, անդադար աղոթքներուն, փոխանակ աղջկան, նորեն կունտ ու կլոր մանչ մը աշխարհ եկավ։

Հաճի Թումայի աչքերը շողացին, ու ժպիտ մը սահեցավ թանձր շուրթերուն վրայեն, երբ տեսավ նորածնին համեմատաբար կորովի ու առնական շինվածքը։ Ամեհի ձկնորսին սիրտը տակավին չէր վհատած ու կակուղցած՝ իր անդառնալի կորուստներեն և հանձին այդ մանկան, կընդնշմարեր քաջ ու պնդակազմ ձկնորս մը, որ փոթորիկները կարհամարհե և ծովուն ալիքները կթափանցե։

Բայց կինն ըսած էր իրեն.

— Ինծի նայե հա՛, էյեր աս ալ պալըխճի ընելու էլլաս նե, կլոխս կառնեմ կերթամ շոճուխիս հետ։

— Խենթ եմ զեհեր,— պատասխանած էր Թումա՝ ձայնին մեջ հեգնական թեթև երանգով մը։

Սերոբ տասնչորս տարու էր, երբ Հաճի Թումային աչքերն սկսած էին տկարանալ։ Հեք բարի մարդը գիշերներով խորհած էր սա կարևոր խնդրին վրա թե՝ իր չորրորդ զավակն ալ «ծով հանե՞»։ Չէր հաջողած իր կինն համոզել և վերջապես որդիական գորովն ալ այս անգամ վարանումի մեջ կթողուր զինքը։ Գիշեր մը Իսկուհի տուտուն էրկանը ոտվընեերուն ինկեր ու արյուն արցունք թափելով խնդրեր էր, որ խնայե Սերոբին։

Եվ խնայեր էր Թումա։

— Բեք աղեկ ամա, պալըխճութենեն աղեկ ի՞նչ գենաաթի տանք,— հարցուցած էր կնկանը։

— Տեմիրճության տուր։

Սերոբ երկաթագործի քով սկսած էր երթալ, երբ տասնչորս տարու էր, և երբ Հաճի Թումայի աչքերը հավետ զրկված էին ծովին հաճոյալի տեսքը դիտելե և իր բռնած ձուկերուն հանգամանքները զննելե։

Դժբախտությունը սա էր, որ Սերոբ, իր հոր ձկնորսական արյունը ժառանգած էր. իր պստիկ տարիքեն կսիրեր ծով մտնել, լողալ, ձուկ որսալ, բայց մորն ընդդիմության առջև տեղի տված էր և ակամա մտած էր երկաթագործության արհեստին մեջ։ Անհանդերձ բնավ առիթը չէր փախցներ, երբ պարապ ժամանակ

ունենար։ Ամառը, գիշերներն ուշ ատեն տուն դառնալով, կհանվեր ու երկարուելն կլոգնար ծովի մեջ, և հորը պես քաջ լուղորդ մը եղած էր։

Հիմակ, Հաճի Թումա ա՛լ առջի պես չէր կրնար խիզախել ծովին դեմ, բայց նորեն չէր ուզած բաժնվիլ անկից։ Բնականաբար չէր կրնար կանոնավոր ձկնորսութիւն ընել, չէր կրնար ուռկաններ կարկտել, կարթերը պատրաստել և ձկնորսական ուրիշ կարգադրութիւններ ընել։ Կափսոսար իր աղետալի որոշումին վրա, եթե Սերոբն երկաթագործ չըլլար, պիտի օգներ իրեն ու դյուրացներ իր կրած դժվարութիւնները։

Երբեմն այնքան կդառնանար, որ խիստ կշտամբանքներ կուղղեր կնկանը։

— Կնի՛կ,—կպոռար,— էյեր Սերոբը պալըխճի ըլլար նե, իմ աչքերս ասանկ չէին ըլլար. տերտես քեռրցա։

Ու ցավոտ ականոդիքներուն մեջ տխուր կերպով կերերցներ իր պտղած սպիտակուցները։

Արցունք մըն ալ կգլորեր արևազեկ այտերեն վար։

Բայց ինչպես ըսի, չէր կրնար իր սիրելի տաշտեն հեռի ապրիլ Հաճի Թումա. ուռկանով ու կարթով որսալու անկարելիութեան առաջքն առած էր ուրիշ միջոցով մը։ Մեկ քանի խոշոր սափորներ գնել տված էր Սերոբին և զանոնք զետեղած էր չորս հինգ կանգուն հեռուն, ծովին հատակը։ Ջուկերն, որք միշտ խորշեր ու ծակեր փնտռելու հետամուտ են, կմտնեին այդ սափորներուն մեջ ու հոն կհաստատեին իրենց բնակութիւնը։ Հաջորդ օրվան գիշերը, Հաճի Թումա, որ ծովին այդ մասը հրաշալի կերպով կճանչնար, կհանվեր, կհագներ իր մոմազօծ դեղնագույն լողազգեստը, ջուրը կմտներ ու անձայն, անշշուկ կսուզվեր ծովին տակը, կառներ սափորներն, ու կտաներ զանոնք, ձուկերով լեցված, պատերազմեն հետուստ ավարով ետ դարձող հին զորավարի մը հոխորտանքով։ Այս չափն ալ մեծ մխիթարանք ու բավական սփոփանք էր կույր ձկնորսին համար։

Իսկուհի տուտուն երբեմն կփորձեր ետ կեցնել զայն այդ գործեն։

— Մա՛րդս,— կըսեր,— ա՛լ ըռհաթ ըրե, օր մը խազա պիտի պերես կլխուդ, իշտե տղաղ տահա տասնվեց տարու է, ամա ապրեցնելու խատար քեզի կկշտացնե կոր։

— Ջըլլար, կնի՛կ, չըլլար,— կպատասխաներ Թումա,— տուն նյոտես, չես հասկնար, մինչև քի մեռնիմ նե, ծովը չխալսիր ծառքես, պեռճեքս չէ մեռեր։

Ու կշարունակեր իր ձկնկուլ սափորը ծովին հատակը իջեցնել ամեն օր, ու գիշեր, ուշ ատեն վերցնել, միշտ ձկնառատ։

Բայց գիշեր մը, երբ Թումա նորեն ծովին հատակեն տուն բերավ սափորները, ձուկի հետքն անգամ չգտավ անոնց մեջ. զարմացավ, ապշեցավ։

— Թոհ՜ֆ պան,— մրմռաց,— ա՞ս ինչ ըսել է, պալխները սրդողեցա՞ն ինծի։

Նորեն ծովին տակն իջեցուց զանոնք, բայց այս անգամ քիչ մը փոխեց անոնց տեղը։

Երբ հաջորդ գիշերը, որոշյալ ժամուն գնաց սափորները տուն բերավ, ափ ի բերան մնաց, երբ ձեռքն անոնց մեջ մխրճելով՝ միայն ջուր գտավ։

Այս անգամ հայհոյեց Հաճի Թումա, բարկութենեն քիչ մնաց գետինը զարներ, ջախջախեր անիծյալ պարապ սափորը։

Բայց համբերեց. նորեն իրենց տեղը տարավ դրավ զանոնք, ու տուն դառնալով, անկողին մտավ, տենդորեն ու ջղագրգիռ։

Մեծ անհամբերությամբ սպասեց հաջորդ գիշերվան, որ վերջապես հասավ։ Ի՜նչ սրտադողով, ի՜նչ մտահոգություններով պարարված մտավ ծեր հեք կույր ձկնորսը։ Սահեցավ դեպի սափորները, գորովանքով գրկեց զանոնք ու արմուկի հզոր բախումներով եղերք հասավ, տուն մտավ, և առանց ձեռք դիպցնելու անոնց, ըսավ կնկանը.

— Ուսկո՛ւկ, սվոնց մեջ տուն նայե։

Իսկուհի տուտուն ձեռքովը շոշափեց սափորներուն ներսն, ու... գարձյալ ոչինչ։

— Պան չիկա, Թումա,— ըսավ վհատյալ ձայնով։

— Վա՛յ...

Եվ այս անգամ արձակած հիշոցը սոսկալի էր։

Հետո, ձայն-ձուն չհանեց, աղետալի լռությամբ մը առավ սափորները, տենդոտ քայլերով հեռացավ տունեն և իրենց տեղը դրավ, ծովին տակը։

Բայց տուն մտած պահուն կմրմռար, աչքը քթթելով.

— Հասկցա, վաղը գիշեր, կիտեմ ի՜նչ պիտի ընեմ։

Հաջորդ իրիկունը, մութը կկոխեր, ու ծովին հանդարտ մակերեսին վրա խավարը թուլորեն կփռվեր՝ կապարի հալոցի մը երեվույթն ընծայելով անոր։

Գերեզմանոցի մը ծանր հանդարտությունը կտիրեր ծովեզերքին վրա. ծովային քանի մը թռչուններ՝ մտացածին ստվերներու պես՝ կհածեին այդ լռին շրջապատակերին վերևը, և ատեն-ատեն ձուկ մը կպատռեր ջուրին գորշագույն պարուտակն ու նեղ կիսաշրջանակ մը գծելով, անհետ կըլլար։

Հանկարծ ստվեր մը ցցվեցավ այն ժայռին առջև, որուն ետին կերևի Հաճի Թումային տնակը. հետո կծկվեցավ, ամփոփվեցավ ժայռին մեկ խորշին մեջ, ու հոն մնաց։

Այս ստվերը Հաճի Թուման էր։

Ամբողջ մարմինն անհետ եղած էր ապառաժին ետևը, ու գլուխը միայն կերևեր, ուր ցավագին թավալումով կերերային մղտացած բիբերը։

— Մութլախա իմ ըսածիս պես ըլլալու է,— կմուլտար ակռաներուն մեջեն, խուլ կատաղությամբ,— ա՛խ, մեյ մը ծառը անցնի՝ պիտի խխտեմ։

Ու մութը կիջներ՝ հետզհետե ավելի թանձր, ավելի մահաստվեր։

Ժամերով սպասեց Թումա՝ ականջը տնկած, ամենեն պստիկ շշուկեն՝ բոլոր մարմնովը դողդողալով։

Հանկարծ ճողփյուն մը լսվեցավ։

Վեր ցցվեցավ Թումա, դուրս ելավ թաքստոցեն և հրաշալի արագությամբ, իր որսին վրա սուրացող արծիվին բիրտ վայրագությամբը, ծովին հատակը խոյացավ։

Հանդարտ ջուրերը մեկեն ի մեկ վրդովեցան, ալեկոծում մը տեղի ունեցավ, ջուրի ցայտերը վեր ժայթքեցին, և հետո, ծովին վրա երևցավ, մութին մեջ, որ երկնքի պլպլուն նշույլներեն քիչ մը կմեղմանար, հսկա մարմինը Հաճի Թումային, որ, երբ եզերք ելավ մեծաշռինդ հևքով, բան մը բռնած էր իր կորովի բազուկներուն մեջ։ Ուղղակի տնակ գնաց, ներս մտավ և գետինը նետելե ետք գիրկը բռնած մարմինն, որ դիակ մըն էր այլևս.

— Քա՛ կնիկ,— պոռաց վայրագ շեշտով մը,— սա շուն շանորդիին երեսը նայե՝ վո՞վ է։

Դիակին գլուխը կանթեղին դարձած էր, և գեմքը որոշակի կերևեր։

Խեղուհի տուտուն, որ կարկտուք կըներ, ոտքի ելավ՝ մահամերձի մը պես, որ ահարկու ճգնաժամին գերազույն ոստում մը կընե, վազեց դիակին քով ու լաց ու կոծ մըն է փրցուց։

— Վա՜խ որտտիս, վախ Սերոբս...

Սերունի հսկա ձկնորսը դողդողաց, ձեռքը աչքերուն տարավ ու պոռած բիբերեն ժայթքող երկու կաթիլ խոշոր արցունքները սրբելե ետք՝ մրմռաց.

— Ես չըսի՞, քի մեր զավակները ամենն ալ ծովին մեջ պիտի մեռնին։

ՀԱՃԻ ՄԱՆՈՒԵԼ

Ա՜հ, տեսնելու էիք զինքը՝ հասկնալու համար, թե ի՞նչ մարդ էր. ժողովրդային խավին ամենեն խիստ, ամենեն որոշ երանգը կներկայացներ։ Ահագին կազմը, խոշոր ոսկորներու անհեթեթ ու հաստակուռ հոդավորում մը, համեմատապես փոքր գլուխը, զոր հերքյուլեսյան վիզ մը կփակցուներ հուժկու ուսերուն, արտակարկառ, գրեթե գմբեթաձև կուրծքը, զոր գորշագույն մազերու անտառ մը կմրոտեր, և վերջապես երկար սրունքները՝ ահագին ոտքերով վերջավորված, ամբողջություն մը կձևացուցեին, որ դիտողին կբրնային սարսափ ազդել նախ, բայց երբ տեսնվեին անոր թխորակ աչքերը, բարեսիրության շողյունով մը պայծառացած միշտ, անոր միամիտ ժպիտը, որ շարունակ կերերար բարակ շուրթերուն վրա, անմիջապես վստահություն մը, նույնիսկ համակրություն մը կզգար մարդ։

Վաթսուն տարու կար սակայն Հաճի Մանուել։ Քսանհինգ տարեկան եղած ատենը,— կպատմեր ինք երկյուղածության անբացատրելի շեշտով մը,— քանի մը ընկերներու հետ ճամփա ելած էր Սկյուտարեն և քալելով մինչև Երուսաղեմ գացած էր։

Եվ ի՞նչ հպարտ շարժումով մը կբանար իր ջղուտ դաստակները, որոց վրա կապույտ լայն խարաններ շփոթ պատկերներ կձևացուցեին։ Ուսերուն վրա և կուրծքին այլևայլ տեղերն ալ կերևային զանազան առասպելական հաճիներ։

Մանուել ոչ ոք ուներ. կպառկեր կելլեր մեր թաղին այն փոքր միահարկ շենքին մեջ, ուր կպահվեին հրդեհի երկու ջրհաններ։ Օր մը, անոր հսկայակերտ հասակը մեկեն ի մեկ երևցած էր մեր

փողոցին մեջ, ու խոպոտ, անդնդագոռ ձայնը թնդացած էր երիտասարդ ջրհանկիրներու երեսին։ Ազդեցությունը դյուրական եղած էր. ամենքն ալ, մեծ ու պստիկ, «Հաճի Մանուե՛լ» մրմռալով անձայն, անմռունչ խույս տված էին՝ կատուեն հալածված մուկերու անխորհուրդ թափովը։

Հաճի Մանուելին դեմ դնե՞լ. ո՛հ, դժոխային բան ըլլալու էր. անոր ահռելի թաթը՝ մեկ հարվածով՝ չորս հոգի մեկանց կրնար տապալել, հապա եթե երկո՛ւքն ալ... Անցնինք։

Բայց ժամանակ անցնելով և անոր ներկայությանը վարժվելով՝ հասկցանք, թե այդ վիթխարի պատյանին տակ հեզ և բարի սիրտ մը կբաբախեր, և թե անձնվիրության անհուն գանձեր լրիկ կհանգչեին անոր զրահանման կուրծքին ներքև։

Ա՛լ անկից ետքը մեր թաղին, մանավանդ մեր փողոցին գրեթե պահապան հրեշտակն եղավ Հաճի Մանուել. ամենուն կհասներ, դժվարին պարագաներ անմիջապես կհարթվեին անոր ջախջախիչ միջամտությանն առջև։ Մեր թաղին բարիքը, մեկ խոսքով։

Ի՞նչով կապրեր. շիտակը չէինք գիտեր. շաբաթը մեկ քանի անգամ անհայտ կըլլար ու իրիկունները միայն երևան կելլեր։ Ավելորդ է ըսել, թե այդ ուժը մեկ քանի ժամվան մեջ քանի մը օրվա հացի փարա կրնար ճարել։

Բայց մեկ պակասություն մը ուներ. աններելի, քայքայիչ պակասություն մը, որ քիչ մը կպաղեցուներ իրեն նկատմամբ տածած ընդհանուր համակրությունը։

Կխմեր, ահագին քանակությամբ օղի կուլ կուտար։ Իրիկունները, ժամը տասներկուքեն ետքը, Հաճի Մանուելը մեկ տեղ մը միայն կարելի էր գտնել. Մնտիկին գինետունը, մութ, ցած ձեղունով կապելա մը, ուր օղին կրնար մրցիլ ալքոլին հետ։ Ինչո՞ւ ատանկ կատաղությամբ կխմեր Հաճի Մանուել. և երևակայելու է, թե ի՞նչ քանակությամբ ալքոլ պետք էր՝ ցնցելու, թմրեցնելու համար այդ հսկա կերտվածքը։ Փողոցին մեջ, պառավ դրացուհիներ, որոց սիրտը կխշխշար, երբ այդ վիճակին մեջ տեսնեին Հաճի Մանուելը, կխրատեին զինքը, որ օղի չխմե։ Բայց անիկա մտիկ չէր ըներ։

— Քուրիկս,— կըսեր ձեռքը կուրծքին զարնելով,— էյեր էս աս զրխրմը չխմեմ նե, շատ չքշեր կմեռնիմ... անոր համար պիտի խմեմ...

Եվ հառաչ մը արձակելով, կհեռանար։

Անպատճառ բան մը ունենալու էր այդ մարդը։ Այո, խմելու այդ կատաղի մոլությունն, որ վերջապես պիտի կործաներ զայն, պատճառե մը հառաջ կուգար անշուշտ։ Ի՞նչ էր։ Արդյոք ընտանեկան վի՞շտ մը, թե սիրային կսկիծ մը։ Այս ետքի ենթադրությունը բոլորովին անհավանական կերևար, դատելով Հաճի Մանուելի անտաշ բնավորությենեն։

Շատեր բան մը դիտած էին սակայն։ Ամեն առտու, հազիվ լույսը ճեղքված, խովուշեն դուրս կելլեր Հաճի Մանուել, առանց շշուկ հանելու, և կուղղվեր դեպի վեր, դեպի լեռը ու կես ժամեն կդառնար։ Ո՞ւր կերթար այդպես ամեն առտու։

— Հի՛շ... պան... լեռ կելլամ... քիչ մը հավա առնելու...

Հասկցա, որ կստեւ։ Ուստի որոշեցի շատ հեռուեն իրեն հետեվիլ առտու մը։

Որոշումս ի գործ դրի՝ ամենամեծ զգուշությամբ, տեսա, որ իր քայլերը դեպի գերեզմանատուն կուղղվեին, գլուխն առջև կախած, խորին մտածմունքով համակ։

Վերջապես գերեզմանատուն հասնելով, չորսդին նայեցավ. շիրմի մը ետին պահվըտեցա. հետո, ապահով, թե ոչ ոք կտեսնե զինքը, կքեց իր տիտանի հասակը, ծռեցավ, ծնրադրեց, և գլուխը, երկու ձեռքերուն մեջ բռնած, գետնին դրպցուց։

Գերեզմանի մը վրա կաղոթեր։

Անբացատրելի հուզում մը զգացի. Հաճի Մանուելը վաթսունամյա ծերունի հսկան, այդ արգահատելի վիճակին մեջ, իրավ որ վսեմ էր։

Որչափ կեցավ այդ դիրքին մեջ, չե՛մ գիտեր, չեմ հիշեր, ժամանակի գիտակցությունս կորուսած ըլլալով այդ անհավատալի տեսարանին առջև։

Վերջապես ելավ կեցավ, աչվընները սրբեց և հապշտապ քայլերով հեռացավ։ Ես ալ հեռացա, մտախոհ և հուզված։

Բայց միտքս դրի հասկնալ այդ խորհրդավոր ընթացքին շարժառիթը։

Գիշեր մը, Հաճի Մանուել, իր բարի սովորությանն հավատարիմ, խոշոր հասակն երերցնելով, ներս մտավ խովուշեն՝ անհասկնալի խորդյուններ հանելով կուրծքեն։

Ես ալ դուրս ելա, մոտեցա, և կիսբաց դռան ճեղքեն ներսը դիտեցի։ Հաճի Մանուել նստեր էր փայտե սեղանի մը առջև, որուն վրա կգտնվեին օղիի խոշոր շիշ մը, գավաթ մը, փոքր պնակով ձի-

թապտուղ և ադուտ կանթեղ մը։ Գլուխը կուրծքին վրա ծռած էր, և աչքերը տարտամ նայվածք մը ունեին։

Դուռը հրեցի ու ներս մտա։

Չիմացավ. մինչև քովը գացի և ուսին դպա։ Ամբողջ մարմնովը ցնցվեցավ հսկան, վեր առավ գլուխն ու երեսս նայեցավ մոլորահայաց։

— Թարի իրիկուն, Հաճի Մանուել,— ըսի ժպտելով։

— Ասծու բարին, տղաս,—ըսավ մեծաժխոր շունչ մը առնելով։

Աթոռակի մը վրա նստեցա դեմը։

Հաճին գավաթը լեցուց և մեկ ումպով կուլ տվավ գարշելի հեղուկը։

Դեմքը կծկում մը չունեցավ։

— Հաճի, ըսի, ինչո՞ւ այսչափ կխմես կոր, մեղք չե՞ս։

— Հը՛,— ըրավ հսկան,— չէ՛, տղաս, մեղք չեմ... մինչև քի ճիյերս բառալանմիշ ըլլա, պիտի խմեմ... աս ասանկ է։

Եվ ահագին բռունցքը սեղանին զարկավ։

Նպատակիս հասնելու համար հանդգնություն ձեռք առի։

— Տե՞ղ մը ունիս, հաճի։

— Տե՛ղ մի՞, կհարցունե՞ս...

Հանկարծ ինքզինքն ամփոփելով,

— Չէ,— ըսավ ուժգնությամբ,— պա՛ն մը չունիմ... քեֆիս համար կխմեմ միայն...

Վճռական հարված մը տալ ուզեցի, տեսնելով անոր համառ գաղտնապահությունը՝ նույնիսկ իր այդ գինով վիճակին մեջ։

— Անանկ է նե, ինչո՞ւ համար ամեն առտու գերեզմանատուն կերթաս, գերեզմանին վրա կուլաս,— հարցուցի։

Հաճի Մանուել, սիրտեն զարնվածի պես, բացավ կաշմբուն բաղուկները, և կոնակի վրա պիտի իյնար, եթե ետևը պատ չըլլար, որուն կռթնեցավ։ Աչվրները, սևեռաբիբ և արյունացայտ, վրաս բնեռված էին՝ գազանային արտահայտությամբ մը. շիտակը, ճանչնալով հանդերձ Հաճի Մանուելի ոչխարի հեզությունը, տակում զգացի անոր այդ ահարկու կերպարանքեն։

Հետո— անակնկալ բան— իր առջևի դիրքը առավ մեկեն ի մեկ՝ բիրտ անզգայություն մը ցուցունելով։ Չէի հաջողեր։ Գրեթե հուսահատեցա։

Զինքը կդիտեի հետաքրքրությամբ. անոր ամեն մեկ շարժումը կշիռ ուներ ինձ համար... և տեսա, որ...

Այո, տեսա, որ... կուլա՞ր Հաճի Մանուել։

Վաթսուն տարիներու բեռան տակ անընկճելի այդ լեռան պես մարդը կուլա՞ր հիմակ։ Սիրտս խշխշաց. ատանկ տխուր բան չէի տեսեր։

Ձայն չհանեցի։

Եվ լացը շարունակեց Հաճի Մանուել, լաց մը անհեկեկ, անհեծեծ, լուռ ու մունջ, բայց սիրտ կտրտող։

Չէի կարծեր, որ այդ շենքով մարդերը լալու գիտակցությունը կրնան ունենալ։

Եվ անոր համար կրած ազդեցությունս ավելի բուռն էր։

— Հաճի Մանուել,— ըսի ուսին զարնելով վերջապես,— ինծի նայե, տղա՞ ես, կուլաս։

— Չէ՛, տղա չեմ,— մոլտաց,— տղա չեմ, ամա կուլամ... ծառքս չէ...

— Ինչո՞ւ... տե՞ղտ մը ունիս, ըսե նայիմ...

— Հա՛, յա, տե՛ղտ ունիմ... էս չէ նե, ասա՞նկ կըլլայի... Ա՜խ, Վարդուհի... Հոգիիս է՛ն խոշոր փարշան... Տուն կիտե՞ս... չէ՛, ինչո՞ն պիտի կիտնաս... Ասկե էսսուն տարի առաջ... Վարդուհին կար... հրեշտակի պես ախճիկ մը... Ան ինծի կսիրեր... էս անիկա խենթի պես կսիրեի... իրար պիտի առնեինք... Ասված չուզեց... Վարդուհին հիվընցավ... Զապալանմիշ էղա... օսկի խարճեցի... հեքիմներ թափեցի... պո՞շ... պա՛ն մը չկրցան ընել... մեռա՞վ Վարդուհս... մեռա՞վ ճիյերիս քեռշեն... ամա սիրտս քաշեց փրցուց, հետը տարավ... էս ալ պիտի մեռնի ամա, ասված չուզեց... էս ապրեցա, քի՝ էյեր Վարդուկիս սերը ծառքեն կնաց նե, հիշ տեյիլ իսե անոր ձգած տերտը դեսելի մը ընեմ ինծի, անով չարչարվիմ... անով սատկիմ...

Հեկեկ արտասանած իր այս խոսքերն այնպիսի շեշտ մը ունեին՝ իբր թե քունի մեջ բանդագուշանք մը ըլլար։ Տեղ մը չէր նայեր, անծանոթ կետ մը, անցյալին տխուր հորիզոնը կդիտեր... և բառերը կթափթփեին բերանեն՝ կարծես առանց մտածումի։

Գավաթ մը կլլեցեն ետք, շարունակեց.

— Ա՛լ անկե ետքը աշխարք մութ էղավ ինծի... Տերտիս տերման փնտռեցի... օրերով վազեցի լեռները... օվաները... փարա չրրավ... ետ տարցա... ըռախի՞ն. օխաներով խմեցի, մեռելի պես ինկա... իշտե ան ատենը բռահատծա... Գործ-մորթ ձգեցի... ինչո՞ւս պետք... ա՛լ վո՞վ կար աշխարքին մեջ ինծի համար... Որի՞ն, ո՞ր

կնկանը էրեսը նայեի... Անկե պերի էռսուն տարի է... Տերտս էրթալով էվելցավ, պեթերցավ...

Լռեց, կերպարանքը քստմնելի էր. սև մազերը, ճերմակով խառնված, ճակտին վրա կխովանային մինչև աչքերը, որոց շողյունը կարձակվեր՝ նվազկոտ ջահի մը պլպլուքին պես։

— Հիմակ ամեն առտու Վարդուկիս կերեզմանին վրա կերթամ... էյեր մեկ առտու մը չերթամ նե, կմեռնիմ... անիկա կլսե իմ ծանս... կլսե՞ յա... չյունքի ես ալ անիկա գիշերները էրազիս մեջ կտեսնամ... իմացա՞ր, տղա՜ս, իշտե աս է տերտս... ասիկա քեզի խրատ ըլլա, աշխարքին վրա հի՞չ չսիրահարվիս հա՜... կեղ սան է...

Եվ գլուխը կուրծքին վրա ձգելով, սկսավ նորեն արտասվել լռիկ-մնջիկ։

ԹԱՇԿԻՆԱԿԸ

(Պարզ պատմություն մը)

Շենքին երկրորդ հարկը լմնցած էր, և երրորդ հարկն սկսելու համար փայտյա շորս հաստ սյուներ ցցված կերևային երկինքին կապույտ կոնին վրա։ Խժլտուք մը կտիրեր հոն, մրջյուններու երամի մը տենդոտ գործունեությունն ու մեղուներու ականջ խտղտող բզզյունը, որ երբեմն կընդհատվեր բանվորներու պետին մեկ բարձրագոչ խանչյունովը։ Այդ տունը շինել տվողը Թովմաս աղան էր, միշտ ածիլված կարմիր, լեցունկեկ այտերով, հիսունի մոտ ծանրաբարո մարդ մը, որուն երազն եղած էր տուն մը շինել տալ՝ իր հսկողությանը տակ, ճիշտ ինչպես ինք շատ անգամ կառուցած էր երևակայությանը մեջ. իրարու վրա երկու սենյակ, վերջինը լայն պատշգամբով մը արտակարկառ, ձվաձև սրահ մը, զարդարուն ձեղունով, հղկուն մարմարներով հատակված քառակուսի բակ մը։ ուր կիջվի մեկ կետե մեկնող երկու սանդուխներե և այսպես շարունակաբար... աղվոր, կոկիկ, վայելուչ։

Ինք, առտուները, օրինակելի անայլայլությամբ, շուկա երթալե առաջ, անգամ մը անպատճառ պիտի հանդիպեր կիսաշեն տունն ու միևնույն տեղերը միևնույն համառ հոգածությամբ աչքե պիտի անցուներ՝ ամենափոքր թերության մը համար հանդիմանանքներ ուղղելով ճարտարապետին, միջահասակ, գրեթե քառակուսի դեմքով կլորաշվի հույն մը։

Եվ իրիկունները, շուկային դարձին, նույն բանը։

Ա՛լ հիմակ սքանչանքով կդիտեր Թոմաս աղա իր տունը, որուն երկու հարկերը ճարտարապետական հրաշակերտներ կթվեին իր աչքին. և երբ ան գիշերը տուն գնաց, սեղանին վրա քանի մը հատ կոնծելեն ու իր գրգռված տեսողության մեջ նշմարելե ետք իր շողածիր տունը, ըսավ իր կնոջը.

— Կնի՛կ, է՛յ, ա՛լ մերամնուս հասանք, տուներնիս կշինվի, կլմննա կոր. ամսե մը հոն կկրվինք. ամա ի՞նչ տուն եղավ, է՞ ո՞ֆ...

— Հայրիկ,— ըսավ անդիեն տասնյոթը-տասնըութը տարու մանկամարդ աղջիկ մը,— վաղը առտու ես ալ հետդ գամ, ես ամենեին չպտրտեցա. մինակ հեռուեն առաջին հարկը տեսեր եմ։

— Եկո՛ւ, աղջիկս, եկո՛ւ, հեմ տուն տահա աղեկ ֆարղին կերթաս պակաս տեղերուն... հիմակվան խելքերը իշտար ըլլա նե...

Հաջորդ առտուն, օրիորդ Ատրինե պշրորեն հագնվեցավ սրգվեցավ, իր սիրուն, ճերմակ դեմքն հովանավորելով թեթև ամառային գլխարկով մը։ Այս խայտացող աղջկան ընթացքին մեջ, փողոցը հորը քովեն քալած ատեն, հայտնի կերևար, որ ավելի փողոցը հորը քովեն քալած ատեն, հայտնի կերևար, որ ավելի փափագ կար կանուխկեկ հրապույր ազդելու փողոցեն անցնողներուն, քան երթալ հորը շինել տված տունը տեսնել։

Վերջապես հասան։ Արդեն իսկ մուրճի և ուրագի բախումները կզգացունեին աշխատության փութաջան վերսկսումը։ Ներս մտան։ Դուռնեն, և փայտի բեկորներու, տաշեղի՝ կույտերու վրայեն հայրը անցուց իր աղջիկը, որ գարշոտ շարժումով մը վեր առած էր իր շրջազգեստը՝ ցուցնելով սև գուլպաներու մեջ սքանչելապես կաղապավորած գողտր սրունքները, որք մեկ քանի հետաքրքիր աչքերու մեջ վաղանցիկ բոցեր վառեցին։ Սանդուխին գլուխը հույն ճարտարապետը դիմավորեց Թովմաս աղան, որ անմիջապես հարցուց, թե գործավորներն ամբո՞ղջ են։

— Մինակ հղկիչը չէ եկած,— ըսավ ճարտարապետը,— արդեն միշտ մեկ ժամ ուշ կուգա անիկա։

— Անանկ է նե, ուրիշ մը բերելու է անոր տեղը,— հարեց Թովմաս աղան բարկությամբ,— էվել օրակա՞ն տալու է անոր։

— Կճամփենք,— ըսավ հույնը։

Այս միջոցին դռնեն ներս կմտներ տժգույն դեմքով, մելամաղձոտ սև աչվքներով երիտասարդ մը, բանվորի մաշած զգեստներ հագած, ձեռքը զամբյուղ մը, որուն մեջ գործիքներ կային։

— Ահա ինքն է,— ըսավ ճարտարապետը, նորեկը ցուցունելով Թովմաս աղային։

Սա, բուռն շարժումով մը անոր դեմը դնաց և ուշ գալուն պատճառն հարցուց։

— Մայրս հիվանդ է,— ըսավ երիտասարդը՝ թեթևապես շառագունելով,— առտուները պետք եղածները կհոդամ։

— Չըլլար, չուզեր, մեր գործը ետ կմնա,— ըսավ Թովմաս աղան,— ասօր ալ պանե տե վաղը պաշխա մը պերենք։

Օրիորդ Ատրինե, որ սկիզբեն ի վեր ներկա գտնված էր այս տեսարանին և անոր կհետևեր հետաքրքրությամբ, երիտասարդին երեսը նայեցավ և սարսռալով անոր սև աչքերուն մեջ նշմարեց թեթև թացություն մը։ Անմիջապես անդիմադրելի արգահատանք մը զգաց, կամաց մը հորը մոտեցավ և ականջեն վար բան մը փսրտաց։

— Փեք աղեկ, թող անանկ ըլլա,— ըսավ Թովմաս աղա,— հայտե, Գառնիկ, աշխատե, ամա առտուները ալ ուշ մի՛ մնար։

Երիտասարդ հղկիչը երախտագիտությամբ լեցուն ակնարկ մը սևեռեց մանկամարդ աղջկանը վրա, որ անհուն հաճույքի սարսուռ մը զգաց, և հետո գործիքները դուրս հանելով զամբյուղեն վերի հարկն ելավ, սենյակ մը մտավ ու պատուհանի մը առջև անցնելով, սկսավ հղկել անտաշ տախտակները։

Օրիորդ Ատրինեն, քիչ մը խռոված, հորը հետ վերին հարկերը պտտեցավ, առանց շատ ուշ դնելու մանրամասնությանց, զորս հայրը կբացատրեր՝ իրեն հատուկ նկարագեղ ոճովը։

Մեկնելու ատենին, մանկամարդ աղջիկը, ակամա շարժումի մը հնազանդելով, ներս նայեցավ այն սենեկեն, ուր կաշխատեր երիտասարդ բանվորը։

— Կաշխատի՞ս, պարոն Գառնիկ,— հարցուց դողդոջ ձայնով։

— Այո, օրիորդ, շնորհակալ եմ,— պատասխանեց հղկիչը՝ սարսռալով այս անուշ ձայնեն, որ կհուզեր իր սիրտը։

Օրիորդ Ատրինեն կորուսած իր այն սովորական զվարթությունը, որով միշտ կփայլեր. «Երթա՛նք»,— ըսավ հորը, որ քիչ մը զարմացավ անոր այդ տհաճ և տխուր երևույթին վրա։

Գառնիկ պարկեշտ տղա մըն էր. հայրը մեռնելեն ետք մորը ու քրոջը հետ միանակ մնացեր և ստիպվեր էր հղկիչություն սորվիլ՝ ապրուստը ճարելու համար։ Հանդարտ առանձնության մը մեջ կապրեր, իր գործին վրա միայն մտածելով։ Բայց հիմակ տխուր էր, մորը հիվանդությանը և միանգամայն այդ առտվան դեպքին պատճառով, որ սաստկապես ցնցեր էր զինքը։ Ու քերիչը ուժգնորեն կքսեր տախտակին վրա, փայտի տաշեղներ հանելով օճառի փրփուրի առատությամբ։ Ու իր այդ տենդոտ աշխատության պահուն, քիչ մը, առանց իր ուզելուն, մորը հիվանդկախ դեմքն անհետ կըլլար, և անոր տեղ Ատրինեի աշխույժ ու վառ դեմքը կուգար, զգլխիչ հեշտություն մը բերելով հետը։

Հաջորդ առտուն ի՞նչ եղավ Գառնիկին զարմանքը, երբ իր սենեկին դռան շրջանակին մեջ հանկարծ փողփողիլը տեսավ Ատրինեի երազուն դեմքին, որուն կարմրուկ շուրթերը ծիծաղի մը մեջեն կցուցունեին ճեփ-ճերմակ փոքրիկ ակռաներ։

— Բարի լույս, պարոն Գառնիկ, մայրդ աղե՞կ է։

— Աստծու բարին, օրիորդ, այո, քիչ մը ավելի աղեկ է, շատ բարի եք։

Մանկամարդ աղջիկը, միշտ ժպտաշուրթն, ներս մտավ իր շրջազգեստին մեկ ծայրը սովորականեն քիչ մը ավելի վեր առնելով։ Երիտասարդը, որուն աչքեն չէր խուսափած այս մանրամասնությունը, անսովոր փայլ մը ունեցավ աչքերուն մեջ ու ձեռքեն թողուց քերիչը, որ տաշեղներուն վրա ինկավ։

— Օ՜հ, ի՞նչ եղաք, պարոն Գառնիկ,— ըսավ Ատրինե աշխույժով և երիտասարդին մոտենալով այնքան մոտ, որ իր շունչը մեղմիվ շոշափեց հղկիչին տժգույն մորթը։

Ու իր փափկիկ ձեռքը բան մը սպրդեցուց երիտասարդին ձեռքին մեջ։

— Մայրիկիդ համար դեղ գնե։

Հետո, Ատրինե երեք ոստումով դուրս ելավ սենեկեն։

* * *

Շենքը կհառաջանար, երրորդ հարկն ալ կավարտեր ու տանիքը, որուն մեկ մասը թեռացա էր, մոտ էր գոցվելուն։

Թոմաս աղա, տունեն ամբողջացման համեմատությամբը իր ոգևորությունն ալ ավելցած, կշարունակեր իր այցելությունները միշտ ընկերակցությամբ իր աղջկան, որ կըսեր, թե մեծ հաճույք կզգա նոր տան երևույթեն և կուզե անընդհատ հետևել անոր շինությանը, մինչև որ ավարտեր։ Եվ իրավ ալ չէր վհատեր. ամեն առտու, որոշյալ ժամուն կարթնար ու իր խնամոտ արդուզարդը

տալեն ետք, հորը հետ դուրս կելլեր՝ միշտ ջանալով ավելի շիք, ավելի վայելչագեղ մտնել իրենց նոր տունն ու մանավանդ անոր այն սենյակն, ուր դեռ կաշխատեր երիտասարդ հղկիչը, տեսակ մը անգիտակից, տարտամ ոգևորությամբ, որ կհայտներ իր խորունկ մտազբաղումը։ Ի՞նչ կզվարթանար սակայն իր թախծալից դեմքը, երբ, ինչպես միշտ, դռան մեջ տեսներ Ատրինեի խնդամիտ երեսը, որ իր ճերմակ ակռաները կցուցուներ միշտ։

Օրին մեկը վերջապես լմնցավ տունը. Թովմաս աղա, ավանդապահ և քաղաքավար մարդ, ուղեց, որ այդ մեծ ձեռակերաը գլուխ հանող գլխավոր անձերը՝ իր նորաշեն սրահին մեջ կերուխում մը ընելե ետք ելլեն երթան։

Ուստի գիշեր մը որոշեց այն բանվորները, որք պիտի մասնակցեին ճաշին. և, պատահմամբ կամ դիտմամբ, մոռցավ երիտասարդ հղկիչը։

Ատրինե, որ կերպով մը հորը շրթունքեն կախված էր, կասկարմիր կորեցավ ու ինքզինքը չկրնալով զսպել, ըսավ.

— Գառնիկը մոռցար, հայրիկ։

— Հա, ան ալ թող գա. ան տղան ալ աղեկ աշխատեցավ։

* * *

Գառնիկ, երջանկութենե դողդոջուն, ոսկեզօծ երազներու մեջ լողալով, հագավ իր ամենեն մաքուր հագուստը, որուն նորության մեջ ավելի շեշտվեցավ իր դեմքին անփայլ տժգունությունը և աչքերուն սրտաշարժ մեղկությունը։

Տոնի օր էր կարծես։

Ատրինե, մորը թույլտվությամբ հորը հետ գացեր էր դիտելու համար գործավորներուն զվարճությունը։

Ու իր է՛ն ծաղկավետ արդուզարդը տված էր։ Իրավ հրապուրիչ էր Ատրինե։

Մանկամարդ աղջիկը խելահեղիչ շլացում մը ունեցավ, երբ տեսավ հղկիչին արտասովոր տժգունությունը և աչքերուն անփայլ նվազությունը։

Սեղանը վերջանալեն ետք, սկսան պտտիլ տան սենյակները. Թովմաս աղան բերանը բաց, չորս կողմը կդիտեր, սրտազեղ սքանչացմամբ։ Օրիորդ Ատրինե թեռացան ելած էր զովացնելու համար իր երեսը, որ կարմրած էր երկու բաժակ գինի խմած ըլլալով։

Թաշկինակը, ասեղնագործված շրջանակով անուշաբույր թաշկինակ մը, բռնած էր ձեռքը՝ երկաթորմին կոթնած, երազներով համակ։

Հանկարծ շշուկ մը լսեց և դեպի վար ծռելով, տեսավ Գառնիկը, որ տակի պատուհանեն գլուխը դուրս հաներ էր ու օդ կշնչեր։

— Ի՞նչ կնայիս, մյուսյու Գառնիկ,— ըսավ Ատրինե երկաթորմեն դուրս հանելով այն ձեռքն, որով բռնած էր թաշկինակը։

— Ա՛հ, դո՞ւք եք, օրիորդ, քիչ մը կզովնամ։

Նույն պահուն, չգիտցվիր ինչպես, Ատրինեի ձեռքեն ինկավ թաշկինակը և միևնույն ժամանակ աղջկան կոկորդեն թռավ սա ակամա բացակաչությունը.

— Գառնի՛կ, թաշկինակս։

Երիտասարդը անձնվիրության անսանձ թափեն մղված, ի քթթել ական առաջ նետվեցավ թաշկինակը բռնելու համար, առանց մտածելու իր առջև գտնված պարապության վրա։

Եվ հավասարակշռությունը կորսնցունելով, գահավիժեցավ փողոցի քարահատակին վրա։

Վազող-վազողի. իրարանցում. խե՜ղճ Գառնիկ՝ հազիվ շունչ կառներ կուտար, երբ վերուցին զինքը։

Ատրինե վար սուրացեր էր խենթի պես, և այն պահուն, երբ արդեն երիտասարդը վերուցած ներս կբերեին, քովը վազեց։ Գառնիկ բացավ իր մեղկանուշ աչվրներն, աղջկան վրա սևեռեց զանոնք և անոր կարկառելով ձեռքը,

— Առ թաշկինակդ, օրիորդ Ատրինե,— ըսավ ու վերջին հառաչ մը արձակեց...

* * *

Հիմակ ա՛լ նոր տունը փոխադրված է Թովմաս աղա ընտանիքովը, բայց ցավ մը ունին։

Ամեն օր, օրիորդ Ատրինե, իր պաճուճագեղ արդուզարդը տրված, թեռացան կելլե, ձեռքն ունենալով ասեղնագործված թաշկինակը, երկաթորմին կկոթնի, վար կնայի, հանկարծ կթողու թաշկինակը և,

— Գառնի՛կ, թաշկինա՛կս,— կպոռա։

Եվ նույն անլուր աճապարանքով, որով Գառնիկին փողոց ինկած օրը իջած էր՝ սանդուխներեն, մանկամարդ օրիորդը կվազեր

տունեն դուրս, կառներ թաշկինակը, նորեն վեր կելլեր, սոսկալի քրքիջ մը արձակելով, ու իր սենյակը կփակվեր, հաջորդ օրը նույն ժամուն նորեն թեռացան ելլելու և պոռալու համար.

— Գառնի՛կ, թաշկինա՛կս։

ՀՈՒՍԱՀԱՏԻ ՄԸ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սափորը ձախ ձեռքը, աջ ձեռքը կարճ հաստկեկ գավազան մը, զոր ամեն մեկ քայլափոխին գետինը կզարներ՝ ամբողջ մարմինը գրեթե անոր վրա ձգելով, մեռելներուն ետևեն կերթար պապա Հուսեփ, անոնց գերեզմանին վրայի հողը զովացնելու իր սափորին մեջի ջուրովը։

Երկար, մինչև թելերը մաշած վերարկու մը կկաղապարեր անոր իրանը՝ թիկունքեն մինչև կրունկները, մեջքեն վար— կոնակին կունտ ու կոր ձևին պատճառով,— փոթ-փոթ իջնալով ու ցեխոտ ծվեններով վերջանալով։ Թևերն այնքան երկար էին, որ սափորին բերանը թեզանիքին մեջ կծածկվեր և գավազանի ծայրն ալ չէր երևար, վասնզի մասները օր արև չէին տեսներ բնավ։

Վերարկուին երկու քղանցքները երբեք իրարու վրա բերած չէին, ոչ թե որովհետև անհիշատակ ժամանակե ի վեր զրկված էին կոճակե, անոր համար մանավանդ, որ պապա Հուսեփ, սրտաճմլիկ անփութությամբ մը կուզեր ամառ ձմեռ բաց պահել իր կուրծքը, արևեն խանձած թավաստև կուրծ մը, որ անոր ամեն մեկ աղմկալի շնչառությամբը կելլար կիջնար ցավալի հևքով մը։ Հետևապես իր դիմացը ելլողը վերարկուին բացվածքեն անպատճառ կտեսներ չվան մը, հողեն ավելի թուխ, որ չորս-հինգ անգամ մը ոլորած էր անոր մեջքին շուրջը, գոտեպնդելով զայն կարծես ու իր գոյությունը անհրաժեշտ, կենսական պետք մը դարձնելով անոր, պապա Հուսեփին համար։ Այս այն աղետալի չվանն էր, զոր մեռելներու ջրկիրը մեղմ զգուշությամբ մը և նեղացուցիչ ծանրությամբ մը կքաշեր մեջքեն՝ դագաղները փոսին մեջ իջեցնելու համար, ու հետո նորեն կպլլվեր անով՝ վերարկուին քղանցքովը ծայրե ծայր մաքրելե ետք զայն խնամով։

Գլուխը գոցված էր ֆեսով մը, որուն գույնը որոշելը շատ դժվար պիտի ըլլար, և որ՝ իր նախնական կաղապարումը ձգելով առ-

հավետ՝ պապա Հուսեփին գլխուն անշնորհք կաղապարումը առած էր վերջապես։

Բայց մեռելներու ջրկիրը եկեղեցի չէր երթար. ոհ, ո՛չ, բնավ ոտք չէր կոխեր հոն. իր անփոփոխ բնակարանն էր՝ գիշեր-ցերեկ, փողոցի մը անկյունի մթին սրճարանը, որուն առջևեն անվրեպ կանցնեին հուղարկավորներու թափորները։ Ներսը, անկյուն մը կծկված է պապա Հուսեփ, ծխափայտին հորդ մուխերուն մեջ թաղված, ցնորածի մը ապուշ և տարտամ նայվածքովը, երբ, մեռել մը անցած պահուն, ժամկոչը, կամ լուսարարը, բանալով սրճարանին դուռը կպոռա բիրտ ձայնով մը.

— Պապա Հուսեփ, հա՛յտա...

Մեկեն ի մեկ, պիծակե մը խայթվածի պես վեր կթռչի ջրկիրը, ակնթարթի մեջ կմարե ծխափայտը, ու խոլ աճապարանքով մը նստարանին տակեն կառնե սափորը, որ արդեն ջուրով լեցուն է՝ վերջին հուղարկավորությենեն ի վեր, ու ինքզինքը դուրս կնետե սրճարանեն, հապշտապ հետևելով թափորին, իր գավազանին ու քայլափոխին միանվագ աղմուկովը ու ջրալից սափորին մշտատև երերումովը։

Իր այդ սգալից զբաղումին մեջ անբացատրելի փութկոտություն մը և հոգածություն մը կդներ տարօրինակ ծերունին. կարծես սիրահարված էր այդ արվեստին. անոր ամենեն զվարթ, գեթ անտրտում վայրկյանն էր նորաբաց գերեզմանի մը շուրջն անցուցած կարճ ժամանակը. ամեն բան լմննալե ետք, հուղարկավորներուն ցրվելեն ետք, ինքն ալ կհեռանար՝ չվանը մաքրելեն ու սափորեն մեջի ջուրը մինչև հետին կաթիլը քամելե հետո քրքրված հողին վրա։

Ու կես ժամ հետո, նորեն իր նախկին դիրքն ունի Պապա Հուսեփ, սրճարանին անկյունը, մեկ ծունկը վեր, ծխափայտին թխպոտ ամպիկներուն մեջ խաղցնելով իր աղոտ, մոլորուն աչքերը, սպասելով, անգիտակից անդգայությամբ մը, որ դուռն հանկարծ նորեն բացվի և ժամկոչին թավ ձայնը նորեն թնդա.

— Պապա Հուսեփ, հա՛յտե...

Բայց պապա Հուսեփ, ասկից քսանհինգ-երեսուն տարի առաջ, Փամակվան մեր գիտցած պապա Հուսեփը չէր եղեր, բոլորովին հիմնովին տարբեր մարդ մըն էր եղեր։

Ուստի, գեղեցիկ Ֆրիտասարգ մը, ինք կյանքին ժպտալով,

կյանքն ալ իրեն. ամենեն ճարտար ու կորովի նավավարն էր նավամատույցին. ոչ ոք սիրտ կըներ անոր հետ մրցելու և արդեն անոր ճարպկությունն ամենեն կհարգվեր, ու նավավարներու լոնճային մեջ իր փորձությանն ու հմտությանը դիմում կըլլար շատ անգամ՝ նավավարական կնճռոտ խնդիր մը լուծելու համար։

Գիշերները, երբ ծովացած հարաշարժ կյանքե մը վատակաբեկ բարի նավավարները կժողովվեին իրենց սովորական գինետունը, օղիին տալու համար իրենց ամբողջ հոգնությունը, որ պուտիկ-պուտիկ առնե տանի, Հուսեփ միշտ կնախագահեր այդ գումարումին, և ամեն նայվածքներ անոր շուրթերուն կառչած կմնային, անոնցմե ելած ամեն մեկ զարմանալի խոսքը շուտով մը կով տալու համար կարծես։

Քսանհինգ տարու հազիվ կար Հուսեփ. մայրը մեռած էր, մինչև վերջին շունչը աղոթքներ մրմնջելով իր քաջ զավկին համար, իսկ հայրը, ժամանակին նավավար ու ձկնորս, հիմակ հիվանդոտ ու տխուր, տունը կնստեր՝ իր հին ուղկանները կարկտելով շարունակ, օրին մեկը նորեն վերկենցաղելով՝ զանոնք գործածելու գերագույն հույսովը տոգորված։

Օրին մեկը կպատահի, որ գյուղին մեկ բարեկեցիկ ընտանիքը տուներին կկանչեն Հուսեփը և անոր կաղաչեն, որ ամսական աս չափ գումարի մը փոխարեն ամեն առտու իրենց տասնհինգ-տասնվեց տարեկան աղջիկը իր նավակովը առնե Ղալաթիա տանի ձգե, ու ամեն իրիկուն Ղալաթիա երթա ու առնե բերե մանկահասակ օրիորդը, որ Բերա ֆրանսական վարժարան մը պիտի հաճախեր։

Հուսեփ հոժարակամ կընդունի այս առաջարկը— միանգամայն կորոշի, որ Ղալաթիա տանելեն ետքը, նավավարը աղջկան ընկերանա մինչև վարժարան, ինչպես նաև իրիկունն ալ երթա վարժարանեն առնե օրիորդը։ Երկու կողմեն պայմաններ կդրվին, ծնողաց կողմե՝ աղջկան ապահով երթևեկությունն երաշխավորող, նավավարին կողմե՝ ամսական գումարին կանոնավորապես վճարումն ապահովող։

Ու հաջորդ օրվընե սկսյալ մանկամարդ աղջիկը, կարմրերփն ու կարճ շրջազգեստ մը հագած, խսիրե թեթև անոսր գլխարկ մը դրած ու ձեռքն ունենալով փոքր պայուսակ մը, մտավ Հուսեփին նավակը՝ նախ քիչ մը վարանումով ու հետո, առաջին տագնապը անցընելե ետք, անփութորեն բազմեցավ նավակին մութ կանաչագույն բազմոցներուն վրա, լայնալանջ ու հոլանի երիտասարդին

դեմը, որուն ջղուտ բազուկները սկսան ջուրին վրայեն փետուրի թեթևությամբ սահեցնել նավակը։

Մանկամարդ աղջիկը սիրուն և գիրգ արարած մըն էր. անուշ ու կապտորակ աչքեր անհանդարտորեն կշարժեին հազիվ նշմարելի խարտիշագույն ընքվիններուն տակ. անոնցմե էր, որոնք կարծես բանի մը վրա չեն նայիր, բանի մը ուշադրություն չեն ըներ, և սակայն ամեն բան աչքին կզարնե. ուստի, երբ Հուսեփ, առաջին վայրկյաններուն մեջ երկչոտ, նայեցավ անոր, հուսախաբություն մը ճնշեց իր սիրտը։ Մանկամարդ օրիորդը ոչ միայն չէր դիտեր զինքը, այլև գլուխն ալ անդին դարձնելով՝ հորիզոնը կքններ տարտամ նայվածքով։

Բայց այս առթիվ ինքը կրցավ, ուժգնորեն թիավարելով հանդերձ, մանրամասնորեն զննել այդ փափուկ արարածը, որ հանձնված էր իր համբավյալ պարկեշտությանը։ Եվ զմայլվեցավ մնաց. կկարծեր, թե տակավին կյանքին մեջ ատանկ դեմք չէր տեսած, ու սիրտին զգացած կսկծանքը կայսպաներ զինքը, որ մինչև այն ատեն անհրապույր կյանք մըն էր վարած, քանի որ ատանկ երանավետ արարածներ գոյություն ունեին աշխարհքին վրա, ու ինքը չէր գիտեր։

Եվ ավելի կորովով, գրգռված ջիղերու ձգտումով մը թիակները կմխրճեր ջուրին մեջ, ու նավակը կսահեր։

Երբ Ղալաթիա հասան, Հուսեփ վստահելի մեկուն պահպանությանը հանձնեց նավակը, և դուրս ելավ մանկամարդ աղջկան հետ. ու ինք ետևեն, ան առջևեն ճամփա ելան դեպ Բերա. երբ վարժարանին դուռն հասան, աղջիկը ետին դարձավ ու քաղցր ձայնով մը ըսավ.

— Պարոն Հուսեփ, իրիկունը չմոռնաս գալու։

— Ո՛չ,— պատասխանեց երիտասարդ նավավարը, կենալով հոն մինչև աղջկանը անհետ ըլլալն ու հետո դառնալով, մտածկոտ։

Այդ օրը իր սովորական օրերուն պես չկրցավ անցընել Հուսեփ. հաճախորդ չունեցած ատենը, անգիտակցաբար կսկսեր խորհիլ՝ աչքը այն տեղին հառած, ուր առտուն նստեր էր մանկունակ երեսով աղջիկն այնքան շնորհալի ձևով։

Իրիկունը, որոշված ժամեն կես ժամ առաջ գնաց կեցավ դրպրոցին դուռը, անհամբեր սպասելով իր գեղաշնորհ ընկերուհիին, որ չուշացավ. այս անգամ, երբ նավակը ճամփա ելավ, Նուրիկ անդին չդարձուց գլուխը. հիմակ քիչ մը հաճույք կզգար երիտասարդին

սարդին վարժ ճարպիութենեն, որով նավակն այնքան դյուրավ կսահեցներ. պատճառը չէր զինք շահագրգռողը, այլ արդյունքը. դիմացինը, եթե վաթսուն տարու ծերուկ մըն ալ ըլլար, նույն հետաքրքրությունը պիտի զգար. բայց Հուսեփ աչքի այնքան փորձառություն և մտքի այնքան նրբություն չուներ, որ այս կետերը զանազաներ. ո՛չ. ան կարծեց, որ իր կարշնեղ բազուկին մեքենական շարժումն ու կուրծքին լայն ու հեզոտ ելևէջը կհետաքրքրեին զայն. ուստի սիրտը ուրախությամբ լեցվեցավ, երբ գյուղին նավամատույցը հանեց Նուրիկը, որ շնորհալի գիշեր բարի մը մաղթելով, հեռացավ, հաջորդ առտուն նորեն տեսնվելու համար։

Այն գիշեր ուրախ էր Հուսեփ. երբ օդիի սեղանին շուրջը հավաքվեցան, իր նավավարական շահատակությունները պատմեց, կատակներ ըրավ ու շատ խմեց։ Ու գիշերն ալ երազին մեջ տեսավ Նուրիկը, որ կժպտեր իրեն։ Վերջապես լուսցավ. Հուսեփ խաղերով ու երգերով ջուրը իջեցուց իր նավակը ու սպասեց՝ վեր սոթելով իր ճերմակ կտավե շապիկին թեզանիքները։ Նորատի աչակերտուհին չուշացավ։ Ժպտուն ակնարկով ու ծիծաղկոտ շուրթով բարևեց նավավարը։ Ինչպե՞ս գացին մինչև Ղալաթիա և անկից մինչև դպրոց՝ պիտի չկրնար ըսել Հուսեփ. երազի մը անզգա մեքենականությունը կար իր ամեն ըրածներուն մեջ։

Այսպես անցան մեկ քանի ամիսներ։ Նավակը նորցավ ու բազմոցները գեղեցիկ կերպասներով զարդարվեցան։ Նուրիկ ա՛լ մտերմացած էր Հուսեփին հետ. մինչև Ղալաթիա անոր շաղփաղփումը մտիկ կըներ հաճույքով, անոր քաջագործությունները իր եռանդը կարծարծեին ու երազել կուտային իր վառ երևակայությունը։ Համակրանք մը կզգար իրմե ուժով, ու իրմե զորավոր այդ երիտասարդին նկատմամբ, որ սիրո բոցովը բռնկած՝ ճարտասանական ձևեր կառներ։ Ալ ինչո՞ւն պետք էր ուրիշները, բարեկամ, ծանոթ, ընկեր, ամենքն ալ աչքե ձգեց. գիշերները ա՛ղ չմասնակցեցավ օդիական խրախճանքներուն։ Կյանքը, բովանդակ էությունը կուտար, որ աշխարհի վրա օր, առտու և իրիկուն միայն գոյություն ունենային, որպեսզի շուտով մը կարենար տեսնել Նուրիկը, անոր կապույտ աչքին նշույլներն ու կակուղիկ հպումները կարենար ըմբշխնել։ Երանի կուտար իր վիճակին և ուրիշ բոլոր արարածները գժբախտ կկարծեր, ըստ որում չէին սիրվեր անկից։

Օրերեն մեկը հանկարծ չեկավ Նուրիկ, աստված իմ, ի՜նչ ուրիտ. լախտի հարված մը եղավ ասիկա հեք նավավարին համար.

իրիկուն չեղած, ազջկանը տունը վազեց պատճառը հարցնելու համար. դուռը կես մը բացին իր երեսին ու ձայն մը խստությամբ բաավ, թե ասկից վերջը ա՛լ Նուրիկ պետք չուներ իր նավակին, վասնզի ա՛լ դպրոց պիտի չերթար։

Ետ դարձավ Հուսեփ ու ձեռքը աչքին տարավ՝ տեսնելու համար թե՝ արդյոք կուլա՞ր. ո՛չ, որովհետև, արցունքները փոխանակ աչքեն դուրս իյնալու, հրաշեկ գնդակներու պես սրտին մեջ վազած էին, արյունոտ ծակեր բանալով հոն. շատ չանցած՝ առույգ երիտասարդին հաջորդեց մռայլոտ, տխրամած մարդ մը, որ հազիվ ուժ ուներ թևճակները շարժելու. Նուրի՜կ, ի՜նչ հոգեմաշ, կենսակործան երազ, որ անհետ եղեր ցնդեր էր՝ խոշոր պատառներ տանելով իր էութենեն։

Մարդուն մեկը շատ օրեր ու տարիներ անցնելե ետք իր նավակը նստավ օր մը՝ երկու հարսանեկան մոմերու հետ։ Հուսեփ, թեև անկից ետք ա՛լ բանի մը չէր հետաքրքրվեր, հարցուց ինքնաբերաբար, թե որո՞ւն էին այդ մոմերը։

— Աբրահամ աղային աղջիկը, օրիորդ Նուրիկ կկարգվի կոր, ա՜ մոմերն ալ անորն են,— ըսավ մարդը բիրտ ձայնով մը։

Քայքայումը կատարյալ եղավ. դուրս ելավ, ծախեց նավակը և հուսահատ կյանք մը սկսավ անցընել. ժամանակեն առաջ ծերացավ, կորաքամակ եղավ, ու քսան տարի ետքը իր Հուսեփ անվանը կցեցին Պապա մակդիրն ալ։ Գործ մը չըրավ ապրելու համար. ինքզինքը աստծո հանձնեց ու մարդերուն մոտենալու զգուշացավ, իր թշվառության պատճառը զանոնք նկատելով։

Այլանդակ փափագ մը ունեցավ օր մը. ուզեց ամեն մեռելներու ետևեն երթալ. ու իր այս բաղձանքը իրագործեց հուղարկավորության ամեն թափորներու ետևեն քաշկռտելով ինքզինքը մինչև գերեզմանին մոտ, ու հասնելուն պես սփոփանքի հառաչ մը կարձակեր։ Երբ մեռելներու ջրկիրը մեռավ, Պապա Հուսեփ աղաչեց, որ անոր տեղը անցնի. իրմե հարմարագույնը կա՞ր։

Ու ձեռքն առավ ջրալից սափորը, մեջքը պլլեց չվանը ու գավազանին կռթնելով ա՛լ սկսավ մեռելներուն ետևեն վազել՝ շարաշուք ոգիի մը պես։

Իր սովորական տեղը կծկված էր Պապա Հուսեփ, երբ արճարանին դուռը ուժգնորեն բացվելով՝ խոշոր ձայն մը գոչեց։

— Պապա Հուսեփ, հա՛յտե, մեռել կա...

Այնքան աճապարեց նախկին նավավարը, որ ծխափայտը գետին իյնալով երկու կտոր եղավ մեջտեղեն. Հուսեփ տխուր նայվածքը մը նետեց իր այդ կործանած գույքին վրա, ու խորունկ հառաչ մ'արձակեց, հետո, բան մը չեղածի պես, գրեթե հափշտակեց սափորը և դուրս նետվեցավ սրճարանեն։

Սովորական հուղարկավորություններեն չէր. վարդապետ, եպիսկոպոս, քահանա, տիրացու, կանոնավոր և դաշն ձայնով երգեցողություն ու հանդարտ հառաջացումով, թեև Պապա Հուսեփին համար հանդիսավորը և անշուքը հավասար էին. չէ՞ մի որ երկուքին ալ փոսին վրա պիտի թափեր իր միևնույն ջուրը, միևնույն անտարբերությամբ։

Թափորը գերեզմանատուն հասավ, ու մեռելական աղոթքներն եղան լմնցան։

Առաջ անցավ Հուսեփ ու մեջքեն սկսավ քակել մահասարսուռ չվանը, զոր ժամկոչի մը հանձնեց, հետո իր սովորությանը համեմատ, բացավ դագաղին կափարիչը, ափ մը հող նետելու համար մեռնողին վրա։

Կնոջ դեմք մը հանկարծ երևան եկավ, ցցված ոսկորներով, փոսը ինկած աչքերով, Պապա Հուսեփ կեցավ, վաղանցիկ շլացում մը ունեցավ, գլուխը կափարիչեն ներս խոթեց ու տարօրինակ բան, պարավ մեռելին սառը երեսը.

— Վա՜խ, Նուրիկ,— մրմռալով։

Դագաղը փոսը իջեցուցին, հողը ծածկեցին, ու Պապա Հուսեփ իր սափորին ջուրը անսովոր հոգածությամբ մը թափեց, ցանցնեց ամեն կողմ, աչքովը շտկեց շուկրտեց փոսին կոնաձև կույտը, և մինչ ամեն ոք կցրվեր կերթար, ինք առավ սափորն ու չվանը, հեռացավ գերեզմանատան մեջ, քարի մը առջև կեցավ, վեր վերցուց սափորը և ուժգնորեն զարնելով գերեզմանին՝ փշուր-փշուր ըրավ, բեկորներուն վրա կոխկրտեց մոլեգին թափով մը, հետո խոշոր զմելի մը հանելով գրպանեն, կտոր-կտոր ըրավ չվանն ալ։

Երբ ավարտեց, շուրջը նայեցավ. ոչ ոք կար, փաթթվեցավ իր վերարկուին և գլուխը կախելով սկսավ երթալ գերեզմանաքարերուն մեջեն, հորդ արցունք թափելով, իր սրտացող հեկեկանքները խառնելով սեպտեմբերի ահեղասույլ քամիին, որուն ալիքներուն մեջեն երբեմն կլսվեին Պապա Հուսեփին խուլ հեծկլտանքները։

ԺԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Միապաղաղ գորշ ամպերը անընդհատ վայրէջքով մը կքաղվեին ու կքաղվեին։ Ամեն աղմուկ կխեղդվեր, կընկղմեր անձրևի համատարած շառաչյունին մեջ։ Ծովը, մոխիրի գույն առած, կայլակներեն, կասղնակվեր, մակերևույթն անխռով ու հանդարտ, շոգենավի պղտոր փրփուրե ակոսները միայն ունենալով։

Այն հապշտապ բազմության մեջ, որ կամուրջին վրա կշարժեր ետև ու առաջ, երիտասարդ մը՝ հովանոցը բացած՝ ձեռքը մեկ քանի մեծ ու փոքր ծրարներ, տենդոտ անհամբերությամբ կքալեր, ոխերիմ ու վարազի ակնարկ մը նետելով այն անցորդներուն վրա, որք իր ճամփան կխափանեին։

Ո՜րչափ ստիպողական ըլլալու էր իր գործը, որ հանձն կառներ այդ լպրծուն օդին վազել իր մսոտ լայնշի իրանովը, բանի տեղ չդնելով իր կուրծքը տանջող հևքը։

Ժամը ինը կար, թեև տիրող կեսմթությունը տասներկուք ենթադրել կուտար։

Շտապող երիտասարդը վերջապես հասավ կամուրջին այն մասն, ուսկից Գատրքեոյի շոգենավը կնստվի։ Վար իջավ սանդուխեն, ձախ դարձավ ու քազինոն մտնելով՝ գնաց նստավ անկյուն մը, ուսկից շատ որոշ կերևեին շոգենավեն դուրս ելլողները։

Ձեռքի թուղթերը փայփայուն հոգածությամբ մը սեղանին վրա դրավ, թաշկինակն հանելով սրբեց անոնց վրայի ջուրը, և հառաչ մը արձակեց՝ ակնարկ մը նետելով դեպի դուրս, շոգենավեն ելլողներուն հատուկ դռանը վրա։

Քիչ մը շունչ առնելեն ետքը՝ ոտքի ելավ, հանեց մութ-կապույտ չուխայե բալթոն ու դիմացի հայելիին մեջ հոխորտ ու հաղթական ակնարկ մը նետեց իր սև անուշ աչվերներուն, կլոր լեցունկեկ դեմքին ու կարմիր տարփատենչ շուրթերուն վրա։

Օշարակ մը բերել տալով, կուշտ ու կուռ խմեց։ Եվ տակավին առաջին անգամն ըլլալով բոլորտիքը նայեցավ. ոչ ոք ուշադրություն կըներ իրեն, վասնզի արդեն ոչ ոք չկար։ Այն ատեն տաբատին գրպանեն դրամապանակ մը հանելով մեջի դրամները համրեց։

— Յոթը ոսկի՜,— մրմնջեց գոհունակության ժպիտով մը,— ամենն ալ անոր համար պիտի խարճեմ աս գիշեր... հա՜, ժա՜մը քանին է։

Բաճկոնակին գրպանեն ոսկի ժամացույց մը հանեց ու նայեցավ։

— Ինն ու կէ՜ս,— մրմռաց,— կես ժամ ունիմ... ո՛հ, այս խոստմանը տերն է։

Ծրարին մեկը բացավ, սնդուսե սև դիմակ մը դուրս հանեց ու երեսն անցունելով՝ հայելիին մեջ նայեցավ։

— Օ՛հ, աղեկ, ամենևին չպիտի ճանչցվիմ...

Ուրիշ ծրար մը բանալով՝ անգլիական ծովային սպայի գլխարկ մը երևան եկավ և հետո քիթին տակեն հարեց.

— Լաթերս պատրաստ են... սա անոր տոմինոն է... ա՜խ, ան հրաշալի մարմինը այս սև անշահ հագուստին մեջը պիտի մտնե...

Ու ձեռքերովը կշոյեր բավական մեծկակ ծրար մը։

Այս ամենը ստուգելեն ու սիրտն հանդարտեցունելեն ետքը, երեսը դուրսի դռանը դարձուց, և երկու ձեռքերուն մեջ առնելով այտերը, արմունկները սեղանին տված, սկսավ մտածել այն մեծ երջանկության վրա, զոր առաջին անգամ ըլլալով, պիտի վայելեր այդ գիշերը, պարահանդեսին մեջ։

Հրանտ՝ գեղեցիկ օդով մը պտըտած ատեննին խոսք տված էր օրիորդ Եվտոքսիին, որ այդ մեծ պարահանդեսը միասին երթան։ Ա՛լ անկից ետքը ի՞նչ սպառող անհամբերությամբ սպասած էին այդ բաղձացված օրվան, որ վերջապես եկեր հասեր էր։ Երկուքն ալ ի՞նչ անճառ հույսեր ունեին այդ անզուգական գիշերվան վրա. մեկտեղ պիտի պարեին, մեկտեղ պիտի խոսակցեին՝ իրենց ծպտանքին տակ պատսպարված, աներկյուղ և անվրդով։

Առջի գիշերը վերջին անգամ մըն ալ կրկնած էին իրենց խոստումը, և ժամադրությունը որոշված էր անդառնալի։

Հրանտ, եռանդնազեղ բնավորությամբ տղա մը, զերծ ստորնաքարշ զգացումներե, իդեալի ջերմ սիրահար, հաղարումեկ ոսկեփայլ հորիզոններու փողփողիլը կտեսներ իր ճակտին ետևը և ուրախութենեն կզեղուր, սիրտը սաստիկ կբաբախեր։

Ու կշարունակեր այդպես մնալ, սևեռահայաց, անշարժ, լուսալիր մտածումներու ցանցին մեջ կաշկանդված, անէության հեշտին ազդեցությունը զգալով իր այդ վիճակին մեջ։

Հանկարծ ետ ընկրկեցավ, քունե ընդոստ արթնցողի մը պես. դիմացի դուռը բացված էր, ու բազմություն մը դուրս կխուժեր։

Հրանտ, էլեկտրականացած, ելեր կայներ և աչքին բովանդակ ուժովը դուրս ելլողները կդիտեր։ Էրիկմարդերու անվերջ շարքը

մինալե ետք, կիներն երևցան. Հրանտ ուշադրությունը կրկնապատկեց. ամեն մեկ գլխարկի ծայր սարսուռ մը կուտար մարմնույն, բայց ամեն անգամ հուսախաբ կելլեր. վշտագին անձկություն մը դրոշմված էր դեմքին վրա. աչքերն անսովոր ցոլքով կփայլեին, ձեռքը սեղանին կոթնցուցած, կդողար։

Ցավագին հառաչանք մը ելավ կուրծքեն, երբ բազմությունը հատնելով՝ դուռը նորեն գոցվեցավ, իր կապույտ կոնակը պարզելով Հրանտի շողարձակ ակնարկին առջև։

Երիտասարդը ժամացույցը նայեցավ։

— Տա՜սը,—մրմռաց.—բայց ինչո՞ւ չեկավ... կարելի է բան մը եղած է... համբերենք։

Նստավ, ճակատն աճըռելով, որ կայրեր։ Օշարակ մըն ալ բերել տվավ և կուռտ-կուռտ խմեց, տեսակ մը ուժգնությամբ։

— Ուրեմն տասնըմեկին քառորդ մնացածովը,— ըսելով նորեն իր առջի անզգայությանը մեջ թաղվեցավ։

* * *

Անձրևը կշարունակեր տեղալ միօրինակ դանդաղությամբ, տխրություն մը սփռելով չորսդին և մանավանդ սասակացունելով անբացատրելի թախծությունը, որ կսեղմեր երիտասարդին սիրտը։

Հրանտ ոտքի ելավ հանդարտորեն, բալթոն հագավ, գլխարկը դրավ, ծրարները սեղանին վրա շտկեց և սպասեց կազմ ու պատրաստ։

— Անկարելի է, որ սա շոգենավին չիգա,— ըսավ միտքեն։

Նորեն բացվեցավ դիմացի դուռն, ու նորեն բազմությունը դուրս խուժեց։

Հրանտ, շունչը բռնած, ակնապիշ կդիտեր. քանի բազմությունը դուրս ելլար, ցրվեր, այնքան իր էութենեն բան մը կքայքայվեր, կպակսեր. ու երբ վերջին ճամփորդը իր կոնակը կդարձուներ Հրանտին, հեք երիտասարդին ծունկերը դողացին, հուսահատ ինկավ նստարանին վրա, շարժում մը ընելու, մտածում մը ունենալու անկարող։

Բայց ոչ, դեռ հույս մը ուներ. վերջին շոգենավը. գերագույն հոգալ արուն վրիպումը զարհուրելի պիտի ըլլար։

Հրատ նորեն հանեց բալթոն, գլխարկը, ծրարները շոշափեց իր դողացող մատներովն ու օշարակ մըն ալ բերել տվավ։

— Չէ՛, անկարելի է, որ Եվտոքսին խաբե զիս... չէ՛, չէ՛...

* * *

Եվ սպասեց։

Գատը գյուղի վերջին շոգենավը կամուրջին մոտեցավ, և ցանցառ ճամփորդներ սկսան դուրս ելլել, մեծ մասամբ էրիկ մարդ։ Եվ դուռը, ո՛հ, աղետալի դուռը անգամ մըն ալ բացավ իր կլափը, ուսկից դուրս ելլողները կարմիր գույն մը կառնեին Հրանտի աչքին. կյանքը կուտար, եթե վերջին ճամփորդը շարունակ կենար դռանը առջև, իր անհետացումովը առհավետ չփչացունելու համար իր սրտին մեջ թրթռացող կաթիլ մը հույսը, բայց ոչ, անողոք արարածն հեռացավ գնաց, ու կլափը գոցվեցավ չոր, աղետալուր բախումով մը։

Հրանտ ոտքի ելավ, աչքերն արյունացայտ, քունքերն ուժգնաբախ։ Բիրտ շարժումով մը հագավ բալթոն, գլխարկը ուժգնությամբ սեղմեց գլխուն վրա, առավ ամենեն մեծ ծրարը, որուն մեջ կգտնվեր տոմինոն, և ծովահայաց պատուհանին մոտենալով, բացավ զայն ու ծովը նետեց ծրարը. հետո նորեն սեղան դարձավ, իր պրկված մատներովը բացավ մյուս ծրարը, սև սնդուսե դիմակը դուրս հանեց, պատռեց, բզկտեց. նույնն ըրավ նաև անգլիական ծովային գլխարկը և ժողվելով անոնց կտորները՝ ամենը մեկեն պատուհանեն դուրս նետեց։ Հոն գտնվող մեկ քանի անձեր ապշությամբ կդիտեին այդ երիտասարդին խոլ շարժումները։

Հրանտ, որ ա՛լ բան մը չէր տեսնար, ստակը վճարեց և դուրս նետվեցավ այդ դժոխային տեղեն, սեղմ ակռաներուն մեջեն զըսպված կատաղությամբ մը մրմռալով.

— Թշվառակա՜ն, վրեժս պիտի լուծեմ...

Հաղիվ տասը քայլ առած էր, կնոջական թարմ, սարսռուն ձայն մը գոչեց.

— Մյուսյու Հրանտ, ո՞ւր կերթաս։

Մոլեգին շարժումով մը ետին դարձավ երիտասարդն ու մանկամարդ աղջկան մը հետ դեմ դիմաց գտնվեցավ։

— Եվտոքսի՜,— մրմնջեց նվաղուն ձայնով մը,— ո՞ւր էիր։

— Անդիի քազինոն երեք ժամ է, որ կսպասեմ... ա՛լ հուսահատեցա... ու երթալու վրա էի...

Հրանտ երկու ձեռքերը ճակտին տարավ՝ լախտի հարված մը ընդունող մարդու մը պես, բոլոր ջիղերը, որք սաստիկ պրկված էին, մեկենիմեկ թուլցան, սիրտը, որ արյունով լեցուն էր, թեթևցավ, քունքերը, որք կբաբախեին, հանդարտեցան, վերջապես բովանդակ էությունը, որ հրդեհի մեջ էր, հանկարծ զովացավ, անուշ ամոքում մը տիրեց վրան, անդիմադրելի պետք մը ունեցավ սփոփվելու...

Ու լացավ, մանկամարդ աղջկան դեմը, հանդարտորեն տեղացող անձրևին տակ. սփոփարար արցունքներ ողողեցին իր աչքերը, դուրս ժայթքեցին. այո, ահռելի փոթորիկե ազատվողի մը պես, տղու մը պես լացավ, դողդողացող շրթունքներովը մրմնջելով.

— Տոմինո՜դ, Եվտոքսի... ներե՜...

ԾՈՎԱՓԻՆ ԱՂՋԻԿԸ

Ծովին ափունքեն շատ հեռու չէր Հովակին տունը, ծայրն էր այն շարք մը խրճիթներուն, որոնք տարիներ առաջ քով քովի շինված էին, խեղճ ձկնորսներ պատսպարելու համար։ Հրատապ արևին տակ ու ծովի գաղջ ու սառուցիկ քամիներեն խանձած, սպառնացող փլուզումին դեմ զիրար պաշտպանելով, կերպով մը իրարու մեջ ձուլված՝ տակտակներու գալարումներով ու պատերու կքումներով, ամենքն ալ միևնույն ուղղությամբ ծռած կամ դուրս ցցված։ Բնակության այս թշվառ շեղջակույտեն անդին Մարմարան կփռվեր՝ մերթ մրրկածուփ, մերթ հայելացոլ։

Հովակը—ձկնորսները Հովակիմին վերջին երկու տառերը կըրծեր էին՝ անունը դյուրավ արտասանելու համար։ Հովակը է՛ն անվեհեր ու կտրիճ ձկնորսն էր ծովափին. ծնելուն պես ծովին կոծանքը բախած էր իր ականջին, անոր մոլեգին ոստումները, դիվային ցատկոտուքները տեսած էր մանկային շլացած աչքերովը. ու երբ սկսեր էր ճլտորիլ, անմիջապես անոր վազեր էր հրճվանքով ու թևաբաց, խաղալով ալյակներուն հետ, կուրծքը չորացնելով անոր կենսապարգև զովությանը մեջ։ Հետո չափահաս ըլլալով, ծնողքը զանիկա ցուցուցած էին իրեն՝ իբրև միակ միջոց ապրուս-

տի։ Կարթն և ուկանը ժողվելով, նետվեր էր բաց ծովուն մեջ և սկսեր էր ձկնորսություն ընել։

Թարի ու հեզհամբույր տղա մըն էր Հովակ. հայրը մեռած էր՝ երդվընցունելե հետո իր զավակը, թե բնավ չպիտի հեռանար ծովեն, չպիտի թողուր կարթը, որուն շնորհիվ ծնած ու ապրած էր և անհոգդողդ պիտի մնար այդ երերուն պատվանդանին վրա, մինչև իսկ աչքն առնելով անոր գոգին մեջ թաղվիլն հավետ։

Հովակ հավատարիմ ու համառ հետևողն եղած էր իր հոր. ա՛լ անկից ետքը ինք սկսած էր տունն ապրեցունել՝ ամեն առտու կա՛մ ծովեզերքեն, կամ հորմեն ժառանգ մնացած փոքր խրխլիկ մակույկովը ձուկ որսալով։ Իրիկունները, կուժի մը մեջ լեցնելով իր բռնած ձուկերը, փողոցները կշրջեր՝ հզոր պողպատի պես հընչուն ձայնը ձգելով։ Գիշերն ուշ ատեն տուն կդառնար, տանելով մորն ուտեստը և իր խշտեկին վրա երկննալով, մինչև արշալույս քուն քաշելու համար։

Իրենց խրճիթին կից տնակին մեջ սևուկ աչքերով, թնճուկ թուխ մազերով տասնհինգ տարու աղջիկ մը կար, Վարդուկ, որ Հովակին հետ մեծցած էր ծովեզերքին վրա, անոր չափ անվեհեր ու խիզախ։ Երբ պատանի ձկնորսը ծովափին վրա հաստատվեր իր կարթերուն ու եղեգներովը շրջապատված, Վարդուկ բոկոտն, գլուխը բաց, կուրծքն հոլանի, ցատկոտելով կերթար անոր քով ու իր արծաթահունչ ծիծաղներովն ու շարաճճի խոսվրտուքներովը կգրոսցուներ Հովակը, ու նվազ տաժանելի կընծայեր անոր աշխատությունը, կիզիչ արևին տակ։ Պատանին, գորովասիրտ ու նազանդուն, հրճվանք կզգար այս ընկերակցությենեն։ Մտերմությունն հետզհետե ավելի ամրապնդվեցավ և եկավ օր մը, ուր Հովակ տարփանքի բոց մը, սիրավառ ցոլք մը նշմարեց Վարդուկին մթաշող աչվրներուն մեջ։ Սիրտը տակնուվրա եղավ, նոր զգացում մը, խռովիչ ու հաճոյալի, հանկարծ ծավալեցավ իր էությանը մեջ։ Հիմակ ա՛լ չէր կրնար անտարբեր աչքով, առանց վրդովվելու դիտել ծովափին աղջկան անուշ նայվածքներն ու հոլանի կուրծքը։

Անկից ետքը իրեն համար պետք մը դարձավ իր օրական աշխատությանց մեջ գործակից ունենալ թխորակ աղջիկը, որ գրեթե գիտակցությունը ուներ կարծես իր առաջ բերած հրապույրին ու քաղցր ազդեցությանը քաջալանջ ձկնորսին վրա։

Համբույրը, զոր ծփանուտ ջուրերն հարաժամ կուգային տալ

ափունքին, մեղմ մրմունջը, որ առտվընե մինչև իրիկուն և մինչև արշալույս կթրթռար ծովեզերին երկայնությամբը, անսահման հեռանկարներուն ու այլազան հորիզոններուն անչինչ ներկայությունը, սիրո անմերժելի թելադրիչներ էին արդեն, որոնցմե անգիտակցաբար կազդվեին Հովակ ու Վարդուկ։ Օր մը ի՛նչպես եղավ, աղջիկը ոստում մը ըրած պահուն ծովը գլորեցավ. վայրկյան մը իսկ չվարանեցավ Հովակ, ցատկեց ջուրին խորը ու ակնթարթի մեջ ծովեզը բերավ հանեց նվազած Վարդուկը։ Երբ սթափեցավ, իրարու երես նայեցան խորին, գերբնական նայվածքով և զիրար համբուրեցին։

Թեռ մը վերցավ իրենց վրայեն, վասնզի ա՛լ անկից ետքը նեղվելով չպիտի նայեին իրարու, ակներև պիտի սիրեին զիրար։ Իրենց մայրերը ուրախության բացականչություններով խմացան այս լուրը։

Գիշեր մը երկու տնեցիները և ուրիշ քանի մը բարեկամներ ժողվվեցան, պաշտոնական հանդամանք մը տալու անոնց սիրուն։ Ամենքն ալ հավանություն տվին և ժողովրդային բարեմաղթություններով ամրապնդեցին անոնց կապը.

— Իրարու խեր տեսնաք, յավրուներս,— ըսավ Վարդուկին մայրը, աչքերն արցունքով լեցուն։

— Մեկ պարցի վրա ծերանաք, զավակներս,— ըսավ Հովակին մայրը, հանդիսավոր ձայնով, որուն «ամեններով» պատասխանեցին ներկա ծեր ձկնորսներն ու պառավները։

Անկից ետքը նշանված կհամարվեին Վարդուկ և Հովակ. առտուները երկուքն ալ զիրար կդտնեին ծովափին վրա, միասին կարգի կդնեին իրենց կարթերն ու փոքր ուռկաններն, և մակույկը նստելով, կպտրտեին ծովին երեսը, ձուկ որսալով, խնդալով, երգելով, մինչև որ վերջապես արևը ալիքներուն վրայեն ժողվելով իր արծաթաշող ճառագայթները, անհետ ըլլար հորիզոնին վրայեն, այն ատեն կհավաքեին իրենց ձկնորսական գործիքները, Հովակ ձեռք կառներ թիերը, մինչ Վարդուկ մակույկին խելաց կողմը նրստած հիացմամբ կդիտեր կորովի երիտասարդին կարշնեղ բազուկները, որոնք մեքենայի կանոնավորությամբ կշարժեին՝ մակույկը թռցնելով ջուրերուն վրայեն։

Հովակ գիտակցությունն ուներ իր ուզած զմայլանքին ու վիպային ներշնչումներ կունենար՝ իր նշանածին այդ հիացումն օրեօր սաստկացնելու համար։

Հետո եզերք կելլային, ձուկերը կհանեին մակույկեն, զոր Հովակ լեցունելով իր չավելային մեջ, փողոցները կամ շուկան կտաներ ծախելու և արդյունքն իր մորը հանձնելու համար։

Բայց Հովակ, երբեմն անհամբեր, կհարցուներ մորը.

— Տուտու, ե՞րբ պիտի կարգվինք։

— Աճե՞լեդ ինչ է, տղա՛ս, քսան տարիդ լմնցունես, անանկ։

Սիրահար ձկնորսը գլուխը կերերցուներ դժգոհ երևույթով ու չէր ընդդիմանար մորը կամքին, վասնզի իր հորձեռանդն բնավորությունը գոհացում մը կունենար արդեն՝ Վարդուկին հարատև ներկայությամբն իր ամենօրյա կյանքին մեջ։ Խոպան ու արևոտ ծովեզերքին վրա այդ ճլվլացող աղջկան գոյությունը բոլորովին կվաներ ձկնորսի կյանքին ձանձրույթն ու միօրինակությունը։

Կիրակի օրերը, եթե Հովակ գործի պատճառով չհեռանար, երկու նշանածները դարձյալ ծովեզերքն էին՝ զբոսնելով և զանազան խաղեր խաղալով։ Երիտասարդը իր մարմնին ճկունությունն ու ճարպիկությունը ցուցնելու համար, երբեմն վտանգավոր փորձեր կկատարեր, ժայռին գագաթն ելլալով՝ ծով կցատկեր՝ սարսափի ճիչեր կորզելով Վարդուկեն, որ թե՛ հաճույք կզգար, թե՛ երկյուղ։ Եզերքեն դեպ ծով կլմպոշտիկ մը կկատարեր թլփիների նման ու պահ մը անհետանալեն ետք, դուրս կելլեր ջուրեն հանկարծ՝ աղմկալից քրքիջ մը արձակելով սարսափահար Վարդուկի երեսին։

Օր մը սակայն խեղճ տղուն բախտը ձախող գնաց, երբ ժայռին գագաթեն ուժով մը ջուրը պիտի նետվեր, խոշոր քար մը բրբթավ ու իր վրայեն անցնելով, գնաց անհետ եղավ ծովին մեջ։ Ինքն ալ անոր հետևեցավ, բայց որովհետև քարը իր գլուխին զարնվելե հետո անհետ եղած էր, Հովակ ծովին մեջ մխրճելեն ետք ա՛լ երևան չելավ, ինչու որ մեռած էր։ Մարմինը ժայռի մը տակ կառչած մնացեր էր։

Այս ահավոր տեսարանը եզերքեն դիտած էր Վարդուկ, աչքերը կոպերեն դուրս ելած, հեծկլտուքները կոկորդին մեջ խեղդված։

***

Ամեն առտու հոն, ժայռին առջևն է ծովափին աղջիկը՝ մազերը խառնուփնթոր, աչքերը մոլորուն, ձեռքը կարթ մը ունի, զոր ջուրին մեջ երկնցունելով կսպասե համբերությամբ, որ ձուկ մը բռնվի։ Բռնվելուն պես վեր կքաշե կարթը, ասեղեն կազատե ձուկը

և անոր ականջը իր բերնին մոտեցնելով, կամաց մը կհարցունե.

— Ո՞ւր է Հովակը։

Ձուկը մունջ է, պաղ աչքերով աղջկան կնայի, Վարդուկ կըկատղի, քար մը քովը, վրան կդնե անմեղ կենդանին և ուրիշ քարով մը կճզմե զայն, կջախջախե։

Հետո կարթը նորեն՝ կերկնցունե ծովին մեջ ու կսպասե այրող արևին տակ՝ աչքը ճակտին վրա թափթփող մազերուն մեջեն անսահման ծովուն հառած, անշա՛րժ։

Եվ դարձյալ ձուկ մը կբռնվի։

Վարդուկը նորեն բերնին մոտ կտանի զայն ու կփսփսա.

— Հովակը ո՞ւր է։

Պատասխան չկա։ Ու անողորմ քարը կբզկտե ձուկը, արյունին տեսքովը հագեցնելով մոլեգին աղջիկը։

Ժամերով միևնույն բանը կկրկնվի, մինչև որ հուսահատություն ու ձանձրույթ զգա Վարդուկ, այն ատեն կժողվե կարթը, ոտքովը ջուրին մեջ կթափե ջախջախած ձուկերն ու ծովին դառնալով կմրմնջե.

— Վա՛ղը...

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

— Ծո՛, Մկրտիչ, միտքս անանկ պան մը ինկավ քի, էյեր ըսեմ նե, շատ քեֆդ պիտի գա...

— Փարայի՞ պան է...

— Հելպեթ, անանկ չըլլա նե, քեզի կըսե՞մ... հելպեթ փարայի պան է...

— Ամա՛ն, չապուխ ըսե՛, Սերոբ։

Այս վերջինը, որ արևահար դեմքով քսանհինգ տարու երիտասարդ մըն էր, խորամանկ դեմքով, շարաճճի սև աչքերով. հինուսարդ մը

Մկրտիչ, որ մյուսին եղբայրն էր ու անկեց հաղիվ երեք տարու փոքր, ավելի քաջառողջ և խոշոր կազմվածքով, բարեմիտ դիմագծությամբ, միսին վրայեն աղտոտ շապիկ մը հագած, որուն ճեղքվածքեն կերևար հուժկու և հզոր կուրծք մը, ինքն ալ ելավ նստած տեղեն ու պիշ-պիշ սկսավ եղբորը երեսը նայիլ... դեռ պատասխան մը չտված՝ կուզեր իր ըսելիքը լավ մի կշռել, դատել։

— Աղնկ կըսես, ախպա՜ր, ամա... նենե՞ն ուր տանինք։ Ան զավալլը կնիկը հոգի մը ունի՝ տունին վրան է... ընտո՞ր պիտի զատվի անկե...

— Ան ո՞վ մտիկ կընե, անոր համար մենք ամիսը վաթսունեթմիշ ղրուշ խայի՞պ ընենք. փեք չըլլա նե, թեյզեյին տունը կտանինք... հոն ըռահաթ թող նստի... աստար ատեն է մեջն է... ա՛լ կօգտե...

— Էյ, մե՞նք։

— Մենք ասդին-անդին կանցունենք... փեք չըլլա նե, քսան ղրուշի օտա մը կպոնենք... չը՞լլար...

Մկրտիչ նորեն կռնակին վրա փռվեցավ, եղբորը այս գաղափարեն տանջված... տուներնին վարձու տայի՞ն. հապա նենե՞ն, որուն միակ դժխեմարութիւն մնացած էր երեք սենյակով այդ փոքր տունը, զոր ժամանակին իր էրկանը շինել տված էր՝ հոգին բերանը գալով։ Հեք պառավը այդ տան մեջ մեծցուցած էր իր զավակները, իր թոռները. զավակները մեռած էին, էրիկն ալ մեռած էր, ու մինակ երկու մանչ թոռները կային, զորս կխնամեր այն սրտաշարժ հոգածությամբը, զոր մամիկները կրնան տածել իրենց թոռներուն նկատմամբ։ Պաշտում մը ուներ՝ իր տունը. իր վերջացող կյանքը միակ իդեալ մը ուներ՝ տունը։ Տունը, իր էության անբաժան մասը կկազմեր։ Դեռ իր կռնակը կորությունն չուներ, երբ շինված էր այդ տունը, տարիները եկեր անցեր էին, կուզ տալով իր քամակին, ուսերը ծռմռտկելով. չէին խնայած տանն ալ. մեկ կողմը թեթևապես կքեր, վար իջեր էր. տախտակները սեցեր, ճաթռտեր էին, պատերը թուլնալով ճաքճքվեր էին. տունն ալ ծերացեր էր, բայց պառավը չէր նշմարած այս պարագան, որովհետև իր տանը քայքայումը աստիճանաբար, համընթաց կատարված էր։ Ինք կկարծեր, որ նոփ-նոր է դեռ ան, շինված օրվան չափ նոր ու հաստահիմն։ Իր զառամյալի մենամոլությանը մեջ տունեն դուրս չէր ելլեր, վախնալով որ վայրկյանի մը բացակայության միջոցին կռունեն կռանին իր սիրեցյալ

տանը։ Որչափ որ ուժը կներեր, կսրբեր, կմաքրեր զանի անբացատրելի գուրուրանքով։

Եվ հիմակ իր թոռները, գրեթե թափառաշրջիկներ, կմտածեին՝ մեծ ծառի շուքին ներքև ու զովաշունչ հովին դեմը, կմտածեին դուրս հանել հեք պառավն ու վարձու տալ տունը։ Իրենք ալ կզգային իրենց այս որոշումին աղետաբեր ծանրությունը պառավ մամիկին համար. սրտին ցավեն պիտի մեռներ. ու իրենք ալ առանց մամիկի ու հետևապես անխնամ պիտի մնային։ Ի՞նչ փույթ. խնամքին պակասությունը մեծ կորուստ մը չէր իրենց համար, իսկ մամիկին կորուստը, պառավ, հեզ, անուշիկ մամիկին, որ իր դողդոջ թևերուն մեջ մեծցուցած էր զիրենք, սիրտ-փոր հատցնելով, իր բերնեն զրկելով ու իրենց կերցնելով. է՛հ, կնոջ ապրիլը արդեն շարշարանք էր, իսկ մահը փրկություն մը, ու քանի որ տունեն դուրս ելլելուն պիտի մեռներ...

Ոտքի ելան երկու եղբայրները, թոթվըվեցան, մատատանջ, լուռ, չհամարձակելով իրարու նայիլ, խեղճ մամիկին կունտ ու կլոր մարմինը աչվընուն առջև։ Կքալեին գլխիկոր, հինցած ոտնամաններին քսկոտելով գետնի փոշիին մեջ։

Սերոբ կմոլտար երբեմն, սև մտածումները վանելու համար.

— Ամիսը էրսուն ղրուշ մինակ իմ փայիս, գեշ չէ...

Իսկ Մկրտիչ, իր մեծ մորը ցավագին պատկերեն հալածված, կմրմռար, չկարենալով հուզումը զսպել.

— Զավալլը՜ նենես։

Հանկարծ կեցան. երկու կողմը պարապ գետիններով երկհարկ ցած տանը մը առջև կգտնվեին. հոն իրարու երես նայեցան, երկու հանցավորներու պես, և Սերոբ համարձակեցավ ըսել.

— Քերայի պիտի տանք։

— Հը՛,— ըրավ Մկրտիչ։

Լսելով իր թոռներուն գալը, մամիկը բացեր էր տանը դուռը. երկու եղբայրներ ներս մտան. մութը սկսեր էր տիրել, ու պառավը ծխոտած կանթեղի մը լույսին մեջ նստած էր բակին մեկ անկյունը, ցից ատամներով փայտե սարվածի մը առջև և մետաքս կփաթթեր. ոստայնաձև փայլուն թելերուն ետևեն կերևար մամիկին թոմթոկած երեսը, ու նիհար ձեռքը, որ շարունակ կշարժեր չեհրեն։

— Բարիրիկուն, նենե՛,— ըսին երկու եղբայրները, երկչոտ ձայնով մը։

— Աստծու բարին, զավակներս։ Փառք տիրոջը, ասոր ալ ողջ առողջ տուն եկաք։

Գացին քովը նստան։

Ի՞նչպես խոսքը բանալ պառավին։ Եթե հանկարծ ցավին սաստկութենեն կաթվածահա՞ր ըլլար։

Մկրտիչին գործը չէր. արդեն կանիծեր Սերոբը՝ դրամի այդ անդիմադրելի փորձության զինքը մատնած ըլլալուն։ Ոստի Սերոբ խոսք առավ.

— Նենե՛, հալերնիս կիտես... գործ չիկա... հոգինիս պերանիս կուգա կոր, մինչև քի հացի մը փարա կճարենք կոր նե... մեզի պես տելիխանլըներ աստար փարայով կըլլա՞ն. դուն մերին տեղը ըլլաս նե՝ ի՞նչ կընես... ասոր սո՞նը... ճար մը մտմտալու... Մենք մտմտացինք՝ կտանք... ամա նայինք դուն խայիլ պիտի ըլլա՞ս...

Մամիկը, որ ուշադրությամբ մտիկ ըրած էր, վեր առավ գլուխը, հետաքրքրվելով այս փոքր ճառեն։

— Զավակներս, ես ծեզի համար ամեն պանի խայիլ կըլլամ... ըսե՛ք նայիմ՝ ի՞նչ է։

Սերոբ վարանեցավ. եղբորը երեսը նայեցավ, հազաց, կըմկըմաց, շուրթերը շարժեց և ըսավ.

— Նենե՛, աս անանկ պան մըն է, քի, էյեր չէ ըսես, չըլլար... տահա աղեկ է, քի հիմակվընե հա ըսես... մենք մտմտացինք, քի... աս տուներնիս մեզի համար շատ մեծ է... անոր համար խելք ըրինք քի, էյեր քիրայի տանք նե, քիչ մը փարա կասնի ծառվընիս...

Մամիկը, որ թուշը ձեռքին վրա դրած մտիկ կըներ, թոթվըվեցավ, աչքերը մոլեգին բոցով մը վառվեցան և դողդոջ ձայնով մը պոռաց իր թոռներուն երեսին.

— Աշխարհք մեկտի կա, ես տունես չեմ զատվիր. հատե՛ք պաներնիդ կացե՛ք։

Սերոբ բարկացավ. ադ սոսկալի համառ պառավը իրենց դժբախտության պատճառ կըլլար։

— Էյեր տուն խայիլ չըլլաս նե, մենք զոռով քիրաճի պիտի ըլլանք հոս... մենք քեզի համար անոթի-ծարավ չենք կրնար մնալ։

Ու երկու եղբայրները, հաստատամիտ, առին քալեցին տունեն։

Մամիկը առանձին մնաց նորեն, իր սարվածին առջև, մետաքսին դեզերուն մեջ, չեհրեն ձեռքը, սառած դեմքին վրա անսահման տրտմությամբ մը, զոր խորշոմներեն դուրս կցայտեցներ կանթեղին մթաշող երերուն լույսը։ Ականջին մեջ կըզգային թոռանը վերջին զարհուրելի խոսքերը. «զոռով քիրաճի կպերենք»... Այո՛, միտքը դրած էր, անդրդվելի պիտի մնար. տունեն դուրս ելլալ... բայց տանը սեմին առջև իսկ գերեզմանին փոսը կսպասեր իրեն՝ զինքը կուլ տալու համար։ Խելքոտած էին իր թոռները, ետքեն պիտի խելքնային անշուշտ. չէ՛, սուտ էին, կատակ ըրած էին իրեն հետ։ Այս մասին ապահովվեցավ. սիրտը, որ ուռած էր, հանգըստացավ։

Բայց մետաքսը փաթթելով հանդերձ, պառավը հիմակ լալագինորեն կմռլտար.

— Տո՛ւնս, տո՛ւնս, տո՛ւնս։

***

Ամառվան հրաշունչ տաք մը կըներ. արևը մամիկին տունը իր կրակե հեղեղին մեջ ողողած էր բոլորովին։ Հեք պառավը միսմինակ էր, տխուր՝ հակառակ ինքն իրեն տված մխիթարանքներուն։ Տղաքը դեռ երևցած չէին գիշերվընե ի վեր. ինչո՞ւ տուն չէին դարձած։

Ցերեկվան մոտ մեկեն ի մեկ տանը բաց դռնեն ներս մտան Մկրտիչ և Սերոբ՝ երկու ուրիշ մարդոց հետ։

Վարձվորներ էին. տուն տեսնալու էին եկած։ Մամիկի երեսն իսկ չնայեցան. երկու եղբայրները զանոնք պատեցուցին տունը, գովեցին անոր հատկությունները, բարեմասնությունները բացատրեցին և վերջապես համոզեցին այդ մարդիկը, որ վարձեն իրենց տունը ամիսը 70 դրուշի։ Սակարկությունը եղավ լմնցավ, կմնար տունը պարպել ու մաքրել։

— Առջևի ամսականը փեշին կուզենք,— ըսին երկու եղբայրները։

— Շատ աղեկ։

Զա՛ր սատանա. կարծես մամիկին թշնամություն մը ընելու դիտումով՝ այդ վարձվորները ամենեն ծանր պայմանները կընդունեին։

— Վաղը կկրվի՞ք,— հարցուց Սերոբ։

— Չէ՛, վաղը ձեր կարասիները և սա պառավը հանեցե՛ք, մեկալն օր մենք կուգանք։

Պառավը դուրս հանել. ու ասիկա մամիկը իր ականջովը կլսեր սանդուխին ստորոտեն, ուրկե սառն անտարբերությամբ մը, աչքերը լայնաբաց, լուռ ու մունջ, կդիտեր այդ մարդոց բոլոր շարժումները և կլսեր անոնց խոսքերը, ի մասին այդ ահավոր սակարկության։

Վերջապես վարձվորներն ելան գացին Սերոբին ու Մկրտիչին հետ, որոնք մեկնած ատենին ըսին իրենց մամուն.

— Վաղը քեզի թեյզեին տունը պիտի տանինք, հազիր եղիր։

Պառավը չպատասխանեց. մինակ չարաշուք ժպիտ մը անոր շրթները կծկեց։

Կես գիշերն անցած էր. լուսին չկար. ջինջ մթություն մը ամեն կողմ և հով մը, որ մեղմորեն կսուլեր փողոցներուն մեջ։

Մամիկին տունը կայրեր անձայն, անշշուկ, չորս կողմեն բոցերով շրջապատված։ Խեղճ պառավին տունը ազատելու համար շատ ուշ էր արդեն, երբ թաղեցիները վազեցին այրող տան շուրջը։

Ամենքն ալ մեկ աղաղակ մը արձակեցին միաբերան.

— Մամիկը...

Հրդեհին լուրը տարածված էր, և հեռավոր թաղերեն կվազեին կուգային, որոնց մեջ նաև Սերոբ և Մկրտիչ, ափ ի բերան մնացին, երբ տեսան իրենց տան բոցավառ ահարկու վիճակը։

Տունը, զոր առջի օրը վարձու տված էին, կայրեր. հապա պառավ մամի՞կը։ Գոնե զանիկա ազատեին։ Բայց անկարելի էր ներս մտնել։

— Նենե՛, նենե՛...

Իբրև պատասխան այս կոչին, տան վերնահարկի մեկ պատուհանը, որ դեռ բոլորովին պաշարված չէր բոցերեն, հանկարծ բացվեցավ և մամիկին թոմթռկած դեմքը երևցավ, ճերմակ մազերը գլխուն վրա խուվացած, բոցերեն լուսավոր։

Երկու թոռները զայն տեսնելուն պես սկսան պառալ կանչվռտել.

— Նենե՛, նենե՛...

Նենեն տեսավ զանոնք և իր մատովը սպառնագին շարժումներ կըներ իր ապերախտ թոռներուն, որոնք գինքը դուրս նետել կուզեին իր սիրական տունեն։

— Չէ՛, թեռպե, նենե՛, քիրայի չենք իտար, վա՞խ, նենե, վար նեռվե՛, նենե...

Երբ վերջին բոցը եկավ իր ալիքին մեջ թաղեց այն պատուհանը, ուր կեցած էր մամիկը, վրեժխնդիր պառավը՝ իր գիվային աչքերը բոցերու մեջ, կաս-կարմիր, հառած իր թոռներուն վրա, տակավին իր մատովը կսպառնար անոնց...

ՔԱՐԻՆ ՆՇԱՆԸ

Շագանակագույն ծաղկենկար կերպասներով պատռտված էր սենյակը, կոկիկ ու մաքուր. բոլորշի սեղանին վրա կանանչ գորգ մը փռված էր. լամպար մը, լուսամփոփով հովանավորված, իր ջինջ պայծառությունը կզեղուր սենյակին ստորին կողմը, վերին անկյունները մեղմ մթության մեջ ձգելով։ Սեղանին մեկ կողմը թիկնաթոռի մը վրա նստած էր քառասունոց կին մը, գիրուկ, քաղցր դիմագծությամբ, խարտյաշ մազերուն մեջ ցանցառ ճերմակ թելերով, որոնք մասնավոր հրապույր մը կտուանային լույսին մեջ, արծաթի պես շողալով։ Դիմացը նստած էր երիկ մարդ մը, հազիվ քառասունհինգ տարու, հերաթափ գանգը մարմարին հղկությամբ փայլուն. հանդարտ դիմագծերը թեթև հեգնություն մը կցուցնեին, առանց զնասելու իր բարի ու կորովի արտահայտությանը։ Սեղանին ծածկոցին վրա գիրք մը բացած՝ շարունակ կթղթատեր, մերթ զորովալիր ակնարկ մը նետելով իր կնոջը վրա։

Հանկարծ սրտնեղության շարժում մը ըրավ, գիրքը գոցեց և խոնջենքի հառաչ մը արձակելով՝ թիկնաթոռին մեջ ամբողջ մարմնովը բազմեցավ՝ գլուխը հետև նետած։

— Սուրբի՛կ, ա՛լ կօգտե որչափ բանեցար. այդչափ աշխատությունը, մանավանդ գիշեր ատեն, աչքերուդ կվնասե... քիչ մը խոսինք։

Կինը, առանց ձեռագործը ձգելու, վեր առավ գլուխը և իր սև խոշոր աչքերը ամուսնին վրա հառեց գգվանքով։

— Դարձյալ կրնանք խոսակցիլ,— ըսավ,— իմ աշխատությունս արգելք մը չէ, մանավանդ որ Հուսեփիկիս համար է, ժամ առաջ լմննալու է...

— Անուշիկ Հուսեփի՛կս,— մրմնջեց ամուսինը և հարցեց,— գիտե՞ս, Սրբուհիցա, մեր Հուսեփը տակավին վեց տարու չկա, քովի պստիկ աղջկան հետ ան ինչ հարգանքներով կվարվի կոր-

կարծես սիրահարություն ընելու միտք ունի. օ՜հ, հիմիկվան տղաքները...

— Ասանկ մի՛ ըսեր, սիրելիս, ամեն ատեն տղաք այդ զգացումները կունենան, բնութենե, կազմվածքե կախում ունի... մարմինին արագ աճումը և զգացումներուն զարգացումը այդ երևույթը առաջ կբերեն. դուն մանկությանդ ի՞նչպես էիր։

— Շիտակ միտքս չէ,— պատասխանեց ամուսինը՝ խորհրդավոր քմծիծաղով մը,— իսկ դուն Հուսեփիկ մը ունեցա՞ր պստիկությանդ։

Կինը պահ մը ընդհատեց ձեռագործը և անանկ նայվածք մը տվավ աչքերուն, որ հայտնի էր, թե հին, շատ հին հիշատակներ միտքը բերելու ճիգ մը կքներ։

Հետո ըսավ, աչքերը հրճվանքով մը զեղուն.

— Ես ունեցա իմ Հուսեփիկս, երբ ութը տարու էի. մենե քանի մը տուն վար կնստեին. ընտանեկան հարաբերություն չունեինք, բայց անոնց փոքրիկ տղան, Օննիկ, տասը-տասներկու տարեկան չարաճճի մըն էր։ Ամեն իրիկուն, դպրոցեն դարձին, մեր դիմացի փոքր մարգագետնին վրա միատեղ կխաղայինք, քանի մը ուրիշ փոքր տղոց հետ։ Օննիկ մասնավոր համակրանք մը կցուցուներ ինծի. պաշտպանի հովեր կառներ ու չէր թողուր, որ մյուս տղաքները չարչրկեն զիս. իր հովանիի տակ առած էր։ Իսկ ես, հակառակ սիրո այդ տաք ցույցերուն, թեև հակում մը կզգայի անոր համար, բայց ինծի նեղություն կպատճառեին իր չարաճճի սև պճլտացող աչվքները։ Կուզեի վզին փաթթվիլ և համբուրել, սակայն երբ քովս մոտենար, խույս կուտայի՝ կարծես ինքզինքս ավելի ըղձալի ընծայելու համար։ Պիտի զարմանաս, որ ութ տարու աղջիկ մը ի՛նչպես կրնար այս նուրբ զգացումները զգալ։ Իրավ, ճշգրիտ գիտակցությամբ չըլլար ատիկա, բայց բնազդը, ինչպես կենդանիներուն, նմանապես դեռ բանականութենե զուրկ փոքր էակներուն վրա գրեթե նույն սաստկությամբ կարտահայտվի։ Մեծ հոգ կտանեի պչրանք ցուցնելու Օննիկին՝ անոր զմայլական նայվածքները գրավելու համար. խոտին վրա իրարու ետևե վազվռտած ատեններս, երբ թևերը բացած վրաս հասներ, սարսափելի ճիչեր կարձակեի. խեղճ տղան սահմռկած կմնար, չհասկնալով, թե ինչո՛ւ այդքան չկամությամբ կվարվեի իրեն հետ։

Մինչ կխոսեր տիկին Սուրբիկ, ամուսինը խորին ուշադրությամբ մտիկ կըներ, արմունկը թիկնաթոռին հենակին վրա և ծնոտն ալ ափին մեջ։

Հիմակ, կինը կշարունակեր ձեռագործը, քիչ մը ավելի տենդոտ արագությամբ, այս հեռավոր անուշ հիշատակին վերաբերումեն հուզված։

— ...Երբեմն Հուսեփիկիս վրա նայած ատենս միտքս կիյնա խեղճ Օննիկը. օ՜հ, կարծես ան է. նույն պճլտացող աչքերը, նույն չարաճճի շարժումները։ Ու հիմակ իրավամբ երեսիս կզարներ իմ բռնած ընթացքս, սիրտս կցավի այնքան չարչարելուս հեք Օննիկը։ Շատ անգամ, երբ ձեռքը դրամ անցներ, անմիջապես շաքար կառներ և ինծի կուտար ուտելու. հաճույքով կդիտեր իմ ուտելս. ու երբ, զիս վերջապես շահած ըլլալու հույսով, ձեռքը կերկնցներ գլուխս բռնելու՝ «աղվորիկս» ըսելով, ճիչ մը կարձակեի ու կփախչեի. հայտնի բան էր, որ այդ պստիկ տղան կտառապեր. բայց ինքն ալ անշուշտ չէր դիտեր տառապելուն պատճառը...

Իրիկուն մը դարձյալ դպրոցեն արձակվելնես հետո, մեր սովորական զբոսավայրը գացի. ու տեսա, որ միայն Օննիկը հոն էր. մյուս տղաքները չէին եկած. ուզեցի ետ դառնալ՝ մինակ ձգելով Օննիկը, բայց անիկա ձեռքը թուղթ մը շաքար՝ քովս եկավ և ինծի տվավ. ամեն ժամանակ ավելի կվառեին իր աչքերը, զորս ըղձանքով վրաս կհառեր, մինչ ես շաքարները հատիկ-հատիկ բերանս նետելով կուտեի, անզգա այն հաճույքին, զոր իրեն կպատճառեի. այնչափ զբաղած էի շաքարներովս, որ չկրցա տեսնել, թե չարաճճին քովս մոտեցած էր կամաց-կամաց, ետևես հանկարծ պրկում մը զգացի վզիս շուրջը, ու թաց, կրակոտ շրթներ այտերուս փական, ու, համբույրներու տարափ մը... Ի՞նչ եղա այն վայրկյանին. պոռալ ուզեցի, չկրցա, կխեղդվեի. բազուկներս կշարժեի այդ սոսկալի սեղմումեն ազատելու համար։ Վերջապես ձգեց զիս և սկսավ փախչիլ. կատաղությենես շարժած՝ քար մը առի գետնեն ու ետևեն վազելով գլխուն նետեցի. Օննիկ աղեխարշ ճիչ մը արձակեց, երկու ձեռքը գլխուն տարավ, որ սկսած էր արյունիլ, իսկ ես խույս տվի ու ա՛լ անգամ մըն ալ չգացի հոն։ Քիչ հետո մենք ելանք այն գյուղեն և ուրիշ տեղ գացինք...

Մինչև հիմակ ականջիս մեջն է հեք Օննիկիս կսկծալի աղաղակը. արդյոք ո՞րքան անիծեց զիս, և սակայն մանկությանս ամենեն անուշ հիշատակն է աս...։

Ու տիկին Սուրբիկի թուխ աչքերը ամուսնին դարձան՝ տքրտամագին արտահայտությամբ մը, թրջած կոպերով։

Այն ատեն ամուսինը, դեմքը երանագեղ ժպիտով մը զվարթացած, ելավ տեղեն, կնոջ մոտեցավ, գլուխը ծռեց անոր առջև ու ծոծրակին մազերը բանալով՝ հարցուց.

— Կճանչնա՞ս սա ճերմակ նշանը։

Ու երբ կինը նայվածքը այդ կետին վրա սեեռած էր անբացատրելի ապշությամբ մը, ամուսինը ավելցուց.

— Նետած քարիդ նշանն է...

ԵՎՆԻԿԵ

Հուլիսի առաջին օրերեն Եվնիկե մոր հետ ծով մտնել սկսավ, բժշկին պատվերին համեմատ։ Եվնիկե անանկ աղջիկ մըն էր, որուն համար ոմանք գեղեցիկ է կըսեին, իսկ ուրիշներ անշնորհք կգտնեին զինքը։ Առաջին գնահատումը կբխեր փափկաճաշակ երիտասարդներե, իսկ երկրորդը՝ մանկամարդ աղջիկներե։ Իր կաթի պես ճերմակ դեմքին հոծ միսին մեջ լողացող կապույտ աչվրները, խրոխտ ու արհամարհոտ նայվածքով լեցուն, սարսուռ կպդեին զինքը դիտողին։ Հասակը երկար, բարեձև, հրապուրիչ ճկունություններով։ Ձայնը բյուրեղի հնչյունով, թափանցիկ։

Մայր ու աղջիկ, առտու-իրիկուն, ձեռվընին մեյմեկ ծրար, գետեղը կիջնային, նավակ կնստեին փոքր փլփլված նավամատույցեն և դիմացի կղզեկին վրայի բաղնիքը կերթային։ Երկու ծերուկ նավավարներ փոխն ի փոխ հանդիպակաց եզերքը կփոխադրեին բաղնիք մտնողները. օրվան մնացյալ մասը կանցընեին գետափնյա սրճարանը, նավակներնին կապած խարխուլ նավամատույցին մեկ ձողին։ Մեկը կար սակայն, որ հոն կապված կմնար շարունակ,— Սամիկ աղբարը։ Կարճուկ մարդ մըն էր, շատ կարճուկ, երկար սրունքներով և թևերով, որոնց մեջ իր պատառ մը ձև խորդուբորդ իրանը գորտի մը մարմինը կհիշեցներ։ Ո՛չ երիտասարդ ըլլալը հայտնի էր, ոչ ծեր. մազերը անորոշ գույն մը ունեին, երեսը արևեն էրած-թխացած, աչքերուն անհանգիստ փայլը շեշտելով։ Իր ամբողջությունը, լուռ և անթափանց, կրնար երկյուղ պատճառել նախապաշարված մարդերու՝ ծովային հրեշ մը կարծվելով։ Ամառները միայն երևան կելլեր, ինչպես խլուրդը։

Գարնան, մեկեն ի մեկ զինքը, օրին մեկը, նստած կգտնեին նավամատույցին վրա, ձեռքը ակիշավոր ցուպ մը, իր միակ հարբստությունը, ու սիրած միակ բանը գուցե։ Այդ փայտին կտորը իր մարմնին մեկ մասն էր կարծես։ Ամեն վայրկյան կզկտիկ եղած, ծալլված ծունկերը կրծքին վրա ամփոփ, ճակատը ցուպին հենած, կմնար արևին տակ, գետակին հետաշունչ մրմունջին դեմը, անքանի համբերությամբ։

Սակայն, նավակ մը մոտենալուն պես, Սամիկ աղբար կցցվեր նավամատույցին վրա և ցուպը կերկնցներ նավակը բռնելու և միջինները դուրս հանելու համար անվտանգ. ոմանք երբեմն տասնոց մը կդնեին խեղճին ափը։ Երբ ոգևորությունը շատ ըլլար, Սամիկ քիչ մը կխոշտանգվեր. տղաքները ցուպեն կքաշեին, և ուրիշները կհրմշտկեին զինքը։ Բայց ան համբերությամբ կտոկար, երբեմն խուլ մոլտուք մը արձակելով։

Առաջին առտուն, որ Եվնիկե մորը հետ նավակ նստավ նավամատույցեն, կուզիկը տեսնելով՝ ըսավ մորը պժգանքի ծամածռումամբ մը.

— Մայրի՛կ, սա տգեղ մարդը նայե՛, մարդուն սիրտը գեշ կբլա...

Եվ գլուխը անդին դարձուց։

Վերադարձին, մանկամարդ աղջիկը նորեն տեսավ ցավագարը, որ խենթի աչվրներով իրեն նայեցավ։ Եվնիկե սոսկաց, գուրս ցատկեց նավակեն և աղաչեց մորը, որ մեյ մըն ալ այդ մարդը չբռնե իրենց նավակը։ Սամիկ, որ լսած էր, աղջկան նայեցավ ողորմուկ նայվածքով մը, որ սիրտ կխշխշացներ։

* * *

Հովը կսուրար գետակին վրա. ալիքները, մանր-մանր արծաթաշող, կխաղային արևին տակ, իրարու ետևե, անհատնում։ Սամիկ իր տեղն է, ցուպին հետ, ականջ տալով քարերուն վրա փշրվող ալյակներուն մրմունջին։ Հանկարծ կշարժի, կկենա։ Եվնիկեն ու մայրը երևցան է՛ն հեռվեն. կմոտենան. կուզիկը, գյուրաշարժ, կեռը կանցընե նավակին, ու մայր ու աղջիկ կհեծնան։ Այս անգամ մայրը տասնոց մի կապրդեցնե ցավագարին ափը։

— Մա՛յր, կարծե՞ որ գրամ տաս այս անպիտան մարդուն,— ըսաւ կուտա Եվնիկե։

— Մեղք է, աղջի՛կս։

— Օ՜ֆ, հապա ջիղերս, որ թունդ կելլան, երբ այդ մարդը տեսնամ։

Վերադարձին, Սամիկ դեռ այն տեղը կեցած էր արձանի պես։ Երբ դուրս ելան, կուզիկը ձեռքը կուրծքին, ակնարկը պաշտոնական, մրմռաց.

— Ողջ ըլլաք, հանըմնե՛ր։

Իրիկունը, տան մեջ, Եվնիկե հայտարարեց, որ ա՛լ ծով չուզեր երթալ, վասնզի այդ ծովը փոխանակ իր ջիղերը հանդարտեցնելու, ավելի կգրգռեր. մայրը, ակամա, տեղի տվավ։

Եվ հաջորդ օրը ծով չգացին։ Սակայն, չորս օր ետքը Եվնիկե նորեն փափագ հայտնեց ծով երթալու։ Մայրը ասոր ալ համակերպեցավ։ Հոն, նավամատույցին վրա, կուզիկը իր կարթգել սրունքներուն վրա տնկվեցավ, և արագությամբ մը, որ իրմե չէր սպասվեր՝ կեռը անցուց նավակին, ու մայր ու աղջիկ անցան։

Այս անգամ Եվնիկե, վշտակի դեմքով, տասնոց մը դրավ ցավագարին ափը։

— Ապրիս,— մրմնջաց Սամիկ՝ դրամը ճակտին տանելով։

***

Գետեզերքի նավավարները կզարմանային, որ ա՛լ հիմակ Սամիկ առջինը չէր. ցորեկները, գործ չեղած ատեն, կերթար մոտակա սրճարանը, կխոսակցեր նավավարներուն հետ, կխնդար իսկ։

Եվ օրիորդը հիմակ մեծ հաճույք կզգար՝ տասնոցը տալով Սամիկին, որ կհամբուրեր զայն ու ճակտին կտաներ ջերմեռանդությամբ, «շատ ապրիս» մը նետելով։

Բայց Եվնիկե օգուտ չէր քաղեր ծովի լոգանքեն. գուցե այդ նավամատույցը կքանդեր իր մեջ՝ ինչ որ ջուրը կշիներ։ Մյուս կողմե, բժիշկը կհամառեր ծով ղրկել աղջիկը։

Իրիկուն մը, նավակ մտած պահուն, երբ տասնոցը կդներ կուզիկին ձեռքը, սա արագ շարժումով մը ծռեցավ և իր գարշելի շրթները փակցուց Եվնիկեին սպիտակ գիրուկ ձեռքին. աղջիկը սուր աղաղակ մը արձակեց, զզվանքի, սոսկումի աղաղակ մը, և միևնույն ժամանակ ուժով մը հրեց կուզիկը, որ գնաց թավալեցավ

նավամատույցին վրա, ոտքերը օդին մեջ, ցուպը չորս քայլ հեռուն։

Երբ Սամիկը ոտքի ելավ, նավակը հեռացած էր արդեն. կուզիկը, անխոսուկ, առավ ցուպը նորեն և կզկտեցավ, տրտում տխուր։

Վերադարձին, կուզիկը ա՛լ ոչ տեղեն ելավ, ո՛չ ալ նայեցավ մանկամարդ աղջկան։

***

Հաջորդ իրիկուն, երբ մայր ու աղջիկ նավամատույց եկան, հոն չէր Սամիկ աղբարը։ Նավավարին հարցուց Եվնիկե.

— Հը՛, ան զավալլը,— պատասխանեց մարդը,— երեկ գիշեր գաղտուկ գացեր է կնիկներուն բաղնիքը մտեր է՝ վլասվելու համար... ետքեն չէ կրցեր դուրս ելլել... խեղդվեր է... աս առտու լեշը կտանք... ազատեցավ...

Նավակը չնստավ Եվնիկե, բռնեց մոր թևեն և ետ դարձուց զայն, տխրորեն մրմնջելով.

— Մա՛ր, ա՛լ ծով չեմ մտնար. ջիղերս հանդարտեցան։

ՁԱՆԳԱԿԱՀԱՐԸ

— Ձը՛նկ, ը՛նկ, ը՛նկ... տը՛նկ, տը՛նկ, տը՛նկ...

Խեղճ կուզիկին անվախճան հանկերգն է աս. փողոցները դանդաղ-դանդաղ ժուռ եկած ատեն, գինովի ինքնամփոփ, ինքնամոռաց գնացքովը։ Ճռռած մարմին մը ունի, խորդուբորդ, ճղճիմ համեմատություններով, վրան գլուխը թափթփված է. կնմանի կյանքեն ձանձրացածի մը, որ ինքնասպանության պիտի դիմե։ Տեսած ատենդ անպատճառ կարգահատիս իր վրա ու ձեռքը ողորմություն մը կդնես։

Կոնակին կուզը, ոսկորի ցավագին ժայթքում մը, կարծես բոլոր մարմինը կաշկանդած, գալարած, չորցուցած է։ Խեղճ տղան ընկճված է այդ անմերժելի բեռան տակ, զոր գիշեր-ցերեկ հետը կպտտցնե։ Իրեն ծանոթ թաղեն անցած պահուն, երբ պատուհանե մը իրեն սա՛ հրավերը ուղղվի.

— Միխա՛լ, երգ մը երգե,— կուզիկը կկենա, կժպտի խելագարի ժպիտով ու աջ թևը, ծառի գոս անհյութ ճյուղ մը, կսկսի երերցընել շարժումով, մինչ կոնակի կուզը ասդին-անդին կտրորվի քրքրվելու սպառնալիքով. ու այդ հիվանդոտ ժպիտը միշտ շուրթերուն վրա, աչքերը կիսախուփ, քունին մեջ զառանցող մարդու մը պես, կերգե, ձայնը տկար կուրծքին հևքովը շաղշարված.

— Զը՛նկ, զը՛նկ, զը՛նկ... տը՛նկ, տը՛նկ, տը՛նկ...

Այս վանկերը իրարու ետևե կգլորին՝ ողբական եղանակի մը վրա շղթայված։ Այնքան կհափշտակվի, որ եթե ձգես, ժամերով կշարունակե իր թևին շարժումը ու ողբագին երգը։ Հարկ է ըսել իրեն. «Կոգտե, Միխա՛լ»։ Ան ատեն, կարծես սթափած, կկենա, կառնե իրեն տրված ողորմությունը ու ճամփան կշարունակե, միշտ մրմռալով սակայն։ «Զը՛նկ, զը՛նկ...»։

Զանգակի զողանջին այս մղձավանջային նմանության մեջ էր Միխալաքին կյանքին տոամը, զոր պիտի պատմեմ։

Թաղին հույն կատակասեր, չարասիրտ աղջիկներուն զվարճության առարկան եղած էր Միխալաքին, Այ-Նիքոլա եկեղեցիին հիվանդոտ, կուզիկ զանգակահարը։ Այս եկեղեցին կարծես միջին գարու ճիզվիտական ջերմեռանդության մեկ վաղնջուց նշխարքն է. անոր երկար մարմինը հողին մեջ թաղված է ու, երբ սանդուխներեն վար իջնալով բարեպաշտ խորհրդանկարներով հարթ քանդակված արուլրե դռնեն ներս մտնես, երկրին տակեն եկած խոնավ զովություն մը, սարսուռ մը կուտա ջիղերուդ։ Վարը, տաճարին մեջ, ուր լույսը վերի պատուհաններեն կիյնա՝ չկրնալով այդ խորության անկյուններեն բոլոր մութը վանել սակայն, հին բյուզանդյան բույրե մը կազդվիս. հանդարտ, կույս մաքրության մեջ յուղաներկ պատկերները պատերուն վրա՝ առջևին կանթեղներով՝ կփռեն խանդավառող քրիստոնեականություն մը։ Սուրբերն ու առաքյալները՝ իրենց նկարներուն մեջեն՝ Քրիստոսը կքարոզեն սրտառուչ մրմունջներով։ Ստեղնավառ ջահերը՝ ձեղունեն վար խունկե ու աղոթավոր շունչերե թխացյալ պղնձի փողերով հոդավորված, այդ անիսով կուսական խաղաղության մեջ գիտես թե կրոնքի միստիկությունը կմարմնավորեն։

Փոքր զանգակահարը, զոր թաղին աղվոր հելլենուհիները անվնաս կերպով կխոշտանգեն իրենց ծաղրածություններովը և ցավցրնող քահքահներովը, հոն կանցըներ գրեթե իր համշոտ պատանեկությունը։ Իր մարմինը, ոսկորներու աղետալի թեքության մը մեջ խեղդած, տձև, մաներ, նիհար զանգված մ'էր, զոր բարակ ճերմակ մորթ մը ամեն կողմե պաշտպանած, թող չէր տար, որ ապաժամայն քրքրի։ Զախ ուսոսկրը առաջ մղված էր, ու ընդհանրական աչքը թեև բնական շիտակություն մը ուներ, այսուհանդերձ ծուռ կերևար, ձախ անրակը հիմնովին ավրած ըլլալով թիկունքին վերնամասին ամբողջ բնական շինվածքը։ Սրունքները բան մը չունեին, գոնե այնպես կերևային իրանին խառնափնթոր կծիկին տակ, միայն այնչափ բարակ էին, որ քիչ մը շուտ քալած ատենը կկասկածեր, թե անոնք կրնային փրթիլ, իյնալ։

Միխալաքին այդ գետնափոր ժամուն մեջ մեծցած տղա մ'էր. գուցե ժամանակին գթասիրտ ժամկոչի մը կողմե գտնված՝ իր եկեղեցիին դռնեն կախված կողովի մը մեջեն։ Ան տեսակ արարածներեն էր, որոց երբ երևան գալը, կամ երբե՛ն ի վեր գոյություն ունենալը չես հետաքրքրիր գիտնալ. անոր գոյության գիտակցությունդ արդեն բավական կսեպես։ Եթե նույնիսկ փորձվեիր թաղեցիի մը հարցնելու, թե Միխալաքին ո՛ր տեղացի էր, պիտի պատասխանվեր քեզ.— Այ-Նիքոլացի։

Ուստի, փոքր կուզիկը, որուն տարիքը կերպարանքեն կամ դեմքեն դիտելով անհնար էր հասկնալ, վասնզի 10-են 20 տարիներուն մեջ պիտի վարանեիր, փոքր կուզիկը եկեղեցիին մեջ ու եկեղեցիով կապրեր, բայց կապրեցներ ալ զայն, վասնզի անոր զանգակահարն էր։

Զանգակատունը փայտե աշտարակիկ մ'է քառակուսի, խույրանձև տանիքով, որուն ծայրեն երկաթե փշփշանքավոր խաչ մը իր ժանգոտած սև թևերը կտարածե օդին մեջ։ Տանիքին տակ, իր ժանգոտած սև թևերը կտարածե օդին մեջ։ Տանիքին տակ, մինչև ուսերդ ելլող սանդուղքեն վար դարձող։ Յուրաքանչյուրին ձուլածո ուռնակեն առասան մը անցուցած է, որ կծառայե զայն շարժելու, երբ զանգակահարության ժամն հասնի։ Զանգակներուն ամեն մեկը մասնավոր ներդաշնակություն ունի. երբ երեքը միահամուռ սկսին զողանջել, եռաձայն երաժշտություն մը առաջ կուգա. թավ, բամբ, հնչուն։

Միխալաքին էր անոնց երաժիշտը։ Խանդավառորեն փաթթված հարած էր իր զանգակներուն։ Իրմե զատ ոչ ոք կրնար դպչիլ անոնց։ Եկեղեցիեն ավելի այդ ձայնարկու աշտարակիկը կըպաշտեր։ Ան իր կուռքն էր։ Տգեղ ու շլացող հոգիին մեջեն այդ ներդաշնակ զողանջյունները կնշմարեր իրրև երկնապարգև ռեմ-

յամեներ կրոնի պաշտամունքին։ Պատկերե, խունկի գինովցուցիչ բուրմունքն, երգեցողության սրտահույզ դաշնավորություններն ավելի ազդեցիկ, տիրական, թելադրական կդավաներ իր զանգակներուն եռանվագ համերգը, որ իր զվարթ, հնչեղ, արձագանքող ալիքները կանցներ տարածության մեջ, երկարաձիգ, անսահման ջրցայտի մը արծաթափայլ վարսերուն պես, զորս արևին ճառագայթները կծիածանեն։

Մանր կապույտ աչքները, որք իր երեսին անարյուն ու դեղնորակ մորթին վրա տխրության ցոլք մը կպտտցնեին միշտ, խանգի հաղթանակի, երջանկության կայծեր կարձակեին, երբ զանգակատան տանիքին տակ թառած, կծկտած, կնվագեր առավոտյան կամ իրիկնամուտի մերթ թախծոտ, մերթ ցնծուն կոչնակահարությունը։ Հոն՝ վերացած էր խեղանդամը. երեք զանգակներուն թելերը մասվքներուն անցուցած, կուզը ավելի դուրս, ցից, շունչը ընդհատ, աչքերը սևևռուն, ամբողջ էությունը կեդրոնացուցած իր լսողության մեջ՝ մեկ խազի մը իսկ ըմբոշխնումեն չզրկվելու համար, կշարժեր իր թևերը, մեծ զանգակին թավ ու միօրինակ զողանջումը կետկիտելով միջին զանգակին քիչ մը ավելի նուրբ հարվածներովը, ու այս ներդաշնակ երկձայնին՝ հավասար, անայլայլ ընդմիջումներով՝ խառնելով երրորդ զանգակին վճիտ, պղընձային գանդյունը, որ օդը կճեղքեր սուր, արագաթռիչ, ոստոստուն։

Իր այդ երանական զողանջավոր գահավանդեն կուզիկը հափշտակված, վերացած, տենդագրգիռ, ամպերու մեջ սլացող արծիվի գինովությամբը առլի, կկարծեր թերևս ըլլալ խորհրդավոր պարիկը քրիստոնեության, որ այդ բարձրութենեն իր տավիղին հորդելակ դաշնակություններովը կհրահրե ժողովրդային բարեպաշտությունը։ Զանգակներուն ցնծագին, մերթ լացող ձայնարկությունը կապրեցներ իր տխրաթաթավ հոգին, որ այդ ծոմակած անհարթ պատյանին տակ կծածկվեր այնքան դյուրաբորբ ու դյուրազգաց։ Մարդկային անկարեկիր հեգնությունը, որ ամեն տեղ ու ամեն ատեն կհալածեր զինք՝ քստմնելի հաճախանքի մը պես, լայնափռեռկ վիրավորելով իր էությունը, դառնության թույն մը խառնելով անոր մեջ ընդդեմ անողոք ճակատագրին, որ այդ մթին ու անանվանելի կազմությունը տվեր էր իրեն, կդադրեր հոգ, այդ աշտարակին կատարը, խելխոլ ծնծղահարության արբեցումին մեջ, մարդոց չար ծիծաղեն ու ծաղրող նայվածքեն վեր, անդորր ու մաքրաշունչ այդ մթնոլորտին մեջ։

Թաղին աղջիկները, կսիրեին խեղճ զանգակահարը, բայց իրենց սերը արտահայտելու տարբեր եղանակ մը ունեին. խաղեր կընեին իրեն ու կծաղրեին զինքը։ Միխալաքին, այն տխուր համակերպությամբը, զոր ընդհանրապես կունենան իրեն վիճակակից գժբախտները, անայլայլ, անմռունչ կտոկար ամեն ծաղրանքներու, և իր կողմե ցույց տրված այդ անտարբեր ու թույլատու անզգացությունը ավելի կգրգռեր, կասստկացներ զանոնք։ Բայց կատակի մը չէր հանդուրժեր ամեններին. երբեք հարգանքի պակասություն չպիտի գործվեր իր զանգակներուն հանդեպ։ Անոնք նվիրական էին։ Անոնց կապված էին իր ջիղերը նուրբ, զգայնոտ լարերով. զանոնք խառնածիդ պես կցնցվեր ինք, կզայրանար, կընդվզեր։

— Միխալաքի, դուն ինչ ծույլ տղա ես, զանգակներդ ժանգոտեր, սեցեր են, մե՞ղք...

Այս խոսքը կբավեր, որպեսզի տժգույն սապատողը ամբողջ մարմնովը դողար, աչքերը անսովոր կերպով կայծկլտային և արյուն խուժեր այտերուն գունատությանը վրա։ Եվ ինք, որ ամեն օր մասնավոր հոգածությամբ կմաքրեր զանգակները, կքերթեր, կըփայլեցներ զանոնք, չժուժելով այս անիրավ դիտողության, տենդոտ վազքով մը կերթար մագլցիլ զանգակատան վրա և աչքի անցընել զանգակները, զորս կքններ, կփայփայեր, և համոզվելե ետքը, թե անոնք մաքուր ու անեղծ կմնային, վար կիջնար արհամարհանքի բառեր մ՚ալ տալով զինք գրգռողներուն հասցեին։

Բայց ամեններն ավելի կիրակի ու տոնական օրեր տեսնալու բան էր կարճուկ զանգակահարին ուռուցիկ խրոխտանքը, երբ ինք՝ զանգակատան կատարը թառած՝ զգայնոտ խաղեր կթոցներ անկից ձեռքի խիզախ ու հպարտ շարժումներով, աչքերը հաղթականորեն ուղղած վարը, բակին մեջ խռնվող բազմության, մանավանդ աղվոր հելլենուհիներուն, որք կհաճեին իրեն վերցնել արգահատանքով խառն զմայլանքի նայվածքներ։ Խեղճ Միխալաքի, պիտի ուզեր, որ հոգ այդ վերացած դիրքին մեջ մնար հավերժապես, մոռցած ամեն բան, իր տգեղությունը, մարդոց արհամարհանքը, արգահատանքը, հեգնությունն, ինչ որ ամեն ատեն կսկիծի բոց մը կվառեր իր տխեղծ ու ազազուն պատյանին տակ, ուր սակայն զգացում և գիտակցություն զուգորդաբար կբաբախեին։

Սակայն իրիկուն մը զարմանալի բան մը պատահեցավ։ Մթնշաղին, երբոր եկեղեցիին գետնամած մարմինը խավարի առա-

ջին ալիքներուն մեջ սկսած էր մեղմացնել իր շրջագծերը, ու աշտարակիկին տակ զանգակները գոգաձև անորոշ իրերու ձև կառնեին, հանկարծ լսվեցավ տարտամ ղողանջ մը, որ իրիկնամուտի անդորրության մեջ տարտամ կերպով թրթռաց։

Վայրկյան մը ետքը հոն էր Միխալաքին՝ խելացնոր, զայրույթեն դողդոջուն։ Հակառակ իր տենդին, զգուշորեն վեր ելավ, և այն պահուն, որ զանգակատան խորշը պիտի մտնար, աղաղակ մը թռավ կոկորդեն։ Ագռավ մը սև, քստմնելի, որ թառած էր աշտարակիկին ներքին կողմնակի հեցակներեն մեկուն վրա, սապատողին մոտենալը տեսածին պես, արագաթռիչ հեռացած էր՝ թևերու շոր բախմամբ։

Սապատողը, արձանացած, հիշոց մը արձակեց։

Մարդերեն հետո, ահա ագռավ մը կուգար կատակել մեր հեքսապատողին հետ։ Եվ ի՞նչ կատակ։ Չարաճճի բնազդով մը թռչունը իր կտուցով քաշած էր զանգակին լարը, ու զանգակը ձայնած էր։ Խուլ կատաղությամբ լցված, Միխալաքի սպասեց հոն ժամերով, մուլինալեն շատ ետքը, ագռավին վերադարձին սպասեց՝ վրեժ լուծելու համար։ Բայց անիկա չեկավ։

Հետևյալ օրը, թաղին մեջ, ուր խմացված էր անակնկալ ղողանջը, հետը ինկան սապատողին։

— Միխա՛լ, խենթեցա՞ր, ի՞նչ եղավ... ա՛լ խելքիդ փչած ատենը զանգա՞կ կզարնես կոր... կվայլե՞ քեզի...

Խեղճ տղան խպնելով ըսելու, թե ագռավ մը խաղ խաղացած էր իրեն, ձայն չհանեց։ Բայց թռչունին դեմ ոխը սաստկացավ։ Եվ միտքը դրավ ագռավ մը տեսածին պես վրեժ լուծել։ Բայց աղետալի կատակը վերջացած չէր, հաջորդ իրիկունը, ագռավը վերադարձավ, և մեծ հաճույք զգաց զանգակին լարը քաշելով, այս անգամ ավելի սաստիկ։ Սապատողը ա՛յնքան շուտ վազեց, որ երկու-երեք անգամ գետին գլորեցավ...

Հետևյալ օրը ըսին իրեն.

— Միխա՛լ, ամոթ չէ՞ քեզի, որ զանգակներուն հետ կխաղաս։

Մինչև իսկ եկեղեցիին քահանային ականջը հասավ գործը։ Մարդը կանչեց սապատողը և խստիվ պատվիրեց, որ լրջությամբ կատարե իր զանգակահարության պաշտոնը։ Տղան դեղնեցավ, կակազեց, բայց երևան չհանեց գաղտնիքը։ Փոթորիկ մը կդառնար իր մեջ։ Մյուս օրը, երեկեցիին բակը նստած, շարունակ երկինքը գիտեց, անցնող դարձող թռչունները լրտեսելով և անիծելով զանոնք։ Այն իրիկունը ագռավին գալստյանը սպասեց աշտարակիկին մեջ. իր ափ մը մարմինը պլորված կկծկվեր զանգակատան մեկ անկյունը, գրեթե աննշմարելի դառնալով։ Բան մը չի կրա դարձես հոն։

Մթնշաղին ագռավը եկավ անկասկած, մտավ աշտարակիկին տակ ու թառելով իր սովորական հեցակին վրա, կտուցը երկնցուց լարին, բայց վիզը դեռ անոր չհասած, ձեռք մը եկավ ակնթարթի մեջ բռնեց զայն ու գալարեց։

Խեղդուկ կռինչ մը և ուրախության խենթ աղաղակ մը լսվեցան։

Ու խավարին անծայրածիր վերարկուն ծածկեց ամեն բան։

***

Առտուն, երբոր եկեղեցիին ժամկոչը բակը կավլեր, դիպվածով վեր նայեցավ և զարմանքեն ապշած մնաց։ Միխալաքին՝ զանգակատան գերաններեն մեկուն վրա նստած, ոտքերը վար, ձեռքը գտնված թռչունի մը փետուրները կփետտեր ծանր-ծանր։ տեսակ մը գուրգուրանքով, շուրթերուն վրա հիմար ժպիտ մը։

Վար ադին զինքը ատկից բավական դժվարությամբ, վանդի՛լ չէր ուզեր իր զանգակներեն բաժնվիլ։ Ու տեսան, որ խենթեցեր է։

Ոչ ոք բան մը կուահեց. թող տվին զինքը։ Ու առավ քալեց։

Այն օրեն ի վեր փողոցները կպտտի, կուզը ավելի շեշտված, ավելի նիհար, մարմնին խեղությունը օր-օրի ավելի սաստկանալով։ Ու երբոր հրավիրեն զինքը, որ բան մը երգե, կկենա, ձեռքը կսկսի տատանել ու միանգամայն իր նեղ, վտիտ կոկորդեն ճիչեր, գանչյուններ կելնեն, որք տարօրինակ կերպով կնմանին իր երբեմնի զանգակներուն ղողանջներուն։

— Ջը՛նկ, ջը՛նկ, ջը՛նկ... տը՛նկ, տը՛նկ, տը՛նկ...

ՀԱՄԲԻՆ ՎՐԵԺԸ

Կատվի ողորմուկ մլավումներ կծանուցանեն անոր պժգալի մերձեցումը, երբ փողոցին անկյունեն դառնա, ամեն իրիկուն՝ մուրը ոտքերուն մոտ, զազիր տեսարան մը կպարզվի. քուրձ մը, որ

մինչև դնդղուցները կերկարի, կծածկե կոշտուպլոշտ, հաստկով մարմինը, թշվառության և աղքատության մեջ գիրցած ու յուղոտած, ճիտը, ցլային թանձրությամբ, ծոծրակին վարոքեն սկսած մինչև մազոտ թուխ լանջքին մոտ, որ ահավոր հեքով մը կելլակիջնա միշտ, կերևա բաց ու մրկած, ջիղերու և երակներու բիրտ ու վայրագ հյուսվածք մը հանկարծ դուրս կցատկե լայնշի ուսերեն, բռնելով՝ անտաշ պատվանդանի մը պես՝ անհեթեթ գլուխ մը՝ տարօրինակ, հիմարական բան մը, որ կերերա, բորենիի դիակնախույզ վայրենի օրորումով։ Բերանը բաց է, ցուցնելով ապուշ ծիծաղ մը լայնցած կաշեգույն շրթներուն մեջ լղճուկ ակռաները, տեղտեղ կոտրտած, ու այդ նեխոտ խոռոչին մեջ միշտ կունտուկլոր կեցած է մսի կարմիր կտոր մը՝ տզրուկի լպիրծ մորթին վետվետումներովը, թանձրացած լորձունքի ճերմակությամբ մը ծեփված, և որ մերթ, չկարծած ատենդ, դուրս կպոռթկա մինչև թուշը, զոր կլզե, կանցնի կդառնա, նորեն շուրջը, միջոցը կլզվոտե, բան մը փընտրելու պես, զոր չի գտնար, ու կամաց մը կսլքի, կմտնա իր խոռոչին մեջ, քիչ ետքը նորեն դուրս երկննալու ու շարժումները կրկնելու համար։ Կապիճներեն դուրս վիժած սաստիկ խած աչքերը ցավոտ արցունքով միշտ ճպռոտած, ամենեն տխուր ու գարշելի տպավորությունը կթողուն տեսնողի վրա, իրենց անասնական արտահայտությամբը սևեռուն են անոնք, կգամվին կմնան տեղ մը, համառ թափանցությունով մը, բայց կան վայրկյաններ, ուր անոնք կելլան իրենց կանաչ անշարժությունեն, ու ճերմկուցները հիմարորեն կթավալին, կգլորին, կդառնան, կարծես առանցքի մը վրա ամրապես ագուցված։ Ականջները բուի թևերու պես, կերկննան գլխուն երկու կողմերեն, քիչ մը կորանալով բրդե գունատ ու հին գդակի մը տակ, որ ամբողջ գանգը կպարտկե։

Քուրձին ներքին մերկ սրունքները կերևան, խանձած ու ճեղքըռտված, ու ոտքերը, լայն, ահագին, տափակ, կոշկոռոտ մատվընևրով, որ ամառը փոշիի կույտեր կկոխկոտեն ու ձմեռը սառ, ձյուն, ցեխ։

Բնությունը, որ այս աստիճան անողորմաբար ժլատ հանդիսացեր էր այս խեղճ մարդուն ֆիզիկական կազմակերպությանը համար, ահռելի կատակով մը լսելու և խոսելու կարողությունն ալ զլացեր էր անոր։ Ու այսպես անիկա՝ միսի ու ոսկորի հրեշային շաղախ՝ ամբոխին սովորականության մեջ տգեղության քստմնելի պատկեր մը կպատցներ, իր ֆիզիկական ապաշնորհության վրա

ատելություն ու սիրտխառնվուք միայն հրավիրելով։ Շարժուն գլակ մը պիտի կարծվեր ան, երբ երբեմն կսկծեցուցիչ ճիգով մը, որ ատեն աչվընները տարապայման կընդլայնեին ու ճիտին քունքին երակները կուռեին, կցկտուր կաղկանձյուններ ու խոճկորի խանչյուններ շարձրկեր, զորս կկերկերեր իր լեզվին խոլ շարժումներովը, դուրսը, օդին մեջ։

Համրը, սակայն, մուրացկան մը չէր, և ո՞վ պիտի ուզեր ողորմություն տալ իրեն, քանի որ արգահատանքի տեղ նողկանք միայն կազդեր։ Ամեն մարդու պես առուտուրով ապրող մարդ մըն էր։ Ոչխարի աղիք կծախեր։ Բռնած արհեստն ալ իրեն պես աղքատ։

Աղի՞ք, օ՜հ, տեսնելու էր զինքը իր աղիքներուն հետ. դասակներեն ու մատներեն վար կախված էին անոնք, թաց, կակուղ, լպրծուն, օձի պես իրար փաթթված, խառնված, անծայր, անվերջ գալարվածք մը մսի, արյունի, փորոտիքի։ Բայց ատիկա էր իրեն միակ հաճույքը, զոր կարենար վայելել աշխարհի լիաբուռն հաճույքներու մեջ։ Տեսակ մը հեշտությամբ կգրկեր իր աղիքները, անոնց կակուղ ցուրտ հպումեն անբացատրելի վայելք մը զգալով, կսեղմեր, կտրորեր զանոնք իր մատներուն մեջ անոնց թացությունը կշոշափեր՝ իր վայրենի մարմնուն անճառ զգայագրգռություն մը բաշխելով։ Մինչև իսկ, ու իր կատակն էր ասիկա— երբեմն իր բաց կլափին մեջ կմխրճեր զանոնք հեղակարծ շարժումով մը, հետո հետ կքաշեր կոկորդային սուր կռինչով մը, որ պահ մը սարսափահար ընկրկել կուտար կատուներու ճչացող, զզվըտող, սովալլուկ բանակին։ Երբոր իրեն ու իր աղիքներուն կծու հոտը առնեին, պատերե, ցանկերե, պատուհաններե խենթի պես վար կնետվեին, համրին շուրջը պար կդառնային աղերսելով, ողբալով, մերթ նենգորեն հարձակում մը հանդգնելով։ Բայց անիկա երկայնամիտ համբերությամբ կտոկար այս անդուլ թախանձանքին, խոլական հալածանքին, նույնիսկ չես գիտեր, ինչ հաճույք մը, տեսակ մը գոռոզություն կզգար ինքզինքը շրջապատված, հետապնդված ու ըղձացված տեսնելով եթե ոչ մարդերե, որ խույս կուտային իրմե, գեթ անոթի կատուներե։

Ու այսպես կանցներ ամեն իրիկուն, մթնշաղին, աղիքները կախ տված թևերն ի վար, մերթ ինք իր մեջ ամփոփված՝ թշվառության պատկերը քալեցնելով ամբոխին մեջ, մերթ լեզուն դուրս, աչքերը թավալուն, ատամները ցցված, հրեշության տիպարն ար-

ձանացնելով, մինչ կատուները ետևեն, քովեն, առջևեն անվախ-
ճան պաղատանքը կփռեին։

Անկյունը այն փողոցին, ուսկից համրը կանցներ սովորա-
բար, կգտնվեր ցածուկ խանութ մը նպարավաճառի, ստացվածքը
ութսունամյա ծերունի բուլգարի մը, որ առտվընե մինչև իրիկուն
իր խոնջ ու պառված մարմինը կծկտած կհանգչեցներ ալյուրի,
լուբիայի, սուրճի պարկերու անթափանց պատնեշի մը ետին։
Ինք իր այդ անշուք գահույքեն մինակ աչքի հսկողություն մը ի
գործ կդներ, խանութին գործը ձգելով իր աղջկան, քսանը անցուկ,
սիրուն բուլգարուհի մը, որ ամեն ճիգ կթափեր իր զառամ հորը
նեղսիրտ դիտողություններուն չենթարկվիլ։ Աշխույժ հաճոյակա-
տարությամբ կվարվեր հաճախորդներուն հետ, որոնք քմահաճո
զեղումներ չէին կրնար ունենալ՝ ակնածելով ծերուկին աններող,
սուր նայվածքին խոժոռությենեն, անանկ որ նպարավաճառուհին
միակ հաճույքը՝ իր առուծախի միօրինակ ու ձանձրալի զբաղման
մեջ՝ իր կատուն էր, պստլիկ, կունտլիկ անասուն մը, գոհարը իր
ցեղին, երկար խիտ մազերու փափուկ ճերմկությամբ մը հանդեր-
ձավորված, աշխույժ, ցատքտող, կատաղի, մոլի, գզվանք ու փայ-
փայանք գրգռող շարաճճի կատկություններով, որոնք ծերուկի
անհանդուրժելի խստության քով ցայտուն հակապատկեր, անոր
սաստկությունը կմեղմացնեին։ Կանաչ աչքերուն կայծովը ու մանր
թաթիկներուն, ղվարթության շունչ մը կպատցներ պարկերու,
տակառիկներու, դարակներու համառ անշարժության շուրջը։ Աղ-
ջիկը սրտանց կսիրեր իր կատուն, որ հտպիտի ոստումներ կըներ
անոր գլխուն, ոտքերուն, ձեռքերուն վրա։ Գրկին մեջ կսեղմեր
զայն, ափերուն մեջ գորովանքով կթալթլեր, ծոծրակին խարտյալ
մազերուն կքսեր՝ մինչ ան կխաղար այդ ոսկի թելերուն հետ,
խածխծելով, ճանկելով առանց ցավցնելու. ու իր սիրելու խան-
դին մեջ կորսված, խելահեղ, կպագներ անհագությամբ անոր
աչուկները, թուշը, բերանը, մարմնույն ամեն կողմը, ուր որ հան-
դիպեր, հետո կշտացած, կնետեր զայն պարկի մը վրա. անասնիկը
այդ գիրկընդխառնումեն սահմռկած, խելացնոր, շնչասպառ կթոթ-
վրվեր, կփորնգտար, կքթվտեր, կլզվրտեր։

Ամեն իրիկուն, երբ անցներ համրը իր աղիքներու բեռին հետ,
կոչունք ուներ փիսիկը։ Նպարավաճառուհին, ակամա, հակառակ
իր սաստիկ պժգանքին, կատուին սիրուն, կկանչեր համրը և ման-

ուք դրամի մը փոխարեն աղիք կգներ։ Մեծապես կզվարճանար,
դիտելով իր կատուն, որ ճանկերովը մոլեգնաբար կիյնար փորա-
ոիքին վրա, փոքր պեխերը ցցած, մոլտալով, լափելով, լափիլ-
ելով։ Մյուս կատուները, անոնք, որ սիրական տեր մը չունեին՝
այդ խնջույքը իրենց հրամցնելու համար, կշատանային աղիք ծա-
խողը հալածելու հաճույքով, ավելի կգրգռվեին իրենց ցեղակցին
եղած այդ ըմբոստացնող անձնաշնորհումեն ու ավելի մոլեգնու-
թյամբ կհետապնդեին հրեշին ետևեն իրենց ողբագին լացը շա-
ռունակելով։

Իրիկուն մը, սակայն, համրը, որ ընդհանրապես մեքենաբար
կառներ դրամը աղջկան ձեռքեն և առանց երեսը նայելու կուտար
ոիքին կտորը ու իր ճամփան կշարունակեր երերտալով, հան-
կարծ իր կանաչ ու թավալուն աչքերուն ամբողջ խենթությամբը
անոր երեսը նայեցավ։ Մանկամարդ բուլկարուհին սոսկումի ու
նեղկանքի ընկրկում մը ունեցավ, բայց զսպեց ինքզինքը. ի՞նչ,
կրնար վախենալ այդ ցավագարեն, որ ամեն կարողություն զրկ-
ված էր, և որ, անշուշտ, գիտակ մը նայվածքին անհաճո տպա-
վորությանը, շուտ մը առավ քալեց, թեթև կոինչ մը արձակելով,
որ իր քով հառաչի նշանակությունը ուներ։ Հաջորդ երեկոյին,
համրին նայվածքին մեջ, զոր ուղղեց աղջկան աղվոր դնմքին, հայ-
բատ ըղձանք մը կվառեր, ու տեսնելով անոր զզվանքի խոժոռ
ծամածռումը, լեզուն շաղեցուց բերնին մեջ, ուսկից կերկերուն
ձայն մը ելավ, տեսակ մը աղերսանքի ավաշ, որ խղդվեցավ կո-
կորդին մեջ։ Նպարավաճառուհին բան մը չհասկնալով, աղիքին
կտորը առնելուն պես ներս փախավ, կատուն գիրկը, որ կճշար՝
բերանը կաս-կարմիր բացած։

Ա՛լ անկեց ետքը, ապուշը, փոխանակ սպասելու, որ կանչվի,
ինքը կերթար կկենար խանութին առջև, աղիքի երկար, առատ
կտոր մը առաջուց պատրաստած, ավելի մոտենալով աղջկան,
աչքերը անհագ պագշտությամբ մը ցոլարձակ, շրթները՝ հաճո-
յական ժպիտ մը ձևացնելու չանքին մեջ՝ վայրենորեն ընդլայն-
ված. քիչ-քիչ, աղջիկը վարժվեցավ համրին այն տարօրինակ ձե-
վիքուն, որոնք վնաս մը չունեին իրեն և որոնք, անշուշտ, հաճույ-
քի սատարներ էին այդ խեղճ ցավագարին, ամեն վայելումե, ամեն
ուրրշությունե հավետ զրկված։ Ուստի ձայն չհանեց, բայց զգու-
շացավ քաջալերել զայն, թույլատրել անոր մեծ հանդգնություն-

ներ, սահմանափակելով զայն իր մարմնին տառապեցնող շարժարանքին չեզոքության մեջ։

Դժբախտաբար, շնորհագեղ աղջկան թույլատրված այս վայելքովը բավականանալու առաքինությունը չունեցավ Համրը, իրեն ցուցված ներողամտությունը գրգիռ մը կարծեց։ Մանրուք դրամին փոխարեն իր տված աղիքին կտորը հետզհետե շատցավ, երկնցավ և հասավ անանկ համեմատության մը, որ կատուն իր փորիկը կշտապինդ ուտեցնելե ետքը, կարևոր մաս մըն ալ կավելցներ, որ աղջիկը վհանձնորեն կնետեր դուրսի կատուներուն կճուտող ակռաներուն ու թեև ինք նշանացի կհասկցներ աղիքին տարապայման քանակը, բայց Համրը տալու, ամեն բան տալու մարմաջով բռնված էր։ Եվ իրիկուն մըն ալ, Համրը, ջղային զգայնականության բորբոքումե մը մղված, աղիքը հանձնելե հետո, իր լայնյուղոտ, գարշելի ձեռքը հանկարծ երկնցնելով, բռնեց աղջկանը ճերմակ լեցուն կշակը։ Աղջիկը սարսափահար, ճիչ մը արձակեց ու ներս փախավ խանութեն։

Հաջորդ իրիկունը, անշուշտ, սպասելով թե ինչ ընդունելություն կսպասեր հոն իրեն, Համրը փողոցին մյուս եզերքեն անցավ, գողի պես, աղիքներովը բեռնավորված ու շեղակի արագ ակնարկով մը խանութին նայեցավ, որուն դրան առջև ա՛լ ո՛չ աղջիկը կար, ո՛չ կատուն, ու ներսը պարկերուն ետին, ծերուկ պապային խոժոռ, ահարկու կերպարանքը միայն, որ գավազան մը կցուցներ իրեն սպառնագին։

Կատուն իրիկունները, նույն ժամուն, շատ ճչաց, մլավեց, տապլտկեցավ իր տիրուհիին թևերուն մեջ. իզուր, ընդմիշտ զրկված էր իր առօրյա ռոճիկեն։

Համրը, օրեր անցնելե ետքը, ի զուր խանութին մոտեն անցավ, փիսիկին աչքերուն առջև ցուցադրելով իր փորոտիքներուն ախորժագրգիռ կապոցները։ Մանկամարդ աղջիկը, անկարեկիր, աններող, իր գեղեցիկ աչվրներուն անարգական շանթովը, վանեց խեղճ Համրը, գիրկը բռնած իր սիրական կենդանին, բանի տեղ չդնելով անոր ճչոցներն ու ճանկռտուքները։ Իր դեմքին եղած պրոծության վրեժը կլուծեր։

Համրը հուսահատվեցավ, բայց ոխ կապեց։

Իրիկուն մը, կատուն, օգտվելով իր տիրուհիին զբաղած մեկ

վայրկյանեն, դուրս վազեց, մինչ Համրը կանցներ, ինք ալ մյուս կատուներուն հետ սկսելով ուտելիք պահանջել։

Ապուշը տեսավ կատուն, կեցավ, շուրջը դիտեց ու կայծակի արագությամբ աղիքի կտոր մը հանեց կատուներուն ոհմակին, որոնք մեկ թափով խուժեցին անոր վրա, ճանկերնին դուրս։ Հետո, վագրի ոստումով, ցատկեց, բռնեց աղջկան կատուին ծոծրակեն, սեղմեց անոր կակուղ վիզը իր ջղուտ մատներուն մեջ, աչքերը թավալելով մոլեգնությամբ, լեզուն դուրս ցցած՝ օձի լեզվի պես, խեղդեց կենդանին, որուն խաժ աչվրները դուրս ցատկեցին կապիճներեն. հետո մոտեցավ դիմացի պատին, զարկավ, ջախջախեց անոր բրդոտ գանգը, արյունը, ըղեղով խառն, դուրս պոռթկաց ու զարկավ, զարկավ անոր, խանչյուններ, կառաչներ արձակելով, մոլեգնելով այդ ափ մը միսին վրա, որ ա՛լ անճանաչ կույտ մը եղած էր արյունաշաղախ. խածավ, փրցուց անոր կակղիկ մանր թաթերը, ծամեց, դուրս նետեց, արյուն թքավ, ու երբ ա՛լ բան չմնաց խեղճ անասունը հայտնող, ճզմեց, աճըռեց, արյունոտ խմոր մը ձևացուց, և վայրագ ծիծաղով մը դարձավ խանութեն ներս նետեց զայն, հետո անճոռնի քրքիջով մը անցավ, ճամփան շարունակեց։

ԱՐՅԱՆ ՈՒԺԸ

Գավառի գրգռոտ տարազներու նախշուն խնկավետությանը մեջ իր ոսկրուտ ու պաղվցած իրանը պարտկած, անմոռանալի ցավերու և կորուստներու էլեկտրականության տակ իր գլուխը մշտօրոր, անիկա կզկտիկ կըլլա, կտոտոզվի ժամուն բակին մեջ, ժամվորներու անցքին վրա, ամեն կիրակի առտու, ամառ-ձմեռ։

Անպատճառ, բայց անպատճառ գոնտիկ-կլորիկ տղեկ մը կա կուրծքին կառչած, կայծկլտուն խաժ աչուկներով՝ իմացականությամբ և կյանքի վաղահաս գիտակցությամբ մը տրտմորեն վառ, որոնք իրերուն ու անցորդներուն վրա կհածին տեսակ մը թարթափուն երկչոտությունով։ Կինը իր դողդոջ բազուկներուն մեջ խանդաղատանքով սեղմած է մանուկը, որուն կդառնան մերթ իր ցավագին նայվածքները, եթե չուղղվին անցորդներուն՝ մուրացության պաղատանքը լալու համար։

Երբեմն, սակայն, ուրիշ երկու լաճեր ալ, համեմատապես իրարմե մեծ, չորսի կբարձրացնեն այդ տխուր խմբակին թիվը։

Իրենց պզտիկութեանը մէջ կորովի ու քաջակազմ, տղեկները պառաւ մամիկին շուրջը կճլվլան, ինչպես վառոյակները հավին կառուցին տակ։ Ու աղապատանքով խառն համակրություն մը կաելըցվի մեջդ այդ վաչկատուն ընտանիքին ցավագին կազմակերպութեանը հանդեպ, որուն վրա կմղվիս տեսնել մեկ նմուշը Հայաստանի քանդված, տարտղնած ընտանիքներուն, փչող թունավոր խորշակեն վարատական։

Օ՜հ, իր մանտրտիկ թոռներուն մեջտեղ հևացող գավառացի այս հեք մամիկին նայվածքը... ցավին քերթվածը կողբերգվի հոնչ հայրենիքի կործանած օջախին կսկիծը կբյուրեղանա, ու անկեց կաթող աղեբսանքը սիրտդ կծակե սլաքի մը պես, անիրավության մեծագույն տոամին դեմ ամենեն ահարկու բողոքը կժայթքե ան։

Ու գավառացի այս մուրիկ կինը անմոռանալի հերոս մըն է։ Երբոր խորշակը կառնե կտանի տուն-տեղ, զավակ, հարս, ամեն բան, երեք մանրուկ թոռները իրենց պառավ մամուն ճիտն ի վար կախված կմնան։ Ծեր հայուհին, իր յոթանասուն տարիներուն բեռը արհամարհելով, կոնակը կառնե երեք լաճերն ու համառ գորովով մը ու կատաղությամբ ալ լցված, քարե քար կզարնվի զանոնք մեծցնելու համար։

Օտար մարդորսներ, որոնք դիակի մը վրա իջնող ագռավներու քստմնելի աշխուժով ամենուրեք երևցան, ուր հայ մը կար գողնալիք կրոնքովն ու ազգությամբը, կտեսնան խեղճ հայ պառավը իր ճիժերու ծանր բեռին տակ, կերկնցունեն մագիլնին.

— Տո՜ւր,— կըսեն,— այդ տղաքը մենք մեծցունենք։

Մամիկը, սիրտը արցունքով ու վրեժխնդրության կրակով հրդեհված՝ ահարկու ձայնով մը. «ո՜չ,— կմռնչե,— չեմ ի տար թոռներս»։

* * *

Գավառացի այս խեղճ կնոջ բերնով ամբողջ ցեղի մը արյան ուժն է, որ երևան կուգա, ազգության գաղափարին կույր, անպատրվակ փարումը, վայրենորեն սուրբ այն խանդը, որ հայ կնոջ նկարագիրն իսկ է և որ անհիշատակ դարերու, անցյալի թոհուբոհին մեջեն ցեղը բերած հասուցած է մինչև հիմակ։ Հայուհին իր արյան, միսին ու ոսկորին չերմորեն հայրենասիրական շաղըղվածքովը հավատարիմ, անխոնջ և անշշուկ սատարն է եղած մեր ցեղային շենքին անխարխար պահպանմանը՝ հսկա ցնցումներու, կործանող կատաղություններու դեմ։

Հայ կի՜նը. նվիրական, պաշտելի մոլեռանդն է ան, որ իր կենսահորդ էությանը մեջ, ցեղային բնազդական ինքնապահպանության հուժկու կորովին մեջ կուռճացնե, կվերբենձյուղե մեր հայրենիքին բեղմնավորման բոլոր ոստերը, զորս բիրտ վայրենություն մը կհոշի, կհաշմե հարաժամ, և որոնք շարունակ պտի արտադրեն ցեղն ապրեցնող հյութը, ցորչափ հայ կինը մնա նույն տաք, եռացկոտ սիրտը, նույն անվհատ մատակարարը անապակ ու աշնիվ արյան։

Գավառացի այս հետին կինը, իր թանձր տգիտությանը մեջ, ազգության պայծառ գաղափարին պլլված, կքած կարեվեր ցավերու մտրակումին տակ քինախնդիր, այդ վայրագ մերժումը հշպրտե ներկայացած օտար մարդասիրության երեսն ի վեր, չհաբեկելով այն ճնշող ծանրությենեն, զոր երեք հայ մանուկները կբերեին իր կքած, հևքոտ թիկունքին վրա։ Անիկա իր սեռեուն մտածությունն ունի. ամեն գնով թող չտալ, որ այդ երեք մանուկները, որոնք իր շունչին տակ կրնան ապագա բոցեր ըլլալ հայրենի երկնքին ներքև վրեժխնդրությամբ գալարուն, երթան ավելցընել ահռելի կորուստները, զոր կրեցինք և պիտի կրենք։ Անիկա կխորհրդապատկերե հայ կնոջ պատմությունը, շարշարանքով և հյուծումով ապրված արյունոտ դարերու պատմությունը, սերունդ-սերունդ փոխանցելով իր խանդակաթ, արգասավորող, կենսապարգև արյունը։

Կնոջ այս վսեմ տիպարին առջև պաշտամունքով խոնարհի՜նք, վասնզի ա՜ն իր ծոցին մեջ անշեջ պիտի պահե հուրը, որ ազգերու կյանքը կապրեցնե։

ԿԱՂԸՆԴՁԵՔԸ

Խնամքով ծալլելե հետո թղթիկը, որուն վրա երկու տող գրած էր անդողդոջ ձեռքով, պահարանի մը մեջ տեղավորեց զայն։ Հետո, գետինը դրավ նամակը, ծնրադրեց անոր առջև ու, գանգը երկու ձեռքերուն մեջ սեղմած, սկսավ գիտել սևեռական նայվածքով։

Որմնախորշին մեջեն կանթեղ մը իր կիսամեռ ցոլքը կդող-

գողացներ բանտախուցին մթին պատերուն վրա՝ մարդուն ստվերին հետ խաղալով, ուրվային տձևություններ տալով անոր։ Դուրսը դեկտեմբերի ցուրտ քամին, խոլ գալարումով, ավելի ողբագին կդարձներ հիմակ ներսի եղերական լռությունը։

Բանտարկյալը, իր մտախոհ նայվածքին մեջ արձանացած, կշարունակեր դիտել նամակը, որ գետնամած կմնար։

Հանկարծ անթարթ աչքերուն խորունկեն երկու արցունքներ կաթեցին նամակին վրա։ Երիտասարդը, հիասթափ, թոթվեց իր գլուխը, զոր երկայն գոուզ մազեր կղարդարեին, ջղուտ շարժումով մը առավ նամակը գետնեն, և ցածլիկ խուցին կիսանվազ լուսավորությանը մեջ ցցվեցավ իր երկար ու աղվոր հասակը։

— Խե՜ղճ Աշխեն,— մրմռաց։

Ու մոտենալով խուցին դռանը, մատներովը թեթևորեն զարկավ անոր։ Երիտասարդը ականջ դրավ՝ ձայն չիկար, սպասեց քիչ մը, հետո նորեն զարկավ, դուրսը ծանր քայլափոխ մը թընդաց։ Վայրկյան մը ետքը դուռը բացվեցավ, ճամփա տալով խոժոռ ու հեստ դեմքի մը, զոր խովախովի ալեխառն մորուք մը ավելի կդաժանցներ։

Երիտասարդը չսպասեց, որ մարդը ներս մտնե. անոր երկընցուց ձեռքը բռնած պահարանը։

— Երդմանդ տե՞րն ես, Ալի աղա։ Ահավասիկ։

Բանտապահը, առանց վարանելու, նույնիսկ տեսակ մը սրտառուչ փութկոտությամբ խլեց թուղթը, զոր անմիջապես անհետացուց իր շապիկին ճեղքին մեջ։

— Անհոգ եղիր, տղաս,— ըսավ ցած ու զգուշավոր ձայնով մը և իսկույն դուռը փակելով անհայտ եղավ նրբանցքին մթությանը մեջ։

Երիտասարդը սփոփանքի խորունկ, սրտապատառ հառաչանք մը արձակեց ու գրեթե ինկավ, փռեցավ գետինը, մինչ որմնախորշին կանթեղը, օրհասական ցոլարձակումով, կքթթեր պատերուն վրա՝ այն ցնցող սարսուռներուն պես, որոնք մահամերձին մարմինը կթոթվեն։

***

Հետևյալ օրը, կանուխ, Ս... քաղաքին հրապարակին վրա ամբոխը, անգութ և հետաքրքիր, անհագ նայվածներով կծածկեր օդին մեջ տատանող մարդ մը։ Մարդ մը կախված էր։

Հեղափոխական մըն էր ան. Գարեգին Սուրմաքյան, հայկական դատին ամենեն խիզախ, գործունյա և կատաղի առաքյալներեն մեկը, զոր վատ մատնություն մը ձգած էր կառավարության ձեռքը։

Հազիվ երկու ամիս առաջ բաժնված էր ան իր հորենական տունեն, անցված քսաներկու տարիներու հանդարտ ու անմշուշ կենցաղը մեկեն ի մեկ, հանկարծական թափով մը խզելով, հայրենիքի հողին վրա հոսող արյան կծու հոտեն խելահեղ։

Անքուն գիշերներ անցուցած էր, ապագա արգավանգ ու փոթորկալից կյանքի մը անձկանքներովը ալեկոծ, տարտամորեն ծրագրված հանդգնություններու և կռվելու, պայքարելու ապերասան խանդավառության մը հաճախանքին ջղագրգռությանը մեջ հարատևորեն ցնցված։ Ամեն բան՝ վայելք, ցնծություն, սեր, վրա տալու մարմաջովը կէրեր, կմրկեր։ Որոշումեն գործադրության անցնելու կիզիչ շրջանին տառապանքները կապրեր հիմա։

Ամեն բան վրա տալ, այո՛, բայց ի՞նչ ըսել իր գերված, կապտված սրտին, զոր Աշխեն, իր կապույտ աչքերուն հրայրքոտ թովչությունովը ու միամիտ պարմանուհիի քաղցրությունովը առլցած էր այնքան բուռն կերպով։ Իր միտքը շարչրկող պայքարի խոլ ծրագիրներուն քով հանկարծ կուգար կցվեր Աշխենին անմեղունակ դեմքը, նշաձև աչքերուն շոյող, գգվող սևեռանքովը, կյանքոտ շրթներուն համբուրավետ շքեղությամբը։ Բաժնվի՛լ այդ հրեշտակեն, որ ջահի մը պես իր թախծոտ սրտին մռայլությունը կլուսավորեր...։

Գարեգին երկար ատեն տառապեցավ իր հոգին բզկտող այս հակընդդեմ զգացումներուն լլկանքին մեջ։ Հարյուր անգամ մըտքովը հորինած ծրագիրները պատռեց նետեց, նորեր դնելով անոնց տեղ, զանոնք ալ կոխկռտելով դարձյալ, մինչև որ, վերջապես, օրին մեկը, ինք իր դեմ գոտեպնդած, վարանումներեն ամոթահար, մեծագույն իդեալին վսեմությանը առջև հաղթահարված, վերջնական ծրագիրը պատրաստեց, սուրբ ուխտի կնիքը դրավ անոր տակ։

Հեղափոխական մարտի գոռ կրկեսին մեջ պիտի նետվեր գըլխիվայր։

Եվ Աշխե՜նը։ Օ՜, պիտի զոհեր զա՛յն ալ, մանավանդ զանիկա, որպեսզի զոհողությունը մեծ ըլլալով՝ խղճի, կամքի վարձատրությունը ավելի մեծ ըլլար։

Աշնան վերջերը, լուսնկա գիշեր մը իր բաժանման գիշերը եղավ։ Գնաց գտավ իր կուռքը, տարավ զայն քաղաքին դուրս, դաշտի անդորրության մեջ։ Երկար տևեց բացատրությունը. խեղճ ապչիկը լացավ. բայց կարելի՞ էր ընդդիմանալ Գարեգինի որոշման, որ իրենց երկուքին ապագան պատրաստելու կնկրտեր լոկ։ Ու Գարեգին կխաբեր Աշխենը, ըսելով անոր թե՝ միջավայրեն գրժգոհ՝ պիտի երթար ավելի լայն ասպարեզներու մեջ նետվիլ, շահավետ գործերու ձեռնարկել, վերջապես նյութական կարևոր դիրքի մը տիրանալ, սրտի ու սիրո ապագա երջանկության քով՝ լայնորեն ապրելու հեշտությունն ալ ունենալու համար մանավանդ։ Մանկամարդուհին իր սիրո միամիտ հավատքին մեջեն կընդունմաբեր հայտնված գաղափարին հրապույրը, որ իր անփորձ աղջկան սնամտությունը կգգվեր այնքան։

Բաժանման դժնդակ րոպեին վերջին գիրկընդխառնումի տագնապին մեջ, Աշխեն չէր մոռցած իր սիրեցյալին հիշեցնելու իրենց վաղեմի սովորությունը, որ էր՝ ամեն կաղանդի մեյմեկ խորհրդավոր նվերով փոխադարձաբար հրճվեցնել զիրար, կարծես նյութական առհավատչյայով մըն ալ նվիրագործելու համար իրենց մաքուր ու անխարդախ սերը։ Եվ իրոք, մանկամարդուհին մասնավոր պշրանք մը և անձին մեկ դրոշմը միշտ դրած էր այն նվերին մեջ, զոր ամեն տարեգլխու սովոր էր ընել իր խոսեցյալին՝ անկեց ստացածին վրա նույն անակնկալը գտնելու հույսով։

— Ձե՛մ մոռնար կաղընդչեքդ։

Եվ մութին մեջ հեռացած գացած էր Գարեգին, հեք աղջկան արցունքոտ աչերեն ու հեծեծանքներեն հետապնդված, ինքզինքը ա՛լ հիմակ այնքան թեթև զգալով, որ կուզեր թռչիլ, խոյանալ դեպի մոլեգնորեն ըղձացված նպատակը, դեպի հայրենիքի փրկության մեծ ու վսեմ գործը։

Սուրմաքյան շունչը առած էր Հայաստանի Ս... քաղաքը, ու շուտով հարաբերություն հաստատած էր հեղափոխական մարմիններու հետ։ Իր արտաքին ազդող երևույթը, տաք ու ներշնչող խոսվածքը, ցույց տված եռանդն ու գործունեությունը շուտով զգացուցած էին իր կարևորությունն ու իր ուժ մը ըլլալը։ Իր աշխույժն ու խանդավառ անձնվիրությունը հաղորդական եղած էին, տեղվույն մեջ հեղափոխության գործին արտասովոր զարկ մը տալով և գործնական արդյունքներ ձեռք բերելով, որոնք, սակայն, շատ չանցած կառավարության ուշադրությունը գրաված էին։ Տեռորի դաշույնը արդեն ներկված էր վատշվերներու արյունով։ Հայ հեղափոխության արհավիրքին սկզբնավորությունն էր։

Սուրմաքյան, մտքով, սրտով ու հոգվով հեղափոխությունն նվիրված, ա՛լ գրեթե մոռցեր էր տուն-տեղ, սեր, ապագա, ամեն բան։ Իր նոր կյանքին եռացկոտությանը մեջ եթե երբեմն Աշխենի նազելական անուշ դեմքին ստվերը հանկարծ կուգար իր աչքերը խղդուցնել, շուտով, սակայն, անհայտ կըլլար ան, բոպեական փղձկում մը առաջ բերելով միայն։

Եվ երբեմն անոր վերջին բառը կուգար ներդաշնակորեն թրթռալ իր ականջին. «Կաղընդչե՛քս»։

Սակայն Ս... քաղաքը հասնելեն իբր երեք ամիս ետքը, օր մը հանկարծ բռնված էր Սուրմաքյան ու ջախջախիչ ապացույցներ, անհերքելի խոստովանություններ ձերբակալված ուրիշ ընկերներու կողմե՝ լմնցուցած էին իր գործը, ու մահվան դատապարտված էր։

* * *

Ջիգ չվանին ծայրեն հիմա կկախվեր Գարեգին Սուրմաքյանի երկար հասակը, գոռոզ, խարտյաշ մազերով զարդարուն գլուխը կուրծքին հակած, աչքերը, կյանքով ու բոցով լեցուն աչքերը գոց, դեմքը հանդարտ դեղնությամբ մը վարագուրված։

Խուժանը, վայրագ ու վրեժխնդիր, դիվային ժպիտի մը տակեն ակռաները կցուցուներ հայրենասիրության այդ գերագույն խորհրդանշանին, որուն վրա ամբողջ ազգ մը իր տառապանքը կաղաղակեր աշխարհի։

Մեկը միայն, ան ալ թուրք մը, կախաղանին մոտերը կեցած տրտում տխուր, մերթ իր աչքերը կվերցներ դեպի այդ դիակը, զոր կդիտեր դառն արգահատանքի նայվածքով մը։ Ատեն-ատեն, կըմրմնջեր.

— Խե՜ղճ տղա, պիտի բռնե՛մ խոստումս։

Երբոր նույն գիշերը դիակը վար առին, ոչ ոք կրցավ նշմարել, թե միևնույն մարդը, այդ գործողության օգնողներեն մեկը, դանակով մը կտրեց կախաղանին չվանեն փոքր մաս մը և զգուշությամբ պահեց զայն իր գրպանին մեջ։

Այս մարդը Ալի աղան էր, Սուրմաքյանի ծեր բանտապահը։

* * *

Նոր տարի էր։ Աշխեն, չորս ամիսե ի վեր իր խոսեցյալեն առանց ոևէ լուրի, այդ գերագույն օրվան կսպասեր՝ անկեց ընդունելու համար խոստացված նվերը։ Իր աչքերուն ժպիտին տակ հիմակ վիշտի տենդը կվառեր, այտերուն գունագեղ թավիշը իր առաջվան փայլն ու ողորկությունը կորուսած էր ա՛լ։ Կտառապեր թշվառ աղջիկը՝ լքված, հուսախաբված աղջիկներու կրծող տառապանքովը։

Պատուհանը նստած, սպասումի թմրության մեջ մտամոլորան կհուսար հանկարծ տեսնել սպասված նվերը, որուն լուր պիտի հարցներ իր սրտին տիրոջմե, ինչպես հայ նժդեհը, որ մեր աշխարհեն խապրիկ մը կհարցնե կռունկին։

Քաղաքը նոր տարին կտոներ խոլ ցնծումով։ Երգի ու գինարբուքի խենթությունը կփովեր փողոցները ու կբարձրանար սպասող աղջկան քով մինչև, որ անոր ցավը հրահրելով, սիրտը հոշոտելով։

Իր զգայազիրկ թմրության մեջ նույնիսկ չտեսավ փոքրիկ տղան, որ նամակ մը նետելե հետո իր գոգը՝ դուրս թռավ սենյակեն։ Աշխեն, խելաբրած, բռնեց նամակը և անգամ մը փողոց նայելե հետո, կարծելով, որ անկեց ներս նետված էր, բացավ պատուհանը, ու երբոր թոթվեց զայն, թղթիկ մը ու բարակ շվանի մը կտոր դուրս ինկան մեջեն։

Աշխեն առավ թղթիկը ու խենթի պես կարդաց սա տողերը՝ մատիտով գրված.

«Պաշտելիս, ներփակ պիտի գտնես շվանի մը կտոր, որ զիս խեղդող կախաղանին հանգույցին մեկ մասն է։ Լանջքիդ տակ վառող սիրո կրակին մե՛ջ նետե զայն, որպեսզի ազգային պատվախնդրության բոց մը դառնա հոն։

Ահա՛ կաղընդչեքս։

ՍՍ.ՅԼՈՐԴԸ

(Գաղթականի հուշատետրեն)

— Ա՜խ,— կըսեր բռունցքի հարվածի մը տակ թնդացնելով իր լայնշի և մազոտ կուրծքը,— հիշ մեկ պան մը չեմ կարոտած. նե՛ մարս, նե՛ քուրերս... մինակ թուլումպաս. էոֆ, սանկ մեյ մը օմուզնիս կառնեինք տե յա՜ յա՜... յլտրըմի պես կվազեինք մի... հոս անանկ թուլումպա մուլումպա չիկա... պան չունիս նե պտըտե... սո՞նը։

Գրեթե միշտ ասոր նման պատասխան մը կառնեի, երբ Համբիկին հանդիպելով հարցնեի իրեն. «ի՞նչ լուր, Համբիկ։— «էֆ, մի՛ հարցուներ պե... գործ չիկա... ա՜խ, պարե թուլումպա մը ըլլար»։

96-ի գաղթականության հոսանքը զանի ալ Վառնա նետեր էր՝ հանկարծ բաժնելով զինքը ջրհանեն, որուն վրա անսահման էր իր սերը։ Պոլսո քաջընթաց ջրհանկիրներեն էր, հանդուգն, հուժկու և կովազան։ Հրդեհներու ատեն իր շահատակությունները սքանչացում կպատճառեին, մրցակիցներու դեմ մղված պայքարներու մեջ ահ ու սարսափ թողած էր, այնքան որ «յաման Համբիկ» հորջորջումին արժանացած էր։ Իր հավատքը, իր իդեալը, իր ակնարկությունները, ըղձանքներն ու ձգտումները ջրհանին վրա կամփոփվեին։ Անով միայն երջանիկ էր։ Այրվող տուներու ճարճատը, անջրպետը լզող բոցերուն գալարմունքը և վտանգվածներու աղեկեզ կանչվրտուքներուն համանվագը իր հոգին կհուզեին, ջիղերը կգրգռեին և դյուցազնի թափեր կուտային իրեն։

Հիմակ, Վառնայի մեջ, զրկված իր բոլոր այս հրաշալի բաներեն. ջրհան չիկար, և ո՜վ դժբախտություն, չիկար նաև հրդեհ։

— Ատա՛մ, այստեղ եղած կրակները քանի՞ կառնես, կըսեր դառնաթույն արհամարհանքով, թուքո՛վս կմարեմ պե, թուքո՛վս...

Եվ իր արհամարհանքին սաստկությունը ապացուցելու համար՝ անգամ մը, գիշերանց, և ոչ իսկ անկողնեն ելած էր, երբ իր բնակած տանը դեմը հրդեհ պատահած էր։

Մուսալլայեն հիվանդանոց տանող ճամփուն վրա ճորճորալեն կպտտեր հայ ճովինան, սալթան ուսեն կախված, մինչև ընքվիները իջնող թուխ ֆեսին տակ հարդե աղտոտ փոքր գլխարկ մը

գեպի աջ ականջը հակած և ձեռքերը փոթուռին գրպաններուն մեջ։

Բավական ատեն այսպես անցուց. օր մը, սակայն, տեսա դինքը, որ սայլի մը վրա, ձեռքը խարազան մը, արշավակի կերթար։

Համբիկ սայլապանության սկսած էր։

— Ախպարս,— ըսավ ինծի, երբ իրեն հանդիպեցա,— անոթի պարտիլը աղվոր բան չէ. էս պաշխասիներուն պես հաց չեմ կրնար մուրալ։ Ամա արապաճի կըլլամ էղեր, խե՛րն եմ անիծեր...

Ա՛լ ամեն առտու, կանուխ, Համբիկ, սայլակին հետ մեկտեղ, գաղթական հայերու գլխավոր ապաստարանին՝ հիվանդանոցին դրանը առջև կկենար բեռ փոխադրելու համար։ Այդ առթիվ միշտ պատեհություն կունենար տեսնելու Միս Ֆրեյզերը, ամերիկացի միսիոնարուհին, որ՝ հայկական ցրվումին բոթը լսելուն պես՝ Բուլգարիա շտապած էր ոսկիի բեռով մը։ Օրվան մեջ շատ անգամ բաց լանտոյի մը մեջ բազմած՝ սայլորդին առջևեն կանցներ իր հմայքոտ քաղցր ժպիտը շրթունքին վրա։

Համբիկ իր կոշտ պատյանին տակ խանդավառ և դյուրահույզ հոգի մը կկրեր։ Այդ նրբակազմ, շնորհաշուք ու քաղցր աղջկան երևույթեն խորապես ազդված էր։ Հազարավոր անոթիներու կյանք պարգևող այդ անոսր ու փափուկ էակին մեջ տեսեր էր գերմարդկային անձնավորություն մը։ Անոր ամեն մեկ անցքին՝ նախկին ջրհանկիրը ներկա կգտնվեր հափշտակված, արձանացած, գըլխարկը ձեռքը բարևի։

— Ի՞նչ ախճիկ է, պե՛,— կըսեր ինծի, աչքերը անճառ ու պաշտողական հիացմամբ լի,— նստելու, նայելու, խնդալու պիչիմը, է՛հ, ստեղծողիդ մեռնիմ։

Հետաքրքրությամբ հետևեցա այս քաջ ու անկեղծ տղուն կույր պաշտամունքին աճեցմանը՝ Միս Ֆրեյզերի համար։ Հիվանդանոցին դրանը առջև ժամերով կսպասեր ամերիկուհիին դուրս ելլելուն, շատ անգամ մերժելով բեռներուն փոխադրությունը, որ իր այրուստի միակ միջոցն էր։ Ամեն անգամ, որ զանիկա տեսներ, գինքը հուզող բոլոր խառնաշփոթ ու ահագին զգացումները կըխլացներ միակ հառաչանքի մը մեջ.

— Ի՞նչ ախճիկ է, պե՛...

Հիմակ, ա՛լ գրեթե մոռցեր էր Թուլումպան իսկ։ Անցյալ կյանքի բոլոր գինովությունները, բոլոր հրճվանքները կանհետանային այս քաղցր ու տիրապետող տեսիլքին հոգեպարար արբեցությունին տակ։ Եվ մինչ բոլոր գաղթականները, մեծով-պստիկով, ամերիկուհիին մագնիսող ոլորտին մեջ կդառնային սփոփվելու համար անոր տաք շունչեն, ինքը, Համբիկ, հեռու կմնար անկեց, անոր մոտենալու այնքան դյուրին հանդգնությունը իր մեջ չզգալով, ինք, որ բոցերու դեմ մաքառած և հրդեհի գեհեններեն անցած էր ահերկյուղ։

Հեռվեն, բոլոր կարելի հարգանքները կմատուցեր անոր, ճամփուն վրա սպասելով գլուխը բաց, և օրիորդին հանդեպ անարգական ընթացք բռնողներուն հետ կատաղորեն կռվելով։

Օր մը, սակայն, հիվանդանոցին դռները փակվեցան և Ֆրեյզերը մեկնեցավ ա՛լ չվերադառնալու համար։ Այդ օրը, Համբիկ, եղելությենեն անտեղյակ, ըստ սովորության գնաց ժամերով սպասեց հիվանդանոցին դրանը առջև, սայլակին վրա նստած։ Եկող գացող չիկա. հարցուց փնտռեց, ու դեպ-դեղին եղավ երբոր ըսին, թե գացած էր։ Գլխահակ, ձիուն սանձեն բռնած, դանդաղորեն հեռացավ, ու ա՛լ մեյ մըն ալ չերևցավ հիվանդանոցին շրջանակները։ Երբ քանի մը ամիս ետքը իրեն հանդիպեցա փողոցը, ճամապարանքով քովս եկավ լուր հարցնելու «ինկլիզին ախճիկեն», ինչպես ինքը կանվաներ։

— Աղեկ է եղեր,— ըսի,— քեզի բարև ըրեր է,— ավելցուցի կատակով։

— Ծո՛, ի՞նչ կըսես... ես վո՞վ եմ, քի ինծի բարև պիտի խըրկե... Անիկա...

Ու իր արևակեզ բիրտ դեմքը՝ հեռավոր հիշատակներու վերաբերումեն՝ տեսակ մը երազական անուշություն կստանար։

— Ի՞նչ ախճիկ էր, պե՛,— կմրմռար, հեռանալով իր սայլակին հետ։

Անկեց ետքը ա՛լ քանի դեմս ելլար, լուր կհարցներ ամերիկուհիին մասին, միշտ միևնույն պաշտամունքի արտահայտություններով, նույն հիացական բացականչություններով։

Հյուսիսի քամին ահեղասույլ կփչեր։ Բալթոյիս մեջ սեղմված, այդ գիվային հողմին դեմ կմաքառեի ճամփաներուն վրա։ Հան-

կարծ սայլվոր մը նշմարեցի, որ գլուխը կնգուղի մը մեջ պլլած՝ ձիուն սանձը կքաշեր մեծ տաժանքով։ Ծանոթ ձայն մը բարևեց զիս։ Համբիկն էր։

Հիմա քով-քովի կքալեինք՝ գրեթե առանց բառ մը արտասանելու, քամիեն շնչասպառ։

— Լուր մը ունի՞ս,— հարցուց վերջապես սայլորդը, անհամբեր։— Կըսեն կոր, քի նորեն հոս պիտի գա... իրա՞վ է։

— Չէ՛, ճանըմ,— ըսի գրեթե մեքենայաբար,— ո՞ւր պիտի գա, խեղճ աղջիկը մեռեր է. չիմացա՞ր, լրագիրները գրեցին։

— Վա՞յ...

Համբիկ ուրիշ ձայն չհանեց։ Կնգուղին ծալքերուն տակ իր դեմքը խուլ և սաստիկ տառապանքի մը կծկումը արտահայտեց։ Ուժգնությամբ քաշեց ձիու սանձը, ու տեսա, որ հովին ալիքները կնգուղին վրա ինկած կաթիլներ կթոցնեին, կտանեին։

Սայլորդը կուլար։

ՀՈՒՌՈՒԹՔԸ

Մթնշաղ օր մըն էր։ Աղեքսանդրիո նորակառույց քարափին երկայնքը կդեգերեի, անոր ամբողջ լայնալիճ աղեղը կտրել անցնելու տենդով մը ջղայնված։ Աչքս տնկած Սելսելեի աշտարակին, որ հաստախարիսխ կնստեր արևելյան լեզվակին ծայրը, գրեթե մեքենաբար միայն կտեսնեի ծովին աղվոր խաղերը՝ արևմուտքի նարնջագույն ու ա՛լ վատուժ ճաճանչավորումին մեջ։ Ի՜նչ հեշտալի է այդ լքումը, անմտած ու ինքնաշարժ, սրունքներուդ վրա, որոնք կառնեն կտանին քեզի՝ կարծես առանց ուզելուդ ուղեղիդ մեջ արձագանքելով քայլերուդ հնչյունը, վանելով դուրսի աղմուկները, որ ա՛լ հեռավոր տղզանքի մը պես կըլլան։ Մերթ կանգ կառնեի, այդ խոլարշավ ինքնամոռացումեն վախցած, իրերուն ու միջավայրին ըմբռնումին դառնալու անզուսպ կարոտով մը, ու կտեսնեի հեռուն, հորիզոնին բարձունքին վրա կեցած առագաստանավեր՝ թևատարած կարապներու պես ճերմակ, քարափին խարիսխեն դուրս երկնցած՝ նիզակներու նման՝ ձկնորսի եղեգներ. ու հոս-հոն պերպերի կիսամերկ լակոտներ, շաքարեղեգի կտորվանք իրարու ձեռքե խլելով՝ ձյունի պես ճերմակ ակռաներովնին խածատելու համար վայրենորեն։ Ասդին, բարամբին վրա,

ուռեցվորած բորբիկ ոտվրները վար կախած, ֆելլահին մը կաթ կուտա իր լաճին՝ վիթխարի ծիծի մը տակ ծածկած անոր դեմքը։ Պատկերին միօրինակությենեն սրտնեղ՝ նորեն ճամփա կելլայի սրավար, ինքնաշարժ, գրեթե գինով։

Սելսելեի իրանը կմեծնար հետզհետե, ծովափին լեկած ջրիմուռներուն կծու հոտը վեր կելլար՝ իրիկվան լույծ խոնավին հետ հոտոտելիքեդ ուղեղիդ թափանցելով մինչև։ Ծովածփանքը կարագանար, կխտանար, հալած կլայեկի գորշ պարուտակով մը՝ անհունորեն փոթփոթված։ Հորձանաշարժ։ Կուզեի, սակայն, հասնիլ հոն, վերը, աշտարակին քով, վերջալույսը շնվաղած և այս մտահոգությամբ կպատրաստվեի վերջին խոյանքի մը անձնատուր ըլլալ, երբ ետևես շնչասպառ ձայն մը պոռաց ինծի.

— Բարեկա՜մ, կեցիր վայրկյան մը։

Ու կեցա, մեկենիմեկ, իբր թե մեկը հանկարծ փեշես քաշած ըլլար ուժգնությամբ։ Եվ իրավ, այդ ձայնը՝ ձեռքի այդ հարվածին դերը կատարած էր, որովհետև անիկա սովորական ձայնը չէր՝ անձկոտ, պաղատող, բայց հուժկու ալ բան մը ուներ, որ սարսուռի ցունց մը տվավ ջիղերուս։

— Ես եմ, չճանչցա՞ր զիս,— ըսավ մարդ մը, դեմս ցցվելով։

Նայեցա, քիչ մը, անշուշտ, ազդված հանդիպումին անակնկալեն։ Ո՞վ էր, որ այդպես օձիքիս կկառչեր, անձնական ատ շատ մտերիմ հաճույքիս մեջ, երազանքի անուշ բոպեի մը, այնքան թանկագին է տառապող մտքերու համար։

Եվ երբ կշանայի այդ դեմքին մեջ ճանչվոր մարդ մը երևան հանել,

— Այո՛, ես եմ,— ավելցուց,— Հրա՛նտը, վաղեմի բարեկամդ։ Հե՞, չե՞ս ճանչնար,— վրա բերավ տեսակ մը հեղնականությամբ, սանկ դեմքը իմինիս մոտեցնելով, իբր թե բոլորովին մութի մեջ ըլլայինք։

— Վա՞յ, Հրանտ, դուն հո՞ս, ուրկե ո՛ւր,— բացականչեցի՝ մանկության այդ ընկերոջս ճիտը նետվելով շարժումով մը, զոր սակայն կեցուց ան՝ ձեռքի խափանաբար բիրտ ժեստով մը։

— Քալե՛նք,— ըսավ, ժամանակ չտալով որ ես դիտողություն մը ընեի իր ոչ-համակրական այդ վարմունքի համար։ Թևես բռնեց, ու սկսանք քալել լուռ ու մունջ, որովհետև մեկենիմեկ այդ ծանր բանը եղած էր մեր մեջ, մենք որ մինչև տասը տարի առաջ մտերիմ բարեկամներ էինք Պոլիս։ Ո՜րքան փոխված կտեսնեի

զինքը հիմա։ Զվարթ, շենշող երիտասարդ մըն էր, կյանքին դժ-պատեհութիւնները արհամարհող, իրերու և դեպքերու գերազանցորեն լավատես ըմբռնումով մը, որ մինչև տեսակ մը միամտութիւն կմղեր զինքը։ Մեկտեղ գացած էինք դպրոց, ուր անիկա՝ ժամանակին մանկավարժական ըմբռնումին համեմատ՝ ուսուցիչներուն կողմե տեսակ մը վրանբաց աշառութիւն առարկա եղած էր, իր հորը ունևորութիւնը և ազդեցիկութիւնը պատճառավ։ Սակայն, իր նկարագրին բարի հիմը թող չէր իտար իրեն օգտվիլ իր այդ բացառիկ հանգամանքեն՝ զոռոզ ու չարասիրտ ընկեր մը ըլլալու համար։ Ազնիվ ու վեհանձն, հեգնանքի ժպիտ մը կունենար ամեն անգամ, որ իր մեկ շարաճճիութիւնը համար կառավարիչը ուրիշ աշակերտի մը վրա իր խստութիւնը բանեցներ. տեսած էի նույնիսկ, որ օր մը անիկա դրամական պարգև մը սպրդեցուց աշակերտի մը ափը, որ իրեն համար պատժված էր անիրավորեն։ Մեր բարեկամութիւնը շարունակվեցավ դպրոցեն դուրս ալ, հասուկ կյանքի հորձանքին մեջ։ Նեղութեան օրերուս միակ հույսն էր։ Ու մինակ ինծի համար չէր, որ ատանկ էր ան. մեր մտերմական շրջանակին մեջ քիչեր կային, որ անկից օգտված չըլլային նյութապես։ Հայրը՝ վաճառական, ինքն ալ վաճառական եղավ, բայց մեծանձն, զվարթ ու լայնախոհ վաճառական մը։ 96-ի դեպքերուն, բնականաբար, կորսնցուցինք զիրար, շնչասպառ ու խելահեղ ցրվումին պահուն, որ հայրը՝ զավկեն, եղբայրը՝ քրոջմեն զատեց։ Եվ ահա տասը տարի վերջը ան մեկենիմեկ դեմս կելլար Միջերկրականի ափերուն վրա՝ հանկարծական ու տարօրինակ, վրան գլուխը թափած թափթփած, ծյուրագեմ, աչվքներուն ծանոթ մշտակա ժպիտին տակ՝ զոռոզ, կրնամ ըսել՝ հարձակողական գառնության շողարձակումով մը, որ աչքես չվրիպեցավ նույնիսկ հոգ, անջրպետին չորս կողմերեն մաղվիլ սկսող մանրացնցուղ մթութեան մեջ։ Տարակույս չիկար. տանջանքի հալոցին մեջ մըտած ելած էր, քայքայումի այդ կաղապարին տակ, ինչպես բոլոր հայերը՝ քիչ շատ։

Բոպեի մը մեջ այս բոլոր բաները մտքես անցան, ու դեռ կհամենայի անոնց վրա, երբ Հրանտ իր երկար ոսկրուտ մատներուն մեջ թես սեղմելով.

— Դրամ ունի՞ս,— հարցուց անփույթ շեշտով մը։

— Պե՞տք ունիս,— ըսի ձեռքս գրպանս խոթելու շարժումով մը, զոր ան դարձյալ կեցուց։

— Ո՛չ, ոչ, տեղ մը երթանք նստինք. քեզի թոհաֆ բաներ պիտի պատմեմ... որովհետև... վերջապես մեկուն պատմելու եմ, ինչ որ եղավ...

Ձայնը պղտոր հնչեց ականջիս։ Իսկույն ետ դարձանք՝ մեծաքայլ հեռանալով քարափեն, որուն կուգային, կղարնվեին հիմա ծովին ջուրերը՝ խուլ շառաչմամբ, ցայտեր արձակելով մինչև բարձրեն ասդին։

Բարեկամիս վարմունքին տարօրինակ և գրեթե կոպիտ եղանակը շրթներուս վրա կասուեցներ կարգ մը շատ բնական հարցումներ, զորս անոր պիտի ուղղեի՝ իր հեղակարծ երևումին առթիվ։ Միայն, մյուս կողմե, ես ալ կմղվեի վիպական բաներ մը տեսնել այս ամենուն մեջ, տյումայական տոամի մը դրվագը, խառնված հնության մեծ պատկերներուն, որոնք երևակայությունս անդադար կվառեին ամեն անգամ, որ պտղոմեական մարմարեղեն վաղնջուց պալատներու այդ վայրերուն մեջ թափառելի, ալեբակի բեկորներ գտնելու մարմաջով։ Ուստի լռիկ-մնջիկ կերթայինք՝ ավազներուն մեջ թաղվելով, քարերու դարնվելով ամեն մեկ բայլերուս։

— Նա հունա՞, եթե կուզես,— ըսավ Հրանտ,— ծովահայաց գարեջրատուն մը ցուցնելով, որուն մոտեցած էինք, և որ լույսերու մեջ կշողար։

Ներսը մեկուսի սեղանի մը շուրջը նստանք դեմ-դիմաց։ Հիմակ ավելի դյուրավ կրնայի զննել բարեկամիս դեմքը, որուն ամբողջ ահավոր մաշվածությունը դուրս կցայտեր լամպարներուն դեղնաշուրթ լույսին տակ։ Շապիկը օձիք չուներ, ոչ ալ փողկապ։ Բաճկոնը յուղոտած էր, ու մաշած թելերը կերևային։ Իր վրա ամեն բան թափառահած պոհեմի հանդուգն, սանձարձակ ու տխուր անմտածությունը կմատներ։ Անոր մեջ ինծի ծանոթ մարդը մեռած էր գրեթե, և ուրիշ մեկը կար, ալքոլի տենդովը բռնկած նայվածքով, շրթներուն անկյուններուն վրա պեղված երկար խրամներով, որոնք այտոսկրներեն մինչև թուշը կիջնային։ Ուսերը մեր տնկված էին՝ վտիտ ու մսկոտ։

— Ապսե՛նդ մը,— հրամայեց սպասավորին, որ մեզի մոտեցած էր.— իսկ դո՞ւն,— հարցուց ինծի դառնալով։

— Գարեջուր մը,— ըսի։

Հրանտ ապսենդամո՞լ. ան որ, ատենոք, գարեջուրը անգամ չոզելով դիմեր։ Ու դիտեցի՝ կանանչորակ թույնին երկար գա-

վաթը շրթներուն տանիլը տեսակ մը հաճոյական և ակներև վարժությամբ, որ ինծի կսկծալի վայրենություն մը թվեցավ։ Մեկենիմեկ զզվանքով լեցվեցա այդ մարդուն առջև, որուն շարժումները, նայվածքը, խոսելու եղանակը, ամեն բան կշնչեր մյուսը, նախկին ընկերը և բարեկամը։

— Հիմակ ա՛լ սկսած եմ թեթև գտնալ ապսենդը,— ըսավ վար դնելով գավաթը, բայց հոս հաշաշի երկիրն է, հե՞,— ավելցուց քստմնելի քմծիծաղով մը երեսս նայելով։

— Երկրին մեջ այդ թույնին մուտքը արգիլված է խստիվ, մեծ պատիժ ու տուգանք կա,— ըսի՝ աչքը վախեցնելու մտադրությամբ։

— Ամիս մըն է հոս եմ, կարելի է քսան անգամ մը քաշեցի անկե,— ըսավ,— առաջին անգամը անհաճո երազներ տեսա, բայց ետքեն, հուռութքս ձեռքիս մեջ բռնելով, ալ այդ երազները չտեսա...

— Առաջին անգամվանը ի՞նչ տեսակ երազներ էին։

— Օ՜, մի՛ հարցուներ, ինչ որ պիտի պատահեր, երբոր արքայություն երթայի. մարդիկները հրեշտակի թևեր ունեին. մարդիկնե՛րը, երևակայե՛,— շեշտեց ապսենդին գավաթը նորեն շրթներուն տանելով։

— Իսկ հետո՞,— պնդեցի, խեղճ բարեկամիս մտավորական անկումին ցավագին հաստատումը ընելու համառությամբ մը։

— Հետո, ա՛լ անկե ետքը ամեն անգամուն ձեռքիս մեջ բռնեցի հուռութքս, միտքս անոր վրա սևեռելով՝ թմրության անուշ ամպերուն մոտեցած ատենը. ու ա՛լ մարդիկները կերևնան իրենց բո՛ւն կերպարանքովը, սատանային պես սև և կապիկի պես ծիծաղելի,— վերջացուց ան վրիժառության ոխերիմ շեշտով մը։

«Հուռութք» բառը, զոր երկիցս արտասանեց շատ հարգալից և մասնավորապես երկյուղած կերպով մը, թվեցավ ինծի այն լկիր մտասևեռումներեն մեկը, որոնք անբուժելի խենթերուն միայն առանձնահատուկ են, ըստ որում արդեն սկսած էի խենթ մը նկատել բարեկամս։

— Ի՞նչ հուռութք է այդ,— հարցուցի։

— Ահա՛,— ըսավ աջ ձեռքին մատներով բաճկոնակին ճեղքեն դուրս քաշելով թիթեղե փոքրիկ տփիկ մը, որ բարակ առասանով մը ճիտեն կախված էր. ասիկա,— շարունակեց,— իմ միակ պաշտպանս է այլևս, բոլոր մարդկությունը մեկտեղած չի

կրնար զիս խաբել, քանի որ ասիկա ունիմ,— կըսեր երկու ձեռվընները մեջ խանդաղատանոք սեղմելով այդ անպետ մետաղե տփիկը և զայն համբուրելու ձևեր ընելով։

Կրնաք երևակայել տրտմությունս, հետզհետե հաստատվելով բարեկամս խենթեցած նկատելու համոզումիս մեջ և արդեն իսկ մտքիս մեջ կպտտցնեի այն պաշտոնական գործողությունները, որոնք ընդհանրապես տեղի կունենան առաջնորդարանին մեջ, աղքատ հիվանդներու հիվանդանոց փոխադրության համար, երբ ան՝

— Թերևս հիմա մտածես, որ,— ըսավ Հրանտը,— չըլլա՞ խենթեցած ըլլա, չէ՞, բարեկամ, չե՞մ խենթեցած,— հայտարարեց կամաց մը նորեն ներս քշելով թիթեղե տփիկը,— ու՝ հիմա պիտի հասկնաս, թե ի՞նչպես չեմ խենթեցած, հակառակ անոր, որ չխենթենալս արդեն ինքնին զարմանալի բան մը ըլլա... Միայն թե սկսելես առաջ ապսենդ մըն ալ,— ավելցուց աղաչական, գավաթին տակը մնացած կաթիլները ծծելով անհագորեն։

Այդ վայրկենին տրամադիր էի գրպանիս բոլոր դրամը ապսենդի հատկացնել, այդ կենդանի հանելուկին լուծումը ձեռք բերելու համար։

Հրանտ բաճկոնին գրպանեն սեփ-սև, ծուռումուռ սիկառ մը հանեց՝ բիչ մը քրքրված թերթերով, վառեց ու սկսավ ծխել, նոր գավաթին մեջ կուշտ մը թաթխելե հետո շրթները։

— Պոլսեն բաժնված ատենդ,— սկսավ ան՝ թաղիքե հալումաշ դիմակը ընքվիներուն վրա տեղավորելով,— գիտեիր, թե նյութական ինչ վիճակ ունեինք։ 97-ին հայրս մեռավ հանկարծ, ամբողջ հարստությունը ու գործը ինծի ձգելով։ Գիտես, թե հայրս ո՞ր աստիճան շրջահայաց մարդ էր. դեպքերը և անոնց հետևանքները նախատեսելով՝ հեռավոր և մոտավոր հրապարակներուն վրա մեր ունեցած առնելիքները հաջողեր էր ժողվել՝ դրամը պահակեցնելով պանդուխտ արժեթուղթերու գնման, մասնավորապես ֆրանսական և եգիպտական, անանկ որ դեպքերուն հետևանոք, երբ մեր հրապարակին վրա շատ հայ վաճառականներու դիրքը խախտեցավ, մենք աննշան կորուստներ միայն ունեցանք։ Արդ, հոս մաքվամբը տասը հազար ոսկիի հարստության տեր կգառնայի, ունենալով նաև հաստատուն ու նախանձելի դիրք մը հրապարակին վրա և գործ մը, որ հանդարտորեն ու խոհեմորեն շարունակելով, կրնար երջանիկ ընել զիս մինչև մահս...

Հրանտ, հոս, կանգ առնելով, երազականորեն նայեցավ սիկառին ոլորուն քուլաներուն, զոր մեղմիվ դուրս հանեց բերնեն՝ շրթները փոթոթելով կարծես սուլելու համար։

— Բայց տես, թե ի՜նչ պատահեցավ. բարեկամներես, դրպրոցի ու կյանքի մտերիմ ընկերներես շատեր, հեռացած էին Պոլսեն և զանազան երկրներ ցրված. Բուլղարիա, Ռումինիա, Եգիպտոս և այլն։ Շատ չանցած նամակներ սկսան հասնիլ ամեն կողմերե, ո՜րը դրամական անմիջական նպաստ կուզեր, ո՜րը իր բանալիք գործին համար դրամագլուխ, ո՜րն ալ արտասահմանի մեջ ընկերովի առևտրական ճյուղ մը բանալու առաջարկ կըներ։ Արյունալի դեպքերը և ազգային մեծ ցավը արդեն մատնած էին զիս խորին թաղվածության մը, և ջղային այնպիսի դրության մը մեջ էի, որ ազդակիցներու դառն կացության դարման մը տանիլը, որքան որ կրնայի, ինձի համար սրբազան անհրաժեշտ պարտք մը երևցավ։ Ի՜նչպես կրնայի մերժել անանուն մարդիկներ, որոնց հետ գրեթե անցուցած էի կյանքս, մտերիմ ու հիշատակալից բարեկամության մը մեջ, ու հիմա, որ անոնք ինկած էին առանց իրենց ուզելուն, պետք չէ՞ր, որ ձեռք կարկառեի անոնց։ Կճանչնաս Գառնիկ Մեհրապյանը, Աստուր Ճանկեորենյանը, Ղուկաս Կեոմրյուկճյանը և ուրիշներ, որ դիմում դիմումի վրա կընեին։ Չէի կրնար մերժել։ Երկու տարվան մեջ պատրաստի ունեցած դրամիս գրեթե կեսը այս տեսակ գործերու հատկացուցի։ Գառնիկ Ռուսճուքի մեջ, Աստուր Կալացի մեջ մանուֆակթուրայի բավական ընդարձակ գործեր բացին իմ դրամագլխովս։ Ղուկաս, որուն արդեն մինչև Պոլսեն հեռանալը այնքան օգնություններ ըրած էի, Մարսիլիա մեկնած էր՝ ետին ծայր կարոտության մեջ. անմիջապես կարևոր գումար մը ղրկեցի իրեն, և ըսի, որ եթե չուզեր Պոլիս դառնալ, նորեն կրնա ուզած տեղը գործի մը ձեռնարկել, դրամագլուխի մասին հոգ չընելով։ Բավական ժամանակ պատասխան չատացա իրմե, այնքան, որ վախցա, թե մեռած կըլլա։ Հետո օր մըն ալ նամակ մը առի՝ Գահիրե գացեր էր և 500 ոսկվո գումարի մը անմիջական պետքը կար՝ մանր երկաթեղենի գործ մը բանալու համար, որ չափազանց շահաբեր է եղեր։ Ընկեր պիտի ըլլայինք, ֆիրման իր ու իմ անունովս։ Երկրորդել խոկ չտվի առաջարկը և Քոեսի Լիոնեի վրա քաշված 500 ոսկինոց չեք մը ղրկեցի իրեն։ Ճիշտ այդ միջոցին Ռուսճուքեն ծանոթ մը ինձ կգրեր, թե Գառնիկ Մեհրապյանը հանկարծ իր վաճառատունը ուրիշի մը

փոխանցելով շատ շահավետ պայմաններով՝ հույն կնոջ մը հետ առած քալած էր Հայտնի չէ ո՜ւր։ Այս անհուսալի վատությունը ինձի 7000 ոսկիի կնստեր։ Առաջին ցնցումն էր, որ կկրեի...

Հրանտ, որուն ձայնին մեջ տրտում լրջություն մը տիրեց մեկենիմեկ, չոր հազով մը կոկորդը մաքրելե հետո, քանի մի ումպ ապսենդ կուլ տվավ ու շարունակեց.

— Մտածեցի, սակայն, որ կնոջ մը մատը քանի որ կար գործին մեջ, մարդը այնքան ալ մեղավոր ըլլալու չէր... վերջապես ինչ կրնայի ընել։ Երանի թե կորուստս այդ չափով վերջանար։ 99-ի սկիզբներն էր։ Օր մը, ոստիկանությունը հանկարծ վաճառատունս կոխեց, գրավեց թուղթերս, տետրակներս, և զիս ալ ձերբակալելով, ոստիկանության դուռը տարին։ Հարվածը այնքան ուժգին էր, որ առաջին շլմորումիս մեջ բան մը ո՜չ մտածեցի, ոչ ըրի. մութ ու խոնավ բանտի մը խորը նետեցին զիս, ուր օրերով մնացի, առանց որ մեկը գար հարցներ, փնտրեր զիս. վերջապես, սթափած, գլխուս ճարը նայել ջանացի։ Երեք ամիս անընդհատ դիմումներ ըրի ոստիկանության նախարարին, գործիս քննությանը համար. սաչափը միայն կրցա հասկնալ, թե մատնված էի իբրև հնչակյան գործիչ, որով և է՛ն մտերիմ բարեկամներս իսկ չէին համարձակեր միջամտություն մը փորձել. ստիպվեցա դրամ խաղցնել... Երկար կըլլա հիմա մանրամասնել, ինչ որ քաշեցի և ինչ որ խարճեցի բանտեն ազատելու համար... հինգ-վեց հարյուր ոսկի շունչանորդիին կոկորդը լեցուցի։ Վաճառատունս թեև բացի նորեն, բայց գործս մեծապես սկսած էր կաղալ։ Կալացեն ու Գահիրեեն բնավ լուր չիկար։ Նամակ նամակի վրա գրեցի՝ պատասխան բնա՜վ։ Եվ ահա նոր դժբախտություն մը հասավ. Ք...յան տունը սնանկանալով՝ 750 ոսկիի առնելիքս կոչնչանար։ Պաղարյունությունս, զոր մինչև իսկ բանտին մեջ պահած էի, քիչ-քիչ սկսավ պակսիլ... Այս տագնապներուն միջոցին է, որ ոստիկանությունը երկրորդ անգամ խուզարկեց վաճառատունս և բանտարկեց զիս։ Այս անգամ ավելի շուտ ազատեցա, բայց ավելի շատ դրամ կերցնելով։ Դուրս ելլելուս, քանի մը թուրքեր, որոնց վրա կարևոր պահանջներ ունեի, մերժեցին վճարում ընել. դատարան անգամ չդիմեցի։ Կալացի և Գահիրեի բարեկամներս կշաբունակեին իրենց զարմանալի լռությունը, հակառակ իրարու ետևե գրած նամակներուս։ Ու ա՜լ անկեց ետքը, մինչև 905, երբ վերջապես մեկնեցա Պոլսեն, տարին երկու-երեք հեղ չափեցի ոս-

տիկանության բանտը՝ միշտ ափ մը ոսկի նետելով գայլերուն բերանը՝ ազատելու համար։ Փչացած էի, այո՛, փչացած էի,— անջրպետեց Հրանտ, որուն ճակտին վրա քրտինքի կայլակներ շարված էին, ու աչվերներուն մեջ ալքոլին հարուցած փայլատակումին հետ կատաղության կայծեր կշողային. ու պահ մը գոցեց զանոնք, կլլելու համար կանանչորակ ըմպելին, որ թոթվեց անոր մարմինը։

Հետո, ան նորեն շարունակեց՝ իրարու վրա քանի մը հեղ ուժգին մը քաշելե ետքը սիկառը.

— Երկու հարյուր ոսկիի գումար մը մնացած էր քովս, հազարները թոած գացած էին (ու ափին մեջ բերնովը փչեց մինչև մատները). որոշեցի փախչել Պոլսեն, դեռ բոլորովին չփչացած. 59 ոսկի ծախսեցի ինքզինքս մինչև Քեռսթենձե նետելու համար... Շունչս Կալաց առի, Ասատուրը գտնելու հույսով. ափսո՜ս, ոչ խանութ գտա, ոչ Ասատուր. ըսին, թե ան շատոնց մեկնած էր Ամերիկա՝ լմնցնելե հետո ձեռքը գտնված դրամը, հետին չքավորության մեջ։ Գլխիկոր թողուցի Կալացը, անցա Պուքրեշ, Վիեննա ու Փարիզ հասա հազիվ հարյուր ոսկի գումարով մը... Գործ մը ընելու դիտավորությամբ՝ միացա թշվառականի մը, որ զիս համոզեց, թե մեծ շահ կար պարսկական ու հնդկական թանկագին քարերու առուծախին մեջ։ Իրավ ալ առաջին հարվածով բավական կլորիկ շահ մը ըրինք. ընկերոջս նկարագրին անծանոթ՝ ամեն կերպ անձնատուր եղա իրեն ու օրին մեկն ալ անհայտ եղավ ան՝ ամեն բան տանելով, քարերն ու դրամները և զիս թողլով փողոցը՝ անոթի և անդրամ...

Այս ամբողջ ցավագին պատմության միջոցին լուռ ու մունջ մտիկ ըրած էի զինքը, առանց ոչ մեկ անգամ ընդհատելու։ Տեսա որ՝ այդ դժնդակ կետին հասնելուն՝ կանգ առավ Հրանտ՝ մտածմունքներու մեջ խորասույզ, դեմքը տարօրինակ կերպով եղծված։

— Հետո՞,— հարցուցի՝ այդ վշտալի ոդիսականին վախճանը հասկնալու անհամբեր։

— Հետո՞,— կրկնեց երեսս նայելով հիմարորեն,— ազիլ մը ինկա քանի մը օր խնամվելու համար, որովհետև հուզումես ջղային տագնապներ ունեցա։ Անկից դուրս ելլելուս պես ուրիշ մտածում չունեցա, եթե ոչ իսկույն Եգիպտոս նետվիլ՝ Ղուկաս Կեոմըրյուկճյանին, որ անշուշտ ողջ էր և անհետացած չէր մեր վերջին ոսկիներուն հետ, ինչպես մյուսները։ Մարսիլիայեն բեռի շոգենավ մը սպրդեցա գրեթե գաղտագողի և նավաստիներու աշխատությանց մասնակցելով՝ հասա Բորտ-Սաիտ, ասկեց ամիս մը առաջ։ Քանի մը օր ետքը հաջողեցա շոգեկառքի դրամ մը ձեռք ձգել և շունչս Գահիրե առնել, ուր առաջին գործս եղավ Ղուկասը փնտռել։ Ես կհուսայի երկաթեղենի խանութի մը մեջ գտնել զինքը, բայց ահա բոլորովին տարբեր դիրքով մը ներկայացավ ինծի։ Երբոր հայ սրճարանի մը մեջ անոր անունը տվի, ամեն մարդ զարմացմամբ ինծի նայեցավ, կարծես ըսել ուզելով, թե ի՞նչպես կհամարձակեի ատանկ մեկ մարդ մը հարցնել, փնտռել։ Ե՞ս, ողորմելի թափառաշրջիկս. միամտորեն ըսի, թե ես անոր մոերիմ բարեկամն էի և իր գործին ընկերը. քահ-քահ մըն է փրցուցին. նեղված, շվարած, շուրջիններուս երեսը կնայեի, անոնց արգահատանքի ու ծաղրի նայվածքներուն տակ ջախջախված։ Հետո անոնցմե մեկը, գուցե մեղքնալով զիս, ըսավ, թե սխալած ըլլալու էի, որովհետև Ղուկաս Կեոմրյուկճյանը շատ հարուստ մարդ մըն էր, թե մեծ ու փառավոր ափառթման մը կնստեր, պանքեռե մը տարբերություն չուներ, հողատեր էր և մեծապես ազդեցիկ պորսային մեջ։ Այս պարագաները իմանալով, ներքնապես սասպիկ կուրախանայի, ինքզինքս փրկված կնկատեի, քանի որ բարեկամս այդքան հարստացած էր։ Իսկույն դուրս ելա սրճարանեն, Ղուկասը գտնելու համար շուտով, ինչ որ շատ դժվար չեղավ։ Գրասենյակը արդարև պանքա մը երևցավ ինծի՝ դուրսեն, երբ ակնարկ մը նետեցի ներս։ Արապ դռնապանը դրանը առջև կեցուց զիս. բարեկամիս անունը տվի. մարդը վրաս գլուխս նայեցավ և արապերեն բաներ մը ըսելով, թող չտվավ, որ ներս մտնամ։ Անմիջապես թուղթի կտորի մը վրա գրեցի. «Սիրելի Ղուկաս, եկած եմ, գրասենյակիդ դուռն եմ այս պահուս» և ստորագրեցի։ Արապը առավ թուղթը և ներս մտավ. հինգ վայրկյան ետքը եկավ՝ տված թուղթս ձեռքը, կասկածոտ մը սանկ նորեն չափչփեց զիս և երկտողս ինծի տալով. «խավակա մուշ հենա»,— ըսավ կտրուկ և խոժոռ։ Ի՞նչ ընեի, լեզու չէի գիտեր այդ վայրենիին հետ բացատրվելու համար։ Եթե խավական հոն չէր, ինչո՞ւ ուրեմն թուղթս մինչև ներս տարավ։ Արդյոք, կմտածեի, ուրի՞շ Ղուկաս Կեոմըրյուկճյան մըն էր ատ, որ զիս չէր ճանչնար։ Փորձ մըն ալ ըրի ներս մտնելու, բայց արապը «եալլահ, ըռ՛ւհ» մը պոռալով զիս դուրս հրեց և գրասենյակին դուռը գոցեց։ Վարանում, շփոթություն, զայրույթ իրար խառնված էին ներսս։ Դուրս ելա փողոցին մայթին

վրա սպասելու համար, մինչև որ Ղուկաս դուրս ելլար և այն առեն դյուրին էր զայն ճանչնալ... Կես ժամ չանցած՝ գեղեցիկ կառք մը եկավ կեցավ շենքին դռանը առջև։ Աչքս այդ դուռին սևեռած՝ դիմացի մայթին վրա կեցած էի։ Ի՞նչպես եղավ, չեմ գիտեր, մեկ միջոց մը ուժգնորեն և հանկարծակի դռնեն դուրս մեկը ելավ, ցատկեց կառքին մեջ, և կառքը սահեցավ գնաց իր քաուչուկ անիվներուն վրա։ Ու ես քարացա՝ մնացի հոն, քայլ մը առնելու անկարող. այո՛, տեսած էի, Ղուկասն էր, մեր բարեկամը, բոլորովին փոխված, գեր, առողջ, փառավոր հագված. ու տեսած էր զիս, տեսած էինք զիրար, փայլակի արագությամբ։ Ու կառքը արդեն հեռացած էր, երբ չորացած կոկորդես ձայն մը ելավ. «Ղուկա՛ս, Ղուկա՛ս»...։

Հրանտ, դեփ-դեղին կտրած, գրեթե շնչասպառ, ընդհատեց խոսքը. մատները, որոնցմով բռնած էր սիկառը, կդողային և գերագույն ճիգի մը մեջ, կարծես ինքզինքին դեմ գոտեպնդվելու համար, դժկամորեն ապսենդին գավաթը բերնին տարավ...

— Այո՛,— շարունակեց,— Ղուկասն էր, մեր պատվական Ղուկասը, բայց դժվարություն մը կտեսնայի, կզգայի անոր հետ դեմ-դիմաց գալու։ Չէի ուզեր հավատալ, թե ան չէր ուզեր տեսնըվիլ ինծի հետ. մեր բազմամյա բարեկամությունը և մանր երկաթեղենի գործը կար... Հայուն սրճարանը դարձա նորեն, ճար մը փնտռելով։ Թուղթ մը առի և նամակ մը գրեցի. «Սիրելի Ղուկաս, ըսի, ես եկած եմ. սոսկալի ձախորդությանց հանդիպեցա. խնդրեմ, շուտով տեսնվելու դյուրություն մը տուր ինծի. այսօր իրիկվան 5-ին նորեն գրասենյակդ կուգամ»։ Եվ նամակը առանց փուլի ձգելի փոստան։ Հուսալից, ժամը 5-ին նորեն ներկայացա, միևնույն արապը դեմս ելավ նորեն. «խավակա՛» հարցուցի. «մաֆիշ» պատասխանեց իր բիրտ ձայնովը. բարկացած, այլայլած, ուզեցի բռնության դիմել ու ներս խուժեցի. արապը վրաս հարձակեցավ. իրարու փաթթվեցանք։ Ելած աղմուկեն երկու երիտասարդներ ներսեն դուրս վազեցին ու զիս ազատեցին արապին ձեռքեն. շնչասպառ, մոլեգնած՝ կուզեի նորեն հարձակիլ այդ վայրենիին վրա, երբ երիտասարդներեն մեկը «ո՞վ կուզեք» հարցուց։

— Այս գրասենյակին տերը Ղուկաս Կեոմրյուկճյանը չէ՞,— հարցուցի։

— Այո՛,— ըսին միաբերան։

— Լա՛վ, զիս իր քովը տարեք։ իմ վաղեմի բարեկամս է,— ըսի։

Երիտասարդները իրարու երես նայեցան քմծիծաղով մը, հետո ինծի պատվիրեցին, որ դուրսը, դրանը առջևը սպասեմ խելոք մը, պատասխան ստանալու համար։ Դուրս ելա ու սպասեցի, քանի մը վայրկյան ետքը անոնցմե մեկը ձեռքը դռնեն դուրս կարկառելով, կըսեր ինծի.

— Ա՛ռ, բայց ուրիշ անգամ հոս մի՛ հանդիպիր...

Մեքենաբար առի ինծի երկնցած այդ ձեռքին պարունակությունը ու, խելակորույս, դուրս ելա այդ խեղդող վայրեն... փոթյ

— Հո՜ս է, հո՜ս, ամբողջ մարդկային բարոյականը հո՜ս է,— գոչեց հու
ուիթը մատնանշելով կուրծքին վրա։

Ու անհայտ եղավ մութին մեջ։

ՁԿՆՈՐՍԻՆ ՍԵՐԸ

Ա.

Առտուները, արևին ծագելեն առաջ, Կումիկ, ծովերուն վրա ամառվան տոթերեն և ձմեռվան քամիներեն չորցած, կնճռած մորթով քսանհինգ տարու երիտասարդ, նավակայքին խոնավ և ստվերոտ մթնոլորտը կշնչեր այն ջերմեռանդությամբը, զոր հավատացյալը կունենա աղոթատեղիին մեջ, աստվածային պատկերներուն առջև։ Հոն վերը կպառկեր, տանիքին թանձր սև գերաններուն խաչաձևումեն կազմված խցիկ մը, անճանաչ խշտիքի մը վրա, ողորմելի շնհարկ, ուր ան իր խոնջաբեկ անդամները կփռեր, իբր թե փետրալից անկողնի մը վրա ըլլար։ Անոր քով, գետինը, վարակի մը ծակը, աշտանակի վերածված, կիսամաշ մոմ մը կկրեր, չորս կողմը կույտ-կույտ հալած եղերով, որոնք մանր պտիկներով վեր կբարձրանային, հետզհետե լայնանալով ու տարածվելով։ Աթոռակ մը, որուն հարդը տակեն դուրս կպոռթկար, փոքր արկղ մը, փայտե կտորվանքներե հարմարցված, հայելիի եռանկյուն բեկոր մը՝ որմնախորշի մը մեջ տեղավորված, ահա ամբողջ կահ-կարասին, որուն մեջ Կումիկ կապրեցներ իր դժնդակ չարքաշ ամուրիությունը։— Արթննալուն պես, կարճ փոթուռը սրունքներեն վեր քաշելով, վար կնետվեր, նավակայքը, ուր կմակաղեին՝ գիշերն ի բուն՝ նավակներն ու մակույկները, իրենց տերերեն որբ, քով քովի, ձողակերտ ցանցերուն վրա հանգչած, որոնց ներքև ջուրը, զսպված, կծեծկվի, կխլրտա մթության մեջ խոլ հեծյուններով, խորհրդապահորեն.— Կումիկ ատոնց մեջ իրը ուներ, իր մակույկը կույրով ծեփած պարզ ողնափայտ մը, իր կյանքը, իր հոգին։ Անոր կոթնած՝ աչքը նավակայքին բացվածքեն դուրս, դիտելով Ոսկեղջյուրի հայելին, զոր արևածագի հովերը քիչ ետքը պիտի գան պարուտակել, սիկառը կքաշե ուժգին շնչառությամբ, մազոտ կուրծքը հոլանի, ոտքը բոբիկ, գլուխը ճենճոտ ֆեսով մը։— Թրնդանոթաձիգ ռազմիկի ճարտարությամբ մըն է, որ հետո ան խսկույն լանջքի, թևերու, թևճակներու շարժմամբ մը կհրե մակույկը, որ կքալե, կառաջանա, կսուրա մինչև նավակայքին բերանը, հոն կապիկի պես վեր կշուլլվի Կումիկ և մակույկին մեջ կցատկե, թևճակները անցընելով։ Ու կբացվի...։ Իր տարրին վրա է։— Իրիկվան, գեղին նավամատույցը, շավելան դրած, հանրության կկարդա իր ձուկերուն դրվատանքը, նախշուն և հրավիրող։ Երբ որ շավելան պարպվի, շիշ մը օղի դրպանած, մակույկը կմտնա և թիակի երկու հարվածներու մեջտեղը, օրհնյալ շիշը բերնին տընկելով, վրաբաց երգի մը մոլտուքներովը նավակայքը կհասնի, հոն, վեր կառնե մակույկը, հացի կտորտանքներ կթխմե կոկորդեն վար, փարջ մը ջուր կխմե ու խցիկը կելլա, որ վայրկյան մը կլուսավորի գետնատարած աշտանակեն։ Բո՜ւֆ, մոմը կմարի՝ նոր եղեր կաթեցնելով չորսդին, և Կումիկ կխորդա...

Բ.

Օր մը, Կումիկ, իրիկվան դեմ, իր դրկից ձկնորս Սարգիսին խուցը մանկամարդ աղջիկ մը տեսավ, որ բոբիկ ոտքերը երկընցուցած՝ գերանի մը կոթներ էր։ Ածուխի պես սև աչքներ ուներ, թուխ դեմքով, վավաշոտ շրթունքներով։ Երիտասարդ ձկնորսը նայեցավ անոր, ուշադիր, խորունկ նայվածքով, սրտին ու հոգիին աչքներովը նայեցավ։ Աղջիկը, անտարբեր, մերկ ոտքովը կատուի մը հետ խաղալու զբաղած, չտեսավ Կումիկին զննումը։

— Ա՜ռ, աղջիկս,— ըսավ ձկնորս Սարգիսը, ծրար մը երկընցընելով աղջկանը,— ամա՜ն, մորդ ըսե չափուխ վլա, զերե չամաշըր չունիմ։

Աղջիկը ծռեցավ, ձեռքովը փայփայեց կատուն, առավ ծրարը և սանդուխքեն իջավ գնաց։ Կումիկ, ներսդին բան մը զգալով, զոր մինչև այն ատեն չէր զգացած, հարցուց Սարգիսին, թե ո՞վ էր այդ աղջիկը։

— Ջամաշըրճի Հոռոփին ախճիկն է... ի՞նչ է ծո, աչքդ խածա՞վ...։

— Ինչո՜ւս պետք, ճանըմ,— ըսավ Կումիկ անտարբեր ձևանալով և իր խցիկը ցատկեց, որ ճիշտ քովն էր։

Հետևյալ օրը, ծովին վրա, բազմալար կարթը վարած միջոցին, Կումիկ սևաչվի աղջիկը կմտածեր, անոր թափթփած մազերը, վավաշոտ շրթունքը և ոտքին մատվները, որոնք կատվին հետ կխաղային։ Ինքնաբերաբար, մակույկը վեր քաշելեն հետոյ

նորեն Սարգիսին խուցը ելավ, փոխանակ իրենին։ Աղջիկը հոն չէր։ Մյուս իրիկունը նորեն ատանկ։ Երրորդ գիշերը աղջիկը եկած էր, ծրարը բերելու. գերանին կոթնած, բոբիկ ոտքը մուճակեն դուրս հանելով, նորեն կատվի հետը կխաղար, անոր բուրդին տաքուկ շոշափումեն կարծես մեղկ հաճույք մը զգալով։ Կումիկ, գունատ և մտածկոտ, դուրս ելավ, իր խուցին դրանը առջև կեցավ։ Երբ աղջիկը կերթար, կանչեց.

— Սա իմին չամաշըրներս ալ կվլա՞ք,— հարցուց։

— Ինչո՞ւ չէ,— ըսավ աղջիկը ու համարձակ մը Կումիկին խուցը մտավ։ Ձկնորսը խոհուն էր։ Նստավ իր անկողնին վրա և աղջիկն ալ հրավիրեց նստիլ կոտրած աթոռակին վրա։

— Բերո՛ւզ,— ըսավ,— սուտ եմ, չամաշըր չունիմ... ամա...

Աղջիկը, զարմացած, մանչուն երեսը կնայեր։—

— Մի՛ սրդողիր, անուշ քուրիկս,— ավելցուց Կումիկ,— չամաշըր չունիմ տալու, ամա ուրիշ բան մը ունիմ ըսելու...

Աղջիկը ոտքի ելավ, աչքերը բացած։

— Ինծի կառնե՞ս, Բերո՛ւզ,— ըսավ երիտասարդը պաղատանքով մը ծնրադրելով անոր առջև։

Աղջկան նայվածքը մեկեն ի մեկ մեղմացավ, անուշցավ, նըստավ նորեն աթոռակին վրա, երկու ձեռքերովը այտերը բռնած, տղուն նայելով պիշ-պիշ։

— Ասկեց կելլամ, Բերո՛ւզ, դուրսը աղվոր օտա մը կպտնեմ.— կշարունակեր Կումիկը,— քի կարգվինք նե, ըռհաթ ըլլաս... էկու չէ մըսեր, Բերո՛ւզ... հոգիդ սիրեմ... չես խաբվիր։

— Կառնեմ,— ըսավ Բերուզ, ոտքի ելլալով...,— ամա մեյ մը մորս հարցունեմ...։

— Բեք աղեկ, հարցո՛ւր։

Ոտքի ելան, Կումիկ անձկոտ փողփողումով մը, Բերուզ՝ իր դեմքի բնական զվարթ արտահայտությունովը։ Ու բաժնվեցան։ Դրանը առջև, փիսիկը, որ կսիրեր այդ աղջիկը, անոր ոտքերուն քսվռտկեցավ՝ կռնակը ուռեցնելով։ Բերուզ ծռեցավ, շոյեց անոր կռնակին բուրդը և գիշեր բարի ըսելով, ելավ գնաց։

Գ.

Իր խշտիքին վրա, այդ երջանիկ գիշերը, ոսկի երազներ երազեց երիտասարդ ձկնորսը։ Ծրագիրներ պատրաստեց այդ աղվոր

սեաչվի աղջկան սիրտը բոլորովին շահելու համար, վասնզի անոր ոչ այնքան փութկոտ ձևերը շատ վստահություն չէին ներշնչեր իրեն։ Ալ դժոխք կերևնար իրեն նավակայքին այդ ծակը, ուր կյանքին ծաղիկը ապրեր էր։ Իր ապագա կյանքին հետին մանրամասնություններուն խլավ, մինչև իսկ պստիկ-պստիկ, կլորիկ մանչու մը ճվոցը լսել կարծեց Բերուզին գրկին վրայեն։ Հույսերու, սարսուռներու, երանության առաջին գիշերը ապրեցավ Կումիկ, բայց հետևյալ առտուն նորեն արևը չէր ծագած, երբոր փոքուրը սրունքներեն վեր քաշելով, իջավ նավակայքը և մակույկը լողացընելով, ծով ելավ։ Իր եռանդեն ձուկերը տուժեցին, որոնցմե մեծ քանակություն մը բռնեց։

— Հայտե՛, հայտե՛, եկեք, եկեք, նոր մարդ պիտի էվելնա,— կմրմռար իր մունջ երեներուն,— Բերուզս ուտել կուզե, կհասկընա՞ք կոր...։— Եվ ողնափայտին խորը խարակաձուկերուն ոգեսպառ տապլտուքները բոլորովին տարբեր հաճույք մը կպարգևվեին հիմա սիրահարված ձկնորսին։ Աղջկան սիրտը բոլորովին գերելու հափշտակության մեջ, Կումիկ այդ օրը իր բռնած ձուկերուն լավագույններեն մեկ օխայի չափ զատելով, տարավ իր խուցը պահեց, պնակի մը մեջ։ Հետո, նավամատույցին վրա, ախորժաբեր հրավերներու սաղմոսերգության մը ուժովը շուտ մը ծախեց չավելայի պարունակությունը և օդին շիշը լեցնելով, մտավ մակույկ. ճամփան, մինչև նավակայք, թևաձակի երկու հարվածի մեջտեղ, ըմպեց կենդանատու նեկտարեն, երևակայությունը գինելով, իր պատրաստած առաջին նվերին ազդեցությանը վրա տարապայման խանդավառված։

Մթնշաղ էր, երբոր նավակայքեն ներս քաշեց մակույկը։ Ընդհանրապես Բերուզը այդ միջոցներուն կերևար։ Ձկնորսը ոտքը իր խցիկին սանդուխին դրած պահուն, հեռվանց, նավակայքին խորեն տեսավ աղջկան շրջազգեստին ծփանքը։ Հուզված, աճապարեց վեր ելավ սանդուխեն, անկեց խուցը մտնելու և իր սրտին հատորը ընդունելու համար։ Խուցիկին դռնեն, սակայն, ակնաթի մը նետելով, աղաղակ մը արձակեց և ներս խուժեց։ Կատուն չորս թաթերով ձուկերուն վրա ինկած,— այն ձուկերուն, զորս Կումիկ Բերուզին պիտի մատուցաներ, և որոնք, իր մտածումովը, հազթանակին նվիրագործումը պիտի ըլլային,— կատաղի ախորժակով մը կուտեր։ Կումիկ՝ մոլեգնության տագնապի մը ենթակա ուժգնությունն բռնեց կատվին պոչեն ու անգամ մը դարձնելով օդին մեջ,

գետինը զարկավ։ Կենդանին, իր խնճույքին մեջ այդպես վայրենորեն ընդհատված, վայրկյան մը գետնաթավալ մնաց՝ սրտակտուր մլավյուն մը արձակելով, բայց ձկնորսը, աղետին առջև, ավելի կատղած, նորից բռնեց զայն ետևի թաթերեն և անողորմ-մինովը օդին մեջ շրջանակներ գծելե հետո ցնորագին արագությունով, զարկավ հաստ գերանի մը։ Կատվին գանգը ճեղքվեցավ, ըղեղը արյունին խառնված, չորս կողմը ցայտեց, և մարմինը, զոր ա՛լ ձգեց Կումիկ, անշունչ ինկավ գետինը՝ բերանը բաց, արյունաթաթավ։ Այդ նախճիրին առջև, ձկնորսը, հանդարտած, սփոփանքի «օխ» մը արձակեց։ Եվ պիտի երթար ձուկերը աչքի անցընելու, երբ ետին դառնալով, Բերուզը տեսավ, որ խցիկին դուրսը կայնած, սառած աչքերով կատվին անշունչ դիակը կդիտեր։ Աղջիկը տժգույն՝ դռան սեմին վրա եկավ։

— Դո՞ւն ըրիր ասիկա, Կումի՛կ,— հարցուց դողդոջուն ձայնով մը։

— Քեզի համար ձուկ պահեր էի, շունշանորդի հայվանը կուտեր կոր... վրա հասա, իշտե թո՛ղ նորեն ուտե նայիմ... փառքը առավ։

Եվ հետո, նորեն ձուկերուն մոտենալով, բռնեց պնակը և Բերուզին դարձավ։

— Նա՛, հոգիս,— ըսավ,— երկու հատը կերեր է, զարար չունի, վաղը տահա շատ կպերեմ։

— Չուզե՛ր,— պատասխանեց աղջիկը՝ կատվին ջախջախված գանգը դիտելով միշտ և հանկարծ երիտասարդին դառնալով.

— Կումի՛կ,— ըսավ,— մարըս խայիլ չըլլար կոր։

— Հե՞, ի՞նչ կըսես, Բերո՛ւզ, ամա՞ն։

— Մարըս խայիլ չըլլար կոր,— կրկնեց աղջիկը ուժգին ու վրիժառու շեշտով մը և դուրս ելավ խցիկեն՝ վերջին ակնարկ մը նետելով արյունոտ դիակին վրա...։

Ու վար իջավ աճապարանքով։ Կումիկ, շանթահարված, կպռար վերեն՝ պնակը ձեռքը.

— Բերո՛ւզ, ոտքդ պագնեմ...

— Մարըս խայիլ չըլլար կոր,— ըսավ վերջին անգամ մը մանկամարդ աղջիկը և նավակայքին ստվերներուն մեջ անհայտ եղավ...։

ՄՐՑՈՒՄ

(Ժամանակակից բարքեր)

Կարապետ իր թաղին Ազգ. Վարժարանին գրասեղաններուն վրայեն իսկ՝ տասնչորս տարեկանին՝ առավ շահուն հոտը, զոր փողոցին վաճառորդները օրնիբուն կտարածեին օդին մեջ իրենց պոչտուքներովն ու իրենց ծախած այլազան ապրանքներովը։

Մնողքին, որ դեռ կուզեին ուսմունք սորվեցնել իրեն, Կարապետ կտրուկ և անդառնալի շեշտով մը ըսավ.

— Էս ուսմունք-մուսմունք չիյտեմ, փարա վաստրկելու նայինք։

Իր հավաքած քառասուն-հիսուն ղուրուշովը ճախարակ, ասեղ, ժանյանոց ժանյակ, դերձան, գնդասեղ և այլն գնելով, տեղավորեց փայտե տուփիկի մը մեջ և փողոց ինկավ, «իփեկճի» եղավ։

Առաջին վայրկյանեն, դեռ այդ մատաղ տարիքին մեջ, ուր հոգիները հեզ են ու միամիտ, Կարապետ մրցման, ամեն բան տապալել քանդելու հաղթանակ ուզող մրցման միկրոբին խայտալը զգաց իր մեջ։ Պոլսո այն թաղերը ընտրեց մասնավորապես, ուր իրեն տարեկից հրեա տղաք «իփեկճիությամբ» կպարապեին։ Հանկարծ երևան ելլող այս սմսեղուկ արհեստակցին սուր կանչն ու մկան սրտակարկառ ցռուկով դեմքը սարսափ ազդեցին մյուսներուն։ Կարճ ժամանակվան մեջ, Կարապետ, անձանձիր հետապնդությամբ ու սիրալիր ու կեղծուպատիր ձևերով անոնց հաճախորդները խլեց՝ աժան, մինչևիսկ վնասով ապրանք տալով։ Քանի մը ամսվա մեջ տփիկը տուփ եղավ, և տուփը՝ կոնակին վրա բարձված փոքրիկ խանութ մը, որ ահ ու սարսափով լեցուց իր հրեա արհեստակիցները, որոնք արդեն կամաց-կամաց ոտվին քաշած էին Կարապետին արշավանքեն աշխարհակալված թաղերեն, փնտռելով շահու նոր ու անկոխ գետիններ, հայ «իփեկճիին» անծանոթ։ Միս-մինակ մնալով, Կարապետ մրցման սիրուն նախապես իր կրած վնասներուն վրեժը լիուլի լուծեց այս անգամ իր հաճախորդներեն, զորս խաբեց խաբխաբեց, փտած, վարնոց և նորությունե ինկած ապրանքները քշելով անխնա։ Ոսկին ոսկիին վրա բարդեց, շահու համեն հոտեն հանկուցված գործը ընդարձակեց, ձիով պտտցուց իր խանութը, իր շահագործման սահմաննե-

ռուն մեջ ոչ մեկ մրցակից թույլատրելով՝ իր ծրագրած ու գործադրած մրցումին անվրեպ հաջողություններն գինովցած։

Օր մը, սակայն, ծաղրանք մը, անպատվություն մը, զրկանք մը իսկ թվեցավ իրեն՝ դրամ շահելու այդ թափառական, ողորմելի ու վերջապես սահմանափակ միջոցը ու ինքզինքը ի վիճակի նկատեց խանութ մը բանալու։ Ծախեց ձին, առնելիքները հավաքեց մինչև հետին սանթիմը և խանութ մը բացավ Պոլիս, Մահմուտ Փաշա։ «Իփեքճիությունը» «թոհաֆճիության» վերածեց։ Անշուշտ, դեռ պստիկ խանութ մըն էր իրը, մանավանդ շատ աննշան՝ բազդատմամբ ուրիշ երկու «թոհաֆճի» խանութներու, որոնց մին ճիշդ իր քովը, մյուսը՝ դիմացը։ Այդ երկու հզոր մրցակիցներու մեջ անտարակույս շատ դժվար պիտի ըլլար Կարապետի գործը։ Ասոնք հեռի էին ըլլալե այն հրեա բոկոտն վաճառիկները, զորս լեղապատառ փախուցած էր փողոցներեն, անոնց հաճախորդները հափշտակելու համար։ Հեշտին հաղթանակ մը տարած էր այն ատենը, բայց համը բերանն էր մնացած։ Սակայն Կարապետ մեծցած էր ա՛լ հիմակ ու մրցման իր դիվային հանճարն ալ միասին։ Ուրիշ մը՝ այս նոր ասպարեզին ու մրցավայրին վրա պիտի մնար ձեռնածալ, համեստ ու հանդարտ, հետամուտ՝ օրինավոր շահելու ու դանդաղաշարժ հառաջդիմության։

Կարապետի մեջ մրցման ոգին ահագին ու ահեղ սավառնանք մը ուներ, խոշոր ամբարտակներու վրայե խուժելու և իհարկին զանոնք կործանելու ատակ։

Խանութը բանալեն հետո,— դեպք մը, որ գրեթե աննշան անցած էր տենդային առուտուրի այդ հրապարակին վրա,— Կարապետ իր սմսեղուկ ցուկովը օրը, միջավայրն ու կացությունը հոտոտեց։ Հաշաղկոտության փայլակներով հղի բիբերովը դիտեց իր պզտիկ խանութն ու հանդիպակաց խանութը։ Միակտուր ապակին վիթխարի ցուցափեղկեր անոնց առաջայքը կզարդարեին։ Ի՞նչ այլազանություն, ի՞նչ ճոխություն, ի՞նչ ճաշակ ապրանքներու ցուցադրման ու հարդարման մեջ։ Բոլոր օրը երկու խանութներն ալ լեցուն էին հաճախորդով, մինչ ինքը բարակ ու փոքրածիր ապակիով ցուցափեղկին ետևեն, ակռաները սեղմած, նախանձի կայծերով այտերն ատրաշեկ, կդիտեր զանոնք՝ շունչը կտրած, ոնգունքը ընդլայնված։

— Ա՜խ, եթե իմս ըլլային սա խանութները,— կմռլտար սեղմ ակռաներուն մեջեն։

Օրը հազիվ հինգ-վեց հաճախորդ ներս կմտներ, վարսնաս, սեղին խեղճությունեն կասկածելի ու պզտիկ գնումներու համար։

Քանի մը շաբաթ Կարապետ ճակատը շփեց, քունքերը քերեց, հևաց, հառաչեց, մռնչեց։ Հետո, հանկարծ զվարթ, ուրախ, շենշող եղավ, երգեց, ծխեց, ծիծաղեցավ։ Հերիվայր փոխված էր «թոհաֆճի» Կարապետ։

Իր երկու արհեստակից խանութպանները, անշուշտ, իրենց զորությամբը ապահովված, բնավ դժգոհ չեղան երրորդ խանութի մը բացումեն, որ ոչ մի կերպով կրնար վնասել իրենց կամ իրենց հետ մրցիլ։ Հայ էին անոնք և երբ տեսան, որ իրենց նորեկ դրացին ալ հայ էր, «ի՞նչ կըլլա, թող ան ալ վաստակի, հայ չէ՞ մի», ըսին ու իրենց գործերով զբաղեցան։

Կարապետին հարակից խանութպանը քառասուն տարեկան հայ մըն էր, Օհան Տերտերյան, գում-գափուցի հսկահասակ մարդ մը, սև խոշոր աչքերով և հաստ ընքվիններով։ Միամիտ ու դյուրահավան մարդու ամենեն պերճ տիպարն էր։ Իր ժպտուն դեմքը երբեմն ահավոր խոժոռությամբ մը կկնճռոտեր։ Բարձրաձայն կխոսեր, և Կարապետ շատ անգամ կիմանար անոր ձայնը, երբ կպոռար իր պաշտոնյաներուն։ Ժամանակ մը չհամարձակվեցավ մինչև իսկ բարևել զայն, անոր դիրքեն, ճոխ խանութեն ու պատկառելի հասակեն սահմռկած։ Բայց առտու մը, սանկ շատ խոնարհաբար իր տված մեկ բարևին, տեսավ, որ Օհան աղան ժպտելով և մտերմորեն պատասխանեց.

— Ի՞նչ է ան նայինք, բարեկամ,— ըսավ,— մեզի դրացի՞ եկար, ո՞ւր տեղացի ես և այլն։

Կարապետ ըսավ, թե ով էր և ուրտեղացի էր և իր խոսվածքին մեջ անանկ համեստություն մը, հարգանք մը և մինչև իսկ վախկոտություն մը դրավ, որ Օհան աղա կամ մեղքցավ զայն, կամ ավելի ճիշդը՝ համակրեցավ անոր։

— Ասուծով դուն ալ առաջ կերթաս, մեզի պես խանութպան մը կըլլաս,— ըսավ։

Եվ իրրև քաջալերանք ավելցուց.

— Գլխուս վրա, շնորհակալ եմ,— պատասխանեց Կարապետ՝ ուրախ և գոհ։

Այն օրեն հետք, բնականաբար, Կարապետ մշակեց իր հա-

բաբերությունը քովի խանութին հետ։ Առտու իրիկուն թեմեննահ ըրավ, լեզվին վրա շաքար ու մեղր դրած, նայվածքին մեջ՝ խոնարհություն և շարժումներուն մեջ՝ արգահատանք հրավիրող ձև մը։

Իր մրցակցին մեկը սիրաշահած էր Կարապետ, գրպանը դրած էր զայն գրեթե։

Կմնար մյուսը։

Մյուսը, Խաչիկ աղա Մորուքյան, զուգադիպությամբ մը ան ալ գում-գափուցի, ավելի տարեց էր, ավելի նրբակազմ, բարեձև, աղեբեկ մորուքով և քիչ մը խոժոռ նայվածքով։ Հավանաբար, անոր մերձենալը ավելի դժվար բան մըն էր։ Կարապետ ամիսներ մը վեր խանութը բացած էր, և Մորուքյան տակավին մինչև անգամ անգիտնալ կձևացներ ճիշդ իր դեմը իրեն մրցակից խանութ մը բացված ըլլալը։ Կարապետ, օրվան մեջ, երբեմն պատրվակներ ստեղծեց այդ խանութին մոտենալու, երբ տերը դուրսը, դրան առջև կկենար, բայց մարդը չէր տեսներ զինքը։ Սակայն, դիտեց, որ շատ անգամ այդ երկու խանութպանները միևնույն ժամանակ գոցելով խանութնին՝ միատեղ կելլային կերթային։ Բարեկամ էին, ըստ երևույթին, մտերիմ ու սիրալիր։ Արհեստին մրցակցությունը զանոնք թշնամի ընելէ հեռի, կարծես իրարու մոտեցուցած, մտերմացուցած էր ընդհակառակը։

Արդ, օր մը, Կարապետ իր քովի խանութպանին ըսավ, թե այն իրիկունը ինքն ալ Գում-Գափու պիտի երթար, հետևապես իրեն ընկերանար, եթե արգելք չէր ըլլար։

— Վա՞յ, անանկ է նե,— պատասխանեց Օհան աղա,— այս իրիկուն քեզի հետ քանի մը հատ ճնկենք։

Ու պատահեցավ, որ դիմացի խանութպանն ալ նույն ժամուն գոցելով իր խանութը, ընկերացավ Կարապետին և Օհանին։ Այս վերջինը ծանոթացուց իրեն նոր արհեստակիցը Խաչիկ աղային, որ քիչ մը կարծես արհամարհանքով վերաբերվեցավ իր նոր ծանոթին հետ։

Բայց և այնպես, ետքը, կաղինոյին մեջ, օղիի գավաթներուն ազդեցությանը տակ, Խաչիկ աղա ալ մտերմացավ իր դրացի խանութպանին հետ և սիրալիր ու բարյացակամ եղավ անոր նկատմամբ։

Օղիի սեղանին առջև Կարապետ տեսավ, թե իր դրացի Օհան աղան որքան դյուրաբորբոք, բուռն ու անմտած մարդ մըն էր, Խաչիկ աղա նույնքան հանդարտ և պաղարյուն, քիչ խոսող և խոհուն անձ մը։ Նկարագիրներու այդ հակընդդիմությունը ուրախությամբ լեցուց Կարապետը։ Անկեց ետքը քանիցս այդպես Գում-Գափու երթալու պատրվակին տակ, Կարապետ ընկերացավ երկու թոհաֆ-ճիներուն և մտավ անոնց մտերմությանը մեջ։ Իմացավ խուլ հրճվանքով, թե որքան որ ալ Օհան և Խաչիկ բարեկամ էին՝ իրենց խանութներուն մերձավորության բերմամբը, զիրար շատ չէին սիրեր. նախ իրենց հակոտնյա նկարագրին և հետո ընտանեկան հին ու անմոռանալի խնդրո մը պատճառով։ Իրենց երիտասարդությանը, Օհան և Խաչիկ միևնույն աղջկան «զարնված» էին։ Ասկեց բախում մը, որմե Խաչիկ ավելի նուրբ և ավելի խորամանկ, հաղթող ելած էր և աղջկանը հետ ամուսնացած։ Օհան թեև մոռնալ ցուցուցած էր այս հարվածը, երբեմն անոր ցավը կզգար իր հոգիին մեջ, հակառակ ինքն ալ ամուսնացած ու զավակներու տեր եղած ըլլալուն։ Կարապետ դիտեց նաև, որ Խաչիկ միշտ հեգնական շեշտ մը ուներ Օհանին հետ, որ ատկից չափազանց նեղանալը ակներև ցույց կուտար։

Մրցման մարտադաշտին վրա ռազմական ծրագրի մը հարդարմամբը ու գործողությամբը զբաղելով հանդերձ, Կարապետ չանաց իր գործը զարգացնել։ Իր դրացիին բարի հոժարությենեն օգտվելով, անոր երաշխավորությամբ ապրանք վերցուց, տեսակը ճոխացուց, հաճախորդը շատցուց։

Բայց այդ հառաջադիմությունը զինքը, իր անկուշտ ախորժակը գոհացնելէ շատ հեռի էր։

Օրվան մեջ քանի-քանի անգամներ, աչքերը ըղձանքի կայծերով բռնկած, իր հարուստ դրացիներուն ցուցափեղկերը կզններ, «ա՜խ, սըվոնք իմս ըլլային»,— մոլտալով։

Պալաթեն, ուր կբնակեր, Կարապետ Գում-Գափու փոխադրվեցավ, տեղվույն վրա կարենալ գործելու համար։

Այդ միջոցներուն Գում-Գափու թաղային խնդիր մը ծագեցավ։ Երկու հակամարտիկ կուսակցություններ բուռն պայքար մը մղեցին երկու խումբ ընտրելիներու շուրջ՝ նոր Թաղ. խորհուրդի մը կազմության համար։ Օհան և Խաչիկ հակառակորդ կուսակցությանց մեջ գտնվեցան։ Խաչիկ աղա իր մեկ հարուստ և ազդեցիկ ազգականը կուզեր թաղական ընտրել տալ։ Օհան կհակառակեր ատոր։ Բայց Խաչիկ աղային կուսակցությունը, ավելի զորավոր, տարավ հաղթանակը։ Կարապետ ալ պայքարին մեջ դեր մը խա-

ղաց, ձեռքի տակն ուժ տալով Խաչիկ աղայի ընտրելիին հաջողությանը։

Ընտրական հանձնաժողովներուն միջոցին, Գում-Գափուի գետնատան մեջ, ուր սովորաբար կհավաքվեին իրիկունները շուկացիք, տաք վիճաբանություններ կատարվեցան, մինչեւիսկ իրիկուն մը Օհան և Խաչիկ, գլուխնին տաքցած, զիրար բարձրաձայն նախատեցին։

Ասիկա բարեղեպ առիթ մը եղավ, որ Կարապետ, մտերմական խոսակցության մը միջոցին, Օհան աղային ականջին բաներ մը փսփսաց Խաչիկ աղայի մասին։ Իբր թե այս վերջինը ըսած կըլլա Կարապետին, թե՝ շատ չմտերմանա Օհանի հետ, որովհետև կասկածելի և վտանգավոր մարդ մըն է ան։

— Ես վտանգավոր մարդ եմ մի՞,— պոռաց Օհան աղա կատաղությենեն փրփրելով։

Եվ ահագին ձեռքը սեղանին զարկավ, շիշեր ու գավաթներ տապալելով։

— Զավակներուդ վրա կերդնո՞ւս, որ ինձ խմացած ըլլալդ չհայտնես,— ըսավ ուրիշ իրիկուն մը Կարապետ Օհան աղային։

— Կերդնում։

— Աղեկ. Խաչիկ աղա երեկ ինծի ըսավ քեզ համար, թե պիտի սնանկանա մոտերս, և թե գործերդ շատ դեշ վիճակի մեջ են...

Օհան աղային դեմքը կաս-կարմիր եղավ. թավ հոնքերուն տակ աչվքները արյունով լեցվեցան, կուրծքը ահեղորեն ուռեցավ, և բառերը զորս ուզեց արտասանել, կոկորդին մեջ խեղդվեցան։ Քանի մը րոպի ֆշշաց միայն։ Կարապետ անձկությամբ դիտեց իր զոհին այս այլակերպությունները։ Եվ շարունակեց.

— Խրատեց ալ զիս, որ այլևս գործի հարաբերություն չունենամ քեզի հետ։

Այս անգամ Օհան աղային այտերը դալկահար գունատվեցան, և մեկ քանի անհաջող կաղկանձյուններ ելան կոկորդեն։

— Բայց ես կարևորություն անգամ չեմ տար անոր խոսքերուն,— վերջացուց Կարապետ՝ գոհունակությամբ խմելով իր օղին։

Մեր թոհաֆեին խնամքը ունեցավ նաև նույնիմաստ վերապրումներ ընելու Օհան աղայի՝ Խաչիկ աղայի մոտ, այս վերջինին զարկված կատաղության դիմաշարժությունները լրտեսելով անոր ընդհանրապես խաղաղ ու անվրդով դեմքին վրա։

Շատ չանցած, երկու վաղեմի արհեստակիցներ, իրենց միջև

ծագած թշնամության մասին առանց բառ մը փոխանակելու, խըզվեցան, և իրար հետ «բարև, աստծու բարինը» դարձեցուցին բոլորովին։

Իր խանութին ցուցափեղկին ետև ապաստանած, Կարապետ հրճվանքով իր ձեռքերը կշփշփեր, դիտելով երկու խանութպաններուն ատելությամբ ու վրեժխնդրությամբ վառված ակնարկները՝ իրար դեմ արձակված։ Ու իր ամենօրյա հանկերգը շրթներուն վրա էր.

— Ա՜խ, սա խանութները իմս ըլլային։

Զարմանալի դյուրաթեքությամբ մը, Կարապետ՝ զիրար այլևս մահու չափ ատող այդ երկու մարդոց հետ ալ իր հարաբերությունը կպահպաներ, կմշակեր, սիրալիր ու մտերմական, առանց ասոր համար անոնցմե այպանվելու, նույնիսկ կարծես թե անոնց լռելյայն հոժարամիտ հավանությամբը, որովհետև անոնց միակ կապը ինքն էր այնուհետև և որպեսզի այդ կապին շնորհիվ անոնք հրահրեին իրենց փոխադարձ ատելությունը և անոր միջոցով կարեւնային նախատել և զրդռել զիրար։ Կարապետ, հետևապես, անհրաժեշտություն մը դարձավ այդ մարդոց համար։ Հետո, իր երեվութական անշահախնդրությունը երկուքին համար ալ արևին պես պայծառ էր։ Մինչև անգամ այդ անմեղը իրենց ատելության և թշնամության մեկ զոհը կնկատեին և ասիկա կերպով մը փոխարինելու համար երկուքն ալ կշանային օգտակար ըլլալ անոր՝ այժմ ապրանքներ տալով, փոխտվություններ ընելով, իրենց տուներն իսկ տանելով, երկկողմանի զրպարտությանց համար, զորս նենգամիտ թոհաֆեին խնամքը ունեցավ հետզհետե դարբնելու և արծարծելու, անոր առջև ջանալով ինքզինքնին չքմեղացնել։ Կարապետ Մորուքյան և Տերտերյան ընտանիքներուն բարեկամը եղավ հավասարապես, սիրվելով և մեղքցվելով, պաշտպանվելով և նպաստավորվելով անոնցմե։ Մանավանդ նրբամտությունը ունեցավ անոնցմե յուրաքանչյուրին ներշնչելու այն հավատքը, թե ինք՝ իսկապես և անկեղծորեն միմիայն իր բարեկամն էր և մյուսին՝ շահու համար միայն կապված։

Երկու խանութպաններուն այս խուլ և անագորույն պայքարին միջոցին Կարապետ լեցուց իր խանութը ապրանքով, այլազան և արժեքավոր, և հաճախորդները շատցուց։ Մանավանդ որ անգին կոիվը, թեև անաղմուկ, սաստկադույն աստիճանի մը հասավ։ Խաչիկ աղա, հակառակ իր բնածին պաղարյունությանը,

իր խանութին դրան առջև կեցած, շատ նշանակալից ու ամբարտավան և մարտահրավեր կերպով պեխերը կոլորտեր, աչքերը իր հակառակորդին խանութին հառած դաժանորեն։ Անոր այս գրգռիչ ընթացքը շատ դիպավ Օհան աղային, որ արդեն դյուրագրգիռ, իր կողմեն նույնքան ամբարհավաճ եղանակով մը հակակշռելու համար մյուսինը. իր խոշոր հասակովը, ձեռքերը ետին կապած, վեր-վար պտտեցավ խանութին առջևը, հաճախորդ, առուտուր և այլն մոռցած, և ամբողջ մարմնովը տենդային մոլեգնություն մը դրդված։

Կարապետին մեկ նոր և արյունալի բանսարկությունը դեպքերը գահավիժեց։

Գիշեր մը, միշտ օղիի սեղանին առջև, երդումի սովորական բանաձևը կատարելե հետո, իբր թե զվարթությամբ և ակամա, Կարապետ հայտնեց Խաչիկ աղային.

— Օհան աղա կըսե, որ Թերեզա հանըմը ձեր կինը ըլլալե առաջ իրեն հետ ամեն բան ըրեր լմնցուցեր է... բայց ես, բնականաբար, չհավատացի։

Եթե դիպվածով Օհան աղան նույն տեղը գտնվեր, անշուշտ, ոճիր մը հավանական էր։ Հեք Խաչիկ աղա իր ընտանեկան պատվույն տրված այդ ամեհի հարվածին տակ շլմորած՝ դանդաչելեն տուն գնաց։ Հետևյալ օրը, եթե չըլլար Օհան աղայի պարթև հասակը և ֆիզիկական բացահայտ ուժը, Խաչիկ աղա ապահովապես հարձակված էր անոր վրա։ Բայց իսկույն Կարապետ անոր ընծայեց նյութական վրիժառության մը դյուրին միջոցը։

Օհան աղայի շահու գլխավոր աղբյուրներեն մեկն էր մազի ներկ մը, որ մեծ քանակությամբ կսպառեր և որ կըսեին, անոր գործին ընդարձակվելուն գլխավոր պատճառն էր եղած։ Արդ, Կարապետ հաջողեցավ գտնել հրեա մը, որ գաղտնիքը ուներ մազ ներկելու ջուրի մը, տեսակին մեջ առաջնակարգ, և որ հավանեցավ կլորիկ գումարի մը փոխարեն Կարապետին հանձնել այդ գաղտնիքը։ Ասով գինված, Կարապետ Խաչիկ աղային մոտեցավ։ Նախ, իրեն հատուկ նրբամտությամբ մը անոր մեջ, հրահրեց քինախնդրության հնոցը, զոր տարիե մը ի վեր պատրաստելու վրա էր, և հետո իր ներկին խնդիրը պարզեց, բացատրեց, որ եթե այդ ներկը իր խանութին մեջ շատ աժան գինով ծախվեր, Օհան աղային ներկը կիյնար, կլմննար։ Ուրախության շեկ փայլեր շողացին Խաչիկ աղային աչքերուն մեջ. այդ երանելի ներկը իր թշնամիին փճացումն էր։

— Շինե՛, բե՛ր՝ ծախենք,— ըսավ,— ի՞նչ են պայմաններդ։

Հոս՝ Կարապետ ճակատը շփշփեց վարանմամբ։ Պայմանն՞ը։

— Պայմաններս շատ ալ թեթև չեն,— ըսավ ժպտալով։

— Ինչ որ ալ ըլլան, առաջվընե ընդունած եմ,— պատասխանեց Խաչիկ աղա, ձեռքը թոհաֆճիին երկնցնելով ի նշան հավանության։

— Պետք է որ մեր երկու խանութները միացնենք և ընկեր ըլլանք,— ըսավ Կարապետ կշռավոր և խուլ ձայնով մը, ներքին զսպված հուզումե մը թրթռուն.

— Ընկե՞ր,— կրկնեց Խաչիկ աղա, ճակատին քրտինքը սրբելով մատներովը։

— Այո՛, ընկեր,— արձագանքեց անագորույն խանութպանը։

Շաբաթ մը ետքը Խաչիկ Մորուքյան և ընկ. ֆիրմայով մազի ներկ մը հրապարակ ելավ, տուփը՝ տասը դրուշի, մինչ Օհան Տերտերյանի ներկը քսան դրուշ կարժեր։ Օհան աղա ափ ի բերան եղավ։

— Վա՜յ թշվառական սրիկա,— պոռաց,— տունս տեղս պիտի կործանե, սա նայե...

Խաչիկ-Կարապետ ընկերությունը երկունքի մեջ գաղտնիք էր միայն։ Բայց շատ չանցած, Կարապետ իր խանութը ճոխացուց՝ ահագին ապրանք բերելով և նույնիսկ երկու պաշտոնյա վարձելով։ Խանութին ճակատը ընդարձակեց խոշոր և հոյակապ ցուցափեղկով մը, որ վար չէր մնար հիմակ իր մրցակից ցուցափեղկերեն։ Ներկը ահագին ընդունելություն գտավ. անոր պատճառով Կարապետ գերակշիռ դիրքի մը տիրացավ Մորուքյան վաճառատան մեջ, իր ազդեցությանը տակը ճզմելով հեք Խաչիկ աղան, որուն կյանքը բարոյապես փճացած էր, անմարելի վրիժառության կրակներուն մեջ անդադար ճենճերված։

Նոր ներկին հրապարակ ելլելն և մեծաքանակ վաճառման մը արժանանալեն հետո հասկցվեցավ, որ Տերտերյանին գործը իր ներքին հաջողությանը հետ կապված էր։ Մրցման չդիմանալով՝ ինկավ ան, ու եկավ վայրկյան մը, ուր Տերտերյանին ներկը բոլորովին դադրեցավ վաճառվելե։ Օհան աղա կմոնչեր, կդառնար վաճառատանը մեջ, կհայհոյեր, կքֆրեր թիապարտի մը պես, բայց

ստեղծված նոր կացության դարմանը մը չէր գտնար։ Դիտած էր, որ խանութին առջև իր ցուցադրած հոխորտանքները տղայական շարժուձևեր էին, անօգուտ և ծիծաղելի։ Գործը սկսած էր վտանգվիլ, մանավանդ հորմե հետե քովի աննշան խանութն ալ անակնկալ փայլ ու ճոխություն ստացած էր։ Կարապետ այլևս առաջվան պես քծնական ձևեր չուներ իր դրացի խանութպանին հետ. մենծաղայական էր անոր պես և անկեց ալ ավելի։ Վերջին ժամանակներս իր կրած բուռն հուզումները, բարկություններն ու կատաղության տագնապները շատ բան պակսեցուցած էին Օհան աղային խրոխտ առնականությունեն։ Սոսկմամբ դիտեց, որ գործը վտանգավոր ուղղության մը մեջ էր, և որովհետև տակավին վստահություն ուներ Կարապետի վրա, իր «տերտը» բացավ անոր։

— Վիճակս աղեկ չէ, Կարապետ, օղլում,— ըսավ,— սա դիմացի խայտառակին ներկը խերս անիծեց. ասանկ երթա նե, լմնցած եմ, ճար մը գիտե՞ս։

— Ճար, ճար, ճար,— մրմռաց նենգավոքը և մեկենիմեկ։

— Օհան աղա,— ըսավ,— կուզե՛ս, որ քեզի փրկեմ։ Ընկեր ըլլանք, կփրկվիս։

— Ընկե՞ր,— կմկմաց հեք մարդը՝ խոլոր-մոլոր Կարապետին նայելով։

— Այո՛, ընկե՛ր,— արձագանքեց բանսարկուն։

Երկու օր ետքը պայմանագրություն մը կնքվեցավ, որուն համեմատ Կարապետ Սանդուռճյան՝ Օհան Տերտերյանի գործին ընկեր կըլլար և փոխադարձաբար։

Այսպես, խաչիկ աղայեն ետքը, Օհան աղան ալ ափին մեջ առավ Կարապետ. ու ա՛լ անկեց ետքը բնավ հոգը չըրավ, որ անոնք կրնան հասկնալ, թե երկու թշնամիներուն ալ գործին ընկեր է ինքը, վասնզի նյութական և բարոյական անանկ դիրքի մը հասած էր, որ բանե մը քաշվելու պետք չուներ։ Արձակ համարձակ, վարեց երեք խանութներն ալ։ Արդեն, քանի մը ամիս ետքը, Օհան աղա անձնապես անանկ ծանրածանր պարտքերու տակ ընկճված էր, որ Կարապետ երկու հարյուր ոսկի դրավ անոր ափը և դուրս ըրավ։ Գալով Խաչիկ աղայի, անոր գործը ավելի դյուրին եղավ լմնցնել։ Սպառնացավ ներկը չպատրաստել և ուրիշի մը փոխանցել անոր իրավունքը, եթե չհավաներ թողուլ խանութը երկու-երեք ոսկիի փոխարեն։ Խաչիկ աղան փարան առավ և կոբայլոփ դուրս ելավ։

Այս գործողության հետևյալ առտուն, Կարապետ, պալաթցի երբեմնի աննշան «իփեքճին» եկավ կեցավ Մահմուտ Փաշա փողոցին մեջտեղը և շուրջը նայեցավ. թոհաֆճի երկու փառավոր վաճառատունները, որոնք իր աղքատ իփեքճիի հոգին ատենոք այնքան աքցանած էին նախանձի և հաջողանքի գելաններուն տակ, ահա իրն էին. ինքը կտիրապետեր հիմա երեք վաճառատանց մեջ՝ շնորհիվ մրցումին, անարգ ու եղեռական մրցումին։

— Օ՜խ,— հառաչեց,— իմս են ասոնք... ու հիմակ ա՛լ ապրինք... իբրև պատվավոր մարդ։

Իրավ ալ, թոհաֆճի Կարապետը կարևոր և պատվավոր մարդ է հիմակ. «իր գործին զավակն է»,— կըսեն և 30000 ոսկիի տեր։ Աղգը անով կպարծենա, ու մարդկությունը... նմանապես։

ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Հակառակ տարիներու խոշոր անջրպետով մը բաժնված ըլլալուս իրմե, Մարտիրոս պատվելին տակավին մինչև հիմակ աչքիս առջևն է իր մարմնեղ կազմվածքովը, դուրս պոռթկացող այտերով բեռնավոր իր դեմքովը, եզան խաղաղ ու հեզ աչքերովը, բայց մանավանդ թավաստև, խովային, բարբարոս պեխերովը, որոնք ոչ միայն ամբողջ բերանը կծածկեին, այլև իրենց խիտ ծիլերովն ու ճյուղերովը ռնգունքները խցելե հետո քթին սահմանները կթևակոխեին, մեկ կողմե դեպի աչքերը արշավելու ճիգով մը, մյուս կողմե այտուռեցներեն դեպի ականջները խոյանալու հանդգնությամբ մը։ Մարմնին ամենեն հատկանշական մասը անտարակույս պեխն էր, ու մազի այդ հրաբխային ժայթքումը դեմքեն դուրս, տեսակ մը խորհրդավորություն և պատկառելիություն կուտար Մարտիրոս աղային, որ իր մատվերներուն պերևեթիկ ու փայփայիչ շոշափումներովը արդեն հայտնորեն ցույց կուտար, թե իր էությունը հիմնավորված էր գլխավորապես այդ վիթխարի պեխերուն վրա։ Առանց ատոնց, կմտածեի ես ամեն անգամ, որ անոնք նայվածքս խոշտանգեին, այդ մարդը ծաղրելի բան մը պիտի ըլլար, կարգ մը էակներու մերկությանը պես արգահատելի ու զավեշտական բան մը, համարժեք ֆիզիկական բացարձակ սնանկության։ Իրավ է, թե ամեն անգամ նաև, որ այդ մարդը տեսնելու և անոր հետ խոսելու դրժ-

բախտ առիթը ներկայանար, կատաղի փափագը կունենայի քաշելու, փնթռելու այդ զարհուրելի պեխերը, զորս անմարդկային կգտնեի։

Եվ որովհետև, սակայն, մարդը բողոքական պատվելի մըն էր, թեև շատ երկրորդական տեսակեն, այդ պեխերը բնատուր, աստվածատուր զարդ մըն էին իրեն համար, և ինծի կուգար, որ անոնք, երբ ժողովարանին մեջ իր թավ և ռնգային ձայնովը աղոթք կկարդար, դերը կկատարեին այն ոսկեճամուկ շուրջառին, զոր մեր պատարագավոր եպիսկոպոսները կհագնեին և որուն շքեղությանը տակ պահ մը կմոռնաս, թե կրնա ծածկված ըլլալ գռեհիկ, աննշան և ողորմելի մարդ մը իսկ։ Կխորհեի նաև, որ առանց այդ զարմանահրաշ պեխերուն Մարտիրոս աղան պատվելի չպիտի կրնար ըլլալ։ Անպատճառ այդ պեխերուն իր կողմե մանրակրկիտ գնահատությունը և անոնց պատվելիադրոշմ հանգամանքըն էր, որ զինքը մղած էին նետվիլ ասպարեզի մը մեջ, ուր գուցե չափազանց ողբալի ըլլար ինքը, եթե նախախնամությունը մազի այդ անհեթեթ փունջովը օժտած չըլլար զինքը։ Պատվելիությունը միայն կրնար արդարացնել այդ վայրենախռիվ պեխավորությունը։ Ես տեսած եմ սակայն ուրիշ պատվելիներ, որոնք, ընդհակառակը, բնավ պեխ չունեին, լերկ, զերծ, ողորկ շրթներով։ Ասկեց հետևցուցած եմ, թե բողոքական պատվելի ըլլալու համար արժանավորապես, կամ պետք է ունենալ ահավոր առատությամբ պեխեր կամ բոլորովին լերկ ու մերկ շրթներ։ Ասոնց միջինը անհաջողություն և անձեռնհասություն կենթադրե թերևս։ Եվ իբրև ապացույց այս քիչ մը մտացածին վարկածիս, կրնամ մեջ բերել պարագան պատրիարքարանի բարապաններու և դեսպանատանց կավասներու, որոնք մեծագույն մասամբ օժտված կըլլան թավախիտ, մարտական, ըմբշային պեխերով, և որոնք իրենց դիրքը, իրենց գործը, ապրուստը, կյանքը պարզապես կպարտին մազերու այդ արտասովոր առատությանը՝ իրենց դունչին վրա։ Ասոր մեջ ճակատագրային բան մը կտեսնեմ ես։ Առատ պեխեր ունենալ բախտ մը չէ՞ արդյոք։ Տեսա՞ծ եք խոշոր և հզոր պեխերով մարդ մը, որ ավուր հացի կարոտ ըլլա կամ անգործ։ Անկարելի է։ Եվ ասոր ամենեն բարբառուն ապացույցը, ըստ իս, սա պատվելի Մարտիրոսն էր, որ, ավելի քան վստահ եմ, առանց այդ հազվագյուտ պեխերուն, չպիտի կրնար բարձրանալ մինչև ժողովարանի մը բեմը, կարևոր մարդու երևույթ մը ստանալու և մամավանդ դրամ շահելու համար։ Մուրացկանները, դիտեցե՞ք, մեծ մասամբ պեխ չունին, կամ շատ խեղճ բան մը։ Ամենամեծ հավանականությամբ, իմ հերոսս ալ փողոցաշրջիկ թշվառ մը պիտի ըլլար, եթե Տերը (որուն անունովը կխոսեր միշտ) իր շրթները մազերու այդ պերճ փունջովը զարդարած չըլլար։

Այսպես թե այնպես, Մարտիրոս պատվելին մեր գյուղի ժողովարանին աղոթասաց պաշտոնյան էր։ Իր մասին որոշ կարծիք մը չիկար։ Շատեր, որ առաջուց կճանչնային զինքը, կզարմանային, թե ինչպես այդ ողբալի մարդուկը հաջողած էր այդքան «պատվավոր» աստիճանի մը տիրանալ։ Վասնզի, և ասիկա շատ կարևոր մանրամասնություն մըն էր, Մարտիրոս աղան արտասովոր տգետ մըն էր։ Գերմարդկային ջանքերով հաղիվ թե հասարակ ընթերցում մը հաջողած էր սորվիլ։ Շատ քիչեր էին, որ այդ հաջողության գաղտնիքը կերթային փնտռել անոր բարբարոս պեխերուն մեջ։ Իսկ ես, բնականաբար, չէի զարմանար, և ուրիշներու հաջողությանց խարխուլ ու կասկածելի պատճառներուն չհետամտելու և զանոնք չցանցնելու բնավորությամբ, Մարտիրոս աղային հաջողության համար ալ ըրած գյուտս ինծի կպահեի ու միս-միայնակս կըմբոշխնեի այս եղելության ամբողջ զավեշտականությունը։

Կիրակի օրեր, երբեմն, իրիկվան կմտնեի ժողովարանեն ներս ու կսպասեի, որ կարգը մեր պատվելիին գար աղոթելու։ Չէր ուշանար։ Սև որդենկոտով մը կկենար դասին մեջտեղը և կսկսեր աղոթել կոկորդային միօրինակ աղմուկով մը, որուն մեջ բառերը կհալեին և իրարու կխառնվեին։ Աղոթած միջոցին աչվերները կգոցեր։ Պեխերը թեթևորեն կշարժեին։ Հավատացյալները երեսներին ծածկած՝ կխոնարհեին այդ պատկառելի աղոթասացին առջև։ Ամենեն ավելի այդ պահերուն է, որ պեխերուն բովանդակ անհեթեթությունը կանջատվեր աչքիս։ Կափսոսայի այն խեղճերուն վրա, որ արգահատելիորեն խոնարհած էին ո՛չ թե մարդու մը, այլ այդքան վիթխարի պեխերու առջև։ Այդ հանդիսավոր վայրկյանին հիմար մտածումներ կունենայի։ Կուզեի պոռալ այդ անգիտակից երկրպագուներուն՝ իրենց վարմունքին բոլոր ծաղրելիությունը, բեմը ցատկել և բռնելով այդ պեխերեն՝ զանոնք ցույց տալ հավատացյալ ժողովրդյան, երևան հանելով գործին գաղտնիքը։ Բայց կամաց մը կառնեի կքալեի՝ չուզելով գայթակղություն մը պատճառել։

Մինչև 96 թվականը մեր գյուղին մեջ Մարտիրոս պատվելին շարունակեց ըլլալ ամենեն հարգելի և պատվավոր մարդերեն մեկը, և վերջին ատենները, նույնիսկ, ի բացակայության քարոզիչին, անոր դերը կստանձներ և հոգևորապես ու մտավորապես կմխիթարեր ալ բողոքական հոտը։ Ասիկա իր պեխերուն հմայքին պսակավորումը եղավ։

Բայց ահա եկավ հասավ 96-ի ուրագանը։ Ամեն բան տակնուվրա եղավ Պոլսո մեջ։ «Կրցողը թող փախչի»-ի ահազանգը հնչեց ամեն կողմ։ Փախան։ Փախանք։ Ոմանք օրեր ու ամիսներ հետո, զիրար գտան, դիպվածով, արտասահմանի անհուն տարածությանը վրա։ Իսկ շատեր հավետ կորսնցուցին զիրար։ Ես այն հազվագյուտ բախտավորներեն մեկը եղա, որոնք դուրսը գտան իրենց սրտին սիրածը կամ մտքին փնտռածը։ Արդարև Բուլգարիո Վ... քաղաքին մեջ, 96-ի վերջերը, օր մը հանկարծ հանդիպեցա Մարտիրոս պատվելիին։ Աղմկալից քրքիջ մը բարձրացուցի։ Մարդը շփոթված երեսս կնայեր։

— Մարտիրոս աղա, ի՞նչ լուր. դո՞ւն ալ փախար,— հարցուցի։

— Մարդ մնա՞ց, որ չփախչի,— ըսավ՝ իր պեխերու մացառուտին վրայեն թոթվելով ձյունին փաթիլները, որ հեշտորեն կհանգչեին հոն։

— Էյ, գո՞րծ,— հարցուցի։

— Նորեն առջի գործս. երբեմն ալ մոտակա գյուղեր կերթամ սարբ գիրք ծախելու։

— Ըսել է կիրակի օրերը նորեն ժողովարանը...

— Հա՛րկավ,— պատասխանեց։

Եվ ձյունին տակ, որ հարսի պես կիջնար, պատմեց ինծի, թե Պոլսի տուն-տեղը թալլած էին, ու ինք հազիվ ընտանիքովը կերթած էր Բուլգարիա փախչիլ։

— Փա՞ռք Տիրոջը,— վերջացուց թոթվելով նորեն պեխերը, որ ահագին քանակությամբ ձյուն կհամբարեին իրենց թևերուն վրա մեկ բոպեի մեջ։ Եվ հեռացավ գնաց երջանիկ մարդու քալվածքով։

Ու մտածեցի։ Վայրենիներ կողոպտած էին ինչպես զիս, այդ խեղճ մարդն ալ, սա տարբերությամբ, որ, ինչքան ալ անգութ, երբեք չէին մտածած անոր հաջողության գաղտնիքը և ապրուստին միակ միջոցը՝ պեխերը, անոր ձեռքեն խլել առնել. մարդուն հոգն էր. պեխերովը փախած էր ան։ Ե՞ս ինչովս փախած էի, ասովա՞ծ իմ, ենթակա ամեն տեսակ ձախողության ու դժբախտության։ Եվ առաջին անգամ ըլլալով՝ խոշոր ու պատկառելի պեխի մը կարոտն զգացի։

Մարտիրոս աղան ա՛լ անկեց ետքը շատ տեսա, իրեն համար հատկապես ժողովարան գացի. նույն մարդն էր, նույն կացության մեջ, նույն միջավայրին մեջ։ Նույնիսկ, այս տեղափոխության շնորհիվ, հառաջացած ալ էր. երկրորդական քարոզիչի հանգամանքը շնորհված էր իրեն։ Պեխերը ավելի քան երբեք առատ էին, կարծես իր հառաջադիմությանը հետ համեմատական, իրենց լրումին փառավորության մեջ։ Անշուշտ արտասահմանի նժդեհական կյանքի տվայտանքներն ու վշտալի իրադարձությունները թույլ չտվին, որ կարենայի ազատ սրտով ու անձանձիր հետևիլ մարդուկիս ու անոր հոյակապ պեխերուն խաղաղ և զարմանալի ոդիսականին։ Դիպվածին միայն կպարտիմ, եթե զանոնք առիթ ունեցա երբեմն-երբեմն գնահատել նորեն, հրճվիլ, կատղիլ, ոգեվորվիլ և տրտմիլ անոնցով։ Նույնիսկ, քանի մը տարի ետքը, իր հետքն ալ կորսնցուցի, և օր եկավ, որ ա՛լ ոչ Մարտիրոս պատվելիին և ոչ ալ անոր շնաշխարհիկ պեխերուն վրա սկսա մտածել։ Անոնք ինծի համար բոլորովին մեռած էին, երբ անակնկալ առիթ մը հանկարծ արթնցուցին հին սիրալի հիշատակներս։

901-ին, Վ... քաղաքեն ցամաքային ճամփորդություն մը կընեի։ Գիշերը կառքս հասավ հանգրվան՝ գյուղ մը, որուն անունը լեմ հիշեր այժմ, և որ բուլգար և հույն գյուղացիներե բնակված էր։ Ողորմելի պանդոկ մը առաջնորդվեցա, ուր ստիպված էի գիշերել՝ բուռն փոթորիկի մը պատճառով ճամփան շարունակելը անկարելի ըլլալով։ Պանդոկին փցուն և աղտոտ ճաշարանը անկյուն մը կծկվեցա, շուրջս ունենալով գյուղացիներ, որոնք բիրտ ձայնով ու շարժումներով կվիճաբանեին։ Ճաշարանին մեկ մասը նպարավաճառի խանութ էր, և տերը, զոր կտեսնեի հեռվեն, կայնած էր մգլոտած պարկերու դեզի մը առջև, աղոտ լույսին մեջ հազիվ կրնայի անոր դեմքը որոշել։ Միևնույն ժամանակ ինքն էր, որ ատեն-ատեն շիշ մը օղի կամ գինի կբերեր հաճախորդներուն առջև դնել՝ կտոր մը պանիրի կամ չուշկայի[1] հետ։

— Շիշ մը օղի ալ ինծի,— պոռացի հեռվանց թուրքերեն լեզվով։

[1] Չուշկա— բուլգարական պղպեղ։

Մարդը աճապարեց պատվերս կատարել։ Ու քիչ հետո աղտոտ ափսեի մը վրա՝ բացառիկ պատիվ քաղաքացիի հանգամանքիս ընծայված, նպարավաճառը առջիս կդներ շիշ մը օղի, պանիր և ապուխտի քանի մը շերտեր։ Տիրող փոթորիկեն սրտնեղած, չէի մղվեր շուրջս գտնվողները դիտել ու ինքնամփոփ սկսա կոնծել։ Պահ մը ետքը, զարմանքով տեսա, որ սպասարկուս փոքր սանի մը մեջ եղով եփված հավկիթ մը հրամցուց ինծի։ Այս անգամ բնականաբար ավելի ուշադրությամբ նայեցա իրեն և շնորհակալություն հայտնեցի։ Հիսնամյա մարդ մըն էր, նիհար, աղեբեկ ցանցառ պեխերով ու խոշոր, վշտահայտ աչվներով։

Ի՞նչ եղավ զարմանքս, երբոր հույն կամ բուլղար կարծած այդ մարդս խոսքը ինծի ուղղելով ըսավ.

— Պարո՞ն Երվանդ, կարծես զիս չճանչցաք։

— Դո՞ւք,— ըսի ապուշի պես երեսն ի վեր նայելով։

— Մարտիրոս պատվելին, վաղեմի ծանոթդ։

Չեմ կրնար բառ գտնել նկարագրելու համար զարմանքս և շփոթությունս։ Պատվելին, սա ահավոր պեխերով մեր երանելի պատվելին, Բալքաններու հեռավոր մեկ գյուղին աղտոտ ու գարշահոտ կասելային մեջ, նիհարցած, և մանավանդ, բայց մանավանդ մերկացած իր պատմական, իր հսկայական պեխերեն, որոնցմե մեկ քանի թել-խլյակներ կմնային ողբալիորեն կախված վերին շրթներեն։

— Բայց... ի՞նչ եղավ, ի՞նչպես եղավ, որ հոս ես. պատվելիությո՞ւնը, ժողովարա՞նը, հապա... պեխե՞րդ, ի՞նչ եղան պեխերդ, Մարտիրո՜ս աղա, ան փառավոր պեխերդ։

Մարտիրոս աղա մեքենաբար ձեռքը պեխերուն տարավ և լալագին ձայնով մը՝

— Թափեցան,— ողբաց։

Եվ ա՛լ դեմս նստավ։ Հառաչեց։ Օղիես հատ մը լեցուց, խըմեց, ու սրբելե հետո իր ավերակ պեխը, ըսավ տրտմալի եղանակով մը.

— Երկու տարի առաջ, չեմ գիտեր ինչո՛ւ, պեխերս թափիլ սկսան. օր եղավ, որ հարյուր թելը մեկտեղ ինկան։ Դեղ, բժիշկ, մեկ փարա չըրավ, ավուճով դրամ ծախսեցի։ Թափեցան, թափեցան շարունակ. ջղային եղա, հիվընդացա, կվախնայի ձեռքս պեխերուս տանելու. նիհարցա, գիշերները սկսա չքնանալ. ժողովարանը աղոթած միջոցիս ժողովուրդը սկսավ խնդալ վրաս, փողոցեն անցած ատենս, չարաճճի տղաքները «պատվելիին բըյըխները կթափին կոր» կպոռային. դուրս ելլել չէի ուզեր, չկրցա գործս շարունակել։ Պորտ ընկերության ներկայացուցիչն ալ կամաց մը հասկցուց, որ պեխերուս այդ վիճակին մեջ չէի կրնար պաշտոնս շարունակել. ուզած-չուզած հրաժարեցա։ Անոթի օրեր անցուցինք։ Սուլթան Համիտը տունս-տեղս կողոպտեց, հոգս չեղավ. պեխերս թափեցան՝ տունս կործանվեցավ։ Ի՞նչ ընեի, դուռնե դուռ, լեռնե լեռ ինկա, և վերջապես հոս հասա. քանի մը բարի մարդիկ գթացին վրաս. կինս, զավակներս անդին մնացին, ու չեմ գիտեր, թե ինչ եղան, ու ես հոս կաշխատիմ գիշեր-ցերեկ ապրուստի մը փոխարեն...

Պատվելին գլուխը ծռեց, ու տեսա, որ քանի մը խոշոր արցունքներ թավալեցան ինկան իր այտերուն ու շրթունքներուն վրա, հոն, ուր ժամանակին աշխարհիս ամենեն փառավոր պեխերը կհանդչեին...

ՔԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Իր տժգույն դեմքին վրա ներքին մրրկածուփ հուզումին սարսուռները չմատնելու ճիգով մը՝ գլուխը վեր, պեխերը այլևս ալեվոր, սրածայր ոլորվածքով, ինչպես ինքնագոհ ու վեհապանծ երիտասարդի մը, Կոպեռնիկոս էֆենդի Մերասեդիյան ծանրորեն վար իջավ կառքեն, որ կանգ առած էր Շիշլիի ազգային գերեզմանատան դրանը առջև, աստվածածնա երկուշաբթի օրը, ցերեկեն երկու ժամ ետքը, օգոստոսի տաքուկ ու երանավետ արևի մը տակ։ Իր անստգյուտ ուրդենկոտին օձիքեն մատներու հպանցմամբ մը փոշիներ վար տալու իր ատ շարժումին ծանոթ մեկը միայն գուցե հասկնար, որ բուռն տագնապով մը կդողդողար այդ մարդը, որ մինչև իսկ գերեզմանատան դռան կամարին տակ մտած ատենը մարմնի ընկրկում մը ունեցավ։ Բայց հառաջացավ գրեթե անվրդով, ամբարտավան քալվածքով մը։ Եվ հակառակ, որ մուտքի կամարին տակ զինքը դիտող մը չըլլար, Կոպեռնիկոս էֆենդի խոռոչներուն մեջ ամրապես քաշված սև և մանրաբիբ աչվները աջ ու ահյակ կշրջշրջեր՝ տեսնելու համար, թե զինքը կտեսնե՞ն։ Գերեզմանատան պարտեզը, ուր մտավ, իր խաղաղ ու գեղարվեստական երևույթովը կարծես քաջալերեց Կոպեռնիկոս էֆեն-

դին, որ վարժ քալվածքով մը հառաջացավ դեպի վեր, մեջտեղի ճամփեն, այլևս գրեթե հանդարտ հետաքրքրությամբ մը շուրջը դիտելով, իբրև բոլորովին նոր բան մը տեսած, սլացիկ, մաքուր, մարմարեղեն շիրիմներուն նայելով զարմանքոտ, երկյուղած ու դղվագին աչքերով։ Մահաստանին անկյուններեն խժլտուք մը կբարձրանար հիմա, տաժանագին, ինչպես հուսկ հետին հոընդյունը բոլոր այդ հողին տակ պառկող մեռելներուն։ Գերեզմանոցին տարածությանը վրա սգավորներ եկած էին պագտվիլ հողին հետ, որուն տակ սիրելիներու կմախաշար կարաւվանները կփտտեին որդնալից։

Կոպեռնիկոս էֆենդի տեսակ մը գոհունակության շարժում ունեցավ։ Մեռելաստանի իր երևակայած ահավոր ամայությունը ահա շենցած էր, ու ինքը իրեն պես շատերուն մեջ աննշմար պիտի մնար, ու իր այդ այցելությունը, որմե կսոսկար տարիներե ի վեր, պարզ և գուցե հաճելի պտույտի մը հանգամանքը պիտի առներ, հակառակ իր ենթադրությանը, ուրիշներու աչքին։

Առևտրական աշխարհի մարդ, միշտ տեսակ մը նողկանք տածած էր մեռելներու աշխարհին համար, որմե կարելի եղածին չափ խույս տված էր։ Մահվան համար, որուն հանդերձյալ կյանքի հոչակված հեռանկարը իր կարծիքովը անճոռնի պարադոքս մըն էր, այնքան բնածին սոսկումով մըն էր լեցված, որ երբեք չէր ուզեր անոր վրա մտածել, անով տվայտիլ, աշխարհը օրին մեկը ձգելու գաղափարին հետ կատաղորեն անհաշտ։ Կոպեռնիկոս էֆենդիի որևէ հուղարկավորության չհետևիլը ամեն մարդ գիտեր իր բարեկամական շրջանակին մեջ, և ոչ ոք կվշտանար, երբ որ ծանոթի մը կամ ազգականի մը մահվան առթիվ փոխանակ մեռելին ներկա գտնվելու անձամբ, քարտով մը կամ ծաղկեփունջով մը իր ցավակցությունը հայտներ։

— Ատ կողմս տկար է, ինչ ընեմ, ձեռքս չէ, սիրտս չի դիմանար, դեշ կըլլամ,— կըսեր։

Սակայն մեկ քանիներ, իր վաղածանոթներեն, լսած էին, առանց շատ պնդելու, թե Կոպեռնիկոս էֆենդի իր վաճառականի հիմակվան դիրքին չհասած, շատ անդամներ ներկա գտնված է՝ հուղարկավորությանց, առանց հուզման ակներև նշաններ ցույց տալու։ Վերջին ութը-տասը տարվան միջոցին էր, որ մեկենմեկ հոգեկան այդ տկարության մղված էր և խույս տված մեռելներեն ու գերեզմանոցներեն։ Բայց որովհետև ազգային կամ հանրային հարց մը չէր ասիկա, մարդիկ աչք գոցած էին և անտարբեր գտնված։

Մանավանդ, որ վերջին տասը տարվան միջոցին իր իսկ ընտանիքին մեջ պատահած մեռելներեն ոչ մեկուն հանդեսին ներկա գտնված էր, ոչ ժամ գացած էր, ոչ գերեզմանոց. տունը նստած էր կամ մինչև իսկ անդամ մը, քրոջը մահվան առենը, Գոլոս իր գրասենյակը թողած էր, հոն ընդունելով երկու փոխանակիներու ստորագրությանը մեջ, ցավակցությանց ճղակտոր արտահայտությունները։ Իր այս բոլորովին տարօրինակ ժեստը ոմանց հետաքրքրությունը շարժած ըլլալով, Կոպեռնիկոս էֆենդիի գործակատարը, Ղուկաս աղա— ազիզիե[1] ֆեսով և գլխուն ետեր՝ ծոծրակին և քունքերուն ծեփ-ծեփ փակչած մազերով միջահասակ մարդուկ մը, մարդոց առջև երկարամյա անդադրում խոնարհումներեն ողնահարը ծռած, սրտաշարժ ու կսկծագին ձայնով մը ըսած էր.

— Էֆենդին իր քույրը այնքան կսիրեր, որ եթե ասանկ չըներ ու ուզը առներ, վրան լար, ողբար, պելքի ալ խելքին կուգար։

— Խե՜ղճ մարդ,— ըսած էին այս խորին հայտնությունը լսողները։

Մորը մեռելին անգամ ներկա չէր գտնված։ Իր մեծ եղբայրը, քույրը, քրոջ ամուսինը, հետո ուրիշ մեկ քույրը չված էին աշխարհեն՝ մեռելական փոսին եզրը իրենց եղբոր լալահառաջ ներկայության «հետմահու» մխիթարությունեն ալ զրկված։

— Ես մինչև հոն երթամ նե,— ըսած էր անգամ մը Կոպեռնիկոս էֆենդի,— ինծի ալ ատ փոսին մեջը նետելու, ողջ-ողջ թաղելու են...

Իրենցներուն համար տածած այս խանդակաթ սերը ոչ միայն զարմանք չէր պատճառած իր ծանոթներուն, այլև իր «բարոյական»-ին համար անոնց սնուցած բարձր համարումը ալ ավելի բարձրացված էր։

Եվ ահա տասը տարի ետքը, երբ այլևս ամայությունը տիրած էր իր շուրջը, իր ընտանիքին մեջ, ուր միս-մինակ մնացած էր մահվան անողոք կույրզկուրայն հնձումին մեջտեղ, Կոպեռնիկոս էֆենդի, ասոմվածածնա մեռելոցին կուգար վերջապես այցելել իր մեռելներուն՝ զանոնք օրհնել տալու համար։

---

[1] Ազիզիե— ֆեսի յուրահատուկ ձև։

Իր գործակատարը, որ միշտ իր կողմե բոլոր հուղարկավորություններուն ներկա գտնված էր մինչև փոսերուն ծածկվիլը և ծաղկեփունջերուն անոնց վրա խառնիխուռն կուտակվիլը, և որ այդ օրը, հանդիսավոր ու խորհրդալից օր, իր տեղը տիրոջը տված էր, մանրամասնորեն նկարագրած էր Մերասեդիյան գերդաստանին դամբարանին վայրը, որ ազգային ծանոթ բարերարի մը գմբեթավոր հոյակերտ դամբարանին ետևը կիյնար։ Կոպեոնիկոս էֆենդի, առանց ուշադրություն ընելու Ղուկաս աղային բացած զարմացական աչվերներուն, առած էր գերեզմանին բանալիքը, որուն սառն հպումը դող մը պտտցուցեր էր իր երակներուն մեջ։ Մահվան պես ա՛տ ալ պաղ։

Սոսկումը, որով պաշարված էր մահաստանին շրջափակեն ներս մտնելե առաջ, կմեղմանար հիմակ, վայրին խնամքոտ ու խաղաղավետ հարդարումեն, պորփյուրե ու մարմարե հոյակերտ շիրիմներուն կանգնագեղ հորինվածութենեն հմայված, թեև ինք երբեք մարմարին արվեստովը հետաքրքրված չըլլար։ Կամաց-կամաց, զգուշությամբ կքալեր, ավելի հետաքրքիրի մը ձևը ջանալով տալ իրեն, քան թե իր մեռելներուն այցելողի մը։ Կարճուկ թուփերուն վրայեն և դամբարաններուն օձապտույտ ածուներուն միջև կտեսներ փոսերու և գերեզմանաքարերու վրա ծռած կոնակներ, որոնք կթոթվվեին, կիներ ու տղաք, որ տոտոզված շիրմաքարերու մեջտեղ, կխոսվռտեին։ Ավելի հեռուն, վանդակորմի մը ետեղերուն ետին՝ մորուքը տերտերի մը, որ կկարդար։ Բայց երբ առաջին անգամ աչքին դիպավ գմբեթավոր դամբարանը «ազգային բարերար»-ին, Կոպեոնիկոս էֆենդի կանգ առավ։ Իրենցը անոր ետևն էր, ինչպես բացատրած էր Ղուկաս աղան։

Այս Ղուկաս աղան, պարագաներուն և իր գործին բերմամբը, շատ կարևոր դեր մը խաղացած էր Մերասեդիյան ընտանիքին մեջ։ Նախ և առաջ, իբրև Կոպեոնիկոս էֆենդիի գործակատարը, ընտանիքին բոլոր մեռելները ինք իր ձեռքովը հողին հանձնած էր։ Առաջին մեռելին, էֆենդիին հանձնարարությամբը, տասը քառակուսի մետր տարածությամբ հող մը գնած էր Շիշլիի ազգային գերեզմանատան մեջ, հետո, ամեն անգամ նոր մեռել մը պատահելուն, Ղուկաս աղա քար մը ձգել տված էր վրան տապանագիրով մը՝ գրված իր ծանոթ հինգլուխ հայկաբան պատվելիի մը կողմե, Ենի Քափու, ուր ինքը կբնակեր։

Յուրաքանչյուր գերեզմանաքարը տնկվելուն, Ղուկաս աղա

հաշիվը ներկայացուցեր էր Կոպեոնիկոս էֆենդիին, որ, առևտրական պարզ և սովորական հաշվեցուցակ մը աչքե անցնելու պես, ակնոցներուն շրջանակին վրայեն նայվածք մը նետելով անոր, միշտ սա դիտողությունը միայն ըրած էր.

— Ղուկա՛ս, աս ծախքին վե՞րջը, չլմնցավ, անոնք մեռան գացին, աստված ողորմի հոգունուն, իշտե աս քսան ոսկին ճերիմե է...

Եվ օր մը, տրամադրությունը տեղը մեկ վայրկյանին, հայ վաճառականը՝ Ղուկաս աղային հանել տված էր Շիշլիի ազգային գերեզմանատան մեջ Մերասեդիյան ընտանիքի դամբարանին համար եղած բովանդակ ծախքին հաշիվը։ Գործակատարը, որ այլևս կարծես այդ ընտանիքին գերեզմանափորի քստմնելի տիտղոսովը կհպարտանար, գրպանի մեկ եղոտ տետրակեն քաղած էր այդ մեռելաբույր հաշիվը։

— Ութը հազար երեք հարյուր քառասունըչորս ղրուշ, տասը փարա,— ըսած էր Ղուկաս աղա արարողական ձայնով մը։

— Մե՞ղք փարաներուն,— մրմռացած էր Կոպեոնիկոս էֆենդի...— բայց չէ ամմա, ատ տասը փարա՞ն ինչ է,— հարցուցած էր գործակատարին դառնալով։

— Վերջին անգամ դռնապանին տղուն տասնոց մը պախշիշ տվի,— պատասխանած էր Ղուկաս աղա։

— Մե՞ղք, մե՞ղք փարաներուն։

Ծամանակե մը ի վեր, սակայն, Ղուկաս աղա կդիտեր, որ իր մեծավորը տրտմաթախիծ ու մտահոգ երևույթ մը ուներ։ Ատենատեն իր մանր ու սև բիբերը պաղած կմնային մեկ կետի մը սևվեռած և հանկարծական թոթվըտուքներ ալ կունենար։ Հետո, վերջերս, օր մըն ալ, լսված բան. Ղուկաս աղային հարցուցեր էր, թե երբեմն-երբեմն գերեզմանոց կերթա՞ և մեռելները աչքե կանցընե՞։ Թաղը ի՞նչ վիճակի մեջ է։ Պզտիկ ծառեր տնկվա՞ծ են հոն։ Պահապանը կջրե՞ կոր։ Քարերը կմաքրվի՞ն կոր։ Բնականաբար Ղուկաս աղա հանկարծակիի եկած էր ու կմկմացած, վասնզի այդ բաներուն ոչ մեկը եղած էր։

— Ղուկա՛ս,— հրամայած էր Կոպեոնիկոս էֆենդի,— ասկից ետքը ամիսը մեյ մը գնա՛, աչքե անցո՛ւր, բանլիքն ալ երկուք ըրե՛, մեկը միշտ վրադ պահե՛։

— Այս մարդը կփախցնե կոր,— մրմռացեր էր գործակատարը՝ քունքին մազերը շոկելեն։

Բայց իր զարմանքը ապշության փոխվեցավ, երբ ասավածածնա շաբաթ օրը մաղազային ելլելե առաջ՝ Կոպեոնիկոս էֆենդին կանչեց իր գործակատարը և ըսավ անոր.

— Ղուկա՛ս, վաղն առտու մեր տան երեցին գնա, ըսե՛, որ երկուշաբթի կեսօրեն ետքը, ժամը ութին, Շիշլիի գերեզմանոցը պիտի գտնվիմ, մեռելներս օրհնել տալու համար. ինքն ալ հոն թող ըլլա...

— Աստված վերջերնիս բարին ընե,— մրթմրթաց Ղուկաս աղա՝ չկրնալով բան մը հասկնալ եղածեն։

Եվ հիմակ, ահա իր մեռելները օրհնել տալու եկած էր Կոպեոնիկոս էֆենդի, որ «ազգային բարերար»-ին գմբեթավոր դամբարանին ետևը դառնալուն պես՝ Մերասեդիյան գերդաստանին դամբարանին առջևը գտած էր ինքզինքը։ Ներս նայեցավ, տերտերը տակավին չէր եկած։ Այս դժպատեհությունը քանի կաթիլ քրտինք ծորեցուց ճակատին վրա։ Գերեզմանը շրջապատված էր երկաթե վանդակորմով մը։ Հինգ հատ տապաններ, երեքը քովքովի, մյուս երկուքը քիչ մը ավելի ետև՝ իրարմե հեռու, կծածկեին հողը։ Քառակուսի մարմարներ էին, շիրիմներուն է՛ն պարզը։ Քանի մը ծառեր կային, կարճուկ ու վտիտ, հայանապես նոր տնկված։ Պերճ ու հոյակապ շիրմաքարերուն և խնամքով զարդարած գերեզմաններուն մեջտեղ տրտմագին պարզությամբ մը կհայտնորոշվեր Մերասեդիյաններուն թաղը՝ լքման հայտաբար նշաններով։

Կոպեոնիկոս էֆենդի հանեց գրպանեն բանալին, բացավ դուռը և ներս մտավ։ Իրեններուն քովն էր։ Իր մորթին տակ մնացած արյունը, որ հակառակ իր հիսունհինգ տարիներուն, երիտասարդական վառք մը կուտար իրեն, պահ մը անհետացավ, մահական ժժգունությամբ մը դալկահարելով իր դեմքը։ Այդ տակուն և անգութ մարդը կդողար։ Դանդաչուն քայլերով մոտեցավ մեջտեղի երեք տապանաքարերուն և կարծես չիմնալու համար, երկու ձեռքերովը կռթնեցավ մարմարին։ Եվ հուզումեն պղտորած աչքերովը նայեցավ տապանագիրին։ Մորն էր։

Այս է տապան հանգստյան
Տիկին Նազենի Մերասեդիյան,
Որ մեկնեցավ այս ցավոց հովտեն
Հետ յոթանասնամյա դենց անքասիր։

Վարքովն եղև առաքինազարդ.
Անցորդ, կաթիլ մը արտասուք
Նվիրե իր անմահ հիշատակին։

Ենի Քափուցի պատվելիին քերթողական այս չքնաղ արտագրությունը ուժգնորեն ցնցեց Կոպեոնիկոս էֆենդին։ Իր սևեռական նայվածքին տակ մայրը կնկարվեր այդ մարմարին վրա, այդ գիրերը գիծեր կըլլային՝ ուրվանկարելու համար անոր ճերմակ ու վտիտ մարմինը, ճիշդ ինչպես վերջին անգամ ան իր աչքին երևցած էր՝ անկողնին վրա, իրիկունը, շուկայեն դարձին, Ղուկաս աղային հետ, որ մեռելի գիշերներ չորպաճիին տունը կպառկեր բացառապես։ Ցերեկին հանկարծամահ եղեր էր պառավը, առանց ճիկ մը հանելու, մոմի պես անցնելով։ Շուտով մարդ մը վազցուցեր էին մաղազան՝ այս աղետը ծանուցանելու։ Կոպեոնիկոս էֆենդին դրամարկղը բացած՝ ոսկիի և բանկնոտի հետ կխաղար։ երբ Ղուկաս աղան ետևեն հանկարծ բոթը նետեր էր իրեն.

— Էֆենդի՛, մայրերնիդ ձեզի օրեր...

Վաճառականը, առանց ձեռքը դուրս հանելու դրամարկղեն, գլուխը դարձուցեր և ակնոցին վրայեն նայելով գործակատարին՝

— Ատ ո՞ւրկե իմացար, ծո՛,— ըսեր էր,— սխալ չըլլա՞։

— Հիմա լուր բերին։ Այո՛, ձեզի օրեր,— կրկներ էր գործակատարը։

— Թոհա՞ֆ բան,— մրմռացեր էր Կոպեոնիկոս էֆենդի և գարձյալ դրամարկղով զբաղեր էր։ Իրիկվան, սովորական ժամուն, տուն գացեր և մայրը երկնցած գտեր էր անկողնին վրա՝ անկենդան։

Ահա այդ պատկերը կտեսներ հիմա գերեզմանաքարին վրա։ Եղեռ կին։ Որքան տառապեր էր կյանքին մեջ և իր վերջին տարիները որքան զառնակսկիծ եղեր էին՝ միմիայն իր այդ Կոպեոնիկոսին երեսեն՝ պզտիկուց իսկ նենգամիտ ու կեղծավոր, անոր լրիկ ու սքողված չարագործությանց պատճառովը։ Ագահ և զոշաքաղ, այս մարդը բռնաբար մորը ձեռքեն հափշտակեր էր հորենական ժառանգության բաժինը, խաբեության և ահաբեկումի ցանց մը լարելով այդ երկյուղած ու երկչոտ կնոջ շուրջը։ Կհիշեր հիմակ, որ գիշեր մը, նույնիսկ իր հաստ գավազանովը անոր վրա հարձակելու եղեռական շարժում մըն էր ըրած, «տո՛ւր, տո՛ւր ունեցածդ» ոռնալով, երբ քույրը, քառասունոց ամուրի աղջիկ մը, նվազած ինկեր էր մորը և եղբորը մեջտեղ։ Հետևյալ օրը, Նազենի

հանում իր արկղին բանալին դողալով զավկին կլափը նետեր էր։ Եվ տղան, բորենիի պես դունչը այդ արկղին մեջ խոթեր և լափեր էր հարյուրավոր ոսկիներու արժեքով գոհարեղեններ և բազմաթիվ արժեթուղթեր։

Հապա այդ խեղճ քույրը, որուն կյանքը մարտիրոսություն մըն էր եղած իր եղբորը ձեռքին մեջ։ Հակառակ հազար ոսկի դրամօժիտ ունենալուն, մինչև երեսուն տարեկան տակավին թարմ հասակը, չէր կրցած ամուսնանալ։ Կոպեռնիկոս անարգ մեքենայություններով հաջողած էր ամուսնական բոլոր առաջարկները չեզոքացնել, իր մոտը, իր ձեռքին տակը պահելու համար անոր հազար ոսկին։ Աղջիկը մեծցեր էր, մազերը սկսեր էին ճերմկոտիլ, և օր մը, եղբորը կողմե բրտորեն փողոց ձգվելու գայթակղությանց նշավակ դառնալու սպառնալիքին տակ, հավանած էր իր դրամօժիտը եղբորը հանձնել իբր ավանդ։ Կոպեռնիկոս կուլ տված էր իր դրամն ալ։ Հոն էր, մորը տապանաքարին քովիկը։ Իսկուհի Մերասեդիյանը և իր տապանագիրը, որ «Այս է տապան Հանդրստյան»-ով մը կսկսեր, ինչպես բոլոր մյուսները, կհիշեր, թե «փոխեցավ աստի, վարելով կյանս կուսական և առաքինի»։ Օրիորդ Իսկուհի, եղբորը հանձնելե հետո իր հույսն ու ապագան, տան մեջ սպասուհիի դերին իջուցված էր։ Ըղեղատապ մը տարեր էր ղինքը մորմեն առաջ։

Կոպեռնիկոս էֆենդի կորաքամակ, քրոջը գերեզմանաքարին վրա հակեցավ՝ ձայնի մը ականջ տալու պես։ Հանկարծ քայլ մը ետ ինկավ։ Լսած էր այն հեկեկանքը, զոր լացեր էր քույրը՝ հարբստությունն իր եղբորը հանձնած օրը։ Դժգույն և դողդողահար, Կոպեռնիկոս էֆենդի դուրս նայեցավ, անգաղտնապահ աչքերե դիտվելու վախով պաշարված։ Այդ օրը, բարեբախտաբար, սովորական էր տեսնել գերեզմաններու առջև այլայլված դեմքեր, սևեռաբիբ նայվածքներ և հեկեկալից կոկորդներ։ Կանցնեին անկե, առանց իսկ իրեն նայելու։ Կոպեռնիկոս էֆենդի ուզեր ալ, չէր կրնար դուրս ելլել այդ շրջափակեն, իր զոհերուն ստվերներուն մեջ կարծես բռնված, կաշկանդված։

Նորեն մոտեցավ, ակամա, մանրաբիբ աչվրները հառած շիրմաքարերուն։ Մորը աջ դին եղբայրն էր պառկած, իրմե մեծը՝ Հովհաննես էֆենդի Մերասեդիյան, որ բուն հիմնադիրն էր եղած առևտրական այն տանը, ուր այժմ կտիրապետեր Կոպեռնիկոս էֆենդի միահեծան։ Բարի, ազնիվ, վեհանձն և ուղղամիտ մարդ,

ձեռք բռներ էր իր եղբորը, քովը առեր և իր գործին զայն ընկերը ըրեր էր ի վերջո։ Կոպեռնիկոս, նենգավոր և հնարամիտ, զեղծումներով խախտեր էր գործին առկայությունը, և իր վստահությունը վայելող քանի մը պատվավոր շարագործներու մեղսակցությամբը, պարտքի կեղծ թուղթեր ստորագրեր էր հանուն Մերասեդիյան առևտրական տան, և անակնկալ սնանկություն մը հիմնահատակ կործաներ էր գործը։ Հովհաննես էֆենդիի կրած ցնցումը մահաբեր եղեր էր։ Կաթված մը երկու տարի տանը անկյունը գամելե հետո զինքը, վերջապես գերեզման իջեցուցեր էր։ Այդ միամիտ ու բարի մարդը իր եղբոր ամբողջ դավաճանությունը ետքեն կռահելով, իր անշարժության անկյունեն մերթ մրրկաթունդ կատաղությամբ մը բորբոքած, գոռացեր էր անոր երեսն ի վեր.

— Գազա՛ն, տուներնիս, տեղերնիս կործանեցիր։

Անոր կենդանությանն իսկ, Կոպեռնիկոս էֆենդի վերահաստատեր էր առևտրական տունը և հրապարակին վրա ճանչցվեր էր իբրև հույժ վստահելի, պարկեշտ ու պատվավոր վաճառական մը։

Իր եղբորը մահվընեն ետքն էր, որ իր ամուսնացած քրոջը տիկին Ագապի Գյուլերյանի ամուսինը, Մարտիրոս էֆենդի, մի քանի հազար ոսկիի տեր մարդ, մտերմաբար տարվելով իր աներորդիի շողշողուն և պատվական խոստումներեն, իր ամբողջ դրամագլուխը անոր գործին տրամադրեր էր, մասամբ ընկեր դառնալով։ Տարի մը չէր տևած, և Մարտիրոս էֆենդի վռնդված էր իր աներորդիին վաճառատունեն ու թեև դատարանե դատարան ինկած էր մեկ քանի տարի, կրած հուզումներեն ու քաշած տառապանքներեն վերջ ի վերջո տեսակ մը ապշության ենթարկված ու թշվառորեն մեռած էր՝ իբրև շնորհ թաղվելով Մերասեդիյանենց դամբարանին մեջ, Ղուկաս աղային միջնորդությամբը։ Իրեն հետևած էր կինն ալ, որ հակառակ քանիցս եղբորը ոտքերը իյնալուն լալահառաչ, կոպտորեն վռնդված էր։

Եվ այդ ընտանիքին բոլոր անդամները մեկիկ-մեկիկ ինկած էին՝ այդ մարդեն շանթահարվելով, իրենց բոլոր ունեցածը տալով անոր՝ զանիկա հասցնելու համար իր իդեալ-նպատակին, որ էր պատկառելի հարստության մը և նախանձելի դիրքի մը տիրացումը։

Հիմակ հոդ էին իր բոլոր զոհերը, շուրջն էին իր խոշտան-

գած, քայքայած, մահացուցած բոլոր էակները, որոնցմէ տարիներով հեռի մնալէ և զանոնք իզուր մոռնալ ջանալէ հետո, կքաշվեր, ահա հոդ կբերվեր հիմա, դեպի կառափնատ քաշկռտվող գատապարտյալի մը պես։

Կանգնած այդ քստմնելի քարերուն մեջտեղը, որոնց ճերմակ գույնին վրա արյան կարմրություններ կնշմարվեր մերթ, ամբողջ մարմնովը կդողդողար։ Տապանագիրներուն ներքև փորագրված մարդկային գանգերը, խաչաձև երկար ոսկորներու մեջ զետեղված, թբրև գիվային խորհրդանշանը մահվան, շարժիլ կթվեին իրեն, աչքերնուն անդնդային խոռոչներովը իրեն կնայեին, կզակներնին ընդհարելով շոր կափկափումով մը։ Գերեզմաններուն խորերեն ձայներ կուգային հիմա, աղեխարշ և ահավոր, լալագին կականներ կբարձրանային, և նվաղկոտ ճիչեր ու օրհասական հեծյուններ իրարու կխառնվեին։ Երբեմն բոլորեն ալ ահեղագոռ աղաղակ մը կբարձրանար միանվագ.

— Ոճրագո՛ծ։

Ու գանգերը՝ իրենց ոսկորե պատվանդաններուն վրա, կհոլովվեին, կթավալեին, պարապ ու ահավոր աչքերովնին շանթահարելով Կոպեռնիկոս էֆենդին, որուն ճակտեն, քունքերեն, թուշերեն քրտինքի կաթիլները ուղխորեն կվազեին, ու իր մաներ բիբերը, սպիտակուցներուն մեջտեղը անշարժացած, նայեցան, նայեցան, նայեցան, շիրմաքարերեն գանգերը կամաց-կամաց վեր ելան հիմա ու կանգնեցան ոսկորներուն վրա, մարդաչափ երկարությամբ։ Ու կշարժեին այդ հինգ գանգերը, կպարեին վաճառականին շուրջը, լալագին ոռնումներով, ահռելի ու դիվային ծամածռություններով, կլափնին լայնաբաց, իրենց պարապ ակառողիքներուն մթին արհավիրքովը ահաբեկելով այդ հինգ դերեզմաններուն հարդարիչը։

Կոպեռնիկոս էֆենդի մղձավանջեն այլահարված, ջղաձգորեն երկու ձեռքովը կոկորդը բռնեց. կխեղվեր, օրհասական հոնդյուններ կարձակեր։ Եվ ուզեց փախչիլ, ազատիլ մեռելներեն, որ իրենց կմախքներովը կսպառնային իրեն, քայլ մը առավ դեպի ետև, օդին մեջ տատանող գանգերուն նայելով հնազանդ։ Պիտի պոռար, պիտի ոռնար իր բովանդակ սարսափը, ու ձեռքերը դեպի ետև վանդակորմին երկնցուց...

Հանկարծ խոշոր ու թավ ձայն մը բարձրացավ.

— Ի՞նչ կըլլաք կոր, Կոպեռնիկոս էֆենդի։

Տերտերն էր, որ կուգար մեռելները օրհնելու։

Վաճառականը մեկեն ի մեկ սթափեցավ։ Քրտինքները կիջնային երեսն ի վար և կուրծքը կհևար տաժանորեն։

— Այդ ո՞րքան հուզվեր եք, էֆենդի,— ըսավ քահանան վրդովտագին զարմացմամբ նայելով իր հարուստ ծուխին, որ լուռ ու մունջ քրտինքները կսրբեր հիմա։

Ու այլևս հանդարտած,

— Տե՛ր հայր, առաջին անգամն է, որ սիրելիներուս գերեզմանները կայցելեմ,— թոթովեց, շուրջը նայելով և ա՛լ քանանելով կմախքները, որ անհայտ եղած էին աստծո պաշտոնյային երևումեն։

— Օրհնեցե՛ք այս գերեզմանները, տե՛ր հայր,— ըսավ Կոպեռնիկոս էֆենդի, տեր հոր աջը առնելով և գլխիկոր ու ձեռնածալ կենալով մորը տապանաքարին առջև։

Քահանան ծոցեն հանեց խաչը և ժամագիրքը և հանգստյան աղոթքը սկսավ մեռելական տխուր եղանակավորումով մը, որ հանցապարտ վաճառականին ոսկորները սրսփացուց։

Գա զորության թագավորն ի նորոգել
Զարարածս, ի ձայն ահեղ բարբառո
Զարթուցանե զննչեցյալն...

Մոտեն ու հեռվեն սգավորներու նվաղուն հեծեծմունքը կըլսվեին։ Ծառերուն մեջ՝ հեզասույլ հովը դամբանական խարշափ մը կպտտցներ, և մերթ,— ո՛վ տրտմալի հակասություն մարդկային իրերուն,— ծիծաղի բեկորներ կթռչտեին շիրմե-շիրիմ, և տղաք ու կիներ կաճապարեին ճամփաներուն վրա, ինչպես տոնավաճառի մը մեջ։

Տերտերը իր ողբական թավահունչ սաղմոսերգությունը կշարունակեր, խաչը կարգավ մոտեցնելով ամեն մեկ տապանաքարին.

Ի տաճարի քում արքության մատուցանեմք քեզ
Պատանս արտասվալից, պայծառացո,
Տե՛ր, զհոգիս նքնչեցելոցն ընդ սուրբս քո
Եվ դասավորյա՛ ի հավուրն այցելության...

Կոպեռնիկոս էֆենդի ինկած իր դողդոջ ծնկվըներուն վրա, կորաքամակ, կուլար։ Կուլար լռիկ, մնջիկ, իր այտերուն վրա առաջին անգամը զգալով թացությունը ադի արցունքներուն, որոնցմե

հեղեղներ վազցուցեր էր ատենոք՝ հոդ ամփոփված թշվառներուն գեմքին վրա։ Իր լայնշի ուսերը կցնցվեին և իրոք աղեխարշ էր տեսնել այդ պատկառելի ու տարեց մարդը, որ խուլ և զսպված հեկեկանքներով կուլար, տղու մը պես, մարմարյա այդ դագաղներուն մեջտեղ։

— Խե՜ղճ մարդ,— կըսեին անկից անցնող սգավորները, դամբարաններու մեջտեղը ծնրադիր կոծող այդ «շնորհքով մարդուն» ողբալի տեսքեն ազդված։

Տերտերը, որուն համար անբացատրելի էին իր ծուխին լացի այդ հանկարծական պոռթկումները, կարելի եղածին չափ երկարեց օրհնությունը, որ վերջապես լմնցուց հանդիսավոր և արարողական շեշտով մը արտասանված «հոգվոցն հանգուցելոց»-ով մը։ Խաչը վերջին անգամ մը երկարեց Կոպեոնիկոս էֆենդիի շրթներուն, որոնք համբուրեցին զայն սրտազեղուն ջերմեռանդությամբ։

Քահանան, գործը ավարտած, խաչը պլորեց մետաքսյա լաթին մեջ, ծոցը դրավ և աճապարեց դուրս ելլել դամբարանեն՝ վաճառականին կողմե կամացուկ մը իր ափը սպրդած ոսկիին հետ միասին։

Կոպեոնիկոս էֆենդի իսկույն հետևեցավ քահանային՝ իր մեռելներուն հետ նորեն առանձին, գլուխ-գլխի մնալու վախեն հալածված ու դուրս նետվեցավ, կղպեց դուռը և հազիվ քայլ մը հեռացած՝ երկու ձեռվընտրովը գոցեց ականջները։

Մեռելներուն ահեղ ձայնը լսած էր նորեն, որ կպոռային իր կոնակեն.

— Ոճրագո՛րծ, ավազա՛կ...

Մեկ քանի օր վաճառատան մեջ Կոպեոնիկոս էֆենդիի տրտմությունը, խոժոռությունն ու խորհրդավոր անխոսությունը պատկառանք և մինչևիսկ երկյուղ ազդեցին պաշտոնյաներուն, մանավանդ Ղուկաս աղայի, որուն հետ հազիվ թե քանի մը բառ փոխանակեց վաճառականը։ Անշահախնդրական վերաբերմունք մըն ալ ունեցավ իր գործին իսկ հանդեպ, որուն ամենեն հետին մանրամասնությանցը կհետաքրքրվեր՝ մինչև տակավին քանի մը օր առաջ։ Հետո, գործակատարը դիտեց, որ չորպաճին, իր գրասեղանին առջև, ակնոցը քիթը, մատիտ մը ձեռքը, երկարորեն կոբոճար թուղթի կտորի մը վրա, կգրեր, կավրեր, նորեն կգրեր ու նորեն կավրեր և ի վերջո խնամքով կծալեր, գրպանը կտեղավորեր զայն։ Ղուկաս աղա, հակառակ իր բարակի հոտառությանը, չէր կրնար հասկնալ այդ խորհրդավոր թուղթին պարունակությունը և կճենճերեր հետաքրքրության հնոցին մեջ։

— Բարով խերով չերթար ատ գերեզմանոցը,— կմռլտար քունքին մազերը բարկությամբ տափակցնելեն։

Երրորդ իրիկունը, Կոպեոնիկոս էֆենդի— «Այս գիշեր մեկտեղ տուն երթանք, Ղուկա՛ս»,— ըսավ խոժոռ ու հանդիսավոր ձայնով մը։

Միասին ելան վաճառատունեն։ Ղուկաս աղա միշտ քայլ մը հեռվեն, ըստ սովորության։

«Տունը նորեն մեռե՞լ մը կա արդյոք»,— կմտածեր ճամփան Ղուկաս աղա, որ մահվան պարագաներու միայն իր չորպաճին տունը գացած ու գիշերած էր։— Բայց... մարդ չմնաց, ամենքն ալ ճողեցան,— կշարունակեր՝ չկրնալով հանգույցը լուծել։

Ճաշը լուռ ու մունջ անցավ։

Հետո Կոպեոնիկոս էֆենդի իր սենյակը տարավ Ղուկաս աղան և գրասեղանի մը առջև անցնելով՝ ակնոցը դրավ և գրպանեն ծանրորեն հանեց խորհրդավոր թուղթին կտորը։

— Ղուկա՛ս,— ըսավ, գործակատարին երեսը նայելեն խորաթափանց նայվածքով մը,— ես ոճրագործ մարդ մըն եմ, գիտես, հե՞։

— Ամա՜ն, էֆենդի, քավ լիցի, քեզի պես առաքինի մարդ մը, ի՞նչ կըսես, էֆենդի,— մլավեց Ղուկաս աղա, դողդղալով այս անկեղծ, ճշմարիտ և անակնկալ խոստովանության առջև։

— Ես ըսածս գիտեմ,— շարունակեց վաճառականը,— ոճիրնիս սկսինք քավել ուրեմն...

Եվ բացավ թուղթին կտորը։

— Ղուկա՛ս,— ավելցուց,— մտիկ ըրե. դուն քիչ-շատ իմ մեղսակիցս ես, իմ սիրելիներս մեկիկ-մեկիկ դուն գերեզման իջեցուցիր, մտիկ ըրե ուրեմն, խիղճդ թող խոսի այս անգամ։

Եվ կարդաց.

«Հինգ հարյուր ոսկի կուտամ Պոլսո տաքը եկեղեցիներու, իբրև մոմագին։

Երկու հարյուր ոսկի Ք... գյուղի գերեզմանատան՝ պատին շինության համար։

Հարյուրական ոսկի Պոլսո չորս եկեղեցիներու՝ մեռելներուս Զոգուն տարին երկու անգամ պատարագի համար։

Չորս հարյուր ոսկի՝ մեռելներուս նոր գերեզմանաքարեր ջնելու համար»։

Կոպեոնիկոս էֆենդի գործակատարին նայեցավ։ Աչքերը ինչպէս ջինջ ու անապական հոգիի մը ճառագայթումով։

— Բավակա՞ն է այս քավությունը, Ղուկա՛ս,— հարցուց Կոպեոնիկոս էֆենդի՝ թուղթը ծալելով։

— Շատ է պիլե,— պատասխանեց գործակատարը՝ դողդոջ մատներովը քունքին մազերը տափկցնելեն...

ՄԵՌԵԼՆԵՐՈՒՆ ՋՐԿԻՐԸ

Մեր գյուղի գերեզմանատան մոտերը բնակող պառավ կին մը, պատանեկությանս ատեն, օր մը, իրիկնամուտին, ինծի պատմեց, նստած շիրմաքարի մը եզրը, տրտում ու թաղմանական ձայնով, Թումիկ աղբոր պատմությունը, որ երկար տարիներու հեռավորության մը մեջեն տակավին մինչև հիմակ կենդանի կմնա մտքիս մեջ՝ հեքիյաթի կոթողի մը պես, զոր ժամանակին հարված-ները չեն կրցած տապալել։

Կտրիճ երիտասարդ մըն էր Թումիկ, սիրտովն ու հոգիովն ալ մաքուր, և անոր ամբողջ էությանն խորը կարելի էր հստակորեն տեսնել, ինչպես ականակիտ առվի մը հատակը շարված խիճերը։ Ժողովրդի ամենաստորին դասակարգի զավակ, դպրոցի երես չտեսած, պստիկուց իսկ հորը հետ ծովը ելած, Մարմարայի բացերը կամ վերին Վոսփոր, աստեղաշար անդորր գիշերներու խորհրդին մեջ, կամ տարերացունց մրրիկներու դեմ կյանքի դժնե պայքարը մղելով անվախորեն։ Զկնորս կամ նավավար, հազիվ հաջողած էր օրապահիկը ճարել և ծնողացը ծերության մեջ՝ նեցուկ ելլալ անոնց։ Պատմելիք խրճիթ մը ունեին, խարխուլ և այլևս գրեթե անբնակելի, պապենական ժառանգություն։ Անոր երերուն ախտակամածները կդղրդային ու կտքային Թումիկին հաստ ու կորովի ներբաններուն տակ, այնպես որ մայրը շատ անգամ, ամբողջական փլուզումե մը վախնալով, կպաղատեր իր զավկին.

— Ամա՛ն, որտտի, կամաց կոխե, տուներնիս պիտի փլցուն-նե։

Թումիկ շատ հեղ բացակա կելլար տունեն՝ իր արհեստին իսկ բերմամբը, և երբոր իր ծնողքը մեռան՝ խնամքի պակասություն նե և ծայրահեղ թշվառություն, այլևս շատ քիչ անգամ պապենական խրճիթին փտած տախտակները երերացին անոր կարշնեղ ոտքերուն տակ։ Ամառը լավագույն կսեպեր լեռը պառկիլ, ազատ օդին, կուրծքը բաց, երեսը աստղերուն դարձուցած։ Իսկ ձմեռը հաճախ կկղկտեր ձկնորսներու սրճարանին մեկ անկյունը։

Բոհեմի թափառիկ ու թափթփած կենցաղ մը կապրեր մեր ձկնորսը, երբ օրին մեկը հանկարծ իր կյանքը հեղաշրջվեցավ։ Իր դասակարգին պատկանող աղջիկ մը սիրեց, Բերուզը, ձկնորս Ահարոնին աղջիկը։ Սիրո այդ անակնկալ հարվածը ինչպե՞ս ընդունեց ինք, չկրցավ հասկնալ։ Ժամանակ մը, ամոթեն կամ համարձակության պակասեն, իրեն պահեց իր սերը, անով աշխատեցավ, անով քնացավ, անով երազեց և անով տվայտացավ։ Բան մը չըսավ մեկուն, քիչ մը խոհուն եղավ, մինչև իսկ տրտում, իր բարեկամներուն ուշը գրավելու աստիճան։ Բերուզին թովիչ, սև աչքերն ու մսեղ բոբիկ ոտքերը, որոնց կհանդիպեր երբեմն դրացնության պատճառով, կուռեցնեին իր կուրծքը և մարմինը կդողացնեին։ Առաջին գործը եղավ նորեն իր հոր խրճիթը բնակիլ և առանձնանալ հոն իր կյանքը լուսավորող այդ ճաճանչին հետ։

Զկնորս Ահարոն բազմանդամ քնտանիքի տեր էր. չորս զավակ ուներ, որոնցմե միայն Բերուզը աղջիկ։ Թումիկին ետև փողոցը կնստեին, բուն տերերեն լքված, խոշոր և կիսափուլ տան մը մեջ, առանց վարձքի։ Բերուզ քսան տարու էր, վայրի աղվորությամբ մը, վհուկի աչքերով, բնականեն ծարուրված, հաղթական կուրծքով և համարձակ քալվածքով։ Ավելի պզտիկ տարիքին մեջ, փողոցի անկյունը սիրվըտուքներ ունեցած էր մերձակա թաղեն պատանիներու հետ, որոնք շատ անգամ իրար ծեծած կին անոր համար։ Աղեկ անունը մը չուներ Բերուզ, բայց գեղ աղջիկ ալ չէր, տարիքը առնելով կլրջանար և շնորհքով կին մը կըրնար ըլլալ՝ իր դասակարգին համար։ Թեև Թումիկ շատոնց կճանչնար զայն, անոր համար զգացած սերը հանկարծակի ծագում առած էր, ճիշդ ինչպես պաշտոնյա մը, որ տարիներով հավատարմորեն ծառայելե հետո վաճառականի մը քով, անոր ոսկինե-

ռուն մոտիկը, օր մըն ալ չես գիտեր ինչպես, կգողնա անոնցմե և կփախչի։

Ջխոստովանած տարփանքի մը գելաններուն մեջ բավական ատեն ոգորելե հետո, Թումիկ, խելահեղ օր մը, շիտակ ձկնորս Ահարոնին գնաց և սիրտը բացավ անոր խիզախորեն։

— Ահարոն, Բերուզը ինծի տուր, ես ալ հոգիս տամ ձեզի համար,— ըսավ անոր։

Ահարոն տղուն նայեցավ խոժոռ ու զարմանքոտ նայվածքով մը։

— Ծո՜, բապուճսըզ, քեզի վո՞վ աղջիկ կուտա,— ըսավ։

Բայց իր շեշտը իր խոսքին հերքումն էր։ Հայտնապես, չկամություն չուներ, իրը՝ հայրերու սովորական դժվարությունն էր հարուցված աղջկան թեկնածուներու դեմ։

— Տուն աղջիկդ տուր, ես ինծի ալ բապուճ կառնեմ, անոր ալ,— պատասխանեց Թումիկ խրոխտ ձայնով մը։

— Ծո տուն աղեկ տղա ես,— վրա բերավ Ահարոն,— փարա չունիս, ամա աղջիկս կուտամ քեզի։

Եվ Թումիկ ու Բերուզ նշանվեցան։ Տարիե մը պիտի կարգվեին և Բերուզ հարս պիտի երթար Թումիկին խրճիթը, ուր իրերը, ծնողաց անհայտացումեն ի վեր, նույն այն վիճակին մեջ մնացած էին՝ նոր տերերու խնամքին սպասելով կարծես։

Բերուզին մայրը Թումիկի ըսած էր.

— Տղաս, կտոր մը կոկվե, փարայի տեր եղիր, քի կնիկ առնես նե ըհաթ ըլլաք։

Այս հորդորին հետևցավ Թումիկ. օրին քիչ խմեց, ուրինչուրին ծախքեր չըրավ և խնայողության մը կորիզը դրավ։ Տարին չվանով կքաշեր, մանավանդ որ այդ ստորին դասակարգին մեջ նշանածներու սրտաբաց ու համարձակ հարաբերությունները, զգացումներու անվերապահ արտահայտությունները ներելի չեն։ Անոր համար շատ կնեղվեր Թումիկ, ինչպես նաև Բերուզ։

Ամուսնության պայմանաժամը լրանալու մոտ էր։ Երկու նշանածները հայտնի հրճվանքով կխայտային՝ սիրո մերձավոր հագեցման տենդերուն անձնատուր։

Ամիս մը մնացած էր։ Եվ ահա մեկեն ի մեկ Բերուզ հիվընդցավ։ Ի՞նչպես եղավ, ոչ ոք կրցավ ճշտիվ հասկնալ, արյուն պոռթկաց բերնեն, և իր առույգ մարմինը հանկարծ, շանթեն զարնված ուռիի մը պես, ուժաթափ, ինկավ անկողին։ Թումիկ, ձեռքերը մազերուն մեջ մխրճած, բժշկին վազեց։ Բժիշկը եկավ, նայեցավ, քիթը բերանը ծռմռկեց և «աղեկ նայելու է» ըսելով մեկնեցավ։ Նշանածը հսկեց իր սրտին հատորին մոտ։ Արյան պոռթկումները կրկնվեցան և շարունակվեցան։ Թումիկ, դողդողահար, մեկ բժշկեն մեկալին վազեց, աղաչեց, պաղատեցավ, լացավ իսկ, որպեսզի աղեկցնեն իր նշանածը։

— Աղեկ նայելու է,— կըսեին բժիշկները,— վերեմ է, օդափոխություն կուզե, թերևս աղեկնա։

Թումիկ՝ խնայած դրամը մեկ ամսվան մեջ դեղի համար ծախսեց լմնցուց։ Ահարոն, արդեն աղքատ, ապշեցավ, շլմորեցավ։ Հեք աղջիկը իր նշանածին ուսին կռթնած, «— Թումիկս, ինծի աղեկցուր, որ կարգվինք,— կհեծեր։

— Ճիտիս պարտքն է, Բերուզս,— կհառաչեր խեղճ տղան»։

Մեկ փարա չմնաց։ Թումիկ, փերուշան, փողոցե փողոց կթափառեր՝ ճարի մը, գերագույն ճարի մը ի խնդիր։ Ազատելու էր Բերուզը, բայց ի՞նչպես։ Հանկարծ լույս մը ծագեցավ մտքին մեջ։ Տեղվույն Թաղական խորհրդին դիմեց և իր խրճիթը ավանդ թողնելով, հինգ ոսկի ուզեց։ Կտրիճ և աղնիվ մարդ ճանչցված՝ չմերժվեցավ։ Տվին իրեն այդ գումարը։ Չորս բժիշկ մեկեն թափեց՝ վճռական դարմանին համար։ Բայց արդյունքը նույնը մնաց, ու թեև ամիս մըն ալ հիվանդը աղեկ դարմանվեցավ, բայց վիճակը չփոխվեցավ, դարմանը սպառելուն՝ ա՛լ ավելի վատթարացավ։

— Ծո, Բերուզը ծառքե կելլա կոր, ճար մը,— կաղաղակեր ինքնիրեն խեղճ ձկնորսը, խելքը գլխեն գացած։

— Ամա՛ն, Թումիկ, ճա՛ր, ճա՛ր մը,— կհեծեծեր հիվանդը՝ կուրծքը հաղերե ցնցված։

Է՛ն տագնապալից օրերեն օր մը Թումիկ հանկարծ խոհուն և լռակյաց եղավ։ Իր զվարթ դեմքը կծկված էր, նայվածքը անծանոթ հեռուներ սևեռած։ Ահավոր քայլ մը պիտի առներ, ուրկե անդին գուցե անդունդը կար, կորստյան անդունդը։

— Ջո՜ւր,— կհեծեր հիվանդը աղերսարկու. և երիտասարդ ձկնորսը, երազե արթնցած, կցատկեր, հիվանդին այրող ծարավը անցընելու։

Ու գիշեր մը, մութին մեջ, փողոցներեն գողի պես սպրդեցավ Թումիկ։ Լռություն ամեն կողմ։ Մերթ գիշերապահներու ճոկանները կթնդան։ Սովեզրն է Թումիկ՝ ձողերու վրա փռած ուռկան-

նիրու տակ ծծկված։ Վստահ է, թե ոչ ոք կա զինքը լրտեսող և կոփի ուղկանները ժողվել, ծալլել, պլորել։

Կես ժամ ետքը, Թումիկ, ահագին բեռան մը տակ կքած, ամայի փողոցներե կերթա, կանհետանա։

Այլևս գող մըն է ան. հետևյալ օրը իր ափին մեջ ունի ծախած ուղկաններուն փոխարժեքը, մեկ քանի ոսկի, զորս կենտե բժիշկներուն, որպեսզի փրկեն իր նշանածը։

— Ջո՜ւր, ջո՜ւր,— կհեծե Բերուզը, շրթները կափկափելով գիշերվան լռության մեջ, կուրծքը այրող տենդը մարելու։

Եվ ահա աղետալի կերպով կբախեն տան դուռը։ Ոստիկանները ներս կխուժեն, կբռնեն Թումիկը և գիշերանց պահականոցի պահականոց կտանին, կնետեն բանտ։ Այս հանկարծակի ձերբակալումեն ոչ ոք բան մը հասկցած է։ Բերուզ նվաղած է... վերջացած է...

Ամբողջ գյուղը զարմանքի մեջ թաղվեցավ. Թումիկ գո՞ղ, ան կոփրճ ու ազնիվ Թումիկը։ Շատ քիչեր հասկցան անոր ցավը և անոր անկումին շարժառիթը։

Հեք ձկնորսը դատվեցավ։ Լացավ դատարանին մեջ, և եթե չըլլար սիրացավ փաստաբանի մը պերճ պաշտպանողականը, Թումիկ վեցամսյա բանտարկությամբ չպիտի ազատեր իր գործած ոճիրին ծանր հետևանքներեն։

Ո՞վ պիտի երթար հարցներ փնտռեր զայն իր բանտին մեջ։ Ի՞նչ եղած էր իր նշանածը։ Ու իր ահագին ցավին հետ վեց ամիս տանջվեցավ, հալեցավ, մաշեցավ Թումիկ։ Պայմանաժամը լրանալեն ետքը, դուրս ելավ կմախացած, ծերացած։

Բանտին դուռնեն դուրս, չէր ուզեր քալել։ Աշխարհը դժոխք մը կերևար իրեն, և արևը՝ հնոց մը, որ ամեն բան կայրե, կլմնցնե։ Վրան գլուխը պատռված, կտրտված, ոտքերը բոբիկ, գլուխը բաց անցավ Բերա՝ լեռնեն խասգյուղը երթալու համար։ Անոթի էր, բայց չէր զգար։ Իրեն կթվեր, թե խուլցած է։

Վերջին զգացում մը կար իր մեջ. Ի՞նչ եղած էր Բերուզ։

Այս հարցումին պատասխանը փնտռելու կիրթար մեքենայաբար, գաղտնի ուժե մը հրվելով։ Պատեմլիքի բարձունքը, գերեզմանատան մոտ հասնելով, բազմություն մը տեսավ։ Հասավ փոսի մը մոտ, ուր մեռել մը կթաղեին։ Տերտերը կկարդար վերջին աղոթքը՝ խուլ և տարտամ մոլտուքով։

Թումիկ կեցավ, սաստիկ խռոված։ Մարդիկ իրեն նայեցան, բայց չի ճանչցան զինքը։ Մեռելը ճաղի մեջ դրած էին՝ ի չգոյն գազազի։ Հետո ժամկոչներե մեկը գրկեց պատանքված դիակը՝ փոսը նետելու համար։ Պատանքին պտիկությունեն դիակին գլուխը ճեղքե մը հանկարծ դուրս տնկվեցավ։

— Վա՜յ, Բերուզն է,— բացականչությունը թնգաց։

Հուղարկավորները, հազիվ արդեն 10—15 հոգի, դարձան ու Թումիկին նայեցան։

— Ես եմ, ե՛ս, Թումիկն եմ, գող Թումիկը,— պոռաց ձկնորսը,— Բերուզին նշանածը։

Հետո ժամկոչին քով վազելով՝ արգիլեց դիակը փոսը իջեցնել։

— Կեցի՛ր, ժամկոչ ազբար, նա՛, չե՞ս լսեր կոր, չե՞ք լսեր կոր, Բերուզս ջուր կուզե կոր, ման ձգեցեք, որ ջուր մը տամ, վերջին ջուր մը, ամա՜ն, ձգեցե՛ք... ոտվընիգ պագնեմ, վար միջեցնեք... ջուր մը, ջուր մը...

Ու մինչ Բերուզին այլակերպված գլուխը պատանքեն դուրս կճոճար, Թումիկ վազեց, խենթի պես, մինչև մատակա սրճարանը, գավաթ մը ջուր հափշտակեց ու բերավ մեռելին քով։ Թումիկ ջուրը բերանը լեցուց մեռելին կծկված, իրարու փակած ակռաներեն ներս։

— Խմե՛, անուշս,— կըսեր,— խմե՛, չըսես, որ վերջին. ջուրդ չալի...

Սակայն, ժամկոչը, անհամբեր և ասանկ սրտաշարժ տեսարաններու անզգա, շուտ մը փոսը իջեցուց մեռելը ու աճապարանքով հողերը վրան նետեցին։ Թումիկ ներկա եղավ այս արարողության գրեթե անզգա, քար կտրած։ Հետո ամեն մարդ ցրվեցավ։

— Վերջը ի՞նչ եղավ Թումիկ,— հարցուցի պառավին, որ ելած կեցած էր շիրմաքարին քով։

— Անիկա անկե ետքը մեռելներուն ջուր կրող եղավ. Թումիկ աղբար կըսեին իրեն, ապուշցավ։ Անկե ասկե ողորմություն ուզելով ապրեցավ։ Ամեն օր նշանածին գերեզմանին վրա սափոր մը ջուր կթափեր. «ծարավդ անցնի, անուշս»,— ըսելով։ Խեղճ տղան օր մըն ալ մեռավ, նշանածին քով թաղեցին։

ՏԵՐ ՊԱՊԱՅԻՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏՈՒՆԸ

Տ. Նիկողիմոս Հ... Թաղին եկեղեցիին քահանաներեն էր։ Հին ռեժիմին ատենը հրաշքով մը քահանա ձեռնադրված էր, առանց ունենալու այս պատվական ասպարեզին համար պահանջված հատկությունները։ Աշխարհականությանը իր ամբողջ արժանիքը եղած էր կիրակի առտուները և տոնական օրերը Թաղին եկեղեցին շապիկ հագնիլ և անձնվիրաբար երգել։ Ձայնը բավական անուշ էր։ Թաղին քանի մը ջոջերը, երբեմն, գողունի ու թաքուն զվարճությանց կտանեին պարոն Համբարձումը, որ գրգռիչ ու հայրատ շարգիներով անոնց քեֆը կբերեր։ Ասիկա շահաբեր ալ կըլլար իրեն։ Ի հարկին ամենեն նվաստացուցիչ վարնոցությանց կգիջաներ, բավական էր, որ դրամ մտնար գրպանը։ Արհեստով գուլպայավաճառ էր և շարչին ծակուլիկ մը ուներ իբրև խանութ։ Եթե սոսկ իր պարկեշտ առևտուրին շահուն մեջ սահմանափակվեր, գեշ էր Համբարձումին գործը, մանավանդ որ օր մը, սատանային անսալով, աղքատ աղջկան մը հետ ալ կարգվեր էր, որ իրեն պարգևած էր, առանց աչք բանալ տալու, իրարու վրա երեք հատ լաճեր։ Գուլպայի առևտուրով այս բազմանդամ ընտանիքը թըշվառության միայն պիտի վիճակվեր, եթե Համբարձում՝ տգետ, գռեհիկ, բայց ճկուն մարդ, Թաղին քանի մը ջոջերուն մոտ հացկատակության ճամփա մը բռնած չըլլար։ Ջոջական կերուխումի մը տաք մեկ վայրկյանին էր ահա, որ աղային մեկը, որ տեղվույն Թաղական խորհուրդին ալ անդամ էր, Համբարձումին, իբրև բարձր վարձատրություն, խոստացած էր զինքը քահանա ձեռնադրել տալ Ս. Սարգիս եկեղեցիին վրա։ Արդեն գուլպայավաճառին գանգին մեջ շատոնց ի վեր քահանայության այս գործը բույն դրած՝ երթալով կարևոր համեմատություններ կստանար և կլեցներ իր ամբողջ կյանքը, գիշեր-ցորեկ։ Երազին մեջ ինքզինքը քահանա կտեսնար՝ պատարագվորի հանդերձանքով, խորանին առջև։ Այս նպատակով քծինքը ավելցուցած՝ իր շողոքորթական նկարագրին մեծ զարկ տված էր։ Ժամուն հետ իր կապը սկսած էր սերտացնել, ոչինչ մարդիկներու կոնակը կծեծեր, ժամկոչներուն խուցը կմտնար, իրիկունը, շուկայեն դարձին և անոց հետ խոսքի կբռնվեր։ Ամենեն աղքատ մեռելին իսկ իբրև տիրացու կընկերանար՝ առանց դրամի, պարզապես համակրություն շահելու համար։ Եկեղեցական երգեցողությանց միջոցին ձայնին ելևէջներուն ավելի

քաղցր, թրթռուն և տրտմալի երանգներ կուտար, որպեսզի Թաղին հավատացյալներուն սրտին և զգացումներուն տիրեր։ Երեկույթներու մեջ, առտրվան դեմ, երբ հանդիսականները պարե ու ըմպելիքե հափրացած կիյնային հոգնաբեկ, չորապճի Համբիկը եկեղեցական սրտաճմլիկ եղանակներով մինչևիսկ անոնցմե շատերը կլացցներ։ Ասոնց նման դյուրին, ռամիկ ու առինքնող միջոցներով Թաղին մեջ հաջողած էր ժողովրդականություն շահիլ և երբոր տեղվույն քահանայական դասուն մեջ մահվան բացած խրամատները գոցելու համար նոր տերտերի պետքը զգացված էր, անմիջապես մատնանշված էր չորապճի Համբիկը։ Մանավանդ, ինչպես ըսինք, ջոջերն ալ համամիտ էին այս ձեռնադրության։ Եվ օրին մեկը չորապճի Համբիկ՝ Տեր Նիկողիմոս եղած՝ դասին մեջ կայներ էր, մյուս տեր-պապաներուն կարգը։

Ա՛լ անգամ մը նետված այդ նվիրական ու բեղմնավոր ասպարեզին մեջ, նախկին չորապճին հարդի տակե, շնորհիվ աչք խաբող կեղծավորության և շողոմարարության, սոսկալի շահատակություններ գործեր էր։ Իր նշանաբանը ընտրած էր, փոխանակ ավետարանի բարձր վարդապետությանց, դրամը, մամոնան, որուն կերկրպագեր իբրև գերագույն արարիչը ամենայնի։ Քիչ ատենվան մեջ ահագին թիվով ծուխ հավաքած էր, մեռած քահանաներու ժառանգությունները հափշտակելով և նույնիսկ ողջ քահանաներու հաճախորդները կորզելով, առանց աղմուկի, ճարպիկ քսակահատի մը պես, որ գրպանեդ ժամացույցդ կառնե առանց քեզ անհանգիստ ընելու։ Ռեժիմը բռնապետական ըլլալով, Տ. Նիկողիմոսի կերպասեն շինված մարդիկ մեծամեծ հաջողության սահմանված էին։ Շատ ձայն կարելի չէր հանել անոր անարժան և անվայել արարքներուն դեմ, վասնզի իր հարաբերությունները մասնավորապես սիրալիր էին Թաղին ոստիկանապետին հետ, որ շատ կհարգեր այս ողնաթեք քահանան, որուն թեմեններները գետնեն կսկսեին միշտ։ Քահանայանալեն ետքը ջոջերուն հետ ա՛լ ավելի մտերմացած էր ու զանոնք բոլորն ալ իր ոտքին մեջ առած։ Ո՞ւր էր երբեմնի այն խոնարհ չորապճի Համբիկը։ «Տեր հայր» կըսեին հիմակ ակնածանքով, և Թաղին խաթունները փողոցին մեջ անոր ձեռքը կպագնեին։ Հինգ տարի չանցած, Տ. Նիկողիմոս առաջին տունը տնկած էր Բերա։ Երեք տարի հետո տուն մըն ալ Մագրիգյուղ առած էր։

— Օրհնա՛ծ,— կըսեր իր շատ մտերիմ ծուխերուն,— տուն շինելու պես անուշ բան չիկա եղեր։

Երեցկինը, իր էրկանը եկեղեցվո պաշտոնյա կարգվելեն հետո, երկու զավակ ևս պարգևած էր անոր։

— Կնի՛կ,— ըսած էր տեր պապան,— ա՛լ կօգտե, հինգ հատը կօգտե, ճիտիս պարտքը ըլլա ամենուն համար ալ մեյմեկ տուն տնկել... ամա էվելին չեմ խառնվիր... չէ՛, չըլլար, կօգտե...

Հնազանդ երեցկինը կափարիչը փակած էր, և ա՛լ վեցերորդ արարած մը՝ վեցերորդ տան մը բեռը, չէր եկած ծանրացնել մեր Տեր Նիկողիմոսին ուսերուն վրա։ Իր խոստման հավատարիմ, քահանան չորս հատ իրարմե աղվոր տուներու տիրացած էր Պոլսո լավագույն թաղերուն մեջ ու ասիկա սանկ հազիվ տասնհինգ տարվան շրջանի մը մեջ, երբ հանկարծ օրին մեկ բռնապետությունը տապալած և սահմանադրությունը անոր հաջորդած էր։ Անկարելի է նկարագրել այն շվարումը և խռովքը, որոնց մատնված էր Տեր Նիկողիմոս առաջ եկած այս անակնկալ տակնուվրայության առջև։ Եթե տարի մըն ալ նախկին ռեժիմը շարունակվեր, ապահովապես հինգերորդ տունը տնկած էր։ Բայց ահա ազատությունը կուգար այդ տան հիմունքը քանդել կործանել, մեկենիմեկ խանգարելով աղբյուրները այն ապօրեն և շիլ շահերուն, որոնց գաղտնիքին թափանցած էր։ Սաստկավոր քամի մը ամեն բան ավլած տարած էր, հին մենծ աղաները, տիրապետ ջոջերը սասանեցուցած և ծակամուտ ըրած էր։ Հեղաշրջում մը, որ այսչափ միայն կրնար ըլլալ։

— Կնի՛կ,— ըսած էր Տեր Նիկողիմոս իր երեցկնոջը, մորուքը աճռելեն, կարծեմ մեր հինգերորդ տունը օդը ելավ... Այս սահմանադրությունը ո՞ր դժոխքին ծակեն դուրս ելավ։

— Աստված ողորմած է,— պատասխանած էր երեցկինը բարեպաշտորեն։

Բայց մեր տեր պապան անանկ շուտ մը հուսահատող մարդ չէր։ Իր ընդոծին ճկունությունը գուցե նոր ռեժիմին տակ ալ հաջողեր։ Առանց ժամանակ կորսնցնելու մարդ ժողվեց ինքզինքը, կացությունը զննեց, կշռեց և եզրակացուց։ Եվ Օսմ. սահմանադրությունը ողջունող հանրային, ժողովրդային խանդավառության հոսանքին մեջ նետվեցավ գլխիվայր, խառնվեցավ ժողովրդին, ձայնակցեցավ անոր և ճառեր իսկ ըսավ, ծափեր և կեցցեներ խլելով։ Ո՞ւր էր հին ռեժիմի Տեր Նիկողիմոսը. ոտից ցգլուխ ազատական եղած էր, կարմիր ու կաս-կարմիր տեսակեն, բռնապետության դեմ որոտաց ամեհի ծառացումով, ազատության արշալույսը օրհնեց սրտահույզ և ցնցող օրհնաբանություններով։ Քահանային վրա կատարված այս փոփոխությունը ոչ ոք նշմարեց ընդհանուր խառնաշփոթության մեջ։ Բռնապետության նահատակի ժեստեր ալ ունեցավ ու այդ ռեժիմին երեսեն իր կրած վնասներուն ցավը լացավ անանկ անկեղծ ձևով մը, որ ոչ ոք կըրցավ կասկածիլ հակառակի մասին։

Հեռատես տեր պապան դիտեց նույնպես, որ հուլիս 10-ի հաջորդ օրերուն Պոլսո հայ ժողովուրդը, ամեն դասակարգով՝ աղքատ, հարուստ, ջոջ, մենծ աղա, եթե թունդ հեղափոխական ալ չէր կտրած, ծայրահեղ կերպով հափշտակված էր հեղափոխականությամբ և հեղափոխականներով։ Հասարակությունը այդ հոսանքով էլեկտրականացած էր։ Ուրիշ ճար չկար, ուրեմն, պարտավոր էր ինքն ալ հարիլ այդ հոսանքին, հակառակ իր մեջը անոր դեմ սնուցած խուլ ատելությանը, հետևապես հանդիպած տեղը սկսավ գովեստը հյուսել հայ հեղափոխականության և անոր ներկայացուցիչներուն, «որոնց կպարտինք,— հոչակեց,— մեր վայելած այս ազատությունը»։ Կապեր հաստատեց անոնցմե կարեվորներուն հետ, որոնք բնականաբար անծանոթ այդ կրոնավորին անցյալ կյանքին, համակրեցան անոր։ Անձնվիրության ցույցեր ըրավ մինչև իսկ, Ֆ... կուսակցության ի նպաստ կատարված հանգանակության աջակցեցավ, ջոջերու մոտ իր վաղեմի ազդեցությունը դնելով ի սպաս հեղափոխության։

Այդ օրերուն, երբեմն կըսեր իր երեցկնոջը.

— Կնի՛կ, արդյոք չի՞մ կրնար սա հեղափոխություն ըսված բանին մեջեն մեր հինգերորդ տունը դուրս հանել... հելե աշխատինք տե...

— Աստված ողորմած է,— կավելցներ երեցկինը երկյուղածությամբ։

Հեղափոխականներ տարավ իր տունը ճաշի։ Թաղին մեծերը, հարուստները, այս տեսնելով, սկսան առաջվընե ավելի մեծ ակնածանք մը տածել տեր-հոր նկատմամբ։ Կրկնապատկեցին իրենց նվերները, և Տեր Նիկողիմոս այդ օրերուն, իր ձեռք բերած նոր ազդեցությունը շահագործելով, գրպանը նշխարքի առատ մթերքով հարուստ տուներ այցելեց, այդ կլորիկ խմորները կլորիկ գրամներու վերածելով։

— Այս ազատությունն ալ զարարսրզ բան է եղեր, կնի՛կ,— կրսեր իրիկունը տուն դարձին, գրպանեն օրվան վաստակը հանելով... — Ես չէի գիտեր, որ հեղափոխությունը այսքան անուշ բան է, և հեղափոխականները սասանկ շնորհքով մարդիկներ են... հինգերորդ տունը...

— Աստված ողորմած է, չե՞մ ըսեր,— կկրկներ երեցկինը հաղթանակով։

Իր հաճոյակատար ասպնջականութենեն քաջալերված, հեղափոխական ընկերները շատ անգամ կպատվեին տեր Հոր սեղանը, և գրեթե շաբաթ չէր ըլլար, որ հեղափոխական հավաքում մը տեղի չունենար հոն։

— Դուք իմ զավակներս եք, դուք ազգին փրկիչներն եք,— կկրկներ Տեր Նիկողիմոս։

Վերջապես գործերը հաջող կերթային... և եթե այդպես շարունակվեին, տարակույս չկա, որ տեր-պապային հինգերորդ տունը շուտով պիտի կանգներ։

Բայց ի՞նչ բան կայուն է այս աշխարհիս մեջ։ Օր մըն ալ, հանկարծ, քամին փոխվեցավ ու սկսավ աննպաստ փչել հեղափոխության։ Պոլսահայ ժողովուրդը, որ ամիսներով տոնեց հայ հեղափոխականները, մեկենիմեկ անոնց դեմ դարձավ։ Տեր Նիկոդեմոս, այս տարօրինակ երևույթին առջև, քիթը բերանը ծռմռեց։ Հառաջ եկած հակառակ շարժման ազդեցությունը իսկույն զգաց իր մորթին վրա, իր գրպանին մեջ։ Հուլիս 10-են ասդին, ինքն ալ հեղ. քահանա մը ճանչցված, բնականաբար հեղ. կուսակցության դեմ մեկենիմեկ բարձրացած ատելության և հակառակության հոսանքին ինքն ալ կենթարկվեր...

Զուլո՞ւմ։

Եվ տերտերը զայրույթով տեսավ, որ այդ հոսանքը օրավուր կաճեր, կլայններ, կծովանա՞ր... Հեղափոխականները, առաջվան պես, իր տունը կուգային կերթային, ու ասիկա բոլոր աշխարհք կտեսներ... Դեմքերու վրա կկարդար իր դեմ սկսված հակառակությունը։

— Կնի՛կ, աս ի՞նչ զուլում է,— կկանչեր եկեղեցիի պաշտոնյան իր երեցկնոջ,— տուներնիս հիմա կործանվեցավ... լմընցանք...։

Գործերը երթալով գեշ հանգամանք մը առին, ամեն մարդ սկսավ երես դարձնել հեղափոխական տեր պապային. ո՞ւր էին այն ջոջերը, որ կակնածեին իրմե. քիչ-քիչ բարևնին անգամ սկսան կտրել։ Հայտնի բան էր, որ հեղափոխականներու հետ տեսակցիլը հանցանք մը կնկատվեր։ Ու ասկից, բնականաբար, ահռելի կերպով տուժեց։ Սկսան ո՛չ կնունքի կանչել զինքը, ո՛չ մեռելի, ո՛չ հարսնիքի։

— Կնի՛կ, կլմնա՞նք կոր,— կխորդար Տեր Նիկողիմոս մարմըրելեն, հևալեն, քֆրելեն,— վազ անցանք հինգերորդ տունեն, մեկալ չորս տուներն ալ ծառվընուս չերթան...

Երեցկինը, ինքն ալ սաստիկ խռոված, ա՛լ դադրեցուցած էր «Աստված ողորմած է»-ի իր հանկերգը։

Ու հեղափոխականները, բոլորովին անտեղյակ այն հեղափոխության, որ կփոթորկեր տերտերին ներսը, կշարունակեին երթալ ու գալ անոր տունը, միշտ պատվելով անոր սեղանը, որ սկսած էր քիչ-քիչ նիհարնալ սակայն։

Տեր պապա՛ն ալ կնիհարնար։ Ի՞նչ փորձանք։ Իրիկուն մը, ուշ ժամանակ, տուն դարձավ, դեպ-դեղին կտրած։ Փակեղը նետեց բազմոցին մեկ անկյունը և երեցկնոջը վրա վազելով,

— Կնի՛կ,— պոռաց,— ա՛ն հեղափոխական ըսված սյուրդյուկները մեյ մըն ալ հոս ոտք կոխեն նե, վռնտե՛, կհասկնա՞ս, վռնտե՛՛՛... Տուներնի՛ս պիտի կործանեն...

ԿՏԱԿԸ

Մարկոս էֆենտի Նազարիկյան է... գյուղին մեջ գրեթե ամենեն ավելի աչքի զարնող ազգայինն էր։ Երևույթով ամիրայական, սիրտով մենծ աղա, վարմունքով ամբարտավան ըլլալու չափ վես և նկարագրով ինքնահավան։ Բայց հակառակ այս ամեն միջակ հատկություններուն, գրեթե աղեկ մարդ մըն էր Մարկոս էֆենդի, կամ, ավելի ճիշտը, աղեկ մարդու համբավ հանած էր։ Այս տեսակետով իրեն մեծապես նպաստած էր իր նյութական փայլուն վիճակը, հարուստ էր, իր հարստությունը՝ առանց շռայլելու՝ արժեցնող տեսակեն։ Կծծի չէր, բայց առատաձեռն ալ չէր։ Մեկ քանի անանկ տեղին ու ժամանակին հարմար բարերարություններ ըրած էր, որ ատոնք ոչ միայն հավետ չէին մոռցվեր, այլ և հեղինակին կյանքին շուրջը լուսապսակ մը կբոլորեին կարծես, ու թաղին մեջ իրեն կուտային, հակառակ ուրիշ նույն աստի-

ճանին վրա հարուստներ գտնվելուն, գրեթե գերակշիռ դերք մը։ Եկեղեցին ու թաղային խորհրդին մեջ իր տիրապետությունը անհարձակելի էր, և առանց Մարկոս էֆ. Նազարիկյանի համամտությանը կամ հավանությանը ազգային տեղական իշխանության շրջափակին մեջ տերև մը իսկ չէր շարժեր։ Ասիկա պոլսական տիպարներու այն դասակարգեն էր, որ անցյալ ամիրայական շրջանի սերունդին ու արդի ազատամիտ ու հառաջդիմասեր սերունդին մեջտեղվանքը կկանգնի, փոխանցության տեսակ մը կամուրջի պես, որ հիմակ քանդվելու, քայքայվելու վրա է, կարծես ավարտած ըլլալով իր ընկերային անգիտակից, մեքենական, բուսական դերը։

Հետևապես, Նազարիկյան էֆ. իր դիտցած ու հասկցած ձևով ազգասեր մըն էր։ Իր ազգասիրության այս ըմբռնումը այնքան նեղ էր սակայն ու մակերեսային, որ եկեղեցին գաթիվը ս. ատվածածնա պատկերին առջև վառող մամերուն բազմախոշոր աշտանակին վիճակը ավելի կարևորություն ուներ իրեն համար, քան թե ազգային ձախողված մը, որուն մեջեն ցեղին գոյության հարցը ցցվեր։

— Թող ամեն մարդ իր պարտքը ինծի պես խղճմտությամբ կատարե,— կըսեր երբեմն ասոր-անոր, կամ ինքզինքին,— ազգը էնյա կըլլա, էնյա՛։

Առտուները, շուկա երթալե առաջ, ուր արծաթավաճառության ընդարձակ գործ մի կվարեր, Մարկոս էֆենդի ժամկմտներ, անցած տեղերուն վրա ամեն բան մանրակրկիտ դիտելով իր շուրջը, մասնավորը ազգթարանին դուրսի և ներսի որմերը իսկ շոշափելով՝ անոնց հավերժությունն ստուգելու համար։ Օր չէր ըլլար, որ ժամկաչներուն հետ կռվի չբռնվեր՝ ամենաչնչին զանցառության մը համար։ Եկեղեցին ծուռ-ծուռ ծփալու էր։ Ա՛ս կպահանջեր, ազգին շահը և մանավանդ Նազարիկյան էֆենտիին կամքը։ Ամեն մարդ այս բացարձակ իշխանության առջև կխոնարհեր։ Ուրիշ ճար չկար արդեն, որովհետև տարիներե ի վեր եկող-գացող բոլոր թաղական խորհուրդներուն մեջեն, չեմ գիտեր ի՛նչպես, Նազարիկյան էֆենտիի պարթև հասակը դուրս ցցված էր, մինչև անգամ, երբ որ իրեն հակառակամարտ վաղանցիկ հոսանք մը ամեն ճիգ թափած էր, ատեն-ատեն, եկեղեցիին շրջափակը այդ մարդուն լուծեն ազատելու համար։ Իր շատ մտերիմները երբ հետաքրքրությամբ իրեն կհարցնեին, թե ի՛նչ այդքան համառորեն այդ

պաշտոնին փաթթված էր, Մարկոս էֆ. կպատասխաներ, թե հայրը մեռած ատենը իր ճիտին պարտք ձգած էր՝ ուրքը անպակաս ընել եկեղեցիեն և զանիկա պայծառացնել։ Ատիկա ուխտ մըն էր իրեն համար, և ատո՛ր մեջ գլխավորապես կկայանար իր հոգիին հավիտենական փրկությունը։ Վարպետ ալ մարդ, ամեն անգամ, որ թաղ. նոր ընտրության մը միջոցներուն իրեն դեմ հակառակություն մը կռահեր, փայլուն և շլացնող մեծագործությամբ մը՝ զինված բազուկները կջլատեր և իր կողմը կշահեր զանոնք։ Օրինակի համար, մեծ տաճարի խորանին արծաթահյուս վարագույր մը կնվիրեր և անոր վառ ի վառ շողշողումովը կխտզտացներ թաղեցիին աչվերները, ընտրութենեն շաբաթ մը առաջ։

— Ասանկ մարդ մը թաղական չընենք՝ ո՞վ ընենք,— կըսեր ժողովուրդը իրավամբ։

Մարկոս էֆենտի աղետավոր թերություն մը ուներ սակայն. երբեք իր հոգածության շրջանակը չէր տարածեր մինչև ազգային վարժարանին սահմանները։ Տգետ ու խավարամիտ, չէր հավատար, որ մեր ազգին հառաջադիմությանը մեջ դպրոցը կարևոր դեր մը պիտի խաղար։ Տղաքը կարդալ-գրել մը սորվին՝ բավական է,— կըսեր, անկե ետքը, «յա՛ չարչի, յա՛ զենաաթ»։ Ահա իր ամբողջ գավանանքը ազգային դաստիարակության վրա։ Այս պատճառով, տարիներե ի վեր է... թաղին դպրոցը ողբալի խեղճության մը մատնված էր։ Հոգաբարձությունը մենծ աղա թաղականին ձեռքը խաղալիք մըն էր. և ամենամեծ դժվարությամբ է, որ կրնար անոր ձեռքեն ամսական չնչին պյուտճեն փրցունել՝ բոլորովին չփակելու համար վարժարանը։

— Ժամեն ինչ էվելնա նե, դպրոցին,— կպոռար թիկդատորը հոգաբարձուներուն երեսին։

Բայց ժամեն մեծ բան մը ավելցած չուներ. «եկեղեցիին պայծառությունը» կուլ կուտար բոլոր հասույթները, կալվածական, թե եկեղեցական. և տերտեր, վարդապետ, տիրացու, լուսարար, ձայնավոր մեծապես նպաստավորվելով այս «եկեղեցամոլ» ոգեփոքեն, ընականաբար կբլլային Նազարիկյան իշխանության մեյ մեկ զորավոր նեցուկները։

Անպատիժ և անպրդվելի, Մարկոս էֆենտի կշարունակեր իր այս ազգային բազմարդյուն գործունեությունը, որուն սերտիվ կապված էր, ինչպես ըսինք, իր հոգիին փրկությունը, բան մը, որուն կարևորությունը, տարիներու հոլովման հետ, շեշտվեցավ

իր աչքին և ամենածանր հանգամանք մը առավ վերջիվերջո։ Մարգուկը ինքնիրենը այն համոզումը գոյացուց, որ առանց այդ բարեպաշտական ծառայությանը, դժբախտ պիտի ըլլար իր հավիտենական կյանքին մեջ և դժոխքին բոցերը իր բաժինը պիտի ըլլային։

Բայց եթե այս էր Մարկոս էֆենտիի հանրային կյանքը, իր ընտանեկան կյանքը այլապես չոր ու տափակ էր։ Մանչ զավակ մը ուներ, որ առաջի օրեն իսկ իր մեջ ցույց տված էր հորը հակումներուն բոլորովին հակառակ ձգտումներ։ Զարեհ, տասնվեց տարեկանին, արդեն սկսած էր հեգնությամբ նայիլ հորը խավարամիտ ոգիին ու չափազանց բարեպաշտ ու եկեղեցասեր տրամագրությանը վրա։ Ընդհակառակը, իր մեջ կզգար զարգանալու նոր ու փրկարար գաղափարներով տոգորվելու ցանկություն մը, որուն շվարած էր, թե ինչ կերպով կարենար գոհացում տալ, երբ, 96-ի դեպքերը հանկարծ վրա հասած էին, ու Զարեհ, ընդհանուր խառնաշփոթութենեն օգտվելով, ինքզինքը արտասահման նետած էր, առանց և ոչ իսկ իր հորը հավանությունն առնելու։

Այս փախուստը, կամ անհետացումը սաստիկ զայրացուցած էր Մարկոս էֆենտին, որ քանի մը տարի առաջ արդեն կորսնցուցած ըլլալով իր կինը, իրեն պես բարեպաշտ ու երկյուղած, իր քով ոչ ոք կունենար, եթե ոչ պառավ, 80-ամյա մորաքույր մը, որ նմանապես կյանքը ծոմով, մոմով, պահքով ու աղոթքով կանցներ։ Միս-մինակ մնացած էր Մարկոս էֆենտի և 96-ի դեպքերուն ահեղասաստ փոթորիկին անդորրացումեն հետո, նորեն իր սովորական կյանքն սկսած էր ապրիլ, ա՛լ ամբողջովին նվիրվելով եկեղեցիին ու անոր անվերջանալի բարեզարդությանն ու պայծառությանը։

Զարեհ՝ ճարպիկ, աշխույժ ու խելացի տղա, հաջոցած էր արտասահմանի մեջ որոշ շավիղ մը գծել իրեն ու չկորսվիլ եվրոպական խոլ ու սանձարձակ կյանքի այն հորձանուտին մեջ, ուր այնքան հայ ծաղկափթիթ և հուսալից կյանքեր փչացան։ Տասներեք տարի տող մը չգրեց իր հորը և մեկ փարա չուղեց անկե իր ապրուստին համար։ Տոկաց ամեն զրկանքի և մտավորական զարգացմանը հետապնդեց։ Վերջին ծայր կհետաքրքրեին զինքը ընկերային գիտությունները և Ժնևի մեջ իր ուսումը կատարելագործեց։ Մարդկային խոր դժբախտությանց հարցերովը հափշտակված, Զարեհ անշուշտ անկարելի չմնաց իր ազգին ցավերուն և եռանդով

գործակցեցավ հեղափոխական մեծ գործին, որուն պատրաստության վառարաններեն մեկն ալ ազատ ու ազնիվ Զվիցերիան է։

Ազատության քաղցրահունչ շեփորը երբ որ հնչեց Արևելքի մայրաքաղաքին մեջ, Զարեհ, ինչպես իր հեղափոխական ընկերները, թռավ եկավ Պոլիս գործունեության նոր, անկոխ, կույս գետիններու ի խնդիր։

Եվ այդ երջանիկ ու անմոռանալի օրերեն մեկ օր մը, է... գյուղին թաղական խորհուրդի վաթսունամյա ատենապետը, շուկան, իր խանութին մեջ, բարձրահասակ երիտասարդ մը կանգնած տեսավ հանկարծ իր դեմը։ Երկար, շեկ մազեր, գլխարկ, ու ծփծփուն փողկապ, սրածայր մորուք։ Եվրոպական ամբողջություն մը։

— Ո՞վ ես,— հարցուց Մարկոս էֆենտի, շվարած նայելով այդ հյուրին։

— Զավակդ,— ըսավ Զարեհ հանդարտ և ժպտուն։

Արծաթավաճառը շփոթեցավ. այդ կերպարանքով զավակ ինք երբեք երազած չէր։ Մանավանդ որ անոր անհետացումեն ետքը, անկեց ոևէ լուր չառնելով, շատերու պես ինքն ալ ենթադրած էր, թե ջարդի ուրագանին մեջ կորած գացած էր իր զավակը։ Լացած էր զայն, բայց մոռցած ալ էր։ Ահա հիմակ այդ մոռցվածը իր առջև կտնկվեր հանկարծ։ Կասկածեցավ։ Արդյոք խաբեբա՞ մըն էր, որ իր ժառանգորդը կուզեր ըլլալ։ Ավելի ուշադրությամբ նայեցավ այդ դեմքին ու անոր անուշ, կապույտ աչքերուն ու պարզ ու անկեղծ դիմագծերուն մեջ իսկույն ճանչցավ հայրը, որուն իսկական պատկերն էր։ Համբուրեց զայն, աչքին մեջ արցունքի կաթիլով մը։ Եվ տուն տարավ զայն։ Թաղին մեջ օրվան նորությունը Զարեհին վերադարձը եղավ՝ ուրիշ շատ մը վերադարձներու մեջ։ Զավկին վերերևումը բնականաբար որևէ փոփոխություն առաջ չբերավ Նազարիկյանի կյանքին մեջ։ Ան իր գործին նայեցավ նորեն, ժամուն, բանկալին, խորանին, մոմին, կանթեղին։ Իբրև հանրային, ընկերային գործիչ, Զարեհ, անշուշտ, իսկույն սկսավ հետաքրքրվիլ իր թաղին ազգային, կրթական, կուլտուրական գործերովը։ Օր մը հանկարծ դպրոցը այցելեց և ի տես անոր ողբալի վիճակին՝ բուռն կերպով ըմբոստացավ։

— Ո՞վ ասիկա այս վիճակին հասցուցեր է,— հարցուց իրազեկներու զայրացմամբ։

— Հայրդ,— ըսին իրեն՝ վարանումե մը հետո։

— Հա՛յրս...— շշնջաց երիտասարդը՝ ամոթեն կարմրած և ակնարկելով։— Հայրս... այսուհանդերձ պետք է այս բոլոր խեղճությունները բարեփոխել։ Պետք է քանդել հինը...

Խնդացին շատեր։ Զավակը հորը դե՞մ պիտի ելլար։

Զարեհ, անհամբեր հոգի, իսկույն իր շուրջը ամփոփեց գյուղին երիտասարդությունը և ցնցող հորդորներով հաջողեցավ անոր թմրությունը փարատել, եռանդ, աշխույժ, գործունեության ոգի ներշնչեց անոր։ Թաղը հեղաշրջվեցավ։ Ո՞ւր էր ան նախկին մեռելությունը։ Լսարան հիմնվեցավ։ Բանախոսություններ սկսան կանոնավորապես։ Ի մեջ այլոց կրթության հարցը սեղանին վրա դրվեցավ։ Այդ միջոցին էր արդեն, որ Պատրիարքարանը հրահանգներ կղրկեր ամեն կողմ՝ թաղային մարմիններու նորոգ ընտրության համար, համաձայն նոր ռեժիմին ոգվույն։ Այս հրահանգը ապշությամբ լսած էր Մարկոս էֆենտի և դեմքը թթվեցուցած էր, երբ որ իմացած էր, թե սահմանադրական թաղական խորհուրդ մը պիտի ընտրվեր։ Իր անկումին հոտը առած էր մարդուկը և հետո աչքեն չէր վրիպած նոր ու աղմկալից եռուզեռը, որ հանկարծ ծայր տված էր գյուղին մեջ։ Ուրիշ ավելի ծանր բան մըն ալ տեղի ունեցած էր։ Իր որդին իրիկուն մը աղաչական, բայց և տիրական ալ շեշտով մը ըսած էր իրեն.

— Հայրիկ, դուն ա՛լ հանգստանալու պետք ունիս, քաշվե՛ ազգային գործերե, թող քիչ մըն ալ ուրիշները աշխատին...

Մերունին ծուռ-ծուռ երիտասարդին երեսը նայած ու առած քալած էր։

— Աս փորձա՞նքը ուրկե մեջտեղ ելավ,— կըսեր։

Քսան տարիե ի վեր առաջին անգամ ըլլալով, թաղային անկաշկանդ, ազատ ու սահմանադրական ընտրություններ տեղի ունեցան։ Գլխավոր շարժիչ, առաջնորդող ուժը եղավ Զարեհ Նազարիկյան, որ հայտնի կերպով իր հոր վերընտրությանը դեմ ելավ, նույնիսկ այնքան բուռն կերպով, որ նախկին ատենապետին բարեկամներեն շատեր եկան եղելությունը ցաված սրտով պատմեցին իրեն։

Մարկոս էֆենտի գլուխն երերցուց ու չպատասխանեց։ Խուլ փոթորիկ մը կհորձանար իր հոգիին մեջ։

Եվ ահա ընտրվեցավ նոր թաղական խորհուրդը՝ ազատական տարրերե, ընդ որս և Զարեհ Նազարիկյան։ Որդին հորը կհաջորդեր, անոր քսանամյա բարոյական, ընկերային, կրթական ավերը բառնալու և գործված չարիքը դարմանելու համար։

Մարկոս էֆենտի 400 ընտրողներե 10-ի քվեն միայն ստացած էր, ամոթալի ու ջախջախիչ պարտություն։

— Աֆերի՛մ, զավակս, ապրի՛ս,— ըսավ միայն՝ իր ամբողջ գառնությունը արտահայտելու համար։

Ուրիշ բան չըսավ։

Ոտքը կտրեց ոչ միայն թաղական խորհրդարանեն, այլ և ժամեն, որուն վրա քառորդ դար շարունակ գուրգուրացած էր։

Ժամանակ մը մտախոհ՝ շուկա գնաց-եկավ։ Օր մը, կամուրջեն կառք մը նստավ և շիտակ Ազգային Պատրիարքարան գնաց ու պատրիարքին հետ տեսակցիլ ուզեց՝ հույժ կարևոր խնդրի մը համար։

Տեսակցությունը կարճ եղավ։

Մարկոս էֆենտի Նազարիկյան պաշտոնական թուղթով, գիրով իր ամբողջ հարստությունը, անշարժ և շարժուն կալված, իբր 40,000 ոսկի, կկտակեր ազգին՝ հետամահու, պայմանավ, որ այս գումարը հատկացվեր «մխիթարյան Հայաստանյայց ս. եկեղեցիին պայծառությանը»։

Հաջորդ առտուն, վաղազարթույց ժամավորներ զարմացմամբ տեսան, որ է... թաղին նախկին ատենապետը, որ ոտքը ժամէն կտրած էր, նորեն կաղոթեր եկեղեցիին մեջ, ծնրադիր, արտասվոր ջերմեռանդությամբ մը...

ՎՐԵԺԸ

Ամառնավերջի լուսափայլ այդ գիշերը Մեսրիին* հաստաբեստ ու պատկառելի կոնքը կպատեր Սև ծովին լանջը, ցուկովը խառնելով ու խառվելով ջուրերուն խաղաղվետ մակերեսը՝ խառվելու համար կարծես նիրհը երկինքեն իջած զմայլելի Սիր Կաթինին։ Հյուսիսեն անծանոթին անհեղլի տարտամությունը կփակեր ամեն բան՝ մութի, անդունդի, անսահմանության խառնաշփոթ ու ահեղ քողին տակ, դող տալով տկար ու ջղայնոտ հոգիներու. հաբավեն ասիական ափունքին անորոշ, սոլերագծային երիզը կշղթայվեր

* Մեսրի շոգենավի անունը։

անհունորեն՝ հեռուստին մեջ անզգայաբար թանձրացող մշուշին քողարկված։ Տիեզերքին վրա ծանրացող լռությունը ինծի կթվեր այդ րոպեին ավելի ահարկու բան մը, քան մեծամոռնչ և ահագնադղորդ ուրագանները, որոնց տեսած էի դիվայնացնելը այդ ուլտիմական ծովը։ Ու այդ լռությունն այնքան ճնշիչ էր ու այդ խաղաղությունը այնքան հափշտակող, որ մերթ կոթնած վերնահարկի ծովահայաց երկաթյա բարամբին, աչքերս ծովահույզ տեսակ մը անդրաշխարհիկ թավալման ցնորքին մեջ, չէի իսկ լսեր նավուն ընդերքներուն համաչափ շռինդը ու խուլ ու թրթռացող դղրդյունը, որով Մետին կսուրար շարունակ։

Վարը, հասարակ մահկանացուներու մակաղատեղիին մեջ, կուրծքեր կֆշային համաչափությամբ ու երբեմն քրդական լեռնաբույր ու ասիաշունչ երգի մը լալագին բեկորը կերկննար խաղաղության մեջ։ Մեկ քանի զույգեր՝ վերի երջանիկներեն, արու և էգ, պիրկ ու ինքնամոլոր փարումով, հոս-հոն, լուռ ու մունջ կդիտեին բնության մեծավայելչությունը ու կփսփսային երբեմն ու կսիրվըտեին մերթ։ Ու ես մոռցած, թե ո՛ւր եմ, դեպի ո՛ւր կուղղվիմ, ի՞նչ ձգած էի ետիս, չէի մտածեր, չէի զգար, կարծես մեկ խտացած մասնիկը դա հեռվի թանձրակուռ մշուշին, ուր կանհետանար, կանչյութանար տարտամ երիզը ասիական ափնակառույց լեռնաշարին։ Վիթխարի ու անըմբռնելի բաներու մտացնորքովը ալեկոծ, կմոռնայի ցավն ալ, հույզն ալ, խնծիղն ալ, վայելքն ալ կյանքին, քաղցրությանը մեծ ու մարդկային նպատակներու տենդալից հետապնդումին, և էությունս աննպատակ ու անզգալի հեշտությամբ. կթաղվեր, կլվացվեր սրսփալից՝ սպիտակաշող ու ծփծփուն Ծիր Կաթինին մեջ, զոր օգոստոսի այդ անապակ լուսնկան կթափեր ծովուն վրա։

Մեկեն, սակայն, հառաչանք մը սթափեցուց զիս։ Դարձա ու տեսա, ինե քանի մը քայլ անդին, բարամբին վրա կքած, մարդ մը, որ կխոկար՝ ծովուն նայելով, անթարթ ու անշարժ։ Այնքան ցավագին թվեցավ ինծի այդ հառաչը, մարդկային վշտի անանկ մեծաբարբառ հայտարարություն մը կարդացի անոր մեջ, որ խանդաղատալից հետաքրքրություն մը մղված, քիչ մը մոտեցա՝ ավելի աղեկ տեսնելու համար մարդը։ Եվ լուսնի անորոշ ճառագայթներուն մեջ ճանչցա ճամփորդ մը, որուն առաջին վայրկյանին իսկ՝ երևույթն ու շարժումները խորհրդավոր ու ցավագին թված էին ինծի։ Հայ էր անշուշտ, բայց ոչ մեկուն հետ կտեսնը-

վեր, ցերեկին ծալապատիկ նստած էր խելաց կողմը, շուրջի շարժումին ու աղմուկին անուշադիր։ Ամերիկայեն վերադարձողներու խումբի՞ն կպատկաներ։ Բայց ոչ ոք հետը կխոսեր։ Անպարագրելի տխրության մը խորիմաստ դրոշմը կար դեմքին վրա՝ մեռելական գունաթափությամբ։ Այդ սրտաճմլիկ տխրության առջև անդիմադրելի պետք մը կզգայիր իրեն դիտելու և ըսելու. «Բարեկա՛մ, ի՞նչ է վիշտդ, արդյոք կրնա՞մ սփոփել քեզ, ըսե՛, խոսե, թեթևցիր, գուցե ճար մը կա...»։ Լուսնին տժգույն ցոլքը ինծի կցուցներ հիմակ իր կիսադեմքը, կիսախուփ աչքը՝ խոր թաղված, իր դեմքին գիծերը՝ ավերած ու մաշած։ Ու երբ քուրդի լալագին ու կերկեր ավաշը նորեն բարձրացավ վերեն, մարդը խորաթունդ հառաչ մըն ալ արձակեց։ Ու տեսա արցունքի կաթիլ մը, որ պահ մը ցոլաց անոր այտին վրա ու ինկավ ծովը։

— Բարեկա՛մ,— ըսի, ձեռքս ուսին դնելով,— ինչո՞ւ կուլաք... Հայրենիքի կարո՞տն է արդյոք...

Մարդը մեկեն ի մեկ շտկվեցավ ու տեսա, որ աճապարանքով թիկնոցին մեջ գրպանը պահեց թուղթ մը, զոր ձեռքին մեջ ուներ։

— Հայրենիքի կարո՞տ, օ՜, անշուշտ կա ատիկա,— ըսավ նվաղած ու տրտմալի ձայնով... բայց իմ ցավս ադ չէ միայն... իմ ցավս անմարելի է... և ավելորդ է զիս մխիթարել փորձել։

— Ուսկի՞ց կուգաք։

— Ամերիկայեն. հազիվ երկու տարի է երթալս... գործ ունեի հոն, բավական դրամ կշահեի, բայց աճապարանքով ետ կդառնամ... որովհետև...

Չշարունակեց, ու գլուխը ինկավ կուրծքին վրա, ու աչքերը նայեցան ծովուն։ Հինգ վայրկյան մնաց այդպես, կարծես քարացած։ Սպասեցի, որ շարունակե։

— Որովհետև,— հարեց գլուխը վեր առնելով,— կնոջս մահվան լուրը առի...

— Մեռա՞վ կինդ,— հարցուցի վշտակցության մը պես, մեքենաբար։

— Մեռա՞վ,— կրկնեց ինքիրենը խոսելու պես մթության նայելով,— ո՜չ, չմեռավ, պարոն, մեռցուցին...

Ու այս վերջին բառը արտասանվեցավ ոչ թե տրտմությամբ, այլ կատաղությամբ մը, որմե իր ամբողջ մարմինը դողաց։

— Այո՛, բարեկամս,— շարունակեց, երկու ձեռքերովը վանդակաձողը բռնած ամրորեն ու միշտ աչքերը մութ անշրպետին հառած,— այո՛, մեռցուցին խեղճ կինս, սիրական կինս, քաղցր և զմայլելի կինս... մեռցուցին, սրիկաները...

Այս անգամ երկու բռունցքները վեր առավ, օդին մեջ երերցուց, ու լսեցի ակռաներուն քստմնելի կրճտուքը։

Բոլոր այս խոսքերուն և շարժումներուն տակ կռահեցի բնատանեկան տռամ մը, անշուշտ ցավագին, բայց հետաքրքրաշարժալ։ Սակայն խոսակիցս այնքան ջղայնացած, այնքան վրդովված էր, որ չէի համարձակիր այդ տռամին մանրամասնությունները հարցնել իրեն։ Մնաց որ, խոսելու եղանակեն, գործածած բառերեն կհասկցվեր, թե տգետ մեկը չէր, արտահայտվելու մաքուր և պատկերալից ձև մը ուներ, ինչ որ ավելի շահեկան կդարձներ զինքը իմ աչքիս և իր վիշտը ավելի ողբերգական կընծայեր ինծի։

— Ամիսներե ի վեր խաղաղ քուն մը չեմ քնած,— շարունակեց կուրծքը հառաչալից, մղված անշուշտ պոռթկալու այն անդիմադրելի պետքեն, զոր բուռն ցավերե տառապողները կզգան, գուցե ոչ թե թեթևնալու, այլ իրենց կսկիծը արծարծելու, բացավառելու համար— Այո՛, քունս վրդովված է, կանոնավոր սնունդ չեմ առներ, և կնոջս ուրվականը կտանջե զիս... կյանք չէ իմս, գժոխք է... բայց անշուշտ վախճանը կա այս անտանելի վիճակին... երբ գյուղս վերադառնամ, զիս չպիտի ճանչնան, ավելի ազեկ, ծպտվելու պետք չպիտի ունենամ վրեժ լուծելու համար։

Եվ վայրկյան մը լռելե հետո՝

— Բայց դուք ո՞վ եք, կրնա՞մ ճանչնալ,— հարցուց հանկարծ անվստահության զգացումով մը թերևս լեցված։

Ըսի թե ո՛վ եմ և ո՛ւր կերթամ, ի՛նչ ընելու համար։ Իսկույն, տեսակ մը ճառագայթումով ձեռքն ինծի երկարեց։

— Ուրախ եմ,— ըսավ,— զձեզ ճանչնալուս, արդեն ծանոթ էիք ինծի... ձեր գրվածքներովը։

Եվ գոհունակության հառաչանք մը՝

— Հիմա,— շարունակեց,— մտիկ ըրեք զիս՝ տեսնելու համար, թե ի՛նչ հրեշություններ կան աշխարհիս վրա, ամենեն հեռավոր գյուղերուն մեջ իսկ։

Ես Խարբերդի Ք... գյուղեն եմ, Մեզրեի կեդրոնականը տի ուսումս և շրջանավարտ ըլլալե հետո ուսուցչություն ըրի մեր գյուղի վարժարանը։ Այդ միջոցին ճանչցա այն աղջիկը, որ ետքն կինս եղավ։ Անիկա շատ գեղեցիկ չէր, բայց ամբողջությամբ ներհակ էր, Եփրատ կոլեճի մեջ կրթված՝ մեր գյուղի օրիորդներուն առաջինն էր իր զարգացումովը, համեստությամբը և պարկեշտությամբը։ Ամենուն աչքը անոր վրա էր. իր ծնողքը գյուղին է՛ն հարուստն էին, ինչ որ անշուշտ մեծադույն հրապույրն էր զինքը առնել ուզողներուն աչքին... Բայց ինք ոչ մեկուն կարևորություն կուտար։ Իր քույրը ամուսնացած էր իմ դպրոցակից ընկերոջս և ամենեն մտերիմ բարեկամիս հետ, որ աղքատ, բայց գործունյա ըլլալով հաջողած էր գլխե հանել այդ հարուստ աղջիկը։

Ծնողքը պարտավորված էին տալ իրենց աղջիկը այդ մարդուն։ Անգամ մը այդ տունեն ներս մտնելու պես՝ բարեկամս, որ իր մեջ գեշ ու շար բնաղդներ ուներ եղեր ծածկված, տիրապետական կդառնա և ամենքը իր քմահաճույքներուն ծառա կդարձնե։ Իր քենին, բնականաբար, չէր կրնար համակրիլ այդ բիրտ ու կոշտ մարդուն, որ ամեն առթիվ վիրավորանքներ կհասցներ խեղճ աղջկան, որուն հետ արդեն սկսած էի համակրական հարաբերություններ ունենալ։ Շատ չանցած երևան ելավ մեր հարաբերությունը և բարեկամս, որ այնքան սիրալիր էր միշտ հետս, հայտնապես թշնամություն սկսավ ինծի դեմ...։ Եվ հասկնալով, որ գիտավորությունս էր ամուսնանալ իր քենիին հետ, ամեն ատորությանց գմեց՝ արգելելու համար այդ բանը...։

Խոսակիցս կանգ առավ, գիշերվան կիսալույսին մեջ աչքերը շողացին շեկ լույսերով, ու տեսա, դեմքին գիծերը կպրկվեին, կկծկվեին՝ քստմնելի ըլլալու չափ։ Իր դիակային մաշվածության մեջ մոլեգնության այդ հարույցը ահարկու կդարձներ գայն և շորցած կոկորդը թրջելու համար թուք կուլ կուտար դժնդակ ճիգով մը։

— Բայց մեր խոսքումը վերջնական, մեր դաշինքը անգառնալի էր,— շարունակեց մարդը։ Նշանածս ինծի կհաղորդեր նողկանքը և ատելությունը, զոր կզգար իր քեռայրին հանդեպ և անհամբեր էր դուրս ելլալու այդ տունեն՝ ամուսնանալով ինծի հետ...։ Ծնողքը, բնականաբար, ենթարկված իրենց բռնավոր փեսին՝ համամիտ էին անոր հետ՝ աղջիկն ինծի չտալու, բայց նշանածիս անհողդողդ կամքը հաղթեց ամենուն, և մենք ամուսնացանք... Մ՛ե, երջանիկ մեկ տարին, որ միասին ապրեցանք մեր տանը մեջ, օ՜հ, այդ երանելի ու անգառնալի օրերը, երա՞զ էր ատիկա...։ Մեկ տարի երջանիկ... Եվ անկե ետքը, ու հիմա մանավանդ,

կյանքս դժոխք է, պարոն, դժո՛խք,— հեծեց խեղճ մարդը, ամբողջ մարմնով դողալով...։

Մետին կսահեր խաղաղ, ինչպես վիթխարի չմուշկ սառնեղեն հախճապակիի մը վրա, հեռուն, ափունքին մոտ, փարոսի մը ճառագայթը կշողար՝ երկար ու միօրինակ քթթումներով, և քրդական ավաշը մերթ նվաղկոտ կբարձրանար՝ քունեն կարծես այլևս հաղթահարված, և կամրջակին վրա սիրվրտող սիլուեթները անհայտ կըլլային կամացուկ մը՝ փախչելով թեթև զովեն, որ սկսած էր ոսկորներս սարսռացնել։ Ու այդ տարաբախտ մարդուն եղկելի կոծը արձակված այդ դյութական անդորրին մեջ՝ ավանդավիպային աղաղակ մը կթվեր ինծի...

— Այո՛, պարոն, երջանիկ եղանք, ես ու կինս, որուն հոգին ամբողջ ազնվությունը, նկարագրին բովանդակ բարձրությունը հաստատեցի այդ ամենօրյա մտերմության մեջ ու մեկ տարի հետո հիմարաբար կսիրեի զինքը...։ Ու ոչինչ կրնար համոզել մեզ, թե մեր երջանկությունը տևական չպիտի ըլլար, քանի որ մեկուսի կապրեինք, ամեն հարաբերություն խզած, նույնիսկ աներոջս տանը հետ...։ Բայց ապրիլ կուզեր. մեր խնայողությունները հատնելու վրա էին, մոտավոր ապագանիս վարդագույն չէր...։ Այր ու կին խորհեցանք երկարորեն և վերջապես, թեև ատիկա դժնդակ բան մը ըլլար երկուքիս ալ համար, որոշեցինք, որ ես Ամերիկա երթամ դրամ շահելու, քանի մը տարվան համար, հետո հավաքված դրամով գործ մը ստեղծեմ ես ինծի, որպեսզի կինս երջանիկ ըլլա և ոչ մեկեն կախում ունենանք։ Մեկ դժվարություն մը կար. կինս ո՞ւր պիտի մնար բացակայությանս միջոցին. ասիկա երկուքիս համար ալ մեծ մտատանջություն եղավ, վեր դարձուցինք; վար դարձուցինք և չկրցանք որոշման մը հանգիլ, երբ այդ օրերը զոքանչս մեզի եկավ, իմացած ըլլալով մեկնումս, համակրություն ցույց տվավ և հայտարարեց, որ իմ բացակայությանս՝ աղջիկը առանձին չէր թողուր, իրենց տունը կառներ, մինչև իմ վերադարձս։ Հետևյալ օրը, կնոջս քեռայրը, իմ բարեկամս, եկավ միևնույն փափաքը հայտնել, սիրալիր ու համոզիչ ձևերով ապահովցնելով զիս, թե մեծ խնամք և հոգածություն պիտի ցույց տրվեր կնոջս հանդեպ։

— Կմտածենք,— ըսինք իրենց։

Բայց կինս բնազդաբար, տեսակ մը նախազգուշացումով՝ կդժկամեր համաձայնիլ այս հրավերին, չէր կրնար որոշակի ըսել։

թե ինչ բանե կվախնար իր ծնողաց տան մեջ, գլխավորապես մոտնավոր նողկանք մը կզգար իր քեռայրին նկատմամբ, միշտ տեսակ մը երկյուղ ունեցած էր անկե՝ առանց հայտնի պատճառի, այնպես, բնազդաբար։

Հետո դուրսը, առանձինն նորեն զիս բռնելով, քենակալս փորձեց համոզել զիս։

— Քու բարեկամիդ չե՞ս վստահիր,— ըսավ,— բացակայությանդ միջոցին կինդ ո՞ւր կրնա մնալ, եթե ոչ իր ծնողաց տունը, որ ամեն տեսակետով ապահովագույն տեղն է։

Հարկը օրենքը լուծեց, և ես իր ծնողաց տունը թողնելով հոգեհատորս, գացի Ամերիկա, տրված ապահովություններեն սիրտս բավական հանգստացած...։

Խոսակիցս այս վերջին բառերը արտասանեց այնքան նվաղուն շեշտով, անանկ հուսահատական ճիգով մը, որ կարծեցի, թե պիտի նվաղեր. երկու ձեռքովը բռնեց երկաթյա ձողը, գրեթե փաթթվեցավ անոր՝ վար չիյնալու համար և կնայեր ակնապիշ, հեռուն՝ անպարագիծ տարածության, որ խավարասույզ կանդնադանար։ Չէի տեսած տակավին մարդ մը, որ ցավե և հուսահատություն այնքան ընկճված, այնքան ոչնչացած ըլլա։ Կարծես կլսեի իր էության փլլիլը, կյանքի մը քայքայման քստմնելի շառաչը։ Եվ այդ աղեխարշ փլուզումը արգիլելու անկարող, անկարեկիր հանդիսատեսը կըլլայի անոր, սառած, քարացած գրեթե...

— Ամերիկայեն մինչև հոս,— շարունակեց խուլ ձայնով մը,— այս անդունդը շատոնց լափած կըլլար զիս, եթե վրեժխնդրության կրակը չըլլար մեջս...

Կլսեի կուրծքին հևքը, տաժանագին ու դժնդակ բան մը, կտեսնեի իր մարմինը տակնուվրա ընող մրրիկը։

—Վերջապես ի՞նչ պատահեցավ քեզի, պարո՛ն,— հարցուցի, գործին վախճանը իմանալու անհամբեր։

— Գացի Ամերիկա...։ Ի՞նչ երևցավ աչքիս այդ շքեղ ու ահագին երկիրը, ոչնչություն մը. վասնզի կինս հետս չէր, վասնզի, հակառակ ինծի տրված բոլոր ապահովություններուն, չարաշուք կասկածներ սիրտս կխոշտանգեին, հեռուեն, հայրենական գյուղս դրախտավայր կթվեր ինծի, և այդ Ամերիկան կոշտ ու անիմաստ տեղ մը։ Ինծի ղրկած առաջին նամակեն իսկ կինս կզգացներ իր անհանգստությունը ծնողաց տանը մեջ։ Բայց կապահովցներ զիս, թե պիտի համբերեր՝ մեր ապագա փրկությանը համար...։ Աղեկ,

մոլեկնորեն սկսած էի աշխատիլ։ Ի սկզբան քիչ շահեցա, խնայողություն ըրի, հետո շատ շահեցա... Ուրախ էի, գուցե նպատակս իրագործվեր...։ Միակ մխիթարությունս կնոջս նամակներն էին... անոնցմով կսնանեի, կապրեի այդ անտանելի օտարության մեջ։ Անցավ տարիուկես, և ահա օր մը նամակի մը մեջ կինս կհայտներ, թե ծնողացը տունը իրեն համար կատարյալ դժոխք մըն էր եղած... Իր առողջությունն ալ այնքան լավ չէր։ Ամերիկան գլխուս դարձավ...։ Ի՞նչ ընեի, ի՞նչ կրնայի ընել այդքան հեռուեն և մանավանդ գիտնալով կնոջս զգուշավորությունը, հեռուն՝ օտար երկրի մեջ զիս դառնացնել չուզելու իր մտահոգությունը, իրավամբ կենթադրեի, թե շատ բան կծածկեր ինձ, ճշմարտությունը ամբողջությամբ չէր ըսեր։ Ե՞տ դառնայի, թողլով գործս ու ապագայիս իրագործումը։ Նամակ նամակի վրա գրեցի, սիրտ տալով, մանրամասնություններ ուզելով։ Հետո մեկ քանի ամիս լուր չառի իրմե... Զարաշուք մտածումներ ըղեղս տանջեցին, ու աշխատության կորովս երթալով կտկարանար... Հետո նամակ մը առի, սա նամակը (գրպանեն հանելով ցույց տվավ ինծի), վերջին նամակը, պարոն, որ խեղճ կնոջս արցունքին մեջ թաթխված էր և արդեն մահ կհոտեր...։ Կուզե՞ք, որ ձեզի կարդամ...։

Եվ խոսակիցս բացավ նամակը՝ թուլցած, քուրջ դարձած թղթի կտոր մը և գրեթե առանց վրան նայելու, լուսնի տժգույն լույսին մեջ կարդաց զայն, կամ ավելի՝ գոց ըսավ զայն դողդոջուն ու լալագին ձայնով։ Չեմ հիշեր լսած ըլլալ ավելի վշտալից և տխուր բան մը, քան այդ արտասվահեղձ նամակին ընթերցումը։ Մարտիրոսություն մըն էր։ Հոգիի տառապանք մը քիչ անգամ այդքան սրտահույզ, այդքան տպավորիչ կերպով արտահայտված էր։ Այդ նամակը, պահ մը, իմ հոգիս ալ կսգավորեր այնքան, որքան այդ խեղճ մարդունը...։ Եվ երբ լմնցուց խոսակիցս, գրեթե ոչնչացած էր. չէր լար. չէր հեկեկար, գրերուն կնայեր աչքերուն տարօրինակ, դիվային սևեռումով մը, և ես վայրկյան մը վախցա, թե մարդը խենթացած կըլլա։

— Այդ նամակե՞ն ետքը,— հարցուցի ուժգին ձայնով մը, մարդը սթափեցնելու համար։

— Ա՛լ ոչինչ,— խորդաց, կոկորդը գելանված...։— Այո՛, անկե ետքը ոչինչ...։ Աշխատությունս իսկույն դադրեցուցի, որովհետև անկարելի էր աշխատիլ...։ Հետո, օրեն մեկը, կնոջս շատ մոտիկ բարեկամուհիներեն մեկը, որ Ամերիկա կգտնվեր և հոն ամուսնացած էր, կանչեց զիս, և ավելորդ ձևաբանություններե հետո իմացուց, թե կինս մեռեր էր։ Ի սկզբան չհավատացի, վասնզի չէի ուզեր հաշտվիլ այն գաղափարին հետ, թե կինս կրնար մեռնիլ։ Նամակը ցուցուց... իր ծնողքեն էր. ճիշդ էր ուրեմն, մեռեր էր կինը... դուրս նետվեցա, փողոց-փողոց քալեցի ժամերով, պահ մը մտածեցի անձնասպան ըլլալ, բայց ներքին ձայն մը կըսեր ինծի, թե հարկ էր վրեժ լուծել...։ Վրե՛ժ, այո՛, վրեժ կդոռար՝ էությանս բովանդակ թափը այդ բառին մեջ սպառելով...։

Եվ կարճ դադարե մը ետքը՝

— Որովհետև պետք է գիտնաք, պարո՛ն,— ավելցուց, թե հետո ավելի պժգալի և զարհուրելի մանրամասնություններ իմացա կնոջս այդ բարեկամուհիեն, որուն կգրեր եղեր կինս՝ ամեն բան խոստովանելով անոր...։ Այդպես, իմացա, թե քենակալս, որուն տված հավաստիքները ըսի ձեզ՝ կնոջս մասին, նախկին դպրոցական ընկերս և բարեկամս, այդ հրեշը ուզեր է, փորձ փորձեր է... խեղճ ու անտեր կնոջս պատիվին դպչելու. կրնաք երևակայել հուզումը, որուն կինս մատնված ըլլալու է այդ հրեշային փորձին հետևանքը...։

Խոսակիցս լուսնին նայեցավ, որ հիմակ երկինքին բարձրերը ելած՝ պզտիկցեր էր, ու ծովուն վրա սպիտակ ջնարակումը հետզհետե կդժգուներ, ու բարձրացող թեթև հովը մեղմիկ ծփանք մը կհարուցաներ նավուն շուրջը։ Բնությունն ալ կարծես կսգար հիմա վիշտը այդ մարդուն, զոր մխիթարելու բովանդակ անզորությունս կհաստատեի։

— Բայց տակավին ավելի ահավորը կա,— հարեց,— դիտե՞ք ինչու կնոջս պատիվին վրա հարձակվիլ փորձած է այդ սրիկան, որպեսզի կինս ազդվելով, հուզվելով, ցնցվելով հիվանդանա, քայքայվի, մեռնի, այո՛, մեռնի, որպեսզի ծնողացը միակ ժառանգորդը իր կինը մնա, ու ինքը տիրանա այդ ամբողջ հարստության...։ Ահա հիմակ հասավ իր անարգ մուրազին...։ Մեռավ կինս, ու ինք կտիրանա անոնցջս բոլոր ստացվածքներուն...։ Չի գիտեր թշվառականը, թե պիտի գա վրեժի ժամը, արդար ու ահեղ վրեժին...։

Կես գիշերը անցած էր, ու խոնավությունը մինչև ոսկորներս կթափանցեր։ Բուռն փափագ մը ունեի տաք վերմակներու տակ կծկվելու, ու այս ցավագին պատմությունը ջլատած էր հոգիս ու հոգնած էի։

— Արի եղիր, բարեկամ,— ըսի իբրև մխիթարանք...— խնամե՛ ինքզինքդ, սնունդ առ ու քնացիր։

— Քնանա՞լ,— ըսավ տեսակ մը դառն քրքիջով,— իմ քունս մղձավանջ մըն է, թափառում մըն է մութ և ամայի գերեզմանոցներու մեջ, կնոջս ուրվականը կփնտրեմ, ու երբեմն կտեսնեմ զինքը իր ճերմակ պատանքին մեջ, կմոտենամ իրեն դողդոջ քայլերով, բայց ան կփախչի, ժպտուն, գլխու օրորումով մը... կփախչի ինձ, հե՛ք սիրական կինս...։

Եվ մինչ լուռ ու բուռն հեկեկանքներով կթոթվվեր ան, ուշադրեցի հեռանալ, հեռանալ այդ մարդեն և այդ անհանդուրժելի ցավեն...։

Չորս ամիս ետքը, դեկտեմբերի վերջերը, օր մը նստած էի Մեզրեի առաջնորդարանի սրահին մեջ։ Երկու մարդեր ներս մտան, հարգանոք բարևեցին առաջնորդը, թուղթ մը տվին անոր և կեցան։ Հանկարծ անոնցմե մեկուն մեջ ճանչցա Մեսրի մարդը, որուն ցավագին սիլուետը շատ անգամ քունս խռոված էր, և իր աղեխարշ կոծը ականջիս մեջ հաճախ կդռնչեր։ Անիկա հարևանցի մը նայեցավ ինծի և ապահովապես չհիշեց զիս։ Ուշադրությամբ հաստատեցի, թե բոլորովին փոխված էր ան։ Ի՞նչ եղած էր արդյոք, մտածեցի, կնոջ մահվան լուրը ստույգ չէ՞ր և վերադարձին ո՞ղջ գտած էր զայն։ Այլապես ինչո՞վ կարելի էր բացատրել իր մինչև իսկ զվարթ երևույթը։ Ու միտքս դրի, դուրս ելլելեն ետքը ետևեն երթալ, ինքզինքս ճանչցնել և տեղեկություններ առնել իր մասին։

Բայց ահա սա խոսակցությունը լսեցի, որ կյանքիս ամենեն ապշեցուցիչ անակնկալներեն մեկը եղավ և ճշդորոշող չափանիշը նաև մարդկային կասկածելի բարոյականին։

Առաջնորդը հարցուց.

— Ի՞նչ կուզեք։

— Պարոնին համար ամուսնական հրաման մը,— պատասխանեց ան, որ կընկերանար իմ մարդուս։

— Պարոնը նո՞ր կամուսնանա,— հարցուց առաջնորդը։

— Ո՛չ,— պատասխանեց նույն մարդը,— առջի կինը, որ իմ քենիս էր, մեռավ դժբախտաբար. հիմա կուզե դարձյալ ամուսնանալ ինծի ազգական աղջկա մը հետ, ես կնքահայր կըլլամ իրեն, որովհետև ո՛չ միայն քենակալ ենք, այլև պզտիկուց գրեթե միասին մեծցած...։

Ետքի խոսքերը ա՛լ գրեթե չլսեցի, հրամանի գործողությունը կատարվեցավ, և մարդիկը ելան գացին։

Ա՛լ ավելորդ սեպեցի ետևնուն դուրս ելլել, հարցնելու համար Մեսրի մարդուն, թե ո՞ւր մնացած էր իր վրեժին գործողությունը։

Այս պատահարեն ի վեր միտքս դրած եմ չհավատալ ամենեն դառնաթուրմ ցավերուն իսկ։

ՍԵՐԻՆԱ

Անմեկին սրտակից ընկերներ էին ի տղա տիոց, Լութիկ և Սերոբ։ Հոն, Խանգյուղի բարձունքը, Ջրքսալընի ինքնատիպ թաղին մեջ, որուն բնիկները, կնիկ ու էրիկ մարդ, քաջի համբավ ունին, հովարտա են ու վեհանձն, գռեհիկ ու ամեհի, անգութ և բարի ալ, կիներն օտալարցի ու այրերը հայհոյիչ ու գինով, հոն, Լութիկ ու Սերոբ սերտ բարեկամներ էին, իրենց բարեկամությունը փոխադարձ անձնվիրության բազմաթիվ ապացույցներով կռանված։

Իրենց սրտակցությունը թաղին մեջ առածի կարգ անցած էր։ Գյուղին գինետունները սովորական թատրն էին անոնց խոշոր ու աղմկալի շահատակությանցը։ Գիշերները օղիի սեղանի առջև, քով-քովի նստած էին անոնք, շրջապատված նույն դասակարգի մարդոցմե, տարիքոտ ու երիտասարդ, որոնք կընդունեին անոնց անմրցելի գերակշռությունը։ Խմելու մեջ անոնց ոտքը եկող չկար, գինարբուքի բացառապես հանդիսավոր տոներու, սարքված գյուղին այս կամ այն գինետան մեջ։ Սերոբ և Լութիկ ժայռի պես անսկուն և անկործանելի կմնային խմիչքին ահեղ հարվածներուն տակ, որոնք վերջիվերջո կամ գետին կտապալեին, կամ խելակորույս փախուստի կմատնեին բոլոր մյուս կոչնականները, ու անոնք երկուքը միս-մինակ կմնային, արշալույսը ողջունելով զվարթ ու դեռ կայտառ, վերջին գավաթները բախելով ու զիրար համբուրելով։

Հետո անոնք անմրցելի էին նաև ջրհանկրության ասպարեզին մեջ։ Կազմով իրարմե տարբեր, երկուքն ալ հավասարապես օժտված էին մկանային ահավոր զորությամբ։ Լութիկ ավելի բարձրահասակ էր, բարեձև իրանով, նուրբ, դեղին պեխերով, որոնց սակայն շիկերեի կայծերը պահվտած, հեղակարծուստ կվառեին,

երբ գայրույթը մրրկեր իր մարմինը։ Վագրի ահեղ ճկունություն մը կզգայիր իր դյուրաշարժ, հանդուգն քայլվածքին մեջ։ Զուխայի լայնշի փոթուրը չէր կրնար սքողել անոր հզոր բումբերուն և ամրակառույց գիստերուն պողպատային կերտվածքը։ Մանկական ժպիտ մը ուներ Լութիկ միշտ իր դեմքին վրա, բարի ու հայրական մերթ, զորավարի բարյացակամ ու ներողամիտ երևույթով մը քաղցրացած։ Իր ծանոթներեն անոնք, որ ներկա գտնված էին այդ ամէհի ճովինային պայքարներուն, զանազան առիթներու մեջ ծագած, սոսկմամբ դիտած էին, թե ինչպես Լութիկի անուշ արտահայտությունը գազանային կատաղության մը փոխված էր հանկարծ։ Մեկ ավելի էին իր շահատակությունները։ Անգամ մը՝ չորս զապթիեներ, հուժկու անատոլուցիներ իրենք ալ, չէին կրցած զբաղել ահավոր թուլումպաճին, որ զանոնք իրար ետևե գետին գլորած և թուրերնին գրավելով իր ծունկի սալին վրա խորտակած էր։ սարսափահար և զմայլած ամբոխի մը աչքին առջևը։ Օժտված էր նաև մեծաղղորդ և գոռ ձայնով մը, որուն հնչյուններուն տակ սալարկը, կդողար, երբ Լութիկ իր «նաղարա»-ն կնեներ, հրդեհի վազող խումբին առջևեն։ Զրհանին ձողերը իր ուսին վրա կսարսռային՝ խավաքարտե փայտիկներու պես։

Սերոբ թուխ երիտասարդ մըն էր, միջահասակ, ամրախարիսխ, գեր, խոշոր կոճղ մը։ Պզտիկուց փողոցի կռիվներու մեջ նշանավոր հանդիսացած էր, սարսափ սփռելով իր տարեկիցներուն մեջ։ Բայց իր վեհանձնությունը համակրելի ընծայած էր զինքը իր ընկերներուն։ Զվարթ ու կատակախոս էր, ժողովրդային երանգոտ ու պետպիսուն սրամտությամբ ակաղձուն։ Վազելու, ցատկելու, լողալու մեջ մինակ Լութիկ կհավասարվեր իրեն։ Մնաց որ, իրենց բարեկամությունը սկսած էր մանավանդ այն օրեն, երբ, հազիվ տասնըհինգ-տասնըվեց տարու պատանիներ, երկար ատեն իրենց փոխադարձ ուժերը հեռվանց կշռելե, դատելե հետո, հանկարծ խոյացած էին իրարու վրա, լեռը, հասակակից ընկերներու բոլորակե մը ձևացած հանպատրաստից կրկեսի մը մեջտեղ։ Ո՞վ պիտի հաղթեր. ո՞վ պիտի տիրանար գերազանցության դափնիին։ Կռիվը մոլեգին եղած էր։ Այդ երկու պողպատե իրանները իրարու ագուցված, երկար ատեն ոգորած էին, բայց ոչ մեկը պարտված էր։ Լութիկի համեմատաբար նուրբ իրանը ճկունության հրաշքով մը դիմադրած էր Սերոբի հաստաբետ իրանին ճնշմանը։ Շնչասպառ, բաժնված էին իրարմե, համբուրած զիրար և այլևս սերտորեն բարեկամացած։ Հետո, ա՛լ անգամ մըն ալ բախումը չէր կրկնված, այդ գերազույն և վճռական գուպարին հիշատակը իրենց հետ ապրած էր այնուհետև, և Զրքսալլընի հանրային կարծիքը ընդունած էր, որ Սերոբ ու Լութիկ, ֆիզիկական ուժով հավասար, ազնվական ու վեհանձնության մասին նույն աստիճանին վրա, անբաժանելի բարեկամներ էին, իրարու համար իրենց կյանքն իսկ զոհելու պատրաստ։

Բայց եղավ օր մը, ուր այս քաջերը հանկարծ իրարու աչքերու մեջ նայեցան ու տեսան, որ դարձյալ հակառակորդ են։

Ի՞նչ եղած էր։

Երկուքն ալ, դժխեմ բախտին մեկ կատակովը սիրահարված էին միևնույն աղջկան՝ Սերինային։

Սերինան ետքեն իրենց թաղը եկած, հպստատված ընտանիքի մը աղջիկն էր։ Սև աչքներ ուներ, չարաճճի և մոգիչ։ Հասակը՝ գեղապատշաճ, ձևերը՝ հրապույրով հուռթի։ Իր արդուզարդը թաղին աղջիկներուն արդուզարդեն կտարբերեր իր տարօրինակությամբը, առանց շատ ճոխ ըլլալու, այդ հարդարանքը կնպաստեր արժեցնելու Սերինային մարմնական բովանդակ թովչությունը։ Նրբացած ու շիք կնկան բնազդ ուներ։ Իր շրջազգեստին քղանցքը հանգրիճելու եղանակն իսկ, եթե մեկ կողմեն կգայթակղեցներ թաղին խստաբարո և պատվախնդիր կիները, քաղցր սարսուռներ կպատցներ երիտասարդներուն մեջ։ Զրքսալլընն եղած օրեն, Սերինան մեկ հատիկ եղավ, թեև անշուշտ իրմե աղվոր աղջիկներ կային, բայց իր նրբությունը և պշրանքը զամենքը կնսեմացնեին։ Ու բարձրահայաց վսեմություն մըն ալ ավելի բաղձալի կկացուցաներ զինքը։

Հայրը վաստկվոր ոսկերիչ մըն էր, խման և զվարճասեր։ Թաղին մեջ հաստատված օրեն, բարեկամներու շրջանակ մը ունեցած էր՝ գինետան մեջ կազմված։ Այդ պատճառով Սերոբ և Լութիկ շատ հեղ իրենց երեկոյան գինարբուքին կխառնեին Սերինային հայրն ալ, որ մեծ հաճույք կզգար այդ զվարթ ու կատակախառ հովարդաներուն ընկերութենեն։

Մուրբ Հակոբի օր մը, ոսկերիչը իր անվան տոնին առթիվ, աղմկալից երեկույթ մը սարքեց իր տանը մեջ։ Սերոբ և Լութիկ ալ հոն էին։ Օղի, երգ, արևելյան երաժշտություն, պար, ամեն բան։ Սերինան այդ հեշտության մեջ իր հասակին աղվորությունը և ժպիտին հրապույրը պատցուց՝ զամենքը շլացնելով։ Գլուխնե-

ը տաքցան։ Պարերուն շարքը սկսավ։ Ու Սերինան ալ պարեց շքեղ ու անառակ հորա մը, ոստոստուն ու հայրատ, շարժմանցը մեջ առնական կորովով մը, կանացի գողտր ճկունությամբ մրն ալ, մարմնին կարկառները մատուցանելով հոժարակամ և խուսափուկ, մերթ ծեքծեքելով համբորոր պերճաշուք դանդաղությամբ, մերթ սուրալով իր մսուտ ու ծառացող մարմնին խոլ նետվածքովը ու հոսնաբար բոցավառելով հանդիսատես ծարավի աչվըներ՝ սուր ու դժպհի կարոտներ գրգռելով։ Իր սպիտակ ու մարմարակերպ դաստակները շարժեց օդին մեջ՝ գլխուն նազելական ու խոհուն ճոճմանցը հետ, կիսախուփ աչվընեուն թովանքը համբաբար, երաբայնորեն ներարկելով շուրջը գտնվողներուն սրտին մեջ։

— Պռավո՛, կեցցե՛,— կպոռային չորս կողմեն...

Ու աղջիկը կպարեր, ինքն ալ գինովցած, վերացած, երջանիկ։

Սերոբ, աթոռի մը կոթնած, այս դյութական տեսարանեն հափշտակված, կդիտեր, ալքոլեն բռնկած իր բիբերը Սերինային շարժումներուն կհետևեին իպնոզացած։ Քիչ մը անդին՝ իր երկար հասակը ցցած, կնայեր Լութիկ։ Անհագաբար ըղձանքի շողերը կկայծկլտային իր աչվընեուն մեջ։ Արդյոք կրնա՞ր հավերժանալ այդ պարը, այդ հեշտանքը։

Ու պարը դադրեցավ։ Առնացի կուրծքեր լայն շունչերով թեթևցան ու շորցած կոկորդները թրջեցան։

Լութիկ Սերոբի մոտեցավ.

— Ընտո՞ր էր, Սերո՛բ։

— Էս լմնցա, դո՞ւն։

— Քանի մը օրեն խելքս կլոխս չի գար։

Պահ մը իրարու աչքերու մեջ նայեցան։ Նախանձի ժանտ օձը տեսան։

— Ապան էրեցի՞ր, ի՞նչ,— ըսավ Լութիկ՝ Սերոբին ուսին զարնելով։

— Էս աս աղջիկը պիտի առնեմ,— ըսավ Սերոբ խուլ ձայնով մը։

— Է՛ս պիտի առնեմ,— պատասխանեց Լութիկ, զսպված մռնչյունի մը պես։

Անխոս ու տեսակ մը զարմացումով երկու բարեկամները զիրար դիտեցին, կարծես իրարու հոգի կարդացին։

— Ձգե՛, Լութիկ, աս գործին մի՛ խառնվիր, ուրիշ աղջիկ չիկա՞։

— Էս ինչու ձգեմ, դո՛ւն ձգե,— ըսավ Լութիկ արհամարհանոք։— Հեմ Սերինան քեզի չառներ...

— Վա՛յ, ինծի չառնե՞ր... ինչե՞ն կիտցար... խաղացած ատենը ինտո՞ր ինծի կնայեր կոր... անո՞ւշ, անո՞ւշ...

Լութիկ քահ-քահ խնդաց և դառնալով՝ բաժնվեցավ գնաց օդիի սեղանին մոտ, մինչ Սերոբ, կատաղությամբ պեխերը ոլորելով՝ «վա՛յ Լութիկ, վա՛յ, ասանկ, հե՞»,— կմրմռար։

Գլուխները չաղափանց տաքցած ըլլալով, ոչ ոք կրցավ նըշմարել այն հանկարծական ցրտությունը, որ առաջ եկած էր երկու բարեկամներու միջև։ Արշալույսին, երբ հրավիրյալները կարմրած աչքերով և տատանելով դուրս ելան, դիտվեցավ, որ Լութիկ և Սերոբ՝ փոխանակ թև-թևի երգելով երթալու, ինչպես կընեին՝ սովորաբար, առանձին-առանձին մեկնեցան, տարբեր ուղղությամբ։

Ի՞նչպես եղավ այդ բանը, իրենք ալ չկրցան հասկնալ։ Իրենց բարեկամությունը, իրենց կյանքին սնունդը գրեթե մարած էր պըղպըջակի մը դյուրությամբը, աղջկան մը նայվածքին տակ։ Հետևյալ օրը, տարբեր գինետուններու մեջ, երկու հերոսները, զատզատ, շարունակեցին իրենց գինարբուքը՝ արտասովոր մոլեգնությամբ։ Իրենց այս ընթացքը օրվան խոսակցության նյութը եղավ Ջըքսալընի ժողովրդական շրջանակներուն մեջ։

— Ի՞նչ է ան, Սերո՛բ,— կըսեն,— ո՞ւր է Լութիկը։

Եվ Սերոբ, իբրև պատասխան, ձեռքը օդին մեջ արհամարհանոք կշարժեր՝ դեմքի նշանակալից ծամածռությամբ մը։

— Ի՞նչ է ան, Լո՛ւթիկ,— կըսեին,— ո՞ւր է Սերոբը։

Եվ Լութիկ գրեթե նույն շարժումը կըներ, նույն ծամածռումով։

— Թոհա՜ֆ բան, թոհա՜ֆ բան,— կըսեին ծանոթները։

Եվ Ջըքսալընի այն դասակարգը, որուն կպատկանեին Սերոբ և Լութիկ, նմանապես բաժնվեցան երկուքի, երկու բանակներու, իրարու հակառակորդ երկու զորավարներու ղեկավարության տակ։ Սակայն Սերոբ և Լութիկ, լրին համաձայնությամբ մը, խնամքը ունեցան ոչ մեկուն հայտնելու իրենց բարեկամության քղման շարժառիթը, հակառակ բուռն թախանձանքներուն, որոնց երկուքն ալ առարկա դարձան։

— Ճանը՛մ, Լութի՛կ, քուզո՛ւմ, Լութի՛կ, ըսե՛, ի՞նչ բրավ Սերոբը քեզի,— կաղաչեին ամեհի ջրհանկիրները։

— Չեմ ըսեր, չըսվիր,— կհամառեր Լութիկ, մռայլ և տխուր։— Ճա՛նըմ, ձեզի՞ ինչ, ա՛լ անիկա ինծի համար չէ, վեսելամ։

Նույն անթափանցելի գաղտնապահությունը Սերոբի կողմեն։ Սակայն ոչ մեկը մյուսին հասցեին նախատական բառ մը շարտասանեց։ Մինչ ընդհակառակը՝ բավական կարևոր վեճեր ծագեցան լութիկյաններու և սերոբյաններու միջև, կծու նախատինքներու և համեմավոր հայհոյանքներու ընկերակցությամբ։ Թաղին ջրհանկրաց խումբը, որուն պարագլուխը Լութիկն էր, այս ծանրակշիռ դեպքը պատահած պահուն երկու մասի բաժնվեցավ՝ խռովության առատաբուխ աղբյուր ամբողջ թաղին մեջ։ Գզտիկ ծեծկըվուքներ իսկ պատահեցան գինետանց մեջ, հրդեհներու առեն, երբ երկու կուսակցությանց յուրաքանչյուրը կուզեր ինքը տիքանալ ջրհանին և վազել երթալ հրդեհին վայրը։ Նորեն իրենք՝ պարագլուխներն էին, որ կզսպեին փոքրերուն թափերը, կանձեին անանց հանդգնությունը, անիմաստ հակառակության խիզախությունը։

Հետո, երբ խզումը կատարյալ եղավ, Լութիկ և Սերոբ, բնականաբար, մտածեցին՝ յուրաքանչյուրը իր հաշվույն, գերել սիրտը Սերինային, որ առանց ուզելու, կտրտած էր այդ երկու ազնիվ ու արի սրտերն իրար կապող կապը։ Սիրո մրցակցության փայլուն և աղմկալից պայքարը բացվելու էր, մեկուն կամ մյուսին հաղթանակին հանգելու համար։ Բայց այդ մարդիկ սիրահարական ճղճիմ հնարքներու ընդունակությունը չունեին։ Անճարտար դոնժուաններ էին։

Լութիկ, որ անվեհերության անձնավորումն էր, նապաստակի պես դողդողաց այն մտածումին առջև, թե Սերինային աչքը մտնելու կամ անոր սիրտը գրավելու համար ստիպված էր առատու-իրիկուն անոր տանը առջևեն անցնիլ և ժպիտ մը, կամ ակնարկ մը նետել անոր, կամ փողոցին մեջ անոր եռևեն իյնալ, կամ... վերջապես, հիմարություններ, որոնք իր քաջ հոգին տարտուռով կհամակեին։ Այնքան վատություն տեսավ այս բոլոր տղայական ու վարնոց հնարքներուն մեջ, որ նույնիսկ, երբ դիպվածով փողոցը հանդիպեցավ Սերինայի, խսկույն քովի փողոցը դարձավ։— Ի՞նչ ընելու է, ընտո՞ր ընելու է,— կմտածեր խեղճ երիտասարդը՝ բռունցքը մոլեգնորեն սեղմելով։

Բայց անգործ մնալն ալ անկարելի էր։ Ինչե՞ր կրներ արդյոք Սերոբ, երբ ինք ատանկ ապուշի պես կապկպված կեցած էր։ Երակներուն մեջ արյունը կեռեփեր, երբ կմտաբերեր այն պարագան, ուր Սերոբ կրնար իրմե առաջ հաջողիլ և Սերինան առնել։ Ի՞նչ հաբված իրեն համար, իր արի ու պատվախնդիր մարդու արժանապատվությանը համար։ Կամ փախչելու էր թաղեն, մինչև իսկ Գոչեն, կամ անձնասպան ըլլալու։ Կուզեր լրտեսել Սերոբը, բայց այս ալ իրեն նողկանք պատճառող բան մըն էր, իսկ ուրիշներու ձեռքով ատիկա ընել տալու համար՝ գաղտնիքը երևան հանել հարկ էր։ Գիտեր, որ Սերոբ ինքն ալ այդ մասին բծախնդիր էր և ոչ ոքի հայտնած էր իրենց գժտության պատճառը։ Կզգար, որ իր խաղաղ, անամպ և շենշող կյանքին մեջ հանկարծ մռայլ ստվերություն մը մտած էր, ու դառնության բոպեներու, Սերինային այն պարը, այն դյուցական տատանումը կթվեր իրեն գալարումը օձի մը, որ իր էութենեն ներս սողոսկեր էր։

Եվ Լութիկ զայրույթով և զարմանքով ալ հաստատեց, թե Սերինային սիրտը գրավելու և անոր տիրանալու ամենեն տարրական միջոցներեն լիովին զուրկ էր ինքը և մանավանդ իսկույն համոզվեցավ, որ քանի մի գռեհիկ հնարքներն ալ, որոնց ձեռքնհաս կզգար ինքզինքը, սահմանված էին ապարդյուն մնալ Սերինայի պես հպարտ ու մեծամիտ աղջկան մը առջև։ Անոր արդուզարդն իսկ, քալվածքը, նայվածն իսկ անհնարին կդարձնեին որևէ մերձեցում իր և անոր միջև։ Իր ֆիզիկական ուժը, որով մինչև այն առեն ամենուն պատկառանք ազդած ու երկյուղ ներշնչած էր, անպետք բան մը կդառնար հիմա, ոչնչություն մը։ Իր պերևեթիկ ճովինայի բովանդակ խրոխտությունը մանկական երկչոտության մը կփոխվեր այդ վեհապանծ աղջկան գաղափարին առջև։ Տկարության այս կիզիչ գիտակցությունը կատաղության նոպաներու կմատներ զինքը։ Մերթ, խելակորույս, կծրագրեր հափշտակել Սերինան, փախցնել տանիլ հեռուն, լեռները, ամայության մեջ, իր անձնական հրապույրին պակասը բռնի ուժով լեցնելով։ Բայց առատուն, ալբոլին շոգիներուն անհետացմանը հետ, այս ծրագիրներն ալ կշոգիանային, և նորեն ինքզինքը միս-միսակ կգտներ իր անզորությանը, իր ամոթապարտ խեղճությանը հետ դեմ-դիմաց։

Այս տագնապներուն մեջ դիպչը շուտով սկսավ իր ներկայությունը հաստատել։

— Թո՛ւ, ինչ ապուր կերա,— կըսեր ինքնիրեն Լութիկ, ձեռքը գլխուն զարնելով։— Ծո՛, ատ աղջիկը ինծի պես թուլումպաճիին կուտա՞ն... ես վո՞վ եմ քի... պալըխճիի մը կտոր... ամա քիչ մը

շատ փարա կվաստկիմ էղեր... աղեկ ամա, ատ ախճիկը փոթուղու մարդ կառնե՞, վո՞վ կիտե՝ աչքը ուր տեղվանքն է...

Բայց իսկույն աչքին առջև գալով նորեն նազելաշուք և դյութելագեղ պարուհին, օդին մեջ երկարած մարմարակերպ բազուկներով ու կանգնագեղ հասակին մեղմերեր տատանումովը, Լութիկ կվերանար, աչքերը կգոցեր, հետևելու համար, անվերջորեն, այդ անմահական պատկերին։

— Չէ՛, առնելու փախցնելու, տանելու է աս աղջիկը,— կվճռեր։

Սերոբի հոգեկան վիճակը գրեթե նույն և նման էր։ Հափշտակության առաջին թափին մեջ ինքզինքը ձեռնհաս կարծեր էր ամեն ասպետական հանդգնությանց։ Մանավանդ հավատացեր էր, որ Լութիկ, ֆիզիկական ուժի իր մրցակիցը, այս անգամ, սիրո գետնին վրա, ուզած-չուզած, տեղի պիտի տար իրեն, պարտված, ջախջախված։ Վերջապես ինքն ավելի կորովի էր, ավելի գեղանձընյա, ավելի առնական. Սերինան անո՞ր պիտի հավներ, թե իրեն. այս մասին կարելի՞ էր տարակուսիլ։ Բայց երբ իր նպատակին հասնելու համար գործնական քայլեր առնելու եկած էր կարգը, Սերոբ, շվարած չորս կողմը նայեր էր անստույգ։ Ո՞րքան դյուրությամբ ծառացեր էր Լութիկին դիմացը, երբ Սերինային տիրանալու իրավունքը իրեն վերապահելու վրա էր լոկ խնդիրը։ Իսկ հիմա, մինչև իսկ Լութիկի մրցակցության պարագան մեկդի առնելով, ինքը անձնապես ինչ արժանիքներ կամ հրապույրներ ուներ Սերինային սիրտը կապտելու և զայն վերջնականապես իրեն կապելու համար։

Քանի մը անգամ, հիմարաբար խմելեն ետքը, Սերինային տանը առջևեն անցավ, պեխերն ոլորած, ուշադրություն գրավելու ձևով։ Բայց, ափսոս, կրցավ մինչևիսկ հաստատել, որ Սերինան, պատուհանին առջև նստած, հազիվ անուշադիր ակնարկ մը նետեց իրեն, անտարբեր այդ անցորդին։

Այս անհաջողությունը կատղեցուց Սերոբը։ Պահ մը կարծեց, թե Սերինան, ամբողջովին Լութիկով գրավված, իրեն երես կդարձներ։ Հաղթանակը ուրեմն տարեր էր Լութիկ։ Ոճրի կայծեր անցան իր գանգեն։ Ողջամտության բոպեներու, սակայն, իր առջի սիրական ընկերոջ կյանքին իսկ դեմ սադրել ուզած եղեռնեն ամոթահար, և արտասվահեղձ ապաշավով առլի, ձեռքը գլխուն կզարներ այդ հիմար սերն իր մեջ արծարծած և իր պատվական Լութիկեն բաժնված ըլլալուն։

— Ծո՛, հեմ էս-վո՞վ եմ, քի ատանկ ախճկան մը կսիրես հարվիմ կոր. ինծի կուտա՞ն, ինծի կառնե՞, ինչի՞ս, որի ըսեմ նե, վրաս կխնդան։ Թուլումպաճին շատ-շատ պալըխճիին ախջիկը կառնե։ Սերինան, ըսես, տարին մինակ չորս հատ ֆիստան կուզե։ Ինչո՞վս պիտի առնեմ... Թո՛ւ, ատ գիշերը բարով-խերով չէինք գացեր այդ մարդուն տունը... Լութիկես ալ չէի ըլլար։

Լութիկես. այո՛, իր Լութիկեն, որուն կարոտովը սաստկապես կտոչորեր երբեմն Սերոբի մանկական ու ազնիվ հոգին։

— Ամա է՞ս ըրի, ա՛ն ըրավ,— կմտածեր նորեն,— ի՞նչ կըլլար պե, թող Սերինան ինծի ձգեր... կմեռնե՞ր...

Ու աչքին առջևեն կանցներ սուրբ Հակոբի գիշերվան պարուհին, իր արձանակերտ ու դողդողացող զիստերուն տատանումովը, շուշանաթույր և պսպղուն դաստակներուն ճոճումովը, և բովանդակ քաղցր ու նրբահյուս մարմնին սավառնածքովը, որ թունդթունդ հաներ էր իր հոգին, որ խենթեցուցեր, խելահեղեր էր զինքը։ Ո՜հ, եթե ան ըլլար իր կինը և երեկույթներու մեջ կարենար պարել անոր հետ, ձեռք-ձեռքի կամ դեմ-դիմաց, ընդհանուր հիացման մեջտեղ։

Եվ կմոռնար ամեն բան, Լութիկ, բարեկամություն, պայմաններու անհնարինություն ու կմոռնար իր սեղմված ակռաներուն մեջեն.

— Ըլլար, ես Սերինան առնելու եմ, ամա չեն իտար եղեր. օրին մեկը օմուզս զարկածիս պես...

Ու սերը, կուրորեն ըմբռնված, անկեղծորեն զգացված, բայց բրտորեն մշակված ու հրահրված, թունավորեց երկու հերոսներուն ալ կյանքը, օրե օր ինկան անոնք, քայքայեցան, փերուշան եղան։ Հիմար մսխումներ ըրին. զիրար գերազանցելու, անունին ըսել տալու, իրենց վրա խոսեցնելու և մինչև Սերինային ականջը հասցնելու ունայն կամեութենեն մղված՝ սկսան այլևս արիաբար չաշխատիլ, ապրուստի հոգսերով զբաղվելու տրամադրութենեն մերկացած։ Ունեցած դրամնին կերան լմնցուցին։ Հետզհետե կորսնցուցին իրենց հմայքն ալ իրենց շրջանակներուն մեջ, ուր երկուքով զորավոր եղած էին միշտ, ուր իրենց առաքինի ու անաղարտ բարեկամությամբ հոխորտացած էին տարիներով և ուր կարծես, վերջիվերջո, այնքան ալ դժգոհություն չարտահայտվեցավ հիմակ այդ տիրապետող երկվության անկումին առջև։ Ընդ-

հակառակը, ուրիշներ, որ կմախային Լուիթիկ—Սերոբ միահեծանության դեմ, գլուխ բարձրացուցին քիչ-քիչ, իրենց ուժն ու նավարտությունը ցուցադրեցին ժպրհորեն և գրավեցին բաց ձրգված, լքված տեղը։ Ժամանակ անցնելով, այլևս գիշերները, սովորական գինետուններուն մեջ, մեր երբեմնի ճովինանները չէին շրջապատվեր իրենց արբանյակներեն, անկյուն մը կքաշվեին և կով կուտային օդին, իրենց ցավը քաղցրացնող նեկտարը, և որ հիմակ շուտով կցնցեր իրենց հզոր մարմինը, կմշշապատեր իրենց ըղեղը։ Կպատահեր նույնիսկ, որ միևնույն գինետան մեջ, մեյմեկ անկյուն կզկտած ըլլային երկու տխոյանները, անտարբեր իրարու նկատմամբ, իրարու գոյութենե իբր թե անտեղյակ, սուզված ինքն իրեն մեջ, չդառնալով ոչ մեկուն ուշադրությանը առարկան, այդ վիճակին կրկնությանը և շարունակությանը հետևանքը։

Ֆիզիկապես ալ ավրվեցան։ Սերոբի կլոր և կայտառ դեմքը տժգունեցավ, նիհարցավ։ Իր քայլվածքին երբեմնի հոխորտանքը տեղի տվավ երկչոտ և զգուշավոր շարժումներուն։ Գլխուն զարնված բան մը եղավ։ Լուիթիկ, որ այնքան ժպտուն էր ու զվարթ, նվաղեցավ. հիմակ գլուխը կախ, երկու ձեռքերը փոթուրին գրպանները, տրտմորեն կքալեր փողոցը, հուսահատ, կյանքեն վաղ անցած։ Վրանին գլուխնին ալ թափեցավ քիչ-քիչ, իրենք, որ իրենց դասակարգին շիքերը կհամարվեին։ Վաստակնին, հիմակ շատ ընչին բան մը, հազիվ կբավեր օդին ու տարրական ապրուստին։ Եվ երևակայել, որ շատ անգամ հրդեհի առաջնորդներն եղած էին խասգյուղի ջրհանկիրներուն և հրդեհի վայրերը իրենց կռիվներուն և հանդգնությանց աղմուկովը լեցուցած։ Իրենց հոգեկան միակ մխիթարությունը Սերինան էր, կամ ավելի ճիշտ սուրբ Հակոբի գիշերվան պարուհին, որ ճերմակ թևերը օդին մեջ շարժելեն հուլտարար՝ տակավին իրենց կնայեր խենթեցնող նազանքով ու ա՛լ կարծես մինակ այս պատկերը ունեին իրրև արգարացում իրենց բովանդակ դժբախտության, որ անհանդուրժելի պիտի ըլլար առանց անոր։ Կարծես մոռցան իսկ իրական Սերինան, ան, որ ցորեկները պատուհանը կնստեր և ձեռագործ մը կբաներ՝ գլուխը կախած։ Իրենք պարուհին էին սիրահարված, անոր համար իրարմե բաժնված, իրարու դեմ ցցված, քայքայված, ինկած։

Այդ բարոյական անկումին մեջ տակավին թուլցավ նաև թշնամության բուռն զգացումը, զոր կտածեին իրարու հանդեպ։ Անգիտակցաբար սկսան չատել զիրար, մոռնալ մինչևիսկ այն շաբ-

ժառիթը, որ իրարմե բաժնած էր զիրենք։ Սերինային աղվոր սիլուետը իրենց երևակայության մեջ դառնալով, դարձդարձելով՝ կիրքեր չէր հարուցաներ այլևս, նախանձի կրակը չէր արծարծեր։ Մանուկներու երազին մեջ երևցող ճերմակ հուշկապարիկն էր ան, որ կօրորե, կշոյե, կզվարթացնե, կերջանկացնե։ Յուրաքանչյուրը իր հավերժահարսը ուներ, մարմինով ու հոգիով անջատ, թերևս շատ նման դեմքով և ձևով։

Իրարու երես ալ նայեցան, աչք-աչքի, հեք նախկին բարեկամները, մինչև իսկ քաղցրորեն, ներողամտորեն։ Իրարու ետևե իրարու ալ նայեցան ու մեղքցան զիրար փոխադարձաբար.

— Զավալը՜ Լուիթիկ։

— Զավալը՜ Սերոբ։

Բայց չխոսեցան իրարու հետ, շբարևեցին զիրար, գինետունը դեմ-դիմաց նստած՝ օդի խմեցին ժամերով, մտախոհ, լուրջ, տրտում։ Երբեք այլևս ոչ ոք միտքեն անցուց այդ երկու նախկին բարեկամները իրարու մոտեցնել, իրարու գիրկ նետել, հաշտեցնել։ Իբր թե անոնք երբեք ճանչցած չըլլային զիրար։

Սակայն, ձմեռվան տխուր և ցուրտ գիշեր մը, երբ Լուիթիկ իր օդիին շիշին առջև կխոկար ըստ սովորականին, Սերոբ մեկենիմեկ ներս մտավ գինետունեն ու շիտակ իր նախկին բարեկամին քով գնաց և անոր ուսին զարկավ.

— Լուիթի՛կ, ե՞լ երթանք,— ըսավ անհողդողդ ձայնով մը,— ըսելիք ունիմ։

Լուիթիկ վեր նայեցավ՝ ապշահար, բայց խսկույն ոտքի ելավ ու հետևեցավ Սերոբի, ու երկուքը մեկ՝ դուրս եկան գինետունեն։

Ջրքսալլընի բարձունքին վրա քամին կոռնար ողբագին, սառնաշունչ։ Ջյունի ճերմակ ծվեններ կդառնային խոր մթության մեջ։ Ու երկու բարեկամները կերթային քով-քովի, անխոսուկ։

— Իմացա՞ր,— ըսավ վերջապես Սերոբ, երբ հասան բնակութիւններեն դուրս տեղ մը։

— Ի՞նչ։

— Սերինան աս գիշեր կկարգվի կոր։

— Իրա՞վ։

Մութին մեջ, դեմ-դիմաց, երկու բարեկամներ իրարու նայեցան։

— Ազատեցա՞նք, Սերոբ,— ըսավ Լուիթիկ աղեխարշ հառաչով մը։

— Ազատեցա՜նք,— կրկնեց Սերոբ։

Ու երկու բարեկամները ինքնաբերաբար իրարու ճիտ նետվեցան, համբուրեցին զիրար խանդաղատանոք, լացին, հեկեկալով լացին, տղու պես, երկարորեն, վերեն իջնող ձյունի ճերմակ ծվեններուն մեջ։

ԱՌՋԻ ՄԱՅՐԻԿԸ

Օգոստոսի ջերմոտ արևեն էրած, մոխրացած փոշիով լեցուն այն ճամփաներեն, որոնք հազարումեկ ոլորուքներով կերկարաձգվին մինչև Պալըգլըի գերեզմանատունը, չորս-հինգ հոգի ճորճորալով կերթային՝ քրտինքներու շիթեր նետելով գետինը, ձայնձուն չհանելով անտանելի հոգնության մը ծանրության տակ ճընշված, ուժասպառ։ Այս հինգ անձերեն մեկը տերտեր մըն էր՝ թավամորուս, գունատ փակեղով և հինումաշ վերարկուով։ Երկուքը փոքր տղեկներ էին, մեկը աղջիկ, մեկը մանչ .աղջիկը ութը տարու կար, նիհար, վատուժ, անարյուն մորթով, գծավոր, կարճ շրջազգեստին տակեն կերևային ազազուն ճյուղերի նման սրունքներ, մութ խարտյաշ մազերը, որոնց վրա հայտնապես չէին պտտած մոր մը խնամոտ մատները, թնճուկ եղած էին գլխուն վրա ու մինչև աչքերը կիջնային, սքողելով անոնց մեղմավառ ցոլմունքը։ Վազքը, որով պարտավորված էր վազել հեք աղջնակը՝ մյուսներուն հասնելու համար, սրտաճմլիկ անգիտակցությունը, որով մեքենաբար կհետևեր այդ հևացող թափորին, տարտամ վրշտի մը ալեկոծումը իր մանրուկ սրտին մեջ, կմիանային վերցնելու, անհետացնելու համար անոր վրայեն այն սրտագրավ հրապույրը, այն սիրցնող քողարկությունը, որոնք փոքրիկ աղջիկներուն զարդերն են։ Բայց ավելի տխրազդեցիկ էր հինգ տարեկան մանչը, որուն ձեռքեն բռնած էր քույրը։ Մանտրտիկ ոտքերը այնքան հոգնած էին, որ ա՛լ փոշիին մեջեն չէին ելլեր ու քսքռտվելով, խեղդող ամպեր վեր կհանեին, անոր աչքերը կուրցնելով, մանրանկար բաճկոնակն ու տաբատը կկաղապարեին անոր վտիտ մարմինը և տեղ-տեղ կցուցնեին բարակ ոսկորներու ցցվածքներ։ Լայնեզր, դեղնագույն, հարդե գլխարկ մը մինչև աչվընները կիջներ և իր ձևացուցած շուքին մեջ կպարփակեր ամբողջ այդ իրանը գյուրաբեկ։ Երբ տղեկին մանր ոտքերը կհոգնեին, ա՛լ կսկսեր

կախվիլ քրոջը ձեռքեն ու գրեթե քաշկռտվելով երթալ. այն ատեն քույրը կըսեր.

— Ախպարի՛կ, քալե, տահա մայրիկին չհասանք։

— Ե՞րբ պիտի հասնենք, քուրի՛կ։

— Հիմակ։

Եվ երկուքը մեկանց, նոր ուժով մը ոգևորված, կհասնեին առջևեն գացողներուն, որոնցմե մեկը, ատեն-ատեն, գլուխն ետին դարձունելով, կըսեր բիրտ ձայնով մը.

— Ա՛խ, լակոտնե՛ր, ինչո՞ւ հետս եկաք, սատկեցունեմ պիտի ձեզի։

Այս մարդը անոնց հայրն էր, գռեհիկ, խորշոմած դեմքով, թափթփած հագուստներով։ Սաստիկ սրտնեղություն կզգար այդ ապարդյուն ճամփորդությունեն, օգոստոսի այդ այրող, մրկող արևին տակ, ու երբ կարմիր, մեծ թաշկինակովը երեսին քրտինքը կսրբեր, ակռաներուն մեջեն կմռլտար.

— Այս կիրեն ալ մեռնելու ատենը գտավ...

Եվ հուղարկավորներուն այդ սակավաթիվ, տխրատեսիլ թափորը լուռ ու մունջ կշարունակեր իր ճամփան՝ դեպի Պալըգլըի գերեզմանատունը։

***

Հոն, անսահման գերեզմանոցին մեջ հովը կիշրտացներ կանաչ ծառերը, մեռելության համայնալուր զողանջ մը կարծես տարածելով տաք բալուտ մթնոլորտին մեջ. ծառերուն ստվերները, մահվան ուրվականներուն պես, ճերմակ գերեզմանաքարերուն հետ կխաղային, անոնց զատվածքներուն վրա կոտրտվելով քմահաճորեն։ Տխրությունը բնության գեղածիծաղ շքեղությանը մեջ կարձանանար հոն, բայց մռայլին ու պայծառին այդ հակադրությունն էր մանավանդ, որ ի հանդես կբերեր մահվան հավիտենական սևությունը և բոլոր անսահման կսկիծները, զորս մեծածավալ այդ մահարանը ցանած է կենդանիներու սրտին մեջ։

Գետինը, մեռելաթաղին խրճիթին ետևոքը հիմակ կհանգչեր ճաղը, զոր չորս մեռելակիրները բերած էին՝ իրենց հուժկու սրունքներուն բովանդակ արագությամբը, հուղարկավորներուն ժամանումեն շատ առաջ։ Երկու տղեկները դագաղին քով կեցած էին։

Աղջիկը ասդին առնելով աղտոտ ծածկույթը, բացած էր մորը երեսը. խեղճ կինը տառապագին կյանքի մը ետքը մեռած ըլլալու էր որովհետև նիհար էր, սարսափելի կերպով նիհար, կծկված շերթունքներուն ճեղքեն երկու-երեք դեղնած ակռաներ կերևային, կիսախուփ աչքերուն մեջեն հազիվ նվազկոտ նշույլ մը կընդնշմարվեր, ամբողջ մորթը մագաղաթի կտոր մըն էր կարծես, զոր անցուցած էին այդ ճղճիմ գանգին վրա։

Աղջիկը կնայեր իր մորը կսկծալի դեմքին ու կուլար։ Իսկ մանչը, մահվան անգիտակից, սկսած էր գերեզմանե-գերեզմանցատկել, քրոջմե ապահովություն ստանալե ետք մայրիկը կքնանար ու... պիտի արթննար ալ։

Տերտերը, հանգստանալե ետք, խաչը ձեռքը առավ և մեռելակիրներուն հրամայեց, որ ճաղը փոսին քով տանին։

Թաղման հանդեսը շատ անշուք և կարճ տևեց։

Միայն, երբ մարմինը փոս իջեցնելե ետք, սկսան հողերը թիակով մեջը նետել, խոռոչային խորաթիռդ աղմուկով մը, տղեկը, որ ձեռքն ետին կապած կեցեր էր փոսին եզերքը, հարցուց հորը.

— Աղապա՛, ինչո՞ւ համար մայրիկս ասանկ կընեն կոր։

Մարդը, որ հոգնած էր և սրտնեղած, առանց խեղճ տղուն պատասխանելու՝ մրմռաց.

— Այս լակոտներուն ալ մերամ հասկցնելու է։

Քիչ մը ետքը նորեն նույն ճամփուն վրա կգտնվեին հինգ հուղարկավորները, արյուն-քրտինք թափելով օգոստոսին հրատապ արևին տակ, որ կապույտ մթնոլորտին մեջ ակնախտիդ փողփողումներ առաջ կբերեր։ Ութամյա աղջիկը ետևնուն կերթար՝ եղբորը ձեռքեն բռնած, որ այս անգամ կթզկար, «մայրիկս, մայրիկս կուզեմ»,— աղաղակելով ու թապլտկելով փոշիներուն մեջ։

***

Երեք-չորս ամիս անցեր էր մայրիկին մահվանեն ի վեր, ու հիմակ խաչիկ աղան, երկու զավակներուն հոգատարությունը պատրվակելով, երկրորդ անգամ կարգվեր էր իր դասակարգեն տարիքոտ աղջկան մը հետ։ Պսակվելուն երկրորդ օրը, երբ տղաքները «վարպետ տուտուեն»* վերադարձին, տեսեր էին այդ նոր դեմքը,

* «Վարպետ տուտուն»— տնային տեր-թոթիկյան գպրոց։

որ խեռ ու չար նայվածք մը կարձակեր իրենց վրա։ Հայրենին ըսած էր խոպոտ ձայնով մը.

— Ասկե ետքը մայրենիդ աս է, էյեր անոր խոսքը մտիկ ընենք նե, ձեզի կսատկեցունեմ։

Հեք որբերը, դողդողալով պագեր էին «նոր մայրիկ»-ին ձեռքը, որ կեղծավոր շեշտով մը, իր էրկանը երեսը նայելով, ըսեր էր.

— Խելոք կենաք նե, պիտի սիրեմ ձեզի։

Բայց չէր սիրած։ Մեղրալուսնի մեկ քանի շաբաթներն անցնելե ետքը, խաչիկ աղա սկսեր էր իր կենցաղը, առտուն մութնուլուսուն դուրս ելլել տունեն և իրիկունները շատ ուշ տուն դառնալ, օղիեն գրեթե ապուշցած։ Իսկ վայրագ կինը, ընտանիքին տիրապետող միակ տարրը, սկսած էր շարչրկել մանուկները, կատաղորեն ծեծելով, զանոնք, երբ ամենափոքր հանցանք մը գործեին։

Փոքրիկը, մորուին կոփոցներեն սաստիկ խոշտանգված, կըսկըսեր աղաղակել.

— Ես առջի մայրիկը կուզեմ...

Այս խոսքերը ավելի կղայրացնեին անողորմ կինը, որ կկրկնապատկեր իր հարվածները։ Եվ երբ քույրը միջամտեր խեղճ եղբայրը ազատելու համար, ինքն ալ լիառատ բաժին մը կստանար կոփոցներեն, խեղճ մանկուհին ձայն չէր հաներ, բայց կմըրմընջեր.

— Ա՜խ, առջի մայրիկս...

Երկու մանուկներուն այս դժոխային կյանքը երթալով կվատթարանար։

Գիշեր մը, մոլեգին տփոց մը ուտելե ետք, իրարու պլլվելով անկողնին մեջ պառկած ատեննին, քույրը ըսած էր եղբորը ականջին.

— Արթին, վազը առջի մայրիկին երթանք, հա՞։

— Ամա՛ն, քուրիկս, հա՛։

***

Հունվարի ցրտաստարսուռ հովը սառեցուցեր էր գետինները ծածկող ձյունը։ Դեռ նոր էր լուսացած։ Այն ճամփաներեն, որոնք հազարումեկ ոլորուքներով կերկարաձգվին մինչև Պալըզլրի գերեզմանոցը, երկու տղաքներ կերթային, ձեռք-ձեռքի, դողալով

դողդողալով կծու ցուրտեն, որ անոնց գրգյակներեն ներս՝ մինչև ոսկորներուն ծուծը կթափանցեր։

Ձյունին վրա կգծագրվեին այդ երկու տխեղծ մարմինները՝ շորցած շյուղի պես երերուն, որոնց մանտրկիկ ոտքերն հազիվ հետք կձգեին քարացած ձյունին վրա։

Երկու որբերն էին, որ առջի մայրիկին կերթային Պալըգլըի գերեզմանատունը։

Քանի մը անցորդներ, զարմանալով այդ երկու փոքրիկներուն վրա, որոնք այդքան կանուխ ամայի փողոցներե կանցնեին, կանգ առին ու հարցուցին անոնց, թե ո՞ւր կերթան։

— Առջի մայրիկին,— պատասխանեցին որբերը միաբերան, լալկան ձայնով։

Եվ կշարունակեին իրենց ճամփան անխոտոր, երբեմն սահելով իյնալով, հծծյուններ արձակելով, միշտ ձեռք-ձեռքի։

Մանավանդ Արթինին ուրախությունը անբացատրելի էր. առջի մայրիկը տեսնելու, անոր տաքուկ գիրկը նետվելու և ետքի չար մայրիկին ձեռքեն հավետ ազատելու գերագույն ակնկալությունը ահագին համեմատություններ կստանար անոր ճղճիմ ուղեղին մեջ ու այն ատեն իր քրոջը դառնալով, կըսեր ժպտագին.

— Քուրի՛կ, աճապ մեր աղվոր մայրիկը մեզի տեսնա նե, ընտո՞ր պիտի սիրե։

Ո՜հ, ինչ ալ երկայն է գերեզմանոցին այդ տրտմաթախիծ ճամփան և խածոտող ցուրտը, որ ճրվիկ-ճրվիկ կբերեր փոքրիկ ուխտագնացներուն անհյութ, անարյուն անդամները։

Ծանր մեռելաբույր լռություն մը կտիրեր մեծածավալ գերեզմանոցին մեջ. ձյունը եկած ամեն բան ճերմկցուցած էր հոն, սոսկալի միօրինակություն մը փռելով ամենուրեք. տերևազուրկ ճյուղերը, ձյունով բեռնավորված, ամենդի կցվեին ցուրտ և ուրվատեսիլ, գերեզմաններեն դուրս սպրդող կմախքներուն ահարկությամբ։

Ա՛լ բնությունը հակապատկեր չէր ձևացուներ, այլ սրտաթախ համապատկեր մը, որուն միօրինակ երանգները մեռելի մը դիմագծերուն չափ տխրազդեցիկ էին։

Ձյունը կմկսեր տեղալ՝ պարուրաձև պտուտքով մը իջնելով լռիկ-մնջիկ։

***

— Հոս է,— ըսավ փոքրիկ աղջիկը, երկար ու մանրապնին փնտռտուքե մը ետքը։

Եվ երկուքը մեկանց սկսան իրենց վտիտ, սառած մատներովն ասդին-անդին առնել գերեզմանին վրա կուտակված ձյունը։

Հարություն կհարցուներ քրոջը.

— Աղվոր մայրիկը տա՞կն է։

— Տակն է,— կպատասխաներ աղջիկը։

Ու կփորեին, կփորեին։

Ու ձյունը խոշոր պատառներով կտեղար, նորեն ծածկելով մեծ դժվարությամբ բացված ծակերը։

Խեղճ փոքրիկները ցուրտեն գրեթե ընդարմացած, մայրիկը երևան հանելու անսանձ ըղձանքեն մոլեգին, ամբողջ մարմնով պառկած էին հիմակ գերեզմանին վրա, քով-քովի, իրենց արյունոտ մատներովը հողը պեղելով, ձյունը խածխծելով ու ոտքերովնին դոփելով զայն. երբեմն ալ իրենց նվազկոտ ձայնը կլսվեր լալագին.

— Աղվո՜ր մայրիկ, առջի՜ մայրիկ... մենք ենք... Արթինը... Սուրբիկը...

Եվ ձյունը կտեղար զարհուրելի հանդարտությամբ, անհարթությունները հավասարցնելով և ա՛լ սկսելով կաղապարել երկու մանուկներուն ազազուն անդամները, որոնք հետզհետե անշարժության կդատապարտվեին. կսկիծին ու ցուրտին սառակությունը գինովություն կուտար այդ մատաղ ուղեղներուն։

Դեռ կշարժեին սակայն, իրենց մատները դեռ կպատցուներին հողին վրա, գերագույն ճիգ՝ առջի մայրիկին երևան հանելու։ Ու երես-երեսի, շունչ-շնչի՝ հազիվ կրնային հծծել.

— Առջի մայրի՛կ, մենք ենք...

Բայց ձյունի խավերը շատցան, ճերմակ, կակուղ պատանքի մը մեջ պլոքեցին երկու գիրկընդխառն մարմինները, որոնցմե հատկ հատին հծծյունն մըն ալ բարձրացավ գերեզմանոցին տրտմակուլ հանդարտության մեջեն.

— Առջի մայրի՛կը...

— Թյությունճի՜, սիկարա քեհատը՜, քա՜վ, քիպրի՜թ։

Հիմակ հազիվ տասներկու տարու կա Ռափիկ. երկու տարի առաջ մեծ հայրը թևեն բռներ ու դպրոցեն դուրս հաներ էր՝ սա տրամաբանական շարժառիթը նետելով թոռանը երեսին. «Ծո, ուսմունքը փուլ մը չըներ, հացերնուս փարան հանելու նայինք, հայտե նայիմ, հի՜շտ, ա՜ռ սա խուրին»։

Ու Ռափիկ կես մետր երկայնությամբ, քառորդ մետր լայնությամբ և մեկ մետր բարձրությամբ տուփ մը կախեր էր ճիտեն վար, որուն մեջ կային ծխախոտի զանազան մեծությամբ տուփեր, սիկարի թուղթի թերթիկներ ու լուցկիի տուփեր, զորս պարտավոր էր փողոցե փողոց պտտցնել, իր մանկային սուր, կերկերահունչ ձայնովը գոչելով.

— Թյությունճի՜, սիկարա քեհատը՜, քա՜վ, քիպրի՜թ։

Մեծ հայրը նախ իր խռպոտ ձայնովը երկներ էր այս բացագանչությունը մեկ քանի անգամ և մեկ քանի ապտակներ ալ գործնականապես ազդելով Ռափիկի մտային ու ձայնային բարերուն վրա, հիմակ կազմած էին սույն եղանակավոր ելևէջով, երբեմն մելանուշ, երբեմն սրտագոչ բացագանչությունը, որուն արձագանքը կթնդար փողոցներուն մեջ, առտվընե մինչև իրիկուն, ամառ, ձմեռ, ձյունին ու անձրևին, մերթ սոխակի մը դայլայլին տպավորությունը թողլով, մերթ տխրահունչ վայոցը հիշեցնելով ագատեսիլ բուին։

Խարխուլ, ողորմելի սենյակը, ուր մեծ հայրը ու թոռ կապրեին, փլփլած տան մը գետնահարկին կրծող խոնավությանը մեջ, ուշագրավ էր իր ներքին կարգ ու սարքովը։ Ցածկեկ փողոցի մը անկյունը, կորաքամակ ու ծերուկ մարդ մը նստած էր, երկայն, սև վերարկուի մը մեջ պահած իր ոսկրոտ մարմինը, որուն մեկ մասն անշարժությանդատապարտված էր։ Վշտալից տարիներ քանդակագործի մը հերյունին նրբանքովը ակոսներ փորփրած էին անոր երեսին լերկ մաշկին վրա, անողոք ոլորքներով, ճակտեն մինչև վիզը։

Ռափիկին մեծ հայրն էր այս մարդը։ Դեմքին դաժան ու խեռ արտահայտությունը, մորթին փոթերեն շեշտվելով, տհարկու տպավորություն մը կթողուր։ Պղտոր ապակիներով ու ժանգոտած, ողորմելի ակնոց մի ոսկրացից քիթին վրա կհանգչեր միշտ, աչքն անքթիթ հառած լուցկիի տուփերուն խառնիխուռն զանգվածի մը վրա, որուն մեջ շարունակ կպտտեին իր շոր ու ծռմռկած մատները, լեցուն տուփերեն գողնալով ու պարապները լեցնելով։ Իր ճիշգքովը, գետնին վրա կպառկեր երկայն, սև գավազան մը, որ իր անթացուպն էր, և ի հարկին, իր ահարկու զենքը, որուն հատկությունները խղճի մտոք սերտած էր փոքրիկ Ռափիկը։

Ուրիշ մանր-մունր առարկաներ կգտնվեին այդ գարշահոտ խուցին մեջ, երկու-երեք մրոտած փոքր սաներ, կրակարան մը, որմադարանի մը մեջ կանթեղ մը, մեկ-երկու պնակներ, հին դեղնած սաղմոս մը և այլն։

Տախտակամածը ծածկված էր եղի ու կերակուրի թափթփուքներու ահագին արատներով։ Երկու պատուհաններուն ապակիները կերևային փտած ճաթռտած վարագույրներու մեջեն՝ աղտոտ ու փոշեթաթավ։ Այդ գարշելի խուցին մեջ թափանցող նվազկոտ լույսը թախծկոտ տխրություն մը կցաներ հոն, առարկաներու գիծերը տարտղնելով, իրար խառնելով, ու սրտամորմոք ամբողջություն մը արտադրելով։ Ու այս ամենուն մեջ, շարժուն միակ բանը բազմոցի մթազգած ծերուկին երկարլ ոսկրոտ մատներն էին, որոնք դողդոջուն գծեր ու շրջաններ կձևացնեին օդին մեջ, լուցկիի տուփերուն մեկեն-մյուսին երթալով շարունակ, լուցկիին կույտեր կազմելով պարապ տուփերուն համար, որոնք իր բացեն շահը կներկայացնեին, և որոնց վրա կհառեին իր մթաշող, խած աչվքները, թավաստև, սպիտակախառն հոնքերուն տակեն։

Հաճի Մարտիրոս կսկիծ տեսած մարդ էր, հաստաբուն կաղնիի պես մինակ ինք անխախտ մնալով այն մահաբույր քամիներուն դեմ, որոնք բիրտ ուժգնությամբ առեր տարեր էին իր «ճիյերներ»-ը, հետզհետե պարապություն բերելով իր շուրջը, խեղճություն սփռելով։

Եվ կսկիծն ալ կարծրացնելով այդ ծերացած, դառնացած սիրտը, անտարբերություն, սոսկալի անզգացություն առաջ բերեր էր։ Ա՜լ մահվան ավերներն բնավ սոսկում չունեին հիմակ, ամեն բան եղած լմնցած էր. ինքը կմնար ու իր Ռափիկ թոռը, որուն գոյությունը միայն անոր համար կարևոր էր իրեն, վանզի անոր աշխատանքին արդյունքով կապրեր, ինք ավելի գոհ կըլլար, եթե ան ալ մեռներ։ Կկարծեր, որ իրեն կհիշեցներ իր բոլորտիքեն անհետացած դեմքերը. ու երբ մեջտեղեն վերնար տղան, Հաճի

Մարտիրոս պիտի ըսեր, թե ասանկ եկած է աշխարքի վրա, միմինակ ու ասանկ պիտի երթա։

Իր կյանքը աշխարհի վրա կենտրոնացած էր լուցկիներու, սիկարի թուղթերու և ծխախոտի տուփերու մեջ, զորս առտվընե մինչև իրիկուն մատներուն մեջեն կանցներ շոյելով, փայփայելով ու շակրտելով անընդհատ, իր միտքն հոգնեցնելով միայն այն ապօրեն միջոցներուն վրա, որոնցմով կրնար ավելորդ շահ մը ընել։

Տարի մը առաջ, երբ իրիկուն մը կոուփի հարվածներ կիջեցներ փոքրիկ Ռափիկին, հանկարծ թուլություն մը զգացեր էր ձախ կողմին վրա, ու մասնակի անդամալուծություն մը անզգայացուցեր էր իր ոտքն ու ձեռքը։ Բազուկը մասամբ առողջացեր էր, բայց սրունքը նույնը կմնար միշտ ու այս պատճառով խուցին մեջ մտեր էր այն խոշոր անթացուպը, որ ճշմարիտ պատուհաս մըն էր եղած Ռափիկի գլխուն։

Մութը կկոխեր, նոյեմբերի ցրտախառն այն մութը, որ մռայլով ու թախծությամբ շինված է։ Հաճի Մարտիրոս ակնոցը հաներ էր ու իր պղտոր աչքերովը փողոցը կդիտեր, երբեմն քթին տակեն մրմռալով.

— Աս լակո՞տը վուր մնաց, ա՛խ, էյեր նորեն պակաս է նե...

Ու աջ ձեռքովը անթացուպը կշոյեր, դեմքի աղետալի ծամածռումով մը։

Հանկարծ ծերունին վեր առավ գլուխը, որսի շան մը պես ականջները տնկելով. իրիկնամուտի հարաճուն հանդարտության մեջեն հեռավոր, սրտագոչ ձայնի մը արձագանքը լսվեցավ։

— ...Քեհատը, քիպրի՛թ...

Ծերունիին նվազկոտ աչքերուն մեջ շողյուն մը փայլեցավ ու անմիջապես մարեցավ։

— Ան է,— մրմռաց ու դողդոջ ձեռքովը շոշափեց իր անթացուպը, որ անորոշ կերպով կուրվագծվեր սենյակին մութ հատակին վրա։

Մեկ քանի վայրկյան ետքը խարխուլ դռան բացվիլը կլսվեր ու ծերունիի նստած սենյակին սեմին վրա երևան կուգար զգույշ ու վախկոտ շարժումներով փոքր մարմինը Ռափիկին, վիզեն կախված ունենալով իր քառակուսի տուփը։

Հազիվ երևցած էր, ծերունին խեղդուկ ձայնով մը պոռաց.

— Ծո Ռափիկ, ինչո՞ւ ուշ մնացիր։

Տղան վարանեցավ, դողաց, շուրթերը շարժեց ու կմկմաց.

— Տետե, մյուշտերի էլավ...

— Վա՛յ, բեք աղեկ, հոս բեր նայիմ, ի՞նչ ծախեցիր...

Ռափիկ քիչ մը քաջասրտված, հառաջացավ մինչև ծերունիին ցած բազմոցին առջև ու վիզեն հանեց տուփին կապը։

Դաժան ծերուկը «Սա խանտիլը վառե» պոռաց, մինչ իր դողդոջ մատներն արդեն սկսած էին առ խարխափ շոշափել տուփին մեջ եղածները ու քթին տակեն կմռլտար.

— Մեկ, երկուք, երեք...

Ռափիկ վազեց որմնադարանին մեջեն առավ կանթեղը, սըրտադողով վառեց զայն ու բերավ դրավ մեծ հորը մոտ, բազմոցին վրա։ Կանթեղը սկսավ պլպլալ, իր գորշ-կարմիր բոցեն արձակելով յուղոտ ծուխ մը, որ ցած ձեղունը կերկարեր մինչև, ու երբեմն իր տատանումներուն մեջ չկրնալով ուղղակի վեր նյլել՝ ծերունիին ճակատը կմրոտեր։ Գարշ հոտ մը սկսավ տարածվիլ սենյակին մեջ։

Հիմակ Հաճի Մարտիրոսի կոնակը կլորցած էր տուփին վրա, ակնոցով զինված աչքերը սոսկալի սևեռումով կդիտեին լուցկիի, ծխախոտի տուփերուն ու թուղթի թերթիկները, զոր աջ ձեռքին դողացող ազատ մատներովը կհամրեր, բաղդատելով զանոնք դեղնած թուղթի կտորի մը վրա երևցող ծուռտիկ-մուռտիկ թվանշաններու հետ։ Քիչ մը անդիրք կեցած էր Ռափիկ՝ աչքերը սարսափի բուռն արտահայտությամբ մը հառած տուփին վրա, շուրթերը սարսռուն, վերահաս փոթորիկի մը սոսկումներով համակ։ Ծերունին անհոդդողդ, աշխարքեն անգիտակ, իր կենսական գործին քննությանը փաթթված հոգով-մարմնով, ձայն-ձուն չէր հաներ, կանթեղին երերուն անփայլ լույսին մեջ աշխատելով, որուն սև ծուխը երբեմն իր ճերմակ լերկ գանգը կլզվռտեր։ Հանկարծ վեր առավ գլուխը, ձեռքերը դուրս հանեց տուփեն ու ըսավ.

— Ծախածներուդ փարա՞ն...

Ռափիկ դողաց, ձեռքը իր բաճկոնին գրպանը խոթեց ու շատ մը մանրուք դրամներ դուրս հանելով՝ թափեց բազմոցին վրա. ծերունին սովալլուկ գայլի մը պես, որ իր ճանկերը կնետե որսին վրա, հափշտակեց առավ դրամները և սկսավ համրել իր կոշկոռտ ափին մեջ։

Այդ միջոցին խեղճ Ռափիկին երեսը նայողը անպատճառ մե-

ռած պիտի կարծեր զայն. չէր դողար, մարմինը սառած էր կարծես ու դեմքը դիակի գույն։

Եվ մեկենիմեկ բան մը տեղի ունեցավ սենյակին մեջ, անգութ, սրտաճմլիկ բան մը. կանթեղին ծխարձակ բոցը ա՛լ կտատաներ խոլ շարժումներով. Հաճի Մարտիրոս իր տեղը չէր. հիմակ անոր հուժկու հասակը կցվեր սենյակին մեջ, աչքերը բոցարձակ, ճերմակ մազերը գանգին վրա խառնամառն ու սև, ահարկու անթացույցն իր ձեռքերուն մեջ, որ կելլեր կայծակի սլացումներով, ամեն մեկ էջքին շոր աղմուկ մը և սրտակտուր ճիչ մը հանելով, որ կերկարաձգվեր մինչև հաջորդ հարվածը, նորեն արձակվելու համար ավելի բարձր, ավելի աղեկտուր։

Հաճի Մարտիրոս իր թոռը կծեծեր։ Տուփ մը լուցկի և տուփ մը ծխախոտ պակսած էին, անշուշտ շարաճճի ստամբակը ծախած էր զանոնք և ստակովը պտուղ գնած ու կերած էր. մեծազույն ոճիրը ընչեղ ծերունիին համար և այս քանի՞երորդ անգամն էր. երկու-երեք օրն հեղ մը այս հանցանքը կգործեր Ռափիկ, ամենևին լուղղվելով կերած սոսկալի ծեծերեն, ու երթալով ծերունին կկատղեր, կսաստկացներ իր հարվածները, օր մը և գիշեր մը անոթի կձգեր տղան և սակայն չէր կրնար առաջքն առնել այդ աղետին։

Եվ խեղճ տղան ճղիկ-ճղիկ կպոռչտար.

— Աման տեսե... ոտկտ պագնեմ, տեսե... էս չառի... էս չկողծա...

— Պիտի սատկեցունեմ քեզի, շան լակոտ...— կխորդար ծերունին՝ հուզումեն խեղդված ձայնով։

Բայց խոնջենքը եկավ կասեցուց Հաճի Մարտիրոսին ախտավարակ ձեռքը, պատին կոթնած կհևար կուրծքի խժլտացող ելևէջով մը, ձեռքերը, երկու կողմեն կախված, կգողդողային, մինչ Ռափիկ, ահավոր հարվածներեն խորտակված, գետնին վրա կփռվեր, ցավագին հծծյուններ արձակելով։

Ու կանթեղը խոլակերպ շարժումներեն հանդարտած՝ թուխ բոցը կարձակեր շիփ-շիտակ՝ մուխի գալարներ ղրկելով օդին մեջ դեպի ձեղունը, կես մութի մեջ թաղելով երկու թշվառ արարածները, Զըքսալընի անշուք այդ անկյունը, խարխլիկ տան մը խանավ, մութ գետնահարկին մեջ։

Ծերունիին մոլեգին ակնարկը, դիվային շարժումներով, կպճլտար դժգույն լույսին մեջ, գառագեղի վանդակին ծակերեն երևցող անոթի վագրի մը բոցափայլ աչքերուն հանգունակ։

Բայց հուզումն սկսավ անցնիլ, թունդ եկած ջիղերը հանդարտեցան ու գետնեն առնելով անթացույցը՝ կաղն ի կաղ մինչև բազմոցը գնաց ու դիակի մը ծանրությամբ ինկավ անոր վրա՝ քթին տակեն մոլտալով.

— Մեկալներուն պես տո՞ւն ինչու չսատկեցար, ան ատեն հաց չէի կտնար ուտելու, էս ալ կսատկեի։

Կես ժամ ետքը կանթեղին սև մուրն ավելի երկնցած էր ու դպիր հոտն ավելի սաստկացած, Հաճի Մարտիրոսին հերախով գլուխը բարձն ի վար ինկած էր հիմակ, գիմագծերու ահարկու ծռմռկումով մը, բերանը չափազանց բաց, կմախքի մը ցուրտ երախին նման, ու քանի շնչառությունը ուժգին հևքով մը դուրս ելլեր իր հիվանդ սրտեն, երկար դիծ մը կիջներ կանթեղին մթնագույն բոցեն լուսավորվելով։

Անդին, յուղոտ տախտակամածին վրա, կստվերկվեր փոքր, նիհար մարմինը Ռափիկին, որ մուշ-մուշ կքնանար անմեղի քունով, հակառակ քաշած թշվառությանը՝ սիրուն և հաճոյալի։

Եվ երկու հանդիպակաց պատերու վրա հիմակ անոնց ըստվերներն ալ կխաղային քմշոտ գիծերով, այլանդակ կոտրվածքներով ու երկարաձգումներով. ծերունիին գլուխը իր անդնդային երախին հետ մինչև ձեղունը կբարձրանար ամեն բան կուլ տալու ահռելի թափով մը ու հանկարծ վար կթավալեր կանթեղին մեկ փոքր շարժումեն ու մերթ կերթար մինչև իսկ կխառնվեր Ռափիկին շուքին հետ, որ վտիտ ու բարակ գիծերովը անհետ կըլլար անոր տակ։

Զըքսալըն հանդարտ էր, ծանրաթախիծ հանդարտություն մը, որ ճիշդ հակապատկերն է ցերեկի թշվառությանը եռացող ժխորին։ Գիշերապահը ճոկանովը կտոփեր գետինը, և շուն մը, հեռավոր փողոցե մը սուր կաղկանձ մը կարձակեր։

***

— Թյությունճի՜, սիկարա քեհա՞տը, քիպրի՜թ...

Այս տխրաշունչ վայրը կլսվեր դարձյալ փողոցներուն մեջ, փոքրիկ Ռափիկին հավիտենական ձայնարկությունը, որուն զվարթ ու կայտառ շեշտը քիչ-քիչ տեղի կուտար լալագին եղանակի մը, հեծկլտուքներե ու հառաչներե պատռտված կոկորդե մը դուրս թռչելով։ Մանավանդ առտուները, երբ բնությունը դեռ բոլորովին

չէր արթնցած իր մթաստվեր թմրությունեն, Ռափիկ առջի գիշերվան գավազանին հարվածներուն քայքայող ազդեցությունեն ընկճված ու տխրահամակ, գրեթե լալահառաչ կհաներ իր ձայնը, ոսկորներուն մեջ զգալով դեռ կծու ցավ մը և իր մանկային երևակայության մեջ հրաշեկ երկաթներու պես ցցված տեսնելով հազարավոր անթացուպեր, որոնք պատրաստ էին ճղճիմ մարմնույն վրա ելլել իջնելու անխնա, ջախջախիչ։

Բայց երբ արևը կծփար երկնքին կապույտ հատակին վրա, երբ ոգևորությունը կտիրեր փողոցներուն մեջ, ու Ռափիկ կսկսեր առուծախ ընել, իր դեղնած դեմքը վատ երևույթ մը կստանար, նվաղկոտ աչքերը կբոցավառվեին ու իր կայտառիկ ու շարաճճի հասակը կպտտցներ փողոցե-փողոց, իր երկարաձիգ ու զվարթ կանչն արձակելով.

— Թյուրյունճի՜...

Ու ցորեկները, հակառակ իր մեծ հոր խիստ պատվերներուն, սովորություն ըրած էր փողոցի մը մեջ վար դնել իր տուփն ու հասակակից տղաքներուն հետ զանազան խաղեր խաղալ։ Երբեմն ժամեն ավելի հոն կմնար, տղայության անսանձ բնազդին համակերպելով, բայց մեկենիմեկ, հեղակարծ վերհիշումով մը, որ պողպատե դանակի պես կկտրեր կանցներ իր էութենեն, կմտաբերեր առջի գիշերվան ահավոր տեսարանը, կտեսներ տետեին դժոխային դեմքը ու ինքզինքին գալով կթողուր խաղ, զբոսանք, կառներ ճիտը կանցուներ տուփին չվանը ու աճապարանքով կհեռանար հիմակ անթացուպը կոնակին մեջտեղին ուտելու սարսափելի զգայությամբ մը։

Բայց դեռ այդ վերհիշումը չունեցած ու խույս չտված, խեղճ Ռափիկ վատ արարքի մը զոհ կերթար, որ իր մատաղ կյանքը կջախջախեր։ Խաղին ամենեն տաք կետին, տղաքներեն մեկը, մանրանկարը գուցե ապագա այն մարդուն, որ միշտ շարիք հասցընելու հետամուտ պիտի ըլլա ուրիշներուն, կամացուկ մը, առանց տեսնվելու, կսպրդեր դեպի Ռափիկին տուփը ու ակնթարթի մեջ բան մը կթոցուներ անկից, կամ տուփ մը լուցկի, կամ սիկարեթի թուղթ, կամ ծխախոտի ծրարիկ մը, ու շարություն մը գործած ըլլալու անգիտակից ուրախությամբ մը համակ, կգրպաներ զայն, Ռափիկին մեկնումեն ետք իր ընկերներուն բաժնելու համար այդ անարդ կողոպուտը։ Եվ խեղճ տղան, գիշեր-ցերեկ շարաշար հոգնեցնելով հանդերձ իր ուղեղը, չէր կրնար գտնել

գաղտնիքը այդ կործանարար անհետացումներուն։ Շատ անգամ կպատահեր, որ առջի գիշերվան ծեծը սաստիկ ըլլալով, չէր ուզեր մասնակցիլ տղաքներուն զբոսանքին, և երբ անոնք պատճառն հարցունեին, կբանար իր աղտոտ շապիկին կուրծքը և կցուցուներ տետեին իջուցած անգութ հարվածներուն երաշխեպները վտիտ ոսկորներուն վրա, անսիրտ շարաճճիները, գործին տեղյակ, խընդալեն կճաթեին ու դարձյալ կտիպեին զայն իրենց հետ խաղալու.— Ռափիկին սիրտը չէր դիմանար, վար կդներ անիծյալ տուփը ու կսկսեր վազվռտել, մինչ Գարեգին, շար տղան, իր սովորությանն համեմատ, մատները գաղտագողի կերկնցներ անոր տուփին մեջ։

Ի՜նչ դժոխային սրտադողով կպաշարվեր Ռափիկ, երբ արևը մարը կմտներ ու մութի ստվերները կսկսեին սպրդիլ փողոցներուն մեջ. քայլը առաջ չէր երթար, իր արցունքոտ աղվորիկ աչքերը երկինք կսևեռեր՝ գերագույն անհուսալի աղաչանքովն աոլի, բայց վերջապես, ուզեր-չուզեր, պիտի մտներ այդ տանջարանը, գետնահարկի խոնավ խուցը, ուր ահարկու ծերունին կսպասեր, անթացուպը ձեռքն առած։

Երբեմն, իր անքուն գիշերները, կատաղության անզոր թափեր կունենար Ռափիկ, անակնկալ ներշնչումով մը կերպարիր գրտնել հեղինակն իր չարչարանքներուն, այն աներևույթ էակը, որ իր տուփը կկողոպտեր շարունակ, անխնա ու իր մոլեգնության մեջ վրեժ մը կուխտեր, անողոք, վայրագ վրեժ մը այդ անիծյալին դեմ։ Իր տկար բազուկներուն մեջ կուզեր խեղդել զայն, ջախջախել գանգը, կտոր-կտոր ընել, կոխկոտել, չքացնել։ Բայց շուտով զգալով իր անզորությունը, կսկսեր հորդ արցունք թափել ու իր կարծր սնարը խածոտել հուսահատորեն...

***

«Զո՜ւկ, ձո՜ւկ, Ռափիկին ձուկը,— կըսեր ամեն մարդ,— թարմ, համով, աժան»։

Եվ իրավունք ունեին. իր ընտրած ասպարեզին պատիվ կբերեր կորովի, հաստաբազուկ տղան. ամենեն ընտիր, պատվական ձուկերը կբռներ ու լեցնելով չավելայի մը մեջ, փողոցե-փողոց կըպրտտցներ, ալ հիմակ իր հաստցած, մեծագոռ ձայնովը պոռալով.

— Թազե պալքքլա՜ր...

Կթվեր անոնց տեսակները, իր ամբողջությամբը շրջուն ռեկլամ մը ընելով իր ձուկերուն, որոնց հետ հարգանոք ու փայփայանքով կվարվեր միշտ, դիզելով զանոնք իրարու քով, զուգաչափորեն, և ձուկի այդ շարքերը արծաթի փողփողումներով կշողային արևին տակ։ Ամենեն ավելի ինքզինքը սիրցուցած էր իր բարեսրտությամբը, թաղին ամենեն հարուստները անկից կգնեին պետք եղած ձուկը։

Իրիկուն մը տուն գացեր էր Ռափիկ ու ապշությամբ տեսեր, որ տեսուն անթացուպը չի վերցուներ իրեն զարնելու և անկյունը կքած կհևար։ Անմիջապես դրացիներն օգնության կանչեր էր, որոնք վազեր եկեր էին, բայց ծերունիին վախճանն հասեր էր, հազիվ ժամանակ եղեր էր քահանա մը բերելու ու հաղորդություն առնել տալու մահամերձին, որ իր հուսկ հետին հառաչը չարձակած, թոթովելով ըսեր էր շուրջը գտնվողներուն.

— Ռափիկին ըսեք թյուրյուն... չգողնա...

Հաջորդ օրն իսկ Ռափիկ ա՛լ զգված, մեկ կողմ նետեր էր դժոխային տուփը, լայն ու հանգիստ շունչ մը առնելով։

Ու ձկնորսության սկսեր էր, անդիմադրելի կոչում մը զգալով այս արհեստին։

Հիմակ իսկ, որ քսաներեք տարու էր, երբեմն առանձին գրտնված ատենը, մանավանդ գիշերները անկողնին մեջ սոսկումով կհիշեր իր մանկության զարհուրելի օրերը, աչքին առջև կուգար տետեին դաժան, ահարկու դեմքը, անոր աչքերուն կատաղի պըճլտուքը, երբ զինքը տեսներ և մանավանդ, օ՜հ, մանավանդ այն հրեշ անթացուպը, որ իր մարմինը կկործաներ, կխոշտանգեր, իր քաշած աննկարագրելի տառապանքները, զրկանքները, հապա այն անլուծելի, անմոռանալի առեղծվածը, այն անծանոթ պատճառը, որով ամեն օր իր տուփին մեջեն նյութեր կանհետանային. ասիկա չէ՞ր գլխավոր պատճառն իր թշվառության ու իր չարչարանքին։ Եվ իր կարշնեղ ձեռքերը դեռ մոլեգնորեն կգոցեր այս պարագան հիշելով, որ բնավ միտքեն չէր ելլեր ու կուզեր իր գիմացը տեսնել վատ արարածը, որ այդ անգթությունը կբներ իրեն, ու բզկտել զայն։

Բայց հիմա գոհ էր իր վիճակեն, գրեթե երջանիկ էր։ Գիշերները ծովուն վրա կանցուներ շատ անգամ, ձուկ որսալու համար մեկ քանի ընկերներով, ու առտուները, չավելան պուքը զարկած, փողոցները կելլեր, իր ուժեղ ձայնը տարածելով։

— Թազե պալքքլա՜ր...

***

Ցորեկ մըն, աշնան սկիզբը։

Ռափիկ ետ կդառնար ձուկերուն մեծ մասը ծախած, սիրտը գոհ և ուրախ։ Փողոցեն մը անցած պահուն, ուր շատ ծանոթ էր Ռափիկ, տունեն մը կանչեցին զինքը։ Կարծելով, որ ձուկ պիտի գնեն, վաք առավ չավելան դրանը առջև ու ձեռքերը մեջքին գրած, սպասեց. դուռը կամաց մը բացվեցավ ու կնոջ վշտահայտ, գրեթե նոր արցունքոտած դեմք մը դուրս երկննալով, մեղմիվ ըսավ.

— Ռափի՛կ, աղա՜ս, քիչ մը վեր կուգա՞ս... զավակս կուզե կոր քեզի։

— Բեք աղեկ, մայրիկս, կամ...,— ըսավ Ռափիկ ձուկերովը մեկտեղ ներս մտնելով,— տղադ ի՞նչ պիտի ըսե քի ինծի...

Կինը հառաչ մը արձակեց։ Պատասխան չտվավ։

Զկնորսը եմենիները հանեց ու բորիկ ոտքերովը կնոջեն առաջնորդվելով վերի հարկն ելավ, ուր սենյակ մը մտավ։

Տխուր պատկեր մը պարզվեցավ հոն իր աչքին։

Մահճակալի մը վրա հիվանդ մը պառկած էր կմախաձև. երիտասարդ մըն էր անշուշտ, զոր հյուծախտը կրծած ու մահվան դուռը բերած հասցուցած էր, կհևար։ Սնարին կողմը աթոռի մը վրա քահանա մը նստած էր ու քիթին տակեն բան մը կմռմտար, հոգեվարքներուն աղոթքը։

Ռափիկ ներս մտավ վարանելով, շփոթված. իրեն ընկերացող կինը կամաց մը անկողնին մոտենալով, ըսավ հիվանդին.

— Գարեգի՛ն, զավա՛կս, իշտե Ռափիկ եկավ։

Հիվանդը էլեկտրական ցնցում մը կրածի պես, ամբողջ մարմնովը դողդողաց, աչքերը թարթափեց ու ակներև ճիգով մը բացավ զանոնք, Ռափիկը տեսնելով իր դեմը, սփոփանքի լայն հառաչ մը արձակեց կոկորդեն, գլխովը նշան մը ըրավ ձկնորսին, որ մոտենա։

Ռափիկ արմնալով-զարմնալով, մոտեցավ հիվանդին, քիչ մը հուզված։ Մահամերձը բռնեց անոր գլուխն ու անգույն շուրթերն անոր ականջին տանելով կամացուկ մը ըսավ.

— Ռափի՛կ, ինծի ճանչցա՞ր...

— Չէ՛։

— Սա կիտե՞ս... պզտիկութեանդ թյություն կծախեիր տե... ցորեկները մեկտեղ կխաղայինք...

Ռափիկ դարձավ հիվանդին երեսը նայեցավ, հիշատակները պտրտելով. ու կերևա թե անմիջապես մտաբերեց.

— Ծո, հա՛, Գարեգինը... վա՛յ զավալը... ի՞նչ եղար քի...

— Պիտի մեռնիմ... ամա մեռնելես առաջ աֆ ըրե ըրածիս...

— Ի՞նչ ըրիր, քի աֆ ընեմ...

Հիվանդին դիակնային դեմքը ցավագին կծկում մը ունեցավ, բռնեց նորեն Ռափիկին գլուխն ու ականջն ի վար փսփսաց.

— Խութիրդ մեջեն թյություն... թուղթ... քիպրիթ գողցողը ես էի... աֆ ըրե...

Մռնչյուն մը արձակելով, ետ նետվեցավ Ռափիկ՝ դեմքն ահռելի կերպով այլայլած, տժգույն, սեռական, դողահար։

— Վա՛յ, տուն էիր հա՞... անօրե՛ն...

Ու փայլակի արագությամբ, ակնթարթի մեջ հիշեց իր ամբողջ տառապագին մանկությունը, թշվառությունը, չարչարանքները, ծեծերը, ամեն բան վերջապես, որոնց պատճառն էր, միակ պատճառն էր այդ մահամերձ հիվանդը։ Ռափիկ իր ուխտին հավատարիմ, վեր առավ իր ահարկու սեղմ բռունցքը՝ մեկ հարվածով չախչախելու համար այդ անխիղճ, անագորույն արարածը, բայց կանգ առավ քայլ մը հեռուն. քահանան, սպիտակամորուս ծերուկ մը, բռնած էր իր բազուկեն, ու հիվանդը կցուցներ մատովը։

Հյուծախտավորը, մահճակալին վրա կոնակի վրա փռված, հիմակ աչքերը փակ, կզակը կշարժեր միայն.

— Ա՛ֆ ըրե... ա՛ֆ ըրե... ա՛ֆ ըրե...

Ի՞նչ եղավ, ի՞նչ զգաց Ռափիկ. վար ինկան իր հուժկու բազուկները, դեմքին ահարկու արտահայտությունը անհուն արգահատանքի մը փոխվեցավ, թացություն մը շողաց աչքերուն մեջ ու կերկեր ձայնով մը.

— Ա՛ֆ ըրի... ախպարս... ա՛ֆ ըրի,— ըսավ ու խենթի պես դուրս վազեց սենյակին դուռնեն, գահավիժորեն վար իջավ, եմենիները ոտքը անցուց և չավելան գլուխը զարնելով, փողոցը նետվեցավ, իր կսկիծին ու ահռելի տագնապին մեջ սա հին վաղեմի բացագանչությունն արձակելով.

— Թյությունճի՛... սիկարա քեհատը՛... քիպրի՛թ...

Դրացիները, որոնք պատուհանն էին, շատ խնդացին Ռափիկին այս անուշ կատակին վրա։

ԿՆՈՒՆՔԸ

Հետաքրքրությունը, որ երբեմն անգիտակից շարժում մըն է միայն, դրդեց զիս ներս նայելու մատուռին դռնեն, խորը, փոքր խորան մը՝ արևի ճառագայթներու մեջ ողողված։ Աստվածածնա անմեղունակ դեմքը կհանգչի խորանին վրա; մանուկ Հիսուսը գիրկն։ Ասդին, գետինը, կին մը երկնցած է, պատառուն հագուստներով ու իրեն քովը փոքր կույտ մը կա քուրջերու, որոնք բան մը չեն ցուցուներ։ Պատին տակն ալ մարդ մը կեցած է բոբիկ ոտքերով, դեմքը արևակեզ, աչքերը շվարուն արտահայտությամբ։

Պառկած կինը, որուն մազերը ցիրուցան են, հեծյուններ կարձակե, որոնք լռիկ աղոթքներու վերջավորություններ են։ Մերթ ալ վեր կառնե գլուխը և գորովանքով կնայի իր քովի ծարարին վրա, որ բնավ չի շարժիր։ Մեռելական հանդարտությունը, ներկաներուն ողորմելի երևույթը մորմոքիչ տպավորություն մը կգործեին։

Այս միջոցին ներս մտավ քահանան աճապարոտ քալվածքով և ըսավ.

— Հայտե՛, գործ ունիմ, շուտ լմնցուցենք։—Կինը, սահմռկած, վեր առավ գլուխը. մարդը, շվարած, քահանային երեսը նայեցավ։ Երկուքն ալ ի՞նչ ընելիքնին չէին գիտեր։ Սակայն կինը խելաբերված, վեր ելավ, թոթվվեցավ, շուրջը դիտեց ու անձկոտ դեմքով քահանային երեսը նայեցավ։ Կրոնավորը, փափուկ զգացումներու անծանոթ, գրեթե խիստ ձայնով մը հարցուց.

— Էրկան-պարակ չեմ կրնար էրերալ, գործ ունիմ, ո՞ւր է մանուկը, շուտ։ Մայրը, միշտ վարանոտ, տախտակամածին վրա ծռելով լաթի սև կտոր մը, ասդին առավ փոքր, ափ մը դեմք, ճըղճիմ ու ճռազած, մանր-կապույտ աչքերով, որոնք անթարթ կնային մումիայի աչքերու անարտահայտ նայվածքով։

Բայց մեկենիմեկ գույնը կայլափոխի, շուրթերը կկծկվին, աչքերը կգոցվին, կաս-կապույտ եղած է ու հետո լալկան, սուր, ճիչ մը արձակեց, մայրը խելահեղի պես, իր զավկին վրա ծռեցավ, պագավ, լզվռտեց տղուն դեմքը, որ ա՛լ միայն խղդուկ հեկեկանքներով կցնցվեր։

Քահանան շուրջառը վրան ասած էր ու տիրական շեշտով մը, գրեթե պոռալով ըսավ.

— Ինծի նայեցեք, ժամանակ չունիմ... աս գավառացիներն ալ...

Ու դառնալով մատուռին դռան մոտ կեցող կնոջ մը, որ նոր եկեր կեցեր էր հոն, գեր; խոշոր փորով կին մը, որ անմիջապես մոտեցավ։

— Սա տղան հանվեցուր, Սուրբիկ տուտու,— ավելցուց քահանան։

Այս Սուրբիկ տուտուները ժողովրդային դասակարգին մեջ բոլորովին որոշ ու հատկանշական տեղ մը կբռնեն։ Մասնավոր ընտանիքի մը չեն պատկանիր անոնք, անցած են կյանքի է՛ն հրապուրելի շրջանեն ու այս բանին խոր գիտակցությամբը լցված, կարծես անձնվիրության գործի մը հետամուտ են։

Ընտանեկան շրջանակներու մեջ իրենց հեղինակությունը անվիճելի է. կոիվ, անհամաձայնություն, առտնին հաղարումեկ դարձվածքներ Սուրբիկ կամ Թագուգ տուտուներու միջնորդության շնորհիվ կգտնեն իրենց լուծումը։ Չքավորը անոնց կդիմե մխիթարություն մը գտնելու, ամուսնին հետ սրդոված կինը անոնց իմաստուն խորհուրդներուն կապավինի, հարսնցու աղջիկը անոնցմե կսպասե այս կամ այն երիտասարդին նկատմամբ նպաստավոր կամ աննպաստ կարծիք մը։

Ու այս Սուրբիկ տուտուն ժողովրդային սույն տիպարին ամենեն պերճախոս ներկայացուցիչն է, մանուկ մը կա հոն, որ դայակ չունի, հոգացող մը, խնամող մը չունի. քահանան, ժողովուրդի մարդ, գիտակ անոր ամեն բարքերուն, հոն գտնվող երեք-չորս կիներուն մեջեն զանիկա միայն կանչեց այդ կարևոր գործը կատարել տալու համար։

Սուրբիկ տուտուն թևքերը սոթտեց, շրջազգեստը ժողվեց ու նստավ գետինը, տղուն քով ու սկսավ հանվեցունել զայն, իր խոշոր, գեր ձեռքերուն մեջ խաղալիքի պես դարձունելով մանուկը, մայրը ելած է հիմակ ու տղան կդիտե երկյուղալի աչքով։ Կուզեր, որ ինքը կատարեր այդ գործը, ուրիշին հանձնել չէր ուզեր, կարծելով, որ ուրիշի մը ձեռքերը նույն փափկությամբ չպիտի բռնեին տղուն անդամները։

Տեր հայրը մոտեցավ և խիստ ձայնով մը հրամայեց մորը, որ դուրս ելլա։

— Հա՛րը, մա՛յրը չեն տեսնար իրենց զավկին կնունքը։

Կինը ապշությամբ նայեցավ քահանային երեսը, դժգունեցավ, շրթունքը շարժեց ու տեղեն չերերաց։ Իր անձուկ դատողությամբը չէր կրնար հասկնալ, թե ինչո՛ւ համար չէր արտոնվեր իրեն ներկա գտնվիլ զավկին կնքվելուն։

Սուրբիկ տուտուն ալ, քահանային ձայնակից, ձեռքի շարժումով մը ըսավ, որ դուրս էլլա, արարողությունը պիտի սկսի։ Գավառեցի մայրը քայլ մը ետև գնաց գոհացում մը միայն տալու համար ու կեցավ՝ ակնարկն աղաչավոր ու կեբպարանքն արգահատալից։

Այս անլուր համառությունը տեսնելով՝ քահանան բարկացյալ շեշտով մը պոռաց կնկանը երեսին, որ անմիջապես դուրս ելլա։ Այս անգամ կինը ցնցվեցավ, շուրջը դիտեց, օգնություն մը գտնելու գերագույն հուսով, աչքերը թրջեցան և ետև-ետև երթալով, դուրս ելավ։

Ես ալ դուրս ելա մատուռեն և տեսա, որ հայր ու մայր շրջափակի պատին տակ կծկտեր են, արևին մեջ, լռին տրտմությամբ, սպասելով, որ օտար ձեռքեր կնքեն իրենց զավակը։

ԿՅԱՆՔԻ ՊԱՅՔԱՐ

(Պարզ պատմություն մը)

Հազիվ հասուկ մարդու մը բարձրություն ուներ ձեղունը, ուստկից աղոտ լամպար մը գորշ-շիկորակ լույս մը կցողեր կապելային մեջ։ Գետինը հող էր, խորդուբորդ, տեղ-տեղ ցեխոտ՝ գինովներու թափած ջուրերեն։ Երեք-չորս փայտե ցածուկ սեղաններ՝ անհավասար ոտքերով, աղոտ, թափթփուկի խոնավ արատներով, որոնք նստողին սիրտը կխառնեցնեն։ Մեկ անկյունը, հեռուն, կարճ ամբիոնի պես տեղ մը, որուն ետին, մեջը գլուխ մը կերերա՝ գոռոզ ճերմկոտիկ մազերով, որոնք դժգունափայլ երկու աչքեր կշրջանակեն խառնիխուռն, երկու ձեռքեր՝ վտիտ, շոփ-շոր, միշտ կշարժտկին գործասեղանին վրա՝ գավաթներու և փոքր պնակներու զազիր խառնափնթորության մը մեջ։ Ամոր առչև երկու-երեք մարդեր, լայն չուխայե տաբատներ հագած, խոնջ ու տրտմագին երևույթով, կեցած են գլխահակ ու կխմեն։ Հանդիպակաց անկյունը, փայտե սեղանի մը շուրջ ուրիշներ, նույն կեբպարանքով,

կծխեն խորո՜ւնկ շունչերով, խոսքեր մրթմրթալով իրարու, որոնք կլրանան գլխի պերճախոս օրորումներով ու ձեռքի բիրտ շարժումներով։

Զկնորսներուն գինետունն է այս։

Հետաքրքրությունը, հաղթելով հարաճուն զզվանքի մը, մղեց զիս ներս մտնել այդ տխրատեսիլ կապելային, ուր թախծալուր հառաչներ կլսես ու շողացող աչքեր միայն կտեսնես՝ համապարփակ ստվերալից լույսին մեջ։

Ծովի վրա թափառող այս դասակարգը գիշերե-գիշեր հոն կքաշկռտե, կտանի իր մարմնին բոլոր խոնջենքը ու սրտին զեղուն դառնությունը։

Բարերար օղին երկու ժամ ետքը դուրս կհանե զանոնք՝ սփոփած ու հեշտին անձնամոռացումով մը համակած։

Անկյուն մը առանձին մարդ մը նստած էր՝ խորունկ մտածումի մեջ թաղված։ Պայքարալից կյանք մը փորփրած էր անոր դիմագծերը, որոնք ժամանակեն առաջ ստացած էին ծերության դրոշմը։ Իրեն մոտեցա ու բարևեցի. ծանոթ էր. ստիպեց զիս, որ քովը նստիմ, անկարելի էր հակառակիլ, մանավանդ որ տեղն ինքնատիպ էր ու դիտվելու արժանի։ Անմիջապես հասկցա, որ այդ մարդը աստուծմե կփնտրեր մեկը, որուն կարենար հայտնել իր մտածումներն ու ցավերը և սփոփանք մը գտնել։

Օղին իր ամբողջ շողիացումով պարփակած էր զայն ու գրեթե ինքն իրեն խոսելու պես տեսակ մը ներքնահայեցությամբ պատմեց ինծի իր անցյալ կյանքի մեկ դրվագը, զոր երկյուղած ուշադրությամբ մը մտիկ ըրի՝ պատմողին եռանդուն և սրտազեղ շեշտեն հուզված։

Այս դրվագը իր միտքը կուգար այժմ՝ այդ օրը կրած ահռելի վիշտի մը պատճառավ։

* * *

Ճիշտ քսան տարի առաջ խոսակիցս ճարտար երկաթագործ էր, տարիքի առույգությանը մեջ տակավին ձեռքին մեջ իբրև խաղալիք կշարժեր ահագին տուփանը, կծռեր, կձևեր, կկռեր. կատարյալ արհեստագործի տիպար էր, կապրեցներ իր ընտանիքը մինչև իսկ բավական բարեկեցիկ կերպով։

Օրին մեկը ուրիշ բախտ մը ելավ հանկարծ իր դեմը՝ ճարտարագործական բավական կարևոր ձեռնարկի մը համար։ զոր նորեկ ֆրանսացիներ ստանձնած էին գլուխ հանել, մեր երկաթագործը իբրև վարպետ կանչվեցավ և կարևոր օրականով մը գործին գլուխը դրվեցավ։

Այն ֆրանսացին, որուն քով կաշխատեր, ընտանիքով եկած էր Պոլիս։ Երկաթագործն իր աշխատությամբ այն աստիճան ինքզինքը սիրցուց ֆրանսացիին ու անոր կնոջը, որ այս վերջինը իր պաշտպանուհին եղավ, ա՛լ իրենց տունին մարդն էր ան, ամեն բան անոր կվստահվեր։ Գործը հոն եկավ հասավ, որ ֆրանսացի ընտանիքը ա՛լ կատարելապես վստահ եղավ, թե այդ բարի արհեստավորը կատարելապես հավատարիմ է, ու օրին մեկն ալ մադամը հանեց անոր տվավ գինիի մթերանոցի մը բանալին, ըսելով թե անկից ետքը անոր պահպանությունն իրեն հանձնած է, ու ամեն օր կրնա երկու օխա գինի առնել մառանեն ու խմել։ Արհեստավորը վստահության այս սրտաշարժ ցույցին հանդեպ խայտաց ուրախությենեն։ Բանալին առավ ու գլխիվայր նետվեցավ գինեկից մառանին մեջ։ Ի՜նչ առատություն, աստված իմ, ամեն տեսակները, գերազնիվն ու համեղը, սևն ու ճերմակը, գինիի ախորժագրգիռ պեսպիսություն մը վերջապես։

Ու խմեց կուշտ ու կուռ։

Երկաթագործը՝ գրեթե տան միակ մտերիմը, գիտեր ամեն գաղտնիք, գիտեր օրինակի համար, թե մադամը թեև տասնուվեց տարիե ի վեր ամուսնացած, զավակ չէր ունեցեր և ունենալու ալ հույս չիկար բնավ։ Ամուսնական այդ անզավակ կյանքը մեծ ցավ էր բարեսիրտ ֆրանսուհիին, դեղ-դարման չէր մնացած ըրած էին այդ անողոք, սոսկալի ամլությունն անցունելու համար, անօգուտ։

Ու երբեմն իր ցավին սաստկությանը մեջ միամիտ ֆրանսուհին, մոռնալով, թե դիմացինն օտար մըն է ու էրիկ մարդ, իր այդ դժբախտությունը կհայտներ սրտահույզ շեշտերով ու դարման մը կխնդրեր միամիտ արհեստավորեն, որ, շիտակն ըսելու համար, սրտանց ցավ կզգար բարի կնոջը այդ անհասկնալի փորձանքին վրա, անհասկնալի անոր համար մանավանդ, վասնզի իր կինը մինչև այն ատեն չորս զավակ բերած էր աշխարհք։

Օրե-օր երկաթագործին վարկը կավելնար տան մեջ ու հետզհետե ավելի կվարձատրեին զինք, երբ անակնկալ դեպք մը եկավ տակնուվրա ընել հեգ արհեստավորին խաղաղիկ կյանքը։

Օր մը ֆրանսացին, որ իր մեղմ բնավորությանը հետ զայ-

բույթի սոսկալի վայրկյաններ ուներ ու փոքր պակասության մը համար բնավ ներողամիտ չէր գտնվիր, օր մը հանկարծ գնաց առավ մառանին բանալիքը երկաթագործին քովեն ու գինիին շտեմարանը մտավ, քննեց, զննեց տակառները։ Ի՞նչ տեսնա՝ բոլորն ալ կեա ու կեա պարապ էին։ Օհ՛, հո՛ւր և կատաղություն՝ վստահության աններելի զեղծում մը կար հոդ։ Կանչեց իսկույն երկաթագործը և ցուցուց։ Մարդը խոշոր-խոշոր բացավ աչքերը, տեսածին չուզելով հավատալ։ Անհնարին բան էր, արդյոք սատանանե՞ր... ուրացավ, երդում ըրավ ինքզինքն արդարացնելու համար. իզուր։ Անխնա ճամփվեցավ խեղճ մարդը, որ անշուշտ անպարտ էր, գլխիկոր հեռացավ այդ տունեն, ուր այնքան հարգ ու վստահություն ալ վայելած էր։

Իր վիճակին նախանձողներ՝ ոևէ միջոցով մը գինիին տակառները հաջողած էին պարպել՝ վոնտել տալու համար զինքը. հասած էին իրենց նպատակին։

Պետք է ըսել սակայն, թե, հակառակ իրողության, Ֆրանսուհին չէր հավատացած արհեստավորին խաբեբայությանը և փորձած էր համոզել իր ամուսինը, որ չճամփե զայն։

Ամիս մը անցած էր։ Գիշեր մը երկաթագործին կինը հանկարծ տղաբերի ցավերով կսկսի շարշարվիլ։ Ամուսինը չորս զավակներուն հետ միս-միանակ, զուրկ դրամական ամեն միջոցե, ամեն վայրկյան կհետևեր իր կնոջ վիճակին ծանրանալուն։ Ֆրանսացին կողմե ճամփվելեն հետո անգործ մնացած էր ու հաղիվ օրապահիկը կճարեր։ Ու նոր մանուկ մը ևս աշխարհք պիտի գար։ Հեք արհեստավորը չէր գիտեր ի՞նչ պիտի ըներ, շվարած մնացած էր, դրամ չուներ, որ բժիշկ մը կամ դայակ մը կանչեր։ Ու կինը, բազմոցին վրա կծկված, սրտաճմլիկ կերպով կտքար։

Որի՞ դիմեր, ո՞վ իրեն դրամ կուտար։

Հուսահատությունը վճռական բաներ ընել կուտա մարդուս։

Արհեստավորը դուրս ցատկեց տունեն ու գիշերվան մութին մեջեն ակամ վազել, շունչը Ֆրանսացիին տան առջևը առավ, զարկավ դուռն առանց վարանելու ու ներս նետվեցավ, հայտնելով, թե իր կինը զավակ պիտի բերեր ու ինք ստակ չուներ բժիշկ բերելու։

Այս միջոցին սակայն Ֆրանսուհին ամուսինը տեսնելով այդ մարդը, որ իր վստահությունը շարաշար գործածեր էր, ամբողջ արյունը գլուխը ցատկեց և ոտքի ելլալով, պոռաց որոտագին.

— Կորի՛ր, անզգամ։

Բայց Ֆրանսուհին կեցունելով իր երկանը թափը, հանդիսավոր ձայնով մը ըսավ.

— Մի՛ վոնդեր այս մարդը, որուն կինը զավակ մը պիտի ծնի, գիտցիր, որ յութ-ութ ամսեն ես ալ այդ խեղճ մոր վիճակեն եմ, վասնզի մա՛յր պիտի ըլամ։

Ֆրանսացին ոտքի ելած էր՝ ապշահար, խոլ ուրախության ցոլք մը աչքերուն մեջ։ Ոտքի ելած էր նաև երկաթագործը՝ այս հայտնութենեն ինքն ալ ուրախ, և կինը, որ տասնութ տարվան ամլութենե մը ետք, կավետեր այժմ այդ լուրը, անճառ փողփողում մը կարտափայլեր իր դեմքին։ Երեքն ալ մունջ էին։

Բուռն շարժումով մը Ֆրանսացին ձեռքը գրպանը խոթեց և ափ մը դրամ, ոսկիով ու արծաթով խառն, դրավ շվարած երկաթագործին ձեռքը, որ մինչև գետին խոնարհելով դուրս թռավ՝ իր ծնելիք զավկին օգնության հասնելու։

***

Երկաթագործը լուեց, ձայնը գրեթե նվաղած էր։ Ձեղունին լամպարն ավելի մթնցած էր հիմակ ու գինեմոլները կամ խմբափեին, կամ կմոլտային նստարաններուն վրա՝ օղիի ծանրությանը տակ ճնշված։

— Եվ այն գիշեր ծնած տղաս է, որ այսօր թաղեցի,— ըսավ երկաթագործը՝ ձայնի հետին նվաղումով մը, աչքերն արցունքներով ուռած։

ԿԺՊՏԻ

(Իրական պատմություն մը։ Աղջկան մը ապետության արկածները)

Ա

— Ահա՛ խնձի ժպտող կինը,— բացականչեց Աբամ՝ շղայլին ոստում մը ընելով աթոռին վրա, երեսը դեղնած։

— Ա՞ռ է ըսած կինդ,— պատասխանեց սեղանակից մը պապ շեշտով մը, խա՜նթ, տարկա՝ խնձի՝ ալ ժպտած է...

— Վա՜յ, ասա՞ է, ինծի՞ ալ ժպտեցավ...
— Ինծի՜ ալ...
— Ինծի՜ ալ...

Այս բացականչություններն, իրարու ետևե, կայծակի արագությամբ արձակված ինքնաբերաբար, սուր հարվածներու պես տեղացին խեղճ Արամին գլխուն, որ անոնց ազդեցության տակ շլմորած ընկճված երևցավ։

Բառատին էինք, պուլկարական մեծ զբոսավայրն, արևոտ, աղվոր կիրակի մը, քաղաքեն դուրս, Թրաքայի ճամփուն վրա, փոքր, ցած կազնիներու պուրակի մը տակ, փայտե սեղանի մը շուրջ հետմիջօրեի ձանձրույթն ու ջերմությունը վանելու համար սառնորակ գարեջուրով։ Պարտեզին վանդակորմին մոտ նստած՝ բնավ աչքե չէինք փախցներ հետի, կառքով, սայլով, երկանիվով, ձիով ու հեծանիվով անցնող զբոսասերները։ Երթևեկության այդ շարժող, վազող, քրքջող, ոստոստող, խնդամոլ ցուցահանդեսին մեջ աչքի կզարներ մանավանդ նորատի վարդամույն պուլկարուհիներուն պերճ ու գեղանձն երևալու սեթևեթիկ լուրջ ծեքծեքանքը, լայն, պարարտ, բիրտ անդամներու կսկծալի, բայց հանդուրժված շարշարանքով մը փարիզյան նորաձևության ու արդուզարդին կաշկանդմանը մեջ։

Կանացի շեղ դրված գլխարկ մը, շրջազգեստի մը անճարտար մեկ հանգրիճումը, վայելչորեն հագնված կնոջ մը քովն ի վեր պուլկար շինականի մը ձախորդ ու շիկնոտ քալվածքը, գեղեցիկ կապուտաչվի սլավուհիի մը արքենի հասակն, ամեն բան՝ այդ սեղանին շուրջը հավաքվողներուն ծիծաղին, հեգնությանը, խրծբրծանքին, այպանքին ու սքանչացմանն առարկա կըլլար։

Ու եթե երբեմն մեր ուշադրությունը ճամփուն ոգևորությենեն անջատվելով մեր շրջանակին վրա ամփոփվեր, ան ատենն ալ մեր զվարճության առարկան կդառնար խեղճ Արամը, վաճառականի նախկին գրագիր մը, որ երկու տարիե ի վեր կշրջեր Վառնայի մեջ, առանց կարենալու վաստակի միջոց մը գտնել։ Ազգական մը կհոգար իր անմիջական պետքերն, ամսե ամիս Պոլսեն հասած որոշ գումար մը իր հաճույքի և արդուզարդի պետքերուն լրացմանը կբավեր լիուլի։ Բնությամբ երկչոտ էր, վերջին աստիճան վարանոտ, զգայուն և դյուրահավան. իր միամիտ վայելչությամբ դեմքին վրա կզգային անփորձ աղջկան մը ամոթխած դյուրազգայությունը։ Բայց ընկերական մտերիմ շրջանակի մեջ

անիկա ավելի սրտաբաց ու քիչ մը ավելի հանդուգն կըլլար երթալով։ Իր հարատևորեն առարկա եղած քաշկռտուքներուն ու հեգնությանց սլաքներուն սադրանքին տակ ա՛լ փոխանակ անխոսուկ ու շիկնոտ ենթակա մը դառնալու, հետզհետե խիզախ ընդվզումներով և ատեն-ատեն ալ ճարպիկ ու հավնված սրախոսությանց փոխարինությամբ մը։ Անանկ որ Արամ տակավ «մարդոտեցավ», ինչպես կըսեր մեր ընկերներեն մին՝ անոր մեկ անակնկալ բորբոքումն հեգնելու համար։ Թեև քսաներեք-քսանչորս տարու, իր նկարագրին բերմամբ իսկ գրեթե ուշ մնացած էր «տարփական արկածախնդրություններու» տաք ու խելահեղիչ ասպարեզին մեջ, և քիչ շատ մտացածին կամ իրական պատմություններն, որք իր ապրած շրջանակին մեջ կպատմվեին շվայտ ախորժանքով մը՝ չափազանցություններով ուռուցիկ ու թելադրիչ զգայագրգռությամբ մը դիտմամբ համեմված, գրեթե գլխե հանեցին միամիտ երիտասարդն, անոր աչվքները լայնաբիբ բանալով աշխարհի հաճոյապարգև իրականություններուն, ցնցելով, ցրելով իր ամոթխածության և համեստության «նախապաշարումները» ու տեսակ մը ցավագին ստրջանք ցոլացնելով անոր կապուտակ աչվքներուն մեջ։ Հոգեբանական փոխանցման մը շրջանին դժվարություններուն դեմ կոգորեր. այս բանն իր շուրջիններուն սրատեսությենեն ծածկելու ջանքին պատճառավ ավելի նեղված, ավելի անճարակ, ավելի արգահատելի։ Խեղճ տղան չէր կրնար հասկնալ, որ նկարագրովն, իր ֆիզիկական ու բարոյական հորինվածքովն անկարող էր հասնիլ այն ձգտումին, որուն կմղեր ինքզինքն անհուն դժվարությամբ, անհավասար, կթոտ ոստումներով, երբեմն թավալգլոր, մերթ սրընթաց ուղղությամբ մը, որ ապահովապես ձախորդ անկման մը կհանգեր։

Եվ գրեթե ամեն իրիկուն, երբ սեղանի մը շուրջ հավաքվեինք, Արամ անպատճառ ներկա էր, իր վարանոտ, զգուշավոր նստվածքովը, զվարճալի կամ հանդուգն պատմություններ լսելու իր անհագուրդ հետաքրքրությամբ, մանավանդ համբերության այն անսպառ պաշարովն, որով կտոկար խոսք ընդ մեջ իրեն ուղղված կծող ակնարկություններուն, հեգնություններուն, ճշտամբանքներուն։ Ու շատ հեղ, մեր ընկերներեն մեկն իրական կամ հորինվածո արկածի մը պարագաները ծիծաղներու և բացականչությանը մեջտեղ ավարտելե հետո, հանկարծ կդառնար Արամին ու անոր երեսն ի վեր կպոռար.

— Մա՜րդ աստուծո, բան մալ դուն պատմե...

Եղեռն երիտասարդը, շառագունած, ամչկոտ, իր անփորձութեան, միամտութեան դեմ հայտնապես սրտնեղ, ցնորեցաւ.

— Ծղրա՜յր, հարկաւ ինծի ալ կպատահին օր մը ատանկ բաներ։

Ասիկա իր մխիթարութիւնն էր, ապագա՜ն. թեև քիչ մը ուշ, բայց վերջապես ինքն ալ հարկաւ օր մը արկածալից կյանքի փորձառութեամբ լցված՝ ուրիշներու միամտութեան վրա պիտի նայեր կարեկցաբար։

Իրա՜վ ալ, կնշմարեինք, որ անիկա քիչ-քիչ նվազ ապշահարև ավելի պաղարյուն ու անտարբեր երևույթով մը մտիկ կրներ շատ անգամ հատկապես իրեն համար պատրաստված առասպելներն, որք ա՜լ միևնույն ցնցումը, սարսուռը չէին տար իրեն, ու երբ իր կարծիքը կհարցվեր,

— Սո՜ր ինչ կրսես, Արա՜մ։

— Ծղրա՜յր, ասոնք անանկ պարզ բաներ են, որ ամեն մարդու կրնան պատահիլ,— կպատասխաներ հանդարտ շեշտով մը։

Բ

Ո՜րչափ խնդացին այն օրն, երբ դիպվածով իմացան, թե Արամ՝ ա՜լ վրայեն թոթվելով անհամարձակության, համեստության ու ամաչկոտության փրկարար կաշկանդումը, սկսած էր «սրտի արկածներ» հետապնդել։

Չէ՜, ա՜լ չէր կրնար տոկալ իր վիճակին կարծեցյալ նվաստությանն այդ բարեկամ շրջանակին մեջ, իրմե նվազ տարիք ունեցողներ խնդայի՜ն իր կանացի խրտչող նկարագրին, իր տղու միամտությանն ու աղջիկի ձևերուն վրա. այլևս ինքն ալ հանդուգն, խրոխտ, ժպիրհ, արկածախնդիր մեկը պիտի ըլլա՜ր։ Ինք ալ, իր կարգին, ունկնդիրնե՞ր պիտի ունենար, զարմացման աղաղակներ պիտի խլեր, իր վիճակին կարոտը քաշել պիտի տա՜ր։ Նախ սկսավ երազուն, արհամարհոտ ըլլալ, անտարբեր անուշադրությամբ մը ունկնդրելով իր շուրջ ըսվածներուն։ Հետո, անգամ մը, երբ սովորական հրավերն ուղղվեցավ իրեն. «Արամ, բան մալ դո՛ւն պատմե», երիտասարդն ամփոփվեցավ, շուրթերը թեթև ժպիտով մը բարակցած, աչքերուն մեջ գոհունակության ձայնով մը։ Ձեռքը բերանին տանելով կամաց մը հազաց, մաքրեց կոկորդը, թուքը

կլլեց։ Հետո ըսավ, ջանալով իր ձայնին տալ ամենեն առնական ու անդողդոջ շեշտը.

— Ես ալ ձեզի բան մը պատմեմ տե, բերնեբերնուդ շուրը վազե։

Եղեռն Արամին այս սկզբնավորությունը քմծիծաղով, քրքիջով, հեգնությամբ ու բացականչությունով ընդունվեցավ։ Բայց անիկա արդեն կանխապատրաստ իրեն ու իր պատմության ըլլալիք ընդունելության՝ բնավ հոգը չըրավ. ու մեկ հարվածով իր մասին կազմված աննպաստ ու անպատվաբեր կարծիքը վանելուն ապահով, մանավանդ տեսակ մը հայեցական սևեռմամբ այն դեպքին, զոր մեզ պիտի հայտներ և որ արդեն հուզմամբ կուռեցներ իր կուրծքը, շիփ-շիտակ, առանց դարձվածքի, իրողության վազեց.

— Շատ հարուստ ու շատ գեղեցիկ աղջիկ մը սիրահարված է ինծի... Տեսնք ի՞նչպես եղավ. երկու շաբաթ կա, ցորեկ մը կպատահի ծովեզերքի պարտեզին ծառուղիներուն մեջ, երբ ուշադրությունս գրավեց կին մը, որ տասներկու-տասներեք տարու աղվորիկ աղջկան մը հետ կպտտեր միևնույն տեղը։ Անգամ մը քովեն անցած ատենս մեկեն ի մեկ երեսը նայեցա. ան ալ ինծի նայեցավ, բայց, աստվա՜ծ իմ, ան ի՞նչ նայվածք էր. խոշոր, կապույտ աչքեր, անհուն մելամաղձությամբ լեցուն, կաթի պես ճերմակ երես, պաշտելի շուրթեր, լայն լեցունկեկ վիզ, արձանի հասակ, անթերի բարեձևություն, ի՞նչպես ըսեմ, հրաշակերտ մը, կենդանի քերթված, որուն տեսքն աչքս շլացուց և, երևակայեցե՞ք, իմ այդ շլացմանս մեջ ի՞նչ կըլլամ, երբ տեսնեմ՝ ինչպես երազ մը, որ այդ գերբնական արարածն ո՛չ միայն ինծի կնայի, հապա նաև... կժպտի՞...

Այսամ հաղթական նայվածքով մը կշռեց իր առաջ բերված տպավորությունը, որուն տեսակին վրա անպատճառ կսխալեր ու շարունակեց իր պատմությունը, մեր հետաքրքրությունը մինչև վառ ու արծարծ պահելու ջանադիր։

— Կարծես նոր արևի մը ծագելը տեսա, շփեցի աչվերներս. խեղջս, որ պահ մը տարտղնած էր, ամփոփեցի, և լրջորեն սկսա մտածել, թե ինչո՛ւ այդ հրաշագեղ կինն ինծի ժպտած էր։ Ես դարձա, անուղղակի ճամփաներով, նորեն դիմացն ելլալու համար. միևնույն բանը պատահեցավ. իրարու նայեցանք, ու անիկա նորեն ժպտեցավ, բայց անոր ժպիտը տեսակ մը ժպիտ է. սովորական բան չէ. խորունկ մելամաղձոտություն կա մեջը, որ

խելքդ գլխեդ կառնե ու քեզի ալ կհաղորդե միևնույն մելամաղձությունը...։ Հափշտակված, գրեթե ցնորած հեռացա, հետևյալ օրը նորեն հոն դառնալու մտադրությամբ...։ Իրավ որ չքնացա այն գիշերն և հաջորդ օրն անհամբերությամբ վազեցի պարտեզ, բայց մինչև իրիկուն ի զուր դեգերեցա հոն, վասնզի չեկավ։ Ջախջախված, հուսահատ մինչև կես գիշեր թափառեցա ու սա եզրակացությամբ մխիթարեցի ինքզինքս, թե առջի իրիկվանը տեսիլք մ'էր... ինչ որ սակայն արգելք մը չեղավ, որ հաջորդ իրիկվան նորեն երթամ պարտեզ, տեսիլքին հույսովն, որ այս անգամ երևցավ։ Դիմացն ելա, դողալով, տենդահար, ու անիկա ժպտեցավ նորեն տարտամ, վերացական կերպով մը, գրեթե առանց երեսս նայելու։ Միշտ իր քովն էր փոքր աղջիկը, ձեռքեն բռնած։ Ատանկ զույգ մը կերթային առանց խոսելու, կարծես երկուքն ալ խորհրդավոր տրտմությամբ մի համակված։ Այդ սքանչելի արարածին ինձ ներշնչած բուռն համակրությունը դրդեց զիս հասկնալու իր ո՞վ ըլլալը, ուստի, երբ դուրս ելավ պարտեզեն. հետևացա իրեն. տասն վայրկյան ետքն անիկա շատ գեղեցիկ տուն մը մտավ, հունաց թաղին մեջ։ Հասկցա, որ գործս բարձր դասու պատկանող կնոջ մը հետ էր, բայց ես իմացած ըլլալով, որ սեր ըսված բանն հարուստի աղքատի չի նայիր և մինչև իսկ երբեմն կույր կըլլա տգեղությունները առջև, հետևցուցի, որ այդ կինը՝ հակառակ իմ անշուք երևույթիս՝ համակրած էր ինձ... ապա թե ոչ ինչո՞ւ ժպտեր, անանկ շնորհալի, անանկ փափուկ, և մանավանդ անանկ տխուր ժպիտով մը...։ Տասն օր կա, որ սկսած է այս բանը. չորրորդ անգամ ըլլալով այսօր դարձյալ տեսա, ու դեռ աչքիս առջև կխաղա իր շուրթերուն վրա գծված երազային ժպիտը...։ Մեկուն չհամարձակեցա հարցնել, թե ո՞վ էր այդ կինը. ո՞ր ընտանիքին կպատկաներ ու չպիտի հարցնեմ, վախնալով, որ վայելած երջանկությունս կոչնչանա... Եվ այնպես կուգա ինձ, թե անիկա միշտ խորհրդավոր ու անծանոթ մնալու է ինձ համար, որպեսզի մեր հարաբերության հրապույրը չկորսվի։

Ու Արամ, որուն վերջին խոսքերն հափշտակված երազանքի մը մեջեն կարծես արտասանված էին, մեզի նայեցավ տրտմական սեռռումով մը։

Ա՛լ անկեց ետքն հանդիպած ատեննիս կհարցնեինք իրեն.

— Արա՛մ, կժպտի՞ կոր...

— Մի՛շտ...

Բայց ինք երթալով մելամաղձոտ կըլլար։ Կսկսեր խույս տալ մեր ընկերությենեն, չհանդուրժելով մեր հեգնությանց։ Եվ երբ դիպվածով իր դեմն ելնելով հանկարծ «կժպտի՞ կոր»-ը նետեինք՝ դեմքը ծռմռտկելով կառներ կքալեր։ Այն կիրակին, սակայն, չկրցավ օձիքը ձեռվընուս աղատիլ. բռնի կերպով առինք զինքը, Բառատի տարինք, թե՛ որպեսզի ինք մխիթարվի քիչ մը և թե մենք ալ զվարճանանք։ Խեղճ տղան գրեթե չէր խոսիր ու մեքենաբար կդիտեր դուրսի երթևեկը. «ժպիտը» կերազեր անշուշտ, երբ Ֆանկարծ պոռաց. «Անա՛ ինձ ժպտող կինը»։

Ամենքս ալ նայեցանք, կանգնագեղ հասակով հելլենուհի մը կանցներ, մանկուհիի մը թևեն բռնած։

Բայց ամենքս ալ տեսած էինք զինքը արդեն, ու մեկեն ի մեկ հիշեցինք, որ անիկա մեկուն երեսը նայած ատեն իր դեմքը ժպտուն արտահայտություն մը կառներ։ Բացեիբաց, շեշտված ժպիտ մը չէր ան։ Մինակ կրնար բորբոքել երևակայոտ միտքերն, ինչպես պատահած էր Արամին. հետևապես սուտ չէինք, երբ որ խելակորույս սիրահարին բացականչությունն արձագանքած էինք՝ «ինձի ալ ժպտած է»-ով մը։

Այդ միջոցին վրա հասավ նոր բարեկամ մը, նախկին կենցաղասեր մը, աշխարհքը տեսած, պտտած մարդ. իր անհատնում պատմություններովն ու զվարճալի մանրադեպերովը մեծ հաճույք կպատճառեր մեզ։ Ամեն բանեն տեղեկություն ուներ ու շատ մարդ կճանչնար։ Անհուն փորձառության պաշար մը ուներ։ Ուսկից մեծապես կօգտվեին իրեն հետ հարաբերություն ունեցողները։ Գաղտվական խորհրդատու էր։

— Ի՞նչ կա, ի՞նչ եղավ,— հարցուց տեսնելով մեր խնդալն ու Արամին ցավագին ծամածռումն ալ։

Հարկ չկար գործն անկից ծածկելու։ Ժպիտին պատմությունն ըրինք, զոր մտիկ ըրավ գլխի խորհրդավոր օրորումներով։ Երբ վերջացուցինք, ըսավ.

— Հասկցա. ուրեմն չե՞ք գիտեր այդ աղջկան պատմությունը։

— Ո՛չ։

— Պատմեմ, մտիկ ըրեք։

Արամ, թեև վշտահար, անձնասիրությանը մեջ թեև ծանրապես վիրավորված, վերջապես ինքն ալ այդ առեղծվածին լուծումն հասկնալու հետաքրքիր, սկսավ ուշադրությամբ մտիկ ընել նորեկին պատմությունը։

«Ասկեց տասներեք տարի առաջ, տեղվույս Երևելի հույն վաճառականներեն մեկուն աղջիկն, որ շատ գեղեցիկ էր և որ հարուստ թեկնածուներու ախորժակը գրգռած էր, կսիրահարվի աղքատ ու աննշան երիտասարդի մը հետ, որ դաս կուտար իրենց տան մեջ՝ փոքրիկներու։ Բավական ատեն գործը գաղտնի կմնա։ Ամուսնության առաջարկներ միշտ ամեն կողմե կտեղան, բայց անխնա կմերժվին աղջկան կողմե, հակառակ իր ծնողաց թախանձանքներուն։ Գաղտնի սիրահարությունը կշարունակվի ու երթալով կսաստկանա այն աստիճան, որ օր մը վերջապես երեսան ելլալով, ծնողքը սաստիկ բարկացած, տղան կվռնտեն տունեն ու խիստ հսկողության կենթարկեն աղջիկն, որ տակայն չի հաւատահատիր և միջոցը կգտնե եթե ոչ տեսնվելու իր սրտի հատորին՝ գոնե անոր հետ թղթակցելու։ Ժամանակ մը այսպես կշարունակվի, բայց որովհետև սիրահար ըսված արարածը քիչով բավականանալ չի գիտեր ու միշտ ավելին վայելելու կհետամտի, անխորհուրդ և անզգույշ օրիորդն հանդգնությունը ձեռք կառնե և օրին մեկը գաղտնապես տուն կմտցնե խելահեղ սիրահարն, տանձին սենյակի մը խորն, ուր ամեն բան կմոռնան։ Բայց աղջկան հայրը կհսկեր. կիմանա ու վրա կհասնի, ներս կմտնե սենյակին։ Հոն բուռն տրամ մը տեղի կունենա. երիտասարդը հուզմանե սաստկութենեն խելքը կթռցնե, իսկ աղջիկը նվաղած կիյնա...»

Արամ կդողար. ամենքս ալ սոդրված էինք։

— Վե՞րջը,— կմրմնջենք։

— Տղան Պոլիս կդրկեն ու մինչև հիմա հոն է, հիմարանոցի մը մեջ։ Իսկ աղջիկը տարի մը ետքը զավակ մը կունենա, որ անկից ի վեր մեծցած է։ Ահավասիկ ձեր տեսած այն աղվոր կնոջ ու պզտիկ աղջկան պատմությունը։

— Բայց ինչո՞ւ կժպտի...

— Տասներեք տարի առաջվան այն տրամադրիչ դեպքին ցընցումեն, թշվառ աղջիկը տեսակ մը մենամոլություն ունեցած է։ դիմացն ելնող երիտասարդն իր սիրահարը կարծելով, քմծիծաղով մը կնայի անոր երեսը։ Բայց ոչ գիտում չունի, ձեռքը չէ, օրը տասն երիտասարդ տեսնե՝ տասնին ալ կժպտի։ Կերևա թե սա է իր միակ մխիթարությունը։

— Ըսել է, որ խենթ է։

— Խենթ չէ, բայց ապո՛ւշ է,— եզրակացուց մեր բարեկամը՝ շեշտակի նայելով Արամին, որուն աչքերուն մեջ արցունք մը կշողար հիմա։

Կազմեցին՝ Ա. ԿՈԹԻԿՅԱՆ Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԲԱՌԱՐԱՆ

Ա

Ակ— խոռոչ
Ախարեք— կալվածներ
Ախտարմա— տեղափոխում
Ակաղձուն— լեցուն
Ականակիտ— մարգարիտ, վճիտ
Ականոզիկ— աչք, աչքի՝ իր խոռոչով
Ակոտպլիկ— ատամները թափած
Անյակ— ձախ, աջ և անյակ, աջ ու ձախ
Աղ— ուղղան
Աղապատանք— զուր, սեր
Աղերեկ—սպիտակած (մազ)
Աղիկ— անբարոյական կին, պոռնիկ
Անճառ— օճառ
Անճայիպ— տարօրինակ
Անճապ— արդյոք, միթե
Անգայտ— նոսր, ցանցառ
Անդր քան զչափ— չափից ավելի
Անհեղլի— անփոփոխ, հաստատուն
Անձնիկ— մարմին, իրան
Անկարյա— անվարձ աշխատանք,
Անուար (գվռ.) — այնքան
Անքուլթ— խաղաղ, հանդարտ
Աչկ օլռուն— կեցցես
Աչկ (գվռ.) — աչք
Ապաշավ— զղջում
Ապան էրել— սիրահարվել
Ապահեն— արդարև
Ապիտի— զարհուրելի
Ասուար (ասխտարի կրճատը) — այսքան
Ավաչ— ձայն, երգ
Ավուն— բուռ, ափ
Ավ— որս
Ավճի— որսորդ
Ավոտաք— փաստաբան
Ատրաշեկ— շիկացած (շամփուր)
Ատեք (ադաբ) — սովորություն
Ադ ընել— հերել

Բ

Բանեժիսիք— ներքոզ
Բապուն— մուճակ
Բապունս ի վար— արհամարհական արտահայտություն
Բարաբ— կամրջակի եզրը
Բապանարզ— թշվառ, ողորմելի, ոտաբոբիկ
Բասուած (կամ՝ փասուած) — ժանգոտած
Բարամբ— շոգենավի վանդակարմը
Բելբրին— թիկնոց
Բեսիլնի— պաստեղազարդ
Բերի (փերի) — հավերժահարս
Բեմ աղեկ— շատ լավ
Բեմեն— թախտ
Բեմ քոճաք— շատ զարմանալի
Բերուշան (կամ՝ փերուշան) — թշվառ
Բեղազոխիա (պեղազոզիկա) — մանկավարժություն
Բիս բիս (փիս փիս) — վատ-վատ
Բիս բյուրուն— ամբողջովին
Բիլավ— փլավ
Բոշխոն— վատ գործեր մտածող
Բյուրին (բիտուն) — բոլորը
Բարյազ— հյուսիսային քամի
Բոլարշի— կլոր
Բուրդուբապուն (գվռ.) — հապճեպ
Բուրդ— մեծ սիկար

Գ

Գավազ (խավազ) — բարապան սպասավոր՝ հատկապես պաշտոնական հիմնարկների
Գայթ ի զայթ— անհաստատ կերպով, խուրթերին զարնվելով
Գանգյուն— արձագանք, թնդյուն
Գելանել— պրկել, ոլորել
Գեղար— սենյակի մահր զարդեր
Գելան— տանջանքի գործիք
Գերծ— գերծած, ածիլած
Գիրգ— փափուկ
Գրակոնդիկոնված— ոսկերական զարդերով պճնված (ուղիղ ձևի դրակոն դիկոնված)
Գրգլյակ— ցնցոտի
Գրմրզը— կարմիր
Կոց ընել— անգիր անել
Գում-Գափու— Պոլսի թաղամասերից մեկը
Գուպար— կռիվ, մենամարտ

Դ

Դանդաչել— տատանվել
Դժոխի— անհաճո, ատելի
Դեղդուց— սրունքի հաստ մասը

Ե

Եբմիշ— յոթանասուն
Եմենի— ոտնաման, չուստ
Եռեփ— եռուն, բուռն
Երեժկտալ— հորանջել
Երկնապող— ասատկությամբ օդը կտրելով վեր պլացող
Երաշխեպ (երաշխէպ) — վերք, հարվածի տեղ

Զ

Զանանդիլ— վախենալ, սարսափել
Զայիֆնալ— նիհարել
Զապրիե— ոստիկան
Զավալլը— խեղճ, թշվառ
Զարար— վնաս
Զարարսրզ— անվնաս
Զեհիր— թույն
Զենաթ— արհեստ
Զենկին— հարուստ
Զերէ— որովհետև
Զիլիֆտար— Գոլսի քաղամասերից մեկը
Զիտֆեբ— հաշկերույթ, խնջույք
Զխրմ— թույն, չոռ ու ցավ
Զոշամաղ (զոշամաղ) — ագահ, արծաթամոլ
Զոփալ— ցրտից դողալ

Է

Էգախանե— դեղատուն
Էգպեր ընել— անգիր սենել
Էլչիյե գերար յոք (թուրքերեն) — միջնորդի համար վնաս չկա
Էիտիար— ծեր
Էմնիեթ—վստահություն
Էնյա— գոն, երշանիկ
Էնել—մահ
Էմեկտար— վաստակավոր

Էմմե— կաթված
Էյեր— եթե
Էյլենմիշ ըլլալ— զվարճանալ, զբաղվել
Էյնավար— երկնավոր
Էյեր (կամ՝ էկեր) — եթե
Էնկել ըլլալ— արգելք հանդիսանալ
Էոճ— վրեժ
Էրիկ— ամուսին
Էփեի— բավականաչափ

Ը

Ընկլուզանել— կուլ տալ, ընկղմել
Ընդվայրացած— դատարկ մնացած (հող)
Ընդոծին— բնածին
Ընիվի— հոնի
Ըսանաթզություն—անհանգստություն
Ըռենկ (ռանգ) — գույն
Ըռեչեթա— դեղատոմս, ռեցեպտ
Ըռահաթ— հանգիստ
Ըռեկոլա— կարգ ու կանոն, օրենք
Ըրընդիկ— սիրուն, գեղեցիկ

Թ

Թաթան— ոլորապտույտ ուժեղ քամի, փոթորիկ
Թակույկ— կավե աման՝ ջրի կամ գինու, զարծածված է լվացքի տաշտի նշանակությամբ
Թախլիթը ընել— նմանեցնել, կապկել
Թախրմիկովը— սարքավորումովը, ամբողջությամբ
Թավասան— թավամազ
Թավալըգ— տապակացու (ձուկ, միս)
Թեփե— գլուխ, գագաթ
Թեմեննան ընել— խոնարհելով բարևել
Թվկալ— շնիկի նման կաղկանձել, լաց լինել
Թեյզե— հորամույր
Թերպիյե— դաստիարակություն, կրթություն
Թեմիզ տայախ տալ— մի լավ ծեծել
Թերթիպլի— կանոնավոր
Թեռացա— պաշտոգամբ, տերրաս
Թեվնակ— թիակ
Թյոպե— մեզա
Թյատրյու— տեսակ

Թոնաֆ— զարմանալի
Թոնաֆնի— գալանտերիայի առևտրով զբաղվող
Թուլումպանի— ջրհանկիր, ճրշեջ
Թուրբ— բաղկ

Ժ

Ժոռոատ— ատամները թափած
Ժպիրն— լիրբ, անամոթ
Ժուժել— դիմանալ, համբերել

Ի

Ինե— ինձանից, (ինձմե-ի աղավաղված ձևը)
Ինշալլահ— երանի թե
Իշտար— ինչման
Իշ-իշե— մեջ-մեջ, բաֆուն
Իրինա (ռինա)— խնդրանք, աղերսանք
Իրատ— հասույթ, եկամուտ
Իֆեֆ— մետաֆս
Իֆեֆնի—փերեզակ, մանր-մունր ապրանքներ վաճառող, մետաֆսավաճառ
Ի բբել ական— մի ակնթարթում, իսկույն

Լ

Լաֆ— խոսք
Լայրխլը— արժանավայել
Լայեննկ— շատ լայն
Լաստիկ— գալոշ
Լանդռ— ֆայտոն
Լեվրնկ պալրգը— ձկան մի տեսակ
Լզվոտել— լիզել
Լդրնուկ— կեղտոտ, փնթի, ողորմելի
Լոխմա— պատառ

Խ

Խազբխ— ցից
Խալապալրխ— բազմամարդ
Խալբ ընել— դալաբ անել
Խախա— տխմար
Խայսերցի— կեսարացի

Խափմիշ ընել— հափշտակել
Խամպուռ— կուզ
Խայրխ (գայրգ)— նավակ
Խայիլ— հոժար, համառայն
Խանչյուն— խոնչյուն
Խանթիլ— կանթեղ
Խարշափ— խշխշուն, տերևների հատած ծայրը
Խաֆա— գլուխ
Խրյախ— գերազանց, շատ լավ
Խրյանեթ— անգութ
Խրատար— չափ, ասխրատար, այսչափ
Խրթլրխ— պակաս, սով
Խրմպրլ— տգետ, ջղված, ապուշ
Խրյմեթ— գին, արժեք
Խրսրմ— ազգական
Խրամեթ— բախտ
Խրվրզրվր— դատարկ
Խրսրզ Մանոլ ինեմիսի (թուրքերեն)—նույն ինքը՝ զող Մանոլը
Խնծիզ— ուրախություն
Խանբրաթ (փոքրատ)— կապալ
Խարդալ— խոկալ
Խալլանմիշ ընել— գործածել
Խամրի— ոատրակ
Խունաֆ— հրձիգ փաթեթ, նաև նշանակում է բարուր
Խուտա— գայլ
Խուրի— տուփ
Խուվեթ— ուժ, կարողություն
Խուն ինչ— փոքր-ինչ, (խուն ինչ տխուր)
Խուշիկս— անուշիկս, թոշնակս

Ծ

Ծառ (ժողովրդ. բարբառ)— ձեռ
Ծառվրնիդ (ձեռքերնիդ)— ձեր ձեռքերը

Կ

Կատանա— վիթխարի, հաստ
Կաֆ— սխալ
Կայ առնել— կանգնել
Կաշրմբուռն— ուժեղ, մկանուտ
Կարշնեղ— ջլուտ, պինդ, ուժեղ (ձեռք)
Կարմրերփն— կարմրագույն

Կապել— խլել, գրավել
Կեյիկ— եղջերու
Կեչինոիրմիշ ընել— ապրեցնել, կերակրել
Կեվրեմ— չոր, փխրուն բլիթ
Կլափ— կոկորդի բերանը
Կյաշմիշ բլլալ—տեսակցել, տեսնվել
Կյորե (գյորա) — նամեմատ
Կորկոտլը— ճարուստ, ունևոր
Կոնծած— չորացած, կծկված, ցամաքած
Կրվիլ— տեղափոխվել

Հ

Հազ բնել— սիրել
Հազրլոպեի— ձրիակեր, անաշխատ ուտող
Հախսրգ— անարդար
Համբուն—բնավ, ամենևին
Հայրատ— անամոթ նայվածք
Հանգրիեել— շրջազգեստի քղանցքը շտկել, վեր սոքսել
Հանկուցիչ— գրավիչ
Հանկամս— ակամայից, առանց իր կամքին
Հապը կլլել— պարտվել, ոչնչանալ
Հաստույր— սաստիկ, ուժգին
Հավան ելլալ— օդը բարձրանալ
Հավանմա— գրքաց, գուշակ
Հափափել— առհանգել, հափշտակել
Հափրել—կշտանալ, արբենալ (սիրուց)
Հեղակարծ— հանկարծակի
Հեստ— անհնազանդ, կոշտ
Հեյ կիտի կյունլեր—հեյ գիտի օրեր (բուրքերեն)
Հետիե— ճվեր
Հիլլեպազ— խարդախ
Հիյեթ— կերպարանք, արտաքին երևույթ
Հոսնական— վավաշոտ, պոռնկական
Հովարտա— լոքի
Հորա— շուրջպար
Հորդելակ— սաստիկ (ձայն)
Հուսկ— վերջին
Հոլորեն— անփութորեն, ծույլ-ծույլ
Հունա— այնտեղ

Ձ

Ձկնականչ— ալիականչ, ոստրեի մի տեսակը

Ճ

Ճախա ընել— պարծենալ, կատակել
Ճաղ— դազաղ
Ճամկավոր— ասեղնագործված
Ճանրկյոնյուտեն— սրտանց
Ճեպ— գրպան
Ճեպլեմե ընել— գրպանել
Ճեննեմ (չնանամ) — դժոխք
Ճերիմե— տույժ, տուգանք
Ճիկ— թռչնային ձայն, մրմունջ
Ճիյեր— քոք, լյարդ
Ճոզիլ— մազերը քաշել

Մ

Մաթ ըլլալ— խայտառակվել
Մախսրմ— անմեղ երեխա
Մախսեն— մառան
Մանկացած— քանձրացած, մակարդված
Մանքար կլլել— սուտ խոսքից խաբվել
Մարմաշ— շատ նուրբ (կերպաս)
Մահմուտ փաշա— Գոլսի թաղամասերից մեկը
Մաֆիշ (արաբ.) — չկա
Մաղազա— խանութ, վաճառատուն
Մեզրե— Խարբերդի նահանգում մի քաղաք
Մեխանե— գինետուն
Մերամ հասկցնել— խոսք հասկացնել
Մենյուրլեմիշ ընել— կնքել
Մեննգի զարնել— փաձել
Միահաղույն— միանգամից
Մինասիպեթ— հարաբերություն, վերաբերություն
Մինենիմ— աստղաբաշխ, գուշակ
Միսիպեթ— վարնոց
Միսկին— սուտ, կեղտոտ
Միտեա (կամ միտյա) — ոստրե
Միտեանի— ոստերավաճառ
Միտեա-իշի— ոստրեի միջուկը
Մյուսքան— կարոտ
Մյուսյու— պարոն
Մորու— խորք մայր
Մուեզզին— աղոթքի հրավեր մուսուլման հավատացյալներին
Մուրիկ— մուրացկան
Մուքլախ— անպատճառ, անպայման

Յ

Յաթսը— իսլամների երեկոյան աղոթքը
Յաղ— յուղ
Յաղլըշ— սխալ
Յան գալ— հենվել, կոթնել
Յազլըխ— ամառային
Յախա— օձիք
Յախըշըխլը— վայելուչ
Յավեր— փոխանորդ, օգնական
Յավրու— ձագ
Յարտմ— օգնություն
Յըղրն— դեզ
Յըղրնված— դիզված, կուտակված

Ն

Նաղարա— Պոլսի հրշեջների արձակած կանչը հրդեհի վայրերը վազելիս
Նա՞սը (նասը՞լ) — ինչպե՞ս
Նաթուրա— բնավորություն
Նալգ— զարկերակ
Նեմինասիպեթ— թերահավատության արտահայտություն
Ննե— մեծ մայր
Նմա— նրան

Շ

Շաղփաղփում— հիմար և անմիտ խոսակցություն, շատախոսություն
Շարքի— արևելյան երգ
Շեմշիե— հովանոց
Շիկերե— վայրի ոչխար
Շիշլի— Պոլսի թաղերից մեկը
Շլմորեցավ— շվարեց
Շյուպեն— կասկած
Շոյլե— այսպես
Շուտիկ— աշխույժ, արագաշարժ

Ջ

Ջապուխ— շուտ
Ջավելա— ձուկի կողով, կողով
Ջափխրե— արիկա, լոքի

Ջաթթ— տանիքի ծածկ
Ջամաշրեի— լվացարարուհի
Ջարշը— շուկա
Ջեհրե— նախարակ
Ջեյրեկ— քառորդ մեճիտիե
Ջիշեկ— ծաղիկ
Ջիֆթ— զույգ
Ջլդիկ (ջլթիկ) — անպարկեշտ, անբարոյական կին
Ջորպանի— տեր, տանուտեր
Ջփակ— լաչակ

Պ

Պանդուր— անխելք
Պաշաշաղի իյնալ— գլխիվայր ընկնել
Պաշբաղոշ— դատարկագլուխ
Պաշխա— ուրիշ
Պապահա ծեծ— մեծ ծեծ
Պապուլխանա— անբարոյական տուն
Պարե— զոնե
Պարութա— պաշտոնական թղթերի հավաքածու
Պասմանի— չիք ծախող
Պալաթ— Պոլսի թաղամասերից
Պալըֆլրի գերեզմանատունը— Պոլսի թաղային գերեզմանատներից
Պալրխնի— ձկնորս
Պախալ (բակալ) — նպարավաճառ
Պապայիյիտ— քաջ, կտրիճ
Պատեմլիք— Պոլսի թաղերից մեկը
Պաշլայել— սկսել
Պերի— ի վեր
Պետեհավա— ձրի
Պերևեղիկ— հագնված, զարդարված
Պերպեր— սափրիչ
Պեֆլեյել— սպասել
Պեյօղլու— Պոլսի եվրոպական արվարձանը
Պեստուա— աենծմ
Պիշիմ— ձև, եղանակ
Պիլե— նույնիսկ
Պիրեր դրուշա — մի-մի դրուշով
Պիրինճի— առաջին
Պյոճեմ— որդ, շերամի որդ
Պլորել— կլոր-կլոր փաթաթել (լավաշը, շորը)

Պոյլը-պուալը— բոյով-բուռով, գեղանասակ
Պոշը պաշրնա— պարապ տեղը, իզուր

Ջ

Ջամբել— սնել, կերակրել
Ջրնանկիր— հրշեջ

Ռ

Ռազիան— սամիթ
Ռանաք (կամ ռանաք) — ճանգիստ
Ռեիզ— ավազ, ղեկավար, գլխավոր

Ս

Սոխալ— մոռուվ
Սոխտել— փչացնել
Սայբխլամիշ ընել— զառանցել
Սայզը— ակնածանք, զգուշավորություն
Սան— աման
Սաշախ— ծոպ
Սառաբլը— լուսնոտ
Սարայ— պալատ
Սաթրդ— առնուտ
Սալբա— բանկոնի մի տեսակը
Սալֆասոն (սանֆասոն) — անփույթ, անսեթևեթ
Սերպեսք— ազատ
Սերսեմ— ցնդած
Սինիֆ— ցինիկ
Սմսեղուկ— ծածկամիտ, խորամանկ
Սյոզտե— իբր թե
Սյուս— զարդ
Սյուլյուն— նուրբ
Սյուրդյուկ— փողոցային, դուրս ընկած
Սայմիշ ընել— կողոպտել
Սոնը սոնը— վերջ ի վերջո
Սալ— ձախ
Սոն— վերջ, վախճան
Սպանյոլ— իսպանական
Սպասարյար— սպասավորներ
Սվոնք— սրանք

Ստամբակ— փողոցային տղա, լակոտ
Ստե— բարակ մազ, խավ
Սֆլիլ— սսկվել

Վ

Վարնոց— սառ
Վարոֆ— ներքևի մասը (ծոծրակի վարոֆը)
Վարիաք— ճարտարություն, ունեցվածք, կարողություն
Վարկպարազի— ճարեանցի
Վանառիկ— փողոցներում մանր-մունր իրեր վաճառող փոքրիկ տղա
Վարատական— աստանդական
Վեսելամ— վերջապես (բացականչություն)
Վիրա— շարունակ, անընդհատ
Վերեմ— ճյուծախտ
Վոլրֆաս— կարծրիքի ճանկարծ փոփոխում
Վուճուտ— մարմին

Տ

Տավա— դատ
Տալավերա— խարդախություն
Տահա— դեռ, տակավին
Տապան— ոտքի տակի մասը, ներբան
Տապան ծեծել— շատ քայլել
Տատանմիշ ըլլալ— համն առնել, սովորաբար ճանախել
Տելիխանլը— տաքգլուխ երիտասարդ
Տեմիր— երկաթ
Տեֆ եղիր— ոռդ եղիր, կորիր
Տեբլասե— միշտվայրից դուրս
Տիխաբլը— ուշադիր
Տիվալ— ասեղնագործություն
Տիրի տիրի— ողջ-ողջ
Տոզ— դոզա, չափ
Տոյա տոյա— կուշտ ու կուտ
Տոտոզվիլ— տեղավորվել, նստել
Տուիան— թակիչ, թակ
Տալածո— շիթ
Տոամ— դրամա, ողբերգություն,
Տրեզ— ժապավեն
Տոյ եղավ ինձի— բնազդով զգացի
Տուտու— մեծ մայր

Ր

Ըրտենկառ (կամ որտենկաբ) — եվրոպական նագուտա, սերբուկ

Ց

Ցայն վայր — մինչ այդ, մինչ այդտեղ
Ցանկ — ցանկապատ
Ցանցնել — ջուր արկել, ջրելել
Ցռուկ — ճետնակազմ, նավի ճետևի մասը

Ու

Ումուտ ընել — նուսալ
Ունսուկ — գոան վրա ամրացված երկաթ՝ դռուը խփելու համար

Փ

Փախուկ — խենթ
Փոզփոզենէջ — փայփլուն իրվածքով, ջոզջոզալով

Ք

Քալինիքա — բարի գիշեր
Քավ (ղավ) — արեթ
Քավաս — բարապան
Քարիտեզ — խեցգետինների ցեղի մի տեսակ
Քարիտեզճի — քարիտեզ վաճառող
Քեատ — թուղթ
Քեատճանե — Պոլսի նշանավոր արվարձաններից մեկը, հայտնի գրոսավայր
Քելեփիր — էժանագին ապրանք
Քեֆալ — ձուկի մի տեսակը
Քեշկե — երանի թե...
Քեյֆի խաճվե — փրփուրը երեսին թարմ սուրճ
Քեսատ — առևտրի, գործի պակաս
Քթթում — բացխփում, աչքը կամ լույսը բանալ-փակել
Քիզրիք — լուցկի
Քիրանի — վարձակալ
Քիզար — նուրբ, բարեկիրթ
Քիմյա — գանձ
Քծինք — քծնել, քծնություն
Քյամիլ — լուրջ, նամեստ

Քոնսոլ — պահարան
Քմշոտ — քմահաճորեն
Քոշե — ասեղնագործություն
Քուզում — գառնուկս

Օ

Օգ մեյտանի — Պոլսի հրապարակներից մեկը
Օթոց — օթևանելու տեղ
Օլուր-օլմազ — պատահական, անարժեք
Օղլում — տղաս
Օմուզ — ուս
Օսանմիշ եղա — ձանձրացա, զզվեցի
Օտա — սենյակ
Օտալարցի — Պոլսի ետ ընկած փողոցներում ապրող

Ֆ

Ֆամիլիա — ընտանիք
Ֆայտա — օգուտ
Ֆալցո — սխալանք
Ֆարղին ըլլալ — գլխի ընկնել
Ֆեսֆեսե ընել — մտահոգվել
Ֆըստըխ — պիստակ, արսխիս
Ֆիստան — շրջազգեստ
Ֆիտան — նորաբույս տունկ
Ֆիլան — ֆլան, այնինչ մարդը
Ֆաքուդ մրներ — վերջդ (հոգդ) անգամ չլինի

Բովանդակություն

Առաջաբան 3

Ամիրայի աղջիկը 21

ՆՈՎԵԼՆԵՐ

Գապուկը 370
Հյուծախտավորը 374
Քարիտեզին 385
Կուզը 390
Զուկին փոխարեն 395
Լվացարարուհին 405
Գողը 409
Հաճի Մանուել 415
Թաշկինակը 420
Հուսահատի մը նկարագիրը 426
Ժամադրությունը 433
Ծովափին աղջիկը 437
Վարձու տուն 441
Քարին նշանը 447
Եվնիկե 450
Զանգակահարը 453
Համրին վրեժը 459
Արյան ուժը 465
Կաղընդղեքը 467
Սայլորդը 473
Հուսուքը 476
Զկնորսին սերը 488
Մրցում 493
Հաջողության գաղտնիքը 503
Քավությունը 509
Մեռելներուն ջրկիրը 522
Տեր պապային հինգերորդ տունը 528
Կտակը 533
Վրեժը 539
Սերինա 549
Առչի մայրիկը 560
Գերագույն ներումը 566
Կնունքը 577
Կյանքի պայքար 579
Կժպտի 583
Թառարան 592

ԵՐՈՒԽԱՆ

(ԵՐՎԱՆԴ ՍԻՄԱՌԵՇԽԱՆԼՅԱՆ)

Երկեր

(Վեպ, Նովելներ)

Ерухан

СОЧИНЕНИЯ

Роман, новеллы

(На армянском языке)

Издательство «Советакан грох»

Ереван, 1980.

Կազմող և հրատ. խմբագիր՝ Լ. Ն. Առազյան
Նկարիչ՝ Մ. Ռ. Սոսոյան
Գեղ. խմբագիր՝ Վ. Ա. Հարությունյան
Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շանվերդյան
Վերստուգող սրբագրիչ՝ Ս. Մ. Բուլաքյան

ИБ № 3105.

Հանձնված է շարվածքի 21. 02. 80։ Ստորագրված է տպագրության 8. 08. 80։ Չափսը 60×84 1/16։ Թուղթ՝ տպագրական № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 35,34 պայմ. տպ. մամ., հրատ 30,5 մամ.։ Պատվեր՝ 418։ Տպաքանակ՝ 51000։ Գինը՝ 2 ռ. 80 կ.։

«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91։

Издательство «Советакан грох», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван-9, ул. Теряна, 91.